# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

# СВОБОДОЛЮБИВЫЕ ИДЕИ В АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКЕ

## (1820-1920 гг.)

Составление, предисловие и примечания
АЛМАСТ ЗАКАРЯН, ГАРРИ ОГАНЕСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԱԶԱՏԱՍԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## (1820 - 1920 թթ.)

Տեքստը պատրաստեցին, առաջաբանը և ծանոթագրությունները գրեցին
ԱԼՄԱՍՏ ԶԱՔԱՐՅԱՆԸ, ԳԱՌՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Ա 11/68734

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ Գ.Ա. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1982

ԳՄԴ 63.3 (2 Հ)
Ա 223

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
պատմական գիտությունների թեկնածու Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բանասիրական գիտությունների թեկնածուներ Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆԸ
և Հ. Օ. ՄԱՐԳԱՐՅԱՆԸ

**Ա 223** *Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820—1920 թթ.) /ՀՍՍՀ ԳԱ պատմ. ին-տ; Տեքստը պատրաստեցին, առաջաբանը և ծանոթագր. գրեցին Ա. Գ. Զաքարյանը և Գ. Ն. Հովհաննիսյանը /Պատ. խմբ. Մ. Ն. Հակոբյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 595 էջ.*

*Ժողովածուն ամփոփում է Մ. Թաղիադյանից՝ ներառյալ Ս. Զարյանց հայ գրողների, հրապարակախոսների, հասարակական-քաղաքական գործիչների ժառանգությունից քաղված ազատասիրական գաղափարներով տոգորված էջեր։*

*Ժողովածուն ունի առաջաբան, ընդարձակ ծանոթագրություններ, նախատեսված է ինչպես գիտական, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար։*

0505040000
Ա ——————— 18—82
703 (02)—82

ԳՄԴ 63.3 (2 Հ)+83.3 Հ
9 (C 43)+8 Ap

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982

# ԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկության հավերժական մղումներից մեկի՝ ազատասիրության, ոգով է տոգորված հայոց առաջին պատումներից Հայկի ու Բելի առասպելը, որը դարձել է հայ ժողովրդի գոյության խորհրդանիշ։ Այդ ժամանակներից սկսած ազատասիրական գաղափարախոսությունն անբաժան է հայ ժողովրդի պատմական ճանապարհից և հոգևոր մշակույթից։

Առասպելի, տեսիլի, զրույցի, դյուցազներգության այլևայլ ձևերով նախապատմական հեռուներից ձգվելով մինչև նոր ժամանակներ՝ ազատասիրական գաղափարները նոր բովանդակությամբ և առանձնակի ուժով բորբոքվում ու առնականանում են XIX—XX դդ. հրապարակախոսության ու գրականության մեջ։ Հանգույցները տանում են դեպի մարդկության շրջադարձային իրողությունները. նախ՝ ֆրանսիական բուրժուական հեղափոխության և եվրոպական լուսավորականության հռչակած գաղափարներն ու սկզբունքները։

Ըստ ամենայնի հորդվելով այդ գաղափարների բովում, հայոց հրապարակագրության ու գրականության ազատասիրությունը միաժամանակ հավատարիմ էր իր հնօրյա ավանդներին, նախորդ դարերի հայոց ազատագրական շարժումների և մտքի անմիջական ժառանգորդն էր։ Բնորոշ է, որ ինչպես XV—XVII դդ., նոր ժամանակներում նաև ազատասիրական ոգորումները սկզբնապես ուղղված էին՝ մի կողմից օտարերկրյա բռնատիրության, մյուսից՝ ֆեոդալական հանրակարգի և նրա «ընդհանուր սինթեզի ու սանկցիայի» եկեղեցու դեմ[1]։

XV—XVII դդ. հայ իրականության մեջ այդ ոգորումները կրում էին երկակի բնույթ. պայքար հայ եկեղեցու դեմ, որի պաշտոնյաները պատմագրության էջերում հորջորջվում են «պաշտոնեայք որովայնի»,

[1] *Այս առթիվ տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 330 և հետո։*

«տոգէտք, խոտանք և անկիտանք», և ապա տևական ճակատամարտություն կաթոլիկ Հռոմի գերիշխանության դեմ, որ առանձնապես սրված էր հայկական գաղթավայրերում[2]:

Զարաշահելով հայ ժողովրդի ազատագրական մղումները, եվրոպական դիվանագիտությունը ձգտում էր կաթոլիկ եկեղեցու միջոցով ընդարձակել իր ազդեցության գոտին և տիրել Հայաստանին:

Հատկանշալի է, որ արդեն իսկ այս նշված ճակատամարտությամբ XV—XVII դդ. հայոց ազատասիրությունը ներքաշված էր ֆեոդալական-եկեղեցական բռնատիրության դեմ պայքարի լայն ոլորտը:

Էապես հայության քաղաքական դիրքորոշումը դեպի Ռուսաստան հասունանում է նաև այս տևական խմորումների բովում, պայմանավորելով հասարակական խավերի, ինչպես և մտավորականության XVIII դ. ազատասիրական վերելքը: XVII դ. վերջի և XVIII դ. սկզբների Իսրայել Օրու բացած «նոր ճանապարհը»՝ ռուսական կողմնորոշումը, շարունակում են հաջորդները, հայ ազատագրական շարժման XVIII դ. երկրորդ կեսի գործիչներ Հ. Էմինը, Մ. Բաղրամյանը, Շ. Շահամիրյանը և ուրիշներ:

Ժամանակաշրջանն առհասարակ նշանավորվում է Անդրկովկասի ժողովուրդների ազատասիրական ընդհանուր կողմնորոշումով դեպի Ռուսաստան: Եվ, երբ 1769 թ. վրաց Հերակլ թագավորի ջանքերով Վրաստան են մտնում ռուսական զորքերը, ինչպես գրում է Ա. Ռ. Հովհաննիսյանը՝ «Ռուսաստանում բնակվող մի խումբ հայ գործիչներ արտաքին զորձոց համաձայնվքին ներկայացնում են զեկուցագիր, որով նախատեսվում էր հայկական պետություն ստեղծել Ռուսաստանի հովանու տակ»:

Գնալով խորանում էր այն գիտակցությունը, որ Անդրկովկասի համար միայն Ռուսաստանը կարող էր պատվար դառնալ պարսկական և թուրքական բռնատիրության դեմ, միաժամանակ, մյուս կողմից անում էր հետաքրքրությունը Անդրկովկասի հանդեպ, որքանով այն «համապատասխանում էր ռուսական արտաքին քաղաքականության նպատակներին ու խնդիրներին»[3]:

Ի վերջո XIX դ. տասական թվականներից՝ 1813-ի Գյուլիստանի պայմանագրի օրերից, սկսում են իրականանալ Անդրկովկասի ժողովուրդների ազատասիրական ձգտումները. 1826—1829 թթ. ռուս-

---

[2] *Տե՛ս նաև նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1959, էջ 7 և հետ։*

[3] *А. Р. Иоаннисян,* Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, с. 16.

պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հաղթական ավարտով Արևելյան Հայաստանը ևս մտնում է Ռուսաստանի կազմի մեջ:

Դժվար է պատկերացնել հայության անսահման ցնծությունը մայր երկրում, ինչպես և հեռավոր գաղթավայրերում: Պատմական բազմաթիվ վավերագրերից[4] մեկն էլ մնում է Մ. Թաղիադյանի հայտնի ճառը՝ արտասանված Արարատյան աշխարհի «ազատութեան և փըրկութեան» թարմ տպավորությամբ, 1829 թ. փետրվարի 7-ին Կալկաթայում: Այդ ճառում «յարազուարճ բերկրութեամբ» Թաղիադյանը արձանագրում է «հասարակաց խնդութիւնը», կոչ անում վառվել ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ, պատգամներ, որոնք գեղարվեստական մեծ ուժով շուտով հնչեցնում է Խ. Աբովյանը՝ ստեղծելով հայ ժողովրդի հետագա ժամանակների ազատասիրական հիմնը՝ «Վերք Հայաստանի»:

Այս անման վեպի հրաբխային պաթոսը լիցք է ստացել ոչ միայն Արևելյան Հայաստանի ազատագրության պատմական իրադարձությունից, այլև դեկաբրիստների ազատասիրական ելույթից, 1830—1831 թթ. հեղափոխական շարժումներից: Համարյա ամբողջ Եվրոպայում բռնկված հեղափոխական ելույթները, ապստամբությունը ցարական բռնակալության դեմ Լեհաստանում, Հունաստանի ազատագրությունը թուրքական լծից անկասկած խոր հետքեր են թողել Դորպատի համալսարանի ուսանող Աբովյանի հոգում, թրծել նրա բնածին մոլեգին ազատասիրությունը, ազատասիրական այն հավատամքը, ինչ ձևավորվող մեծ լուսավորիչը հարկ է համարել արձանագրել դորպատյան օրագրերում. «այսպէս պարտ է յամենայն աշխարհի տալ ազատութիւն և յազատութենէ յառաջանան ամենայն բարիք»[5]:

Աբովյանի ստեղծագործության, կյանքի և գործունեության հայտնի և անհայտ բոլոր խորհուրդների միջուկում գործում է այս հավատամքը: Ազատասիրական կրքոտ հավաքական մի հավատամք, ըստ որի մարդկային կյանքի բոլոր բարիքները, այդ թվում սերը, բարին, մարդասիրությունը, հայրենասիրությունը, արդարությունը, առաջադիմությունը կապվում են ազատության հետ, ծնվում-առաջանում են ազատությունից: Այստեղից մեծ լուսավորչի աննահանջ վերաբեր-

---

[4] *Վավերագրերի մի ստվար մաս տե՛ս «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (աշխատասիրությամբ Պ. Հ. Հակոբյանի), Երևան, 1978:*

[5] Խ. Աբովյան. *Երկ., հ. 6, Երևան, 1955, էջ 74:*

մունքը նաև կրոնական նախապաշարումների ու կաշկանդումների դեմ, որ արտահայտվել է նրա ստեղծագործության մեջ, ալիքավորվել և՛ «Վերքում», և՛ «Թուրքի աղջիկը» անզուգական պատմվածքում՝ մի գործ, որի ազատասիրական մարդասիրությունը սասպեսությամբ նշմարիտ վկայական է հայ ժողովրդի համար։

Աբովյանի հայրենասիրությունը ազատասիրական հայրենասիրություն է՝ մշտապես անբաժան այլասիրությունից, աշխարհի ժողովուրդների, մարդկության ազատության և երջանկության համընդհանուր շահախնդրությունից։ Աշխարհայացքային, գաղափարական բոլոր տարբերություններով, երանգներով հանդերձ, աբովյանական այս ավանդների հունով են ընթացել նոր ժամանակների հայոց գրականությունն ու հրապարակախոսությունը՝ հավասարապես և՛ արևելահայ, և՛ արևմտահայ հատվածներով։

Եվ հիշարժան է. հենց քառասնական թվականներին, այն ժամանակներում, երբ բուն հայրենիքում, մաքառելով տգիտության, խավարի ու հետամնացության դեմ, Աբովյանը հյուսում էր «Թուրքի աղջիկը», «Վերք Հայաստանին», ճիշտ այդ ժամանակներում Ղ. Ալիշանի հայրենասիրական դասերով հասակ առած արևմտահայ մտավորական սերնդին վիճակված էր նվաճելու ազատասիրական նոր բնագծեր։

Քառասնական թվականների վերջերին եվրոպական աշխարհը նորից ապրում էր ազատասիրական վերելք, որ պսակվում է 1848 թ. հեղափոխությամբ։ Հեղափոխության շրերին մարտնչող բարիկադների վրա էր և ապա 1849 թ. հունիսին հանուն Իտալիայի ազատագրության Փարիզում ցույցի ելած ուսանողության շարքերում էր Ստ. Ոսկանյանը։ «Ոսկանյանն ավստրիական բռնապետության դեմ իտալական ժողովրդի և նրա քաջարի զավակ Գարիբալդիի պայքարը լուսաբանելիս,— գրում է Մ. Հակոբյանը,— տողամեջ և այլաբանորեն խոսքն ուղղում էր թուրքական լծի տակ հեծող արևմտահայությանը, ասելով. «Վայրկյան մը չենք տարակուսիր և հառաջմե կըսենք, որ քիչ ատենեն Իդալիան խպար պիտի ազատի օտարին անտանելի լուծեն... Իտալացի՛ք, աշխարհիս ցույց կ'ուտաք, որ մի և անկախ հայրենիքի արժանի եք. պիտի հիշվիք դուք իբրև օրինակ և ձեր անունը կիսամեռ ազգերու սիրտը պիտի բժշկե։ Փա՜ռք ձեզի...»[6]։

Տարիներ շարունակ Իտալիայի ազատագրական պայքարը հայոց

[6] «Արևելք» (1855—1856) և «Արևմուտք» (1859, 1864—1865) հանդեսների անոտացված մատենագրություն» (կազմողներ՝ Մ. Ն. Հակոբյան և Ժ. Մ. Ներսեսյան). Երևան, 1980, էջ 19—20։

միջավայրում եղել է ջերմեռանդ սիրո և մտահոգության առարկա, մտավորական շրջաններում չի եղել ավելի պաշտելի անուն, քան Ջուզեպպե Գարիբալդին:

Իտալիայի ազատագրական պայքարը հայոց մշակույթի պատմության մեջ թողել է խորը հետք. Ստ. Ոսկանյան, Ստ. Նազարյան, Ռ. Պատկանյան, Սմ. Շահազիզ, Գր. Չիլինգիրյան, Մ. Մամուրյան, մանավանդ Մ. Նալբանդյան, Հ. Սրվանձյան, և ապա Ղ. Աղայանից Արփ. Արփիարյան, Տ. Կամսարական, Ավ. Իսահակյան,— հրապարակախոսներն ու գրողները անդրադարձել, դրվատել ու պաշտպանել են իտալական ժողովրդի ազատասիրությունը:

Միանգամայն բնական երևույթ, որքանով իտալական ժողովրդի պայքարը ավստրիական տիրապետության դեմ անմիջականորեն արձագանքում էր Ղրիմի պատերազմից հետո բորբոքվող հայ ժողովրդի ազատագրական մղումներին: Իտալիայի ազատագրությունից կարճ ժամանակ անց՝ 1862-ին, բռնկվեց Զեյթունի հզոր ապստամբությունը, որն անպայման որոշակի ազդակներ էր ստացել իտալական ազատասիրությունից:

* * *

Ղրիմի պատերազմից հետո ճորտատիրության վերացումը Ռուսաստանում դարձել էր օրակարգի հարց: Երկիրը ծայրից ծայր տընքում և ալեկոծվում էր գյուղացիական հոծ զանգվածների ասրկությունից: Այդ հանկամարտության թելադրանքով ռուսական ազատագրական շարժումը թևակոխում է Գերցենի, Օգարյովի և ապա Չերնիշևսկու, հեղափոխական-ռազնոչինականների անվան հետ կապվող հեղափոխական-դեմոկրատական ժամանակաշրջանը: Թևակոխում է այնպիսի մի նոր փուլ, երբ՝ «Ավելի լայնացավ մարտիկների շրջանը, ավելի մոտ դարձավ նրանց կապը ժողովրդի հետ»[7]:

Հեղափոխական-դեմոկրատները գտնում էին, որ գյուղացիության հարցը պետք է լուծվի վարից, զինված ապստամբությամբ, որով ձեռք բերված «Ռուսիո ազատությունը,— Մ. Նալբանդյանի կանխատեսությամբ,— ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ, մեծ խորհուրդ ունի»[8]:

Դժվար է գերագնահատել «ռուսական զարթոնքի այդ հոյակապ ժամանակաշրջանի» (Իսահակյան) նշանակությունը հայ ժողովրդի

7 Վ. Ի. Լենին, *Երկ., հ. 21, Երևան, 1979, էջ 323։*

8 Մ. Նալբանդյան, *Երկ., հ. 3, Երևան, 1940, էջ 61։*

հասարակական-քաղաքական, հոգևոր առաջընթացում: Ի դեմս Մ. Նալբանդյանի՝ մարդու, ժողովրդի ազատության գաղափարը գտնում է սոցիալ-տնտեսական հիմնավորում, ստանում դեմոկրատական բովանդակություն, ըստ որի ազգերի առաջադիմության շարժիչ ուժ է՝ և մնում է հասարակ ժողովուրդը:

Անգնահատելի է Մ. Նալբանդյանի ծառայությունը մասնավորապես իբրև հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի, ազգային հարցի տեսաբան: Հետևողականորեն մերկացնելով Անգլիայի, Ավստրիայի, Թուրքիայի գաղութատիրական քաղաքականությունը, Նալբանդյանը հիմնավորում ու պաշտպանում էր հնդիկների, իտալացիների, հունգարների, Գալիցիայի, Դալմատիայի, Բոհեմիայի, առհասարակ բոլոր ժողովուրդների անկախությունն ու ազատությունը ամեն տեսակի ճնշումից ու շահագործումից: «Ոչ մի ազգություն,— հավատում էր հեղափոխական դեմոկրատը,— իրավունք չունի կոխ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգություն... Մի ազգ, որ կորուսանում է յուր ազգությունը, դուրս է ընկնում այն կազմվածքից որպես մի փտած անդամ, և հավիտենական կոխորդը անխնա կոխ է տալիս այդպիսի ազգությունը: Այս պատճառով մարդկային սրտի համար մի ավելի տխուր բան չկա, քան թե տեսանել, որ մի ազգություն ընկնում էր և կործանվում էր ծանր հանգամանքների հարստահարության տակ—մի այլ ազգության ճնշողութենից... Թո՛ղ ամենայն ազգ պահպանե յուր ազգության կերպարանքը, թո՛ղ ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգություն մարդկեղեն աշխարհի մեջ. դոքա միայն զորություն և հոգի են տալիս ազգերի ընդհանուր աշխատությանը»[9]:

Նալբանդյանի անվան հետ է կապվում հայության երկու հատվածի մերձեցման առաջին խոշոր քայլը՝ զուգադիպելով Իտալիայի ազատագրության և Զեյթունի ապստամբության դեպքերին: Նալբանդյանի պոլսական այցելության օրերից՝ Հ. Սվաճյանի, Ս. Թագվորյանի գործունեությամբ ծավալվում է արևմտահայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, հունավորվում է ազգի ազատասիրական միասնության գիտակցությունը՝ իր մեջ առնելով հասարակական մտքի առաջադեմ թևերը: Բնորոշ է, որ ժամանակին Մ. Մամուրյանը՝ հենց այս դիրքերից էլ գնահատելով, շեշտում էր Նալբանդյանի գործունեության համազգային հեռահար նշանակությունը[10]:

Եվրոպայի և Ռուսաստանի հոգևոր կենտրոններում ուսում առած,

9 Մ. Նալբանդյան, *Երկ, հ. 2, Երևան, 1947, էջ 259*:

10 *«Մասիս», 1866, № 124, էջ 489—491*:

խորապես տեղյակ մարդկային հասարակության նոր ժամանակների ազատագրական պոռթկումների պատմությանը, մտավորականությունը մեծագույն մասով 50—70-ական թվականներին փրկության նույնպիսի ուղի էր գուշակում հայ ժողովրդին: Բացառություն էին օծյալ հետադիմականները. արևմտահայ իրականության մեջ ամիրայական վերնախավի հոգևոր ներկայացուցիչները՝ տխրահռչակ Հ. Չամուրճյանը կամ Պ. Խորասանճյանը: Պատահական չէ, որ Նալբանդյանին վիճակված էր հակամարտություն Հ. Չամուրճյանի, Գ. Այվազովսկու, Ոսկանյանին՝ Հ. Կրճիկյանի, Պ. Տաղյանի, Պ. Խորասանճյանի և նրանց նմանների դեմ:

Գտնելով, որ հեղափոխական ըմբոստությունները վերջանում են արյունահեղությամբ մեծապես բռնակալների կամքով՝ սովորաբար Ոսկանյանը վկայակոչում էր ֆրանսիական բուրժուական հեղափոխության իրողությունը: Ֆրանսիական հեղափոխություններին նվիրված պատմագիտական երկասիրությունների նրա քննական վերլուծությունները, ինչ-ինչ անհետևողականությամբ հանդերձ, ազատության գաղափարական պաշտպանություն են, ինչ կարելի է ասել նաև Գր. Չիլինկիրյանի, Մ. Մամուրյանի, Ս. Հայկունու հրապարակագրության վերաբերյալ:

Իհարկե, այլ է նրանց ազատասիրությունը, և Հայաստանի համար ապստամբության փոխարեն նրանք ի վերջո նախատեսում էին տնտեսական-լուսավորական խաղաղ զարգացում, սակայն բոլոր դեպքերում Ոսկանյանը վառոդաման պատրաստելու կոչ էր անում, Չիլինկիրյանը Հյուգոյի մարտնչող մարդասիրության երկրպագուն և քարոզիչն էր, իսկ Մամուրյանը՝ հույների, լեհերի ազատագրական պայքարի ջատագով, ասել է՝ տարերքով-համախտանքով խորքում ազատասեր էին, բայց և անպայման ինչ-որ տեղ չափավոր կամ զգուշավոր: Զգուշավորությունը բնական էր սուլթանական արյունարբու բռնապետության պայմաններում, որքանով անզգույշ ամեն առիթ հնի էր ջարդով-ավերմունքով: Նկատենք, որ ժողովրդին պայքարի կոչելիս զգուշավոր էր անգամ «Մեղուն», որի էջերում բացահայտ կոչերին հաճախ փոխարինում էին այսօրինակ հիշեցումները՝ «արդարությունը... փորձով տեսնված է, թե առանց արյունհեղության չպիտի կրնա տիրել երկրագունդիս»[11]:

Ստ. Ոսկանյանից, Գ. Սրվանձտյանից՝ Մ. Պեշիկթաշլյան, Պ. Դուր-

[11] Հ. Սրվանձյան, *Հրապարակախոսություն*, *Երևան*, *1960*, *էջ 346*։

յան, Հ. Պարոնյան 50—70-ական թվականների արևմտահայ գրականության մեջ ազատասիրական ոգորումները հունավորվում են որոշակի վերընթացով, տարբեր ժամանակներում ու հանգամանքներում ընդունելով տարբեր բնույթ, դրսևորվելով մեկ այս, մեկ մյուս շեշտված կողմով, տարբերակով կամ երանգով:

Ազատասիրական լիցք ունեին Մ. Պեշիկթաշլյանի եղբայրության կոչերը՝ կրոնական խտրականության դեմ. նրա գրչին են պատկանում հայոց հառաչանքների քնարական արծարծումները, Զեյթունի հերոսամարտի բանաստեղծական ազատաշունչ արձագանքները: Դուրյանի ազատասիրությունը «հեռ. մարդկության մեկ ոստին»՝ հայրենիքին, բոլորանվեր ծառայելու բաղձանքից ձգվում է մինչև աստվածամարտություն. պարոնյանական երգիծանքով խարազանվում է անարդարության ու անազատության ամեն կարգի արտահայտություն՝ աշխարհի տերերի գաղութարարական-շահագործողական նկրտումներից մինչև հասարակական-սոցիալական ամենատարբեր երևույթները, մարդու նկարագիրը՝ հասարակական-քաղաքական, կենցաղային-բարոյական հարաբերություններում:

Մեկը մյուսից դառնալի են այն տողերը, որոնցով Պարոնյանը արձանագրում է արևմտահայ բուն ժողովրդի վիճակը. «Շաբաթ չանցնիր, որ Հայաստանեն ցավալի լուրեր չառնվին, շաբաթ չանցնիր, որ հայ սիրտերն ցավոք և տրտմությամբ չլեցվին»[12]: Անդրադառնալով Մշո գավառին, Պարոնյանը գրում է. «Չկա հոն ո՛չ ստացվածքի ապահովություն, ո՛չ կենաց և ո՛չ ալ պատվո երաշխավորություն, այլ կա հոն հափշտակություն, մարդասպանություն, պատվո բռնաբարում...»[13]: Եվ ապա՝ «Ես կը կարծեմ, որ կուսակալը Սեբաստիո բոլոր հայերը բանտարկած է... Տաճկաստանի մեջ բանտ... բանտի մեջ բանտ...»[14]. և նորից՝ «...առաջ գավառներու մեջ եթե տարին հարյուր հոգի կ'սպաննվեին՝ այսօր հազար կ'սպաննվին»[15]. «Գավառաց հայերը դարերե ի վեր կը հարստահարվին, դարերե ի վեր թաքրիներ կը գրվին ու հարստահարությունները դարերե ի վեր կը շարունակվին», և վերջապես՝ «Այս լուծն հպատակության ըլլալե դադրած՝ գերության լուծ եղած է»[16] և այլն և այլն:

---

12 Հ. Պարոնյան, *Երկ., հ. 10, Երևան, 1979, էջ 50:*

13 *Նույն տեղում, էջ 67:*

14 Հ. Պարոնյան. *Երկ., հ. 4, Երևան, 1965, էջ 476:*

15 Հ. Պարոնյան, *Երկ., հ. 2, Երևան, 1964, էջ 16:*

16 Հ. Պարոնյան, *Երկ., հ. 10, էջ 68:*

Համոզված կարելի է ասել, որ սոցիալական վերնախավի, ազգային մեծ ու փոքր ջոջերի, քաղքենիության երգիծաբանի կծու ծաղրը դառնության ողջ լիցքով սնունդ էր առնում ժողովրդի անելանելի կացությունից: Գրողի ծաղրի դառնությունը ուղիղ համեմատական է ժողովրդի ծանր դրության նրա գիտակցությանն ու զգացողությանը: Պարոնյանը գտնում էր, որ «Թուրքիո մեջ բարեկարգությունը անկարելի է»[17], միակ ելքը՝ ժամ առաջ ծառանալն է գերության դեմ և ոչ թե ազգային խեղճությունը, քանի որ՝ «խեղճության վրա արտասուք թափելն ապացուցանել է, թե արյուն չունինք թափելու: Արտասուքը մանուկներու և կիներու (մեծ մանուկներու) բաժինն է. կ՚աղաչեմ, մի դպիք ատոնց բաժինին»[18]: Ազգի ազատասիրական արժանապատվությունը շոշափող այս դառնաշունչ տողերի տրամաբանական իմաստն այն է, որ 70-ական թվականների իրավիճակում արյուն թափելը Պարոնյանը համարում էր պատմական անհրաժեշտություն:

Բարձրակետում ունենալով Մ. Նալբանդյանի ազատասիրական պատգամներն ու ավանդները, 50—70-ական թվականներին ազատասիրական՝ գաղափարներով համարյա նույն պատկերն էր ներկայացնում արևելահայ հասարակական միտքը: Առանցքայինը կրկին Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցն էր, որը ի դեմս Ռ. Պատկանյանի և Րաֆֆու շոշափվում էր առանձին հետևողականությամբ ու եռանդով, արժանանալով լայն խավերի ընդունելությանն ու ազատասիրական արձագանքին:

Միանգամայն օրինաչափ երևույթ: Մեկը մյուսի ետևից աշխարհի հպատակ ժողովուրդները թոթափում էին բռնատիրության լուծը, ամերիկյան մայր ցամաքից՝ եվրոպական երկրներ, Բալկաններից Մերձավոր Արևելք ամենուրեք ծավալվում էր ըմբոստությունը օտար տիրապետության դեմ, և նման մթնոլորտում, ինչպես ասած, սուլթանական ստրկության հետ պարզապես հազիվ թե կարողանար համակերպվել քիչ թե շատ արժանապատվություն ունեցող որևէ ժողովուրդ:

Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայոց գրականությունը ու հրապարակախոսությունը մշտապես եղել են հարազատ ժողովրդի արժանապատվության չափանիշը: Պատմական այդ ժամանակաշրջա-

17 Հ. Պարոնյան, *Երկ., հ. 4, էջ 99:*

18 *Նույն տեղում, էջ 375: Պարոնյանի ժառանգությունից քաղված այս և նման տողերով Մ. Գ. Ներսիսյանը հիմնավորում է գրողի ազատասիրության դեմոկրատական բնույթը. տե՛ս* Մ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 224—226:*

նում ժողովուրդների արժանապատվության ցուցանիշը ազատասիրությունն էր, որի կրքոտ արծարծումները պատիվ են բերում հայ ժողովրդին, որքանով անհնար է պատկերացնել, թե ստրկության քարոզը երբևէ պատիվ բերած լինի այս կամ այն ժողովրդին։

Այլ հարց է արդեն, թե որքանով իրագործելի էին կամ եղան, ասենք, Րաֆֆու առաջադրած պայքարի ուղիները, մի հարց, որի պատասխանը տարիներ առաջ տվել է Տ. Կամսարականը։ Գտնելով, որ Րաֆֆի «հանճարեղ վիպասանը» «արծարծեց, հրահրեց» հայոց «քնացող հայրենասիրությունը», կողմնորոշեց դեպի՝ «լավ հասկցված ու լավ և ուղղված նպատակի մը», Կամսարականն ավելացնում է, որ «Րաֆֆին իր գործը կատարեց. մենք մերինը չգիտցանք, չկրցանք», և ապա բացատրում, թե՝ «քաղաքական ծրագիրները վեպերէ չեն քաղվիր, ներշնչումները, մայր-գաղափարները այո՛». որպես ապացույց վկայակոչելով Իտալիայի ազատագրական պայքարի իրողությունները, այն, որ Իտալիայի քաղաքական գործիչները իրենց գործելակերպը, «աշխարհավարության ուղղությունը», անշուշտ, չեն քաղել իտալացիների հայրենասիրությունը բորբոքած Ալֆիերիի ստեղծագործություններից[19]։

Արևելահայ հասարակական մտքի «մայր-գաղափարների» հավասարազոր մյուս ուղղությունն անդրադարձնում էր ժողովրդի սոցիալական-իրավական ծանր վիճակը, որ վերարծարծվում է նախ գրականության մեջ։

Պ. Պռոշյան, Ղ. Աղայան, Գ. Սունդուկյան ուղեգծով գեղարվեստորեն ալիքավորվում է ժողովրդական զանգվածների հասարակական-սոցիալական բողոքը, հրապարակ է գալիս ըմբոստների կերպարների մի ամբողջ շարք, պսակվելով Պեպոյի խստաշունչ արդարատենչությամբ։

Չպետք է կարծել, սակայն, թե սոցիալական և ազգային-ազատագրական գաղափարները կրել են զտարյուն բնույթ։ Նույն Րաֆֆու ստեղծագործության մեջ, օրինակ, նման գաղափարները դրսևորվել են սերտ միասնությամբ, ներառնելով քրիստոնեական կրոնի ու եկեղեցու, հասարակական բարքերի քննադատության հետևողական շեշտեր։ Նույնը տարբեր չափերով, այլևայլ երանգներով բնորոշ է նաև մյուս գրողների ստեղծագործությանն ու հրապարակագրությանը։

Անդրադառնալով արևմտահայության բախտին, քաղաքացիական

---

19 *«Արևմտահայ գրողների նամականի», Երևան, 1972, էջ 57։*

արդար վրդովմունքով Աղայանը գրում էր. «Թո՛ղ ամեն ոք հարցնե ինքն իրան, թե հնարավո՞ր է արդյոք՝ դժոխքի մեջ եդեմական տունկեր բուցնել, հնարավո՞ր է արդյոք բռնակալի մեջ գութ ու խնամք փնտրել ու գտնել, հնարավո՞ր է արդյոք սարկական վիճակի մեջ գտնել քաղաքակրթության և լուսավորության հետքն ու արդյունքը»:

Սա նշանակում է, թե բռնության մթնոլորտը խաթարում է հոգևոր-մշակութային, քաղաքակրթական առաջադիմությունը. առհասարակ, մարդկության, ժողովուրդների առաջադիմության հիմնական պայմանը հասարակական ազատությունն է, ինչպես և գիտությունը, որի հետ Աղայանը կապում էր մարդկության հեռանկարը. «Եթե մարդկության երջանկությունը պահանջում է ազատություն և այդ ձգտումն ունի ամենի մի անհատ,— գրում է նա,— ապա ուրեմն հայի համար բացառություն լինել չի կարող, ուզի չուզի նա էլ կունենա այդ ձգտումը իբրև մարդկության մի հյուլեն»[20]:

Մարդկության երջանկությունը Աղայանը կապում էր գիտության զարգացման ճանապարհով մարդկային փոխադարձ մերձեցման հետ՝ ազատության մեջ, մարդկության ընդհանուր առաջադիմությունից անբաժան համարելով նաև հայ ժողովրդի բախտն ու գոյությունը:

Եվ այսպես՝ հայ հասարակական մտքի առաջավոր բոլոր ներկայացուցիչները, այս կամ այն սահմանափակությամբ հանդերձ, առաջադիմության, ազատության հարցերը առաջադրում-լուծում էին համամարդկային չափանիշներով, հարազատ ժողովրդի ճակատագրի ամենածանր պահերին անգամ չհանանջելով համամարդկայնության բարձր դիրքերից:

Հասկանալի է, ինքնին մարդկության պատմությանն էր շղթայված հայ ժողովրդի բախտը, որի վայրիվերումների հետ բարձրանում կամ իջնում էր նաև գրականության ազատասիրական թափը:

Հայոց հրապարակախոսությունը ազատասիրական նոր վերելք է ապրում 70-ական թվականների կեսերից, երբ սուլթանական Թուրքիայի դեմ ոտքի են կանգնում բալկանյան ժողովուրդները, բուլղար ժողովուրդը, երբ բռնկվում է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

Աշխարհի ամենատարբեր ծայրերից հայ մամուլը ողջունում է բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը, դրվատում ռուսական զենքի ուժն ու զորությունը: Հայության հայացքը ամենուրեք

---

20 Ղ. Աղայան, *Եժ*, *հ. 4*, *Երևան*, *1963*, *էջ 280. 292։*

ուղղված էր Ռուսաստանին, որի հետ մտավորականությունը մեծագույն մասով կապում էր արևմտահայության փրկությունը:

Մոտիկից տեղյակ արևմտահայության կացության և ձգտումների, դեռևս 1861-ին Մ. Նալբանդյանը համարում էր, որ «հայերը ամբողջ Թուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին, և եթե ռուս կառավարության կողմից ցույց տրվի նրանց թեկուզ և ամենափոքր օգնությունը, այն ժամանակ ֆրանսիական և անգլիական կառավարությունները կզրկվեն նրանց վրա ներգործելու հնարավորությունից, հետևաբար և կանգ կառնի նրանց կրոնի և ազդեցության պրոպագանդը»[21]:

Այս և նման տողերով Նալբանդյանն արձանագրում էր Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի շահերն ու հակասությունները Թուրքիայի հանդեպ, և որ նույնպես կարևոր է՝ քաղված տողերից հետևում է, որ 60-ական թվականների նախաշեմին հեղափոխական-դեմոկրատը՝ մոտիկից կապված արևմտահայ հասարակական շրջանների, համոզված էր, որ Ռուսաստանի «ամենափոքր» օգնության դեպքում արևմտահայությունը կարող էր ազատագրվել Եվրոպայի կրոնական, ասել է նաև քաղաքական ազդեցությունից:

Եվ սակայն ճորտատիրության վերացման փաստի առջև կանգնած Ռուսաստանի համար, առայժմ, հրատապ չէին արտաքին հարցերը, որոնք օրակարգ են մտնում 70-ականի կեսերին, երբ բալկանյան ժողովուրդների հուզումները Ռուսաստանի համար ստեղծում են միջամտության որոշակի հող:

Բոսնիայում և Հերցեգովինայում ծայր առած ապստամբության օրերից՝ 1876-ից, արևելահայ շրջաններում գերիշխող մտայնությամբ՝ ապստամբության պահը հասունացած էր նաև արևմտահայության համար: Առաջամարտիկը «Մշակ» լրագիրն էր, որի էջերից Րաֆֆին, Գր. Արծրունին և ուրիշներ քարոզում էին զենքը ձեռքին ապստամբել, չկորցնել պահը, քանի որ, եթե՝ «ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ», այլապես սպասվում են անուղղելի ահեղ փորձություններ, «կատարյալ կորուստ»: Հարցը դրվում էր այսպես՝ «Այժմ, կամ երբեք»[22]:

Նույն դիրքերի վրա էր կանգնած արևմտահայ գործիչների այն խումբը, որ կազմել էր Զեյթունի նոր ապստամբության ծրագիրը. Զեյթունի ապստամբության օրերի (1878) ոգևորությամբ այդ դիրքերի

---

21 Մ. Նալբանդյան, *Երկ*, հ. 2, *էջ 357*։

22 *«Մշակ», 1876, № 25*։

վրա էր Արփի. Արփիարյանը, որի ազատասիրական գործունեությունը արժանացել է հավասարապես և՛ արևմտահայ, և՛ արևելահայ շրջանների գնահատությանը:

Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ չկար քաղաքական-տակտիկական միասնական դիրքորոշում. մի կողմից՝ քաջալերվող ապստամբության գաղափարը մյուսից դատապարտվում էր, այն էլ Կ. Պոլսի պատրիարքի շրջաբերականով, որով արևմտահայությանը կոչ էր արվում հավատարիմ մնալ Բարձր Դռանը:

Ինչևէ. 1877—1878 թթ. ռուսական զորքերը առաջ շարժվելով գրավում են Կարսը, Բայազետը, Էրզրումը, Մուշը, Ալաշկերտը՝ ամենուրեք արժանանալով հայության լայն աջակցությանն ու օգնությանը: Պատերազմական մարտերում աչքի են ընկնում հայ գեներալներ, սպաներ, մարտիկներ՝ վկայելով հայոց ազատասիրական քաջությունը: Մի ամբողջ տարի մարտնչում է հերոսական Զեյթունը, ապացուցելով, որ հայ ժողովուրդը կարող է պաշտպանել իր իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը:

Անպայման այս բոլորի արդյունքն էր Սան-Ստեֆանոյի նախնական դաշնագրի 16-րդ հոդվածը, որը, սակայն, շուտով շրջափոխվում է Բեռլինի վեհաժողովի հայտնի 61-րդ հոդվածին: Թելադրողը անգլիական և ֆրանսիական դիվանագիտությունն էր: Անգլիան և Ֆրանսիան, չհանդուրժելով Ռուսաստանի հզորացումը Բալկաններում և Մերձավոր Արևելքում, ամեն կերպ պաշտպանում էին սուլթանական Թուրքիային՝ ընդդեմ բռնադատվող ժողովուրդների: Բեռլինի վեհաժողովի պահանջով ռուսական զորքերը ետ են քաշվում գրաված տարածքի մեծագույն մասից, Ռուսաստանին է անցնում մի փոքր հողակտոր՝ Կարս բերդաքաղաքով, հետագա կորուստով դառնալու համար նոր մորմոքների առարկա:

Անհնար է պատկերացնել վեհաժողովին հաջորդած հայոց հուսախաբությունը: Թեև 61-րդ հոդվածով նախատեսվում էին բարենորոգումների նոր պայմաններ, պարզ էր, սակայն, որ ժողովրդի ստվար հատվածը մատնվում էր մոլեռանդ բռնադատության, որ օրեցօր ընդունում էր կամայական հալածանքի, ջարդի ու տեղահանության աներևակայելի ձևեր: Տասնամյակներ անց, անդրադառնալով վեհաժողովի այդ 61-րդ հոդվածին, Լլոյդ Ջորջը արձանագրում էր. «Այդ որոշումը մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակ, նրա թելադրած պատվավոր խաղաղություն: Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրի-

տանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897, 1909 թվականների ադանայի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին»[23]:

Աշխարհի «տերերից» մեկի այս ուշացած խոստովանությանը հայ ժողովրդի զավակները կարող են պատասխանել, ասելով՝ թե համենայն դեպս անգլիական, ինչպես և մյուս երկրների, դիվանագիտական խաղերը իրենք հասկացել են ժամանակին, և, որքան էլ թմբկահարված, այն հենց սկզբից նրանց աչքում եղել է գաղութարարի դիվանագիտություն:

Մերկացնելով անգլո-ֆրանսական «դիպլոմատիկական ագենտներին»՝ միսիոներներին, կոնսուլներին, հյուպատոսներին. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո Գր. Արծրունին գրում էր. «Ամբողջ Եվրոպայից գուցե միայն Անգլիան շատ լավ է ճանաչում Հայաստանը և հայերին, լավ է ուսումնասիրել այդ երկրի բնական հարստությունները, այդ երկրի բնակիչների քաղաքակրթական հատկությունները: Բայց Անգլիայի թուրքասիրությունը և հայերի պաշտպան չհանդիսանալը, մեզ գուշակել է տալիս, որ Մեծ Բրիտանիայի նպատակն է ոչ թե օգնել քրիստոնյաներին, այլ ձեռք գցել հարուստ երկիրը, Հայաստանը, աշխարհի չորս կողմը ցրվել տալով նրա ընդունակ բնակիչներին, հայերին, և բնակեցնել նրանց տեղը, նրանց հայրենիքում... անգլիական քաղցած պրոլետարիատը, որից նրանց մայր-երկիրը շատ ուրախ կլիներ ազատվելու, սոցիալական խնդրի սպառնող ճգնաժամից ազատվելու համար»[24]:

Աշխարհով մեկ ցրված հայությունը անգլիական դիվանագիտության «պատմական» «հաղթանակներին» կարող է հակադրել այսօրինակ բազմաթիվ մարգարեական գուշակություններ, որպես բացարձակ ճշմարտություն վկայակոչելով գաղութներից զրկված և իր կղզիները քաշված Անգլիայի մեր ժամանակների օրավուր խորացող տնտեսական ճգնաժամը:

Իսկ հայ մտավորականությունը Բեռլինի վեհաժողովից հետո, որքան էլ հուսախաբ, ինքնաքննությամբ ծանր ու թեթև անելով արևմտահայության դաժան ճակատագիրը, որոնում էր գոյատևումի նոր ուղիներ:

---

23 *Ллойд Джорж.* Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390.

24 *«Մշակ», 1879, № 75*:

Եթե չհաջողվեց հասնել ազատության, ապա այժմ՝ մեծ տերու-
թյունների հրեշավոր գործարքից հետո, հայության առվար հատվածը
ի՞նչ ճանապարհով պետք է շարունակի գոյությունը:

Պատասխանելով ծանրագույն այդ հարցին, Գր. Արծրունին գրում էր. «Թող և հայերին վիճակված է, թեև ոչ այնքան բարձր, բայց նույնպես մի նոր, քաղաքական սկզբունք ավետել մարդկությանը, այն է, որ կարելի է հասնել ազատությանը քաղաքակրթական խաղաղ պատերազմով, առանց ապստամբվելու... Դարևոր տանջանքներով, ամենօրյա աշխատանքով, կուլտուրական խաղաղ կռվով, տոկուն կերպով մարտնչում են հայերը բարբարոսության և կամայականության, տգիտության և ֆանատիկոսության... դեմ: Թող հայերին վիճակված է իրենց բռնած ընթացքով ոչնչացնել այն ժամանակակից բարոյական սկզբունքը, որ մեր լուսավորված տասնիններորդ դարում դեռևս տիրապետում է Եվրոպայում, որ լուսավորված աշխարհի սկզբունքն ու դեվիզն է... («ես ապստամբվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»): Իսկ հայերը, կարծես, ասում են. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»: Ահա, կարծես, հայերի նշանաբանը: Եվ ճշմարիտ, ո՞րն է ավելի դժվարը՝ ապստամբվել և մի քանի ամիս, թող մեկ երկու տարի իր և թշնամու արյունը թափել, թե՞ հազար տարի շարունակ ամենօրյա կուլտուրական պատերազմ վարել ճնշող ուժի դեմ: Թող հայերին, արևմտյան լուսավորված Եվրոպայի ժամանակակից անմարդասեր գաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությանը, վիճակված է ոչնչացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջվում է ճնշված ազգից իր գոյությունը ապացուցանելու համար զենք վերցնել, ապստամբվել, արյուն թափել, ուրեմն գործ դնել ճնշող ուժից, բարբարոսներից ազատվելու համար նույն զենքերը, որ նույն իսկ ճնշող ուժը, բարբարոսությունն է գործ ածում...

Եթե Թուրքիայի հայերը չկարողանան հաղթող հանդիսանալ, կոչնչանան, կամ կգաղթեն իրենց հայրենիքից, եթե նրանց հայրենիքը կդատարկվի իր բնիկ ազգից,— այն ժամանակ ամոթ այն Եվրոպային, որ չօգնեց նրանց իրագործել մարդկության ապագա քաղաքակրթության սկզբունքը»[25]:

Քաղված հատվածից հետևում է, որ խաղաղ առաջընթացը Արծրունու տեսակետից մնում էր մարդկային ապագա հաստատու-

25 *Նույն տեղում*

թյան քաղաքակրթության հիմնական ուղի: Չպետք է կարծել, սակայն, թե Արծրունու նման քաղաքագետ մտածողը կարող էր փոքրիշատե համոզված լինել, թե թուրքական բռնապետության պայմաններում արևմտահայությունը, որքան էլ տոկուն, աշխատասեր, կկարողանա հասնել «ազատության» քաղաքակրթական խաղաղ պատերազմով»: Ակնհայտ է, քաղված հատվածի վերջին տողերում նա գուշակում էր այն, ինչ կատարվեց: Գուշակում էր հայության «քաղաքակիրթ» ոչնչացումն ու տեղահանությունը, հենց այն, ինչ հետագայում ի պաշտպանություն բզկտված հայ ժողովրդի՝ բարձրադղորդ վեհաժողովներից սկսած, ամենուրեք հնչեցնում էր մեծ մարդասեր Ֆր. Նանսենը. «Հայերի ճնշումը երիտթուրքերի կողմից տարբերվում է Աբդուլ Համիդի ու հին կառավարության հալածանքներից նրանով, որ այն կատարվում էր խնամքով մշակված մեթոդիկ պլանով և այդ պատճառով ավելի վտանգավոր էր: Չէ որ այդ պարոններից շատերը ունեին եվրոպական դաստիարակություն: Կան շատ փաստաթղթեր, որոնք ապացուցում են, թե ինչպես դեռ համաշխարհային պատերազմի բռնկումից առաջ որոշված էր «նվազեցնել» քրիստոնյա հայ ժողովրդին»: Եվ ապա՝ «Դժբախտ հայեր... Ժնևի ժողովներում ընդունվել են հանդիսավոր բանաձևեր այն մասին, որ հայերին տրվի հայրենիք: Բայց եթե շուտով չկազմակերպվի իսկական օգնություն, ապա այլևս ժողովուրդ չի մնա, որպեսզի վայելի այդ հայրենիքը»[26]:

Դարեր շարունակ խաղաղ աշխատանքի և քաղաքակրթության այդ նշանաբանով էլ իր ժառանգական հողերի վրա սուլթանական տիրապետության տակ ապրել էր արևմտահայությունը, և սակայն միշտ էլ նրա գլխին կախված էր եղել ջարդարարի սուրը: Մեծ տերությունների գաղութատիրական աճող մոլուցքի մթնոլորտում՝ մեկը մյուսի ետևից կորցնելով մեկ այս, մեկ մյուս հպատակ երկիրը, հասկանալի է, մյուսները կորցնելու սարսափից Թուրքիան պետք է բազմապատկեր բարբարոսությունը մնացածների հանդեպ: Մի բան, որ լավ գիտեին և՛ հայ ժողովուրդը, և՛ մտավորականությունը: Այնպես որ միանգամայն սնանկ է այն վարկածը, ըստ որի հայության ըմբոստությամբ են հրահրվել արյունահեղությունները: Արյունահեղության հեղինակները մնում են թուրք բարբարոսները՝ ամեն անգամ դաշնակցած մեծ տերություններից մեկի կամ մյուսի հետ, լծորդ ունենալով նույն տերությունների զավթողական մրցակցությունն ու հակամարտությունները:

26 *Քաղված են՝ Մ. Վ. Արզումանյանի «Նանսենը և Հայաստանը» գրքից, Երևան, 1977, էջ 95, 112:*

Մարքս-լենինյան ուսմունքով կապիտալիզմի զարգացման օրինաչափություններից մեկն էլ սրվող հակասությունն է իմպերիալիստական տերությունների միջև, գաղութատիրական սանձ մրցակցությունը, որի հակառակ նժարում անհրաժեշտաբար բորբոքվում, աճում է շահագործվող մարդկության, ունահարվող ժողովուրդների ազատագրությունը: Հայ ժողովուրդը դուրս չէր այդ օրինաչափությունից, հակառակը՝ գտնվում էր խորացող հակասությունների խառնարանում, և սկզբից մինչև վերջ նրա ճակատագրում գործել է այդ օրինաչափությունը:

Մեծ տերությունների գաղութատիրական անսանձ մոլուցքը հայ ժողովրդի բախտում առավել ավերիչ շնչով է գործում Բեռլինի վեհաժողովին հաջորդած տասնամյակներին:

Մինչդեռ ամենայն համբերությամբ հայությունն սպասում էր վեհաժողովի խոստացած ինչ-ինչ բարեփոխությունների, սուլթան Համիդը պատրաստվում էր իրագործելու իր բարբարոսական ծրագիրը. ջարդել ու տեղահան անել արևմտահայությանը մաս առ մաս, վիլայեթ առ վիլայեթ: Եվ ջարդը այս անգամ սկսվում է հայոց անմահ էպոսում արձանագրված, քաջությամբ ավանդաբար հռչակված Սասունից: Բայց սասունցիները կոտորածին պատասխանում են հերոսական դիմադրությամբ:

Բեռլինի վեհաժողովից և 1878-ի Զեյթունի ապստամբությունից անցել էր տասնյոթ տարի, և ինչպես միշտ, 1894—1897 թթ. չարագուշակ տարիներին ևս հայ հասարակական միտքը՝ ականավոր և շարքային գործիչների ամբողջ կազմով նորից հարազատ ժողովրդի փորձությունների հետ էր և սերունդներին թողել է հայրենանվեր գործունեության ու ազատասիրության խորախորհուրդ էջեր:

Այս սերնդի արևմտահայ գործիչներից շատերն արդեն հայրենիքին ծառայելու անձնազոհ ուխտով, վտարանդի էին: Նպատակը մեկն էր՝ բորբոք պահել ժողովրդի կենսասիրական-ազատասիրական ոգին, եվրոպական մտավորական խիղճը՝ հօգուտ բզկտվող հնադարյան մի ժողովրդի: Բորբոքել ոչ թե խղճահարություն հարուցելով, այլ ծանոթացնելով նրա դարավոր քաղաքակրթությանն ու մշակույթին, նրան բաժին հասած անարդարություններին: Թիկունքում մեծ պատմություն և հզոր հարստություն ունեցող հայ ժողովրդի զավակների համար սկզբունքորեն մերժելի էր եվրոպացիների կեղծ մարդասիրական այն վերաբերմունքը, ինչ արձանագրել է Արփ. Արփիարյանը. «Երբ հայ ժողովուրդը պաշտպանելու խոսքեր կը դառնան Եվրոպայի մեջ, չե՞նք

գիտեր թե մեզի նկատմամբ արտահայտված հոգածությունը քիչ շատ կը նմանի—ավելի շատ, քան քիչ—այն կարեկցության, զոր կենդանիներու համար ցույց կուտան անասնապաշտպան ընկերությունները. սա տարբերությամբ միայն, որ մենք նվազ բախտավոր ենք»[27]:

Այստեղից արժանապատիվ գոյության, արժանապատիվ ազատասիրության նրա նշանաբանը. «Ամեն անհատ իր մեջը կրած ըմբոստացման զգացումովն է, որ բան մը կ'արժե, բանծ են: Նմանապես ժողովուրդներն ալ»[28] և ապա՝ «Հայը արյունին հետ կը ժառանգե մարտիրոսացման զգացումը: Այդ ժառանգական զգացումն է, որ մեր ցեղը կը ջլապնդե... Գաղափարի մը համար արյուն տալ մեզի ցեղային ունակություն եղած է: Մեր զորությունը այդ ունակության մեջ է, վասնզի հինցած ունակությունը բնավորության մաս կը կազմե»[29]:

Տոհմիկ այս բնավորությամբ էլ Արփիարյանը մնում է ինչպես հայ ժողովրդի՝ Զեյթունի. Սասունի հերոսամարտերի, այնպես էլ ազատասեր այլ ժողովուրդների մարտիրոսացման պաշտպանը:

Իսկապես սարսռեցուցիչ են իտալացիների ազատասիրությանը նվիրված Արփիարյանի տողերը՝ գրված տարբեր առիթներով և տարբեր ժամանակներում: Հայոց դատի պաշտպանության համար առանձնակի ուշադրության է արժանի մասնավորապես հետևյալ առիթը, որին ժամանակին անդրադարձել է Արփիարյանը:

1894—1895 թթ. հայոց հերթական աղետի օրերին՝ հասարակական կարծիքի ճնշման տակ, իրողությունները տեղում ուսումնասիրելու նպատակով մեծ տերությունները ստեղծում են ներկայացուցչություն: Նրա կազմում էր Գարիբալդիի զինվորներից այդ օրերին Հալեպի հյուպատոս Վիթոն, որը իբրև Իտալիայի ներկայացուցիչ այլ հյուպատոսների հետ միասին 1896-ին մեկնում է Արևմտյան Հայաստանի գավառները: 1898-ին հրատարակվում է նրա երկհատորանոց գիրքը, որի ոգին, էությունը Արփիարյանը բնութագրում է օգտագործելով իր հեղինակի ձևակերպումը՝ «Կ'ողջունեմ քեզի, դյուցազնաքաղա՛քդ Զեյթուն»:

Ազատասեր իտալացին ողջունում էր ազատասեր դյուցազնաքաղաք Զեյթունը, որի առիթով Արփիարյանը արձանագրում էր. «Իր ազատությանը համար մարտիրոսացող ժողովրդի մը գալարումներուն

27 *«Նոր կյանք», 1898, № 6։*

28 *«Շիրակ», 1906, № 1։*

29 *«Նոր կյանք», 1898, № 17։*

ի տես ո՛չ ֆրանսիացին, ո՛չ Անգլիացին կը զգան Իտալացիին սարսուռը: Օտարին կոշկոմ թաթը անոր գլխուն ալ շատ աւելի ճզմած պահեց: ...Այդ դիակներու ուրվականները վրեժխնդիր թափառեցան Իտալիոյ մէջ, խռովյալ սարսուռ Գեղեցկության, Բանաստեղծության Մայր— Հայրենիքը, ու օր մը մեջեն դուրս վռնտեց «Թետեոք»-ն,— Ավստրիացին:— Կարիպալտին եկած էր Քավուրին հետ. քաջություն ու խելք ձեռք ձեռքի տված հայրենասիրության մեծ հովանիին տակ»[30]:

Արյունով գրված այս տողերը կարդալիս, ակամայից մտաբերում ես ի պաշտպանություն գեղեցկության և արվեստների մայր երկիր Իտալիայի Ստենդալի արհամարհալից տողերը՝ հասցեագրված զինվորական մեծագործությամբ հիվանդ իր հայրենակիցներին՝ ֆրանսիացիներին, որոնց կրնկի տակ մի ժամանակ տնքում էր գերված ու կողոպտված Իտալիան:

Հետաքրքիր է նաև դիզվող, ուրվականների նման վրեժխնդիր թափառող դիակների պատկերը: Իր հարուցած զգացողությամբ այն որոշակիորեն հիշեցնում է նույն այդ տարիների արյան ու կոտորածների մթնոլորտում ձևավորված Սիամանթոյի ազատասիրական առաջին դողանջների՝ «Դյուցազնորեն»-ի, մտահղացումը, այնուհետև դառնալու համար նրա ողջ ստեղծագործության եղերգական շեշտված մոտիվներից մեկը:

Եթե Սրփիարյանը գործում էր Լոնդոնում, ապա ազգօգուտ գործունեության մյուս օջախը գտնվում էր Փարիզում, որի հայկական ոգին Արշ. Չոպանյանն էր:

Դժվար է գերագնահատել տասնյակ տարիների նրա հասարակական-մշակութային, ինչպես և հրապարակագրական գործունեությունը հօգուտ հարազատ ժողովրդի:

Սասունի դեպքերի օրերին «Հերոսները» վերնագրով տպագրվում է Չոպանյանի ազատասիրական էսսեն՝ նվիրված Վարդանանց հերոսամարտին, որը մնում է պատմական այդ իրադարձության շուրջը ստեղծված առատ գրականության լավագույն էջերից մեկը: Գնահատելով Վարդանանց մարտիրոսությունը, Չոպանյանը գրում էր. «Մեր մեծ տոնը, մեր հավիտենական տոնն է ան: Տոնը, որով ազգ մը իր հոգին կը փառաբանե, իր գոյությունը կը հաստատե: Վարդանը հայ ցեղին խորհրդանշական դեմքն է: Գաղափար-անձնավորությունն է ան, ազգ-մարդը:...

---

30 *Նույն տեղում, № 6:*

Հաղթական թագավորներ, իմաստուն վարիչներ, մեծազոր սուրբեր ունեցած ենք. և սակայն ո՛չ մեկ անուն այնքան գուրգուրանքով ու պաշտումով տարածված է մեր մեջ որքան Վարդանինը. դրոշականունն է ան: Մեր հին գրականության ամենեն կենդանի գիրքը ա՛յն է, որ Վարդանին պատմությունը կ՚երգե: Մեր հին ու նոր բոլոր բանաստեղծներուն ամենեն սիրական նյութը՝ հրեղեն հեքիաթն է Ավարայրի կռիվին: Ժողովուրդն իր անձնավորումը տեսած է այդ անվեհեր մարտիկին մեջ, որ մահվան դիմեց պահպանելու համար ազգային հավատքը, այսինքն ազգային ինքնությունը»[31]:

Ինչպես այս, այնպես էլ մյուս հոդվածներում ժողովրդի գոյությունն ու ինքնությունը, գրականության հիմնական ոգին և պաթոսը Զոհրաբյանը կապում է ազատասիրության հետ: Բայց ծանր փորձություններով անցած հայոց ճակատագիրը թելադրում էր ծայր աստիճանի ճկունություն և շրջահայեցություն, ինչ, հարկ է ասել, բնորոշ է այդ շրջանի համարյա ողջ առաջավոր մտավորականությանը: Իզուր չէր Վարդանանց մասին իր ոգեշունչ խոսքը Զոհրաբյանն ավարտում այսպիսի կոչով. «Սայրի՛ Վարդանը, բայց ատեն է, որ Վահանը երևա...: Ես կը բաղձայի, որ այս տարի, Վարդանանց տոնին օրը, ամեն Հայ, Եղիշեեն հետո, քիչ մը Փարպեցի կարդար»[32]:

Պատմական ծանր ճանապարհ անցած հայ ժողովուրդը փոքրաթիվ ժողովրդի գոյության բնազդով ու փիլիսոփայությամբ հենց այդպես էլ փորձում էր ապրել թուրքական դժոխքում, և սակայն ոչ մի արդյունք՝ ո՛չ Վարդանանց օրինակով ըմբոստանալուց, ո՛չ Վահան Մամիկոնյանի ավանդած շրջահայեցությունից:

Բարբարոսական լուծը գնալով դառնում էր առավել ահավոր, ինչպես հայ, այնպես էլ մյուս ժողովուրդների համար, բորբոքելով մեկ մակեդոնացիների, մեկ Թեսալիայի, տեղականորեն Կրետեի, այս արաբական ժողովուրդների ըմբոստությունը: «Անիծյալ երկիրն է առ Թուրքիան,— գրում էր Լ. Բաշալյանը:— Մակեդոնիո մեջ կրակը թերասքող մոխրին տակ արծարծուն կը մնա դեռ, և ահա երկրին մյուս ծայրեն արաբներն են, որ ոտքի կ՚ելլեն: Շաքարախտեն փտած մարմինն է, որուն վրա վերքը չի գոցվիր, չի՛ գոցվիր»[33]:

Սակայն, որքան էլ «շաքարախտեն փտած», անզեն ժողովուրդների ելույթները այդ «անիծյալ» երկրում խեղդվում էին արյան մեջ: Այս

---

31 *Նույն տեղում, № 5։*

32 *Նույն տեղում։*

33 *Նույն տեղում, № 9։*

սարիների թուրքական դաժանությունները հասնում են այն աստիճանի, որ 1895—1896-ին համառորեն հավատում էր, թե հասել է այն կետը, երբ վերջապես Թուրքիայի հանդեպ պետք է գործադրվեն «վճռական միջոցներ»: Բայց, ինչպես գուշակում էր ռուսական «Նեդելյա» շաբաթաթերթը 1895 թ. հոկտեմբերի 8-ի «Գերի ժողովուրդ» վերնագրով առաջնորդողում, կատարվում է հակառակը. «Տանկաստանից ահա լուրեր են հասնում հայկական ցույցերի, հայերի արյունալի ընդհարման մասին տաճիկ զորքերի հետ...,— հայտնում էր «Նեդելյան»:— Ավելի հուզիչ է այն անհամաձայնությունը, որ երեվում է պետությանց մեջ հայկական խնդրի նկատմամբ: Փոխանակ միաձայնությամբ և դրականապես պահանջելու Բ. Դռնից անհապաղ իրագործել այն բարենորոգումները, որ նա 17 տարի առաջ հանձն էր առել հաստատելու Հայաստանում, պետությունները, կարծես, հանգամանքից օգուտ են քաղում իրենց հին կոխնակի հաշիվները տեսնելու միմյանց հետ... Տաճիկ կառավարությունը նկատում է այդ երկպառակությունը և ձեռք է առնում արևելյան քաղաքականության սովորական միջոցները, այն է, խոստանում է՝ չկատարելու համար, հետաձգում է խնդիրը, ճզճզում է... սպասելով, որ մի այլ որևէ քաղաքական դեպք պետությունների ուշադրությունը գրավե մի այլ կողմ: Հայերը շատ լավ տեսնում են այդ և համահավասարությամբ ձեռնամուխ են լինում շտապ, անխոհեմ, գուցե և իրանց դատին վտանգավոր միջոցների. բայց այս հանգամանքի մեջ է և բնական: Եվ իրավի ի՞նչ պիտի անեն նրքա: Սպասե՞ն, բայց նրքա ամբողջ դարեր սպասում են իրանց ազատության և չեն հասնում նրան: Մինչդեռ տաճիկների անտանելի լծի տակ հեծող բոլոր քրիստոնյա ազգերը մեկը միուսից հետո առացան ազատ ազգային գոյություն—ինչպես օրինակ սերբերը, հույները, ռումինները, վերջապես և բուլղարները—միայն թշվառ հայերը զուրկ են այդ տարրական բարիքից...»[34]:

Այդ ամբողջ ընթացքում, ինչպես և հետո, հայ գրողները մշտապես եղել են ազատության և անկախության համար պայքարի ելած ժողովուրդների ջերմեռանդ պաշտպանները: Մակեդոնիայի և հայոց կոտորածների դեմ Փարիզում կազմակերպված միացյալ միտինգի օրերին Չոպանյանը և մյուսները նույն սրտացավությամբ գործում էին ինչպես սեփական հայրենիքի, այնպես էլ Մակեդոնիայի օգտին. տարիներ շարունակ հայ մտավորականությունը միևնույն հետևողակա-

[34] «Արձագանք», 1895, № 120։

նությամբ պաշտպանել է Կրետեի դատը, արաբական ժողովուրդների՝ Եմենի, Եգիպտոսի ազատագրական պայքարը:

Հայոց գրականության, հասարակական մտքի ներկայացուցիչների այլասիրությունը, մտահոգությունը մոտիկ և հեռու ժողովուրդների բախտով, ազատությամբ ու առաջադիմությամբ, իսկապես, արժանի է առանձնակի ուշադրության: Աննահանջ շահախնդրությամբ նրանք հետևել են ամենահեռավոր ժողովուրդների ճակատագրին, հարազատ ժողովրդի կյանքի ամենածանր օրերին անգամ լիասիրտ ընդունել նրանց հաջողությունը:

Բնորոշ է, որ 1898-ին, երբ արևմտահայության փրկության հույսը նորից էր մարում, տասնամյակներ առաջ Մեքսիկայի, Ուրուգվայի, Հարավային Ամերիկայի սևամորթների ազատությունը ողջունած հայ մտավորականությունը այս անգամ էլ ի դեմս Լ. Բաշալյանի ողջունում է Կուբայի ազատագրությունը իսպանական բռնատիրությունից. «Կուպացիներուն չարչարանքը մերիններեն վար չմնաց, ու արդար է որ ազատ ըլլան, քանի որ այնքան արի եղան: ...Եվրոպական այն մամուլը, որ, մեր ջարդերուն ատեն, մեր դատը ուրացավ՝ Թուրքիո բաժնետերերուն դրդումով, այսօր... կը հաջե Սպանիո—այդ քիչ մը ավելի միայն քաղաքակրթված Թուրքիային—բաժնետերերուն ազդեցությամբը: Կուպա կը տառապի գրեթե նույն այն գերութենեն, որ կը տիրե Հայաստան: Ապիկար ու ընչաքաղց կառավարություն մը այդ արգավանդ երկիրը կթան կովի մը պես կը քամեր, կը քամեր անխնա, ու ապստամբությունը զսպելու համար իր ձեռք առած միջոցները՝ իրենքզիրենք պաշտպանել չը կրցող ծերունիներու, անկարներու, կիներու ու տղաքներու դեմ, Հայաստանի ջարդերուն գրեթե համանմանվասար՝ այս դարավերջին ամոթը պիտի մնան...»[35]:

Բայց եթե կապիտալիստական աշխարհի խարդավանքներով ամեն անգամ խափանվում էին «վճռական միջոցները», և բուրժուական ծախու մամուլը ուրանում էր մեկ այս, մեկ մյուս, այդ թվում հայ ժողովրդի իրավունքները, հարկ է մյուս կողմից շեշտել, որ գնալով հունավորվում էր հոգևոր-մտավորական շարժումը՝ ի պաշտպանություն ճնշված ժողովուրդների, առհասարակ մարդկային արդարության ու ազատության:

Հիշենք, որ այդ տարիներին է վերաբերում Էմ. Զոլայի քաղաքացիական սխրանքը՝ Դրեյֆուսի պաշտպանությունը, լայն արձագանք

---

35 *«Նոր կյանք», 1898, № 9։*

և աջակցություն գտնելով ֆրանսիական մտավորականության, աշխարհի առաջավոր մարդկանց՝ գրողների, արվեստագետների, գիտնականների շրջաններում: Ինչպես հայտնի է այդ սխրանքի համար Զոլային վիճակվեց քննադատություն, հայրենազրկություն, ծանր հալածանքներ և զրպարտություններ, որոնք «խավարի հերոսները», նախանձոտ ու փոքրոգի «թզուկների նախիրը» շարունակեցին գրողի մահից հետո՝ երկար տարիներ: Այս բազմապատկվող անարդարությունների բոլոր հանգույցներում հայ գրողները՝ Լ. Բաշալյանը, Գր. Զոհրապը, Ալ. Ծիրվանզադեն, Ե. Օտյանը և ուրիշներ, սկզբունքորեն զինվորագրված ճշմարտության և արդարության պաշտպանությանը, գրել, հրապարակել են քաղաքացիական շնչով համակված բազմաթիվ էջեր, որոնք կարող են դառնալ դարավերջի հրապարակագրության լավագույն էջերի շարքը:

Եվրոպական և ռուսական մտավորականության շրջաններում այդ տարիներին լայն արձագանք են գտել նաև անարդարությունները հայ ժողովրդի հանդեպ: Հայոց դատի պաշտպանությամբ հանդես են եկել գրողներ, պատմաբաններ, լրագրողներ, արվեստագետներ, անկեղծ կամ երկդիմի խաղերով պետական-քաղաքական գործիչներ: Այդ մթնոլորտում էլ հենց ստեղծվեցին հանրահայտ Դեղին և Կապույտ գրքերը, փաստաթղթերի, նոթերի, հուշերի մի շարք այլ ժողովածուներ՝ եվրոպական լեզուներով, վավերական ահեղ մերկացումներ՝ խարանված թուրքաց բռնատիրական պատմությանը:

Այդ շարքում, անշուշտ, առանձին նշանակության են արժանի Ժ. Ժորեսի և Ան. Ֆրանսի անունները:

Ալ. Ծիրվանզադեն պատմում է, թե Փարիզում գտնված տարիներին (1905—1910) բաց չի թողել Ժորեսի ելույթներից ոչ մեկը, իսկ մի անգամ էլ Վ. Ղորղանյանի հետ միասին մասնակցել է սոցիալիստների նաշկերույթին, մտերմական մթնոլորտում հիացմունքով լսել և վայելել նրա արդարադատ ոգեշունչ խոսքը, որ «միշտ գաղափարական էր, միշտ տիրող օրենքների անարդարության ու ապականության դեմ»[36]: Գրողի վկայությունից հետևում է, որ աշխարհահռչակ սոցիալիստի շրջապատում եղել են նաև հայ մտավորականներ և, իհարկե, Լոնդոնի հայ գործիչների այն խնդրանքից հետո, որի մասին մանրամասն հիշատակություն է թողել Ժ. Ժորեսը[37]:

---

36 Ալ. Ծիրվանզադե, *Եժ, Հ. 8, Երևան, 1961, էջ 365:*

37 *Տե՛ս* «Геноцид армян в османской империи», Сборник документов и материалов. Под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, с. 499—500.

Այդ ժամանակներին էլ վերաբերում է Ժորեսի, ինչպես և Ան. Ֆրանսի և շատ ուրիշների ծանոթությունը հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին ու ճակատագրին:

1897 թ. մարտի 9-ին Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում Ան. Ֆրանսի նախագահությամբ տեղի է ունենում Արշ. Չոպանյանի բանախոսությունը՝ «Հայաստանը, իր պատմությունը, իր գրականությունը, իր դերը Արևելքի մեջ» թեմայով, որը շուտով լույս է տեսնում ֆրանսերեն առանձին գրքով, արժանանալով լայն ընդունելության և արձագանքների «ֆրանսիական ամենաբարձր գրագետներից», այդ թվում բանախոսությանը ներկա գտնված Ժորեսից:

1896—1899 թթ. այս և նման արձագանքները, ֆրանսիական մտավորական շրջանների վերաբերմունքը և գործունեությունը ի պաշտպանություն հայոց դատի անպայման պետք է դառնա լուրջ քննության առարկա: Նման ճանապարհով կարելի կլինի ավելի համակողմանիորեն պարզել մի կողմից եվրոպական տերությունների պաշտոնական երկդիմի վարքն ու վարքագիծը, մյուսից՝ առաջավոր մարդկանց մտահոգությունը հայ ժողովրդի ճակատագրով:

Այս առումով բատ ամենայնի հետաքրքրական է Ան. Ֆրանսի ներածական խոսքը՝ վերը հիշատակված բանախոսությանը, որտեղ, գնահատելով Չոպանյանի գործունեությունը, մարդասիրական ազնիվ կրքով աղեցուն գրողը հայտարարում էր. «Անհավանական այն ոճիրները, որոնց համար վտարանդի է այսօր նա: Իր Ֆրանսա պանդխտությանը միջոցին երևան հանեց այն ահռելի և կազմակերպված ջարդերը, որոնց մեջ երեք հարյուր հազար հայեր կոտորվեցան հրամանովը սուլթանին, այդ զորության և տկարության հրեշին, այդ սարսափեն հիմարացած բռնակալին: Պ. Չոպանյան, Հայր Ծառուկդյանին հետ, կը բաժնե պատիվը՝ ֆրանսացի ժողովրդին ճանչցուցած ըլլալու այդ զարհուրելի խողխողումը, որ ամիսներով դիվանագիտական գաղտնիք մը դարձած էր: Եվ իրոք, պ. Չոպանյան 1896 թ. հունիսին Բարիզ հրատարակեց հավաքածո մը Հայաստանեն գրված նամակներու, պարզ և ահավոր նկարագրություններ, որոնք պ. Ժորժ Քլեմանսոյի մեկ վեհանձն հոդվածովը հառաջաբանված, զարհուրանքով ու զայրույթով ցնցեցին հասարակությունը, զոր իր կառավարությունը և լրագիրներուն մեծագույն մասը դեպքերուն գրեթե անտեղյակ պահած էին: Այս սրտոտ մարդիկը, Արևելքի քրիստոնյաները Եվրոպայի հանրային զգացման պաշտպանությանը ենթարկվեցին»[38]:

[38] «Նոր կյանք», 1898, № 11:

Ֆրանսի հովանավորմամբ հայոց «զարմուհիի խողխողումները» դարձել էին «ցիվիլիզացիոնական գաղտնիք», որանք թաքցնում էին և՛ կառավարությունը, և՛ մամուլը՝ մեծագույն մասով։ Պաշտոնական Ֆրանսիայի նման քաղաքականությունը պատահական չէր, գալիս էր անցյալից։ Այն նույնությամբ շարունակվեց ներառյալ մինչև 1920 թ., երբ ֆրանսիական զորքերի աչքի առջև սրի քաշվեց Կիլիկիայի հայությունը, մինչդեռ այդ օրերին կառավարության գլուխ էր կանգնած Ժ. Կլեմանսոն՝ ինարկե, արդեն քամուն տված իր վաղեմի «վեհանձնության» ցույցերը։ Ինչ-որ ժամանակ ձեռնտու «վեհանձնություն», որ Կլեմանսոյին հարկավոր էր ամրացնելու սեփական անձի և թևի դիրքերը պետական վերին շրջաններում։ Իսկ ազատության, արդարության, խղճի, ինչպես և հայ ժողովրդի դատի պաշտպանությունը նորից վիճակված էր Ֆրանսիայի լավագույն զավակներին՝ Ժ. Ժորեսին, Ան. Ֆրանսին, Ռ. Ռոլանին, Հ. Բարբյուսին և ուրիշների, որոնք հետագայում ևս իրենց հեղինակավոր ձայնը միացրեցին հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանը, գնահատեցին նրա հոգևոր-մշակութային ստեղծարար լուման մարդկության մեծ գանձարանում։

Հայ ժողովրդի ազատագրության հանդեպ երկու դիրքորոշումը որոշակի էր նաև ռուսական իրականության մեջ։ 1894—1898 թթ. հայկական հարցում ցարական կառավարությունը այնքան գրավել էր բացահայտ երկդիմի դիրք։ Միաժամանակ բնորոշ է, որ հենց այդ տարիներին գնալով ավելի ու ավելի հաստատուն էր դառնում իր գոյությունը Ռուսաստանի հովանու տակ շարունակելու հայության ընդհանուր ձգտումը։ Որոշակի ռուսական կողմնորոշում ունեին Արփիարյանը, Բաշալյանը, Օտյանը, Չոպանյանը և ուրիշներ, և ինչ խոսք արևելահայ գրողները։ Դեռևս 1894-ին, Սասունի ջարդերի օրերին, հիշատակարանային գրառումներում երիտասարդական վերին անկեղծությամբ Ավ. Իսահակյանը արձանագրում էր. «Շատ, շատ լավ կլինի, որ Ռուսաստանը գնա և ողջ Հայաստանը տիրե. գոնե մեր ժողովուրդը էլ չի ջարդվի—սովից ու սրից,— գոնե ռուսը օրենք և սիրտ ունի։ Այն ժամանակ ում ձեռքի տակ, որպես մի ամբողջություն, կզարգանանք ու կմնենք, ինարկե, որ մի օր Ռուսաստանում կոնստիտուցիա կլինի <...> Այս շատ լավ կլինի։ Ես այսուհետև ինձ կպատրաստեմ մի զինվոր. ուրիշ զինվորների հետ արյունս կթափեմ ռուսի դրոշակի տակ և հայրենիքս կփրկեմ կրակից ու արյունից ու սովից»[39]։ Եվ

---

[39] Ավ. Իսահակյան, *Հիշատակարան*, Երևան, 1977, էջ 94։

տանյան, եթե մի կողմից ցարական պետական գործիչների՝ Լոբանով-Ռոստովսկու, Նելիդովի և նմանների սիրաշահող հովանավորությամբ Աբդուլ Համիդը կոտորում էր արևմտահայությանը, Կովկասի կառավարչապետ ոխրահոտ Գոլիցինի հայատյաց քաղաքականությամբ փակվում էին հայկական դպրոցները, խլվում էր վանքապատկան ունեցվածքը, բանտ ու աքսոր էին քշվում հայ ժողովրդի առաջավոր զավակները՝ Ղ. Աղայանը, Ալ. Ծիրվանզադեն, Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և շատ ուրիշներ, ապա մյուս կողմից՝ շարունակվելով խորանում էր Պետրոս Առաջինի, Կարամզինի, ապա դեկաբրիստների ու Գրիբոյեդովի ժամանակներից հարատևող առաջավոր Ռուսաստանի հետաքրքրությունն ու մտահոգությունը հայ ժողովրդի բախտով:

90-ական թվականների հետադիմության պայմաններում առաջավոր մամուլը լայնորեն արծարծում էր Սասունի, Մուշի արյունոտ դեպքերը, 1896-ին Մոսկվայում լույս է տեսնում «Հայերի դրությունը Թուրքիայում մինչ 1895 թ. ահրությունների միջամտությունը» ատվար գիրքը, որտեղ զետեղվել էին օտար և ռուս ականատեսների անթիվ վկայություններ: Դրան հետևում է հայտնի «Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» հատորը, որի էջերից հայերի հետ միասին արևմտահայությանը եղբայրական ձեռք էին պարզում ռուս մարդիկ:

* * *

Հաղթահարելով երկարատև տեղատվությունը, առաջավոր Ռուսաստանը մոտենում էր 1905 թ. հեղափոխությանը՝ եղբայրական ձեռք մեկնելով և միավորելով կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի հեղափոխական ուժերը: Միավորվում էր հեղափոխական-զանգվածային գրոհի համար՝ պրոլետարիատի առաջնորդությամբ: Բնութագրելով ազատագրական շարժման այս ժամանակաշրջանը, 1912 թ. Վ. Ի. Լենինը գրում էր. «Փոթորիկը բուն մասսաների շարժումն է: Պրոլետարիատը, միակ մինչև վերջը հեղափոխական դասակարգը, ոտքի ելավ նրանց գլխին անցած և առաջին անգամ միլիոնավոր գյուղացիներին ոտքի հանեց բացահայտ, հեղափոխական պայքարի: Փոթորիկի առաջին գրոհը եղավ 1905 թվականին: Հաջորդն սկսում է աճել մեր աչքի առաջ»[40]:

[40] Վ. Ի. Լենին, *Երկ.*, հ. 21, էջ 323։

Մարդկության ազատասիրական դարավոր ոգորումները թևակոխում են սոցիալական-քաղաքական պայքարի նոր, պրոլետարիատի դասակարգային պայքարի փուլը, և 900-ական թվականների սկզբներից այդ պայքարի նորձանուտում էին Անդրկովկասի ժողովուրդները: Ծայր են առնում Բաքվի, Թիֆլիսի պրոլետարիատի հուզումները և ապա ելույթները, որոնց արձագանքները հասնում են մինչև լենինյան «Իսկրայի» էջերը: Դրանց հեղինակները Անդրկովկասի ժողովուրդների զավակներն էին, այդ թվում իբրև առաջիններից մեկը՝ Բ. Կնունյանցը, որը մի դեպքում լուսաբանում էր Բաքվի բանվորական չընդհատվող գործադուլների, մի այլ առիթով ցարական ազգահալած քաղաքականության դեմ հայ ժողովրդի զանգվածային ընդվզումների պատճառները: Ուշագրավ է, որ «Նոր կյանքի» խորագրով տպագրված Կնունյանցի հոդվածը հատուկ խմբագրականով գնահատում է «Իսկրան». «Գոհունակությամբ նշում ենք, որ կովկասցի մեր ընկերները միանգամայն ճիշտ գնահատեցին հայկական եկեղեցական գույքի դեմ ցարիզմի ձեռնարկած արշավանքի քաղաքական նշանակությունը և իրենց օրինակով ցույց տվեցին, թե ընդհանրապես սոցիալ-դեմոկրատիան ինչպես պետք է վերաբերվի ամեն մի նման երևույթի նկատմամբ: ...մենք հայ պրոլետարներին միավորելու ենք իրար հետ և ռուս բանվորների հետ՝ նրանց բոլոր սեփականազրկողներին սեփականազրկելու համար պայքարելու նպատակով: Բայց ոստիկանական բռնություններից մենք պետք է պաշտպանենք և կպաշտպանենք ոչ միայն պրոլետարներին, այլև հասարակության բոլոր խավերին... Հանուն միությունների ազատության և ինքնորոշման ազատության մենք պահանջում ենք, որ ցարական կառավարությունը չհամարձակվի ձեռքը դնել հայկական եկեղեցական գույքի վրա: ...ինքնակալական ոստիկանական բռնության դեմ մենք պետք է պայքարենք առաջին շարքերում, ժողովրդի որ խավերի վրա և ինչ առիթով էլ որ թափվի այդ բռնությունը: Այդ պայմանով միայն մեզ կպատկանի **հեգեմոնիան ցարիզմի դեմ մղվող պայքարում**»[41]:

Հեղափոխական պայքարի հունը թևակոխած Ռուսաստանի ժողովուրդների դեմ փորձված զենքերից մեկն էլ ազգամիջյան կռիվներ հրահրելն էր, որը այս անգամ ևս հմտորեն գործի է դնում ոստիկանական բռնատիրությունը: Ծայր են առնում 1905 թ. կովկասյան հայտնի ազգամիջյան ընդհարումները, իրենց վրա բևեռելով բոլշևիկ-

---

41 Բ. Կնունյանց. *Ըն, Երևան, 1978, էջ 84—85*:

յան կուսակցության, Ռուսաստանի առաջավոր մարդկանց, ինչպես Մ. Գորկու ուշադրությունը: XIX դ. ռուսական գրականության ազատասիրական մեծ ավանդներով, մարքս-լենինյան հեղափոխական ուսմունքով զինված արվեստագետը «սոցիալական հատակի» իրավունքների, ճնշված ու ոտնահարված մարդու ու ժողովուրդների ազատության անկաշառ պաշտպանն ու ջատագովն էր: Պուշկինից և Լերմոնտովից հետո լինելով Կովկասի երգիչը, Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Գորկին օր առ օր հետևում էր երկրամասի իրադարձություններին, գրողի և քաղաքացու անկասկածելի նախանձախնդրությամբ վերաբերվում Անդրկովկասի ժողովուրդների հեղափոխական միասնությանը: Ազատասիրական նշանաբանը մեկն էր՝ համայն Ռուսաստանի ժողովուրդների միասնական պայքարով տապալել միակ թշնամուն՝ բռնապետությունը, որն իր գոյատևման համար դիմում էր խայտառակից խայտառակ միջոցների: 1905 թ. «Կովկասյան դեպքերի առթիվ» բաց նամակում Գորկին գրում էր. «Մարդկության պատմության ողջ ընթացքում ոչ մի երկրում իր իշխանությունը ժողովրդի վրա պահելու հրամանատարական դասակարգի կռիվը չի եղել այնքան խայտառակ, այնպես անամոթ ու լկտիորեն դաժան, ինչպիսին մեր արյունոտ օրերում մեր երկրում է»,— գրում էր, և ապա բացատրում. «Ամենից առաջ ի՞նչ է անհրաժեշտ ժողովրդի և մարդու զարգացման համար:

Իր անձնական և հասարակական ցանկությունները ազատ որոշելու իրավունքը, յուր ոգու և յուր ցեղի ոգու անի համար համաձայնեցության առավել լայն ձևեր ստեղծելու իրավունքը:

Որեմն միթե՞ հայը, և միթե՞ վրացին են զրկում թաթարին այդ ազատությունից: Միթե՞ ռուսը, հրեան և լեհը ոտքով ու ձեռքով բանտված չեն այն ուժով, որը և նույնքան ծանր ընկած է թաթարի ուսերին:

Մենք բոլորս ունենք մեկ թշնամի»[42]:

Ի պատիվ հայ հասարակական գիտակցության հարկ է արձանագրել, որ հեղափոխության նախօրեի առաջին դեպքերից՝ արևելահայ ու արևմտահայ հատվածների ամբողջությամբ, հրապարակագիրները, գրողները մեծագույն մասով գրչով մարտնչել են հանուն հեղափոխության: Նշանաբանն այն էր, ինչ ծառացման կոչ-հրավերի ձևով այդ փոթորկոտ օրերին Վ. Փափազյանի ստորագրությամբ հրապա-

42 *М. Горький,* Собр. соч. в тридцати томах, т. 23, *М.*, 1953, с. 339—340.

րակվել է մամուլում. «Գրողները ոչ միայն հեղափոխության ներշնչողներն ու հառաջընթացները են եղել, այլ եթե պատմական այսպիսի վսեմ րոպեներում ողջունում ենք կարմրորակ արշալույսի ծագումը, պարտական ենք նաև, գուցե և մեծ մասամբ՝ գրողներին—լինի հայ, ռուս, վրացի կամ լեհացի... Գրողը պարտավոր է և գործի մեջ ջանալ հառաջընթաց դառնալու»[43]:

Գրականության ազատասիրական բովանդակությունը, հեղափոխականացնող առաքելությունը, գրողի քաղաքացիական նկարագրին վերաբերող տողեր, որոնք, իրոք, կարող են համարվել նվիրական:

Անշուշտ, տարբեր են եղել գրողների ու հրապարակախոսների գաղափարական-աշխարհայացքային դիրքորոշումը, հեղափոխության ուժերի ու նպատակների ըմբռնումները, բայց և անհնար է շրջանցել այն իրողությունը, որ նշանավոր, անվանի դեմքերով հարուստ հայ գրականության ժամանակի ամբողջ գերդաստանը անվերապահորեն գտնվել է բռնատիրության դեմ հայտարարված պայքարի դիրքերում: Այնպես որ պատահական չէր, որ հենց այդ տարիներին էլ հայ իրականության մեջ սկզբնավորվեց Հ. Հակոբյանի անվան հետ կապվող պրոլետարական գրականությունը: Գրապատմական այս երևույթը, ինչ խոսք, ամենից առաջ Անդրկովկասի բանվոր դասակարգի հեղափոխական մթնոլորտի, բոլշևիկյան կազմակերպության ուժի արտահայտություն էր, մի կազմակերպություն, որն իր շարքերում արդեն իսկ 1905 թ. հեղափոխության տարիներին համախմբում էր ճանաչված հեղափոխականների մի ամբողջ սերունդ՝ երկրամասի բազմազգ, այդ թվում հայ ժողովրդի զավակներից՝ Ի. Լալայանց, Բ. Կնունյանց, Ա. Զուրաբյան, Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան, Ալ. Մյասնիկյան և ուրիշներ, որոնց հեղափոխական գործունեությունից անբաժան էր մարտաշունչ հրապարակախոսությունը՝ միանգամայն նոր էջ հայ հասարակական մտքի պատմության մեջ:

Այդուհանդերձ անվիճելի է, որ պրոլետարական գրականության ծնունդը պայմանավորված էր նաև ամբողջովին ազատասիրությամբ շնչող Անդրկովկասի ժողովուրդների տրամադրություններով, հայ գրականության ընդհանուր ոգով:

Հայոց հասարակական մտքի, ինչպես և դասական գրականության, ժամանակի ազատասիրական վերելքը, կարելի է համարել աննախադեպ. աննախադեպ էին և սոցիալ-տնտեսական, ազատա-

---

43 *«Վրթ. Փափազյանը գրականության մասին», Երևան, 1963, էջ 92։*



3--1254

կան-դեմոկրատական ապասելիքները, որից հետևում են նրանց և՛ ընկրկածությունը հեղափոխությունից, և՛ խոր մտահոգությունը հեղափոխության բախտով:

Դեռևս ռուս-ճապոնական պատերազմում Ռուսաստանի կրած պարտության օրերին, գուշակելով ցարիզմի ճիրանները թոթափած ազատ Ռուսիայի առաքելությունը մարդկության պատմության մեջ, Ե. Օտյանը գրում էր. «Ռուսիո այս պարտությունը ապահովաբար մարդկային պատմության կարևորագույն դեպքերեն մին է և իր ազդեցությունը բոլոր աշխարհի վրա զգալի պիտի ըլլա: ...Ռուսիա, խաղաղության կնքումեն ետքը, կա՛մ ազատական պետության շարքին մեջ պիտի անցնի, կամ անդառնալիորեն պիտի ջնջվի: Սակայն երեվույթները այնպես ցույց կուտան, թե առաջին ենթադրությունն է որ պիտի իրագործվի, ինչ որ բարեբախտություն մը պիտի ըլլա մանավանդ մեզի, հայերուս համար: Կովկասի հայությունը զինքը մինչև հիմակ պրկող շղթաներեն զերծ, ազատության կենսանորոգ շունչովը առլցված, պիտի բարգավաճի և ուռճանա, ապագա ազգային անկախության համար զորավոր ու անդիմադրելի զանգված մը կազմելով...»[44]:

Հայ գրողները Օտյանից՝ Սիամանթո ու Թեքեյան, Շիրվանզադեից, Իսահակյանից, Փափազյանից մինչև Հ. Հակոբյան, Ծ. Կուրղինյան, Վ. Տերյան, այս համոզմունքով էլ ծառայել են հեղափոխությանը՝ հավասարապես ստեղծագործությամբ ու հասարակական գործունեությամբ: Անծայր երկրի ամենատարբեր վայրերի անցքերը կենդանի արձագանք են գտել ժողովրդական զանգվածների բուն ընդերքում, հայ հասարակության լայն շրջաններում, մշտապես արծարծվել գրականության մեջ, մամուլում: Բարձրարժեք ստեղծագործություններով, հասարակական-լրագրական գործունեությամբ ստեղծվել-հյուսվել է հեղափոխության ազատասիրական մի տարեգրություն, առանց որի անհնար է գծագրել XX դ. առաջին տասնամյակների հայ հասարակական մտքի ու գրականության դիմապատկերը, ապրած տրամադրությունների վերելքը և ապա նահանջը, որոշ դեպքերում հուսախաբությունը հեղափոխության պարտությունից հետո՝ պատճառահետևանքային բարդ հանգույցներով:

Հայ հեղափոխականների գործունեության կողքին այդ տարեգրության էջերը զարդարում է 1905—1907 թթ. ազգամիջյան ընդհարումների օրերի Հովհ. Թումանյանի սխրանքը, երբ, վտանգելով կյանքը,

[44] Ե. Օտյան, Եր., Երևան, 1956, էջ 748:

ճերմակ դրոշով շրջում էր գյուղից գյուղ՝ խանդավառեցնելով Անդրկովկասի բազմազգ բնակչությանը: Զարդարում են Ավ. Իսահակյանի մարտաշունչ ստեղծագործությունները՝ «Ազատության զանգը», «Ծաքրո Վախշվիլին» և մյուսները, դյուցազնական շարակարգով ալիքավորվող Սիամանթոյի «Կովկասը», հեղափոխության ուժն ու կոչումը մարմնավորող չափածոներով.

Ի՞նչ ոսկեղեն դարագլուխ է այս, և շղթաներու ի՞նչ զայրագին
փշրտում.
Ի՞նչ ընդհարում ճակատ ճակատի, և հավատքի ի՞նչ հաղթանակ.
Ի՞նչ երկաթակուռ հարված բռնակալության անխախտելի
օրենքներուն.
Ի՞նչ արյունի հեղեղում քեզ անարժան թշնամիիդ վայրագ
շարքերեն...

Զա՞րկ, ով անարգ Ճակատագիրը ջախջախելու և Չարիքն
ըմբերանելու համար,
Զա՞րկ, որովհետև ամե՞ն Հույս զՔեզ կը հուսա և ամեն
Ապագա զՔեզ կը պաղատի,
Զա՞րկ, վասնզի ամեն Ազատություն ու ամեն Արև քու
հարվածիդ կայծերեն պիտի ծնանին.
Զա՞րկ, Դու անթառամ սիրույդ և ատելությանդ չափին
խորությանը համեմատ...[45]

Զարդարում են Ալ. Շիրվանզադեի «Ջհուդի ականջը», Ծ. Կուրղինյանի «Հանգցրե՞ք ջահերը», «Բանվորները», Հ. Հակոբյանի «Հեղափոխություն», «Մեռա՞ն, չկորա՞ն», «Նահատակները» բանաստեղծությունները և այլն և այլն:

Զարդարում է այն, որ հեղափոխությանը ծառայելու համար (այն էլ «Մի կաթիլ մեղրի» ժողովուրդների բարեկամության փիլիսոփայական խորհրդով) երկու անգամ ձերբակալվել, վերջում պետերբուրգյան ատյանով դատվել է Թումանյանը, աքսորվել է Շիրվանզադեն, ձերբակալվել ու երկարատև վտարանդիության է դատապարտվել Իսահակյանը, առհասարակ հալածվել ու բռնադատվել են գրական-մտավորական մարդիկ, մարտնչող միտքը:

Հեղափոխության հանդեպ ազատասիրական դիրքորոշումը եղել է անվերապահ, թեև որոշակի են տարբերությունները Թումանյանից ու

45 Սիամանթո. *Ընտ., Երևան. 1957, էջ 39, 11—12:*

Սիամանթոյից մինչև հետագայում կոմունիստ Տերյանի միջև, որն այդ տարիներին արդեն հարում էր մարքսիզմին: Մտաբերենք Տերյանի 1906—1907 թթ. նամակագրական էջերը, նրա բնարերգության մեկնության տեսակետից չափազանց կարևոր այս տողերը. «Սոցիալիզմը—դա անհատի անսահման ազատությունն է, անհատի, որը սիրում է ուրիշներին, ինքն իրեն զոհաբերում է և դրանով իսկ հաստատում է իրեն: Ահա ինչու «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»-ը մեծ կանչ է, հրաշալի՛ լոզունգ: Ահա թե ինչու ես սոցիալիստ եմ: Եթե սոցիալիզմը անհատին տար միայն նյութական ապահովություն... ես երբեք չէի դառնա սոցիալիստ»[46]:

Հեղափոխության ամբողջ ընթացքում հայոց միջավայրում քաջալերվել են հեղափոխական ելույթները, քաղաքացիական զգաստությամբ օր առ օր բացատրվել-դատապարտվել են ռեակցիայի քայլերն ու հարձակումները: Հետևելով մի կողմից հեղափոխության դեպքերին, մյուսից՝ գրական-լրագրական արձագանքներին, կարելի է տեսնել, թե քաղաքացիական որպիսի հասունացում է ապրել հասարակական միտքը, հեղափոխության պարտության դեպքում՝ որքան խորությամբ է վերապրվել սպասվող իրավիճակը: Կատարյալ ոգու սով, ասել է այն, ինչ անհամեմատ մեղմ որակումով կոչում ենք անկումայնություն, հուսալքություն և հուսախաբություն,— զանգվածային բռնադատություն, և դրա դիմաց ամբոխային խուլ թմրություն ու անտարբերություն: Օրը օրին հեղափոխական անցքերը արժանացել են զգաստ արձագանքի ու մեկնության, ահազանգվել է ռեակցիայի հաղթության վտանգի ահավորությունը անձայն Ռուսաստանի բոլոր ժողովուրդների համար:

Արձագանքելով ազատական Ռուսիայի կոչերին, 1905 թ. Մոսկվայի դեկտեմբերյան զինված ապստամբության նախօրեին Վ. Փափազյանը մեկնաբանում էր. **«Հայրենիքը վտանգի մեջ է...»**՝ «Եվ վտանգը, հիրավի, մեծ է: Հոկտ. 17-ի մանիֆեստը իր բոլոր կետերով... հակադարձ կերպով է գործադրվում: Մամուլի և խոսքի ազատությունը, մի նոր օրենսդրությամբ, ճնշվում է նույնքան, որքան առաջ էր: Փոխվում են միայն անունները, փոխվում է դատարանը, սակայն խստությունները և պատասխանատվությունը նոր կերպարանքների տակ մնած՝ ավելի ծանրանում են: Միությունների և ընկերակցությունների ազատությունը, մի ուրիշ օրենսդրությամբ՝ հալա-

46 Վ. Տերյան, *Եժ*, *հ. 3*, *Երևան*, *1975*, *էջ 233*:

սարեցնում են գրողի, անձի անձեռնմխելիությունը ամեն րոպե խախտվում է ձերբակալություններով, խուզարկություններով... լայնածավալ պետության մեջ քաղաք չէ մնում, որ չներկվի մարդկային արյունով, որ չավերվի ու չթալանվի հանուն «կարգուկանոնի», հանուն «հայրենասիրության» և այն՝ ոստիկանության և իշխանությունների քաջալերությամբ»[47]:

Զինված ապստամբության պարտության հաջորդ օրն արդեն նույն Փափազյանը արձանագրում էր. «Գրեթե ամբողջ Ռուսաստանն այժմ դրված է պատերազմական կամ պաշարման դրության մեջ: Սկսած մայրաքաղաքներից մինչև Լեհաստանի բոլոր նահանգներն ու Կովկասն ամբողջ՝ գտնվում են զինվորական ուժի ճնշման տակ:...

Մայրաքաղաքի թերթերը դեռ լի են նկարագրություններով, դեռ արձանագրում են հարյուրներով ընկած զոհերի, փլեցրած տների, հազարավոր վիրավորների թիվը: Նման չտեսնված սպանդանոցային կոտորած, հազարավոր դիակներ—անխտիր սպանված են մանուկներ, կանայք, կատաղած զինվորների գնդակներից հնձված ամբոխ, վայրենության զոհ գնացած անմեղ գիտնականներ, դպրոցական հաստատություններ, տպարաններ՝ փակված ու ավերված... Բարդուղեմյան գիշերը տևել է ամբողջ 8—10 օր և այն՝ թնդանոթների, գնդակացիրների կարկուտների տակ... Մի խոսքով՝ մի սպանդանոց, արյան ծով, դիակների և փլատակների կույտ...»[48]:

Նմանօրինակ դաժանություններով հաղթանակող ռեակցիան մոլեգնում էր կատաղի թափով՝ երկրով մեկ տարածելով սարսափ ու թմրություն: Նահանջում էր ազատասիրական ընդհանուր ոգին, որից, անշուշտ, չէր կարող հեռու մնալ Անդրկովկասի հասարակական կյանքը: Հարցն այն է, սակայն, թե էապես ինչպիսի դիրքորոշումով էր բնութագրվում տվյալ դեպքում հասարակական մտքի կարևոր օղակներից մեկի՝ գրականության նահանջը. արդյո՞ք հասարակական ճահճացումին ապավինելու, ազատասիրական իդեալներից հրաժարվելու գնով, ինչ հատկանշական էր անկումայնությանը,—թե բնորոշ է այլ բան: Իհարկե, հայ գրողների միջավայրում ևս տեղ է գտել հուսախաբությունը, հասարակական հարցերից խուսափելով՝ ձևավորվող նոր սերունդը տուրք է տվել պսիխոլոգիզմին, սակայն այդուհանդերձ, անվանիների հաստատուն կողմնորոշումով նահանջել՝ նշանակում էր

[47] Վրթ. Փափազյան, *ԵԺ*, հ. 5, *Երևան*, *1959*, *էջ 622*։

[48] *Նույն տեղում*, *էջ 625*։

անթեղել ազատասիրությունը հետագա նոր բորբոքումների հույսով: Տոմիկ ելը, որին դիմում էր գրականությունը՝ ժողովրդի ազատասիրական ոգորումների յուրաքանչյուր ներթակյան պարտությունից հետո:

Բնականաբար անթեղածը կարող էր բորբոքվել կամ պոռթկալ, և դրա ակնհայտ նշաններից են մի կողմից՝ Ալ. Ծատուրյանի «Աբու-Լալա Մահարին», մյուսից՝ Հ. Հակոբյանի «Նոր առավոտը»՝ երկուսն էլ ստեղծված ամենախորը ռեակցիայի պայմաններում, երկուսն էլ՝ տարբեր մեկնակետերից ուղղված հասարակական ճահճացման, անազատության ու բռնության դեմ:

Ընդհատակ անցած բոլշևիկյան կուսակցության շարքերում՝ ժողովրդական լայն զանգվածներին հեղափոխական նոր վերելքի էին նախապատրաստում հայ բոլշևիկները՝ Ս. Կնունյանցը, Ս. Զուրաբյանը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը, Արտ. Կարինյանը և մյուսները, որոնց գրականության և արվեստի հարցերին վերաբերող հոդվածները նշանավորում են մարքս-լենինյան գրականագիտության սկզբնավորումը հայ իրականության մեջ:

Հալածանքների, բռնության դաժան օրերին Ս. Սպանդարյանը հնչեցնում էր Շիլլերի «Սեր և խարդավանքի» այժմեականությունը, որովհետև «մեր օրերում էլ հարկ է լինում ջերմորեն պայքարելու «մարդու» համար, «մարդկային անձնավորությունը» պաշտպանելու անարգանքից, հասարակական անարդարությունից և ճնշումից...»[49]: Գրականության կուսակցականության նույն աներեր դիրքերից Ստ. Շահումյանը պաշտպանում ու գնահատում էր Մ. Գորկու ստեղծագործությունը, բանվորական մամուլին կոչ անում «բարձրաձայն խոսել կյանքի անարդարության մասին, ճնշումների ու կամայականության մասին»[50]: Փաստաբանելով հայ գրերի գյուտը և գրքի տպագրությունը, Ալ. Մյասնիկյանը շեշտում էր, որ դեռևս V դ. Եզնիկ Կողբացին գրում էր, թե «հասարակական գործիչը չպետք է տարվի մարմնական-ընչասիրական ձգտումներով, այսինքն՝ որ նա պետք է լինի ամենից առաջ հասարակական մարդ, անհատ՝ տոգորված հասարակական գաղափարով»[51]:

Բոլշևիկյան «Պրավդայի» էջերում պաշտպանելով «ռեալիզմի վերածնունդը», Արտ. Կարինյանը շեշտում էր, որ «այսօր «կոպիտ» իրականությունը նկարագրող գրողների թիվը շատ ավելի մեծ է, քան մոտիկ

---

49 Ս. Սպանդարյան, *Եր, հ. 2, Երևան, 1959, էջ 88*։

50 Ստ. Շահումյան, *Եժ, հ. 2, Երևան, 1976, էջ 335*։

51 Ալ. Մյասնիկյան, *ԸԵ, Երևան, 1957, էջ 78*։

անցյալում: Մաքսիմ Գորկին, Ալեքսեյ Տոլստոյը, Բունինը, Շմելյովը, Սուրգուչովը և այլ գրողներ իրենց երկասիրությունների մեջ նկարագրում են ոչ թե «ներքնաթային նեռռ ժամանակները» կամ խորհրդավոր «տայիտցիներին», այլ իսկական ռուսական կյանքը իր բոլոր արժավիրքներով և քաղքենիական առօրյայով»: Այս նույն ելակետից առանձին գրախոսելով Գորկու «Հեքիաթները» գրականագետը արձանագրում էր. «Մաքսիմ Գորկին նիրավի իր իտալական հեքիաթների մեջ շատ անգամ նանդես է գալիս որպես նոր ճշմարտության քարոզիչ... Գորկին կարծես նկարագծում կամ փորձում է կերտել ժամանակակից հասարակության մեջ նոր կյանքի համար մարտնչող «նոր մարդկանց» հոգեբանության առանձնահատուկ և բնորոշ հատկանիշները... Կենսուրախ հայեցությունը և եղբայրական սիրո քարոզը շատ ցայտուն կերպով և ինքնատիպ գույներով ու տոնով զարդարում են Գորկու իտալական բոլոր հեքիաթները»[52]:

Հասարակական-գաղափարական մարդու այսօրինակ հայեցությամբ ու նշանաքանով ռեակցիայի տարիներին և հետո հայ բոլշևիկների հետ միասին նույն մթնոլորտում ապրել և գործել է հայ առաջավոր մտավորականությունը:

* * *

Ռուսական կայսրության բոլոր ծայրերում մոլեգնող ռեակցիայի հետ միասին նույն այդ տարիներին հայ ժողովրդին և հայոց մշակույթին սպառնում էին դաժան այլ փորձություններ. 1908 թ. թուրքական պետական հեղաշրջումը՝ հայ ժողովրդին բնաջնջելու երիտթուրքական հանցագործ ծրագրով:

Եռադարձ հայացքով հետին թվով, թերևս, կարելի է մեղադրել հայ մտավորականությանը, այդ թվում գրողներից շատերին թուրքական հեղափոխության ժամանակների խանդավառության, երիտթուրքական ազատասիրական-եղբայրասիրական կեղծ ու պատիր խոստումներին հավատալու համար: Առավել ևս զարմանալի է, որ 1909-ին Ադանայի ջարդերից հետո անգամ, որին զոհ գնացին 30 հազար անմեղ հայեր, հնարավոր եղավ գրել այնպիսի տողեր, որպիսիք գտնում ենք Ռ. Զարդարյանի «Մեռնողները և ապրողները» հոդվածում՝ գրված այդ կոտորածի տարեդարձին. «Մեր ժողովրդին արևը, քաղաքական մթին հորիզոններու վրայեն, շատ անգամներ ողջունած է վերածնության այդ ուժը, թող ողջունե և այս անգամ,— որունեւոն խաղաղու-

52 Արտ. Կարինյան. *Գրական արձագանքներ, Երևան, 1955, էջ 5, 12։*

թյան, աշխատանքի ու ազատության ձգտող հայությունը որոշած է ապրիլ և իր Սուգին մեջէն, որքան ալ սև ու խոր ըլլա ան, դարձյալ նայիլ վաղվան՝ հուսալից և անընկճելի:

Օր պիտի գա, և մենք հույս ունենք այդ օրվան, որ Կիլիկյան դամբարաններուն վրա արտասվելու պիտի երթան զավակները անոնց՝ որ իբրև անգիտակից զոհ Ոճիրին, դանակն եղան՝ հարվածելու համար անմեղ եղբոր պարանոցը:

Եվ որքան շուտ գա այդ օրը, ո՛րքան վերապրողները ավելի արագ դիմեն այդ վաղվան արշալույսին,— այնքան արգասաբեր պիտի ըլլա անձյունը ազատության նահատակներուն, և այնքան ծաղկալից, այնքան կենսագործ՝ անոնց գերեզմանները, գալիք սերունդներուն համար»[53]:

Իսկապես ասած՝ անհնար է այս տողերը կարդալ առանց ներքին սարսուռի և կարդալուց հետո մեղադրել մարդուն, այն էլ գրողի, մարդկային եղբայրասիրական այսքան ներողամիտ ու անկեղծ հավատի համար: Մինչդեռ երիտթուրքական դավադիրները դաժան հաշվեհարդար էին տեսնում հարազատ ժողովրդի հետ, Ռ. Զարդարյանը, և ոչ միայն նա, հավատում էր թուրք ժողովրդի վերածնությանը, հավատում էր, թե նույն այդ ոճրագործության հեղինակների ու մասնակիցների զավակները պետք է գնան արտասվելու «Ոճիրի» զոհերի անմեղ հայ մարդկանց գերեզմանների վրա... Հավատում էր նման կենսագործ արշալույսի... թուրքական արյունոտ իրականության մեջ...

Այսօրինակ անխարդախ, ներողամիտ հավատով են վերաբերվել թուրքական հեղափոխությանը և՛ Գր. Զոհրապը, և՛ Դ. Վարուժանը, և՛ շատերը, մեծ ու ազնիվ մտավորականների մի ամբողջ սերունդ՝ անվանիներ ու շարքայիններ, որոնք հեղափոխությունից հետո վերադարձան տարագրությունից թուրք մարդկանց հետ իրականացնելու և՛ Թուրքիայի, և՛ սեփական հայրենիքի ակնկալվող վերածնությունը, և սակայն, բոլորն էլ դարձան յաթաղանի զոհ՝ նույն թուրքի ձեռքով:

Արևմտահայ մտավորականության մեծ մասի ազատասիրական միամիտ խանդավառության կողքին ամենաուշագրավը, այնուամենայնիվ, Ե. Օտյանի քաղաքացիական տոհմիկ զգաստությունն է: Դեռևս 1909-ին, գուցե և դրանից առաջ, Օտյանը կռահում է երիտթուրքական լիդերների համիդյան ընկրտումները, մերկացնում նրանց անվան հետ կապվող վերնախավային հեղափոխության ռեակցիոն էությունը:

---

53 *«Ազատամարտ», 1910, № 249:*

Գծագրելով այդ գործիչներից՝ հետագայում թուրքական պառլամենտի նախագահ Ահմեդ Ռզայի դիմապատկերը, Օտյանը գրում էր, թե «կան բաներ ալ՝ որոնք որքան ալ իրարմե հեռու մնան, միշտ հեշտիվ կը զոդվին իրարու, ինչպես օրինակի համար «Ահմետ Րիզա» և «Սուլթան Համիտ» անունները»:

Ահմեդ Ռզայի կարգի «վարիչներին» ասել է՝ Էնվերին, Թալեաթին, Ջեմալին և մյուսներին, մեծ երգիծաբանը սահմանազատում է ձախ թևի այն մարդկանցից, որոնց հեղափոխության նախօրեին գլխովին ոչնչացրեց Աբդուլ Համիդը: «Պաշտելիները թուրք հեղափոխության մեջ,— գրում է նա,— այն հավետ անմոռանալի տղաքն էին, որոնց դիակները ձուկերուն կեր եղան Օսմ. ջուրերուն մեջ»[54]: Առաջավոր յուրաքանչյուր շունչ ու ձայն խեղդելու օսմանյան ավանդական հրեշագործություն, որ տարիներ անց գործադրվեց նաև կոմունիստ Մուստաֆա Սուբխու և նրա զինակիցների հանդեպ:

Բայց նման ահազանգերով հանդերձ, կյանքը մասնավորապես Կ. Պոլսում արտաքնապես առայժմ ազատական էր: Հայ ժողովրդի հայտնի ասացվածքի պես՝ ոտքերը սառը ջրում մտավորականությունը ապրում էր հոգևոր եռուն առօրյայով. ասուլիսներ, համերգներ, ներկայացումներ, հանդեսներ, մեսրոպյան գրերի 1500-ամյակի, որը վերածվեց ազատ մտքի և ստեղծագործ աշխատանքի զանգվածային տոնակատարության: Սիամանթոյի «Մեսրոպ Մաշտոցով», Գր. Զոհրապի ոգեշունչ խոսքով՝ ընդդեմ ազգային նեղմտության ու եսականության նորից նոր հնչակվեց այլասիրության և ազգասիրության միասնական միաձույլ մեծ գաղափարը, որ կազմում է հայ ժողովրդի ազատասիրական ոգորումների միջուկն ու էությունը: «Եթե քննենք ազգի մը ինկալուն պատճառները, պիտի տեսնենք թե ա՛յն ազգը, որ եսականությամբ օժտված է, ո՛րքան հույս և կենսունակություն ալ որ ունենա իր մեջ, նորեն կ՚իյնա այդ ազգը: Իսկ երբ եսականության տեղ այլասիրություն և ազգասիրություն տիրե, ո՛րքան ալ հուսահատ ըլլա այդ ազգը, նորեն չմեռնիր...»,— շեշտում էր Զոհրապը և ապա ավելացնում՝ «Եվրոպացի գիտնական մը ըսած է. «Մեծ կայսրություններու անկման պատճառները իրենց մեջն են»: Ես պիտի ըսեմ. Մեզի պես պզտիկ ազգերը իրենց վերականգնումի հույսերը իրենց հոգիին, իրենց սիրտին և այսօրվան պես իրենց հիշատակներուն մեջ կը կրեն...»[55]:

---

54 Ե. Օտյան, *ԵԺ*, *հ. 4*, *Երևան*, *1962*, *էջ 676*, *675*:

55 Գր. Զոհրապ, *ԵԺ*, *հ. 2*, *Երևան*, *1962*, *էջ 479*, *480*:

Ինչպես հայտնի է, մեսրոպյան այբուբենի ու լեզվի տոնական հանդեսին ներկա է գտնվել Թալեաթը, որը, արևելյան նենգ կեղծավորությամբ ողջունելով հայ ժողովրդի քաղաքակրթական տոնը, մտքում որոճացել է նույն այդ ժողովրդի բնաջնջման ոճրագործ ծրագրեր: Վերակրկնվել է ճիշտ և ճիշտ այն, ինչ արձանագրված է իր ազատության համար դարերով ճակատ առ ճակատ անհավասար պայքարի ելած հայ ժողովրդի հյուսած վեպում: Մինչդեռ հնօրյա արժանապատվությամբ Զոհրապը բացեիբաց հայտարարում էր հայ ժողովրդի հավատարմությունը իր պատմությանը, լեզվին, հիշատակներին, դահիճ Թալեաթը մարամեյիքյան խարդախությամբ «գորգապատում» էր այդ ժողովրդի, նրա մտավորականության համար նյութվող հրեշագործությունը...

Ի դեմս Զոհրապի, Օտյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ռ. Զարդարյանի, Երուխանի, Թլկատինցու, Զ. Եսայանի և մյուսների արևմտահայ գրողների մեծ գերդաստանը՝ հավատարիմ հայ գրականության դարավոր ավանդներին, միաժամանակ շարունակում էր քայլել մարդկության ազատասիրական ձգտումներին, ազատական ձեռքբերումներին համընթաց: Գրականության հասարակական գիտակցության բնութագրման համար նախ հատկանշականն այն է, որ ազատասիրական ելույթները, ազգային-ազատագրական շարժումները, վեճերն ու հակասությունները տերությունների միջև այլևս մեծապես դիտվում և գնահատվում են դասակարգային հակամարտության, դեմոկրատական-ընկերավարական սկզբունքների ելակետից:

Այս առումով բնորոշ է ընկերավարական գաղափարների Զոհրապի պաշտպանությունը, որ տեսնում ենք նաև սույն ժողովածուում զետեղված էջերում: «Մարդքի վեճը,— գրում է նա,— միայն երկու պետություններու վեճը չէ, այլ երկու որոշ դասակարգերու պայքարն է. Վայելողներու և Աշխատողներու մարտնչումն է, երբեմն արյունոտ դրվագներով ընդհատված, նոր եռանդով, նոր զոհաբերությամբ հառաջ տարված պայքար... Ի՞նչ վճռական ապացույց, հաստատող որ ընկերավարականները ուրիշին ինչքը գրավելու համար պատրաստված արյունարբու մարդիքը չեն, այլ այդ կարգի մարդոց դեմ ելլողները իրենք են. Ընկերության, Մարդկության գերագույն շահերը և էն բարձր վախճանները պաշտպանողները իրենք են... Այսօր ամենեն կույրերն անգամ պետք է ճանչնան ընկերավարականներու մատուցած մեծ ծառայությունը Խաղաղության դատին, որ քաղաքակրթության դատն է. Բանակին դեմ Բանակ. մին՝ արյուն թափելու և մյուսը՝ թող

չի տալու համար: Տառապանքներով լեցուն դարին հավերժական պատիվը ըլլա ասիկա»:

Մի ուրիշ առիթով Զոհրապը գրում էր, որ «ոևէ մատենագիր գործավորական կյանքին դժբախտությունները գիտնականապես դեռ չի քննած՝ Քարլ Մարքս իր նոյակապ գործը, ընկերավարության Ավետարանը, «Դրամագլուխը» հրատարակած էր, այսօրվան տնտեսագիտության հիմերը դնելով»[56]: Բնորոշ է նաև 900-ական թվականների սկզբներին վերաբերող Դ. Վարուժանի խոստովանությունը, ըստ որի «Հոգիիս վրա բոցի մը լեզվին պես զգացած էի բանվորներուն աղաղակները մեկ կողմեն, ու մյուս կողմեն շվայտ ու արբեցող կյանքը...»[57]:

Պակաս հատկանշական չէ Սիամանթոյի ստեղծագործության Վարուժանի գնահատականը, ըստ որի Սիամանթոն՝ «հայրենիքի տառապանքեն ավելի հեղափոխությունը կ՚երգե», «ան՝ հեղափոխության ոգեկոչող երգիչն է», և ապա. «Հին դյուցազունները աշխարհակալներ էին կամ ասպետներ. նորերը, Յարճանյանի հերոսները, հեղափոխականներ են կամ առաքյալներ...»[58]:

Նման տողեր կարելի է քաղել և մյուս գրողներից ու հրապարակագիրներից:

Ուսանելով կամ պատանդականի բախտով երկար տարիներ ապրելով եվրոպական կենտրոններում, հայ մտավորականները դեռ անցած դարի կեսերից մոտիկից ծանոթ էին նորագույն ուսմունքներին և, կարելի է ասել, նրանց մեծագույն մասի համակրությունները փարվում էին ճնշվող և շահագործվող զանգվածների ազատասիրական շարժումներին, ընկերավարական, ռամկավարական գաղափարներին: Ապացույցները բազմաթիվ են ու բազմազան՝ ինչպես նրանց գրչին պատկանող չափածո կամ արձակ ստեղծագործություններում, այնպես էլ հրապարակագրության մեջ:

Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Ամերիկա, Ռուսաստան, Մարոկո, Պորտուգալիա, Մակեդոնիա, հեռավոր Հնդկաստան... հայ գրողների ուշադրությունը այս տարիներին ևս եղել է մեծ աշխարհի փոթորկոտ իրադարձությունների հետ, և նրանք ներքին արդար մղումով մշտապես պաշտպանել են հարստահարվող դասերի ու ժողովուրդների, հարստահարվող մարդկության դատը:

Փարիզի 1910 թ. հոկտեմբերի շոգեկառքային ծառայողների հզոր

56 Գր. Զոհրապ, *Եժ, հ. 1, Երևան, 1962, էջ 507, 508, 532։*

57 Դ. Վարուժան, *Նամականի, Երևան, 1965, էջ 207։*

58 *«Գրական ասուլիսներ», Ձ., Կ. Պոլիս, 1913, էջ 28.*

գործադուլի օրերին Զ. Եսայանը՝ համակված «ընկերական հեղափոխության մը գույն առնող» մթնոլորտի խռովքով, խանդոտ ոգևորությամբ դրվատում էր գործադուլավորների ըմբոստությունը, հավաքական կամքը, սոցիալիստական մամուլի՝ մանավանդ «Յումանիտեի», դիրքորոշումն ու հաստատակամությունը, մերկացնում կառավարական-ոստիկանական դավերը: Աներեր համոզմունքով անվանի գրողն ու հրապարակագիրը արձանագրում էր. «Այսօր վերջապես ո՛չ ոք կը տարակուսի, թե գործատերերը պիտի հաղթանակեն. նույնիսկ իրենց թշնամիները, հետադիմական կամ ոևէ մութ քաղաքական թե ֆինանսական խմբակներու օրգանները, հակառակ իրենց թափած թույնին, ստություններուն և զրպարտություններուն, համակերպած են հաջողության հավանականության: Բայց ինչ որ թերևս դեռ անկարող են գուշակելու,— այն անդիմադրելի զորությունն է՝ որ այլևայլ երկրներու և ազգերու պատկանող ճնշված դասակարգերը կը ներկայացնեն և որոնք այլևս հոգնած դարավոր ստրկութենե և թևերնին ազատած զիրենք կաշկանդող նախապաշարումներեն, միացած նույնատեսակ շահերու, նման վտանգներու մեջ, պիտի կանգնին հին ընկերության դիմաց՝ մոտավոր ապագայի մեջ, թերևս վաղը»[59]:

Նույն համոզմունքով Ռ. Զարդարյանը մերկացնում էր Անգլիայի և ԱՄՆ-ի գաղութատիրական դաժանությունները Հնդկաստանում, բրիտանական բարոյականությանը հակադրելով հնդիկ ժողովրդի հնադարյան բարձր քաղաքակրթությունը, ճշմարիտ վերածնություն գուշակում «Հնդիկ հսկային»: «Եվ արդարև, այս վերջին տարիները,— գրում էր 1910 թ. Ռ. Զարդարյանը,— հակառա՛կ ձեռք առնված բոլոր կանխազգուշություններուն, ապստամբական միտքը կը տարածվի բովանդակ Հնդկաստանի մեջ. նոր ներշնչում մը կը հայտնագործվի հնդիկ ժողովրդին մեջ... Հնդկաստանը կ'արթնանա: Եվ զարթնող ժողովուրդը անընկճելի է: Արևելքը կը պատրաստվի նոր ակնկալներու»[60]:

Այս տողերը իմաստալից են, մարգարեական, առավել ևս, որ նա գուշակում էր նաև «ռուսական հսկային ցավագին» արթնացումը, և վկայում են, որ «զարթնող ժողովրդի անընկճելի» լինելու հավատով ռուսական հսկայի զարթմանը՝ սոցիալական, իրավաքաղաքական նախանձախնդրությամբ սպասում էին ոչ միայն արևելահայ, այլև

59 *«Ազատամարտ», 1910, № 411:*

60 *Նույն տեղում, № 449:*

արևմտահայ գրողները: Ազգային-ազատագրական դեմոկրատական-ընկերավարական ազատական ոգորումներով, արդարության համար ձգտումներով՝ տարբեր մատույցներից հայ գրողները մերձենում էին Ռուսաստանի նոր հեղափոխությանը՝ նրա հետ կապելով հարազատ ժողովրդի փրկության հույսերը:

Եվ սակայն, մինչ կբռնկեր հեղափոխությունը, «ռուս պլուտոքրասիի» փորձված քաղաքականությամբ ու մեթոդներով Ռուսաստանը մտավ համաշխարհային պատերազմի մեջ: Այս անգամ էլ արևմտահայության բախտը գամված էր մեծ տերությունների գաղութատիրական մի այլ խմբավորման, որի մի կողմում՝ ներքին հակամարտություններով հանդերձ, կանգնած էին Անգլիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, մյուսում՝ իր դիրքերը Թուրքիայում ամրապնդած, երիտթուրքերի հետ դաշնակցող Գերմանիան:

Զավթողական այս ահեղ թոհուբոհը սկսելուց շատ ժամանակ չանցած վրա հասավ մարդկության պատմության մեջ աննախադեպ արևմտահայության զանգվածային բնաջնջումն ու տեղահանությունը: Կարելի է ենթադրել, որ երիտթուրքական դահիճները հիմնականում հենց այդ մտադրությամբ էլ Թուրքիան ներքաշել էին պատերազմի մեջ: «Երիտթուրքերի գազանությունները,— գրում է Մ. Գ. Ներսիսյանը,— շատ բանով հիշեցնում են երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակի հիտլերյան ֆաշիստների հանցագործությունները... Պատահական չէր տխրահռչակ ֆյուրերը վկայակոչում երիտթուրքական դահիճների «փորձը»: 1939 թ. օգոստոսին՝ ֆաշիստական հրոսակների Լեհաստան ներխուժելու նախօրեին, Օբերզալցբուրգ քաղաքի խորհրդակցություններից մեկում իր գեներալներին ոգևորելու համար Հիտլերը հիշեցնում էր հայերի ջարդը Թուրքիայում:— Պետք չէ ուշադրության առնել հասարակական կարծիքը, հարկավոր է անխնա սպանել տղամարդկանց, կանանց և երեխաներին, հարկավոր է ջարդել բոլոր սլավոններին,— բարբառում էր Հիտլերը. «Ո՞վ է արդյոք այսօր խոսում հայերի կոտորածի մասին»[61]:

Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում հայ ժողովուրդը դիմեց ինքնապաշտպանության, ցուցաբերելով հերոսական դիմադրության օրինակներ[62]: Կամավորական լայն շարժումով Արևելյան Հայաս-

---

[61] «Геноцид армян в османской империи», с. XII.

[62] *Տե՛ս Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը՝ 1914—1916 թթ., Երևան, 1965.* *А. О. Арутюнян,* Кавказский фронт, 1914—1917 гг., Ереван, 1971.

տանի, աշխարհի տարբեր ծայրերի հայությունը շտապեց օգնության հասնել իր եղբայրներին: Բայց ուժերն անհավասար էին, աշխարհի հզորների գաղութատիրական մոլուցքը՝ ամենակուլ: Օգնության, պաշտպանության մարդասիրական ձայները, Ֆ. Նանսենի, Ժ. Ժորեսի, Կ. Լիբկնեխտի, Վ. Բրյուսովի և շատ ուրիշների, թուրքական գազանությունների հարյուրավոր ականատեսների կոչերը, վկայությունները ամենուրեք խլանում էին պատերազմական բարբարոսությամբ:

Հայ ժողովրդի յոթնամյա ողբերգական, ճգնաժամային կացության մեջ, երբ բնաջնջման սպառնալիքը կախված էր նաև արևելահայության գլխին, հայ գրականության մեծ սերնդի դերը, առաքելությունը, իրոք, պետք է համարել աննախադեպ ու հերոսական: Ինչպես Վարդանանց արժանի մի սերունդ, որին վիճակված էր նահատակությամբ, գերմարդկային անձնազոհ ջանքերով մաքառել հարազատ ժողովրդի գոյության համար:

Ժողովրդի արդար դատի համար նահատակված արևմտահայ գրողներին փոխարինելու են գալիս նահատակության պատրաստ նորերը՝ Ե. Չարենցը, Վ. Թոթովենցը, Ակ. Բակունցը, Իս. Իսահակյանը, և դեռ ինչ գիտես գրողի կոչումով ծնված որքան ուրիշներ, և զենքը ձեռքին մարտնչում ռազմի դաշտում: Հովհ. Թումանյանի մի ոտքը Թիֆլիսում էր, մյուսը՝ Էջմիածնում, Վանում, Լոռի-Փամբակում, Երևանում: Զ. Եսայանի վկայությամբ նա «կարծես ինքը անձամբ բեռնավորված էր ամենուն ամեն տեսակի հոգսերով և պատասխանատու էր անոնց վիճակին»[63]: Տեղահանության, սովի ու համաճարակների մատնված ժողովրդին հնարավոր բոլոր միջոցներով սատար լինելու մտահոգությամբ էին ապրում ու գործում Օտյանը, Զոպանյանը, Թեքեյանը, Կամսարականը, Ծիրվանզադեն, Շանթը, Իսահակյանը, Փափազյանը, Տերյանը, Դեմիրճյանը, Եսայանը, Զորյանը և մյուսները:

Դաժան իրավիճակում նահանջելով նահանջում էին պատերազմի առաջին ամիսների միամիտ ոգևորությունը, արևմտահայության փրկության հույսերը: Սթափ գիտակցությամբ միակ փրկությունը խաղաղությունն էր, որի ավետաբերը դարձավ Հոկտեմբերը:

Խաղաղության դեկրետը հեղափոխական Ռուսաստանի առաջին հրովարտակն էր, որը տառապող մարդկությանը, ժողովուրդներին ազատում էր ամենածանր և աղետաբեր բռնությունից՝ նրանց վզին փաթաթված արյունահեղ պատերազմից: Խաղաղության և հողի մա-

63 *«Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 168։*

սին դեկրետներին հաջորդում է «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որով հռչակվում էր Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունն ու ինքնուրույնությունը: Սակայն փոխադարձ իրավահավասարության սկզբունքով համախմբվելու հեղափոխական Ռուսաստանի շուրջը, ազգայնական կուսակցությունների հանցագործ քաղաքականությամբ Կովկասը անջատվում է Ռուսաստանից և դառնում ազգամիջյան խլրտումների, վեճերի ու ընդհարումների թատերաբեմ: «Բուրժուանացիոնալիստական կուսակցությունները և իշխանության նրանց օրգանները, հակառակ Անդրկովկասի ժողովուրդների կամքի, դաշնակցած կոնտրռևոլների, կալեդինների և հակահեղափոխական այլ ուժերի հետ, տանում էին երկրամասը Սովետական Ռուսաստանից կտրելու, սովետական իշխանության դեմ պայքարելու կործանարար քաղաքականություն»[64]:

Դեռևս իսկ 1918 թ. հունվարին Ստ. Շահումյանը գրում էր, որ Կովկասը կանգնած է անդունդի եզրին: Անդունդի եզրին էր կանգնած ամենից առաջ հայ ժողովուրդը. 1918-ի հենց այդ օրերից թուրքական զորքերը առաջ շարժվելով մեկը մյուսի ետևից գրավում են Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրապոլը, արշավում մի կողմից դեպի Երևան, մյուսից՝ Ղարաքիլիսա: Փրկությունը ձեռք է բերվում Սարդարապատի և Ղարաքիլիսայի հերոսական դիմադրությամբ: Այդ գոյամարտերի մասնակից Հովհ. Բաղրամյանը հետագայում գրում է. «Կարծում եմ, որ այստեղ կարելի է վկայակոչել այն գնահատականը, որ տվել է հայկական զորքերին ոչ այլ ոք, քան Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Մահմեդ Վեհիբ-փաշան: Ահա թե այդ առթիվ հետո ինչ է ասել նա. «Պատերազմների պատմության մեջ դա մի հազվադեպ ճակատամարտ էր... Ղարաքիլիսայի տակ հայերը ապացուցեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»[65]:

Պատմական այս դեպքերին հաջորդում է Բաքվի կոմունայի ստեղծումը, որը, սակայն, շուտով տապալվում է անգլիական գաղութարարների և մուսաֆաթականների հակահեղափոխական գործակցությամբ: Այնուհետև իրար են հաջորդում Մայիսյան ապստամբությունը, Սևրի դաշնագիր կոչված խաբեությունը, մինչև որ 1920-ի նո-

---

64 Գ. Բ. Ղարիբջանյան. *Ստեփան Շահումյան, Երևան, 1978, էջ 137—138:*

65 *И. Х. Баграмян.* Мои воспоминания, Ереван, 1980, с. 88. *Առհասարակ հայ ժողովրդի այդ տարիների կացության վերաբերյալ տե՛ս Հովհ. Բաղրամյանի գիրքը՝ էջ 11—120:*

չեմբերի 29-ին Հայաստանում հաստատվում է սովետական իշխանություն, ամենուրեք արժանանալով հայ մտավորականության լիասիրտ աջակցությանը:

Իրականանում են ժողովրդի և մտավորականության երազած խաղաղությունը, պետականության դարավոր իղձերը, այն գաղափարները, որ սնում ու փայփայում էին ժողովրդական խավերը, ազատագրական դարավոր պայքարի զենքի ու գրչի մարտիկները, գրող-հրապարակախոսները՝ Մեսրոպ Թաղիադյանից մինչև Եղիշե Չարենց:

Հոկտեմբերյան հեղափոխության օրերից կոմունիստ Վ. Տերյանը, թեև ծանր հիվանդ, Ռուսաստանի Ազգությունների կոմիսարիատում անխախտ երդումով շարունակում էր ծառայել հարազատ ժողովրդին. խորհուրդների մուրճ ու մանգաղը Հովհ. Թումանյանը համարում էր խաղաղ և ազատ աշխատանքի խորհրդանիշ, Տ. Կամսարականը հաստատում էր, թե «հյուսիսեն եկավ մեզի, վե՛րջապես, Աստվածային Փրկությունը»[66]. Վ. Թեքեյանը գտնում էր, որ «Դո՛ւն Հայաստանի մեջ «ծառեր տնկելով» միայն կրնաս ինքզինքդ ըլլալ»[67]. Ալ. Շիրվանզադեն ազդարարում էր՝ «Ես երջանիկ եմ, որ տեսել եմ իմ աչքով Հայաստանի բանվորի կամքի զորությունն ու բազկի ամրությունը, Հայաստանի գյուղացու օր-օրի վրա ավելացող հավատը դեպի իր սոցիալիստական ապագան...»[68] և այլն և այլն...

Հասկանալի է, պատմական առաջացող ժամանակների հետ մեկտեղ հասարակական լայն ոլորտում խորանում են նաև ազատասիրական իդեալները: Չարենցի ազատասիրական դավանանքն արդեն այն էր, ինչ արձանագրված է նրա «հարգանքի, սիրո և մեծարանքի» խոսքում՝ գրված Մ. Գորկու հիշատակին. առաջին տողից վերջինը խորիմաստ շեշտերով ալիքավորվող մի խոսք, որ հնչում է որպես հասարակական մարդու՝ գրողի, արվեստագետի, մտավորականի, կոչման պատգամ: Ո՛չ թե «սոցիալական օվկիանոսի հատակից ելած «ֆենոմեն», «հանճարեղ լյումպեն», այլ՝ հակառակ բուրժուական մամուլի, «մակերեսի կուշտ ու ինքնագոհ «տերերի». այդօրինակ երկերեսանի բարբաջանքների, բուն ժողովրդի ծոցից ծնված, ժողովրդի շահերի համար մարտնչող «ճշմարտության հսկա ու անհաշտ մարգարե», «Պուշկինի և Տոլստոյի վսեմագույն զարմից» սերած ռուս հանճարեղ

---

66 *«Ապագա», 1926, № 50։*

67 *«Վահան Թեքեյանի նամակները Լևոն Զավեն Սուրմելյանին», Նյու Յորք, 1950, էջ 34։*

68 Ալ. Շիրվանզադե, *ԵԺ, հ. 9, Երևան, 1961, էջ 595։*

գրող, և՝ «նույնքան, եթե ոչ ավելի և հանճարեղ մարդ, քաղաքացի...»— Չարենցի մեկնությամբ դա է «սեփական ազգային ճշմարտության պատվիրաններ կրող» Մաքսիմ Գորկին՝ **«մարդկության գալիք անպարտելի հաղթանակների»** մարգարեն[69]:

Զարմանալի զուգադիպությամբ տասնամյակների հեռավորությունից Չարենցի հիշատակին գրած Պ. Սևակի «հարգանքի, սիրո և մեծարանքի» խոսքերը, ասես, ալիք առ ալիք համընկնում են դիմանկարային այդ պատվիրաններին: Սևակի գնահատությամբ «Չարենցը նախ և առաջ **մարտիկ** էր», «նաև **քաղաքացի-բանաստեղծ**», «Չարենցը անհրաժեշտ համարեց «պոետ-քաղաքացի» տիտղոսը հաստատցնել մի նոր ու հավերժական կոչումով՝ «մարդ» հասկացությամբ», «Չարենցը հեղափոխական չդարձավ, այլ պարզապես **արթնացավ** իբրև հեղափոխական, ուստի և հեղափոխությունը նրա համար ոչ թե **կեցվածք** էր... այլ պարզապես **կեցություն**», քանի որ՝ «**ամեն մի ճշմարիտ ու մեծ արվեստագետի մեջ ննջում է հեղափոխականը**: Այսպես դատելով՝ **հեղափոխության թեման ոչ միայն բանաստեղծական է, այլև ինքնին բանաստեղծություն է...**»[70]:

Հարազատ ժողովրդի դարավոր ազատասիրությունից ժառանգած այդ տարերքով էլ Չարենցը զինվորագրվեց մեծ հեղափոխությանը և դեռևս Մայիսյան ապստամբության օրերին պարտք սեպեց «զուտ համամոլորակային մի շնչառությամբ» (Պ. Սևակ) ի լուր աշխարհի ավետելու նաիրյան արնաներկ երկրի և նրա բանաստեղծ որդու աննահանջ ազատասիրությունը.

... Ու կանգնել եմ ես
Լեռների վրա իմ ավեր երկրի,
Կանգնել եմ հաստատ ու երգ եմ ասում
Խնդասիրտ, արի,
Եվ նետում եմ իմ երգը հողմածայն
Ժողովուրդներին բոլո՜ր կողմերի—
Բոլո՜ր կողմերում տառապող մարդուն...

... Ո՞վ գիտե արդյոք՝
Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու հզոր, բոսոր ձեր սրտին

---

69 Ե. Չարենց, *ԵԺ*, հ. 6, *Երևան*, 1967, *էջ* 290—291:
70 Պ. Սևակ, *ԵԺ*, հ. 5, *Երևան*, 1974, *էջ* 320—327:



4—1254

Մի սիրտ—ավելի՛ ըմբոստ ու արի,
Քան իմ սիրտը թեժ—սիրտը Նաիրի:
Եվ ո՞վ, ո՞վ կասի՝
Նետե՞լ է արդյոք մեկը աշխարհում
Այսօրվա կարմի՛ր, կարմիր ձեր երթին
Ողջույն—ավելի՛ առնական, արի,
Քան ողջույնը քո, երկիր արնաքամ,
Կարմի՛ր Նաիրի...

. . . . . . . . . . . .[71]

Իրոք. «...եթե աշխարհիս այնպես ազգության պատկանող շատ արվեստագետներ Հոկտեմբերյան այգաբացը **ողջունեցին**՝ իբրև մաքրագործ ամպրոպի, ապա Չարենցը **ողջագուրվեց** այդ այգաբացին, փարվեց ու ձուլվեց նրան...»[72]:

---

71 Ե. Չարենց. *ԵԺ, Հ. 2, Երևան, 1963, էջ 96, 97—98։*

72 Պ. Սևակ, *ԵԺ, Հ. 5, էջ 32։*

# ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴԵԱՆ

## <ՃԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԱՌԹԻՎ>

*Ա՜րդ եղբարք, որդիք Սաքանալեան սերնդոց, զի՞ է, զի տեսանեմ զձեզ այսօր գումարեալս առաւօտ ի մի շունչ և ի մի հոգի։ Զի՞ է, զի տեսանեմ այսօր զդէմս ձեր իբրև զպարաստանս մշտադալարս, որ զերծեալ ի կապանաց խաւարութեան սառնամանեացն ձմերայնոյ վտարանդին Թափառանաց՝ բուսուցանեն յինքեանց ծաղկունս բազմաբուրեանս ուրախութեան և զուարթարարս զօրութեան աչաց հայեցկաց։ Կա՞մ, զի՞ է, զի տեսանեմ զփրառ ձեր բղխել այսօր ի խորին շտեմարանաց անտի իւրեանց նշոյլս յարայուարձ բերկրութեանց, զոր ընդ այսքան հնաւոր դարս ժամանակաց ընդամփէ՞ր, սքօղէ՞ր, և նսեմացուցանէր մառախուղ դառն գերութեանց։ Ո՞ր վերին իմն զօրութիւն Ազգ ազնիւ, ո՞ր աստուածաշրաշ սքանչելիք, կամ ո՞ր ներքին մղումն երանութեան շարժեաց զձեզ առ հասարակ ի հանդէս հասարակաց խնդութեանս, բայց եթէ՝ անակնկալ աւետիք ազատութեան և փրկութեան Արարատեան աշխարհի բնիկ հայրենեաց ձերոց, զոր աւետարանեաց հեռաւորաց և մերձաւորաց Աւետարանիչն խաղաղութեան, Աստուածապսակ և Կայսերանշան արհին Հայոց Վրաստանեայց՝ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ[1]։*

*Եւ զի՞նչ։ Ո՞վ մեծի բարերարութեանն, բա՛րէ անբաւ երախտեաց խնամողին տիեզերաց Աստուծոյ... Այնմ՝ որ մատնեաց զմեզ երբեմն ի ձեռս անօրէնց խստասրտաց՝ արար զերկիր բնակութեան մերոյ մեզ ի տեղի տրտմութեանց, վայր թշուառութեանց, բանտ արգելանաց, հանապազորդեան սպանդարան մարտիրոսաց, և միանգամայն աւել, դժոխք իսկ արժանի մեղաց մերոց...*

*Աստուածային է այցելութիւնս, եղբա՛րք, եթէ իրաւամբ կշռեսցուք զմեծութիւն նիւթոյն ի մեծութենէ անտի հետեւեալ հանգամանացն։ Զի որպէս նախ զմեզ կուրացոյցն և կորոյս արդարութիւնն երկնային, այսօր՝ ըստ նմին օրինակի և զՊարսիցն խաւարեցուցեալ մտաց աչայն*

*տեսութիւն՝ հորդան եւ նոցա ի կորուստ անկանգնելի։ Զի իբրև դայր հասանէր աւետաւոր ժամանակ փրկութեան Հայոց աշխարհին, Աբբաս՝ ժառանգ արքայութեանն[2] և խաբէութեանն Պարսից, ի միջի խաղաղութեան զբոց խռովութեանն արծարծէր, հատանէ՛ր, մանրէ՛ր և խզանէ՛ր զսրբազան զայն հանգոյց ուխտին հաշտութեան, որով աղխախեալ յօդէին ընդ միմեանս հաւատք արքայից, հանգիստք աշխարհաց և անդորրութիւնք երկրի։ Հարցո՛ւկս առնէր, հմա՛յս հրամայէր. դիւթս արձակէր, որպէս երբեմն Կրիսոս ի Պիւթեան պատգամախօսէն։ Դիմէր բո՛ւռն զօրութեամբ յաշխարհն խաղաղական, և յանկնկա՛լս հրոսակեալ ապականէր, քանդէր, եղծանէր զքաղաքս ի քաղաքայն Հայաստանի, և իւրով անօրէն խարդաւանութեամբ զանօրէնութիւն զդենին իւրոյ հրատարակել ժպրհէր օրէն ընդհանուր ամենայն ազգաց երկրի։ Ի մտի եդեալ՝ թէ որքան շատ հեղուցու զարիւն անպարտ, այնքան և բալումս. գտանիցի՛ զրկանս առասպելեալ յաւէրժահարսանց դրախտին ի զովացումն բացոյ չարաչար պագշտութեանցն իւրոց։ Քակել կամէր զօտարին՝ բայց քակեաց զիւրն թագաւորութիւն, զաշխարհ զայլոց տիրել կամէր, այլ նա և զիւրոցն զրկեցաւ։ Վասն զի՝ այն ինչ փայլատակեցան ի նոսա հայախառն զօրութիւնք անխոնարհելի տէրութեան կայսեր, գոգցես իբրև շանթս հրաբորբոք կայծականց ճայթուցեալ յամպոց թանձրութեան, ցրեցին, ցնդեցին, եղծին, ապականեցին զհամայն սեպուհ կաճառս զՊարսից գնտին, և այնքան խուռն անկային ի նոսա հրացայտ ումբունս թնդանօթաց, մինչ ո՛չ միայն անարին Աբբաս, զորջս մկանց ի գնոց որոնէր ինքեան տեղի թաքստեան ի թագաւորեալ քաղաքի անդ իւր, այլ և առասպելեալն նոցա Հերքուլէս քաջարանցն Ռոստամ[3], զահի հարեալ յերկիւղէ Մոսկովացի զօրավարին[4], և զուգնաբեալ նմին վարկուցեալ զանշիջանիւթ տոչորմունս գեհեննին, յորում էրն, աղերսէր փոխադրել ի խորագոյն ծործորսն սանդարամետից, թերևս անդանօր ազատ զինքն կացուցէ յահե՛ղ շանթարձակութեանց քաջազօր գնտին։ Տե՛ս ինձ. թէ զի՞նչ ի միումն անմիաբանութիւն, և զի՞նչ ի միւսումն միաբանութիւն հրաշացուցին աշխարհի զհամերկաքանչիւրն ասեմ զիւրեանց ներգործութիւնս։ Ո՞վ զարմանալեաց. Ազգ՝ որ երբեմն անմիաբանութեամբ իւրով հիմն ի վեր տապալեաց զիւր իսկ թագաւորութիւնն, այսօր միաբան հաւատարմութեամբ իւրով նեցուկ ամրութեան լինի և զէն զինուորութեան մեծազօր կայսերութեանն Ռուսաց։ Եւ այս՝ այնքան ա՛րք եղբարք, մինչ առ ինքն բռնաբարել և զկայսերականն երախտագիտութիւն, զմեծն ասեմ ի պարծանս Հայաստանի, և զանքուն խնամս նորա զերջանկարարն Տանս Թորգոմայ…*

...վասն զի յոյս իմ լի է անմահութեամբ, զի ընդ յառնել միացելոյ Արշակունեան Արծուոյն[5], զոդչի՛ք, որպէս Փիւնիկն Եգիպտոսի ի մոխրոց անտի[6] բազմաժամանակեայն մեռելութեանց իւրոց, և ի հովանաւորել նորա ընդ համասփիւռ թևօք հզօր երկգլխեան Արծուոյն Մոսկովացին կայսերութեան[7], համասեռ առ իւրն գթալով համասեռ. տածեսցէ՛, սնուսցէ, և բարձրացուսցէ զնա ի ժամանակի այցելութեան իւրում: Վասն զի սէր՝ առէր իմաստասէր, ի նմանեաց ծնանի: Ո՞վ երանի՛ ժամուն յորում այս ամենայն լինիցի՛...

Հայա՛յ, առ ձեզ են ակնարկքս այս մեծ, հեռաւո՛րք, առ ձեզ, և առ որդիս ձեր: Խորհեցարո՛ւք այսուհետև այր ընդ ընկերի իւրում ընդ ազատութեան Հայրենեաց ձերոց ազատել զսիրտս ձեր ի կրից ներհականաց: Վառեցարո՛ւք ազգասիրութեամբ և հայրենասիրութեամբ ընդ քաջ նահատակս Հայոց աշխարհին, որ զանձեցին ձեզ ի ջանս իւրեանց զմեծ զայս պարծանս: Նոքա վաստակեցին եղբարք, եկա՛յք և մեք ի վաստակս նոցա հաստատ վայելեցո՛ւք: Մի՛ ևս քաղցրասցին ի բիմս մեր, աղաչեմ, մսի և խստորք Եգիպտոսի, որպէս երբեմն պորտապարար ազգին Հրէից: Մի՛ ևս խաբեսցեն զմեզ անպտուղ ուռիքն Բաբելոնի, անանուն յղփութիւնք ընչից: ...եկա՛ք ի Հայաստան հոգւով, մտօք, և կամօք. Թողլով օտարութեանս միայն զանեցեալս ի սմանէ զմարմինս: Եկա՛յք, ժողովուրդք սեպհական, եկա՛յք ի Հայաստան ի հոյակապն սահմ և ի հռչակաւորն յամենայնի և յամենարոյն յերկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր: Եկա՛յք եկեսցուք ի Հայաստան, ո՛րք եղբարք, ուրանօր պատճառս պատրաստեաց ձեզ նախախնամ տէրութիւնն, ազնուացուցանել զանձինս, առատացուցանել զզաւակունս, և պայազատել տեսանել զերբեմն կորուսեալ և զայժմ գտեալ զազգ և զընտանիս ձեր: Եկա՛յք եկեսցուք ի Հայաստան, համբուրեսցո՛ւք զուարճախառն արտասուօք զփրկեալ հող հայրենեաց մերոց: Երկրպագեսցուք աշխարհատատան Դրօշակին Արշակունեաց՝ որ ննջեացն և յարեաւ, և այլ ևս ո՛չ մեռանի: Պսա՛կս հիւսեսցուք ի մշտադալարթ զարենաց անգուլ աղօթից, և ձիւնափայլ բրաբիոնաց անխեղծ հաւատարմութեան. պսակեսցո՛ւք նոքօք զքաջ զինուորն Հայոց աշխարհին, և զերեքհարիւրն սահմ. որ թէպէտև թուով սակաւաւորք, այլ արութեամբ բիւրաւորք...

## ՀԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ

Շատոնք հարևանցի մտածությամբ կարծեցին, թե մեր ազգն կարող է այժմս ևս յուր վերնից ազատությունն գին գձի և յուր գեղեցիկ բաղդի

լուսովն երևելի լինի աշխարհիս միջումն։ Բայց առավել մին ցանկություն է սրտի, քան թե ուղիղ դատողություն. վասնզի երբ որ աչքերս բարձրացանումամ և վեց դար դեննամ անց կացման, տեսանեմ, որ մեր պատվական ազգն միշտ տգիտության, տառապանաց և աղքատության մեջ չարչարած է։ Սրբային վարդի նման անուշահոտ պարտեզի մեջ և անուշահամ առուների մոտ տնկած։ Ունի վարդենին շատավիղը, թեք, ճյուղը, ջիղք, ծնկներ և ծլեր և ամենայն կերպով կատարյալ է, այլ ափսո՛ս, որ կանաչելե և տերև տալի ժամանակում մին էլ կտեսնես որ ուրն ուրն կուտվի կվերջանա։ Ուստի՞. տգիտության և զանազան պակասությամբք զալանացած և կատաղած որդներիցն։ Այսպես է աՀա՛ ազգիս ներկայեն վիճակն։ Արդ՝ կտեսնես որ էսպես մին կերված և ապականված տունկ Հետևել կարող լինելու Համար՝ պետք է ոիշի շուք կողմիցն ջուր տալ. վերեն կպած խոտերն խլել դեն ձգել, որդներն սպանել. և անպետ ճղներըն կարել Հիատակել, որ նույն փչացած տունկն ում դատանի և ծաղկի, և բոլոր աշխարՀս ճանաչի թե այս տունկն Հայաստան աշխարՀիս եդեմական դրախտին մեջ յԱստուծո տնկյալ, շատ պտղաբեր և բարետեսիլն է։ Այս ասությունքս տեսլն ո՛չ թե Հեշտ բան է, այլ պետք է մաՀն աչքի Հանդիման ջանք անել, մշակել, վաստակել և ճգնել։ Պետք է աշխատությունն ընդՀանուր լինի որ բոլոր ազգն սկսի ծաղկել, վասն որո արժանե էնպես մին Հիմն դնել ազգի կրթության Համար, որ եթե մեք չկարողանանք, գոնե՛ մեր որդիքն կամ մեր թոռներն վայելեն բարեկենդանության օրեր և ազգասիրաց Հիշատակն օրՀնեն։

Արդ առանց ազգի սիրուն ազգասիրության փութով Հորդորել վառելու, անՀնա՛ր է մեծամեծ փոփոխությունս տալ ազգի միջումն. և գիտության, արՀեստների և քաղաքականության մեջ լուսավորել, և առավել պատվավոր նշանց տալ կայն էն Տերության աչքումն՝ որոց Հովանավորության ներքո խաղաղությամբ ապրմանանք։ Քանզի մեր ազգն չի կարող զարգանալ ուսմանց և արՀեստների մեջ մինչև որ ազգասեր անձինք չշատանան, որք միամտությամբ և քաջության Հոգվով ազգի պայծառության Համար ջանան...

* * *

Նորա՝ որք ակամա և իՀարկե ստիպյալ, մեծամեծ շինությունք են առում աշխարՀիս մեջ, ինչ կելնի թե որ մեք՝ Հայրենասիրութենից միայն Հորդորյալ, նույն Հնարքն մեր օգտի Համար գործ ածենք, և մեր երկրի շինության և ծաղկելու վերա բանացանենք։

Արդ՝ իմ կարծիքն է սա, թե մեր Ազգն ընկերությամբ միայն կարող կլինի հառաջանալ ուսմի, արհեստի և քաղաքականության մեջ: Վասնզի ընկերությունն մեծ զորություն և ուժ ունի, ընկերությամբ միայն հնա՞ր է բաժանված և ցրված ժողովրդի նորմե կանգնացանել: Ընկերությամբ կ՚մոռացվի ժողովրդի տառապանքներն, ընկերությամբ միայն կարելի է թումբ (արգելք) դնել թշվառության հարձակման դեմ. և տգիտությունն, որ մարդկանց և ժողովրդոց երջանկության թշնամի է, շատ անձինքներով և ընկերական կապով միայն կ՚հաղթվի. գիտությունք և արհեստներ ընկերությամբ միայն կ՚ծաղկին մեր երկրի միջում, և ընկերությամբ միայն մեր հնացած և ավերակ դարձած աշխարհքի շինության հնարքն կգտանվի: Վասնզի ընկերություն ասելն՝ միաբանություն ասել է. և միաբանականն՝ որքան որ տկար անզոր լինի, մին ոգուց զորավոր կլինի: Ընկերական միաբանությամբ կ՚վերանա բոլոր դժվարությանց արգելքներն, որոց համար բազմիցս խոսեցանք: Վասնզի նախ՝ ընկերության դիտումն մին լինելով, ո՛չ մնի մեռնելովն և ո՛չ մյուսի հուսահատյալ ետ քաշվելովն առաջադրած խորհրդներն կխափանվեն. և երկրորդ՝ այս զարմանալի միաբանությամբ ամեն ձեռ թեև տկար լինի, կարող է ազգի հառաջադիմությանն օգնական լինել...

Զարմանանք ինգլիզի և ֆրանսզի հսկայի նման քայլելով հառաջ գնալոյն քաղաքականության և արհեստների մեջ. վասնզի նոցին հրաշալի և չափից դուս մեծագործ շինվածներն՝ որոց վերա ներկայիս մարդիկներն զմայլմանան, քաղաքացվոց ընկերությամբնան գլուխ գնաման... ամեն տեսակ բնական և արհեստական գիտության և տպագրության օրեց օր շատանալն, ընկերությամբ միայն հառաջ ան գոլման, և ընկերությամբ միայն կ՚հաջողվեն. մին խոսքով ասեմ՝ միաբան ընկերությունն բոլոր Եվրոփ այլ կերպարան փոխեցին: Եվ ընկերությանց պատճառավ՝ այսուհետեն եկող ազգերն շատ զարմացած կ՚մնան ներկայիս մարդկանց մեծագործությանց վերա:

## ՄԻԱԲԱՆԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԱՄԵՐԻԿԱՅ

Զանազան հատուկտոր բանիւք լրագրեցաք յընթացս «Ազգասիրիս» զպատերազմէ Միաբանեալ Նահանգաց Ամերիկայ՝ ընդ տէրութեան Մեկսիկոնի[8]. բայց ըստ Բրիտանիա կոչեցեալ օրագրին, այս առաջին անգամ է, թէպէտև կարի՛ անագան, յորում օրագրութիւնք Ամերիկայ յօժարեցան ընդդէմ գրել պատահածին: Ուրախակի՞ց լինիմք ընդ այս դանդաղ դարձ նոցա ի շաւիղս առաքինութեան, քանզի Մեկսիկոն, բաց ի վերջին

տկարութենէ զօրաց իւրոց՝ զայլ ատիթ գրգռութեան չունէր ընդդէմ ամերիկացւոց, և Ամերիկայ բաց ի բռնանալոյն ընդդէմ տկար դաշնակցին՝ զայլ իրաւունս ո՛չ կարէր յառաջ բերել առ ի կատարած այնքան բազմութեան համատարած օրերոյ։

Աշխարհ աշկեար գիտէր՝ զի ամերիկացիք կարէին յաղթահարել զՄեկսիկոն, ըստ որում զօրք նորա զկռուլին անկիրթք, և ցաքուցրիւ ժողովածուք ի համարակաց ժողովրդոց Հնդկաց սևոց, և սերնդոց ի նախնի Սպանիացւոց։ Խռովութեամբ կառավարութեան նոցա ի քսան ամաց հետէ՝ գանձք սպառեալ էին, և հարկ և հասք աշխարհին լռեալ մինչ իսպառ։ Երկիր նոցա թէպէտև հզօր և բարեբեր յոյժ, այլ ընդ երկար ունակութիւն ծուլութեան և պղերգութեան թագաւորեալ գրեթէ յամենեսին, անգործ և ապարդիւն թողեալ զնա։

Ապաքէն յանդիման երկնից և երկրի չունէր Ամերիկայ իրաւունս բռնութեամբ յառաջ վարելոյ զմարտ իւր։ Բայց հազարապետ Տէյլոր վարէ զզօրութիւնս իւր ի վերջին յերևակայական և ըստ սահմանագլուխ Տէքսասայ, լարէ զթնդանօթս իւր ընդդէմ քաղաքի ուրեմն մեկսիկոնացւոց, անցանէ ընդ գետ նոցա, և արշաւէ ի սիրտս երկրին, քարոզ կարդալով՝ թէ այս ամենայն ո՛չ խռովէր զխաղաղութիւն աշխարհին։ Անձանց ոչ կորզեմք զպատիւ մարգարէութեան, բայց և զայս հաւաստի գիտեմք, թէ վրէժ հեղման այսքան արեանց անմեղաց խնդրի՛ տակաւին, խնդրի՛, այո՛. և՛ բորբոքեալ սրտմտութեամբ։

Բայց թո՛ղ Անգղիա զարթնուցու ի քնոյ՝ յինքն դէպ հայել։ Ամերիկա զմի կամ զերկուս պատերազմունս յառաջ մղելով ի վերայ տկար թշնամւոյ, զերկիր նոցա բռնի յափշտակելով, աւարօք ընչիցն փարթամանալով՝ ո՛չ դառնայ և զորմոց ապարանից կախէ զիւր մահաձիգն հրացան, այնինչ Կանադա բացարձակ կայ առաջի իւր։

## <ԱԶԱՏՈՒԹԻՒՆ>

Ազատութիւն առանց գիտութեան միշտ վտանգաւոր է։ Թէպէտև պարզ աչօք հայել անգա՛մ ոչ իշխեմք ընդ ազատութիւնն, զոր ոմանք ի տէրութեանց Եւրոպիոյ շնորհեցին ժողովրդեան, և երջանիկ արարին զկեանս նոցա, սակայն և այնպէս ընդհանուր լուսաւորութեան Եւրոպիոյ վայելուչ իմն էր և է այն ազատութիւն։ Ազգի, որ ծնաւ ի ներքոյ անհամար քաղաքական ծիսից, ուսմանց, սովորութեանց և այլոց, բնականաբար արժան էր ժամանակաւոր ազատութիւն, զի դեռ մանկունք զխօսելն ո՛չ ուսեալ՝ պարտաւորին ընտրել զվայելուչն։ Քանաւոր ամօք ի դպրոցս

տրորեալ՝ ապա յարուեստաւորան յիւրաքանչիւր ստանեն, ո՛ր ընդ ծով, և ո՛ր ընդ ցամաք։ Եւ թէ ազատ օրէնք և ազատ կեանք չիցեն նոցա, այնպիսիք ուրեմն համարին ծնեալք ի բանդ՝ և մեռանելիք ի բանդի։ Բայց ընդ հակառակն ե՛կ դու յաշխարհ բարբարոսաց, ուր մանկունք ըստ կամի ևեթ զարգացեալ՝ խօսին զինչ և կամին, և կեան որպէս և կամին։ Դեռ լեալ ո՛չ բացեալ հայհոյանս պարառեն ընդդէմ հօր և մօր, խոռոտկս ծխեն, յամենայն մոլութիւնս անխտիր անառակին, և տե՛ս նոցա զազատութիւն Եւրոպիոյ, և ահա՛ փոխանակ բարերարելոյ նոցա՝ ամբողջ կորուսեր զկեանս նոցա՝ բնականաբար և բարոյականապէս։ Հայեա՛ց ի դարս բարբարոսութեան աշխարհի, և տե՛ս թէ ո՞ր ազգտ և անպիտան ժողովուրդ ո՛չ ունէին կամ ունին զայսպիսի ազատութիւն, ուր ամենայն որ յոյժ մարմնոյ և յաղեղն իւր ապաստան՝ կեայ որպէս և կամի, այլ ո՛չ իբրէք կատարելանայ։

Այսպիսի իմն է զարդիս ազատութիւն շնորհեալ երկրականաց աշխարհիս։ Ո՛չ ասել կամիմք, թէ ի մէջ նոցա չիցեն անհատք արժանիք նաև գերագոյն ազատութեան. են, այլ տարաբախտապէս կարի սակաւք թուով։ Հասարակութիւնն՝ որ միայն ծառայութեամբ կեայ, զուրկ գոլով ի կարևոր հմտութեանց, և պատրեալ յանուանման ազատութեանց իւրոց, սխալմամբ յինքն կորզէ զիրաւունս հաւասարութեան, ո՛չ ի գործելն՝ այլ միայն ի զուալն ամբարտաւանութեամբ։ Ո՛չ ճգնի ուսանել և իրաւամբ հաւասարել նմին, այլ միայն կարծէ զինքն օրինօք հաւասարեալ նմին։ Եւ հաւասար ևս կարծէ, որ անհնարին է՝ եթէ տեղական լիցի։ Եւ զի՞նչ հետևանք իցեն, եթէ ո՛չ տածումն տգիտութեան, ատեցումն ուսման, ոգի ամբարտաւանութեան, ոգի անհնազանդութեան, կորուստ ազգանաց և այլն։ Ուրեմն յայտ է, զի ազատութիւն առանց գիտութեան վտանգաւոր է ժողովրդեան աշխարհիս այսորիկ։

Օրինակի վասն։ Հասարակ ձիապարման ոմն ի մօտոյ, ո՛չ միայն առանց խմաց տալոյ եթող զծառայութիւն իւր, այլ և յանդգնեցաւ պահանջել ի տեառնէ իւրմէ զվարձ անցեալ քանի մի աւուրց պաշտօնին, որ օրինօք ո՛չ կարէր պահանջել։ Եւ ի չտալ տեառնն՝ սպառնացաւ նմա քարահալած առնել զնա ի կառսն իւրում ի մեծի հրապարակին, ուր երբ և դէպ գտանիցէ զնա։ Բայց դատեալ յատենի՝ ի բանդ արկաւ։

Արդ թուեա՛ դու զվնասսնին, որ զհետ եկին սոսկ յանդգնութեան սորա, և որովհետև սա միայն չէ, հետևեցո՛ և զընդհանուր վնասն ի վերայ ամենայն ժողովրդեան. և տե՛ս, թէ այսօրինակ ազատութիւնք տառապա՞նս ածեն ի վերայ ժողովրդեանն արդեօք, թէ զմխիթարութիւնս։

Որդիք Հեղիայ քահանայապետի և մանկունք Բաթուղայ այսպիսի ազատութեամբ կորեան. սոյնպէս և Աստուած տայ ազատութիւն կորըստականացն ի մարդկանէ։

Այր գիտուն և առաքինի է ճշմարիտ ազատն։ Եւ եթէ ոք պարծի ազատութիւն ունել ժողովրդեան ուրուք՝ պարտի կատարելութեան մըտաց, վաստակոց ձեռաց և մաքրութեան վարուցն միտ դնել։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

# ԴՈՐՊԱՏՅԱՆ ՕՐԱԳՐԵՐ

## (1830—1835)

*...Պր<օֆեսոր> Ֆր<իդլէնդէր> պատմէ մեզ վասն խռովութեան յԱնգղիայ, վասն փոփոխութեան կառավարութեան, զի՞րդ խաժամուժն Անգլիոյ ամբոխեալ ընդդէմ մինիստրին, հարկանեն զլուսամուտս նորա, և այլոց բազմաց*[1]*...*

*Ի Կիւրակէի գնացի ի տեսութիւն պարոն Հաջենի՝ որ ի խօլէրայէ երկուցեալ գնացեալ էր առ հայր իւր. նա ի տեսանելն զիս, աճապարէ առ իս և ես առ նա և համբուրեմք զմիմեանս, զնոյն առնեն և ամենայն երեխայք, մանաւանդ Միցին, որ եկեալ ի գիրկս իմ կամի համբուրել զիս: Նա հարցանէ զօրպիսութիւն իմ: Բայերն, ազատ իշխանութիւն նոցա, սէր նոցա առ արքայն իւրեանց. «Երանի թէ գնայցէք երբեմն ի Գերմանիայ. յայնժամ տեսանէք զի՞րդ կեան և կենցաղավարեն մարդիկ». խռովութիւն, որ յամենայն Եւրոպա տիրէ*[2]*, մարդն է ազատ...*

*Յայսմ երեկոյի գնացի ի տեսութիւն պարոն պրոֆ<եսոր> Բարդելսի, մեծ մաթէմատիկայի...*

*...Նա խօսի ի վերայ ազատ տէրութեանց Ամերիկոյ և յայտնէ, «այսպէս պարտ է յամենայն աշխարհի տալ ազատութիւն և յազատութենէ յառաջանան ամենայն բարիք. գիտեմ, զի աստիճանաւորք ռուսաց ի կողմանս ձեր ցուցանեն զբազում անկարգութիւնս, յայսմ չի՛ք ինչ հնար, բայց եթէ զարթուցանել զհոգի ազգին, իւրաքանչիւր ազգ պարտի ինքն զգալ զբարի իւր և յառաջ տանիլ. ազգք ձեր են ազգք քաջաջանք, այլ միմիայն պա՛րտ է արթացուցանել զնոսա վասն հայրենի ազատութեան իւրեանց, այլ յայսմ պա՛րտ է ուսումն, և ո՛չ այնպիսի ուսումն ի ծայրագոյն աստիճանի, այլ միմիայն այնպիսի ուսումն՝ որով զատա-*

չինն կարացեն նոքա փոքր ինչ ծանօթանալ ընդ աշխարհի, ապա ինքնին հետևեսցի և այլն, յայսմ պա՛րտ է գրել, ընթեռնուլ աշխարհագրութիւն, պատմութիւն, տնարարութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, մաթեմատիգայի և այլն...։

Ազատութիւն հայրենեաց իմոց չէ՞ր աննշան պարբերութիւն վասն պատմութեան և օրհասի ազգին իմոյ, և ես ի յետին աւուրս ի 27 ամի կենաց իմոց, կրկին սկիզբն արարի լնուլ զգիտաւորութիւն իմ...

## <ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ>

### <1>

«Մարդու պատմությունը նրա բնութագիրն է»,— ասել է այն մեծ, վեհահոգի մարդը որպես մի պատգամ։ Ոչ մի ժողովուրդ, այո՛, ո՛չ մի մարդ չի կարող ազատ համարվել թուլությունից, պակասություններից, թերությունից, ֆիզիկական և բարոյական արատներից, առավել ևս նկատի առնելով, թե որքան ավելի վատթար են եղել նրա քաղաքական կացությունը, նրա կլիմայական և աշխարհագրական պայմանները։

Զարմանալի չէ՝ ապրել օրենքներով և կարգ ու կանոնով, ապահովված, կուլտուրական և իմաստուն մի միապետի օրինական իշխանությամբ բարեկարգված երկրում, ապրել նույն հավատի, մտածելակերպի և մտայնության, նույն բարքերի տեր ժողովրդի մեջ, և ապահով լինել ամեն տեսակետից, կյանքով և ունեցվածքով և լինել ավելի կուլտուրական ու մարդավայել։ Իսկ այն ժամանակ, երբ աշխարհներ էին սասանվում և կործանվում, պետություններ էին հիմնվում և ոչնչանում, ազգեր էին իշխում և չքանում, երբ մի հեղափոխություն կլանում էր մյուսին, երբ խորը բարբարոսությունն իր ամբողջ ծանրությամբ ծավալվում էր ճարտարամիտ, ծաղկափթիթ հին աշխարհի վրա, երբ տարբեր ծագումի, տարբեր կենցաղի և մտածելակերպի, տարբեր հավատի ազգեր այնպես զորեղ, այնպես ավերիչ իրար էին զարկվում, որպես մահաբեր կատաղի թշնամիներ, այդ բոլորից հետո հնարավո՞ր էր դեռևս հոգեկան կորովի տեր լինել և բարգավաճել։ Մարդ կորցնում է ամեն մի պատմական կողմնորոշում, ամեն մի չափանիշ, երբ մտածում է այն հզոր բախումների և համակենտրոնացումների մասին, որոնք տեղի են ունեցել ասորեստանցիների և բաբելացիների, պարսիկների և մակեդոնացիների, հռոմայեցիների և հույների, մոնղոլների և արաբների, պարթևների և թուրքերի միջև։ Դրանք բոլորը, նախկին հիշվածներից մի քանիսի չնչին բացառությամբ՝ մեծ, հզոր, իրենց բնական ուժով դեռ չթուլացած,

սակայն վայրենությունից և բռնակալությունից այլասերված ժողովուրդներ են։ Չէ՞ որ այդ դեպքում պիտի մոխիր դառնային կուլտուրայի և բարոյականության վերջին մնացորդները։ Կարո՞ղ էր որևէ բան տևական լինել, որտեղ կրակապաշտությունը և հեթանոսությունը, մահմեդականությունը և քրիստոնեությունը կռվարչեր էին կանգնեցրել իրար դեմ, որտեղ քրիստոնյայի փրկությունը կախված էր նրա խոնարհ լինելուց, նվիրվածությունից և համբերատարությունից, երկնից արքայությանը արժանանալու համար, իսկ մահմեդականինը՝ ամբարտավանությունից և տիրապետելուց, հալածելուց և ավերելուց այն բոլորը, ինչ որ չի՛ վերաբերում նրա ջեննաթին, ինչ որ չի ճանաչվում նրա Կուրանի, նրա օրենսդրի կողմից, որտեղ ո՛չ մի մարդկային իրավունք գոյություն չունի, գոնե քրիստոնյաների նկատմամբ, ո՛չ մի կարգ, ո՛չ մի օրենք, այլ միմիայն կամայականություն, տիրապետելու տենչ և շահամոլություն, ատելություն այն բոլորի նկատմամբ, ինչ վերաբերում է կուլտուրային, գիտությանը, վայելչաբարոյությանը (որովհետև պարսիկ մեծամեծները մինչ օրս էլ ամաչում են գրել-կարդալ սովորել և այդ գործը հարմար են համարում միայն չունևոր մարդկանց համար),— որտեղ մոլեռանդության և անհանդուրժողականության մի մութ գիշեր ընդգրկել է ամեն ինչ։ Այդ բոլորից հետո կարո՞ղ է այնտեղ համերաշխություն, արդարադատություն, բարոյական անաղարտություն գոյություն ունենալ։

Նախքան հայերի վրա այդպիսի անսիրտ հարձակումներ գործելը, թո՛ղ փորձեն հետաքրքրվել հին աշխարհի այն ժողովուրդներով, որոնք համաշխարհային պատմության կեսը լցրել են իրենց մեծ գործերով, նվաճումներով և փառքով։ Որտե՞ղ են քաղդեացիք, բաբելացիք և ասորեստանցիք, մարերը, պարթևները՝ հայերի այդ ժամանակակիցներն ու հասակակիցները,— նրանց անունը, նրանց գոյությունը չքացել է, ոչնչացել, կործանվել, նրանց մեքերի և արվեստի գործերը, նրանց աճյունը ոտնահար է լինում չարամիտ ժողովուրդների կողմից, որոնք նրանց հիշատակն էլ չեն հարգում։ Այժմ մեր հայացքը դարձնենք դեպի Նոր-Աշխարհի բնակիչները, <կտեսնենք>, թե ինչպես այնտեղ ժողովրդի քանակը պակասեց սկսած այն օրերից, երբ ամերիկացիները եվրոպացիների ստրուկը դարձան. և ինչպե՛ս չքանում են նրանց բոլոր կապերը, որքա՜ն թմրած ու անկենդան են նրանց մտավոր հատկությունները։ Իսկ այդ բոլորը ընդամենը մի քանի դարու գործ է։

Դրա համար էլ ի՜նչ չափանիշ վերցնել, եթե աչքի առաջ ունենանք 12—14-րդ դարերի ժամանակաշրջանը։ Դարե՜ր... ինչ անմարդկայնություն, ի՜նչ սարսափ և զարհուրելի տեսարաններ, որոնք իրենց ամբողջ

ծանրությամբ Հայաստանի վրա են ընկել և իրենց բովանդակ ուժով աշխատել են ճզմել այդ երկիրը։

<Հայերի> երկրի դիրքը և նրա առավելությունները, նրա բնակիչների բազմակողմանի հետաքրքրությունը, նրանց սերը դեպի արվեստը, նրանց աշխատասիրությունը, նրանց ճարպկությունը և ձեռներեցությունը կյանքի բոլոր ասպարեզներում, ի դժբախտություն իրենց, այնքան նախանձոտ էին դարձնում թե՛ հարևան և թե՛ հեռավոր ժողովուրդներին, որ դրանք պատրաստ էին միմիայն այդ երկրին տիրանալու համար ամեն ինչ զոհել։ Այդ կալածաղիկը, ինչպես անվանում էին հայերին օտար գրողները, դիմադրում էր ո՛չ միայն հռոմայեցիներին և պարսիկներին, այլև նույնիսկ միջին-ասիական և կովկասյան ամեն տեսակ անթիվ ու անհամար ավազակաբարո ցեղերի։

Որքան էլ չնչին լիներ հայերի թիվը իրենց թշնամիների համեմատությամբ, որքան աննշան՝ նրանց ուժը և որքան էլ խաղաղասեր՝ նրանց տրամադրությունը, այնուամենայնիվ, երբեք չէ՛ր պակաս նրանց արիությունն ու անվեհերությունը՝ իրենց անկախությունն ու ազատությունը պահպանելու համար։ Հազիվ էին պատվար կանգնեցրել պարսիկների դեմ, և ահա նրանց առաջ կանգնած են մակեդոնացիները, երբ այդ թշնամին ասպարեզից հեռանում էր, ապա նրանց հետքերով գալիս են իշխանամոլ, աշխարհակալ հռոմայեցիները, իսկ դրանցից ազատվելուց հետո կրկին <Հայաստանը> լցվեց այն զարհուրելի, ավազակային խմբերով, որոնց հեղեղից քիչ էր մնում ամբողջ աշխարհը ոչնչանար։ Ո՞վ ծանոթ չէ հոներին, մոնղոլներին, իսկ այնուհետև՝ իսլամի սարիներին։ Լռում եմ այն մասին, թե ի՞նչ են տեսել, ի՞նչպես են տուժել հեռավոր աշխարհամասերը։

Սրտակեղեք են այն տեղեկությունները, որ տալիս են ժամանակակիցները։

## <II>

Հայ անվան տակ հասկացվում է ամենուրեք ցրված, աշխարհիս բոլոր մասերում շրջող, հայրենազուրկ մի առևտրական, որի ծագումը, պատմությունը, ճակատագիրը քիչ է հայտնի մեզ։ Տխուր, վշտացած նայում է այդ երկրի ամեն մի զավակ, թե ինչպես են համաշխարհային թատերաբեմից չքացել իր մեծ նախնիների գործերը։ Նրա հպարտությունը, որ կապված էր իր ցեղի հնության, իր ժողովրդի փառքի և հիշատակության արժանի գործերի, իր ազգի անխախտ ինքնապահպանության

հետ՝ ընկնում է, ըստ որում, նա ստիպված է ամեն բան, ինչ որ հաղորդում է իր պատմությունը, համարել առասպել ու ավանդություն, և իր բարձր կարծիքը համաշխարհային պատմության մեջ ո՛չ նվազ կարևոր դեր խաղացած ազգի մասին փոխանակել մի փոքրիկ առևտրական խմբակով։ Եթե բնիկները նրանց ապացուցեն, թե ի՞նչ երկրից, ի՞նչ ցեղից է նա, ապա այդ կլինի նրա համար լոկ մի տեղեկություն, որ խոստանում է շատ բան, բայց ո՛չ բավարար պատասխան։

Իսկ նրա ճակատագրից ավելի դաժան են այն զարհուրելի ցավերը, որոնք գոյություն ունեն իր երկրում։ Էլ ավելի անմխիթար են նրա համար այն ժխտական վերաբերմունքը, որ ցուցաբերում են նրա իսկական արժանիքի նկատմամբ, այն հարձակումներն ու նախատինքները, որ բաժին են հանում նրան, որպես փչացած հրեա ազգի, որովհետև դատում են նրա ներկա վիճակին համապատասխան, առանց նրա ո՛չ նախկին, ո՛չ էլ այժմյան պայմաններն ավելի ստույգ հետազոտելու։

Նրա ձգտումը չի եղել աշխարհը նվաճել, աշխարհի տեր դառնալ, ընդհակառակը, մենք տեսնում ենք դեռ անհիշելի ժամանակներից անհետացած բարձր կուլտուրա, հաղթահարման և հարատևության, վեհելքի և մարտերի, համբերատարության և տոկունության տեսարաններ։ Մի մարդասեր անձնավորություն, պատմաբան պետք է հետազոտի, ուսումնասիրի այդ ժողովրդի ճակատագիրը և հիանա աստուծո ամենակալության վրա, որ դրան այնպես անհասկանալի ձևով պահպանել և փրկել է շատ կորստաբեր դարերի հեղեղից։

Ինչ վերաբերում է մեր երկրի մանրամասն պատմությանը և գրականությանը, ապա Ջրպեաը, Սեն-Մարտենը և պրոֆեսոր Նոյմանը, ոչ պակաս ծառայություն են մատուցել այդ ուղղությամբ, հետևաբար և կարիք չկա կրկնելու։

Չնայած դրան, ես չեմ խուսափի ըստ ժամանակի և հանգամանքների տալու այն արտակարգ եղելությունների ու դեպքերը, որոնք բազմատեսակ ազդեցություն են ունեցել նրա ճակատագրի, նրա մտավոր և քաղաքական վերափոխության վրա։

Հայաստանի հնագույն պատմության գլխավոր բնութագիրը ընդհանուր է բոլոր մյուս ազգերի բնութագրի հետ։ Այդ պատմությունը թափանցում է մինչև հնագույն դարերը և տալիս է մեզ առասպելներ և իր երկրի բնակիչների բերանից առնված ավանդություններ։

Լոկ անհիմն մեծամտությունից չէ, որ Հայը կամենում է իր ազգը ամենահինը համարել աշխարհիս երեսին։ Այդ բանը նրան համոզում և հավատացնել է տալիս իր երեխայական համեստ կարծիքը։ Սուրբ գիրքը

*նրա երկրի կենտրոնում՝ Եփրատի և Տիգրիսի ակունքների մոտ է դնում մարդկային առաջին զույգի բնակավայրը՝ դրախտը։ Վեհապանծ Արարատի տեսքը հիշեցնում է նրան այդ ամեն օր։ Այնպիսի անուններ, ինչպիսիք՝* Երևան, *որ նշանակում է «երևում են»,* Արկուրի՝ *«տնկեց ու-ռենիները»,* Նախիջևան՝ *«իջնելու առաջին վայրը»,* Մարանդ՝ *«մայրը այնտեղ է»— այդ բոլորը դատարկ հնչյուններ չեն նրա բարձր հասկա-ցողության, կարծիքի համար։ Նրա նախահայր* Հայկը *կտակում է նրան իր՝ աշխարհակալ* Նեբրովթին *հաղթողի փառքը։ Հայր նրան բարեպաշ-տություն է վերագրում դեռ այն ժամանակներում, որովհետև նա չի կա-մենում մասնակցել Բաբելոնի աշտարակաշինությանը և հաղթահարում է իր հակառակորդի վրիժառությունը իր երկրի ազատությամբ և անկա-խությամբ։ Դրա համար էլ ժողովուրդն իրեն է վերագրել երախտագի-տությունից նրա անունը և մինչև այսօր էլ պահպանում է այն՝ անվա-նելով իրեն* Հայ, *իսկ երկիրը՝* Հայաստան։ *Նրանք կոչվում են նաև Ա-րամյաններ՝ Հայկի հետագա շառավիղներից մեկի անունով, որը պա-տերազմներ է մղում հարևան ժողովուրդների դեմ և ընդարձակում իր երկիրը։ Հայերը կոչվում են նաև* Հաբեթյաններ, Նոյի *երրորդ զավակի անունով։ Նրա քաղաքները, նրա լեռները մինչև օրս էլ կրում են իրենց վրա իր հերոսների անունները...*

## ՆԱՄԱԿ Գ. Ֆ. ՊԱՐՐՈՏԻՆ

Ձերդ գերազանցություն, ամենաողորմած պարոն,

*Բարի եղեք թույլ տալ, [որ ես] Ձեզ մի հանգամանք բացատրեմ, որն ինձ վաղուց, իսկ երեկվանից սկսած ավելի [շատ] է զբաղեցնում և որը Ձեր ուշադրությանը պակաս արժանի չի լինի։*

*Որովհետև որոշ չափով ինձ հայտնի են իմ արևելյան հայրենակից-ների, հայերի և ուրիշների մտածելակերպը և կյանքը, ուստի բազմակող-մանի փորձերով ապացուցված եմ համարում, որ նրանք ուրիշ ո՛չ մի այլ միջոցով չեն կարող ամենից լավ և արագ իսկական կրթության և լուսա-վորության հասնել, քան գեղեցիկ արվեստների՝* բանաստեղծության, երաժշտության և նկարչության միջոցով։ *Եվ երբ ես Եվրոպայում առա-ջին անգամ տեսա այդ արվեստներն իրենց իսկական լույսով և զգացի նրանց ներգործությունը նախ և առաջ եվրոպացիների, և հետո էլ իմ վրա, ապա իմ առաջին և ամենագեղեցիկ ցանկությունն այն եղավ, որ ես*

աշխատեմ տարածել այդ արվեստներն իմ հայրենի երկրում։ Այդ ցան-
կությունը ես արտահայտել եմ ոչ թե մի անգամ, այլ շատ ավելի հա-
ճախ. և այն բարյացակամորեն ընդունվել է և հաստատվել այդ հրաշալի
արվեստներին հմուտ մարդկանց կողմից։ Եվ երբ ես պատկերացնում եմ
այդ արվեստների երկնային, սիրտ ազնվացնող հմայիչ ուժը, երբ ես
նկատի եմ ունենում արևելցիների կրակոտ, բուռն երևակայությունը,
ապա այդ բոլորից այնպիսի սերտ ներդաշնակություն է ստացվում, որ
ես այլևս չեմ երկբայում, որ որևէ մեկը կարող է կասկածել այդ ճշմար-
տության նկատմամբ։ Ոչ միայն հայերը, այլև ամբողջ Ասիան, որպես
մանկության օրրան, ինձ վրա պարտականություն են դնում ոչ մի դեպ-
քում չհրաժարվել այն ծառայությունից, որ ես ի վիճակի եմ մատուցելու
և ի վիճակի կլինեմ մատուցելու։ Դա կլիներ մի անհաջող ձեռնարկու-
թյուն, եթե ես համարձակվեի հիշյալ արվեստներն այդ նպատակով յու-
րացնել իմ այս հասուն հասակում և այդքան կարճ ժամանակում։ Սա-
կայն օր ու գիշեր ես պատրաստ եմ ապագայում ամեն հնարավորություն-
ներ գործ դնելու, որպեսզի, եթե իմ հայրենիքում գտնվեին երիտասարդ
մարդիկ, որոնք այդ տաղանդն ու ցանկությունն ունենային, գնային Եվ-
րոպա կատարելագործվելու։ Ոչինչ այնպես չէր բորբոքում իմ միտքը
եվրոպական կրթության համար, ոչինչ այնպես բուռն կերպով չէր հա-
մապատասխանում իմ ձգտումներին, ինչպես բանաստեղծությունը, ե-
րաժշտությունը և նկարչությունը։ Որքան էլ քիչ են զբաղվում մեզանում
այդ շքնաղ արվեստներով, որքան էլ քիչ հասկանայի ես այդ արվեստնե-
րը, այնուամենայնիվ նրանք իմ ամենագեղեցիկ մտքերի ղեկավարն էին։

Երբ ես բախտ ունեցա Եվրոպայում առաջին անգամ տեսնելու այդ
արվեստներն իրենց իսկական լույսով, ապա առաջին ցանկությունը, որ
ես ունեցա, այն էր, որ դրանք փոխադրեմ ասիական երկրները։ Եթե
Ասիան պիտի ստանա լուսավորության իսկական լույսը, ասում էի ես
իմ մտքում, ապա այդ բանը ոչ մի միջոցով չէր կարող ամենից լավ և
արագ կատարվել, քան արվեստի միջոցով, և իմ այս կարծիքը, ավելի
հաճախ, քան մի անգամ, հաստատվել է արվեստագետների կողմից։ Ո՞վ
չի ճանաչում այն երկնային, սիրտ ազնվացնող հմայիչ ուժը, որ գըտ-
նըվում է արվեստների մեջ, ո՞ր հոգին կարող է ավելի շուտ զգայուն լի-
նել նրանց հանդեպ, եթե ոչ արևելցու կրակոտ, երևակայությամբ հա-
րուստ հոգին։...

1835 թ. 21 հունվարի,
Պետերբուրգ

## ՄԵԾԱՊԱՏԻՎ ՊԱՐՈՆՆԵ՛Ր

*Մեծապատիվ պարոննե՛ր. մոտեցել է այժմ իմ գործունեության կարևորագույն պահը։ Ես պատրաստվում եմ արդեն թողնելու Եվրոպան։ Հայրենիքիս համար ես հանձն առա այս երկարամյա պանդխտությունը և ներկայումս իմ ձգտումը պիտի լինի հայրենիքիս օգնության հասնելը։ Ո՛չ մի բան չի կարողացել ինձ սարսափեցնել առաջին քայլից, առավել ևս չի կարող ինձ ոչ մի բան կասեցնել, որպեսզի ես չկարողանամ իրագործել իմ ցանկությունը։ Ես հաստատապես որոշել եմ չխնայել նույնիսկ կյանքս, եթե դա պահանջվի ինձանից։...*

## <ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

*Եթե յուրաքանչյուր հավատարիմ հպատակի, իբրև մարդկային հասարակության անդամի, պարտականությունն է, ըստ հայեցողության, փորձառության և գիտելիքների, հնարավորին չափով ձգտել օգտակար լինելու այն պետությանը, որի պաշտպանությունը և բարեգործությունները նա վայելում, աջակցելով նրա շահերին և կանխելով նրան հասանելիք վնասները, ապա որչափ առավել ևս պետք է իր մեջ զգա այդ սուրբ պարտականությունն ա՛յն հպատակը, որն ազատվել է ստորացուցիչ խոնարհությունից, վայելում է ո՛չ միայն պաշտպանություն և բարեկեցիկ կյանք, այլև իր ամբողջ էությամբ պարտական է այդ պետությանը։ Իմ Հայրենիքի ազատագրության միտքը պետք է ողջ կյանքիս ընթացքում խնդությամբ և շնորհակալությամբ լցնի իմ սիրտը և ջերմ մաղթանքներ ուղղի Ռուսաստանի անհողդողդության և հարատևության համար դեպի այն էակը, որի հայրական սիրտը մեզ էլ արժանացրել է մի բարեգործ կառավարության՝ այն բոլոր նեղություններից և ցավերից հետո, որոնց ներքո մենք դարեր շարունակ տառապել ենք։...*

*...Հայ երկրագործը թեև, ի բարեբախտություն յուր, ուրիշի ճորտ չէ, ունի իր սեփական հողակտորը, սակայն ի՞նչ օգուտ կարող է նա ունենալ այդ բոլորից, եթե նրան չտանեն այն ուղիով, որպեսզի նա կարողանա, ինչպես հարկն է, օգտվել այդ առավելություններից։ Սակայն այդ բոլոր արգելիչ հանգամանքները կարելի է այնուամենայնիվ նվազագույն համարել նրա համեմատությամբ, թե ինչպես է նա իր այգին*

տնկում և խնամում, ինչպես է մշակում իր դաշտը, թե ինչ գործիքներ և միջոցներ է գործադրում դրա համար։ Ես նրանց կցանկանայի ո՛չ թե հարստություն կամ մի ավելի լավ բան, այլ այն, որ նրանք ի վիճակի լինեին ընդհանրապես իրենց օրական պիտույքները բավարար չափով հայթայթելու և այնքան միջոցներ ունենային, որ կարողանային կանոնավոր հագնվել։ Սրտիցդ արյուն է կաթում, երբ տեսնում ես նրանց հանդերձանքը, որը երկրի շատ վայրերում ավելի շատ ցնցոտիներից կարկատած մի վերնազգեստի է նմանում, քան հագուստի։ Եվ դա՝ այնքան հարուստ մի երկրում։...

Վերջապես դառնում եմ այն գլխավոր հարցին, թե ինչպիսի միջոցառումներ են հարկավոր առաջին հերթին, միայն Ռուսաստանին նախասահմանված վեհ նպատակին հասնելու համար, այսինքն՝ անդրկովկասյան ժողովուրդների հոգեկան վերածնությունն իրականացնելու և արթնացնելու և դրանով նրանց մեջ մի տևական երջանկություն հաստատելու համար։ Հեշտ չէ այդ հարցին պատասխան տալը, սակայն հաստատ է, որ այդպիսի մի մեծ նպատակ, ինչպես և յուրաքանչյուր մեկ այլ նպատակ պետք է ըստ ժողովրդի և երկրի պայմանների ու վիճակի ընտրվի և ի կատար ածվի։ Մենք տեսանք, թե մեր երկրում ինչ կարելի է անել և ստանալ արդյունաբերության և առևտրի՝ կուլտուրայի վերակենդանացման այդ երկու, անկասկած, ազդու միջոցների շնորհիվ։

...Ամենից շատ հարկավոր է այդ երկրին մի մանկավարժական ինստիտուտ, որտեղ ուսուցվեին նվազ գիտական, բայց մատչելի, տեղի բնակիչների պայմաններին և դրությանը համապատասխան և առավելապես նրանց բարոյականության և կատարելագործման վերաբերյալ գիտելիքներ, կապված գյուղատնտեսության ու տեխնիկայի նպատակահարմար դասավանդման հետ։ Եթե միայն սաներին սովորեցնեին մայրենի լեզու և ռուսերեն, և դրա հետ միասին մասամբ՝ պատմություն, աշխարհագրություն, ֆիզիկա, կրոն և գծագրություն, բայց առավել հիմնավոր՝ թվաբանություն, երկրաչափություն, բնագիտություն, մանկավարժություն և, գլխավորապես, գյուղատնտեսություն ու տեխնիկա, որոնցից վերջինները պարտավոր կլինեին նրանք գործնականապես սովորել և կիրառել, ապա դրանով մի այնպիսի գործ կանեին, որը կապված կլիներ հազարավոր բարիքների հետ։

# Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

*... Ընթեռնլով զվարս և զգործս մեծագործ անձանց, թագաւորաց, զօրավարաց, դիւանց, յիրաւի զարմանամ և պաշտեմ ի սրտի իմում զանուն նոցա և զգործս. բայց զի՞նչ կարծես, միթէ հանցե՞ն սէրս ի սրտէ իմմէ զանուն Հայազգի հսկայից և վսեմագործ անձանց: Օ՜ն և օ՜ն սրբացէ ինձ տէր: Որքան ահեղաճաճանչ էս իւրեն ճառագայթք փառաց և մեծագործութեանց նոցա, նոքա ո՛չ բնաւ մարթասցին նսեմացուցանել զյիշատակ և զանուն մերազնեայ քաջաց*: Նա է իսկապէս այր մեծագործ, ազգ մեծ, որ ի յուրձանս բիւրաւեսակ փորձանաց և վտանգաց, պահպանեաց զանձն և ո՛չ կերակուր եղև համակործան հեղեղին: Յուշ ածէն իմ զանուն Հայկայ, Արամայ, Զարմայրի, որ զԱքիլլեան մղի խորտակել զդաւաղութիւն, Տիգրանայ Մեծի՝ որ միաւորեալ ընդ Կիւրոսի զտիեզերս սասանեցուցանէ, Վաղարշակայ՝ որ զՀայաստան ածէ ի ծայրագոյն ստափան պայծառ, Տիգրանայ Բ՝ որ զԱսորեացն խորտակէ զիշխանութիւն հզօր, Տրդատայ՝ որ զՀռովմայեցիս յապուշ կրթէ իմաստութեամբ՝ և հզօր զօրութեամբ քաջ բազկի իւրոյ, Վասմշապհոյ՝ որ գիտութեամբ պայծառացուցանէ զազգ և զլեզու, հուսկ ուրեմն Վարդանայ առաքինի և անմահ զօրավարին մերոյ՝ որ զկրօն մեր և զաշխարհ Թանկագին արեամբ իւրով պաշտպանէ. նոքա իմ վառին սիրով և զարմացմամբ: Զայլազգի հզօրս մոռացեալ՝ նոցա յիշատակութեամբ միայն բորբոքի սիրտ իմ. ցանկամ ձգտիմ մատչիլ ի գերեզման նոցա և արտասուօք լուանալ զԹանկագին նոցա փոշի: Տեսեալ զարձանն Պետրոսի Մեծի, Ալէքսանդրու օրհնելոյ, Ֆրիդրիխայ Մեծի, զայրանամ ի միտս իմ, յանդիմանեմ զազգ իմ. ընդէ՞ր և սոքա ո՛չ վառեցին զամենայն գոյս իւրեանց առ ի կառուցանել և մերազնեայ հսկայից արձանս: Այլ զի՞նչ առնեմ: Կրկին հեծեծեմ ակար զգացմանց իմոց: Աւա՜ղ, ե՛րբ տեսից Հայաստան զօր խաղաղութեան, զի հաստատուն մնասցեն գործք*

---

* *[Մեծ է Հաննիբաղ, այո՛, ի հնումն, մեծ և Աղեքսանդր Մակեդոնացի, մեծ և Կարլոս կայսրն Գերմանացւոց, և Պետրոս կայսրն Ռուսաց և Նապոլէոն և այլք բազումք, բայց ո՛չ այնքան նոքա, որքան ժամանակն և հանգամանքն արարին զնոսա մեծ: Զէին նոքա ծնեալ յայնպիսի ժամանակի, հաւատա ինձ, և ո՛չ կարէին ունել զայնպիսի ասպարէզ գործոյ, զորս լուեալ մեր ի զարմանս կրթիմք: Բերմունք աշխարհի, իբրև անտառ ինչ հետզհետէ փոփոխեալ՝ յանկարծ յառաջ ածեն մեծ փոքրիկ Թփոյ զայնպիսի ահագին կաղնի կամ սօսնի, զորս տեսեալ՝ հիանամք: Բայց այս բաղդաւորութիւն կաղնւոյն էր, զի բուսաւ յայնպիսի արգաւանդահող տեղւոջ, և ո՛չ կաղնին ինքնին այնպէս զօրացաւ, որ եթէ բուսեալ լինէր ի մէջ ապառաժից կամ անբերրի վայրի, լինէր վտիտ ու նուաղ: Զնոյն նմանութիւն ունի և սեռն մարդկային]:*

Ազգին։ Ո՞չ ապա հեղուն իբրև զհեղեղս անապատի Պարսիկք, Ասորեստանեայք, Մակեդոնացիք, Հռովմայեցիք, Հոնք, զազանաբարոյն Ատտիլայ, կատաղին Ջինգիզխան, մարդախոշոշ Սարակինոսացիք կամ Արաբացիք, անկուշտն Թամուրլանկ, անողորմ Թուրքմանք, ամենեքեան ազգք հզօրք, ծարաւիք արեան։ Մահաբեր ոտք նոցա բարձին, ջնջեցին յերեսաց երկրի զամենայն գործս մարդկան, ուր շնչեցին զառն նոցա հողմ։ Հուր բորբոքի ի սիրտս լսողաց, ի լսելն զճիրս եղեռնագործութեան բարբարոսս, անզուսպ ազգացս այսոցիկ։ Անապատ դառնայր, ուր ոտք նոցա մխէին։ Կարէ՞ր ուրեմն Հայաստան՝ շրջապատեալ յայսքան բարբարոսաց զօ՛նէ ոգի առնուլ և զօրանալ, որ առաւելն եղև տուժել քան զամենայն երկիրս այսոցիկ եղեռնունեանց՝ և զերօրինակ քաղաքական ալէկոծութեանց։ Ո՞ւր, աղաչեմ, ասա՛ ինձ, տիեզերատարած ազգք սահմանակիցք մեր՝ Բաբելոնացիք, հզօրք, Ասորիք աշխարհակալք, Փիւնիկեցիք քաջաջանք, Հռովմայեցիք աշխարհակալք, և այլք անթիւք բազմիցս հզօրք և մեծ քան զազգ մեր։ Կորեա՛ն, ջնջեցա՛ն, անհետացա՛ն յերեսաց երկրի առանց յետնորդաց։ Միմիայն անուն նոցա մնայ ի շրթունս մեր, և գործք ի յիշատակս, այլ ինքեանք վերջացեալ իսպառ սպառ։ Այլ ո՞ր հաստատութիւն կամաց. ո՞ր պնդութիւն հոգւոյ, ո՞ր ջերմեռանդութիւն առ կրօնս և առ Աստուած, ո՞ր միաբանութիւն վաղուց և վաղ, մինչ ցայսօր զազգն Հայոց, զի անձնամատն եղեալ հրոյ, սրոյ և այլ անհնարին տարաբաղդութեան, ի ժանիս կատաղի բարբարոսաց, թէ ո՛չ կարացին զանկախութիւն իւրեանց պահպանել, որ չէ՞ր հնար բնաւ, անպարտ պահեցին զօ՛նէ զեկեղեցի իւրեանց և զհաւատ, զլեզու և զգրականութիւն։ Մատնեցին զանձինս դառնակոշկոճ մահու, տարագիր եղեն ի սիրելի հայրենեաց, հեղին քաղցրութեամբ զարիւն և հասուցին զօ՛նէ մինչ ցայսօր ժամանակի զվճիռ ազգի իւրեանց։ Ո՜վ, անաստուած է, անիրաւ, անզէտ՝ որ զայսպիսի առաքինական հոգի ազգին մերոյ ուրացեալ, ո՛չ զգասցի և ծանիցէ լիովին զյարգ Հայոց։ Մեծ է հոգի Հայոց ի ճակատու պատմութեան՝ և ի միտս բարեկամին մարդկութեան։ Մի՞թէ և ցայսօր ժամանակի ո՛չ գերազանցի Հայկազն ոք հոգեկան արտօնութեամբք խրովք, սրամտութեամբ, ընդունակութեամբ, արիութեամբ, քաջանութեամբ, վսեմութեամբ, մեծանձնութեամբ, յաչս յամենայն արդարադատ և անաչառ քննողի։ Միթէ այս վսեմախոհ հոգւոյ նորա չէ՞ ծնունդ, զի անդ՝ ուր դրացիք իւր ոմանք ի լերինս թափառին և ոմանք ի գծուծ հանդերձս իւրեանց միայն յատկանայն, քաջաջանն Հայկազն զամենայն հնարս հնարէ կրթել զինքն, լուսաւորել զհոգի իւր, պայծառացուցանել զքաղաքս և ստանալ զփառս առաջի ամենայն մարդկան։ Յա-

*մենայն տէրութիւնս, ուր բնակին Հայք, յՕսմանիայ, ի Պարսկաստան, ի Ռուսաստան, ընտիր արհեստաւորք, քաջ երկրագործք, խոհեմ գործավորք, զգօնամիտ կառավարիչք, հաւատարիմ պաշտօնատարք, չե՞ն ըստ մեծի մասին Հայք։ Միթէ և անգութ մահմետականք, ո՛չ յայս սակս միայն ամենայն ուրեք պահպանեն և սիրեն զազգ մեր։*

*Զայս ամենայն ընտիր յատկութիւն ազգին իմոյ զմտաւ ածելով պարծիմ, պանծամ, զի Հայ անուամբ կեամ յաշխարհի։ Հայկական արիւն յերակունս իմ շարժի։ Եւ այս միմիայն եղիցի ինձ առաջնորդ, ո՛ւր և իցեմ, սուրբ համարել զանուն և զկրօն ազգին իմոյ մինչև ցել շնչոյ։*

## Ի. Վ. ՌՈՍԿՈՎՑԵՆԿՈՅԻՆ

<մարտ [՞], 1842 [՞] Թիֆլիս>

**Ողորմած տէ՛ր,**
**Իվան Վասիլևիչ**

**Ապրել և մեռնել հայրենիքի համար,—** *ահա տակավին վաղ պատանեկան տարիներից իմ ընտրած նպատակը։ Թեև ճնշված լինելով ինչպես բռնակալության, նույնպես և տգիտության բեռների ներքո, դեռ ո՛չ մի գաղափար չունենալով եվրոպական կրթության մասին, ո՛չ մի նեցուկ և, մինչև իսկ, ո՛չ մի միջոց չունենալով հասնելու իմ առաջադրած նպատակին, ես հոգուս մեջ տածում էի միայն այդ մտածությունը, միայն այդ ցանկությամբ այրվում։ Բարբարոսության լծի տակ ճնշված իմ հայրենակիցների թշվառ բախտը, վշտալի հիշողությունները երբեմն փայլած, բայց իմ օրերում հանգած իմ թանկագին հայրենիքի մեծության և փառքի մասին,— ահա՛ թշվառիս, թախծալիիս և որբացյալիս հոգին ալեկոծող առաջին տպավորությունները, առաջին ծանր զգացմունքները։ Աչքիս առաջ բերելով այդպիսի կենդանի եղանակով իմ հայրենիքի խղճուկ վիճակը, մեր սուրբ հայրերի սեղանի առաջ իմ տված առաջին երդումը, նրանց գերեզմանների վրա թափած դառն արցունքները, նրանց թանկագին աճյուններին նվիրած ի խորոց սրտի հառաչանքները եղել են այն, որ նրանք լինեն իմ թարմ պահապան հրեշտակները և բաց անեն իմ առջև հօգուտ նրանց որբ թողած մանուկների զոհվելու ուղին։*

*Տասը տարին անցավ ինձ համար, ինչպես տասը դար*[3]*։ Ամենալավ ակնկալություններս ես առ ոչինչ էի համարում, ձգտելով գտնելու միայն առիթ՝ այդ խուլ զգացմունքները պարզելու համար, որով և կկարողա-*

նայի հասնել այդ նպատակին։ Առանց նախապես լուսավորելու,— այսպես էր խոսում իմ մեջ ներքին ձայնը,— անհնար կլինի ինձ պիտանի լինելու մի որևէ գործի։ Այդ նպատակով քանի՜-քանի՜ անգամ թողել եմ իմ հայրենական տունը՝ փախչելով, ինքս էլ չիմանալով, թե ուր[4]։ Մանափորձերը, այս ասպարեզում որոնումների ժամանակ ինձ հանդիպած դժվարությունները, չքավորությունը և մինչև իսկ վտանգները,— ո՛չ մի, ո՛չ մի բան չկարողացավ հանգցնել իմ մեջ այդ հոգեկան բոցը։ Բայց ամենաբարձրյալը, որին միայն հայտնի են մեր սրտերի ներքին շարժումները, չթողեց ինձ վաղաժամ զոհ դառնալու այս դառը խորհուրդներին[5] և հրաշալիորեն ցույց տվեց ինձ իմ ապագա կոչման ճանապարհը։

Մեր հրեշտակ-փրկիչ ռուս ժողովրդի հաղթական զենքով վերակենդանացած իմ հայրենիքի ազատագրության օրերին ո՞ւմ հոգին կարող էր այնքան կենդանի խանդավառված լինել այդ երջանկության հրճվանքով, եթե ոչ՝ իմը…

## ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ[6]

…Կովկասի տարեգրություններում դեռ ինչքա՜ն հուշակավոր հայերի անուններ կան՝ նրա՝ հյուսիսի արծվի պաշտպանության տակ մտնելու ժամանակներից։ Բավական է միայն նրանց առաջ մղել, այն ժամանակ նրանք կլինեն բոլորովին նույնը, ինչ որ էին առաջ՝ կպարծեն և՛ մտքով և՛ զենքով։ «Հայերին մեծ ապագա է սպասում»,— հաճախ ասում էր ինձ սենատոր Հ<անը>, որ ինձ սիրով էր վերաբերվում։ Տա՜ աստված. մենք դրան էլ սպասում ենք, և ցույց կտանք, որ Հայկի և Ռյուրիկի արժանի զավակներն ենք…

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

## ՆԱԽԱԲԱՆ ԱՌ ՀԱՅԿԱԿ[1]

*Հայրենի՜ք... Այն քիչ անուններեն մեկն է այս՝ զոր գրեթե ամօթ է բացատրել բարեկիրթ և զգօն անձի մը, թեև չըլլա շատգետ կամ բանիբուն. գրեթե մտքեն առաջ սիրտն կու հասնի, կ'ըմբռնե, կ'իմանա զայս. կ'իմանա զայն նաև երբ չի կրնար քիչ բառով կամ խոսքով բացատրել. մանավանդ ուր քաղաքական և բարոյական տեսությունք՝ սառը իմաստն այլայլած կամ զանազանած ըլլան։*

*Արարածոց մեջ՝ որոնց հետ կ'ապրի՝ մարդուս ամենեն հատուկ միանգամայն և ազնիվ ձիրքն է միտք կամ բանականություն, որ կ'ուզե ըմբռնել, ճանչնալ, զատել. իր ծանոթությանց գլխավոր առարկայն ալ է նախ ինքն և իր նմանիքը.—մարդկություն։ Եվ ինչպես շուտով մը կ'իմանա որ ինքն իբրև մարդ ամեն մարդու հավասարակից է, բայց ամենքն ալ իրմե զատ զատ մարդիկ են, այսպես ալ շուտ մը կու ճանչնա, կ'ընտրե, կ'որոշե անոնցմե բազմություն մը մարդկան՝ որք նման են իրեն այն ամեն բաներով՝ որով որ ուրիշներու չեն նմանիր։ Եվ ահա կու ճանչնա զազգս. և անոնց մեջ իր* համազգին. *և երկրիս բնակության վրա ասոր բռնած տեղն ալ՝* Հայրենիք: *Բնական է մարդուս փնտռել և սիրել զՀայրենիս։*

*...Ո՜րչափ բարեբախտ է, կ'ըսեմ, այն ազգն՝ որ ՚ի սկզբանե ՚ի վեր իր համալեզու նախնյաց երկրին մեջն է կեցեր. անկեց դուրս տեղ չի գաներ իր նահապետաց ծնարանը, և հոն կու տեսնե անոնց քնարանը... Եթե խնդա հոն և եթե լա՝ անցյալ հիշատակաց համեմատ, խնդումն ալ՝ լացն ալ՝ ոչ միայն սիրով են, այլև փառք. վասնզի քաջությամբ կըռվիլն և պաշտպանելն ավելի արժանավոր է՝ քան հաղթող գտնվիլն. միշտ փառք ու պարծանք է իր երկիրն և իր ազգը սեփական լեզվով և օրենք պահելն.— ունենալ հատուկ և բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարություն մը, ծես մը և հիշատակարաններ, որոնց համար բարեկամ բա-*

ընկամի հետ խոսելով կարենան ըսել՝ մեռը. այս կատարյալ հայրենիք է, երկրիս ո՛ր կողմն ալ որ ըլլա, ինչ դիրք ալ որ ունենա…

—Ո՜հ, արդարև ատիկա կատարյալ և նախանձելի հայրենիք է. ատիկա ընդարձակ հասարակաց բնիկ տուն մ'է, որ ամեն համազգի մարդու մասնավոր տուները իր մեջ կը բովանդակե. ատիկա ամեն կերպ զորավոր սեր և զմայլումն կ'ազդե բնակչին վրա. այդ է որ զգացուցեր և ազդեր է այն ամենայն հրաշալի հայրենասիրության կրքերը, այն աշխատությունները, համբերությունները, քաջությունները, և ինչվան կենսանվեր զոհերը, երբեմն միայնակ, երբեմն ընկերակցոք և երբեմն բովանդակ բանակներով, զոր հռչակեր են պատմիչք, քերթողք և ճարտար արվեստավորք. և որոց վրա կը զարմանան ընթերցողք և լսողք՝ նաև հետ երկար դարուց անցնելու, և կը պարծին անոնց ետին համազգի թոռանց թոռունքն ալ… Աշխարհք չի կրնար այսուհետև մոռնալ 3000 տարվան Տրոյիա[2] առման դեպքը, և ոչ 2400 տարվան Սալամինա և Թերմոպիլեի հիշատակները[3], որոց վրա միշտ պիտի պարծի ո՛րչափ ատեն որ գտնվի Հույն մը։ Այսպիսի հիշատակք երկրավոր հավիտենականություն մ'են, ազգը և սիրուն… Ո՜հ, երբ այսպիսի հիշատակաց վրա շարժի գրիչն, չի կրնար զանն կայծեր չցատկեցնել, պատմիչն հանկարծ վիպասան կ'ըլլա, բանագետն՝ բանաստեղծ։…

Ազգային հիշատակարանք. ասոնք են բնիկ նշանք հայրենյաց. ասոնք են յուրաքանչյուր ազգի հայրենյաց ամենեն հայտնի, ամենեն ազդու և զորավոր արձանագրությունք, միանգամայն և ամենեն սիրելի և սրտառուչ բաներ երկրիս վրա։ Կրնամք արդեն մենք Հայքս ալ, հետ արտասվելու մեր անցյալ կամ կորուսյալ երկայն ինքնակացության և բազմակերպ հիշատակաց վրա, (որք 3000 տարի մը հանդիպեցան այն միևնույն երկրին վրա՝ զոր բնիկք և օտարք միշտ կ'անվանեին Հայաստան և Արմենիա), կրնամք, կ'ըսեմ, դեռ հիմա ալ մխիթարվիլ՝ որ այս ցան և ցիր ազգիկնուս զոնե կեսն դեռ իր հին և ամենահին հարանց հողուն վրա կը բնակի, կը բանի, և կը հանգչի, անոնց նշխարյալ ոսկերաց քով իրեններն ալ ավանդելով.— և կրնա դեռ հետ այնքան ապականությանց և ավերանաց՝ որ թերևս ամեն աշխարհե ավելի իր երկրին վրա եղան, կրնա դեռ իր նախնի տիրադրուխ նախնյաց հնացյալ և կիսաքանդ հիշատակարանները տեսնել.— կրնա ճանչնալ այն տեղվանքը՝ ուր իր համարյուն և համալեզու առաքինյաց և քաջաց գործք և արդյունքն կատարեցան որք 'ի գիր անցան և դարուց 'ի դար կը պատմին և պիտի պատմին։ Կրնամք և մենք հեռավորքս ու մերձավորք՝ մխիթարվիլ և օգտվիլ այն հիշատակարաններով և հիշատակներով, զոր եթե ժամա-

նակն մեկ կողմեն կու ջանա ավելի հնացընել և մոռացընել, մեկ այլ կողմեն դյուրությունք նույն ժամանակի, արվեստք, գիտությունք, ջանք և կրթություն՝ ավելի կու հայտնեն, կու նորոգեն, կենդանացընեն։ Զանոնք փնտռելով և քննելով կու ստիպվինք անգամ մ'ալ վկայել մեր անաչառ պատմահոր հետ (Խորեն. Ա. գ.), որ թեպետ և հիմա փոքր ազգ մ'ենք, տկար և օտարի իշխանության տակ ընկած, «սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և 'ի մերում աշխարհիս»։ Գործք արության են՝ քաջություն հոգվո և սրտի և ձեռաց. արդյունք առաքինության և կտրճության...

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԵՐԻ ԿՈՉՈՒՄԸ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*...Հռոմայեցիք ցույց են տվել անընդհատ շարակարգ կռիվներ, պատերազմներ և հաղթություններ, մի այրական համբերատարություն բաղդի բոլոր փոփոխությունների մեջ, մի հետզհետե, իմաստուն խստությամբ հառաջացուցած մտակցություն տիրապետած աշխարհների մեջ, և մի տևողական իշխանություն, որ, թեև պատերազմելով ներքին փոթորիկների և արտաքին թշնամիների հետ, այնուամենայնիվ մի պինդ և ամուր բնավորությամբ հաստատ մնաց ավելի երկար, քան թե որևիցե մյուսը...*[1]

## ՎԵՐՋԱԲԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ 1858 ԹՎԱԿԱՆԻ

*...Հյուսիսափայլի*[2] *սրտի ցանկությունը այսպես է, որ Հայոց կյանքի պղտոր ջուրը, որի մեջ մինչև այժմ խարդախ մարդիկ առատ ձուկն են որսացել, պիտո է պարզվի և պայծառանա մի օր, որ անպիտանքը սևերես եղած փախստական լինին և ազգի ընտիրքը երևին և հաղթող հանդիսանան, և այսպես ազգը օր ավուր հառաջադեմ լինի ամենայն բարելավության մեջ, և ժամանակով մի պատվելի տեղ գրավե յուր համար մարդկության քաղաքացյալ ազգերի շարքումը...*

## Հ. ՊՈՆՃՈՒԿՅԱՆԻՆ

*25 հոկտեմբերի, 1876*

*...Դուք զարմանում եք, Դուք ցավում եք, Ձեր զարմանքին ու ցավին մասնակից է ամենայն հայրենասեր անձն, որ եվրոպացոց ուշադրությունը այս րոպեիս գերօրինակ կերպով դարձրած է սլավոնական ազգերի վրա*[3]*։ Ամենայն հրապարակական թերթերը լցված են այն հայա-*

ծանքի, այն եղեռնագործերի նկարագրությամբ, որ տաճիկները յուրյանց բարբարոսական ամբոխներով արած են քրիստոնյա բուլղարացոց, բոսնիացոց, սերբիացոց, հերցոգովինյայց, այրելով և մորթելով այր ու կին ու երեխա և պղծելով կին ու աղջիկ, մինչ ամենքյան լուռ են նմանապիսի ահարկու անցքերի վերա, որ թե անցյալ և թե ներկա օրերում անցած էին Տաճկաստանի հայերի մեջ և այժմ իսկ գործվում են: Ձեզ պետք է պատասխանել. հայք դարավոր ժամանակներով ստրկացած, անասելի և անլսելի հալածանք տանելով և համբերելով, ասես թե բթացած են. կորուսանելով ամենայն մարդկային իրավունքի և արժանավորության զգացողություն, անմիաբան յուրյանց մեջ և հասարակաց թըշնամու և հալածողի առաջին. երբեք կարողացած չեն միաբան զորությամբ վեր կենալ, ապստամբվել յուրյանց բռնակալներից, սուր առնել ձեռք և պաշտպանել կամ պահանջել իրավունք: Ո՜չ այսպես սլավոնական քրիստոնյայք Տաճկաստանի մեջ. սոքա սուրը ձեռքին, մահը աչքի տակ առած պատերազմում են իբրև ապստամբներ յուրյանց բռնակալների ընդդեմ. թափում են յուրյանց արյունը, յուրյանց ազգի ազատության համար: Այս պատճառով և Եվրոպան հարգությամբ նայում է դոցա վերա և դոցա ցավերը և վիշտերը գտանում են նորա ուշադրությունը:

Սլավոնական ազգերը ծանրություն ունին եվրոպական պոլիտիկայի կշռի մեջ: Հայք ոչինչ, որովհետև մինչև այժմ աշխարհի հանդեսում ցույց տված չեն, թե կար նոցա մեջ քաղաքական ազատության ցանկություն, ձգտողություն, թե նոքա ունեին այնքան ոգի քաջության, այնքան զորավոր միաբանություն յուրյանց մեջ, որ կարող էին սրով և արյունով և երկաթով ապացուցանել յուրյանց կամքը ազատ լինելու:

Մի այլ պատճառ ևս կա լուռ ու մունջ համբերությամբ տանելու ամենայն թշվառությունները Տաճկաստանի հայերի կողմից: Սոքա Փոքր Ասիայում ցան ու ցիր են, ոչինչ տեղ կենտրոնացած, ինչպես սլավոնական ազգերը: Բացի դորանից, սլավոնացիք իբրև ցեղակիցք և կրոնակիցք ռուսաց, որ մի հզոր տերություն է և ունի քաղաքական մեծ կշիռ, ուրեմն և սոցա մեջ գտնում են պաշտպանք և բարեխոսք յուրյանց եվրոպական «պոլիտիկայի» առջև: Հայք ի՞նչ ունին. ոչ որ և այդ ազգային Isolation ահա թողել է և թողում է զնոսա արտաքո ամենայն ուշադրություն Եվրոպայի կողմից: Պոլիտիկայի մեջ չկա բարոյականություն, այլ ամեն բան հաշիվի համար է այդտեղ: Թող տանջվի ի թշվառության վերջին մրուրը, միայն թե պահվի հավասարակշռությունը, das Europäische Gleichgewichtssystem: Ա՞յժմ են աղաղակում Գլադստոնը և Ջոն Ռոսսելը, որ պետք էր տաճիկները քշել և հալածել. այդ մի հին

աղաղակ և բարոզություն է, որ հազար անգամ իբրև Ձայն բարբառոյ անապատի որոտած է Եվրոպայում շատ հասարակ, հազարավոր մարդերի բերանից: Նույն ինքն Եվրոպան, դորա մեջ և Անգլիան 300 տարի յուր անբարոյականությամբ չամաչեց ոտքի վերա պահել ու պահպանել, այո՛ և ամրացնել տաճիկների իշխանությունը կամ անիշխանությունը (Anarchia) եվրոպական հողի վերա և քրիստոնյա ազգերի գլխին: Եվրոպական տերությունք նախանձու կուրացած չկարողացան կարգի դնել Արևելյան ասած խնդիրը: Այժմ, երբ որ դանակը դրած հասած է վզին, ստիպված են դորա տաճկական կառավարությունից ազատ կացուցանել քրիստոնյա սլավոնացիքը, բայց պահպանելով Տաճկաստանի ամբողջությունը:

Հայոց մասին ես խոսք լինել կարող չէ. որովհետև սոքա ոչինչ տեղ կենտրոնացած են. բացի այն մի քանի հարյուրավոր հազար մարդերից Կ. Պոլսում... Այս մասին մեղավոր են մեր հայերը ինքյանք, որովհետև մինչև այժմ կարողացած չեն յուրյանց անձը հարգի և կշռավոր կացուցանել եվրոպացոց աչքում: Իզուր մենք պահանջում ենք քրիստոնեական մարդասիրություն Եվրոպայից սա մեզ: Քրիստոնեական մարդասիրություն չգիտե պոլիտիկան, այլ նա ուշադիր է միայն այնպիսի ազգերի, որ հասկանալով յուրյանց քաղաքական իրավունքը, ունին երկաթ և քաջություն, այդ իրավունքը զինվորված ձևամբ պահանջելու: Ես այսպես եմ հասկանում մեր ազգի պատմությունը:

## Ա. ՄԱՅՍՈՒՐՅԱՆՑԻՆ

7 դեկտեմբերի, 1877

...Պլևնան էլ արդեն ընկավ[1]: Սուլեյման փաշան ոտքից վիրավորվել և գերի է ընկել: Կարսը, Արդահանը, Բայազետը, դուցե և շուտով Էրզրումը, Վանը, հետևաբար Կապադովկիան (Հին Հայաստանը), խաղաղության կնքումից հետո, երբ մի օր գործն այնտեղ հասնի, Ռուսաստանին են կցվելու: Ռուսաստանը հառաջանալու է, ինչպես որ սպասվում է, մինչև Կոստանդնուպոլիս, սպառնալու է այն ավերել, եթե սուլթան Համիդը չհամաձայնի Սերբիային ավտոնոմիա, իսկ Բուլղարիային, Բոսնիային և Հերցոգովինային՝ վասալի վիճակ տալու: Ռումինիան բոլորովին անկախ է դառնում Թուրքիայից: Ոչ մի կասկած այն մասին, որ սլավոնական քրիստոնյաների նկատմամբ հնարավորին չափ հոգ պիտի տարվի, քանի որ դեռ նրանք ունեն իրավունքների այսպիսի մի զորեղ

պաշտպան, քանի դեռ նրանք ունեն իրենց կյանքի և սեփականության համար այսպիսի մի եռանդուն հովանավորող: Թե ինչպես է լինելու մեր խեղճ հայ ժողովրդի հետ, սա մի մեծ հարց է: Որ սլավոնական քրիստոնյաները իրենց պատմական հողերի ազատ տերերն են լինելու, այս շատ բնական, արդար և բանական է: Սակայն հայերը այսպիսի մի պատմական հող չունեն Եվրոպայում: Կապադովկիան ընկնելու է Ռուսաստանին. սա համենայն դեպս մի բարիք է, մի բարեբախտություն մեր հայ հայրենակիցների համար, որովհետև ըստ երևույթին, ոչ ոք նրանց հանդեպ երախտապարտ չէ: Այս մասին հոգ է տարել արդեն համաշխարհային պատմության երկաթյա տրամաբանությունը, համաշխարհային անողոք դատաստանը, որը ամեն մի ժողովրդի բաժին է հանում այն, ինչ որ նրան է ընկնում ըստ արդարության, այսինքն՝ ինչին որ նա արժանի է իբրև վարձատրություն, կամ պատիժ՝ իր անցյալի համար:

Եվ այս խորհրդածության ժամանակ այս լուրջ հարցը ինչպիսի տրամադրության մեջ է թողնում մի մտածող հայի, որն իր ժողովրդի ճակատագիրը ջերմ կարեկցության նյութ է դարձնում: Մի արյունահոս վերք է բաց մնում այդտեղ. կարելի է այն օտար լաթերով կապել և նրա վրա զանազան սպեղանիներ դնել: Բուժե՛լ սակայն՝ երբեք և ոչ մի ժամանակ: Այս մեծ վիրահատության համար դեռ բժիշկներ չեն ծնված և երբեք էլ գուցե չեն ծնվելու: Ես լսում եմ, որ մեր սիրելի հայրենակիցները՝ պարոնայք Տեր-Ղուկասովը (իմ ազգականը), Լազարևը և Լորիս Մելիքովը, ռուսական բանակների գլուխն անցած՝ հաղթության փառավոր դափնիներ են ձեռք բերում: Ցանկանք, որ Հայաստանի այս քաջարի որդիները, Ռուսաստանի ծառայության մեջ, դառնեն արժանի գնահատում: Ցանկանք, որ նաև մեր սիրելի Ռուսաստանը, նկատի առնելով վերոհիշյալ գեներալների այսպիսի արժանիքները, մի քիչ ավելի ուշադրություն (հարգանք) և շարժվելու ազատություն տա, քան մինչ այժմ, այն ժողովրդին, որին պատկանում են այդ գեներալները: Չէ՞ որ այս միանգամայն արդար մի ցանկություն է:

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

# ՀԱՌԱՋԱԲԱՆ

Երկար ատենն ի վեր մեր բարեկամները կ'աղաչէին, որ բանասիրական տետրակ մը հրատարակենք Բարիզի մէջ, և մեր սիրելի ազգին մտական կարօտութիւնը, որչափ և հնար է, լնումք՝ ճշմարիտ գրագիտութեան ճաշակը տալով անոր... Երկու անգամ սկսանք և երկու անգամ ետ քաշուիլ հարկ եղաւ հրատարակելէ։ Ամեն բան, հայրենիքի սերէ զատ, կը պակսեր մեզ օտար երկրի վրայ և ամեն բան հնարել հարկ կ'ըլլար։ Այն միայն, որ այսպիսի գործի ձեռք զարկեր է, կրնայ երևակայել, թէ ի՞նչ արյուն ու քիրտ թափելու է ոչինչ բան մը առաջ բերելու համար, երբ հայրենիքէն հազար մղոն հեռու կ'ապրինք...

ԱՐԵՒԵԼՔԸ հիմա ի լոյս կ'ելլէ, և եթէ մեր ազգին կողմէ համակրութիւն և քաջալերութիւն տեսնէ, իր նկարագիրը կատարելու համար աշխատանքի մը առջև չպիտի ընկրկի։ Այս նկարագիրը է. Հայաստանի լուսաւորութիւնը։ Արդարև վե՛հ նպատակ և նվիրական պաշտօն մը. և միահամուռ ճիգն թափելու է, որ այս պաշտօնը արժանաւոր կատարենք, և նպատակին արիաբար մօտենանք։ Մեր մտային ուժը շատ չ'է, գիտենք, այլ մեր փափագը անհուն է. և ո՞վ կրնայ ուրանալ, թէ այն հայրենասէր փափագը շատ թերութիւններ չը լնուր։ Մենք ոչ փառք կը սպասենք և ոչ տրիտուր մը. ազգը վտանգի մեջ կը տեսնենք և հայրենական պաշտօն մը կատարելու համար միայն կը գրենք։ Եթէ մեր պաշտօնը կատարելէ ետև, Հայաստանի քայլ մը առաջ երթալու պատճառ ըլլամք, և մշուշի մեջ կայծի նման քիչ մը լոյս տալէ ետև արագաբար անհետ ըլլամք, այն մեր ճշմարիտ փառքը ու պարծանքը կը համարիմք...

# ՀԱՌԱՋԱԲԱՆ

*Մրրիկին ուժգնութիւնը, վատութեան սաստկութիւնը, միտքի հալածումը մեզի քիչ մը աւելի փորձ տուին, այլ չկրցան մեր կարծիքները խախտել։ Կրնանք ըսել խալլեան բանաձեւի մը հետ. մեր զգեստը փոխուեցաւ, մեր դէմքը թմրեցաւ, բայց սիրտերնիս միեւնոյն մնաց։ Ոչ թէ մեր ույժին վրա միայն վստահութիւն ունինք կամ մեր զուգորդյա գիտութիւնը քաղաքական կը սեպենք, այլ վասնզի կը հուսանք որ հիշյալ անըմբռնելի թշնամիին զէնքը օր մը պիտի խորտակուի ճշմարտութեան վահանին վրա, ի վերջոյ հայրենասերը պիտի սթափին եւ մեր հայրենիքին զարգանալուն համար ընդունին այն ամեն օրէնքները, որք Եվրոպայի լոյս, ույժ եւ բարօրութեան կուտան։ Հայրենասիրութիւնը կրնա խաբուիլ եւ բարեմտութեամբ ազգին վնաս տալ, բայց չկրնար մասնավոր ակնածութիւններու համար իր ըրածը բարութեան բարոզել առանց անարգութեան։ Համոզուած ենք, որ սուտ ազգասիրութիւնը այս անգամ ևս թշնամութեան եւ նախատինք չպիտի խնայէ մեզ, բայց թող գիտնա, որ միտքի համոզումը կրոնքի համոզումէ տարբեր չէ եւ գիտէ՝ ոչ միայն նվիրուիլ, այլեւ համբերել ամեն պարագայի մեջ։ Կ՚ըսուի թէ՝ Լէնկթիմուր քանի մը անգամ զօրավոր թշնամիի մը հետ զարնուելէ ետքը, կը հաղթուի։ Մեկէն անասելի վհատութեան եւ հուսահատութեան մը կուգա իր վրա. պատերազմի դաշտը կը թողու եւ իր տաղավարին ներքեւ բաշված կ՚սկսի սրտաւ խորհիլ մարդու ճակատագրին վրա։ Իր միտքը այս տեսիլքով հուզվելու ատեն, մրջյուն մը կը տեսնէ, որ ուզելով տաղավարին վրայէն կը քալեր դեպի վեր։ Ձեռքը կ՚երկնցնէ եւ վար կը հրե զանի։ Մրջյունը կը գլորի, վայրկեան մը կը շփոթի, բայց շուտով իր առջի շավիղը գտնելով կը շարունակէ իր քայլը։ Լենկթիմուր երկու երեք անգամ վար կը նետէ զան, այլ մրջյունը վեր ելնելէ չդադրիր։ Համբերութեան կուգա սեզ աշխարհակալին վրա, եւ կ՚ուզէ անոր համառութիւնը փորձել։ Ութսուն անգամ թաւալգլոր կը նետէ զանիկա եւ ութսուներորդին՝ առջի պես, եռանդուն կը գտնէ տկար կենդանին։ Ալ չ՚ուզեր շարունակել փորձը, կ՚զգա որ իր թերը հոգներ է. սիրտը կը շարժի, միտքը կը հափշտակվի եւ հանդարտ կը թողու զանիկա։ Մրջյունը նորեն վեր կ՚ելնէ եւ հաղթական քայլով աշխարհակալին առջեւեն կ՚ուղղի դեպի իր նպատակը։ «Տկարին համառութիւնը ավավ հաղթութիւն» կ՚ըսէ Լենկթիմուր յուզուի եւ ոտքի կ՚ելնէ... Բանակը շուտով կը հավաքվի, թշնամին կը հաղթվի, բոլոր Ասիա կը հնազանդի, եւ Լենկթիմուր աշխարհակալի գը-*

սոկը կ՚առնու ամենեն տկար կենդանիին տված լռին խրատը ընդու-նելով։

Մրջյունին այս համառությունը ամեն տկարներու զորությունն է, և միշտ անով աշխատեցանք հայրենիքի և միտքի ազատության ծառայել։

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

*Պ. Աբովյանին գիրքը երկու արժեք ունի, բանասիրական և ազգային։ Ազգային, վասնզի հեղինակը օտար ժողովուրդներու դյուցազները թող-լով կամք ըրեր է մեր քաջերեն մեկը ընտրել, անոր վարքը վիպական ձևերով զարդարել և ազգին առջև դնել որպեսզի տեսնե, կարդա ու սփոփ-վի։ Կ՚ուզեի ազգիս խոսիլ, կ՚ըսե անիկա...*

*Կը տեսնե, որ ժողովուրդը թե՛ ընտանի և թե՛ հրապարակի կյանքին մեջ այն գործերը կը սիրե, այն կիրքերով կ՚զմայլի, որք հեռվեն կամ մոտեն արձագանք են մարդկային զգայություններու և հայրենիքի փառ-քին կամ աղետքին։ Կը տեսնե այս ամենը, կը հասկնա ժողովուրդը, կ՚ըմբռնե անոր միտումները, կը շոշափե անոր վերքը... Կը ընտրե ռամիկ լեզուն և կ՚աշխատի գրել ինչպես ռամիկը կը խոսի և այն աստիճան կը հաջողի, որ ռամիկը կարդալու սեր մը կ՚զգա։ Ազգային դեպքերը կը ժո-ղովե, ավանդությունները ի գիր կ՚առնու, գեղջուկին վարքը կը նկարա-գրե, վարք՝ ուր երբեմն ավելի քաջություն և վսեմություն կա, քան թե թագավորի մը գործերու մեջ...*

*...Ժամանակը եկավ, որ հայ* ռամիկն *ալ զգա, որ իր ռամկությու-նովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովուրդներե վար չմնար թե՛ ազ-գային և թե՛ օտարազգի բռնավորներու դեմ զինելու ատեն...*

*Անհնարին է այս գիրքը դատել եվրոպական կանոնով, վասնզի, ինչ-պես ըսինք, ռամիկներու համար և ռամկի ոճով գրված է այն և իբրև գրական շենք մը չ՚ընծայվիր մեր առջև...*

*...Հայրենական վառվռուն սեր մը, հնարավոր երևակայություն մը և նուրբ դիտումներ կը գանվին գրեթե ամեն էջերու վրա։ Անհնարին է ավելի ճիշտ պատկեր մը շինել հայերու ընտանեկան և կրոնական կյան-քը ներկայացնելու համար։ Կարդացողը կարծես թե Հայաստանի գյու-ղերու մեջ կը փոխադրվի և համարյա եղբայրներու պարզության, գո՞ ղքավորության, երբեմն ալ սոսկալի աղետքներու մասնակից կ՚ըլլա։ Տեղ տեղ այնպիսի մանր և փափուկ նկարագրություններ կան, որ Պալ-զաքի կամ Էոժեն Սյուի գրածներեն վար չ՚են մնար և վիպաբանի թան-*

կագին տաղանդ մը կը հայտնեն։ Այս գիրքին շնորհիվ վերջապես վտարանդի հայ մը կրնա գոնե տեսիլ մը ունենալ ազգային բարքին, սովորություններու և վիճակին։

...Ժողովուրդին սիրտը, ահա գրագիտության աղբյուրը. իր անցյալը և ավանդությունները. ահա, գրելու նյութերը. ազգ և մարդկություն՝ ահա՝ նպատակ, որ ճշմարիտ բանաստեղծը կ'աշխատի ուղղել և իր հետ տանիլ բազմությունը, որու անդամ է... Երանի թե պ. Աբովյանին դիտավորությունը հասկցվեր և իր շավիղը մնար ազգին մեջ, բայց...

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՐԵՐ

Ի վերջո պատերազմը սկսավ[1]։ Ո՛չ Անգլիայի, ո՛չ Ռուսիայի և ո՛չ Պրուսիայի տերություններու ջանքը կարող եղան Ավստրիայի քաղաքավարությանը խոսք հասկցնել։ Սարդինիա և Ֆրանսա իրեն ցույց պիտի տան, թե իր հանդգնությունը ինչ վարձ պիտի ընդունի...

Նույն իսկ Վեհափառ կայսրը[2] քանի մը օրեն պիտի մեկնի Բարիզեն և Էմանուել Բ հայրենասեր և քաջ թագավորին հետ պիտի երևի պատերազմի դաշտին վրա։ Վայրկյան մը չ'ենք տարակուսիր և հառաջմե կ'ըսենք, որ քիչ ատենեն Իտալիան իսպառ պիտի ազատի օտարին անտանելի լուծեն...

Իտալիայի չորս կողմե ծանր լուրեր կուգան. ամեն սիրտ հրաքուխ կտրեր է, ամեն մարդ մահը աչք կ'առնու և ի սեր ազգին արյուն թափելու համար, ազնվական և շինական գունդ գունդ կ'ուղղին և դեպ ի Սարդինիա[3] կը վազեն կամավոր զինվորներու բանակը զորացնելու միտքով։ Երբեք չհիշվիր այսպիսի տոհմային աշխույժ և նվիրական սեր մը անկախության և միության համար։ Կարիպալտի զորապետը կը հրամայե անոնց[4], և իր փորձառու քաջությունը այսպիսի վստահություն կուտա երիտասարդ իտալացիներու, որ ամենքն ալ անմռունչ հանձն կ'առնուն իր կամքը կատարել մինչև պատերազմին վերջը... Ա՜յնքան իրավ է, որ ճշմարիտ հայրենասիրությունը մարդս դյուցազն կ'ընե։

Իտալացի՛ք, աշխարհիս ցույց կուտաք որ մի և անկախ հայրենիքի արժանի եք. պիտի հիշվիք դուք իբրև օրինակ և ձեր անունը կիսամեռ ազգերու սիրտը պիտի բժշկե։ Փա՜ռք ձեզի...

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՐԵՐ

— Այս ամսու մեկին Բարմային ժողովուրդը ոտքի ելավ և Իտալիայի անկախության համար իր համակրությունը հայտնեց։ Բանակին պաշտոնավորք՝ բոլոր զինվորներուն բերնեն, ուզեցին Սարտենյան բանակին հետ միանալ և Ավստրիայի դեմ պատերազմիլ... Այս հեղափոխությունը, ինչպես նաև Թոսքանայինը, անշփոթ կատարվեցավ ու մինչև այս րոպե հանդարտությունը կը տևե։ Ազգային սերը ոչ միայն իտալիաններու խոհեմություն կուտա այս անգամ, այլև միասիրտ արիություն...

...Իտալիայի գավառ մը չկա, որ զավստրիացին չ'ատե և ազատության համար հոգի չտա։ Պ. Ժյուլ Ֆավր, երևելի փաստաբանը, իրավունք ունի ուրեմն գոչելու Ազգային ժողովին մեջ. «Ավստրիային անողորմ բազուկը ամեն բան ճնշեց՝ հոգիներե զատ, որը անընկճելի մնացին անոր սոսկալի հարվածներու ներքև»։...

— Բրյուսիա և, կրնանք ըսել, անոր հետ բոլոր Եվրոպա մեծ կորուստ ըրավ պ. դը Հումպոլտը կորուսանելով այս օրերս։ Երևելի և ծերունի գիտունը տասնիններորդ դարու ամենեն վեհ զավակներեն մեկն է և իր փառավոր շավիղը ու վեհ հանճարին արդյունքը անմահ պիտի մնան ընդհանուր մարդկության մեջ։ Չկա գիտություն մը որ իր խորին և լայն մտքին լույսը չ'ընդունած ըլլա։ Չկա գիտուն մը, որ առանց հարգանքի իր անունը հիշե։ Պ. Ա. դը Հումպոլտը կենդանի գիտություն կը սեպվեր, և հիրավի, բոլոր Եվրոպայինը...

Իննսնամյա հասակին մեջ ըլլալով հազիվ թե դուրս կ'ելներ իր համեստ տունեն, բայց երբ իմացավ, քանի մը ամիս կա, որ քվեարկություն պիտի ըլլա Ազգային ժողովի անդամներ ընտրելու համար, ուզեց իր քաղաքավորի պարտքը կատարել և դողդոջուն քայլով գնաց ազատականներու համար քվեն տվավ։

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՐԵՐ

Հիմա եթե Սեզիա գետին եզրեն դեպ ի Մեծ-Լիճին կողմը նայինք ուրիշ անակնկալ քաջություններու ասպարեզ կը տեսնենք, և դեպքերը այնպիսի արագությամբ կը կատարվին, որ մարդու երևակայությունը կ'ապշի կը մնա։ Այս ասպարեզին դյուցազն է Կարիպալտի[5]. հազիվ թե չորս հինգ հազար կամավոր զորք ունի և ահա լեռներե, գետերե, քաղաքներե անցնելով Միլանեն տասներկու ժամ հեռու կը գտնվի այսօր...

Դեռ մայիսի 2-ին Պիելլա էր Կարիպալտի. 25-ին Արոնա կը հասնի,

Մեծ-Լիճեն կանցնի... Ավստրիայի տերության հողը կը կոխե և անկախության դրոշը կը տարածե դաշտերու մեջ, ինչպես բլուրներու վրա։ 24-ին Վարեզ քաղաքը կ'առնու, վեց հազար ավստրյան խումբի մը կը հաղթե. հոն ալ Իտալիայի դրոշակը կը տնկե... Մարդ կը զարմանա ըսինք և գրեթե ակամա հին աշխարհակալի մը խոսքը կը հիշե. Եկի՛, տեսի՛, հաղթեցի[6]։

Արդեն բոլոր Վալթելինա ըսված նահանգը ապստամբությամբ կը դողա և, Սոնտրիո քաղաքը կեդրոն ընելով, հրամանի կ'սպասե որ իր արյունին մասը տա հայրենիքի ազատության համար։ Կրնա ըսվիլ, որ Կարիպալտիին արշավանքը խապառ ազատեց Լոմպարտիային այս կողմը։ Ավստրիայի տերությունը կորուս Վալթելինան. իր գավազանը և թուրը փշրվեցան հոս... Դա՛րհոսը մյուս գավառներու...

## ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Կարիպալտիին անունը հիմա բոլոր Եվրոպայի մեջ նորեն կը հնչվի, անոր համար փոքր տեղեկություն մը տալ ավելորդ չսեպվիր մեզի։ Հովսեփ Կարիպալտին ծնած է Նիս քաղաքը[7], 1807, հուլիս 4-ին։ Երբ դեռ պատանի էր Սարտենիայի ծովային պետության մեջ մտավ և շատ նշանավոր եղավ իր խելքով և քաջություններով[8]։ 1834-ին ազատասերներու ապստամբության մասնակից ըլլալով՝ ստիպվեցավ փախչիլ և Ֆրանսա ապավինիլ[9]։ Անկե ելավ Թունուս գնաց և բարձրապատիվ Պեյեն մեծ պաշտոն մը առավ։ Անկե ալ հրաժարելով Հարավային Ամերիկա գնաց և Յուրուկեի հանրապետության զորքերուն հրամանատար անվանեցավ[10]։ 1848-ին խռովությունը լսելով փութաց իր հայրենիքը դառնալ և անոր անկախության համար սպառազինվիլ։ Իր ըրած հաղթությունները և չափե դուրս հաջողությունը նա՛և թշնամիներուն զարմանք պատճառեցին։ Շարլ-Ալպեր դժբախտ, բայց արի թագավորը իր կամավոր գունդեն շատ օգուտ տեսավ[11]։ Շարլ-Ալպերին հաղթվելեն ետև տեսնելով որ Լոմպարտիայի մեջ հայրենական ազատությունը պաշտպանելու հույս չկա, Հռոմ գնաց և նորահաստատ տերության զորքերուն վրա դրվելով անհնարին դյուցազնությամբ պաշտպանեց հանրապետությունը Ֆրանսայի բանակին դեմ։ Անիկա հաղթեց, և Կարիպալտին կամավ իր գունդը արձակելով՝ երերուն, հալածված, հուսաբեկ մնալեն ետև նավը մտավ և գլուխը առավ նորեն Ամերիկա գնաց...

Հայրենական սերը մեկ տեղ զինքը հանգիստ չէր թողուր, և աշխարհիս չորս կողմը պտտելեն ետքը դարձավ վերստին Իտալիա[12]։ Սար-

*տենիայի տերությունը՝ որ իր ռազմական ոգին կը ճանչնա, զինքը զորավոր անվանեց կամավորներու գունդին, և ահա Կարիպալտի երկրորդ անգամ ավստրիացիներու դեմ։*

*Հայկական քաջություն մը, կարգե դուրս անվախություն մը, հրաբուխ ազգասիրություն մը և ռազմագիտական անզուսպ ոգի մը՝ ահա Կարիպալտիին հատկությունները։ Քանի հոգի կա Եվրոպայի մեջ, որ զանոնք ունենա և գործ ածե... Կարիպալտին և իր դյուցազնի գունդը Իտալյանի անունը կը փառավորեն և հիշել կուտան, որ մեռած չէ քաջությունը անոնց սրտին մեջ...*

## ՔՍԱՆԵՎՉՈՐՍ ՍՏՈՒԹՅՈՒՆ

*...Կը հավանինք միայն որ փետրվարի ազատության առաջին որոտումը[13] մեր վրայեն արևելյան գերության մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ակամա ասպարեզի մեջ նետեց։ Այո՛, Լուի Ֆիլիպին դեմ ապստամբողներու հետ էինք, այո՛, ըրինք ազատության համար ի՛նչ որ ամեն մարդու պարտքն է ընել, և զեն ի ձեռին Թյուլըրի մտնելու պատիվը ունեցանք, բայց երբեք, բնավ երբեք հետագա քաղաքական կռիվներու մասին չ՚ունինք։ Ընդհակառակն մեր համոզումն էր, որ նորեն ապստամբիլ՝ ազատությունը վտանգի մեջ դնել էր. դեպքերը հայտնեցին որ իրավունք ունեինք... Տրամալի սրտով և արտասվալի աչերով հանդիսատես գտնվեցանք սոսկալի մարտերու, զորս հայ Թորոսներու պես մարդիկ[14] գրգռեր էին նորածին ազատությունը խեղդելու համար։ Կարելի է թե, օր մը, այս դեպքերու պատմությունը գրենք և այն ատեն Պոլսի հայերը կրնան համոզվիլ որ Հայկա ճշմարիտ թոռ մը ազատության սերը վատությամբ ի գործ չդներ, բայց հիմակվընե կը համարձակինք ըսելու և հաստատելու, որ ո՛չ Քավանյաքի և ո՛չ ապստամբներու կողմը բռնելու կամք ունեինք...*

*... Զիտալիա կը սիրեինք, միշտ սիրեր ենք. Իտալիա իր արյունաթաթավ ճակտով միշտ երևած է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու։ Այս սերը և ազատության ավյունը զմեզ թշվառության մեջ գլորեցին։ Եթե այս թշվառությունը նախատինք է, հայու մը բերնե չպիտի վիժեր այն և մեր անունը աղտոտեր, վասնզի Հայաստանի ամերայքյաց վիճակը իր զավակներու վրա պարտք կը դնե թշվառ ժողովուրդներու կարեկցիլ։ Նկուն ազգերը մյուս ազգերու համակրությամբ միայն կրնան վերականգնիլ։ Ո՛վ գիտե, գուցե օր մը Իտալիայի զավակ մը մեր գերության և*

*թշվառության դեմ բողոք է, ինչպես մենք իրեն համար բողոքելու զորությունը ունեցանք[15]... Եթե մեր բրածը նախատինք է, այս մեր վրա կ'իյնա միայն, և մեկը դանդտելու իրավունք չ'ունի, վասնզի, մեզմե զատ ուրիշի մը վնաս չտվինք...*

*... Տաս և չորս տարին ի վեր կը պոռանք, որ կրոնքի մը պինվորը չկրնար անկախության և ազատության զինվոր ըլլալ առանց կրոնքը վտանգի մեջ դնելու և ազգային խնդիրը շփոթելու... և Պոլսի հայերը կարծես թե կամավ ամեն օր հավատքի կախվ մը կը հարուցեն և կրոնավորներու պոչեն կ'ուզեն կախվիլ նա՛և Մոլիերի հայրենիքին մեջ...*

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ Ի Պ. ԺՅՈՒԼ ՍԻՄՈՆԵ

*Ֆրանսայի փիլիսոփայությունը հիմա նոր փոփոխություն մը կը կրե, ու հին և ամուլ դրությունները ձգելով կ'սկսի գործնական ձևով երեվիլ և քարոզվիլ հասարակության առջև։ Նշանակելի փոփոխություն, որ, եթե շարունակվի, երկու մեծ հետևություն կրնա բերել. Նախ՝ հոգեբանությունը իր հափշտակած գահեն կ'իջնե և ալ մարդու արտաքին կազմը կեղևի մը չքաղցատվիր։ Երկրորդ՝ միտքը իր տերության եղբը կը ճանչնա, և իր չափը կշռելով՝ գիտության զագաթեն վեր չթռիր ու ամպերու մեջ չ'երերար։ Գիտե այսուհետև, այն նավաստիին պես, որ երկրիս սլըտույտը բրեր է, թե իր ծիրը անհուն չէ, և երկար դարձերե ետքը իր առջի կետը պիտի հասնի, եթե սլեկած չկորսվի անդունդի մեջ կամ ժայռի մը դեմ։*

*Այս նորոգումի շահատակներեն մեկն է պ. Ժյուլ Սիմոն, որ քանի մը տարին ի վեր կ'աշխատի, ինչպես ինք ևս կը խոստովանի «Փիլիսոփայությունը հպելի և ընդունելի ընել ամենուն»։ Կարգ ըստ կարգի, Պարտ, Խիղճի Ազատություն, Բնական Կրոնք ըսված գիրքերը հրատարակելե ետ, այսօր Ազատությունը կ'ընծայե հասարակության, և մեր դարու ամենեն կնճռալի խնդիրը վերստին քննելու կը համարձակի, չհուսահատելով բռնության հաղթություններեն։ Վեր ի վերո հաղթություններ, կը հավանինք, բայց որք կարգե դուրս շփոթ տվին շատ միտքերու, և սկեպտիկություն ու սև տրտմություն մը եկան պաշարեցին բազմաթիվ երիտասարդ կամ անփորձ սրտեր։ Այս բնական էր, և ազատության այրիությունը հիրավի իր սիրականները սոսկալի վիճակի մեջ կը դներ Բայց թեթև համոզում մը միայն կ'ընկճի այսպիսի տրտմության ներքև, և քունը մահ կը սեպե։ Ազատությունը կը հաղթվի, չմեռնիր։ Քառասուն դար է, որ իր կռիվը կը տևե, և ներկա սերունդը չկրնար իր դրոշը ուրա-*

*նալ առանց վատությամբ պսակվելու և բարբարոսությունը հաստատելու։*

*Նյութի մը հարցը, սովորաբար, այն ատեն կը հասկցվի, երբ կը կորսվի։ Ազատության հարցն ալ իր անկումին օրը կ'զգացվի։ Փորձը, մարդկային իրերու մեջ, ահռելի դաս մ'է և շատ աչքեր կը բանա։ Համոզված ենք, որ վերջին փորձը եղավ, և ամեն մշուշ փարատեց։ Ազատության վսեմ օրը, երբ վերստին ծագի, ա՛լ խավարումի ենթակա չ'է. բռնության երբեմն քայլը և ահարեկ դեմքը վկա են, որ իր ստվերը կը խուսի Եվրոպայեն։ Ասոր լուսավորությունը ազատությունով սկսավ և պիտի պսակվի ազատությունով։ Ասիկա է ազգային թագուհին, և չտեսած զինքը կը դավանինք,* հաւատոք մեր կեցուցանեն զմեզ[16]: *Թո՛ղ մեզ անհավատ ըսեն սևերես թշնամիք. ազատության հավատալ՝ ճշմարիտ աստվածը պաշտել է...*

*Պարոն Ժյուլ Սիմոն մասնավորապես գովեստի արժանի է ուրեմն ազատության խնդիրը նորեն հուզել, զայն լուծելու աշխատիլ և վահան մը ընել այն վիրավոր զինակիցներու թևին վրա, որք պինդ և անդրդվելի մնացին սև օրերու մեջ, նա՛և ուրացության գարշ հոսանքին դեմ։ Իր ազնիվ և պարզ խոսքերը մեր վրա մեծ տպավորություն ըրին, և թեպետ Հայք այսօր մոռցած ըլլան թե ազատության համար կռվող աշխարհին առաջին քաջի թոռներ են*[17], *կը փափագինք մեկ քանի տող գրել ու թեթև տեսիլ մը տալ իր ընտիր գիրքին վրա։*

*Պ. Ժյուլ Սիմոն կ'սկսի ընդունիլ, փաստի անկարոտ ճշմարտություններու պես, մարդու և մարդկային ազատությունը ու ավելորդ կը սեպե ժամանակ կորսնցնել բնության հաստատած ճշմարտությունը տրամաբանության ներքև ձգել։ Մարդ ազատ է. ահա՛ իր առջի առաջարկությունը։ Իր ազատությունը բնական օրենքի միայն կը հնազանդի. ահա՛ երկրորդ առաջարկությունը։ Այս օրենքը ուղղակի կը հայտնվի Աստուծմե ամեն մարդու, և միտքին մեջ կը տպավորվի անսխալ իշխանությամբ։ Անօգուտ է, որ անկե ընտրելագույն առաջնորդ մը ընտրե զինքը վարելու համար, վասնզի անհնարին է որ գտնե զայն իրմե դուրս։*

*Այս ազատության և բնական օրենքի վրա կը հիմնվի բարոյականը, որ մի է և անփոփոխ բոլոր երկրի վրա։ Մարդկային բազմություն մը որոշ բարոյական մը չ'ունի և ինչ որ անհատի մը կը վերաբերի, տոհմի մը ևս կը վերաբերի։ «Եթե մարդ ազատ է և կը պարտավորի ազատ մնալ, մարդկությունն ալ ազատ է և կը պարտավորի ազատ մնալ։ Եթե մարդ հնազանդ է բնական օրենքի, մարդկությունը կը պարտավորի հնազանդիլ նույնպես, նույն ձևով և նույն թեություններով բնական օրենքին.... Հովը, որ առագաստը կ'ուռեցնե, նավը և ուղևորները կ'առ-*

նու կը մղէ հառաչ»։ Եվ քիչ մը հեռու կ'ըսե. «Հարկ չէ մանր խորհիլ իմանալու համար, որ ազատությունս անբռնաբարելի է։ Ազատությունը, կյանքիս պես, իրավունքս է. մեկը չկրնար կյանքս առնել առանց ոճիրի, և մեկը չկրնար էությունս հաշմել, խանգարել, անարգել առանց ոճիրի։ Նույն աստուծմե կ'ընդունիմ կյանքը և կարողությունները, որք կյանքը հնարին կ'ընեն։ Անկարելի է, որ երկնային ու մարդկային օրենքը մարդասպանը դատապարտեն և ազատասպանը արձակեն»։ Եվ հիրա՛վի. ո՛վ որ ազատությունը կ'սպաննե, բարոյականը կը թունավորե. և եթե ազատությունեն դուրս բարոյական չկա, բարոյականեն հեռու ազատությունը ապահով կյանք չունի, և սինլքոր բռնավորի մը գավազանը, մեկ հարվածով, գետնի վրա կը փռե զայն։ Առաքինի ազատասեր մը բյուր մոլի ազատասերներե ավելի կ'արժե, ինչպես ժայռ մը ավելի անխախտ է, քան թե բյուր քար իրարու կպված գաճի կավով։ Գերի ժողովուրդներու անբարոյականությունը ուրիշ մեկնություն չունի։ Ազատությունը ագռավի չնմանիր, որ շարժուն դիակներու վրա իջնե և նստի։ Իր ապավենն է սեգ և ուղիղ սիրտեր, աննկուն հոգիներ և հզոր միտքեր։

Պ. Ժյուլ Սիմոն շատ իրավունք ունի ուրեմն ազատությունը, ամեն կերպ ազատությունը, բարոյականի հետ կապել անլուծելի հոդով. վասնզի երբ այս հոդը կը խզվի, բռնության շղթայի օղերը կ'սկսին շարվիլ և միտքը պրկել, այսինքն փիլիսոփայությունը քանդել. խիղճը ատրել, այսինքն հավատքին թևը կտրել և երկրային հրահանգ սեպել զայն. կրոնքը խանգարել, այսինքն կրոնավորը սև զինվոր մ'ընել, և խաչը, որ փրկարար նշան է, գերությունը օրհնելու գործ ածել. մեկու մը կամքը օրենքի տեղ դնել, այսինքն մարդերու կամքը սպաննել. ի վերջո զանոնք անբան հոտի կարգը գլորել, այսինքն մարդությունն հանել։ Ահա՛ ուր կը տանի անբարոյականությունը։ Պ. Ժյուլ Սիմոն իր գիրքին առջի մասը կ'ավարտե այս խոսքերով, որք միշտ հիշելու արժանի են. «Մարդ այն ատեն ազատ է ստուգիվ, երբ ազատությունը կը կառավարվի բարոյական օրենքով»։

Պ. Ժյուլ Սիմոն երկրորդ մասին մեջ իշխանության վրա կը խոսի և ոչ նվազ անկախությամբ կը դատե զայն։ Մարդու բնական ազատությունը կ'եզրավորի ընկերության մեջ։ Այս եզրը իշխանութենեն կը տրվի ոչ ազատությունը ավրելու համար, այլ զայն կարգավորելու դիտավորությունով։ Փիլիսոփա մատենագիրը կը մերժե այն հակասությունը զոր ոմանք կ'ուզեն դնել իշխանության և ազատության սկզբունքի մեջ։ Քաղաքակիրթ ժողովուրդ մը հավասարապես հեռու կը կենա անզուսպ ազատությունե մը, որ կը տանի հանիշխանության (anarchie), և ազա-

*տությունն զուրկ իշխանությունն մը, որ բռնավորության կը դառնա՛ թե՛ շուտ, թե՛ ուշ։*

*Պ. Ժյուլ Սիմոն երկարորեն կը հայտնե ընկերական այս երկու հիմերու ամեն խորությունը, և ինչպես ազատության չափ՝ բարոյական օրենքը դրեր էր, իշխանության կապ կը դնե ազատության անեղծելի իրավունքը։ «Իշխանությունը հարկավոր է, կ՚ըսե, վասնզի մարդիկ բավական լուսավոր և արդար չ՚են։ Ասկե կը ծագին երկու հետևությունք։ Նախ՝ իշխանությունը երկու որոշ պաշտոն ունի,— ստիպել զմարդիկ արդարության հնազանդիլ, և լուսավորել զանոնք, որ իրենց շահը լավ մը իմանան։ Երկրորդ՝ իշխանությունը պետք է, որ նվազի համեմատորեն զարգացումներու միտքին և մարդկային բարոյականության... Իշխանությունը կրնար ըլլել արձակ, եթե մարդ էր զլխովին անկարող զինք կառավարելու։ Իշխանությունը կրնար վերցվիլ, եթե մարդիկ էին կարող իրենց պարտավորությունք իմանալ և անոր հնազանդիլ»։ Եվ քանի մը էջ վար կ՚ավելցընե. «Տերություն մը որչափ ավելի ազատ է, իշխանությունը այնքան սահմանավոր»։ Ուրիշ բառով ըսենք։ Իշխանությունը մարդկային ընկերության մեջ օրեօր նվազելու վրա է իր տեղը ազատության զիջելով, վասնզի քաղաքակրթությունը չկրնար հառաջել, երբ ազատությունը կը պակսի. ընդհակառակն ասոր ծավալումը միայն իրեն ուժ կուտա, ճշմարիտ քաղաքացի և ոչ հպատակ շինելով տերության մը մեջ։*

*Պ. Ժյուլ Սիմոն իշխանության ամեն ձևերը մի առ մի քննելե ետև ընդհանուր մարդկության մեջ, կ՚սկսի մարդկային մասնավոր բազմություններու մեջ ևս անոր և ազատության փոփոխակի հարաբերությունները որոշել և սահմանել։ «Երեք տեսակ ընկերություն կա, կ՚ըսե, առաջնին ընկերություն, կամ ընտանիք. քաղաքական ընկերություն, կամ Տերություն. կրոնական ընկերություն, կամ գիտություն»։ Եվ այս երեքին մեջ վերի հարաբերությունները միևնույն չ՚են։*

*«Իշխանությունը կը տիրե ընտանիքի մեջ, կը նվազի օրեօր տերության մեջ և բոլորովին կ՚անհետի գիտության մեջ։ Հոս մարդու խորհուրդը ճշմարտություն կը ընտռե և կը հրատարակե զայն արձակ անկախությամբ մը»։*

*Չ՚ենք կրնար, և ամեն մարդ կ՚երևակայե ինչու, պ. Ժյուլ Սիմոնին այս երեք նյութի վրա գրածը բովանդակել հոս. և կը հրավիրենք լեզվագետ ազգայինները որ աղբյուրին դիմեն ու, իրենց հետաքրքրությունը լեցնելե ետև, աշխատին ընտանիքի վերաբերված ճշմարտությունները Ասիայի մեջ տարածել։ Հայք ազգություն չ՚ունին, և զեվզեկներուն ազգ*

ազգ ընելը պետք չ՚է որ խաբե զիրենք։ Ցանուցիր ժողովուրդ մը կը շինեն, որ կը բաղկանա ընտանիքներե։ Անոնց գիրկը կը գտնվին փրկության խարիսխը, որ զիրենք նոր մրրիկներե անվտանգ պիտի պահե, և ապահովի հույսը որ... պիտի մղե Հայկյան ընկորը դեպ ի մի վայր և ի մի նպատակ։ Հայերուն գլխավոր պարտն է ուրեմն ընտանիքը կազդուրել և հոն ուղղել ամեն փույթ և դարման։ Ընտանիքը փոքր հայրենիք է. և եթե հոնկե քաղաքացիք չ՚ելնեն ի զուր մեծ հայրենիքի մը տեսիլով կ՚երազեն ոմանք... Վտարանդի հայությունը ընտանիքով և կրոնքով պահվեցավ։ Կրոնքը, ուրացողի մատնությամբ, թշնամի պետության մը գործի է այսօր և որովհետև իր առջի միությունը չ՚ունի և երեք ներհակ աղանդե կը բաղկանա, Թուրքերու պես կույրեր միայն անկե ակնկալություն կ՚սպասեն[18]...։ Կը մնա ընտանիքը, այսինքն տանին իշխանությունը, որ կ՚ստեղծե քաղաքացի...։ Վերածնությունը, եթե երբեք պիտի կատարվի այն, ուրիշ բազուկ չ՚ունի, կը հավատանք ես, որ չըկրնար ունենալ...։

Պ. Ժյուլ Սիմոն քաղաքական ազատությունը կ՚ամփոփե երեք սկըզբունքի մեջ։ Նախ՝ պետք է որ գրված օրենքը ամեն տեղ ինքնամոլ կամքին հաջորդե։ Երկրորդ՝ պետք է որ տերությունները վարվին ամեն պարագայի մեջ իբրև սպասավոր և պաշտոնակալ հանրության շահուն։ Պ. Ժյուլ Սիմոնի այս նյութին վրա ես ըսածները խորին և ազնիվ նըշմարումներ կը պարունակեն և թեպետ ավելի Ֆրանսայի վերաբերին անոնք, սակայն դյուրին է ամեն մարդու տեղական ճշմարտությունները ընդհանուրեն զատել և իր տոհմին կարևոր եղածը ընդունիլ։

Պ. Ժյուլ Սիմոն իր գիրքը կ՚ավարտե կրոնքի և խորհելու ազատության խնդիրը լուծելով։ Փիլիսոփայական, իրավաբանական, պատմական և կրոնական փաստ մը չթողուր, ամենը կը հիշե, կը զատե և ակներև ցույց կուտա, որ այս երկու տեսակ ազատությունը լուսավորության հիմեր են։ Տող մը չկա հոն, որ մեր կարծիքներու դեմ սեպենք, և ի բոլոր սրտե կ՚ընդունինք իր ըսածները։ Եկեղեցի մը ո՛չ տերության վրա և ո՛չ ներքև մնալու է, որ ազատ ըլլի։ Կրոնքը, ժամանակով, թագավորներու կը հրամայեր և իր գավազանով կը պատժեր զանոնք, եթե ուղիղ չքալեին։ Իր միությունը սոսկալի զորություն մը կուտար և կ՚ստիպեր որ ամենեն բարձր գլուխները ծռին։ Իր երկնային ծագումը ամեն երկրավոր իրավունք կը զլանար։ Այս աստված-պետությունը դարեր տևեց և բերավ... խավարին բարբարոսություն մը, ուր նախնի լուսավորությունը և արհեստները փոշիով և ավերով թաղվեցան։ Ետքը թագավորք զորություն առին և սկսան կրոնքի վրա տիրել։ Եկեղեցվո գլուխներու ազատու-

թյունը և սնափառությունը, աղանդներու երևույթը և հավատքի արյունոտ կռիվները, կրոնքի միությունը խզեցին և թագավորներու այնպիսի զենք տվին, որ կրոնքը գործի եղավ և աթոռը գրավեցավ խորանի վրա...: Երբ առջի միջակի մեջ միտքը կը զոհվեր ամեն օր, երկրորդին մեջ խիղճը արյունի հեղեղի մեջ սկսավ լողալ և անթիվ աղետքներ պատճառել: Անհնարին էր, որ այս տևեր և թույլատվությունը չգար և երկուքին մեջ պատնեշ մը չկանգներ: Փիլիսոփայությունը, իր մեծ շունչով, կրոնամոլության խարույկը մարեց և միտքը ազատեց կրոնքին հովանիեն թագակիր աթոռներու վրա կռթնելով: Միտքին ազատությունը բերավ 89 թվականը, և իշխանության գավազանը անցավ ժողովուրդին, որուն կը վերաբերի ի բնե և որմե բռնամոլությունը հափշտակեր էր նենգելով...:

Բայց թույլատվությունը կես ազատություն մ'է, և հարկ է որ փոխվի ու եկեղեցիներու անկախությունը ճանչցվի, եթե տերությունները կ'ուզեն ստուգիվ մարդու խիղճը պաշտել: Հոս ալ պ. Ժյուլ Սիմոնի զուտ և անհերքելի փաստերը Հայերուն կը նշանակենք և կը հրավիրենք կշռել զանոնք և կրոնամոլության ամուլ ու սև գրությունը ձգել մեկդի, եթե կը փափագին ազգություն զանել: Ազգը կրոնքի ներքև դնել՝ զայն ուրանալ է. վասնզի միությունե դուրս՝ ազգություն չկրնար հաստատվիլ, և Հայք երեք կրոնք ունին[19]...:

Խորհելու ազատությունը պաշտպանելու եկած ատեն, պ. Ժյուլ Սիմոն մեկեն կը վառի և կարծես թե իր ոճը ավելի նշույլ և վառուկ ձև մը կ'առնու: Ընթերցողը կ'զգա որ գրողը փիլիսոփա է և իր ասպարեզին մեջ կը գտնվի: «Բոլոր ազատություններն առաջինը, կը գոչե անիկա, ամենեն նվիրականը, մյուս ազատություններու աղբյուր, աղբյուր նա՛և իրավունքի, խորհելու ազատությունն է»: Վերստին և բոլորովին պ. Ժյուլ Սիմոն իրավունք ունի: Եթե այսօր Եվրոպա այս ազատությունը ուրանա, մեկ սերունդե ետև հին խավարումը նորեն կը տարածվի իր երեսին վրա, և ամեն փառք կ'անհետի: Եվ ս՛րդարև. ի՞նչ է խոսիլ, եթե ոչ խորհուրդ մը ձայնով հայտնել. ի՞նչ է գրել, եթե ոչ՝ խորհուրդ մը գիրով տարածել. ինչ է գիրք շինել, եթե ոչ խորհուրդ մը ներկա և ապագա բազմության մեծարել. ի՞նչ է թվիլ, եթե ոչ խորհուրդներու շար՝ դեպքի մը կամ խնդրի մը վրա: Խորհուրդը միտքին լեզուն է, և մեկը համրություն չկրնար տալ անոր մեր ներսը: Մարդ որքան խորհի ա՜յնքան մարդ կը սեպվի, և եթե չկրնար չխորհիլ, հնա՞րին է որ իր խորհուրդը չհայտնե: Լռության հիվանդությունը, ինչպես ըսավ Տեպա լրագիրը, միտքը կը խանգարե, եթե երկար տևե, և այս խանգարումը մարդս կը հանե մարդությունե

*դուրս։ Ջուրը կաթսային մեջ չ՚եռար առանց գոլորշի տալու օդին, և եթե կաթսային խուփը սատկած ըլլար, ահեղ ճայթյուն մը չ՚ուշանար, կուգա և ամեն բան կ՚ավրե, կը փլե...։*

*«Մարդու կորուստը, բառը անմահ կույր մը[20] զոր պ. Ժյուլ Սիմոն կը հիշե, թեպետև անդարմանելի ըլլա, կարելի է որ երբեմն մեծ չարիք չսեպվի, բայց հնարին է որ ճշմարտություն մը, որ կ՚արգելվի, ա՛լ չ՚երևի ժամանակին շարերու մեջ, և իր կորուստը ազգերու աղետք բերե»։*

*Այսքանը հերիք կը սեպենք պ. Ժյուլ Սիմոնի գիրքին վրա տեսիլ մը տալու համար։ Մեր վաղեմի դաստատուին[21] ընտիր աշխատությունը կ՚արժեր որ ավելի ուշով քննեինք զայն. բայց հոդվածիս այս կետը հասնելով կը հիշենք, որ Հայերուն համար կը գրենք և կ՚ստիպվինք գրիչը վար դնել։*

*Գիտենք, որ դատել միշտ աղվոր կողմին նայիլ և զայն ցույց տալ չ՚է, բայց եկուր տես, որ հայերեն գրելու ժամանակ խնդիրի մը ո՛ր կողմեն բռնելը կը մոռնանք և կը շփոթինք, երբ կը տեսնենք որ լեզուն բառ անգամ չ՚ունի փիլիսոփայության և Եվրոպայի նոր կարծիքներու տարբերը հեղելու։ Թո՛ղ ասոր համար մեղ ներում արվի, ո՛չ Հայերն որք սակավին չ՚են զգար, թե ի՞նչ ծանր զոհ է գրագետի մը համար միշտ իր միտքը հատել և բառ խնդրելու հետ ըլլել, այլ օտարազգիներն, եթե երբեք հանդիպի որ մեր դատումները դատեն բստ կարգին։*

## ՄԵԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՎ Պ. ՄԻՅՆԵԻՆ ԳԻՐՔԸ

*Ֆրանսայի Մեծ Ապստամբությունը շատ երևելի պատմիչներ ունի, որք, կես դարե ի վեր, անոր ամեն պարագաները քննելն և նկարագրելն չեն դադրիր։ Իր հետևությունները ա՛յնչափ մեծ եղան, ա՛յնչափ զարմանալի և ահագին դեպքեր դուրս ավին որ նա՛և Թիերի, Միշլեի, Լուի Պլանի և ուրիշ շատերու անհուն աշխատությունն հետ մեծ հմտություն և անհնարին զգուշություն պետք է անաչառ դատում մ՚ընելու համար։ Այս ապստամբության վրա գրված պատմություններու մեջ նշանավոր է պ. Միյնեի փոքր գիրքը, ուր ոչ միայն զուտ ոճ մը և խորին գիտումներ կը գտնվին այլև ազատության սեր մը՝ որ անկեղծություն կը բուրե և որ իր կարծիքեն չ՚եղողներուն անգամ համակրությունը կը գրավե։*

*Ազգայինք կրնան օգուտ քաղել անկե. ուստի համառոտիվ զայն քննել ավելորդ չ՚թվիր մեզ։ Ժամանակը եկավ, որ հայ միտքը քիչ մ՚ալ*

հյութավոր ծիրքերու մեջ արածի և ուժ առնու։ Հերիք եղավ ուրիշներու տեսիլով մուրացիկ ապրիլ. տունի հացը միայն փոր կը կշտացընե, կ՚ուռեն...

Պ. Միյնե իր պատմությունը կ՚սկսի 1789 թվականեն և կը տանի զայն մինչև 1814, այսինքն Նապոլեոն Ա-ի անկումը։ Ներածության մեջ շատ նուրբ տեսիլներ կան և Հայնեի պես ցույց կուտան Ապստամբությունեն առաջ Ֆրանսայի վիճակը։ «Այս խռովությունը, կ՚ըսե գըռն-հեղինակը, ոչ միայն քաղաքական պետությունը ուրիշ ձևի մեջ դրավ, այլ ազգին ընտանի կյությունը փոխեց։ Միջին դարու ընկերության ձևերը դեռ կը պահվեին... ժողովուրդը իրավունք մը չ՚ուներ, թագավորությունը եզր չէր գիտեր։ Մարդու կամքին տեղ գրավ օրենքը, արտոնության տեղ հավասարություն. ազգը դասերու խտրություններն ազատեց...։ Մեկ տերություն հաստատեց, մեկ իրավունք և մեկ ժողովուրդ»։

Միապետությունը սոսկալի վիճակի մեջ դրեր էր զՖրանսա, և կորուստին վիհը օրեօր մեծնալով ի՞նչ ընելը չէր գիտեր, որ փրկություն գտնե։ Ազգին դիմեց ակամա, և ազգին ժողովը իր ձեռքեն գավազանը առավ և թագը ձգեց միայն իրեն։ Միապետությունը զգաց շուտով, որ անձրև խոսելու ժամանակ բուքի հանդիպեցավ, և սկսավ դժգոհության ձայներ հանել ու դեմ դնել, բայց իզուր։ Միրապոի որոտումը շանթի սպառնալիք մը կը բերեր և կը հայտներ, որ այնուհետև ազգը թագեն չպիտի կախվի, այլ թագը ազգեն։ «Մենք հոս ենք, կը գոչեր Ֆրանսայի Դեմոսթենը[22], ժողովուրդին հրամանով և զինու զորությամբ միայն դուրս պիտի ելնենք»։ Եվ միապետությունը ահարեկ կը խոնարհեր և հանձն կ՚առնուր Սահմանադիր ժողովին իշխանությունը ճանչնալ առ երես[23]։ Կը խոնարհեր որ չկորչի, վասնզի իր տկարությունը կ՚զգար, և ծածուկ կ՚աշխատեր ուժ առնուլ, որ կանգնի ու իր առջի դիրքը գտնե։ Այսպես սկսավ ազգին և միապետին մեջ գժտություն մը, որ երթալով մեծցավ ու ծավալեցավ Վերսայլեն Բարիզ, ուր Պասթիլը հիմն ի վեր փլեց, և Բարիզեն բոլոր Ֆրանսա, ուր բազմության մտքերը գրգռեց։

Պ. Միյնեի պատմության այս առջի մասը շատ նշանակելի է, վասնզի պարզորեն կը հայտնե, որ հետագա աղետքներու պատասխանատվությունը միայն ապստամբության վրա չկրնար բեռնավորվիլ։ Ապըստամբությունը չափե ելավ, վասնզի միապետությունը չ՚ուզեց բնավ չափ մը ընդունիլ անկեղծորեն։ Իր դրժությունը զենք տվավ ռամիկին, որ արթուն կ՚սպասեր միջին դասու և ազնվներու տեղ անցնիլ և տիրել...

Սահմանադիր ժողովը երկու տարի տևեց և աշխատեցավ վեհ եռանդով ազատություն ու հավասարություն շնորհել ժողովուրդին, միա-

պետության կամքը օրենքի ներքև դնելով։ Միապետին թուլությունը և ետքը փախուստը[24], իր ընտանիքին դավերը և հավակնությունը, ավագանին՝ որ օտար երկիր ապավինելով հայրենիքի դեմ կը զիներ և կը խլրտեր, կղերը՝ որ մոլի եռանդը կ'արծարծեր, և նախապաշարումներու վստահելով, որոնք կը սերմաներ ընտանիքի մեջ կամ հրապարակի վրա, բոլոր Եվրոպայի թշնամությունը և հախուռն սպառնալիքը թող չտվին, որ իր վսեմ շենքը անխախուտ մնա, և ժողովուրդը պատսպարե բռնության դեմ։ Ասիկա հանձն չ'առավ որ իր արտոնությունը նվազի և օրենքը տիրե, և ապստամբությունը այնպիսի հրաբուխ սաստկություն մ'առավ, որ իր կայծերը ոչ միայն զՖրանսա, այլև զԵվրոպա հուրի տվին։ Միապետությունը իր համառությամբ և օտարին զենքով պատրաստեց... Հանրապետությունը, որ ելավ անկվեցավ հսկայի պես և ամեն թագավորներու աթոռը շարժեց։ Այն ատեն թրթռակ լեզվե մ'ինկավ այս ծանր խոսքը. «Պետք է որ հաղթեն կամ հաղթվին»[25]։ Կը հարցնենք որո՞ւ է հանցանքը...

Օրենսդիր ժողովը եկավ 1791-ին և իր հետ գուժու անհանգստություն մը, որ գուշակություն էր ապառնի դեպքերու։ Առջի նիստի մեջ հայտնի եղավ, որ նախագահին պարզ աթոռը միապետի ոսկեզօծ աթոռին բարձրության ելեր էր և հոն մնալու կամք ուներ։ Զայն վար առնելու համար ներքին մտերիմներու զորությունը չ'էր բավեր. միապետությունը օտարին բազուկը շահելու սկսավ, և զայն հրավիրեց, որ գա ու ապախի անլուր հանդգնություն մը պատժե։ Ամեն լեզվի և ազգի մեջ այս կերպ նենգություն մը կ'անվանի մատնություն, և մատնության պատիժը հոս գրվելու հարկավորություն չ'ունի...

Օտար իշխաններու պատերազմի սպառնալիքը[26] Ազգային ժողովը վախցընելու տեղ՝ անոր ավելի սաստիկ արիություն և ընդդիմություն տըվավ։ Հայրենիքն ի վտանգի է ահեղ ձայնը այնպիսի ազդու կերպով, Ֆրանսիայի մեկ ծայրե մյուսը, սիրտերը շարժեց, այնպիսի բուռն հայրենասիրություն մը ծնավ հոն, որ աշխարհիս մեջ նմանը չ'ունի։ Ապստամբությունը պատրաստվեցավ Եվրոպային հաղթել, և հաղթեց։ Պրյունզվիկ դուքսին հայտարարությունեն ետև օրենքի, ազատության և ուրիշ խնդիրի մը վրա խորհելու ատեն չմնաց։ Ազգին ինքնօրենությունը հայրենիքը ազատելու էր թշնամիեն։ Հասարակության փրկությունը առաջին օրենք եղավ և հանդգնությունը սուրբ պարտք։ Եվ այն թագակիրք, որք քիչ մ'առաջ կը խրոխտային, կը հեգնեին, կը ծաղրեին, տեսան թե՝ ազգասեր հանդգնությունը ի՛նչ զենք կը շարժե և ինչպես կը կռվի պատվո դաշտի վրա. տեսան զայս և սրտաթունդ իրարու երես նայեցան...։ Միա-

պետություն մը փրկելու համար ոտք ելան և Ֆրանսա կոխեցին ու հանրապետություն մը կանգնեցին ակամա։ Ալ չխնդացին և իրարու ձեռք տվին, որ իրենք ևս շղլորին ազատության շարժեն։

Օրինադիր ժողովն նաև Քոնվանսիոնը հավքվեցավ 1793 սեպտեմբեր 21-ին և Ֆրանսայի թագը և թագավորը կործանեց ու տերության սանձը իր կաշմբուած ձեռքը առավ։ Հատորներու կարոտ է մեկը նկարագրելու համար թե ի՛նչ ըրավ այս ձեռքը։ Չորս տարվան մեջ ի՛նչ տարբերություն և հեռավորություն աչքի կետեն, ուր ազգին պատգամավորները կը հուսային ազատությունը թագավորին հետ պսակել սիրով։ Երբեք ապըստամբություն, եթե ինք իրեն ձգվեր, այսքան զորություն չպիտի առներ, երբեք այս հսկայաձև քայլով միապետության գիակին վրայեն չպիտի անցներ և երբեք ազատությունը չպիտի իյներ այնպիսի մարդերու ձեռք, որք, իր ապավենը կամ հայրենիքը փրկելու համար, օրենք և իրավունք մոռցան, արդարություն և գութ ոտքի ներքև առին։ «Այսպես, կըսե պ. Մինյե, առանց վտարանդության (ազնիվներու) որ պատերազմ բերավ, առանց կղերի օժտումի, որ աղմուկ հանեց, հավանական է, որ միապետը սահմանադրությունը ընդունելու սովորեր և ազատամբեք հանրապետություն շինելու փորձեին»։ Պ. Մինյեի կարծիքն ենք և իրեն պես կը հավատանք, որ սակավաթիվ ազգայիններու մատնությունը և օտարին անհեթեթ պատճառները բանը այս աստիճան տարին, ու հայրենիքի նըվիրական սերը, գլուխները վրդովելով, քաղաքական մոլի եռանդի մեջ ինկավ և արատավորեցավ։ Ժիրոնդի կողմը պաշտպանել, ինչպես կ՚ուզե ընել պ. Լամարթին[27] թեթևությամբ և Մոնթայնի կողմը[28] դատապարտել կամ փափախակել, ինչպես կ՚ընե աշխույժով պ. Ա. Էսքիրոս, մեզ հնարին չթվիր։ Այսպիսի ժամանակ մը ոչ տեսնվեր է և ոչ պիտի տեսնվի։ Բոկոտն գինվորներով Եվրոպայի զամարտակները Ֆրանսայի սահմանեն վանել, հայրենիքը փրկել ներքին և արտաքին թշնամիներու դեմ և զասոնք կոր ի գլուխ խոնարհել՝ տիտանյան ձեռնարկություն մ է որ մարդուս միտքը կ՚ապշեցընե և զարմանքի մը լեզուն կը կապե...։

Հոս պ. Մինյեի խստությունը անընդունելի կ՚երևի շատերուն և իր ազնիվ դատումը կը մոռնա պարագայներու բնությունը, որ շղթայազերծ հովի պես կը քշեր կը տաներ, չ՚էր թողու բոլորտիքը նայել և անմեղությունը խնայել հանցանքին քով։ «Մենք չափավոր ենք եթե բաղդատվինք մյուս բոլոր տերություններու հետ» կ՚ըսեր Սեն Ժյուսթ, և եթե այս խոսքը ըններ և իր գլխավորը չ՚արդարացըներ գոնե իրենց սոսկալի վիճակը կը հայտնե։ Թշնամիներու զենքով, ինքը և մյուսները, թշնամին կ՚ուզեին հաղթել։ Այս զենքը ազատության չվայլեր, կը հավանինք, բայց

եթե զայն չգործածեին ո՞վ կրնա ըսել, որ Ֆրանսա ամբողջ պիտի մնար... Հաղթություն գտնելու համար արյունով արատավեցան, կույր հալածներ տվին, ազատասերները անգամ վիրավորեցին և վերջապես իրենք ևս վերք առին և ինկան անհարիր: Սո՛սկալի հակասություն, որ ընտանի կռիվներ չտեսնողին անիմանալի է[29]:

Երբ Ժիրոնդի և Մոնթայնի կողմերը իրարու ետև նույն դանակի ներքև գլորեցան[30], Քոնվանսիոնը հնգապետություն մը հաստատեց Տիրեկթուար անունով, որ իշխանությունը սկսավ 1793-ին: Պ. Մինյե լավ կը նկարագրե տխուր շփոթը, ուր կը գտնվեր Ֆրանսա այն օրերու մեջ: Հինգ ազգապետներու փույթով աղետը որքան կարելի էր մեղմացավ, և Քարնոի ռազմագետ տաղանդը արտաքին վտանգի առաջքը առավ Պոնաբարթի, Ժուրտանի, Մորոյի պես զորավարներ ընտրելով, և Հոշ Վանտեի ու մյուս գավառներու խռովությունը հանդարտեց: Հանրապետությունը, արյունաուշտ հոսանքեն անցնելով, սկսավ վայրկյան մը ծաղկիլ և կարգավորիլ, բայց ուրիշ վտանգ մը կը պատրաստվեր մութի մեջ,— ռազմապետությունը, որ շատ չանցավ նենգությամբ կործանեց Տիրեկթուարը: Նորեն օրենքը ոտքի տակ ինկավ և նորեն «զորությունը սկսավ տիրել», ինչպես կ'ըսե պ. Մինյե: Պոնաբարթ փորայետին այս բրածը մահարեր հարված կրնա սեպվիլ, և անկարելի էր, որ տերության կամ ապստամբության ձևը չփոխվեր: Հանրապետությունը այնուհետև փոքր առ փոքր եղավ վերստին միապետություն Նապոլեոն կայսեր թագով և աթոռով[31]...: Մեզի համար հոս կը դադրի Մեծ Ապստամբությունը. և չենք գիտեր ի՞նչու պ. Մինյե մինչև 1814 թվականը կ'ուզե տանիլ զայն: Կը մերժենք այն կարծիքը, որ առաջին կայսրությունը շարունակություն կը սեպե Մեծ Ապստամբության. երկուքին մեջ մենք վիհ մը կը տեսնենք, և սրատես ըլլալու անգամ հարկավորություն չունինք:

«Այսպես ուրեմն ազատությունը մարդուս հայտնվեցավ որպեսզի երբեք չկրնա զայն վայելելու» կը հարցներ Քարնո այն ժամանակ, և կը պատասխաներ՝ ո՛չ: Մենք ալ նույնը կը կրկնենք և վրա կը բերենք Շենիեի բանահյուսին հետ.

«Այս է միշտ դառն պտուղ ընտանի կռիվներու»:

Այսպես ուրեմն փլավ այն շենքը՝ որուն բեկորը նա՛և այսօր զարմանք կուտա: Այսպես ինկան Ապստամբք ամեն բան ավրելե ետև:

Ի՞նչ կը թողուն երկրի վրա.— դյուցազնյա հայրենասիրություն և վսեմ արիություն մը, որք Աթենքի և Հռոմի զավակներու վարմունքի կը հավասարին:

Ի՞նչ կը թողուն նաև.— այս ճշմարտությունը զոր արյունովնին գրեցին, թե ավելի դյուրին է ազատություն գտնել, քան թե զայն պահել։

Ի՞նչ կը թողուն ևս.— այս ծանր դատակնիքը՝ թե՛ ամենեն ազնիվ կիրքերը, որք կը մոլորին վատ կիրքերու հետևանք ունին և կը տանին ի կորուստ։

Ի՞նչ կը թողուն տակավին.— երեք ճշմարտություն, որ աշխարհիս առջև նոր հորիզոն մը կը բանան. Մարդու իրավունք, ազգի ինքնիշխանություն. մարդկության ազատություն։ Իրավունքը, որ ազատության հարգությունն է, հավասարություն կ՚ենթադրե, և գաղիացիք հավասար եղան օրենքի առջև։

Ազգին ինքնիշխանությունը միապետության հին իրավունքը կ՚ուրանա, և գաղիացիք այսօր ընդհանուր քվեարկություն ունին և միապետը կը տիրե հանուն ազգի։ Հինգ անգամ տերության ձևը փոխեցին և օտար թագավորք ալ չհամարձակեցան բանի մը խառնվիլ։ Մարդկային ազատությունը կ՚ենթադրե ամեն ժողովուրդներու ինքնիշխանությունը, և այսօր Եվրոպայի տոհմերը կ՚աշխատին օտարոտի լուծերը խզել...։ Մեծ Ապստամբության ոգին և տեսիլները չմեռան ուրե՛մն, իրենց հեղինակները միայն ինկան...

Այս երեք հետևությունները, զորս ազատություն չունինք երկարորեն մեկնելու, կը բովանդակվին երեք բառերու մեջ, որք հիմա տեղ մը չ՚են տեսնվիր, բայց որք ամեն ճշմարիտ Ֆրանսայի թոռներու սրտին վրա կը փորագրվին։ Երեքեն մեկը միայն արմատ ձգեց տերության մեջ,— հավասարությունը։ Ազատությունը դեռ կը պակսի, շենքին վրան բաց է, այլ Նաբոլեոն Գ-ի խոսքը վստահություն կուտա, որ այս շենքի պսակը չպիտի ուշանա...։

Ֆրանսայի Մեծ Ապստամբությունը դատապարտելու համար կամ ժեզվ՚իթներու փտած հոգին ունենալու և կամ գերությունը սիրելու է։ Խոտանճյան Պետրոս[3]- անուն լումայափոխի մը սինլքոր որբանյակները ապստամբ բառը մեր երեսին տվին իբրև կեղտ ու ամոթ, և կարծեցին որ պիտի «խայտառակվինք»։ Ջեվզեկները մեզ գովություն տվին։ Այո՛ ապստամբք ենք, այսինքն 89 վեհ թվականը կը սիրենք հոգվով և մարմնով։ Երա՞նելի հանցանք, որ Եվրոպայի ամեն բարձր միտքերու համակրությունը կը շահի և խորասանձի հայու մը հակակրությունը կը բորբոքե։ Բարեբախտաբար իրեն նման մարդերու խոսքը չ՚ըլլար։ Մարդու խինդը, միտքը, իրավունքը ապստամբությունով ազատություն գտեր և աշխարհք մտեր են. ընդհանուր պատմությունը կը վկայե զայս և Պ. Խո-

*բասանճին պատմություն չգիտեր որ կարդա, հասկնա և ծեղվիթներն հե-ռանա: Թող մնա անոնց քով ինչպես մենք կը մնանք ապստամբության մեջ.* նման զնման յուր սիրէ[33]...

## ԼԵՌՆԱԿԱՆՔ

*...Քաղքի մարդը ավելի բան գիտե և առանց տաշվելու ավելի փայլություն և մարդություն ունի... Օրե օր իր միտքը կպարզվի նոր գյուտերով... Գիտե իր պատիվը ու արժանավորությունը պահել և իր հարկին պաշտպանել զայն: Սովորաբես բանավորությունը կասե և անօրենության դեմ կմոմա... Շատի համար երբեմն զենքը կմոռնա մեծերու առջև ու կսկսի բծնիլ... Շատի համար նաև ազատությունը կուրանա, բայց... շուտով աղոթք կընե... որ զենքը մեծերու բանությանն ազատեն... Քաղքի մարդը իր արհեստով, ժրությունով և մոլությունով լուսավորության գործի մ'է, որու վրայեն ազատությունը միայն կրնա քաղքին անխուսելի ժանգերը սրբել...*

*Գյուղի մարդը, ընդհակառակը, կոշտության կենդանի արձան մ'է, նաև երբ կրթություն առած ըլլա... Տարրերու քմայքե կախված է: Ուտեստ հոգել, նյութի հարիլ, նենգել շահելու միջոցով և շահիլ պահելու համար, ահա իր բոլոր երազը, իր բոլոր կյանքը... Իրեն համար ամեն լուսավորություն կխավարվի ոսկիներու փայլումին առջև, ու ոսկեթել բանավորությունը կհարգե միայն անկե թել մը փրցնելու միջոցով և ո՛չ ուրիշ անկեղծությունով: Լուծեն սոսկում չունի, մանավանդ երբ այս լուծը ագնիվ քարերով և արծաթով իր վիզին վրա կդրվի...*

*Բոլոր իր կյանքը լեռը կամ ծնած տեղերու տեսքը կբեկբեկե, երբեմն հանդարտ, երբեմն մրրկալի և երբեմն վառվռուն կելնե, կիջնե, կթմրի, կբացվի, կորոտի, կմարի, բայց չսողար երբեք գետնաքարշ... Լեռնականը ո՛չ սեղանի ծառա է և ո՛չ որկորի, ամեն բանե վեր զուտ օդը կսիրե... Երկու բան կհիշե միայն տարրերու անհուն վրդովի մեջ.— Աստված և ազատություն և երկուքին—ալ գիտե ծառայել նվիրումով... Կկռվի իր կամ ընկերին ազատությունը պաշտպանելու համար... լեռը կչափե իր քայլով և վիհերը կթնդացնե իր վառոդովը: Լեռնականը ազատության զինվոր է... Վերեն կընդունի հրամանը և վարեն եկած սպառնալիքին կպատասխանե վառոդի բերնով.—Բռնավորք լեռներու ոտքե անցին մի' անցնիք, իր կույս հողը մի՛ կոխեք. զահավեժ կգլորիք. և ազատություն գողնալու տեղ կգտնեք մահ, մա՛հ անխուսելի... Աստված լեռները ազատության տվավ և մեզ իրեն պահապան դրավ հոն...*

Ա՜հ, լեռնականը կսիրեմ[34] իրեն այս ազատասիրության համար։ Լեռները կսիրեմ, վասնզի բռնության ոտքը կոտրած են իրեն հանդուգն արշավանքին դեմ, բնական պատվարներու պես տնկվելով չեն ձգեր, որ անցնի առաջ և լուծ բաշխե ազգերու..., վասնզի ազատությունը ծովագեմ գետերու պես, իր սարերու և ժայռերու միջեն վար իջնր և մարդկության վրա ծավալեր է իրեն տալով այն բեղմնավորությունը, զորն որ գետը կշնորհե արտերու և բլուրներու..., վասնզի մարմինին հետ մարդուս միտքն ալ վեր կհանեն... իրենց ելևէջը կյանքիս օրինակն է... Լեռները կսիրեմ ի վերջո, վասնզի լեռներու զավակ եմ։ Նախահայրս իր հույսը լեռներու վրա դրավ և այսօր ազգիս հույսը լեռի մը վրա է։ Օտարին արևը զգալու և հացը ուտելու ժամանակ երբեմն հոն միտքս կտանիմ...։ Բնության այս շնորհած պատվարը գոնե զիս չպիտի խաբե և ազգս պիտի պաշտպանե, ինչպես և պաշտպանել է միշտ, արտաքին և մանավանդ ներքին թշնամիներու դեմ։ Միտքս հոն է նաև այս տողերը գրելու ժամանակ և կարծես թե իր քարոտ հողին վրա քալած ատենս «կզգամ, որ ազատությունը սիրտիս մեջ կդղրդի», ինչպես կըսե Ալֆրետ դը Մյուսե բանաստեղծը[35]։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՎԱՃՅԱՆ

## ԱՌ ՊԱՐՈՆ Պ... ԻԲՐ ՀԱՌԱՋԱԲԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿ ԳՈՐԾՈՒՅՍ

*Անանկ դարի մը մեջ, ուր գիտության լույսը, իր ճառագայթներն արձակելով, աշխարհի ամեն կողմեն տգիտության խավարը հալածական վանելու կը ճգնի. անանկ ժամանակի մը մեջ, ուր միտքերու և սրտերու մեջ թափանցելով, միտքերն ու հոգիները կը կրթե. անանկ ատեն մը, ուր գիտությունք, բախտին ձեռքին կամաց-կամաց առնելու կ'սկսին փառք և բարեկեցություն բաշխելու և շնորհելու իշխանությունը. մեր ազգն ալ ուզեց կամա կամ պարտավորեցավ ակամա զանոնք ճանչելու և իր գիրկը հրավիրելու։*

*Օտար ազգաց գիտության և ուսմանց շնորհոք ստացած զորությանը, հարստությանը և փառացը վրա նախանձելով, մենք ալ անոր օգուտներուն մասնակից ըլլալու փափաքով, վերջին տարիներուս մեջ աշխատինք կոր, զոհեր ալ ընելով, զանոնք մեր մեջ ալ ծավալել տալու...*

*Իմ նպատակս բարեկամ ահա այս է. ազգին ճանչցնել գիտության անհատնում օգուտները և անոնցմե զուրկ ըլլալը. ճշմարիտ ազգասերի մը սրտով առանց շողոքորթելու կամ սանկ ըսեմ խաբելու իր պակասությունները իրեն գիտցնել. ինքզինքին վրա ունեցած չափազանց համարումը պակսեցնել. ուսմանց և գիտության մեջ չհառաջանալուն և անոնցմե չշահելուն գլխավոր պատճառներեն մեկն ալ ծուռ դրությամբ և սխալ մեթոդներով ստանալ ուզելն և զանոնք ձեռք բերելու ճշմարիտ միջոցներն ու մեր վիճակին հարմարած կանոններն, որոնք ըլլալը ցուցընել անոր։*

*Բարոյական մասին մեջ բարեկամներուս և մարդկության բարեկամներուն ազդու, ճշմարիտ և իմաստուն խոսքերովը իմիններուս տկարությունը զորացուցած՝ պիտի խրատեմ և հորդորեմ զազգը ստանալ հոգվո կրթություն և կատարելություն ու մտքի մշակություն, կատարյալ, երջանիկ, հարուստ և պատվավոր ըլլալու համար...*

## ՊԱՆՏՐՄԱՅԻ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ

*Պանտրմայի ազգայնոց մեջ բավական տարիներե ի վեր խռովություն մը կը հուզի ժողովրդյան ու անոր տիրապետության ընդդ մեկ քանի անձանց մեջ։ Այս խռովության ալ բուն պատճառը սա է, որ այն մեկ քանի անձերը այն տեղին բոլոր եկեղեցական կառավարությունը և եկամուտները ձեռք անցուցած ըլլալեն զատ՝ ժողովուրդին առտնին և քաղաքական գործերուն ալ մեջ մտնելով՝ ամեն գործերը իրենց ձեռքովը կը տեսնեին. ուղածնուն պես դատաստան կը տեսնեին՝ միշտ հարուստը, այսինքն իրենց ավելի սատակ տվողը իրավանց տեր հանելով. վերջապես այս մեկ քանի անձերը այն տեղին ժողովուրդին հարստահարող բռնավորներն եղած էին. ուստի բավական տարիներե ի վեր և հոն և ոչ մեկ առաջնորդ մը կրնար երկար ատեն նստիլ. վասնզի եթե ժողովրդյան տեր կենար՝ այս անձերը զանի տեղեն կը սահեցնեին. եթե անոնց տեր կենար՝ ժողովուրդը անոր դեմ պատրիարքարանին կը բողոքեին։*

*Ահա այս վիճակով կյանք կը վարեր այնտեղի ժողովուրդը գրեթե քսան տարիե ի վեր. և սակայն օր օրի համբերությունը հատնելու վրա էր. օր մը պիտի գար, որ ժողովուրդը ապստամբության դրոշակը բարձրացներ վերջապես անոնց դեմ...*

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*...Ազգային սահմանադրության*[1] *համար Եվրոպայի մեծ ազգերը արյուններ թափեցին, մեծամեծ կորուստներ ըրին, տարիներով աշխատեցան և հազիվ անոնցմե մեկ քանին այսօր հաջողած են անոր արդյունքն ու շնորհքները վայելելու։ Անգլիա, Պելճիկա և Զվիցերա կատարյալ կերպով ունին շատ նեղություններե ետև այսօր ազգային սահմանադրություն մը և Ֆրանսա տակավին չկրցավ ձեռք բերել ասի՝ թեպետ քանի քանի աշխարհ թնդացնող հեղափոխություններով ստացավ առժամանակյա վայելչությունն անոր...*

## ԱԶԳՕԳՈՒՏ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՑ ՀԱԺԱԽԻԼԸ[2]

*...Ազգի մը հառաջադիմությունը սակավաթիվ մեծամեծներու ձեռքով չէ, այլ հասարակ ժողովուրդին ամբողջության ձեռքով է*[3]*...*

## ԿԱՐԻՊԱԼՏԻ

Ատենե մ՚ի վեր անուն մը կը հնչէ ամեն բերան, և աշխարհ ալ ի բերան կը նայի այն անվան տիրոջն նաևեն. զարմանքով կը դիտե անոր ամեն մեկ շարժվածքը, զմայլելով ականջ կը դնե անոր ամեն խոսքերուն և սքանչանալով կը պատմե անոր անշահախնդիր առանձնությունը, ուր ծածկել կը ջանկա ինքզինքը՝ իր փրկյալներուն իրեն ընծայելու հարգանքը իրեն ծանրություն մը համարելով։ Այս անձը, առաքյալն աստուծո, կուգա մարդկության բարերար ըլլալու և գերի ու ստրուկ ժողովուրդներու իրենց ազատությունը ստացնելով՝ կը քաշվի կառանձնանա իր տունը, ուրկե ելած էր միայն ի վերուստ իրեն հանձնյալ պաշտոնը կատարելու ամենայն հավատարմությամբ։

Կարիպալտի Իտալիան ազատեց։

Կարիպալտի փոխարինություն մը չընդունեց*։

Ահա այս երկու հատկություններն են, որ աշխարհիս սերն անոր վրա քաշեցին և այսօր առհասարակ ամեն մարդ ավելի ակնածությամբ անոր անունն ի բերան կ՚առնե քան թե աշխարհիս է՛ն մեծ կայսերաց անունը։

Տա՜ր երկինք, որ ամեն ընկճյալ ազգերու համար ալ այսպիսի անձինք հառնեին և աշխարհիս խաղաղությունը հաստատ հիմանց վրա դրվեր։

Կարիպալտի՝ նոր ժամանակիս դյուցազունը, նոր սերունդին սիրտը թնդացուց և նորահաստատ Մեղուն նախանձեցավ անոր և անոր փրկյալներուն բախտին վրա։

## 1861 ՀՈՒՆՎԱՐ 1

Մեղուն, բոլոր ողջամիտ և ազգասեր հայերուն սիրելին, մեկ քանի ազգասիրության սուրբ անունին ներքև ամոթահար և երկյուղալից ծածկվող ու խավարի մեջ գործող ամբարիշտներու ատելին, վաղ ժամանակով զննելու ելած ընդհանուր ազգին վիճակը՝ գտավ զանի այնչափ անկարգ, այնչափ դառն և թշվառ, որ ո՛չ միայն անկարող պիտի ըլլար նա ազգին մի նոր և զորավոր կենդանություն տալու, այլ և ինքն իրեն ալ անբավական էր միօրինակ հարատևել երկար ատեն։ Օրեօր ավելի պիտի վատթարանար և օր մ՚ալ աշխարհի ազգաց կարգեն պիտի քառնար հայը։ Վասնզի հիրավի այս ազգը իր բազմադարյան կյանքին մեջ ավելի՛ տագնապալից օրեր անցուց, ավելի դառն բաժակներ ըմպեց ու տակավին

ապրեցավ (թեև հավետ կամ նվազ վնասված), սակայն այլ էր նույն միջոցներուն քաղաքականությունը, այլ է արդինը. այժմուս քաղաքականությունը կարող է և պատրաստ առանց զենքով ստրկացնելու ևս, կլլել ազգ մը, որ անհոգ եղած է ցարդ իր ապագային համար և որ ապականութենե ապականություն ընկնելու տրամադրության մեջ է։

Տեսավ Մեղուն խոր տգիտության և թմրության մեջ թաղված ամենայն ժողովուրդը. տեսավ, որ հայ ազգը կը կազմեն սակավաթիվ հարուստներ ու քանի մը եկեղեցականք և ժողովուրդն անոնց համար ստեղծված էր միմիայն անոնց ծառայելու։ Ժողովուրդն իր ամեն իրավունքներեն զրկված։ Այսօր գետնեն պարկ մ'ոսկի գտնելով, կամ չենք վարանիր ըսելու՝ գողությամբ հարստացող հայը վաղիվ ազգին մեկ բռնավորը դարձած։ Տեսավ ժողովուրդն ենթակա ամեն տեսակ հարըստահարության և հարուստն իր և ոչ մեկ պարտավորությունը կատարելու հարկադրված։ Տեսավ ժողովուրդին վրա չար ու վատ սովորություններ՝ երկար ժամանակյա կիրառությամբ բնություն դարձած։

Տեսավ գավառական հայոց իրենց իշխան կարգված հարուստներուն ձեռքով կրած նեղությունները և տերության պահանջածեն ավելի հարկ վճարելը նույն իշխաններուն քսակն ուռեցնելու համար։ Տեսավ ամենայն բեռ, ամենայն ցավ, ամենայն թշվառություն ժողովուրդին վրա ծանրացած և ամենայն լավություն, ամենայն թեթևություն և ամենայն բարօրություն ժողովուրդին երակներեն քամված արյունովը գիրցող հարուստներուն վրա հանգչած։ Տեսավ խեղճն արհամարհված և անօրենությունն ու անիրավությունը պսակված։ Տեսավ Մեղուն եկեղեցական դասին տգիտությունը և իրենց տգիտությամբն հանդերձ ժողովուրդին անձին ու խղճին վրա բռնաբարությունը։ Տեսավ անոնց վրա վայրենի ազատություն մը, որ ստրկություն էր վերաբերությամբ դեպի ազգին մեծամեծները, զի անոնց ձեռքին մեջ գործիք մ'եղած էր առ ահի կամ շահի. ազատություն մը, որ անգթություն և բարբարոսություն էր վերաբերությամբ դեպի ժողովուրդը, զի իր հանդստության համար պաղ արյունով կանխայեր ժողովուրդին, համոզված ըլլալով, որ իր ըրածներուն համար պատասխանատու չէր և ոչ մեկի մ'աս աշխարհիս մեջ. իսկ անդին՝... այս օրվանը կեր, վաղվանը մի՛ մտածեր կ'ըսեր ու կ'անցներ։ Տեսավ Մեղուն որ կղերին անհոգութենեն ու անօրենութենեն օգուտ քաղելու փափաքով Հռոմեն ու Ամերիկայեն վազեցին հոգի վաստկելու պատրվակավ Էջմիածնա գահը ժառանգելու և կամ անոր հակառակ աթոռ բարձրանալու։ Տեսավ Մեղուն, որ ժողովուրդը մեկ ձեռքե մյուս ձեռքն անցնելեն ետքը իր վիճակին լավություն մը չգտնելեն զատ թե-

րևս ավելի մեծ թշվառություն մը պիտի դներ: Տեսավ **Մեղուն** հայ կղերին իր ժողովուրդը չփախցնելու համար գործածած անհաջող միջոցները. որ փոխանակ իր ժողովուրդին միտքը լուսավորելու (զոր երբեք իրեն հոգ չպիտի ըներ) եկամուտներեն հեռու կենալու կ՚ստիպեր զանի, որով և ավելի կը գրգռեր անոր հետաքրքրությունը: Տեսավ վերջապես **Մեղուն** զի հայերուն նյութական կյանքն ալ վտանգի մեջ ընկավ, վասնզի Օսմանյան կայսրությունը բացավ իր տերության դռները Եվրոպայի նոր ճարտարության, որով կոշտ արհեստներով ու հին ճարտարությամբ իր պարենը ճարող ժողովուրդին հաց չմնաց. . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Այս ամենը տեսավ **Մեղուն**, ճմլեցավ սիրտը, գալարեցան աղիքը ու չնկատելով իր դիրքը, իր վիճակը, չկշռելով իր կարողությունը հանկարծ նետվեցավ չորս տարի է ազգին մեջ:

Գահգահի աղաղակներո՛վ ուզեց արթնցնել ժողովուրդը, մինչդեռ այլք շոյելով կ՚ուզեին զանի սթափել իր թմրութենեն. թոկի աղաղակներով ուզեց թմրեցնել մեծամեծները, մինչդեռ այլք անոնց, ժողովուրդին չհասուցած չարիքը Օվսաննա երգելով կը գովեին: Ժողովուրդին ներկայացավ ժպիտն ի շրթունք, մեծամեծներուն նետեցավ հոնքերը պռստած. բանալ ուզեց ժողովուրդին աչքը իր վրա և զինքը կառավարող համազգայիններուն վրա. ժողովուրդին քարոզեց իր իրավունքը և ազգը կառավարելու փափաքողներուն քարոզեց իրենց պարտավորությունը. բողոքեց ժողովուրդին իրավանց հարստահարության դեմ, ազգային վարչության պարտավորությանց զանցառության դեմ:

Ո՛չ ոք կ՚ուրանա, թե **Մեղուն** աննկուն և անդողդոջ քայլեց ի ժիր: Ո՛չ մեկ խումբ չգայթակղեցուց անոր ընթացքը. լեռներու զահակներ, գահավեժներու գլուխներ, ձոր ու ծործոր, սար, դար, վեր ու վար, ամեն տեղ ելավ, ամեն տեղ իջավ ու երբեք կանգ չառավ: Մինչև անգամ իր պատվույն վնաս բերել փորձեցին, անոր խմբագրին անձնական շահուն վնասներ հասուցին. քանի քանի անգամ **Մեղուն** սպաննել երդմնցան...

**Մեղուն** արհամարհեց այս ամենը և հաստատամտությամբ շարունակեց իր ընթացքը: Ժողովուրդին հետ անոր ընտանեկան լեզուն խոսելով՝ առավ զանի այն անդունդեն, ուր հավիտյան մնալու դատապարտած էին զանի ազգին մեծամեծները ու բերավ բարձրացուց իր իրավանց ճանաչմանը. մյուս կողմեն ալ մեկմեկ ուժգին հարվածով վար ձգեց ազգապետաց ձեռքեն երկաթի գավազանները. և երբ ժողովուրդ ու ազգապետ հավասար զորությամբ իրարու դիպեցան, այն ատեն իրարու խառ-

նչացան և դաշտին վրա մեկ հատիկ մարտիկ մը մնաց... ժողովուրդը...

...Մեղուն համոզված է, որ հայերը ազգային կյանք մ'ունենալու համար ուղեն չուղեն Եվրոպայի քաղաքականության ու քաղաքակրթության պիտի հետևին. Մեղուն կը փափաքի և պետք է փափաքիլ, որ աժան և դյուրագնի ընդունինք ինչ որ այնչափ սուղ և թանգ գնեց Եվրոպա առանց անոր վնասակար ու վտանգավոր փորձերուն ենթակա ըլլալու, այն փորձերուն արտադրած արդյունքը սեփականելու ու ժառանգելու աշխատինք։ Ինչ որ նա ձեռք բերելու համար մեծամեծ կորուստներ ու զոհ ըրավ, մենք անոր օրինակեն խրատված զանի անփորձ ձեռք բերենք։

## ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏՔ

...Վերջապես, ազնի՛վ ընթերցողք, ազգին այնպիսի դժվար կացությանն առեն ծնանք, որ մեծ զգուշությամբ և ջերմ եռանդով պիտի հըսկենք անոր վրա ու հոգանք զանի. մեր թշնամիները կարի զորավոր են. իսկ մենք տկար. բայց համոզված ըլլալով, թե սուրբ սիրտ մը ավելի զորավոր է, քան մրոտ բազուկներն՝ հույս ունինք, թե կրնանք անոնց զորավորությունը ոչինչ համարել եթե խոհեմությամբ և աշալրջությամբ մի սիրտ և մի հոգի դեմ դնենք այն ամեն թե՛ գաղտնի դարաններուն և թե՛ հայտնի թշնամության, որ ամեն օր կը տեղան մեր ազգին վրա. եթե այս սուրբ պատերազմին մեջ ըյնինք՝ ազգին ամենամաքուր նահատակները պիտի ըլլանք և թող ազգն ալ մեր մահվանե ետև մեր աչքերը գոցվելեն ետև լոհվի ուրիշին։ Իսկ եթե հաղթող ելնենք՝ երանի այն անձերուն, որ ազգի մը ազատարարն ըլլալու փառքին պիտի արժանանան. ազատարարներ, որ զորավոր տերության դեմ մարտնչելով խլեն առնեն պիտի անոնց ձեռքեն ազգը—չափազանցություն չկարծվի մեր ըսածները...

## Պ. ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

Անունն իսկ արդեն շատերու մտադրությունն արթնցուց[5].— այսպես կը հավտանք և հավատքնիս ճշմարիտ է.— վասնզի պ. Նալբանդյանց հայ երկնակամարին վրա փայլելու սկսած օրեն ամենուն ուշադրությունը գրավեց և ամենայն ոք ողջունեց զանի. անձնվեր բարեկամ՝ ազգային հառաջդիմության, անխոնջ աշխատող՝ անոր ի նպաստ, թըշնամի՝ ազգատյաց չհայերու, վեհանձն՝ սխալմամբ ազգին թշնամություն

*ընողներուն դեմ, մեծահոգի և բազմահմուտ. ազատամիտ, ազատության բարեկամ, փափագող և ջանացող ոչ միայն իր ազգին, այլ ընդհանուր մարդկության ազատությանը...*

## ...ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ°

*Երբ 1861 տարուն մայիսի 28-ին ազգային սահմանադրության առաջին տարեդարձը կը կատարեր ուրախ և զոհ սրտով հայ երիտասարդությունը, ես զանի կը դիտեի զմայլմամբ, այլ տրտում և անհանգիստ սրտով վանքի աշխարհին փորձովը գիտեի, թե ամենայն նորության և ամենայն քայլ դեպի մարդկության առջև բացված շավղին մեջ՝ միշտ զորավոր և դժվարհաղթելի արգելքներ ունի իր առջև. այո՛, մարդկությունն իր հին կաղապարին մեջ սեղմել ուզող սկզբունքն ու մարդկային սեռին իշխանության սիրող անհատները չպիտի հաճին երբեք իրենց կամքով և ազատաբար տեսնել մարդկության զարգացումն ու ինքնիշխանությունը:...*

*...Այսօր ազգային բարեկարգության համար մեր ձեռքն եղած կանոնադրությունը ստուգիվ ազգային առանձին սահմանադրություն մ՚է, և որ բաց առնելով մեկ քանի հետամուտ հոդվածներ, ընդհա վերաքննության ժամանակ սրբվելիք, այն սկզբանց վրա հիմնված է, որուն համար պատերազմեցան երկայն ատեն Եվրոպայի էն քաղաքակրթյալ ազգերը՝ հայրն իր որդուն և որդին իր հորը չխնայելով՝ ի խնայել այն սկզբունքին, որ մարդկային սեռին ազատության և հառաջադիմության միակ տարրն էր: Այո՛, ազգային Սահմանադրության սկզբունքը ժողովուրդին վեհապետության սկզբունքն է. այն մեծ և վսեմ սկզբունքը, առանց որուն իսկական հառաջադիմություն չկա մարդկության համար. առանց որուն մարդկային սեռը միշտ կաշկանդված պիտի մնա նախնի դարուց գերության մեջ և պիտի հեծե հավիտյան: Այս սկզբունքը վայելեց հայ ժողովուրդը իր առանձին կենացը մեջ իր ջանքովը և ալ այսուհետև ըստ Վիկտոր Հյուգոյի՝ «Ավելի դյուրին է խլել ծովուն խորեն ժայռերը, քան թե իրավունքը ժողովրդին սրտեն»:...*

# 1 8 6 4

## ԵՎ ՄԵՂՈՒԻ ԹՎԱԿԱՆԻՆ Ը-ՐԴ ՏԱՐԻ

### Ամեն ճշմարիտ հայերուն բարօրություն և հասուն խորհրդով ազգիս ապագան մտածելով տանջվող ազգասերներուն երկար կյանք

*Կը մաղթե Մեղուն այս ութերորդ անգամ շնորհավորելով իր ընթերցողաց նոր տարին՝ այն առթիվ կը ներկայանա իր խորհրդածությունը ընելու:*

*Հազար ութ հարյուր վաթսուն և չո՜րս... իննևտասներորդ դարուս է՜ն մե՜ծ տարին: Անոր առաջին օրեն ահա բոլոր Եվրոպա կը դղրդի[8]. արձագանք կուտան անոր երկրագունդիս բոլոր մյուս մասերը, որմե կախում ունին այսօր: Եվրոպայի մեծագույն տերությունները կը շարժին, փոքրագույնները կը խռովին. քաղաքակրթությունը ազատության էլեկտրիկը կը զարնե, բռնակալությունը կ՚ահաբեկի. ժողովրդոց իրավունքը հաստատության վճիռ մ՚ալ կ՚ընդունի, հակառակ ինքնակալներու ահավոր և մարդախողխող բանակներուն. ազգաց և ընդհանուր մարդկության բարերար դյուցազունք այս անգամ ավելի մեծ արիությամբ կը նետվին հասպարեզ. սուրեր կը սրվին ամեն կողմ, թնդանոթներ կը լեցվին, նավատորմիղներ կը պատրաստվին, բանակներ պատերազմի վիճակի մեջ կը դրվին և նոր տարին կը գոչե ահագին ձայնով. «Եթե անլսելի ըլլա մարդկային ձայնը, ահագին բանակներու թնդյունովն ու դղրդյունովը պիտի ճանչել տամ իրավունքը»: Այո՛. հազար ութ հարյուր վաթսուն ու չորս թվականը նոր և մեծագույն հաղթանակ մ՚ալ պիտի ընել տա քաղաքակրթության հին աշխարհի վայրենության մնացորդաց վրա. ազատության մունետիկը պիտի ըլլա այն ամեն ժողովրդոց համար, որոնք արժանի են կենաց, սակայն զանոնք աստուծո ձեռքեն խլել և իրենց գերին ընել ուզող անձանց ձեռքին տակ մահացյալ էին ցարդ:*

*Հազար ութ հարյուր վաթսուն և չորս թվականը եթե անկարող ըլլա լսել տալ իր խաղաղասեր հրեշտակին ձայնը այն ամենուն, որոնք չեն ուզած հարգել իրավունքը և հնազանդիլ քաղաքակրթության, համատարած ահագին փոթորիկ մը պիտի հարուցանե իր իրավասեր քաջերուն ձեռքով, որմե ոչ մեկ ազգ մը կարող պիտի ըլլա անվնաս պրծնիլ: Այո, մարդկային ազգի հառաջդիմության իրական թագավորը արդարությունը, որ փորձով տեսնված է, թե առանց արյունհեղության չպիտի*

*կրնա տիրել երկրագունդիս, մեծ հաղթանակ մը պիտի կանգնե այս թվականիս մեջ, որուն շնորհիվ ոչ միայն պիտի հրճվին անթիվ տառապյալներ, այլև երկրորդ և երրորդ մեծագույն հաղթանակներու ալ դուռ պիտի բացվի, այլև շատ թշնամիներ ինքնին անձնատուր պիտի ըլլան այս նոր արքային, որուն թագավորության գալիքը թվականիս հազար ութ հարյուր վաթսուն երեք տարի առաջ քարոզվեցավ, և որուն գալստյան հուսովը միայն մխիթարվեցան ու կը մխիթարվին տակավին արտասվալից աչոք շատ թշվառ և հարստահարյալ ժողովուրդք կամ լավ ևս մարդկային ազգի ամենամեծ մասը, կամ ավելի ճիշտ ամեն ազգի հասարակությունք։*

*Հին աշխարհին իշխանությունները փոխանակ ժողովրդոց խնամակալն ըլլալու՝ անոնց բռնավոր տերն էին. հին աշխարհին մեջ իշխանական մարդիկ իբրև առանձնաշնորհյալ՝ ամենայն հանգստություն, ամենայն ազատություն և ամենայն բարօրություն իրենք կը վայելեին և ամեն չարչարանք, ամեն զրկանք, ամեն թշվառություն ժողովուրդին վրա կը բեռցնեին։ Օրենքներն այն անձանց երջանկության պահպանությանն համար հաստատված էին, և ժողովուրդը գանգատ ընելու անգամ չէր համարձակեր։ Այս օրենքներուն լուծումը պահանջեց որդի մարդո. այս օրենքներուն հյուսքը քակեցին Ֆրանսիայի առաջին մեծ հեղափոխությունը և անոր հաջորդողները և մյուս կողմեն նոր օրենքի մը հիմք դրվեցավ. այն է՝ արդարության օրենքին. նոր իշխանության մը հաստատության սկզբնավորությունն եղավ. այն է՝ ժողովուրդին իշխանության. և այս օրենքն ու այս իշխանությունը միշտ հալածված՝ սակայն միշտ ընդհանրական ըլլալու կը դիմեր։ Ահա 1864 թվականն ալ թե՛ մարդու բերնով, թե՛ թուրի բերնով ասոնց կարճ միջոցի մեջ ընդարձակ աշխարհակալությանը պիտի նպաստե։*

*Եվրոպա անպատճառ կերպարանափոխ պիտի ըլլա և անոր հավասարակշռության թասերուն մեջեն պիտի հանվի դրվի, բան պիտի պակսի էվելնա. մինչև ցարդ արժեք չունեցած երևցողները արժեքնին պիտի գտնեն. ծանր կշռողները պիտի թեթևնան և նոր հավասարություն մը պիտի հաստատվի...։*

*Այս միջոցիս մեր ազգն ինչ պիտի ընե և ինչ պիտի ըլլա անոր վիճակը։*

# «ԿԱՄ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ ԿԱՄ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ»

*...Տպագրական ազատությունը մարդկային ազատության պարագաներեն մեկն է։ Տպագրությունը ինքն իրեն գործող մը չէ, գործիք մըն է. մարդն է, որ կը գործե և մարդս ազատ է. ազատ՝ խորհելու, ազատ՝ խոսելու և ազատ՝ գործելու...*

*Մարդկային ազգը իր հարստությամբը, իր զորությամբը, իր հանճարովը ամեն դիմակալ արգելքներ ոտնակոխ ընելով պիտի հառաջադիմե դեպի իր նյութական, բարոյական և իմացական կատարելությունը. ասի ալ ո՛չ ոք կրնա ուրանալ. ով որ անոր հառաջդիմող մասին չհետևի՝ ի կորուստ պիտի մատնվի։*

*Եվրոպայի այն ժողովուրդները, որ է՛ն հառաջադեմներն են դեպի կատարելություն տանող ճամփուն մեջ՝ նոր զորությամբ այս տարի կը շարժին քայլ մ՛ավելի առնելու. և պիտի հաջողին՝ թեև մեծամեծ վնասներով։ Ո՛ր ժողովուրդներն որ այս տարի չճգնին անոնցմե հեռու չմնալու, քանի մը տարի ետքը շատ ետ մնացած պիտի գտնեն ինքզինքնին և այս հետամնացության վախճանն է մահը...*

ԳՐԻԳՈՐ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայերուն մեջ գրական սիրո աճիլը, և օրեօր ազգին մեջ հառաջադիմության ու բարոյական զարգացման հետանկար պատկերի մը նշմարվիլը հաստատելով՝ կարծենք անուրանալի ճշմարտության մը արձագանք եղած կըլլանք։ Սակայն եթե կ՚ուզենք ճշմարիտ հառաջադիմության շավիղեն չխոտորելով մեր նպատակին հասնիլ և ազգային արժանավորությունը կազմել լուսավորյալ ազգերու առջև, ամեն մեկ անհատ ա՛լ կը պարտավորի անցյալեն օրինակ առնուլ, ազգային պատմության փոշին խառնելով իր վաղեմի տոհմային թշվառության պատճառները փնտռել, և ներկային մեջ այն պատճառներեն խորշելով պատրաստվիլ ապագային հաղթության համար, որ է ազգին բարօրության շենքին կանգնումը։ Ինչպես հայտնի է ամեն ողջամիտ անձանց, այս շենքին միմիայն հաստատուն հիմը միտքերու լուսավորությունն է։ Ո՛չ նվազ ուրախություն է ուրեմն հայրենասեր սրտերու, երբ կը տեսնեն թե մըտավորական շարժում մը, որ հանրության դեպ ՚ի լուսավորություն դիմելու հոժարության հետևանքն է, արդեն սկսած է բավական սիրտեր հուզել։ Պոլսի մեջ հրատարակված երևելի օտար թերթ մը նաև մեզի հետ հաստատեց այս շարժումը, իր ըսածին իբր փաստ՝ Հայ լրագիրներու և ուրիշ պարբերական թերթերու թիվը հառաջ բերելով. և ստուգիվ՝ ազգի մը լուսավորության զորավոր միջոցներուն մեկն ալ հրապարակական թերթերու շատությունն է. անհակասելի ճշմարտություն մ՚է այս, և որուն կըրնա ապացույց բերվիլ Եվրոպայի և Ամերիկայի մեջ այս տեսակ պարբերական հրատարակումներու ահագին բազմության գտած եռանդուն ընդունելությունը և ամեն ժամանակ անոնց ըրած ազդեցությունը ու ներգործությունը, ուսկե կերևա, թե որչափ կարևորություն և պիտանություն կուտա անոնց քաղաքակրթյալ աշխարհը։ Ճշմարիտ ազգասերի նվիրական պարտավորությունն է իր ազգին հառաջադիմությանը աշխատիլ և, որովհետև անոր այս աշխատության արդյունավորությունը մասնավո-

*բացեն նույն թերթերին կախում ունի, անիկա պետք է իր կամքովը օծե, և իր թե նյութական և թե բարոյական պաշտպանությամբը հաստատե զանոնք:*

*Լրագիր կամ հանդես մը ապրելու համար նախ կարոտ է պաշտպանության, զոր միայն լուսավորության մեջ հնարին է գտնել. և բերդի ըլլալու համար ազատության կարոտ է, զոր միայն այն ատեն կրնա վայելել, երբ իրավունքը կը տիրե և օրենքը արդարության վրա կը հիմնվի: Սիրելի է մեզ հուսալ, որ այսուհետև ազատությունը և հառաջադիմությունը վերոհիշյալ թերթերուն նկարագիրը պիտի ըլլան. եթե արդարև Եվրոպայի ո՛չ թե բուրժերը, այլ ճշմարիտ լուսավորությունը ունենալ կ'ուզենք նաև: Լրագիր մը կատարյալ իրավունք ուներ, երբ քանի մը տարի առաջ Հայերուն վրա գրելու ատեն ըսավ. «Հայերուն լուսավորությունը իրենց շապիկին և մարմինին մեջտեղն է»: Կը հուսանք, որ այս ծանր, այլ ճշմարիտ խոսքը ալ չպիտի ըսվի մեզի համար. և այս հուսով քաջալերվելով և վստահելով հարգո ազգասիրաց պաշտպանությանը վրա, այսօր կը համարձակինք փոքր հրատարակումի մը ձեռք զարնել՝ մեր այս զուգնարյա ձեռնարկության շարժառիթ ունենալով ո՛չ թե անձնական շահու փափագ մը կամ համբավատենչության զգացություն մը, այլ մեր սիրելի ազգին, եթե կարելի է, գույզն ինչ ծառայություն ընելու անշահախնդիր դիտավորությունը: Գիտենք որ մեր միտքը տկար է, այլ ազգին հառաջադիմության օժանդակելու համար ունեցած եռանդնիս անկասկ. պարտավորություն մ'է այս. արդարև մեծ պարտավորություն. որովհետև եթե մարդս օրեօր պետք է հառաջանա ու կատարելագործվի այն բնական կանոններով, որոնցմով ամեն էակներ հառաջելու վրա են, եթե կ'ըսեմ իր պարտքն է ոչ միայն իր, այլ նաև իր նմաններուն կատարելագործությանը ու բարոյական շենությանը աշխատիլ ու բոլոր իր զորություններովը իր նպատակին հասնելու ջանալ, հայտնի է թե ամեն մեկ անհատ ընկերության մեջ կատարելու պարտավորություններ ունի:*

*Հանդիսիս նկարագիրն է Ազգային, Իմաստասիրական, Բանաստեղծական և Բանադատական, խմբագրության առաջին պարտավորությունը պիտի ըլլա կրոնական խնդիրներու չխառնվիլ, որևիցե կուսակցության դրոշին ներքև չմտնել, և* խոհեմությամբ *ճշմարտությունը ըսել, առանց դրգռության տեղի տալու, ձեռքեն եկածը ընել, որ չթառամի իր Մագիկը*[1] *ու փոխանակ վատ կիրքերու գործի ընելու զայն, իրեն նպատակ ունենա միմիայն ազգին օգուտը: Ֆրանսայի մեջ հայրենասիրաց դրոշակին վրա գրված է՝* Après Dieu la patrie[2], *Հայերը ևս կը պարտավորին այսուհետև*

*առանց կրոնքի խտրություն ընելու եղբայրության ու միաբանության կապերով միանալ ու հաստատ որոշումով զինվորվիլ ազգասիրության այն դրոշակին տակ, որուն վրա պետք է գրվի՝ «Աստուծմե ետք ազգություն»։*

## ԽՈՐՀԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ
## Ի Պ. Ժյուլ Սիմոնե

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

*Գիտությունը անհնարին է՝*
*Առանց խորհելու ազատության։*
Ժյուլ Սիմոն

*Եթե որևիցե մարդկային ընկերություն մը դաստիարակությամբ ու գիտությամբ միայն կրնար զորավոր տևողական և արդյունավոր ըլլալ, ապա ուրեմն անոր նվիրական պարտքն է փնտռել, գտնել և ընդունիլ այն թեությունները, որոնցմով հնարին է առնուլ ճշմարիտ դաստիարակություն, և ասոր թևերովը գիտության անսահման տարածությանց մեջ ճախրել։*

*Անուրանալի է, թե այս թեություններու առաջինը և ամենեն հարկավորը խորհելու և մեր խորհրդածությունները ուրիշին հաղորդելու ազատությունն էր։ Մարդկային միտքը, երբ զուրկ կը մնա այս ազատութենե, անիկա ստորին գաղափարներու շրջանեն դուրս չկրնար ելնել, նեղ սահման մը կ՚ունենա, և հետևաբար տգիտության խավարին մեջ խարխափելով գրեթե անասուններու պես, որք բնության օրենքին կը հնազանդին առանց զայն ճանչնալու և գիտնալու, դատապարտյալ կ՚ըլլա միայն ներկային մեջ գտածովը գոհ ըլլալու և կուրորեն հավատալու կամ հնազանդելու այն ամեն սահմանադրությանց, զորս ավանդություններու և սովորություններու զորությունը հաստատված է նաև իբրև մեքենա մը շարժել այն մարդկային օրենքներու համեմատ, զորս անձնական շահը և կիրքը դրած է, առանց հասկնալ ուզելու թե ի՛նչ բանի վրա հիմնված են արդյոք այն օրենքները արդարության, եթե ոչ անիրավության։*

*Մեկ խոսքով ըսեմ, առանց այս ազատության մարդկային միտքը անծանոթ կը մնա պատճառներու և հետևություններու և կը ճնշվի, կը տկարանա գուցե և բոլորովին կը փտի անիկա ինչպես շղթայակապ մարմին մը, որն որ անելանելի բանտի մը մեջ մնալով կ՚ոչնչանա կամ օդին ապականութենե և կամ կենդանատու լույսին զրկված ըլլալուն։ Հարկ չէ՛ ըսել, թե անհատի մը վիճակը ինչ որ է, նույնը կրնա ըլլալ նաև*

ամբողջ ընկերային ժողովի մը վիճակն ալ։ Այդպիսի վիճակ մը հառաջ կուգա կամ անշարժության դրությունը ուղղիներուն տված ճնշումեն, և կամ թե մտավորական անկարողութենե ու հետևաբար անտարբերության ոգին։

Ահա է մեր միջին դարը, այն խավարին ժամանակը, ուր մարդկությունը կը հեծեր անողորմելի տգիտության հարվածներուն տակ։ Այսպես կազմված ընկերության մը ճակատագիրը բարոյական կործանում, և պատիժն է նյութական կործանում։ Կը կրկնենք ազգի մը կանգուն մնալուն միմիայն պատճառն է լույս և գիտություն, ուսկե կը ծագին արդարություն, բարօրություն, փառք և պատիվ, կործանման կամ արյունաբույր ավերումներու ենթակա ըլլալուն պատճառն ալ միտքին հետին աստիճանի տկարության մեջ իյնալն է։ Պատմությունը շոշափելի օրինակներ կ'ընծայե մեզ հայոց մասին և մեր ըսածը կը հաստատե։ Միթե՞ այս չէր Հռոմայեցվոց Տերության կործանման[3] պատճառը։ Ընդհակառակն արդի Եվրոպան կը հայտնե և կ'ապացուցանե, թե կազմությունները և Տերությունները միտքի և խորհելու ազատությունով, այսինքն լույսով և գիտությամբ միայն կրնան կանգուն և տևողական ըլլալ, հառաջադիմել և հասնիլ կատարելության այն աստիճանը, որն որ 19-րդ դար կ'անվանի։ Ուրեմն ազգ մը կամ Տերություն մը իր էությունը չկորսնցնելու համար պետք է որ լուսավորի և գիտության շավիղին մեջ քալե, և որովհետև առանց խորհելու և խոսելու ազատության՝ լուսավորություն և գիտություն ունենալ հնարին չէ, հայտնի է, որ նախ կը պարտավորինք սկզբունքը ընդունիլ և ըստ այնմ վարվիլ, եթե կ'ուզենք վայելել անոր հետևությունը։

Մարդկային միտքը դաստիարակությամբ խորհելու և խոսելու ազատության վեհապետական հարկավորությունը կ'զգա. բայց ե՞րբ կ'ըսկըսի այս հարկավորության զգացումը։ Մարդս աճելով ու ազատ հրահանգությամբ կրթվելով, երբ կը հասնի այն հասակը, ուր Արարչին մեզի տված իմացական կարողությունները կ'սկսին հետզհետե բացվիլ և զարգանալ իրենց առարկաներուն նկատմամբ, մարդս կ'ըսեմ ան ատեն անզգալի կերպով մը կ'սկսի այնպիսի գաղափարներ և տեսիլներ ընդունիլ, որք իր հետաքրքրությունը կը շարժեն, կ'արթնցնեն զանիկա իր թմրության քունեն, և գրեթե բռնաբար անոր ձեռքեն բռնելով զանիկա կառնուն, կը տանին և կը նետեն այն մտավորական ընդարձակ ասպարեզը, որ գիտությանց դաշտ կ'անվանի և ուր անիկա, իբր հետաքննին բանասեր ու ճշմարտության ծարավի, իր անբռնաբարելի իրավունքովը և օրինավոր իղձով մը ալ կ'աշխատի մթության վարագույրները պատռել, ա-

*մեն սահմանադրություններու և մարդկային հիմնադրություններու սկզբունքները մի առ մի զննության մաղեն և հետևաբանության... մեջեն անցնելով, և իր այս աշխարհիս մեջ ինչ ըլլար, ուր երթայր, և ինչ պաշտոնով եկած ըլլալը հասկնալ ուզելով իր բանականության զորությունը կը դիմե, զայն կը գործածե և այնպիսի անժխտելի ճշմարտություններ երևան կը հանե, որ ալ ավելորդապաշտական ավանդությունները ու կանխակալ սովորությունները կ'անհետին իր առջև. իր միտքը պատող ծածկույթները կը վերնան, և ահա ան առնեն նորանոր տեսիլներով ու գիտության լույսերով իր իմացականությունը, և հետևաբար իր մարդկային արժանավորությունը կազմելով հին նախապաշարումները կեղևի պես իր վրայեն հանելեն ու նետելեն ետքը այնպիսի խնդիրներ հուզելու և պարզելու կը հանդգնի, որ իր այս հանդգնությունը տգիտության պայրույթը կը գրգռե, այլ սակայն հետևության ճշմարտությունը անոր զարմանքը կը գրավե, և որովհետև փիլիսոփայության կրկին պաշտոնն է ճշմարտությունը փնտռել և զայն տարածել... հարկավ իր գյուտերը ու ճշմարտությունները ուրիշին հաղորդելու բնական պրգում ու անընդդիմակա միտում մը կ'ունենա։ Իր այս միտումին հնազանդիլ անոր իրավունքն է, և ոչ միայն իրավունքն է, այլ նաև իբրև մարդ, իր պարտավորությունն է։*

*Ահա հոս կ'սկսի խորհելու և խոսելու ազատության հարկավորությունը, և որովհետև անով է, որ անշարժության դրությունը և տգիտության մութը կ'անհետի, ու գիտությունը աշխարհիս այս ինքնակալ ու անմահ թագուհին, իր աթոռը կը կանգնե մարդկային մտքի մեջ. ամեն մեկ անհատ կը պարտավորի ուրեմն այս սկզբունքին նախանձավոր պաշտպան ու ջերմեռանդ հետևորդ ըլլալ...*

## ԻԶՄԻՐԻ ՀԱՅՈՑ ՎԵՑԱՄՅԱ ԹՇՎԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ

*Մարդս վայրենիներե տարբերելու համար ընկերության մեջ ապրելու կարոտ է։ Ընկերություն ըսելով բազմաթիվ, և, թե՛ հատկություններով թե՛ կարողություններով իրարմե զանազանող անհատներու միատեղ ժողովիլն է։ Այս ընկերային ժողովի անդամներու մեջ զորավոր ու տկար, բարի ու չար, գիտուն և տգետ անդամներ ալ կան։ Ասոնց այս անհավասարութենե և անհարմարութենե եսությունը, որ ամեն թշվառություններու ցեխոտ և մշտահոս աղբյուրն է, բնականաբար հառաջ կուգա, և կը վրդովե անհատներու իրարու հետ ունեցած այն ընկերային*

հարաբերությունները. որոնցմով միայն անհատը կրնա ապրիլ, և որք հիմնյալ են երկու սկզբունքներու վրա. այս սկզբունքները պարտավորության և իրավունքի սկզբունքները են, առանց որոց անհնարին է, որ ընկերություն մը հաստատուն ըլլա, և եթե ասոր հաստատությունը կարևոր է հաստատված կարգին հարատևության համար, հայտնի և անուրանալի է. թե այն սկզբունքներու վրա հիմնված օրենք կամ կանոնադրություն մը հարկավոր է, պարտավանցը պատժելու և իրավունքը պաշտպանելու համար:

Այս կանոնադրությունը կամ Սահմանադրությունը եթե չըլլա, ո՛չ պարտավորությունը կը կատարվի, և ո՛չ ալ իրավունքը կը պաշտպանվի, և հետևաբար ընկերության անդամներուն զորավորագույնը տկարին վրա բռնանալով, առջինը կը հարստահարե, և երկրորդը կը մնչև բռնության ալի բաժակը քամելով: Երևակայությամբ եթե Եվրոպայի անցյալ ու ներկա վիճակը առջևնիս բերելու ըլլանք, պիտի տեսնենք, որ երբեմն շատ սուղի կը նստի ընկերության այսպիսի օրենքի մը հաստատությունը: 18-րդ դարուն վերջերը Ֆրանսայի հողը մարդկային արյունով ողողվեցավ, ի՞նչ էր ժողովուրդին կամքը, բռնության լուծը թոթվել, անիրավ առանձնաշնորհությունը՝ այսինքն իրավանց հափշտակիչը, պատժել, իրավունքը հրատարակել և հաստատել վայն:

Արդարև դարերե հետե բռնակալության տակ հեծող և անտանելի զեղծումներով հարստահարվող և թշվառության մեջ տառապող Ֆրանսայի ժողովուրդը՝ ազատութենե և բանականութենե, նախախնամության մարդուս պարգևած այս երկու երկնային և անբռնաբարելի սեփականությունները բռնության հարվածովը զրկվելեն և անասունին հետ հավասարվելեն ետքը, երբ յուր արյան գնովը Սահմանադրություն մը հաստատեց, ալ իր իրավունքը և պարտավորությունը ճշտապես որոշվեցավ. և հավասարության և արդարության սկզբունքներու զորությամբը առջինը ազատորեն վայելելուն և երկրորդը հավատարմությամբ կատարելուն համար, Գաղղիական ընկերությունը այս օրվան օրս բարօրության և լուսավորության այն գագաթը կը գտնվի, որու բարձրութենե շողացող լույսը՝ ձեր, լուսավորության թշնամիներ, ձեր մթահար աչքերը կը խտղտե:

Այս սահմանադրությամբ մենք կ'ուզենք բարեկարգել ազգային հիմնադրությունները, արդյունավորել զանոնք, անիրավության տեղի չտալ, զեղծումները արգիլել և այսպես հառաջադիմության պողոտան հասնիլ, լուսավորության հորիզոնը ընդարձակել: Թող մատնիչք ըսեն, թե մեկ կառավարության մեջ երկու կերպ օրենք չի կրնար ըլլալ: Կառավարության օրենքը կը պաշտպանվի գործադիր իշխանությամբ, իսկ պարզ

ազգային կանոնադրության մը պաշտպանը եղբայրասիրությունը ու միաբանությունն է։

Հայը ալ ճանչցավ Սահմանադրության փրկարար հետևանքը, տեսավ որ միայն անով պիտի կրնա բուժել իր վերքերը. ուստի հարկավ իր ամեն ճիգը պիտի թափե զայն պաշտպանելու համար. վհատություն պետք չէ երբեք. հոգնիլը վհատության հետևանքն է, այն որ արիաբար կը հարատևե իր նպատակին հասնելու համար, իր աշխատությունը պիտի պսակվի անհրաժեշտ։ Անտարակույս ընկերային փոփոխությունները դժվարահաղթելի խոչընդոտներու կը հանդիպին երբեմն։ Կարճ միջոցի մը մեջ ամեն արգելքներու հաղթել դժվարին է. ժամանակը ու ավելի նպաստավոր պարագաներ ամեն բան պիտի կարգադրեն. ներկան ապագային համար համր չերևար. մեր հույսը մեր դատին արդարության վրա է, թող ազգային սևերես թշնամիները գաղտնի մաշելու աշխատին այն սյունը, որու վրա կը կրթնի ապագան։ Պատմությունը մեզ կը սորվեցնե, որ իրավունքը միշտ հաղթած է հարատևությամբ և գործքով։ Լռել և սպասել, որ ժամանակը միայն գործե, խոհեմության նշան չէ. անշարժութենե միշտ չարիք կը ծագի և ոչ թե բարիք[4]։

Թշնամիք եթե կը կարծեն որ Սահմանադրությունը[5] պիտի կործանի, կը սխալին. հավիտենապես զայն կործանելու համար միայն մեկ միջոց կա, որ է խեղդել մամուլի ազատությունը. ընտանի թշնամին ամեն օր այս տղայական փորձը ընելու վրա է, բարեբախտաբար իր ամեն ջանքը ապարդյուն կը մնա, վասնզի միայն թագակիր գլուխները հազիվ թե կիսով չափ կրնան սանձահարել զայն։ Մամուլի ազատության շունչը նվիրական է ու միանգամայն զորությունը անընկճելի։ Այս զորության դեմ դնելը՝ ճշմարտության բերանը կարկել ուզել է, ունայն աշխատություն է այս. ինչու որ ճշմարտությունը Աստված է, և զայն ծածկել ուզելովը զԱստված ծածկել ուզելու տղայամտությունը ըրած կ'ըլլա տգետը։ Ի՛նչ և ըլլա, ասոր զենքերը փտուն են և չոր կավի նման կը փշրվին դյուրությամբ ազատության վահանին վրա։ Ամո՜թ այն հայերուն, որ փոխանակ խոհեմությամբ և անկողմնասիրությամբ խրատելու և փաստով ու փորձով իրենց իրավունքը հառաջ բերելու՝ բռնության կը դիմեն և 19րդ դարու մեջ ազատասպանության անունը կը շահին 'ի նախատինս Հայկական անվան։ Այնպիսիները թո՛ղ միտքերնին բերեն միջին դարը, նաև ասոր հաջորդող դարերը, և ան ատեն պիտի համոզվին, թե բռնությունը և տգիտությունը երբեք հաղթանակած չեն, քանի որ մարդուս միտքը սկսավ փայլիլ բանավորության լուսով։ Այն բարբարոսական ժամանակները՝ տգիտությունը բռնության հետ ձեռք ձեռքի տված մարդկային ար-

յունը հնդեղորեն կը թափեր և անով կը շաղեր այն կավը, որով պատվարներ կանգնել կ'ուզեր մամուլի ազատության առջև։

Աստվածաբանական, իրավասության և օրենսդիտության ժողովները և կղերը անիծից շանթեր կ'արձակեին։ Հեղինակները, տպագրիչները, գրավաճառները Ֆրանսայի մեջ կը բանտարկվեին, կը տարագրվեին, կը գլխատվեին, և այս կերպով խավարասեր թշնամին կը կարծեր, թե մամուլը կը սանձահարեր, չէր գիտեր, որ այս կերպով այն ավելի ույժ և զորություն առնելով սանձարձակ կը հառաջադիմեր, ա՛յնչափ իրավ է որ Երևելի բանաստեղծ մը կ'ըսե. «Ճշմարտությունը և ազատությունը սա գերազանց աղեկությունը ունին, որ մարդս անոնց բարեկամ ալ ըլլա, թշնամի ալ ըլլա, երկու կերպով ալ անոնց հառաջանալուն ծառայած կ'ըլլա»[6]։

Արդա՛րև այն ատենվան մարդկային մտքին աստիճանական զարգացումը, համորեն գիտության մշակումը, և ասով հայեցողության աշխարհին հետզհետե լուսավորիլը, և գիտության և ճշմարտության ջահով բոլոր Եվրոպան լուսավորելը՝ բանավորներու զորության առօրյա ըլլալուն անհերքելի ապացույց և ճշմարտախոս վկա մ'է։ 16րդ դարը, երբ միջին դարու հաջորդեց, իմացականությունը իր ճմլիչ պատյանեն դուրս ելավ դրական սիրո աճումին զորությամբը, աշխարհս իր բազմադարյան քունեն արթնցավ, և հավիվ թե իր արտևանուքները աչքերուն վրայեն վեր վերցուց, և ահա իր ճմլած, ճնշված միտքը պարարելու համար նոր հյութ և նոր սնունդ փնտռելով սկսավ գիտության հինօրյա վառարանը՝ Հունաստան, թռիլ։ Մարդկային մտքի այս հանկարծական հարձակումը լիովին արդինավորեցավ և բերավ 17րդ դարը, որն որ հուսադիր ժպիտով մը «երթաս բարյավ» ըսավ իր նախորդին և իր արշալույսը պըսակեց իմացականության հոգեշահ լուսովը։ Տեգարթ այս արշալույսին ատեն ծնավ և միտքերու շարժումը վարձատրելու համար գիտությունը ազատության վրա հիմնեց[7]։ Ֆրանսայի մեջ առավ անիկա իր կյանքը, և, մամուլի ազատության թշնամիեն տարագիր, Շվետի մեջ ավարտեց անոր ընթացքը՝ խորհելու, գրելու և տպելու ազատության դրոշը բռնության առջև չծալլելու համար։ Բարիզի խորհրդարանի մեծ սանդուղին ստորոտը գիրքերը և թերթերը հրո ճարակ կ'ըլլային, և սակայն այս դարուս մեջն է, որ արհեստը, գրականությունը, բանաստեղծությունը, թատրոնը, փիլիսոփայությունը կը կարգադրվին, կը ծաղկին և հառաջադիմեն։ Վառվռուն գրիչներ, եռանդոտ նորոգիչներ մարդկային ընկերությունը քննելու ելան, ամեն բան խծբծեցին, իրենց դարուն ծանրալուր ճըշմարտություններ ըսին, իրավ է, շատ մը սխալներու հետ։ Բռնությունը

սկսավ հալածել զանոնք։ Գիտությունը և ազատությունը չը վհատեցավ իր թշնամիեն կրած զրկանքներեն, և հայրենիքեն դուրս տարագիր, երբեմն ծպտյալ և երբեմն ալ անանուն դարձյալ իր իշխանությունը բանեցուց՝ նորանոր սկզբունքներ հաստատելով։ Գիտությունը և ազատությունը մարդուս միտքը այնպիսի կաղապարի մը մեջ ձուլեցին, ուսկե անիկա ելավ այնպես, ինչպես որ պետք էր՝ արժանավոր հանդիսական, երբեմն ալ դերասան ըլլալու համար այն ներկայացումներու, որոնց հրաժարական ողջույնը տվավ 18րդ դարուն վերջալույսը։

Այս գնդերը, զորս մամուլը 3 դարե հետե պատրաստած էր, հուրի և սուրի տվին հին դրության շենքն ալ, շինողն ալ։

Եվրոպան սկսավ ճանչնալ մամուլի անընկճելի զորությունը, երբ տեսավ թե անով հաստատված ու մինչև Տերությանց դահերը բազմող արդարությունը և իր անմահ քույրը ազատությունը, Պասթիլներ, հավատաքննության ատյանները, Օթոտաֆեները[8] կործանելեն, կրոնամոլության խարույկը մարելեն, խղճին ու միտքին շղթաները խորտակելեն, գերությունը օրհնող խաչը փշրելեն, մարդուս անբռնաբարելի ու նվիրական իրավունքները հաստատելեն ետև, ժողովուրդին տվավ այն անգրավելի ինքնությունը, որով ասիկա զինքը հարստահարող անօրենին և բռնավորին դեմ կատաղելով ասոր սուրը փշրելու և կամ իր արյամբը անոր մահահոտ ժանգը մաքրելու դա՛ռն, այլ իբր մարդ, սրբազա՛ն պարտավորությունը կը կատարե։

Ահա այս է մեր ազգային թշնամիներուն հակառակորդը, այսինքն արդարությունը և ազատությունը, զորս իրենք հաղթահարելու կը ջանան թեթևությամբ, և իրենց այս ընթացքովը օրըստօրե ժողովուրդին եռանդը կը բորբոքեն։

Բռնամոլության հարստահարիչ ձեռքը կրնա ծանրանալ միայն այն ժողովուրդին վրա, որն որ իսկական վեհապետություն, այսինքն իմացականություն չունի, և ոչ ալ ճշմարիտ զորություն, այսինքն սեր և միություն իր համարյուն եղբարցը հետ։

Հա՛յեր կամ հանձնառու պիտի ըլլաք միշտ ընտանի թշնամիներու մուրճը ուտելու՝ անբան կենդանիներու կարգը իջնալով, կամ պիտի վայելեք ձեր այն իրավունքները, զորս բնությունն կը ժառանգեք՝ ճշմարիտ մարդությա՛ն դրոշմը կրելու համար։ Եթե առջի ճակատագրին եք սիրահար, մնացե՛ք տգիտության մեջ, իրարու միսը ծամեցեք, զիրար մատնեցե՛ք, երկպառակությունը և անմիաբանությունը երբեք մի՛ թողուք ձեռքե, վարելով այն կրավորական կյանքը, զոր նաև անասունն ալ կը վարե, իր տիրոջը հաճոյից համեմատ շարժելով։

Իսկ եթե երկրորդ ճակատագրին տեր ըլլալու կ'ըղձաք, ինչպես ամեն մարդու պարտքն է, մի՛ մոռնաք որ առանց պարտավորության իրավունք չըկրնար ըլլալ: Իրավունքը ան ատեն պիտի վայելենք, երբ պարտավորությունը անթերի պիտի կատարենք:

«Իրավունքը և պարտավորությունը երկու արմավենիներու կը նըմանին, որ ամենևին պտուղ մը չեն տար, եթե իրարու քով չաճին»[9]:

Մարդուս անարատ երջանկությունը այս երկու սկզբունքներու վրա կը կայանա:

Պարտավորություններու առաջինը, ամենեն նվիրական ու միանգամայն փրկարարը ՍԵՐՆ է:

«Սիրեցէ՛ք զմիմեանս»[10], Ավետարանական և 19 դարե հետե անդադար կրկնված աշխարհածանոթ, այլ բա՛րև, շատ անգամ մոռցված ճշմարտություն մ'է այս, զոր աշխարհիս Փրկիչը մարդուս ավանդեց:

Սիրել զմիմյանս: Կատարենք այս պարտքը իր ամենակատարյալ առումը համեմատ վարվելով:

Միության կապերով մեկ սիրտ և մեկ հոգի ըլլանք. և . . . . ։ Եթե ոչ՝ կը կրկնեմ, մարդությունը ուրացած և անբաններու հոտը մտած պիտի ըլլաք . . . . :

## ԱՐԾԱԿՈՒՆՅԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՅԵԳԻՊՏՈՍ

Ուր որ գրականության սերը կ'աճի, կ'ընդհանրանա, հոն ժողովուրդը հսկայաքայլ կը հառաջադիմե. ուր որ ընթերցասիրության եռանդը կը բորբոքի, հոն միտքերը կը շարժին 'ի նպաստ հանրության շահուն, և օրեօր նորանոր տեսիլներով և լույսերով անոնց հորիզոնը կ'ընդարձակվի և ուժգնակի կը դիմեն դեպ 'ի լուսավորություն, որն որ ներկա դարուս տրամադրության համեմատ ընկերային հարկավորություններու առաջինը ու ամենակարևորն է:

Դեռ կան այնպիսի ազգեր, որք իրարու հետ տգիտության և հետադիմության հարճություն մը կը պահեն, և ուր կը տիրե ամոթ և նախատինք իրենց համար:

Պատմական ճշմարտություն է՝ թե տգիտությունը 'ի բնե անտի ժողովուրդներու բարոյական էության հիմը քանդելեն ետև նաև նյութականին հիմը դղրդեր և շատ անգամ կործանում պատճառած է:

Նաև պատմական ճշմարտություն մը կրկնած կ'ըլլանք, ըսելով թե միտքը և լույսը միայն ժողովուրդներու բարօրությանց միակ պատճառ եղած և զանոնք փրկած է կորստյան վիհին եզրեն:

Աղետալի զօրավոր ձեռք մը Հայերը իր ափը առնելով երկրէս երկ-իր ցանած է ափ մը ալրի նման, զոր հովը կը ցրե ավազուտ անապատի մը մեջ: Երանի՜ այն ձեռքին, որ հինավուրց ծառի մը փոթորիկե կտրտը-ված ու հոն հոս ցրված ոստերը 'ի մի խուրձ հավաքելու բարեբախտու-թյունը պիտի ունենա:

Հայրենյաց օդը ծծող մեր համասեռ եղբայրք թշվառության ան-կողնին վրա կը տառապին և իրենց հիվանդությունը օրեօր կը ծանրանա, այն պատճառավ, որ նույնիսկ հայրենիքի օդը, զոր կը ծծեն, մահհատու հոտով մը ապականված է: Անկարող են անոնք մաքրելու նույն օդը և ապականությունը անհետելու: Ասոնք, այս կարողությունը, զոր լուսա-վորությունը կուտա, իրենց համախոհ հայրենակցաց շնորհիվը ըն-դունելու կ՚սպասեն:

Օտարաբնակ ազգայիններն ուրեմն կրկին պարտավորություն մ՚ու-նին կատարելու. լուսավորիլ և լուսավորել: Ինչպես Պոլսի և Իզմիրի Հայ ժողովուրդը արդեն ճանչցած է այս կրկին պարտավորությունը, ահա՛ ուրախությամբ սրտի իմացանք այս օրերս, թե նաև Եգիպտոսի մեր հա-մասեռ եղբայրք այս սուրբ պարտավորությունը լավ մը ճանչցած են, և հայրենասեր երիտասարդներու շնորհիվ արդեն ԱՐՇԱԿՈՒՆՅԱՆՑ անու-նով ընկերություն[11] մը կազմվեր և Վերծանության թանգարան մը հաս-տատվեր է Գահիրեի մեջ, ուր կը գտնվին ամեն Հայ օրագիրներ և հան-դեսներ:

Ազգային հառաջադիմությունը խոսքով չըլլար, այլ գործքով. վհա-տիլ պետք չէ, այլ հարատևել արիաբար: Պատմությունը օր մը Հայ երի-տասարդությունը, որ ապագային հույսն է, վարձատրելու ժամանակ չպիտի մոռնա նաև Եգիպտոսի հայրենասեր ազգայինները, իբր օրինա-վոր տրիտուր անոնց այս ըրած ազգաշեն ձեռնարկության, որն որ անոնց փառք և պատիվ կը սեպվի հիրավի:

## ՁԱՅՆ ՀԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ

### Բ

> J'ai toujours pensé qu'on réformerait le genre humain si l'on réformait l'éducation de la jeunesse.
>
> *Leibnitz*[12]

Հայերուն նպատակն է ՎԵՐԱԾՆԻԼ:

Ազգի մը վերածնությունը ուչ այլ ինչ է, բայց եթե քաղաքակրթու-

թյան այն բարձրագույն կայանը, որ ժողովուրդ մը կը պարտավորի ունենալ մարդկային լուսավոր ընկերության դասակարգության մեջ։

*Պզտիկ և դյուրին գործ մը չէ այս։*

*Պետք է որ տեսակ մը նոր կենդանության տարրեր մինչև ոսկորներուն ծուծերը տարածվին, պետք է որ ուրիշ արյուն մը սկսի շրջաբերիլ Հայ երակներու մեջ, որպեսզի կարենանք համբերությամբ և արիությամբ աշխատիլ.*

*— Ի՞նչ պիտի ըլլա այս աշխատությունը։*

*— Փոխել մեր արդի ընկերական աշխարհին բարոյական և նյութական կազմությունը։*

*Ներքին համոզումով և վերածնող ազգերու պատմության վրա կրթնելով կը պնդենք, թե ազգ մը երբ յուր անցյալին նայելու կ'ամչնա, երբ ներկային հուսահատական ամլությունը կը նշմարե և կը փափաքի իրերու այս վիճակին հիմնական դարման մը գտնելու, յուր առաջին պարտքն է քակել յուր ընկերական գործարանը և լավագույն գործիներով կազմել զայն։*

*Այս քակումը անոր կամ ասոր գործը չէ, այլ հանրության։*

*Այսպիսի քակում մը նաև հանրության կողմե անհնարին է, եթե ժամանակը հասած չըլլա։*

*Ժամանակը բերելու համար ամենուն պարտքն է մեր ընկերական կազմության բարոյական և նյութական տարրերը մի առ մի դիտել, իլիկը ծլիկը քննել, աղեկը և գեշը նշմարել, խծբծել, հանրության ցուցունել և այսպես զանիկա հանուն այսպիսի քակումի մը շարժելու տրամադրել։*

*Հոս երկարորեն չենք կրնար խոսիլ այս տարրերուն վրա, սակայն ասոնցմե երեքը, որք գլխավորներն են, կստիպվինք հիշելու։*

*Դատարկություն սրտի.*

*Մթություն մտքի.*

*Տկարություն մարմնո.*

*Ասոնց մայրը ամենքս ալ գիտենք թե տգիտությունն է։...*

## Զ

### ՊԻՏՈՒՅՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ

*Մարդկային ընկերության մը մեջ, երբ շուրթերը կ'սկսին շարժիլ և այբ, բեն, գիմ արտասանել, գրեթե բնականաբար արձագանք կ'ըլլան միշտ հանրական բառի մը, որ հառաջադիմություն կ'անվանի։ Մեր օրերու մեջ չկա ազգ մը, ժողովուրդ մը, մարդկային որևէ բազմություն մը, որու մեջ դրոշակիր մը չունենա այս խոսքը։ Սակայն սակավաթիվ են*

այն ազգերը, որոնք ներքին համոզումով մը ընդունին այս սկզբունքը, և կարենան կամ անկեղծօրեն ուզեն վարվիլ համեմատ այն թեություններու, որոնցմով իտեա մ'ըլլալե կը դադրի այն, և թանձրանալով կը շոշափվի նաև օտարներե։

Սկեպտիկյան մ'երևալու վտանգը արհամարհելով, կը համարձակինք հաստատելու, թե նաև հայ ժողովուրդին մեջ դեռ կիսովին ըմբռնված իտեա մ'է հառաջադիմությունը, և թե քիչ անձինք գիտեն հարգել և իրականել զայն։

Ըսինք թե մեր մեջ տակավին իտեա մ'է այն։ Մեր այս կարծիքեն պետք չէ հետևցնել, թե հայերը մնայուն և նեխուտ ջուրերու կը նմանին։ Ո՛չ, սակավ ինչ անոնք ևս կ'ընթանան կամա-ակամա. ըստ որում ջուրը բնականաբար կը հոսի կերթա, երբ յուր ընթացքին մասնավոր ճամբա և բավական մղում մը գտնե։ Սակայն Մելեսի ընթացքը Միսիսիպիի ընթացքին չկրնար հավասարիլ։ Գետի և առվակի մը ջուրերու ընթացքին և արագության մեջ ահագին տարբերություն կա։ Հորդահոս գետ մը խոչընդոտ և արգելք չճանչնար, և կարող է քշելով հետը առնել տանելու նաև այն ժայռերը, որոնց բարձումը տիտանյան բազուկներու կարոտիլ կ'երևա ՚ի սկզբան։ Առվակի մ'ընթացքը այս հատկությունը չունի, և թե մանր մունր քարերը կրնա առնուլ և տանիլ, ամենափոքր թումբի մը առջև յուր ընթացքը կանգ կ'առնու, կը հաշմվի, և եթե արտաքին և անակնունելի զորություն մը չի գա անոր առջև անցք մը բանալու, յուր ջուրերը անշարժ կը մնան, կը նեխին և կ'ապականին։

Այսպես է ժողովուրդներու հառաջադիմության ընթացքին տարբերությունը։ Կան ժողովուրդներ, ինչպես են Գաղղիացիք, Անգլիացիք և այլն. որոնք վհատիլ և դադրիլ չեն գիտեր նաև աննկուն կարծված արգելքի մ'առջև և կը հաջողին զայն տապալելով հառաջ անցնիլ, ամենեին հոգ չընելով, եթե նաև նույն տապալումեն աշխարհս շարժի։

Կան նաև ժողովուրդներ, որոնք նորաքայլ են և ամեն մեկ քայլափոխին վհատումի և հուսահատության կ'ենթարկին, վատույժ և անփորձ ըլլալնուն պատճառավ, ինչպես են գերի ազգերը։ Խնդիրը հառաջադիմության ընթացքի պատճառին վրա է ուրեմն։

Այս պատճառը գտնելու համար նախ հարկ է որոշել հառաջադիմության ի՛նչ ըլլալը և անոր ամեն մեկ ճյուղին ի՛նչ բարգավաճումի ընդունակ ըլլալը նշանակել։ Այս որոշումեն և նշանակումեն ետք գտնելու է նաև այն համեմատությունը, որ կա մեր ազգին հառաջադիմության և ուրիշի մը հառաջադիմության մեջ։ Ան ատեն միայն կրնանք իրոք գիտնալ թե ո՛ւր ենք, ո՛ւր կ'ուզենք երթալ և ինչպես կը պարտավորինք քայ-

*ծել։ Կը հարցնենք նախ թե հառաջադիմություն ըսելով ժողովուրդ մը ինչ կը պարտավորի հասկնալ։*

*Մարդկության համար հառաջադիմությունը և երջանկությունը նույնություն մ'է։ Ժողովուրդ մը, երբ կ'ուզե հառաջանալ, կ'ուզե երջանկանալ այսինքն կատարելության հասնիլ։ Երջանկությունը ոչ այլ ինչ է, բայց եթե ապրիլ և վայելել։*

*Ինչպես անհատներու, նույնպես ազգերու կյանքը եռակի է. նյութական, բարոյական և մտական։ Մարդկային ամեն գործառնության նպատակն է պահպանել և բարգավաճել այս եռաձև կյանքը և անոր պիտույքը հայթայթել։*

*Մարդկությունը կը պարտավորի պահպանիլ և բարգավաճիլ, այս է հառաջադիմության նպատակը։*

*Մարդկությունը հետևաբար կը պարտավորի հայթայթել և ունենալ այն միջոցները, որով կյանքը կը պահվի և կը բարգավաճի. այս ալ կ'անվանվի հառաջադիմություն։ Սակայն նյութական կյանքը ուրիշ, բարոյականը ուրիշ և մտականն ալ ուրիշ պիտույից կը կարոտի։ Եւ ահա թե ինչ են այս պիտույքը։*

*Առայժմ կ'ըսենք.*

*Կյանքի ամեն տեսակ պիտույքը կ'արտադրի և կը հայթայթվի աշխատությամբ։ Ուստի կը հետևի, թե առանց աշխատության չիք կյանք, և թե այս աշխատության կերպին և արդյունքը տեսակին ու քանակության համեմատ անհատական կամ հավաքական կյանքն ալ ավելի կամ նվազ կը շարունակվի, յուր իրեն ճյուղին մեջ ավելի կամ նվազ հաստատություն ունենալով։*

*Ուրեմն ուր որ աշխատություն չկա կամ անկատար է այն, հոն հառաջադիմություն չկա, կամ եղածը առօրյա և թերի է։*

*Քաղաքակիրթ ժողովուրդի մը էության պիտույքը անկիրթ ժողովուրդի մը պիտույից հետ միևնույն համեմատությունը չունի։*

*Քաղաքակրթության հետ կ'աճին և կը բազմանան նաև կյանքի պիտույքը, և հետևաբար աշխատությունը ևս նույն պիտույից համապատասխանող արդյունք արտաբերել կարենալու համար կը պարտավորի լավագույն եղանակներով գրավել մարդուս գործունեությունը։ Աշխատությունը մարդու ամեն տեսակ կարողության կիրառումն է։*

*Անիկա կ'աշխատի՝ իբր նյութական էակ.*

*— Ինչո՞ւ. —Ուտելու համար։*

*Անիկա կ'աշխատի՝ իբր բարոյական էակ.*

*— Ինչո՞ւ.—Սիրելու համար։*

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ

**Մեծապատիվ վարդապետ,**

Պարոն հրատարակող *Հյուսիսափայլ* օրագրի,

*Մարդկության պատմությունը չէ ցուցանում մեզ ոչ մի դար և ոչ մի ժամանակ, ուր հանճարեղ մարդերի լուսավոր մտածությունք և բարոյությունք հանդիպած չը լինեին զանազան ընդդիմությունների և հակառակությունների, ուր ագիտությունը և խավարը ոսոխ եկած չը լինեին ճշմարտության լույսի ընդդեմ։ Ասես թե մի բարոյական հարկավորություն էր մեր մարդկեղեն աշխարհի մեջ, որ ճշմարտությունը պատերազմելով մոլորությունների հետ, ամրացներ յուր զենքը և հաղթություն գտանելով կարողանար արժանապես գնահատել յուր հաղթական հանդեսի մեծությունը։ Անցյալ դարերի մեջ պատահած բարոյական պատերազմները ներվում են մեր լուսավոր օրերի դատաստանի առաջև, միտ դնելով ժամանակի տհասությանը և տղայությանը...*

## ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԵՎ ՄԽԻԹԱՐՅԱՆՔ

*Վկա է պատմությունը, որ ապստամբությունք, խռովությունք, սպանությունք, հրկեզք, հափշտակությունք և այլ սոսկալի մոլությունք ծնեցան բռնակալությունից։ Բռնակալական հոգին, որ պաշտպան է ստրկության. բռնակալությունը, որ չկամի խոստովանել մարդկային հավասարությունը, անիրավաբար մոռանալով ուրիշի ստացվածին և իրավունքին, առաջին անգամ մերկացուց երկաթը անզորի և անպաշտպանի պարանոցի վերա։*

*Բռնակալությունը, դահիճ դառնալով մարդկային հոգու ազատ կարողություններին, ջուր է տալիս և աճեցնում է չնչին վնասակար և ամարդի*

Իմացական կյանքի առաջին և հարկավորագույն պիտույքը։ Իմացական կյանքի պաշտոնն է տեսնել և առանց լույս տեսնել անհնարին է։

Գիտությունը լույս է որ կը բանա մտքին աչքը և կը ցուցնե անոր ինչ որ նախապես չէր տեսնվեր։

Ուր որ իմացական կյանք չկա, հոն չկա նաև թե՛ նյութական և թե՛ բարոյական կյանք։ Եթե մտքին պաշտոնն է տեսնել, յուր պարտքն է լուսավորել, այսինքն գիտնալ։ Առանց գիտության չիք լույս։ Տգիտությունը կուրություն է, և միտք մը որ կույր է, ՚ի խավարի է։ Եթե կ՚ուզես լուսամուտ մը բանալ այս սենյակին զոր միտք կ՚անվանենք, աշխատե. ահա քեզ զորություն մը, որ կ՚անվանի կամք, նաև գործի մը որ կ՚անվանի այրենզիմ:

Ազգ մը հառաջադեմ է, երբ կ՚արտաբերե յուր կյանքին այս երեք պիտույքը։

Հաց, այսինքն նյութական կյանքը.
Սեր, այսինքն բարոյական կյանքը.
Լույս, այսինքն իմացական կյանքը։

Որևէ մարդկային բազմություն անթերի չկրնար արտաբերել կյանքի այս երեք տարրական պիտույքը, մանավանդ երկրորդը։ Անթերի արտաբերումը, ով գիտե, գուցե դարերու շարքի մը կը կարոտի. առայժմ ութոփի մ՚է այն։ Անգլիացիք, Գաղղիացիք, Ամերիկացիք, ամեն ազգերե ավելի հառաջադեմ, այսինքն այն երեք պիտույքը լիուլի արտաբերող կը կարծվին։ Մենք կը մերժենք այսպիսի կարծիք մը և եթե կը խոստովանենք թե արդարև անոնց նյութական և մտական հառաջադիմությունը զգալի է, ոչ նվազ զգալի է նաև սիրո նկատմամբ անոնց ընկերային աշխարհին ամլությունը, ըսել կ՚ուզեմ՝ անբարոյականությունը։ Բայց ինչևիցե, ժողովուրդ մը որ կը հավատա հառաջադիմության օրենքի. մարդկային կատարելագործության և ապագայի մը, կը պարտավորի յուր բոլոր զորությունները և կարողությունները նույն պիտույից արտաբերմանը գործածել և գիտնալ գործածելու կերպը:

Սակայն նյութական կյանքի իբր առաջին տարր հացը նշանակելեն հետ՝ քանի մը բացատրություն տալ ավելորդ չթվիր մեզ։ Այս առաջին տարրեն զուրկ չեն նաև անասունները, որոնք առանց աշխատելու կը գտնեն զայն, մինչդեռ մարդս կը պարտավորի կազմել։

Եթե մարդս լոկ կենդանի ըլլար, միայն յուր կենդանությունը պահելու համար բնության ծոցը ապրելով կրնար շատանալ։

Բայց մարդս ոչ միայն կենդանի, այլ նաև բանավոր, իմացական, զգայուն, ազատ և ընկերական էակ մ՚է։

Այս հատկություններով բոլորովին կը զանազանի անասունեն, և ասոր պես միայն ուտելով չբավականար, այլ նաև կը բնակի ընկերության և քաղաքի մեջ, կը հագվի, և կը վայելե ինչ որ գեղեցիկ է աշխարհիս նյութական կազմավորության մեջ։

Ասկե կը հետևի թե նյութականի մասին մարդս կ'աշխատի ոչ միայն հաց այլ նաև ուրիշ հարկավորություններ արտաբերելու համար, որոնք աշխատությունը կը զանազանեն, կը բաժնեն, կը դասակարգեն, կը լավացունեն և անոր ամեն մեկ բաժանումեն տարբեր արդյունք կ'սպասեն։

Այս բաժանումները ընդհանուր կերպով երեք են.

Երկրագործություն, արվեստ և վաճառականություն։

Բարոյական կյանքի առաջին տարրն ալ սերն է բնինք։ Սակայն անասունը ևս կը սիրե. այս սերը ոչ այլ ինչ է, բայց եթե զուգավորության զգացումը։ Անասնային սերը ասկե անդին չանցնիր։

Մարդս ալ կը սիրե իբր նյութական էակ. ոչ միայն մարմնի գեղեցությունը այլ նաև ամեն տեսակ նյութի։ Կը սիրե յուր հայրենիքը, կը սիրե յուր ընտանիքը, կը սիրե յուր նմանը, 'ի վերջո կը սիրե նաև ընդհանուր մարդկությունը։

Միայն մարդս ընդունակ է այս սիրո, ըստ որում առաքինությամբ միայն հնարին է այն, և անասունը առաքինություն չկրնար ունենալ։

Հայրենիքը կը սիրե, և երբ կը զրկվի յուր սիրույն այս առարկայեն, անոր համար նաև արյունը թափելու առաքինությունը ունի...

## ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՒՄՆ

Ասկե քանի տարի մը առաջ՝ Հերցեկովինի մեջ ապստամբական թեթև շարժում մը ծագեցավ[16], հետզհետե սաստկանալով, կանխավ պատրաստված դիվանագիտական դրդումներե զրգռվելով և ընդարձակվելով երկու մեծ տերություններու մեջ ահագին պատերազմի մը տեղի տվավ, և պահ մ' Եվրոպան հուզելեն, ընդհանուր պատերազմի մը հավանականությամբ դաշինքները և հնատես քաղաքագետներ մտմտուքի և հընհընուքի մատնելեն ետք՝ վերջացավ Պերլինի Վեհաժողովին դաշնագրությամբը, որ Թուրքիայի հին կազմակերպությունը մեծապես փոփոխեց և արևելյան ազգերու առջև նոր հորիզոն մը բացավ։

Սակայն եթե Դանուբի ջուրերը մարդկային արյունով ներկվելե, եթե Պլևնայի շրջակա բլուրներուն կուշտերը ռմբակոծվելե, եթե գյուղերը, դաշտերը, պարտեզները, այգիները բանակներու, ձիավորներու, թնդանոթաձիգ սայլերու ավերակներն ըլլալե դադրեցան, պատերազմի

նահատակներուն դեռ նոր գոցված գերեզմաններեն կարծես խորհրդավոր ձայն մը կ'ելնե, Արևելքի ժողովուրդներուն ուշադրությունը արյունահեղություններե հետևող աղետից վրա կը հրավիրե, սուրով և հուրով կատարված բուռն հեղափոխությունը խաղաղական միջոցներով ըմբռնված և կատարված հառաջադիմության հետ բաղդատելու, հուրն ու սուրը անիծելու և մարդկային ամեն տեսակ բարեշրջումները մտքի և սրտի զարգացումին մեջ փնտռելու նվիրական պարտ մը կը հայտնե ամենուն։

Թուրքիայի ժողովուրդները ամենք սկսան լսել այս ձայնը և ըստ այնմ կը պատրաստվին աշխատելու։ Կ'ուզեն հանդարտ և խաղաղ միջոցներով շարժիլ և առջև երթալ։

Այն ազգերն, որք միայն անցելույն մեջ էություն ունեին, այն ազգերն, որոնց անունը գտնելու համար երբեմն հարկ կ'ըլլար պատմական տարեգրությանց դիմելու, այն ազգերն, որք թագավորներու գահակալության, պալատականներու ծննդյան թվականները նշանակող, կամ անոնց փառամոլությամբը գրգռված պատերազմները նկարագրող պատմիչներու անարգու հիշողության առջև գութ և ողոք չէին գտներ, և որք դարերե ՚ի վեր տգիտության և հետևաբար թշվառության ողորմելի օրինակներ կ'ընծայեին՝ մարդկության հառաջադեմ մասին արհամարհոտ կարեկցությունը և զարմանքը գրգռելով, այսօր կարծես էլեկտրական շարժումե մը ցնցվելով, օրինավոր ազատության սարսուռ մը զգալելով՝ կ'սկսին սթափիլ անզգայության և անտարբերության քունեն, որ ազգային կյանքի բարոյական մահն է, կ'զգան, թե բռնակալության ձեռոք անասնաբար ճարակվելու և պատերազմի դաշտ բռված սպանդարանները մատնվելու համար ստեղծված չեն. ընազդումով մը կ'իմանան, թե նաև բանական և բարոյական էակներ են. թե իբր այն' ունին այլևայլ իրավունքներ, որք տկարներու ձեռքեն հափշտակված և զորավորներեն առաթուր կոխված են. թե այս իրավունքները ճանչելու, անոնց փրկավետ արժեքը կշռելու համար մտքի լույս, և ՚ի պահանջել հարկին, անոնց անվեհեր պաշտպանը հանդիսանալու համար բարոյական արիություն և անձնվիրություն պետք է, և որոնք որ փորձառությամբ գիտեն, թե առանց այսպիսի արիության և անձնվիրության չիք թե՛ ազգային և թե՛ ընկերային փրկություն, կ'սկսին մտովին և սրտովին զարգանալու փափագ, կամք և միջոց տարածել, ուր որ կը պակսին այս փափագը, կամքը և միջոցը, զարգացում, որով մարդս իր ամեն իրավանց արժանի կը հանդիսանա, զարգացո՛ւմ ուսկե կ'արտադրին ամեն մարդկային բարօրությունները։

«Տեր կրթության, տեր աշխարհիս» ըսավ չգիտենք ո՛ր հեղինակը։

Եվ հիրավի այն լծակը, զոր Արքիմետ կը փնտռէր Ֆիզիքական աշխարհն վերցընելու համար, գտնված է ընկերային աշխարհի համար, և այս գոցցես գերմարդկային գործին է այբուբենը. լծակ բարոյական, որու արդէն կատարած և կատարելու պաշտոնն է մարդկության ինչ ինչ մասերուն վրա տակավին ծանրացող և զանոնք ճնշող հինուփուտ գաղափարներու, հոռի զգացումներու, տգիտության և ապականության բեռը բառնալ և անցյալին անդունդը նետել անդառնալի կերպով:

Երևակայել նախապատմական ժամանակներու վերաբերող մարդկան լեզուն, վարքը, բարքը, սովորությունները, աշխատելու և ապրելու միջոցները, զգացումները, գաղափարները, և դարե 'ի դար դեպ 'ի լավն, օգտակարն և գեղեցիկն առնված քայլերը և այսպես մարդկության մի մասին կրած բարեշրջումները բաղդատել անցյալին հետ, և տե՛ս, թե այդ անցյալին մեջ, այդ հին դարերու անդունդին հատակն ի՛նչպես կը սողան այժմյա լուսավորյալ ազգերու օրորանը շրջապատող տգիտության, բարբարոսության, կրոնամոլության, գերության դևերը:

Միթրայականներու պաշտումն, ցեղերու որոշումն, անհամար բանակներու ընդհարումն, ավերիչ մարտերու ամբարտածումն անօգուտ շռայլություն մը, արքայական հնաձև պերճանք մը կը դառնան, երբ ժողովուրդներն իրապես կը լուսավորվին՝ իրենց միտքը, սիրտը և մարմինը համապատասխանապես մշակելով կրթության և գիտության այժմյա տաճարներուն մեջ, և այսպես կազմելով այն հառաջադիմական վիճակը, որուն հայտարար և շոշափելի նշաններն ամեն օր կ'երևին հին ու նոր աշխարհներու մեջ:

Արդ՝ կա Արևելքի մեջ ազգ մ'ը դարերն 'ի վեր մտապես և բարոյապես սովահար ժողովուրդ մ', որ Ասիական Թուրքիայի մեջ և այլուր հազիվ իր լոկ անունը և կրոնքը կրցած է պահել: Կը բնակի երկրի մը մեջ, ուր բնությունն իր բոլոր շքեղությունը և առատությունը ցույց տված է: Այս երկրին մեջ կան բարձրաբերձ ծառերու անտառներ, որք ամառն արևու ջերմության թափը կ'ամոքեն, և բնության գոգը հանգչելու հրավեր կը կարդան հոգնաբեկ հողագործին և արևահար ուղևորին...

Հրաբուխներու պայթումը, երկրիս ցնցումը, հրդեհը, սառնակույտերու հալումը, գետերի հորդումն և քաղաքներու ողողումն, պատերազմը, սովը, ժանտախտը եթե միսթիգական սրամտությամբ մը մարդկային վիշտերու վրա խորհողներու համար խորհրդավոր իրողություններ, անըմբռնելի պատահարներ կ'երևին և կը դիմագրեն մարդկային սեռի հառաջադիմության և բարօրության, և եթե այս խորհրդավոր իրողություններու նահատակները սփոփելու բավ է ամեն սիրտերու անկեղծ

ջախումը, ձեռներու փրկարար կարկառումը, բազկներու բացվիլը. մեկ խոսքով մարդերու համերաշխաբար միանալ և գործելը, ո՛րքան ավելի նվիրական պարտք է Հայերու միանալ, համերաշխությամբ ուխտել՝ պատասխանելու համար այն դեպքերու դիմագրության, որ հայտնի են, որոնց ուժե՛ հետևելը գիտենք, և որոնց սակավ առ սակավ հաղթելու համար բավական է անձանձիր աշխատիլ և չհուսահատիլ խոչընդոտներու առջև:

Ժամ է արդ. Հայե՛ր, ցուցընելու թե Իզմիրցիք ևս գիտեն զոհվիլ վշտացումով մ՝ և աշխատիլ գաղափարի մը համար:

## ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ի ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

...Անկեղծապես համոզված եմ, որ եթե մամուլն ազատ ըլլար, եթե խոսելու, խորհելու, գրելու, տպելու, հրատարակելու բացարձակ ազատությունն իբր իրավունք ճանչվեր, մեր ազգին մեջ երևան պիտի գային տաղանդներ. ինչպես հանճարներ իսկ, որք այսօր կամ սաղմնական վիճակի մեջ են և կամ բոլորովին պահված և անհայտ: Քրիստոնեության ծագումեն 'ի վեր նշանավոր անձինք, իմաստասերներ, գիտուններ, բանահյուսներ մարդկային բանավորության ազատությունը հռչակած են խոսքով և գործով: Պատմաբաններն և փորձառությունը հաստատած են, թե մամուլի ազատությունը, սանձարձակ ազատությունը ժողովուրդներու և տերություններու փոխադարձ իրավանց առաջին երաշխավորությունն է. քաղաքական և քաղաքային ընկերություններու անդորրության և բարօրության պատվարն է. թե այն ընդմիշտ կը գոցե ընկերային ցընցումներու դուռը և մեղմիկ հառաջադիմելու փրկավետ սկզբունքը բարուց և սովորությանց մեջ կը տեղավորե...

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

# ՁԱՅՆ

*...Երիտասարդնե՛ր,*

*Դուք, ո՜ Ազգին ապառնի պայծառության, լուսավորության և վերակենդանության հույսերը, դո՛ւք նաև բարեհաճեցե՛ք քանի մը վայրկյան կանգ առնելու և ճակատնիդ շոշափելու, և խորհելու մեկմը թե ի՞նչ էք դուք և ի՞նչ են ձեր անհրաժեշտ պարտականությունները: Ձեր թշվառ և տարագիր Ազգը մեյմ՝ աչվըններնուդ առջև առնելով, անոր անցյալ և ներկա կացությունը նկատելով, ապառնիի մեջ անոր ի՞նչ լինելիքը մեյմը... գոնե վայրկյան մը խորհեցե՛ք:*

*Տեսե՛ք մի անգամ անոր ցիրուցան վիճակը, նկատեցե՛ք մի անգամ զայն շրջապատող մթնոլորտին գեղնությունը..... փոթորիկի նշանները օրեօր շատնալու վրա են, ո՜ արիասիրտ հայկազուն երիտասարդնե՛ր, և Ազգը մեծ խռովամբ կը սպասե ձեր օժանդակությունը այն օրը՝ երբ Ազգային նավը գուցե վարհուրելի ալեկոծության մեջ սկսի տարուբերիլ և սկսի տեղալ իր վրա հազարավոր մահացու շանթեր, խավարի անոր մթնոլորտը և կորսնցընե իր ազատության հույսին այն մի միայն աստղը՝ որ հիմակու հիմա իր ցոլացմունքը արգիլած չեն անագորույն ամպեր. երիտասարդնե՛ր, ո՜ վարվռուն պատանիներ, Ազգը ձեզմե և միայն ձեզմե կ՚սպասե իր ազատությունը անողորմ բախտին ճիրաններեն՝ որոնց մեջ այժմ գետ կը հեծե, և կարեկցություն շարժող հայեցվածքով առ ձեզի կը նայի..... ձեզ..... Ներեցե՛ք ինձ... ձեզ, որ փոխանակ ազգին այս դժնդակ կացությունը տեսնելու և անկեց կենդանություն առած ձեռվըններնիդ՝ գեթ ի անոր օգնության կարկառելու, ամեն տեսակ ունայնությանց ետևե կը վազեք և ձեր անգին ժամանակը կը կորսնցընեք առանց ձեր հազարավոր պարտականությանց մին կատարելու..... Երիտասարդնե՜ր, ալ բավ սեպեցե՛ք ձեր սրտին ունայն հաճոյքը համար այսչափ աշխատելնիդ, բավ սեպեցե՛ք ալ գոռոզացյալ և ամբար-*

տալան օրիորդաց այնքան պաշտամունք մատուցանելնիդ, հեռացե՛ք ալ սա կուռքերեն, որոնք ձեր սիրույն արժանի չեն, քանի որ չեն սիրեր իրենց ազգը, քանի որ չեն ճանչնար իրենց պարտականությունը, և քանի որ ճշմարիտ վեհանձնությունը չի տիրեր իրենց կուրծքերուն մեջ, և չը-ստիպեր զիրենք, որ զձեզ փոխանակ խաբելու խաբխբելու, սիրեն զձեզ անկեղծաբար և թողուն զձեզ ալ, որ փոխանակ ձեր ամեն ժամա-նակը զիրենք շողոքորթելով անցընելու, ազգերնիդ սիրեք և անոր սիրույն համար աշխատիք.... Երիտասարդնե՛ր, հեռացե՛ք ալ այն ամեն օրիորդ-ներեն, որք ձեր սրտերը հափշտակելու և զձեզ ոտքերնուն առջև ինկած տեսնելու համար՝ ամեն անթիվ միջոցներով կ՚աշխատին պարզությունե հեռանալ և ինքզինքնին հրեշտակային գեղեցկությամբ զարդարել, գույ-նզգույն ծիրանիներով և ամենաթեթև զեփյուռներե տարուբերվող բե-հեզներով զգեստավորել..... հավատացեք խոսքին օ խեղճ պատանիներ, թե ճշմարիտ սերը չի կրնար գտնվիլ հոն՝ ուր զարդասիրությունը իր գահը կանգնած է, սերը պարզություն կը սիրե, և ուր որ պարզություն չկա, հոն խաբեությունը կը տիրե, և կործանում է միայն իր ամենեն ընտիր նվերը, զոր շուտ կամ ուշ պիտի մատուցանե իրեն մոտեցողին:

Երիտասարդնե՛ր, մի՛ խոժոռիք ինձ դեմ, վասնզի ես զձեզ ավելի փառավոր աշխատության մը հրավիրելու համար այսօր ձայնս կը բարձ-րացնեմ. քա՛վ լիցի, որ ես զձեզ արգիլող մը լինիմ ճշմարիտ սիրո են-թականեր լինելե, կը կրկնեմ, քա՛վ լիցի, որ ես չի փափաքիմ տեսնել զձեզ սիրված և հարգված այնպիսի օրիորդներե, որոնց կուրծքը ազգա-սիրությամբ լցված է, և իրենց բոլոր փառքն ու վեհանձնությունը միայն իրենց ճակտին և սրտին կը կրեն, քան թե իրենց հագուստին... այսպիսի օրիորդները ճշմարիտ հրեշտակներ են՝ որոնց սիրույն արժանացողները թշվառություն երբեք չեն ճաշակեր, և իրենց ժամանակը կրնան ազգին նվիրելու և անոր սիրույն համար աշխատիլ, ուստի, ալ բացե՛ք աչվներ-նիդ և երբեք մի՛ մոռնաք այն օրիորդաց, որք զձեզ կ՚արգիլեն ազգա-սիրական պարտավորություններե, և իբր կլլող հուր կը տոչորեն զձեզ, եթե մի անգամ իրենց ճիրաններուն մեջ իյնաք:

Հապա դարձուցե՛ք աչերնիդ ամեն կողմ և փնտռեցե՛ք ձեզի կենա-կից այնպիսի օրիորդներ, որոնք ձեզի օժանդակ լինին ամեն ազգասի-րական գործերու մեջ, այնպիսի օրիորդներ, որոնք պարզությունը չի զոհեն կործանիչ զարդասիրության, այլ մանավանդ չի զոհեն զձեզ և ազգերնին իրենց փառասիրության:

Երիտասարդնե՛ր, ճշմարիտ վեհանձնությունը կ՚ուսուցանե, թե

մարդս փառավոր աշխատության մեջ գտնվելու է 'ի պարծանս մարդկության և իր Ազգին......

Աշխատությանց ամենեն փառավորը Ազգային բարեկարգության համար աշխատիլն է։

## ՀԱՅ ԱԶԳ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### Հոդված Գ

Այո՛, ո՜ համարյուն եղբայրնե՛ր, Հայաստանի թշվառ և տարաբախտ զավակնե՛ր, այո՛, այսօր մեր կղերին ՄԵԾԱԳՈՒՅՆ մասը շահամոլ, սեփականասեր և մարվոք կրոնավորներն բաղկացյալ խումբ մի է, որոնց առջև գետ կը ծնրադրե հայ ազգը և միանգամայն յուր զավակներուն բերնին հացովը նոցա շահամոլութենը կը պարարե։

Սանատուբ և Բահիզի կղզիներուն կապապաշտ ժողովուրդներեն ալ ավելի խեղճ է այսօր մեր ազգը. գոնե նոցա պաշտած կուռքերը. որոնք խոզի մեկ ոտքով կը բավականանային, հիմա բոլորովին երես թողված են, գոնե նոցա քուրմերը, որոնք իրենց հոտին ամեն մեկին կենաց վրա անգամ իշխանություն ունեին, հիմա կատարելապես իրենց իշխանութենե զրկված իրենց օրական պարենը համեստությամբ կը շահին և ալ բռն չեն ժողովուրդյան վրա, և վերջապես գոնե այս երբեմն իրենց քուրմերուն պաշտամունք մատուցանող հեթանոսները լուսավորության շնորհիվ ճանչցած են իրենց ազատությունը և այսօր մեզի նման ալ չեն պաշտեր իրենց կղերը։

...Ուրեմն խոսինք մենք մեր կղերին պակասությանց վրա օտարները խոսելեն առաջ, և ասանկով թող ապանի դարերու մեջ հիշվի այս դարս հայոց համար իբր ազատախոսության դար, և ոչ թե ասոր հակառակ նախատանաց ենթակա լինիմք վատորեն լռություն պահելնուս համար այնպիսի հանցանքներնուս և հիվանդություններնուս վրա, որոնց առջևը եթե շուտով չառնվի, վախճանը անբուժելի պիտի լինի, և ո՜հ, ալ ան ատենը ի՞նչ օգուտ պոռալ, կանչել և ուրիշներու կարեկցության դիմել։

Հայե՛ր, արդեն ժամանակը անցած է, և մեզ կամ դեպ 'ի ճշմարիտ բարեկարգություն դիմելեն և կամ կորսվելեն ի զատ ուրիշ հույս մնացած չէ, մեր բանը արդեն լմնալու մոտ է։ ՄԱՀԸ յուր թևիչքը մեր շուրջը սկսած մեր ծուլությունեն և դանդաղկոտությունեն իրեն համար շահ կսպասե, արիանանք ուրեմն և փառավոր կյանք մի ձեռք անցնելու փափագեն

ավելի մահվան ձեռքեն ազատելու համար հարկ եղած միջոցները ձեռք առնումք, առանց աջ կամ ահյակ ծռելու ճակատնիս բարձրացունեմք, անվեհեր լինիմք, և մեր վատ թշնամիներնուս ցըցունենք մեյմ ինքզինքնիս, և հայտնեմք նոցա, թե հայությունը մեռած չէ, ցուցընենք նոցա, թե որքան դյուրակործանելի և խարխուլ են իրենց ամբարշտական պարիսպները, և վերջապես հայտնեմք, թե հաղթությունը միմիայն ճշմարիտ ազգասիրաց վերջին մրցանակն է։

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ

**Մեծապատիվ վարդապետ,**

Պարոն հրատարակող *Հյուսիսափայլ* օրագրի.

*Մարդկության պատմությունը չէ ցուցանում մեզ ոչ մի դար և ոչ մի ժամանակ, ուր հանճարեղ մարդերի լուսավոր մտածությունք և բարոյությունք հանդիպած չը լինեին զանազան ընդդիմությունների և հակառակությունների, ուր տգիտությունը և խավարը ոտքի ելած չը լինեին ճշմարտության լույսի ընդդեմ։ Ասես թե մի բարոյական հարկավորություն էր մեր մարդկեղեն աշխարհի մեջ, որ ճշմարտությունը պատերազմելով մոլորությունների հետ, ամրացներ յուր ջլերը և հաղթություն զորանելով կարողանար արժանապես ընդհատել յուր հաղթական հանդեսի մեծությունը։ Անցյալ դարերի մեջ պատահած բարոյական պատերազմները ներկայանում են մեր լուսավոր օրերի դատաստանի առաջև, մեր ընելով ժամանակի ահավորությանը և ողայությանը...*

## ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԵՎ ՄԽԻԹԱՐՅԱՆՔ

*Վկա է պատմությունը, որ ապստամբությունք, խռովությունք, սպանությունք, հրկեզք, հափշտակությունք և այլ սոսկալի մոլությունք ծնեցան բռնակալություններից։ Բռնակալական հոգին, որ պաշտպան է ստրկության. բռնակալությունը, որ չկամի խոստովանել մարդկային հավասարությունը, անիրավաբար մտնելով ուրիշի ստացվածքին և իրավունքին, առաջին անգամ մերկացուց երկաթը անզորի և անպաշտպանի պարանոցի վերա։*

*Բռնակալությունը, դահիճ դառնալով մարդկային հոգու ազատ կարողություններին, ջուր է տալիս և աճեցնում է չնչին վնասակար և ամարդի*

ընդունակություն և մոլություն, որոնց կարգումն են կեղծավորությունը, սուտը, դավաճանությունը և այլ սոցա նման արատներ, որով զրահավորվիլ հարկադրվում է ամեն մի ստրուկ մարդ, յուր դույքը և բարեկենդանությունը մի կերպով ապահով կացուցանելու համար բռնակալության երեսից... Եվ ազատություն ասացյալը ինչպես ասել ենք սեպհականություն լինելով ամբողջ մարդկության, սորա յուրաքանչյուր անդամը հավասարաչափ ունեի նորան, և այլապես մեծանալու ծովանալու չէր մի անդամի ազատություն, եթե չը խլեր նա մի այլ յուր պես մարդկության անդամներից։ Այս մի անժխտելի օրենք է մարդկեղեն աշխարհի մեջ, որի միլիոնավոր ապացույցքը ամենայն մարդ տեսանում է, որ աչք ունեի տեսանելու...

Ի՞նչպես ուրեմն հառաջացավ Եվրոպայի լուսավորությունը. թող խոսե պատմությունը. եվրոպական մարդկության ույժը և զորությունքը քամվեցան խաչակիր արշավանքներից, ասպետները ընկան Արմիդայի ձեռքը[1]. խեղճությունը նյութականապես պատճառ տվեց կամ լավ ասել, որպես մի խթանով ծակեց քնած ազգերի կողքը. զարթեցան և նայեցան յուրյանց տխուր և վհատեցուցիչ անցյալի վերա, հոգ տարան բարվոքել ներկան, որ սա ապագայումը գեղեցիկ և երջանիկ օրերի մայր դառնա։ Ազգերը, որ մինչև այժմ առաջնորդվում էին հոգևոր դաստիարակների ձեռքով, զոհանալով յուրյանց հոգևորների աշխատությենից, հրաժարվեցան այնուհետև նոցա առաջնորդության տակ մնալուց. ինքյանք սկսեցին լինել յուրյանց դաստիարակը և այստեղ էր ահա Եվրոպայի այժմյան լուսավորության սերմը, սկիզբը կամ զարգացումը։

Այս մեծակշիռ հեղափոխության սկիզբը տեսանում ենք տասներեքերորդ դարումը, որ մինչև տասնեհինգերորդ դարը խմորվելով, վերջապես այս դարումը դուրս երևեցավ ամենայն անդից հեղեղի հորձանքներով։

Այն եվրոպական լուսավորությունը, որին ձրիաբար կարող է այժմ մասնակից լինել մարդկության ամեն մի անդամը, արյունի գին արժե Եվրոպային։ Սա ամբողջ կես դար մանուկ զորությամբ սուրը ձեռքին պատերազմեց մի իրավունքից զրկված հզոր պառավի հետ, որի գիշերատեսիլ զինվորքը շատ էին քան թե լուսավորության որդիքը։ Արյունով լվացվեցավ Եվրոպան այս ընդհանուր գործողության ժամանակ. զարմանալի բան. ճշմարտությունը և լույսը, ասես թե միշտ պիտո է պատերազմելով հաղթեն խավարին և ստության և հափշտակեն հաղթության ձիթենին...

# ՆԱՄԱԿ ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ

Փարիզ, 4/16 սեպտեմբերի, 1859 թվականի

Պատվական հրատարակող.

*Հավաստի եմ, որ ցանկալի կը լիներ Ձեզ իմանալ թե այն թողության հրովարտակը, որ Ֆրանսիացոց կայսր Լուդովիկոս Նապոլեոն Երրորդը արձակել է Վիլլաֆրանկյան խաղաղութենից հետո[2], անցյալ օգոստոսի 16-ին, ի՞նչ ընդունելություն է գտել այն աքսորականների կամ տարագիր գնացածների կողմից, որոնց վերաբերվում էր այդ թողության հրովարտակը։*

*Արդարև այդ հրովարտակը վկայությամբ հաստատում է այժմյան կառավարության անձնավստահությունը, այն ապահովությունը, որ նա յուր անուրանալի մեծ հաջողություններով ստացել է ֆրանսիացոց սրտերի վերա, այլև Նապոլեոնի ուղիղ հաշվարարությունը, արտաքին հաղթությենների պարծանքով ճնշել և անհետ կացուցանել ներքին ազատության ցանկությունը ֆրանսիական ազգի մեջ—բայց դորա փոխանակ, այն մերժողությունը, որ կայսերական թողության հրովարտակը գտել է համարյա՛ թե բոլոր փոքր ի շատե նշանավոր քաղաքական աքսորականների կողմից, ապացուցանում են թե ի՛նչպես ամուր և հաստատ էր դոցա սրտի վկայությունը քաղաքական բաների մասին, կամ թե ի՛նչպես խորարմատ էր նոցա տեսությունը դեպի 1851 թվակ. դեկտեմբերի 2-ին դավաճանությամբ[3] և բռնակալությամբ գործակատար առաջնորդը ֆրանսիական հասարակապետության, այսինքն դեպի Նապոլեոն Երրորդը։ Երեք անգամ արդեն Փարիզի մեջ* Կոնստիտուսիոնել *անունով օրագիրը համարձակվել է հրատարակել զանազան մերժողական նամակներ ֆրանսիական աքսորականների բերանից, որ լսել ևս չկամեին Նապոլեոն կայսրի թողության հրովարտակը։ Այդ նամակները կարող չեն այսուհետև վնասել Նապոլեոնի հաղթությանը։ Ինչ որ Նապոլեոնը խլել է ֆրանսիական ազգից, դորա փոխարենը տվել է նա այն հատուցմամբը, որ հատուցել է նոցա։ Այն հոգեպայծառ խնդությունը, որով Փարիզը անցյալ օգոստոսի 15-ին[4] ընդունեց յուր, Իտալիայից վերադարձած կայսրը, չէ թողում այդ մասին ոչինչ երկբայության տեղիք։ Դեկտեմբերի 2-ի քաղաքական դարանագործը ամենևին արժանի է այսօրյան ֆրանսիացոց ազգին։ Ձեզ հայտնի կը լինի Լուի-Բլան, Վիկտոր Հյուգո և Էդգար Կինե տարագիր եղած ֆրանսիական մատենագիրների պատասխանիքը՝ ընդդեմ կայսերական թողության հրովարտակին։*

Այժմ կամենի Ձեզ հաղորդ կացուցանել մի այլ պատասխանական նամակի, որ գրած է գնդապետ Շարրասը Կայեննից (Ֆրանսիական Գյուանայի[5] մեջ Հարավային Ամերիկայում)։

Ահա դորա խոսքերը.

«Հայտնի լինի Լուդովիկոս Բոնապարտեին.

«Դուք հրատարակում եք ընդհանուր թողության թուղթ. դուք ներում եք այն հազարավոր քաղաքացիներին, որ վաղուց ահա ձեր ձեռքով դուրս վարված դեպի օտար աշխարհ, Աֆրիկայի սաստիկ կլիմայի մեջ և Կայեննի ժանտախտային ճախինների մեջ, անցուցանում են մի ողբալի կյանք։ Սոքա պաշտպանում էին ձեր երեսից այն օրինադրությունը, որ հառաջացել էր ազատ և ընդհանուր դատողության իրավունքից (per le droit de suffrage universel), որ և դուք հանդիսավոր երդմամբ հանձն առաք հավատարմությամբ պահպանել, բայց հետո դրժողապես քակտեցիք։ Սորա համար հանդիպեցավ նոցա ձեր վրեժխնդրությունը։ Այժմ ցուցանում եք նոցա շնորհ. զարմանալի՜ բան։ Հանցավորը ներում է նոցա, որ եղել են նորա ամբարշտության զոհ։ Եվ ա՛յս հատկացուցիչ բնավորությունը պետք էր ձեզ փոխ առնուլ այլանդակված Հռոմի կեսարներից։ Հասարակաց դատաստանի և աշխարհի պատմագրության առաջև, չկամիմ երբեք հանձն առնուլ այդ խարդախ փոխանակությունը։ Այն մարդուն, որ լուծել է իրավունքը, անպատշաճ է ողորմություն ցուցանել նոցա կողմից, որ պաշտպանել են այդ իրավունքը։ Ձեր թողությունը կամենում է անպատվել նորանց, որոնց վերաբերվում էր նա։ Նա ծածկում է յուր մեջ մի որոգայթ, մի դարանագործություն, ինչպես ձեր բոլոր խոսքերը, ինչպես ձեր ամեն մի երդումը։ Փույթ չէ ինձ այդ։ Բայց ես որպես փոխանորդ ժողովրդի, որի բերանը խցկել եք դուք, որին փակել եք դուք բանտերի մեջ, տարագիր եք արել, ես որպես պաշտոնակալ, որին զրկել եք դուք յուր արժանավորություններից, հալածելով նորան մինչև նորա աքսորանքի մեջ, ես հրատարակում եմ ձեզ, թե կարող չեմ թողություն տալ ձեզ։ Ես չե՛մ ներում ձեզ այն 15,000 մորթածների արյունը դեկտեմբերի ամսումը, այն ձեր բանտերի և աֆրիկական դետնափորների մեջ, աքսորանքից, չարչարանքից ու տանջանքից սպառված ֆրանսիացոց կորուստը։ Ես ներում չեմ ձեզ այն ամբարիշտ ուրացությունը, որով ուրացաք դուք այն օրինադրությունը, որի անունով երդում էիք կերել, և այն հասարակապետությունը, որ կրկին պարգևեց ձեզ մի հայրենիք։ Վերջապես, ներում չեմ ձեզ այն հանցանքը, որ դուք, ընդհանուր դատողության իրավունքը խարդախությամբ և սպառնալիքով անարգեցիք, և իմ հայրենիքը ծառայության լծի տակ ձգեցիք և նորա

*բարոյականությունը (բարքուվարքը) ավերեցիք կամքով և գիտությամբ։ Արդարև, հեռի յուր ընտանիքից, հեռի յուր հայրենական աշխարհից, ցուցանում է կյանքը ինչ ինչ դառնություններ, բայց դա ստրկության մեջ պիտո է լիներ ավելի դառն։ Այն օրին, երբ ազատությունը, իրավունքը և արդարությունը, այս վսեմական աքսորականները, կը վերադառնան դեպի Ֆրանսիա, որ պատժեն քեզ ամենաարդար պատուհասով, այնուհետև կը վերադառնամ և ես, այդ օրը թեպետ երկարանում է, բայց նա կը հասանի, և ես գիտեմ սպասել»։*

*Ձեզ հարգող*

*Հայրենակից ԾԱՏՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆՑ*

## ՆԱՄԱԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԻՆ

Բեռլին, 9/21 մայիսի, 1859 թվականի

Ազնվամիտ Հրատարակող *Հյուսիսափայլ* օրագրի,

*...Այսպես ահա Հումբոլդը է մի հարազատ մարդկության օրինակ. և սորանով իսկապես այնքան ես արժանի նմանողության, ինչքան որ երկյուղ կա այժմ, մի՛ գուցե ներկա ժամանակիս գիտությունը դառնա միայնապաշտ, չներող և ֆանատիկոս։ Զուր չէր, որ նորա մանկությունը պատահեցավ այն մտածությունների ահագին հեղեղի միջոցին, երբ Քանթի և Ֆիխթեի հետ միասին գերմանական փիլիսոփայությունը, իսկ Գյոթեի և Շիլլերի հետ գեղեցիկ մատենագրությունը առաջնորդվելով իդեաներից, ոտք կոխեց ուղիղ ճանապարհի վերա և հոգեորվեցավ ավելի վերին գաղափարներով։ Ի՛նչ քաղցր սիրով միշտ և հանապազ վերուղղում էր նա յուր հայացքը դեպի յուր մեծ եղբայր Վիլհելմոսը. և այս սիրու պատճառը էր մանավանդ այն հոգեպայծառ մեծարանքը դեպի իդեաքը, որոնց անձնատուր էր եղել ավագ եղբայրը այնպիսի եռանդով, որպես մի գաղտնասուրբ պաշտոնի նվիրած սպասավոր։ Թող այս գաղափարականությունը եղած լինի երբեմն մի կենդանի զգացողություն մանավանդ, քան թե մի պայծառ տեսություն— բայց դա պարծանք է այդ երկու հոյակապ մարդերի նույնքան ես սրտին, ինչքան որ խելքին։ Արդարև, դոքա էին հարազատ և արդար գերմանացիք, որ յուրյանց քրտնաջան աշխատության մեջ երբեք բաց չեն թողած ձեռքից բարոյական զգացողությունքը։ Թեև նոցա վաստակները մի մասնով պատկանում էին բաժան բաժան սահմանների, այնուամենայնիվ նոցա առա-*

չէ գրած էր միևնույն նպատակը— այսինքն գաղափարը մարդկային ազատության և այսպես մարդկության, այն գաղափարը, որի համար գերմանական ազգը միշտ պարտական է պատրաստ լինել զոհ բերելու յուր սրտի արյունը...

## ՆԱՄԱԿ «ՄԵՂՈՒ»-Ի ԽՄԲԱԳՐԻՆ

Ազգս հայրենակից Գ. Սրվանձյանց.

...Ոչ երբեք պիտի հառաջանա ազգը, հետևելով հին խոսքերի գրության։ Ոչ երբեք պիտի հառաջանա ազգը, հետևելով մի տեսակ մարդերի վարդապետության, որ թեև զգում էին անցածի և հնի ամլությունը, բայց, սրտի և հոգու քաջության պակասությենից, վախենում են միանգամայն կտրել բաժանել յուրյանց անձը ախուր անցածից և ոտք կոխել վճռարար նոր սահմանագլխի վերա, ուր մանուկ առուգությամբ ծածանում է հառաջընթացների դրոշակը։ Չէ կարելի միևնույն ժամանակ երկու ճանապարհ գնալ, միմյանց հակառակ ուղղությամբ՝ իսկ երկուսի մեջը մեզ երևում է մի անթարգմանելի մոլորություն։

Այո՛, պատմությունը վկայում է մեզ, թե վճռական հնարները բերում են անժամանակյա անախորժությունք. բայց նույն պատմության մյուս երեսի վերա տեսանում ենք, որ այդ առժամանակյա անախորժությունների գնով գնվում է ապագան։ Կեսկատար հնարները միշտ վընասեցին մարդկության, հեռացան հին գրութենից, բայց և նորին չըհասանելով պատկերացուցին մի խղճալի վիճակ վեհերոտության, մի անմերժելի ապացույց այն բանին, թե այդ հնարների գործ դնողքը ազատված չէին դեռևս անցածի ազդեցությունից։

Բոլոր բնական և մարդկային օրենքների մեջ գտանում ենք միայն այո՛, կամ, ո՛չ. երրորդը չկա։ Չմոռանան այս խոսքը այն ազգասերքը, որ յուրյանց սերը դեպի ազգը հայտնում են նորա պակասությունքը քողարկելով, որով անուղղակի կերպով մեղանչում են ազգության ընդդեմ, ապա ուրեմն արժանի յուրյանց պաշտպանած հանցավորի հետ պատժակից լինելու։

Չէ կարելի իրավապասություն քարոզել և անիրավությունը պաշտպանել։

Չէ կարելի հառաջադիմություն քարոզել և անդամալուծի պես բևեռացած մնալ մի կետի վերա։

Չէ կարելի լուսավորություն քարոզել և ամենայն ջերմեռանդությամբ խավարի մեջ թարթափել։

*Չէ կարելի մաքրություն քարոզել և ապականության ծովի մեջ լողալ։*

*Չէ կարելի նորի շինությունը սկսանել և անցածի հիվանդանոցից օգնականք առնուլ։*

*Չէ կարելի ազատություն քարոզել և խղճմտանք բռնաբարել։*

*Այսպիսի «չէ կարելիներ» հազարավոր կան. խնդրում ենք այս բաների վերա մի փոքր մտածել։*

*Եթե մեք ստուգապես ցանկանում ենք ազգի հառաջադիմության, ապա ուրեմն պիտի քննենք և քքրենք ազգի բարոյական տարրերը. նորի շինության պիտանին պիտի առնունք, իսկ փտածները, որ մինչև այժըմ ևս արգելք են եղած ազգի ընթացքին, պիտի մերժենք և դատապարտենք։...*

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԸՎԱՃՅԱՆ

30 դեկտ[եմբերի] 1860,
11 հունվ[արի] 1861 Նեապոլիս

Արգո հայրենակից
Գ[արոն] [illegible] Սրվանձյան

*Մրրիկը չթողեց ինձ ուղղակի նավել դեպի Մարսեյլ[6] հարկադրվեցա ոտք կոխել Սիկիլիա կղզին։ Երբ մեր շոգենավը մոտեցավ ծովեզրին, Մեսսինայի նավահանգստում կանգնած էր մի ահագին բազմություն աշխույժ երիտասարդների, որոնց կարմիր շապիկը վկայում էր, թե պատկանում են իտալական Հերոսին՝ Գարիբալդիու բանակին։ Այդ վառվռուն երիտասարդների դեմքի վերա գծագրված էր ուրախություն և խղճի հանդստություն. նոցա ճակատը փայլում էր արժանավոր պարծանքով։*

*Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Գարիբալդի, անլուռ աղաղակում է հասարակ ժողովուրդը. կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Վիկտոր Էմմանուել, գոչում են քաղաքացիք, այսինքն միջնակարգ ժողովուրդը։ Այս ուրախական բացականչությունքը, թեպետև հառաջանում են տարբեր սկզբունքներից, վերաբերությամբ դեպ 'ի Գարիբալդի և դեպ 'ի Վիկտոր Էմմանուելը[7], բայց «Իտալիան» ամոքում է այս խոշոր տարբերությունը և այս պատճառով ևս հիշյալ երկու կացությունքը գործ տեսան և ամոթահար հաղթահարեցին ազնվական կացությունը, որ հերիքանալով անձնական*

դյուրությամբ, Նեապոլիտանյան նեղսիրտ ապսոլյուտիզմի ժամանակ, երբ չկարողացավ դեմ դնել ազգի միջից դուրս արձակված դիմագրավ զորության, դեռ մեծ տհաճությամբ լսեց և լսում է անլռելի «կեցցե-ները»։

Ահա մի նոր խրատ մարդկության, մի սոսկալի ապացույց այն բանին, թե բռնակալության արվեստի դժոխային մեքենան հանգչում է անձնասեր և եսասեր ազնվականների ուսերի վերա։ Այսուհետև ամեն մի բանական մարդու պարտքն է միօրինակ զարշել և զզվել, որպես բռնակալության ուժի պատկերացույցից, նույնպես և նորա շրջանակից և պաշտպաններից։

Մարդերի իրավունքը և ազատությունը հավասա՛ր է. եթե մինը ավելի ազատություն և ավելի իրավունք ճարեց յուր համար, քան թե նորա ընկերքը ունեին, ասել է թե ուրիշի սեփականությունը գողացավ և հափշտակեց։ Մինի առավելությունը պիտի հիմնվի մյուսների աղքատության վերա. ազնվական կացությունը այսօր անարգություն է մարդկության անունին։ Ազնվականը բռնաբարելով հասարակ ժողովրդի աստվածատուր ազատությունը և իրավունքը, խլում է նորան սեղանապիղծ ձեռքով, և ուրիշները աղքատացնելով, հարստանում է և տիրապետում է ազգի բանականության վերա։ Այս բարոյական ավազակներին մա՜հ բարոյական։

Քանի որ մի ազգ, խեղճ վիճակի մեջ տառապելով, պատմական մահին հետ մարտ դնե և քանի որ չէ հաղթել ու չէ դուրս եկել ներկայից, ապագայի մեծ ճանապարհը ընկնելու՝ նորան հեշտ չէ հասկանալ և արժանապես գնահատել յուր միջ հայտնված երևույթքը. իսկ երբ բավական ճանապարհ կատարելով դեպի ապագան, կամենա ետ նայել, յուր անցածի վերա, յուր կատարած ճանապարհի որպիսության վերա, այն ժամանակ կտեսնե ամենայն բան և կարող կլինի գիտակցաբար հասկանալ թե ո՞վ էր յուր բարեկամը և ո՛վ էր թշնամին։

Մեսսինայի դղյակը դեռևս կրում է յուր պարսպի վերա Նեապոլիտանյան խայտառակ դրոշակը. 4500 զինվոր, հավատարիմ մնացած Ֆրանսիսկոս երկրորդին, փակված են այնտեղ և նոցա առաջնորդում է Մայոր Ֆեռգուլան։

Մեսսինայի քաղաքական կառավարությունը, որի ծերակույտի վերա ծածանում է Վիկտոր Էմմանուելի դրոշակը, երբ քանի մի անգամ առաջարկել է պ[արոն] Ֆեռգուլային անձնատուր լինել, նա մերժելով այս առաջարկությունը, սպառնացել է ռմբակոծել քաղաքը, եթե ստիպեն զիջանել դեպի այդ պատերազմական անարգությունը։

Տեսե՛ք, թե մինչև ո՛ր աստիճան կատաղության հասանում է եսականությունը և անձնական շահի բամակից գնալը, որ հայրենիքի փրկությունը, ազատությունը, միությունը և ապագա երջանկությունը համարում է պատերազմական անարգություն։ Նորա փույթը չէ, որ արյունաթաթավ Իտալիան ավելի քան կես դար լլկվեցավ եգիպտական չարչարանքի մեջ՝ ազնվականը ցույց է տալիս գործով, որ թե հնար ունենար, ապա ուրեմն անշուշտ խեղդելու էր Իտալիայի նորաբողբոջ ազատությունը դեռևս խանձարուրքի մեջ։

Իտալիայի ազատության պատմության մեջ պ[արոն] Ֆեռգուլայի և նորա նմանների անունները պիտի նույն տեղը գտանին, ինչ որ մեր պատմության մեջ Վասակը, Մեհրուժանը, Կիրակոս քահանան և Վեստ Սարգիսը։

Երկու զինվորյալ նավեր, մինը ֆրանսիական, իսկ մյուսը անգլիական, կանգնած են Մեսսինայի ծովածոցի մեջ, որպես պահապան մանուկ ազատության։

Որչափ կարողացա հարց ու փորձ անել, որ գղյակի մեջ փակված զորքի վիճակը շատ ողբալի է և բարոյապես և նյութապես։ Տառապում են սովից և գանակոծ լինելուց։ Պ. Ֆեռգուլան դրամ է խնդրել քաղաքական կառավարութենից զորքի անունով. քաղաքը պատասխանել է, թե Մեսսինան կամ Իտալիան զորք չունին այնտեղ՝ եթե՝ ունի մի Բուրբոն, թող ուրեմն պ. Ֆեռգուլան դիմե դեպի նա։ Այսչափ նեղության դիմանում է այս անպարծանք պարոնը ասելով, թե չէ պիտո զենքը ցած դնել, մինչև որ Ֆրանչիսկոս երկրորդը անձնատուր չլինի։

Այդ պայմանաժամը հեռի չէ. այսօր չորրորդ օրն է, որ ռմբակոծում են Գայեթան՝ Սպանիան և Հռոմը երկու շոգենավ ունին պատրաստ Գայեթայի մոտակայքում թշվառ թագավորի, թշվառ, և ոչ ոքին պիտանացու կյանքը փրկելու համար։

Մեսսինա մնացած երեկոյիս (դեկտեմբ[երի] 26 հին ոճով) գնացի տեսնել թատրոնը և երբ ընդհատության միջոցին դուրս եկա դահլիճտունը թաբաք ծխելու, այն բավական ընդարձակ դահլիճի մեջ, ուր գտանվում էր ավելի քան թե երկու հարյուր հոգի, կար մի մեծ աղմուկ և շփոթ։ Մտածեցի մտանել բազմության և հասկանալ պատճառը, բայց հազիվ թե կարողացել էի ոտքս շարժել տեղից և ահա բազմության գլխի վերա շողացին երկու սուր։ Շրջակա բազմությունը՝ հեռացնելով միմյանցից այդ ջերմացած գլուխները, հնար տվեց մեզ հասկանալու թե սուր մերկացնողքը երկու սպայք էին, մինը Վ[իկտոր] Էմմանուելյան, իսկ մյուսը բուրբոնյան, որ գղյակից թատրոն էր եկել և դահլիճում

հանդիպելով անպատվության՝ կամեցել էր արյունով լվանալ յուր անարգությունը։

Թե ուր տարին նորան և ինչ եղավ վերջը, չիմացա, ըստ որում թատրոնական գործողությունքը սկսված լինելով, մտա թատրոն և մյուս օր ուղևորվեցա դեպի Նեապոլիս։

Նեապոլսի մեջ համարյա թե նույն չափով կան այն երեք միմյանցից տարբեր հասկացողությունքը, որքան Մեսսինայի մեջ. և երևում է, որ այս ընդհանուր է ամբողջ Իտալիային, հասարակ ժողովուրդը Գարիբալդյան, միջնակարգը՝ Վ[իկտոր] Էմմանուելյան, իսկ ազնվականք՝ Թշվա՜ռ Եարնիթացք։

Քաղաքի մեջ փառավոր հրապարակների վերա հոյակապ ճարտարությամբ քանդակագործված արձանքը, որ երբեմն դրված էին Բուրբոնների փառքի համար, այժմ ջարդ ու փշուր խորտակված թավալվում են փոշու մեջ։ Երևում է, որ սորանից իբր երկու հարյուր տարի առաջ, Արգոսյան ցուցքի ընդդեմ ապստամբության ժամանակակից անցքերը[8], թեթև կերպով կրկնվել են դարձյալ Նեապոլսի մեջ. Ֆրանսիսկոս երկրորդի անվանագիրը, որ դրված էր որևիցե հրապարակական կամ տերութենական շինվածքների ճակատում, այդ բոլորը, առանց ամենայն բացառության, խորտակված են այժմուս և նոցա փոխանակ դրվում է Վ. Էմմանուելի անվանագիրը։ Ամենայն տեղ, սկսած տերութենական շինվածքներից, մինչև գինետունքը, մինչև վարսավիրանների խանութները, ծածանում է Սարդինյան դրոշակը և ազգի բերանը ուրախությամբ արտաբերում է յուր ազատիչների անունները։

Այս հեղափոխությունների ժամանակ հոգևորականությունը շատ կերպով կամեցած է պաշտպանել հին դրությունը, տեսանելով, որ հառաջընթացքը պիտի ոտք կոխեն մինչև Վատիկանի դուռը[9]։ Բայց Գարիբալդին մի կողմից սպառնալով գնդակոծել եկեղեցիքը, իսկ մյուս կողմից հառաջընթացքը ահացուցանելով իտալական եկեղեցու վերանորոգությամբ, որ այսուհետև պիտի դուրս գար պապի իրավասության տակից, հոգևորականությունը գիջել է այս հեղափոխության։ Հիսուսյանք (ճիզվիթները) հրաման են ստացել հեռանալ իսկույն Նեապոլսից, որոց մի մասը լերդապատառ դեպի Հռոմ, իսկ մյուս մասը հրաժարելով եկեղեցական պաշտոն վարելուց, կան դեռ ևս յուրյանց տներում։ Նոցա եկեղեցին խլված է և գտնվում է այլ կրոնավորների ձեռքում։

Նեապոլսի ծովածոցում կանգնած են նույնպես զինվորյալ ֆրանսիական և անգլիական նավեր։

Այսօր պատրաստվում է Նեապոլիս ընդունել Կարինյանո իշխանը,



10—1254

որ Վ. Էմմանուելից կարգված է ընդհանրական տեսուչ Նեապոլսի. ազգային Թիկնապահ գունդը հավաքում է, որ ընդառաջ ելանե յուր նոր գալու իշխանին։ Բոլոր այդ գնդի հրացանների խողովակի ծայրը խրված են վարդի փնջեր, հիանալի և սրտաշարժ տեսարան։

Էգուց կուղղեմ ընթացքս դեպի Հավիտենական քաղաքը։

Այս Հռոմը փորձանք դարձավ մարդկության գլխին։ Ստրկության և բռնակալության փոխադարձ սկզբունքների վերա հաստատված կառավարությունքը իսկույն կերպարանափոխ եղան քրիստոնեական կրոնի ազդեցությունից՝ դորա հակառակ, Հռոմը ստրկությամբ և բռնակալությամբ հիմնված մինչև այսօր հաստատ կացավ յուր սկզբունքին և քրիստոնեությունը ազդեցություն չգործեց նորա վերա։

Բայց Իտալիայի ներկա վիճակը, խելքերի ընդհանուր խմորումը վկայում են, թե շուտով կհնչե և Հռոմի ճակատագրական զանգակը՝ դեպի Հռոմ[13]։ Գուցե թե «ոտքերս թեթև լինի»։

Նեապոլիտանիայի կառավարության հեղափոխությունը արձակեց և մամուլի շղթան՝ մամուլը, մարդկային ազատ բանականության սուրհանդակը, արձակված է կապանքից։ Աղեքսանդր Դյումա (հայրը) գտնվում է այստեղ և հրատարակում է մի օրագիր «Անկախություն» անունով։ Այդ օրագիրը սորանից երեք օր առաջ ասում էր, թե շուտով պիտի ազատվին և Հռոմը և Լոմբարդիան և Հունգարիան և Լեհաստանը։

Այստեղ կան շատ լեհացիք և դեռ ևս օրե օր հավելանում են՝ լսվում է մի խուլ ձայն, որպես թե նոքա կամին կազմել այստեղ մի զինվորյալ լեհական լեգեոն և պատրաստ և կազմ սպասել մի կրակոտ նշանի...։

Ահա այսքան լուր միայն Իտալիո մասին կարող եմ գրել առ այժմ։ Չեմ նախանձում Իտալիայի ազատության, դորա հակառակ առ ի սրտե ուրախ եմ, սակայն տեսանելով նորա ազատությունը և իմ ազգի տկարությունը կրծում է սիրտս և այրում է հոգիս։

Եվրոպայի դեպքերը ի՞նչ վերաբերություն ունին մեզ, կասեն ինձ մի տեսակ դժոխաջեմ մարդիկ, և իրավունք ունին, որովհետև ինքյանք օր ու գիշեր պարապած են յուրյանց թշվառ աբեղաների գործերով, կրոնական վեճերով և միություն խափանելով։

Այո՛. վերաբերություն չունին, կրկնում եմ ես, ինչու որ դուք արժանի չեք վերաբերություն ունենալու եվրոպական ազգերի հետ, անցանել այն փրկության կամուրջը, որից անցնում են ուրիշ ազգեր։

Էտնան և Վեզուվին ծխվում են. Արարատի հին վուլկանի մեջ միթե՞ կրակ կմնա խայտառ... մահաբեր մտածություն...

Մնաս բարյավ, ողջունիր իմ կողմից, որոնց կուրծքի մեջ զարկում է սառուցապես հայկական սիրտ. կեղևով հայ-չմարդերից «Հրաժարելով հրաժարիմ»։

Հարգությամբ Մ. Նալբանդյան

## ԵՐԿՈՒ ՏՈՂ

...Այո՛, գիտենք հարգել ոչ միայն Օուենը, Պրուդոնը, Ֆուրիեն և Ֆոհթը, այլև Շիլլերը, Գյոթեն, Ֆիխտեն, Քանթը և Հեգելը, ճնշված մարդկության այն անմահ բարեկամքը և անտարակույս, պ. Ջամուռճյանի աչքում հերետիկոսները և հերձվածողները[11]։ Բայց երջանկություն և փառք կըհամարինք մեզ, միասին մնալ այդ բոլորի հետ և միասին անհավատ և հերետիկոս կոչվիլ, քան թե բաց աչքով մեր մարդկությունը, մեր մարդկային ազատությունը և իրավունքը ուրանալով, պ. Ջամուռճյանի հետ բռնվիլ բարոյական հարինքից և ճոճալ մի տղայամտութենից դեպի մյուս սոփեստությունը, մի սխոլաստիկականութենից դեպի մյուս աբեղայամտությունը։

Երջանիկ կը համարինք մեզ, հռչակելով մարդկային ազատությունը, իրավունքների հավասարությունը, որոնք ստրկացած են կամ բռնակալների կամ դարավոր ավանդությունների (tradition) որևէ խաժամուժ ամբոխի (և այս կերպով մարդագիր օրենքը շեղված բնականից, ու Մովսիսի տախտակներից[12], այլ այն շավղից, որ բացում էր մարդկային բանականությունը) բամբասվիլ և հայհոյվիլ, քան թե Կրոնական ժողովի օրհնությունը վայելել պ. Ջամուռճյանի շնորհակալության հետ, Պողոս չարագործը եկեղեցական ճանաչելով. հարստահարության կողմնակից լինելու թեությամբ։

Քա՛վ լիցի մեզ. ո՛չ յերբեք։ Պարտավորվածը քահանա ճանաչելով պիտի արհամարհենք քահանայությունը, կամք չունինք. մատնելով չարագործը քաղաքական կառավարության ձեռքը, միմիայն պաշտպանում ենք հասարակաց իրավունքը։

Եթե պ. Ջամուռճյանը երկար տարիներով, հարակցություն ունենալով եզվիտների հետ և շատ անգամ գործիք լինելով նոցա ձեռքում, ամենայն քաղաքական իրավապատության մեջ տեսանում է ինկվիզիցիոն, հանցանքը մերը չէ, այլ յուր տգիտությանը, որ չէ կարողացել մինչև այժմ ուսանել եվրոպացիների փոքր ի շատե ազատ օրենսդրությունքը։

...Ահավասիկ մեք կանգնած ենք այժմ, բաց հրապարակի վերա և, թշնամիների զենքերից անխոցելի մնալու ակնկալությամբ, պատնեշ չենք կանգնեցնում մեր առաջև զանազան սուտ սկզբունքներ, սոփեստական գաղափարներ, որոնց չենք հավատում, որ չենք ընդունում և որ մերժում ենք միահամուռ: Մեք խոսում ենք պարզ, այնպես, ինչպես առանց կարմրելու կարող էինք մեր բանականության հաշիվ ու համար տալ մեր ասածների համար: Բայց և այսպես ոչ երբեք արգելառիթ ենք պ. Ջամուռճյանին, որը յոթը ճանապարհ կատարել Բիլուարտի աստվածաբանությունից դեպի Թեսավրոսի փիլիսոփայությունը, և այս վերջինից դեպի առաջինը:

Մեք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նորա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ:

Բայց այն խեղճ հայը. այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և կիսագրագետ, ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը:

Պաշտպանել այն հայի ատաթուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիվ և գրչով այլ և զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով:

Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսանում ենք ազգի փրկությունը...

...Ազատությունը, այն վսեմակա՞ն աքսորականը, վերստին և վերըստին սրբված արյունով, հրաբորբոք տառերով գրվում է պայծառ ճակատների վերա, իսկ հայը և այսօր չէ կարող կատարելապես դուրս հանել յուր ճակատը սև վերարկուի տակից, ուր դարերով ահա որչափ են ստրկյանք,[13] ազատության բողբոջները մկրատելու համար...

*Հյուսիսային Ամերիկան Հարավային Ամերիկայի միջից ստրկությունը վերցնելու համար[14], ուրեմն ազատության անունով, պատերազմ բացեց Հարավային մասի դեմ. քանզի այս մասը չէր հոժարում վերցնել յուր միջից մարդկության նախատինքը, մարդավաճառ ստրկությունը: Այն ո՞ր սիրտն է, որ համակրություն չունի դեպի Հյուսիսային Ամերիկայի այս դյուցազնական անձնազոհությունը, ո՞ր խղճմտանքն է, որ հաշտ կարող է մնալ Հարավային Ամերիկայի մինչև այժմ բռնած ընթացքի հետ:*

*Բայց, չնայելով այս բոլորի վերա, քիչ մնաց, որ Անգլիան պատերազմ հայտնե Հյուսիսային Ամերիկային. և թե չհայտնեց, ապա ուրեմն ակամա, քանզի հաղթությունքը, որ տանում են այժմ Հյուսիսայինք հարավայնոց վերա, շատ և շատ ծանրանում են Անգլիո սրտին:*

*Անգլիան ուրախ էր, մինչ, սորանից մի քանի ամիս հառաջ, հարված հարվածի քամակից ընդունում էր Հյուսիսային Ամերիկան:*

*Այս ի՞նչ բաբելոնյան խառնակություն է, կարող է մտածել մի մարդ: Անգլիան, այն ազատ երկիրը, որի և պսակյալ գլուխը չէ կարող մխտել վերջին ռամկականին, նորա անձնավոր ազատությունը և իրավունքը, կարելի՞ բան է, որ համակրություն ունենա դեպի Հարավային Ամերիկան, ուրախանա նորա հաղթություններով և տրտմի, երբ հաղթահարված էր ստրկություն քարոզողը, մարդը իբրև անասուն գործածողը:*

*«Այո՛, այո՛, այդ ազատ Անգլիան: Բայց այս չէ բղխում կառավարության հաճույքից. նա ստիպված է...»:...*

*...Տնտեսական խնդիրը միակ խնդիր է մարդու կյանքը և գոյությունը ապահովելու համար. և որչափ ծանր արժեք ունի այս խնդիրը, որչափ մարդը անքակտելի կապված է նորա հետ, այնքան դժբախտ է եղել այդ խնդրի ճակատագիրը: Նա դարձել է մի քար, որի վերա մարդը քանի՛ և քանի՛ անգամ գայթակղեցավ:*

*Վերջին անգամ գոռաց նա, «կեցցե՛ ազատություն, կեցցե՛ հավասարություն, կեցցե՛ եղբայրություն»:*

*— Կեցցե՛, կեցցե՛,— հնչեցին ամեն կողմից բյուրավոր արձագանք:*

*Պատնեշներ շինեցին, փողոցների սալահատակները կողոպտեցին, աղաղակ, խռովություն:*

*«Ի՞նչ բանի վերա եք»:*

— Չես տեսնում. ազատություն, հավասարություն, եղբայրություն, կեցցե՛։

«Կեցցե՛, կեցցե՛»։

— Թո՛ղ կենան, թո՛ղ ապրեն օդի մեջ,— ասաց մինը, որի աչքերը ավելի հեռատես էին։

«Ի՞նչպես, թշվառական դու... վայրկյանի մի... և շան սատակ կլինես հարվածիս տակ, եթե կեցցեներ չգոռաս»։

— Կեցցե՛, կեցցե՛։

«Այո, այդպես. կոպիտ... անկիրթ... Մինչև այժմ չե՞ս հասկցել, որ աշխարհը լուսավորել է և չէ կարող այլևս բռնության տանել...»։

— Մի՛ բարկանար, աղաչում եմ, մի հարցմունք...

«Այժմ կեցցեից ավելի ուրիշ բան չէ կարելի խոսել. կեցցե՛»։

— Կեցցե՛,— ասաց խեղճ մարդը և հեռացավ հրապարակից։

Տարին չորս եղանակ ունի, իսկ մարդկային կյանքը բյուրավոր չորսեր։ Այն օրերը լոկ կեցցեի եղանակ էր, և ուրիշ բանի վերա խոսողը մահի պարտավոր։

Մի քանի օրից հետո, երբ արդեն ազատությունը, հավասարությունը և եղբայրությունը նստել էին արքայական գահի վերա, երբ բոլոր փողոցները և տուները, մինչև անգամ այս անբան գոյությունքը, կարմիր ներկերով և խոշոր տառերով, անբարբառ, գոռացել էին բյուրավոր կեցցեներ, երկու մարդ հանդիպեցան միմյանց մի անկյունում։

«Ողջույն»։

— Ողջույն։

«Քանի ժամանակ է, քեզ տեսած չէի, բայց ասես թե խելք կա՞ր գլուխներս, որ միմյանց պատահեինք, քանի որ երեսի վերա մնացած ազգը փրկելու և գերությունից ազատելու հետ էինք զբաղած։ Բայց,— ինքնաբավական կերպով հառաջ տարավ խոսքը,— պիտի խրավունք տալ մեզ, որ կարիճի պես գործ կատարեցինք և մեր դարավոր ցանկության, վերջապես, հասանք»։

— Ի՛նչ շինեցինք։

«Ավելի ի՛նչ կամիս», և տհաճությամբ կրկնեց այն ճակատագրական երեք խոսքերը։

— Ա՞յդչափ միայն։

Խոսակիցը զարմանում էր սորա բթամտության վերա. և գրեթե ատելության աչքով նայում էր դեպ ուղիղ նորա աչքերի մեջ։

«Ինչո՞ւ այդպես շփոթում է և խռովում է քո խաղաղությունը իմ պարզ հարցմունքս և կամենում ես բռնակալ հայացքով պապանձեցնել

չեզուս, մինչդեռ ասում ես, թե ձեռք բերածներիս մեջ ես ազատու-
թյունն է։ Թո՛ղ, գեթ խոսքով օգուտ քաղեմ այդ արտոնությունից»։

Խոսակիցը վայրկյան մի շփոթեցավ և, իրավը պետք է ասել, խղճի խայթ ես զգաց, ազնվաբար, որ հին ժամանակների վերա գնալով և մոռ-նալով ազատության թագավոր նստելը, կամեցավ, մի ակնթարթ, բռ-նանալ խոսողի կարծիքի վերա։

— Ասա՛, եղբայր, ասա՛, ինչու չէ. ես պատրաստ եմ քեզ լսելու

«Ուրեմն, ազատություն, հավասարություն և եղբայրություն, այն-պես չէ՞, բուն իսկ բարոյական և բնական սկզբունք»։

— Ճիշտ այդպես, ինչպես երկու անգամ երկուքը չորս։

«Շատ բարի. բայց, ասա՛ խնդրեմ, ազա՞տ եմ ես, միմիայն օրեն-քով, քաղաքականապես ազատ կոչվելով, ազա՞տ եմ ես, քանի որ նյու-թական կարոտությունը ստիպում է ինձ, կամա ակամա, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությամբ հաց ճարել իմ ըն-տանիքի համար։ Ազա՞տ եմ ես, եթե տեր ունիմ, որին եթե իմ ազատու-թյունը հայտնեմ բացարձակապես, պիտի զրկեմ ապրուստից և ինձ և իմ ընտանիքս, ծառա լինելուց դադարելով, և այս բոլորից հետո ազա՞տ եմ ես... երևակայությա՞ն մեջ, թե՞ օդի մեջ»։

— Այդ ի՞նչ խոսք է, աշխարհը ինչպես կարող է կառավարվել, եթե չլինի նյութի և աշխատության փոխադարձ հատուցում։

«Բայց ես մտածում եմ, որ կարող է և մանավանդ երջանիկ, եթե աշխատությունը բռնադատական չէ, այլ կամայական, եթե նա աշխա-տություն է և ոչ ծառայություն, եթե մարդկային իրավունքները անխը-տիր հավասարաչափ են և ոչ մինինը ավելի, իսկ մյուսինը պակաս»։

— Պարոն, հավասարությո՞ւն, մոռացա՞ր...

«Չեմ մոռցել, բայց չկա»։

— Ինչպես թե չկա։

«Շատ հասարակ կերպով։ Ես և դու հավասար իրավունք ունինք, իբրև հայրենիքի հավասար որդիք, այնպես չէ՞»։

— Այո՛, ամենևին այդպես։

«Ուրեմն արդարություն չկա։ Եվ դուք պիտի համաձայնիք, որ կա՞մ հավասարություն չկա, կա՛մ արդարություն, որ իրավունք առնե մեր հա-վասարության իրականապես, քանի որ հավասարությունը, իբրև լոկ խոսք, հնչում է միայն օդի մեջ և քանի որ իրական անհավասարության հետևանքը շինում է ինձ ազատ-ստրուկ»։

— Չեմ հասկանում։

«Կհասկանաս, և, այս րոպեիս։ Ո՛րքան հող ունիս դու»։

*— Հարյուր հազար քառակուսի գազ...*

*«Ե՞ս որչափ ունիմ»։*

*— Զգիտե՞ս որ չունիս։*

*«Հըմ. դու հայրենիքի որդի՞ ես»։*

*— Այո՛։*

*«Ե՞ս»։*

*— Նույնպես։*

*«Հայրենիքի բարիք և ծանրությունը հավասարաչա՞փ պատկանում են մեզ»։*

*— Այո՛։*

*«Ուրեմն, ի՛նչպես հավասարություն է այս. դու ունիս այսչափ հող. իսկ ես ոչինչ, քո բաժին միայնակ վայելում ես հայրենիքի բարին, իսկ ես քո հավասար կրում եմ միայն ծանրությունը։ Բաժի՛ն տուր ինձ քո հողից, մեք մի հայրենիքի որդիք ենք,* եղբայր *ենք։ Ինչպես քեզ հարկավոր է ապրուստ, նույնպես և ինձ, ինչպես դու կրում ես հայրենիքի բեռը, նույնպես կրում եմ ես։ Բաժի՛ն տուր ինձ քո հողից, այն ժամանակ ես չեմ աշխատելու բանի. ես կզգամ ինձ* ազատ, *մեր իրավունքները* կհավասարվին, *և ճշգրիտ* եղբայրությունը *երևան կելնե»։*

*— Հողը իմ սեփհականությունս է...*

*Խոսքը բերանը մնաց։ Այն կողմից կարիճ մինը, երկաթի տրամաբանությամբ, հարվածը իջեցուց նորա գլխին։*

*«Սեփհականությունը գողությո՛ւն է», ասաց նա այրական ծանրությամբ և կանգնեցավ։*

*Սեփհականությունը այն բանի, որ, առանց մեր աշխատության, բնությունը դնում է մեր առջև, գողություն է, ավազակություն և հափըշտակություն, եթե մինը առնու հարյուրավոր, հազարավոր, իսկ մյուսը ամենևին ոչինչ։ Այլ խնդիր է աշխատությամբ ձեռ բերված այն բանը, որ բնությունը չէ պահում յուր գոգում, որ բնությունը չէ պատրաստում անմիջապես, որ մարդը արվեստական ճանապարհով է պատրաստել և ի վերջո որի արժեքը պայմանական է, մի խոսքով դրամը, որ մարդը վաստկել է։ Բայց հողը նա չէ վաստկել, հողը նա չէ շինել, հողը բնությանն է։*

*— Պարոն, չափդ ճանաչիր, ես գող չեմ, ես հողը չեմ հափշտակել, ես ձրի չեմ առել, դրամով է գնել իմ հայրս, իմ պապս։*

*«Ինձ ի՛նչ փույթ։ Բռնակալությունը, որ նույնն է թե ավազակություն, վաճառել է քեզ հասարակաց ազգի սեփհականությունը։ Ոչ նա իրավունք ուներ վաճառելու և ոչ դու իրավունք ունեիր գնելու, նա՛ գող է*

և դու կողակից. որովհետև երկրագունդը անհատի սեփականություն չէ, նորա վերա ապրում են և պիտի ապրին բոլոր նորա որդիքը անխտիր»։

— Բայց, եթե ես իմ հողը կիսեմ քո հետ, ես կքանդվիմ, ես մինչ ցարդ ապրում եմ նորանով. ի՛նչ կլինի հետո իմ ժառանգների և իմ սերունդի վիճակը, երբ իմ հողի քանակությունը փոքրացրել էի։

«Դու մտածում ես քո ապրուստի համար, աչքիդ առջև ունիս քո ժառանգների և քո սերունդի ապագան, իսկ ես, որ ոչինչ ունիմ, ինձ ապրուստ պետք չէ՞. իմ ժառանգները և իմ սերունդը, որ ինձանից հետո ոչինչ ստանալու չեն ինձանից, ապրելու չե՞ն։ Բայց դու կքանդվիս, այսինքն, քո ավելորդը կչափավորվի, որի հաշվով իմ պակասորդը կլցվի, սակայն մի՛ մոռանար, որ քո ցեղը մինչ ցարդ վայելել է այդ հողը, իսկ իմ ցեղը միշտ զուրկ է մնացել նորանից։ Այսօր դու կքանդվիս, բայց վաղը մեր երկուքի սերունդը կհավասարվին. այսօր քո կարողությունը կչափավորվի, բայց, դորա փոխանակ, իմ ամբողջ սերունդը չէ պիտո այլևս մահու և կյանքի մեջ տատանի, մի ոտնաչափ հող չունենալով»։

Մարդը հառաչացավ մինչև այստեղ և կարծում էիր, թե ահա շոշափում է նա յուրյան հարկավոր առարկան... կստանա նորան... բայց չէ. ստանալը այնպես դյուրին չէ, որովհետև մարդը դեռևս տղա էր Գայթակղեցավ նա այս գայթակղության քարի վերա և դեպի ձախ, շրջան հառաջ, ծուռ դարձավ յուր ուղիղ ճանապարհից։

Ազատությունը, հավասարությունը և եղբայրությունը յուրյանց հիշատակը թողեցին մի քանի սյուների վերա. պատերի վերայի կարմիր գրերը դատապարտվեցան մնալ մի սպիտակ ներկի տակ։

— Կեցցե՛ մահ։

Այս էր վերջին խոսքը, որ լսվեցավ։ Եվ խեղճ մարդը, վարատական և անհող. հարկադրվեցավ դարձյալ յուր օրական հացը ճարել ստրկանալով ուրիշին։

Բռնակալությունը, եթե նորա երևեցուցիչը մի անհատ է, թո՛ղ լինի այն անհատը Ներոն, Կալիգուլա կամ նոցա աշակերտ մի պոլիտիկական ավազակ, բնավ սարսափելի չէ. քանզի այն անհատի հետ գերեզման կիջնե։ Բռնությունը, երբ նորա երևեցուցիչը մի ժողով է, մի ծերակույտ, մի հրեական սինեդրիոն, նույնպես, զարհուրելի չէ. ցրվեցիր ժողովը, կործանեցիր նորա տաճարը, և ահա ամենայն բան կընթանա, ինչպես յուղած ճախարակ։ Բռնությունը աննկարագրելի և անթարգմանելի կերպով կատաղի է, կամակոր և երկարատև, երբ աղբերանում է հասարակ ժողովրդի ընդունած սկզբունքից։ Մի հարատև բռնակալ կառավարություն, մի ազգի մեջ, ուրիշ բան չէ, եթե ոչ այդ ազգի հոգու երևեցուցիչը։

Շատ անգամ ինքը ազգը զգում է բռնության ծանրությունը և առանց արմատը քննելու, այսինքն, առանց յուր անձը քննելու, ապարեն է դուրս գալիս այն չարչարող բռնության ընդդեմ, գլխատում է, աքսորում է, ի վերջո, չքացնում է բռնության երևեցուցիչը։

Ուրախացավ, կարծեց, թե ազատվեցավ բռնութենից, չգիտե, թե ինքն է, յուր մեջ է այն բռնության և անօրենության տարրը։ Կարծեց, որ եթե մի մարդու տեղ քսան հոգի նստի, բոլոր բանը կփոխվի. մոռացավ, որ քանի յուր հասկացողությունը նույնն է, ինչպես էր հառաջ այն մինի ժամանակ, այն քսանը պիտի գնա նույն ճանապարհով, որով գնում էր պատժված մինը։ Մասնավոր ուշադրության արժանի է մարդկային կյանքի և այս երևույթը, որ երբ մի արտաքին ույժ դադարում է ճնշել որևիցե մի հասարակություն, ինքը այդ հասարակությունը սկսում է բռնանալ յուր վերա և նորա բռնակալական ձգտողությունքը բնավ իսկ պակաս չեն արտաքին բռնության ձգտողութեններից։ Սորա շոշափելի օրինակը տեսանելի է Անգլիո մեջ։

Ամեն մարդ գիտե, որ դրատպությունը ազատ է այնտեղ, և կառավարության և օրենքի կողմից ամենայն հարձակմունք անհնարին։ Բայց, չնայելով սորա վերա, Ստյուարտ Միլը հարկադրվեցավ հրատարակել յուր գիրքը—«On liberty»[15]։ Ստյուարտ Միլը այս գրքի մեջ բնական պատճառներով աշխատում է համոզել, որ տպագրությունը ազատ մնա ամենայն հարձակմունքից։ Հարձակմո՞ւնք, տպագրության ընդդե՞մ, և մի աշխարհում, ուր ամենայն բան տպվում է առանց արգելքի, որի՞ կողմից արդյոք, մինչ կառավարությունը և օրենքը ազդեցություն չունին այս խնդրի վերա։ Ստյուարտ Միլը խոսում է հասարակության հետ, նա բողոքում է նորա ընդդեմ, և նորա ընդդեմ դարձյալ պաշտպանում է և քարոզում է տպագրության անպայման ազատությունը։ Հասարակությունը, նորա կանխակալ կարծիքները, նորա ավանդությունքը, որ դարերով նստել են նորա ուղեղի վերա, արմատացել են նորա ոսկերքի մեջ, շատ անգամ չէ կարող հաշտ աչքով նայել ազատ հրապարակախոսության երեսին։ Նա հալածում է նորան ոչ թե օրենքով կամ որևիցե կառավարչական ույժով կամ արգելքով, ո՛չ, նա լավ գիտե, որ սոքա անհնարին բաներ են Անգլիո մեջ, նա հալածում է մանր հնարներով և աղտոտ ճանապարհներով, որոնց մեջ վերջին տեղը չունին անձնական վնաս հասցնել, վատաբանել, կասկածներ հարուցանել հեղինակի վերա, պարզամիտների միտքը և ատելությունը գրգռել նորա ընդդեմ։ Այս բոլորը սարսափներով տեսավ Ստյուարտ Միլը, տեսավ և գոչեց. **«մենք ստրկանում ենք»**:

Կեմբրիջի համալսարանի երկրագիտության վարդապետների գրվածքը, մի պարզ բնագիտական և երկրագիտական տեսություն, ահ ու սարսափ բերեց հասարակության վերա։ Հասարակությունը տեսավ, որ այդ գրվածքը հիմն ի վեր տապալում է այնպիսի հասկացողությունք, այնպիսի սկզբունք, որ վաղուց արդեն սրբազանել է ինքը, հասարակությունը, որ դարձել է նորա հոգին, նորա պաշտական գաղափարը. տեսավ այս և խաչակիր արշավանք քարոզեց այն իմաստուն ուսուցիչների ընդդեմ։ Բանական հնարքները, հերքողությունքը, վեճը և ի վերջո անբարոյական պարսավանքը թույլ երևեցան նորա աչքում. Նորա վշտացած հասկացողությունը թելադրում էր նորան վրեժ, նորա միակ ցանկությունը էր, որ ուսուցիչք կորուսանեն յուրյանց ամբիոնը։

Վա՜յ այն ծառին, վա՜յ այն բուսականին, որի արմատը անընդունակ է յուր հատակից ընդունելու և պատրաստելու յուր հյութը, յուրյան թարմությունը պահող կենսական ույժը և զորությունը։ Վա՜յ այն ծառին և բուսականին, որի հույսը դրված է միմիայն, գիշերային և առավոտյան, բարձրից գալու ցողի վերա։ Ցողը թեև հաղիվ հաղ նստում է նորա տերևների վերա, հաղիվ հաղ սկսանում է զովացնել նորա ծարավը, դալարացնել նորա խորշակահար տեսիլը և ահա... արևը ծագեցավ։ Ցողի կաթիլները հետզհետե գոլորշանալով ցնդեցան, գնացին. իսկ տերևքը մնացին այրող ճառագայթների ազդեցության ենթակա։

Մարդուն համար վերևից եկած ազատությունը այն ցողից ավելի չէ, եթե մարդը նախ ինքը յուր մեջ ազատ չէ, և երկրորդ. եթե ինքը այնուհետև պետք բռնանա յուր ընկերի վերա։ Եվ քանի որ տնտեսական խնդիրը—այն բազմախճճիռ Գորդիասի կապը[16] լուծված չէ, հասարակությունը յուր ընկերական և ընտանեկան հարաբերությանց մեջ ազատ չէ, թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը։

Նույն այս տնտեսական խնդրի առաջև կանգնած է այսօր ռուսական կառավարությունը և ազնվականը։ Այս խնդիրը մահու և կյանքի խնդիր է. «to be, or, not to be»[17]։ Քսանևերեք միլիոն* ստրուկ, որ մինչև ցարդ նստած հայրենիքի հողի վերա ծառայում էր և հարկ էր տալիս յուր պարոնին, վաղո՜ւց և վաղո՜ւց ազատված կլիներ ստրկությունից, եթե կարելի լիներ կառավարության. կամ ազնվականին, ասել ստրուկնե-

* 1858—1859 թթ. աշխարհագրության նայելով, Ռուսիո մեջ եղած ստրուկների թիվը հասնում էր մինչև 23,069,631, որից 11,244,913 արու. իսկ մնացած 11,824,718՝ էգ։ Մ. Ն.։

րին. —Մանկո՛ւնք, այս օրից հետո ազատ եք կատարելապես և ձեր ստրկական հարաբերությունը դեպի ձեր պարոնները, վերջացած է. գնացե՛ք ուր կամիք և ապրեցե՛ք, ինչպես կամիք։

Բայց կառավարությունը և ազնվականությունը պարզ տեսնում էին այս տեսակ ազատության անհնարավորությունը։ Ո՞ւր երթա 23 միլիոն ժողովուրդ անհող և անկայան, ի՞նչ գործե, ի՞նչպես ապրի։ Նույն հողը, որի վերա բնակվում էր և որ գործում էր, այժմ, ազատվելուց հետո, պիտի վարձու առնուր յուր պարոնից. ի՞նչ ազատություն էր այս, ո՞չ ապաքեն և առաջ նույնն էր գործում, միայն այս տարբերությամբ, որ տված դրամը կամ անձնական աշխատությունը փոխանակ դրամի՝ համարվում էր hարկ, իսկ այժմ նույնը պիտի անվանվեր վճար։ Բայց շինականին ի՞նչ մխիթարություն անվանափոխության մեջ, քանի որ գործը նույնն է։ Պիտի ասել, որ այդ տեսակ ազատությունից շինականը եթե տնտեսական մասնում ավելի վնաս ունի քան թե օգուտ, գո՛նե կազատվի ստրկությունից և պարոնի իշխանության և լծի տակից։ Այստեղ ես մխիթարական բան չկար շինականին. այո՛, պիտի ազատվեր պարոնից, բայց դորա փոխանակ պիտի ընկներ կառավարության ստորինավորների ձեռքը, այսինքն, անձրևի երեսից ծուլը։

Տեսավ կառավարությունը, որ այս տեսակ ազատություն չէ կարելի տալ. գուշակեց նաև գալոց փոթորիկը։ Տեսավ ազնվականքը և համոզվեցավ, որ այս տեսակ ազատություն տալը, ազնվականության մահու դատակնիքը ստորագրել է։ Ուստի և՛ կառավարությունը, և՛ ազնվականք, վախենալով բարձրացնել այս ճակատագրական վարագույրը, որի քամակում կանգնած է Ռուսիո սոսկալիթիար ապագան, լուռ կացին և առանց միմյանց հետ խոսելու, միմյանց միտքը և դրությունը լավ հասկանալով, որոշեցին լուռ մնալ և քաշ ածել այս գործը, որչափ որ կարելի է դիմանալ։...

Բայց երբ 1861 փետրվարի 19 ի հրովարտակը դուրս եկավ[18], որի մեջ կայսրը ասում էր, թե ստրուկները ազատ են և յուրյանց հողը պիտի ստանան հրովարտակի թվյալ օրից երկու տարուց հետո, իսկ մինչև այն երկու տարու վերջը պիտի մնան նույն հարաբերության մեջ դեպի յուրյանց պարոնները, ինչպես հառաջ, ստրուկները և լսել չկամեցան։

— Հրատարակեցիր մեզ ազատ, հանդերձ մեր հողով, և ահա վերջացած է ամեն բան։ Մեք չկամինք մնալ այսուհետև այն հարաբերության մեջ, ուր մաշեցան մեր նախնյաց և մեր ոսկերքը։ Դարավոր ապիներով ծածկված է մեր մեջքը, անզուսպ բարբարոսությունը յուր ույժը մաշեց մեր կուրծքի վերա։ Մեր մատաղահաս դստերքը զոհ գնացին անխնա մեր

պարոնների բռնաբարության. կանանց մասին այլ խոսք չէ մնում։ Մեր որդիքը նոքա փոխեցին շունի հետ։ Չէ՛, անհնար է, որ այլևս մնանք նույն հարաբերության մեջ։

Զանազան գավառներում դուրս եկան զանազան ընդդիմություններ և ապստամբություններ, եթե իրավունք պահանջելը, վսեմ ոճով, կարելի է ապստամբություն անվանել։ Կառավարությունը զենք գործ դրեց նոցա վերա, բայց սպանվածների արյունը ոռոգեց և աճեցուց ընդդիմության տունկը։ Եվ այսօր, ամենայն րոպե, հեռանում են միմյանցից ազգը և կառավարությունը։ Ազնվականությունը երևեցնում է երկու միմյանց ներհակ կուսակցություններ, հառաջընթաց և հետընթաց։ Հառաջընթաց կուսակցությունը միացած է ազգի էական օգտի, այսինքն ստրուկների հետ։ Նա ներգործում է և հետընթաց կուսակցության և կառավարության հակառակ։ Եվ այս, հայտնի, գրավոր և օր ու ցերեկով։ Իհարկե շատերը թռան դեպի Սիբիր, շատերը մաշվում են բանտերի և ամրոցների մեջ։ Այս տողերը գրելու միջոցին հասած պաշտոնական լուրը իմաց տվեց, թե Տվերի հառաջընթաց կուսակցությունից տասն և երեք հոգի մատնվել են ծերակույտի հինգերորդ բաժնի ձեռք[19], այսինքն, քրեական ատենի ձեռք, որովհետև ստորագրությամբ գրած են գավառական ատենին, թե չեն կարող և չպիտի ներգործեն 1861 փետրվարի 19 հրովարտակի համեմատ, քանզի ընդդեմ է այն հրովարտակը ազգի էական շահին...

Ռուսական ազգը, որի աչքի առջև հանդիսանում է այս դրամատիկական թատրերգը, կուսակից է ստրուկներին և հառաջընթաց ազնիվ կուսակցության։ Նորա մեջ նույնպես խմորվում է մի ոգի, և այսօր երկու երեք միմյանց հակառակ տարերք գնում են միևնույն ճանապարհը։

Եվ կառավարությունը, յուր կարգով, մնացել է այս բոլորի մեջտեղը։

Բայց այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է որ լինի երկարատև։ Եթե, վաղօրոք, խելք գործ չդրվի, ստրուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չքարոզվի, և այս կերպով այն կնճիռը չլուծվի, ստրուկը կացինով կվճռե գործը։

Ժամանակը շատ մոտեցած է, և կարծվածից ավելի մոտեցած...

Ազատությունը ըստ ինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն։ Ոչ մի ազատ կառավարություն, ոչ մի ազատ օրենսդրություն չէ կարող փրկել մարդը ստրկությունից, մինչև որ այդ մարդը հողի վերա իրավունք ունեցող չըխոստովանվի։ Եվ մինչև այս, ընդհանրական աղքատությունը երթալով պիտի զորանա և հասնի հսկայական աստիճանների...

Եվրոպան ուշ ծնեցավ, բայց շատ արագ ծերանում է։ Մի քանի դա-

րին. —Մանկո՛ւնք, այս օրից հետո ազատ եք կատարելապես և ձեր ստրկական հարաբերությունը դեպի ձեր պարոնները, վերջացած է. գնացե՛ք ուր կամիք և ապրեցե՛ք, ինչպես կամիք։

Բայց կառավարությունը և ազնվականությունը պարզ տեսնում էին այս տեսակ ազատության անհնարավորությունը։ Ո՛ւր երթա 23 միլիոն ժողովուրդ անհող և անկայան, ի՞նչ գործե, ի՛նչպես ապրի։ Նույն հողը, որի վերա բնակվում էր և որ գործում էր, այժմ, ազատվելուց հետո, պիտի վարձու առնուր յուր պարոնից. ի՞նչ ազատություն էր այս, ո՞չ ապաքեն և առաջ նույնն էր գործում, միայն այն տարբերությամբ, որ տված դրամը կամ անձնական աշխատությունը փոխանակ դրամի՝ համարվում էր հարկ, իսկ այժմ նույնը պիտի անվանվեր վճար։ Բայց շինականին ի՞նչ մխիթարություն անվանափոխության մեջ, քանի որ գործը նույնն է։ Պիտի ասել, որ այդ տեսակ ազատութենից շինականը եթե տնտեսական մասնում ավելի վնաս ունի քան թե օգուտ, գո՛նե կազատվի ստրկութենից և պարոնի իշխանության և լուծի տակից։ Այստեղ ևս մխիթարական բան չկար շինականին. այո՛, պիտի ազատվեր պարոնից, բայց դորա փոխանակ պիտի ընկներ կառավարության աստիճանավորների ձեռքը, այսինքն, անձրևի երեսից ծովը։

Տեսավ կառավարությունը, որ այս տեսակ ազատություն չէ կարելի տալ. ռուշակից նա գալոց փոթորիկը։ Տեսավ ազնվականքը և համոզվեցավ, որ այս տեսակ ազատություն տալը, ազնվականության մահու դատակնիքը ստորագրել է։ Ուստի և՛ կառավարությունը, և՛ ազնվականք, վախենալով բարձրացնել այն ահագնասարսափ վարագույրը, որի քամակում կանգնած է Ռուսիո ասկավլիթիար ապագան, լուռ կացին և առանց միմյանց հետ խոսելու, միմյանց միտքը և դրությունը լավ հասկընալով, որոշեցին լուռ մնալ և քաշ ածել այս գործը, որչափ որ կարելի է դիմանալ...

Բայց երբ 1861 փետրվարի 19 ի հրովարտակը դուրս եկավ[18], որի մեջ կայսրը ասում էր, թե ստրուկները ազատ են և յուրյանց հողը պիտի ստանան հրովարտակի թվյալ օրից երկու տարուց հետո, իսկ մինչև այն երկու տարու վերջը պիտի մնան նույն հարաբերության մեջ դեպի յուրյանց պարոնները, ինչպես հառաջ, ստրուկները և լսել չկամեցան։

— Հրատարակեցիր մեզ ազատ, հանդերձ մեր հողով, և անա վերջացած է ամեն բան։ Մեք չկամինք մնալ այսուհետև այն հարաբերության մեջ, ուր մաշեցան մեր նախնյաց և մեր ոսկերքը։ Դարավոր ապիներով ծածկված է մեր մեջքը, անգութ բարբարոսությունը յուր ույժը մաշեց մեր կուրծքի վերա։ Մեր մատաղահաս դստերքը զոհ գնացին անխնա մեր

ռևոլյուցիան։ Բուրքը որ իր բոլոր կյանքը և ույժը մինչև այն ժամանակ թափել էր ազատության պաշտպանելու համար, չվախենալով նորա կերպարանքներից, Բուրքը, որ յուր հայրենիքի անձնական օգուտը երկու ձեռքով զոհում էր ամերիկյան անկախության, որի մեջ ազատության նախագաղափարը ուներ մի հզոր փաստաբան։ Երեսփոխանական պալատի մեջ, իր հոգու վերջին կարողությունը ամենայն ուժգնությամբ գործ դնելով Ֆրանսիո հեղափոխական շարժողության, խաչակիր արշավանք քարոզեց ֆրանսիական ազգի ընդդեմ։ Նա հիվանդ էր այն ժամանակ հոգեպես. որդու կորուստը զրկել էր նորա ուղեղը, ուստի և նորա աչքի առջև երևում էին միայն Լուդովիկոս XVI-ի և Մարիա Անտուանետտի արյունոտ գլուխները, այդ դարձել էր նորա համար անշարժ գաղափար (idea fix). Նա էլ չէր հիշում Լուդովիկոս XVI-ի բռնակալությունքը[21], որ շարունակ 50 տարի ոչ միայն քամեցին Ֆրանսիո արյունը և հոգին, ոչ միայն իրր փոխանակեցին անառակ և փտածին կեղծի հետ, այլև հանդիսատ չափին բոլոր Եվրոպային։

...Երբ Հեգելը քաղաքից քաղաք և կայսրությունից կայսրություն իր սքանչելի մտահայաց գիտությունը կարդալով ման գալուց հետո վերջապես Բեռլինի մեջ 1830—1831 թթ. վերջին անգամ կարդում էր պատմության փիլիսոփայության մասին, Ֆրանսիո ռևոլյուցիոնի ռումբը վերստին տրաքեց[22]։ Ֆրանսիական վուլկանական բնության ցնցյունը մեկ գիշերվա մեջ կործանեց Բուրբոնի գահը, որ դաշնակիցների քաղաքականությամբ և պաշտպանությամբ վերանորոգվել էր մեծ հեղափոխությունից հետո։ Ահարեկություն տարածեց ամեն տեղ այս ցնցյունը, և Հեգելը ընկճվեցավ այս երկյուղի ծանրության տակ, ինչպես Բուրքը ընկճվել էր իր որդու մահի ծանրության տակ։

Շատ գեղեցիկ նկատում է Հայմը Հեգելի թույլ կարը. նա ասում է. «կարելի է նորան չարչարում էր մի նախազգացություն թե այդ տիեզերական նոր շարժողությունը տարածվելով առավել և առավել կարող է ճամփից հանել ոչ միայն տերությունը, այլև համակարգությունը— իդեալիզմի համակարգությունը»[23]։

Եվ այդ արև երկյուղը, թե համաշխարհական հանգստությունը դարձյալ կխանգարվի, հանգիստ չէ տալիս Հեգելին։ Շարժողության ոգին մտավ նաև Անգլիա, որ անհողդողդ պահպանել էր իր կառավարչական ձևերը և առաջին ֆրանսիական հեղափոխության մրրիկը ցամաքահողի մեջ այնքան գեղքեր պատճառելով անվնաս անցել էր նորա գլխից։

— Վերանորոգեցեք,— ասում են Ռոսսելի բարեկամքը,— որ կարողանաք պահպանել. տենդային ամբոխմունքով խռովում է ազգը պառ-

լամենտի դռներում, որ կարողանար ստանալ թերևս ուժի գործադրությամբ կամակոր տորիների համաձայնությունը ազգային երեսփոխանական համակարգությունը վերանորոգելու համար։ Տեսնելով այս, Հեգելը նորից պուբլիցիստ է դառնում։ Նա հրատարակում է Պրուսիո տերութենական լրագրում իր վերջին հոդվածը «Անգլիական վերանորոգության խնդրի վրա քննություն» անունով, «Bill of reform»[24]. 14 օգոս.

Ահա այս հոդվածի մեջ Հեգելը նմանում է հալուցինացու մեջ ընկած Բուրքին։...

Ֆրանսիական ռևոլյուցիան անգլիական փիլիսոփայության արդյունք է. Ճիզվիթները կամ ցամաքահողի բնակիչները ընդունակ չէին այդ քանին։ Ստույգ է, մինչև այն մեծ հեղափոխությունը իսկապես Ֆրանսիո աչքը տնկված էր Անգլիո վրա, բայց հեղափոխությունից հետո այդ երկու աշխարհների պաշտոնքը փոխվեցան և ռևոլյուցիոնը իր կարգով ազդեցություն ունեցավ Անգլիո ավելի առաջադիմության վրա։ Բայց թե ազատությունը մի վսեմական ավանդ է, ապա այդ ավանդը պահեց տորերի հորձանքի երեսից Անգլիան։ Մի փոքր ժամանակ անցավ այդ ավանդը Ֆրանսիո ձեռք, բայց նա չկարողացավ պաշտել նորան նպատակի համար ձևով։ Վերստին կործանվեցավ այնտեղ ազատության աթոռը և նորա ավերակների վրա Բոնապարտը մեկնեց իր երկաթը[25]։ Ազատությունը դարձյալ ապաստանեցավ դեպի այն կղզին, որ միայն մի նեղ ջրանցքով բաժանվում էր Ֆրանսիայից և այն օրից մինչև այսօր, մինչդեռ ցամաքահողը ազատությունը գտնելով և կորցնելով հոգին բերանը եկավ, Անգլիան, իր այն թերի համարված, և իրավամբ մի քանի պակասությունք ունեցող սահմանադրությամբ, ավելի և ավելի հաստցուց ազատության ծառի բունը և այն՝ բոլորովին բնական, խաղաղ և հանդարտ աճելությամբ, որին հազիվ թե տրամադրություն ունի ուրիշ ամեն մարդ, որ ծնած չէր Բրիտանական կղզիների վրա։...

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

## ԳԵՎՈՐԳ ՔԱՆԱՆՅԱՆԻՆ

1855, սեպտեմբերի 7, Ս. Պ. Բուրգ

Ազնվահոգի բարեկամ Քանանյան

*Գ<ամառ>Ք<աթիպան> պիտի լինի ճիշտ պարբերական, պիտի ունենա արդյունք, պիտի լինի պատճառ մեծ հետևանքներու. մեկ խոսքով մեր (էն գիշերվա) խորհուրդը չպիտի ունայն անցնի. ես, ինչպես ասել եմ քեզ, պատրաստ եմ ամեն կերպ առաջարկություններում, որոնց հետևանքը մեր ազգի օգուտը կլինի. մեղք է ասելը, որ իմ մեջ չիկա էներգիա. ուրեմն, ամեն բանին ես ջերմությամբ ձեռնամուխ եմ լինում և եթե թուլանում եմ ժամանակ առ ժամանակ, պատճառը, հավատացի՛ր, ես չեմ։ Ունիմ, ես էլ ունիմ վառ պռոժեկտորներ, որոնք միայն իմ մեջ են, որովհետև դու քուններդ ինձ հայտնեցիր, ես հանցանք կհամարեի իմերը բերանից թաքցնել։ Այդպես պլանները փոքր ինչ հետո կհայտնեմ. ավելի մոտինը և ներկան ահա՛ համառոտ կաշխատեմ հայտնել. մանավանդ քու աշխատությունների դիպվածով։ Գ<ամառ> Ք<աթիպան> անպատճառ պիտի ունենա ուղղություն ներքին պարունակության կողմանե. նա պիտի լինի մեր օրերու, սեփական մեր կարծիքների և մեր նվիրական խորհուրդների արձագանքը. նորա կարդացողները թող չիգտնեն մեջը այնպիսի հատվածներ, որոնք կարող են պատճառ լինել հային անդորր կենցաղ սիրող լինել, թող չի անեն նոցա կրոնասեր քրիստոնյա, պալակասեր կամ ընտանեսեր ծնող. այլ ամեն մի դորա մեջ պարունակած հոդվածը թո՛ղ կարողանա արծարծել նոցա սրտի մեջ, եթե ոչ ուղղակի կերպով հայրենասիրությունը, գոնե թո՛ղ հիշեցնեն նոցա նոցա կորցրած երջանկությունը. թո՛ղ կամաց-կամաց սովորի պաղարյուն նայել այն մահվան վերա, որ նա կարող է ստանալ՝ զոհելով անձը ազգի ազատությանը. մեկ խոսքով, այն ամեն զգացմունքները, որոնք խոր տպավորվել են մեր մեջ, որ մենք*

չենք համարձակում հրապարակավ քարոզել և որն որ Հային, ըստ մեծի մասի, անհայտ է, թող անգա կերպով սերմանվի նոցա սրտի և հոգվո մեջ: Ուստի մենք պիտի աշխատենք մուծանել Գ<ամառ>Ք<աքի-պա>-ի մեջ վարք երևելի արանց, ինչպես որ էին Գուստավ Ադոլֆը. Վիլհելմ Թելը, Բոցարիսը, Դմիտրի Դոնսկոյը, Լեոնիդը և շատ ուրիշները, որոնք փառք են իրանց հայրենյաց։ Ընդհակառակն, եթե մենք կտեղավորենք այնպիսի շարադրություններ, որտեղ որ ապստամբությունը (ազգասիրական) համարվում է հանցանք, կսովորացնենք Հային խաղաղ, առտնին կյանք վայելել, այն ժամանակ ինչի պիտի նմանին նոքա. ոչ ապաքեն այն ատելի հայերուն, որոնցմով առատ են, մանավանդ ներկա դարումս Մոսկով, Պետերբուրգ, Ղզլար, Հաշտարխան։ Իմ կարծիքով, ավելի լավ է նկարագրել ապստամբ ավազակների կյանքը, զորօրինակ Պուգաչովի, Ստենկա Ռազինի, Օտրեպևի, քան թե գերմանական կյանքից առած, մեղր ու կարագով ծեփած և սերով կոխած էռնեստոներու, վոլգեմարներու և դյուվալներու:...

## <ԱՌԱՋԱԲԱՆ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԻՆ ՊԵՏՐՈՍԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ>

Մեծն Պետրոսը միշտ մնալու է պատմության մեջ մի չքնաղ նախագաղափար աշխարհաշեն, ազգասեր և այն ամենայն առաքինութենով զարդարած Թագավորի, որ ինչպես կենդանի օրինակ պիտի լինի աշխարհիս հզորների առջև: Նորա վարքը պիտի մնա ինչպես հետախուզելի առարկա ամեն վիճակի և կոչման մարդոց համար ամենաբարձրից բռնած մինչև ամենաստորը:

Պետրոս Մեծը, յուր շահատակություններովն, համեմատվում է այն դյուցազուններուն, որոնց, որ նախնի մարդկությունը, մարդուն տկար արարած կարծելով, չի համարձակել նոցա մարդ կոչելու, ուստի նոցա անունը դիք կամ չաստվածք է դրել: Աներկբայելի է, որ հույնի վառ երևակայությունը սորա հիշատակը գիշերվա անամպ երկնակամարի վրա աստղերով կարձանագրեր, եթե Պետրոս Մեծը կեցած լիներ նոցա մեջ, մեզանից երեք հազար տարի առաջ:

Միայն հանճարի, միմիայն կիսաստվածի գործ էր քառորդ դարումը կատարել այն, ինչու համար պետք էին տասնյակ դարեր և շատ քանքարավոր մարդոց քրտնաջան և անդուլ վաստակը:

Պետրոսի մանկության օրերումն Ռուսաստանը բարբարոսական աշ-

ճարճ էր. լուսավորությունը, գիտությունը՝ ինչպես վարակիչ ցավք, ինչպես չար աղանդք շարաշար հալածվում էին քսանհինգ միլիոնյա ժողովրդից, այնինչ դրացի Եվրոպան կատարելագործության վերնագույն աստիճանին էր հասած:

Հերոսական ուսերու վերա շալակած յուր ժողովուրդը, Մեծն Պետրոսը հսկայի քայլերով վազեց այդ լուսավոր ժողովուրդներու ետևեն և... հասավ: Դպրոցներ, արվեստատուններ, գործարաններ, նավարաններ, ջրանցքներ և հազար ու բյուր ուրիշ միջոցներ ազգային լուսավորության, ինչպես կախարդական գավազանի զորությունով, երևան եկան Ռուսաստանի մեջ, որ երբեմն ծածկված էր լայնատարած գազանաբնակ անտառներով, ամայի վայրերով և գարշաշունչ մորուտներով:

## ՔԵՐՈՎԲԵ ՊԱՏԿԱՆՅԱՆԻՆ

1875, Նոյեմբերի 10, Նախիջևան

*Քարոզք ուսման, դաստիարակության, զոհաբերության, ազգասիրության, հայրենասիրության և այլ այսպիսի դրսեն փայլուն և ներսեն դատարկ նյութերը արդեն սպառեցան, ժողովրդի ատամները հարվեցան, ականջ<ները> ժո՜ւվ ժո՜ւվ անում են: Բավ է, թողե՛ք այդ գարշելի բաները, խրատով մարդ խելոք չի լինիլ, խելքը պարագան պիտի սովորեցնե: Արի՛ այսուհետև ուրիշ ճամփա բռնենք, իսկական փրկավետ, ժողովրդական ճամփան. արի՛ այն անենք, ինչ որ ժողովուրդը սիրում է, «արի ֆիս տանք», արի՛ բացարձակ հայտնենք, ի՞նչ է պետք ամենից առաջ ազգին, արի՛ ցույց տանք, որ ազգը մինչև ազատություն, ինքնակառավարություն չի ստանա, ոչ դաստիարակություն կստանան նորա որդիք, ոչ ինքյանք կիրթ ու բարոյական կդառնան: Մի՞թե ռուսը նախ կրթվեցավ և ապա ազատվեցավ, մի՞թե Գարիբալդին նախ կրթեց յուր ավազակաման զինվորներին և ապա ազատեց ազգը. ո՞ւր ուզես նայե, միայն ազատ, ինքնակառավար ժողովուրդը կարող է բարոյապես լուսավորվելու, իսկ կրթությունը և ստրկությունը շատ խաղաղ կերպով կկենան:...*

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Եվ ճշմարիտը պետք է ասել, որ կաթոլիկ ժողովուրդները (գերմանացին, անգլիացին, մասամբ ֆրանսիացին, հոլանդացին, դանիացին, շվեդը և քանի մի ուրիշները) իրավունք ունեին ապստամբվելու իրանց*

*հոգևորականների դեմ, վասնզի հոգևորականները բոլորովին ստրկացրել էին իրենց ժողովրդին. ո՛չ միայն հավատի ու եկեղեցվո անունով խաբում էին նոցա և ձեռքերեն փողերը առնում էին, այլև բացարձակ անբարոյականություն էին մտցնում նոցա ընտանեկան կյանքի մեջ, որոնց պատմությունները, արդարև, զզվելի բաներ են։ Այնուհետև կաթոլիկին, այսինքն փափին, հավատարիմ մնացողներին հալածել, նոցա վրա զանազան մեղադրանք, ամբաստանություններ բարդելը եղավ եվրոպական շատ ազգերի համար առօրյա հասարակ խոսք և գործ...*

## ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

*Ինչպես շատերուն հայտնի է, XVIII դարը երևելի է ֆրանսիական ազգի մեջ մի նոր փիլիսոփայություն ծագելով, որ նախապատրաստեց ստրկացած ժողովրդին պահանջել թագավորներեն հպատակներու համար այնպիսի օրենքներ, որով կարող լինեին նոքա առավել երջանիկ վիճակի հասնելու։ Այդ փիլիսոփաները պատմության մեջ հայտնի են էնցիկլոպեդիստներ* (encyclopediste) *ընդհանուր անունով, որոնց մեջ գլխավորներն էին՝ Վոլթերը, Ժան-Ժաք Ռուսսոն, Դալամբերը, Դիդրոն, Մոնթեսքյուն և հարյուրավոր ուրիշները, որոնք մերձավոր բարեկամ և մշտական թղթակից էին մեծ Եկատերինեին, և միշտ խորհուրդ կուտային նորան փոխել յուր հպատակների կառավարության ձևը...*

## ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆՈՒՆ

1879, նոյեմբերի 3, Նախիջևան

*Մեր դարը լուսավորության, դեպի նպատակը ազատորեն բաց ճակատով ձգտող դար է. ամենայն մութ և ստորերկրյա ճանապարհ, ամենայն սողոսկյալ հնար արհամարհելի են մեր օրերումը. մեր դարը և ներկա մարդկությունը սիրում է ազնիվ ճակատ, բաց սիրտ և պարզած դրոշակ և վերջնույս նշանաբանը որոշ և պարզ գործ...*

## <ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

*...Յուր ազգությունը պահպանելը ամեն տեղ և ամեն ժամանակ համարվել է քաջություն, արիություն, նահատակություն։ Ուրեմն մենք անարգե՞նք, թե՞ պատվենք հիշատակը մեր պապերուն։ Մեր ժամանակ-*

վա փիլիսոփայությունով ամենայն զգացմունք պիտի սուս կենա անձնական շահի առջև. բայց մեր պապերը այդպես կարծած չեն. նոքա ասել են՝ լավ է, մի փոքր աղքատ մնամ, մի փոքր տգետ մնամ, մի փոքր հետամնաց մնամ, բայց ամբողջ պահպանեմ իմ ազգությունը։ Սխալվե՞լ է։ Եթե սխալվել է, ուրեմն նույն սխալի մեջ գտնվել են և՛ ամեն ազգերը, որոնք ամեն կերպ զոհեր տալով, պահպանել են իրենց ազգությունը<...>։

19-րդ դարը մեր աչքի առջև, երեկ չէ մեկալ օր խոստովանեցավ հայերու մեկ ամբողջ ազգ կազմելը։ Ուրեմն հայի ազգությունը այսուհետև ճշմարտություն է, որ ընդունեցին և խոստովանեցան ամեն լուսավորյալ ազգեր։

Հայի ազգության համար աշխատելը, ուժ և զոհ թափելը, ապագայի համար սերմանելը և մեր որդոց և թոռներու համար հունձ պատրաստելը ուրեմն հիմարություն չէ, ապարդյուն աշխատանք չէ, այլ մի ճըշմարտություն է, որն չխոստովանողը պիտի համարե իրեն մարդկութենեն դուրս. ինչո՞ւ. անոր համար, որ այսուհետև մեր ազգը ունի ապագա։ Վա՜յ այն հորը, որ յուր որդու ապագայի համար միտք չի անիլ, խելք չի մաշիլ և աշխատանք չի թափիլ...

## ԳԵՎՈՐԳ ԵՎ ՎԱՐՎԱՌԵ ՔԱՆԱՆՅԱՆՆԵՐԻՆ, ՄԱՐԻԱՄ ԱՔԻՄՅԱՆԻՆ

1890, օգոստոսի 9, Թիֆլիզ

Հայաստանից եկած լուրերը, թեև արյունով և արտասունքով են թաթախված, այնուամենայնիվ շատ ուրախալի և շատ մխիթարական են։ Մայրաքաղաքի լրագիրների թղթակցությունները մասամբ իվիք ճշմարիտ են, իսկ մեծավ մասամբ ստություններով լցված են։ Ճշմարիտը այն է, որ թուրքերը ոչ թե մորթել են հայերին, այլ. դեմ հանդիման, ճակատ ճակատի կանգնած հաղթել են, բայց ի՜նչ հաղթություն. նույնքան թուրք ընկել են պատերազմի դաշտում, որքան և հայք։ Կռվի ժամանակ հայերը կորզել են թուրք զինվորների ձեռքից հրացանները և նոցա սվինները դարձրել են թշնամիի կրծքին. և ընկճվել են, վասնզի տաճիկները կանոնավոր զորք են ունեցել, իսկ հայի պատերազմողք եղել են երեկվա ստրուկները։ Իսկ Կ. Պոլսի մեջ բանը բոլորովին այլազգ է եղել[1]. հայ ամբոխի առջևեն ծածանել է կարմիր (ապստամբական) դրոշակը. հայք, թվով 4—5000, զինվորած են եղել թրերով, դաշույններով, ռևոլվեռնե-

րով, իսկ պատերազմի վերջը շատերի ձեռքին եղել է տաճկական հրացաններ՝ նույն իսկ տաճիկներից խլած։ Սուլթանի նիշանը պատառ պատառ են արել և առաթուր են կոխել, իսկ նորա կենդանագիր պատկերը ծածկել են հրացանքի գնդակներով։ Թեև Տաճկահայաստանում ցենզուրան սաստկացել է, բայց ծաղկում է գետնատակ մամուլը և գրականությունը, հրաբուխներ են ժայթքում այնտեղից, որ մերթ պայծառ լույս են արձակում Ասիայի խավարչտին ծածկաբուններում և մերթ որոտնաձայն սթափեցուցիչ հորդորակներ են լսեցնում տարկացած ժողովրդին։ Փոքր Ասիան սարսափելի շարժմունքի մեջ է։ Ամեն կողմից գունդգունդ օգնականներ են գնում. միայն փողի պակասություն կա։ «Մշակի» խմբագրատնում ես տեսա ահագին դեզ եվրոպական լրագիրներից մկրատով կտրած հանած հոդվածների՝ վերաբերությամբ հայկական ապստամբության, որ եթե ի մի գումարես, ահագին հատորներ պիտի լինին։ Էլ ո՛ր ազգի լուրերը չիկային այնտեղ՝ գերմաներեն, անգլիերեն, նոր-հունարեն, իտալերեն, մինչև անգամ սպանիարեն. ես զարմացա, որ մեր հայի հառաչանքը այդպիսի հանրածավալ արձագանք է գտել ամենուստեք և ամեն օր ահագին քանակությամբ լուրեր հասնում են ամեն կողմից։ Բանը այնտեղ է հասել, որ հայք եվրոպական արքայազունների մեջ արդեն պտրում են իրանց ապագա վասսալական իշխանության մի մեծ–իշխանի[2]: Ես զարմացա, հիացա և սարսափեցա, որ այս ընկճված, կարծես թե արդեն մեռած ժողովրդի մեջ այսքան հզոր ոգի էր թաք կեցած, առժամանակ մի ննջած... Հը՞, ինչպես է այժմ. սո՞ւտ էր իմ 35 տարի առաջ կատարած գուշակություններն և տածած հույսերս... Քու անունը իմի հետ միասին շրջում է բերնե բերան և դեպի հաղթություն և ապագա բարօրություն խրախուսում է տարկացած ամբոխին... Օրհնյալ լինի, սիրական Գևորգ, մեր ազնիվ պատանեկությունը, որի խոսքերը այժմ կենդանարար ոգին են ներշնչում ամեն սիրտ և թնդացնում են լեռներ, ձորեր։ Թեև սուլթանը հրամայել է ականավոր հայերին բարեփոխման (Հայաստանի) ծրագիր հորինելու[3], բայց հայերը ո՛չ նորան են հավատում և ո՛չ Սալիսբյուրիին. նոքա զենքը վայր դնելու չեն, մինչև մի ապահով բան չիստանան։ Ահա այսպես է իմ ստացած լուրերն, որոնք, իհարկե, չեն հրատարակվում մայրաքաղաքի լրագիրներում։...

## ՎԱՐՎԱՌԵ ԵՎ ԳԵՎՈՐԳ ՔԱՆԱՆՅԱՆՆԵՐԻՆ, ՄԱՐԻԱՄ ԱՔԻՄՅԱՆԻՆ

1890, օգոստոսի 29, Թիֆլիս

*Հայկական հարցը (ոչ այն, որ գրվում է սև թանաքով, այլ այն, որ խարանվում է նահատակների սուրբ արյունով) հառաջ է գնում՝ օրավուր գրավելով ավելի սրտեր և կլանելով ավելի զոհեր։ (Ի՞նչ է անում այդ միջոցին Մոսկվայի ուսումնատենչ հայ ուսանողությունը. երևի նա սինդ գրավված է հօգուտ և ի պատիվ Հայաստանի արևշատության բաժակներ կոնծելով և հարազատ պանդոկների շեմքերը մաշելով)։ Կարին, Մուշ, Վան և Կոստանդնուպոլիս հրդեհի ճարակող բոցերով են պատած. հայ երիտասարդությունը զինավորվում է և աներկյուղ գնում է մահվան առաջև. ընկնում է անտրտունջ, անքարբառ և միայն վերջին շունչը արձակելիս, կոչում է՝ «կեցցե՜ մանուկ Հայաստան»։ Ռուսահայկան գավառները խումբ-խումբ քաջեր են մղում դեպի արյունով ոռոգված և հրով ճարակված հայրենիքը։ Հայրենիքի բլուրներից ծածանում են ազատության դրոշակներ։ Ո՞ր ազնիվ սիրտ չի բաբախիլ այս սրտառուչ երևույթով. ո՞ր հայ աչք չի թափիլ մերթ հրճվանքի և մերթ սուգի արտասունք։ Ժողովրդի աղքատ դասակարգը ամենայն ինչ բերում է զոհ — և՛ յուր կոպեկները և՛ ցնցոտի լաթերը և՛... հարազատ զավակների (յուր միակ կերակրողի) արյունը։ Իսկ մեր հարուստները՞... Է՜հ, ի՞նչ խոսեմ մեր հարուստների վրա. երբ դուք ինքներդ շատ լավ գիտեք, թե ի՞նչ է նշանակում հայի հարստությունը, այսինքն՝ միջոց (գործիք) անբարոյականության, ապականության, անառակության... Տխրալի՜ պատկեր...*

## ԳԵՎՈՐԳ ՔԱՆԱՆՅԱՆԻՆ

1891, դեկտեմբերի 31, Նոր Նախիջևան

*...Տասնևինն դարու կիսումն հայոց քաղաքական կյանքի մեջ մի անսպասելի բեկումն տեղի ունեցավ. ո՞ր կողմի փչած հովից, ի՞նչ շարժառիթներով էր այդ բեկման պատճառը՝ ես թողնում եմ անպատասխան. բայց որ այդ բանը իրոք պատահեցավ՝ ոչ մի ապացույցի կարոտ չէ, քանզի ամենքս էլ ականատես վկա էինք նորան։ Ամեն ծակուծուկե երևան եկան թաքուցած ույժեր և սկսան գործելու ի նպաստ ազգիս վերածննդյան։ Բարեխիղճ գործողների շարքում հայտնվեցան շատ շառլաթաններ ևս, որոնք իրանց անձնական շահերը ընդհանուրի շահի տեղ*

*վաճառելով՝ աշխատեցան հուշակ ստանալ, փող դրպանել և ազգային գործի գլուխը կանգնել։ Այս ես քեզ շատ լավ հայտնի է։ Հայոց ազգը յուր 6—7 հարյուր տարվա ստրկական վիճակում ո՛րքան և ապականված լիներ, այնուամենայնիվ դեռևս յուր մեջ նշխարած ուներ մաքուր սըրտով, զուտ եռանդով, անապակ գաղափարներով անձինք, որոնք թեև իրանց գործունեության միջոցին շատ սխալների մեջ գլորվեցան, բայց թույլ չտվին, որ սուրբ կրակը, որ վառվել էր ազգային սեղանի վրա, հանգչեր և նորա նվազած կայծերը հասցրին մինչև այժմուս րոպեներըս Այս ես դու գիտես…*

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ

# ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ ՁԱՅՆ

*...Բայց և այնպես ազգերի կյանքի մեջ կան ընդհանուր, խոշոր և անջնջելի գծեր, որ միշտ կարելի է նշմարել. ասենք որ և մարդկությունը, մի օրենք ունենալով հառաջադիմության, հաճախ և միատեսակ մոլորությունների աղբյուր, տալիս է շրջանկատ հրապարակախոսին և բանալին ներգործելու հառաջադիմության և մոլորության դեմ։*

*Ազգերի պատմության մեջ երևում են երբեմն այնպիսի մարդիկ, որ հասնում են պատվի և անվան ոչ թե կյանքի սովորական ընթացքին հետևելով, այլ, ընդհակառակն, այդ կյանքը հեղաշրջելով. և հրատարակվում են դոքա թշնամի իշխանացած կարգերին։ Այդպիսի մարդիկը միշտ գրգռում են ատելություն ոչ միայն քանի որ կենդանի են, այլև մահից հետո՝ մոտավոր կամ հեռավոր հակառակորդների օրերով։ Հակառակորդները առաջ դատապարտելով դորան որպես վնասակար անդամի, ապա դատապարտում են և դորա թողած ուղղությունը, որ դեռևս հաղթաբար հառաջ է գնում։ Այս տաք պատերազմը հայտնի վկայում է, որ հին վարդապետության հիմքը այնքան խախտվել է, որ այլևս կարող չէ դիմանալ ժամանակին։ Թող մեր ընթերցողը ոչ միայն լոկ ընթերցող լինի, այլև վերծանող և մասնակից հայրենի լուսավորության—և հայտնի կ'տեսնե այն ներքին հակառակությունը ու ամուր թումբերը, որոնց հաղթելով, վերջապես մարդկային միտքը ճանապարհ է ձգում դեպի յուր ցանկացած բախտավորությունը։*

*...երբ քաղաքանապես իմաստնացան նույն գերմանական երկպառակ ցեղերը, երբ նոցա ազգայնության գաղափարը բարձրագլուխ հանդիսացավ քան կրոնական խտրությունը, այն ժամանակ և Բավարացին և Պրուսացին մի զենքով և մի սաղավարտով զինվորվեցին ընդդեմ Ֆրանսիացվոց[1]։ Եվ այս բոլոր մտավորական հեղափոխությանը Գերմանացիք հասել են երկար ու ձիգ աշխարհաշինության ճանապար-*

հով, մինչև որ հայրենյաց սերը տարածելով բոլորի մեջ, վերջապես ունցեցին և թրծեցին համագերմանական անոթը…

…պապականությունը յուր երարքիկական կազմակերպությամբ միջին դարերում հասնում է մեծության գագաթնակետին և, որպես Քրիստոսի անմիջական փոխանորդ, կապում է և արձակում է ում և կամի. Թագապսակ գերմանացվոց կայսրը Հենրիկոս երեք օր բաց գլխով ու ապաշխարողի զգեստով ստիպված է կանգնել պապի դռանը այն ձըմեռվա ցրտին և աղաչել թողություն. ինկվիզիցիոնի խարույկը խորովում է ու խաշում անմեղ զոհերին և նույն ինկվիզիտորները տիրում են իշխանների պալատներին որպես խորհրդական և դաստիարակ։ Սակայն մարդկեղեն հանճարի ամենաընտիր մասը—հառաջադիմությունը—անդադար շարունակում է յուր գործը. դա՛ է այն որդը, որ ծածկաբար տաշելով և ուտելով արմատները, կարողանում է ապա և դարևոր կաղնին տեղից գլորել։ Նույն իսկ հառաջադիմությունը, XV դարից սկսած, բերում է արևմտյան եվրոպական հասարակություններին հոգևոր և մտավոր նորոգություն. և այն որ առաջ թվում էր մի նեղ բանտ, ուր մարդու ճգնավորական կյանք պիտի վարեր, այժմ այդ բանտի պարիսպները հետ են քաշվում տիեզերքի լայնության հավասար—և տիեզերքն է մարդու գործունեության հանդիսարանը։ Միջին դարերի երեսին արձակվում է հաստ ու թանձր վարագույր և սկսվում է նոր դարերի գործը։ —Մարդկային պատմագրությունը ձեռք է բերում մի նազելի գյուտ՝ տպագրություն, որ տպագրելով հազարավոր գրքեր, և հազարավոր օրինակներով տարածում է դորանց ազգերի մեջ, բաց է անում դոցա փակած աչքերը, ցնցում է ուղեղը—և հսկայական քայլերով հառաջ է դիմում մարդկային լուսավորությունը։ Նույն միջոցին Քրիստափոր Կոլոմբոսի հանճարով բացվում է Ամերիկան[2]. Ատլանտյան օվկիանոսի մակերևույթին երևում են առագաստավոր բեռնաբարձ նավեր. եվրոպացվոց վաճառականությունը ստանում է համաշխարհային նշանակություն. քրիստոնեական քաղաքակրթությունը պատում է երկրագնդի ծայրերը։ Սորա հետ ձեռնըձեռն գնում է և եկեղեցական կարգերի փոփոխությունը—Ռեֆորմացիա[3],— գլխավորապես ուղղված պապական բռնակալության դեմ։ Հոգևոր դասը, կապելով և արձակելով աշխարհականներին, հասել էր մի այնպիսի սարսափելի հաղթության, որ, թաթախվելով և խրվելով նյութական հոգսերի մեջ, այնուհետև և սրբությունը ծախում էր փողով և մեղքերը ներում արծաթով (ինդուլգենցիա). և պատահում է շատ անգամ, որ ծայրագույն հաղթությունից հետո, ուր ոչինչ չէ մնում հաղթելու, մարդիկ գտնում են յուրյանց կորստյան դարձակետը և զրկվում իշխա-

նութենից։—Այսպես պատահեց և պապականության հետ։ Արևմտյան թագավորությունները, որ յուրյանց հաստատությունը ստանում էին եկեղեցուց կամ, բարվոք է ասել, սորա անսխալական պապերից, այժմ յուրյանց զենքը հանում են նույն պապերի դեմ. աշխարհական թագավորությունը, հետևելով բանականության օրենքին, մնում է յուր հպատակների միակ օրենստուն և աշխատում է իրագործել այս երկրի վերա յուր հոգևոր ազատությունը որպես կետ և նպատակ մարդկային պատմության։ Այնուհետև սկսեցին դալարել և ծաղկել գիտությունները և արվեստները. դուրս եկան և ականավոր մտածողներ, որոնք հետզհետե հեղաշրջեցին հասարակակեցության կերպարանքը թե իրավաբանական, թե փիլիսոփայական, թե քաղաքական մասներով։ Ուսումնասիրելով և կլասիկական հնությունը*, քաղեցին դորա նրբքին շունչն ու հոգին, փրկեցին գրականությունը սքոլաստիկական մեռյալ ձևերից և առհասարակ մտցրին կյանքի մեջ հասունացած գաղափարներ։ Մարդկային լեզուն ու մարդկային պատմությունը այս շրջանում դարձավ ժամանակի ծանրակշիռ խնդիրը. հնախոս մատենագիրները ձեռնամուխ եղան ուսումնական եղանակով վերլուծել հնավոր անցածը։ Համարյա վերջին երեք դարը արևմտյան Եվրոպան հառաջադիմաբար աշխատում է հին աշխարհի շարադրությունները մշակելու, ուսանում է կենդանի և մեռած ազգերի նշանագիր և գրավոր հիշատակարանները, և այսօր մեծամեծ ստացված ունի։...

Ապա ո՞ւր է տանում մեզ մեր այսօրյան դարը. մարդկությունը յուր հազարամյան փորձերից ու սխալներից ո՞րպիսի դասեր է առել, որ նույն սխալների ճանապարհներին չհանդիպի։ —Մեր այսօրյան դարի նշանը է հպատակների ընդհանուր հավասարությունը օրենքի առջև. ոչինչ առանձին արտոնություն, ոչինչ դավանաբանական զանազանություն. քաղաքացու միակ արժեքը յուր առաքինությունն է. քաղաքացու միակ վարձը յուր ազատությունն է։...

---

* Մարդիկ, որոնք պարապում էին կլասիկական գրականությամբ (Հունաց և Հռովմայեցվոց) ստացան մի հասարակ անուն «Հումանիստ»։ Հումանիստները, հին փիլիսոփաների գրվածներին ընծայելով գերազանցություն, հարձակվում էին ժամանակակից պակասությունների վերա. սոցա դեմ զինվորվեցին հետադեմ ուսումնականները կամ սքոլաստիկները, որ և ասվում են օբսկուրանտ, այսինքն խավարամիտ մարդիկ—պաշտպանող մտավորական խավարի և տգիտության։ Այս ժամանակը (XV և XVI դարերը) պատմության մեջ կոչվում է «Դարագլուխ գիտությունների և արվեստների վերածնության», ուր առատաձեռն հովանավոր և խնամատար հանդիսացան Իտալիայում Ֆլորենտինացվոց Միդիչեանները կամ Միդիչյան տան իշխանները։

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

# ԽՈՍԵՑՅԱԼ Ի ԿԱՃԱՌՍ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳՅԱՑ[1]

*...Ուստի Սեր Հայրենյաց ու Միաբանությունը են երկու կարևոր ու առաջին պատճառ ազգի մը ծաղկելուն ու երջանկությանը։ Հազար ու բյուր երանի՜ ինծի, թե որ իմ տկար ու նվաստ ձայնս կարենար այսօր ինչպես որ պետք է ցնցել Հայրենասիրության ու Միաբանության ազնըվությունը ու անոնց մեծաշահ օգուտները, ու ավելի բորբոքել զանոնք ձեր առաքինի սրտից մեջ. դարձյալ երանի՜ ինծի, թե որ աս իմ սակավաբան խոսքերս ձեր ներողամտությանը հանդիպեին, որուն վստահացա ես, այսպեսի իմ կարողութենես վեր պաշտոնի մը մեջ մտնելով։*

*Հայրենի՜ք, ո՛ր ազգասեր սիրտը չի թնդար աս գեղեցիկ ու վսեմ անունս լսելով. Հայրենիք, չկա ասկե ավելի ցանկալի ու սրտի հաճոյական անուն մը. Հայրենյաց սերը սաստիկ բոց մըն է որ կը բորբոքի ազգասիրին սրտին մեջը, որով կը մաշի անիկա, չի կրնար հանդարտիլ, պատեհավոր առիթ մը կ՚սպասե ան սրտին մեջի վառած բոցը դուրս թափելու, ու աս կրակը չի մարիր բայց միայն մահվամբ։ Մեկը ո՛րչափ անպիտան, անհանճար ու մարդկային կենցաղավարության բոլորովին անօգուտ անձ մը ըլլա նե ալ, իր Հայրենյացը փառավոր անունը բավական կը սեպե իրեն, ու անով կը պարծի օտարներուն առաջին. իսկ առաքինին ու հանճարավորը միայն անով գոհ չըլլար, կը նայի որ բոլոր իր մտքին զորությունը, կարողությունը, բոլոր իր ունեցածը ու ինչվան նաև իր անձը Հայրենյացը նվիրե, ու անով կը ջանա անոր անունը ավելի պայծառացնելու... Տեսնելով որ տգիտության թանձր մշուշը պաշարեր է իր ազգը ու խղդել կ՚ուզե զան սոսկալի խավարի մը մեջ, միտքը կը դնե շուտով դարման տանիլ այն ահագին թշվառությանը. ամեն տեղ իմաստության, գիտության ճրագները կը վառե, կը փարատե մշուշ խավարը. տգիտությունը ամչնալով իրմե կը փախչի. ու ազգը կը խնդա։ Ճշմարիտ ազգասերը իր Հայրենիքին մեջ բնակելն ալ մեծ երջանկություն կը սեպե,*

ու թե որ անողոքելի բախտին հրամանովը ստիպվի թողուլ իր ծննդյան տեղը ու օտար երկրներ պանդխտանալ, սիրտը Հայրենյացը մեջ կը թողու, տրտում աչքերը միշտ ան կողմը կը դարձնե, ուր որ կը բնակին իր սիրելի ազգակիցները, ու քանի պանդխտությունը երկննա, այնչափ ալ Հայրենյաց տեսության տենչալի փափաքը կ'ավելնա սրտին մեջ։ Ճշմարիտ ազգասերը Հայրենիքին պաշտպանությանը ու անոր փառքը ու պարծանքը պահելու համար իր կյանքն ալ բանի տեղ չի դներ, որով և հոժարությամբ զոհ կ'ըլլա անոր։ Հայրենասիրին սիրտը անհաղթելի է, չկա մեկ սոսկալի դժբախտություն մը որ կարենա ընկճել անոր հաստատուն ու ամուր միտքը և հոգին. ու թեև վիշտք, նեղությունք, տառապանք, հալածումն իրեն անհաշտ թշնամություն կապեն, ու սկսին անոր հետ կռվըտիլ, ինքը անշարժ կը կենա իբր մեկ քար մը կատաղի ալիքներուն դեմ, երկայնամտությամբ ու միայն ազգին բարիք ընելու նախանձովը, անխտիր ամեն բանին կը հաղթե...

## ԽՈՍԵՑՅԱԼ Ի ԽՆՁՈՅՍ ՄՈՒՐԱՏՅԱՆ ԵՎ ՌԱՓԱՅԵԼՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ[2]

*Տյա՛րք,*

*Երկրիս վրա ամենայն ինչ մշտաշարժ և հառաջխաղաց ազդեցությամբ տնօրինյալ է։ Մարդկային սերնդոց անցած ճամբաներուն վրա հանդիման կը տեսնենք այս անփոփոխ օրենքը։ Այս օրինաց հպատակելու համար ազգերն ամեն կողմ ծավալելով, ամեն կողմ ցանվելով և ամեն տեղ խոր արմատներ ձգելով, բողբոջեցին, աճեցան և բարձրացան սերունդ սերնդոց հաջորդելով՝ ազգ զազգ մղելով լեցուցին զաշխարհ, կանգնեցին քաղաքներ և պետություններ, լեռներ հարթեցին և հարթահատակ գետնեն երկնաչափ շինվածներ բարձրացուցին, անդունդները հետազոտեցին, և ծովը սանձելով անհուն սահմանները համառոտեցին։ Ի զուր մահը զանոնք կը հնձե, ի զուր ժամանակը յուր ոտքին տակ զանոնք կը ճմլե, հսկայակերպ կոթողներն ու շենքերը հող կը դարձնե ու յուր թևերուն վրա կը հափշտակե կը տանի փլատակաց փոշին։ Անխոնջ ու անընկճելի գործավորք միշտ դարձյալ կը կանգնեն, երբեմն ստությունը պաշտելով, երբեմն ճշմարտության ծունր դնելով, երբեմն սիրով ու կըրակով արյունանիշ ճամփա մը բանալով, երբեմն ալ քան զսուր և զկըրակ զորավոր իրավանց և բանականության զինուքը հաղթանակելով։ Անոնցմե ոմանք Սինայի որոտմունքներեն օրենքներ կ'ընդունին, ոմանք*

լիբյական ավազուտին մեջ բրգանց վրայեն սպասած ժամանակաց աս-
պարեզ կը կարդան. այլք Ալեքսանդրի՝ Կեսարու՝ Մեծին Կարոլոսի և Նա-
պոլեոնի հետ գերանդավեն կառքով երկրիս շրջանը կ՚ընեն, և ուրիշները
անդնդոց ուղևորյալ՝ փոթորկաց մեջեն նոր աշխարհքներ դուրս կը հա-
նեն. մերթ բռնության լուծին տակ ընկճվելով, և մերթ բռնությունը շան-
թահարելով. ու ստության և բռնության փչմունքովը մարմրած բոցերն
ու լույսը միշտ իրենց զորավոր շնչովը կենդանացնելով հառաջ քալած են
ազգերն. վասնզի տիեզերաց օրենքին մեջ դադարման կամ հանգստյան
միջոց չկա. անընդդիմակաց ուժ մը կը մղե զիրենք դեպի հառաջ. ու քա-
նի որ հառաջացեր՝ այնչափ ալ մարդկության հորիզոնն ընդլայներ ըն-
դարձակեր է աչքերնուն առջին ու իրենք չեն ընկրկած անբավության գի-
մաց: Այդ ազգերուն մեջ մեկ ազգ մը կա, ու այդ ազգը Հայոց ազգն է.
Վանա ծովուն հանդիպակաց դաշտեն սկսյալ, ուր Հայությունը առաջին
անգամ վազեց ամենասուրբ իրավունքի մը համար, ու Գերեզմանաց
բլրեն՝ ուրկե ազգությունը բարձրացավ բռնության հողմած դիակին
վրա, մինչև Կապան բերդը, ու անկե մինչև մեր օրերը՝ ինչ ժամանակի
շրջան, ո՛րչափ դյուցազունք, ո՛րչափ արիական գործեր ու վեհ առաքի-
նությունք, ո՛րչափ փառաց ու զարմանաց հիշատակներ. բայց և ո՛րչափ
թշվառությունք և ոճիրք, ո՛րչափ արյուն արտասուք, կործանումն և ա-
վերակք... բայց ես սրտահառաչ ձայնիվ կը հրավիրեմ ձեզ, կը հրավի-
րեմ բոլոր ազգը ու ծունր դնելով մեր պատմության անհուն դամբանին
առջին, կը հորդորեմ զամենքն ալ մեկդի դարձնել աչքերը ավերակաց
վրայեն, վեր առնուլ գլուխները անցելոց վհեն ու դիմաց նայիլ ու առաջ
քալել: Հառա՛ջ, այս է մշտաթավալ աստեղաց ձայնը, բոլոր բնության
ձայնը, վերջապես Աստուծո ձայնը, հառաջ՝ ժամանակիս լուսովը. հա-
ռաջ՝ դեպ այն ճամբան ուր առաջնորդ կեցած են այնչափ վսեմ հան-
ճարներ ու բարերարներ, ուր առաջնորդ կեցած են նաև Մուրատ և Ռա-
փայել: Հարկ էր այս երկու անուններուն դիմաց մեծարանոք կանգ առ-
նուլ ու խոսիլ ինչ որ ժամանակը ու երախտագետ պատմությունը պիտի
խոսին իրենց վրա. հարկ էր հիշել մեր մանկության երջանկավետ օրե-
րը, օտար բայց բարերար աստեղաց տակ. սակայն անոնց վեհագույն ո-
գիքը ժամանակ չեն ի տար ինծի ու հետս կը կոչեն. հառա՛ջ առ զարգա-
ցումն և առ լույս. ու այդ ահեղ ճամփորդությանց դժվարությանց ու վը-
տանգացը մեջ զիրար ավելի աղեկ ճանչնալու համար, իրարու «եղբայր»
անունը տվեք[3], ավելի զորավոր և աննկուն ըլլալու համար ամենքնիդ ալ
մեկ սիրտ եղեք, և եթե փորձանք և արգելք բուռն զորությամբ կանգնին

ձեր դիմացը, մի՛ երկնչիք անոնցմե. ալեկոծմունք և փոթորիկք ավելի հառաջ պիտի մղեն զմեզ ժամանակաց ճամբուն վրա, մինչև հասնինք Աստուծո մեզի մատնանիշ ըրած լուսավոր ժամկետը. ու երանի՜ մեզի եթե ետ մնացողներեն չըլլամք, մենք որդիք Հայկա՝ ծնունդք երախտյաց Մուրատա և Ռափայելի։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

## <ԱՌ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԵՅ>

*Շատ անգամ հանճարի փոթորկին մեջ խարխուլ հյուղի մը տախտակը կը տարուբերի լոկ. երբ այն փոթորիկը կը դադրի, աղետալի վերջալույսի մը մեջ վայրի ծառէ չոր տերև մը կ'իյնա. այն տախտակը անհուշության հողակույտը հարդարող ցուրտ թի մ'էր, և այն տերևը դուցե համաստեղություններեն իյնող աստղի մը շուքը։*

*Ի՜նչ, ի՜նչ հանճարներ հյուղին այն գահոսային սեմին վրա խամրեցան կամ մարեցան. հասարակաց գերեզմաններու մեջ հողակույտներ կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային, բայց կայծը սրտի թանձր խավարին մեջ առանց երբեք հրահրելու թաղված է...։ Հանճարը վհին մեջ գանկ մը եղավ, առանց՝ մարդկության եթերին մեջ դիցավոր մը ըլլալու։*

*Ես ալ ժամանակե մը ի վեր այն սեմին վրա կը դողդողամ կամ կը պլպլամ՝ առանց հանճար մը ըլլալու, այլ մարդկային հեղափոխական հրաբուխին բոլորտիքը դեգերող արյունած աչք մը որ անոր կայծերը կ'ընդնշմարե՝ իր հոշոտած զոհին արյան կայլակները դիտող վագրի մը պես։ Ես կ'ուզեմ այն հեղափոխական հրաբուխեն, այն սիրո Հնոցեն, այն մարդկության արշալույսեն՝ Գողգոթայեն ձգտիլ մինչև այն Գահոսը՝ այն գոս արմատը, այն մարդկության վերջալուսային տժգույն հորիզոնը՝ հյուղը։...*

## ԱՌ Պ. Տ. ԱԴԱՄՅԱՆ

*...միշտ ձանձրալի է այժմյան աշխարհը, անոր համար որ ուղեղին մեջ չահ մ'ունի. աշխարհի քաղցրությունը վայելելու համար այն դարին մեջ շնչելու է, որ քուրձ կը հագնի և կը սիրե. փիլիսոփա աշխարհը ըսել կ'ուզեմ, որ արդեն ուղեղներու մեջ կը սաղմնի... Բայց հիմա սրտի ծալքերը թղթատելու ժամ չ'է...*

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ

# ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՅՈՒՐ

*Ժո՛ղովուրդ, ելեք, ոտին կացեք, բարև բանեցեք, զի եկավ քաղաքակիրթ աշխարհ և կ'ողջունե մեզ. այլ զգուշացեք, ժողովուրդ, դարձյալ սուր կա 'ի ձեռին և կը մխե ժողովուրդին կողը։ Միթե նոր քաղաքակիրթ աշխարհին գահերը հին աշխարհակալաց ոգին, փառասիրության տենչ և գահ գահին վերա հաղթանակ տանելու փառք փոխե՞ց արդյոք։*

*Ո՛չ, ո՛չ, այլ առավել ևս զորացավ ու զայրացավ այդ ոգին, որ ահավասիկ ազգ ազգի դեմ և թագավորություն թագավորությանց դեմ կ'որոտա Կըրուպի թնդանոթով և կ'սպառնան միմյանց ճետն ու հիշատակ ջնջել աշխարհիս երեսեն։*

*Ո՞վ կը հավատա այլևս, թե կռվող գահերն երբեմն կը միանան, զիրար կը գրկեն, ուխտիվ խաղաղության դաշնակցություն կը կապեն և խընամով կը գրեն զայն մագաղաթին վերա, որ չպատառի և անջինջ մնա։ Բայց մեր դարու քաղաքականության սոսկալի դիվանագիտությունը, եթե չկարենա այդ մագաղաթի խաղաղության դաշնագիրը մի մասով պատռել, սուր ժանիքներով կը պատռե և արագ-արագ պատերազմի հրովարտակը կը գրե։...*

*Ո՛վ աներևույթ և անծանոթ ժամանակ. մեծն Սողոմոն քո փոփոխական երևույթները պեսպես գույներով կը նկարագրե. «Ամենայն իրաց ժամ է և ժամանակ. ժամանակ պատերազմի և ժամանակ խաղաղության. ժամանակ շինելու և ժամանակ քակելու. ժամանակ կորուսանելու և ժամանակ խնդրելու, ժամանակ լալու և ժամանակ ծիծաղելու. ժամանակ խոսելու և ժամանակ լռելու»[1]։*

*Եվ ես կը հավելում առ այս. ժամանակ ստրկության և ժամանակ ազատության. ժամանակ չարչարանաց և ժամանակ փրկության. ժամանակ զրկանաց և ժամանակ հատուցման. ժամանակ կործանելու և*



12—1254

ժամանակ կանգնելու. ժամանակ ինքնահրաման պետության և ժամանակ Սահմանադրության...

Ո՛վ ավերիչ ժամանակ. բազում ժամանակ է, որ արևելյան երբեմն մեր բարգավաճ և հարուստ աշխարհ հիմնահատակ քանդվեցավ, շեն շեն գյուղեր և քաղաքներ առ՚ի չգոյե բնակչաց ավերակ դարձան, մնացորդ ժողովուրդ հայրենիքեն հեռացած պանդխտության մեջ անարգ ծառայությամբ կը չարչարվի։ Արդյոք վերաշինության ժամն հասա՞վ։...

...Արդյոք մեր կորստյան գյուտի ժամն հասա՞վ։

Ո՛վ սգո և սգավորաց ժամանակ. Ավետարան երանի կու տա սգավորաց, այլ մինչև ե՞րբ սգանք ու լանք, միթե մեր աշխարհ մեռելոց աշխա՞րհ է, մեր կյանք գերեզմա՞ն է, մեր գոյություն ոչնչությո՞ւն է, մեր բնակություն բա՞նտ է, մեր կապանք հավիտենական շղթա՞ է. ո՛վ Տեր, ժողովուրդ լի եղև սրտմությամբ։ Արդյոք յուր մխիթարության ու խնդության ժամն հասա՞վ։...

Արդյոք դատաստանի և իրավանց հատուցման ժամանակ հասա՞վ։...

Արդյոք գետնաթավալ մեռելատիպ ժողովուրդին վերանորոգ հարության ժամն հասա՞վ։

Ո՛վ ժամանակ, դու գիտես, որ հարվածող գավազանին տակ ստրկական երկյուղով փակված ժողովուրդին բերանն ու լեզուն՝ որ յուր կյանք պահելու համար սովորած էր միայն լռություն պահել և ապտակողին դեմ անմռունչ կերպով մյուս երեսը դարձնել, եթե մերթ ընդ մերթ ազատ մռմռալ յուր ազատության ճիչ և ձայն հաներ, այն ևս կը ճնշվեր խիստ օրինաց ներքև. ուստի մեր աշխարհի զրկանաց և անիրավության բազմատեսակ վերքեր միշտ ծածուկ մնաց, վերջապես նեխեցավ ու փտեցավ, ամեն որ դարմա՞ն, դարմա՞ն կ'աղաղակեն։ Արդյոք խորհելու, գրելու և խոսելու ժամանակ հասա՞վ։

Հասա՛վ, հասա՛վ այն ազատաբեր ժամանակ. քեզ ավետիս կու տամ, ժո՛ղովուրդ, լռած լեզուդ և փակված բերանդ բա՛ց այսուհետև. խոսիր և գրե՛ որչափ սահմանագիր Օրենք[3] քեզ ազատություն կու տա. խոսի՛ր, երբ կը զրկվիս, խոսի՛ր դատավորաց առաջ, երբ ապիրատ ձեռք զքեզ կ'ապտակեն. խոսի՛ր և իրավունք խնդրե. «Եթե չար ինչ խոսեցա, վկայե՛ վասն չարին. իսկ եթե բարի՝ ընդե՞ր հարկանես զիս»[4]։ Գիտցի՛ր, որ ազատ Օրենք զքեզ չի փրկեր, եթե դու դարձյալ ստրկությամբ վարվիս քո ոսոխ դատախազին առաջ...

Ազատությո՛ւն տուր, ո՛վ մանուկ Սահմանադրություն, ազատությո՛ւն կը խնդրեմ քեզմե, որ առ քո սնուցիչ դայակներն ազատաբար խոսիմ. զի այլևս չեմ կարող հին ծառայական ստրկությամբ խոսիլ...

Ո՞վ շռայլող ժամանակ, եկավ հասա՞վ արդյոք այն ճշտող և տընտեսող ձեռք, որում սահմանադիր Օրենք և ճշմարիտ քաղաքակրթություն մեր Նոր Հռովմա անկոպար կյանք անտեսությամբ չափավորե և մեր աշխարհի պետական վարիչներ ճոխություն արդարությամբ վայելեն, հիշելով աշխատող ժողովուրդին զրկանքն ու չարչարված կյանք։

Եթե այսպես չլինի, և Նոր Հռովմ յուր խորդ չփոխե, զի՞նչ կը լինի արդյոք այս ներկային ապագա հետևանքն.— այն կը լինի, որ ավասիկ եղև և կատարեցավ և սակավին կը լինի։ Ավա՜ղ, որ անագան զգացին խելամտող ոգիներ, որոց ձեռքն էր Պետության վարիչ սանձ. թե երբ հարստահարիչ ծանրացող ձեռք ժողովուրդին տուն ու տեղ քանդե, այնուհետև մտաբերել պետք է, թե երջանիկ Վոսփորին փառքն ու բարձրություն կանգուն կը մնա՞։

Ո՞վ ժամանակ և Սահմանադրություն, պիտի կարճե՞ս այսուհետև այն հարստահարող կողոպտիչ ձեռք, որ հողագործին եզները լծերեն չարձակեն և մաճկալ սրահար առնելով՝ արյուն և արցունք վազեն յուր վարած ակոսներու մեջ, ուր պետք էր ցորենահատեր ցանվեին, հաց բուսներ։...

Ո՛վ ժամանակ և սահմանադիր Օրենք, պիտի կարճե՞ք այսուհետև կաշառակեր[5] դատավորաց ձեռք, որ պատրվակով չխաղան քեզ հետ... Օրե՜նք, Օրե՜նք ասացին և առանց արդար օրինաց գործեցին. առհասարակ դատավորական աթոռներու վերա տիրեց օրինաց զեղծումն, և երկրին դատավորները «Օրենսդրություն՝ բռնություն մեր եղիցի» ասելով բռնաբարեցին զրկյալ բողոքողին իրավունքը։

...դուք պիտի հանեք ու բառնա՞յք Օսմանյան տերության երկրին այլևայլ ժողովրդոց սրտեն թշնամության, ատելության և խտրության վես ոգին, որ զան միանան 'ի միասին, մի ամբողջ միություն կազմեն Մահմեդական և Քրիստոնյա ժողովուրդներ, թողուն այն հին և հավիտենական ոխն ու մոլեռանդություն վառող աշխարհավեր կրակն. հանդարտին այդ հակառակ տարրերներ, Տաճիկ, Հույն, Հայն, Հրեան զիրար ողջունեն իբրև համաքաղաքացի ժողովուրդ, և ուխտիվ կնքեն ու պահեն այն դաշնադրություն՝ զոր սահմանադիր Օրենք կը նվիրագործե։...

...հավասարություն իրավանց և պարտուց մեջ, հավասարություն երկրին օրինաց առաջ, հավասարություն հայրենյաց ժառանգության մեջ. հավասարություն փառաց և պատվո մեջ, հավասարություն զինակրության և զինվորության մեջ, հավասարություն քաղաքացիության և ազնվականության մեջ, հավասարություն ուսման և հառաջադիմության մեջ, հավասարություն արյան և անձնանվիրության մեջ, հավասարություն

*արժանավոր վարձուց մրցանակին մեջ. ահավասիկ ա՛յս է սահմանադիր օրինաց անխախտ հավասարության կշիռն ու ճշգրիտ պատկեր:...*

*Քո դեղն և դարման ի՞նչ է, գիտե՞ս, ո՛վ ստրկացած մահամերձ ժողովուրդ, ազատություն և քաղաքակրթությունն է. և այն է միակ, որ պիտի բառնա գլխեդ կախահարիչ հարվածներ, որ քո ազատ ուղեղը ճըն-շելով ճնշելով ցնդեց. ո՛հ, չթողուց երբեք, որ դու ազատ խորհիս, ազատ խոսիս, ազատաբար ճանչնաս քո պարտքն և քո իրավունք, զոր կը սահմանադրե անբռնադատ Օրենք:*

*...միացյալ ժողովուրդ Թուրքաստանի... մինչև ցարդ ամեն զրկանոք վարվեցան քեզ հետ, ծանր ծանր պարտիքներ պահանջեցին քեզմե և իրավունքներդ գլացան, միշտ զրկվեցար ու բողոքեցիր, բայց քեզ ոչ ոք լսեց. այնուհետև սովորեցար անմռունչ մնալ միշտ կոտրիչներուդ առաջ:*

*«...միթե փոքրիկ ձկներ մեծերուն կերակուր չե՞ն, ինչպես որ ճընճղուկներ որսկան բազեին. ո՞չ ապաքեն բնության կարգ և օրենք այս է բովանդակ աշխարհին վերա, որ միշտ զորավորներ տկարներուն տիրեն»:*

*Մի՛ հավատար, ժողովուրդ. այդ վարդապետությունը տիրապետող ոգին ստեղծեր է, մարդասեր և արդար Աստուծույն չէ. զի ընդհանուր մարդկության կոչումն և կյանք՝ ազատություն, արդարություն և հավասարություն է Երկնից առաջ և աշխարհիս քաղաքակրթության օրինաց առաջ:*

*ժողովրդոց մնացորդ նշխարներ դարձյալ հուսալից աչքով քեզ կ՚սպասեն, ո՛վ ժամանակ. արդյոք այդ փոշիացած և միանգամայն ողջ մնացած նշխարներն՝ որք աշխարհիս հզոր ու տիրող առյուծներու ժանիքներուն մեջ ծամվելով ծամվելով տակավ տակավ կ՚սպառին. պիտի բերե՞ս այն ազատության օրը, զի այդ փոշիացած նշխարներ մեռելության մոխրոց մեջեն հառնեն ինչպես փյունիկ, կրկին վերակենդանություն ստանան և Աստուծո ազատաստեղծ մարդիկ՝ մարդոց բռնացող ժանիքներեն ազատին:*

*...ժողովրդոց հույս միշտ կենդանի է և չեն թերահավատիր, այլ կը հավատան միշտ, թե դու պիտի բերես այն դուշակյալ ոսկեդար, որում գոռոզ առյուծն՝ աշխատավոր եզին հետ բնակի. ինձն՝ ուլին հետ մակաղի, բարձր գահեր՝ հին հպարտությենեն խոնարհին և ժողովուրդ ազատություն համբուրե...*

*Ոսկին, հարստություն, գահն և թնդանոթ միշտ դաշնադիր կը մընան աշխարհիս վերա, ժողովրդոց ընկերհաշտական միություն այս հը-*

*վոր դաշնակցաց դեմ պիտի մրցի մինչև 'ի կատարած աշխարհի. թե իմաստուն եմ՝ գուշակե այժմեն, թե ո՞վ պիտի հաղթահարե։*

*...չարիքները չարարվեստ մարդկանց գյուտն է, և մարդն է հեղինակ չարյաց ու բարյաց. զի նորա սրտին մեջ կա ու կը դարանի չարության և բարության գանձ. և երբ ուզե զայն 'ազատաբար 'ի դուրս կը բխե[6]...*

*Ո՛վ երկնային Սեր... կը թողո՞ւս այլևս, որ աշխարհիս բուռն փորձության յուր ծանր գավազանով տակավին տիրե ու ճնշե սարկացած մարդույն վերա, որ մինչև 'ի գետին կորաքամակ եղեր է։*

*Կը թողո՞ւս այլևս, Տեր, որ չարերը չարությամբ զորանան և չարաչար բռնադատեն քեզ հավատացող ծառաները...*

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՖՐԱՆՍԻԱ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱ

*Երբ որ առաջին հեղափոխությունից հետո Ֆրանսիայի զորքը Եվրոպայով էր անցնում, նա համակրություն էր գտնում բոլոր ազգերի մեջ*[1]...

*Թշնամիներն անգամ անհոժարությամբ պատերազմում էին նրա դեմ,—որովհետև ֆրանսիական զորականների սրտերի մեջ դրոշմված էին* ազատության և հավասարության *հավիտենական գաղափարները...*

*Այժմ Ֆրանսիան կռվում է կայսրության դրոշակի տակ...։ Ֆրանսիայի զորքը առանց մի որևիցե գաղափարի պատերազմի է գնում։*

*Ընդհակառակն նա պիտի կռվի մի մեծ և արդար սկզբի դեմ։ Պատերազմի խնդիրն է արգելել Գերմանիայի ներքին և քաղաքական զորության աճման։*

*Ուրեմն նա գնում է մի մշտնջենավոր իրավունքի դեմ, մի ազգի յուր անկախությունը հիմնելու, յուր միությունը հաստատելու իրավունքի դեմ։*

*Մի՞թե Ֆրանսիայի ազգին, այն ժողովրդի ազգին, որը յուր հեղափոխության միջոցով հայտնել է մարդկությանը անհատական և հասարակական իրավունքի բարձր գաղափարները,— Գերմանիայի պես արդյունավոր տարրը իրավունք չպետք է ունենա միությունը ձգտել։*

*Մի՞թե մարդկային իրավունք պաշտպանող ազգությունը պետք է արգելք դնե հարևան ժողովրդի ազգային շարժմանը։*

*Այժմ Ֆրանսիայի դրոշակը չէ նշանակում ինչպես առաջ ազատություն, այլ նշանակում է բռնավորություն...*

*Բայց ով կարող էր իրան երևակայել, որ Ֆրանսիան մինչև այս աստիճան փռել է Նապոլեոնի անբարոյական, ամեն ազատություն, անհատություն ոչնչացնող կառավարության տակ։*

*Ֆրանսիան այն աստիճանին ընկել է այս անընդունակ և անբարոյական կառավարության տակ, որ այժմ Գերմանիայի պատերազմը*

Ֆրանսիայի դեմ՝ կարելի է անվանել ազատության պատերազմ սարկության դեմ...

Գերմանիան նշանակում է ազատություն, իսկ Ֆրանսիան միայն հեղափոխություն, ուրեմն Գերմանիան պաշտպանում է արդյան մի գաղափարը, իսկ Ֆրանսիան դժբախտապես հետևում է մի հնացած գաղափարին։

## ԱՅԺՄ ԿԱՄ ԵՐԲԵՔ

Այժմյան պատերազմը, այժմյան կռիվը Թուրքիայի քրիստոնեության մահմեդականության դեմ[3], ոչ թե միայն ապստամբված քրիստոնյա ազգերի գոյության համար կռիվ է ճնշող մահմեդական լուծի դեմ, բայց այդ պատերազմը ունի լայն, ընդհանուր, համայն-մարդկային նշանակություն՝—դա քաղաքակրթության կռիվ է բարբարոսության դեմ։

Այդ է պատճառը, որ Թուրքահպատակ քրիստոնյաների շարժումը պետք է հետաքրքրե ամբողջ կրթված աշխարհը, Թուրքահպատակ քրիստոնյաների դրությունը պետք է գրավե ամբողջ Եվրոպայի ուշադրությունը։

Այժմ, երբ ճնշված քրիստոնյաների մեծ մասը զենքը ձեռին պաշտպանում են իրենց մարդկային իրավունքներն, անխղճություն կլիներ Եվրոպայի կողմից թողնել Թուրքիային հպատակ քրիստոնյա ազգերից մինը անպաշտպան՝ զոհ լինել մահմեդականության, թույլ տալ կլանվել նրա ոչնչացնող տարրի մեջ... Դա կլիներ ոչ թե միայն անխղճություն, բայց և հեռու ասիական երկրներում քաղաքակրթության լույսի տարածման անհրաժեշտության կողմից, վերջապես գործնական կետից՝ դա անիրավություն կլիներ...

Ցավալի է, երբ տեսնում ենք, որ մի Եվրոպական զորեղ պետություն, Անգլիան, ընդունել է և պաշտպանում է այդ անխղճության, այդ անիրավության քաղաքականությունը[4]...

..Թուրքահպատակ հայերը իրանց թշվառ դրությունից դուրս գալու համար կարող են օգնություն սպասել, եթե ոչ անպատճառ նյութական, գոնե բարոյական՝ միայն մի Եվրոպական պետությունից, այն է Ռուսաստանից...

Հայերին Փոքր-Ասիայում, Հայաստանում սպառնում է կատարյալ կորուստ։ Եթե Թուրքիան սլավոնական ցեղերի հետ պատերազմից հաղթող դուրս գա,— հայերը կորած են. եթե Թուրքիան հաղթվի, եթե ստիպ-

*ված կլինի թողնել Եվրոպա և այդ վայրենի մոնղոլական ցեղը կդիմե դեպի ասիական գավառները,— հայերը նույնպես կորած են...*

*Այդ կրիտիկական րոպեում, երբ հայտնվեցավ բացարձակ պատերազմ քրիստոնեության և մահմեդականության մեջ, երբ վերջապես քրիստոնյա տարրը կամենում է մահմեդականության հետ իր բոլոր անցած հաշիվները դրստել,— հայերի համար դա նույնպես մի վճռական րոպե պետք է համարվի՝ այժմ, կամ երբեք...*

## ՄԻՆՉԵՎ ԵՐԲ

*Մահմեդականությունը և տասնևիններորդ դարի գաղափարները անհնարին է իրար հետ հաշտեցնել. մահմեդականությունը և անընդհատ առաջադիմությունը չեն կարող ձեռք ձեռքի տված ընթանալ...*

*Այն գլխավոր սկիզբները, որոնց վրա կայանում է ժամանակակից քաղաքակրթված մարդկային հասարակությունը, չունի մահմեդականությունը։ Ժամանակակից հասարակության հիմնական սկիզբները սրանք են, որ և կազմում են ժամանակակից պետական կազմակերպության գլխավոր հիմքերը՝* անհատական *զարգացում,* աշխատանք *և* հավասարություն...

*Երբեք պատմության մեջ տեսած չեք որ մի ազգ, հպատակ լինելով մի օտար, մանավանդ իրանից ստոր զարգացման պետության՝ առաջ գնար, զարգանար, ապահովեր իրան, իրավունքներ ստանար՝ հլու, ստրկային, անպայման հնազանդությամբ, առանց երբեք իր իրավունքները պահանջելու...*

*Մենք ասում ենք՝ տունը քանդվում է, ընկնելու, ավերակ դառնալու, փուլ գալու վրա է, շուտով դուրս եկեք այնտեղից. երկաթը ձեռին քանդեցեք նրա ծռած, սպառնող պատերը,— եթե ոչ ամենքդ էլ նրա ավերակների տակ կմնաք, իսկ նրան քանդելու ժամանակ գուցե և ձեզանից շատերը կզոհվեն, կսպանվեն գլխին ընկած ագուռների և գերանների ծանրության տակ,— բայց դարձյալ շատերը և ոչ թե ամենքը...*

## ԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ

*Եթե դուք կամենում եք իմանալ թե ի՞նչ գլխավոր հատկություններ տեր է այս կամ այն ազգը, ի՞նչ է մի ազգի գլխավոր հատկությունը, ի՞նչ է նրա հանճարը,— պետք է ուշադրություն դարձնեք թե ինչ տեսակ, ինչ հատկության տեր մարդիկ գլխավորապես է արդյունաբերում այս կամ այն ազգը...*

Մինչև վերջին ժամանակները հայոց ազգի մասին ամբողջ աշխարհը համոզված էր, թե այդ ազգը ունի խելք, ընդունակություններ, արդյունագործական, առևտրական ոգի և այլն,— բայց որ հայերը վախկոտ ժողովուրդ են և զուրկ են բոլորովին զինվորական հատկություններից։ Այդ տեսակ համոզմունք կազմված ուներ ամբողջ աշխարհը հայոց ազգի հանճարի մասին։

Ներկա թուրքաց-ռուսաց պատերազմը ապացուցեց մեզ հակառակը։ Այն ազգը, որ հայտնի էր որպես զինվորական ոգին կորցրած, առևտրական, վախկոտ ժողովուրդ—հանկարծ արդյունաբերում է անթիվ քաջեր՝, սկսած հասարակ սոլդաթներից, միլիցիայի զինվորներից՝ մինչև զորքի գլխավոր առաջնորդները, մինչև առաջնակարգ զորապետները։

Կարելի՞ է արդյոք, որ մի վախկոտ բնավորություն ունեցող ազգից դուրս գային անթիվ քաջեր, կարե՞լի է արդյոք, որ հետևանքը ծնունդ առնե առանց պատճառի, կարե՞լի է արդյոք, որ ջուրը վազի առանց աղբյուրից դուրս գալու... Անկարելի է։

Այն ազգը, որ հարկավոր ժամանակ ընծայում է այդքան թվով քաջ և ընդունակ զինվորականներ, ինչքան վերջին պատերազմում հայերը ընծայեցին ռուսաց զորքին,— այդ տեսակ ազգ վախկոտ չէ կարող լինել։ Այդ տեսակ նշանավոր, աչքի ընկնող երևույթ ակամա ստիպված ենք համարել մեր ազգի հատկությունը, մեր ազգության հանճարը։

## ԱՅԴ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷՐ

Մի ազգ կարող է ունենալ ամենաերևելի գրողներին, կարող է ծնած լինել ամբողջ աշխարհում նշանակություն ստացած գրականություն, կարող է նշանավոր պատմական, փիլիսոփայական գրվածներ ունենալ, կարող է արդյունաբերած լինել աշխարհահռչակ բանաստեղծներին,— բայց մի ազգի հասարակական և քաղաքական վերածնությունը միշտ սկիզբ է առնում գրականական այն ձևից, որ անվանում են՝ ինքնաճանաչություն։

Ճշմարիտ է, ազգերի բարոյական և մտավոր կրթության գործի համար ամենից շատ արել են այնպիսի մարդիկ, ինչպես Շեքսպիր, Գյոթե, Շիլլեր, Բայրոն, Լեսսինգ և ուրիշները, բայց ազգերի հասարակական, և մանավանդ քաղաքական կյանքի վերածնության վրա գլխավորապես ներգործություն են ունեցել անխոնջ ինքնաքննության մեթոդին հետևող գրողները, հասարակական ախտերի անխնա մտրակողները...

Բախտավոր է Ֆրանսիան, որ ունեցել է Վոլտերին, բայց և Գերմանիան իր Հայնեին և Բյորնեին...

Վերջապես և Ռուսաստանի հասարակական վերածնությունը սկսվում է ոչ թե հանճարեղ Պուշկինից, կամ բայրոնական Լերմոնտովից, բայց մտրակող Գոգոլից։

Այն րոպեից, երբ որ մի ազգի գրականության մեջ սկսում է հայտնըվել անխնա ինքնաքննություն, կարելի է հաստատ ասել, որ այն ազգի համար սկսվում է հասարակական և քաղաքական մի նոր դարագլուխ...

Սատիրիկ, անխնա ինքնաքննությունը անհրաժեշտ է ամեն ազգի պատմական կյանքի համար։ Բայց արդյոք կդիմանա այս կամ այն ազգը ոչինչ չխնայող ինքնաքննության հարվածներին, կամ կոչնչանա այդ հարվածների տակ,— այդ ուրիշ հարց է։

Ինքնաքննությունը ամեն ազգի գոյության համար մի տեսակ փորձաքար է...

Նշանավոր է, որ հայոց խնդրի հարուցվելուց մի քանի տարի առաջ հայտնվեցավ և հայոց գրականության մեջ ձգտում դեպի անխնա ինքնաքննություն[6]։

Դա ժամանակի նշանն էր, դա ազգի բարոյական անգիտակցական պահանջի արտահայտությունն էր։

Անխնա ինքնաքննիչ ուղղությունը մի ազգի գրականության մեջ, կարելի է առանց սխալվելու կարապետ համարել ազգի հասարակական վերածնության և բարոյական զարթման։

Եթե մեր ազգը ունի կյանք և ապագա, թող գրականությունը շարունակի այդ ուղղությունը հետևելու։

## ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն երեք տարի է լրանում, որ Թուրքիան անընդհատ անիշխանության պատկեր է ներկայացնում[7]։ Թուրքաց պետության բոլոր նահանգներում ապստամբությունները հետզհետե հայտնվում են։ Միայն հայերը հնազանդ էին մնում թուրքաց տերությանը։ Նրանք կարծում էին, որ համբերությամբ կրելով Բ. Դռան լուծը[8], կստանան իրանց հավատարմության վարձատրությունը։

Բայց այդպես չէր մտածում ինքն թուրքաց տերությունը. տեսնելով հայերի հլու հնազանդությունը՝ Թուրքիան սկսեց ավելի էլ ճնշել հայերին, սկսեց ավելի էլ մեծ հարկեր պահանջել հայ ժողովրդից, ավելի էլ

հարստահարել հայոց թե գյուղական և թե քաղաքային ազգաբնակությունը:

Բեռլինի կոնգրեսը գրեթե նույն մարդասիրական աչքով նայեց Թուրքիահպատակ քրիստոնյա ազգությունների վրա։ Այն ազգերը, որոնք զենքը ձեռքին ապստամբեցան տերության դեմ, եվրոպական դիպլոմատիան շնորհեց նրանց այս կամ այն մարդկային իրավունքը, իսկ հայոց ազգը ոչինչ չստացավ, որովհետև հնազանդ է մնացել տերությանը։ Եթե հայերը չապստամբվեցան, ասում էին եվրոպացի դիպլոմատները, նշանակում է թե գոհ են թուրքաց տերությունից, ուրեմն հայերին կարելի է անտես առնել, նրանց հարկավոր չէ շնորհել մարդկային իրավունքները։ Ահա եվրոպական դիպլոմատիայի բարոյական փիլիսոփայությունը՝ ով որ չէ ապստամբվում, նա գոյության իրավունք չունի, նույնիսկ նրա գոյությունն էլ կարելի է հերքել...

Հայերը այդ շատ ուշ հասկացան և այժմ միայն, երբ պատերազմը վերջացավ, ապստամբվում են թուրքաց տերության անտանելի լծի դեմ, միայն այժմ այն համոզմունքին հասնելով, որ հավատարմությունը դեպի այնպիսի տերություն ինչպես մոնղոլական Թուրքիան է, ոչ թե միայն չէ վարձատրվում, բայց և չէ գնահատվում անգամ։

Զեյթունի ապստամբությունը հետզհետե սաստկանում է, և ինչպես հաղորդում է գերմանական «Polit. Corresp.» լրագիրը, զեյթունցի ապստամբների թիվը հասնում է այժմ հարյուր հազարի։ Նրանց հետ միացել են և մահմեդական լեռնաբնակները։

Բեռլինի կոնգրեսը հաստատեց ամբողջ աշխարհի առջև, որ բարոյականությունը և քաղաքականությունը երկու ջոկ, միմյանցից տարբեր հասկացողություններ են։ Անգլիան հերքում էր հայոց ազգության գոյությունն անգամ, իսկ այժմ, երբ Թուրքիայի հայերը ապստամբվում են, լուսավորված Անգլիան ստիպված կլինի ճանաչել հայերի գոյությունը։ Ինչպես երևում է տասնևիններորդ դարի քաղաքական բարոյականությունը այս է՝ «ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»[10]։

Հայերը ուշ հասկացան այդ ճշմարտությունը, բայց ասված է՝ լավ է ուշ, քան երբեք։

## ԹՈՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպան չէ ճանաչում Հայաստանը և հայերին։ Եվ հայոց խնդրի հարուցվելու ժամանակ Եվրոպան ուշադրություն չդարձրեց հայ ազգի արժանավորությունների վրա, այլ պահանջում էր իր դիպլոմատիական

ագենտներից միմիայն թվեր հայերի մասին։ Մի ազգի մասին տեղեկություններ ունենալու համար չէ կարելի բավականանալ միմիայն թվերով. վարվել ազգի հետ ինչպես մի հոտի հետ, հաշվել ինչպես տավարի գլուխներն են հաշվում... Եվ կոնսուլները անճիշտ տեղեկություններ էին տալիս։ Օրինակ, Էրզրումի ֆրանսիական կոնսուլ պ. Ժիլբեր տեղեկություն տվեց իր տերությանը, որ ամբողջ Հայաստանում կես միլիոն հայ կա միայն... Նշանավոր է, որ պ. Ժիլբեր ինն տարի է որ ապրում է Հայաստանում։

Ցավալի է, որ Բեռլինի կոնգրեսին ներկայացած հայ պատգամավորները հոգևորականներ էին[11]։ Բայց եթե այդ պատգամավորները աշխարհական, լուսավորված մարդիկ լինեին, եթե փոխանակ ներկայացնելու այն անկենդան, մեռելածին օրգանական կանոնադրությունը, որտեղ Եվրոպայի ուշադրությունը դարձնում էր Հայաստանում բնակվող հայերի թվի վրա միայն, մեր պատգամավորները ներկայացնեին հայոց ազգի տնտեսական, կուլտուրական հատկությունների նկարագիրը[12], նկարագրեին հայերի քաղաքակրթական արժանավորությունները, ներկայացնեին Հայաստանի պատկերը, ինչպես նա կա, հայերի, Ասիայի խորքերում բնակվող այդ եվրոպացիների նկարագիրը, ինչպես նրանք կան,— գուցե արևմտյան Եվրոպան կհամոզվեր, որ Հայաստանը նույնքան արժանի է ազատվելու թուրքաց տիրապետությունից և անկախ քաղաքական կյանքով ապրելու, որքան այն երկիրները, որոնք ազատվեցան թուրքաց տիրապետությունից։

Ամբողջ Եվրոպայից գուցե միայն Անգլիան շատ լավ է ճանաչում Հայաստանը և հայերին. լավ է ուսումնասիրել այդ երկրի բնական հարստությունները, այդ երկրի բնակիչների քաղաքակրթական հատկությունները։ Բայց Անգլիայի թուրքասիրությունը և հայերի պաշտպան չհանդիսանալը[13], մեզ գուշակել է տալիս, որ Մեծ Բրիտանիայի նպատակն է ոչ թե օգնել քրիստոնյաներին, այլ ձեռք գցել հարուստ երկիրը, Հայաստանը, աշխարհի չորս կողմը ցրվել տալով նրա ընդունակ բնակիչներին, հայերին, և բնակեցնել նրանց տեղ, նրանց հայրենիքում, նրանց ժառանգական հողերի վրա անգլիացի երկրագործներին և բանվորներին, անգլիական քաղցած պրոլետարիատը, որից նրանց մայրերկիրը շատ ուրախ կլիներ ազատվելու, սոցիալական խնդրի սպառնող ճգնաժամից ազատվելու համար[14]։

Շատ քիչ ցեղերին աշխարհիս երեսին վիճակված է եղել պատմության մեջ ավետել մարդկությանը մի որևէ նոր, բարոյական սկզբունք։ Ամեն ազգ ունի, իհարկե, իր կոչումը, խաղում է մի հայտնի դեր մարդ-

կության մեջ, բայց ամենքը օրինակ, հրեաներ, ֆրանսիացիներ, կամ գերմանացիներ չեն... Հրեաստանի հողի վրա երկու անգամ ծնվեցան մարդկության երկու ամենամեծ աստվածային վարդապետություններ՝ Մովսիսականությունը[15] և Քրիստոնեությունը[16]։ Ֆրանսիացիները իրենց մեծ հեղափոխության ժամանակ ավետեցին մարդկությանը մարդու իրավունքների գաղափարը։ Գերմանացիները ընծայեցին մարդկությանը բողոքականությունը[17]...

Գուցե և հայերին վիճակված է, թեև ոչ այնքան բարձր, բայց նույնպես մի նոր, քաղաքական սկզբունք ավետել մարդկությանը, այն է, որ կարելի է հասնել ազատության քաղաքակրթական խաղաղ պատերազմով[18], առանց ապստամբվելու, առանց զենք բարձրացնելու։ Դարեր տանջանքներով, ամենօրյա աշխատանքով, կուլտուրական խաղաղ կռվով, անկում կերպով մարտնչում են հայերը բարբարոսության և կամայականության, տգիտության և ֆանատիկոսության, մի խոսքով բռնավորության դեմ։ Գուցե հայերին վիճակված է իրենց բռնած ընթացքով ուսուցանել այն ժամանակակից բարոյական սկզբունքը, որ մեր լուսավորված տասնիններորդ դարում դեռևս տիրապետում է Եվրոպայում, որ լուսավորված աշխարհի սկզբունքն ու դևիզն է. «Je m'insurge, donc je suis» (Ես ապստամբվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ)։ Իսկ հայերը, կարծես, ասում են. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»։ Ահա, կարծես, հայերի նշանաբանը։ Եվ ճշմարիտ, ո՞րն է ավելի դժվարը՝ ապստամբվել և մի քանի ամիս, գուցե մեկ երկու տարի իր և թշնամու արյունը թափել, թե հազար տարի շարունակ ամենօրյա կուլտուրական պատերազմ վարել ճնշող ուժի դեմ։ Գուցե հայերին, արևմտյան լուսավորված Եվրոպայի ժամանակակից անմարդասեր գաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությանը, վիճակված է ուսուցանել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է ճնշված ազգից իր գոյությունը ապացուցանելու համար զենք վերցնել, ապստամբվել, արյուն թափել, ուրեմն գործ դնել ճնշող ուժից, բարբարոսներից ազատվելու համար նույն զենքերը, որ նույն իսկ ճնշող ուժը. բարբարոսությունն է գործ ածում...

Եթե Թուրքիայի հայերը չկարողանան հաղթող հանդիսանալ, կոչնչանան, կամ կգաղթեն իրենց հայրենիքից, եթե նրանց հայրենիքը կդատարկվի իր բնիկ ազգից,— այն ժամանակ ամոթ այն Եվրոպային, որ չօգնեց նրանց իրագործել մարդկության ապագա քաղաքակրթության սկզբունքը։

Իսկ եթե նրանք, չնայելով բոլոր արգելքներին, բոլոր տանջանքնե-

րին, հաղթող կհանդիսանան,— նրանք կվաստակեն լուսավորված աշխարհին նոր սկզբունք, նոր նշանաբան ավետելու փառքը՝ «Քաղաքակրթական, կուլտուրական, աշխատանքի պատերազմ, արյունի պատերազմի փոխանակ»։ Այն ժամանակ հայոց ազգը իր օրինակով կամաչացնի լուսավորված և մարդասեր աշխարհը։

Արդյոք կարողություն, համբերություն կունենա Թուրքիայի հայը իր հազար տարվա կուլտուրական պատերազմը մինչև վերջը նույն ձևով առաջ տանելու և բախտավոր վախճանին հասցնելու[19], թե հուսահատվելով, համբերություն կորցնելով, կշեղվի նա իր բնության հատուկ բըռնած ընթացքից, իր պատմական կոչումից և կդիմե այն միջոցին, զենքին, որ ժամանակակից լուսավորված աշխարհը միակ գրական և օրինավոր միջոց է համարում մի ազգի համար իր գոյությունը վկայելու...

Պետք է խոստովանել, որ հայը ապացուցեց դեռ շատ հին ժամանակներից, որ հարկավոր դեպքում, երբ պետք էր կամ իր հավատը պաշտպանել, կամ մի պետության հպատակ լինելով, հարկավոր էր արյուն թափել մտնելով այն պետության զորքերի շարքը, որ իր ձեռքը նույնքան ընդունակ և վարժ է զենք գործ ածել, որքան արորը և բահը։ Եվ նույնիսկ այս րոպեիս Զեյթունը արյուն է թափում Թուրքիայի դեմ իր մարդկային իրավունքները ձեռք բերելու համար։

Վերջին ժամանակ մեր լրագիրների թղթակիցները հաղորդում են, որ Թուրքիայի հայը գրեթե ամեն տեղ սկսում է զինվել։ Բայց ա՞րդյոք զորանով նա ընդդեմ է գնում իր բռնած պատմական ընթացքին... Չեմ կարծում։ Եթե հայը Թուրքիայում զինվում է միայն նրա համար, որ բռնավորության դեմ պաշտպանողական զենք բռնի միայն, և ոչ թե հարձակողական. եթե Թուրքիայի հայը մի ձեռքով մաճ, արոր կամ բահ բռնելով, մյուս ձեռքով հրացան կբռնի,— այդ գուցե կլինի միակ միջոց թուրքաց տիրապետության տակ ճնշված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգային գոյությունը։

## ՏԽՈՒՐ ԵՎ ՈՒՐԱԽԱԼԻ ՀԱՄԲԱՎՆԵՐ

Թուրքաց Հայաստանի քրիստոնյա բնակիչների դրությունը օրից օր ավելի և ավելի անտանելի է դառնում...

Մի բան միայն ուրախալի է, մի բան միայն մխիթարում է... այդ այն է, որ չնայելով թուրքաց կառավարության ջանքերին ցույց տալ Հայաստանի ազգաբնակության պաշտոնական ժողովրդագրության միջոցով, որ մահմեդականները քրիստոնյաներից ավելի բազմաթիվ են,—

դարձյալ այդ նենգավոր ջանքերը իրան չեն աջողվում։ Չնայելով Թուրքաց կառավարության կեղծ վիճակագրությանը, դարձյալ հաստատվում է, որ հայերը Հայաստանում ավելի բազմաթիվ են, քան թէ մահմեդականները։

Ուրիշ կողմից Կ. Պոլսի մեր մշտական թղթակից պ. Հայկակ, որի նամակը շուտով կտպենք[20], հաղորդում է մեզ մի շատ ուրախալի լուր։

Զեյթունը, փոքրիկ և քաջ Զեյթունը, զենքը ձեռին և իր արյունի գնով պաշտպանելով իր իրավունքները Բ. Դռան կամայականության դեմ, ստացել է վերջապես իր ինքնավարությունը։ Ուրեմն, չնայելով տասնևիններորդ լուսավորված դարի մարդասեր գաղափարներին, փոքրիկ, լեռնոտ Զեյթունը զենքով և արյունով ավելի շուտ կարողացավ ձեռք բերել իր ինքնավարությունը, քան թե Թուրքաց Հայաստանի ամբողջ մնացած մասը իր անվերջանալի բողոքներով և գանգատներով։

Լուրը ինքն իրան ուրախալի է, և մենք թողնում ենք մեր թղթակցին նրա մանրամասները ընթերցողին պատմելու, բայց ցավալին այն է, որ դեռ կան մեր լուսավորված դարում Թուրքիայի պես երկիրներ, որտեղ մարդկային ամենաանհրաժեշտ իրավունքները կարելի է ձեռք բերել միմիայն արյունով և սրով, որտեղ խաղաղ, կուլտուրական, ազնիվ կռիվը դեռևս թուլության և վախկոտության նշան է համարվում։ Երևում է, որ դեռևս կան տեղեր երկրագնդի վրա, որտեղ իր անձը իր թշնամուն հարգել տալու համար, պետք է կռվիլ, բռնի ուժ ցույց տալ, պետք է արյունահեղ ապտակներ հասցնել իր թշնամուն։

Գոնե այժմ թրքաց Հայաստանը մի կտոր գետին կունենա, ուր հայը ապահովված կլինի հարստահարողի բռնի ուժի, վայրենի կամայականության դեմ։

Եվ ինչպես փոքրիկ Չերնոգորիան Բալկանյան քրիստոնյաների, սլավյանների համար ազատության խմոր դարձավ[21], այնպես էլ այժմ, երբ Զեյթունի ինքնավարությունը կատարված իրողություն է դարձել, կարելի է հուսալ, որ և Զեյթունը կդառնա ոչ թե միայն Թուրքաց Հայաստանի, բայց և ամբողջ Փոքր Ասիայի քրիստոնյա ազգաբնակության ապագա ազատության խմորը։

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆ

# ԱՆԿԼԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ ԿԱՄ ՀԱՅՈՒ ՄԸ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

*...Լեհաստանեն, որու թշվառ, բայց ազատասեր որդվոց[1] օգնության ինքնակամ գացեր էիր, նոր եկեր էիր և հորս այցելություն տվիր։ Ո՜հ, ի՛նչ օր էր այն։ Արդեն քաջության համբավդ ամեն պատանիի գլուխ կը տաքնար, Լոնտոնի օրիորդներու սիրտը կը տրոփեր։ Թեև լորտ Պայրընին պես հաջող ելք մը չունեցավ արիությունդ[2], վասնզի Թուրքերեն ավելի զորավոր էին Լեհաստանի թշնամիները, սակայն ազատության դրոշին տակ կռվեցար և եթե այն դրոշակը պահ մը բռնավորներու հընարյուքը կը պատառի, փույթ չէ, անշուշտ քեզի պես կտրիճներու ձեռք դարե դար աշխարհիս շրջանը պիտի ընե և մեռյալ ազգերը կենդանության պիտի բերե։ Իսկ ես անունդ միայն լսելու գույնս կը նետեր, կը կարծեի թե շատոնց կորուսեր էի քեզ և դուռ. լեզու չունեի խոսելու և ոչ կարողություն սրտիս հույզերը զսպելու...*

*Հայկ ազատասիրությունը գիտությամբ և ուսմամբ չստացավ՝ այլ բնութենե ուսավ, այլ իր հոգվույն մեջ գտավ, այլ իր մարդկային իրավանց մեջ տեսավ։ Նա զգաց իր ծննդական իրավունքը, որ ոտից կոխան լինելու մոտ էր, նա հիշեց իր նախնյաց պարզ և անկախ կենսավարությունը, որ արդեն ապականելու վտանգին կը դիմեր, և երբոր ինքը վսեմ մարդասիրութենե վառյալ՝ փորձ փորձեց, բայց անկարող եղավ Բաբելոնի ժողովուրդը քաջ որսորդին բռնութենե ազատել, առանձին գլուխ քաշեց և ապականության և անօրենությանց աշխարհեն հեռացավ։ Մի՞թե դեշ ըրավ։ Խորենացին, պատմաբեցավ[3], կ՛ըսե, որով թերևս կը նշանակե թե գտնված երկրին օրինաց անհնազանդություն ցցուց և հետևապես դատապարտելի ընթացք մը բռնեց։ Սակայն ըստ իս ոչ միայն մարդավայել՝ այլև աստվածահաճո գործ գործեց։ Վասնզի պետության մը մեջ վեհապետ մ՛որ իբրև աստված կամի պաշտվիլ, աստուծո դեմ ապստամբ և մարդկան առջև եղեռնագործ՝ և երբ այն՝ մահվան արժանի*

լինելեն զատ, երբ նույն միջոցին մարդ մը կամ ժողովուրդ մ'որ իր իրավանց և կենաց ապահովություն և օրինական երաշխավորություն չգտներ նույն վեհապետին տակ. ի բնե իրեն շնորհված ազատությունը գործածած կը լինի եթե նույն բռնավորին պահանջմանց դեմ բողոք բառնա, և ինքնզինք սրով պաշտպանե. իսկ եթե սուրը չզորեր՝ այն ընկերական վիճակեն քակվի։ Ահա այս բրավ Հայկ, որու սիրտը վառող անշեջ հուրը իր բնական ձրից և բազկին այնպիսի ույժ և կորով աղդեց, որ կարող եղավ զՏիտանյանը հերկիր կործանել շնչասպառ. «Կամ մեռցուք և կամ ազատ կացցուք» այս սկզբան դեմ ո՛րեէ բռնակալի վահանափակ բանակը թե ոչ այսօր՝ օրին մեկը անշուշտ պիտի խորտակի։...

...Կը սիրեի ազատություն, կատեի իշխանական թագ ու գավազան։ Շարունակ միտքս կը հուզեին ընկերական խնդիրներ։ Ռուսսո, Հյում, Պենթհամ, Ա. Սմիթ, Ֆուրիե և ուրիշ ընկերհաշտական հեղինակներու գործերը կարդացեր, լափեր էի։ Զարմանք կը գտնեի, որ մարդիկ ինչ որ կը դավանին չեն գործադրեր, որ սկզբունք ու գործադրություն հակոտնյայք են, վարժարան և ընկերություն իրարմե բոլորովին տարբեր աշխարհներ. մին ոասիս մը, մյուսն անապատ։ Սակայն, ինչպես ամեն ուսանող, ես ալ ժողովրդոց անկախության, բարօրության, արդարության հաղթանակը կ'երազեի։ Կը գիտեի, որ Եվրոպայի քաղաքակրթություն կոչվածն, հարստությունն ու երջանկությունը միայն դաս մը մարդիկ կը վայելեն, իսկ մյուսները թշվառ ստրուկներ են, որ ոչ միայն կրթությամբ այլ ապստամբությամբ պիտի վերածնին և իրենց շղթաները թակելու պիտի հաջողին։ Կը զմայլեի Մածծինիի ու Կարիպալտիի վրա, որ արդեն ոչ միայն Իտալիո մանր մունր բռնավորներու, այլ բոլոր Եվրոպայի գահակալներու դեմ պատերազմ հրատարակեր էին ու գաղտնի ընկերություններ կազմելով՝ ազատության ու անկախության ոգին գործավորներու մեջ սփռելու կը ջանային։ Այս ազատական սկզբանց հարած էի ինչպես կը հարի ծովն ընկնող մարդը տախտակի մը և անոնց մեջ ազգերու փրկությունը կը տեսնեի։ Բայց բավական չէր ընկերասիրական սկզբունք ունենալ, պետք էր գործադրել։ Անտարակույս բյուրավոր մարդիկ կային Եվրոպայի մեջ, որ ինձի պես դաստիացած՝ զինված էին հաստատյալ անիրավ օրինաց դեմ, կղերին փառամոլության ու տիրապետության դեմ, բռնապետական իշխանությանց դեմ, ազնվականաց լրբության դեմ, դրամագլխի անիրավության դեմ, մեկ խոսքով անթիվ ընկերային զեղծմանց դեմ և այս դարավոր չարիքը ջնջելու համար զանազան միջոցներ կը խորհեին։ Ֆրանսայի մեծ հեղափոխությունն մասնական աջողունք մ'ունեցեր էր, հիրավին մեկ գլուխը միայն կտրեր էր։ Եվրո-

պայի ժողովրդոց համախումբ դաշնակցություն մը. ապստամբություն մը միայն կարող էին այդ հրեշը սատակել։ Արդեն այդ շարժման նշանները կ'երևեին. Եվրոպայի բոլոր ժողովուրդները մեծ հուզման մեջ էին։ Հրաբուխը ներսեն կը բորբոքեր, կ'եռար և ընդհանուր ցնցում մը, պայթում մը կ'սպառնար։ Դարձյալ Ֆրանսա եղեր էր այդ ցնցումը տվողը[5]։ Այս երկրին ժողովուրդն ազատության ռահահորդը կը լինի միշտ, բայց դժբախտաբար կես ճամփան կը մնա, ստեպ ետ կը դառնա ու իր առաջադրած նպատակը կը մոռնա։ Ավստրական ամբարտակ, ընդդան Պասդիյլ կը կործանե, դահ ու սեղան կը խորտակե, թագավորի ու քահանայի գըլուխներ կը կտրե, ամեն տեսակ բռնության գավազան խորտակելով՝ տեղն ազատության ծառն ու հավասարության արձանը կը կանգնե իրավ, բայց հին դարերու այդ ամեն կռոց բեկորները վերջեն մեկ տեղ բերելով՝ նորեն կը վերականգնե տարբեր գույներով։

Արդն Կարլոս Ժ գահեն վար գլորեր էր, և Լուի Ֆիլիպ, սահմանադրասեր նոր թագավոր մ' ընտրվել էր, որ վերջերն իր Գիզոի համառ ու գձուձ քաղաքականության զոհ գնալով՝ գեղացիի պես ծպտյալ Անգլիա պիտի խույս տար[6], արդեն Սարդին-Նահանգաց մեջ պատերազմի փողը կը հնչեր, Հոլանտայի դեմ Պելժիգացիք կ'ընդվզեին և անկախ իշխանություն մը ձեռք ձգելու կը նկրտեին[7], արդեն Հունաստան իր անկախությունը ստացեր էր, և Գաբոտիսդրիա անոր գլուխն էր[8], Գերմանիա, Զվիցերի և գրեթե բոլոր եվրոպական տերությանց մեջ ժողովուրդները հեղափոխությամբ քաղաքական իրավունքներ կ'ստանային՝ երբ Լեհաստան ալ Վարշավ քաղաքին մեջ ապստամբության դրոշակը կանգնեց[9]։ Լեհաստան՝ որ արդեն իր ներքին վարչային հոռի դրությամբ և ժեզվիտներու ներշնչած կրոնամոլությամբ անիշխանության որս ընկած և երեք կըտոր եղած էր երեք ազգակալ տերությանց մեջ՝[10] գրեթե ութսուն տարի առաջ, դեռ ազատության ոգին կը պահեր։...

...երբոր բոլոր Եվրոպա ազատության համար ոտք կ'ելներ, Լեհաստան կարո՞ղ էր հանդարտ նստիլ, մանավանդ երբոր Նիկողայոս կայսրն Առաջին Աղեքսանդրի հաջորդելով՝ ավելի ևս սկսավ ճնշել լեհ ժողովուրդն ու անոր տրված սահմանադրությունը ջնջել[11]։

Քլոբիքի ապստամբության գլուխն էր ի Վարշավ. Կոստանդին դուքսն, որ իբրև փոխարքա կ'իշխեր, հազիվ կրցեր էր պրծիլ ապստամբաց ձեռքեն[12]։ Ամեն կողմե կամավոր զինվորներ ու նպաստ կը հասնեին Լեհաստան։ Պատեհ առիթ սեպեցի անտանելի վիճակիս սփոփում մը և թշվառ ազգի մը համար արյունս տալ։ Գիտես արդեն, սիրելի Վուտ, թե լեհացիք ինչպես ելան այս կռվեն։ Ազատության կատարյալ հաղթա-

նակը դեռ մոտալուտ չէ, քանի որ ազատության թշնամիներն իրենց ձեռքն ունին բուռն ույժ, վայրենություն։ Նույն միջոցին Ռատզիվիլ իշխանը լեհական բանակին կը հրամայեր[13]։ Ուրիշ օտար վաշտեր ալ կազմվեր էին, որոց մեջ բազմաթիվ հայեր կը գտնվեին։ Ռատզիվիլ զիս գընդապետ կարգեց. իր վստահության անարժան չեղա։ Ցույց տվի իմ անկլիական պաղարյունություն և անվեհերություն գնդակներու ու կրակի մեջ, որ զիս կը շրջապատեին։ Այս կռվին մեջ կանայք մեզմե վար չէին մնար արիության կողմե։ Առյուծի պես կը կռվեինք անվանի Տիեպիշի և Բասքևիչի դեմ, այնպես որ թրքաց ու պարսից այս ռուս հաղթողներն ահաբեկ տեսան, թե ինչպես, թեև թվով ավելի քիչ, ռազմագիտությամբ նվազ ճարտար, կարող էինք խորտակել և ստեպ ի փախուստ դարձնել իրենց հզոր ու բազմավարժ գունդերը...

Կաթոլիկ Իրլանդան բողոքական Անկլիո դեմ ահարկու պատերազմ մղեց։ Իր պարագլուխն էր Օքոնել հանդուգն հեղափոխականն, որ իր հայրենյաց ծանր վերքերը[14] բոլոր աշխարհի առջև բանալով՝ ցույց տըվավ՝ թե Իրլանդացին՝ տասնիններորդ դարուն մեջ՝ Եգիպտոսի գերիներեն, Սպարտայի Իլոդներեն, Միջին դարու ստրուկներեն շատ ավելի ստորին, թշվառ, սողալլուկ կենդանի մ'է, անհող, անտուն, թե ամեն քաղաքային ու զինվորական պաշտոնե զրկված է, թե Անկլիացի ազնվականներ բոլոր հողերը գրաված են, թե իր սնունդը ճարելու միջոց չունի և իր սովորական կերակուրը, գետնախնձորն անգամ, կը պակսի, թե Անկլիա կը կեղեքե, կը հարստահարե իր հայրենիքն, որու ազգային խորհըրդարանը ջնջեր էր. և միայն իրեն կը վերապահեր ամեն իրավունք. պաշտոն, մեծություն, վասնզի անկլիական եկեղեցին տերության եկեղեցին է, մինչդեռ կաթոլիկությունը կը հալածվեր։ Օքոնելի ահարկու ձայնը բոլոր ազատականները շարժեց, պարլամենթն հուզեց, և թշվառ Իրլանդայի ի նպաստ բողոքները շատցան։ Անկլիո կառավարությունն անկարեկիր կը մնար և համառությամբ կը դիմադրեր այս հարձակումներուն։ Բայց Օքոնել, որ անճկուն ոգի, ազդու և մերթ անպատկառ լեզու մ'ուներ, դժվարությանց առջև ընկրկող մարդ չէր. իրեն նեցուկ ուներ խուժանն, որ մեկ մարդու պես ոտք ելավ ու արդարություն և հաց պահանջեց։ Գիշեր ցերեկ հրապարակին վրա եկեղեցին կը պոռար ու կը գոռար Անկլիո գերիշխանության դեմ, և վերջապես Ռոպերդ Բիլ ու Վելլինկթըն ստիպվեցան ազատագրել Իրլանդացիքն և անոնց ընտրողության իրավունք շնորհել[15], այս պայմանավ, որ թագավորին հավատարիմ մնալու երդում ընեն, Անկլիո պարլամենթին մեջ աթոռ ստացող երեսփոխանները հաստատյալ եկեղեցվո դեմ չդավադրեն, տերության

մեջ պապին աշխարհական ու քաղաքային իրավասությունը չճանչնէ։ Այսպես ամեն կաթոլիկ՝ տերության պաշտոններու մեջ մտնելու իրավունք ստացավ։ Արդեն Օքոնել բարլմենթի անդամ ընտրվեր էր և Իռլանտայի աղետալի վիճակը հռչակեր էր...

...Չես կարող մարդկային ընկերությունը ձևել ինչպես կը ձևեն լաթ մը։ Մեր դարուն ազատականները տուժելով այս բանին փորձն առին և համոզվեցան, որ մարդկային ազգի այդ կրկնակի շարժումը մեկնելու և դարման մը գտնելու համար նոր գիտություն մը պետք է։ Այդ նորահրանար գիտության անունը չգիտեմ, թեև գլխավոր հիմնադիրն անկլիացի մ'է[16], բայց այս գիտեմ, որ ինչպես ֆիզիկական, նույնպես բարոյական կարգին մեջ կան օրենքներ, որոց համեմատ կ'ընթանա մարդկությունն առանց շտապելու... Պետք է նախ մարդկային բնությունը կամ դարավոր սովորությունները փոխել և ապա իր ընկերական շինվածքի հաստատությունները, որոց վրա հեցած է իր էությունը և որոցմե արմատապես բաժնելն ուրիշ բան չէ, եթե ոչ մարդու մը գլուխն իր բունեն բաժնել, ընդհանուր անիշխանություն, մահ պատճառել է։ Ֆրանսայի մեծ հեղափոխությունը մեզի օրինակ. կառավարություն, օրենսդրություն, կրոն, երկրային բաժանում, ամեն բան հեղաշրջեց, բայց ֆրանսացվոց բնությունը, բարքն ու միտքը չփոխեց և այնքան սարսափ, ջարդ, կոտորած միայն բան մը արտադրեցին, այս է մարդու իրավանց ծանոթություն, գաղափար մը միայն, որ գրեթե տեսական վիճակի մեջ մնաց և ի վերջո աշխարհիս աշխարհակալ մ'իր ծոցեն ելնելով՝ զայն ալ ջնջեց[17]։

Այս հետևանքն ունեցած են ամեն բուռն ու ծայրահեղ շարժումներ, մտաց ու սովորության չհամապատասխանող արմատական բարենորոգման փորձեր։ Բյուրավոր դարերու շենքն, որքան խարխուլ ըլլի, անհնարին է հիմն ի վեր ընել մեկ ժամու մեջ։ Մարդիկ, եթե կամիս, կույր բախտեն մղվելով՝ ինկեր են փոս մ'ուսկից պիտի հաջողին ծանր ծանր վեր ելնելու երբոր ամեն ճշմարտություն ավելի պայծառ տեսնել, փորձել ու զատել սորվին, երբոր բնականն արվեստականեն, իրավունքն անիրավութենե ճշտիվ որոշել գիտնան, երբոր համոզվին թե ինչ որ անհրաժեշտ պիտույք մը համարված էր երեկ՝ այսօր դատապարտելի հիմնարկ մ'է, ինչ որ տարիներ առաջ ճշմարտություն մ'էր, վաղն իբրև ստություն պիտի երևի։ Կարևոր կետն է բիչ-բիչ նորոգել ընկերական շենքը, ժողովրդոց պետքերն ու պահանջմունքն ի նկատի առնուլ և հարմար զիջումներ ընել։ Այս պատմական ճշմարտության դեռ չեն համոզված այն քաղաքագետներն որ ազգերու ճակատագիրն ուղղելու պաշտոն ունին, այնպես որ արյունահեղ հեղափոխությանց տեղի կը տան։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

*...Ի՞նչ է այս զարմանալի հեղափոխության պատճառը.— Մարդկային ազգին իմացականության անընդհատ շարժումը դեպ հառաջ, իր անմահ ճակատագրին հավիտենական ճշմարտության, որ է անբաժան, դիմելու իղձն ու շարժումը, հոգեկան և մտային անսովոր լուսավորությունները նոր թվական, նոր ժամանակ փնտրելու հակումն, որով կը բացատրվի. չէ թե այսինչ կամ այնինչ դարու, այլ* անեզր ժամանակին *ոչվույն հետևելու դրության իմաստը...*

*Միրաբո՝ Ֆրանսայի առաջին հեղափոխության առաջին գործոն հեղինակն և բռնակալության անհաշտ և ճարտասան թշնամին, կը գոչե թե՝ գերության շղթաները լզող և պաշտող ժողովուրդն ավելի կ'ատե, քան զանոնք դարբնող բռնավորներն...*

*Ազգային հեղափոխական շրջումները միմիայն գրի, թղթի և հրովարտակի վրա չեն կայանար: Գիրը, թուղթն ու հրովարտակը կը հետևին և երբեմն բանի կը ծնին այն անհրաժեշտ պարագաներեն, զոր Նախախնամությունը կը պատրաստե, և որոց աղբյուրն է մարդկային բանականության, դատողականության պիտույքն, իրավանց և պարտուց ճանաչումն և ի վերջէ օրինավոր ազատության հակումը: Պաշտոնական օրենք, հրաման, հայտարարություն իրարու համաձայն կամ հակառակ հետզհետե կը տրվին ու կ'առնվին, այսօր ազատության հանդեսը, վաղն անոր հուղարկավորությունն ի պաշտոնե կը կատարվի. այսօր ազատական կառավարություն տեսակ մը բռնականի կը փոխվի և բռնության գործակալներ նոր նոր շղթաներ ու կոթողներ դարբնելու կը ճգնին, վաղն այս կոթողներն ու շղթաները կը խորտակին և նոր տեսակ վարչություն մ'իր պաշտոնյակներովն երևան կ'ելնե. սակայն այս արտաքին հեղաշրջումներու մեջ կա բան մը, խորհրդավոր զորություն մը, ույժ մը կա մարդկային բնության հատուկ՝ որ երբ անգամ մը շարժման մեջ մտնե, կը նկրտի, լռելյայն կ'աշխատի, կը տքնի և փնտրած արահետը գտնելով՝ այնուհետև կը քալե միշտ, միշտ կը հառաջադիմե, և այս հառաջադիմությունն, որ մարդկային կատարելագործության մեջ ունի իր օրենքն և շարժառիթը, հարատև ու անսասան է, այն հայտնի կամ թաքուն ճշմարտություններուն պես. որոց գահը մարդուս հոգիին ու մտքին մեջ է:*

## ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ[18]

*Թիֆլիզի* Հայկական Աշխարհ[19] *անուն ամսագրին մեջ կը կարդանք հետևյալ գուժալի լուրը. «Միքայել Նալբանդյանը վերջացրեց իր կյանքը*

ապրիլի 13ին։ Մի մարդ պակսեցավ հայկական աշխարհից. . . . . . . Կարճ եղավ Նալբանդյանի օրը, բայց անխորհուրդ չէր դա հասկացող հայերի համար»։

Ա՜հ, Սիպերիայի սառնամանյաց պես ցուրտ են այս խոսքերը, ինչպես են պժգալի և դիվաշունչ Երևակին մեջ գրված դամբանական մաղթանքը[20] այս աղետալի կորուստին վրա...։

Իր կյանքը ուսմանց և գիտության նվիրող ուսումնական մը, իր հանճարը և գործունեությունը Ազգին օգտին համար անդուլ գործածող ազգասեր մը, իր անդուստ և առույգ գրչով՝ արմատացած վեղծումները, նախապաշարումները և մոլությունները իսպառ ջնջելու համար աշխատող հայասեր մը, Ազգին առնը փլող վասակները մի առ մի ցույց տըվող, անոնց զրպարտությունները փոշի դարձնող քաղաքագետ փաստաբան մը, ճշմարտության և ազատության համար հոգի և շունչ տվող գործոն իմաստասեր մը, վերջապես Նոր Նախիջևանի մանկտվույն համար քառասուն տարիէ ի վեր կուտկյալ գումար մը ազատելու նպատակավ, իբրև ազգային երեսփոխան Ռուսիայեն Հնդկաստան, Հնդկաստանեն Անգղիա կայծակի արագությամբ վազող և անհնարին տառապանք կրելեն ետև՝ իր ձեռնարկությունը ի կատար հանելով՝ քանի մը տարի առաջ առոք փառոք Նոր Նախիջևան դարձող բարերար պատանի մը Սիպերիայի մեկ ամայի խորշը հանկարծ կը վախճանի և Հայկական Աշխարհի մեր մեջեն մարդ մը պակսեցավ կըսե... և Երևակը անոր դիակին առջև կը խնդա... ի՜նչ սառնություն... ի՜նչ դժոխային ժպիտ...

Ջէ՛ մարդ մը չի պակսեցավ, տերև մը չընկավ Հայոց աշխարհեն, մոլորյալ մը իր պատիժը չի գտավ, ինչպես ժեզվիթաբար կակնարկե պ. Ջամուրճյանը, այլ Հայաստանի տխուր հորիզոնին վրա փայլող աստղ մը մարեցավ Նալբանդյանցի մահվամբը։ Նալբանդյանցը չէր այն մարդերու դասեն որ կենաց ստորին աստիճանին վրա կը սողան, և ինչպես որ եկան այնպես կը դառնան ի հող առանց ապրելու բարոյապես և մտապես։

Բայց ո՞ր հայը կ'զգա այսօր այս մեծ մարդուն արժեքը, ո՞վ պիտի նկարագրե անոր կյանքը, գործը և մահը, ո՞վ պիտի վերցունե այն վարագույրը որով ծածկված են անշուշտ Նալբանդյանցի կենաց վերջին տարիներուն տանջանքը, ո՞վ պիտի պահանջե անոր դատապարտության պարագաները գիտնալ և քննել այն վճիռը, որով աքսոր գնաց։ Այս պաշտոնը ընդհանրապես բոլոր ազգին և մասնավորապես Ռուսաստանի ճշմարիտ հայոց կը վերաբերի, վասնզի Նալբանդյանցի հանճարը բոլոր ազգը կը գրկեր, վասնզի այս կամ այն կուսակցության մարդ չէր նա.

այլ ընդհանրության: Սակայն ինչպես Աբովյանը և իր մահը անհայտ և անվրեժ կը մնան, նույնպես կը մնան և Նալբանդյանցը և իր մահը մութին մեջ մեծազոր Տերության մը շնորհիվը[21]:

Եթե մեր ստացած տեղեկությունները Նալբանդյանցի դատաստանին, անոր թշնամիներուն լարած դարաններուն վրա ստույգ են, Ռուսիո կառավարությունը անոր դատապարտությամբը բոլոր Ազգը ի խոր խոցած և հայ երիտասարդության սրտին մեջ ատելության և վրեժխնդրության անջնջանելի կայծ մը ձգած է. Հետևապես Նալբանդյանցը մեռած չէ, և ահա ձայն կարձակե Սիբերիայի խորեն.

«Ազատություն, գոչեցի, թող որոտա՛ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ, թո՛ղ դավ դնե թշնամին.
Ես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտի կրկնեմ անդադար ազատություն»[22]:

Այս վսեմ և սքանչելի գոչումը, որ Նալբանդյանցի կենաց և մահու բոլոր խորհուրդը կը պարունակե, իր մահարձանին վրա պետք է արձանագրել, ինչպես որ պետք է դրոշմվի ամեն հայ սրտի մեջ իբրև նվիրական կտակ մը. որուն գործադրությունը ապագա սերունդին հանձնված է:

Արդարև սկզբունքի մը համար մեռնիլ գեղեցիկ է, և այս տեսակ նահատակության արդյունքն է և պիտի ըլլա միշտ մարդկային ազգի հառաջադիմությունը, քանի որ նյութական կոշտ զորությունը թումբեր կը կանգնե ժամանակիս հառաջադեմ հոսանքին դեմ, սակայն այս մահը, այս չարչարանքը պետք է հանդիսապես կատարվի, պետք է որ նահատակը խաչը կռնակը առած՝ Գողգոթա լեռան գագաթը ելնե և այնտեղ խաչվի... և ոչ թե չորս պատի մեջ, Սիբերիայի անհպելի սառերուն մեջ իբրև ոճրագործ ավազակ մը տանջվի[23]: Ի՞նչ օգուտ. քաղաքակիրթ դահիճը որչափ անագորույն նույնչափ և վարպետ է, և մինչդեռ դաշույնը դատապարտյալի անմեղին սիրտը կը խոթե դողդողալով՝ աչքը ետին կը դարձնե ու ականջները կը գոցե, որպեսզի անոր աչաց ճառագայթները չի տեսնե, անոր սրտաշարժ խոսքերը չի լսե, չի վարանի, չի վրդովվի և իրեն հետ չի վրդովին նաև հանդիսականները և արդարություն ու վրեժխնդրություն չի գոչեն...:

Դարձյալ այս զգուշությունն ալ մամուլին տիրապետության ժամանակ անօգուտ էր, վկա Լոնտոնի ռուսերեն Զանգակ լրագիրը[24], անօգուտ է այո՛, վասնզի եթե Նալբանդյանցը Աբովյանին պես աներևույթ լլներ անգամ, ազատասեր գրիչները չի պիտի դանդաղեին, անոր նահատակու-

թյան պարագաները փնտռել, նրեան հանել և հռչակել, ինչպես որ այսուհետև երկարորեն ևս պիտի հռչակվին, անշուշտ, եթե ոչ ի Ռուսաստան, գեթ այլուր, վասնզի Նալբանդյանցը ինչպես կենդանության ատեն, նույնպես մահվանեն ետև, պիտի գործե Ազգին մեջ, քանի որ շղթան և սուրը չեն կրնար կաշկանդել և սպաննել այն լուսավոր գաղափարները, որոց հռետոր կանգնեցավ նա, և որոնք իբրև ամպրոպային փոթորիկներ կորուսան թագաւոր բռնավորներու գլուխներուն վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայթին և թագ ու գլուխ այրին, տաչորին, վասնզի Նալբանդյանցը հավատքի մը համար, ճշմարտության և ազատության հավատքին համար զոհ ընկավ և այն որ հավատամք մ'ունի. ինչպես որ Ժ. Ս. Միլ կ'ըսե, զորություն մ'է ընկերական, որ մինակ շահ ունեցող իննսունինը անձերու ույժին կը հավասարի, վասնզի (պ. Միլին խոսքերն են) այն օրը, որ Երուսաղեմի մեջ առաջին մարտիրոսը քարկոծեցավ[25]... ո՞վ կրնար երևակայել, որ քարակոծ եղող մարդուն կողմը այն ժամանակ ընկերության մեջ ամենեն զորավոր իշխանությունն էր.. միևնույն եղանակավ Վորմսի ժողովին մեջ Վիթեմպերկի վանական մը[26] ընկերական զորություն մը դարձավ, որ Սպանիո Կարլոս Ե-ին և նույն վայրը գումարված բոլոր իշխաններուն զորութենեն գերագույն էր...։ Արդ՝ Ռուսիո կառավարությունն ալ շահ մ'ուներ Նալբանդյանցը նահատակելու. Նալբանդյանցի ազատական հայրենասիրությունը անդադար հրավեր մ'ունի կարդալու մեզ, և Ազգը նվիրական պարտք մը կատարելու.....

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ընկերության մեջ տեսակ տեսակ ազատություն կա, բայց բոլորին աղբյուրը կամաց և բանականության մեջ է։ Երբ կ'ըսենք թե մարդս ազատ կ'ծնի, կ'իմանանք, թե մարդս իր բանականությունը մշակելով՝ կարող կ'լինի իր կամքն ուղղել դեպ 'ի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը։ Հետևաբար ազատ է իրապես այն մարդն, որ իր մտավոր և բարոյական կարողություններն այս եռակի նպատակն ունին և օր քան զօր նույն նպատակին հասնելու կ'նկրտին։ Բայց միթե ամեն մարդ ազատությունն այսպես կ'ըմբռնե, միթե ամեն մարդ բավական լույս ունի կենաց դաշնակավոր վախճանը նշմարելու և ըստ այնմ շարժելու։ Ի՞նչպե՞ս շինովի դաստիարակությունը, քաղաքական և կրոնական նախապաշարումներ սանց կ'մթագնեն կամ կ'մարեն այն լույսն, և անոր տեղ, եթե ներելի է ըսել, շրջմոլի հուր մը կ'թողուն՝ որ մեզ վիհն, այս է սարկու-

*թյան վիրապը կ'տանի, կ'նետե, կամ անորոշ և ապօրինի ազատության տենչ մը կ'հաղորդեն՝ որ մեզ կ'մղե դեպ 'ի անիշխանություն, սակայն ի՛նչ շղթաներ, որ դարբնեն մեզի համար սուտ, մարդադավ դրություններ, ինչ ամբարտակներ, որ մեր չորս դին կանգնեն բռնության հնարագետ ճարտարապետներ, դարձյալ չեն կարող հիմնովին բնաջինջ ընել մարդուս սրտեն այն երկնատուր կայծն, այն ներքին գիտակցության ազդումն, որ լույս և զորություն դառնալու համար լոկ կրթության և բանավոր ուղղության մը կ'սպասեն:*

*Եվ արդարև՝ չկա մարդ մ'որ ազատության նշույլը պայծառ կամ ընդաղոտ չունենա, ընկերային որևէ կարգին մեջ՝ չկա մարդ մ'որ ազատության համար ոգի չտա: Եթե բանականությունը չխոսի անոր, եթե վսեմ և բացարձակ ճշմարտություններ, պարտուց և իրավանց գիտությունն, եթե աշխարհիս ներդաշնակությունն և նույնին մեկ մասը լինելը չմեկնե, չհաղորդե անոր, պարզ խորհրդածությունն անոր կ'օգնե դիտելու, բաղդատելու դեմ հանդիման եղած բաներն և գեթ իր գործոց անձնական օգուտը շարժառիթ ընելու. իսկ եթե խորհրդածությունն ես բութ և անմշակ մնա, զգայնությունը կ'մղե զինքը դեպ 'ի վաղանցիկ և կոշտ վայելումներու:*

*Այսպես մարդս աշխարհիս մեջ՝ իբրև զգայուն, խոհուն և բանավոր էակ ազատության զանազան աստիճաններե կ'անցնի և հուսկ ուրեմն ճշմարիտ ազատությունը կ'գտնե, կամ պիտի գտնե, երբ իր միտքն ու սիրտը միօրինակ մշակե, և նույն ազատությամբ կենաց և ընկերության, չէ թե միայն անձնական, տեղական, այլ ընդհանուր վսեմագույն շահուց վերահասու լինի:*

*Ո՛ւր որ դառնանք ազատությունը կամ իբր նպատակ պիտի գտնենք այնտեղ, որ թերի է, կամ իբրև գործի, այնտեղ որ նոր նոր հաղթանակներ տանելու հարկ կա: Մշակն որ իր արտը կ'վարե ու կ'ցանե, գործավորն որ բնության տարերաց դեմ կ'մաքառի, տարազագործն որ նյութին ձև ու գույն կ'տա, վաճառականն որ ապրանքը կ'փոխադրե, դաստիարակն որ խրատ ու դաս կ'հայթայթե, քահանայն որ կ'աղոթե և կ'քարոզե, դրագետն որ նոր սկզբունք մ'ընկերության կ'ընծայե, քաղաքագետն որ խաղաղասիրական դաշն մը կ'կռե, դատավորն որ արդար վճիռ մը կ'արձակե, քաղաքացին որ անսուտ քվե մը կ'նետե, մեկ խոսքով ընկերության մեջ ամեն բանվոր իր հատուկ աշխատության մեջ կամ ազատություն կ'զգա, կամ կ'մտածե, կամ կ'դատե, կամ կ'փնտռե, և այսպես մեն մին գիտապես կամ անգետս կ'գործեն նույն վախճանին համար սերտ հարաբերությամբ:*

Մշակին համար՝ հունձքն է ազատությունը, գործավորին համար՝ օրողչեքը, վաճառականին համար՝ շահը, դաստիարակին համար՝ դասը, քահանային համար՝ աղոթքը, գրագիրին համար՝ սկզբունքը, քաղաքագիտին համար՝ խաղաղասիրական դաշինքը, դատավորին համար՝ արդար վճիռը, քաղաքացիին համար՝ քվեն։ Ո՛ւր որ չկա ազատություն՝ ոչ հաց կա, ոչ շահ, ոչ իրավունք, ոչ պարտք, ոչ լույս, ոչ արդարություն, ոչ բարոյություն և ոչ խաղաղություն։ Ընկերությունը վատ և բուռն կրից ասպարեզ մը կ՚դառնա, մոլությունն անսանձ կ՚տիրապետե, և բռնությունը զայն կ՚սնուցանե, իշխանությունը զորավորագույնին ձեռքը կ՚անցնի, և ժողովուրդը ժամանակ մ՚ զգալեն ետև որ ապիկար ու թշվառ է, իր էությունն, այն է խիղճն ևս կ՚կորսնե, ստրկության և անբանության մեջ կ՚տառապի, և իրաց այս կարգն ի վերջե իրեն բնական կ՚երևի։

Թեև ազատությունն 'ի բնե մի է, քանի որ նույն աղբյուրեն կ՚բխի, բայց ըստ որում ընկերության մեջ տարբեր տարբեր նպատակներու համար կ՚գործածվի, այլևայլ տեսակներ ունի, ինչպես անձնական ազատություն, որ անհատին ինքնուրույն իրավանց կ՚պատկանի, տնային ազատություն, որ տան սրբավայրն՝ արտաքին հարցականներե վերծ կ՚պահե, քաղաքային ազատություն, որ մասնավորաց շահերուն կ՚վերաբերի, քաղաքական ազատություն, որ ազգի մ՚անդամները կ՚ամփոփե, կ՚պահպանե, և բոլոր մյուս ազատությանց վահանն է, կրոնական ազատություն, որ մարդկային խղճի ու Աստուծո առնչությունները կ՚նվիրագործե և ամեն դավանություն միօրինակ կ՚պաշտպանե, իմացական ազատություն, որ մարդկային մտաց աղբյուրն ու արգասիքն անվթար կ՚պահե, և կ՚թողու, որ սփռին ընկերության ամեն դասու մարդկանց մեջ. առևտրական կամ տնտեսական ազատություն, որ դարձյալ զանազան ճյուղերու կ՚բաժանվի։

## ՍԿԶԲՈՒՆՔԻ ԴԵՄ ԱՐԴՅՈՒՆՔ

Փյունիկեցի մը գիրը գտավ[27] և մարդկային ազգի անցյալ մը հարդարեց, գերմանացի մը ձեռագիրը տպագիր դարձուց[28] և ազգերու ապագա մը տվավ անմահության հետ, սակայն գրքի տվավ նաև խնդրո մ՚, որ ցարդ գրեթե տեսապես քան գործնապես լուծում գտած է. այս է մամլո ազատության խնդիրը, զոր ամեն ազգ և ամեն կառավարություն տարբեր տարբեր կ՚մեկնեն և ըստ այնմ օրենքներ կ՚դարբնեն օրագիրներու ընթացքն ուղղելու համար, վասնզի ամեն ժողովուրդ միևնույն մտա-

վոր զարգացումը, միևնույն բարքը, միևնույն ընկերական վիճակ և կառավարական ձև չունի։

Այս կենսական խնդրույն՝ դեմ և 'ի նպաստ գրվածներն անբավ են, բայց մեր միտքն ոչ երկու կողման փաստերը մեջ բերել և ոչ մեր անձնական կարծիքը բացատրել է, ըստ որում այժմ մեր գրելու ազատության սահմանն որոշակի չգիտենք, այլ միայն այս խնդրույն վրա քանի մը ձեռնհաս հեղինակներու կարծիքը հրատարակել։

Նախ Ավետարանը կ'ըսե.—Եթե վատ խոսեցա, պատասխան տուր ինձ, և եթե լավ, ինչու համար կ'զարնես[29]։

Բորդալիս կ'ըսե.— Ամեն ժամանակ մամլո ազատությունն իրեն կուսակիցներն ու հակառակորդներն ունեցած է։ Ոմանք կ'կարծեն, թե հասարակաց անդորրությունը կ'պահանջե կանխակալ գրաքննության ենթարկել օրագիր, տետրակ և ամեն գրված որ տպագրության միջոցավ ժողովրդյան սահմանված են։

Այլք կ'մտածեն, թե մամլո ազատությունը պարտի անսահման լինել թե՛ սկզբունքին և թե՛ գործադրության մեջ, և թե հարկ չէ սույն ազատութենե ծագելիք զեղծումներն իսկ դատաստանի ենթարկել։

Մամլո ազատությունը՝ մարդուս՝ տպագրության միջոցավ իր զգացումն և գաղափարն անարգել հայտնելու մեկ կարողությունն է։ Իմացական էակի մը չենք կարող պատվիրել որ իր միտքն, իր դատողությունն և իր բանականությունը չգործածե։ Մեր մտածածն ու զգացածն ուրիշի հաղորդելու իրավունքն ընկերական էակի մը բնության հարակից է. ուրեմն ամեն մարդ կարող է ազատորեն խորհիլ, խոսիլ և գրել...։ Այս անբռնաբարելի իրավունքը միանգամայն նվիրական պարտավորություն մ'է, վասնզի ամեն մարդ իր հայրենյաց, իր նմաններուն կ'պարտավորի իր տաղանդն, իր ծանոթություններն, իր լույսը. մարդիկը հրահանգելու աշխատելով է որ կարող կ'լինինք գործադրել այն ընդհանուր առաքինությունն, որ ամենուն համար սեր կ'ենթադրե. ուրեմն մամլո ազատությունն որչափ քաղաքացվույն բարոյականեն, նույնչափ մարդուն իրավունքեն կ'բխի։

Բայց կ'առարկեն թե այս ազատությունն իր անպատեհություններն ունի, և ասկե կ'հետևցընեն, թե հարկ է զայն սեղմել...։ Բայց իր օգուտներն ալ ունի, ինչո՞ւ համար ասկե չեն հետևցըներ, թե պետք է զայն հարգել։

Բասգալ կ'ըսե.— Երբ զորությունը զորության դեմ կ'մաքառի, մեծագույնը տկարագույնը կ'տապալե. երբ խոսքի դեմ խոսք կ'մաքառին, ճշմարիտ և համոզակեր խոսքը կ'շփոթեն ու կ'ջրեն անոնք որ միայն

բռնություն և ստություն կ'պարունակեն, բայց բռնությունն ու ճշմարտությունն իրարու վրա չեն ներգործեր։

*Մոնթեսքիեօ* կ'ըսե.— Ազատ ազգի մը մեջ անտարբեր բան մ'է, որ անհատները լավ կամ վատ բանադատեն, բավական է որ բանադատեն. ասկե կ'ծնի այն ազատությունը, որ նույն բանադատության հոռի արդյունքեն մեզ կ'պահպանե։

*Միրաբո* կ'ըսե.— Մամլո ազատությունը բոլոր ազատություններու վահանն (palladium) է, այն է նորածին տերությունները վաղահաս և հարատև հասնության տանողն, անոր գործն է ղառամուլթենե մաշող տերությունները վերականգնելը։

*Գ. Տեմուլեն* կ'ըսե.— Մամուլն Աքիլլեսի նիզակին կ'նմանի, որ բրած վերքը կ'բուժե։ Մամլո ապերասանության մեծագույն դարմանն է մամլո ազատությունը։

*Շադոպրիան* կ'ըսե.— Մամուլն երբեմն անծանոթ տարր մ'էր, անհայտ զորություն մը. այժմ աշխարհ մտնելով՝ խոսք եղավ վառոդի նըման, և ընկերային էլեկտրականություն մը։ Կարո՞ղ ես զայն ջնջել։ Ո՞րչափ ջանաս զայն ճնշելու, այնչափ բուռն կ'դառնա պայթումը։ Ուրեմն պետք է վճռես անոր հետ ապրելու, ինչպես որ կ'ապրիս շոգեշարժ մեքենային հետ։

*Կիզո* կ'ըսե.— Մամլո ազատությունը մտավորական կարգին մեջ շոգիին ծավալումն ու մղումն է, սոսկալի այլ կենսատու զորություն, որ մեկ ակնթարթի մեջ երկրիս երեսը կ'սփռե ամեն իրողություն և գաղափար։ Ես միշտ փափաքած եմ, որ մամուլն ազատ լինի, հասարակաց բարոյականին ավելի օգտակար, քան վնասակար կ'գտնեմ։

*Ժեֆերսըն* կ'ըսե.— Պետք է հանդուրժել մամլո հուզած վրդովման. ջրերու մաքրությունը պահելու համար կարևոր շարժումն է այն։

*Պ. Թիեր* կ'ըսե.— Մամուլը կրնա անսահման լինիլ առանց վտանգի։ Միայն ճշմարտությունն է ահարկու. սխալն անզոր է, քանի չափն անցընե այնքան կ'մաշի։

Դյուրին է՝ մամլո ազատության վրա ուրիշ այսպիսի վկայություններ գտնել մանավանդ Ֆրանսայի գրականության մեջ, սակայն երբ գործադրությունը կ'փնտռենք, չենք գտներ անոր ընկերության մեջ և կ'զարմանանք, թե ինչպես նույն երկրին ամենեն նշանավոր հանճարները մամլո ազատությունը կ'հռչակեն իրավ՝ դեռևս ժողովուրդն անոր արդյունքը չվայելեր։ Նույնիսկ այն աշխարհածանոթ քաղաքագետն՝ որ այսօր գաղղիական ազգին գլուխը կ'կենա՝ մամուլը կաշկանդելու կ'միտի և իր դավանած սկզբունքին հակառակ կ'գործե[30]։ Կ'երևի թե, երբ երևելի

գլուխ մ'որ ատեն իր տեսիլներով աշխարհ կ'լուսավորե, պաշտոնական մթնոլորտը մտնե՝ ուրիշ մարդ կ'դառնա և խիստ բարձրեն կ'դիտե այն ժողովուրդն, որուն մեջ երբեմն կ'ապրեր, և թերևս անոր վրա առաջուց չտեսած թերություններ կ'նշմարե և իր ազատասիրական խոստումները ծրարելով պատեհ առթիվ գործադրելու կ'առաջադրե։ Միայն քանի մը տերություններ սկզբունքը գործի հետ կ'միաբանին և այս պատճառավ միշտ հառաջադեմ կ'կանգնին։ Արդյոք ըսե՞նք՝ թե Ժիրարտենի հետ, թե «Մամուլն անզոր է», թե Կյութեմպերկի գյուտեն վեր մամլո լիակատար ազատության վրա գրված ճառերը ներգործություն չունեցան մտաց վրա, այլ ընդհակառակն շատ տեղ նոր նոր շղթաներ ավելցուցին...։

Այս առթիվ պարտավոր ենք ըսել, թե Թուրքիա ևս մամլո ազատության կուսակից է[31] և գրեթե Անկլիո, Պելժիայի կ'մոտի այս մասին։ Օսմանյան պետությունն 'ի վաղուց անտի ճանչցած է ազատ հրատարակության օգուտներն, և իր հպատակացը լուսավորության համար, երբ նոր օրագրի մը հրաման խնդրվի՝ հոժարակամ կ'շնորհե, սա պայմանավ միայն, որ տերության օրինաց համեմատ գործադրվի այն արտոնությունը։ Սակայն ցավ է մեզ հայտնել, որ վերջին օրերս **Մանզումեի**[32], **Ծրագրի**[33], **Արարատա**[34] և **Մամլո**[35] դադարումն մեր միտքը շփոթեց։ Մեզ արված չէ այս դադարումներու պատճառները քննել, ըստ որում մեր պարտքն է հարգել կառավարության վճիռն, և Մեծն Կ. Փանոսյանի հրատարակած մեկ նամակին վրա սա մեր արդեն գրած խոսքը կ'հիշենք, թե՝ **Կառավարությունն ստեպ մասնավորներու դիմամբ հետ բերքը կ'դառ**նե. և նամակին ասությունն եթե հիմնավոր՝ շատ ցավալի, և մենք դատապարտելի ենք։

Հայ մամուլը չունի այն քաղաքական կարևորությունն ու ներգործությունը, զոր եվրոպական թերթեր ունին, չունի կառավարության խորհուրդներ տալու մեծամտությունն, այլ իր պաշտոնը պարզ և սահմանափակ ազգին մեջ օգտակար խնդիրներու մասին օտար լրագիրներու արձագանք է, միշտ օսմանյան պետության իրավանց և շահուց ջատագով և անկեղծ հպատակությամբ լի է, և կ'փափաքի միայն անվթար պահել ազգային խնդիրներ քննադատելու իրավունքն, օրինավոր կերպով տերության ուշադրությունը հրավիրել այնպիսի բուռն ու ազգավնաս իրողություններու վրա, որ վեհափառ Սուլթանին արդարասեր կամաց և տերության օրինաց հակառակ կրնան պատահիլ, և օտար մամլույն Թուրքիո մեջ արված ազատությունը վայելել։ Քանի որ հայ մամուլն այս զովանի տրամադրությունը տածե՝ հուսալի է որ ներողամտություն կ'գտնե, երբ երբեմն սաստիկ հռանդե կամ անզգուշութենե, քան դիտմամբ սխալմունք մը կ'գործե...։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

## ԷԴՄՈՆԴՈ ԴԵ ԱՄԻՉԻՍ «ՍԻՐՏ»: ԱՇԱԿԵՐՏԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

### Ֆրանսերենից թարգմանեց Փիլիպպոս Վարդանյան: Թիֆլիս, Հովհաննես Մարտիրոսյանցի տպարան, 1889, գինն է 1 ռուբլի

*...Եվ ո՞ր աշխարհում կարող էր ավելի լավ սրտի գիրք դուրս գալ, քան Իտալիայում, այն աշխարհում, որ ընդունակ է Գարիբալդիներ, Մաձձինիներ և Կաուրներ[1] ծնանելու, այն աշխարհում, որից հափշտակված բացականչեց մեր անմահ բանաստեղծը.— «Չէ՛, թշվառ չէ՛ Իտալիան...»[2]։*

*Արդարև, թշվառ չէ Իտալիան, եթե այնպիսի սրտեր ունի, որպիսիք նկարագրված են «Սրտի» մեջ։ Քանի՜ երջանիկ են Իտալիայի բանաստեղծները, որ կարող են հափշտակվել նրանց ազգային սխրագործություններով, որ կարող են դրվատող հանդիսանալ իրանց ազգային հերոսներին։...*

## ՄԻ ԵՐԵՍ ՄԵՐ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*...Եթե մարդկության երջանկությունը պահանջում է ազատություն և այդ ձգտումն ունի ամեն մի անհատ, ապա ուրեմն հայի համար բացառություն լինել չէ կարող, ուզի չուզի նա էլ կունենա այդ ձգտումը իբրև մարդկության մի հյուլե։ Ամենայն ինչ, որ ընդհանուր մարդկային է, նույնն ունենալ ամեն մարդու իրավունքն է։ Հայը կարող չէ գիտությունից զուրկ մնալ, իսկ գիտությունն արդեն ինքնըստինքյան ազատության մի դուռն է. ամենայն բռնություն, ամենայն ուժ պետք է գիտության ուժի առջև գլուխ խոնարհե։ Կկորչեն, կանհետանան միայն այն ազգերը, որոնք գիտությունից և նրա պահանջներից կփախչեն։ Աղանց, բոշայու-*

*թյուն, խաչագողություն, բաշիբոզուկություն, դրանք բոլորը կչնչվեն, կը-
վերանան, և տիրող կհանդիսանա միմիայն գիտությունը, որ բոլորի միտ-
քը սրբում, մաքրում է անասնական հատկություններից և մարդկանց
միացնում է միակերպ մտածությամբ. Նույնիսկ միևնույն ազգի զանա-
զան անդամները, կրոնով և աղանդով բաժանվածները միմիայն գիտու-
թյամբ կարող են միանալ իրար հետ, որովհետև աղանդը բաժանող է, իսկ
գիտությունը միացնող, որովհետև մեկի աղանդը մյուսի համար սուտ է,
իսկ սուտ և ճշմարիտ գիտություն չկա, այլ մեկ և այն բացարձակ ճըշ-
մարիտ։...*

ՌԱՖՖԻ

## <Մ. ԽՐԻՄՅԱՆԻՆ>

1858 թ., [մայիս—հունիս, Սալմաստ]

*...Մարդկային բնությունն մին առանձին գաղտնի հարաբերություն ունենալով տիեզերական համաշխարհական բնության հետ, միանգամայն և նորանցից յուր կախումն ունի։ Զննելով տեսնում եմք. քառահոլով եղանակներուն հետ, երբ բնությունն տկարում և մեռնում է. դարձյալ առողջանալով հարություն է առնում. ընդնմին և մարդկային սրտի եռանդն, ոգվո աշխույժն և մարմնո հատկությունն նույն ձևերն ընդունում են։ Զարմանալի հեղափոխություններ տեսնելու է՝ ոչ թե մին դարվո միջոցումն, այլ ընդհանուր դարերու սահմաններումն. ուր ծեր Կռոնոսն հիմնալի պատկերացուցանե յուր ներգործությունները, որպես համենայն տիեզերական բնության վերա, նույնպես և առհասարակ բոլոր մարդկային ազգին վերա...*

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԵՐ

*...Ինչ ասեմ ի մասին աշխարհական դիտնավորների հայոց մեջ, որք թափառական ման են գալիս աշխարհից աշխարհ, և ո՛չ մի տեղում դադար չեն գտնում։ Խղճալի Մ. Թաղիադյանցը աստանդական մինչև ի Հնդկաստան հասավ, վերջը Պարսկաստանի քաղաքում ավանդեց յուր չնաշխարհիկ հոգին[1]։ Աբովյանը— և անգիտելի է, ինչ կերպով կորցրեց յուր թանկագին կյանքը[2]։ Բայց ե՞րբ կլինի, որ մեր Հայաստան աշխարհում ևս կառուցանվին աթենյան տաճարներ, և հնամոլության մառախուղը վերանա, մի՞թե ազգն ստեղծվել է վանքի ու վանականների և դատարկ ծիսապաշտության համար։ Դորա հակառակ, վանքը և վանականքը և բոլոր կրոնական կարգերը սահմանված են մարդուս համար և պիտո է ծառայեն մարդկության օգտին։ Իսկ երբ որ նոքա անպիտանացան, և համեմատ չեն ազգի և ժամանակի պիտույքին, ապա պետք է ի*

բաց մերժվին։ Այժմուս ազգը, յուր տգիտության բանտի մեջ, ճգնավորների աղոթքին և վանականների աղերսանքին այնքան կարոտություն չունի, որքան փափագում է կրթության ու քարոզության ախտահալած դեղին, այն զարթուցանողական ձայներին, որ լսելով սթափվի յուր մահահրավեր թմրությունից, փակած աչքերը բանա և տեսանե լուսավոր աշխարհը, լուսավոր ազգերը, ինքն ևս աշխատի հասանել լուսավորության, ուրեմն և բարվոքել յուր դրությունը...

## ԴԱՏԱՐԿ ՀՈՒՅՍԵՐՈՎ ԵՆՔ ԽԱԲՎՈՒՄ

*...Մեզանում կան մի տեսակ կարճատեսներ— դժբախտաբար նրանց թիվը փոքր չէ, որոնք երևակայում են, թե հայի ապագան Տաճկաստանումն է, թե հայի գոյությունը կապված է թուրքաց կառավարության գոյության հետ[3]։ Նրանք մտածում են, թե այժմյան բարբարոսությունները, հարստահարությունները մի օր կվերջանան, երբ թուրքը կքաղաքակրթվի, այն ժամանակ, ասում են, հայը քաղաքացու հավասար իրավունք և ազատ կյանք կվայելե։*

*Այդ ցնորք է...*

*Եվ ուրիշ կերպ լինել կարելի չէ, քանի որ տիրող ազգը աշխատելու շնորհք չունի, և միայն զենքով իշխելու քաջություն ունի։ Այսպիսի ազգը պահպանում է իր գոյությունը հպատակ ազգերի ձեռքի աշխատանքով։ Թուրքը մի զինվորական ազգ է։ Երկրի վաճառականությունը, երկրագործությունը, արհեստը, մշակությունը, բոլորը հպատակ և ոչ-մահմեդական ազգերի ձեռքումն է.— հայտնի բան է, որ դրանք պետք է աշխատեն թուրքի համար։ Թե միշտ այսպես է եղել զինվորական ուժերի վրա հիմնված ազգերի և պետությունների հարաբերությունը իրանց աշխատասեր, բայց անզեն հպատակների հետ,— դա պատմության մեջ մի ապացուցված բան է։*

*Զինվորական ուժերի վրա հիմնված պետությունը, այլ խոսքով, մի ազգ, որ ամբողջապես բաղկացած է զինվորականներից, մի վիթխարի վիշապ է, որ կլանում է, ուտում է, ոչնչացնում է ինչ որ արդյունաբերում է ողորմելի հպատակի աշխատասեր ձեռքը։ Այս վիշապը կուլ է տալիս ամբողջ ազգեր ու ժողովուրդներ իր մարմինը պարարտացնելու համար։*

*Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը։ Նրա ամեն մի տողը արյունով և արտասու-*

քով է գրված։ Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը։

Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ։ Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի անունը միայն մնացած կլինի։

* * *

Ժամանակը մոտեցավ, պատերազմը վերջանալու վրա է, բայց հայը տակավին մի նշանավոր տնօրենություն չէ արած իր համար։ Մինչև այսօր փոքր ի շատե աչքի ընկնող բան, որ երևացավ, դա էր Սեթ Աբգարի տետրակը[4]։ Բայց ի՞նչ մեծ նշանակություն կարող է ունենալ մի փոքրիկ տետրակ այնքան դարերի և մանավանդ այժմյան ցավերը արտահայտելու համար, որոնց ամբողջ հատորներով գրքեր չեն բավական։

Մյուս, ինչ որ լսվել է մինչև այսօր, ճանճի բզզոցներ կարելի է համարել, որոնք կարող են միայն ծիծաղ շարժել, և ոչ ցավակցություն։ Եվ ի՞նչ նշանակություն կարող են ունենալ մեր բողոքները եվրոպական ընդհանուր մարդասիրությունից զուրկ, եսական քաղաքականության առջև, քանի որ սլավոնական ցեղերի թնդանոթների որոտմունքը, և նրանց թափած արյան մրմունջը ազդեցություն չեն գործում։

Իսկ այդ պետք չէ, որ հուսահատեցնե մեզ։ Եվ եթե Թուրքիայի հայի դաժանական դրությունը չի բարվոքվի ևս, գոնյա պատմության դատապարտությունից ազատվելու համար, գոնյա ապագա սերունդի մոտ սևերես չմնալու համար մենք պետք է թափենք մեր բոլոր ճիգը ներկա հանգամանքներից օգուտ քաղելու, և եթե չհաջողվի ևս, մեր որդիքը կասեն, թե մեր հայրերը աշխատեցին...

## ԻՆՔՆԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

Ծանի՛ր զքեզ

Ինքնախաբեությո՜ւն... դա մի շատ հասարակ բառ է, բայց նրա մեջ թաքնված են մարդու բոլոր թշվառությունները։ Տեսնում ես մեկը հիմար է, բայց կարծում է, թե խելք ունի։ Մյուսը երկչոտ է, կարծում է, թե առյուծի սիրտ ունի։ Երրորդը ոչինչ չէ սովորել, բայց իրան հանճար է երևակայում։ Չորրորդը չարագործ մեկն է, բայց իրան առաքինության տիպար է համարում։— Այս բոլորը առաջ է գալիս ինքնախաբեությունից։

Ինքնախաբեությունը մի աչք միայն ունի և նա ամեն բան լավ կողմից է տեսնում, նրա մյուս աչքը կույր է տգեղությունների, այլանդակու-

թյուններ և մոլություններ տեսնելու համար։ Եվ այս պատճառով այն թշվառականը, որ մի այդպիսի ողորմելի դրության մեջ է գտնվում, միշտ գոհ է իր վիճակից, որովհետև իր մեջ թերություններ չէ տեսնում։ Եվ դրա համար նա միշտ անշարժ է մնում. ոչ մի ձգտում դեպի առաջադիմություն և ոչ մի պահանջ կյանքից չունի.— իրան ամեն բանով լիացած է համարում։

Ինքնախաբեությունը բարոյական ինքնասպանություն է. մի մեռելություն է, որի մեջ մարդկային բոլոր կրքերը հանգիստ են...

* * *

Ինքնախաբեության հակառակն է ինքնաճանաչությունը, նրա հայրը խոնարհն է, իսկ մայրը՝ դժգոհությունը։ Նա ոչինչ բանով բավական չէ։ Նա շատ բան ունի, բայց միշտ մտածում է, թե սակավ ունի։ Նա միշտ դեպի վեր է նայում, աշխատում է բարձրանալ։ Նա ըմբռնել է ընդհանուր մարդկային կատարելությունները. նա ծանոթ է բարձր և վսեմ գաղափարների հետ, և իրան համեմատելով կատարելագործված ընդհանրության հետ, գտնում է շատ փոքր և փոքր...։ Դրա համար միշտ դժգոհ է։ Նա կրկնում է Սոկրատեսի հետ. «Ես միայն մի բան գիտեմ, այն է, որ ոչինչ չգիտեմ»[5]։ Այդ խոսքի մեջն է ինքնաճանաչության բոլոր վսեմությունը։

Երանելի է այն մարդը, որ այսպես է զգում։ Այստեղից է առաջ գալիս տոկուն աշխատությունը, դա է ղեկարում մարդուն դեպի անդադար առաջադիմություն. դա է ծնում հանճարները, արհեստը, գիտությունը և աշխարհի բարօրությունը։

Դժգոհությունը իր վիճակից՝ մի աղնիվ դրդիչ է, որ տանում է դեպի նրա բարվոքումը։

* * *

Որպիսի բնավորություններ հայտնվում են անհատների մեջ, նույնպիսիք և հայտնվում են ամբողջ ժողովուրդների և ազգերի մեջ։ Որովհետև բոլորը կազմված է մասերից, ինչ որ մասերն են, այն և բոլորն է։

Կան ազգեր, որ շատ գոհ են իրանց վիճակից, կարծում են, թե ամեն բան ունեն և իրանց թերությունները չեն տեսնում։ Կան նաև ազգեր, որքան առաջ են գնում, որքան արդյունաբերում են, որքան կատարելագործվում են,— այնքան դժգոհ են։...

*Այժմ ինչ որ խոսենք, ինչ որ գրենք,— այդ կդառնա որպես եվրոպացին ասում է՝ «ընթրիքից հետո մանանեխ»[6] և կամ որպես մենք ասիացիքս ասում ենք՝ «հարսանիքից հետո* զուռնա»:— *Մեր խոսքը տարաժամ կլինի:*

*Ներկա պատերազմիս սկզբից մեզանից շատերը հույս ունեին, թե տաճկական Հայաստանը զուրկ չի մնա այն արտոնություններից և այն իրավունքներից մեկից, որոնց համար պատերազմը հրատարակվեցավ, և որոնք պետք է տրվեին Թուրքիայի լծի տակ ճնշված քրիստոնյաներին: Իսկ այժմ գործից երևում է, թե հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու.— շատ-շատ տաճկական Հայաստանի ռուսաց զորքերով գրավված մասը կմիանա Կովկասի հետ[7], բայց մնացած մեծ մասը դարձյալ կմնա Թուրքերի ձեռքում, գուցե մի քանի* խոստումներով, *որպես միշտ եղել են մինչև այսօր և միշտ մնացել են որպես մեռյալ տառ...*

*Ինչո՞ւ հայերի վրա ուշադրություն չդարձրին, մի՞թե նրանց դարերով թափած արյունը, արտասուքը և մահմեդականներից կրած չարչարանքները իրավունք չէին տալիս, որ նրանք ևս արժանանային Եվրոպայի գթությանը— թե նրանք էլ դժբախտ են և գտնվում են ավելի սարսափելի դրության մեջ, քան թե սլավոնական ցեղերը Բալկանի թերակղզում:— Ահա՛ մի հարց, որ պարզել պետք է:*

*Ընդհանուր մարդասիրական կետից նայելով, և քրիստոնեական եղբայրասիրության զգացմամբ, պետք է, որ հայերի վրա ևս ուշադրություն դարձնեին...*

*...Երբ մի ժողովուրդ այնքան զարգացած է, որ հասկանում է իր իրավունքները և հասկանում է, որ ինքն բռնաբարվում է,— և միևնույն ժամանակ այնքան պատրաստված է, որ կարող է ընդդիմադրել բռնակալի կամայականությանը,— ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, թե՛ զենքով և թե՛ խոսքով: Այդ լինում է հեղափոխական ցույցերով, և դրան ասում ենք, թե* ազատության զգացմունքը *արմատից է ծագում, ամբոխի սրտից է բխում,—* ցածից վեր է բարձրանում:

*Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ, և գտնվում է մի այնպիսի հիվանդոտ դրության մեջ, որ միայն զգում է իր ցավերը, բայց դարման անելու շնորհ չունի,— այն ժամանակ նրան իր թշվառ վիճակից ազատելու հոգսը* վերևից դեպի ցած է իջնում: *Դա հայտնվում է բարձր կենտրոններում, մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զար-*

պացած և գործունյա դասերը։ Ամբոխը ենթարկվում է այդ դասերին և կրավորական դեր է խաղում։

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ ներգործական…

## ՀԱՅԴՈՒԿՆԵՐ[8]

Հայդուկ[9] բառը չի նշանակում գող, ավազակ, կամ վտարանդի ելուզակներ. դա նույն նշանակությունն ունի, ինչ որ էին հունաց կլիֆտները[10] նրանց ապստամբության ժամանակ, կամ…* սուլիոտները[11]։ Հայդուկը բնական արտահայտություն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի։ Հայդուկը ստրուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ։ Նա թողնում է ընտանեկան օջախը, որ իր համար պղծված էր, նա թողնում է յուր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում, և այնտեղ, որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդին, սկսում է տիրել ամայության վրա։ Բնությունը միանում է հաշող ձեռքի հետ, և հայդուկը իր որջից մահ և սարսափ է սպառնում իր շրջակայքի վրա։ Իրավ, նա մորթում է, կողոպտում է, այրում է մարդկանց բնակարանները, բայց այդ բոլորը գործում է, որպես նեղված ժողովրդի բարկության ոգին, որ վրեժխնդրության մեջ բավականություն է գտնում։

Հայդուկը հասարակ ավազակից որոշվում է գլխավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակության ագահությունից դրդված, կամ հանգամանքներից ստիպված է գործադրում իր արյունահեղ արհեստը,— այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային զգացմունք և ազատության բաղձանք։ Հայդուկի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում այս կողմից, որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին և ուխտում է անգթաբար պատժել անիրավությունը։ Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից— ահա դրանք են նրա ցանկությունները. դրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ…

## ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ[12]

…Ինչ-որ ավելի հատկանիշ է ֆրանսիական ուսանողներին— դա է նրանց արտաքին փայլը։ Փարիզը սաստիկ հղկում է և կոկում է նրանց։

* Բնագրում պակասում է մի բառ։ Ծանոթ. «Արաքս» ամսագրի խմբ.։

*Նրանք գերմանական ուսանողի նման անտաշ, անշնորհք և դանդաղկոտ չեն, որոնց բոլոր արժանավորությունները թաքնված են դրսի սառն և ցամաք կեղևի տակ։ Փարիզի ուսանողը կատարյալ աշխարհային մարդ է իր բազմակողմանի ձևերի մեջ...*

*Ինչ որ վերաբերում է ընդհանուր գաղափարներին, մեծ մասը ազատամիտ և առաջադիմականներ են, և պատկանում են հասարակապետական կուսակցության։ Այդ բավական չէ, շատերը նրանցից երազում են համաշխարհային հասարակապետություն, երազում են ազգերի եղբայրություն և չքավորության վախճան։ Ազատության և արդարության խոսքերը սաստիկ արբեցնում են նրանց։ Այսուամենայնիվ, ֆրանսիական ուսանողը պրոպագանդիստի ոգի չունի, որ մտներ ընտանիքների մեջ, որ մտներ ամբոխի մեջ, և առանց աղմուկի տարածեր իր մտքերը։ Նա իր նեղ, ուսանողական շրջանից դուրս չէ գալիս։ Օրինավոր ընտանիքներում մինչև անգամ նրան չեն ընդունում։ Բայց երբ պատահում է մի ժողովրդական շարժում, երբ ծագում է մի քաղաքական հեղափոխություն, ուսանողները խլրտում են, զարթնում են որպես քնած առյուծ, և առաջինն են լինում, որ թնդեցնում են փողոցները մարսելիեզներով, փշրում են բռնակալների արձանները և թռչում են բարիկադների վրա։ Ով որ փոքր ի շատե ծանոթ է ֆրանսիական պատմությանը, գիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում, և մանավանդ Կոմունայի ժամանակ*[13]*։*

## Ի՞ՆՉ ԿԱՊ ԿԱ ՄԵՐ ԵՎ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

*...Բայց անհաջողությունը, մանավանդ մի մեծ հեղաշրջումից հետո ժողովուրդների կյանքում, ինչպես և պարտությունը ձախորդ պատերազմից հետո, ունեն իրանց օգուտները, այն կողմից, որ նույն ժողովուրդներին հասկացնել են տալիս իրանց թերությունները, սխալները և առհասարակ նրանց անընդունակությունները, որոնք պատճառ եղան անհաջողության։ Եվ այդ գիտակցությունը բավական էր ապագայում նրանց առաջնորդելու համար դեպի ուղիղ և հաստատ ճանապարհը, որ հասցնում է նպատակին...*

*Արդարև, ամեն մի անհաջող ձեռնարկություն ժողովուրդների կյանքի մեջ ունի իր օգուտները, որ նրանց զգալ է տալիս իրանց թերությունները և նախապատրաստում է մի նոր ապագայի համար, և դրանից է առաջ գալիս այն գիտակցությունը, որ կոչվում է* **ինքնաքննություն**: *Բայց դժվար կարելի է գտնել ամբողջ մարդկության մեջ մի ժողովուրդ,*

որ ինքն իրան ճանաչեր— նրան ճանաչում են և քննում են նույն ժողովրդի առաջավոր մարդիկը, զարգացած մասը, որպես բժիշկը հիվանդներին։ Եվ այս վերջինները հաղորդում են ժողովրդին նրա թերությունները, նրա պետքերը և միևնույն ժամանակ հնարներ նույն պետքերին բավականություն տալու։ Դրանք կոչվում են զանազան անուններով՝ ժողովրդական գործիչներ, առաջնորդող մարդիկ— գրավոր և բերանացի խոսքը նրանց գլխավոր զենքն է,— նրանք ներկայացնում են ժողովրդի մտավոր զորությունը,— նրա **ինտելիգենցիան**։

...Բայց կան և մարդիկ, որ այսպես են մտածում. «Թողեք տանկաստանցիներին հանգիստ մնալ, մի՛ պղտորեք նրանց միտքը, նրանք ավելի լավ են հասկանում իրանց գործը, մենք մեծ հույսեր ունենք նրանցից» և այլն։ Երանի. թե գիտենայինք ինչ բանի վրա են հիմնված այդ հույսերը։ Այս տեսակ խոսքերով կարելի է ամբողջ գրքեր գրել, միայն թե ցանկություն լիներ անիմաստ բառեր շարել։ Եվ զարմանալին այն է, որ այդ պատավախոս իմաստակները համարձակվում են մի ամբողջ ընկած ժողովրդի «գեղեցիկ» ապագան նախագուշակել դատարկ հույսերով միայն, առանց նրան ճանաչելու. առանց նրա ներկա դրությունը հասկանալու։ Դրանք նմանում են այն **նյերամարէ** կոչված պառավներին, որ հրավիրվում են դիակների վրա երգ երգելու. նրանց համար միևնույն է, թե ո՛վ էր, ինչ տեսակ մարդ էր հանգուցյալը, կարող են նրան մինչև անգամ չճանաչել, կարող է նա բոլորովին ոչինչ մարդ լինել. բայց նրանք միշտ իրանց սովորական երգն են երգում, գովասանում են նրա չգործած սխրագործությունները, նրա առաքինությունները, գութ և ափսոսանք են շարժում, որովհետև դրա համար վարձ են ստանում։

Միշտ հույս և հույս— այդ է իմաստակների խոսքը, թեև դատարկ հույսն առանց գործի ոչ մի նպատակի չէ հասցնում։ Անշարժության այդ վարդապետները, ես հավատացած եմ, կցանկանային, որ ամբողջ մարդկությունը մումիաներ լինեին և երբեք չփոխվեին, փույթ չէ, եթե նրանց մեջ կյանք չէր լինի։

Ո՛չ, մենք պետք է խոսենք, պետք է մտածենք մեր տաճկաստանցի եղբայրների մասին, պետք է քննենք նրանց և բոլորը կրիտիկական խստությամբ քննենք։ Քանի որ կատարելապես չենք ուսումնասիրել, քանի որ չունենք և չենք աշխատի ունենալ նրանց դրության մասին ճիշտ և մանրամասն տեղեկություններ— մեր բոլոր ջանքը, մեր բոլոր աշխատությունը նրանց օգնելու մասին ապարդյուն կլինի։ Կանգնել հեռու, չըմտնել գործի մեջ, չտեղեկանալ մի ժողովրդի իսկական պահանջները և միայն ստեղծել իր գլխում իդեալական ցնորքներ— այդ բոլորը հրապու-

րջ բաներ են, բայց խաբուսիկ են։ Կաբինետի երևակայությունները ինքն իրան ոչնչանում են, երբ զարկվում են իրականության հետ…

Ժողովուրդների վիճակը հանկարծ չէ հեղափոխվում, մի օրվա մեջ չէ բարվոքվում, այլ նախապատրաստությունը սկսվում է գուցե դարերով առաջ, իսկ հարմար ժամանակ նրան իրագործում է։ Տաճկաստանցիք նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու և այս պատճառով չհասան իրանց նպատակին, թեև ոմանք Բեռլինի վճռի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք են տեսնում։ Այդ հանքը մեզ շատ չէ շլացնում։ Այս և այն հոդվածը, մանավանդ, երբ նա ֆորմի համար գրված է լինում, մի ժողովրդի վերածնելության վերաբերությամբ այնքան նշանակություն ունի, որքան մեռած ռեցեպտը հիվանդի առողջության համար, երբ դեղերը չեն գործադրվում։

Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոսկին, եթե այդ հանքն անդադար և անընդհատ կերպով կբովագործվեր. դա կոչվում է նախապատրաստություն: Եվ Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և անընդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ և պատրաստ հանդիպեն այն մեծ օրվանը, երբ կրկին անգամ կզարկե ազատության ժամը։ Իսկ այդ օրը կկրկնվի, և շատ անգամ կկրկնվի… գուցե շատ հեռու չէ մեզանից…

Շատերը դժգոհությամբ խոսում են.— «արևելյան խնդիրն այս անգամ էլ չվերջացավ…».— «ա՜խ, ե՞րբ պետք է վերջանա այդ արևելյան խնդիրը…»։ Խիստ միամիտ խոսքեր են դրանք։ Արևելյան խնդիրը Եվրոպայի կենսական խնդիրն է։ Կյանքի խնդիրները չեն վերջանում, այլ ժամանակավորապես պայմանավորվում են։ Ամբողջ հայոց ազգի մտածողների մեջ ես միայն մի մարդ եմ ճանաչում, որ իսկապես հասկացել էր, թե ինչ է նշանակում արևելյան խնդիր[14], և հասկացել էր այն ժամանակ, երբ այդ դիպլոմատիկան տերմինը դեռ մեզանից շատերին ծանոթ չէր։ Միթե արևելյան խնդիրը կարո՞ղ է վերջանալ.— ո՛չ, նա կմնա անվախճան, որքան ինքը արևելքը հավիտենական է։ Դա մի պատմական խնդիր է և պիտի ձգվի ազգերի պատմության հետ…

## Ի՞ՆՉՈՎ ԵՆՔ ՄԽԻԹԱՐՎՈՒՄ

Պետք է լայն հայացքով նայել առարկայի վրա. պատմությունը առաշլոք միրաժներ ունի, որոնք երբեմն ձգում են անհմուտ նայողին օպտիկական խաբեությունների մեջ։ Նեղ, միակողմանի հայացքը պատմության վրա միշտ մոլորեցնում է մարդուն։ Հայն աշխարհի ստեղծագործության մեջ մի առանձին արարած չէ, և չէ կարող լինել։ Նա ազգերի

պատմության մեջ բացառություն չէ կարող կազմել։ Նա ենթարկված է եղել և պետք է ենթարկվի միևնույն պատմական օրենքներին, որոնցմով կառավարվել են մարդկությունը ներկայացնող ազգերը։ Հայն առանձին պատմական օրենքներ ստեղծել չէ կարող։ Պատմությունն ազգերի առջև մի որոշ շավիղ է գծել—դա ընդհանուր մարդկության ուղին է—ինչ ազգ, որ ոտքը դուրս է դնում այն շավղից, մոլորվում է, կորչում է և ոչնչանում է...

Այդ իսկ պատճառով կրոնի խնդիրները մի կողմ դրած, այժմ Թուրքիայի հայերն ազգայնության դրոշը պարզելով, պետք է ձեռք ձեռքի տրված աշխատեն տնօրինել իրանց ապագա բախտը։ Եվ հայության գործը Թուրքիայում այն ժամանակ միայն հաջողված կարելի է համարել, երբ ազգի անջատված մասերը կմիանան, կկազմեն մի ամբողջություն, ոչ թե կրոնական կապերով, այլ ազգայնական անունով։ Բավական է, որքան հայերն իրանց ճանաչել տվին որպես կրոնական համայնք, այսուհետև թող աշխատեն ճանաչվել որպես ազգ։

## Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՐԻՏԻԿԱՆ ԵՎ «ԿԱՅԾԵՐԸ»[15]

Մի ժամանակ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի ամբողջ մամուլը զբաղված էր ստրուկների ազատության հարցով։ Այդ հարցի առիթով տպվում էին հազարավոր բրոշյուրներ, այդ հարցի առիթով քահանան եկեղեցու բեմից կարդում էր քարոզներ, իսկ տնտեսագետը գիտության ամբիոնից կարդում էր դասախոսություններ,— բոլորը կամ ի նպաստ ստրուկների, կամ աննպաստ։ Եկեղեցին, մամուլը, գիտությունը կատաղած կերպով վիճում էին միմյանց հետ և վիճաբանության առարկան ստրուկներն էին։ Մտքերի այդ կռվի ժամանակ հայտնվում է մի կին, Բիչեր Ստոու, և օգուտ քաղելով ժամանակի մտածություններից, գրում է մի վեպ ստրուկների կյանքից, «Թոմաս աղբոր տնակը»[16]։ Այդ կնոջ համար ասում են, որ ստրուկների ազատիչը եղավ ոչ այնքան հյուսիսային ամերիկացիների զենքը, որքան նրա վեպը։ Եթե մի կրիտիկոս քննելու լինի նրա գեղեցիկ գիրքը, շատ ծիծաղելի կդառնա, եթե ասե, նրա բոլոր գաղափարները և տենդենցիան հազար անգամ հայտնված են եղել մամուլի մեջ։

Ռուսաստանում ծագում է ճորտերի ազատության հարցը։ Նույն երևույթն է նշմարվում ռուսաց թե մամուլի և թե գրականության մյուս ճյուղերի մեջ, ինչ որ կատարվեցավ Ամերիկայում։ Ինքը կառավարությունը զբաղված էր այդ հարցով։ Այդ միջոցներում Տուրգենևը, օգուտ քաղելով ընդհանուր մտածություններից, գրում է «Записки охотника»

ռոմանը[17]... Եվ դրա մեջն է ժամանակակից վեպի բարձր նշանակությունը, որ նա ամփոփում է իր մեջ այն բոլորը, ինչ որ հազարավորները և միլիոնավորներն են մտածում: Բանաստեղծը խլում է, թե թղթի վրա և թե շրջապատող մթնոլորտի մեջ տարածված մտքերը, պարզում է, և իր սեփական գույնը տալով, վիպական կենդանի ձևով վերադարձնում է մեզ:...

## «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ»[18]

...Ճշմարիտ է, ժողովուրդը յուր հասկացողության համեմատ, յուր հերոսներին մականուններ է տալիս: Բայց այն տեսակ հերոսներ, որ իրանց գործողություններով սաստիկ ազդում են ժողովրդի երևակայության վրա, պաշտելի են դառնում և ժողովրդից մականուններ են ստանում,— այս տեսակները դարերի ընթացքում հայտնվում են մի կամ երկու հատ միայն: Հայոց ամբողջ պատմության մեջ Հայկ-Դյուցազն, Վահագն-Վիշապաքաղ, Տորք-Անգեղ, Հովհան-Քոչ, Գայլ-Վահան, Աշոտ-Երկաթ, Աշոտ-Մսակեր, Գող-Վասիլ, Առյուծ-Խաչիկ, դրանք այնպիսի հերոսներ են, որոնց նմանները ուրիշ դարեր չեն ծնել: Դրանց անվան հետ ժողովուրդը կապել է յուր զգացմունքը, յուր երգերը և յուր առասպելաբանական էպոսը...

Ժողովրդական հերոսները ժողովրդի ավանդությունների մեջ ոչ թե մեռնում են, այլ դարերի ընթացքում հետզհետե աճում են, մեծանում են, և մինչև անգամ, ինչ որ նրանց ժամանակներում և նրանց ձեռքով չէ կատարված,— ժողովուրդը հատկացնում է նրանց: Օրինակ, վեր առնենք Քորօղլին: Սկսյալ Թիֆլիսից մինչև Երևան և Երևանից մինչև Հին Բայազետ և այստեղից մինչև Կարին, ո՛ր լեռան գագաթին մի ավերակ կտեսնեք, ձեզ կասեն «դա Քորօղլու բերդն է», թեև նրանցից և ոչ մեկը Քորօղլու բերդը չի եղել: Վրաստանում ամեն մի ավերակ հատկացնում են Թամար թագուհուն: Շուշի բերդի ստորոտում, քարաժայռի մեջ, կա մի ընդարձակ այր՝ զանազան ամրություններով, իսկ նրա հանդեպ, նույնպես քարաժայռի ճակատին, կա մի երկրորդ այր, դարձյալ ամրացած պարիսպներով և բուրգերով: Առաջինը հատկացնում են Սյունյաց հերոս Դավիթ-Բեկին, իսկ երկրորդը՝ Գուգարաց հերոս Ավան-Յուզբաշուն, թեև երկուսն էլ այս կողմերում ամրոցներ չեն ունեցել:

Ժողովուրդը յուր հերոսներին ավելի է տալիս, քան թե նրանք ունեցել են: Իսկ ինչ որ իսկապես ունեցել են,— այն պահում է յուր հիշողության մեջ անմոռաց:...

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

## ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

*— Փարիզի զսպյալ ապստամբները[1] տեսնելով, որ Փարիզի արքեպիսկոպոսը և Մադլենի ավագերեցը չափե դուրս բարձր հասակ մ՚ունին, զանոնք քիչ մը կարճեցնելով ձևավոր ընելու համար գլուխնին կտրեր են եղեր...*

## ՔԱՂՎԱԾՔ

### <1>

*Բրուսիացի պաշտոնակալ մը կ՚ըսեր Մեծն Նաբոլեոնի, թե իր հայրենակիցք (բրուսիացիք) փառքի համար կը պատերազմին և թե գաղիացիք ստակի համար միայն, «Իրավունք ունիք, պատասխանեց Նաբոլեոն, ամեն մարդ յուր չունեցածը ստանալու համար կը կռվի»:...*

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ՄԵՂՈՒՒ

* * *

*— Ի՞նչ է ազատությունը:*

*— Հեղուկ մը, որ եթե ամանի մը մեջ դրված չըլլա՝ կը թափի և կը կորսվի:...*

* * *

*— Ի՞նչ է հեղափոխությունը:*

*— Լրագրապետաց աչվընուն լույսը:...*

## ԿՍՄԻԹՆԵՐ

### Հերսեկովինի վրա օտար լրագրաց անհամաձայնի կարծիքը

<1>

*Երկու երեք շաբաթէ ի վեր լրագրներն միայն Հերսեկովինի խնդիրով կ'զբաղին*[2]*։*

*Հերսեկովինի խնդիրն Մասիսի մեջ առաջ Ներքին լուրերուն տակն էր, հիմա Քաղաքականի տակ ալ անցավ*[3]*, ո՛վ գիտե. վաղը Առևտրականին տակն ալ անցնի թերևս։ Օրագրի մեջ միայն Ներքին լուրերուն տակն էր, հիմա Ծանուցումներուն տակն ալ անցավ։*

*Այսպես ահա. լրագրաց ո՛ր երեսն որ բանաս Հերսեկովին կը գտնաս, և շատ անգամ լուրերու տեղ գյուղերու, քաղաքներու անուններ կը կարդաս, որով աշխարհագրություն ալ կը սորվիս քիչ մը…*

### Խաղաղություն ամենե՜ցուն…

<2>

*Սրբազան պապն ալ Հերսեկովինի ապստամբության զսպվելուն համար աշխատողներեն և խաղաղության վերահաստատվելուն փափագողներեն մեկն է եղեր մեյեր։*

*Որո՞ւ մտքեն կ'անցներ։*

*Սուրբ ձկնորսին հաջորդը՝ «խաղաղություն ամենեցուն» ըսելով՝ ապստամբության մեծավ մասամբ զսպվելեն անմիջապես ետքը, կաթոլիկ եպիսկոպոսներուն նամակներ կը գրե, որ ապստամբությունը զսպելու աշխատին։*

*Այս նամակներն եթե քիչ մը առաջ գրված ըլլային՝ թերևս մեծ օգուտ ըներին, բայց հիմա որ տերությունը ապստամբությունը զսպած է, եպիսկոպոսները ի՞նչ պիտի զսպեն. հիմա զսպելու բան չմնաց ասոնցի եպիսկոպոսաց բան մը զսպել տալու համար Նոր կռիվ մ'ալ հանել չըլլար ա՛։*

*Սրբազան պապին այս պատվերը կը նմանի այն մարդուն պատվերին, որ կրակը մարելեն ետքը կրակը մարել կը պատվիրե։*

*Ինչէ՝ դարձյալ շնորհակալ ըլլալու ենք Սրբազան պապեն, որ ջանացավ այս խնդրույն մեջ չեզոքություն պահել և խաղաղության աշխատիլ, եթե այսպես չվարվեր շատ հավանական էր, որ ապստամբությունն մինչև այսօր յուր սաստկությանը մեջ շարունակվեր…*

<13>

*Վարունգ, նոհուտ թուփ. աւլանակ և ախտո… այս բառերով է ահա որ Մոմոս[5] երկու շաբաթե ի վեր կովկասյան բարեբեր խնդրույն մեջ կը ճարակի։*

*Հայեր, կ'ըսե Մոմոս, վարունգները միջքերնիդ խոթեցեք և Ռուսիո դեմ կռվեցեք ձեր ազատությունը ձեռք ձգելու համար։*

*Որչափ որ Մոմոս ի վերին երեսս մեզի բարեկամ կը ձեւանա, այնչափ ալ ի ներքուստ մեզի թշնամի ըլլալը կը ցցունե։*

*Վարունգով ե՞րբ ազատություն ձեռք բերված է որ հայերն ալ վարունգով ընեն. եթե այնպիսի բան մը եղած ըլլար միթե հույները մեզի վարունգ կը ձգեի՞ն։*

*Արդարև Մոմոսին՝ Ռուսիո պես ահեղ տերության մը դեմ զմեզ վարունգով պատերազմիլ հորդորելը կը հաստատե թե Մոմոսը հավանաբար բանջարեղեն զինուց զորությունը շոշափելի կերպով զգացած է. բայց և այնպես այդ զենքերն բավական չեն Ռուսիո դեմ հաղթանակ տանելու։*

*Զարմանք խեղճ Մոմոսը որ հայերն այդ բուսեղեն զենքերնին հունաց դեմ պատերազմելու համար պահած են, և իրավունք ունին, տկարներու դեմ երկաթյա զենքերով կռվիլը վատության վատություն է։*

*Նոհուտ թուփին[6] չմոռնար կ'ըսե, Մոմոսը։ Ասկից բան մը չհասկցա. միթե ամեն ազգ մեյ մեկ տեսակ կերակո՞ւր կը նետե թշնամվույն դեմ. եթե այսպես է, հույներն ալ օր մը մեկու մը դեմ կռվելու ելլան նե՝ միթե թշնամվույն առջև կողովներով սալյանկոզ կամ միտյա՞ պիտի նետեն[7]։*

*Մոմոս մեզի այս խրատները տալեն ետքը ծաղրանկար մը կը հրատարակե, որուն մեջ Ռուսիո երկիրը ներկայացնելով. ահա հայոց թագավորը ախտոր մեջ է կ'ըսե։*

*Աս կտորն ալ անհասկանալի եկավ մեզ. հայերն առ այժմ թագավոր չունին. չըլլա՞ որ Մոմոսին ախտորին մեջը տեսած թագավորը ուրիշ Մենկը ըլլա։ Մոմոսին կը ձգենք այս սխալն ալ ուղղել և կը դառնանք իրեն գրուցել թե՝*

*Եթե ժողովուրդը քանի մը լրագրաց հրատարակած Կովկասյան պատերազմին վրա շարժում ցցուց[8], այս շարժումով ուրիշ բան մը չըրավ եթե ոչ հայրենասիրական եռանդը ցցուց. և Մոմոս ավելի այդ լրագիրները ծաղրելու իրավունք ուներ քան թե ժողովուրդը. որն որ այն ատեն ծաղրվելու արժանի կ'ըլլար երբ ասանկ լուրի մը առջև անտարբեր և*

անզգա մնար։ Իսկ եթե Հայք ծաղու արժանի են այս շարժման համար, որչափ ուրեմն Հույները ծաղու արժանի են իրենց ցնորական երևակայություններով, որք ամեն օր իրենց բերնեն կը լսվին։

Կը հուսանք, որ Մամուս մեր այս բացատրություններով գոհ կ'ըլլա և չստիպեր զմեզ ուրիշ անգամ այս խնդրույն վրա նորեն խոսելու։

## Ժողովուրդը ի՞նչ կ'ուզե

## <16>

Եվ սակայն բոլոր աշխարհ փափագներով լեցված ենք։ Աս փափագները ո՞ւր դնենք։

Օրինակի համար, լորտ Ռըսըլ Թուրքիո բարեկարգվելուն կը փափագի եղեր և ոչ թե Ռուսիո Պոլսո տիրապետելուն։

Լորտ Կլատսթընը Պուլղարիո անկախության կը փափագի եղեր։

Լորտ Տերպին ընդհանուր բարեկարգության կը փափագի եղեր։

Պիսմարքն ալ սա անցած դարձած բաներեն օգուտ մը քաղել կը փափագի եղեր։

Պարոն Քումանտուրոսը Եպիրոսի, Թեսալիո բարեկարգության կը փափագի եղեր։

Բրենս Կորչաքովը, իբրև արտաքին գործոց պաշտոնյա Հիսուսի (՞—Հյուսիսի—կազմ.) քրիստոնեից աղեկ վիճակ ունենալուն կը փափագի եղեր, առանց Հայաստանի քրիստոնյաներուն նայելու։

Մեր բրենս Խիկարն[9] ալ, անշուշտ Հայաստանի հայոց բարեկարգության կ'սպասե անհամբեր։

Ինչպես հայտնի է, ամեն մարդ իր Կարապետը կուլա կոր... և միթե այսչափ փափագներ կրնայի՞ն քիչ միջոցի մեջ կատարվիլ, անշուշտ ո՛չ, ուստի լայնածավալ զինադադար մը կրնա այս գործը կարգադրել։

## Քաղաքականություն և օդի

## <19>

Զորս կեսպաշտոնական թերթեր (մեր հաշվով երկու պաշտոնական թերթ) կը կարծեն եղեր հուսալ կամ կը հուսան եղեր կարծել, որ դիվանագիտական բանակցությունները խաղաղական լուծում մը հառաջ պիտի բերեն եղեր։

Տար Աստված, որ ատոնց կարծիքը սխալ, կամ հույսը պարապ չել-

ներ ու դիվանագիտական դեղերը կարող ըլլային լուծում մը տալ, որպեսզի չտխրվեինք ահավոր դրեխներով հառաջ բերել այդ լուծումը։

Այս արևելյան խնդրույն փորը ո՛րչափ պինդ է եղեր, ի՛նչ համառ փոր է եղեր, որ այսքան տարիներն հետև չկրցավ լուծվիլ։

*

Քաղաքականության Տյառն ընդ առաջն[10] ալ անցավ։

Վարժապետնիս եկավ։

— Ի՞նչ ծրագիր պատրաստեց արդյոք այս տարվան համար, վարժարանիս պատասխանատվությունները պիտի ավելցունե՞, թե պակսեցունե։

— Լսածնուս նայելով քաղաքական տարրալուծություն պիտի ավելցունե եղեր։

Շամբորդություն խմբագրաց

<32>

Ամեն կողմ մեծ պատրաստություններ, ամեն կողմ խաղաղասիրական խոսքեր... Եթե խոսքերուն նայիս՝ պատերազմ չպիտի ըլլա. եթե գործքերուն նայիս՝ խաղաղության երես տեսնելիք չունինք. ասոնց երկուքէն որո՞ւն հավատանք։ Խոսքի՞ն, թե՞ գործքին։

Ըստ մեզ՝ ամենեն հավանականը սա է, որ այս մարդիկ լեզվով խաղաղությունը պիտի պահեն ու գործքով խաղաղությունը պիտի խանգարեն. պատերազմի միջոցին ալ Վիեննայի լրագիրք պիտի ըսեն.

«Սուսերաց շաչյունը խաղաղության պահպանությանը նպաստավոր կ'երևա... այս ինչ զորաց հաղթվիլը խաղաղության պահպանությանը իբրև երաշխավորություն կը նկատվի հոս... պո՛ւմ, պո՛ւմ դիվանագիտությունը կը կարծե, թե խաղաղությունը չպիտի վրդովվի... պո՛ւմ... պո՛ւմ... պատերազմի մը երկյուղները փարատիլ սկսան... և այլն»։

Ի՞նչ կրնաս ըսել, դիվանագիտության մը պոչն ենք բռներ, կ'երթանք կոր, տեսնենք ո՞ւր պիտի տանի զմեզ։

<37>

Լսածնուս նայելով գեսպանաժողովին կից մ'ալ տվեր են ու տասնը հինգ օր ետ մղեր են... խե՞ղճ գեսպանաժողով...

Բայց ինչո՞ւ այսչափ խստությամբ վարվիլ անոր հետը։ Ամեն մարդ գիտե, որ վերը Աստված վարը գեսպանաժողով մը ունինք կ'ըսեր առա-

չի օրը բարեկամներես մին. արդյոք դեսպանաժողովին պետք չու-նի՞նք ալ։

Շատերուն, որոնց մեջն եմ նաև ես, կարծիքն այն է, թե նախնական դեսպանաժողովին մեջ նշանատուքը և խոսկապը պիտի կատարվի ու մեծ դեսպանաժողովին միմիայն հարսնիքը պիտի ըլլա, ուր Ռուսիա և Թուր-քիա իրարու ձեռք բռնելով՝ Համիտյանս Համիտեննից սիրով ապրելու ուխտ պիտի ընեն։

— Տե՞ր ես։

— Այո՛, տեր եմ։

— Իյնալ կա, ելլալ կա, տե՞ր ես։

— Տեր եմ։

— Առնելիք կա, պարտք ալ կա, տե՞ր ես։

— Տեր եմ, ըսինք ա՛։

— Ոսկի ալ կա, դրամաթուղթ ալ կա, տե՞ր ես։

— Տեր եմ։

Ներկա գտնվող վկաներն ալ բարեմաղթություններ ընելով պիտի ըսեն.

— Մեկ բարձի վրա ծերանան։

Վերջեն Ֆրանսայի ու Բրուսիո վկաներուն դառնալով՝

— Տառոսը ձեր գլուխը պիտի ըսեն։

— Կեցի՛ր նայինք, մենք տակավին պզտիկ ենք։

Ձեր շահուց սիրույն համար ըլլա, ըսե՛ք ինձի, ով գիվանագետք, ե՞րբ պիտի կատարվի այս արարողությունը. ըսե՛ք, որովհետև նետա-քրքրութենես գիշերները քունս կը փախչի կոր. սատուները ուշ կ՚արթըն-նամ ու գործես ետ կը մնամ կոր...

<43>

Տարը բրդավ։

Հեռագրի մը խոսքին նայելով՝ Մասկուայի մեջ ժողովուրդը խլրտիլ սկսած է։ Անգին անգին թուղթեր փակցուցեր են խնդրելով՝ որ իրենց ալ օսմանյան սահմանադրության նման սահմանադրություն մը տրվի։ Տե-ղական ոստիկանությունն ալ առէք ձեզի սահմանադրություն ըսեր ու շատ մը անձեր ձերբակալեր է։

Ի՞նչ կ՚ըսեք, մեր վիճակը սկսավ նախանձելի ըլլալ հե՞ն... Ռու-սիան պարապ տեղը մեր վիճակը բարվոքելու կ՚աշխատի։

## <88>

*Ի՞նչ մեղքս պահեմ, ես այս հաշտության պայմաններեն ալ բան մը չեմ հասկնար կոր։*

*Հաշտության պայմանները՝ որք նախ Քըղանըլըք պիտի որոշվեին, քիչ մը ետքը Ադրիանուպոլիս պիտի ստորագրվեին, քիչ մ'ալ ետքը Այ Ստեֆանո պիտի կնքվեին, մինչև այսօր ո՛չ կնքված են, ո՛չ ալ մկրտված։*

*Արդյոք Քըղանըլըքի, Ադրիանուպոլսո ու Այ Ստեֆանոյի օդը կ'ավրե՞ր հաշտության պայմանները, արդյոք հիմա քաղաք մ'ալ հաշտության պայմաններուն համա՞ր փնտրելու պիտի ստիպվինք։*

*Ի՞նչ դժվար սակարկություն է այս, Աստված իմ։ Իմ գիտցածս ու տեսածս՝ սակարկություն մը երկու խոսքով լմննալու է։*

*Օրինակի համար.*

*— Տուր ձեռքդ ինձի։*

*— Ա՛ռ։*

*— Քարատաղի անկախություն։*

*— Շատ աղեկ։*

*— Սերվիո ալ անկախություն։*

*— Ասոր ալ բան մը չեմ ըսեր։*

*— Ռումանիո ալ անկախություն։*

*— Ձեր ըսածը ըլլա։*

*— Պուլղարներու ինքնօրինություն։*

*— Դեռ կեցած ունի՞նք։*

*— Չերքեսներու և չյուտներու ալ հայություն։*

*— Ասոր ալ բան չենք ըսեր։*

*— Մնաք բարով։*

*— Երթաք բարով։*

*Լմնցավ, գնաց։*

*Քըղանըլըքեն մինչև Այ Ստեֆանո հաշտության պայմաններ...։*

*Իմ կարծյօքս, հաշտության պայմաններուն վրա հաշտութենեն ետքը պիտի բանակցին, և այս բանակցությունը մեր կարծածեն ավելի երկար պիտի տևե, և այն ատեն միայն պիտի վերջանա՝ երբ մեկ հացը հարյուրնոց թուղթի մը առնուլ սկսինք...*

## <89>

*Արևելյան խնդիրը կարծես յուր քաղաքական հերպարանքը մերկացավ ու ճաշակի վերաբերյալ խնդիր մը դարձավ. յուրաքանչյուր կառավարություն յուր ճաշակին համեմատ կ'ուզե ձևել, կտրել զայն. միայն մեր ճաշակը ձայն չունի...:*

*Առակով խոսինք:*

*Ինչպես որ ես իմ բալթոս լայն կ'ուզեմ, դուն քուկինդ նեղ կ'ուզես, ուրիշ մը երկար կ'ուզե, ուրիշ մը կարճ, այնպես ալ կառավարությունք կ'ուզեն, որ այս Արևելյան* բալթոն *լայն, նեղ, կարճ և միանգամայն երկար ըլլա:*

*Որո՞ւ ճաշակը պիտի գոհացնենք:*

*Ամենուն ալ:*

*Եվ գիտե՞ք, հազար հոգիի ճաշակը կրող բալթո մը ձևելը որչափ դժվար է...*

*Գիտեմ որ գիտեք, հաշտության պայմանները կնքելու չափ դժվար է:*

*Եվ դարձյալ, գիտե՞ք, հազար հոգիի ճաշակով ձևված բալթո մը ի՞նչ այլանդակ և խելքե մտքե չանցած հագուստ մը կ'ըլլա:*

*Մենք հոս հաշտության պայմանները կնքելու զբաղած ատեններս, մեր պաշտպան Անգղիան ալ քար մը կը գլորե:*

*Կը փափագի՞ք կ'ըսե, որ սա արևելյան խնդիրը միանգամ ընդմիշտ լուծվի:*

*Այո՛, կը փափագինք:*

*Եթե կը փափագիք՝ Կիպրոսն ու Միտիլլին ինծի տվե՛ք. Մակեդոնիան, Թեսալիան ու Եպիրոսն ալ Հունաստանի տվեք. Եգիպտոսն ու Թունուզը անկախ հրատարակեցեք, լմննա երթա:*

*Ահա Անգղիո ճաշակը:*

*Մյուս կառավարությանց ճաշակներուն վրա երկար բարակ խոսելու հարկ չկա:*

*Վերջապես, ընթերցո՛ղ, սեպե թե սա արևելյան խնդիրն* այամ բաշաճի *է: Հիմա սա* բաշաճ *անանկ վարպետությամբ եփելու է, որ,* բեր-պիեով[12] *սիրողն ալ ուտե,* բերպիեսիզ *սիրողն ալ ուտե, քացախով սխտորով ուզողն ալ ուտե, քացախով սխտորով չուզողն ալ ուտե,* լիմոնով *սիրողն ալ ուտե,* լիմոնով *չսիրողն ալ ուտե:*

*Ատ ըլլալո՞ւ բան է:*

*Եթե այսպես է, հաշտության պայմաններն ալ կնքվելու բան չէ, ա՛յլ է, թե մեկ մարդու քմացը համեմատ եփվի* բաշաճ*:...*

# ԽՏՂՏՈՒՄ

## <3>

Եվրոպայի հավասարակշռությո՜ւն...

Օհո՜... ասիկա մեծ բան է. ասիկա պահելու է, ասոր դպչելու չգար, որովհետև եթե անգամ մը կորսվի՝ մեյ մ'ալ գտնվելիք չունի։

Շատ աղեկ... ո՞վ կ'ըսե թե կորսունենք, սակայն Եվրոպայի հավասարակշռությունն ալ քիչ մը խղճմտանք ունենալու է։

Երբեմն Եվրոպական տերությանց լրագիրք իրարու դեմ կծու հոդվածներ կը գրեն։ Ինչո՞ւ. Եվրոպայի հավասարակշռությունը պահելու համար։ Ո՜ղջ ըլլան։

Պետական մարդիկ իրարու հետ երբեմն նոթաներ կը փոխանակեն։ Ինչո՞ւ համար են այդ նոթաները. բիա՞նոի համար են, ո՛չ, ո՛չ, կը սխալիք. Եվրոպայի հավասարակշռությունը պահելու համար են։ Աստված իրենց երկար օրեր պարգևե։

Պառլամենթոյի մեջ լորտեր, մարքիներ և քոնթեր իրարու գլուխ կը պատռեն վիճաբանությամբ։ Ինչո՞ւ համար են այդ վեճերը, պաշտոնի գլո՞ւխ անցնելու համար, քավ լիցի, Եվրոպայի հավասարակշռությունը պահելու համար. Տեմոսթենես զորավիգն ըլլա մեր ատենաբանից։

Կայսերք բաղանյաց մեջ կը մտնեն. ինչո՞ւ, լվացվելու և սրբվելո՞ւ համար, բնավ երբեք, ջրի մեջ իրենց հավասարակշռությունը պահել սորվելով՝ Եվրոպայի հավասարակշռությունը պահելու համար... և ամեն անգամ որ ջուրեն դուրս ելնեն, **էվրեֆա, էվրեֆա**, ըսելով զաշխարհ կը թնդացնեն։

Ա՛լ կրնաք երևակայել թե այս Եվրոպայի կշիռը ո՛րչափ համբակ ձեռքե մը շինված է, որ ամեն ժամ յուր **այարը**[13] կորսնելու վտանգի մեջ է։

Իսկ երբ հարկ ըլլա, Եվրոպայի հավասարակշռությունը պահելու համար, ուրիշ տերության մը քիչ մը հող տալ. այն ատեն իրենց երեսը մեզի կը դարձունեն մեր Եվրոպացի բարեկամք և կ'ըսեն.

— Այս ինչին քիչ մը տեղ կուտա՞ք։

— Ինչո՞ւ։

— Եվրոպայի հավասարակշռության համար։

Եվրոպական տերությանց դեմ դնել կ'ըլլա՞, քիչ մը հող տալու է։

Թողունք անցյալներն և ներկայն ձեռք առնենք։ Անցյալներն չդիտեմ Պարիզի ո՛ր լրագիրն էր որ կը հորդորեր զմեզ ըսելով թե՝ Եվրոպայի հավասարակշռության համար Հունաստանի պետք է քիչ մը բան տրվի։

*Եթե տրվելով՝ այս հավասարակշռությունը գտնվի հոգ չէ, բայց եկո՛ւ տես, որ կշիռին մեկ կողմը միշտ թեթև կը մնա, հետևապես հավասարակշռությունն անկարելի։*

Վաֆրը, *որու քաղաքական խորհրդածությանց կարևորություն չէին ուզեր տալ ոմանք, շատ իրավունք ուներ երբ կ'ըսեր առջի օրը թե՝ եվրոպացիք շատ անհեթեթ մարդիկ են, որ մեր ամեն գործերուն կը խառնըվին։*

*Եթե* Վաֆրթի *պես քանի մը լրագիրներ ունենայինք՝ եվրոպացիք հարկավ չէին համարձակիր մեր գործերուն մեջ մտնելու։*

*Ինչպես որ դեպքերը կը ցուցնեն, Եվրոպայի հավասարակշռություն ըսելով՝ յուրաքանչյուր տերություն յուր հավասարակշռությունը պահելու կ'աշխատի։*

*Մենք ալ այսուհետև իրենց օրինակին հետևինք և երբ մեկմեն հող ուզելու ելնեն՝ դառնանք և իրենց երեսը պոռանք.*

*Մարդի՛կ, մենք հոս Եվրոպայի կշիռը այյար ըլլալո՞ւ համար նստած ենք։*

ՏԵՐԵՆՑ

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՍ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՎՐԱ ԸՐԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

*Պետք էր ուրեմն, որ հասնեի փիլիսոփայության դարը, որ ծնունդ էր Գաղղիո հեղափոխության[1], որ իրոք քաղաքականության դայակը եղավ՝ նախապաշարմունքները փշրելով... որ ճշմարտությունը երևան ելնե կատարելապես և հալածյալ տպագրության ազատությունը ցամաք երկրի վրա հաստատվի։ Իրավամբ կ՚ըսե Լամարթին. «Երբ նախախնամությունը կ՚որոշե ճշմարտություն մը ընդհանրացնել և բոլոր մարդկության տարածել, գաղղիացվո մը ուղեղեն թափ կ՚անցնե դանի»։ Գաղղիապաշտ ըլլալ չէ փափաքս, այլ այնպիսի ճշմարտություններ կան, որ անուրանալի են իսկ քաղաքականությանը և ոչ մեկ ազգի մը ստացվածքը չէ, կլիմայի մը չի վերաբերիր, այսօր հոս է, վաղը հոն. ուր պարարտ հող մը կը գտնե՝ հոն կը բուսնի և պատմությունը մեր ըսածին անուրանալի վկան է։*

*Հայ ազգը՝ այս Եվրոպական մեծ հեղափոխութենեն մղյալ, քաղաքականության ցնցումները չտեսած, թեպետ ինկած ժողովուրդ, տպագրության օգուտը ճանչցեր էր...*

## ԱՄԲՈԽՔ ԵՎ ՈԳԻՔ

*Սա մտածությունք խառն ՚ի խուռն միտքս կը դրավեին, երբ տղու մը աղջկան մը ձեռք Վ. Հյուկոյի Շեյքսբիռ գիրքը տեսա, և այս* **Ոգիք և ամբոխք**[2] *գլխուն վրա էր ինք. հորդորեցի զինքը թարգմանել և խոստացա օգնել. վասնզի ուսմանց հառաջադիմության կերպին վրա այդ մեծ հանճարը տեսա թե շատ ավելի կը տրամաբանե, քան պշատ տրամաբանները որ ՚ի մոլար կը տանին դաստիարակությունը նյութականությամբ։ Ո*

գիտե. այս մեծ մարդուն հորդորը կարելի է մեր նորաբույս քերթողաց ալ եռանդ տա ամբողջ բնագրերը կարդալու և անկից խրատված՝ հեղինակության ձեռնարկություններ հառաջ աշխարհքիս մեծ հանճարներուն գործիները կարդալու և ուսնելու և ապա գրելու, որպեսզի լավ գրեն՝ աղվոր գրեն՝ որ գրածնին ապագային ալ մնա և ազգային առաջադիմության և ճաշակաց արձան հանդիսանա։

## Ա

Ութսուն տարիե 'ի վեր հիշատակաց արժանի բաներ եղած են։ Ահագին բեկորք կը ծածկեն քարահատակը։

Ինչ որ եղած է՝ շատ քիչ է այն բաներուն քով որ պիտի լինին։

Կործանել աշխատությունն է՝ վերաշինել գործը։ Հառաջադիմությունը ձախ ձեռքով կը կործանե, աջ ձեռքով կը շինե։

Հառաջադիմության ձախ ձեռքը Զորությունն կը կոչվի, աջը՝ Ոգի։

Այս ժամուս շատ աղեկ կործանումներ եղած են։ Մեր հարց շնորհիվ բոլոր հին խուչընդոտն քաղաքականությունեն ազատ եմք։ Աղեկ է, լմնցած է, նետված է, գետնաքարշ է։ Հիմա, կանգո՛ւն, ո՛ հանճարք, ամենքդ ալ գործի՝ աշխատության՝ հոգնության՝ պարտուց դարձեք, պետք է հիմնել։

Հոս երեք հարցմունք։
Ի՞նչ հիմնել։
Ո՞ւր հիմնել։
Ի՞նչպես հիմնել։
Պիտի պատասխանեմք։
Ժողովուրդը հիմնել։
Հիմնել զայն հառաջադիմության մեջ։
Հիմնել զայն լուսով։...

## Գ

...Սարկությունը՝ հոգին է կուրացյալ։ Կարելի՞ է երևակայել կամովին կույր մը։ Այդ սարսափելի բանը կա։ Գերիներ կան որք այս կուրությունը կ'ընդունին։ Ժպիտ մը շղթայի ներքև, ի՛նչ կա ավելի քստմնելի։ Ով որ ազատ չէ՝ մարդ չէ, ով որ ազատ չէ՝ չտեսներ, չգիտեր, չորոշեր, չմեծնար, չհասկընար, չուզեր, չհավտար, չսիրեր, կին չունի, տղա չունի, էգ մը ունի և ձագեր. վերջապես չէ նա։ Ab luce principium[3]։ Ազատու-

թյունը բիբ է աչաց։ Ազատությունը հառաջադիմության տեսողական գործարանն է։ Վասնզի ազատությունը անպատեհություններ և նույնիսկ վտանգներ ունի, առանց անոր քաղաքակրթություն ուզելը՝ առանց արևու երկիր մշակելու կը նմանի. վասնզի այն ևս աստղ մ'է՝ որ կրնա դասվիլ։

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչպես կը քալե մարդկությունն, երբ դիտող աչքով նայինք՝ տեսնենք և հիշենք, բավական է, դարձյալ կ'ըսեմ թե համբերել գիտնանք։ Օր մը քանի մը հայ ուսանողք Փարիզի պուլվառներուն վրա դպրոցներու դրոշակին ետևեն կ'երթային, բյուրավոր բազմության հետ բողոքելով ընդդեմ Հռովմա հասարակապետության ընդունած հարվածին 'ի Լուի Նափոլեոնե, աղաղակելով՝ Կեցցե Հռովմեական հասարակապետություն, երբ նախագահին հրոսակները սվիններով և բիրերով նոցա անզեն բյուրավորքը ցրեցին, և անոնք ալ փախան[4], և այն օրեն վերջը տխրությամբ և հուսահատությամբ տեսան ամեն հառաջադիմությանց ընկրկումը, և Հռովմի հասարակապետության կործանումը, Քառլ Ալպերթի անկումը, Վենետկո գերությունը[5], Գերմանական կայսրության և միության դեռ չհաստատված 'ի չիք դառնալը[6], Մաճառաց Փասքևիչի հարվածին տակ ընկճվիլը[7]. և վերջապես դեկտ. 2-ի մը առավոտ դաղղիական հանրապետության սպանումը[8], և մարդկանց անարգանքն դահի մը վրա բարձրանալը։ Եվ ըսին. Ա՞յս էր ուրեմն այս ահագին շարժմունքը, այս է ազգաց՝ ազանց և մարդկության հույսը։ Եվ ահա տեսան, որ կամաց կամաց Իտալիա կազմվեցավ[9], Պապությունն ընկավ[10], Մաճառք իրենց իրավունքներն առացան[11], Նափոլեոն անհետացավ[12], Գերմանիա կանգնեցավ[13], Ռուսիո մեջ գերությունը վերցավ[14], Ամերիկայի սևերն ոչ միայն ազատեցան, այլ ամեն քաղաքական իրավունք կը վայելեն[15], և Թուրքիո ինքնակալք ազգային ժողովի մը հաստատություն կարևոր և անհրաժեշտ կը գտնեն[16]։

Այս ընթացքն աշխարհիս մեջ այն կը ցուցնե, թե՝ հառաջադիմություն կա՝ կամա ակամա։...

## ԺԱՄԱՆԱԿԻՍ ՈԳԻՆ ԵՎ ՀԱՅ ԱՊԱԳԱՅՆ

Ներկա ժամանակիս ոգին ճշգրիտ հասկանալու և լավ դատելու համար պետք է երթալ իջնել մտոք այն ժամանակներուն մեջ, որ մարդկության սկիզբն կը կազմեն. և այնուհետև դարե դար բարձրանալ և վերջը

*տարվե տարի եղած տարբերությունքը քննել որպեսզի կարելի լինի ժամանակիս ոգվույն խնլամտել...*

*Ժամանակը իր հրաշքը կը գործեր. և քրիստոնեությունը՝ սրբազան գերություն, խաչի, կրակի, սուրի և ամենայն տանջանաց մատնյալ վերջապես կը հասներ ազատության և իշխանական գահույից. և այնպես կը կարծվեր, թե յուր երկնավոր վարդապետին հիշատակը և պատվիրանքը և յուր մարտիրոսաց չարչարանքը պինք քարոզ պիտի ըներին գթության և մարդասիրության։ Ո՛չ այդպես. այլ ընդհակառակն անագորույն դահճի պաշտոնը նա ալ վարեց ուրախ սրտով, և հավատաքննության դատն հիշատակները պատմության էջերն կը լեցնեն, վասնզի պետք է, որ ժամանակը քայլե. պետք է, որ դարերը սլանան, պետք է, որ նորեն այդ քրիստոնեությունն լավ հասկցվի, և փիլիսոփայական գաղափարները փոխվին և աշխարհք փոխեն։*

*Ազատությունը՝ պետք էր, որ խուզարկու ոգիներ հարուցներ, որ ամեն բան քննեն՝ կշռեն, օրենքները ի բովս փորձեն և ըսեն, թե այդ վայրենի էր՝ նա անիրավ էր՝ այս մարդավայել էր՝ սա իրավացի էր՝ թե այդ անորոշ էր և մյուսը լուսավորության կարոտ էր։*

*Վերջապես հասավ մարդ այն կետին, որ ոչ միայն յուր նման մարդը ուտելեն դադարեցավ, այլ՝*

*Մարդաղոհը մոռցվեցավ,*

*Գաղանաց մատնվիլը վերջացավ,*

*Պատերազմի կալանավորը ոչ միայն ի մահ և ի գերություն չմատնըվեցավ՝ այլև մարդասիրաբար պահվեցավ և խաղաղության հետ իր հայրենիքը դարձավ։*

*Գերությունը և յուր հետքը նաև քաղաքակիրթ ազգաց մեջեն վերջացավ, կինը նույնպես նույնպիսի ազգաց մեջ գերությունե հավասարության հասավ. ողջյն դատախազության մեջ ոչ չարչարանք, այլ ուրախություն կվայելե։*

*Դատարանները ճշմարտություն գտնելու համար տանջանքի պետքը ուրացան։*

*Եվ արդարության հոգին այն բարձրության հասավ, որ ոմանք հազգաց դատապարտելնուն համար մարդասպանությունը՝ մահվան վճիռը դատապարտեցին։*

*Եվ նույն ինքն Անգլիա խաբշիկ Աֆրիկեցվույն վաճառքն արգիլեց հանուն մարդասիրության՝ վասնզի այդ վաճառքը յուր շահերուն դեմ չէին*[17]։

Ահա ժամանակը յուր բազմադարյան ընթացից մեջ այսչափ առաջ քշեց մարդկությունը:

Ժամանակին ոգին արդարության ուրեմն կը տանի զմարդ և օր ավուր այն կետին կը հասնինք, որ կրնանք հուսալ, թե մասնավորի և ընդհանուրի դեմ անիրավությունք դադրին, ամենայն բողոք և ամենայն ձայն որչափ և տկար լինի՝ լսելի լինի, և հարստահարողն որչափ և հզոր լինի անպատիժ չի մնա:

Գանք ուրեմն հայ ապագային, որու բարեկավության սրտատրոփ կ՚սպասե ամեն հայ ոչ միայն հայրենի երկրին մեջ՝ այլ նա, մանավանդ նա, որ նույն հայրենի երկրեն տարագիր աստանդական աչքը միշտ հոն է, ուր հայրենի հիշատակներ իրեն կ՚սպասեն: Եվ ուսկից նա միայն անոր համար հեռացեր է, վասնզի չէ կրցեր տանել հարստահարությանց և ամեն տեսակ վնասուց և բռնությանց և որուն սիրելի է վերադառնալ ի հին հայրենիս, երբ անդորրություն և խաղաղություն ապահովին և անզգամությունք վերանան: Եվ վկա այս խոսքերուս ճշմարտության՝ հայը Կալկաթայե մինչև ի Լոնդոն՝ Պետերբուրգե մինչև ի Կոստանդնուպոլիս համագումար սրտիվ բաբախեց՝ իբրև անձ մը միաձայն հառաչեց, և Հայաստանի բնիկ հայրենակցին հավասար դառնացավ՝ երբ յուր ակնկալությունք համարեց ի դերև ելյալ բոլորովին[18]:

Բայց խորհրդածենք քիչ մը այդ վիճակին վրա և բոլորովին չի հուսահատինք:

Կան պատմության մեջ այնպիսի վիճակներ, որոնք խորհրդածության արժանի են ոչ միայն պատմագրաց և պետական մարդոց՝ այլև երկրաբանից և բնագիտաց:

Հայաստանի վիճակը այս կարգե կրնա համարվիլ:

Ուստի՞ է. որ Հայաստան միշտ երկու մեծ ինքնակալության սահմաններու մեջ կը գտնվի հարաժամ. Պարսից և Հունաց, Պարթևաց և Հոռմեացվոց՝ Սասանյանց և Ստորին Կայսրության՝ Արաբաց և Թաթարաց, Օսմանյանց և Պարսից, և վերջապես այսօր սոցա տկարանալեն վերջ երկու ահագին ինքնակալությունք Անգլիա և Ռուսիա աշխարհքիս ծայրերեն կուգան կը հասնին և նույն հին Հայաստանի վրա իրար կը դիմավորեն կը կանգնին… Մեկնե ո՞վ որ կրնա, մենք իր մը կը հաստատենք միայն: Բայց միանգամայն կը նկատենք, թե ի բաց առյալ մեր հայ ազգին այսօրվան վիճակը՝ այսպիսի մեծավոր ինքնակալությանց մեջ գտնվելուն՝ մեր հայրենի երկիրը երբեք այդպիսի հուսալից բարեկավության ակնկալություն չէր ունեցեր: Այո՛ բարեկավության մեծ հույս է, երբ երկու քաղաքականացյալ և քրիստոնյա տերությանց մեջ կը

գտնվի ազգ մը, որ յուր ընկած և ոտնահար և բարբարոսաց ու անհավատից ոտնակոխ վիճակին մեջ նաև միշտ ջանացեր է օգուտ քաղել ի գիտությանց և ուսմանց։

Ո՞ւր էր թե նույնչափ երբեմն գիտնար օգուտ քաղել կառավարությանց ձևերեն զոր երբեք չէ մտաբերեր անցյալին մեջ։

Բայց թողունք անցյալը, նայենք քննենք ներկա վիճակը, որում մեր ազգին և հայրենի երկրին առաջ ընդարձակ և գեղեցիկ ապագա մը կը բացվի։

Պետք է կայսերը կայսեր և Աստուծույն Աստուծո տալ[19]։

Նախ պետք է հայ ազգը շնորհակալ լինի և երախտագետ ժամանակի ոգուն, մարդկային հառաջադիմության, ուստից կը ծագի արդարություն։ Այդ մարդկային հառաջադիմության և արդարության ոգին է, որ ի շնորհս ուսմանց և գիտությանց՝ արքայից և ինքնակալաց բարձակից հաղթող արքայազնին կը թելադրե դադրիլ՝ կշռել երիտասարդ քահանայի մը աղաչանքն ծեր քրիստոնյա ազգի մը համար, որ 800 և ավելի տարիներու բազմաչարչար տանջանաց և տառապանաց մեջ կը հալեր, և արդարության ձայնին ունկնդիր՝ յուր հաղթական մատով կը նշանե 16 որդ հոդված մը դաշանց թուղթի մը վրա[20], որ ոչ միայն պատմության մեջ տեղի մը ունի՝ այլ որ ծնող է բարեբաղդության ինկած ազգի մը՝ որուն առաջին հանցանքը քրիստոնեություն եղած է Ասիական ժողովրդոց մեջ։

Դարձյալ նույն մարդկային հառաջադիմության և արդարության հոգին է, որ Բեռլին գումարյալ վեհաժողովն կազմող անձինք՝ թեպետ սկզբունք կարծեին ունենալ յուրյանց նախագահի վճիռը, թե «զորություն գերազանց է իրավանց»[21], բայց դարձյալ չի համարձակեցան Սան-Ստեֆանոյի այդ հոդվածը ջնջել կամ աղավաղել, որ ինկած և հարստահարյալ հայ ազգին դույզն՝ բայց ձեռնտվություն մ՚էր պաշտպանության։

Ամեն ժողովուրդ յուր անհամբերներն ունի, անշուշտ հայն ալ ունի, ուստի կը հորդորենք այդ անհամբեր անձինքը անգամ մը խորհրդածել լուրջ կերպով և պատասխանել մեզի խղճմտանքով, թե երբեք կը հավատայի՞ն իրենք 1877-ին՝ թե Եվրոպիո մեծ տերությունք, երբ ատյան կազմեն 1878-ին հայ վեղարավոր եկեղեցականք իրենց խնդրագիրն ի ձեռին պիտի ներկայանան այն յոթն տերությանց[22], որ հոն աթոռ ունեին և իշխանություն, և որոց զինվորական համագումար զորությունն գոնե 10 միլիոն զորաց բանակներն կը բաղկանար, կը հավատայի՞ն, կ՚ըսեմք, որ նոցա՝ այդ սևագլուխ մուրացկանաց խնդրագիրը խորհրդածության ար-

ժանի պիտի լինեի, եթե միայն զորությունն ու հազարավոր հրացանաց շառաչմունքը իրենց ձայնը լսեցնեին...

...Թուրքիո քրիստոնյա ժողովուրդ հայը սովորած է 40 տարիե ի վեր լսելու ազատական խոստմունքներ Կյուլհանեի օրենսդրության[23], 1856-ի և նորա նման զանազան հատտի հյումայուններու[24], և դեռ երեկվան սահմանադրության, կրնա երկբայության կասկածոտ ակնարկ մը ձգել նաև այդ 16 որդ կամ 61 որդ հոդվածներու վրա, թեպետ շատ և շատ եռանդուն և սայրասուր գրիչներ կը ջինջին համոզելու հայ տկարամտությունը՝ հուսալու և հավատալու, թե ամեն բան վաստակված է և ապահովված Բեռլինի դաշնագրեն, և միայն հայուն կը մնա հասուն պտուղը քաղելու համար ձեռք երկնցնել և շարունակ աշխատիլ։

Ո՞վ է, որ չաշխատիր. հայը աշխատասեր է. տղայք՝ երեկվան տղայք հազիվ թէ դպրոցեն ելած՝ և չելած նաև՝ ընկերություններ կը կազմեն, սակ կը ժողվեն և դպրոց հաստատելու կ'ելնեն ի Հայաստան և կը հաստատեն...

Կազմենք ամեն տեղ օրինագետ ընկերություններ՝ որոնց գլխավորք իրավագետք լինին, ո՛ւր որ արքայական հրովարտակաց և օրինաց դեմ զանցառությունք հանդիպին պաշտոնակալաց կողմանե դատաստանի զանոնք հրավիրելու և պետք եղած ատյաններու և դատարաններու զանոնք մատնելու համար։

Կազմենք ընկերություններ, որոնց նպատակը լինի՝ այն երկիրներու մեջ ուր օրենքը զորություն չունի, կառավարության տկարության համար, և ավազակներ՝ թափառական հրոսակներ՝ վրանաբնակ վայրենի ժողովուրդներ ամեն հարստահարություն իրավունք կը համարին հայուն դեմ, որովհետև նա քրիստոնյա է և խաղաղ բնավորություն ունի, զինվինք և զինենք մեր ազգայինքը վանելու համար այդ ավազակաց բռնությունքը բռնությամբ։

Ընդհանուր սովորություն ընենք հայուն ո՛ւր և ո՛ր երկիր որ գտնվի, օգնել ըստ կարի նյութական և բարոյական միջոցներով յուր ազգայնույն, ծուլությունը և մոլությունը վտարելով և հեռացնելով, աշխատող թշվառին և ինկածին նպաստելով։

Հայ եկեղեցականք ազգային զորություն մը համարվելնուն համար պարտ սեպենք նոցա ընտրության հսկելու և ամեն օրինավոր ջանք ի գործ դնենք անարժանները հեռացնելու համար եկեղեցվո։

Ազգային դաստիարակության և հրահանգաց կարևորությունը ինչչափ ալ ճանաչված և ընդունված լինի և ամեն հայու համոզումն դարձած, միշտ բավական չի համարենք և օգնենք այն ամեն ընկերությանց

և դպրոցաց մանավանդ նոցա, որ Հայրենի երկրին մեջ հարստահարությամբ ճնշյալ դարերե ի վեր չունին ո՛չ կարողություն և ոչ միջոց պետք եղածն ընելու, ուրեմն օգնենք և հետևինք այն Արարատյան Վասպուրականի գործոն ընկերության[25], և այդ Դպրոցասիրաց Տարոնի ընկերության։

Հիմնենք եթե կարելի է այդ իսրայելյան ուխտին նման ընկերություն մը, Հայկական ուխտ կամ դաշնակցություն անվամբ, որ ամեն երկրի Հայը միանալով միակամ և միաբան՝ աշխատի ազգը յուր ինկած վիճակեն հանելու։ Որ ձեռնտու լինի Պոլսո պատրիարքարանի՝ մեծամեծ տերությանց ձեռնտվությունը դյուրացնելով։

Ի վերջո բանիս հավատանք և համոզվինք այս դարուս Երևելի մատենագրաց մեկուն հետ թե՝ «Քանի որ սիրտ մը միայն կա, որ ազգության համար կը բաբախե՝ այդ ազգը դեռ չէ մեռած»։

Իսկ նոցա, որ մեզի ըսեն թե այդ երկու ահագին ռուսական և անգլիական ինքնակալությանց մեջ կեցած հայ ազգը միթե՞ իբրև ցորեն չպիտի աղի և տրորի, կը պատասխանենք։

Դիտող աչքեր տեսած են, մենք ալ ավերակաց մեջ հանդիպած ենք և տեսած՝ ինկած երկու մեծ՝ ահագին քարե սյուններուն մեջեն դուրս բուսած թզենի. տկար և կակուղ բույսը այդ երկու սոսկալի ծանրությանց մեջ իրեն ճամբա և կյանք էր ճարել. բնության ընդարձակության մեջ կյանք կա ամենուն համար...

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ

## ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ ԿԱՆԱՆՑ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Յուրաքանչյուր բանավոր էակ իսկապես յուր էությունը կ՚զգա բարոյական և մտավորական կարողությանց գործածությամբը։ Զորօրինակ երբ կին մը կը գործե, կը սնանի յուր ճգամբը, ոչինչ կը պարտի այլոց, ապա է կատարելապես ազատ մտածելու, խոսելու, գործելու առանց որևէ շահախնդիր օտար ազդեցության ներքև ընկճելու. սույն կինը, կ՚ըսեմ, կ՚զգա անշուշտ որ բնության նպատակին կը համակերպի. կ՚զգա որ ինքն է յուր ամբողջությամբը՝ այսինքն բանավոր արարած մը որ ստեղծված է ազատությունը վայելելու, և յուր ընկերական վիճակը բարձրացնելու։ Այնժամ և այսու պայմաններով նա կը կարողանա ապացուցանել ընկերության թե կինը բարոյապես ու մտավորապես տկար համարված արարած չէ...*

## ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

*...Հորդորելով զկին աշխատելու՝ այսինչ կամ այնինչ արվեստական կամ մտավորական մասը ճշտել չէ դիտավորությունս։ Կ՚առաջարկեմ աշխատությունը իբրև սկզբունք. աշխատությունը շարժում է. շարժումը հառաջադիմություն. հառաջադիմության սահմանն անսահման է։*

*Հառաջադիմություն ըսել թե այսինչ կերպարանքը պիտի զգենու, թե այնինչ ձևով պիտի քալե, մարդկային մտաց, ընկերական հեղափոխությանց շրջանը կասեցնել է։ Միթե հնարավո՞ր է ճշգիվ գուշակել թե հառաջադիմական սկզբունք մ՚ ի՛նչ ուղղություն կ՚առնու, ընկերական կարգին մեջ ո՛րպիսի խլրտում կը պատճառե, ո՛րպիսի պիտոյից ծնունդ կուտա, կանանց բարոյական վիճակն ո՛րչափ կը բարձրացնե, և բարձրացնելով աշխատության ո՛ր ճյուղերուն կ՚ենթարկե զայն։*

*Ամեն կին որ աշխատության առավելությունն ու հարգը կը ճանա-*

*չէ, որ կ'ուզե աշխատիլ անկեղծորեն, կը գտնա անտարակույս գործելու եղանակ մի յուր մտավորական կամ նյութական կարողության համեմատ, յուր ընկերական վիճակին,* բնակած երկրին սովորությանց. բարուց և մանավանդ հառաջադիմության աստիճանին *համաձայն։ Որչափ ժողովուրդ մը հառաջացած լինի, աշխատելու ասպարեզը նույնչափ կ'ընդարձակի կանանց համար, և նույնչափ գործելու հոժարությունը, բարձրանալու և ազատ լինելու կամքը կը զորանա...*

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆ

# ՍԿՍԵՆՔ, ՄԵՐ ԳՈՐԾ ՆՈՐԵՆ ՍԿՍԵՆՔ

*ՎԵՐ ԿԱՑԵՔ եղբայրներ. առավոտ երեկո չաչքենք. էսօր վաղ չասենք. Աստծու օր միշտ կա. երկնից քամին անպակաս է. «Շատ է ավուրն չար իւր»[1]. մարդ է կ'ինկնինք կանգնենք. ինչի՞ կը հուսահատինք. ինչի՞ կը թուլանանք. չէ՞ մենք մարդու զավակ ենք. չէ՞ մենք Հայու տղա ենք. վեր կացեք աշխատենք. սկսենք, նորեն մեր գործ սկսենք։*

*Ի՞նչ աչք ունիս. կռիվ չի վերջանա. գետ չի ցամաքիր, շինական եղբայր. տրեխներդ հան մեջ մտիր, անցիր գործիդ գնա. պառկել սպասել մեծ հիմարություն է։*

*Հին նոր մեկ մեկի թշնամի են. կը կռվին քանի կենդանի են... Թող կռվին, որ հայտնվին, թող հաղթեն ու հաղթվին. էդ ե՞րբ եղեր պիտի լինի. վերջապես մեկն պիտի գլորվի. ինկնի, մեռնի ու թաղվի, և էս միշտ և հավիտյան հնության բաժին է։*

*Հնացավ. նա անցավ։*

*Մարդ է. հոգի է. մեկ մեկի կը հանդիպին. երբեմն հակառակ, երբեմն սիրելի. երբեմն բարև կուտան ու կ'առնեն. երբեմն մեկ մեկի գըլխին կը խփեն ու կ'անցնեն. աշխարհ է. կը ծռին, շիտկվին. սիրտ է կը խռովին, հանդարտին. բայց մե՞ք ինչի ենք հուսահատ. վեր կենանք աշխատենք. սկսենք մեր գործը, նորեն սկսենք։*

*Ցիլանք եղբայրներ. ափսոս են մեր աչքեր. թող լան հին գլուխներ. խավարին աչերը։*

*Էն դեհ մի կռիվ կա. կը լսե՞ք նախանձավոր ահավոր ձայներ, ձայն Արևմուտքից, ձայն Հյուսիսից, ձայն և ամեն կողմից. մի, մի սարսափինք, նոքա մեզ քաջություն։ Թող տան. կուգան դեպի մե՞զ, մեք հավ չենք. մեք էլ մարդ և մարդու զավակ ենք. Հայ և Հայու ժառանգ ենք։*

*Քաջություն նորության, հաղթություն նորության։*

Եվ մեք նոր սերունդներեն եմք. ուրեմն մեր պարտք ու կարգ ճանաչեմք... վեր կենանք շարժինք ու սկսենք մեր գործը, նորեն սկսենք։

Ո՞վ են այն անձինք, այն հակառակորդաց հոգիք։

Ո՛վ որ են. ահա իրենց ճակատի վերա ամոթանք է գրված. նոցա դեմքի վերա պարտություն է դրոշմած, Արդարության ձեռքով վճռած «Չիք խաղաղություն ամբարշտաց»[2]։

Բայց մեք աշխատենք, թե կը մեռնինք աշխատենք. թե կ՚ապրինք աշխատենք, վերջապես չսպասենք, սկսենք մեր գործը, նորեն սկսենք։ Քանի որ մարդ եմք, պետք է աշխատենք։

Բանանք մեր աչքեր, բանանք մեր կուրծքերը. միշտ դիմենք յառաջ. միշտ արի և քաջ. գործենք անվեհեր ու անձնանվեր, գործենք անդադար թե տիվ, թե գիշեր։ Քանզի էս էն ժամանակն է, որ ամեն մարդու ձեռքը չինկնիր. ազգի լուսավորության դռները պիտի բացվին, ամեն մարդու բախտը չի հասնիր. անցյալ դարերու և մարդիկներու մեջ ո՞րչափ արժանավոր, բայց դժբախտ և անժամանակ անձինք անգործ ու անհիշատակ թաղվեր են գերեզմանի ծոց։ Մեք բարեբախտ և երջանիկ ենք ուրեմն էս դրության և էս ժամանակի ծնունդ մարդ և հայ լինելով։ Աշխատի՛նք կ՚ասեմ, վասնզի, հիշեցեք, ապագայի դարեր ի՞նչ անմահ երախտագիտություններ պիտի ձոնեն մեզ, մեզ՝ ով որ կ՚աշխատի ազգին. ազգի ուզածի պես.

«Ինչ որ ունինք Ազգին անենք զոհ,
«Ազգն էլ հավիտյան մեզնից մնա գոհ»։

Ազգի համա՞ր պիտի աշխատիս, էլ ուրեմն դու քեզ համար չես. քո ծնողաց համար չես. և քեզ համար ծնող չունիս. Ազգին ես և Ազգն է։ Քեզ համար աշխարհից, փառքից, բախտից, և նույնիսկ քո անձնից մասն չունիս. դու այդ ամենը փոխարինեցիր մեկ անմահ նպատակի մը, Ազգասիրության։ Կ՚ընթանաս արիաբար հսկա հսկա, առաջուցդ դժվարինք, վիշտք և նախատինքներ կոխելով. իսկ հետուցդ Ազգասիրի պարծանք և առաքինի անուն ձգելով. երկայնամտություն և զորություն քեզ։ Գնա՛ այդ ճանապարհ անմահից է։ Ամեն քայլափոխիդ մեջ չարիք պիտի կրես, ինկնիս ու կանգնես, մեռնիս ու ոգևորվիս. ամեն քայլիդ մեջ գալիք դիպվածոց պատրաստ և արի լինիս. չծանրանաս, չձանձրանաս, «Պարտ է գալ գայթագղութեան, վա՜յ յոյր ձեռն. եւ երանի՜ յոյր վերայ գայցէ»[3]։

Ահա Ազգասեր, Ազգի համար աշխատող անձնանվեր, ասպարեզ մտիր, ծուլությունդ սթափիր, թուլությունդ թոթափիր. հառաջ անցիր.

այդ վտանգը վատերուն հիշատակ ևեթ կը խայտառակե. իսկ քաջաց առաքինի անուն և անմահ կյանք կ'ընծայե։

Կռվե ու կռվիր. զարկ ու զարկվիր. ինկա՛ր վեր կանգնիր. անշուշտ կը հաղթես, մեռնիս էլ կը հաղթես, վերջապես կը հաղթես, վասնզի նոր ես, և լուսավոր ես, բարի ես, ճշմարիտ ես։

Ահա քո ախոյաններ են սոքա, ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ։ Անեղին ձեռքով սահմանված անխորտակելի ախոյաններ են։

Նահատակ նահատակ. ի՜նչ հոգեղեն անուն, երկնային կոչում։ Ահ, այս անուն ամեն ազգասերին. այս կոչում՝ լուսավորության համար ամեն աշխատողներին... անուն, որով ազգեր կենդանացած են ու կենդանի կ'ապրին. այս անուն, որ և քաջ ծանոթ ու սեփհական էր մեր հայր Հայերուն. անուն, որո մեջ բովանդակված է ամեն կերպ անձնանվիրություն, և որո հետն ու մեջը խառն է միանգամայն մահ և արյուն։

Ահա աշխատենք ուրեմն. և թե կ'աշխատենք ամեն բանով ու ամեն բանի համար պատրաստվինք բացի հուսահատությունից։

Հուսահատություն միայն չունենանք.

Եվ ահա ամեն բան կատարած կ'ունենանք։

Սկսենք հապա. նորեն սկսենք, նոր խորհենք, նոր գործենք և թող նոքա սկսեն, չզարհուրինք։

Նոքա էլ սիրտ ունին, միտք ունին, կը խորհին և քաջ են. վասնզի մարդ են։

Արի իմ ընկեր. ազգասեր և բարի ընկեր, ուստի՞ այդպես քրտնաթաթախ և հոգնած. մի՞ գուցե կրկին հանդիպեցար շահատակության։ Այո ամեն տեղ, ամեն երկիր, ամեն ժողովրդյան մեջ, վերջապես մարդ յուր ամեն վիճակի մեջ ունի նահատակություն. նույնիսկ յուր անձը յուր մարդկությունը կը չարչարե։ Ուրեմն դու վեհ կացիր, պանծացիր, զորացիր, արի հայ, բարի հայ, դու ախոյան ես ազգի մը. դու ինչպես քո գլուխ կը դնես ազգի գլխուն եկած վտանգներու փոխարեն, նույնպես և պիտի կրես այդ ազգի փառաց և պարծանաց հիշատակն ամեն. հիշատակ, որոնք անմահ և սուրբ են։

Կը հավատա՞ս որ ազգությունը անմահ է. կամեի ասել Հայությունն անմահ է։ Եթե անմահ է, ասա ինձ. հապա ո՞ւր է, որ չերևի վեր աշխարհի. (վասնզի այսպես երևիլ չերևիլ մի է). ինքն ինքյան միայն ծանոթ է. կարծես գերության ստրկության վիճակյալ մի անոթ է. և յուր տեղն ու կայան տակավին անլույս և մութ է։

Ահ. այդ իսկ է. գիտես. էլ մի՛, էլ մի հավելուր. գիտես և լավ տեղ-

յակ ես Հայի վայրին, Հայի ցավին։ Բայց ինչ՞ կուլաս զորա վերա. չող-բանք, չհուսահատինք, մեք էլ ողջ ողջ չթաղվինք, լույս լույս չխավարինք։ Թե կ'ուզենք մխիթարել, արտասուք սրբենք. և ոչ թե արտասուք թափենք. ձեռք և ոտք շարժենք, և ոչ թալկանանք մեռելի պես վեր ինկնենք։

Լացողներ լացին ու անցան գնացին. հիներն էին նոքա. մեք նորու-թյամբ շարժինք։

Չը խոսենք առանց գործելու. չգործենք առանց խորհելու, չսկսենք առանց կատարյալ հուսո...

Լույս և հույս... մարդկության մեջ կը շրջին, և նորա կրկին կենաց պահպանության համար կը հսկեն։

Եկեք մեք էլ զինավորենք, ընդունենք սոցա։

Ահա սուր իրենց ձեռքը. ահա հուր իրենց շունչը։

Նորության նորոգության զորավարներն են սոքա. մեր բանակը հանձնենք սոցա. և ահա շանթ ու հարված հակառակորդաց գլխին, կո-տորած պարտված նոցա զորության ու հոգին. «Ի սաստէ յերկիւղէ Տեառն. եւ ի շնչել հոգւոյ բարկութեան նորա»[4]։ Ընդունենք սոնք, միանանք հետ սոցա, գնանք հետ սոցա և տեսնենք հաղթանակ ու փառքը սոցա։

Ահա երկնից կամարից մի հրեշտակ էլ հասավ. տես Աստուծո շունչ ու հոգին է, ՍԷՐ. կը պատվիրե մեզ միաբան լինել, միաբան խորհել, միաբան մեռնել. միաբան ապրել։

Միանամք մեք ուրեմն եղբարք. «զօրութիւն ի միութեան. եւ յաղ-թութիւն ի զօրութեան»։ Կը կռվինք նորերս հնության հետ. լուսավորու-թյուն խավարի հետ։ Ուրեմն ԼՈՒՅՍ, ՀՈՒՅՍ, ՍԷՐ. այս կը պատվիրեն երկինք ու երկիր. այս կ'ուսուցանեն ժամանակն ու փորձեր։ Հայու հա-մար ԼՈՒՅՍ, ՀՈՒՅՍ, ՍԷՐ։

Հայ ծնանք, Հայ մեռնինք։

Մարդ եղանք, մարդու պես ապրինք։

Հոգվով ծնանք, ոգևորապես վարվինք։

Որչափ օրեր անցուցինք, այնչափ գործքեր պիտի գործենք։ Արա-բածոց դիվանագիրը ի՞նչ կը գրե արդյոք Հայոց գործքերեն. միշտ ո՞ղբ, լա՞ց աչաց, հոսա՞նք արտասվաց. դառնությա՞ն սրտից. նեղությա՞ն և սպառո՞ւմն անձանց. գերությա՞ն վիճակի, աղքատությա՞ն ընչից, ան-մա՞ոն աշխարհից, սոքա՞ պիտի լինին մեր բաժինը. և ա՞յս պիտի կար-դա Անմահ դառն ափեղերայ տարեգրության մեջ Հայոց գործքերը, և ես տասնեիններո՞րդ դարու Հայոց գործքեր...

Ասե՞նք արդյոք Արարչին, թե ինչ՞ Վասակներ ստեղծեցիր։ Ասե՞նք թե ինչի՞ Հաղկերտներուն թույլ տվիր. ասե՞նք թե ինչ՞ զմեզ թողիր

որ խռովեինք, ինչի՞ զմեզ թուլացուցիր, ինչի՞ թողիր որ Լանկ Թամուրն զմեզ կոտորեր։ Շահ Աբաս գերի տաներ· հազարացին տիրեր· պարսիկ չարչարեր· ինչի՞ զմեզ խավարի միջից չհանիր ի լույս։ Իբր թե ասել ուզեինք, մեք քնենք հանգչենք· դու մեր հացն ու կերակուր պատրաստե· մենք զբոսնունք հրճվինք, դու մեր մարմնոց զգեստ ու ամեն կարիք հոգա· մեք անկողին մտնենք պառկենք, դու գողերուն զգուշացիր· տանը ծառայե· թշնամին հալածե և զմեզ կառավարե պահպանե։ Ապա թե ոչ, թող չստեղծեիր մեզ· լավ էր թե մարդ չլինեինք· և գործել չունենայինք…

Հայություն չի ներեր, Հայության մեծ ամոթ և մահ է այդպիսի վատություններ ու հիմարություններ յուր սրտի մեջ տեսնել, որոնք բոլորովին մարդկությունից էլ դուրս են։

Մեր նախնյաց դպրությունք ամեն օր կը տոնվին անմահներեն· նոցա փառավոր ու լուսավոր հիշատակներ հրեղեն բերաններով կը կարդան և կ՚ուրախանան երկինքը։ Իսկ մեք· մե՞ք ես Հայ եմք, էն Հայո՞ց Հայեր։

Ելեք ուրեմն կրկին աշխատենք, հետևենք, Հայության հիշատակները փնտռենք· և անշուշտ կը գտնենք· կը գտնենք, ուրեմն սկսենք, նորեն սկսենք։

Նախախնամության մատը մեր անկյալ վիճակեն զմեզ կը շարժե· որ վեր կենանք միանանք, զորանանք, լուսավորվինք և հառաջ գնանք դեպ ի յուր պատրաստած և ցույց տված նպատակը։

Ժամանակ մեզի ձայն տվեց, զարթնեցուց, որ էլնենք գործենք և աշխարհաց ու ազգաց մեջ հայկական հիշատակներ, պարծանքներ և իրավունքներ շահենք· իսկ մեք մեկ մասամբ իբրև զառամյալ ծեր, մեկ մասամբ դարձանք մանուկ անհամբեր.— ինչքա՜ն հակասական այս երկու կարգ բնության։ Բայց ի՛նչ անենք, մինչև ցե՞րբ մանկունք, տակավին խաղա՞նք· ծերուկք, տակավին համառյա՞լ մնանք։

Այլ և դու կորովիդ իմ, դու Հայկական երիտասարդություն· ընդ օդս ի վեր կը խոյանաս սլանաս, թևերուդ վերա ազատականություն բեռնած· նահատակության շավղով, ճշմարտության ճանապարհով· իրավ ճանապարհը դա է, և դու սուրբ ես քո նպատակավ· բայց մեկ կողմից խառնակ է օդ, մրրկոտ է երկինք· և մյուս կողմից շվան և լարը ձգած են որոգայթ ոտիցդ։ Ի՞նչ ուրեմն, դադարի՞ր կամեի ասել քեզ, ո՛չ, ո՛չ· դու ընթացիր, բայց ծանր ծանր, ինչպես արի նույնպես զգույշ· (թեև զգուշանալ երկնչել կը նշանակե նահատակության պայմանավ)։ Բայց ի՞նչ, անխոհեմ զքե՞զ կ՚անվանեն շատ մարդիկ, խորամանկներն են նոքա· իսկ եթե հաջողես հաղթես, հանդուգն ես, կ՚ասեն միևնույն մարդիկ։ Դու և

ասոնք ուսիր, բայց մի հետս կասիր. ուսիր սոցա կապած լարերուն վերա խաղալ, որ կոխես ու անցնիս. որոգայթները խորտակիր, որ թռչես ու անցնիս։

Ուրեմն զորացիր, կրկին արիացիր, նորեն սկսե, նորեն սլացիր։ Ո՜հ, ի՛նչ որ խոսիմ, վերջը նույն պիտի կրկնեմ. սկսենք, նորեն մեր գործն սկսենք։

«Ոչ ոք վնասի բայց յիւրմէ». Հայն ոչ վնասի բայց ի Հայէ։

Արդի Ազգայինք, ամեն տեղի Ազգայինք, որ հարևելս հարևմուտս, ի հարավ և ի հյուսիս ցրված կը բնակինք. արդի ձեր վիճակ. ո՜հ և մեր վիճակ, ամեն տեղի Հայք խռովյալ են. տառապյալ են. ամեն տեղ կը հալածվին և կը հակառակեն. ի մեջ հնոց և նորոց, հայտից և անհայտից մի շփոթ կա ծագված։ (Իբր թե բավական չլինեին տակավին այսչափ դարերով, այս և մեր իսկ օրերով բարբարոսաց ձեռքից կրած զըրկանքն ու հարված. վիշտք և չարչարանք)։ Թշվառ ազգ, ողբալի վիճակ։...

Ով մարդկային մտաց խավար, հոգեղեն բարբարոսություն. տգիտություն. դու կա՞ս հավիտյան. բայց Հայու մեջ բավական չեղա՞վ ըզժրնդակ գալան, որ քաղաք կամ գավառ երթաս, ուստեղ խումբ մի Հայ գտնաս, անդ իբրև օձ նոցա մեջ կը սողաս մտնաս։

Հա՜յ Եվա, այս օձն ի՞նչ կ'ուզե մեզնից. զմեզ մերկացուց, մեր փառքից, կյանքից և լույսից զրկեց... զմեզ լացուց թշվառացուց. օտարաց գերի շինեց. միշտ խռովեցուց, բաժանեց սիրեց։ Մեր ձեռքով մեր եղբայր արդար Աբելներ սպանել տվեց[5]. Եգիպտոսի գերությունը մեզ տվեց[6], մեր ձեռքով մեր եղբայր գեղեցիկ Հովսեփներ ողջ ողջ գուբն իջուցել տվեց և օտարաց վաճառեց[7]. մեր ծերունի Հոր աչքերը լալով կուրացուց. յուր պիղծ պռոշակ Հայու արյունով ներկեց, յուր բացած անդունդները Հայու դիակներով լցուց։

Տգիտություն, անհագ գազան. անգութ գազան։

«Եւ այս ամենայն չարիք ի ներքս մտանեն յանուսումնութենէ»[8]։

Ա՜հ, մնացյալ հայերս. հնացյալ հայերս, հերիք է, լուսավորվինք, նորոգվինք։

Ներկա վիճակ ազգային, չասենք ընդհանրապես, այլ գլխավորապես ի Կ. Պոլիս, օրեօր կը սպասենք ուրախալի լուրեր, հաչող համբավներ կարդալ ու լսել. թե լրագիրներ և թե այլ գիրեր տխուր ձայներ կ'արձակեն, որոց մեկը կը գրե այսպես. «Եվ այս ամեն Սահմանադրություն, Սահմանադրության հարուցած փոթորիկներն են ամեն»[9]։

Սահմանադրություն կ'ասե, որ ծնավ չծնավ. հիշխանություն վեր-

համբարձավ. առանց տղայության կատարյալ. և առանց ծառայության ժառանգ։ «Ժառանգ մինչդեռ տղայ է, չէ ինչ աւելի քան զծառայ. թէպէտ և տէր իցէ ամենեցուն»[10]։ Ահա այժմ ծառայեց միանգամայն և չարչարվեցավ։ Սակայն փրկության աչը մերձ է, և ամեն Հայի հոգին նորա համար կ'աղոթէ ու կը ձգնէ:

Միայն թե չվայրանանք նորերս, բնական էր այս, պետք էր լինել և եղավ:

Իսկ այն ո՞վ է, որ էբրև հոգի բոցեղեն շունչը արձակած կը կանչէ՝ «Կամ չսկսեինք. կամ սկսանք կատարենք»։ Եվ ահա հաճախ շրթունքներից անձնուրաց Հայերից նույն արձագանք կ'արձակվին։ Բայց սպասե՞նք եղբարք, այս մինչև կատարվին նոքա, կատարվինք և մենք։ Վասնզի,

Տակավին պիտի փորձվինք, որ կրթվինք, հաստատվինք։
Տակավին պիտի նեղանամք, որ արիանամք և ամրանամք։...

## ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ ԵՎ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ ԿԱՄ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ

...Մարդկային ընկերավարության սովորությունն է, երբ հեռավոր տեղի մը գան, իրենց գտնված երկրի բարիքներեն կամ հազվագյուտ իրեղեն ընծա մի կը բերեն բարեկամին[11]։ Հետևելով այսմ, երբ Պոլիս եկա այս անգամ ուզեցի ընծա բերել Ձեզ իմ երկրեն։ Ի՞նչ։

Ի՞նչ կը գտնվեր հոն, ուր ես էի. հող և ջուր միայն, և հողով ու ջրով ևեթ կյանք վարող հայ ժողովուրդ։

Գրոց և բրոց ծրար մ'ընծա բերի Ձեզ այն հողեն ու ջրեն, որ Հայաստանի անունը կը կրեն տակավին, ժողովրդե մը՝ որ սերունդ և անուն հայության ունին։ Այս հողն և ժողովուրդ, կամ այսպես ըսեմք, Հայաստանն ու հայ, որ հազար անգամ խորամանկության ու բռնավորության փորձեր անցուցեր են, փորձեր՝ խլելու այս ազգի արմատը այդ արտեն, կամ փոխելու այն հողի հատկությունը, որ այլևս չբուսցնե զհայ և չբերե հայության նշույլ մը։ Բայց հայերը մանգաղով հնձված ժամանակ՝ սերմերը թափեր են փոշիներուն մեջ, արմատեն խլված ժամանակ՝ շեղ մը թողուցեր են քարի մը տակ, ձորի մը մեջ, և նորեն բուսեր, ծլեր, արմատ ձգեր, ոստ արձակեր, ծաղկեր ու պտղաբերեր են անդրեն։ Անկարելի է գտնել աշխարհ մը և ազգ մը, որ համեմատվի հային և յուր երկրին. ուր այնքան ավեր, մահ, սուր, ուրացություն, արյուն, գերություն կրած լինի, ու նորեն ցայսօր ապրի։

Յուր քաղաքականն ու կրոնականը, յուր նյութականն ու հոգեկանը առհասարակ կողոպտված. գանձն ու զենքը առնելեն զկնի, մարդն ու յուր բնակարանը, տաճարներու քարերը և լեզուն ու մագաղաթներն անգամ գերի գնացած են, ստրկության ենթարկված են։ Բայց մեր երկրի հողն ու ջուրը, օդն ու եթերքը օծված են հրեղեն լեզվով, հրեղեն հոգվով, որք ո՛չ միայն վերաստեղծեր են զհայեր, այլև վերապատմեր են հետագայից՝ Հայաստանի նահապետաց, դյուցազանց, թագավորաց և առաքինյաց անուններ ու գործերը։ Այս լեռները, հովիտները, ձորերը, գետերը, շեները, ավերները, հողմերը, աստղերը, ամենքն ալ խորհրդավոր անուն մը ունեցած են. և այդ ամեն մեկ անունը կը պարունակե յուր մեջ անձի մը կամ անցքի մը պատմություն, թե առասպել համարվի այն առ այժմ և թե իրական, և այսպիսյաց շարունակությունը՝ մագաղաթներեն ավելի տոկուն և անջինջ մատյան մը շարունակած է, այն է, բնակչաց բերանացի ավանդությունք, կամ վեպք և զրույցք։...

ԱԲԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՏԱՐՆԵՐԻ ԱՉՔՈՒՄ

## (Հրապարակական դասախոսություն ընթերցված Թիֆլիսի ժողովարանում)

*Նոր ժամանակներում հայերը ցույց տվին, թե իրանց կենսական ուժը չէ սպառվել, այլ արևի ջերմությունից և ջրի խոնավությունից զուրկ տունկի պես երկար ժամանակ թառամած վիճակի մեջ են մնացել նոր զորությամբ զարգանալու ու բարգավաճելու համար։ Հազիվ կես դար կա, որ այդ արևի ջերմությունը սկսավ տաքացնել հայի թմրած մարմինը և ջուրը կաղդուրել նորա հոգին, և ահա այսօր այդ մարմինը կենդանության նշաններ է ցույց տալիս, այդ հոգին արձակվում է դարևոր կապանքներից։ Կարճ միջոցում կազմվեցավ մի նոր հայկական լեզու, նոր մտքերի և քաղաքակրթության թարգման. դյութական զորությամբ հարություն առավ մի նոր գրականություն, որ թեև դեռ մանուկ, սակայն խոստանում է աճել և գեղեցիկ պտուղներ արտադրել։ Ամեն տեղ բացվեցան և բացվում են ուսումնարաններ, առանձին խնամք է տարվում իգական սեռի դաստիարակության վրա, որի կրթությունից կախված է մեծ մասամբ ազգի ապագան։*

*Տիկնա՛յք և պարոննե՛ր. Երբ մի ժողովուրդ սկսում է ճանաչել իրան, երբ նա կարողություն է ստանում ներկայի և անցյալի համեմատությամբ հետազոտել յուր անկման իսկական պատճառները, թույլ տվեք ինձ ասել, որ այն օրից ծագում է նորա փրկության արշալույսը և յուր բանտի բանալին ինքն յուր ձեռքումն ունի բռնած։ Ինչպես յուրաքանչյուր անհատի, այնպես և ամբողջ ժողովրդի մեջ սեպհական վիճակի դժգոհությունը ծնեցնում է մի զորավոր ձգտում՝ այդ վիճակը հետզհետե բարվոքելու և լավագույն կյանքի հասնելու։ Նորագույն ժամանակների պատմությունը բազմաթիվ օրինակներ է ներկայացնում, որոնցից երևում է, թե այս կարգի ժողովուրդների օգնության աղաղակ-*

ները միշտ արծագանք են գտել քաղաքակիրթ աշխարհի մեջ, և որքան նոցա գործ դրած ջանքերը մեծ են եղել, այնքան ավելի համակրության արժանի են եղել, համակրություն, որի մեջ ջերմ խոսքերին հաճախ հետևել է և գործը:

Հայաստանը և հայ անունը առաջին անգամ հանդես եկան եվրոպական մամուլի մեջ Զեյթունի անցքերի ժամանակ[1], երբ մի բուռն լեռնական ժողովուրդ յուր արիական դիմադրությամբ ցույց տվեց, որ հայ արյունը դեռ չէ սառել մեր երակների մեջ: Զեյթունցոց գործը իբրև առաջին բողոք ստրկության դեմ, անասելի հետևանքներ ունեցավ ընդհանուր հայության համար: Լսենք թե ինչ նշանակություն է տալիս այդ ապստամբության հռչակավոր հայագետ Վիկտոր Լանգլուան[2],որի հոդվածը 1863 թվին մեծ տպավորություն գործեց Եվրոպայում:

«Եվրոպայի ուշադրությունը հանկարծ դարձավ Թուրքիայի Հայոց վրա, որոնց օսմանյան քաղաքականությունը կարծես իբրև գլխավոր զոհ ընտրեց արևելյան քրիստոնյաների դեմ հանած կանոնավոր և միանգամայն խիստ հալածանքների մեջ: Հայ ասելով, Եվրոպան դեռ երեկ հասկանում էր մի ցիրուցան եղած վաճառական ժողովուրդ, որ միայն նյութական շահերի ետևից է ընկած և շատ քիչ է մտածում այն ընկերական (սոսիալական) մեծ խնդիրների վրա, որոնք զբաղեցնում են ուրիշ ճնշյալ ցեղերի: Այսօր նա տեղեկանում է, թե խոսքը չորս միլիոնից բաղկացած նշանավոր ազգության վրա է, որոնցից երկու և կես միլիոնը Թուրքիայի իշխանության տակն է գտնվում: Այս մեծ և համացեղ բազմությունը, ընկած լինելով Թուրքերի մեջ, որոնք ճնշում, հարստահարում են նորան, այս քրիստոնյա ժողովուրդը, այս խելացի ու ազատամիտ տարրը մահմեդականների բարբարոսության դեմ ու դեմ կանգնած, քայլ առ քայլ պաշտպանվում է նոցա դեմ, կամ սահմանադրության օրինավոր հողի վրա՝ որպեսզի յուր քաղաքային ազատությունը ձեռք բերե, և կամ Տավրոսի լեռներում զենքը ձեռին՝ որպեսզի յուր անկախությունը պահպանե: Մի հաստատուն և իմաստուն քաղաքագիտություն օսմանյան դաժան գործ դրած հին խորամանկությունների ու գաղտագողի միջոցների դեմ, մի դյուցազնական քաջություն ավարառության և սպանության համար ուղարկված բաշի-բոզուքների դեմ, ահա երկու առաքինություն, որ պետք է ճանաչել այսուհետև օսմանյան կայսրության Հայոց մեջ, և որոնք իբրև մի մի լծակ պիտի ծառայեն Եվրոպական քաղաքականությանը, երբ այս վերջինը կամենա փորձ փորձել արդյամբ նպաստելու արևելյան քրիստոնյաներին իրանց ջանքերի մեջ»:

Այս պատմական անցքը աչքի առաջ ունենալով, քաղաքակիրթ աշ-

խարհի հարաբերության դեպի մեր ազգը՝ Եվրոպայի տեսակետը դեպի մեր ժողովուրդը՝ երեք շրջանի կարելի է բաժանել։ Առաջին շրջանը սկսվում է մեր քաղաքական կյանքի անկումից և տևում է մինչև Ջեյթունի ապստամբությունը. այս ժամանակամիջոցին Եվրոպան նայում է մեր վրա՝ իբրև մեծ ձիրքեր ունեցող քրիստոնյա ժողովրդի վրա, որ կոչված է իբրև միջնորդ քաղաքակրթություն տարածելու Արևելքում։ Երկրորդ շրջանը, որ կարելի է քաղաքական անվանել, սկսվում է Ջեյթունի անցքերից և տևում է մինչև վերջին ռուս-տաճկական պատերազմը. այս ժամանակամիջոցին եվրոպացոց հայացքների մեջ քաղաքական տեսակետ է նշմարվում։ Վերջապես Երրորդ շրջանը սկսվում է այն օրից, երբ Սան-Ստեֆանոյի դաշնագրության մեջ դրվեցավ 16-րդ հոդվածը։ Այս շրջանը կարելի է միջազգային անվանել։ Արդյոք երբ կվերջանա այս շրջանը.— մեր ամենի ջերմ ցանկության համաձայն ա՛յն ժամանակ՝ երբ այդ միջազգային բառը Տաճկական Հայաստանի վերաբերությամբ լոկ խոսք չի լինի, այլ իրականություն կդառնա. այսինքն, երբ Տաճկական Հայաստանը միջազգային միություն կկազմե։

Այսօրվա օրը մենք բավական հարուստ գրականություն ունենք Հայաստանի մասին, որ մանավանդ այս վերջին դարում դարձրել է յուր վրա քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը։ Եվրոպայի ճանապարհորդների կարգում եղած են թե գիտնականներ, թե վերին աստիճանի շրջահայաց և հանճարեղ մարդիկ և թե պետական անձինք, որոնք յուրյանց հետազոտություններով հարստացրել են արևմտյան ճոխ գրականությունը...

ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԱՍԱՆՅԱՆ

# ՏԱՍՆԵՎԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՆՇԱՆԱԲԱՆԸ

Une nation ne doit pas, elle ne peut pas mourir
*Garnier Pagès*

Մի ազգ չպետք է մեռնի, նա չի կարող մեռնել
Գարնիե Պաժես

*Մինչ եվրոպական քաղաքակիրթ պետությունները օրեցօր ավելի ու ավելի ազատական կարգեր են ընդունում, մինչ նոցա մեջ խոր արմատ է դնում համահավասարության սկիզբը, տարածվում է լուսավորությունը, աճում է ազգերի ինքնագործունեությունը և նոցա մասնակցությունը քաղաքական գործերի մեջ, նկատվում է որ յուրաքանչյուր մեծ կամ փոքր, զորավոր կամ թույլ ազգության մեջ ավելի կամ պակաս զարթում և հետզհետե զորանում է յուր անհատական առանձնությունների գիտակցությունը, որով մի ազգ զանազանում է յուր բարոյական անձնավորությունը ուրիշ ազգերից, որոնց կենակից կամ սահմանակից է:*

*Նույնիսկ այն ժողովուրդները, որոնք բախտի բերմամբ վաղուց կորցրել են իրանց քաղաքական անկախությունը և որոնք այնուհետև անհաջող հանգամանքների մեջ գտնվելով դարևոր ժամանակներ մեռելատիպ անշարժության մեջ են մնացել, այսօր, ընդհանուր շարժողության ենթարկվելով, սթափվում են իրանց քնածությունից, աչքերը հետ են դարձնում, մտաբերում են իրանց անցյալ պատմության փառավոր էջերը, իրանց վաղեմի զորությունը, իրանց հին քաղաքակրթությունը, և այս հիշատակը ոգևորում, վերածնության կենդանի հույսեր է տալիս նոցա:*

*Ահա այս դրության մեջ է գտնվում այսօր և Հայոց ազգը: Երկարատև ու ահագին փոթորիկներ շատ դարերի ընթացքում խորտակեցին, ջնջակոտոր արին Հայի նյութական և բարոյական զորությունները: Ասիական բարբարոսության տարրերը ամենահին ժամանակներից սկսած*

միաբանեցան սպանելու, բնաջինջ անելու այն ազգայնությունը, որ յուր հերոսական ջանքերով, յուր գեղեցիկ ընդունակություններով ցույց տվեց թե ավելի լավ բախտի արժանի էր, քան ստրուկ լինել այն տիրապետողներին՝ որոնցից շատը իրանից ստոր էին և՛ իրանց ձգտումներով և՛ իրանց քաղաքակրթությամբ։ Ուշ սթափեցավ հայն յուր բարոյական թմրությունից, և այս շատ բնական է. որքան հարվածները մեծ եղան, այնքան և մեռելությունը երկար պիտի տևեր։ Հազիվ այս դարու սկզբներից ընկերությունների և մասնավոր անձանց ջանքերով, որոնց հետ միաբանեցավ և եվրոպական գիտությունը, սկսավ հետազոտվել հայոց հին կյանքը, մշակվեցավ հին լեզուն ու գրականությունը, որի ներկայացուցիչները հետզհետե լույս տեսան։ Հայն իմացավ, թե յուր գոյությունը երեկվանից չէ սկսում, այլ ունեցավ մի փառավոր անցյալ, ունեցավ յուր Տիգրաններն ու Տրդատները, Վարդաններն ու Վահանները, Սմբատներն ու Լևոնները, Ներսեսներն ու Սահակները, որոնց մեծագործության հիշատակները ոչ միայն գրքերն են լցնում, այլև հայրենի երկրի բոլոր անկյունները ծածկում են։ Հայն սկսավ զգալ, թե ինքն էլ ուրիշների պես մարդ է, թե ինքն էլ ուրիշ ազգերի պես գոյության իրավունք ունի, և թե պետք է պահպանե յուր ազգային առանձնությունները, յուր լեզուն, յուր կրոնը, յուր սովորությունները։

Այս բնական և օրինավոր ձգտողության դեմ մեր մեջ դժբախտաբար զինավորվում են մի քանի անհատներ, որոնք համաքաղաքացիության (cosmopolitisme) սկզբունքներով տոգորված՝ կարծում են, թե հայը չէ կարող ոչինչ հառաջադիմություն անել, ոչինչ օգուտ բերել իրան և ուրիշներին, քանի որ կաշխատի պահպանել յուր ազգային անհատականությունը։ Ուրիշները ավելի ստոր զգացմունքներից ոգևորված, մութ անկյուններում համարձակում են հեգնորեն խոսել հայության վերածնության վրա, կամենալով հավատացնել, թե հայկական կյանքը քաղաքակրթության տարրեր չէ բովանդակում յուր մեջ, հետևապես և ավելորդ համառություն է այդ կյանքին հավատարիմ մնալ։ Թե առաջինները և թե վերջինները կեղծ մարդասիրության դրոշակի տակ մտած՝ քարոզում են մեզ հրաժարվել մեր ազգային առանձնություններից և խառնվել ձուլվել ուրիշ ազգերի հետ։ Համաքաղաքացիությունը և ընդհանուր մարդասիրությունն է նոցա սիրելի նշանաբանը. հայրենասիրությունը և ազգասիրությունը մի անօգուտ ու աննպատակ ցնորք են համարում նոքա։

Ֆենելոնն ասել է. «Ես իմ գերդաստանը ինձանից ավելի եմ սիրում, հայրենիքս գերդաստանիցս ավելի, իսկ տիեզերքը հայրենիքիցս ավելի»։ Ահա մի միտք, որ լուռ երևույթին շատ ձեռնտու է երևում մեր համաքա-

ղաքացի և մարդասեր փիլիսոփաներին։ Բայց բանն այն է, որ անհնար է տիեզերքը կամ ամբողջ մարդկությունը սիրել՝ յուր սեփական հայրենիքը չսիրած, ինչպես որ անկարելի է հայրենիքը սիրել, եթե մարդ նախ յուր հարազատ գերդաստանը չէ սիրում։ Վկա եմ բերում այս մասին նոր ժամանակի երևելի պատմաբաններից մեկի խոսքերը. «Մարդս, ասում է Տիերը[1], մի սահմանափակ էակ է թե սրտով և թե մարմնով։ Պետք է հետըզհետե բարձրացնել նորան իրանից դեպի գերդաստանը, գերդաստանից դեպի հայրենիքը, հայրենիքից դեպի մարդկությունը։ Այս աստիճաններից անցնելով, նա կարող է հասնել և արդարև հասնում է սիրո ամենաբարձր զգացմունքներին։ Նախ և առաջ նա իրան է սիրում, հետո կատարելագործվելով, յուր կնոջը և որդոցը իրանից ավելի է սիրում։ Շարունակելով կատարելագործվել նա հասկանում է, որ յուր հայրենիքի բախտավորությունը յուր գերդաստանի բախտավորության հետ է կապված, և նա երկուսին էլ գրեթե համահավասար կերպով է սիրում։ Դուք կարող եք առաջնորդել նորան մինչև նույնիսկ ամբողջ մարդկության սերը, բայց միայն այն աստվածային սանդուղքի աստիճաններով, որ բարձրացնում է նորան իրանից դեպի գերդաստանը, հայրենիքը, մարդկությունը և վերջապես դեպի Աստված։ Պահանջել որ նա ամբողջը սիրե մասից առաջ, մարդկությունը յուր հայրենիքից առաջ, հայրենիքը յուր գերդաստանից առաջ, այդ նշանակում է սխալ գաղափար ունենալ նորա բնության վրա, նորա ֆիզիկական և բարոյական ուժերի վրա։ Ասացեք նորան, որ Ֆրանսիան սիրելուց առաջ Եվրոպան սիրե և յուր գերդաստանից առաջ Ֆրանսիան, որ յուր սրտին մոտիկ եղողներից առաջ ավելի հեռավորների համար աշխատե, և դուք, ծիծաղելի ուսուցիչ, մի հեգնական անհնազանդություն կը տեսնեք։ Այդ միևնույնը կը լիներ, եթե լուսնին ստիպեիք արեգակի շուրջը դառնալ, փոխանակ նախ երկրի շուրջը պտտեցնելու նորան, և ապա արեգակի շուրջը, որ լուսնի մոլորակային շարժողության սովորական՝ բայց անուղղակի կենտրոնն է։ Մեկ խոսքով, մարդս, այս սահմանափակ էակը, պետք է աստիճանաբար բարձրանա մինչև այն ամբողջը՝ որի հետ կամենում եք ձուլել նորան...»։

Զարմանալի է երևում, որ ազգայնության գաղափարը այնպիսի զարմանալի կերպով է արտահայտվում և մարմին առնում հենց ներկա դարում. երբ, ինչպես տեսանք, ազգերի սերտ հաղորդակցությունների շընորհիվ տիեզերական համաքաղաքացիության զգացմունքը օրեցօր զորություն է ստանում և ամեն տեղ տարածվում է։ Սակայն դյուրին է այս երևույթը մեկնել։ Միևնույն պատճառները— լուսավորության ծավալումը, սահմանադրական կարգերի տարածումը, ազգային լեզվի և բանաս-

տնտեսության մշակությունը, հետամնաց ժողովուրդների մտավոր թմրությունից սթափվելը, միով բանիվ քաղաքակրթությունը—արտադրում են այս երկու իրարու հակառակ երևույթները։ Յուրաքանչյուր առանձին ազգություն լուսավորվելով սկսում է ավելի մոտիկ հաղորդակցություն ունենալ ուրիշ ազգերի հետ, բայց միևնույն ժամանակ նա սկսում է ավելի որոշ գաղափար կազմել յուր ազգային անհատականության վրա։ Քաղաքակրթության հառաջադիմությունը մեկ կողմից կազդուրում է ազգայնության զգացմունքը, իսկ մյուս կողմից պատրաստում է ազգերի ընդհանրական եղբայրսիրությունը։

Ուրեմն համաքաղաքացիության զգացմունքը, որքան էլ հակառակ երևա ազգության գաղափարին, չէ կարող վնասել նորան։ Յուրաքանչյուր ազգի անհատական առանձնությունները, հայրենի երկիրը, լեզուն և պատմական ավանդությունները, միշտ սիրելի կը լինեն նույն ազգի համար։ «Մի քանի մարդիկ, ասում է Գիզոն, կարծես երկնչում են այսօր որ հայրենասիրությունը շատ վնաս չկրե զգացմունքների տարածվելուց և այն գաղափարներից որ ծնում են եվրոպական քաղաքակրթության այժմյան դրությունից. գուշակում են թե հայրենասիրությունը հետզհետե պիտի թուլանա և պիտի անհայտանա համաքաղաքացիության մեջ։ Ես չեմ կարող համակրել այդ կարծիքներին։ Հայրենասիրությունը նույն վիճակի պիտի ենթարկվի՝ որին ենթարկվում են այսօր մարդկանց բոլոր կարծիքները. բոլոր գործողությունները, բոլոր զգացմունքները։ Համաձայնում եմ՝ որ այս սերը նույնպես դատապարտված է անընդհատ խոսակցությունների, վեճերի և քննությունների առարկա լինել. նա դատապարտված է այսուհետև չլինել մի նախապաշարմունք, մի սովորություն. մի կույր և բացառիկ կիրք, այլ մի խելացի զգացմունք։ Այս փորձությունների ենթարկվելով, նա չի մեռնիլ, ինչպես որ չեն մեռնիլ մարդուս մյուս բոլոր բնական և օրինավոր զգացմունքները, այլ ընդհակառակն մաքրվելով և ազնվանալով հաղթող դուրս կը գա»[2]։

## ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Ոչինչ այնպես հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել, որքան ներկա դարու ընթացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գործ դրած հերոսական ջանքերը քաղաքական անկախություն ձեռք բերելու։ Հունաստանը, դանուբյան իշխանությունները, սլավոնական փոքրիկ իշխանությունները—Մոնտենեգրոն և Սերբիան, Հուն-

գարիան, վերջապես Իտալիան և Գերմանիան, յուրաքանչյուրը իր ազգային ոգու և շրջապատող հանգամանքների համեմատ, զանազան միջոցներ են գործ դրել, այլևայլ ճանապարհներով են ընթացել իրանց դարևոր ցանկություններին հասնելու. բայց նոցա բոլորի նպատակը միևնույն էր,— ազատվիլ օտարական իշխանություններից և մի քաղաքական ու ազգային մարմին կազմել։ Ցույց տալ այդ ազգերի մտավոր և բարոյական գործունեությունը, ցույց տալ թե որքան հաստատամտություն, որպիսի անխոնջ և շարունակ աշխատություն են գործ դրել նոքա իրանց բաղձանքին հասնելու, մի քաղցր պարտականություն է համարում յուր համար մեր Հանդեսը[3]:...

ԱՎԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆ

# ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

*Մենք մեր կողմից կարող ենք ասել, որ «Մուրճը» անսայթաք առաջ կը տարվի այն ուղղությամբ, ինչպես այդ ճանաչում են «Մուրճի» մըշտական ընթերցողները. կետ նպատակի ունենալով ազգային առաջադիմությունը՝ մենք ոչ միայն մեր ուժերը կը ծառայեցնենք այդ նպատակին, այլև կ՚աշխատենք, որքան այդ միայն մեզնից կարող է կախված լինել, զարթնեցնել և ուժեղացնել եղած գրական ուժերի մեջ եռանդ և զգացմունք դեպի շիտակ ծառայությունը ազգային պետքերին, հրահանգվելով այն ամենով, ինչ լավագույնն է մեր ժամանակակից մարդկության մեջ:*

*Իսկ այդ լավագույնը ժամանակակից մարդկության նորա ջանքերն են՝ ազատ կացուցանելով խավարի կաշկանդումներից կապել մարդկային միտքը այն գրական հեռանկարների հետ, որ տվել են ազատ հետազոտությունները գիտության զանազան ճյուղերում, և այդպիսով մեր հայացքները անհատի, հասարակությունների և ազգերի ընտանեկան, սոցիալական և քաղաքական կյանքի մասին բարեփոխել այնպես, որ իրական կյանքի և իդեալի մեջ տարբերությունը քանի գնա՝ այնքան ավելի նվազի, միշտ աշխատելով սակայն այդ իդեալի բովանդակությունը հարստացնել:*

*Իրական կյանքն, անշուշտ, մասն ունի իդեալի մեջ: Այն ինչ իդեալ է մի ժամանակի համար, ամբողջապես նոր չէ, այլ նոր է յուր որևէ մասով. և նոր է նույն այդ ժամանակի և նույն այդ Սերունդի համար: Եվ հենց այդ պատճառով էլ իրականանալու հնարավորություն ունեն միայն այն իդեալները, որոնք իրանց այս ու այն կողմով, այս ու այն մասներով գեթ մասամբ գոյություն ունեն իրական կյանքի մեջ: Ահա թե ինչու իդեալի ձգտողները շատ հաճախ մեծ ճանաչողներ են իրական կյանքի. թե անցյալի և թե ներկայի, և ահա ինչու անաչառ իդեալիստ-*

ներ են նոքա, որոնք իրանց մտքում ներկայացրած պատկերից դուրս են մղում ամեն ինչ, որ իրական կյանքն է հիշեցնում։ Ահա թե ինչու միևնույն ժամանակ շատ իդեալիստներ նաև լավագույն գործողներ են հանդիսանում իրական կյանքում, և, փոխադարձապես, ահա թե ինչու լավ գործելու մի անհրաժեշտ պայմանը՝ իդեալականությունն է։...

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկական գործերի մեջ Տաճկահայաստանում որևէ բարեկարգման մասին զեկուցանել չենք կարող մեր ընթերցողներին. ընդհակառակը, ոչպես ընթերցողները ներքև կը տեսնեն, նոր կոտորածներ էլ լինում են այս ու այնտեղ և որ ընդհանուր դրությունը հեռու է խաղաղ լինելուց[1]։ Սուլթանի կառավարության դիտավորությունները հայերի վերաբերմամբ դեռ ներկայումս էլ այնքան զուրկ են անկեղծությունից, որ Փոքր Ասիայում եղած և դեռ կրկնվող կոտորածների համար նա պատասխանատու է հայտարարել պատրիարքարանը, Պատրիարքի նախագահությամբ գործող Հայոց խառը ժողովը։ Իսկ Փոքր Ասիա բարենորոգումներ մտցնելու համար ուղարկված թրքական մասնաժողովների մասին և սուլթանի կոմիսար Շաքիր փաշայի գործողությունների մասին գրեթե ոչինչ չի լսվում, լավագույն ապացույց, որ ոչ մի բարենորոգում չի կատարվում։

Սակայն մի հայտնի փոփոխություն մտել է այս վերջին շաբաթներս։ Մենք խոսում ենք այն դիրքի մասին, որ բռնած են երևում Ֆրանսիայի և Ռուսիայի թերթերը հայկական խնդրում։ Այդ երկու երկրների թերթերը սկսել են ավելի մարդասիրական աչքով նայել Տաճկահայոց անլուր դժբախտությունների վրա։ Բուն պատճառները բխում են քաղաքական հանգամանքներից, որոնցից կարող ենք երկուսը հիշատակել։

Այժմ, երբ Անգլիայի պարտությունը հայկական խնդրում՝ ակներև է դառել և երբ այդ ամենը խոստովանեցին, այժմ երբ Ֆրանսիան և Ռուսիան ապացուցեցին, որ միակ Անգլիայի հեղինակությունը չի կարող բավել հայկական խնդիրը յուր ուզածին պես լուծելու համար, նույնիսկ եթե ամենասոսկալի կոտորածներ էլ տեղի ունենան, այժմ, ասում ենք, Ֆրանսիան և Ռուսիան ավելի են զգում պատասխանատվության կատարվելիք չարիքների համար, քանի որ հայկական խնդրում Անգլիայի հետ միաբանած երկիրները Ֆրանսիան է և Ռուսիան։

Երկրորդ կարևոր պատճառը Կրետեի խնդիրն է[2]։ Կրետեն Միջերկրական ծովում լինելով՝ մատչելի է եվրոպական մեծ տերություններից

շատերի պաշտպանությանը։ Իսկ մի երկրում, որը այնքան մատչելի է Եվրոպային, չի կարելի անպատիժ կերպով այնքան անիրավություններ և սպանություններ ու մասսային կոտորածներ անել, ինչպես այդ կարե-լի է երևաց Եվրոպայի զորքերին ավելի քիչ մատչելի Տաճկահայաստա-նում։ Հետևապես ծայրահեղ դեպքում եվրոպացոց զինվորական միջա-մտությունը Կրետեում անխուսափելի պիտի լինի։ Եվ քանի որ մայիսից դեռ այնտեղ կատարյալ ապստամբություն է և կրետացոց պահանջները բնական, և մյուս կողմից թրքական բռնությունը և հակա-դաշնագրա-կան գործողությունները ապացուցված, միջամտությունն էլ համեմա-տաբար շատ հեշտ, ուստի ստիպված են նույնիսկ քաղաքական ազդե-ցության և շահի տեսակետից լռել թրքական բարբարոսությունների և անիրավությունների մասին Կրետեում։ Եվ ահա մենք տեսնում ենք, թե ինչպես Կրետացոց նկատմամբ շարունակ մարդասիրությունն են հիշեց-նում այն թերթերը։ Եվ այժմ, ստիպված լինելով Կրետեի նկատմամբ այդպիսի լեզու բանեցնել—նույնիսկ ֆրանսիական թերթերից կիսա-պաշտոնականները ստիպված են պատշաճության համար ավելի մար-դավայել կերպով խոսել Տաճկահայաստանի դժբախտությունների մա-սին։...

## ՄՈՒՐԱՑԱՆ

# ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ուղղված պ. Մինաս Բերբերյանին)

*Ես միշտ այն կարծիքի եմ եղել, որ վեպերով ավելի շատ բան կարելի է անել ժողովրդին, քան սառը առաջնորդողներով, այդ պատճառով, եթե ուշադրությամբ դիտեք, կտեսնեք, որ իմ գրվածքներում ես միշտ աշխատել եմ մեր մի կարգ հրապարակախոսների անհեթեթ մտքերի և կարծիքների դեմ կռվել։ Որքան է ինձ այդ հաջողվել, չգիտեմ, այսքանը միայն կա, որ չեմ մտածել իմ ապագա փառքի համար, չեմ աշխատել գրվածներս ազատ պահել ժամանակակից ցավերին վերաբերյալ ակն-[illegible], թեպետ համոզված եմ եղել, որ այդպիսի գրվածքների կյանքը կարճ է լինում։ Ինձ ոգևորել է իմ ժամանակակից եղբայրներին պիտանի լինելու միտքը և ոչ թե անմահ գրողների շարքը անցնելու տենչանքը։...*

*«Խորհրդավոր միանձնուհու» մեջ[1] ես գործելու մի ծրագիր եմ առաջարկում մեր այն երիտասարդներին ու երիտասարդուհիներին, որոնք պարծենում են դեպի հայրենիքն ունեցած իրենց սիրո ջերմությամբ և հաճախ բացականչում են բանաստեղծի հետ՝*

*«Տվեք ինձ սուրեր, սուրեր կործանեմ,*
*Ծառը արմատով կտրիճն հանեմ,*
*Սուր ակռաներովս երկաթ կծամեմ,*
*Մեջս այսքան ուժ. տեսք, ի՜նչ անեմ...»[2]։*

*Եվ ահա ես այդ մարդկանց առաջարկում եմ իմ ծրագիրը, նրանց հիշեցնում եմ թե ինչ պետք է անեն։ «Խորհրդավոր միանձնուհու» մեջ ես ամուսնական-բանաստեղծական սերը նվեր եմ բերել հայրենիքի բարձրագույն սիրույն, և ինձ թվում է, թե այդ արել եմ ոչ թե բռնազբոսիկ եղանակով, այլ խիստ բնական ճանապարհով։ Մեկ նման մի ընկած*

ազգը չի կարող ոտքի կանգնել, մինչև որ նրա գործիչները ուսուցիչ Գարեգինի և քույր Աննայի հոգով վառված չգործեն[3]։...

Ինչ «լուսավորության կենտրոն»-ին[4] է վերաբերում, դա, այսպես ասած, ժամանակագրական մի վեպ է, որի դեռ առաջին երկու մասերն են հրատարակված, բայց դրանից էլ կարող եք ենթադրել, որ ես այդ երկով կամենում եմ դուրս բերել մեր այժմյան գործիչները, լուսավորությունը, պարզացումը և լուծել այն խնդիրը (իհարկե ըստ իմ հասկացողության), թե ո՛ր աստիճան իրավունք ունինք մենք այժմ մեզ լուսավոր, պարզացած ու քաղաքակիրթ անվանելու, կամ թե, ո՛րքան շատ են մեր մեջ նրանք, որոնց սովոր ենք «ազնիվ գործիչներ» անվանելու և նրանցով պարծենալու...

Այս բոլորից հետո, այսուամենայնիվ, չեմ կարող ասել, թե գրողներից ո՛րը ինձ վրա լավ կամ վատ տպավորություն է արել, կամ ո՛րին եմ հետևել իմ ստեղծագործության մեջ։ Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը. նրա տխուր ներկան. լավ եմ գրել թե վատ, նրա համար եմ գրել. նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացմունքներն հաղորդել։...

Հարցնում եք՝ ի՞նչ նպատակ պիտի ունենա հեղինակը և ի՞նչ նշանակություն ունի վեպը։ Այդ հարցին կարող էի պատասխանել այն՝ ինչ որ կպատասխաներ Ձեզ ամեն մի գրող և ինչ որ սովորեցնում են պատասխանել նույնիսկ աշակերտներին։ Այս պատճառով սովորական դարձվածներ չեմ կամենում հեղհեղել։ Բայց ես կցանկանայի, որ դուք ինձ հարցնեիք, թե ի՞նչ նպատակ և ձգտում պիտի ունենա հայ հեղինակը և ի՞նչ հոգով պետք է գրել հայերի համար վեպեր և զրույցներ։ Չէ՞ որ մենք բախտավոր ազգերի թվին չենք պատկանում և բացառիկ բախտի ու պայմանների մեջ լինելով՝ բացառիկ էլ նպատակ ու ձգտումներ պիտի ունենանք...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

# ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

*Այսօր ֆրանսիական ազգը տվեց իր բարձրագույն հարգանքը հանճարեղ քաղաքացուն։ Մի անգամ ևս ճշմարտությունը իր կրունկը սեղմեց սև վիշապի կոկորդին։ Մի անգամ ևս խավարի հերոսները մնացին ամոթահար, ընկճված և քաշվեցին իրենց մութ անկյունները։ Տեսնենք, այսուհետև ինչ դավադրություններ պիտի լարեն արդարության դեմ։*

*Էմիլ Զոլան անցավ Պանթեոն[1]։ Այնտեղ, դեպի ուր վաղուց էր իր համար ճանապարհ հարթել տիտանը։*

*Վերջին ժամանակ նրա թշնամիները սուտի և զրպարտության մեջ հասան Հերկուլեսյան սյուներին[2]. ավելի հեռու գնալ չէր կարելի։ Չկարծեք, թե միայն ամբոխի տականքն էր դեր կատարում այդ անարժան արշավանքում մեծ մարդու անարատ հիշատակի դեմ։ Մորիս Բարրեսների անատամ չարությունը[3] աջողել էր իր ետևից քարշ տալ նախանձոտների և փոքրոգիների մի ամբողջ բանակ, որի բանը վաղուց էր խանգարված «Ռուգոն Մակարներ»-ի[4] հեղինակի օր-օրի վրա աճող փառքով։ Թզուկների այդ նախիրը հսկայի դեմ բարձրացրեց մի այնպիսի վայնասուն, որ չգիտեիր զզվես թե ծիծաղես։ Ավելի քան երկու ամիս նրանք իրենց թաթիկներով ապականեցին Փարիզի համբերատար պատերը։ Խաղաղասեր անցորդները մի վայրկյան կանգ էին առնում այդ կեղտոտ ծաղրանկարների և աֆիշաների առջև, որպեսզի զզվանքի թուքը դրոշմեն նրանց հեղինակների ճակատին։*

*Եվ մինչ թշնամի խուժանը խլրտում էր Սենայի ափերում, մեծ մարդու ուրվականը հանգիստ նայում էր Մոնմարտրի բարձունքից և ներողամտաբար ժպտում։ Մերթընդմերթ միայն նրա վեհ ճակատը մռայլվում էր։ Միայն այն պատճառով, որ իր հայրենիքը դեռ կարող է տանել այդպիսի նենգություններ։ Բայց նա գիտեր, որ ինքը մեծ ազգի ծնունդ է, մի ազգի, որ դարերից ի վեր ճշմարտության փարոսն է եղել։*

Դագաղը տեղափոխվեց երեկ երեկո, իսկ մեծարանքը կատարվեց այսօր։ Այս առիթով սոցիալիստները սաստիկ կշտամբեցին կառավարությանը։ Նրանք կփափագեին ավելի համարձակ հարգել Զոլայի հիշատակը։ Ինչո՞ւ կառավարությունը ցերեկով չտեղափոխեց աճյունը։ Վախեցա՞վ նա շովինիստների սպառնալիքից։ Վերջապես, ինչո՞ւ հանդեսը նշանակվեց ոչ կիրակի, այլ մի օր, երբ աշխատավոր դասակարգը ազատ չէ, որ իր հարգանքը մատուցանի մեծ մարդուն...

Ձեզ հայտնի է, որ Զոլան զուտ վիպասան էր, մոլեռանդ արվեստագետ։ Նա հեռու էր կյանքի պայքարից և իր մենության մեջ հպարտ դիտում էր, իբրև սոսկ ուսումնասիրող այդ պայքարը։ Նա հասարակական գործիչ չէր և իբրև խոր ինդիվիդուալիստ՝ չէր պատկանում ոչ մի կուսակցության։ Բայց հանկարծ երկրում ծագեցին ներքին խռովություններ մի անարդար դատավարության շնորհիվ։ Անմեղ Դրեյֆուսը ուրիշի փոխարեն դատապարտված էր աքսորի՝ իբրև ազգային դավաճան[5]։ Այդ անարդար դատավճռի մեջ մեծ դեր էր կատարել նրա հրեական ծագումը։ Երբ արդարադատության այս ամոթալի անարդարությունը հայտնի դարձավ, հուզվեցին ազնիվ սրտերը և շիտակ հոգիները։ Լավագույն քաղաքական ու հասարակական գործիչների մի փոքրիկ խումբ որոշեց հերոսաբար պաշտպանել աքսորված անմեղին, որովհետև Ֆրանսիային սպառնում էր մի անջնջելի արատ։ Մարդկությունը հետաքրքրված էր այդ դատով։ Բոլոր անկաշառ հոգիները սրտատրոփ սպասում էին նրա վախճանին։ Արդ մաքո՞ւր դուրս կգա ֆրանսիական ազգը այդ ճգնաժամից։

Բայց արդարության զինվորների բանակը համեմատաբար փոքրիկ էր, իսկ հակառակորդներինը՝ զորեղ. ճշմարտությանը սպառնում էր պարտություն։

Ահա այդ տագնապալի պահին էմիլ Զոլան բարձրացրեց իր հեղինակավոր ձայնը։ Երկար միջոց գործն իրեն հատուկ բարեխղճությամբ ուսումնասիրելուց հետո, նա գրեց իր նշանավոր J'accuse-ը, որ պիտի անմահանար ֆրանսիական պատմության մեջ, և ուղղեց հանրապետության նախագահին։ Այնուհետև նա վիպասանի գրիչը դրեց մի կողմ, իջավ Պառնասի բարձունքից և մտավ ճշմարտության համար կռվողների շարքը։ Արդարության բարեկամները խրախուսվեցին, թշնամիները սարսուռ զգացին։

Զոլան էր կանգնել բանակի գլուխ։ Նրան շրջապատեցին այնպիսի ուժեր, որպիսիներն են Կլեմանսո, Բրյունո, Պիկար, Անդրե, Պրեսանսե, Անատոլ Ֆրանս և այլն[6]։

Այլևս անհնարին էր լույսը թաքցնել և անմեղին պահել աքսորում։ Եվ Զոլան արդար դատը տարավ։ Բայց ինչ դառն գնով։ Նրան զրպարտեցին, նրա մաքուր անունը ցեխի հավասարեցրին[7], դիպան նրա ընտանեկան պատվին անգամ, սպառնացին նրան սպանել իր զավակների հետ և վերջը ենթարկեցին նրան մի անամոթ դատի։ Նա հեռացավ հայրենիքից վշտացած սրտով, բայց հպարտ հոգով։ Ինչ փույթ, ճշմարտությունն արդեն տարել էր հաղթանակը։ Եվ այսօր նա միայն չէ խոնարհվում մեծ մարդու հերոսության առջև, ում ուղեղը պաշարված է խավարով...

Պանթեոնի առջև կատարվեց մի փառահեղ զորահանդես՝ ի պատիվ Զոլայի։ Քսան հազար զինվորներ, զանազան համազգեստներով և երաժշտական խմբերով անցան հանրապետության նախագահի առջևով, խոնարհեցնելով իրենց զենքերը։ Դա ճշմարտությունն էր, որ, վերջապես, ստանում էր իր արժանավոր հարգանքը այն զորքի կողմից, որին մի ժամանակ խավարի հերոսները ճգնում էին գրգռել նույն ճշմարտության դեմ...

## ՏԻՏԱՆՆԵՐ ԵՎ ՊԻԳՄԵՅՆԵՐ

Երբ պրուսական զորքերը, որ գնացել էին ֆրանսիական հեղափոխությունը տեղն ու տեղը խեղդելու, ջարդվում են ֆրանսիացիներից և խայտառակությամբ հալածվում մինչև իրենց երկրի խորքերը, Գյոթեն մի զգացված բանաստեղծություն է նվիրում ֆրանսիական զորքերին, ուր նա փառաբանում է նրանց վեհանձնությունը, քաջությունը և դանակոծում պրուսակների գազանությունը[8]։ Նույն պահին Բեթհովենը Ռեյնի ափերով ոտքով գնում է դիմավորելու ֆրանսիական զորքերին, որ «ազատություն և խաղաղություն են բերում» իր հայրենիքի համար և ոչ «հրով ու թրով աշխարհներ ավերում»[9]։...

## ԿՅԱՆՔԻ ԲՈՎԻՑ

### VIII

...Քաղաքի մեջ հաճախում էի գրական ու գիտական կոնֆերանսները, քաղաքական միտինգները[10]։ Ժան Ժոռեսի ոչ մի ելույթը բաց չէի թողնում։ Սոցիալիզմի մեծ քարոզիչը, բուրժուազիայի սարսափն իր փառքի գագաթնակետումն էր այդ ժամանակները։ Եթե Կլեմանսոն վագր էր, Ժոռեսը առյուծ էր և նրա ամեհի ախոյանը։ Բրիանին նա չէր արժանացնում իր արհամարհանքի բարձրությանը։ Պառլամենտը սար-

սափում էր նրա որոտալի ձայնից. երբ զգում էր իր հանցանքը կամ սըխալը։ Երբ նա բարձրանում էր իր տեղից, ամենքն անխտիր, թե՛ աջակողմյան, թե՛ ձախակողմյան կուսակցություններն ու կենտրոնը, լարում էին իրենց ուշադրությունը, արդյոք ժամանակի Ցիցերոնն ի՞նչ նոր փոթորիկ է պատրաստել տիրող հասարակարգերի փտող ու քայքայվող հիմքերի դեմ։

Ժոռեսը միջահասակ էր, թիկնեղ, ամրակազմ, նա նման էր ավելի կալիֆորնյան երկրագործի կամ ռուս մուժիկի, քան պրոֆեսորի, քան գիտնականի, որի պատմական էրուդիցիան ապշեցնում էր ունկնդիրներին։ Բայց որքա՜ն մեղմ ու բարեհամբույր էր այդ արտաքուստ անտաշ մարդու դեմքի արտահայտությունը, ո՜րքան գրավիչ էր նրա պայծառ աչքերի փայլը, որ մարդու բյուրեղյա հոգին էր արտացոլում։ Եվ ոչ մի կոպիտ դարձված, անձնավորությունների ուղղված ոչ մի վիրավորական խոսք չէր թռչում նրա բերանից նույնիսկ կատաղության րոպեներին։ Նրա կռիվը միշտ գաղափարական էր, միշտ տիրող օրենքների անարդարության ու ապականության դեմ։ Այդ տեսակետից նա իր գաղափարակից Լաֆարգի հակապատկերն էր։ Այդ էր պատճառը, որ ամենակատաղի հակառակորդներն անգամ պատկառանքով ու հարգանքով էին վերաբերվում դեպի նա։ Նրա յուրաքանչյուր ճառը փիլիսոփայական մտածողության և անհաղթելի տրամաբանության արդյունք էր։ Նրա սքանչելի էլոգանսը միշտ հիմնված էր անողոք փաստերի վրա, և նրա ամեհի ձայնի յուրաքանչյուր շեշտը ուղղված էր որոշ նշանի դեմ և երբեք չէր վրիպում նըպատակից, ինչպես Դիանայի նետը[11]։ Երբ նա զգացմունքների թափից բորբոքվում էր, խոսքերը ժայթքում էին Վեզուվի լավայի պես։ Նրա մռնչող ձայնի դիապազոնին հետևում էին ձեռների այնպիսի ուժգին շարժումներ, որ երբեմն շապկի թևերն օդն էին ցնդում, բայց երբեք չէր ընկնում ինքնամոռացության մեջ, ինչպես այդ պատահում է շատ հափըշտակվող հռետորների հետ։ Մի անգամ սոցիալիստների մի ճաշկերույթում, ուր ես ևս ներկա էի իմ բարեկամ Վասիլի Դավիդովիչ Ղորղանյանի հետ[12], Ժոռեսը բարձրացավ խոսելու։ Նրա մոտ նստած էր Ժյուլ Գեդը։ Նա դարձյալ ոգևորվեց, դարձյալ նրա հուժկու բազուկները սկսեցին ճոճալ օդի մեջ, դարձյալ շապկի թևերը օդը ցնդեցին, բայց այս անգամ արկածով—նրա ձեռը դիպավ Գեդի գլխին։ Խեղճ գիտնականը ցավ զգաց և, ետ նայելով, ժպտաց բուն փիլիսոփայի մեղմիկ ժպտով, որ բարձր մտքի արտացոլումն է։ Ժպտաց և՛ Ժոռեսը, և արկածը փարատվեց ֆրանսիացու հումորական քրքիջով։

Տասնուհինգ տարի անցած, երբ ես երկրորդ անգամ դարձյալ եր-

կար ժամանակով Փարիզ էի եկել, ժողովրդին սպանող սրիկան[13] ազատ շրջում էր փողոցներում խայտառակության դրոշմը ճակատին։ Եվ ֆրանսիական բուրժուազիան անտարակուսորեն արդարացնում էր ոճրագործին։ Սակայն հիշում եմ նրա ահն ու սարսափն այն պատմական օրը, երբ հանճարեղ սոցիալիստի աճյունը Մոնմարտրի գերեզմանոցից տեղափոխում էին Պանթեոն։ Դա մի չտեսնված թափոր էր, ոչ պակաս փառահեղ քան Գամբետտայի, քան Վիկտոր Հյուգոյի թաղման հանդեսը[14]։ Քառասուն բանվորներ հսկայական կատաֆալկը պառլամենտի շենքից դուրս բերելով, Սեն-Ժերմեն բուլվարի ամբողջ երկարությամբ տանում էին իրանց ուսերի վրա։ Դիակին հետևում էին տասնյակ հազարավոր կարմիր դրոշակներ։ Թե որքան մեծ էր թափորին մասնակցողների թիվը—դժվարանում եմ ասել, բավական է նկատել, որ երբ դիակն արդեն հասել էր Պանթեոն, և թաղման արարողությունը վերջանալու վրա էր, ամբոխի վերջին ծայրը դեռ պառլամենտի մոտ էր, այսինքն՝ առնըվազը 3 կիլոմետր հեռավորության վրա։

Այդ օրը բուրժուազիան փախել էր քաղաքից, ինչպես այդ լինում է ամեն անգամ, երբ նա սարսափում է ամբոխի ելույթից։ Սեն-Ժերմեն արիստոկրատիկ բուլվարի բոլոր բնակարանների լուսամուտները փակ էին։ Ամբողջ ոստիկանությունը հեծելազորքի հետ ոտքի վրա էր։ Իմ աչքերի առջև մի քանի բուրժուական բնակարաններ քարկոծվեցին մի խումբ ոստիկանների հետ։ Մի քանի հարյուր բանվորներ ձերբակալվեցին։

Մյուս օրը բուրժուական լրագրները հեղնանքով գրեցին, թե թափորը բաղկացած էր 20—25 հազար մասնակցողներից, մինչդեռ առնըվազը քսան անգամ ավելի էր…

## X

Մեծ չէ Զվիցերիայի տարածությունը[15], ընդամենը 41 հազար քառակուսի կիլոմետր, այսինքն՝ խորհրդային Հայաստանից միայն մի երրորդական չափով ավելի։ Նրա բնակչության թիվն այն ժամանակ 3 միլիոն 700 հազար էր։ Իր պատմության ընթացքում այդ երկիրն էլ տառապել է, ինչպես Հայաստանն իր անցյալում, և շատ է տառապել։ Սկըզբի դարերում նա կոչվել է Հելվեցիա կամ հելվետների երկիր, ապա հաջորդաբար ընկել է հռոմեացիների, բուրգունդների և ֆրանկների իշխանության տակ։ Այնուհետև եկել է Ավստրիայի բռնակալությունը և տիրել է մինչև տասնուերեքերորդ դարի վերջը, երբ ժողովուրդը, այլևս չըկարողանալով կրել իր տիրող պետության անողոք ներկայացուցիչների

դաժանությունները, ապստամբվել է։ Զվիցերիան այդ ապստամբության հերոսությունը, ինչպես հայտնի է, մարմնացրել է Վիլհելմ Տելլի առասպելական անձնավորության մեջ, որի պաշտամունքն այսօր էլ այնքան զորեղ է երկրում և կմնա, քանի որ գոյություն ունի այդ ժողովուրդը։ Ապստամբության առաջին հետևանքն է եղել Լյուցերն, Ցյուրիխ, Գլարիս, Զուգ և Բեռն կանտոնների իրարու միանալն ու մի ֆեդերասիոն կազմելը[16]։ Շարունակելով քայլ առ քայլ ձեռք բերել իր ժողովրդի կատարյալ ազատությունը, տասնհինգերորդ դարում ֆեդերասիոնը կռվել է Կառլոս անխոհեմի և Մաքսիմիլիան կայսեր դեմ։ Այս վերջինը ստիպված է եղել Բալի դաշնագրությամբ ճանաչել կանտոնների ազատությունը, որոնց թիվն ավելացել էր մինչև տասներեքի[17]։ Բայց Զվիցերիան որպես անկախ պետություն ճանաչվել է միայն տասնյոթերորդ դարի կեսին Վեսթֆալիայի դաշնագրությամբ[18]։ Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցությամբ նա հայտարարվել է «Հելվեցյան հանրապետություն», և միևնույն ժամանակաշրջանում երկիրը դարձել է ֆրանկո-ավստրիական և, ավելի ուշ, ֆրանկո-ռուսական պատերազմների թատերաբեմը։ Վերջապես, 1803 թվականին, Նապոլեոն առաջինի կամքով և Վիեննայի դաշնագրությամբ Հելվեցյան միասնական հանրապետությունը դարձել է ֆեդերալ հանրապետություն[19]։...

## ՕՏԱՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ

### Դեպի Իտալիա

Երկու ամիս Եգիպտոսում մնալուց հետո[20] Լլոյդ Թրիեսթինո-ի «Helouan» նավով ուղևորվեցինք դեպի Նապոլի։ Որոշել էինք, Ամերիկա գնալուց առաջ, մի առժամանակ հանգստանալ Իտալիայում։

Շոգենավի վրա բարձրանալով, տեսա մի հետաքրքրական տեսարան։ Վարը կամուրջը լեցուն էր արաբների ահագին բազմությամբ։ Մի ինչ որ բարձրահասակ, հաշմանդամ արաբ, ըստ երևույթին, հոգևորական, կենտրոնում կանգնած ճառ էր արտասանում՝ հայացքը դարձրած դեպի վեր՝ նավի տախտակամածը։ Այդտեղ խմբված էր արաբ ճամփորդների մի բազմություն։ Չգիտեմ՝ ի՞նչ էր ասում ճառախոսը, բայց յուրաքանչյուր մի քանի դարձվածքներից հետո, բարձրաձայն գոչում էր ֆրանսերեն «կեցցե Ֆրանսիան», «կեցցե նավատորմիղը»։ Ամբոխը կատաղի ծափահարում էր նրան։

Տախտակամածի բազմությունը աղաղակում էր «կորչի Անգլիան»[21]։

Այս գոռում-գոչումին չէր ձայնակցում վարի բազմությունը, այլ

ընդհակառակը կարծես շփոթում էր։ Ինձ ասացին, որ ճառախոսի խոսքը Եգիպտոսի ազատության մասին է։

Պետք է ասել, որ այդ միջոցներին եգիպտացիների հայրենասիրական ձգտումը հասել էր իր գագաթնակետին։ Ամեն ուրբաթ օր Կահիրեում և Ալեքսանդրիայում արաբները, մզկիթներում աղոթելուց հետո, անհագին բազմությամբ անցնում էին փողոցներով, ազգային դրոշակներով, գոռալով «կեցցե Եգիպտոսի ազատությունը»։

Ի՞նչ էր անում անգլիական կառավարությունը այդ ժամանակ։ Նա իր գնդացիրները տեղավորում էր փողոցների անկյուններում ու՝ արհամարհական ժպիտը երեսին՝ դիտում էր խռովարար ամբոխը։ Ոչ մի շարժում, ոչ մի դիմադրություն։

## ՈՂՋՈՒՅՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Անցավ դարձյալ մի տարի, տասներկուերորդը, Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության և հայ աշխատավոր ժողովրդի կուլտուրական աննախընթաց կյանքի։ Ոչինչ այնքան ուրախալի և այնքան խրախուսական չի եղել ինձ համար իմ երկարամյա կյանքում, որքան այս վերջին վեց տարիները, որ ես անցուցել եմ Խորհրդային Հայաստանում։ Յուրաքանչյուր մի նոր շինություն, յուրաքանչյուր մի նոր գործարան կամ էլեկտրակայան, ամեն մի նոր բացված դպրոց, ամեն մի ավելացած շինարար քար ինձ պատճառել է և շարունակում է պատճառել խորին հուզում, մանկական հրճվանք։ Ես երջանիկ եմ, որ տեսել եմ իմ աչքով Հայաստանի բանվորի կամքի զորությունն ու բազկի ամրությունը, Հայաստանի գյուղացու օր-օրի վրա ավելացող հավատը դեպի իր սոցիալիստական ապագան և հայ կարմիր բանակայինի՝ ոչ մխուր անցյալից ժառանգած, այլ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության զորավոր ոգուց ներշնչված կարգապահությունն ու պատասխանատվությունը՝ կռվելու Խորհրդային Հայաստանի արտաքին թշնամիների դեմ։

Սոցիալիզմի սվինը ճշմարտության և արդարության սվինն է, որ ավելի վաղ, քան ուշ, տիրելու է համայն աշխարհին։ Նա շինված է մարդկությանը ոչ սպանելու, այլ ստրկությունից ազատելու և ապրեցնելու համար։

Ողջո՜ւյն հաղթողներին։
Կեցցե՜ Սոցիալիզմը։

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

## «ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է...»

### Թիֆլիս, 7 դեկտեմբերի

*Այսպես են սկսել բացականչել այժմ Ռուսաստանի այն բոլոր թերթերը, որոնք գիտակից երկրի զարհուրելի դրության, ականատես անցած-դարձածին, վրդովված ռեակցիայի ակներև քայլերից՝ հրավիրում են բոլոր հառաջադեմ տարրերին ի մի ձուլվել՝ վտանգի դեմն առնելու համար։*

*Եվ վտանգը, հիրավի, մեծ է։ Հոկտ. 17-ի մանիֆեստը[1] իր բոլոր կետերով մի առ մի հակադարձ կերպով է գործադրվում։ Մամուլի և խոսքի ազատությունը, մի նոր օրենսդրությամբ, ճնշվում է նույնքան, որքան առաջ էր։ Փոխվում են միայն անունները, փոխվում է դատարանը. սակայն խստությունները և պատասխանատվությունը նոր կերպարանքների տակ մտած՝ ավելի ծանրանում են։ Միությունների և ընկերակցությունների ազատությունը, մի ուրիշ օրենսդրությամբ՝ հավասարեցնում են զրոյի, անձի անձեռնմխելիությունը ամեն րոպե խախտվում է ձերբակալություններով, խուզարկություններով, որը գլխավորն է, լայնածավալ պետության մեջ քաղաք չէ մնում, որ չներկվի մարդկային արյունով, որ չայրվի ու չթալանվի հանուն «կարգուկանոնի», հանուն «հայրենասիրության» և այն՝ ոստիկանության և իշխանությունների քաջալերությամբ...*

*Արդարադատության նախարար Մանուխինն իսկ հրաժարական է տալիս այն պատճառով, որ «վերջերս նախարարության մեջ մեծ քանակությամբ դատախազային տեղեկագրեր են տեղում իշխանությունների ապօրեն գործունեության, ոստիկանության դերերի մասին՝ կոտորածների և թալանի մեջ։ Նշանակվում են սենատորական քննություններ, սակայն Դուռնովոն պահանջ է դրել, որ այդ քննությունների արդյունքը նախ իր ձեռքի տակովն անցնի, և Մանուխինը, համարելով դա*

որպես խախտումն իր իրավունքների, հրաժարվել է նախարարության պաշտոնից...»։

Դուռնովո... Մի անձ, որ ահա մի ամիս է ամբողջ երկիրն է քայքայում, որ, ռեակցիայի ամենաջերմ պաշտպան, առաջարկում է նախարարական խորհրդի մեջ՝ թույլ տալ իրեն գնդակներով ու խմբային աքսորումներով խեղդել ազատության քայլերը և, որ Պլեվեի քաղաքականության նախանձախնդիր[2], կամենում է զարթնող առյուծի ոստումներին արյան հեղեղներով արգելք դնել...

— «Այդ ինչե՞ր են կատարվում ձեր երկրում,— ասել է Կլեմանսոն «Ռուս» թերթի[3] մի թղթակցին.— կատարյալ կառավարչական անիշխանության մեջ է Ռուսաստանը։ Անորոշություն, շփոթ— ահա ձեզ կոմս Վիտտեի ռեժիմը[4]։ Մի՞թե նա չէ ըմբռնում, որ կիսատ արտոնություններով ոչինչ չէ կարելի անել։ Իսկ ձեզնում ամեն բանի մեջ— կիսատ արտոնություններ. ոչ միայն այդ, այլև երեկվա տվածը այսօր են ետ վերցնում»։

«Որպիսի խոշոր սխալ է Վիտտեի կողմից,— շարունակում է Կլեմանսոն,— ընտրել իրան օգնական՝ ոստիկանության մի չինովնիկ՝ (ակնարկում է Դուռնովոյին) Quelle énorme gaffe! (Որպիսի խոշոր ձախողություն, անճարակություն)...»։

Եվ այդ խոշոր անճարակությունը Վիտտեն համառ կերպով շարունակում է. մինչև իսկ հայտարարում է, որ եթե «ոստիկանական այս չինովնիկին հրաժարեցնեն, ինքն էլ հրաժարական կտա, որ եթե փոստհեռագրական գործադուլին գոհացում տրվի, ինքը Վիտտեն կթողնի իր «գործունեությունը...»։

Ու Վիտտեն բռնել է ռեակցիայի կորստաբեր, ավերիչ, արյունահեղ ուղին։ Երկիրը ծայրից ծայր տակնուվրա, պետության եկամուտը քարուքանդ, գանձարանը սնանկության նախօրյակին...

«Սխալվում են ձեր նախարարները,— ասում է Կլեմանսոն նորից,— սխալվում են, եթե մտածում են, որ Վիտտեի անունը կարող է հավատք ներշնչել արտասահմանում՝ փոխառության համար... Դա անցավ։ Այժմ այլևս փոխառության համար խոսք չէ կարող լինել. և ոչ մի կոպեկ այլևս չեն տալ Ռուսաստանին...»։

Հիրավի, ներկա կառավարության վարկը այնքան արդեն ընկել է, որ փոխառության բանակցությունների համար Ռուսաստան եկած օտար դրամատերերի ներկայացուցիչները, մինչև հետինը, թողել-հեռացել են երկրից։

Մյուս կողմից, ներսում, երկրի մեջ, հուզումներ՝ միմյանցից սաստիկ-գյուղացիական, զինվորական, ամեն, ամեն տեղ...

Գյուղացիական և զորքի միջի այդ շարժումները ժամ առ ժամ մեծ չափով լայն ծավալ են ստանում, գրավում ամբողջ երկիրը... Սպանդանոցի կերպարանք է հագնում Կովկասը, Լեհաստանը ոտքի վրա է, Ֆինլանդիան՝ կտրվելու նման, մյուս երկրները—ծայրերը հրդեհի մեջ... և Վիտտեն, նախարարական խորհուրդը մտածում են զինվորական դիկտատուրության, ծայրահեղ ճնշումների մասին։

Կոմս Վիտտեի պատասխանը զեմստվոների պատգամավորությանը՝ պարզում է այն ընթացքը, որը վճռել է բռնել հին ռեժիմը։

Զեմստվոյի ներկայացուցիչները մի ծանուցագրով դիմում են նախարարապետին և առաջարկում. «Ժամանակ է գործադրելու այն պետական մի ծրագիր, որ կարող լիներ վերականգնել Ռուսաստանի կյանքի բնական ընթացքը, ժամանակ է ձեռնարկելու բարեփոխությունների, մեռած տառ չթողնելու հոկտ. 17-ի մանիֆեստը, որովհետև ամբողջ մտածող Ռուսաստանը, հառաջադեմ Ռուսաստանն է ցանկանում այդ։ Այդ է փրկության միակ ուղին...»։

Եվ կոմս Վիտտեն զեմստվոների և քաղաքների ներկայացուցիչներին պատասխանում է բացասորեն ու ավելացնում, որ՝ «Կառավարությունը միտք չունի իր ընթացքը փոխելու, այլ վճռել է կարգը վերականգնել բացառիկ և արտաքո կարգի միջոցներով»։

«Այժմ դրությունը պարզ է,— ասում է «Ռուս. Վեդոմոստի» թերթը[5].— քաղաքային և զեմստվոների գործիչներին չէ կարելի այլևս մեղադրել, որ նրանք չկամեցան նեցուկ լինել կառավարությանը... Նրանք հրավիրեցին կառավարությանը՝ լայն բարենորոգումների ուղին բռնել և պատրաստակամություն ցույց տվին թիկունք դառնալ, եթե կառավարությունը երկրի այդ պահանջը իրագործելու ձեռնարկի։ Սակայն կառավարությունը մերժեց այդ ուղիով քայլել, ուղի, որ գծել է հոկտ. 17-ի մանիֆեստն ինքը։ Կառավարությունն ուրեմն հենվում է դարձյալ բյուրոկրատիայի վրա։ Հառաջադեմ տարրերին մնում է կրկնապատկել իր ուժերը և կռվի ելնել հին ռեժիմի մնացորդի հետ...»։

Հայրենիքը, հիրավի, վտանգի մեջ է, և բուռն արյունահեղ կռիվը, բուռն, իսկական հեղափոխությունը առաջներս է...

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

(1905, դեկտեմբերի 7—24)

Գրեթե ամբողջ Ռուսաստանն այժմ դրված է պատերազմական կամ պաշարման դրության մեջ։ Սկսած մայրաքաղաքներից մինչև Լեհաստանի բոլոր նահանգներն ու Կովկասն ամբողջ՝ գտնվում են զինվորական ուժի ճնշման տակ։

Եվ այդ ուժը ինչ սոսկումներ ասես, որ չէ կատարում աջ ու ահյակ։ Ամեն տեղ հեղափոխական կռիվներ են տեղի ունենում։

Դեռ նոր միայն զսպվեց այն արյունահեղ, գրեթե 15 օր տևող կռիվը, որ տեղի ունեցավ Մոսկվայում, անցյալ դեկտեմբերի 7-ից մինչև 24-ը[6]։

Մայրաքաղաքի թերթերը դեռ լի են նկարագրություններով, դեռ արձանագրում են հարյուրներով ընկած զոհերի, փլեցրած տների, հազարավոր վիրավորների թիվը։ Նման չտեսնված սպանդանոցային կոտորած, հազարավոր դիակներ—անխտիր սպանված են մանուկներ, կանայք, կատաղած զինվորների գնդակներից ճնշված ամբոխ, վայրենության զոհ գնացած անմեղ գիտնականներ, դպրոցական հաստատություններ, ապարաններ վառված ու ավերված, որոնցում ոչնչացել են անփոխարինելի թանկագին ձեռագրեր... և այս, գետեզրին, կայարանում միմյանց ետևից, իզուր տեղը հրացան բռնած տասնյակ բանվորներ, հարյուրավոր անզեն ժողովուրդ...

Բարդուղեմյան գիշերը[7] տևել է ամբողջ 8—10 օր և այն՝ թնդանոթների, գնդացիրների կարկուտների տակ, անխտիր հալածելով, սպանելով, ոտի տակ առնելով Մոսկվայի նման բազմամարդ քաղաքի փողոցներում պատահածներին, տների մեջ ապաստանածներին...

Մի խոսքով՝ մի սպանդանոց, արյան ծով, դիակների և փլատակների կույտ...

Մոսկվայի թերթերը այսպես են տալիս, այդ, գրեթե երկու շաբաթվա, սոսկումների մանրամասն նկարագրությունները։

Դեկտեմբերի 7-ից սկսվեց ընդհանուր քաղաքական գործադուլը, և հայտարարվեց հեղափոխական կազմակերպությունների մանիֆեստը, որը հրավիրում էր զինված ապստամբության՝ կառավարության դեմ։

Թե՛ այդ և թե՛ մյուս օրը, բանվորները խումբ առ խումբ պտտում էին փողոցներում և ընկերներին ստիպում բանթող լինելու։ Մամոնտովի տպարանի առաջ ժողովված մի խումբ բանվորներ, կարմիր դրոշակով և

«Մարսելյեզ» երգելով[8] քայլեցին դեպի Տվերսկոյ փողոցը, բայց այդտեղ իսկ սկսեց առաջին դիմադրությունը:

Կազակներն ու դրագունները հանկարծ նրանց վրա հարձակվեցին սրամերկ, ապալեցին դրոշը և մտրակների ու սրերի հարվածներով ցրեցին թափորը:

Նույնպիսի հարձակումներ կրեցին և ցրվել ստիպվեցին՝ քաղաքի զանազան մասերում բանվորական ուրիշ խմբեր ևս:

Նույն երեկոյան մի հսկայական միտինգ կայացավ «Ակվարիումի» մեջ, մասնակցում էին ավելի քան 10000 մարդիկ: Շենքի թատրոնական սրահում տեղի էր ունենում սոցիալ-դեմոկրատների միտինգը (5000 հոգուց ավելի):

Միտինգի ժամանակ իսկ Ակվարիումը շրջապատվեց և պաշարվեց հետևակ ու ձիավոր զորքերով, որոնք փակեցին մուտքը Սադովայա փողոցի կողմից և Ակվարիումի այգին մտնելու ոչ ոքի չէին թողնում:

Այգիից պաշարվածներն սկսեցին զենք պարպել զինվորների վրա. սրանք պատասխանեցին: Թեև սպանված ու վիրավոր քիչ եղավ այդօր, սակայն պաշարվածները հնարք որոնեցին դուրս գնալու այգիից և ետևի կողմից պատից անցան ու մտան Կոմիսարովսկի դպրոցի բակը մինչև 2000 հոգի, որոնց մեջ կային հեղափոխական կռվող խմբի մարդիկ:

Զինվորները ճգնեցին պաշարել նաև դպրոցի շենքը, բայց, անհասկանալի պատճառով, գիշերվա ժամը 3-ին պաշարումը վերացրին և պաշարվածները ժամը 8-ին կարողացան ցրվել, մինչ այգիի բուն դռնից հեռացողները ենթարկվեցին խուզարկության, և զորքերը նրանցից 70 հոգու ձերբակալեցին:

Դեկտեմբերի 9-ին սկսվեց լուրջ ընդհարումներ հեղափոխականների, դրագունների, կազակների և ուրիշ զորքերի միջև:

Նշանը տրվեց նրանով, որ երեկոյան ժամը 6-ին Տվերսկոյ բուլվարի կողմից գնդակներ տեղացին Ստրաստնոյ հրապարակը լցված դրագունների վրա: Սպանվեցին ու վիրավորվեցին սպաներ ու զինվորներ, որոնց խումբը, սրերը մերկացնելով՝ հարձակվեց ժողովրդի վրա: Ամբոխի մի մասը, սոսկման ճիչով փախավ-ապաստանեց ձիաքարշի պավիլիոնում, սակայն դրագունները անմիջապես հրացանի բռնեցին պավիլիոնը, և անզեն ու անմեղ ժողովրդից դիակներ էր, որ փռվում էին: Պավիլիոնը սկսեց այրվել:

Նույն երեկո, ժամը 8-ին, նույնպիսի մի ընդհարում տեղի ունեցավ Տվերսկոյ փողոցի վրա, տուժողը դարձյալ ժողովուրդը եղավ: Իսկ իսկական ու կատաղի կռիվն սկսեց կեսգիշերին, Չին-Տրիումֆալնի հրապա-

րակի վրա։ Կռվում էին միմյանց դեմ հեղափոխականները և հետևակ ու ձիավոր զորքերը։

Այդ կռվին առիթ էր տվել այն, որ զորքերը հրապարակից անցկացնելով՝ բանտ էին տանում 40 ձերբակալված ուսանողներ և ուսանողուհիներ։

Կռվի հետևանքը եղավ շատ զոհ, բազմաթիվ վիրավորներ և արյան մի լայն հետք մինչև Ակվարիումի այգին։

Մինչ այդ, Լոբկովսկի նեղ փողոցում, Ֆիդլերի տանը, մոտ 500 հոգուց բաղկացած միտինգը ժամը 10-ին շրջապատվեց զորքերով։

Ֆիդլերի տունը, գրեթե մի բերդի նման, պաշարողների կողմից առաջարկ ստացավ մինչև մի ժամ անձնատուր լինել։

Սակայն ժամը դեռ չանցած՝ տնից սկսեցին գնդակ արձակել, և դա նշան եղավ մի խիստ կռվի։ Նետվեցին ռումբեր, հետո շենքն ամբողջ. նախ հրացանի գնդակներով, ապա և թնդանոթի հարվածներով ռմբակոծվեց։

Բաց թողված ռումբերը քարուքանդ արին տունը և ստիպեցին ներսը պաշտպանողներին՝ փախուստի դիմել, կիսովին էլ անձնատուր լինել։ Սպանվեցին՝ 5, վիրավոր՝ 16, անձնատուր եղան մոտ 120 հեղափոխականներ, որոնց մեջ կային տանտերը և գործադուլի կոմիտեի մի քանի անդամները։

Նույն գիշեր իսկ շարժումը ստացավ իսկական հեղափոխության կերպարանք և լայն, ահեղ ծավալ քաղաքի բոլոր կողմերում։

Հին-Տրիումֆալնի հրապարակի վրա Տվերսկոյ և Սադովոյ փողոցների կողմից սկսեցին շինել բազմաթիվ պատնեշներ ու արգելքներ։

Պատնեշները կառուցանում էին երկաթե վանդակներից, փայտե ու երկաթե դռներից՝ շրջակա տներից հանած արկղներից, հեռագրական սյուներից, տրամվայի լարերից և այլն։

Դեկտեմբերի 10-ին առավոտյան հրապարակն ամեն կողմից պատած էր պատնեշներով, որոնց ետևում զինված կեցել էին բազմաթիվ հեղափոխական կռվողների խմբեր։

Էլեկտրական տրամվայի առաջին սյունի մոտ շինվեց դիտարան, սյունի բարձրության վրա կապվեց մի սանդուղք, և հեղափոխականները, բարձրանալով նրա վրա, դիտակով զննում էին շրջակայքն ու հետևում զորքերի շարժմանը։

«Русск. Ведомости» թերթի ասելով, նույն գիշերն ու 10-ի ցերեկն ամբողջ, բազմաթիվ պատնեշներ շինվեցին Սադովոյ, Տրիումֆալնի դարպասներից դեպի Կուդրինո և Սուխարևկոյ, Տվերսկոյ, Բրեստկոյ, Դոլգո-

բուկովոյ, Մալայա-Դմիտրովկայի, Գրուզինսկոյ, Լեսնոյ և շատ ուրիշ փողոցների բերաններում։ Շինելուն մասնակցում էին հազարավոր մարդիկ ժողովրդից—կին, մանուկ և տղամարդ։ Սղոցում էին և ցած ձգում հեռագրական սյուները, կտրատում էին տների վանդակորմներն ու դռները, լուսամուտների փեղկերը հանում, հայտարարությունների սյուները, լրագրների կիոսկները տապալում, բակերից սայլեր դուրս քաշում, սահնակներ, երկաթ, աղյուս, գերաններ, տակառներ, իսկ շատ տեղերում իսկ տրամվայի սյուներն էին տապալում և այդ բոլորից մեծ վարպետությամբ ամուր ու միմյանց ետևից կրկնակի պատնեշներ կառուցանում՝ ամրացրած սյուներին, պատերին և ամբողջ փողոցի երկարությամբ, բազմաշար։

Առավելապես ուժեղ կերպով պատնեշված էր Լեսնայա փողոցը՝ բանտի մոտ։ Այստեղ, Մյուսսկի տրամվայի բակից դուրս էին հանել մոտ 30 վագոն և նրանցից շինել երեք շարք պատնեշներ, վագոնները միմյանց կապել տելեֆոնի լարերով։

Դոլգորուկովոյ փողոցում, ձիաքարշների բակի կողքին պատնեշներ էին կազմել նույն ձևով—վագոններից։ Շատ լավ էին կազմված նաև Գրուզինսկիյ փողոցի պատնեշները։ Գրեթե բոլոր պատնեշների վրա ծածանվում էին կարմիր դրոշներ։

Դեկտեմբերի 10-ին, առավոտյան ժամը 10-ին Ստրաստնոյ բուլվարի վրա բերին թնդանոթներ և սկսեցին անընդհատ կրակ բուլվարների շարքի երկարությամբ և Տրիումֆալնի դռների ուղղությամբ։

Սոսկալի էր տեսնել անմեղ անցորդների հունձը։ Հավաքվել են մոտ 11 սպանված, 37 վիրավոր, քիչ ավելի հեռու՝ 18 սպանված, 40-ից ավելի վիրավոր... Ականատեսները պատմում են, որ թնդանոթների ռումբերը ուղղակի կտոր-կտոր էին անում և ձեռքերի ու ոտների մասեր շըպրտում այս-այն կողմ։

Ամբողջ օրը, քաղաքի զանազան տեղերում թնդանոթները հարվածում էին անխնա, միմյանց ետևից։ Ռումբերը փլեցնում էին պատնեշները, սակայն հեղափոխականները ետ էին քաշվում և դարձյալ նոր պատնեշներ կառուցում։

Մյուս կողմից, սանձարձակ թողած կազակներն ու զորքը անխտիր թալանում էին տներ, մի կողմից էլ անպաշտպան և անզեն ժողովուրդը, հուսահատ ինքնապաշտպանության զգացմունքից մղված, թալանի էին տալիս զենքի մագազիններ, պետական գինարաններ։

Դեկտեմբերի 11-ին կատաղի հրացանաձգությունն ու թնդանոթաձգությունը շարունակվեց քաղաքի այլևայլ մասերում։ Թնդանոթները

որսում էին Սուխարևսկի հրապարակի վրա, Կարետնիյ շարքում, Նեգլինյան անցքից, Նիկոլաևսկի կայարանից և ուրիշ տեղերից։ Այդ օրը զոհերի թիվը շատ և շատ էր. հիվանդանոցները լցվեցին վիրավորներով, լցվեցին նաև մասնավոր բուժարանները, վիրակապային կայարաններից ոստիկանատներում տեղ չկար այլևս՝ դիակներ դնելու, և ստիպված էին արյունոտ կույտերը լցնելու հրդեհաշեջների ամբարները։

Թնդանոթաձգությունը շարունակվեց մինչև ժամը 2-ը. իսկ հրացանաձգությունը՝ միշտ։

Այդ օրն իսկ, առավոտյան ժամը 11-ին 300 հեղափոխականներ հարձակվեցին ժանդարմների վրա, և սակայն, չէին սպանում, այլ միայն զինաթափ անում և թողնում էին անցնեն պատնեշներից ու գնան, մի երկուսը միայն սպանվեցին, որովհետև փորձեցին գնդակահարելով ազատվել։

Այդ չարագուշակ օրը թե որքա՞ն տներ փլվեցին, որքա՞ն հրդեհվեցին և որքան քարուքանդ եղան թնդանոթների ռումբերից, հաշիվ չկա առայժմ։

Երեկոյան դեմ շատ տեղերի պատնեշները տապալված էին։

Սակայն նույն գիշերը և դեկտեմբերի 12-ին ժողովուրդն ու հեղափոխականները նոր պատնեշների շարքեր կանգնեցրին փլածների տեղը՝ Արբատում և նրա շրջապատի փողոցներում. Բրոննոյի և ուրիշ թաղերի մեջ։ Պատնեշները շինելուն օգնում էին ամեն տեսակ մարդիկ, կանայք, աշակերտներ, պատանիներ...

Նույն օրվա երեկոյան հայտնվեց, որ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության կոմիտեն, որովհետև շատ անդամներ կորցրեց և կամ գուցե որովհետև կռիվը շարունակել այլևս աննպատակ էր գտնում, հրաժարվեց ապստամբության գործը հառաջ տանել և կռվի կազմակերպության գործն անցավ Սոցիալ-ռևոլյուցիոներների կուսակցության կոմիտեի ձեռքը։

## ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Գրողները ոչ միայն հեղափոխության ներշնչողներն ու հառաջընթացներն են եղել, այլ եթե պատմական այսպիսի վսեմ րոպեներում ողջունում ենք կարմրորակ արշալույսի ծագումը, պարտական ենք նաև, գուցե և մեծ մասամբ՝ գրողներին—լինի հայ, ռուս, վրացի կամ լեհացի...

Գրողը, որ կարապետն է եղել հեղափոխությունների, չի կարող ուրեմն լուռ և անտարբեր մնալ, երբ գրչի մարդ լինելուց հետո—պիտի

*մեջ նետվել և միանալ իր փայփայած, իր քարոզած մտքերի համար կռվողներին ու պահանջ դնողներին։*

*Գրողը պարտավոր է և գործի մեջ ջանալ հառաջընթաց դառնալու...*

## ԹՈՒՐՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

*Մխիթարյանների դպրոցներից դուրս, ուսանելու գնացած սակավաթիվ պատանիների հաջողվում էր մուտք գործել այս և այն դպրոց Ֆրանսիա, Իտալիա և ավելի հեռու, Անգլիա։ Նրանք սովորում էին ազատ մթնոլորտի մեջ, ապրում էին ժամանակակից երիտասարդության գաղափարներով ու ձգտումներով, անկաշկանդ կերպով ծանոթանում էին ֆրանսական հեղափոխությունների, այլև քառասնական թվականների առաջացրած մեծ մտքերի ու լայն շարժումների հետ, և այդպես տոգորված, այդպես խանդավառ՝ հայրենիք էին իջնում յուրայինների մեջ ապրելու և գործելու։...*

*Այդ կապը, որ ես գտնում եմ Եվրոպայում 40—60-ական թվականների, ապա և Ռուսաստանում նույն շրջանի ու 60-ական տարիների և վերջապես ռուսահայ մտավոր կյանքի հեղաշրջումների,— և թուրքահայ կյանքում տեղի ունեցող բուռն պայքարների միջև— ինձ թվում է թե ակներև պիտի լինի բոլոր նրանց համար, որոնք փոքրիշատե հետաքրքրվել են մեր գրական շարժումներով և գրականության նորագույն պատմությունով։*

*XIX-րդ դարի կեսերից հետո եվրոպական մտավոր կյանքի մեջ տեղի ունեցող ընդհանուր ուժեղ շարժումները անխուսափելիորեն պիտի անդրադառնային ռուսական կյանքի վրա ևս և այնտեղ առաջ բերեին այնպիսի ցնցումներ, որոնք և ծնունդ պիտի տային երկու որոշ հոսանքների։...*

ԼԵՈ

# ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

## ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆ

*Մտնելով Պարիզի ուսանողական շրջանը[1], Ստեփան Ոսկանը ընկավ գաղափարական շարժումների այն մեծ հոսանքի մեջ, որից առաջացավ 1848-ի հեղափոխությունը։ Զարմանալի, նշանավոր ժամանակներ էին, և Թուրքական Ասիայից եկած երիտասարդը որքան բան ուներ սովորելու։ Նա ընկել էր մի մեծ բուրայի մեջ և այնտեղ պողպատի պես ձուլվում, բովվում էր նրա բնավորությունը։*

*Ամբողջ արևմտյան Եվրոպան հրաբուխի վրա էր նստած։ Ամեն տեղ զգացվում էր հեղափոխության սուր, անխուսափելի անհրաժեշտությունը, մի հեղափոխության, որ պիտի ջարդ ու փշուր աներ հասարակական և քաղաքական անարդար կարգերը, ասպարեզ հանելով մի ազատ, ինքնագլուխ մարդկություն։ Ամեն տեղ սպասում էին մի նշանի, որ պիտի դուրս հրավիրեր ժողովրդի, ազատ մարդկության, հավասարության, ազատ խոսքի, ազատ խղճի զինվորներին՝ կռվելու խավար ու հետադեմ, ստրկացնող ու դժբախտացնող կարգերի դեմ։ Եվ ո՞րտեղից պիտի տրվեր այդ նշանը, եթե ոչ Ֆրանսիայից։ Պարիզը մինչև այդ երկու հեղափոխություն էր ունեցել[2], այժմ էլ պատրաստվում էր երրորդը սկսելու։ Քառասնական թվականների Պարիզը, այն մեծ Պարիզը, ուր սովորում էր Ստեփան Ոսկանը, տեսակ-տեսակ վարդապետությունների, քաղաքական կուսակցությունների մի եռուն կենտրոն էր։ Ամենախիստ պահպանողական, հետադեմ հայացքներից սկսած մինչև ծայրահեղ ազատամտական, սոցիալիստական և կոմունական վարդապետությունները գոյության իրավունք էին ստացել իրար կողքի, գործում էին։ Հաղթանակը, սակայն, ազատ, առաջավոր հասկացողություններին էր պատկանում, և Լուի-Ֆիլիպի կառավարությունը, որ համառությամբ մերժում էր պետության անհրաժեշտ ռեֆորմների հարցը դնել, իր համար մի խորխորատ էր*

պատրաստում, որից դուրս գալ չէին կարողանար: 1847-ին բոլոր քաղաքական ազատամիտ կուսակցությունները, բոլոր այն վարդապետությունները, որոնք ժողովրդի, աշխատող դասակարգերի դատն էին պաշտպանում, միացած էին մի մտքի մեջ.— այն, որ պետք է տապալել միապետությունը և հանրապետություն դնել նրա տեղը:

Ուսանող երիտասարդությունը անտարբեր հանդիսատես չէր այդ պատրաստությունների ժամանակ: Ընդհակառակն: Նա տոգորված էր հեղափոխական մտքերով, նրան դաստիարակում էին ազատ հոգով: Կոլեժ դը-Ֆրանսի մեջ, ուր հաճախում էր և Ստեփան Ոսկանը, դասախոսություններ էին կարդում երեք շատ նշանավոր պրոֆեսորներ. Միշլե (մեծ անուն ունեցող պատմաբան), Էդգար Քինե (նույնպես նշանավոր պատմաբան) և Ադամ Միցկևիչ (հռչակավոր լեհական բանաստեղծ)[3]: Նրանց դասախոսություններին ներկա էին լինում ուսանողների ահագին խմբեր: «Այդ դասախոսությունները մտցնում էին երիտասարդ, զգայուն մտքերի մեջ սեր դեպի հեղափոխության մեծ սկզբունքները, ատելություն և արհամարհանք դեպի եկեղեցին և պաշտոնական հասարակությունը և խորին համակրանք դեպի հարստահարվող ազգությունները և դեպի հասարակության զրկված դասակարգերի տանջանքները»*:...

Այսպիսի միջնավայրում էր անցկացնում Ստեփան Ոսկանը իր ուսանողական տարիները: Նա այնպիսի բնավորություններից չէր, որոնք ձևի համար, օրինավոր մարդու համբավից չզրկվելու համար են մասնակցում մի ընդհանուր շարժման: Հայ երիտասարդը, մի վառվռուն իդեալիստ, հոգով-սրտով էր կպել իր ժամանակի գաղափարներին և ծառայում էր նրանց մեծ ոգևորությամբ ու անկեղծությամբ[4]:...

## ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ

...Անուններ կան, որոնք հավասարապես սիրելի են աշխարհի բոլոր ազգերին: Դրանք այն մարդկանց անուններն են, որոնք գործել են ամբողջ մարդկության օգտին. որոնց կյանքի ամբողջ նշանաբանը եղել է ամենալայն մարդասիրությունը, բոլոր մարդկանց և բոլոր ազգերի եղբայրությունը: Վիկտոր Հյուգոն այդ համաշխարհային սիրելիների թվում մի առանձին գեղեցիկ տեղ է գրավում: Նրան տված էր հանճար* գրչով բարձրացնելու մարդասիրության, ընդհանուր եղբայրակցության և ազատության հավիտյան անմահ գաղափարները:...

* *Грегуар*, История Франции в XIX веке, т. II, стр. 47.

Հյուգոն իր գրվածքների մեջ մի գերող, հափշտակող ոճով, ամենահաստատ հավատով և սուրբ համոզմունքով քարոզում էր՝ մարդասիրություն, ազատություն, հայրենասիրություն: Այս պաշտելի գաղափարներին նա խնկարկում էր ոչ միայն գրասեղանի մոտ նստած, գրիչը ձեռքին. այլև հասարակության առաջ բաց ճակատով կանգնած, խոսքերով, աննման, համոզիչ ճառերով:

## ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունելով որ մեր գրականությունը սկիզբ առավ 1850-ական թվականների հետ միասին, մենք պիտի տեսնենք թե այն ժամանակները ի՞նչպիսի գրական ուղղություն կարող էր գոյություն ստանալ: Արդյոք կարո՞ղ էր այն ժամանակվա գրողը լինել աշխարհից վերացած, լոկ աստվածներին ծառայող մի գեղագետ:

Գաղափարների այն ծայրահեղ լարումը, որ 1848-ի հեղափոխությունը տարածել էր Եվրոպայում, չը մոռացվեց, թեև հեղափոխությունը իրանից հետո բերեց սաստիկ հալածանքներ ազատ մտքի և մարդկային իրավունքների դեմ:

Մտքերի վրա ազդում էր այն գրականությունը, որ այնքան ճոխացել էր հեղափոխությունից առաջ և նրա ժամանակ: Եթե մենք նայենք այդ գրականության, կը տեսնենք որ հասարակական գաղափարների այդ վառ, տենդային ժամանակներում նա ամբողջապես տենդենցիա էր, ամբողջապես հրապարակախոսություն: Այսպես էր «Երիտասարդ Գերմանիայի» գրականությունը, այսպես էր Ավստրիայում, Իտալիայում: Կրակոտ օրերում, երբ մարդիկ զգում են կռվելու, բարեկարգության, ազատության համար ամենախիստ պայքար մղելու անհրաժեշտությունը, չէ կարելի բավականանալ անարյուն, անառարկա երգերով, որքան էլ դրանք համապատասխանեն «արվեստը արվեստի համար» հասկացողության:

Ժամանակը մարդկության ընդհանուր տրամադրությունը ամեն տեղ էր հնչեցնում իր երգը: Ամեն տեղ ճնշվածը, դժբախտացածն է այդ երգի մեջ: Միայն բռնությունը չէ, որ ամեն տեղ ատելի է դարձել. միայն խավարից ազատվելը չէ, որ ոգևորում է, հաղթական աղաղակներ է արձակում. հարստահարված դասակարգերի, աղքատների դատն էլ է բարեբանում ամեն տեղ: Քաղաքական ստրկության շղթաները չեն միայն, որ հառաչանքներ են արձակում,— ավելի ցավալար, ավելի ահեղ են տնտեսական ստրկության հանած հեծեծանքները...

Բանաստեղծությունը իջել էր Պառնասի գագաթներից, քաղաքական գործիչների բանտերն էր այցելում, նրանց կախաղանների տակ էր կանգնում. բնարը այլևս կույս, սեր, բնություն չէր երգում, այլ արյունոտ նահատակներին էր սրբացնում։ Գերմանիայում հեղափոխական բանաստեղծներն էին կարդացվում, Ավստրիայում Մետտերնիխի սպանիչ սիստեմի դեմ անեծքներ, վրեժ և ազատություն կանչող երգերն էին մարդկանց բերանում։ Իտալիան հերոսական ջանքեր էր գործ դնում մի ազատ հայրենիք ստեղծելու համար. և այնտեղ երգը արյան դաշտերում էր, հայրենիքի համար զոհվողների հետ։ Վիկտոր Հյուգոն թողեց երգել դարերի ավանդությունները և դարձրեց բանաստեղծությունը քաղաքական կռվի զենք։ Անգլիայում վեպը աղքատների, քաղցածների դատն էր պաշտպանում։

Հասարակական գաղափարը ամեն տեղ։

Նա բարձր էր պահանջում, նա իր առաքյալները պիտի ունենար։ Քիչ, շատ քիչ մարդիկ կարող էին այդպիսի ժամանակներում հեռու մնալ կյանքից, կղզիանալ բանաստեղծական առանձնության մեջ և ծառայել «արվեստը արվեստի համար» սկզբունքին։ Ռուսաստանն էլ, թեև ազատ էր քաղաքական հուզմունքներից, սկսեց ենթարկվել Արևմտյան Եվրոպայի տրամադրության։ Այս երկրում կար մի առաջին հարց, ստրուկ ժողովրդի հարցը։ Գրականությունը մտնում էր ժողովրդին, մերկացնում էր հասարակական կարգերը, անարդարությունը, հին-հին խոցերը։ Հիսունական թվականներին շարժումը ավելի կենդանացավ, ավելի ևս սկսեց պաշտել ժողովրդի օգուտը։ Առաջավոր մարդիկ, գրական խոշոր տաղանդներ, իրական, այսինքն կյանքի, հողի հետ կապված գրականության դրոշակն էին կրում իրանց ձեռքերում։ «Արվեստը արվեստի համար» սկզբունքը գեն գցվեց։ Նրա տեղ երևան եկավ նոր վերաբերմունք դեպի գրականության նպատակը, նոր պահանջ գեղարվեստից։ Եվ ահա ինչ էր ասում այդ նոր շարժումը, որ ռուսաց պատմության ամենափայլուն էջերն է կազմում։

Գեղարվեստը անմիջապես կապված է կյանքի հետ. նույնիսկ բնության գեղեցկությունները գրավում են մեզ, նայած մեր ներքին աշխարհի տրամադրության, մեր հասկացողություններին։ Մեր վերաբերմունքը դեպի առարկան, դեպի երևույթները—ահա ինչ մեծ հիմք կա գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Եվ դա ցույց է տալիս, որ անհատականությունը չէ կարող մեռնել հեղինակի, բանաստեղծի մեջ։ Կարո՞ղ է լինել այնպիսի մարդ, որ բացառապես զուտ բանաստեղծ լինի, միանգամայն ազատ իր շրջանի, իր ժամանակի ազդեցությունից։ Նկատեցեք.

նա մեծացել է հայտնի շրջանում, հայտնի ազդեցությունների տակ, ունի իր պաշտամունքը, իր կրոնը, իր հայացքներն ու ճաշակը։ Կարո՞ղ է նա զատ ու անտարբեր մնալ, իր «ես»-ից ու հոգուց կտրված և մի սահմանված սկզբունքի ծառայող քուրմ։

Ռուս հռչակավոր գրողներից մեկը, Չերնիշևսկին գրում էր հիսունական թվականներին. «Արվեստը արվեստի համար՝ մեր ժամանակում նույնքան օտարոտի մի միտք է, ինչպես հարստություն հարստության համար, գիտություն գիտության համար և այլն։ Մարդկային բոլոր գործերը պետք է ծառայեն մարդու օգտին, եթե չեն կամենում լինել դատարկ և անբովանդակ պարապմունք. հարստությունը նրա համար գոյություն ունի, որ մարդը օգտվի նրանից, գիտությունը՝ նրա համար, որ մարդու ղեկավարը դառնա. արվեստն էլ պիտի ծառայե որևէ էական օգուտի և ոչ թե լինի մի անպտուղ զվարճություն։ Ասում են թե զուտ արվեստը արդեն այն օգուտն է տալիս մարդուն, որ մեղմացնում է նրա սիրտը, բարձրացնում է հոգին։ Այո՛, դա ճիշտ է, բայց շատ մանր, աննշան մի օգուտ է, լավ ուտելը, առողջ լինելը, լավ բնակարանում ապրելը նույնպես լավ են տրամադրում մարդուն, ավելի մեղմ և բարի են դարձնում նրան։ Գեղարվեստը ավելի բարձր ու բարդ, հիմնավոր նշանակություն պիտի ունենա մարդու համար»[5]։

Այս էր նոր մարդկանց, նոր դպրոցի դավանանքը։ Այդ դպրոցը ունեներ մի շարք փայլուն ներկայացուցիչներ, որոնք իրանց խոսքով հմայում էին ամբողջ ընթերցող Ռուսաստանը։ Եվ հասարակական գաղափարներով ոգևորվող գրականությունը դարձավ ընթերցողի սիրելին։ Տենդենցիա բառը դադարեց արհամարհանք ներշնչող մի հասկացողություն լինելուց։

Իսկապես ի՞նչ է այդ տենդենցիան։ Հեղինակը գիտակցական միտավորություն է ունենում ընթերցողի մեջ մի հայտնի միտք դարթնեցնել, մի հայտնի զգացմունք շարժել և դրանով հասնել մի հայտնի նպատակի։ Տենդենցիան ծագում է այն տեսակ հեղինակների մեջ, որոնք անտարբեր հանդիսատեսներ չեն, որոնք մարտնչողներ են հասարակական բարիքի համար, որոնք ծառայում են իրանց ազգին և չեն կարող չը նվիրել իրանց սիրտը, իրանց ուժեղ ստեղծագործական շնորհքը այն գաղափարին, որը պաշտում են իրանց կյանքում։ Ամբողջ հարցը միայն այն է, թե կարո՞ղ է տենդենցիան խանգարել որ գրվածքը լինի բանաստեղծական-գեղարվեստական։ Ո՛չ, չէ խանգարում։ Իսկական, սրբազան ոգևորությունը երևան է գալիս և տենդենցիոզ գրողի մեջ։ Որոնեցեք բանաստեղծական գեղեցկություն, գեղարվեստական վայելչություն ամեն տեղ. բայց ար-

համարհել մի գրական երկ լոկ այն պատճառով, որ նրա մեջ տենդենցիա կա՝ կը լինի նախապաշարմունք, մոլորություն միայն:

Ահա ինչ տեսակ գրական դաստիարակություն էին ստանում ռուսաց գրողները: Եվ այդ դաստիարակության վրա հիմք դրեց մեր ամբողջ գրականությունը. նա դարձավ մեզ ղեկավարող սկզբունք, նա անմիջապես կապվեց մեր կյանքի հետ, և եթե մեր գրականությունը ունեցել է փայլուն շրջաններ, այդ միայն և միայն շնորհիվ այն հանգամանքի, որ մեզանում այդպես է հասկացվել գեղարվեստի իսկական կոչումը:

Գրականություն և կյանք—ահա մեծ, անչափ, կարևոր սկզբունքը: Ռուս հռչակավոր քննադատ Բելինսկին գրում էր իր մի նամակի մեջ. «Միայն գրականության մեջ է կյանքը և շարժումը դեպի առաջ»[6]: Եթե այսպես է գրականությունը ռուսաց պես մի մեծ, բազմամիլիոն ազգի համար, որ ունի իր պետական կազմակերպությունը, անկախությունը, քաղաքականապես և մտավորապես զարգանալու բոլոր հանգամանքները, հապա ի՞նչ պիտի լինի նա մեզ պես մի փոքրիկ ու խեղճ, ինքնուրույնությունից զուրկ, միշտ ուրիշներին ենթարկված ազգի համար: Գրականությունն է մի փոքրիկ ազգի սիրտը. թող կենդանի չլինի գրականությունը, և ազգի սիրտը կը դադարե բաբախելուց: Ուրիշ մի ասպարեզ չկա, ուր այդ ազգը կարողանա ցույց տալ իր ստեղծագործական ընդունակությունը, իր հոգեկան հարստությունը: Բացի գեղարվեստական գրականությունից կան և այլ ասպարեզներ. նկարչություն, երաժշտություն, գիտություններ, քանդակագործություն: Բայց մենք այդ ասպարեզներում միշտ թույլ ենք եղել, աննշան, աննկատելի և հազիվ թե այսուհետև ավելի լավ լինենք, քան էինք մինչև այժմ: Մնում է, ուրեմն, գրականությունը:

Եվ երբ այսպես է գրականությունը մեզ համար, պետք է, ուրեմն, որ նա ձուլված լինի մեր կյանքի հետ, պետք է որ երկուսը փոխադարձաբար իրար լրացնեն, իրար պահպանեն: Կյանքը իր հույզերը, իր խմորումներն ունի. և գրականությունը, իբրև նրա հայելի, պիտի ցոլացնե իր մեջ նրա շունչը, նրա ձգտումները, պիտի արձագանք տա նրա կոչերին, պիտի մարմին և արյուն հաղորդե այն հոսանքներին, որոնք կան, բայց աննկատելի են, լավ ձևակերպված, լավ ըմբռնված չեն: Այստեղից ահա այն հանգամանքը, որ գրողը պիտի ականջ դնե կյանքին, հասարակական զարկերակին: Եվ մեր բոլոր լավագույն գրողները այդպես են եղել:...

ԱՐԹՈՒՐ ԱՐԹՈՒՐՅԱՆ

# ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

## Կ. Պոլիս, 17 նոյեմբերի

*Վերջապես Զեյթունի հարցը՝ գոհացուցիչ լուծում մը կը գտնէ։ Ամսույս 10-ին շաբաթ երեկո հեռագիր մը հասավ ի Կ. Պոլիս, թե Զեյթունի խաղաղությունը վերհաստատվեր է. Քյասիմյան Սարգիս անուն անձը Զեյթունի կառավարիչ անվանվեր է. Թուրքերը շատ թեթևցեր են, և ընդհանուր ներողություն շնորհվեր է ապստամբ հայոց, որք ի բանտ էին։ Այս լուրը մեծ ուրախություն պատճառեց. Զեյթուն իրեն ինքնավարությունը ունեցավ, ամուր լեռներ, քանի մը հրացան և քիչ մը արյուն շատ ավելի արդյունավոր եղան, քան վեհաժողովներ, անթիվ բողոքներ, կառավարության միջամտություններ։ Թե մեր և թե եվրոպական թերթերն ի սկզբանե անտի ինչ որ ալ գրեցին այս խնդրո վերաբերությամբ մեք «Մշակի» ընթերցողաց բավական ստույգ տեղեկություններ հաղորդեցինք², և արժանագանք չեղանք միշտ տխուր գուշակության. ազգային երախտապարտ լինելու ենք Պապիկ իշխանի և յուր ազի զինակիցներուն, որոց համբերության շնորհիվ Զեյթուն փրկվեցավ։ Պապիկ իշխանը քսանեւութը տարեկան երիտասարդ մ'է. բարձրահասակ, թուխ դեմոք. երկայն ու լայն հոնքերով. միշտ յուր վրա կը կրե անդրի աշխարհ՝ նման չերքեզներու փառավոր զգեստներե մի մաս։ Հեղափոխության ամենեն տաք միջոցին, երբ ի Զեյթուն թրքաց զորքերն կը մտնեին, Պապիկ գիշերն գաղտագողի լեռներեն վար կ'իջներ, այնքան համարձակ էր, թեպետ և յուր գլուխը բերողին 500 ոսկի խոստացվեր էր, սակայն յուր աչքերը կը չափավորեին յուր հանդգնությունը. աչքերուն վրա կոծիծներ ունի, որով դյուրավ կը ճանչցվի։ Լեռներու մեջ յուր ընկերներն սակավաթիվ էին, բայց դյուրին էր իրեն. երբ որ ուզում է երկու հազարի չափ ընկերներ գտնել, բոլոր ջաղացպաններն յուր ձայնը կը լսեն. Թրքաց անհասանելին էր. Սախտ փաշա լավ ի միտ առած էր, թե Պապիկի մահվամբ*

միայն Զեյթուն պիտի կրնա նվաճել. իմաց կը խրկե Նմա թե թող գա իր հետն տեսություն մը անելու և Զեյթունի գործերն կարգադրեն. Պապիկ շնորհակալ կը լինի այս մարդասիրական հրավիրին, առանց տեղեն շարժելու: Սաիտ Հաշի անհրաժեշտ համարած է Պապիկի հետ տեսնվիլ, ձմեռ կը հասնի, Զեյթունի գործը երկարած է, վախճանին մոտ է, իրենց ամոթ է. ուստի կամա ակամա ինքն կը ստիպվի երթալ առ Պապիկ: Այնպես կը կարգադրեն, որ Պապիկ յուր քաշված լեռնեն մինչև մեկ ժամ վար պիտի իջնե, և հոն պիտի տեսնվին Սաիտի հետ: Փաշան առանձնակի և առանց զինուց կ'երթա, Պապիկ քանի հինգ ընկերներ պահանորդ կը կայնեցնե ամեն կողմ դիտելու համար, և ինքն կ'երթա առ փաշան: Սուլթանի ներկայացուցիչն ու Հայ հեղափոխականը հողին վրա կը նստին և երկար տեսակցություն մը կ'ունենան. Սաիտ կը թախանձե զիշխանը գալ անձնատուր լինել և ինքն պատվույն վրա կը խոստանա վնաս մը չհասցնել իրենց և բոլոր ուզածներին կատարել, միայն թե կառավարության պատիվն չաղարտի. Պապիկ չը խաբվիր Սաիտի խոսքերեն. բայց կը հավնելու, թե ինքն ալ կ'ըմբռնե, որ դժվար է Բ. Դռան ինքզինքն պարտյալ նկատել, հետևաբար այս դժվարության առաջն առնելու համար շատ զոհողություններ կանեն Զեյթունցիք. վերջապես սա կետին վրա կը համաձայնեն թե՝ Զեյթունցիք միշտ իրենց դիրքերն պահելով, Սաիտ փաշայի աղերսագիր պիտի մատուցանեն որ իրենց ներողություն շնորհի, իսկ տաճիկ կառավարիչը յուր կողմե հանձն կ'առնու որ 1). Զեյթունի կառավարիչը հայ լինի. 2) Տուրքերն Զեյթունցվոց պահանջին համեմատ կարգադրեն. 3) Հալեպ բանտարգյալներն ազատվին. 4) Տաճկաց կառուցած զինվորանոցը կառավարության բնակարան և պաշտոնատեղի լինի (խոնախ). 5) Սակավաթիվ տաճիկ զինվոր մնա Զեյթունի գյուղերն, որպեսզի չըսվի թե կատարելապես հայոց խոսքն եղավ:

Ինչպես որ կը տեսնեք այս պայմաններն բոլորովին շահավոր էին հայոց համար, քիչ մը խոնարհություն անտեղի չէր: Սաիտ Բ. Դռան կը հեռագրե, սակայն Դուռը կը դժկամի ներողության մասին, և կ'ասե, թե պետք է գլխավորներեն դատապարտել և կ'որոշե այս գլուխներն և Պապիկ իշխանը Սալոնիկ աքսորել. այս որոշումը կը հաղորդե Սաիտի...

Ահա այս են Զեյթունի վերջի անցից համառոտ և ճիշտ պատմությունը, հուսամք թե Զեյթունցիք իրենց փրկությամբը Հայաստանի փրկությունը և ինքնավարությունը դյուրացնեն:

## ՕՐՎԱՆ ԿՅԱՆՔԸ

*Թուրքերը պատմության հրաշագործությունը աղեկ հասկցեր են. Վերջերս համբավավոր փաշա մը հայ վարդապետի մը բառ առ բառ հետևյալը կ՛ըսեր.*

*— Հայերուն այս բոլոր ըրածները Հայկին, Արամին, Տիգրանին գործն են, մինչև որ ատ ամենը ձեր դպրոցներեն չվերցնենք՝ գործերը պիտի չի շտկվին:*

*Մենք ալ չվերցնե՛նք խորհեցինք. ա՛ն Հոգի մը դրավ մեր Հայրենիքին մեջ. կյանք տվավ հողին ու ջրին, ու վտարանդի Հայը, անո՛վ, հայրենի երկիրը կոխած ատեն դյուցազներու հետ կենակցիլ կը կարծե:*

*Երբ 1884ի մայիսին Էջմիածին կ՛երթայի. Դիլիջանի սարերեն վեր բարձրացած ատենս զգացի պատմական մեկ ավանդության խորին հոգեբանությունը: Պարսիկները Անուշ բերդին մեջ Արշակ Բ-ի ոտքերուն տակ քիչ մը Հայաստանի հողեն կը դնեն փորձելու համար հայրենիքի ազդեցությունը շղթայակիրկ հայ թագավորին հոգիին վրա. և ահա Արշակ, որ կ՛անգիտանար ոտքերուն ներքև կատարված փոփոխությունը, հանկարծ ինքզինքը տարբեր մարդ կը զգա. կը խիզախե, կը գոռա Շապուհի դեմ: Ու երբ մեկդի կը տանին հայ հողը ու Արշակ կը կոխե պարսկական գետինը, կրկին անգամ անձնատուր կ՛ըլլա լքումի[3]:*

*Կը բարձրանանք Դիլիջանեն վեր. սարահարթին կատարը կը տարածվի Սևանա լիճը. ու երբ տրոյքան կը սուրա անոր երկայնքը, մելամաղձությունը ջուրեն բխելով կը պատե ամբողջ էությունս, ու կը խորասուզվիմ հիշատակներու աշխարհը: Հազարավոր տարիներն են, որ կուգան կը սահին աչքերուս առջևեն: Ու կարծես ամենքը կը տեսնեմ: Հոս Գեղարքունիքն էր, անդին Արմենակ կը ձմեռեր. ու ինծի այնպես կը թվի, թե հովը Սոսյաց անտառին խարշափյունները կը բերե հեռվեն ու կ՛ողողե սիրտս:*

*Անո՜ւշ ուրվականներ,*
*Անոնք ինծի հետ, ու ես անոնց հետ:*

*Կը զգաս. թե աներևութացյալներուն հետ ալ «սրտե ի սիրտ ճամբա կա».—ու նորեն ավելի կը սիրես Խորենացիդ. առանց անոր այդ կանաչներն ալ պիտի չի տարբերեին ամեն տեղի կանաչներեն, և Վասփորը հավանորեն ավելի գեղեցիկ երևնար աչքերուս:*

*Ու այդ հիշատակները չե՞ն որ հայը տաքուկ կը պահե սրտին մեջ, մեկտեղ կը պտտցնե զանոնք իրեն հետ, ու Միսիսիպին, Սենը, Թեմզը իրեն մոռցնել չեն ի տար Եփրատը, Տիգրիսը: Շիտակը խոսելով անախորժ*

տպավորության տակ մնացի հեգնություններեն, որոնք Ամերիկա նոր հրատարակվող թերթերու անունին շուրջը թափվեցան: Գեթ պանդուխտները չեն կրնար ծածկել անուններ, որոնք պանդուխտ Հային համար կը նմանին «խուրպեթ» գացող զավկին «խուրճ»ին մեջ մոր մը սպրդեցուցած հիշատակին, զինքը չմոռնալու համար: Հայը ամեն տեղ իր հիմնած թերթերեն գոնե հայրենիքի հիշատակը միշտ մտաբերել կ՚ուզե. ուստի կ՚ունենա «Արշալույս Արարատյան»ը[4] ու «Արփի Արարատյան»ը[5], «Մասիս»ը[6], «Նոյան Աղավնի»ն[7], «Հայաստան»ը[8], «Հայք»ը[9] և ուրիշներ: Եվ հիմա Ամերիկայի հայուն ականջին հայրենիքի ջուրերուն խոխոջները չե՞ն լսեցներ արդյոք «Եփրատ»ը[10], «Տիգրիս»ը[11]: Օ՜հ, կը բավեն օրվան տխուր իրականությունները, ու չպահանջենք, որ Ամերիկայի հայ թերթ մը «Աշխատանք» կոչվի կամ «Գործարան»: Առանց ատոր ալ օրն ի բուն խեղճերը գիտեն, թե ի՞նչ է աշխատությունը, ի՞նչ է գործարանը: Հիշատակին բանաստեղծությունը թո՛ղ քիչ մը լույս ցաթեցնե օրվան խոնջենքին մթության մեջ: Այդ ալ բարիք մըն է: Լույսին քաղցրության մեջեն պանդուխտը պիտի ընդնշմարե օր մը ըղձանքին հասնելու հույսը:

* * *

Պանդուխտին հետ ամբողջ հայությունն ալ հիշատակին բանաստեղծությունը, ըղձանքին հասնելու հույսին չի՞ կարոտիր իր ծանրածանր վշտերուն թախիծը փարատելու և աչքերը հավատքով ապագային վրա հառելու համար: Սրտագին ուրախությամբ ընդունինք իբր մեր մեծ բարեկամը ով որ կուգա հիշատակներու աղոտանշույլ աշխարհեն: Ապագան մեր առջև լուսափայլ ցույց տալ և մեզի հոն առաջնորդել ամրապնդելով սրտերնիս, ուժ տալով մտքերնուս:

Երբ հայ ժողովուրդը պաշտպանելու խոսքեր կը գտնեն Եվրոպայի մեջ, չե՞նք գիտեր թե մեզի նկատմամբ արտահայտված հոգածությունը քիչ շատ կը նմանի—ավելի շատ, քան քիչ—այն կարեկցության, զոր կենդանիներու համար ցույց կուտան անասնապաշտպան ընկերությունները. սա տարբերությամբ միայն, որ մենք նվազ բախտավոր ենք[12]: Մեզի կորող թուրքին չարության մեծությունը օրեօր ավելի հաստատելու համար պետք է օրեօր ավելի համոզենք Եվրոպան, թե Հայերու ջարդը հակամարդկային եղեռնագործություն մը չէ միայն, այլ նաև ոճիր մը քաղաքակրթության ընդհանուր տարածումին դեմ, վասնզի Հայը մարդկային հառաջադիմության սատարելու կոչված տարր մըն է: Այս համոզումն է, որ մեր դատին համար, մեր ապագային համար աջակցություն կրնանք համարիլ ամեն հրատարակություն, որուն նպատակն է

հայ տաղանդը, հայ քաջությունը պարզել Եվրոպայի առջև։ Վերջին քրոնիկիս մեջ հրճվանքով կը հիշեի Չոպանյանի ու Աղասիի հրատարակությունները[13]։ Անկե ետքը եվրոպական սուրհանդակը անսպասելի նորություն մը բերավ մեզի։ Նոր հրատարակություն մըն է ասիկա, իտալերեն, որուն ակնարկ մը տալով բավականանանք, զայն օր մը «Նոր Կյանք»ի ընթերցողներուն մանրամասնորեն ծանոթացնելե առաջ։

«Կ՚ողջունեմ քեզի, դյուցազնաքաղա՛ք Զեյթուն»․ սրտե բխած ու շիտակ մեր սրտերուն զարնող այս ողջույնը կը պարագծե Անատոլիո Լագինոյի երկու հատորին հոգին։ Խոր թախծությամբ համակյալ հուսահատ տարաբախտին գլխուն վերև հանկարծ լուսափայլող հուսատու հրեշտակին ձայնն է կարծես որ կը հնչե։ Երազներո՞ւ հրեշտակը թերևս։ Ո՞ւր կը սկսի սակայն երազը, ո՞ւր իր վերջը։ Երազին գեշն ալ կա, բարին ալ կա։ Ինչո՞ւ հավատալ մեկուն միայն, ուսերը վեր թոթվել մյուսին համար։ Կատարածը, ան ալ երազ մը չէ՞ր, գեշ երազ մը, զոր տեսնել մտքեն չէր կրնար անցընել ան, որ իր տարիները գեթ հիսունով միայն կը համբեր։ Բարի երազին ալ հավատանք։

Թափառահած կը դեգերի Անատոլիո հայ աշխարհը, կը հարցափորձե դարերը, կը պրպտե հայ կյանքը, կը զննե հայ տաղանդը, հիացումի սքանչացումով կը կանգնի Զեյթունի դեմը ու այդ ամենուն վկայությամբ խանդավառ կը հայտարարե ազգային ինքնավար կյանքի համար մեր իրավունքը, վասնզի Հայը տաղանդ ունի, բարոյականություն ունի, կորիճ է։

Ու ան որ մեր այդ իրավունքը կը ճանչնա, սրտին ազնվությանը կը միացնե իմաստասեր պատմագետի միտք, քաղաքական մարդու խորին փորձառություն, ինչ որ կը հավաստե, թե Հայության ազատագրին համար իր հույսերը շեղջցիկ հոգիի մը թրթռումներուն քաղցրանույշ երազշտությունը չեն միայն։ Ծածկանունին քողը վեր առին ուրիշներ, ուրեմն մեզի ալ ներելի է առանց խղճահարության համակրանքով ու հարգանքով ողջունել պ. Վիթոն, իտալական հյուպատոսը Հալեպի, որ 1896ին իբր ներկայացուցիչ Իտալիո, Ավստրիո և Գերմանիո Զեյթուն գացած էր մյուս հյուպատոսներուն հետ[14], հաշտության պայմաններուն համար։

Խանդավառ քեզով աչքերը լեցված, Վիթո խնդրեց իբր դյուցազնական եղբության հիշատակ մը գուրգուրանքով իր հայրենիքը պահել Թուրքին գնդակներեն ծակ ծակ դրոշը, որ Զեյթունի սարերեն ամիսներ ամբողջ մարդկության սիրտը տրոփել տվավ։ Դեռ վառոդ բուրող իրենց արյունկաթ ձեռքերովը, վերջին համբույրին հետ, իբր վավերացում, իրենց անուններն ալ փառքերու վկա այդ լաթին վրա դրոշմեցին, ինչպես սա-

բներուն գագաթը, այն երիտասարդները, որոնք դրսեն վազած էին Չեյ-թունցիին հետ գրկընդխառն մեկ սիրտ, մեկ հոգի կռվելու թշնամիին դեմ։

Իր ազատության համար մարտիրոսացող ժողովրդի մը գալարում-ներուն ի տես ո՛չ Ֆրանսացին, ո՛չ Անգլիացին կը զգան Իտալացիին սար-սուռը։ Օտարին կոշկոճիչ թակը անոր գլուխն ալ շատ ատեն ճզմած պա-հեց։ «Թեդեսքո»ին ատելությունը դեռ չէ մարած, ու շուտ ալ չի մարիր, Իտալացիին սրտին մեջ։ Չէ՛, Իտալացին ա՛լ չի կրնար մոռնալ, որ Ֆրանց-Յոզեֆ «բարի կայսեր»[15] զինվորները Միլանի ամեն մեկ տան մեջ պատեն կարիճ իտալացիի մը մարմինը կախեցին, մորթե տեռադերծ, աղիքներեն պարպված, ու Սան-Ճորճոյի ափերեն գնտակահար Ատրիա-կանը դիզեցին իտալյան պատանիներու և երիտասարդներու դիակները։ Այդ դիակներու ուրվականները վրեժխնդիր թափառեցան Իտալիո մեջ, խռովյալ սարսուռ Գեղեցկության, Բանաստեղծության Մայր-Հայրենի-քը, ու օր մը մեջեն դուրս վռնտեց «Թեդեսքո»ն,—Ավստրիացին—։ Կա-րիպալտին եկած էր Քավուրին հետ[16]. քաջություն ու խելք ձեռք ձեռքի տված հայրենասիրության մեծ հովանիին տակ։

Կարիպալտիի զինվոր մըն էր և Վիթթո, և հիմա—1896ին—յոթանաս-նամենի պարթև ծերունի մը մորուքը ձյունափառ, բայց մարմինը միշտ քաջակորով, հոգին կրակոտ, միտքը զորեղ, կը պատմիրեր մերիններուն.

Դուք ալ խելքն ու քաջությունը միացուցեք, միշտ հավատքով աշ-խատեցեք, ու ապագան ձերն է։

## ՎԵՐԸՆՁՅՈՒՂՈՒՄ

Ազգային զարթնած սրտի խոր զգացումը՝ որ ժողովրդի մը հոգին կը կերպարանավորե, ու գրական մտքի մը լրջությունը միանալով մեր ցեղային տոկունության, մեր ազգային աշխատասիրության և մեր տոհմային դաստիարակության, մեզի կը բանան նոր կյանքի մը թվա-կանը։

Հայուն պես տնաշեն, քաղաքակրթության ընդունակ և տարածիչ ազնվազգի ժողովրդի մը դեմ աններևակայելի, հակամարդկային, հակա-բնական անիրավություններու հիշատակը չի ջնջվիր մեր սրտեն. հո՛ն լայնախոց վերքը միշտ բաց է. ու գրականությունը, ազգային զգացու-մին թարգմանը, օրեօր ավելի ուժգնապես երևան պիտի բերե մեր վշտին մեծությունը ու խորությունը։

Բայց ընդունելու ենք նաև, որ առայժմ մերին տկար կողմը ազգա-յին մտքերնիս է. և այս առթիվ պետք է գիտնանք թե տոկունություն, աշ-

խատասիրություն, բարոյական ույժ, զգացումի սրբություն չեն կրնար իրենք իրենց ապահովել վերածնությունը այնպիսի ժողովրդի մը, որ մեր վիճակին մեջ կը գտնվի, մինչև որ այդ ժողովրդին միտքը գիտական մտքի մը հատկություններովը չօժտվի: «Ամեն բանին ի՛նչպեսը և ինչո՞ւն փնտռել, պատճառներուն և արդյունքներուն շղթայումին հետամտիլ, երևույթներուն օրենքները քննել»,— ահա համառոտաբար ինչպես կը սահմանվի գիտական միտքը: Այդ միտքը միայն գիտուններուն առանձնաշնորհումը չէ. կյանքի ամեն պայմաններու մեջ ապահով առաջնորդ գիտական միտքը կրնա ըլլալ: Դժբախտաբար հայ ժողովուրդը, իբր արևելցի, ավելի երևակայությամբ օժտված է, քան թե գիտական մտքով: Մեր կես դարու գաղափարականությունը ազգային մտքերնիս չուժովցուց: Հետևանքներուն վրա ծանրանալու պետք չկա հիմա. պետքը քննող, ճշգրիտ, գիտական միտք ունենալն է: Թե՛ անհատները, թե՛ ազգերը պարագաներու բերմամբ կրնան քիչ ատենի մեջ շատ մը առավելություններու տիրանալ, բայց ո՛չ անհատները, ո՛չ ազգերը կրնան կարճ ժամանակամիջոցի մեջ գիտական մտքի հատկություններովը օժտվիլ:

Սակայն շատ մը նշաններ ցույց կուտան թե հայ ժողովուրդը սկսած է ավելի գործնական ըլլալ, և գիտական միտք մը ունենալու պետքը կ՚զգացվի: Ա՛լ բացագանչությունները, ուռուցիկ պարբերությունները, ճառախոսական հոդվածները, բարկաճայթ որոտումները ո՛չ միայն օրեօր անազդեցիկ կը դառնան, այլև ծիծաղելի կ՚ըլլան: Ահա փրկության լավագույն նշանը...

## ՕՐՎԱՆ ԿՅԱՆՔԸ

...Հայը արյունին հետ կը ժառանգե մարտիրոսացման զգացումը: Այդ ժառանգական զգացումն է, որ մեր ցեղը կը ջլապնդե, և հոխորտաբար Իսլամին դիմադրելու զորությունը կը պարգևե մեզի:

Տասնըհինգ դար մեր երկնային ազատագրության համար տանջվելով տանջվելով, արյուններս թափելով թափելով, երբ օր մըն ալ մեր երկրային ազատագրության համար պահանջվեցավ այդ արյունը, արտակարգ շվարումով մը չտկարացանք: Գաղափարի մը համար արյուն տալ մեզի ցեղային ունակություն եղած է: Մեր զորությունը այդ ունակության մեջ է, վասնզի հինցած ունակությունը բնավորության մաս կը կազմե...

## ՀՈՂՎՐՏԻՔԸ

Իտալական գեղի մը մէջ դեռ կ՚ապրի ծերոն ծառ մը, որ թէև հազար յոթ հարյուր տարի առաջ տնկված — ըստ ավանդության — բայց կը հարատևէ ամեն գարնան ծլել, ծաղկել, վասնզի իրեն հող ունի գերեզմանը սուրբի մը, որուն ոսկորներեն իր կյանքին հյութը կը ծծէ։ Հրաշապատում զրույց, բայց խորհրդանշան։ Ժողովուրդը այդ սուրբը կը ճանչնա իբր՝ il santo armeno, «Հայ սուրբը»։ Երկրորդ դարուն սկիզբները մեր երկրեն Իտալիա եկած, հոն քրիստոնեություն քարոզած, մարտիրոսացած։ Այս՝ ճշմարտություն։ Մեր դրականությունն ալ մշտադալար պիտի ապրի և եկող ու գացող սերունդները պիտի հովանավորե. եթե այդ ծառին հանգունակ, մինչ արմատները մեր մոքի սրբերանց ոսկրտանքեն հյութ ծծեն, իրանն ալ բաց օդին մէջ սավառուն, դեպի վեր, դեպի երկինք բարձրուղեշ, արևուն լույսեն լափե նոր կյանքին սննդառությունը։...

## ՀՈՂՎՐՏԻՔԸ

Ինկած ամեն ժողովուրդ, Գաղափարի մը կառչելով, վեր կը բարձրանա. Հրեան՝ Մեսիայի՛ն գալստյանը, Հելլենը՝ Պոլսո առմանը, Հայը՝ հայրենիքին փրկությանը։

Այս տողերը կը գրեմ Գաղափարականի մը նվիրված սրճարան մը, «Քավուր»ը. ու աչքիս առջևը կը բարձրանա Թոմազեոի արձանը. ու կը հիշեմ հայասեր Մեծ Հեղափոխականին ոգումը. «Կայծակեն ավելի արագ են Գաղափարները. այս գիշեր զանոնք կը բանտարկեք, ու վաղը, հրապարակին մեջտեղը կը գտնեք, զնտանին երկաթե վանդակապատներեն դուրս փախած. անշոշափելի, անկշռելի են. քիչ մը լույս, քիչ մը գույն, քիչ մը էլեկտրականություն, քիչ մը մագնիսականություն, չեմ գիտեր ի՛նչ մը որ միանգամայն նմանակ է բնության խորհրդավոր չորս ուժերուն. կը հետապնդեն ու կը փախչին, կը հալածվին ու կը հալածեն, կ՚նուան և կը շոգիանան՝ առանց երբեք անհետանալու. կը քալեն, կը մագլցին, թևեր ունին ինչպես հրեշտակապետը»[17].

Օր մը, Լոնտոն, Միհրան Տամատյան կը հիշեցներ մեզի Սասունցի պառավի մը դավանանքը.

Մելքոն ախպեր, քըզի բան մը ասեմ, կ՚ըսեր վաթսուն տարեկան կինը. ավելի աղեկ է որ մեր գեղի ամեն խորթեր (երիտասարդ) ու ամեն հարսներ մեռնին. միճակ (մինակ) մեկ կենձ խորթ մը և մեկ արուս մը

(հարս) ողջ մնան, բայց ազատ եղնեն. էմլէ (նորէն) մեկ օր մեր գեղ կը շեննա:

Այս պաղարյուն հերոսաբանության հաջորդ օրը Սասուն կը մարտիրոսանար: Թոմաևոյին թևավոր Հրեշտակապետը անոր բարձունքները սավառնած էր արդեն: Տասը տարի ետքը, տարին տարվան— 1894—1904—հայ արյունը նորեն կը գետահոսեր այդ լեռներեն վար: Ու հիշեցի Շենիկին պառավը. «մինակ մեկ կենա խորթ մը և մեկ արաս ողջ մնան, էմլէ մեկ օր մեր գեղ կը շեննա»: Այդ պառավը ցեղային Նահապետության էր մարմնավորիչ, անհատը թո՛ղ զոհվի որպեսզի ցեղը պահպանվի. Շենիկցին թո՛ղ զոհվի որպեսզի Շենիկը շեննա. «Այս օրը» «Վաղվան» մատաղ:

Ու հայ պառավին և իրեն հետևորդ հայ հեղափոխականին ցեղասիրական վայրագ տրամաբանությունը հավանավորված կը գտնեմ ընկերաբան փիլիսոփայե մը, որ ինչքան մեծ միտք մը այնքան ալ մեծ մարդասեր մը թեև, բայց և այնպես «ապագային արդար» արյունով ոռոգելու «բարիքը» ընդունիլ կը միտի սարսռեցուցիչ պատկերով մը, զոր հայոց մտածականությանը կը հանձնարարեմ, առանց թեր կամ դեմ կարծիքի մը:

Ահա այդ գաղափար-պատկերին բառացի թարգմանությունը:

«Երկիրներ կան, ուր հողագործը երբ իր արտը արդասավորել կ'ուզե, զորեղ միջոցի մը դիմում կ'ընե երբեմն. ձի մը կ'առնե. անոր երակները կը բանա, և մարակը ձեռքը զայն ակոսներուն մեջ կ'արձակե. արյունթաթախ ձին կը քաշկռտի ընդ մեջ դաշտին որ կ'երկննա իր կրող սրունքներուն տակ. հողը իր ներքեր կը կարմրնա. ամեն մեկ ակոս արյունեն իր բաժինը կ'ըմպե: Ու երբ ա՛լ ուժասպառ կ'իյնա հանչելով, զինքը կը բռնադատեն ելլելով ոտքի կայնելու. ու անհագուրդ հողին տալու դեռ ինչ որ կը մնա իր արյունեն՝ առանց բան մը պահելու. ուր ուրեմն, վերջին անգամ կը կրի վար կ'իյնա. ու զայն կը թաղեն արտին մեջ որ դեռ կասկարմիր է. իր բոլոր կյանքը, իր արյունոտ էությունը կ'անցնի վերկենցաղյալ հողին: Արյունի այս սերմը կը պտղնա հարստություն կ'ըլլա. այսպես պարարյալ արտը երկրագործին համար պիտի առատանա ցորենով, հացաբ բարիքով: Մարդկային պատմության մեջ երբեմն ալ՝ այսպես չեն անցնիր լեգեոնները մեծ դժբախտներու, անծանոթ կամ փառապանծ մարտիրոսներու, բոլոր այն մարդերը՝ որոնց սեփական եղող դժբախտությունները, ուրիշին բարիքը կը ստեղծեն, բոլոր անոնք, որ զոհողության բռնադատվեր են և կամ իրենք փնտռեր են զոհողությունը, անցեր գացեր են, աշխարհիս մեջեն սեր-

մանելով իրենց կյանքը, վաղցնելով արյունը իրենց պատռտած կողե-րեն, ինչպես կենսաբուխ աղբերակ մը, և՝ ապագան բեղմնավորեր են»։

Իրենց պատռտած կողերեն արյուննին այսպես վաղցուցին Զեյթուն ու Սասուն, որպեսզի բեղմնավորի հայ ապագային արտը։ Հեղափոխական Գաղափարը, որ մտրակը ձեռքը Սասունցիին ու Զեյթունցիին երակները բացավ և անոնցմե պոռթկած արյունովը երեկվան Հայաստանին արտերը վաղվան համար ոռոգեց, այդ գաղափարը հազար բարիքով պիտի հարստացնե՞ հայ ապագան։ Այո՛, երբ արյունի ողողումեն հետո, արևն ալ ցաթե։ Արտ մը որ տարին տասներկու ամիս ջուր ծծե, զրկված մնալով արևուն բարերար ճառագայթներուն, կը փտին ցանված սերմերն այդ արտին մեջ։ Արյունողող Հայաստանն ալ անձկակարոտ կը սպասե, որ այդ արևը ցաթե իր վրա։ Ու նշողումը կ՚ընդնշմարենք այն լեռներեն ուրկե Ֆելեկյաններու սերունդն ալ կ՚ակնկալեր Հայաստանի արևին ծագումը։ Ճառագայթ մը, դեռ լուսնի հրագայի մը պես մեղմիկ, կը բռդի Մասիսի սարերեն, պիտի հասնի՞ մինչև Սասուն ու Զեյթուն, բարկ լույս եղած, և պիտի ջեռուցանե՞ արյունոռոգ արտերն հայ աշխարհին։ Այս էջերուն մեջ քաղաքական տեսությամբ մը ցուցադրեցինք մեր հույս-ենթադրությունները. բայց հիմակ, երբ հողվրտիքն ի ձեմ կ՚ելնենք, պատմության բոլորտիքը դեգերինք րոպե մը և շիրմաստաններեն գաղտնիքներ պրպտենք, փորձառության մոռցված դասեր։

## ԳԱՆԳԻ ՄԸ ԾՈՒՐՋԸ

Ռուս և Թուրք պատերազմեն հետո, երբ Հայաստան քանի մը ամիս հանգիստ շունչ քաշած և ապահովություն վայելած է, 1895ի առաջին ինը ամիսներն են[18], նվ, այդ ատենվան Պատրիարքը Իզմիրլյան կը կոչվեր ու Վարչապետն ալ՝ Միհրան Հովակիմյան. ո՛չ փաշա, ո՛չ պեյ, ո՛չ էֆենտի թե ինքը և թե իր պաշտոնակիցները։ Եվ այդ միջոցին ալ էր, որ «Հայկական խնդիր»ը Եվրոպական տագնապալից հարցի մը կարևորությունը ունեցավ։

Անարդարություն է, Հեղափոխության շլինքը փաթթել մեր դժբախտության ամբողջ պատասխանատվությունը, գոնե չըմեղացնելով մահմետական վարչությունը։ Ամեն անարդարություն մահաբեր վտանգներ կը սպառնա թե՛ անհատներու, թե՛ ժողովուրդներու։

Սուլթան Համիտ օր մը Անգլիո դեսպան սըր Ֆիլիբ Քըրրիին գանգատեցավ, թե «այս երկրին մեջ Հայերը շա՛տ հարուստ են ու իսլամները շա՛տ աղքատ»։ Մեղավորները անշուշտ Հեղափոխականները չեն— և ո՛չ

ալ պահպանողականները—եթե խաղաղության ջերմագույն ներկայացուցիչը, Հայոց հարստությանը վրա աչք տնկելով, զայն չքացնել ուզեց և Հայերն ալ «դեպի այլազգություն քշել»[19], սուլթանին բառերովն խոսք։ Այս առթիվ տեղն է հիշեցնել, թե վերջերս ալ Եվրոպական մամուլը համանման գանգատներու արձագանքը կրկնեց Կովկասեն, Հայ և Թուրք ընդհարումներուն իբր լուսաբանություն[20]։

Հայաստանը թշվառ է, ինչպես միշտ թշվառ են այն բոլոր երկիրները, որոնց կը տիրապետե օտար ցեղ մը։ Փոխանակ Թուրքին մեր վրա եթե անգլիացին կամ ֆրանսացին իշխեր, քրիստոնյա այդ քաղաքակիրթ ազգերը հայ ժողովուրդը թերևս ավելի արդարամտությամբ պիտի չխնամակալեին։ Մարդասիրական զգացումներն թելադրյալ չէ, որ աշխարհակալները հուրն ու սուրը հեռավոր վայրեր կը տանին, Մահմետական տիրապետության ներքև, հայությունը մասամբ ոչնչացավ։ Սակայն ազգին մեկ մասը իր ցեղային ինքնությունը պահպանեց. հոգին բերանը առած տոկաց, մինչև որ աշխարհակալ օտարին աստիճանաբար տկարացումը և իրեն ալ նույն համեմատությամբ կազդուրումը, լավագույն ապագա մը հուսադրեցին։ Բայց Թուրքն ալ կը հսկեր, տկարներու սեփական խռովամիտ կասկածանքներով։ «Հայը շա՜տ հարուստ էր, իսլամը շա՛տ աղքատ»։ Հայոց թրքասեր քաղաքականությունը իբր խորամանկ դավադրություն կասկածվեցավ, տիրապետող ցեղը ավելի ապահովաբար բնացնելու ծրագրով սարքված։ Հայահալած քաղաքականությունը ա՛լ դուլ ու դադար չունեցավ։ Ցեղային ինքնապաշտպանության նոր զորություն մը ստեղծելու պետքը սկսավ մարերը տանջել. և հիմնվեցան «Արմենիա»ն[21], «Հնչակ»ը[22], նույն իսկ 1885—1888 թվականներուն։ «Հեղափոխական» կոչվեցան անոնք, որ այս գաղափարատարած թերթերուն խորհուրդները ընդգրկելով, զանոնք գործադրելու հետամտեցան. իրենց հայապաշտպանությունն ալ՝ «Հեղափոխություն» հռչակվեցավ։

Հեղափոխականները իրենց մտածումներուն մեջ սխալեցա՞ն։ Վճռական պատասխանին ժամանակը տակավին հասած չէ։ Աշխարհակալված ունե ազգի պատմության մեջ, ազատագրումի մարտնչման թվականը երբ դեռ բաց է, կարելի չէ որ՝ հզորին դեմ տկարին ոգորումը շա՛տ խելացի հանդգնություն համարվի ընդհանուր հավանությամբ։ Իմաստության կամ հիմարության վճիռները կ՚արձակվի երբ պատերազմը կը վերջանա։ Կրետացիներուն շարունակ մեկ դար տևող ապստամբությունները[23], «խելացի ժողովուրդի» անվիճելի համբավ մը չշնորհեցին այդ անհամբեր տառապյալներուն, որոնք «շատ խելացի ժողովուրդ»

հռչակվեցան այն օրը, որ Պետությանց զրահավորները կրետական նավահանգիստները խարիսխ նետեցին։

Մեր ազատագրման կռվին Բիվականը հազիվ թե բացված է։

Նմանեցանք, ինչպես ամեն ըմբոստացող ժողովուրդներ, բանակի մը որ պատերազմին առաջին ճակատամարտներեն իսկ կը հարվածվի։ Հիմակ երկու մասի բաժնված ենք. մեկը՝ խաղաղության անմիջական կնքումը կը պահանջե, առանց սակայն նկատողության առնելու թշնամիին տրամադրությունները։ Մյուսը՝ կռվին հարատևումը կ'որոշե, առանց սակայն նկատողության առնելու իր ուժերուն անբավականությունը։

Ու վճռական որոշումը տալու ձեռնհասություն ունեցող իշխանություն մը չի ներկայանար։

* * *

Վերև հիշված ավանդազրույցին մեջ[24] տեսնվեցավ, թե դանգը կտոր կտոր աճյուն դառնալով ոչնչացավ, վասնզի երկու կնիկ իրարմե զատ զատ խորհեցան ու գործեցին։ Իրենց միջև նախապես համաձայնություն մը ճակատագրին պիտի հաղթեր։

Որպեսզի խաղաղասերն ու հեղափոխը իրարու խոսք հասկնան, խորհուրդ հղացվեցավ Ազգային Համաժողով մը գումարել. այդ խորհուրդը այս էջերուն մեջ ալ ջերմապես պաշտպանված է։ Բայց այլազան տեսություններ, կուսակցական ու հակակուսակցական նկատողություններ կը հակառակին՝ համախումբ գործակցությամբ ազգային շահերու պաշտպանությունը ապահովելու ամեն խորհուրդի։

Մեզի սպառնացող վտանգը ո՛չ թե հիմակվան կացության դժվարություններուն մեջ կը տեսնենք, այլ՝ իրար չեզոքացնելու մրցակցության մեջ։ Այս տողերը գրված պահուն, Բարիզեն՝ նոր Հայկական Միության մը կազմությունը կը հաղորդվի, խաղաղասիրական լայնածավալ ծրագրով. Եգիպտականը գերազանցող լայնածավալությամբ[25]։

Ուժերու բաժան բաժան անջատումեն ի՞նչ բարիք ակնկալելի պաշտպանություն Հայաստանի շահերուն։ Շատ չարիք կրնանք վախնալ, բայց անհնարին է բարիք հուսալ։ «Բարիք» բացատրությամբ կ'ըմբռնենք Հայաստանի վիճակին բարեփոխմանը մատուցված ծառայությունը։ Բարիզ Հայկական մեծկակ մատենադարանի մը հիմնարկությունը ավեր ավերակ հայրենիքին վերաշինումին այնքան կրնա նպաստել, որքան նպաստած են ու կը նպաստեն Պոլսո, Վիեննայի, Էջմիածնի, Վենետիկի, Երուսաղեմի Հայկական հարուստ մատենադարանները։

* * *

Հավանական չէ, որ խաղաղատենչները իրենց ամենայն բարի կամեցողությամբը և տրամադրելի գումարներովը հաջողին արգիլել մեկն իսկ այն գործողություններին, զոր իրենք «չարիք» կ՚որակեն։ Խաղաղասեր Հայկական Միությունները, եթե տասնյակ թիվով իսկ ծնունդ առնուն, ի՞նչ ապահովություն ունինք, թե վաղը քանի մը հարուստ հայ գնդակահար պիտի չգլտորին, կամ ռումբ մը պիտի չպայթի սուլթանագնաց ճամբուն վրա։

Իսկ հեղափոխական կազմակերպությունները լրջորեն կրնա՞ն մտաբերել հայ հայրենիքին մեծկակ ծառայություն մը մատուցանելու հնարավորությունը, երբ հայության ստվարաթիվ զանգվածը իրենց դեմ պատնեշ կը բարձրանա։

* * *

Երբ Հայ մը իր ազգին հիմակվան վիճակը ուսումնասիրել ուզե առանց նախապաշարման, իր ուշադրությունը, բնականաբար, նախ այն դժվարությունները պիտի գրավեն, որոնց ակնարկվեցավ վերև, բայց հետո պիտի անդրադառնա նաև մեր հանրային կյանքին մեջ հեղաշրջումներու, որոնք էն հոգեբեկ հայը իսկ գոնե սրտապնդելու կը բավեն։

Հայաստանի բարեկարգության հոդվածությունը Եվրոպայի քաղաքական խնդիրներու օրակարգը անցած է, օր մը չէ օր մը այսպես թե այնպես հարթվելու ապահովությամբ։ Մեր 61երորդը իր անորոշ տարտամ բանաձևի ակարությամբը չի ներկայանար այլևս. այսօր սեփականատեր ենք հաստատատապինդ պահանջագրի մը, որ 1895 մայիս 11ի ծրագիր կը կոչվի[26]. իրեք պետության կամքին խտացումը։ Իրավ. եթե վերջին տաս տարվան ժամանակամիջոցին, այդ ծրագիրը աչքի զարնող հառաջդիմություն մը չըրավ. բայց 61երորդին հառաջդիմությունը շատ զգալի եղած էր 1878 հուլիս 13են մինչև 1895 մայիս 11, այսինքն՝ տասնյոթ տարվան մեջ. սակայն հանկարծ, զարմանահրաշ ոստումի մը ականատեսները եղանք։ Երբ 1894ին երկու Հնչակյան Սասնո լեռներեն շղթայակապ բանտ կը տարվեին[27], ո՞վ կրնար երևակայել, թե տարին չբոլորած, Սասունին ոսկրտանքը հայկական խնդրին կյանք պիտի պարգևեին, Եզեկիելաշունչ հարությամբ[28]։ Ինչպես որ 1878 հուլիս 13ի դաշնագրին մեկեն ի մեկ 1895 մայիս 11ի ծրագրին ցատկեցինք, նմանապես այս վերջին թվականեն ալ հանկարծական հառաջխաղացում մը հուսալ ներելի է, մանավանդ որ հիմակ Եվրոպայի ու Ամերիկայի ուշադրությունը շա՛տ գրաված ենք։

Այդ գրավումը պարզապես մեր աղետներուն պարտական չենք. թշվա՞ռ, միշտ եղած էինք, ո՞վ մեր վրա ուշադրություն դարձուցած ուներ։ Ամեն անհատ իր մեջը կրած ըմբոստացման զգացումովն է, որ բան մը կ՚արժե, ըսած են։ Նմանապես ժողովուրդներն ալ։...

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնականաբար, արտասահմանի հայերն ալ իբր ավետիս մը պիտի լսեին սուլթան Համիտին ճողելամերձ հիվանդության լուրը։ Հրճվանքի ուրախությունը որ ամեն հայու երեսին վրա փայլեցավ, երբ հեռագիրը հաղորդեց, թե սուլթանը, երեսուն տարվան իշխանության տևումին, առաջին անգամը ըլլալով ուրբաթ օր մը մզկիթ չկրցավ երթալ, այդ ուրախությունը կ՚արտացոլեր լույսն այն ակնկալության, զոր Համիտին չքացումը ամեն Հայու կը հուսադրեր։ Ու հետո. հուսախաբություն մը— գոնե առժամյա հուսախաբություն մը, կասկածեն հայ աչքերուն մեջ պլպլացող արտմությունը, մեր ներքին խռովքը կը պատմեր, թե գլտորումը գուցե հապաղի։

Երեսուն տարի առաջ հայը՝ իբր ազգ՝ անտարբեր «սեյիրճի» մը կը ներկայանար սուլթանի մը աներևութացմանը, նորեկի մը երևմանը։ Գացո՞ղն ալ տաճիկ, եկո՞ղն ալ տաճիկ. ու նոր գահակալը հայատեսիլ ստվերի մը իր մազբաղմանց մեջ սողոսկումը և ոչ իսկ կրնար երևակայել։ Հայը՝ անտարբեր սորուկը իր մահու և կենաց տիրոջը անվան փոփոխումին համար, «եկողը՝ պեյս, գացողը՝ էֆենտիս», հայրենավանդ ամենախմաստուն պատվիրանքին խղճամիտ ժառանգորդությամբ։ Ու Մուհամմեդին հաջորդը՝ չարչիներու խռանը արհամարհող ամբարտավան մը։

Բայց վերջին տասնհինգ տարիներու մեջ, հայոց և սուլթանին փոխադարձ հարաբերությունները հիմնական փոփոխության ենթարկվեցան։

Հայկական ըմբոստացման տասնհինգ տարիներու պատմության վրա ինչ դատաստան որ ալ ըլլա, բայց և այնպես՝ անհերքելի ճշմարտություն մը կը հրափայլի։ Ուժ մը կա, որուն տերը արհամարհել կարելի չէ։ Նորագահ սուլթան մը իր ոտքերուն տակ չարչիներու խռան մը գետնամած պիտի չտեսնե, այլ՝ իր դեմը ժողովուրդ մը։ Եվ եթե սուլթան Համիտ մը իր բոլոր հնարիմաց մտքովը և ծախսած միլիոններովը չկրցավ արգիլել պայթումն հայածիգ ռումբին իր գլխուն վերեն իսկ, իր հա-

ջորդը, Բեշատ էֆենտի, եղբորմեն ավելի խորագիտության հավակնությունը կրնա՞ ունենալ։

Ու, շատ հավանական է, որ նոր վարչության մը օրով, Պապը Ալին երկրին կառավարական իշխանությունը իր ձեռքը անցընե։ Եվ գիտենք թե Թուրք փաշաները իրենց կաշիին համար ո՜րքան հոգածու, խնամատար են։ Եվ այն օրը, որ վստահություն ունենան, թե այդ կաշին հայասլաց գնդակներն կրնա ծակծկոտել, տարակույս չունենանք թե լավագույն պիտի համարին իրենց ականջներուն թմբանը մեր բողոքներուն առջև բանալ, քան թե իրենց կուրծքերը մեր հրացաններուն առջև։ Անշուշտ ռումբին ալ վերապահմամբը։

Եթե քառասուն տարի մը առաջ ալ մեր Պատրիարքները, երբ ժամանակին Սատրազամներուն[29] Հայաստանի հարստահարության համար թաքրիրներ կը ներկայացնեին, դյուրություն ունենային հարգալիր անուշ լեզվով մը հայտարարել, որ «իրենց թաքրիրներուն տրված գոհացումը, վաշճիններուն (իմա՝ դիվանագիտորեն՝ հեղափոխական) գործը պիտի խանգարեր և անհնարին պիտի ըներ անոնց կողմեն ո՛և է գնտակաձգություն», հավանական է որ նախարարները մտածեին, թե՝ ասանկ գործերու համար իրենց մորթը վտանգել չէր արժեր։

Անշուշտ չենք ըսեր, թե նոր սուլթան մը նստած չնստած, հրացան պարպելու, ռումբ պայթեցնելու ելլանք։ Ընդհակառակը, ամենքս ալ պետք է աշխատինք անուշ լեզու ըլլալ, և անկեղծորեն։ Բայց գիտնանք նաև, որ Անգլիացիները կ՚ըսեն թե «անուշ լեզու եղիր և ձեռքդ բիր մը բռնե, հեռուները կ՚երթաս»։ Հին անցյալի մը մեջ Թուրքերուն հետ շատ անուշ լեզու եղանք, բայց ո՛և է հաջողություն ձեռք չբերինք, վասնզի ձեռքերնիս բիր մը չկար։ Ետքեն, բիր մը ունեցանք, սակայն այն ատենն ալ անուշ լեզու չեղանք։

«Լեզուն անուշ, բիրն ամուր», Հայը Թուրքիո ապագա վարչական նորոգ—կազմակերպության մեջ իր վիճակը քիչ շատ բարվոքելու վստահությունը կրնա ունենալ։..

## ԽՈՍՔ ՀԱՍԿՑՆՈՂԸ

Հեղափոխական շարժումը Հայաստանի համար կուզեք մահաբեր համարեցեք, կ՚ուզեք փրկարար հռչակեցեք, շարժումը շարժում է, ո՛չ ոք զայն դադրեցնելու կարողությունը կը վայելե։ Այս ճշմարտությունը, երբ ամենուս մտքին մեջ խորամուխ թափանցե, այն ատենն է, որ իրականությունը դեմերնիս կանգնած կը տեսնենք ու կը պարտավորվինք խորհիլ,

թե ինչպես պետք է վարվիլ Անխուսափելիին հետ։ Կայծակը չնչել մտաբերա՞ծ են երբեք, բայց շանթարգելը հնարած են։ Հորդահոս ողողիչ գետը ցամքեցնել ո՞վ մտքեն անցուցած է— և ո՞վ կ'ուզեր զայն ցամքեցնել, հնարավորության պարագային իսկ—բայց թումբ կը բարձրացնեն և ոռոգման առուներ կը բացվին։ Հայկական Ընդհանուր Բարեգործական Միության հիմնադիրները, Հայաստան հաց հասցնելու համար միթե հեղափոխական շարժումին դադարո՞ւմը պայմանագրեցին նախապես։ Ու այն պահուն որ Հայ-Հայրենիքին տնտեսական զարգացմանը նպատակավ լայնախորհուրդ ծրագիրներ կը հղացվին Միության Վարիչներեն, այդ պահուն Հեղափոխականությունը արդյոք «ընդ նոճյաց հովանեաւ» կը նիրհե մահաքուն ննջմամբ։ Կյանքը տեսնենք ա՛յնպես ինչպես որ է ու հետը վարվիլ գիտնանք, ամեն պարագայի մեջ։

Հայ ժողովուրդը այսօրվան օրս խաեկանով մը կ'ապրի. Ազատության անշիջանուտ տենչը մեծեն պզտիկը ամեն Հայու սիրտ, ստրկության այս կյանքին մեջ, տաքուկ կը պահե կը պատսպարե մահվան սառնացումին դեմ։ Սակայն ո՞վ չիյտե, թե ո՛ւէ ժողովուրդ դարերով կրնա քաշկռտվիլ օտար բռնապետության լուծին տակ, բայց եթե քանի մը օր անոթի մնա, կը մեռնի կ'երթա։ Ստրկաբար ապրող ժողովուրդ մը օրին մեկը կ'ազատագրվի, բավական է որ տևե ու ապրի, օրինակ՝ Հունաստան, Պուլկարիա, Կրետե։ Մեռնող ժողովուրդը հարություն առնելու համար սպասելու է մինչև որ Քրիստոս գա «ի դատել զկենդանիս և զմեռեալս»[30]...

## ԴԵՊԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Անոնք որ կ'առարկեն, թե՝ Հայկական հեղափոխական շարժումը Թուրքիո իշխանությունը Հայ ազգին դեմ գրգռեց, կարծեմ թե անոնք քաղաքականությունը միակողմանի տեսությամբ կը քննեն։ Պիտի հիշեցնեմ ինչ որ տարիներ առաջ «Նոր կյանք»ին մեջ կը գրվեր։ Թուրք իշխանությունը Հայոց դեմ կը գրգռվեր, վասնզի Հայերը իրենց բնակավայրին բարեկարգումը կ'ուզեին։ Արդ՝ Թուրքին համար «բարեկարգություն» և «անկախություն» հոմանիշ բառեր կը համարվին։ Այդ բարեկարգության պահանջումը Խրիմյանին օրովը սկսավ[31], և անկախության մոտեցող ծրագիրներն ալ Ներսես Պատրիարքին օրովը պատրաստվեցան և ներկայացվեցան։ Թուրք իշխանությունը ուղղակի մեր այդ նպատակին թշնամի էր և ո՛չ թե անոր ժամանումի միջոցներուն, որոնք երկրորդական կարգի կարևորություն կրնան ունենալ իր աչքին։ Միթե Թուր-

քը չի՞ գիտեր, թե՝ իրեն համար վտանգը Եվրոպական պետություններեն է։ Փորձառությունը բաներ մը սորվեցուցած ըլլալու է իրեն։ Ռումանիա, Հունաստան, Սերպիա, Պուլկարիա, Լիբանան պատմություններ ունին, որոնք չեն մոռցված. ու երեկ՝ Կրետեի, այսօր՝ Մակեդոնիո համար կը կրկնվին[32]։ Եթե Թուրք իշխանությունը գրգռելէ զգուշ մնալու էինք ու չմնացինք, այդ մեղքը Ներսես Պատրիարքին, Օտյանին և բոլոր այդ կարգի նշանավոր պետական անձնավորությանց վզին կապեցեք։ Բայց անոնք ալ չսխալեցան։

Թուրքիո Հայոց վիճակագրական պատմությունը որքան որ ալ դրեթե գոյություն չունի, բայց և այնպես իրողությունները չեն մոռցված։ Գիտենք թե Թուրքիա Հայ ցեղը ահեղօրեն տկարացած ու նվազած է մեկ երկու դարու մեջ։ Պոլիսը, Իզմիրը Հայաստան չեն։ Եթե չեմ սխալիր, Ստեփան Ոսկանի «Արևմուտք»ն էր, որ 1855ին կը հրատարակեր[33], թե՝ Բաղեշի կողմերը հայաբնակ գեղերու համախմբում մը որ 15,000 հայ բնակիչ ուներ, այս թիվը 3,000 ի իջած կը տեսնե Քյուրտերու հալածանքներեն։ Ու երբ այս բարբարոսությանց մասին կուսակալի մը դիտողություն կը ներկայացվի, կը պատասխանե թե՝ «ի՞նչ կրնանք ընել. լեռները առանց վագրի չեն կրնար ըլլալ»։

* * *

Հայաստանի ապագան, Հայ ազգին ապագան հիմակ շա՜տ ավելի երաշխավորյալ է, շա՜տ ավելի ապահովյալ է, քան թե՝ 1877են առաջ. վտանգի ինքնապահպանության անհրաժեշտ հարկը այսօր գիտակցորեն ըմբռնած ենք և ոչ թե լոկ բնազդաբար կը զգանք։ Ու երբ ժողովուրդ մը ինքզինքը պաշտպանելու գիտակցությունը խորապես կ՚ունենա, առաջադրյալ նպատակին ժամանումի միջոցներն ալ կը ստեղծե, անշուշտ՝ շատ մը խարխափումներե հետո՝ «խարխափում»ը՝ «փորձառություն» ալ կրնանք կոչել։

Դարերով ընկճված, ստրկացած ժողովուրդ մը ազատության կռվին մեջ փորձառություն չի կրնար ստացած ըլլալ։ Փորձառությունը գրքի մեջ չեն սորվիր. ինչպես մարդ մը նույնպես ժողովուրդ մըն ալ իյնալով ելլալով փորձառու կ՚ըլլա։ Երեսուն տարվան մեջ ըստ բավականին փորձառություն ունեցանք, որմեն գործնականապես օգտվելու ժամանակն է հիմակ։ Եվ, ուզենք չուզենք պիտի օգտվինք. դեպքերը մեզի խոհական ըրին։

Փորձառության բարերար թելադրանքին շնորհիվն է, որ այսօր Հայ ժողովրդին ամեն կազմակերպությանց մեջ միաբանության համար անդիմադրելի ուժգնությամբ գաղափար մը կը տիրե…

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1898, նոյեմբեր 22, Աղեքսանդրիա

*...Եվ հետո ինչու ամեն պրակի մեջ քաղաքական տեսություն մը չդնել հանդեսի վայել խոհական ու լայն մաքով մը։ Ըստ իս մեր ճակատագիրը այնքան սերտիվ կցված է միջազգային քաղաքականության, որ ազգային հանդես մը, կարևոր քուկինիդ նման[1], և մանավանդ արտասահման հրատարակվելու բաղդավորությունը վայելող, չկրնար խուլ պահել հասարակությունը օտար քաղաքականության վրա՝ առանց իր պարտականության կեսը անտեսելու...*

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1899, հունվար 21, Ալեքսանդրիա

*...Րաֆֆին ազգային գիտակցությունը արթնցուց, մեր քնացող հայրենասիրությունը արծարծեց, հրահրեց։ Րաֆֆին ըմբոստացումի «Կայծեր»-ը ցանկեցուց հոս հոն հայ հոգիներուն մեջ, որք բռնկեցան. ասով վեհ հայրենասերի ու հանճարեղ վիպասանի գործ տեսավ ինքը. իր դերը հոն կը վերջանա։* Il a été un grand remueur d'âmse[2]։ *Հայ մտավորականության,* ինթելիկենցիային *կ'իյնար հայ հայրենասիրության պոռթկումը, զոր ան գրգռած էր,* canaliser[3] *ընել դեպի իրականալի ազգային ըղձանքի մը, դեպի լավ հասկցված ու լավ ևս* ուղղված *նպատակի մը։ Րաֆֆին իր գործը կատարեց. մենք մերինը չգիտցանք, չկրցանք։ Սիրելիս, քաղաքական ծրագիրները վեպերե չեն քաղվիր, ներշնչումները, մայր-գաղափարները այո՛, Քավուր Ալֆիերիի վեպերուն մեջ չգտավ իր աշխարհավարության ուղղությունը[4]։*

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1899, մարտ 8, Աղեքսանդրիա

*...Հիմա դուն ալ համամիտ ես նամակիդ մեջ, թե քաղաքական ծրագիրները վեպերե չեն քաղվիր, թե Րաֆֆին էր, որ կրակը դպցուց հայ հայրենասիրության պատրույգին, թե մենք դեռ հետնյալ ժողովուրդ ունեցանք այս հեղափոխականները միայն, որուն արժանի էինք։ Համամիտ՝ ո՞ւր ուրեմն ձեռքդ, որ սեղմեմ...*

## ՊԱՏԿԵՐԻՆ ՏԵՂ

*...Դուն, հայ մանկիկ, Հնարավորությունն ու խոստումն ես վաղվան՝ որ աղվոր պիտի ըլլա. արիացի՛ր, սիրելի փոքրիկ, ու հանապազ սիրե Լույսը՝ ինչպես քու երեցներդ Ազատությունը սիրեցին։*

*Չէ՞ որ ըսիր. «Պիտի չկարդացնե՞ն մեզի...»*։ Դուն բնազդորեն կը փնտրես այն մտավոր ուժը, որ վաղը մանավանդ պետք պիտի ըլլա քեզի բարձրագույն պայքարները մղելու Նորակառույց աշխարհին մեջ...*

## ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄՅԱՆԻՆ

1929, հունիս 27, Փարիզ

*...Հայ երկրին աշխարհագրական անհնարին դիրքը,— ակներև է տեսակետ՝ «սկիզբն չարյաց». Հայ քրիստոնյա ժողովրդին Թիրախ առնելության դարձած լինելը, ասիական արյունարբու ու այլադեմ ցեղերու կողմանե։ «Ի վիշապաց միջի պաշարեալ կամք», կ՚ըսե հայ պատմիչը։*

*Օտար բռնակալ տիրապետության մը դաժան ու վայրագ լուծը։*

*Մեր ծննդակից անմիաբանությունը։*

*Ու վերջին ժամանակաց մեջ՝ Հայ հեղափոխության խելառ ու եղերական արկածախնդրությունը։*

*Արդ՝ ի՞նչ է կացությունը այսօր։ Վերոգրյալ չարաշուք պատճառները կը շարունակե՞ն միթե մեր ազգային գոյությունը վտանգել. ամենևին ոչ։ Բնա՜վ երբեք։*

*Ոչ մեկ սպառնալիք հայ սահմաններուն վրա։*

*Հզոր ու մեծ երկրի մը պաշտպանությունը հայ ժողովրդին վրա. որ իր շինարար հանճարով ազատորեն կը զարգանա ահա։*

---

* *Հայ որբուկին այս անմոռանալի խոսքը հիշատակված է Արև լրագրին մեջ[5], ականջալուր թղթակցե մը հաղորդված։*

## ԴՈՒՆ ՄԵԶԻ ԲԱՐԵԽՈՍ...

*...Դուն, Պայրըն, բանաստեղծդ անմահ, դուն որ քնարը բազկիդ ու սիրտդ բարձր՝ անցար այս աշխարհես, տաղերգելով բոլոր սերերը, բայց քու «Երգ երգոց»-դ ձոնեցիր ազատագրությանը երկրի՛ մը ուր աստվածներ բնակեր էին[6].*

*Դուն, որուն քնարեն չեփորի ձայներ լսեց տիեզերքը մերթ, և ո՜վ հրաշք բանիդ, խլրտաց պահ մը բռնակալության դաժան ու խավար ուժերուն դեմ.*

*Դուն, որուն շրթներեն ծորած հավիտենական մեղեդիներուն հափրշտակության ունկն կը դնեն տառապող հոգիները, մերինին պես, ու կ՚արիանան տակավ ըմպելու իրենց բաժակը դառնության.*

*Դուն, վերջապես, որ՝ Ելլադայի երիցս երանյալ ափանց վրա՝ զինվորը, դյուցազնն ու զո՛հը եղար հրաշափառ հերոսամարտի մը, ու խոյացար անդրեն, հեշաթռիչ սլացումով, սավառնելու՝ բարձր քան Արես՝ Ողիմպոսի կատարը, ուրկե իջեր էիր պահ մը՝ մահկանացուներուս զմայլանքին համար, դուն, այո, ո՜վ երգիչդ երկնաճեմ ու վեհ, դո՛ւն բարեխոսե մեզի համար Տիրոջը առջև, որպեսզի գթա՜ մեզի։*

*Բարեխոսե...*

*Եթե լսեիր դուն, մեր ցավերուն շշունջը պիտի թրթռացներ քու տավիղդ Եվողյան...*

## ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

*...Ստույգ է, Հայ ազատագրության հաղթանակը չտարվեցավ Արևմուտքի ճակատին վրա, ուր դուք մաքառեցաք, մարտնչեցաք ընդերկար. Հյուսիսեն եկավ մեզի, վե՜րջապես, Աստվածային Փրկությունը[7], զոր դարեր իզուր կանչեր էինք մենք կուլելով ու լալով և որ ձեր բովանդակ կյանքին մեծ երազն էր եղեր...*

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

## ՈՒԹԸ ՏԱՐԻ ԵՏՔԸ

*...Զոլայի եղերական վախճանը խորհրդավոր բան մը ունի իր մեջը[1]. այս այն մահը չէ որ ճակատաբաց կուգա առջևդ իր գալուստը առաջուց իմացնելով և միջոց տալով, քեզի որ պաշտպանես ինքզինքդ իրեն դեմ. ոչ, այլ լռության ու մութին մեջ հասնող մահն է որ իր ներկայությունը զգուշությամբ կը պահե ու քնանալուդ կը սպասե վրադ խոյանալու ու զքեզ չքացնելու համար. մեկ բառով, նենգությունն է, կեղծիքն է ան, որոնց դեմ Զոլա այնքան սաստկությամբ մաքառեցավ։ Նենգությունը՝ հաղթող վերջ ի վերջո, հարկավ այս վհատեցուցիչ դասը չէ որ կը բաղեմ այս մեծ կորուստեն, բայց այս աղետը խորհրդանշանի մը պես կ՚երևա աչքերիս...*

*Զոլան... իր հանդիսատը, իր մեծ գիրքը, գինքը շրջապատող բոլոր համակրությունները առանց վարանելու ձգելու կը հոժարի, հանիրավի դատապարտված հրեայի մը անմեղությունը պաշտպանելու համար...*

## ԷՋԵՐ ՈՒՂԵՎՈՐԻ ՄԸ ՕՐԱԳՐԵՆ

* * *

*Այս կիրակի հանդես կա այստեղ, սգահանդես. ո՛չ միայն այստեղ, այլ աշխարհիս ամեն կողմը, գոնե այն ամեն տեղերը ուր կղերամտությունը ու* tartuffismeը[2] *չի տիրեր։*

*Ֆերերի՝ ազատամտության մարտիրոսին՝ մահվան տարեդարձն է[3]։ Ինչ որ գաղափարի մարդ կա Պրյուքսելի մեջ, ամենքը վազած եկած են իրենց հարգանքը բերելու այդ մեծ հիշատակին։*

*Գողգոթայեն մինչև Մոնժուիք[4]. այս է կղերամիտ ոգիեն առաջնորդվող ճամփան զոր Մարդկությունը կտրած է շուրջ քսան դարերու մեջ։ Հոն՝ զոհ, հոս՝ դահիճ ըրավ կղերը քրիստոնեությունը։ Ամեն պարագայի*

մեջ քսաներորդ դարուն մեջ Ֆերերի սպանության չափ զարհուրելի ոճիր մը դեռ չէր գործած ան. մեկ սփոփանք մը միայն, Ֆերերը զարնող գընդակները Ֆերերի մարմինը ծակեցին անցան ու գացին կղերականությունը զարկին...

Սգահանդեսը հոս կատարվեցավ պատկառանքով համակված բազմության մը ներկայությամբը։ Ես ալ հոն էի իբր զավակ ի վաղուց խավարամտությունը մերկացնող ազգի մը։ Ասկե երեք դար առաջ հոս գըլխատվեր էին Էկմոնթի և Հոռնի կոմսերը*, Ֆիլիփ Բ-ի հրամանով. ասոնք խղճի ազատության զոհեր էին։ Ֆերերի անունով կազմված ընկերակցությունը մարմար մը բերավ զետեղեց արքային տանը սեմին տեղ։ Ահա ինչ որ ոսկի տառերով գրված է այս քարին վրա։

«Այս հիշատակարանը կը նվիրվի ի պատիվ Էկմոնթի և Հոռնի կոմսերուն, որոնք ճիշտ այստեղ գլխատվեցան, խղճի ազատության համար մաքառելնուն պատճառով: Նվեր՝ Ֆերերի հիշատակին կազմված ընկերակցության կողմե. Ֆերեր՝ որ անցյալ տարի, այս օրը մահացավ միևնույն դատին համար»:

Էկմոնթի և Հոռնի կոմսերուն արձանները Բրյուքսելի մեկ հրապարակին վրա կանգնված են։ Որոշված է որ Ֆերերի արձանն ալ Բրյուքսելի ուրիշ մեկ հրապարակին վրա կանգնվի։ Ահա թե ինչպես կղերական դահիճներու ձեռքով մեռնող զոհերը կը վերակենդանանան։

Ու մտքովս վերադարձ մը ըրի մեր հեք ազգին վրա, մեր սուտ եկեղեցասերներուն, մեր ամբարիշտ բարեպաշտներուն վրա...

* * *

Մարոքի վեճը միայն երկու պետություններու վեճը չէ[5], այլ երկու որոշ դասակարգերու պայքարն է. Վայելողներու և Աշխատողներու մարտընչումն է, երբեմն արյունոտ դրվագներով ընդհատված, նոր եռանդով, նոր պոհաբերությամբ հառաջ տարված պայքար։

Մարոքի համար Գերմանիո և Ֆրանսայի մեջ պատերազմը Ի դարուն մեծագույն ոճիրը պիտի ըլլա, և մինչդեռ դրամի մարդիկ անհագ չարաշահություններու համար արյուն թափելու հարկը կը զգացնեն, աշխատանքի մարդիկ եղբայրասպան մարտին մեջ կը նետվին, կարծիլեն։

---

* Ս. Հ.—Կոմս Լամորալ Էկմոնթ, ծն. 1522, փոխարքա Արդուայի և Ֆլանտրիո, 1568-ին գլխատված՝ իբրև վարիչ հոլանտական ապստամբության, Սպանիո դեմ։ Կյոթե այս անունով ունի հինգ արարնոց ողբերգություն մը, որուն համար Պեթհովն գրած է «Ուվերթյուռ» մը։—Կոմս Ֆիլիփ Հոռն, ծն. Նիվել 1518. կառավարիչ Կելտրի, գլխատված Էկմոնթի հետ, նույն օրը և նույն տեղը։

Ի՞նչ վճռական ապացույց հաստատող որ ընկերվարականները ուրիշին ինչքը գրավելու համար պատրաստված արյունարբու մարդիկը չեն, այլ այդ կարգի մարդոց դեմ ելլողները իրենք են. Ընկերության, Մարդկության գերագույն շահերը և էն բարձր վախճանները պաշտպանողները իրենք են։ Գերմանիո մեկ ծայրեն մյուսը կազմված ցույցերը պատմական նշանակություն մը ունին. անոնք դիվանագետներուն և սեղանավորներուն կազմակերպած միջազգային դավադրությանց չախչախումը կը նշանակեն։

Ի՞նչ բարեշրջություն մարդկային դատաստաններու և ըմբռնումներու. Նափոլեոնյան դյուցազներգությունը, արյունի մուխի մեջեն, ծվիկ ծվիկ դրոշակներու պլլված հաղթություններու ապշեցուցիչ շարքը՝ դար մը ետք ահավասիկ՝ իր պատիր և շլացուցիչ դեմքը կը կորսնցնե. և Ֆրանսայի պես մեծ ազգի մը ճակատագրին վրա խաղցված ահավոր և ոճրապարտ բախտախաղի մը պես կ՚երևա մեր աչքին։

Այսօր ամենեն կույրերն անգամ պետք է ճանչնան ընկերվարականներու մատուցած մեծ ծառայությունը խաղաղության դատին, որ քաղաքակրթության դատն է. Բանակին դեմ Բանակ. մին՝ արյուն թափելու և մյուսը՝ թող չի տալու համար։

Տառապանքներով լեցուն դարին հավերժական պատիվը ըլլա ասիկա։

• • •

Փարի՜զ, մեծ դարբնոցը ուր մարդկությունը առաջնորդող գաղափարները կը ծեծվին, կը ձևակերպվին շարունակ. հոն՝ որ Դժոխք մը ըլլալու էր և որ Արքայություն է իրոք. արվեստական Արքայություն՝ բայց հազիվ տարբերող իրականեն. անհամեմատ կերպով դյուրամատչելի և աժան, ինչպես արվեստական շաքարը, խահվեն, մետաքսը, փըղոսկրը՝ իրենց իսկականեն։

Միանգամայն երկունքի քաղաք նոր, լավագույն աշխարհի մը ցավատանջ երկունքը որ հոս բարձրաձայն խնդուքով մը ծածկված է։

Այս է իմ տպավորությունս։

Ըսի որ նոր գաղափարները կը դարբնվին հոս, բայց քիչերը կը ծնին այստեղ. մեծ մասով Անգլիայեն, Ալմանիայեն կուգան. Փարիզ ձև և գույն կուտա, շնորհալի կ՚ընծայե զանոնք։

Ռամկավարական վարդապետություննե՞րը. Անգլիայեն եկած են. Made in England. Ընկերվարությո՞ւնը. Ալմանիայեն. Made in Germany. Փարիզ՝ ատոնց, ինչպես ուրիշ նոր միտքերու, սիրուն պատմու-

ճան մը և բեհեզե վերարկու մը կը նետէ վրան։ Այնպես որ առանց անպատեհության, այս մայրաքաղաքին վրա մեծ պիտակ մը կրնա փակցըվիլ. այն՝ որուն քայլափոխին կը հանդիպիս արդեն,

## Robes et Confections.

Եվ մենք, Հայերս, որ համոզված ենք, թե բոլոր հեղափոխական գաղափարները Ֆրանսացվոց մեջ կը ծնին, մենք որ Անգլիացիին պահպանողականությունը, Ալմանիացիին չափավորությունը, Ֆրանսացիին ծայրահեղությանցը դեմ կը ճակատեցնենք, մոռնալով որ Ֆրանսան Լուի ԺԶը Կիյոթին ղրկելե[6] դար մը առաջ՝ Անգլիան Շարլ Ա-ը գլխատած[7] և Հանրապետությունը հռչակած էր. առանց հիշելու որ Ֆրանսացի ոևէ մատենագիր գործավորական կյանքին դժբախտությունները գիտականապես դեռ չի քննած՝ Քարլ Մարքս իր հոյակապ գործը, ընկերվարության Ավետարանը, «Դրամագլուխը»[8] հրատարակած էր, այսօրվան տընտեսագիտության հիմերը դնելով. և առանց խորհելու որ գործավորներու հանգստության Թոշակը, դեռ վերջերս միայն ընդունված Ֆրանսայի մեջ, Մեծն Բրիտանիա և Գերմանիա հաստատված էր շատոնց. եկամուտի վրա տուրքը՝ կես դարե ի վեր Մեծին Բրիտանիո, քիչ մը պակաս ատենե ի վեր Ալմանիո մեջ ընդունված, Ֆրանսայի մեջ դեռ հաջողված չէ մուտ գործել։

Անվիճելի փաստեր այս բոլորը ցույց տվող որ Ֆրանսան՝ իբրև թե հառաջապահը կամ ծայրահեղը այս կարգի աղիտաբեր մոլորումներու մեջ, ինչպես կըսենք մենք, ամենեն երկչոտն ու հետամնացն է։

Ասոր նման դեռ ո՜րքան սխալ կանխամտածումներ տեղավորված են մեր մտքերուն մեջ, որքան մեզ միշտ ծուռ, երբեմն անհեթեթ կամ ծիծաղելի եզրակացություններու կառաջնորդեն։

Ի՜նչ մեծ, ի՜նչ հիմնական սրբագրության կը կարոտի հայ մտայնությունը։...

## ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՄԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հետադիմությունը ու խավարամտությունը մեր մեջ հարձակողականի սկսած են, հետևելով պատերազմական արվեստի այն սկզբունքին՝ որ կ՚ըսե «լավագույն պաշտպանողականը հարձակողական շարժումով կ՚ըլլա»։ Ասոր մեջ հանդուգն բան մը կա. զարմանալի՝ ոչինչ։ Մեր ազգը այս տեսակ կռիվներու շատ անգամ ականատես եղած է. խավարը լույսին առջև դյուրությամբ չի հրաժարիր իր դաժան ու մութ տիրապետութենեն. քայլ առ քայլ կը նահանջե անիկա։

Միմիայն եթե Պոլսո վերջին յոթանասուն տարվան պատմություննիս աչքե անցնենք՝ նմանօրինակ երեք մեծ բախումներ կը տեսնենք իսկույն:

Առաջինը՝ արհեստավորներու համքարավոր ընդվզումն է ամիրաներու դեմ[9]. միմիայն ժողովրդական իրավունքներու պայքար: Երկրորդը՝ Օտյաններու, Ռուսինյաններու, Ֆրանսայի մեջ ուսում առած մտավորականներու, 48-ի երիտասարդներու երևումն է. մտքի պայքար և լեզվի պայքար: Երրորդը՝ Միացյալ Ընկերությունները կազմող երիտասարդության ասպարեզ նետվիլն է՝ Արևելքով, այն ատենի Արևելքով ըսել կ'ուզեմ[10], Հայրենիքով[11], այն օրերուն Հայրենիքովը, և Մասիսով: Դաստիարակության մեծ գործն է, որ Հայ Հեղափոխականության դաշտը պատրաստեց. մտավորական և քաղաքական պայքար:

Ես՝ ալևորած մարդ՝ այդ երրորդ ապստամբության սերունդին կը վերաբերիմ: Ապստամբություն ըսի, որովհետև ամեն ազատական շարժում ապստամբություն մըն է: Ես այդ սերունդին կրտսերն եմ. իմ երեց ընկերներես շատերը չկան մեջտեղ. ոմանք մեռան, ոմանք ազգային գործերու ասպարեզեն քաշվեցան: Իրավունք ունիմ Ոսկանին մեկ գեղեցիկ տողը իմ անձիս պատշաճեցնելու:

**Իմ հարքս անկան, և ես ահա ծերացա:**

...Եթե նմանություն մը ընել ներելի է, ես ժողովուրդը սպիտակ լույսը պիտի կոչեմ, այն՝ որ զանազան գույնե շառավիղներով շինված է. նմանությունը ճիշտ է, քանի որ ժողովուրդը քաղաքակրթական բոլոր ձգտումներուն ամփոփումն է. երիտասարդությունն ալ կարմիր լույսն է, այն՝ որուն մարդուս աչքը կ'երթա իսկույն, այն՝ որ կարծես թե ամենեն առաջ կը քալե: Այդ երկու գույները, որ Օսմանյան ազատագրության գույներն են[12] ապաքեն, պետք է որ անբաժան մնան իրարմե. երիտասարդությունը՝ ժողովրդին հետ: Ատոր մեջն է Հառաջադիմությունը: Բայց ասով չի լմնար:

Ասկից երկու ամիս առաջ Պելճիքա ճամբորդած պահուս, Պրյուքսելի մեկ հրապարակին վրա արձան մը տեսա նոր կանգնված[13]: Գիտեք, որ Պելճիքայի մեջ կառավարությունը կաթոլիկներուն ձեռքն է. կարծեցի որ այս արձանն էլ կառավարության կուսակից մեկու մը արձանն էր: Ո՜րչափ մեծ եղավ զարմանքս, տեսնելով որ ընդդիմադիր կուսակցության, ազատական կուսակցության, պետին՝ Ֆրեր Օրպանի արձանն էր ան: Հպարտ gesteով մը ձեռքը վեր բարձրացուցեր էր, երդում մը ընելու համար կարծես: Ու պատվանդանին վրա՝ հետևյալ վերտառությունը կար-

դացի. «Մինչև վերջին շունչս... մինչև վերջին շունչս ազատական պիտի մնամ»։

Ահա՛ կոչումը որ կ'ընեմ ձեզի, հայ ժողովո՛ւրդ, հայ երիտասարդու-թյո՛ւն, մինչև վերջին շունչերնիդ ազատասիրտ ու ազատամիտ մնացե՛ք։

## <ԶՈՀՐԱՊԻՆ ԾԱՌԸ[14]>

«Հայրենակիցնե՛ր,

«Ամեն ազգ, ամեն ժողովուրդ իր տոները ունի, ո՛րը թագավորության մը ծնունդը, ո՛րը ազատության մը ձեռք բերվիլը, ո՛րը պատերազմի դաշտին վրա շահված հաղթանակ մը կը տոնե։ Ասոնք քաղաքական նշանակություն ունին։ Մենք այստեղ ժողվվեր ենք մեր ազգային լեզուն տոնելու. անիկա քաղաքական չէ, այլ քաղաքակրթական հանդամանք մը ունի։ Քաղաքական տոները հաճախ արյան բիծեր կունենան իրենց վրա, մեր տոնածը զերծ է այդ տեսակ ցավե։ Թագավորությունները կ'իյնան, ազատությունները կը ջնջվին, հաղթանակները հաճախ պարտություններու կը փոխվին, բայց լեզուն կը մնա, ազգի մը ճակատագրին պես անջնջելի։

Հայ տառերուն գյուտովը Հայ լեզուն ևս ազատելով իր արկածալից կյանքեն, հաստատուն ձև մը ստացավ. ահա՛ ասոր համար է որ Հայ լեզվի տոնը կը միանա Հայ տառերու տոնին հետ...»

«Ճշմարիտ հանճարը... կը զանազանվի սովորական հանճարներեն։ Այս պատճառով մեր նախնիքը այդ գյուտին մեջ հրաշք մը տեսած են, անիկա նկատած են ընծա մը, միակ ընծան այն ազգին. որուն ա՛յնքան աղետներ տված է։...

«Թե՛ Հայ լեզվի և թե Հայ տառի մասին աշխատողները լայնախոհ ազատականությամբ մը կատարած են իրենց գործը, նեղմիտ չեն եղած և մեր դրացի ազգերեն փոխառություններ ըրած են։ Ահա՛ այդ փոխառություններուն է որ կը պարտինք մեր գրական ճոխությունը...

«Մեր Եկեղեցին տառերու գյուտը ընողները սուրբերու կարգը անցուց։ Ի՞նչ է սրբությունը։ Միթե եկեղեցիներու և վանքերու մեջ առանձնանալ, ծոմ պահել... Ո՛չ։ Սրբությունը ա՛ն է որ մարդ ուրիշներուն ցավերը կ'ամոքե և իր անձը մոռանալով անոնց համար կ'աշխատի...

«Եթե քննենք ազգի մը իյնալուն պատճառները, պիտի տեսնենք թե այն ազգը, որ եսականությամբ օժտված է, ո՛րքան հույս և կենսունակություն ալ որ ունենա իր մեջ, նորեն կ'իյնա այդ ազգը։ Իսկ երբ եսակա-

նութեան տեղ այլասիրութիւն և ազգասիրութիւն տիրե, ո՛րքան ալ հուսահատ ըլլա այդ ազգը, նորեն չմեռնիր (ծափեր)։

«Ո՞վ ենք մենք ազգերու ժողովին մեջ. պապուկ մը, աղքատ մը։ Ֆրանսացի քանաստեղծ մը կ՚ըսեր. «Պապուկները, հա՛, բայց անոնք ալ իրենց ցանձերը, իրենց երազները ունին»։

«Մենք ալ իբրև ազգ, մեր հույսերը, մեր հիշատակները և մեր երազները ունինք, և այդ հիշատակը անշեջ պահելու համար է որ մեծ տոնը կը տոնենք։ Եվրոպացի գիտնական մը ըսած է. «Մեծ կայսրութիւններու անկման պատճառները իրենց մեջն են»։ Ես պիտի ըսեմ.

«Մեզի պես պզտիկ ազգերը իրենց վերականգնումի հույսերը իրենց հոգիին, իրենց սիրտին և այսօրվան պես իրենց հիշատակներուն մեջ կը կրեն» (ծափեր)։

ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆ

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

189<8>, հունվար 14, Լոնդոն

*Սիրելի Արշակս*

*Երեկվան քեզի դրած ընդարձակ նամակես ետքը պետք էր սպասեի քենե պատասխանի մը, բայց պետք է հաղորդեմ քեզի այն առագին տակնուվրայությունը, որ մեջս առաջ բերավ Զոլային նամակը Ֆորին*[1]*։ Ա՜խ, ասանկ սարսուռ քիչ զգացեր էի։ Ի՜նչ մարդ-ի՜նչ մարդ։*

*Այսօրվան Ֆրանսային էն մեծ մարդը։ Ա՜լ* converti[2] *մըն եմ, իրավունք ունի ան, չէ՞, չի սխալիր կոր։ Երազատեսի աչքով մը կը տեսնա կոր ան ճշմարտությունը, ան մարգարեի աչքերով, որոնք չեն սխալիր։*

*Հիմակ կը դողամ կոր իրեն համար։ Ի՞նչ պիտի ընեն բոլոր այդ շղթայազերծ վնասված գայլերը իրեն դեմ։ Բայց ի՜նչ արի մըն է ան։ Ինքզինքը պիտի պաշտպանե, և լավ պաշտպանե։*

*Ան ի՜նչ վերջաբան մըն էր իրը։ Տանտոնեն ու Ռոպեսպիերեն մեծ հեղափոխական մըն է ինքը։ Ընկերությունը, որուն միակ զորավիգը հիմակ բանակն է, ամեն խորհողներեն դատապարտվելեն ետքը, երբեք ասանկ ահավոր հարված կրած չէր...*

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1898, փետրվար 1, Լոնդոն

*Մաքիս միակ զբաղումը, գործես զատ որ ամբողջ ժամանակս կ՚առնե կոր, Զոլային գործն է։ Ես կը փափաքիմ սրտանց, որ Զոլան բանտարկության դատապարտվի ու չընդունելով* L'application de la loi Béranger[3]*, զոր անշուշտ պիտի ուզեն ի գործ դնել իրեն համար, բանտ մտնե ու մնա։ Պետք է ասիկա։ Ֆրանսայի խղճին վրա պետք որ նստի այս քարը ու ճնշե զինքը։ Ու եթե կարելի ըլլա, որ Զոլային արյունը վա-*

գե, ա՛լ ավելի լավ։ Խորապես կ՚ըղձամ ասոր։ Անոր արյունովը կարմրած հեղափոխություն մը կ՚ուզեմ, որ ելլե Ֆրանսա ու տակնուվրա ընե ամեն բան։

Ասոնք մենավորի, ինքզինքին հետ միս մինակ մնացած ու իր մտածումները ինք իր մեջը հոլովելով զայրացած մարդու բաղձանքներ ըլլան թերևս, բայց սա իրավ է, որ ամեն ժամանակե ավելի կ՚ըղձամ կոր արդի ընկերության ջախջախմանը։ Ու կ՚ուզեմ, որ ասիկա Ֆրանսայեն սկսի, որովհետև ամենքն ալ անոր պիտի հետևին։ Գրիսբին անցյալ օր ըսեր էր, թե Ֆրանսայի կատարած demi de justice-ը[4] ամեն երկրի մեջ կը կատարվի, բայց մարդկությունը Ֆրանսայե՜ն, Հեղափոխության երկրեն կը սպասե այս դրության վախճանը։ Շատ շիտակ է ասիկա։ Ֆրանսայի մեծությունը հոս է։ Ան եթե օրինակը տալու ըլլա, մյուսները ամբողջ կամա ակամա իրեն բացած շավղին մեջ պիտի մտնեն։ Ու հեղափոխությունը միայն պիտի կրնա բանալ այդ շավիղը, հեղափոխությունը, որ մտքերուն մեջն է արդեն և որ պէտի շուշանա գործի սկսելու։ Ու մտքերը ալ ավելի զայրանալու համար պետք է, որ իրենց դրոշակակիրը տառապի ու խոշտանգվի...

## ՄԱՐԴ ՄԸ

Էմիլ Զոլա դատապարտվեցա՛վ, մեկ տարվան բանտարկության։

Իր գոյության համար դողդղացող կառավարություն մը, իր սխալը ճանչնալու բարոյական քաջությունը չունեցող սպայակույտ մը, հուսահատորեն պաշտոնին կառչած ողորմելի երեսփոխանություն մը, անարգ ու շահամոլ մամուլ մը, ու խելահեղ խուժան մը որ ա՛լ խորհիլ չի գիտեր, միացած՝ այս ապտակը տվին Ճշմարտության ու Արդարության։

Այս դատե՛ն Զոլա կ՚ելլե ալ ավելի խոշորցած, մեծ լուսապսակով մը, մարտիրոսության լուսապսակը։ Ճշմարտության համար պոռթկող մարդուն հոյակապ փառքը ունի ան հիմակ, մշտնջենական փառքը զոր պատմության մեջ պիտի բաժնե Ճորտանո Պրունոներու, Գալիլեներու, Էդիեն Մարսելներու հետ։

Իր նամակին մեջ, որ պատմության կը վերաբերի, կ՚ըսեր. «Երբ որ ճշմարտությունը հողին տակ կը պահեք, հոն կը դիզվի, պայթումի անանկ ուժ մը կ՚առնի որ, այն օրը ուր կը պոռթկա, ամեն բան օդը կը հանե իրեն հետ»։ Ու դատարանին առջև իր ըրած հայտարարությանը մեջ. «Ամեն բան ինծի դեմ ըլլալ կը թվի։ Ես ինծի հետ ունիմ միայն գաղափարը, ճշմարտության ու արդարության գաղափարը։ Ու հանգիստ

եմ, պիտի հաղթեմ։ Չուզեցի որ երկիրս ստության և անիրավության մեջ մնա։ Ես կրնար հարվածել այս տեղ։ Օր մը, Ֆրանսա շնորհապարտ պիտի ըլլա ինծի՝ իր պատիվը փրկելու օգնելուս համար»։

Ու իրավ է, պիտի հաղթե։ Գաղափարին ընթացքին մեջ, ի՜նչ փույթ վայրկենական դադարները կամ նահանջները։ Ալ ավելի ուժով հառաջ խաղալու, նոր կորով ու եռանդ ամբարելու հանգրվաններ են ատոնք,— կառախմբին պես որ պահ մը կանգ կ՚առնե՝ իր ածուխի ու ջրի մթերքը առնելու ու նորեն առաջ սուրալու համար, վերանորոգված թափով մը։

Այն օրը, ի՜նչքան գաճաճ պիտի երևան այսօրվան կոկոզավիզ խրտվիլակները, սոնքացող խամաճիկները ու ամբարտավան պնակալեզները։ Եվ ի՜նչ գեղեցիկ օր պիտի ըլլա ան ուր Հեղեղը պիտի գա մղեղի պես ավլե տանի այդ Սուտին առջև չորեքթաթ երկրպագուները ու Շահուն ոտքերը լիզողները՝ որոնք ճշմարտության երեսին կը թքնեն ու Արդարության լեզու կը հանեն։

## ՕՐՎԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հեռագիրը լուր կը բերե թե ապստամբություն ծագեր է Եմեն[5], հոն տիրող սովին հետևանքով։

Անիծյալ երկիրն է ատ Թուրքիան։ Մակեդոնիո մեջ կրակը թերասքող մոխրին տակ արծարծուն կը մնա դեռ, և ահա երկրին մյուս ծայրեն արաբներն են որ ոտքի կ՚ելլեն։ Տաքարախտեն փտած մարմինն է, որուն վրա վերքը չի գոցվիր, չի՜ գոցվիր։

Մանրամասնությունները կը պակսին դեռ, ու կարելի է որ շարժումը խեղդվի՝ դեռ չտարածված։ Ահմետ Ֆեվզի փաշան, ան որ 1892-ի ապստամբությունը արյունի մեջ մարեց, նորեն գործի գլուխ կոչված է։ Կը հիշեմ այդ ապստամբության ատեն Թուրք բանակին մեջ ծառայող զինվորական բժշկի մը պատմությունը այն արհավիրքներու մասին զոր այդ հրամանատարը իր մեն մի քայլին կը սփռեր իր չորս դին, ճամբուն վրա բոլոր արաբ գյուղերը առանց բացառության այրելով և բոլոր բնակիչները սրե անցընելով, այն աստիճան որ իր անունը պատուհասի մը ահեղ սարսափը կը թողուր։ Կատաղի կռիվ մը եղավ ատիկա որ ամիսներ տևեց, արաբները, հիանալի քաջությամբ կռվելով հարյուրավոր խմբերով, կիսամերկ, դաշույններով միայն զինված, հեռուեն կը հարձակեին հրետանիններու վրա. ռումբի հարվածները տասնյակներով գետին կը փռեին զանոնք, բայց մնացողները կը շարունակեին հառաջնալ, մինչև

որ կենդանի մնացած վերջին մեկ քանի հերոսները կուզային դաշնել Հրետանավորները ու տիրանալ հրանոթներուն։

Շարժումը զսպվեցավ ան ատեն, բայց ահա հիմակ նորեն երևան կուգա. որովհետև ինչ որ անոր ծնունդ տված էր. կա ու կըմնա միշտ, երթալով աճելով իսկ,— ժողովրդին ահռելի տառապանքը։

Խեղճ Թեսալացիները, որոնք ահա իբր տարի մըն է նույն այդ անիծյալ կրունկին տակ կը ճզմվին[6], շունչ պիտի կրնան առնել ա՛լ։ Երկու օրեն, մայիս 2-ին, Հունաստանի պատերազմական տուգանքին փոխառությունը, Անգլիայեն, Ֆրանսիայեն ու Ռուսիայեն երաշխավորված, հրապարակ կ՚ելլե, ու նույն օրն իսկ Թուրք բանակը կը սկսի հեռանալ Թեսալիայեն։ Կ. Պոլսո դեսպաններուն զինվորական կցորդները պիտի հսկեն այդ գործողության։ Թուրքերը իրենց ետին ավերակ կը թողուն այդ բերրի ու արդավանդ նահանգը, բայց, ի՜նչ փույթ, ազատությունը թող նորեն սավառնի երկրին վերև, ու ամեն կորուստ կը դարմանվի։

Կրետեի համար ալ կ՚երևա թե լավագույն օրեր կը մոտենան։ Երեկվան թվով հեռագիր մը կը ծանուցաներ թե սուլթանը ետ առած է Հունաստանի Յորկիոս իշխանին անվանման դեմ իր ընդդիմությունը, և Թուրք զորքերուն Թեսալիայեն հեռանալեն անմիջապես ետքը կ՚սպասվի որ իշխանը Կրետեի ընդհանուր կառավարիչ հաստատվի։

Հիմակ որ հելլենական պատերազմին առաջ բերած կացությունը պարզվելու վրա է, ժամանակը հասա՞ծ է պետությանց համար նորեն ձեռք առնելու Թուրքիո բարենորոգումներուն խնդիրը, որ, 1897 փետրվար 9-են ի վեր, մեկդի թողված է։ Այո՛. բայց արևելյան խնդրին մեջ շահ ունեցող երկու պետությանց մին, Ռուսիա, մինչև վիզը խրած է հիմակ չինական գործերուն մեջ, ու երկու ամիս է ի վեր Չինաստանի մեջ իր սկսած ազդեցիկ ու տիրական քաղաքականությունը, Բորթ-Արթյուրի գրավումը և անդրսիպերյան երկաթուղին չինական հողին՝ Մանչուրիայի՝ մեջեն մինչև Թալիենվան երկարելու աշխատությունները[7], կը բացատրեն թե ինչու, նույնիսկ իր քրիստոնյա պետության պատվին գնով, բոլոր ուժովը հակառակեցավ որ արևելյան խնդիրը բացվի Ասիո կողմեն։ Ու հիմակ որ դիվանագիտական գոհացում մը կ՚ստանա Յորկիոս իշխանին ընտրելիության ընդունելությամբը. հավանական չի թվիր որ սուլթանը նեղելու քաղաքականության մը ձեռնարկե։

Կը մնա Անգլիան։ Ան ալ...։

Սպասելով դեպքերուն, մեր բոլոր համակրանքովը կ՚ողջունենք Միացյալ Նահանգներուն սկսած պատերազմը ընդդեմ Սպանիո՝ Քուպայի ազատությանը համար[8]։ Քուպացիներուն չարչարանքը մերիննե-

քէն վար չմնաց. ու արդար է որ ազատ ըլլան, քանի որ այնքան արի եղան։

Միացյալ Նահանգները իրենց գոյութենեն ի վեր այս երրորդ պատերազմն է որ կը մղեն. առաջինը Անգլիո դեմ՝ իրենց անկախության համար[9]. երկրորդը, 1860-ի քաղաքային պատերազմը[10], գերիներուն ազատագրության համար. ու երրորդը, այսօր, Քուպայի ազատության համար։ Եվրոպական այն մամուլը, որ, մեր ջարդերուն ատեն, մեր դատը ուրացավ՝ Թուրքիո բաժնետերերուն դրդումովը, այսօր Միացյալ Նահանգներուն դեմ կը հաչե, Սպանիո—այդ քիչ մը ավելի միայն քաղաքակրթված Թուրքիային—բաժնետերերուն ազդեցությամբը։

Քուպա կը տառապի գրեթե նույն այն գերութենեն, որ կը տիրե Հայաստան։ Ապիկար ու բռնաքաղց կառավարություն մը այդ արգավանդ երկիրը կթան կովի մը պես կը քամեր, կը քամեր անխնա, ու ապստամբությունը զսպելու համար իր ձեռք առած միջոցները՝ իրենքզիրենք պաշտպանել չը կրցող ծերունիներու, անկարներու, կիներու ու տղաքներու դեմ, Հայաստանի ջարդերուն գրեթե համահավասար՝ այս դարավերջին ամոթը պիտի մնան։ Միայն թե Քուպան իրմե միայն քայլ մը հեռուն Միացյալ Նահանգները ունենալու առավելությունը ունի, որ քաղաքական ուրիշ շահերու ցանցին մեջ բռնված չէր՝ իրեն հասնող ողբերը ու հառաչները անկարեկիր սրտով արհամարհելու համար։

Քուպա ալ ազա՛տ...

## ՀԱՅԸ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՄԵՋ

Կատարելապես գիտեր Հայոց Պատմությունը, և հանրացումներու համար իր ունեցած հակումովը և տաղանդովը երկու մեծ իրողություն կը գտներ մեր պատմության մեջ, որոնք հայ ազգին պատվաբեր բաժինը կը ներկայացնեն մարդկության զարգացմանը ընթացքին մեջ,— առաջինը՝ դարերով ու դարերով թումբ կանգնիլը ասիական հոսանքին առջև, որ կուզար անընդհատ իր կողերը պատռել, ու երկրորդ՝ Պավղիկյան աղանդին ծագումը Հայոց մեջ[11], ուսկից աքսորյալ աղանդավորներու հետ Եվրոպա անցավ ան, Ալպիժուաներու ծնունդ տվավ և ի վերջո առաջ բերավ Բողոքականությունը, այսինքն մարդկային մտքին ազատագրությունը կրոնքին խեղդող կապերեն[12]։ Եթե առաջին իրողության մեջ՝ մեր ցեղին տոկունությունը և Արևելքի մեջ արևմտյան գաղափարին համառ ներկայացուցիչը կը տեսներ, երկրորդին մեջ կը գտներ մեր ցեղին ըմբոստ ու քննող ոգիին արտահայտությունը...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## <ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ>

*...Տեսե՛ք այժմ հայ ժողովուրդը ինքը ի՞նչ է ասում. նա լավ գիտե, լավ հասկանում է իր ստոր դրությունը. նա կամենում է բարելավել յուր կացությունը, բայց ելք չունի. նա կամենում է հեռվում երևող լուսավոր նպատակին հասնել, բայց ճանապարհ չունի: Եվ նա չէ վհատում. նա ճանաչում է այն ույժը, որ երբևիցե պիտի բարձրացնե իրան այդ ցած դրությունից. այդ ույժը երիտասարդությունն է: Կարծո՞ւմ եք, որ ժողովուրդը սխալվում է իր միակ փրկարարը երիտասարդությունն համարելով: Ժողովուրդը չէ սխալվում, նորա պահանջը արդարացի է. պատմությունը այդպիսի պահանջ արժանավորապես գնահատում է, բազմաթիվ փաստեր պատմության էջերում գեղեցիկ կերպով հասկացնում է մեզ, որ մի վերածնող ազգ իր նորոգ կյանքը, այո՛, կյանք եմ ասում, և չեմ սխալվում, իր երիտասարդ զավակների ձեռքից է ստանում: Հիշեցե՛ք Գերմանիայի ազատությունը, հիշեցե՛ք երիտասարդ Իտալիան, հիշեցե՛ք Հունաց անկախության սկզբնական պատմությունը[1]:*

## <ՆՈՐ ՏԱՐՎԱ ՍԵՄԻՆ>

*Անցան ծննդյան տոները, անցավ 1882 թվականը, սկսվեցավ մեր ուսման երկրորդ կիսամյա շրջանը[2] և ընդհանուրի համար սկսվեցավ մի նոր տարեգլուխ: Տեսնում ենք ինչպես են ընդունում այս նոր տարին, ինչ հույսերով, ինչ բարեմաղթություններով. ամենայն ազգ մի վերջին հայացք է ձգում իր կատարած ճանապարհի վրա, և նրա սիրտը լցվում է կամ մի անսահման ուրախությամբ իր անցած վարդապսակ կյանքի ասպարեզը տեսնելով կամ ողբում է իր թուլամորթությունը, իր կրած տառապանքները: Եվ ամենայն ազգ առաջ է տանում իր կյանքի անիվը,*

*ավելի մեծ ակնկալությամբ խորհելով իր ապագա օրերում կատարելիք գործերը...*

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՄՈՒԼԸ

*Նույնիսկ առաջին կանոնավոր թերթերի հրատարակիչները, որպես Աբրահամ Ֆերհոֆենը, որ 1605 թ. առաջինն սկսավ կանոնավորապես շաբաթը մի անգամ լրագիր հրատարակել, կամ Թեոֆրաստ Ռընոդոն,* «Gazette de France»*-ի (1635) հիմնողը, երբեք չէին կարող երազել, թե ի՛նչ պիտի դառնա մամուլը մեր օրերում:*

*Դարուս երեսնական թվերին ֆրանսիական մամուլը արդեն վերին աստիճանի զորավոր դեր է սկսում կատարել. բավական է հիշել, որ այդ ժամանակ լրագրության ներկայացուցիչներն էին Գիզոները, Թիեռները, Ռեմյուզաները, որոնք մամուլից անցնում էին կառավարության գլուխը և իշխանավորի դերը նորից փոխարինում էին մամուլի մշակի կոչմամբ. բավական է հիշել, ասում ենք, այս, որ հասկանալի լինի թե ինչ հեղափոխություններ կատարելու զորություն ուներ այն ժամանակ ֆրանսիական լրագրությունը:*

*Միևնույն ժամանակ հեղափոխության է ենթարկվում և ինքը մամուլը...*

## <ՇԻԼԼԵՐԻ «ՕՌԼՅԱՆԻ ԿՈՒՅՍԸ» ԴՐԱՄԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>[3]

*Միջնադարյան գաղափարներն ընտանեկան, հասարակական ու պետական կյանքի մասին, ավատական կազմակերպությունը և սորանից ժամանակի ընթացքում հառաջ եկած միահեծանության սկզբունքը երկրի կառավարության վերաբերությամբ այն տեղը հասցրին Ֆրանսիային XVII դարու վերջերում, որ հակադարձ ուղղությունը պատմական անհրաժեշտ օրենքների զորությամբ ինքնըստինքյան պիտի հառաջ գար ու խորտակեր անցյալի բոլոր կուռքերը: Ռացիոնալիզմը հանդես եկավ և կրոնից ու կրոնական հավատալիքներից սկսած մինչև երկրի վարչական կարգի վերջին անկյունը հիմնահատակ արեց. բանականությունը, սառն դատողությունը հռչակվեցավ միակ ղեկավար և առաջնորդող ամեն բանում. վաղեմի աստվածների գոյության հիմքը խախտվեցավ, և միապետական Ֆրանսիան յուր բոլոր կազմակերպությամբ, հավատալիքնե-*

րով, հասարակական գաղափարներով արագ գլորվեցավ ռացիոնալիզմի հարվածների տակ, մինչև որ XVIII դարու վերջերում բռնկեցավ մեծ հեղափոխության հրդեհը։

Բանականությունը պաշտոնապես հրատարակվեցավ միակ աստված, որին մարդկությունը պիտի երկրպագեր։ Այս ահագին պատմական նշանակություն ստացած շարժման մեջ անհատականությունը բնականաբար պիտի նսեմանար, պիտի զրոյի հավասարվեր։

Սրտի, զգացմունքի աշխարհը միանգամայն մոռացության պիտի տրվեր. անհատի ազատությունը գոյություն ունենալ չէր կարող։

Բայց ահա այստեղ էլ ծայրահեղությունը ծնավ մի անկեղծ բողոք։ Ռուսսոյի բոցավառ սրտից ինչպես Ռոլանդի փողից լսվեցավ մի ճիչ, որ ցնցեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհը[4]. զգացմունքից և ոչ սառն բանականությունից բխած հավատը յուր իրավունքները ճանաչել պահանջեց. անհատական ազատությունը բռնապետության շղթաները խորտակեց...

Այս ճիչն էր, որ արձագանք գտնելով Գերմանիայում, յուր բնանիշ գործը տվեց «փոթորկալից դարաշրջանի» մտավոր բուռն շարժմանը[5], գրականությանը, բանաստեղծությանը...

Պատանի Շիլլերի գրչի տակից գաղտնի ճանապարհով թղթի վրա անցան «Ավազակների» ազատության կատաղի ցանկության ոգով տոգորված տողերը. անհատի սրտի կյանքը նյութ դարձավ Գյոթեի առաջին ոգեշունչ երկերին[6]... Հասարակության բռնադատման դեմ բողոքելը ընդհանուր ուղղություն դարձավ, իսկ այնուհետև ազատությունն ընդարձակ առմամբ բանաստեղծության կենտրոնական սաղմը հանդիսացավ։

Այս բուռն զգացմանց արտահայտության շրջանի բանաստեղծներից՝ Շիլլերն այն հեղինակն է, որ համաշխարհային բոլոր հանճարներից շատ ազդեցիկ տպավորություն է արել թե՛ ժամանակակից և թե՛ հաջորդ սերունդների վրա։ Այո, բոլորն ինչ որ վսեմ է, սուրբ է, ազնիվ ու ոգևորիչ, Շիլլերի գրչի առաջնորդն է. նա շարունակ սավառնում է իդեալի ոսկեղեն աշխարհում և մեզ միշտ դեպի վեր, միշտ դեպի վսեմն է քաշում... Այս է այն պարզ գաղտնիքը, որով մեկնվում է անսահման թովչական ընդունակությունը բոլոր ազգերի երիտասարդ սերունդների վրա ամենամաքուր դաստիարակիչ ազդեցություն գործելու...

*Վերին աստիճանի հետաքրքրական երևույթ է ներկայացնում այսօր եվրոպական մտքի հառաջադիմական շարժումը և մանավանդ չափազանց խրատական է երբեմն հետևել այն միմյանց հաջորդող կերպարանափոխությանց, որ ընդունում է այդ միտքը։*

*Այն հետամնաց ազգերը, որ պատմական այս կամ այն պատճառներով անհաղորդ են մնացել եվրոպական քաղաքակրթության հառաջխաղացությանը և ձիգ դարեր անցնելուց հետո, երբ այդ քաղաքակրթությունն արդեն հայտնի զարգացման աստիճանի վրա է կանգնած, նոր սկսում են յուրացնել նորա արդյունքները, քաղաքակրթության առաջին աստիճանի վրա գտնվող այդ ազգերը մի մեծ առավելություն ունին, որից կարող են նշանավոր օգուտներ քաղել, եթե շնորհք ունենան։*

*Արևմտյան Եվրոպայի լուսավորությունը, հասարակական կազմակերպության մինչև օրս ձեռք բերած հնարավոր կատարելությունը, գիտությունն ու արվեստները, մի խոսքով այն բոլոր բարիքները, որ ցայսօր կարողացել է տալ եվրոպական քաղաքակրթությունը,— այդ բոլորը ահագին նյութական և բարոյական զոհաբերությանց արդասիք է։ Արդի եվրոպական լուսավորության հոյակապ շենքի ամեն մի քարը, կարելի է ասել, ներկված է հարյուրավոր ու հազարավոր նահատակների արյամբ, և ամբողջ քաղաքակիրթ մարդկությունը զգում է, որ դեռ երկար ճանապարհ ունի անցնելու կատարելության սահմանին հասնելու հույսով։ Եվ եթե այսօր միտ դնենք այդ հառաջադիմական շարժման պատմությունը, կտեսնենք, որ հայտնի ասպարեզներում, քաղաքակրթության հայտնի սահմաններում, հետնորդներն ուսանելով, նախորդներից դաս առնելով են հառաջ գնացել։ Քաղաքական կյանքի մեջ, ճիշտ է, ահագին դեր են կատարել միշտ այս կամ այն ազգի բնանիշ առանձնահատկությունները, ցեղական, կրոնական և այլ պատմական պայմաններ, որ զանազան ազգերի տարբեր արդյունքի են հասցրել. բայց չէ կարելի որոշ հաջորդականություն, հետզհետական զարգացումն չնկատել, օրինակ, մտքի, գիտական շարժման մեջ։ Այդտեղ ամեն մի նախորդ քայլ, վաղ կամ ուշ, անմիջապես կամ երբեմն այս ու այն արգելառիթ հանգամանքին հաղթելուց հետո, դյուրացնում է և որոշ չափով ցույց է տալիս հետագա քայլը. հաջորդն աշխատում է չկրկնել նախկին սխալները և օգտվել ձեռք բերված դրական արդյունքներից։*

*Ահավասիկ այս տեսակետից նոր զարթնող, քաղաքակրթության ճանապարհը նոր ոտք կոխող ազգերն այն առավելությունն ունին, որ*

ուրիշների անցյալն աչքի առաջ ունենալով, կարող են ազատ մնալ հայտնի պատմական սխալներից, իզուր խարխափումներից, ակներև ծայրահեղություններից։ Հարմարեցնելով ամենայն ինչ իրանց պահանջներին, իրանց առանձնահատկություններին, իրանց ցեղական և այլ պայմաններին, նոքա կարող են խիստ հաջորդականության շնորհիվ համեմատաբար կարճացնել և դյուրացնել իրանց ճանապարհը։

Բայց պետք չէ մոռանալ, որ այստեղ նախ և առաջ անհրաժեշտ է մեծ աչալրջությամբ հետևել քաղաքակրթության իսկական աղբյուրների պատմական հոսանքին և հեռու մնալ երկրորդական ու երրորդական ձեռքերից այդ պարգևներն ընդունելուց։ Դորանով դարձյալ խարխափումը շարունակված կլինի և բացի այդ երբեմն մի քանի շարք կարևոր հանգամանքներ մոռացության տված. հիշելու է միշտ Timeo Danaos*...

* Timeo Danaos «et dona ferentes» — վախենում եմ դանայեցիներից, նույնիսկ նվերներ բերողներից (լատ.) Հ. Ծ.։

ԼԵՎՈՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

*Այո՛, մեր ամենամեծ նպատակն է լուսավորությունը, ինչպես նա հասկացվում է քաղաքակիրթ հասարակության մեջ։ Մենք բախտավոր ենք, որ մեր անմոռանալի նախորդները դրած են արդեն լուսավորության հիմքը։ Մոտ կես դար է, որ սկսված է մեր մեջ մտավոր շարժում, մտքի վերածնություն։ Մեր վերածնության առաջին եռանդուն գործիչները,— Նալբանդյան՝ իր հետևողներով, Շահազիզ, Պատկանյան, Րաֆֆի և սոցա հետ միասին շատ շատերը,— բոլորն էլ լայն աշխարհայացքի մարդիկ էին, ազատ դարավոր նախապաշարմունքից, և բոլորն էլ ծառայում էին միևնույն բարձր գաղափարին։ «Լուսավորությունը—ժողովրդի սեփականություն դարձնել»—ահա այն իդեալը, որով ոգևորված էին նոքա, որ, ինչպես փարոս, փայլում էր հեռվից և դեպի իրան քարշում նոցա բոլորին։ Նոքա առաջ են բերել մեր մեջ կենսական հոսանքներ, որոնց առաջ դժվար թե կարողանա դիմանալ մի որևիցե խոչընդոտ։ Եվ այդ հոսանքները—ազգային, ժողովրդական, հասարակական և գրական,— իրանց հարթած շավիղով առաջ են ընթանում, և առաջ գնալով խորանում են և լայնանում։ Գալիք սերունդների անեծքը պիտի ծանրանա այն անձանց հիշատակի վերա, որոնք ամենայն ճիգ և աշխատանք էին գործ դնում այդ հոսանքների առաջն առնելու...*

*Բայց վա՜յ մեզ, եթե չենք ըմբռնել մեր ժամանակը։ Մեր բնածին բոլոր ընդունակությունները, անցյալի բոլոր փառավոր գործերը, մեր փառքը, մեր ժողովրդականությունը, ոչինչ, մի խոսքով, չէ կարող պահել մեզ մեր նախկին բարձրության վերա, հենց որ կը սկսենք մեր ժամանակակից լավագույն հոսանքների դեմ ժայռեր գլորել...*

## ԾԵՐԵԹԵԼԻ Գ. «ՄԱՐԴ-ԱՌՅՈՒԾ», ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՊՈԵՄԱ...

Փոխադրեց Դավիթ Տեր-Դավթյանց, 61 էջ, Թիֆլիս... 1895...

*«Մարդ-առյուծը» մի գեղարվեստական հեքիաթ է, առանց ավելորդաբանությունների և կարդացվում է հետաքրքրությամբ։ Նորա մեջ արծարծված է ազատության հավերժական գաղափարը՝ հանձին Մարդ-առյուծի. որ հաղթանակ է տանում բռնավորի վերա (սպիտակ դև) և ազատում է ժողովուրդը նորա իշխանությունից...*

ՍԻՊԻԼ

# ԱԶԳԱՆՎԵՐ ՀԱՅՈՒՀԻՔ

## (Ճառ)

*Հակառակ ամեն վայրագությանց, որոնց զոհ կ'երթան մեր կտրիճները, հայը փյունիկի պես կը վերածնի իր աճյուններուն մեջեն, և ամեն ժամանակե ավելի առույգ, ավելի քաջակորով, կ'ապրի իր թշվառ կյանքը, թալանի, հարստահարության և անօրինակ զրկանքներու դատապարտված իր ցավատանջ կյանքը:*

*Զրկանքնե՜ր, և ինչպիսի՜ զրկանքներ. մարդուս ոսկորները կը դողան, երբ կը պատմես թե ինչպես հայ գյուղացուն ձեռքեն կը հափշտակեն իր սերմացու ցորենը ցանքի ատեն, թե ինչպես ծեծի ու բանտարկության սպառնալիքին տակ կը բռնադատեն զայն, որ հացին պատառը քաշե առնե իր զավակներուն բերնեն՝ վայրագ հարկահավաքներու հանձնելու համար, և դեռ ի՜նչե՜ր... Մարդկային թշվառության բոլոր հոգեբանությունը չի կրնար բացատրել տանջանքը այդ հեք հայերուն, որոնց գլխուն վերև կախված է շարունակ Դամոկլեսի սուրին պես՝ բարոյական և նյութական անապահովությունը, ժամ առ ժամ զիրենք ջախջախելու սպառնալիքով...*

*Եվ սակայն այդ խեղճ ու քաջասիրտ մարդիկ իրենց բոլոր չարչարանքներուն մեջ, առաջացումի, ուսուցման ծարավը ունին. մեկ կողմեն՝ կը տվայտին, կը չարչրվին, կը մեռնին, մյուս կողմեն՝ «Դպրոց, գիրք, լույս» կը գոչեն. ինչ որ զմեզ կը զարմացնե, կը շահագրգռե, կը խռովե...*

*...Ա՜հ, լացը, սուգը մեր սրտին մեջ, և քաջությունը ու կորովը մեր գործերուն մեջ:...*

*Երեկվան ջարդի սուրեն հիմնահատակ կործանած Սասունը, Մուշը այսօր վերակենդանացած է. «ուսո՜ւմ» կ'աղաղակե: Ո՞վ պիտի բանա վաղը Ատանայի քար ու քանդ եղած դպրոցները, երբ վերակենդանանա.*

և պիտի այրի Ատանա, այդ քաջերու երկիրը, և մենք պիտի սանինք վառել ուսման լույսը անոր ավերակներուն մեջ, և նահատակներու աճյուններեն պիտի հարուցանենք նոր հերոսներ, նոր ախոյաններ հայրենիքին:

Մենք այլևս չը պիտի տառապենք գավառներեն հասած արյունոտ ու սրտաճմլիկ զույցերով: Հիմա Արդարության և Ազատության նրաղ մը գրաված է մեր միտքերը:[1]...

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

# ՀԵՐՈՍՆԵՐԸ

*Վերջին եղերական դեպքերեն[1] հետո, չեմ գիտեր թե հայ հոգի ոևէ անկյուն մը կարելի պիտի ըլլա՞ այս տարի Վարդանանց տոնը[2] տոնել։ Բայց ապահով եմ որ, ինչքան ալ ճնշումը մեծ ու հուսահատությունը խորին ըլլա, սուգին, սարսափին, ցուրտին ու սովին մեջեն, փետրվար 24ի օրը, ամեն Հայու մտքին մեջ մեծապայծառ պիտի շողա Մարտիրոս-Հերոսին կարմիր հիշատակը, և մութ անկյուններու մեջ տենդոտ մատներ Եղիշեի էջեր[3] պիտի թղթատեն։*

*Մեր մեծ տոնը, մեր հավիտենական տոնն է ան։ Տոնը որով ազգ մը իր հոգին կը փառաբանե, իր գոյությունը կը հաստատե։ Վարդանը հայ ցեղին խորհրդանշանական դեմքն է։ Գաղափար-անձնավորությունն է ան, ազգ-մարդը։ Ֆրանսացիները Ժան դ'Արքը ունին, մենք Վարդանը ունինք։ Ժան դ'Արք ֆրանսական ժողովրդին հիմարական խանդավառությունն է, որ կը ցցվի թշնամիին դեմ, երկրին բոլոր ուժերը միևնույն շունչով կը միացնե վտանգին հանդեպ, և ֆրանսական Հայրենիքը կը հաստատե։ Վարդան հայ ցեղին համառ ու անձնվեր կորովն է որ հին հեթանոս Ասիային դեմ կ'ապստամբի և նոր Հայությունը կը հիմնե։*

*Հաղթական թագավորներ, իմաստուն վարիչներ, մեծազոր սուրբեր ունեցած ենք. և սակայն ո՛չ մեկ անուն այնքան գուրգուրանքով ու պաշտումով տարածված է մեր մեջ, որքան Վարդանինը. դրոշակ—անունն է ան։ Մեր հին գրականության ամենեն կենդանի գիրքը ա՛յն է, ուր Վարդանին պատմությունը կ'երգվի։ Մեր հին ու նոր բոլոր բանաստեղծներուն ամենեն սիրական նյութը՝ հրեղեն հեքիա՛թն է Ավարայրի կռիվին։ Ժողովուրդը իր անձնավորումը տեսած է այդ անվեհեր մարտիկին մեջ, որ մահվան դիմեց պահպանելու համար ազգային հավատքը, այսինքն ազգային ինքնությունը։*

Քրիստոնեությենեն առաջ, հայ ցեղը մեծ օրեր ունեցած է, բայց դեռ ազգը վերջնական որոշ ձև մը չէ ստացած. Ասիո բազմաթիվ հեթանոս պատերազմիկ ցեղերեն մեկն է, Պարթևներուն մեկ ճյուղը կը լինի[4]: Իր ինքնությունը կը շեշտվի ա՛յն օրեն, երբ պարսիկ և հռոմայեցի կրկին ազդեցությանց միջև բաժնված, կ՚որոշե Ասիական ոգիեն կռնակ դարձնել և ձգտիլ դեպի Արևմուտքի քաղաքակրթությունը։ Քրիստոնեությունը մեր մեջ կը հաստատվի[5], և այն ատեն ցեղը հետզհետե կ՚անջատվի պարսիկ տարրեն և բովանդակ ասիական զանգվածեն. ինք իր մեջ կը սեղմըվի, կը խտանա, ուրույն կյանք և ուրույն գույն կ՚ունենա։ Նոր կրոնքը իր հետ կը բերե միանգամայն արևմտյան զարգացում մը. լեզուն կը ձևակերպվի և մինչև այն ատեն գործածվող օտար լեզուները վանելով ամբողջ ժողովրդին մտավորական կապը կը դառնա, գրականություն մը կը սկսի, ազգը իր գոյության գիտակցությունը կ՚ունենա։ Ու այնուհետև տաժանելի և գեղեցիկ դերը կը ստանձնենք Ասիո մեջ Արևմտյան քաղաքակրթության հառաջապահ գունդն ըլլալու։ Այդ դերը Վարդանանց դարեն ծագում կ՚առնե։ Անկից առաջ Արշակունի թագավորներուն ու նախարարներուն վրա հեթանոսական գույն մը[6], ասիական դրոշմ մը կա դեռ. կրոնականներն են միայն, որ նոր ոգին կը ներկայացնեն, ազնիվ խանդով մը ապագա շենքին հիմերը կը դնեն, զուտ ազգային ու հառաջդիմական տարրը կը կազմեն, և երբ նախարարներուն անմիաբանությամբն ու մատնությամբը՝ Արշակունի թագավորությունը կը կործանի[7], Եկեղեցին է, որ ազգին անկախ անջատ գոյությունը կ՚ապահովե. ցրված ու պառակտած անդամներուն միջև մեծ ներքին կապը կը դառնա, կը շարունակե հայ միտքը արևմտյան աշխարհին հաղորդավորել, կ՚արգիլե ցեղը՝ պարսիկ տարրին խառնվելու։ Ու ժողովուրդը խորապես կը զգա, թե իր գոյությունը Եկեղեցիին կյանքեն կախված է։ Այնպես որ, երբ պարսիկ պետությունը կը բռնադատե Հայերը մոգություն ընդունել, ազգը միահաղույն կը ցցվի այդ կործանարար կամքին դեմ, և իր համառ դիմադրությամբը, իր հիանալի անձնազոհությամբը կը հաջողի իր կյանքը պահպանել։ Վարդան Մամիկոնյան այդ ամբողջ ազգային-կրոնական շարժումը կը ներկայացնե. ինքը եղավ առաջինը, որ օրինակը տվավ Գաղափարին համար կռվելու և մեռնելու։ Վարդանեն հետո, ամբողջ Հայոց պատմությունը կրկնությունն է Վարդանյան արարքին։ Վարդանեն սկսյալ, Հայը քրիստոնեության զինվորը կը դառնա հեթանոս ու մահմեդական Ասիային դեմ, և իր ցավագին ու երկայն ճիգերովը անոր դեպի Եվրոպա հեղեղումը կը մեղմացնե և հապաղեցնե, և ո՛չ միայն կը հաջողի՝ իր անվտանգ դիմադրությամբը՝ իր ուրույն գոյությունը անեղծ

պահել, այլև կը մնա Եվրոպական Գաղափարին ներկայացուցիչը Փոքր Ասիո մեջ։ Բյուզանդյան կայսրությունը իրեն կրտսեր եղբայր ունեցավ Բագրատունյաց թագավորությունը[8]։ Խաչակիրները իրենց արշավանքին մեջ Հայերը գտան դաշնակից՝ Ասիական հոսանքին դեմ[9]։ Առանց Վարդանանց արարքին, թերևս հայ տարրը պարսկության մեջ հալած ըլլար, և այն ատեն թերևս ամբողջ Փոքր Ասիա մահմետական ըլլար այսօր։ Աշխարհ դեռ կ՛անգիտե մեր ցեղին այս դերը. և մենք իսկ տիեզերական պատմության մեջ մեր կատարած ճշմարիտ գործին գիտակցությունը չունինք. մենք մեզ չենք ճանչնար ինչպես որ պետք է. ապա թե ոչ պիտի շատոնց համոզված ըլլայինք, թե հպարտանալու իրավունք տվող շատ ավելի կարևոր արժանիք մը ունեցած ենք, քան Ադամին դրախտ պարունակող հայրենիք մը և Հիսուսին հետ թղթակցող թագավոր մը ունեցած ըլլալու առասպելական արժանիքը։

Պատմական քննադատությունը վճռական ուսումնասիրությամբ մը դեռ չէ լուսավորած Վարդանյան շրջանին ճշգրիտ նկարագիրը։ Եղիշեի գիրքը՝ պատմութենե ավելի՝ քերթված մըն է. մեր ազգային դյուցազներգությունն է ան. և շատ հավանական է, որ սխալներ, ծայրահեղություններ և անիրավություններ պարունակե. մտածողներ եղած են, թե Վասակ մատնիչ մը չէր, այլ դիվանագետ մը, որ կ՛ուզեր հայրենիքը փրկել ոչ թե բուռն ու աղիտաբեր, այլ խորագետ ու հանդարտ միջոցներով։ Բայց ժողովուրդը Եղիշեին հավատացած է, Վարդանին հարած և անոր հետևած է։ Ժողովուրդը միշտ խանդավառներուն կը հետևի. և իրավունք ունի։ Խանդավառներն են, որ ազգի մը հոգին կը շինեն. նորեն անոնք են, որ, անկման օրերուն, զանի կը վերանորոգեն. անոնք ստեղծագործներն են. հանդարտ և խոհեմ մտքերը կը կազմակերպեն ու կը կատարելագործեն ինչ որ հանդուգն և անձնվեր հոգիները ուրվագծած են։ Ճարտար ու հաշվագետ ընթացավարությունը ազգի մը տևական զորությունը, հիմնական տոկունությունը կ՛ապահովե, ազգին միսն ու ոսկորը կը կազմե, և անշուշտ այնչափ կարևոր է որչափ խանդը, որ առանց՝ միս մինակ՝ աղիտաբեր կրնա ըլլալ։ Բայց ժողովուրդը խանդը միայն կը տեսնե, անոր կը նվիրե իր պաշտամունքն ու հիացումը։ Խանդավառներն են, որ ազգի մը կոչումը իր բարձրագույն կատարներուն կը հասցնեն. Ֆրանսայի մեծության սյուները իր ավյունի դեմքերն են, Ժան տ՛Արքը, Տանդոնը, Նափոլեոնը։ Ասոնք ժողովրդին հոգին կ՛ընդարձակեն, քաջությունը կ՛աճեցնեն. ասոնք իրենց ծայրահեղությամբն իսկ իրականութենեն դուրս կ՛ելլեն, խորհրդանշաններ կ՛ըլլան և ուժ կը ներշնչեն ամբոխին. անոնց անցքեն հետո, ազգ մը ինքզինքը ավելի հա-

րուստ կը զգա հանճարով, ավելի առույգ առնականությամբ։ Անոնք ժողովրդի մը սիրտն են. և առանց այդ տաք բաբախումին, ժողովուրդ մը չի կրնար կենդանի մնալ։ Մեր մէջը Փավստոս Բյուզանդացիեն ավելի, որ ստուգապատում ժամանակագիր մըն է, ժողովրդական եղած է Խորենացին, որ բանաստեղծ մըն է պատմական անճշդություններով լեցուն։ Բյուզանդացին շրջանի մը պատկերը գծած է, Խորենացին իր հայրենասեր հոգիովը ամբողջ բարոյական շենք մը կանգնած է, հերոսներ երկնած է, հպարտացնող և կազդուրող զգացումներ ներշնչած է, Հայաստանը ստեղծած է։ Վահան Մամիկոնյան, միանգամայն քաջ ռազմիկ և ճարտար դիվանագետ, կատարյալ տիպարն է ազգային վարիչի, բայց ժողովրդին հոգիին մէջ Վահանեն շատ վեր, ամենեն պայծառ լույսին մէջ, Վարդանին դեմքն է, որ կը կանգնի, որովհետև Վարդան մեռնիլ սորվեցուց։ Եվ, կը կրկնեմ, ժողովուրդը իրավունք ունի։ Առանց Վարդանյաններուն խիզախ շարժումին, միմիայն խոհեմության և ճարպիկ համակերպության վրա հիմնվելով, շատ հավանական է, որ Հայ ժողովրդին կորովը պիտի թուլնար, ինք իր վրա հավատքը պիտի նվազեր, և պարսկացումը, որ արդեն մասամբ սկսած էր Վարդանանց դեպքեն առաջ, պիտի ընդհանրանար։ Վարդանանց արարքը թոթվեց ազգը, կանի վերանորոգեց, պարսիկ վիթխարի զորության դեմ այդ փոքրիկ խումբին անվեհեր հառաջխաղացությունը մեծ դաս մը տվավ ժողովրդին, թե անձնազոհության ոգին փրկարար ու ամրացուցիչ ուժն է, և թե անոնք սահմանված են ապրելու, որոնք իրենց իտեալին համար մա՛հ հանձն առնել գիտեն։ Ժողովուրդը դասը հասկցավ։ Շարժումը պատրաստ էր արդեն անոր հոգիին մէջ, Վարդանանց արարքը կայծը եղավ. մեկ հարվածով, ազգը ծայրե ի ծայր բռնկեցավ. և այն հոյակապ անսասան ցավագին դիմադրությունը սկսավ, զոր Եղիշե կը նկարագրե վսեմ էջերու մէջ։ Քահանաները նախընտրեցին զարհուրելի տանջանքներով մեռնիլ, քան ուրանալ ազգային հավատքը. ժողովուրդը լեռներն ու անապատները քաշվեցավ, հանձն առնելով անասունի կյանք անցընել, քան ատված օտարին խառնվիլ. հալածանքը սաստկացուց Հայերուն մէջ իրենց ազգային զգացումը, հալածող տարրեն զիրենք հզորապես անջատեց, իրենք իրենց մէջ ամփոփեց. բերդեր ու անառիկ տեղվանք պատսպարան եղան քաջերու, որոնք երկայն դիմադրություններով թըշնամին հոգնեցուցին, ընդհանուր ավերումին մէջ անկախության կըղզյակներ պահեցին. և կիները չարքաշության, համբերության և անձնվիրության դյուցազնական ապացույցներ տվին[10]։ Այս երկայն ու դժնդակ դիմադրությունը խոնջեցուցած ու վհատեցուցած էր արդեն

պարսիկ բռնապետությունը, երբ Բյուզանդյան կայսրությունը, որուն հայկական պատգամավորներ գացած էին օգնություն խնդրելու[11], Պարսկաստանին հետ սկսավ իր մեծ պայքարը[12], որ վերջ ի վերջո աղիտավոր պիտի ըլլար Հայաստանին, բայց որ այդ միջոցին նպաստեց պարսիկ ճնշումը մեղմացնելու։ Այս բոլոր պայմանները արդեն հողը պատրաստած և կացությունը հասունցուցած էին, որով Վահան Մամիկոնյան կրցավ իր կորովի ճարտարությունը ի գործ դնել և մարզպանության ձևին տակ տեսակ մը ինքնավարություն հաստատել Հայաստանի մեջ[13]։ Վահանին գործը պսակումն է Վարդանին արարքին. և եթե ժողովուրդը իր հիացման բաժանումին մեջ կողմնակալ է, պատմական քըննության անաչառ հայեցվածքին առջև՝ երկու հերոսները իրենց ճշմարիտ դիրքովն ու իրական համեմատություններովը կը ներկայանան։ Առանց Վարդանին, հայ ժողովուրդը պիտի չի հասներ այն մեծաբորբոք խանդավառության, այն գերագույն զոհաբերության, այն խելահեղ հանդգնության, որոնց վրա հենլով Վահան կրցավ իր հնարագետ ծրագիրը հաջողցնել. բայց անշուշտ նաև առանց Վահանին ճարտար ու խորագետ քաղաքագիտությանը, Վարդանին հարուցած շարժումը պիտի հանդեր ջնջումի։ Երկուքը իրար կը լրացնեն։ Եվ մեր պատմությունը շատ անգամ կրկնած է այդ երկադրյալ դյուցազներգությունը։

Այդ մեծ հիշատակներուն վրա՝ ամեն ժամանակե ավելի պատեհ է, որ խորհինք հիմա, այս տենդոտ շրջանին մեջ, ողբերգական դեպքերն հետո, որոնք առանց նմանության չեն Վարդանանց շրջանի դեպքերուն հետ։ Ստրկացման, ստորնացման, անխոստովանելի համակերպության երկայն ժամանակամիջոցե մը հետո, մտավորական զարթումի մը մղմամբը, ազգը թոթվեցավ. Վարդանին հոգին անցավ անոր վրայեն, և ստրուկը ցատկեց իր թմրութենեն, ուզեց մարդ դառնալ. բողոքեց, իրավունքները պահանջեց, փորձեց դիմադրել, իր գոյության ապացույցը տվավ. Նոր Ղևոնդներ ծագեցան, խիզախ սերունդ մը երեցավորուն մեջ հին Վարդանը կը վերկենցաղեր, և կիներ հայտնվեցան, որոնք Եղիշեի վսեմ Հայուհիներուն արժանի հաջորդներ ցուցուցին զիրենք։ Բայց պարագաները աննպաստ էին, շարժումը կանխահաս էր, և ճիգը անհամապատասխան՝ թշնամի ուժին. քաղաքակիրթ աշխարհը անտարբերությամբ դիտեց արդարություն պահանջող ժողովրդի մը գալարումը. բարբարոսները անգամ մըն ալ իրենց կործանման դերը կատարեցին. խավարչտին ձեռքեր ամբողջ ազգը կոշկոճեցին դժոխային տանջարանի մը վրա. և այսօր վիրավոր, ոգեսպառ, հիվանդ մարմին մըն է ան...

Ատենն է որ, ավերակներուն մեջեն, Վահանին հոգին կանգնի։

Այդ հոգին անհրաժեշտ է, որպեսզի այսչափ կորուստ ու աղետը պտուղ բերեն, և որպեսզի բոլոր այս մահերեն կյանքը դուրս ցայտե։ Արդեն, ատենե մը ի վեր, ժողովուրդը, իր անսխալ բնազդականությամբը, նոր ճամբա մը փնտռելու հետամուտ է։ Անհնարին և անբնական է վարդանյան ուղղությունը մշտապես շարունակել։ Ավելի գեղեցիկ բան չի կա, քան սանձարձակ խանդավառությունը, քան հուսահատ ու մոլեգին հանդգնությունը. բայց երբ զգացման պայթումին ատեն, հաշվող միտքը չի հասնիր իր դերը կատարելու, փճացում հառաջ կուգա, և ժողովուրդ մը երբեք չի կրնար փճացումը հանձն առնել։ Զնկատելով առայժմ վերջին շարժումներուն մեջ գործված կարգ մը սխալները, որոնցմե ոմանք ոճիրի ձև ունին, մեր դարավերջին անցքերուն ամբողջությունը վերեն դիտելով, կրնանք ըսել, որ մեր պատմության ամենեն նշանակալից և ամենեն կարևոր մեկ շրջանն էր ան. և անուրանալի է, որ մե՛ծ, այո՛, մեծ ու գեղեցիկ է այդ շրջանը իր ամբողջության մեջ. մեռած կարծված ժողովուրդ մը, հինգ դարվան անշարժութենե հետո՝ որու միջոցին անճոռնի բռնավորներու գարշապարին տակ ամենեն անարգ ստրկության դատապարտված էր, կրցավ հանկարծ, գրականության բերած ցնցումեն արթնցած, եվրոպական նոր գաղափարներուն շունչեն նորոգված, Դպրոցին ծնուցած գիտակցականությամբը ամրացած, համակերպության ճահիճեն ցցվիլ ոտքի ելլել, արևուն տակ իր արդար իրավունքները պահանջել, ինքնապաշտպանության ջանքի մը ուրվագծովը իր առնությունը ապացուցանել։ Ցավալի բան մը եղավ, որ Հայոց բարեկամները ամեն տեղ միմիայն մեր աղետներն ու չարչարանքը նկարագրեցին՝ Եվրոպայի գթությունը հրավիրելու համար, և աշխարհի առջև մեզի տվին տկար, ողորմելի, ինքզինքը պաշտպանելու անկարող ազգի մը գույնը. քաջության ապացույցները, հանդգնությունները, դիմադրության փորձերը մեզի համակրողներուն կողմեն բոլորովին անտես առնվեցան և մեր թշնամիներուն կողմեն իբր խռովարարական ոճրագործ արարքներ ներկայացվեցան։ Չեմ գիտեր մեզի համար ավելի նսեմացուցիչ, ավելի նվաստացուցիչ բան մը, քան այն ողբերգական արգահատանքը, որ մեր դժբախտության նկատմամբ արտահայտվեցավ և որուն մեջ անխուսափելի արհամարհանք մը կը ծածկվեր։ Մեր բարոյական արժանապատվության համար, կարևոր գործ մըն է, որ վերջին դեպքերուն մեջ հայ ցեղին ցուցուցած կորովը, հանդգնությունը, զոհողության ոգին երևան հանվին ընդհանուր ողորմ ու խղճալի պատկերին մեջեն։ Այն քիչերը, որոնք հայկական խնդիրը մասեն և ամբողջու-

թյանը մեջ կրցան ուսումնասիրել, ավելի հարգանք ունեցան մեզի համար։ «Անկեղծորեն խոստովանիմ, կ՚ըսեր ինծի օր մը Ալֆոնս Տոտեն, թե ձեր վերջին ցույցերեն և Զեյթունի դեպքեն առաջ, ձեր ժողովուրդը մեզի կ՚երևար իբր առևտուրի ժողովուրդ մը միայն. հիմա կը տեսնենք, որ հերոսներ ալ կրնաք եղեր արտադրել»։

Բայց այս բոլորը պատճառ մը չէ, որ ազգ մը անպայման շարունակե վտանգեն ճամբեն ընթանալ։ Հերոսությունը անհատին, ինչպես ժողովրդին մեջ, ժամանակավոր վիճակ մըն է, անձին գերագույն ընդոստումն է, որ մշտական չի կրնար ըլլալ։ Մշտական վիճակը, կանոնավոր և առողջ վիճակը, զոր պետք է ունենալ, գիտակից և ուշիմ արիությունն է, ապահով, անվհատ և խուլ գնացքը դեպի փրկություն։ Անոնք որ կը քարոզեն, թե պետք է անընդհատ ու դեռ երկայն ատեն շարունակել այս արյունոտ փորձը, անձնասպանության կը մղեն ազգը. և մեր ժողովուրդը, որ միշտ, իր պատմության մեկ ծայրեն մյուսը, խորագիտությունը միացուցած է քաջության, անշուշտ, պիտի հանձն չառնե անիմաստ ու ամուլ զոհողություններով ինքզինքը չքացնել։

Ասոնք կնճռոտ, հրատապ և կենսական խնդիրներ են, և պետք ունին ընդլայնման. բայց այս ընդհանուր տեսության մեջ կացության մեծ գծերը միայն ուզեցի ցուցնել. ուրիշ առիթով թերևս մանրամասնեմ այս նկատողությունները։

Քառուղիի մը մեջտեղն ենք այսօր։ Ետևնիս՝ արյուններու ճամբան մոխիրի ու մուխի մեջ կը թաղվի։ Պետք է փնտռենք ճամբա մը, որ մեզ հանե այս մահվան ու աղջամուղջի մթնոլորտեն։ Զգացինք որ միս մինակ ենք եղեր թշնամիին հետ, և թե մեր ուժը դեռ շատ խակ էր հաղթելու համար ճնշողական տարրին։ Հիմակ դադարի վայրկյան մըն է, անթիվ հետևանքներով հղի, թանկագին և խորհրդավոր։ Պետք է գիտնանք հաշվել, դատել և ընտրել։

Առավել քան երբեք ատենն է, որ ամփոփվինք, եղած անսահման կորստին վրա խորհինք, և դարմանելու միջոցները փնտռենք։ Փոխանակ անիմաստ վնասակար վեճերուն, ատեն է, որ ազգին բոլոր ուժերը միանան, իրար հասկնան, ներդաշնակվին և գործեն։ Իմաստակ բացագանչություններեն, տգետ հոխորտանքներեն և տղայական հույսերեն անջատվինք. ճանչնանք մենք մեզ. մեր խնդիրը, մեր երկիրը, մեր ցեղը, մեր միջավայրն ու պայմանները ուսումնասիրենք, և գիտնանք մեր ճիգերը տեղին և ժամանակին պատշաճեցնել։

Ապրի՜ Վարդանը։ Անոր շառագույն ստվերը պետք է միշտ մեր հոգիին վերև ծածանի։ Առանց անձնվիրության զգացման, ազգ մը մեռած

*է. հերոսն է որ ժողովրդի մը կուտա գերագույն ազնվականությունը։ Հերոսին գործն է կյանքը ցնցել ու ճամբան բանալ. հետո, երկայն ամուր ներքին աշխատությունը պետք է սկսի դեպի նպատակը հառաջխաղացության։ Արդեն, պատմական օրենք մըն է, որ մեծ հեղաշրջումի վայրկեաններեն հետո բնաշրջումը կը սկսի. այն ատեն, Հերոսը կը կերպարանափոխվի. Քաջին տեղ Իմաստունը կուգա. Լեոնիդասեն հետո Սողոնը կը հայտնվի[14]։ Եվ այն ազգը մեծ է, որ երկուքն ալ ունի։ Ասպետ Վարդանը. բայց ատեն է, որ Վահանը երևա...։ Ես կը բաղձայի, որ այս տարի, Վարդանանց տոնին օրը, ամեն Հայ, Եղիշեեն հետո, քիչ մը Փարպեցի կարդար։*

## ԻՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՍ

*Մեր պարտքն է ճանչնալ մեր ուժը, ուսումնասիրել ամեն ինչ, որ անցյալին մեջ հայ ցեղը ցույց տված է իբր ապացույց մտավորական և բարոյական կորովի, հետևիլ ներկային մեջ մեր տոհմին կատարած ամեն տեսակ ճիգերուն և ձեռք բերած ամեն կարգի հաջողություններուն, վանոնք շարունակել, ընդարձակել, բազմապատկել, և ջանալ որ այդ բոլոր ճիգերը՝ եղբայրական ներդաշնակությամբ մը միանան ու ազգային բարձրացման գործը իրականացնեն։ «Նոր կյանք»ին մեջ միշտ կարևոր տեղ մը պիտի տրվի այսօրինակ ուսումնասիրության և հոն պիտի արձանագրվին այն ամեն դեպքերն ու գործերը, ուր հայ կորովը հայտնված երևա մարդկության առջև մեզ պատվող փայլով մը...*

## ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

*Թյուրքիո Հայոց գրականության ընթացքին հետ զուգահեռաբար, ուրիշ գրականություն մը զարգացած էր Ռուսիո Հայոց մեջ։ Առաջինը ժողովրդին մեջ ազգային զգացումն արթնցուցած էր. երկրորդը ավելի վճռական եղավ, շիտակ նպատակին դիմեց, ժողովուրդը ըմբոստացման մղեց։ Ռուսական վեպին և գերման ընկերական գրականության ազդեցությունը, գրական կարողությանց ազատ զարգացմանը նպաստավոր միջավայրին պայմանները, դյուրացուցին այդ հանդուգն գրականության կազմավորումը։ 1840ին, Աբովյան ցավագին իրականությամբ հորինված վեպով մը (*Վէրք Հայաստանի*) ցուցուց հայ ժողովրդին տառապանքներն ու արդեն իրազեկ՝ փրկարար ցնցումը։ Նալբանդյան ժողովրդին առջև պարզեց իր թշվառ և ամոթալի կացությունը, կոչում ըրավ*

անոր ինքզինքը պաշտպանելու. երգեց ազատության մեծ երգը, զոր ամբողջ ազգը հնչեցուց.

Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ.
Թող դավ դընե թշնամին.
Մինչև ի մահ կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ՝ պիտ՝ կրկնեմ
Անդադար ազատություն[15]։

Եվ մինչդեռ Աղայանց բանաստեղծը, բարքերու վիպասան Պռոշյանցը, Քերովբե Պատկանյան և Մկրտիչ Էմին բանասերները կ'արտադրեին ազգային գրականության կամ գիտական քննության գործեր, մինչդեռ գաղափարներու մեծ սերմանիչ Արծրունին իր «Մշակ» լրագրին[16] միջոցով ամբողջ ազգին մեջ կը սփռեր առողջ, ամուր և նորոգիչ ոգվով գաղափարներ, երկու գրագետներ երևցան, որոնք շարունակեցին և ավարտեցին Նալբանդյանի գործը. ասոնք էին Քամառ-Քաթիպա երգահյուսը և Րաֆֆի վիպասանը։ Երկուքն ալ գրականության մեջ հեղափոխականներ եղան։ Քամառ-Քաթիպա ժողովրդին հոգին թոթվեց իր երգերովը, որոնք զանի կը մղեին հարձակմանց դեմ ինքնապաշտպանության պատրաստվելու, ավազակներուն բիրտ ուժով պատասխանելու, ինքզինքն իր ձեռքով ազատելու, փոխանակ սպասելու Եվրոպային, որ շատ հեռու է, և Աստուծո որ շատ վերն է։ Րաֆֆի մինչև ծայրը գնաց. իր վեպերուն մեջ մերկացուց ժողովրդին ներքին վերքերը, տկարությունները, միամտությունները, թուլությունը, և համակերպության այն մահացու ոգին, զոր քրիստոնեական սաղմոսերգության դարեր անոր հոգին մեջ արմատացուցեր էին։ Հանդգնությունն ունեցավ այդ աղետաբեր ոգին դեմ բողոքելու, և անոնց դեմ, որ զայն սնուցած էին, եկեղեցական գրագետներուն դեմ։ Ջալալեդդին վեպին[17] ավազակ դարձած ահավոր նախկին քահանան, Քյուրտերեն կողոպտված վանքին խորը կ'աղաղակեր.

«Ո՛վ հայրեր, ո՛վ պապեր, այս գավաթը խմում եմ, բայց առանց նվիրելու ձեր ոսկորներին։ Եթե դուք այս վանքերի տեղ, որոնցմով լիքն է մեր երկիրը, բերդեր շինեիք,— եթե դուք սուրբ խաչերի և անոթների փոխարեն, որ սպառեցին ձեր հարստությունը, զենքեր գնեիք, եթե դուք այն անուշհոտության տեղ որ խնկվում են մեր տաճարներում, վառոդ ծխեիք, այժմ մեր երկիրը բաղդավոր կը լիներ»։

«Խմում եմ այս բաժակը առանց նվիրելու ձեզ, ո՛վ դիր և դպրու-

թյուն, որովհետև դուք չտվիք մեզ այն, ինչ որ պահանջում է կյանքը և իրական աշխարհը։ Դուք լցրիք մեր գլուխը ունայն վերացական ցնորքներով.... Դուք մեզանից դիակներ պատրաստեցիք, որոնց մեջ մեռած է ամեն մարդկային բարձր և վսեմ զգացմունք։ Դուք ավելի պնդացրիք մեր ստրկության շղթաները և վարժեցրիք տանել բռնության ծանր և անպատիվ լուծը»։

Ճշմարիտ է, որ Րաֆֆին անարդար էր այսքան բացարձակ խստությամբ հայ Եկեղեցին դատապարտելով։ Շատ քիչ նկատողության կ'առներ այն դերը՝ զոր այդ Եկեղեցին խաղացած էր ցեղին պահպանման և նորացման գործին մեջ. պետք եղածին չափ չէր տեսներ, որ եթե այդ հոգիի գրականությունը նպաստած էր այս ժողովրդին պատերազմիկ հատկությունները տկարացնելու, մեծ ծառայություն մատուցած էր անոր մտավորականությունը նրբացնելու, արևմտյան աշխարհին ըմբռնումն անոր կարելի դարձնելու։ Բայց Րաֆֆի գիտուն մը չէր. հեղափոխական մըն էր. կողմնակալ և հզոր եղավ։ Պատճառներու երկայն ու կնճռոտ շարքի մը տխուր հետևանքը միայն տեսավ, և անողոքաբար կանգնեցավ կրոնական զգացման դեմ, որովհետև անոր մեջ կը գտներ ժողովրդին համակերպության գլխավոր պատճառը։ Ուզեց վերեն ի վար կործանել հայ հոգիին շինվածքը՝ զայն նոր և ազատ հիմներու վրա կանգնելու համար։

Զայրույթի մեծ շունչ մը կ'անցներ իր գործին մեջեն։ Ծայրահեղ անգթությամբ ու անկեղծությամբ, Րաֆֆի կ'ըսեր իր ժողովրդին. «Դուն ուշիմ ես, դուն աշխատող ես. և այս բոլոր ազգերը որ քեզի կը տիրեն և քեզ կը խոշտանգեն, քու աշխատությամբդ կ'ապրին. դուն ես ամենեն ուժովը. դուն ստեղծված ես քաղաքակիրթ ազգ մը ըլլալու, ինչպես եղած ես ատենով։ Հերի՜ք՝ համբերությո՛ւն, հերի՜ք՝ աղոթք. սորվե՛ նախ ինքզինքդ պաշտպանել, քու մարդկային իրավունքներուդ տիրացիր, ելիր կանգնե բռնավորության ու վայրենության դեմ, և պիտի ունենաս այն կյանքը որուն արժանի ես»։ Եվ Րաֆֆի կը ցուցներ, անողոք հստակությամբ, փրկության արյունոտ ճամբան։

Ժողովուրդը մտիկ ըրավ կարմիր ձայնին և հետևեցավ անոր։ Համակերպած զանգվածին մեջեն, հրավառ երիտասարդություն մը ելավ։ Մասնախումբեր կազմվեցան, ինքնապաշտպանության գործը պատրաստելու, արդարությունը հաստատելու համար։ Դիմադրությունը սկսավ ուրվագծվիլ ժողովրդին մեջ։ Ապստամբ խմբակներ զենքով պատասխանեցին Քյուրտերու ելուզակային հրոսներուն. ցույցեր տեղի ունեցան։ Եվ որովհետև սուլթանը հասկցավ, որ բանտարկությունները, բանտի մեջ

չարչարանքները, խեղդումներն ու բոլոր խստության միջոցները անկարելի էին զսպելու շարժումը որ հետզհետե կը մեծնար, փոխանակ արդար պահանջքը գոհացնելու ժողովրդի մը որ ապրելու իրավունքը կ'ուզեր և որուն բարօրությունը ամբողջ պետության փրկությունը պիտի ապահովեր, որոշեց զայն ջնջել թրքական դիվանագիտության սիրելի միջոցովը, ջարդով։ Իր զինվորները, իր քյուրտերը, իր չերքեսները ծրագիրը իրագործեցին զարհուրելի կատարելությամբ[18]։

Պիտի չծանրանամ,— ոչ ատեն ունիմ, ոչ սիրտ—ջարդերուն մանրամասնության վրա։ Ամեն երևակայութենե վեր է անոնց արհավիրալի ու զազիր նկարագիրը։ Եվ արդեն, դուք իսկ պետք եղածեն ավելի գաղափար ունիք անոնց վրա։ Այսօր ամեն մարդ համոզված է,— և «Դեղին գիրքը»[19] ևս նոր ամենահաստատ կերպով ապացուցուց զայն.— թե ջարդերը կանոնավորապես կազմակերպված էին՝ դեռ հայերը բողոքի շարժում մը չհարուցած, և թե նույնիսկ սուլթանին հրամանով կատարվեցան։ Սա անգամ, նողկալի ու վատ բանը տեղի ունեցավ, որովհետև հայերը սուլթանին ուղղած աղերսագրերով ու Եվրոպայի դրկված պատգամավորություններով՝ կը խնդրեին, որ իրենց մարդկային իրավունքները հարգվին, և որովհետև, շատ տառապելե աչքերնին դարձած, մեկ քանի տեղ սկսած էին զենքով դիմադրել ավազակ խումբերու հարձակմանց, թուրք ժողովուրդը, զինվորներուն և քյուրտ ու չերքես ելուզակներուն միացած, խուժեց անոնց վրա, որ դարերե ի վեր իրեն ծառայած, զենքը անուցած էին, և զանոնք մորթեց, խոշտանգեց, կողոպտեց անողորմաբար։ Հայերը, զենք չունենալով, ու այնքան կուտակված ուժերու դեմ շատ սակավաթիվ, հաճախ վատորեն խաբվելով կառավարութենեն և հանկարծակի հարձակում կրելով, զիրենք պաշտպանել կրցան միմիայն այն անդվանքը, ուր իրենց համար մարդկայնորեն կարելի էր ատիկա։ Անոնք որ ի նպաստ Հայոց ուզեցին համակրություն հարուցանել ջարդի պատկերներ միայն գծեցին՝ հասարակությունը հուզելու համար, և այսպեսով Հայոց՝ ջարդվող ազգի տխուր համբավը շինեցին։ Կարծեմ թե շատ մոռցված է, թե այս ազգը, զոր զոհերու հոտի մը հետ կը շփոթեն, պատմության մեջ շատ անգամ իր պատերազմական հատկության փայլուն ապացույցներ տված է և թե վերջերս ինք եղավ նորեն պետության բոլոր ցեղերուն մեջեն առաջինը, որ համարձակեցավ, նույնիսկ Թուրքիո մայրաքաղաքին մեջ, սուլթանին զզվելի բռնավորության դեմ բողոք բարձրացնել[20]։ Կարծեմ նաև, թե շատ քիչ նկատողության առնվեցան այն կնճռոտ պայմանները, որոնք ինքնապաշտպանությունը այնքան դժվար կը դարձնեն Հայոց՝ մեծ Հայաստանի մեկ քանի

գավառներուն մեջ, և թե բավական չեն հիշեր, որ եթե Հայերը՝ շատ մը քաղաքներու մեջ՝ ստվար մեծամասնություն ունեցող թշնամիին ջախջախվեցան, կրցան սակայն հաղթականորեն շարունակել ապստամբություն մը՝ վեց ամսու չափ՝ Զեյթունի մեջ[21], այդ Հայկական Կրետեին։

Այսօր, Կրետե ամբողջ Եվրոպան կը վրդովե[22]։ Իր տարին մը ավելի տևող հոյակապ դիմադրությունը իրավամբ եվրոպական ժողովուրդներուն հիացումն ու համակրությունը կը գրավե։ Բայց որովհետև Եվրոպայի ժողովուրդներուն համակրությունը չի բավեր ճզմված ազգերն իրենց տառապանքեն ազատելու, հույն կառավարությունը, ժողովրդական ազնիվ և բուռն շարժումե մը մղված, ամենամեծ զոհողություններ հանձն առավ ինքն իսկ իր Կրետեի եղբայրներուն օգնության հասնելու համար։ Համարձակությունը պիտի չառնեմ Եվրոպայի ընթացքը որակելու. միայն պիտի ըսեմ, թե իմ արևելցիի թերևս շատ պարզ մտքիս համար, այս Եվրոպան, որ հակառակ իր խոստումներուն և իր դաշնագրերուն Հայաստանի քստմնելի ջարդերը ամենայն հանդարտությամբ կը դիտե և այսօր Հունաստանին կը սպառնա՝ որովհետև ան կ'ուզե Կրետեցիները ջարդվելե արգիլել, այս Եվրոպան ինծի անհասկանալի կ'երևա։ Ինչ որ կը հասկնամ, այն արհամարհանքն է, զոր ջարդող Թուրքը այսօր զգալու է Եվրոպայի համար. սուլթանը անոր համար հիմա երկրիս ամենեն մեծ վեհապետը դարձած ըլլալու է, որուն առջև կը խոնարհի Եվրոպա ըսված խոշոր բանը։ Արդեն Հայաստանի ջարդերուն ժամանակ, ջարդողները արհամարհոտ հեգնությամբ մը կ'ըսեին Հայերուն՝ զանոնք սպաննելու ատենին՝ «Գացեք ձեր հյուպատոսին քով սատկեցեք»։ Հիմա ավելի գոռոզացած են. ահա Պոլսո մեկ Թուրք լրագրին մեջ քանի մը օր առաջ երևցած հոդվածի մը մեկ հատվածը. «Հույն կառավարութենեն ղրկված քանի մը սրիկա խռովարարներ, թեև ուզեցին վրդովել բարեկարգությունը, որ կը տիրեր Կրետեի մեջ՝ շնորհիվ նորին ամենաողորմած վեհափառության սուլթանին, բայց Եվրոպայի բոլոր կառավարությունները համաձայն են Հունաստանը պատժելու իր փառասեր ամբարտավանության համար»։ Թուրքերը, որ, դեռ Հայոց արյունովը ծխաշունչ, կ'ուրախանան Եվրոպայեն օժանդակվելնին ու խրախուսվելնին տեսնելով, պիտի խոստովանիք որ ցավալի տեսարան մըն է աս։ Եվ կ'ըմբռնեք որ ասիկա պիտի ծառայե մութին մեջ սրել տալու արյունեն ժանգոտած յաթաղանները վաղվան ջարդերուն համար։

Կը խնդրեմ, որ ներեք ինծի, տիկիններ և պարոններ, եթե քաղաքական նկատողությանց մեջ կը մոլորիմ բանախոսությանս մեջ, ուր որոշած էի միմիայն գրականության վրա խոսիլ. իրարու հաջորդող հետզհետե ավելի հրավառ դեպքերը այս շեղումը տիրաբար ինծի պարտավորիչ կը դարձնեին։ Կը դառնամ ուրեմն իմ նյութիս և կավարտեմ։

Այս իրիկուն խոսեցա ես, ոչ թե դիվանագետներուն, որոնց համար հարստահարված ժողովուրդներն ու անոնց տառապանքները քաղաքական հետաքրքրության տեսակետով միայն շահեկան են. խոսեցա մտածողներուն. արվեստագետներուն, անոնց որ կը սիրեն մարդկային կորովին փթթումը ուսումնասիրել յուրաքանչյուր ազգի մասնավոր հոգեբանության մեջ։ Խոսեցա Բարիզի ժողովրդին, որ ինքն իսկ այնքան արվեստագետ, այնքան բանաստեղծ է, և որ միշտ վեհանձն ու խանդավառ է եղած ամեն կորովի արտահայտության, ամեն դեպի ազատություն և դեպի քաղաքակրթություն ուղղված ջանքերու առջև։ Գծեցի մտավորական կյանքին պարույթը ժողովրդի մը, որ թեև Արևելքին մեջ բուսած, միշտ՝ խորհրդավոր հակումներով՝ դեպի Արևմուտք երկնցած է, ատենով՝ դեպի քրիստոնյա Հունաստանը, այս դարուս՝ դեպի ազատ Ֆրանսան։ Ջանացի ցույց տալ, թե այս ժողովուրդը որուն մեծադղորդ դժբախտությունները Եվրոպայի ցավակցական ուշադրությունը հրավիրեցին, իր դժբախտություններեն զատ ուրիշ տեսակետով շահեկան է։ Փորձեցի բացատրել, թե հայ ժողովուրդը, ճակատագրին ձեռքով Արևելքի և Արևմուտքի մեջտեղը հաստատված, ունենալով ճապուկ ու դյուրավ յուրացնող միտք, կրնար, լավագույն պայմաններով, Փոքր Ասիո մեջ եվրոպական քաղաքակրթության խմոր մը դառնալ։ Երջանիկ պիտի ըլլայի, եթե հարստահարվածներուն վիճակովը շահագրգռվողները հաճեին Հայաստանի ջարդերուն մեջ տեսնել դիակներու հրեշային կուտակումե ավելի բան մը. կ'ուզեի, որ հոն տեսնեին մանավանդ մտավորական կյանքի կարող ազգի մը ջախջախումը ամեն քաղաքականության քանդիչ իշխանության մը ձեռքով. կ'ուզեի նկատի առնեին սա կետը, որ, եթե մարդիկ սպաննեցին, կիներ ճեղքեցին, երեխաներ հոշոտեցին, ուզեցին նաև Մտածումը ջնջել, դպրոցներ այրեցին, եկեղեցիներու և վանքերու պատկառելի կերտվածքը կործանեցին, և փճացուցին ձեռագիրներ, որոնց մեջ դարերե ի վեր կ'ապրեր ցեղի մը հոգին։

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Ազգերը հավաքական էակներ են. իրենց ընդարձակ ու կնճռոտ կյանքը ունին. կը ծնին, կ՚աճին, կը կռվին, կ՚երազեն, կը գինովնան, կը թմրին ու հանկարծ նորեն կ՚արթնանան, կը մեռնին իսկ ու վերստին կը ծնին։ Այդ խորին ու բազմադիմի կյանքը ուսումնասիրելու համար, պետք է ամենեն ավելի նայվածքը սևեռել այն էական բջիջներուն վրա, որոնք ազգերուն շինվածքին գերագույն մասը կը կազմեն, անոր ուղեղը,— այսինքն մտքի մարդերուն։ Անոնց կենդանության կամ ընդարմացման համեմատ՝ ազգը կը կայտառանա կամ կը վհկի. անոնք կը կատարեն հարություններուն խորհրդավոր գործը, անոնք կուտան ազգին իր կենսունակության գիտակցությունը, և երբ անոնք լռեն, ազգը կը չքանա։

Ազգին բոլոր անգիտակից սկզբնական խլրտումը դեպի կյանք, հողը պաշտպանող հերոսներուն ճիգերը, արվեստը ստեղծող, օրենքը հիմնարկող, ճարտարագործությունը հաստատող մարդոց փորձերը այս առեն իրականություն կ՚առնեն և ճշմարիտ ամբողջություն մը կը կազմեն, երբ կը բարձրանա ձայնը, որ ազգին հոգին կերգե և երգելովը անոր ձև մը, մարմին մը, վերջնական կերպարանք մը կուտա։ Լատին աշխարհին քայքայումեն[23] հետո. երկայն ու տաժանելի վերակենդանացում մը սկսավ. այն մեծ էակը, որ հռոմեական պետությունը եղած էր՝ կը բաժնվեր, մեկ քանի նոր անհատականություններու ծնունդ կուտար, որոնք Ֆրանսիան, Սպանիան և Իտալիան եղան[24]։ Այդ նորածին ազգերը այն օրն իրենց գոյության զգացումն ունեցան, երբ «Շանսոն տը Ռոլանը» ֆրանսացի քաջերուն ներբողը հնչեցուց, երբ սպանիացի երգիչներուն Ռոմանսերոն կաստիլյան արությունը պանծացուց, երբ մանավանդ Դանթե մը և Պետրարքա մը, անկերպարան թոթովումներեն հանելով, մեկ հարվածով կատարելության հասցուցին լեզուն, արվեստը, հայրենիքի գաղափարը, Իտալիան ամբողջ։ Հակառակ ամենամեծ ջախջախումներու և կազմալուծմանց, պետք չէ հուսահատիլ ազգի մը գոյութենեն, երբ աղետքեն հետո, սուգ մոխիրներուն միջեն անցնիլը կը տեսնվի աշուղին, իր քնարին հետ, որ հին քաջությունները կը համառի մրմնջել։

Մեր մեջ Աբովյան գլխավոր հիմնադիրներեն մեկը եղավ նոր հայության։ Տոնելով Աբովյանի մահվան հիսնամյակը, հայ ժողովուրդը իր բարոյական զարթնումին մեկ մեծ թվականը տոնած կ՚ըլլա։

...Աբովյան ժողովրդին ձայնը եղավ. ուզեց լույսը տանիլ խոնարհ խավերուն մեջ, որոնք հեռու մնացած էին բարձր դրականութենեն՝ սակավաթիվ զարգացյալ դասակարգի մը միայն մատչելի, Աբովյան ժողո-

*վրդին, ամբողջ ժողովրդին խոսեցավ, ժողովրդին լեզվովը, ժողովրդին վրա։ Ինքը նոր հայերենին կյանքը հաստատեց և առջի փորձեն իսկ հաղթանակը տարավ, որովհետև իր գործը կատարեց գրական հրաշակերտով մը...*

## ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

1905, դեկտեմբերի 18, Փարիզ

*Ռուսիո մեջ ազատականության հաղթանակեն ի վեր[25] (որուն կը զուգադիպի արևմտյան ազատական Եվրոպայի խմբավորումն ու զորեղացումը) ես ավելի լավատես ըլլալ սկսած եմ հայ ժողովրդին ապագային համար. հայ ժողովուրդը երբ լավագույն պայմաններու մեջ գտնվի, հայ գրագետին կացությունն ալ կը բարեփոխվի։...*

## Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ԱՌԹԻՎ

*Աբովյան եղավ մին այն հայերեն, որ ամենեն ավելի խանդով, հավատքով ու հանճարով երազեցին, ցանկացին ու պատրաստեցին ազատագրումը հայ մարդին, և իր գործը, որքան ալ միջավայրի խաթարիչ ազդեցությունները և տխուր առհավլությանց բռնական ներգործությունը մերթ մշուշացուցած ըլլան անոր մաքրությունը, հայկական պանթեոնին մեջ պիտի կանգնի հավիտենապես կենդանի ու հաղթական՝ իբրև մեծագույն հիշատակարաններեն մին հայ հանճարի բարձրության ու հայ սրտի գեղեցկության։...*

## ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Նոր կացությունը, որուն հասած ենք՝ մեծ պայքարներու, մեծ աղետներու, մեծ հույսերու և մեծ հուսախաբությանց երկար շրջանե մը հետո, կը կայանա գլխավորապես Հայ Տերության մը գոյության մեջ։ Պատերազմեն առաջ՝ շատ բան ունեինք, զոր կորսնցուցինք, բայց այդ էական բանը չունեինք։ Մեր դարավոր երազին ու պայքարին նպատակն էր ունենալ ազատ հայրենիք մը, «մեր տունը», ուր մեր ազգային կյանքն ու մշակույթը կարենային զարգանալ անարգել. ատ ունինք այսօր։ ...Հայաստանին գոյությունը ապահովված է շնորհիվ այն ազնիվ հոգածության զոր Խորհրդային Միության գերագույն խորհուրդը անոր վրա կը տարածե, շնորհիվ մեծ զորության այդ Միության որուն ինքն*



22—1254

ալ, այդ փոքրիկ Հայաստանը, մեկ անգամն է։ Հիմնված՝ այդ ապահովության վրա, և նույնիսկ խորհրդային աշխարհը ղեկավարող քաղաքական լայնոգի սկզբունքներուն վրա, մեր ազգային ինքնավարության և ազգային մշակույթին կյանքն ու զարգացումը կրնանք այլևս ամրորեն երաշխավորված նկատել։...

## ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

*Բայց կարելի է պահանջել ամեն անհատե, ի՛նչ ալ ըլլա իր խառնվածքը, որ անտարբեր չմնա մեծ հուզումներուն իր ազգին ու ամբողջ մարդկության, որուն մեկ օղակն է իր ազգը։ Ամեն անհատ պարտավոր է իր չափովը և իր կրցած եղանակովը հետաքրքրվիլ հանրային գործին. ու աջակցիլ անոր։ Փղոսկրե աշտարակին մեջ կամ անձնական ցավերուն երգին մեջ կղզիացած մնալու համառիլը ոչ միայն դատապարտելի է բարոյական տեսակետով, այլև գեղեցկագիտական տեսակետով, որովհետև «տգեղ» է տեսնել հոգի մը, որ, գեղեցկություն արտադրելու կարող, բարոյական հուզում ստեղծելու ունակ ըլլալով հանդերձ, իր մտավոր հնոցեն ոչ մեկ կայծ չի նետեր մարդկային պայքարին սրբազան վառարանին մեջ։ Այսպես, Շենիե[26], Ֆրանսայի ամենեն զմայլելի ու մաքուր արվեստագետներեն մին, որ, մինչդեռ Վոլթերներն ու Ռուսոները հեղափոխությունը կը պատրաստեին, նոր Թեոկրիտի մը սրինգը հնչեցնելով կը շատանար, և ատով իր երկրին գեղեցկագիտական ճոխությունները բազմապատկողի շատ ազնիվ դերը կը կատարեր, ինքն իսկ ցնցվեցավ հանրային կյանքին մրրիկեն, երբ հեղափոխությունը գաղափարի վիճակեն իրականության վիճակին անցնիլ սկսավ, մասնակցեցավ սրտով, գրչով ու գործով հավաքական պայքարին, և եթե ախմար ու ոճրագործ վճիռ մը զինքը տարաժամ չքացուցած չըլլար, Ֆրանսացի Թեոկրիտը պիտի թողուր գործ մը, որ զինքը երկրորդ Լուկրեցիոս մը պիտի կացուցաներ և որուն նոթերն ու մեկ քանի գրված հատվածները կը մնան միայն։...*

## ՎԻՔԹՈՐ ՀՅՈՒԿՈ

*Ճիշտ է, որ իր կյանքի առաջին շրջանին մեջ, եթե իր գրական բուն ուղին գտնելու ու անոր մեջ վճռաբար հառաջանալու համար երկար չէ սպասած, քաղաքական և ընկերական հարցերու մեջ իր վերջնական դիրքը ճշտելու համար՝ զանազան փուլերե անցած է, իր Վանտեցի մոր ազ-*

դեցության տակ։ Լուի ԺԸ-ի և Շառլ Ժ-ի օրերուն՝ եղած է թագավորական, հետո՝ Նափոլեոն Բոնափարթի հանճարի ու նկարագրի մեծության համար հիացում ունեցած և անոր հզորագույն դյուցազներգակը հանդիսացած է ու պահ մը նույնիսկ «ազատական կայսրության» մը Ֆրանսիայի մեջ հաստատման համախոհ եղած է (Նափոլեոն Գ-ը կայսեր, և ինք վարչապետ...)։ Հետո՝ Լուի Ֆիլիփ ռամկավարական թագավորին օրով՝ բարեկամ եղած է այդ պետին, բայց իշխան Լուի Նափոլեոնի պետական հարվածով Ֆրանսիայի մեջ 1830-ի և 1848-ի հեղափոխություններով հաստատված ռամկավարական կարգերուն ջնջումին դեմ խորապես վայրացած, ան այլևս վերջնապես դարձավ հեղափոխական մը[27], ընդդիմադիր պայքարող մը, մոլեռանդ հանրապետական մը, որուն համար հեռացավ նույնիսկ իր սիրած հայրենիքեն, կամավոր աքսորի մը անսասույգ ու նեղություններով լի կյանքը հանձն առավ, և այլևս իր խառնվածքին ու մտայնության ամենեն հարազատ քաղաքական վարդապետության՝ այն է ժողովրդավարական, հանրապետական կառավարության մը սկզբունքին՝ վճռապես հարած, այդ իդեալին համար պայքարեցավ քսան տարի շարունակ, և Նափոլեոն Գ-ի անկումեն և հանրապետության Ֆրանսայի մեջ վերջնական հաղթանակե հետո, ան մնաց մինչև մահը իր երկրին մեջ այդ իդեալին մոլեռանդ պաշտպանը, անոր հաջողությամբ պսակված առաքյալը, և իր այդ իդեալն ընդլայնելով՝ ան եղավ նաև համաշխարհային եղբայրական հանրապետության մը վսեմ երազին երգիչը...

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

# ՀԱՅԻ ՈԳԻՆ

...Պատմությունը ցեղեր է հիշում, որ իշխել ու նշանավոր են եղել, քանի որ ունեցել են քաղաքական ինքնուրույն իշխանություն, զենքի զոռ ու ֆիզիկական ուժ. հենց որ կորցրել են քաղաքական անկախությունը, հետզհետե հալվել են ժողովուրդների մեջ ու կորել։ Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կյանքը կորցնելուց հետո էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամեն տեսակ հալածանքների տակ։ Իհարկե ծանր է եղել միշտ էս մաքառումը և բարոյական ու ֆիզիկական կորուստները անվերջ, բայց այնուամենայնիվ նրանք չեն կորել ու կան։ Էդ ժողովուրդներից մինն է անշուշտ մեր դժբախտ ցեղը, որ քաղաքականորեն անկախ չի եղել գրեթե երբեք, որ իր գոյության տարիներից ավելի շատ կարող է կոտորածներ համարել, և սակայն էսօր էլ տակավին կա իր լավ թե վատ ազգային կյանքով ու կերպարանքով...

Մեզանում, հիրավի, ճանապարհներ կան որոշած, բայց դրանք էս կամ էն կուսակցությանն են կամ լրագրինը։ Ամեն ազգի մեջ կան և միշտ կլինեն ամեն տեսակի հասարակական ու քաղաքական կուսակցություններ ու հոսանքներ, բայց բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջությունը։

Այո՛, լինում են դեպքեր, մի որևէ հոսանք ուժ է առնում ու ժամանակավոր էս կամ էն կողմը քաշում կյանքն ու մարդկանց ուշքը, բայց դրանք մոմենտներ են ամեն ժողովրդի կյանքի մեջ, որոնցից ոչ մինը առանձին վերցրած պատասխան չի տալ դրված հարցին. և նա պարզյալ կխոսի ու պատասխան կտա, թե ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը. ի՞նչ է կամենում սա, սրա ոգին։ Եվ ուր որոնենք էդ ոգին։ Արդյոք Սասունի, Զեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերո՞ւմ, թե Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում։

*Արդյոք հին վանքերի միստիք կամարների տա՞կ, ուր ծավալվում է «խորհուրդ խորին անհաս և անսկիզբն»[1], թե՞ դալար մարգերում ու խաղաղանիստ հովիտներում, ուր «Լուսնյակն անուշ, հովն անուշ, շինականի քունն անուշ»[2]։ Արդյոք «ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծոյ» խոստողի[3] երկնաշունչ պաշտամունքների՞ մեջ, թե՞ «Վերք Հայաստանի» հայրենասիրական ոգու հառաչանքների ու մորմոքների մեջ։*

*Իհարկե, էս ամեն տեղերում, էս ամենի մեջ։ Եվ ի՜նչքան մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կարոտը էս ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածության ու ավերածության...*

*Ո՞րն է հայ ժողովրդի ոգին և ի՞նչ է ուզում նա։*

## ԵՐԵԿՎԱ Ն ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՍՕՐՎԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Նորից ռռնում է հին ծանոթ գույժը—«Տաճկաստանում կոտորում են հայերին»...[4]*

*Նորից կոտորածի մռայլ մղձավանջը ծանրանում է մեր հոգնած սրտերին և նորից ամենուրեք դալկանում է Արևելքի հին տառապյալը—հայ ժողովուրդը։*

*Ոմանք ասում են՝ սուտ է, կոտորած չկա։ Հայերի դատարկ սարսափն է միայն, որ աղաղակում է այդպես զարհուրելի։ Բայց մեր աշխարհներին ու կիսավայրենի ժողովուրդներին ծանոթ մարդը ամենայն հեշտությամբ պետք է հավատա կոտորածին։*

*Եթե մինչև անգամ միայն սարսափն է գոռում այսօր, մի՞թե սարսափը դատարկ բան է, էն էլ սարսափելի երկրում ու սարսափելի ժողովուրդների մեջ։ Էդ էն սարսափն է, որ աղաղակում է ամեն կոտորածից առաջ ի լուր աշխարհի։*

*Մի՛ ասեք, թե սուտ է և ապարդյուն ու թշվառ քաղաքականության մի՛ դիմեք անհույս ու շատ փորձված կողմերում։*

*Դիմեցեք հայոց պատմությանը, Կովկասի պատմությանը, Արևելքի պատմությանը—նրանք ձեզ կասեն. էդպես է եղել միշտ—սարսափ ու կոտորած, սարսափ ու կոտորած... իսկ վերջին դարերում սարսափի, կոտորածի հետ միաժամանակ կկարդաք. «ս. պատրիարքը գնաց մեծ եպարքոսի մոտ, նրան հավաստիացրին, որ արդեն կարգադրություն է եղած խաղաղությունը վերականգնելու և չարագործներին պատժելու,*

կամ թե չէ՝ պատրիարքը հրաժարական տվեց...», և դարձյալ սարսափ ու կոտորած, սարսափ ու կոտորած...

Վերցրեք մեր պատմությունից ժամանակի մի որոշ տարածություն։ Ահա ձեզ 1912 տարի։

1912 տարի է մի անհավասար կռվի մեջ միսն ատամն առած մաքառում ու տանջվում է էս ժողովուրդը, կոտորվում ու փչանում է էս ժողովուրդը։

1912 տարի է Արևելքի բոլոր հզորներն ու բարբարոսները արյունով ու արտասուքով հեղեղում ու ողողում են էս երկիրը։ 1912 տարի է սարսափ ու կոտորած, ջարդ ու գաղթ հետևում են իրար անընդհատ։

Էս ամենը դարերով տեսնող ու տանող ժողովուրդը անշուշտ մի իմաստություն պիտի հաներ ու սովորեր էսքան դառը փորձերից ու փորձանքներից, մի քաղաքականություն պիտի ստեղծեր ու մշակեր իր համար էս դժոխք աշխարհքում։

Եվ հայ ժողովուրդը ստեղծեց ու մշակեց իր համար գլխապահության, ինքնապաշտպանության քաղաքականությունը։

Բայց լավ փորձելով ու տեսնելով, որ անկարող է միայն ինքնապաշտպանությամբ իր գլուխը պահել, միշտ աշխատել է միաժամանակ ունենալ մի հզոր դաշնակից կամ ավելի ճշմարիտը—հովանավոր Արևմուտքի քրիստոնյա պետություններից, որովհետև նրան անդադար հոշոտում ու ծվատում էին ոչ միայն վաչկատուն ցեղերն ու ժողովուրդները Արևելքի, այլև հենց էն պետությունները՝ զրադաշտական թե իսլամ, որոնց հավատարիմ հպատակն ու հարկատուն էր նա։

Եվ 1912 տարի շարունակ իր երկրի մերթ էս, մերթ մյուս կողմերում ինքնապաշտպանություն կազմակերպելով ու դիմագրավելով օրհասական տագնապների մեջ, նա՝ հայ ժողովուրդը երկար դարերով անդադար օգնություն ու պաշտպանություն է աղերսել քրիստոնյա Արևմուտքից, և էդքան դարերի ընթացքում միայն երկու անգամ է պատահել, միմիայն երկու անգամ, որ նա Արևմուտքից գտել է օգնություն և ուժեղ հովանավոր։

Առաջինը եղել է արևելյան հռոմեական կայսրությունից—Բյուզանդիայից[5], երկրորդը—ռուսական կայսրությունից։

Հայոց պատմությունը հոյակապ է նկարագրում էն տեսարանը, երբ Ձիրավի մեծ դաշտում մի կողմը պարսկական թշնամի զորքն էր ծփում «իբրև ծով խմն ահեղ», իսկ նրա դեմ Հայաստանին օգնության եկած բյուզանդական բանակն էր կանգնած իր խաչանիշ դրոշակով «իբրև լեառն ադամանդեայ»։ Եվ մինչդեռ Արևելքի ու Արևմուտքի էս ահագին

զորությունները իրար եկած վճռում էին հայ ժողովրդի ճակատագիրը՝ վերև, Նպատի նվիրական բարձունքին հայոց մեծ Ներսեսը գոչում էր. «Ա՛ռ Տէր՝ բազկատարած հայցմամբ խնդրելով ի նմանէ հայիլ ի խաչակիր դրօշակ իւրոյ ժողովրդեան», որի աշխարհը դարձել էր «սպանդարան մարտիրոսաց»[6]:

Թերևս ավելի սրտառուչ է, երբ շատ դարերից հետո էջմիածնին օգնության շտապող ռուսաց բատալիոնները Կրասովսկու առաջնորդությամբ Ապարանի լեռներից Պարսկաստանի գահաժառանգ Աբբաս Միրզայի տասնապատիկ ավելի ուժեղ բանակի կրակի միջով ձգվում էին դեպի Հայոց մայր Աթոռը, և մինչդեռ ամբողջ օրը Արարատյան դաշտում, Օշականի ձորում, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի շուրջը որոտում էր պատերազմը, մի ուրիշ մեծ Ներսես սեղան էր հանել Հայաստանի սրբությունները և Լուսավորչի գերեզմանի առջև տարածված ամբողջ միաբանությամբ առ Աստված էր աղաղակում պատերազմի ելքի և պարսկական դժոխքի մեջ այրվող իր ժողովրդի փրկության համար. և աչքերը հանած, լեզուները կամ ոտներն ու ձեռները կտրատած հայ մարդիկ Մայր տաճարի զանգակների տխուր ղողանջյունի վրա սողում էին էջմիածին կամ դեպի քրիստոնյա բանակը[7]:

Եվ զուր չի էդ հողի վրա հայոց եկեղեցին արձան կանգնեցրել հայ ժողովրդի ապագա սերունդներին ի գիտություն:

Այո՛. էդ ամենը պետք է իմանան ապագա սերունդները:

Այսօրվա շատ մարդիկ, հայ թե ռուս, չեն էլ կարող երևակայել, թե ինչպես են իրար հանդիպել հայն ու ռուսը: Ականատեսներից մեկը, հայտնի դեկաբրիստ Ե. Ե. Լաչինովը, իր «Խոստովանությունների» մեջ սաստիկ սրտաշարժ պատմում ու նկարագրում է անցյալ դարի սկզբներում էդ հանդիպումները:

Նկարագրում է տաճկական, պարսկական ու քրդական գազանությունները, պատմում է, թե ինչպես էին նրանց առաջ սարսափահար փախչում հայերը գեղահան ու տեղահան եղած: Պատմում է, թե ինչպես էին նրանք վազում դեպի ռուսական զորքերը՝ ծեր ու մանուկ, մարդ ու կին, աղաղակելով, Русь! Русь! здрасти! здрасти!...

Եվ էդ մի բառով էին արտահայտում ամեն բան, և սարսափ, և աղաչանք, և սեր, և խնդիր, որովհետև լեզու չգիտեին: Իսկ մյուս կողմից. «Не бойтесь! Не бойтесь!» ձեն էին տալի սարսափահար գյուղացիներին թշնամու դեմ վազող զինվորներն ու արագացնում էին իրենց վազքը:

Ակներև էր, ասում է նա, Լաչինովը, որ գերազանց հանդիսանալու ցանկությունը չէր, այլ յուրաքանչյուրի սրտին հարազատ կարեկցության

զգացմունքն էր տանում ամենքին։ Մեզանից ամեն մինը մասնակցում էր դժբախտների վիճակին։ Նրանք իրենց հանձնել էին մեր պաշտպանության, մենք տեսնում էինք նրանց լիովին վստահությունը ռուսական բնավորության. նրանց երախտագիտությունը շարժում էր մեզ, հարուցանում էր մեր մեջ ազգային պատվասիրության բարձր ու ազնիվ զգացմունքը։ Վերջապես վտանգի միջի կինը, էն թույլ ու անպաշտպան արարածը, որ սակայն ամեն ժամանակ ու ամեն տեղ մեծ ազդեցություն է ունեցել սխրագործությունների վրա, ասպետական ոգու վրա,— ահա թե ինչն էր պատճառը, որ մեզանից ամեն մինը հարձակվողներին նկատում էր որպես անձնական թշնամիների և ջանում էր պաշտպանելու ոչ թե իբրև օտար մարդկանց, այլ իբրև իր ազգականների» (Кавказск. сб., т. I. Отрывок из «Исповеди» Лачинова)[8]:

Նա. Լաչինովը, պատմում է[9], թե ինչ սրտառուչ խանդավառությամբ էր դիմավորում իրենց հայ կեղեքված ու տանջված ժողովուրդն ամեն տեղ, ինչպես էր աղոթում, լալիս ուրախությունից. թե նույնիսկ էն երեխան էլ, որ նոր էր սկսել թոթովել, իրենց տեսնելիս ինչպես էր կանչում «Здравствуй, здравствуй...».

Իսկ մյուս կողմից ռուս օֆիցերներն են գանգատվում, թե հայերին օգնության գնալիս անկարելի է կարգ պահպանել զորքի մեջ, զինվորական շարքերում. որովհետև ամեն մի զինվոր առաջ է նետվում ավելի շուտ օգնության հասնելու համար և խանգարում են կարգը։ Անկարելի է լինում կարգ պահպանել։

Էսպես. էն լացախառն ու աղոթքախառն «Здравствуй»-ն, որով ողջունում էր բազմատանջ հայ ժողովուրդը ռուսական ազատարար բանակին, հենց էնպես աղոթքով ու արտասուքով էլ արձանագրվեց ու հավերժացավ «Վերք Հայաստանի»-ի մեջ, ինչպես էն ի խորոց սրտի խոսքերից մինը, որ երբևիցե արտասանել է հայ ժողովուրդը աշխարհքի առաջ, և իր մշտական տառապանքի մեջ էլ միայն էն ժամանակ է մի իրական օգնություն տեսել, երբ հնչել է եղբայրական հուժկու «Не бойтесь»-ը հանուն արդարության, հանուն քաղաքակրթության։

Մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ վառվում է Անատոլիայի անմար դժոխքը, չի մարած ռուս մարդու լայն սրտի մեջ էդ ազնիվ ու վեհ զգացմունքը, որով նա պետք է պարծենա աշխարհքի առաջ. մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ միլիոնավոր մարդիկ կոտորածի առաջ սարսափահար կարեկցություն ու պաշտպանություն են աղերսում—ռուսական մեծ պետությունը չի հրաժարվիլ Արևելքի մորթվող ժողովուրդներին պաշտպանելու սրբազան ավանդություններից և հիմնվելով մի-

ջազգային դաշնագրերով իր ունեցած իրավունքների ու պարտավորությունների վրա՝ կարտասանի իր հսկայական «Не бойтесь»-ը. մենք կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք էդ մեծ ուժին ու կենդանի զգացմունքին և հավատում ենք, որ նա վերջ կդնի հայ ժողովրդի էս անվերջ կոտորածին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսությանը, քաղաքակիրթ աշխարհքի էս անվերջ խայտառակությանը։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ[10]

Երևակայեցեք թե քանի տարի է, ինչ դուք ծանոթ եք մի նշանավոր մարդու, դրա համար էլ ձեզ համարում են քանի տարեկան, մինչդեռ 50 կամ 60 տարեկան եք դուք։

Սրա նման մի բան է, որ սովորաբար ասում են 35 տարի է, ինչ գոյություն ունի հայկական հարցը, որովհետև 35 տարի է, որ դրված է եվրոպական դիվանագիտության առջև և էդ էլ հաշվում են Բեռլինի դաշնագրության օրից։

Մի հիմնական սխալ, որ մարդկանց մտածողությունը սահմանափակելով էս 35 տարվա ժամանակի ու դեպքերի շրջանակում, պատճառ է դառնում շատ սխալների։

Սակայն եթե ազատվենք էդ մեծ սխալից, հարցին նայենք ավելի մեծ տարածության վրա, հեշտ էլ կճանաչենք նրա բնավորությունը, ավելի հաջող էլ կմտածենք նրա բանական ու բնական լուծման հնարավորությանը։

Եվրոպական դիվանագիտության համար, այո՛, 35 տարի է, ինչ որ գոյություն ունի հայկական հարցը, բայց մեզ համար էլ հո էդպես չի, 35 տարի չի, ինչ որ գոյություն ունի նա։

Երկրորդն էլ մեր հարցը Բեռլինից չի սկսվում և եվրոպական պետությունները չեն դրել, այլ Սան-Ստեֆանոյից է սկսվում[11], և ռուսներն են առաջին անգամ հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը։

Էս երկու ճշմարտության մշտապես հիշելը շատ է կարևոր և շատ բան են ասում սրանք։

Հայկական հարցը շատ է հին։ Իր ամբողջությամբ նրան մեզանում քչերն են ծանոթ ու տեղյակ։ Նա իր սկզբնական շրջանում զուտ քաղաքական խնդիր էր և հետամուտ էր ձեռք բերելու հայի կորցրած քաղաքական անկախությունը։ Բայց ժամանակի ընթացքում ջախջախվեց ինքը—հայ ժողովուրդը, ջախջախվեցին նրա ուժերն ու հույսերը ու իջ-

նելով, իջնելով պարսկական ու տաճկական բռնակալության տակ՝ պահանջը հասավ մինիմումի։ Եվ էսօր նա հանդես է գալիս արդեն լոկ որպես քաղաքացիական ազատության խնդիր, որ իր պահանջը վերջ ի վերջո ձևակերպում է էսպես. կյանքի, գույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովություն։

Թե Հայոց հարցը քաղաքացիական խնդիր է, ոչ թե քաղաքական, էդ լավ գիտեն թե Եվրոպայում, թե Տաճկաստանը, և թե Ռուսաստանը, և հայոց սեպարատիզմի առասպելին լուրջ մարդիկ չեն հավատում։ Ռուս հայտնի գեներալ Ցաղենը իր «Армянская народность» աշխատության մեջ հերքելով հայկական սեպարատիզմը, որպես քաղաքական ուղղություն, ասում է՝ եթե մինչև անգամ դրսից էլ օգնություն առանա, դարձյալ անիրագործելի բան է դա։

Եվ էսպես ամենքի համար նա է և մնում է կյանքի, գույքի պատվի և կուլտուրական զարգացման ապահովության պահանջ։

Արդ, ո՞րտեղ և ո՞ր օրից գոյություն ունի հայկական հարցը իր ներկա բնավորությամբ։

— Էն օրից, ինչ որ վտանգվել է հայ ժողովրդի կյանքը. գույքը. պատիվն ու կուլտուրական զարգացումը։ Եվ գոյություն է ունեցել Պարսկաստանում, գոյություն է ունեցել և ունի Տաճկաստանում։ Գոյություն չունի և չի ունեցել Ռուսաստանում, թեկուզ իշխան Գալիցինի օրերում[12]։ Ընդհակառակը, հայ ժողովուրդը միշտ նայել է Ռուսաստանի վրա որպես իր խնդրի ավանդական պաշտպանի վրա։

Դեռ 18 դ. սկզբում Օրին, հայոց բարձր հոգևորականությունն ու մելիքները բանակցության մեջ էին Պֆալցի գերմանական կուրֆյուրստ Յոհան Վիլհելմի հետ և, առաջարկելով Հայաստանի իշխանությունը, խնդրում էին նրան ազատել իրենց երկիրը պարսկական բռնակալությունից, դերեվարություններից, կոտորածներից, կեղեքումներից ու առևանգումներից[13]։

Ուրեմն էն ժամանակ գոյություն ուներ հայկական հարցը Հայաստանի պարսկական մասում և կոչվում էր պարսկահայկական հարց։ Եվ դեռ էն ժամանակ էր, որ գերմանական կուրֆյուրստը, թեև ցանկանում էր օգնել հայերին, հայտնեց, թե եվրոպական պետությունները հակամարտ շահեր ունեն Արևելքում—Պարսկաստանում ու Տաճկաստանում, չեն միաբանել հայկական հարցի վրա, վերջը՝ թե հայ ժողովրդի փրկությունը չի կարող գլուխ գալ առանց Ռուսաստանի։ Խորհուրդ տվեց դիմել Ռուսաստան Պետրոս Մեծին։ Շատ շուտով փորձն ու գործն էլ ցույց տվին, որ միայն Ռուսաստանը կարող էր վճռել խնդիրը։ Եվ թե Օրին ու

*հայ հոգևորականությունն ու մելիքները, թե հայ ժողովուրդը էն օրվանից երեսներն արին դեպի Ռուսաստան։ Ու ընդմիշտ դեպի Ռուսաստան։ Մինչև էսօրվան օրը։*

*Ռուսաստանը էն միակ մեծ պետությունն էր, որ, անվերադառնալի վճռած, իր պատմական հարվածներն ուղղել էր Պարսկաստանի, բայց մանավանդ Տաճկաստանի վրա, և ուզում էր մի կողմից Ցարգրադի դարպասի ճակատին կախել իր վահանը, մյուս կողմից իջնել դուրս գալ Պարսից ծոցը։ Էսպես. ճանապարհն ուղիղ Կովկասի վրով, այլև քրիստոնյա ու անհամեմատ ավելի բարձր իր քաղաքակրթությամբ։ Ու հայ ժողովուրդը բազմատանջ Վրաստանի հետ միասին ապավինեց նրան։ Իսկ Կովկասը իր բարեկամ քրիստոնյա ժողովուրդներով Ռուսաստանի համար թե՛ ռազմական, թե՛ տնտեսական տեսակետից հանդիսանում էր միակ ու հաստատուն կռվանը Արևելքում։ Էսպեսով էլ երկուստեք դաշն ու հավատարմությունը ապահովված էին վերին աստիճանի կենսական ու հաստատուն երաշխիքներով։*

*Ու ահա*

«От Урала до Дуная
До большой реки
Колыхаясь и сверкая
Движутся полки...

. . . . . . . . . . .

Идут все полки, могучи,
Шумны, как поток
Страшно-медленны, как тучи,
Прямо на восток[14].

(Лермонтов).

*Ու մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո[15] վերջնականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց Հին Սյունիքը, Գուգարքն ու Արարատյան երկիրը և միանգամ ընդմիշտ վերջ տվեց կոտորածներով, գաղթականություններով ու առևանգումներով հայտնի հայկական հարցին հայոց աշխարհքի էս մասում[16], կամ ուրիշ խոսքով՝ պարսկահայկական հարցին։*

*Մնաց տաճկահայկական հարցը։*

*1829. 55[17] և 78 թվականների պատերազմներով էլ իր ձեռքի տակը բերելով Ալեքսանդրապոլն ու Ղարսը[18] և այլ շրջաններ—էդ մասերում էլ լուծեց հայ ժողովրդի կյանքի, գույքի և պատվի հարցը։ Սակայն սրանով լուծվեց տաճկահայկական հարցի մի մասը, իսկ մնացած մասում, ինչ որ մնաց Թուրքի ձեռքի տակ—Էրզերում, Վան, Մուշ և այլ տեղեր, մնա-*

ցին ու շարունակվեցին նույն կոտորածները, նույն գաղթականությունները, նույն բռնաբարությունները ու առևանգումները— մի խոսքով նույն հին հայկական հարցը։

Եվ պարբերաբար եվրոպական պետությունների շահերի դիմաց, լուսավոր մարդկության խղճմտանքի դիմաց, ամբողջ հայության մորմոքվող սրտի դիմաց ծառանում է էդ արյունոտ ու արցունքոտ հարցը։ Այժմ էլ ահա նորից բարձրացել է նա սրբազան ահավորությամբ։ Ինչպես պետք է վճռվի նա և էդ մնացած մասում։

Առաջին պատասխանը, որ բխում է գործի հիմնավոր ծանոթությունից, ասում է.

— Էս օրվան մնացածն էլ պետք է վճռվի էնպես, ինչպես որ վճռվել է մինչև այժմ։

Բայց էստեղ մի մեծ հարց։

— Ո՞վ կուզի դրա առաջն առնի և ո՞վ է կարող։

Եվ ահա, հարցի պատմությունն ու ընթացքին հետևելով, եկանք կանգնեցինք էնտեղ, որ հայկական հարցի մնացորդն էլ պետք է լուծի Ռուսաստանն էնպես, ինչպես լուծել է մինչև այժմ. կամ ուրիշ խոսքով, եկանք կանգնեցինք Խոյ ու Մակու։ Եվ ահա սահմանի մյուս կողմը Թուրք կառավարությունը, որ միշտ խաղացրել է եվրոպական պետություններին, լավ գիտենալով, որ նրանք էլ են խաղ անում, աճապարանքով հրամանագրում է իր պաշտոնյաներին— խաղաղություն պահպանել հայկական նահանգներում, թե չէ ռուսը անց կկենա։

Էսպեսով ամբողջ աշխարհը գիտի, որ թե... ռուսն անց կկենա։

Թուրքը երբեք չի կարողացել և այժմ էլ չի կարող առնել ռուսի առաջը։ Հապա ո՞վ կուզենա առնել ռուսի առաջը։

Եվրոպական մեծ պետությունները կուզենան։

Նրանք են միշտ պաշտպանել Թուրքին ռուսի դեմ և կարող է պատահել, որ նորից նրանք պաշտպանեն։

— Արդյոք Թուրքի սիրո՞ւց։

— Ո՛չ։

— Գուցե հայերին մարդավայել օր ու կյանք տալու համա՞ր։

— Երբե՛ք։

Իրենց շահերի և հատկապես Ռուսաստանի հզորացման առաջն առնելու համար։

Ռուսաստանը հյուսիսից դեպի հարավ իջնելով, Անգլիան Հնդկաստանից դեպի հյուսիս բարձրանալով, աշխարհքի էս երկու հզորների շահերն ու ազդեցությունները վաղուց են իրար դեմուդեմ եկել Միջին ու

Փոքր Ասիայում։ Եվ Անգլիան ամեն կերպ աշխատել է միշտ Ռուսաստանի դեմ ստեղծել մի պատվար, պաշտպանել է մերթ Պարսկաստանին, մերթ Տաճկաստանին և առհասարակ Ռուսաստանին թշնամի ամեն մի ուժ, սրա ծավալման ու հզորացման առաջն առնելու համար։

Մյուս կողմից՝ գերման ու սլավոն ցեղերի հին ներհակությունը հաստատվել է նոր իրական հանգամանքներով։ Գերմանիան է ազդեցություններ ու իրավունքներ ձեռք բերել Տաճկաստանում և հայտնվել ռուսի ճանապարհին։ Ավստրիան է տեսնում օրը ցերեկով, որ Ռուսաստանը իր ամեն մի քայլով ոչ թե շարունակ մեծանում է Տաճկաստանի հաշվին, այլև իրար ետևից ազատագրում բոլոր սլավոն ցեղերին, իսկ ինքը Ավստրիան ունի 25 միլիոն սլավոն հպատակ։ Սրանց հետ միասին եթե առնենք և այլ ուրիշ հանգամանքներ, քաղաքական թե տնտեսական, պարզ կլինի մեզ համար թե ինչու Ավստրիան ու Գերմանիան էլ հաճախ պաշտպանել են Տաճկաստանին ռուսի դեմ, որ հունա-սլավոնականության մեծ ներկայացուցիչն ու վերածնողն է հանդիսանում։

Դեռ 16 դարից, Ղրիմի թաթար խաների դեմ մղած կռիվների օրից, իր հետ ունենալով սլավոն ցեղերը, վեր է կացել Ռուսաստանը Տաճկաստանի դեմ։ Եվ քանի-քանի անգամ մահացու հարվածներ է տվել նրան։ Բայց կանոնավոր կերպով ամեն մի հաղթանակից հետո նրա դեմ են դուրս եկել եվրոպական մեծ պետությունները ու կանգնեցրել են պատերազմի դաշտում.— Ո՛չ, Տաճկաստանը պետք է ապրի և դու չպետք է գրավես նրա հաշվին։ Թեև իրենք էս միջնորդությունների համար միշտ օգտվել են Տաճկաստանի հաշվին. և ուսին տարել էն մի որևէ կոնգրեսս կամ կոնֆերանս։—Անատոմիա կամ ավտոնոմիա,— պահանջ է դըրել Ռուսաստանը վեհաժողովներում։

— Ո՛չ, Տաճկաստանի ամբողջությունը պիտի մնա անձեռնմխելի, և ամեն մի բարենորոգում իր երկրի մեջ նորին մեծության սուլթանի փադիշահության ներքին գործն է, և նա արդեն ազնիվ արքայական խոսք է տալիս, և ահա հրատարակում է էս ինչ կամ էն ինչ թուղթը. վճռել են ամեն անգամ եվրոպական մեծ պետություններն ու փակել իրենց վեհաժողովները։

Ահա թե որտեղ է, ինչպես Տաճկաստանի հետ կապված ուրիշ հարցերի, էնպես էլ հայկական հարցի դժբախտության պատճառը, և ահա թե ինչու և ինչպես է ապրել Թուրքիան։

Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է. նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է։ Եվ նրա հաջողությունը միշտ կապված

է եղել Ռուսաստանի հաջողության հետ։ Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին։

Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ։

Եվ տեղ չկա խուսափելու։

«Հորիզոնի» նախանցյալ № 9-ում մեր խոսքը նրանով վերջացավ, թե եվրոպական պետություններից որը եղել է Ռուսաստանի ծավալման դեմ—նա դեմ է եղել և հայկական հարցին, էապես է հայկական հարցը իր ներկա բնավորությամբ, որպես գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր, կապված Ռուսաստանի առաջխաղացության հետ։

Հաստատ կարելի է ասել—բոլոր հայերը գիտեն ու համոզված են, որ Գերմանիան ու Ավստրիան ավելի քան անտարբեր են եղած դեպի հայկական հարցը։

Բայց մեր մեջ հավատ կա արմատացած, թե Անգլիան ու Ֆրանսիան եղել են հայկական հարցի բարեկամները։

Ինձ թվում է մեզ էս քաղցր մոլորության մեջ գցել են Գլադստոնի, Դիլլոնի, Բերարի, Պրեսանսեի նման լավ մարդկանց ճառերը ի պաշտպանություն հայ ժողովրդի, ընդդեմ Թուրքիայի վատթար կառավարության։ Իսկ իրենց պետությունները, որ միշտ եղել են Ռուսաստանի զորացման դեմ Արևելքում, դրա հետ միասին միշտ էլ դեմ են եղել հայկական հարցին։

Անցյալ դարու սկզբից Ռուսաստանը մտավ Կովկասի սահմաններն ու սկսեց իր պարսկական պատերազմները։ Էդ պատերազմները թե Գուգարք ու Սյունիք, թե Շիրակ ու Արարատյան երկրում՝ ազգային սրբազան պատերազմի նշանակություն ունեին հայերի համար։ Վճռվում է պարսկահայկական հարցը։

Հայ ժողովուրդն ազատվում է պարսկական դժոխքից։ Հայոց հոգևորականությունը խաչը ձեռքին գնում էր ռուսաց զորքի առաջին։ Հայոց ինքնապաշտպանության խմբերը, որ կամավորներ էին կոչվում, կռվում էին ռուսաց զորքի շարքերում կամ ապահովում էին նրա ճանապարհը թշնամու հարձակումներից։ Հայ ժողովուրդը իր ամբողջությամբ ոտի էր կանգնել։

Եվ էդ բոլոր պատերազմներում Անգլիան օգնում էր Պարսկաստանին։ Իհարկե, նա չէր էլ մտածում հայ ժողովրդի մասին, և միայն մի ցավ ուներ— կտրել ռուսի առաջխաղացության ճանապարհը դեպի հա-

բով, դեպի Հնդկաստանի իր կալվածքները։ Եվ էդպեսով գործում էր պարսկահայկական հարցի դեմ։ Թե 1804—1807, թե 1810—13, թե 1826—28 թվականներին պարսից սարդարների գլուխն անցած՝ ռուսաց զորքի դեմ, նրանց հետ և հայ կամավորականների ու հայ ժողովրդի դեմ՝ կռվում էին Անգլիայի օֆիցերներն ու ինժեներները, պայթում էին անգլիական հրացանները, որ 20 հազարով ու 40 հազարով իրենց ամեն ռազմամթերքով տալիս էր Պարսկաստանին Հնդկաստանի Անգլիական կոմպանիան։ Ղարաբաղի ամրությունների ու Էջմիածնի պարիսպների դեմ որոտում էին և անգլիական թնդանոթները, որոնց վրա մակագրված էր. «Թագավորների թագավորից—Շահերի Շահին պարգև»։

Սակայն վերջ ի վերջո հաղթվեց Պարսկաստանը ու վճռվեց պարսկահայկական հարցը. այսինքն, պարսկահայկական նահանգներն անցան Ռուսաստանին և ապահովվեց հայ ժողովրդի գոյության խնդիրը։

Հերթն եկավ տաճկահայկական հարցին։

Տեսնում ենք դարձյալ Անգլիան Տաճկաստանի հետ Ռուսաստանի դեմ և միաժամանակ դեմ հայկական հարցին։

Թե 1829 թվականի, թե 1855 թվականի, թե 1878 թվականի ռուս-տաճկական պատերազմներին հայտնի է, թե ինչ պաշտպանություն ցույց տվեց Անգլիան Տաճկաստանին։ Մի քանի անգամ ռուսաց բանակը մտել է Երզրում և մի քանի անգամ հայկական նահանգները Անգլիայի ջանքերով ռուսից խլել ու ետ են տրվել սուլթանին։ Եվ մի քանի անգամ հայ ժողովուրդը, որ էդ պատերազմներում իր համակրանքն ու սերը բաց ցույց էր տվել ռուսներին—Անգլիայի ձեռքով մատնվել է տաճիկ կառավարության ու ժողովրդի վրեժխնդրության կատաղությանը։

1853 թվին, երբ Ռուսաստանը հասել էր Պոլիս, երևաց դարձյալ Անգլիան, միաբանության բերեց մեջ անմիաբանությամբ հայտնի եվրոպական կոնցերտը, և ոչ միայն Տաճկաստանն ազատեցին ռուսի ձեռքից, այլև ռուսին ջարդեցին ու թուլացրին միացյալ ուժերով. իսկ սուլթանին ուժեղացրին, ստեղծեցին նրա համար մի անձեռնմխելի արտոնյալ դիրք և նրա արյունոտ ձեռքն ավելի ծանր հաստատեցին Տաճկաստանի քրիստոնյա ժողովուրդների, նրանց թվում և հայերի վրա. որոնք արնաքամ եղան մինչև 1878 թվականը։

1878 թվականին էլ, երբ կրկին <սկսեց> ռուս-տաճկական պատերազմը. և երբ դարձյալ ռուսական բանակը հասավ Պոլսի շեմքը, դարձյալ երևաց Անգլիան, դուրս հանեց իր նավատորմիղը և ռուսին կանգնեցրեց Սան-Ստեֆանոյում։ Ապա Գերմանիայի հետ հաղթողին տարավ Բեռլին, դիպլոմատիական ջարդ տվեց նրան և միաժամանակ

ջարդեց հայկական հարցը, կամ ավելի ճիշտը թարսեց, 16-ը շինեց 61, ռուսաց զորքը փոխարեն հոդվածի մեջ մտցրեց սուլթանի անունը և նրա բարեհայեցողությանը հանձնեց հայ ժողովուրդը, էս բոլորի համար ստանալով Կիպրոսն ու հայկական հարցի մենոպոլիան[19]։

Մենք զարմացանք Բեռլինում կատարված էս ֆոկուսի վրա, թե ինչպես 16-ը դարձավ 61, ուրախացանք, որ դարձանք 6 մեծ պետության հոգածության առարկա[20] ու Բեռլինից գնացինք Լոնդոն, էնտեղ էլ տեսանք ինչ գեղեցիկ ճառեր են ասում...

Մինչդեռ մեր աշխարհքում հետզհետե մեծանում էր մեզ ու ռուսին իրարից բաժանող տարածությունը, պաղում էին հին լավ հարաբերությունները, ստեղծվում էին նոր հարաբերություններ անպայման վնասաբեր երկու կողմի համար էլ, թե մեծի թե փոքրի, թե ռուսի թե հայի

Եվ ահա վրա հասան 1894—96 թթ. կոտորածները, երբ Կովկասում հայ-ռուսական հարաբերությունների պաղությունը հասել էին գալիցինյան ռեժիմին և Վելիչկոյի հրապարակախոսությանը, իսկ Անգլիայում մեր բարեկամությունն և հոգատարությունը հասել էր իր գագաթնակետին Գլադստոնի ճառերում...[21]

Եվ ի՞նչ...

Վերջ ի վերջո դուրս եկավ, որ Գալիցինը գոնե տաճկական սրից ազատված 40 հազար հայ գաղթական ընդունեց Կովկաս, իսկ հայկական հարցի ու հույսերի տերը—Անգլիան հայ ժողովրդի սարսափին ու աղերսախառն դիմումին տվեց հայտնի պատասխանը—«Մեր նավերը չեն կարող լողալ հայոց լեռների գագաթներին»[22]։

Մինչդեռ աշխարհքին հայտնի է, որ սուլթան Աբդուլ Համիդը նայում էր ոչ թե հայոց լեռների գագաթներին, այլ Բոսֆորի ջրերի ափերին, ուր միշտ կանգնում են անգլիական նավերը։

Էսպես է եղել Անգլիան մինչև վերջին տարիները։

Իսկ Ֆրանսիա՞ն։

Տասնվեցերորդ դարից սկսած սուլթանի հետ կապած պայմանագրերով ձեռք բերելով Թուրքիայում բացառիկ դեր ու դիրք[23], Ֆրանսիան դարձավ Արևելքում պաշտպանը եվրոպական քրիստոնյաների, որոնք նույնիսկ ֆրանկ կոչվեցան անխտիր, եղան Թուրքիայում արտոնյալ ու ազատ բնակիչներ, լցվեցին ծովեզրյա քաղաքները և միշտ, մինչև Պոլսի վերջին ջարդը[24], իրենց լուսամուտներից տեսան հայերի կոտորածը։ Եվ հայերը երբեք չնկատվեցին քրիստոնյա ու չտեսան Արևելքում քրիստոնեության մեծ հովանավորի հովանին, որովհետև տաճկահպատակ էին ու ռայա։

Եվ հենց Փարիզումն էր (1856 թվին), Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի նախագահությամբ եղած վեհաժողովում[25], որ առաջին անգամ Տաճկաստանն ընդունվեց եվրոպական քաղաքակիրթ մեծ պետությունների շարքը, միջազգային երաշխավորությամբ ապահովվեց նրա հողային անձեռնմխելիությունը, սուլթանի անկախության սկզբունքը, նրա՝ իր հպատակ քրիստոնյա ազգերին հոշոտելու խնդիրն անվանվեց Տաճկաստանի ներքին գործ և նրանց բարօրության համար միանգամայն բավարար նկատվեց սուլթանի Հաթթը-Հումայունը։

Էստեղ, Փարիզում ստեղծվեց էն ամենը, ինչով որ սուլթանն իրեն զգում էր ուժեղ ու ապրում էր նրա բարբարոսական կառավարությունը, իսկ նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդները՝ դժբախտ ու տառապում էին օրհասական մաքառումներով, ցույց տալով իրենց կենդանությունն ու վերածնվելու ձգտումը։

Եվ ահա Փարիզյան կոնգրեսի ու դաշնագրության վրա խոսելիս Հեռո էսպես է եզրափակում իր խոսքը մարդկության պատմությունը։

«Եվ էսպես,— ասում է,— քրիստոնյա պետությունների և ժողովուրդների մեջ եղած հակամարտության պատճառով, նրանց <հան>-դեպ իրար ունեցած նախանձի պատճառով, էն մշտական անվստահության պատճառով, որով նրանք հսկում էին իրար, և վերջապես, էն երկյուղի պատճառով, որով նրանցից ամեն մինը վերաբերվում էր մյուսի ազդեցության շրջանի միակողմանի ծավալումին ու զորացմանը—եվրոպական պետությունները իրանց հովանու տակ առան տաճկական գիշատիչ պետությունը և երկարացրին նրա գոյությունը, մտիկ չտալով, որ նա խորտակում է իր ազգաբնակության կուլտուրան և ինչպես իր մուսուլման, էնպես էլ քրիստոնյա հպատակների վերաբերությամբ անընդունակ է կատարելու իր պետական պաշտոնը։ Էդ ժամանակից տաճկական պետության գոյությունը միայն մի նպատակ է ունեցել.—արգելել իր սահմաններում ապրող ժողովուրդների պատմական զարգացումը ու ձգձգել Բալկանյան թերակղզու նահանգների վիճակի որոշումը» («История человечества», т. VIII, под ред. Гельмольдта)[26]։

Եվ ահա տաճկահայ ժողովուրդն իր հարցով նույնպես եղել է եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ զոհերից մինը, և անպայման ամենադժբախտը։

Ամենադժբախտը, որովհետև գտնվում էր Թուրքիայի սրտում, ամենադժվար ու ամենավտանգավոր տեղում, և Թուրքիան նրան բաց պիտի թողներ միայն իր վերջին շնչի հետ։

Եվ նա՝ Թուրքիան, դիմել է, դիմում է ու կդիմի ամենահրեշավոր մի-

ջոցների՝ վերջ դնելու էգ ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը միանգամ ընդմիշտ փակելու համար։

Իր հերթին Ռուսաստանը զարկել է, զարկում է և կզարկի Թուրքիային, մինչև ուժասպառ չանի նրան՝ հասնելով իր նախորոշած նպատակին ու կատարելով մի մեծ պատմական միսիա թե Բալկաններում և թե Արևելքում։ Իսկ եվրոպական մեծ պետությունները աշխատել են ամեն կերպ առնել Ռուսաստանի ծավալման ու զորացման առաջը։ Իրերի պատմական էս դասավորությունից ափաշկարա պարզ է, որ հայ ժողովուրդը պետք է լիներ ռուսի հետ և իր կյանքի, գույքի ու պատվի ապահովության հույսը պետք է կապեր Ռուսաստանի հաջողության հետ։

Պարզ է նույնպես, որ եվրոպական մեծ պետությունները, որոնք դեմ են եղել Ռուսաստանի զորացմանն Արևելքում—պետք է պաշտպանեին Տաճկաստանին և դեմ լինեին հայկական հարցին։

Եվ էսօր, երբ հայկական հարցը, ինչ ձևով ուզում է լինի—մի լուծում է առնելու, դա լինելու է Ռուսաստանի հաղթանակը կամ նրան փոխադարձաբար տրած մի զիջում։ Եվ հավանորեն փոխադարձ զիջում է լինելու, քանի որ Անգլիան ու Ֆրանսիան էսօր հաշտ ու համերաշխ են Ռուսաստանի հետ[27]։ Եվ էդ հաշտությունը, երբ կա, զարհուրելի է Տաճկաստանի համար, որ ապրել է նրանց անհաշտության պատճառով, հետևաբար կլուծվի և հայկական խնդիրը, և կլուծվի Ռուսաստանի նախաձեռնությամբ։

Էսպեսով 35 տարվան շրջանից հետո՝ մեր պատմության ընթացքը բերում է դարձյալ նույն տեղը։

Դարձյալ հայկական հարցը Ռուսաստանի պաշտպանությանն ապավինած և Ռուսաստանի հետ։

Դարձյալ ռուսական մամուլն է արծարծում հայկական հարցը, և դարձյալ ռուսական զորքն է կանգնած էն դժոխք երկրի սահմանի վրա. ուր դարձյալ կոտորածի սարսափի տակ ալեկոծվում է հայ ժողովուրդը։

Էս 35 տարվա ընթացքում ծանր տպավորությունների տակ ծնվել ու մեծացել է մի սերունդ, որ շատ հասկանալի հոգեբանական ու իրական պատճառներով թերահավատ է տակավին. բայց էն մարդիկ, որոնք լավ գիտեն, թե կարճատև ու անցողական են ամեն վատ մարդիկ ու վատությունները, էն մարդիկ, որ անսասան հավատում են լավ գաղափարներիատրիճանական, բայց հաստատուն զարգացումին ու հաղթանակներին, ինչպես անհատների մարդասիրությանը, էնպես էլ ազգերի առաջադիմությանն ու ազնվացումին, էն մարդիկ, որ պարզ աչքով տեսնում են

պատմական ու իրական են հիմունքները, որ ապահովում են ազգերի լավ հարաբերությունները,— պետք է հավատան լավ օրերին ու լավ հարաբերություններին և պետք է ակնկալեն հայի համար մի մարդավայել ազգային վիճակ ու մի ցանկալի ապագա, որի մեջ Ռուսաստանն ունեցել է ու կունենա վճռական ազդեցություն:

## ԽՈՍՔ ՐԱՖՖՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

Ճապոնացիների մեջ մի գեղեցիկ սովորություն կա, որ դիմում են իրենց մեռած գործիչների հոգիներին, ինչպես կենդանի մարդկանց: Հետևելով էս գեղեցիկ սովորությանը, էսօր Հայոց Գրողների Ընկերության անունից ես դիմում եմ Րաֆֆու հոգուն:

Անմահ հոգի՛, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված՝ քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վհատներին, որ տկարներին համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզորների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արատները, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի հոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը. էսօր եկել ենք քո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ և մեր ցավերը, որ միշտ մնում են թարմ, և մեր զգացմունքները, որ համակված են քո շնչով ու հիշատակով: Եկել ենք քո գերեզմանի վրա օրհնելու և փառաբանելու քո տված անհանգստությունը, էն ճանապարհը, որ ցույց տվիր և էն նահատակների շարքերը, որ գնացին քո ցույց տված ճանապարհով:

Անհանգիստ հոգի՛, անշուշտ այժմ դու սավառնում ես էն դժբախտ աշխարհի երկնքում, ուր քո մահից 25 տարի հետո՝ դարձյալ մի անգամ ավելի մեծ թափով ու սարսափով բարձրացել են հույզերն ու հույսերը, և թերևս հեռու չի օրը, երբ մենք կկարողանանք կրկին գալ քո շիրիմի վրա ու կանչել.— Արդեն կատարված է քո իղձը, ո՛վ անհանգիստ հոգի, ընդմիշտ վերացած ու վերջացած են էնքան արյուններ, էնքան կոտորած, և «ամեն կողմից պանդուխտ հայազգիք դիմում են իրենց սիրուն հայրենիք...»[28]: Արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է նա հին դժոխքից, ապահով է անվերջ կոտորածներից ու հանգիստ անլուր հալածանքներից, դու էլ հանգստացիր քո հավիտենական կայանում, ո՛վ անհանգիստ հոգի:

# «ՍՐԱՆՈՎ ԿՀԱՂԹԵՍ»

Ժողովուրդների ոգևորությունը վճռական դեր է կատարում և ներկա մեծ պատերազմում:

Էսօրվան կուլտուրական ժողովուրդները, ինչքան էլ հարկադրված լինեն պատերազմի գնալու, այնուամենայնիվ պատերազմը չեն սիրում: Էդ լավ գիտեն կառավարությունները, որոնցից ամեն մինը, վերջին ժամանակներս պատերազմներում աշխատում է աշխարհի առաջ արդարանալ, թե ինքը չի պատերազմի պատճառն ու սկսողը: Սակայն հեշտ բան չի աշխարհքին խաբելը,— մանավանդ քառասուն տարվան ամեն տեսակի պատրաստությունները ու ազգերի դեմ սարքած դավադրությունները հրապարակ ելնելուց հետո, և ահա ժողովուրդները կատաղորեն ծառացած են Գերմանիայի դեմ, որպես պատերազմի սկզբնապատճառի ու ազգերի խաղաղության դավադիրի դեմ: Առանց գրքի ու դասակարգի խտրության, առանց համոզմունքի ու դավանանքի խտրության, գրեթե ամենքը Գերմանիայի հակառակորդների հետ են և ոգևորվում են նրանց հաղթանակով: Պատերազմի բնավորությունն էնպես է, որ ամեն մեկին թվում է, թե ի դեմս Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի Տոլստոյը, Գլադստոնն ու Հյուգոն են դուրս եկել կռվի (թեկուզ Բելգիան էլ թողնենք իր Մետերլինկով), մյուս կողմից Բիսմարկն ու Մետերնիխը, իսկ նրանց ետևից էլ Աբդուլ Համիդի դաժան դեմքն է երևում ստվերում:

Սրա համար էլ մի կողմից ժողովուրդների բուռն սերն ու ոգևորությունն է գալիս օվկիանոսի հորձանքի նման, մյուս կողմից թշնամու ատելությունն ու գազանական կատաղությունը, որ արտահայտվում է անլուր ոճիրներով ու բարբարոսական ավերածություններով:

Սրանից հետո որքան էլ ահռելի լինի Գերմանիան իր քառասուն տարվա պատրաստություններով՝ իր զինակիցներով հանդերձ խորտակվելու է նույն համաձայնության առջև, որովհետև սրանք վեր են կացել ժողովուրդների թե նյութական, թե բարոյական գերագույն շահերի անունով և որովհետև սրանց հետ է աշխարհի ամենամեծ ուժը—ժողովուրդների սերն ու ոգևորությունը:

Սրանով կհաղթես:

Պատմությունն ասում է՝ քրիստոնեության արշալույսին, հեթանոս Կոստանդին Մեծ կայսրը մի պատերազմի ժամանակ տեսավ՝ երկնքում փայլատակեց քրիստոնեության խաչը՝ վրեն գրած՝ «Սրանով կհաղթես»: Հավատաց, ընդունեց, նրանով ոգևորված առաջ վարեց իր գունդերն ու հաղթանակը տարավ: Եվ նրանից հետո երկար դարեր էդ նշանով

էին ոգևորվում ու կռվում ազգերը — քրիստոնյաները Քրիստոսի խաչի ետևից, ինչպես նրանցից հետո մահմեդականներն էլ Մահմեդի աջի ետևից:

Միջին դարերի հետ անցկացավ և կրոնամոլության շրջանը: Եկավ նոր ժամանակ, աբսոլյուտիզմի, միահեծան իշխանության արշալույսը. սրա թագավորն էլ հանդիսացավ մի ուրիշ թագավոր՝ Լյուդովիկոս Մեծը. «Պետությունը — ես եմ»: Ազգերին տվեց նոր նշանաբան, թե ամեն բան աստծուց սահմանած թագավորն է, և նրանից հետո էլ երկար ժամանակ էդ անունով էին ոգևորվում ու կռվում ազգերը:

Այժմ մենք մտնում ենք մի նոր դարաշրջան, նոր արշալույս ենք ողջունում, հեռվհեռուն իրար ետևից լսվում ու ավելի բարձր են հնչում ժողովուրդների ձայները...

Այժմ առանց սրան անկարելի է ի մի բերել ժողովուրդներն ու ոգևորել, մի առողջ ամբողջություն, մի անխորտակելի ուժ կազմակերպել և թե արտաքին հաղթանակն ապահովել, թե ներքին խաղաղությունը: Ներկա մեծ պատերազմում էս նոր խաչն են իրենց նշանաբան առել Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան: Սրանով էլ ուժեղ կլինեն ու կհաղթեն անկասկած: Եվ սա է էն ճանապարհը, որ տանում է դեպի հետևյալ սրբազան արշալույսը, դեպի ազգերի ու ժողովուրդների խաղաղ եղբայրությունը:

## ՀԱՆԳԻՍՏ ՈՒ ԼԻՔԸ ՀԱՎԱՏՈՎ

Քյուրդ-տաճկական սրածությունն ու ավերածությունն ամայացնում է տաճկական Հայաստանը: Մինչև ուր հասնում է իրենց միշտ արյունոտ ու հավիտյան նզովված ձեռքը՝ համատարած կոտորածով ճզմում են բընաջնջում անեն մեր հին ու ազնիվ ցեղը, մեր շատ տառապած ու ծվատված ցեղը, և կոտորածից ազատվածները քյուրդ-տաճկական սահմաններից հարյուր հազարներով հոսանք են առել դեպի մեզ, դեպի ռուսական Հայաստան:

Մեծ է փորձությունը ու աղետն ահռելի:

Բայց մենք երեկ մեկել օրվա ժողովուրդը չենք, առաջին անգամը չենք տեսնում էս տեսակ աղետ և՝ ինչ որ տեսնում ենք՝ անօրինակ չի մեզ համար:

Սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածությունների վրա, շատ ավելի երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով, փախչողն ու գաղթողն էլ չի իմացել թե ո՞ւր ա-

պաստանի, ու ոչ մի տեղից էլ ոչ մի օգնություն կամ օգնության հույս չենք ունեցել։ Բայց այսուամենայնիվ անց ենք կացրել էս ամենը։

Էսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները։ Էսօր մենք մարտնչում ենք մեր թշնամիների դեմ, մեր գաղթականն ապավեն ունի ռուսական Հայաստանում, իր եղբայրների մոտ... Էսօր մեզ հետ է ռուսական մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը, նրա միջոցով էլ աշխարհի մեծագույն պետությունները ու լուսավոր ազգերը, և՝ համաշխարհային թոհուբոհի մեջ՝ մեր վիճակի մասին խոսք են հանում Ռուսաստանից մինչև Ամերիկա, վերջապես էն հաստատ հավատն էլ ունենք, որ ինչքան էլ կատաղի լինի թշնամու վայրագությունը— վերջինն է լինելու։

Էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ որ հուսահատի ու վհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկենին, փորձությունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմադրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով։

## ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ

Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը. ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով։ Կենսունակություն էլ որ ասում եմ՝ ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով։ Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը։ Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՝ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա հոգու հետ ի՞նչ ես անելու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ քարերից էլ կարող է Աբրահամու զավակներ հարուցանել և դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ժողովուրդ։

Եվ ահա, ինչպես ամեն ժամանակ, էնպես էլ էսօր շարժվում է հայ ազգի հզոր ու աննկուն ոգին։ Մեծ աղետի օրերում էլ նա, ասես թե մի վերածնունդ նախատոնելով, շարժվում է լայնածավալ ու բազմակողմանի։ Ընկերություններ են հիմնվում իրար ետևից, գործեր են ծրագրվում ու ձեռնարկվում ամեն ասպարեզում՝ ամենօրյա ապրուստի, մթերքների շուրջը կազմվող կոոպերացիաներից մինչև գրականության ու գեղարվեստի բոլոր ճյուղերը, մինչև գրողների, նկարիչների ու երաժշտական ընկերությունները...

## <ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՎԱՆՏՅՈՒՐԱՅԻ ԴԵՄ>

### Նամակ խմբագրության

*Սրտի խորին կսկիծով հաստատ աղբյուրից տեղեկանում ենք, որ Երևանի «Հեղաշրջում»[29] կոչված ավանտյուրան կատարողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավադրության, նույնիսկ հայ ժողովրդի և նրա դատի դեմ, և որ հեղաշրջումը կատարվել է արյունալի ոճիրներով։ Էսպիսով մի նոր աղետ է գալիս դժբախտ հայ ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետներից։*

*Խորապես բողոքելով էս թշվառ դեպքի և կատարված խժդժությունների դեմ, իբրև հայ ժողովրդի բանաստեղծը, որ էնքան հավատ է տածել դեպի նոր Ռուսաստանը, խնդրում եմ Խորհրդային Ռուսաստանին հեռացնել էդ վերջին տանջանքի բաժակը արյունաքամ հայ ժողովրդից, նոր վերքեր չհասցնել նրա անհամար թարմ վերքերին, Խորհրդային Ռուսաստանի մեծահոգությամբ և բանվորագյուղացիական Կարմիր Բանակին հատուկ եղբայրական զգացմունքով ու ներողամտությունով մոտենալ Երևանին ու աշխատավոր հայ ժողովրդին, որ անշուշտ անմեղ է ու անպարտ գրեթե իր ամբողջությամբ, և բարկությունը չթափել անմեղների վրա, որովհետև մեղավորներին նա չի էլ գտնելու իրենց տեղը։*

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1892 մարտի 2

*Ես երդվում եմ դավանած սրբություններով՝ իմ կամքի հզոր ուժով հաղթել արգելքներին և խոչընդոտներին. արհամարհել աշխարհային թովիչ կյանքը, նրա փառքն ու պատիվը՝ միայն այն վեհ սեղանի համար, որի վրա բարձրանում է գիտությունը՝ անհաղթ, սուրբ, անմահ ու ճշմարիտ գիտությունը. զոհել ամեն ինչ և մտնել այդ վսեմ դրոշակի հովանավորության ներքո. սիրել գիտությունը և ապրել գիտությամբ...*

*Թո՛ղ իմ կյանքը լինի գիտության համար և ո՛չ գիտությունը իմ կյանքի...*

*Ահա՛ իմ կյանքի միակ նպատակը*[1]*:*

1894 նոյեմբերի 19

*...Մինչև այժմ ես այն կարծիքին էի, որ պիտի կռվել և Տաճկահայաստանը ձեռք բերել—թերև ազատ երկիր—անկախ նույնիսկ ուրիշ ազգերի միջամտությունից, միայն մեր արյունի շնորհիվ, բայց Սասունի կոտորածի լուրը ինձ փոխեց*[2]*. այս ճամփով տաճիկը մեզ կջնջե վերջնականապես աշխարհի երեսից, նրանք ունեն զորք, զենք, թնդանոթ և փող, իսկ մենք ոչինչ և սոված <ենք>... Նրանք մեզ հում-հում կուտեն։ Պետք է ուրիշ տեսակ վարվել, բացի դրանից էլ, որ մեր երիտասարդությունը իսկի տրամադրություն ցույց չի տալիս մեռնելու։ Պետք է պրոպագանդա անել, շայկաներ պատրաստել, դինամիտ շինել սովորել, և պետք է ջարդել ու փշրել տաճիկին՝ հօգուտ Ռուսաստանի։ Շատ, շա՜տ լավ կլինի, որ Ռուսաստանը գնա և ողջ Հայաստանը տիրե. գոնե մեր ժողովուրդը էլ չի ջարդվի—սովից ու սրից,— գոնե ռուսը օրենք և սիրտ ունի։ Այն ժամանակ ռսի ձեռքի տակ, որպես մի ամբողջություն, կզարգանանք ու կաճենք, իհարկե, որ մի օր Ռուսաստանում կոնստիտուցիա*

կլինի <...> Այս շատ լավ կլինի։ Ես այսուհետև ինձ կպատրաստեմ մի զինվոր. ուրիշ զինվորների հետ արյունս կթափեմ ռուսի դրոշակի տակ և հայրենիքս կփրկեմ կրակից ու արյունից ու սովից։ Պետք է այս քարոզել ու խրախուսել Ռուսաստանին։

Դեկտեմբերի 6

Ես պիտի հերոս լինեմ—օ՜, ի՜նչ մեծ ու վեհ զգացմունք, երբ հերոսական գործից—կռվից հետո կրծքիս վերքեր, ճակտիս կնճիռներ, գլխիս ուռու թարմ պսակ՝ ընկերներիս հետ կմտնեմ—կվերադառնամ իմ ծննդավայրը... Օ՜, այնտեղ մայրս ուրախության արցունքով լի թաշկինակը կշարժե, այնտեղ Շուշիկը ուրախության մեջ, ժպտով լի՝ ծաղիկների փունջը կձգե դեպի ինձ... ու ընկերներս «ուռա՜» կգոչեն... Սա ամենամեծ, սուրբ ու տիեզերական զգացմունքն է՝ միացած այն գիտակցության, որ դու հերոս ես, հանճար ես—սա այն միակ բարձր ու անսահման զգացմունքն է, որ բնությունը ունի իր մեջ, որը միայն մեծ մարդիկ կարող են տածել—սրան պիտի ձգտենք...

— Հերոս լինել... աղջկա մաքուր սերը, մոր անձնազոհ սերը, ընկերների հավատարիմ սերը—սրանք իրավ շատ վեհ զգացմունքներ են, բայց հերոսական ինքնագիտակից հպարտ զգացմունքի մոտ, այնպես, ինչպես աստղերը լուսնի... Երբ դու սիրում ես, ոգևորված ես ու երջանիկ վշտով թաթախված, և այդ բոլորի հետ հաղթական հերոս ես... Օ՜, արդեն դու հասար քու կյանքի վերջին կետին—այլևս մի՛ ապրիր՝ դու գիսավոր աստղ էիր՝ երևցար կյանքում, դարձյալ կորիր մութ հավիտենականության մեջ։—Հերո՜ս լինել, հերո՜ս։ Ահա՜ իմ միակ ցանկությունը։ Հերոս լինեմ՝ պսակված ուռու պսակով, մոր արցունքով, Շուշիկի ժպիտով, ընկերներիս համբույրով.— հերոսի գրիչը— ձեռքիս, թուրը — մեջքիս, վերքերը—կրծքիս, մտքի ու վշտի կնճիռները—ճակտիս...—Հերո՜ս, հերո՛ս...

Դեկտեմբերի 16

Մենք ապրում ենք կյանքի համար և այդ կյանքը պիտի հերոսային լինի. իսկ հերոսը պիտի բարոյական լինի, բարձր ու գեղեցիկ։ Նրա կշիռը պիտի ճշմարտությունը լինի—այն ամենը, ինչ որ ճշմարտության, բարոյականության դեմ է գնում՝ նա պիտի փշրե—նա պիտի փշրե իր երջանկությունը, բախտը, պաշտած կուռքերը <...> եթե դրանք հակասում են ճշմարտությանն ու բարոյականությանը։ Այդ երկու ուժերի առաջ պիտի մարին և՛ անուշ կրքեր<ն> ու ցնորքները, համբույրներն ու սի-

*բային գիշերները, երգերն ու պարերը... բոլորը, բոլորը, որոնք եթե երբևիցե կամ որևէ կերպ կդիմադրեն ճշմարտին—բարոյականին:*

*...Հերոսն էլ պիտի միշտ ձգտի գործելու, կամենալու— միշտ իր կամքը առաջ տանելու, բայց այդ կամքը պիտի ողողված, ցողված, տոգորված, տոչորված լինի հերոսի ուղեղի ուժով, սրտի բաբախումներով, արյան ջերմությամբ: Հերոսը—այդ նույնն է թե իր կամքը:*

1895 հունվարի 23

*...Ազատությունը հա՞ց է—ազատությո՞ւն կուզեմ ես: Հացը ազատությո՞ւն է—հա՞ց կուզեմ ես: Ահա՛ իմ բաղխը, որի վրա պիտի հանգչեմ ու անեծք թափեմ հասարակության վրա:*

Փետրվարի 20

*Ես ուզում եմ հերոսներով զարդարել երկրի կուրծքը—ես ուզում եմ իմ սիրելիից, իմ պաշտելիից, իմ սրտակցից, իմ քրոջից, իմ ընկերից հերոսներ ստեղծել. ես ուզում եմ ստեղծագործել հերոսներ, տիեզերքներ, արծիվներ, առյուծներ* <...>

*Ես ուզում եմ արծվի պես կանգնել ծովի ափին, ժայռի կրծքին, լեռան գագաթին— երգել խորության, վշտի, մտորմունքի, ոգևորության ու երազների երգեր... Ես չեմ ուզում նստել սոխակի պես վարդի թփին ու երգել տարփանքի երգեր, վշտերի և տարփանքի արցունքներ...*

*Ես ուզում եմ արծիվ լինել, ես չեմ ուզում սոխակ լինել— ես հերոս եմ...*

Սեպտեմբերի 25

*...Եվ ես ուզում եմ հեղափոխ*<ող> *ուժ լինել: Այս ճամփեն երկուս է. մեկը ներքևով՝ երկրի վրայով, մյուսը վերևով՝ երկնքի միջով: Ես ուզում էի և մինչև վերջն էլ կցանկամ վերևի—երկնքի ճամփով գնալ, հեղափոխել կյանքը...*

*Այս ճամփեն շատ դժվար է—պետք է լինել հենի՝ մտածող ու ստեղծող. պետք է լինել գիտնական փիլիսոփա ու բանաստեղծ... Շա՜տ դժվար է... Չեն թողնում, և երևի մեջս էլ ուժ չկա... Ես ուզում եմ հենի լինել—մարդկության երակը, մարմնացումը լավ իդեալների, որոնց մարդկությունը տածում է... Գուցե ես ունեմ հենիի սաղմը, բայց միջոց չկա—ազատ երկիր ու փող...*

*Ես սիրում եմ կյանքը, երգը և գիտությունը—թո՛ղ ես մեռնեմ, բայց մարդկությունը ապագայում լինի բա՛րձր, վե՛հ, ազնի՛վ ու խո՛րը...*

*Ես վճռել եմ լինել ազգային-հեղափոխական, փշրել տաճկի՝ այսպիսով և բոլոր տերերի և պարազիտների շղթաներն ու լուծերը, որ մտածող մարդկանց և տանջվող մասսայի վրա են դրված...*

*Ես կգնամ ներքևի ճամփով, բայց եթե հարկը գա, եթե ես զգամ իմ մեջ ձենի—ես կթողնեմ ներքևի ճամփեն, կթողնեմ հոգու դեմոկրատներին և կբռնեմ վերևի ճամփեն ու կլինեմ հոգու արիստոկրատ... Վեհի թևերով կթռչեմ իդեալին և երկնքի շանթերով կփշրեմ բռնության շղթաները... Կաշխատեմ լինել Բուդդհա, Մովսես, Զրադաշտ, Քրիստոս, Մահմեդ և Նիցշե, իսկ եթե չկարողացա այդ լինել, կլինեմ բուդդիստ, մովսեսական, զրադաշտական, քրիստոնյա, մահմեդական կամ նիցշեական... Կմտնեմ գործելու, կտանջվեմ ժողովրդի մեջ, նրա հետ, նրա ցավով, լացով ու վշտով: Օ՜, եթե կարողացա, վերջը կշաչեմ ժողովրդի վերայով—արևի ու ամպի նման...*

1902 Նոյեմբեր

*Ժողովուրդը իր սիրած հերոսներին չի կարող հասկանալ, որ մեռել են. անմահացնում է նրանց. չի կարող ըմբռնել, որ այդ գերմարդկային ուժը վերջանա, հանգչի.— օրինակ, ժողովուրդը անմահացրել է Պրոմեթևոսին, Ֆ. Բարբարոսին, Ս. Ռազինին, Արտավազդին, Մհերին, և ինչպես ներկայումս մեր ժողովուրդը դեռ մինչև այժմ կենդանի է հաշվել ու չի կարողացել հավատալ սրանց մահը <...> որ Աբովյանը մի ծերուկ է հալևոր և Սիբիրումն է, որին տեսել է մի մարդ. խոսել է հետը. նա հարց ու փորձ է արել ազգի մասին:...*

1906 հունվարի 19

*Վեհապանծ, բարձրագահ և տիեզերախառն ոգիներից է բխում ազատությունը, որը լեռնաբարձունքներից շառաչող հզոր հեղեղի պես, ահեղագոչ շառաչում է՝ փշրելով սառած, անկյանք ժայռերը, կապանքներ ու օրենքներ փշրող ազատության հեղեղը, խորտակելով գրանիտե և բրոնզե գահերը՝ ջրվեժի պես ընկնում է դաշտի վրա, ցոլացնելով իր մեջ արևի շքեղությունը, և հրայայտ մտնում է դաշտը, ճեղքում է սաղտուկ տափակությունը և ոտքի կանգնեցնելով ամբոխին, ըմբոստացնելով նրան բռնակալների և օրենքների դեմ՝ արշավում է առաջ. առաջ՝ դեպի անսահման ազատության մեծ օվկիանոսը, ուր ամեն կաթիլ ազատ է ու ինքնակամ, ուր ամենքը ունեն իրենց մեջ մի ամբողջ արև, ուր ամենքը երազում են երկինք սլանալ, դեպի տիեզերական անսահման, անեզր ազատությունը...*

*Բայց կարմիր ու բոսորալար է հեղեղը—մարդկային նվիրական զոհերի թանկ արյունով է վառվում, և լի են նրա հոսանքում զոհերի անվերջ շարքեր—թարմ, գեղեցիկ նահատակներ (հերոսներ)՝ վիրավոր ճակատներով և կրծքերով...*

*Աշխարհասասան մռնչում է ազատության հեղեղը*[3]*. ո՛չ մի ուժ չի հանդգնում նրան դիմադրավել. անպարտելի է նա. և ամեն մի արգելին—նա ավելի ուժգին է հարվածում. ամեն ինչ ենթարկվում է նրա հոսանքին— մեռած դիակներն էլ քշվում են այդ հոսանքով—անշարժ ժայռերն էլ գլորվում են, և հուժկու ալիքները իրար ջարդելով, տանում են ամեն ինչ...*

*Ահա՛ ես ես ընկնում եմ ազատության հոսանքի մեջ և գնում եմ, և գնում եմ...*

1917 հունվար

*Հայաստա՛ն աշխարհ,*

*Դու ադամանդե լեռների վրա, այդ հավերժական սյուների վրա բարձրացած երկնասույզ աշխարհ, փիրուզե աշխարհ. դու աշխարհների մեջ անպարտելի կանգնած առաքինի նահապետ, որ անդավաճան քո սրբությունը և քո Աստծուն՝ հանապազ վառ ես պահում քո երգը, քո ատրուշանը, Թուրանի և Արաբի և Սարմատական տափաստանների խորշակն ու ցուրտը չկարողացան և չեն կարողանալու հանգցնել քո սուրբ հուրը. դու լույսի՛, ազնիվի՛ և մաքրությա՛ն ջրաբաշխ, որ քո լեռներից սահանքում են գետերդ՝ տանելով ու սփռելով բարբարոսների հողերի վրա բարություն և օրհնություն։*

*Կա՞ ավելի դժբախտ, ավելի չարատանջ, ավելի արյունլվող, քան դու. դու բազմադարյան զինվոր և նահատակ. անթիվ, անհամար թշնամին եկավ հարավից և հյուսիսից, արևելքից և արևմուտքից և թունավոր օձերի պես խրվեցին քո մարմնի մեջ և այլևս չանջատվեցին՝ դարեր ծծելով քո ազնիվ արյունը. թշնամին եկավ և դարձավ հարևան քեզ, սպանելով քո եղբորը և տիրանալով նրա հողին ու տանը և իր մահաբեր նիզակը ցցեց քո սրտին...*

*Աղավաղվեց քո հոյակապ լեզուն, նվաստացավ քո գեղարվեստը, և քո ստեղծագործ ոգին շղթայվեց։*

*Քո հացը տվիր նրան՝ հարևանիդ, քո եկեղեցիներում ներեցիր և օրհնեցիր քո հարևանին, բայց միայն թշնամի ունեցար և ո՛չ մի բարեկամ, ո՛չ մի բարեկամ՝ ողջ աշխարհի մեջ։ Քանդեցին քո պարտեզներն ու ոգիաշեն վանքերը, քանդեցին քո խրճիթները քո որդիների վրա,*

*խեղդեցին քո դուստրերին թոնիրների մեջ, տրորեցին սմբակների տակ, քո մանուկներին՝ քո հնձաններում — քեզ տապալեցին գետին, բայց քո ոգին մնաց կանգուն՝ քո Մասիսի նման...*

*Իմ սո՛ւրբ ժողովուրդ, ես սիրում եմ, ես պաշտում եմ քո խավար խրճիթները, քո արտասվաթոր հացը և քո արյունաներկ արորը: Ես պաշտում եմ քո փլատակ վանքի ամեն մի փշրված քանդակը և համբուրում եմ նրանց սրբազան մամուռը:*

*Դու չե՛ս մեռել, դու անմա՛հ ես, դու ինքդ անմահությունն ես և հավերժական գաղափարը:*

*Հայի ոգի, արյան ծովերի մեջ ջրդեղված պողպատ, բյուր կայծակ է օրը հարվածում քեզ և ինքը ընկնում հարվածված:*

*Հայի ոգի՛, դու գեղեցկության, խորհուրդների և հրաշքների կոկոն... Դու գիտես, որ պիտի գա օրը և մանուկի թարմությամբ կբողբոջեն, կբացվեն քո փթիթները դարերի արյունոտ մղձավանջից հետո, և այդ բուրմունքով պիտի հարբեն ազգերը, և բանաստեղծները իրենց երգը քո բույրով պիտի օծեն... Վայր պիտի իջնեն աստղերից լուսաթև թիթեռները և ոսկեշապիկ մեղուները քո բաժակից ծծելու հավիտենական ամբրոսը:*

*Հայի ոգի՛, դու քո ադամանդե լեռներից բխող շափյուղյա աղբյո՛ւր. Թշնամին պղտորեց քո կայլակները և իր խժդուժ կաղկանձը խառնեց քո դաշնակներին, բայց դու գիտես, որ պիտի գա այն օրը, որ նոր արշալույսի տակ պիտի խոխոջես մանկական պայծառ ծիծաղով. նոր գեղոններով պիտի ցողես դաշտերը, և հովվի սրինգին երգ տաս, և վարդապըսակ կույսերի պարին՝ թափ ու թիռ...*

*Նո՛ր. հզո՛ր և խո՛ր երգերով քո հինավուրց հոգուց հորդացած հզոր գետերից պես պիտի երթաս, թափվես մարդկության հանուր ծովի մեջ՝ քո նոր դաշնակը հյուսելով հանուրի ներդաշնակության հետ:*

*Հայի ոգի՛, հայոց լեռների պես վերասլաց, ադամանդե, արևաբաղձ և հզոր ոգի՛, մաքուր ու սուրբ ոգի՛...*

*...Հայո՛ց աշխարհ, քո որդին առաջ գլուխը դնում էր բլբուլների բույների վրա, իսկ հիմա՝ կարիճների: Դու իմ ավեր ու ավար հայրենակա՛ն տուն: Քո օրհնաբեր արորի տեղ հիմա օձն է ակոսում քո դարավոր սրբազան հողը. արտույտների տեղ՝ ագռավները, նավասարդյան եղնիկների տեղ հիմա ավազակ թշնամու ոտքերն են կոխկռտում քո մարմանդ ջրերը: Բայց դու գիտես՝ արևի պես ծագելու է այն օրը, որ նորից բլբուլների բները կենդանանալու են և գեղջուկի ակոսները լցվելու նվիրական ցորենով: Քո հանճարեղ որդիները նորից պիտի կապեն աշխատան-*

*քի զողնոցները, և մուրճն ու կացինը. կարկինն ու նախարակը պիտի ոգի առնեն և ոգի ստեղծեն... Եվ քո նորօգ սալահարկ ճանապարհներով պիտի գան հեռավոր ազգերի և լեզուների աշխարհներից քարավաններ, բերելով գանձեր քեզ համար և տանելով հետները քո ստեղծած հրաշքները աշխարհի ամեն ծայրերը...*

*Իմ ժողովուրդ, զորեղ կացի՛ր. և հավատարի՛մ մնա դու քեզ...*

Ապրիլի 16

*Ռուսական այս հրաշափառ հեղափոխության սկզբից*[*]*, մարտի 16-ից մինչև այսօր՝ ապրիլի 16-ը. ես ներքնապես համոզված եմ. որ ամեն բան աջող պիտի գնա, կոնտր-հեղափոխություն, ռեակցիա չի գալու: Հակառակն, վրդովեցուցիչ լուրերը վախեցնող չեն, հասկանալի են ներկա հուզված մոմենտում. օվկիանոսը հուզվել է, մի օրվա մեջ չի խաղաղվի:*

*Հայաստանն ազատվեց, այսպես կամ այնպես. այլևս կասկած չկա. վե՞րջ հայ մարտիրոսության:*

1918 ապրիլի 16

*...Քանի ողջ եմ, կկռվեմ հայրենիքիս հողի համար, նրա ազատության համար, երբ որ մեռնիմ, կուզեմ, որ գերեզմանիս հողի վրա շրջեն ազատ ազգակիցներս:*

1929, Բունիս

*...Սոցիալիզմի նպատակն է ստեղծել մի նոր աշխարհ՝ ազնիվ, վեհ, արդար, բարձր. ստեղծել նոր մարդ՝ ազատ, անկախ, հզոր, մարդկային, գերմարդկային: Տեխնիկան նրա ձեռքում միջոց է բարձրանալու, խորանալու, տիեզերքը հասկանալու, բնության ուժերը օգտագործելու:*

*Կոմունիստական աստղը հինգ ծայրանի՝ պիտի դառնա անծայր. անվախճան, անծայր, հավերժորեն անծայր:*

## ՓՈՐՁ ՄԵՐ ԷՊՈՍԻ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Մհերը կռվում է իր երկրի թշնամիների դեմ, որոնք հրով ու սրով, ծանր հարկերով ուզում են ստրկացնել Հայաստանը. Նա կռվում է ներքին թշնամիների դեմ, ֆեոդալների, որոնք կեղեքում են աշխատավոր ժողովրդին, ռամիկին:*

*Նա դժբախտ, հալածված մարդ է. հայրը սպանվում է, մայրը ինքնասպան է լինում, հորեղբայրը դրկում է նրան հայրական ժառանգու-*

թյունից և վտարում է Սասունից դուրս. նա աղքատ ու զուրկ թափառում է երկրե-երկիր, մասնակցում է ժողովրդի ծանր աշխատանքին, նա տեսնում է ամեն տեղ զրկանք, կեղեքում, անարդարություն, ոչ մի տեղ հանգիստ չի գտնում, ոչ մի տեղ «մոր և հոր նման քաղցրիկ ու սիրող մարդիկ»:

Նա տրտնջում է, բողոքում է աստծու դեմ, որովհետև վերջին հաշվով աստվածն է պատճառը, հանցավորը և միակ պատասխանատուն աշխարհի այսպիսի վատթար կառուցման համար: Եվ աստված իր հրեշտակների միջոցով հաղթում է նրան. հողը թուլանում է, փխրում է նրա ոտների տակ, նրա ձիու ոտները խրվում են հողի մեջ (ինչպես պարսից հսկայի՝ Ռուստամի և ռուսաց բոգատիր Սվյատոգորի):

Եվ հետո. իր ձիու հետ միասին բանտարկվում է Ագռավու քարայրի մեջ: Աստծու ծանր ձեռքը իջավ Մհերի վրա, աստված պատժեց նրան, իբրև աստծու դեմ մարտնչողի, աստծու դրած բնական և հասարակական օրենքների դեմ գնացողի, իբրև չար, կործանիչ ոգու, դևի, Նեռի (Անտիքրիստի):

Քրիստոնեական հաղթանակը կատարյալ է այստեղ:

Այսպիսով. Մհերը, որպես աստվածամարտ, մտնում է աստծու դեմ մարտնչողների համաշխարհային ըմբոստ հույլի մեջ: Մհերի ազգակիցներն են ամենից առաջ բիբլիական սատանան (հրեերեն կնշանակե՝ հակառակ), որ կռվեց աստծու միահեծան, բռնակալ կամքի դեմ, պատժվեց գահավեժ լինելով դժոխքի մեջ. հավիտյան և անմահ: Ավեստայի մեջ Բյուրասպ-Աժդահակը, որ քարոզում էր համայնական կյանք, սոցիալական հավասարություն, մասնավոր սեփականության վերացում, մի դրություն, որ հաճելի չեղավ աստծուն և իշխող դասերին, պատժվեց և շղթայակապ բանտարկվեց Դմավենդ սարում. հունական Պրոմեթեոսը, որ երկնքից կրակը բերեց մարդկության համար՝ հակառակ աստվածների կամքին և պատժվեց Զևսից՝ շղթայվելով Կովկասի ժայռերի վրա:

Արարատ լեռան վիհերի մեջ բանտարկված հայոց թագավոր Արտավազդը, որի դուրս գալուն սպասում են, ըստ Եզնիկ Կողբացու, հայ հեթանոսները այն հույսով, որ նա պիտի ելնի և տիրի հայոց աշխարհին, ինչպես հրեաները սպասում են Դավիթ արքայի վերստին գալուն, որ նորոգե կորած թագավորությունը:

Վրաց առասպելի Ամիրանը (որ նույն Միհրն է, Արևաստվածը), որ Քրիստոսի սանիկն էր և հակառակ քրիստոսի խորհրդին, երկնքից փախցրեց կրակը մարդկանց համար և պատժվեց ու բանտարկվեց «Սա-Կորնե» Ագռավի լեռան մեջ:

Օտերի էպոսի Ամրանը, որ դաժանաբար է կանչում Թուլյալ աստծուն, կռվում է նրա հրեշտակի հետ և պատիժը կրում է լեռան մեջ բանտարկվելով, և վերջապես գերմանական Կյուֆհեյզերը, որ Տիրոլի լեռներում փակված է, եթե դուրս գա՝ աշխարհը պիտի ավերեն:

Նրանք մարտնչեցին աստծու դեմ, աստծու ստեղծած տարերային չար ուժերի դեմ՝ խավարի, ցրտի, երաշտի, երկրաշարժի դեմ, աստծու կողմից օրհնված հասարակային սարք ու կարգի դեմ. և աստված իր հրեշտակների և սրբերի բանակով հաղթեց նրանց և դատապարտեց հավիտենական տանջանքների ու բանտարկման:

Սակայն ժողովուրդները չհաշտվեցին չարափոխված, բայց իրենց սրտի խորքում միշտ սիրելի հին աստվածների և տիտանների ճակատագրին: Եվ ժողովուրդները սպասում են իրենց բարերարների ազատագրմանը:

Հայ ժողովրդի հոգին նույնպես չհաշտվեց իր հերոսի տրագիկ ճակատագրի հետ:

«Մհերի դուռը», որի ետևը փակված է դյուցազնը, սիմվոլիկ իմաստով նույնն է «Սուրբ արևին»: Այրի մեջ, Մհերի գլխի վերևը, օր ու գիշեր վառվում է մի անշեջ ճրագ՝ խորհրդանշանը արեգակնային Մհերի. այդ ճրագից, ըստ մեր էպոսի, կրակ է վերցնում ժողովուրդը, երբ հանգչում է իրենց տան ճրագը: Եվ «Մհերի դուռը» դարերի ընթացքում, մինչև մեր օրերը, եղավ սրբավայր, ուր ժողովուրդը ուխտ էր գնում, խունկ ծըխում՝ հավատալով Մհերի փրկչական սաոշյանտ միսիային:

Մեր ժողովրդի համար իր հերոսների վեպը ստրկության ծանր դարերի մեջ եղավ իր ոգևորության աղբյուրը և ներշնչարանը: Այդ անսպառելի զինարանից զենքեր է առել նա՝ տոկալու և կռվելու իր ինքնության և հավերժության համար:

Իր անմահ վեպի մեջ ժողովուրդը դրեց իր բովանդակ հոգին՝ անվերջանալի պայքարով և դառնությամբ լի իր պատմության փիլիսոփայությունը, իր փորձը աշխարհի իրերի մասին, իր դարավոր իմաստությունը, իր նվիրական իդեալները:

Եվ կերտելով Մհերի վսեմ, մարգարեական, մեսիական կերպարը, մեր վեպը ազգային շրջանակից ելնելով, ընդգրկում է համամարդկային որակ և դառնում է աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս:

Շահագործող, չար աշխարհը պիտի քանդվի մի անգամ ու վերակառուցվի մարդկության երջանկության համար:

*Մհերի մեջ սիմվոլացված է տառապող և ազատություն տենչող աշխատավոր մարդկությունը...*[5]

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն

*Թանկագին գիրքը մերն էր։*

*Խմբով գնում էինք գյուղից դուրս, մեր հանդում որոշ տեղից պարզ երևում էին Անին, նրա պարիսպները, նստում էինք այնտեղ, երեսներս դեպի Անին, կարդում էինք գիրքը, նայում Անիին, և կարդում, կարդում...*

*Ի՜նչ սրբազան պահեր, ի՜նչ աննկարագրելի ոգևորություն։*

*Մենք չէինք ապրում այլևս ներկայի մեջ, իրական աշխարհում. երևակայության մեջ էինք սավառնում, հայ ժողովրդի փառապանծ անցյալի մեջ և խորհրդավոր, լուսավոր գալիքի հանդեպ։*

*Եվ երբեք մենք չզգացինք վերք ու ողբ, մենք չտխրեցինք, մենք չընկճվեցինք հայկական վշտով ու վերքով, թեև լցվեցինք վրիժառությամբ, այլ սակայն գերազանցապես վառվեցինք հայրենասիրությամբ, արիությամբ, հերոսությամբ, մենք թևավորվեցինք ապագայի շքեղ տեսիլներով։ Մենք տեսնում էինք Անին՝ վերակենդանացած. հոյակապ պարիսպներով, ներշնչող բուրգերով, զինվորներով, զորավարներով, սպարապետներով՝ սաղավարտներով, քաջ ժողովրդով՝ ազատ, անշղթա։*

*Մենք կենդանի տեսնում էինք քաջ Աղասուն՝ իր քաջ ընկերներով՝ Մուսին, Կարոն. մենք տեսնում էինք Աղասու կապուտակ ձին՝ վրնջալով, շառաչելով, դոփելով անցնում էր մեր մոտով, մեր վրայով, թռչում էր նա, սլանում էր նա, և փայլատակում էին նրա պայտերը, և փայլատակում էին ու զրնգում Աղասու զենքերը։*

*Մենք բացառություն չէինք, անշուշտ. 19-րդ դարի «Վերքի» ընթերցողները նույն ապրումներն ու տեսիլներն են ունեցել,— խանդավառություն, հերոսական գործերի մղում,— և ճշմարտություն է, որ Աղասին իր կապուտակ ձիով՝ դոփելով, փայլատակելով ու զրնգալով, քառասմբակ անցել է հայ ժողովրդի հոգու միջով և մեր 19-րդ դարի գրականության արժեքավոր երկերի միջով...*

*Մեր ժողովուրդը կուտակել էր իր սրտում դարերի մեջ բռնակալներից կրած հալածանքների, կեղեքումների, ոճիրների ցասումը, իր ազատության տենչերը, իր անպարտելի հավատը լավագույն ապագայի հանդեպ, մի խոսքով՝ այն բոլոր հոգեկան տարրերը, որոնք անհրաժեշտ են մի ժողովրդի ինքնության ու հարատևության և ազգ դառնալու համար,*

և սակայն լուռ էր, համր էր նա, և երբ վերստին նրա գլխին փայլատակեցին պարսկական թրերը ու նոր տիրապետողի՝ ռուսական կայսրության ավելի կտրուկ թուրը՝ ցարիզմի այլասերող վտանգը. բացվեց նրա լեզուն, խոսեց հրեղեն լեզուն,— «Էդ ում վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում...»: Այդ լեզուն «Վերք Հայաստանին» էր, «Ողբ Հայրենասերին»:

«Վերք Հայաստանին» դա գիրք չէ, միմյանց ետևից շարված տառեր, թուղթ ու մելան, չափված, ձևված, դա հոգուց պոռթկած, սրտի խորքերից շղթայազերծված մրրիկ-արշավ է, հրաբուխ: Ինչպես 1840 թվին դարերով լռած Մասիսը պոռթկաց[6] կրակ ու բոց, և հեղեղեց, և շարժեց հայոց աշխարհը բովանդակ, այնպես էլ նույն թվին՝ Աբովյանի մեծ սիրտը... հեղեղեց և կրակ ու բոց որոտաց, և շարժեց հայ ժողովրդի ներաշխարհը բովանդակ, և կայծակի նման ճեղքեց ապագայի մութն ու մռայլը, ցույց տվեց փրկության ուղին՝ հայ ժողովրդի ազատագրման-անկախության ուղին՝ պահպանումն ու պաշտամունքը մայրենի քաղցր ու մեծասքանչ լեզվի, լուսավորություն, անձնազոհ հայրենասիրություն, սխրալի, հերոսական քաջագործություն:

Զարմանալի՜, անհունորե՜ն զարմանալի հրաշք-երևույթ է «Վերք Հայաստանին»:

## ՄՏՔԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[7]

Երբ հենվելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության և նրա խիստ հարուստ գրականության վրա, մենք ջանում ենք երևան հանել նրանից, այսպես ասած՝ փիլիսոփայական էությունը, անխուսափելիորեն հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

Մեր գրականության հավերժ շողշողացող բովանդակությունն է եղել ազատության անշեջ ծարավը, պայքարը, հայրենասիրությունը և մարդկային արժանապատվության հարգանքը:

Դեռ հայ հնագույն հումանիստներից մեկը՝ Սեբեոսը, նշում է, որ մեր ժողովրդի նվիրական երազը եղել է հայրենի երկրի բարգավաճման համար ապրելն ու մեռնելը:

Այս երազը կայծակի նման անցել է մեր պատմության միջով սկզբից մինչև մեր օրերը:

Հայ ժողովուրդը, և հանձին նրա ողջ հայ գրականությունը, դարերով պայքարել է հայրենի երկրի անկախության ու ինքնավարության համար: Հինգերորդ դարի բանաստեղծ-պատմաբան Եղիշեի դյուցազն-

*երգությունը մի հիմն է ի փառս հայ ժողովրդի՝ պարսից փաղանգների դեմ նրա մղած պայքարի առթիվ։ Այս պայքարն ու այս երգը շարունակեցին մեր գրողները մինչև ամենավերջին ժամանակներս։ Այս բոցավառ կյանքով և ուժով առլեցուն, նվիրական հեղինակները նպաստել են մեր ժողովրդի ազատագրվելուն արաբ գիշատիչների, պարսից շահերի, մոնղոլ խաների, տաճկաց սուլթանների և ռուսական ցարերի լծից։*

*Հավերժաբար արյամբ ողողված, շարունակ ճնշված բազմաթիվ ժողովուրդների մոտ միշտ կարելի է գտնել այս աստիճան հայրենաբաղձ, այսքան հոգեմաշ երգեր, մանավանդ հայրենիքի կարոտը արտահայտող երգեր (կսկծալի տարագրությունների հետևանքով), ինչպես հայ գրականության մեջ պատահող երգերը։*

*Անարդարության, բռնության, չարքերի դեմ, աստծու դեմ արտահայտված դառն և ուժեղ վրդովմունքը ու տրտունջը կազմում է հայ գրականության երկրորդ բնորոշ առանձնահատկությունը։...*

## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

### Պատերազմի տարելիցի առթիվ

*... Սակայն պատմության փիլիսոփայությունը մեզ ուսուցանում է, որ մարդկությունը վայրենի, կանիբալ վիճակից, նախամարդու անասնական գոյությունից՝ միշտ խորտակելով իր ճանապարհի վրա կանգնող խոչընդոտները, դինամիկորեն գնում է առաջ, դեպի լույս ու գիտություն, դեպի տիրապետումը բնության և չար ուժերի վրա, դեպի ազատություն և կատարելագործում՝ դեպի բարձրագույն կուլտուրան։ Եվ կուլտուրան, որպես անողոք թշնամի ռեակցիայի չար ուժերի դեմ, միշտ անդառնալիորեն հաղթանակ է տարել և պրոգրեսի հզոր անիվի տակ ջախջախել է իր թշնամիներին և պիտի ջախջախե հավերժապես...*

*Լույսի և ազատության այս փրկարար և մեծագույն պայքարին իր սրտառուչ մասնակցությունն է բերում հայ փոքրիկ ժողովուրդը, որ մեծ է, սակայն, իր քաջ որդիների հերոսությամբ, որոնք իրենց հայրենասիրությամբ, անձնազոհությամբ վերստին տալիս են իրենց մայրժողովրդին ազնվության նորանոր վկայականներ։ Հայ ժողովուրդն աշխարհի հին, քաղաքակրթված ժողովուրդներից մեկն է՝ համառ և անվհատ մարտնչող իր կուլտուրայի, ինքնուրույնության և հայրենիքի համար։ Իր անունը որպես անհաշտ ըմբոստ ճակատագրի՝ տակավին մեր*

թվարկությունից 600 տարի առաջ դրոշմել է տվել Բիսուտունի ժայռերի վրա Դարեհի աշխարհակալության դեմ։

Հայ ժողովուրդը՝ ճակատագրի բերմամբ կանգնած լինելով արևելյան և արևմտյան աշխարհակալ հզոր պետությունների հանգուցային ճանապարհի վրա՝ գոյության անանդիտալի կռիվ է մղել և դարհուրելի բախումների մեջ կոտորակվելով, և վերստին կոտորակվելով, այնուամենայնիվ, մնացել է միշտ կանգուն իր նվիրական հողերի վրա, և միշտ հոգով աննվաճ, ազատատենչ և լուսաբաղձ։ Իր արյունոտ մաքառման էպոսը կռել-կոփել է իր համար Թուր-Կայծակին, որ երբեք նա ձեռքից վայր չձգեց։ Մի ձեռքում Թուր-Կայծակին՝ պաշտպանել է նա իր հայրենի տունն ու ապրելու իրավունքը, մյուս ձեռքում կուլտուրայի զենքերը՝ հերկել է իր հողը և կերել իր արդար հացը, ստեղծել է հոյակապ դասական լեզու, արվեստի հրաշալիքներ։ Վայրագ բարբարոսներն անընդհատ ներխուժել են նրա հայրենիքը։ Արաբական մոլեռանդ խալիֆները, նրանց մարդակեր ոստիկանները՝ բուղաներն ու կաշմերը հրդեհել են նրա հոյակերտ քաղաքները, կոտորել են նրա ծերերին և երեխաներին։ Ալփ-Ասլանը ավերելով չքնաղ Անին՝ նրա պարիսպների առաջ հայ մանուկների արյունով լցրել է ավազանը և լողացել է այդ արյունատենչ գազանը։

Մոնղոլական տափաստանների մարդագայլերը՝ Չինգիզխան, Չարմաղան, Լենկ-Թեմուր, քարը քարի վրա չեն թողել Հայաստանում. հրաշակերտ քաղաքների և տաճարների ավերակների մեջ գանգերից բուրգեր են կանգնեցրել... սակայն հայ ժողովուրդը՝ անմահ ոգով, նորից ոտի է կանգնել բոլոր փլուզումների և կոտորածների միջից, նորից վառել է իր գոյության օջախը իր սրբազան ավերակների վրա, նորից և նորից կերտել է՝ իր նման անմահ մեր քարերին տալով գեղեցկություն և իմաստ, նորից հավերժացրել է իր մագաղաթյա մատյանները։ Եվ կերտելով ու ստեղծելով նորից և նորից իրականացրել է իր ապրելու հզոր կամքը։ Եվ ավելի մեծ հույսով ու հավատով հասունացել է և հավատացել իր փառավոր ապագային, արդարության և ճշմարտության գաղափարներին, հառաջադիմության և կուլտուրայի հաղթանակին։ Եվ ստեղծել է իր երազանքների, հավատի ու ոգու պատգամախոսին, մարգարեական Մհերին՝ չար, անարդար աշխարհի կործանման և բարի, արդար աշխարհի նորակառուցման պատգամախոսին և իրականացնողին։

Հայ ժողովուրդն ունեցել է բարբարոս, ավերիչ շատ թշնամիներ, որոնց դիտել է իբրև տարերային չարիքի և նրանց լծի տակ հեծելով հանդերձ՝ նա իր ստեղծագործական ոգու բարձունքից արհամարհել է,

նրանց և հաճախ կամեցել է ներել, մոռանալ նրանց, սակայն չի կարողացել մոռանալ «քաղաքակրթված» մի ժողովրդի պատմությունից ստացած մահացու հարվածները, մի ժողովրդից, որն իրեն «կուլտուրտրեգեր» է կոչում՝ գերմանական պետությունը։ Ահա այդ՝ հավերժապես անարգելի փաստն է նկատի ունեցել գեներալ Գյորինգը, երբ նա Միության դեմ սկսած պատերազմի նախօրյակին «Կանաչ գրքի» մեջ հրահանգներ է տվել իր զորքին՝ Միությունը կազմող ժողովուրդների հանդեպ ինչպիսի դիրք բռնելու նկատմամբ։ Մասնավորապես հայերի մասին հրահանգում է նա՝ ի նկատի ունենալ հայերի առանձնապես անբարյացակամ վերաբերմունքը գերմանացիների հանդեպ։

Հայ ժողովուրդը՝ հելլենիզմի կրողը Եվրասիական սահմանագծի վրա, վերածնունդի առաջին ճառագայթն արձակողներից մեկը, շրջապատված և ոտնահարված լինելով մոնղոլական և այլ ժողովուրդներով, դարերի ընթացքում աչքը հառել էր եվրոպական լուսավոր ժողովուրդներին՝ նրանցից սպասելով իր փրկությունը։ Եվ ահա XIX դարում սկսվեց փոքր ժողովուրդների՝ հույների, սերբերի, բուլղարների և այլոց ազատագրումը սուլթանական լծից, հնչեց և հայ ժողովրդի փրկության ժամը։ Սակայն գերմանական կանցլեր Բիսմարկն էր, որ խոչընդոտ կանգնեց՝ հայտարարելով, թե հայ ժողովուրդը չարժե մի պոմերանցի (գերմանացի) զինվորի փտած ոսկորներին։

Եվ հետո, Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը, որ արևմտահայերի համար կուլտուրայի որոշ ավտոնոմիա էր նախատեսում, Բեռլինի ժողովում, նույն կանցլերի ջանքերով և խարդախությամբ, վերածվեց 61-րդ մեռած հոդվածին, որ, սակայն, հայության սիստեմատիկ բնաջնջման ելնք դարձավ Աբդուլ Համիդի ձեռքում։ Այնուհետև, երբ Հայաստանի գյուղերն ու քաղաքները թաթախվեցին հայկական արյան մեջ, այլասերված Վիլհելմ II կայզերը ցինիկաբար հայտարարեց, որ հայերից պիտի թողնել միմիայն մի մարդ՝ իբրև էթնոգրաֆիկ մուզեի օբյեկտ, և ուխտի գնաց նույն սուլթանի մոտ՝ խրախուսելով հայկական ջարդերը։ Իսկ առաջին իմպերիալիստական պատերազմին նույն կայզերը իր բարոններով՝ Իմհոֆ, Սանդերս, ֆոն դեր-Գոլց գեներալներով և դեսպան Վանկենհայմով թև տվեց Իթթիհատի պանթուրքական բանդագուշանքին[8] և... ջնջեցին ողջ արևմտահայությունը, մի հինավուրց ժողովուրդ իր կուլտուրայով, արվեստով, ֆոլկլորով, սրբեցին մի ողջ ժողովուրդ իր բազմադարյան հայրենիքից, ջնջեցին նրա և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան...

Մոնոկլ դրած գերման վայրագ սպաների հռհռոցի տակ՝ ծովը թափեցին երեխաներին և մանուկներին, մայրերին...

Կուլտուրական բարբարոսները և մոնղոլ բարբարոսները միացան ստեղծելու համար մի նոր չինգիզ-խանյան հրեշապետություն Համբուրգից մինչև Չինական պարիսպները: Հայ ժողովուրդը գերմանացիների ձեռքից ստացավ մի անբուժելի վերք...

Հայ ժողովրդի սրտի մեջ շիկացած երկաթով անջնջելիորեն գրված է այս ամենը:

Ահա այս պիտի գիտենա հայ զինվորը, երբ հանդիպի գերման զորքին: Եվ պիտի գիտենա նաև, որ հայ ժողովուրդը իրավունք ունի մահի պես ատելու իր թշնամուն և սիրելու իր բարեկամին՝ ռուս մեծ ժողովրդին: Եվ ահա ինչու, երբ բռնկվեց սոցիալիստական հեղափոխությունը, հայ ժողովուրդը նրա մեջ տեսավ իր դարավոր փափագների կենսագործումը: Նրա մեջ գտավ իր փրկությունը: Այն, ինչ որ խլել էին նրանից կայզերներն ու նրանց վարձկանները՝ նա ետ ստացավ սոցիալիստական հեղափոխության հաղթանակից, սովետական իրավակարգից՝ ապրելու իրավունք, սեփական հայրենիք. պետականություն: Լենինյան ազգային քաղաքականությունը եղավ ազգային կուլտուրայի զարգացման կռվանն ու լայն հնարավորությունների ընձեռումը: Բոլոր հոգով նվիրվեց նա իր հայրենիքի վերածաղկման վսեմ աշխատանքին, սովետական իշխանության ամրացմանն ու պաշտպանությանը...

Այսօր, պատերազմի երկրորդ տարվա շեմքին. հայ ժողովուրդը նորից կանգնած է ռուս մեծ ժողովրդի կողքին, եղբայրական ժողովուրդների հետ միասին, կռվում է անձնուրացությամբ վայրագ թշնամու դեմ, և խորապես համոզված է մեր արդար գործի հաղթանակին, և, սակայն, որքան էլ նա փոքրաքանակ լինի, միշտ պատրաստ է պայքարելու իր հայրենիքի ազատության և իր հին կուլտուրայի պաշտպանության համար: Նրա ոգու մեջ միշտ կենդանի է իր հին հերոս Վահան սպարապետի հրեղեն խոսքը, երբ նա, V դարում պարսից բռնակալության դեմ կռվելիս, ասաց. «Մենք պատրաստ ենք ուրախությամբ մեռնել, քան թե ծառայել ձեզ»:

Հայ ժողովրդի համար սուրբ է միշտ այս պատգամը. ավելի լավ է մեռնել, քան թե ծառայել բռնակալներին:

# «ՈՒԼԵՆՇՊԻԳԵԼ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ[9]

*Դը Կոստերը վերցրել է 14-րդ դարում գործող Ուլենշպիգելին, տեղափոխել է 16-րդ դարը, ուրեմն երկու դար հետո։ Տեղափոխել է նրան նիդեռլանդական ժողովրդի պատմության ամենից փոթորկահույզ շրջանը, երբ բովանդակ երկիրը ազատագրական կռիվ էր մղում մի վայրագ բռնապետության դեմ։*

*Դը Կոստերը Թիլի մանկությունն ու պատանեկությունը կազմել է ժողովրդի գրքի արկածներից և շվանկներից, նաև՝ ֆոլկլորային նույնանման նյութերից։ Այդ կոպիտ, նյութասեր, ծաղրածու թափառաշրջիկին հեղինակը կերպափոխել է Վերածնունդի մի կենսուրախ, ազատաբաղձ զավակի, որին աստիճանաբար ներգրավում է ժողովրդի ապստամբական, հեղափոխական շարժման մեջ, լրջացնում է, հոգեփոխում և սիմվոլացնում։ Թիլը դառնում է ժողովրդի ազատության ձգտումների և ոգորումների մարմնացումը։*

*Թիլը, տեսնելով իր ժողովրդի անհուն տառապանքները, անասելի կեղեքումներն ու հարստահարությունները բռնակալների ձեռքից, տեսնելով ինկվիզիցիայի դահիճներին՝ կաթոլիկ կղերին, որոնք խարույկների մեջ այրում էին ֆլամանդական ազատախոհ մարդկանց և անմեղ բնակիչներին՝ դառնում է անձնվեր հասարակական գործիչ, հեղափոխական կազմակերպիչ, միանում է ապստամբ գյոզերի ազատարար կռվին։ Վերածնունդի կենսուրախ զավակը ամբողջապես նվիրվում է հեղափոխական-ժողովրդական շարժմանը, մի գիտակցական և տարերային շարժում, որ համակել էր բովանդակ Ֆլանդրիան։ Քաղաքների, անտառների և ծովերի գյոզերը սասանեցնում էին իսպանական բռնապետության և պապական ինկվիզիցիայի հիմքերը։ Հեղափոխության գործը կենդանի, միշտ առույգ, զվարթ գործ է Թիլի համար. այդ գործին ծառայում է նա անձնուրաց արիությամբ։ Դառնում է նրա հռետորը, մունետիկը, լրտեսում է թշնամուն, ապստամբների հետ կապեր է ստեղծում և իրար կապում կռվող խմբերը, սուրհանդակներ ուղարկում ամեն կողմ, դրամ հավաքում նրանց համար, զենքեր հայթայթում, ժողովրդի մեջ միություն և տոկունություն քարոզում։ Ժողովրդի ծովածավալ տառապանքներին զգայակից՝ Թիլը կրում է և անձնական շատ ծանր աղետներ, ինկվիզիցիան այրում է հորը՝ Կլաասին. մայրը մեռնում է վշտից, Կատլինը խելագարվում է ինկվիզիցիայի տանջանքներից։ Կլաասի աճյունի մի մասը, որ Թիլը մի քսակի մեջ դրած միշտ կրում է իր սրտի վրա, նրան բորբոքում է, մղում վրեժի, կռվի։*

Ամեն անգամ, երբ թրթռում է, շարժվում այդ նվիրական աճյունը, Թիլը կրկնում է իր ուխտը. «Ես ուզում եմ ազատել Հայրենիքս և վրեժ հանել», և աճյունը դադարում է շարժվելուց...

## ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Մեր գրականության իշխող պաթոսը, նրա միսիան դարերի անհաշտ պայքարն է հանուն Հայրենիքի ազատության, ազգային կուլտուրայի և անկախ պետության, ընդդեմ բռնության, ստրկության:

Մեր գրականությունը բռնակալների, հարստահարողների, ջարդարարների գրականություն չէ, այլ մարտնչող, բողոքող, ազատաբաղձ ոգու՝ տոգորված աշխատանքի, հումանիզմի, արդարության վսեմ իդեալներով:

Այդ պայքարի ոգին կայծակի պես անցել է հայ գրականության մի ծայրից մյուս ծայրը, սկսած Մովսես Խորենացուց, Եղիշեից, Սեբեոսից, միջին դարերի միջով, մեր ֆոլկլորի միջով, մինչև Խաչատուր Աբովյան, Միքայել Նալբանդյան, Պատկանյան, Րաֆֆի, Ծերենց, Թումանյան, Սիամանթո, Վարուժան, Վ. Տերյան ներառյալ:

Հայ գրականությունը, պատկերելով հայ ժողովրդի բուռն ատելությունը և արյունոտ պայքարը նրան ճնշող բռնակալների դեմ, եղել է նաև նրա դաստիարակը դարերի ընթացքում: Նա փրկել է հայ ժողովրդին այլասերումից և ապազգայնացումից: Նա տվել է հայ ժողովրդին հումանիզմի և դեմոկրատիայի գաղափարներ, ժողովրդասիրության և համաշխարհային եղբայրության իդեալներ, լավագույն, արդար և ազատ աշխարհ տեսնելու հույս և հավատ և այն կենսագործելու պատրաստակամ զոհաբերություն, այն, ինչ որ անհրաժեշտ է խորտակելու բռնության և կեղեքման աշխարհը: Հայ ժողովրդի ոգու և նրա ձգտումների սիմվոլիկան պերճախոս կերպով քանդակված է նրա Սասունցի էպոսի մեջ: Այդ էպոսը մեր նվիրական ավանդույթների հին գանձարանն է և դառն ու դաժան ժամանակների մեր վեհ ներշնչարանը, մեր պատգամաբերը: Նա պարունակում է գրականության բոլոր թեմաները՝ շինարարություն, աշխատասիրություն, հումանիզմ: Նա պարունակում է մեր պայքարի բոլոր ձևերը՝ ներքին կռիվ շահագործող ու շահագործվող դասակարգերի միջև, ազգային կռիվ արտաքին, օտար բռնակալների դեմ, համամարդկային կռիվ հին, անարդար աշխարհի դեմ՝ նրա կործանման ի խնդիր, հանուն նոր, արդար և ազատ աշխար-

ի կառուցմանը. Կռիվ աստծու դեմ՝ ճակատագրի դեմ, բռնության դեմ՝ հանուն բացարձակ ազատության, բացարձակ մարդու։ Սասմա էպոսը մեր պատմության, գրականության փիլիսոփայությունն է։ Հայ ժողովրդի պայքարը ավելի ծանրացավ, դարձավ օրհասական, երբ սելջուկ-թուրք-մոնղոլ արշավանքները ողողեցին Հայաստանը, խորտակեցին հայ պետությունը, հայրենի երկիրն ընկավ վայրագ բնազդներով գործող բարբարոսների լծի տակ։ Ավերվեցին շեն քաղաքները, հրդեհվեցին մատենադարանները, սրի քաշվեցին ժողովրդյան զանգվածներ, գերի տարվեցին—ամայացավ Հայաստանի մեծագույն մասը և հայ բնակչության փոխարեն նոմադները բնակվեցին և հոյակապ ավերակների վրա դրեցին իրենց յուրտերը և ամեն տեղ իրենց նախամարդու յասաքը հաստատեցին։

Հայ ժողովուրդը շատ արյուն թափեց այս անհավասար գոյամարտի մեջ, կոտորվեց և նվազեց շատ, բայց և այնպես կարողացավ իր նվիրական մատյանների շնորհիվ, իր գութանի և աշխատանքի շնորհիվ պահպանել իր լեզուն, իր ոգին և ազգությունը։...

Աշխարհում ցրված գաղութահայությունը, որ գործով և սրտով մասնակցել է Հայրենական պատերազմին[10] և երազել է նրա հաղթանակը, հավատալով, որ մեծազոր Սովետական Միությունը, որ փրկեց հայությունը բնաջնջումից, այժմ էլ պիտի վերջ դնի նրա տառապանքներին։

Այսօր գաղութահայությունը վերագտնում է իր ազգային կենտրոնը, Սովետական Հայաստանը[11]։ Գալիս են մեր հայրենաբաղձ, հայրենազուրկ եղբայրները, աշխարհի զանազան մասերից։ Հարյուր հազարներ, միլիոն է նրանց թիվը։ Այսօր եկել են մի քանի տասնյակ հազար։ Նրանք պիտի գան, ոչ մի ուժ չպիտի կարողանա արգելակել նրանց վերադարձը։Հիմա արտասահմանի մեր գրական ընկերների վրա սրբազան պարտք կա դրված՝ աջակցել ներգաղթի հաջողությանը։ Նրանք պիտի տանեն գաղութահայերին այն խնդալից պատգամը, որ Սփյուռքի բոլոր հայերը Սովետական Հայաստանի վաղվա քաղաքացիներն են։

Մեր գրչակիցները[12] պիտի երգեն և արծարծեն սեր դեպի Սովետական Հայաստանը, բոլոր հայերի հայրենիքը։ Պիտի վառ պահեն ազգային ինքնագիտակցությունը և ազգային պատկանելիությունը։ Բոլոր միջոցներով պիտի ձգտեն հեռու պահել հայությունը այլասերումից։ Նրանք պիտի կամուրջ դառնան տարածելու Սովետական Հայաստանի կուլտուրայի, արվեստի և գրականության արժեքները և ստեղծելու միասնական գրականություն՝ սովետահայ գրականության շուրջը։...

## <ԽՈՍՔ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ>

*Համաշխարհային պատմությունը հային վիճակեց մի հայրենիք, մեծ. աշխարհակալ պետությունների՝ Հռոմի, Բյուզանդիայի, Պարսկաստանի, արաբների, Թուրքիայի և սամանյանների բախման ճանապարհի վրա, ճանապարհների հանգույցի մեջ: Դա եղավ մեր ճակատագիրը և շատ աղետաբեր եղավ այդ ճակատագիրը: Այդ աշխարհակալները միմյանց ձեռքից խլում էին Հայաստան երկիրը, պատառ-պատառ անում, ավերում գյուղ ու քաղաք, կեղեքում, տրորում, հյուծում բնակչությանը:*

*Դարեր շարունակ ներխուժում էին թուրք-սելջուկ և մոնղոլ հորդաները, կողոպտում ու կոտորում հայ շինականին ու քաղաքացուն, գերի վարում բազմություններ, քար-քարի վրա չթողնելով:*

*Կյանքի ու մահվան անհավասար կռվի մեջ բռնված ժողովրդին հայ գրականությունն էր, որ ոգի էր ներշնչում, քաջալերում դիմադրելու, տոկալու. պահելու ազգային անաղարտությունը և ինքնուրույնությունը, պաշտպանելու իր իդեալները:*

*Հայ գրականության հրեղեն, մարգարեական խոսքը բոցավառեց և ամրացրեց հայ ժողովրդի հավատը իր լուսավոր ապագայի հանդեպ. ազատ, երջանիկ ապագայի հանդեպ...*

*Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը լիներ ինքնավստահ, բարձր պահեր ազգային արժանապատվությունը:*

*Կցանկանայի, որ նա մայրենի լեզվի պաշտամունքն ունենար Ալեքի գիտակից կառչեր հայրենի հողին:*

*Կցանկանայի, որ նա խնամքով պահեր իր հինավուրց կուլտուրայի կոթողները և դրանցով հպարտանար:*

*Կցանկանայի, որ մեր արվեստը և գրականությունը ազգային կոլորիտի և ձևերի միջով արտահայտեին համամարդկային զգացմունքներ ու մտքեր, կերտեին արժեքավոր գործեր և կերպարներ:*

*Կցանկանայի անցյալի հին, հրակայուն և ամուր խարիսխների վրա բարձրանար հայ ժողովուրդը, նորոգվելով և վերանորոգվելով առաջանար և ետ չմնար արդիական գիտությունների և կուլտուրայի պրոգրեսի առաջամարտիկների շարքից:*

*Կցանկանայի, որ Մեծ Միությունը կազմող հանրապետությունները ավելի սերտ կապվեն միմյանց հետ, ավելի սիրեն և օգնեն միմյանց: Միահամուռ ջանքերով աշխատեն Մեծ Միության առաջադիմության*

և հզորացման համար. բոլորը միասին պայքարենք մեր ամենօրյա հացը ստեղծող աշխատավորության ազատագրման համար շահագործումից։

Հայրենասիրության դրոշի տակ՝ անդուլ և անձնազոհ պայքար սոցիալական արդարության, ժողովուրդների եղբայրության համար, հումանիզմի և համաշխարհային խաղաղության համար՝ բովանդակ մարդկությանը փրկելու կործանումից և վայրենացումից։...

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

## ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1906, 20 մարտի, Մոսկվա

*... Ռեակցիան վախկոտնալիս է սարքել, հեղափոխականները «սքլել» են:*

*Ասում էին, որ շուտով ընդհանուր գործադուլ կլինի, բայց չեղավ: Խոսում են զինված ապստամբության մասին, բայց ըստ երևույթին դա էլ շուտ չի լինի: Զորեղ պրոպագանդ են անում զորքերի մեջ: Բայց այստեղի հեղափոխական Ս—Դ-ները[1] գոնե ըստ երևույթին շատ վատ են զինված: Մի կամպանիա ենք սարքել ամառը պրոպագանդ անելու Կովկասում[2], այդ մասին էլ եթե գրես, լավ կանես, այսինքն կընդունե՞ս, թե՞ չէ:*

## Ս. ՕՏԱՐՅԱՆԻՆ

1907, 27 մայիսի, Բաքու

*...Բանվորները լավ տպավորություն գործեցին: Ես հիացմամբ տեսա, որ կան և հայ բանվորներ, հայ մարդիկ ազատ նախապաշարմունքներից: Ինձ մեծ ուրախություն պատճառեց այդ հանգամանքը, և չնայած որ շատ դժվար է հայ բանվորին սոցիալիստ դարձնելը, այնուամենայնիվ ես հավատում եմ, որ, վերջ ի վերջո, նա էլ կմտնի միջազգային պրոլետարիատի շարքերը իբրև կռվող և գիտակից էլեմենտ:*

## Օ. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1907, 21 հուլիսի, <Գանձա>

*Երկար պետք է պատմել. նկարագրելու այն ամենը, ինչ անցավ իմ գլխով: Մի բան միայն կարող եմ ասել, որ քանի գնում, այնքան*

ամրանում են իմ մեջ իմ հիմնական սկզբունքները և քանի գնում, այնքան չմտածված զգայական խոյանքը փոխարինվում է իմ մեջ խոր, համոզված էնտուզիազմով: Ասեմ ավելի պարզ: Իմ խորին համոզմունքով, ոչ մի գործ չի կարող կատարվել առանց զգացմունքի: Առավել ևս հասարակական գործը: Սակայն, վերջին դեպքում (երբ գործը հասարակական է), ավելի, քան որևէ այլ ժամանակ, բանականությունը պետք է ընթանա զգացմունքի հետ ձեռք-ձեռքի տված: Այո՛, երբ հարցը սոսկ ինձ է վերաբերում, ես կարող եմ անել ինչ կուզես, բայց երբ հարցը վերաբերում է մարդկային մասսաներին, որոնց գործը իմ գործն է, որոնց հաջողությունը իմ հաջողությունն է, ես անպայման պարտավոր եմ խորհրդատու ունենալ ոչ միայն զգացմունքը, այլև բանականությունը: Ահա թե ինչու ես, ունենալով հանդերձ հրապուրվող բնավորություն, չեմ հրապուրվում անարխիստների և նրանց նմանների հեղափոխական ֆրազով: Ես մի քիչ ուսումնասիրել եմ հասարակական խնդիրները, և դա ինձ սովորեցրել է զգոն (սակայն ոչ մեշչանական-օպորտունիստական «զգոնության» իմաստով) վերաբերվել սոցիալ-քաղաքական հարցերին: Ռոմանտիկական խոյանքին այստեղ պետք է տեղ տրվի, բայց... ոչ ամբողջ տեղը, այլ միայն մի մասը: Ահա այդպիսի վերաբերմունքը, թվում է, ընդունակ է մարդուս անհերեր դարձնել, այդպիսի համոզմունքը (դա դեռևս լրիվ չի ձևավորվել իմ մեջ, բայց ես զգում եմ՝ նա աստիճանաբար ձեռք է բերում իր իրավունքները) կարող է չենթարկվել ոչ մի անհաջողության և միշտ հանդես գալ որպես ուղեցույց փարոս: Գիտակցականություն—ահա այն անհրաժեշտը, այն ամենագլխավորը, որ պետք է յուրաքանչյուր ինտելիգենտին, որը չի ուզում թպրտալ հեղափոխական ֆրազեոլոգիայի տղմում, այլ իսկապես ցանկանում է աշխատել հանուն ժողովրդի բարօրության, իսկ դրա համար ամենից առաջ պետք է իմանալ, պետք է ձեռք բերել գոնե անհրաժեշտ իմացողություն, մինչդեռ մեր երիտասարդության մեծամասնությունը, դրա հետ միասին ես և դու, սիրելագույն Օնիկ, հրապուրվում է նրանով, ինչ թեթևակշիռ է, ինչ գույնզգույն է ու գեղեցիկ, աչքաթող անելով այն հիմքը, որ այդ ֆրազները դարձնում է հրաշալի: Չէ՞ որ դու կդատապարտեիր այնպիսի բուսաբանին, որը սիրելով բույսերը՝ գրավվեր գեղեցիկ ծաղիկներով և խոտերով, միանգամայն անուշադրության մատնելով նրանց արմատները, նրանց սնող հողը: Մինչդեռ չէ՞ որ նրանց ամբողջ կազմությունը, նրանց արմատները, նրանց սնող հողն ու նրանց սնունդն է, որ նրանց դարձնում է գեղեցիկ: Ահա թե ինչու սոցիալիզմ, ազատություն և նման բառերը միանգամայն

տարբեր նշանակություն ունեն տարբեր մարդկանց բերանում։ Ոմանց համար այդ բառերը բովանդակություն ունեն, ուրիշների համար դրանք սոսկ գեղեցիկ ծաղիկներ են, անբովանդակ հնչյուններ միայն։ Ես ու դու և ուրիշ շատերը մեզ հետ հիմնական խնդիրներում զգացմունքով էինք ընդունում սոցիալական հեղաշրջման անհրաժեշտությունը։ Բայց այդ զգացմունքները (և հենց այն պատճառով, որ դրանք զգացմունքներ են եղել), վերաբերելով այնպիսի բարդ պրոբլեմների, ինչպիսիք են հասարակական պրոբլեմները—ցուցաբերեցին իրենց անուժ լինելը։ Անհրաժեշտ է ամրացնել նրանց արմատները, որովհետև նրանք թեպետ գեղեցիկ ծաղիկներ են, բայց շատ են բարակ նրանց արմատները, շատ քիչ է պարարտացրած նրանց հողը։ Հիմա մեզ անհրաժեշտ է զբաղվել այդ հողի պարարտացումով։ Իսկ պարարտացնել, ըստ իս, պետք է պարապմունքով և ոչ թե զգացմունքով ու հրապուրվելով։ Ահա հենց այդ պարապմունքին եմ ես ձեռք զարկել։ Իհարկե, անհեթեթություն կլիներ բացառապես նվիրվել գիտությանը, բայց գիտությունը պետք է մեր էնտուզիազմի լավագույն ուղեկիցը լինի։ Աշխատենք որքան կարելի է լուրջ վերաբերվել սոցիալական (հատկապես սոցիալական, որովհետև այստեղ սխալներն ավելի են զգալ տալիս) խնդիրներին, բայց այդուհանդերձ երբեք թույլ չտանք, որ մեր հոգում հաստատվի մեշչանականության ժանգը։ Չկա ավելի արգահատելի ու զարշելի բան, քան ինքնագոհ մեշչանականությունը։ Ամեն ինչի մեջ գեղեցկություն պիտի լինի,—իսկ գեղեցկությունն անպայմանորեն բացասաբար է վերաբերվում դեպի մեշչանականը։ Այսպես ուրեմն. ես ընդունել եմ ոչ թե մեշչանական «խոհականությունը», այլ գեղեցկության բանական, և այն էլ անհրաժեշտորեն բանական լինելը։ Եվ երբ մենք կամրացնենք մեր զգացմունքների արմատները, նրանց սնելով դեպի աշխարհը և հատկապես դեպի սոցիալ-քաղաքական հարցերը ունեցած մեր գիտակից վերաբերմունքով,— այն ժամանակ ոչ մի ուժ մեզ չի հաղթահարի, ոչ մի անհաջողություն մեզ չի վհատեցնի...

Սոցիալիզմը կոչնչացնի մենակությունը։ Մենակությունը կապիտալիստական ինդիվիդուալիստական տնտեսության արգասիքն է։ Սոցիալիզմը—դա մտերմության, եղբայրության ամենաբարձր ձևն է, ոչ թե արյունակցական, այլ հոգևոր, ֆիզիկական (տնտեսական), բարոյական եղբայրության... Ես քանիցս ասել եմ, որ սոցիալիզմը պետք է ոչ միայն հասկանալ, այլև զգալ։ Սոցիալիզմը միայնակ, լքված, տխուր, հոգսերի ծովի, բայց մեծ մասամբ ցածր տեսակի հոգսերի ծովի մեջ թաղված մարդկանց մեծ միություն է։ Սոցիալիզմը—դա անհատի ան-

սահման ազատությունն է, անհատի, որը սիրում է ուրիշներին, ինքն իրեն զոհաբերում է և դրանով իսկ հաստատում է իրեն։ Ահա ինչու «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք»-ը մեծ կանչ է, հրաշալի լոզունգ։ Ահա թե ինչու ես սոցիալիստ եմ։ Եթե սոցիալիզմը անհատին տար միմիայն նյութական ապահովություն... ես երբեք չէի դառնա սոցիալիստ...

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱԼԻՔ ՕՐԸ

Ժողովրդի հոգին նման է մի բազմալար երգեհոնի, և որքան շատ լարեր հնչեն, այնքան ավելի արժեք կստանա ամեն մի հնչյուն մի ընդհանուր նվագի մեջ, իսկ երբ միայն մի լարն են հնչեցնում, նա տարօրինակ ու ողորմելի մի ձայն է հանում, առանց հաճույք պատճառելու, առանց ուրախացնելու և մնում է առանց ձեր հոգու մեջ հետք թողնելու։

Բայց ի՞նչ է տալիս մեր կյանքը, ի՞նչ է ներկայացնում նա, ի՞նչ պատկեր ունի։ Կարո՞ղ ենք արդյոք նրա տվյալների վերա հենվելով գեթ մոտավոր կառուցվածքներ անել մեր ապագայի վերաբերմամբ, տալի՞ս է արդյոք իրավունք այդ տվյալ ներկան և անցյալը մի ավելի լավ ապագա հուսալու։ Արդյոք երևո՞ւմ են այդ կյանքում առաջադիմության որևէ նշաններ, թե նա քարացել է իր ավանդական ձևերում և հոգևարք՝ ժամեր է ապրում։ Արդյոք ինչի՞ վրա պիտի կառուցանենք մեր ապագայի հույսերը և ակնկալությունները։ Քիչ առաջ ես մատնանշեցի, որ, այո՛, առաջադիմության և զարգացման նշաններ կան մեր ինքնամփոփ ու մեկուսացած կյանքի վերջին կեսդարյան պատմության մեջ։

Այո՛, կան, սակայն շատ աննշան են այդ առաջադիմության քայլերն ընդհանուր առմամբ։ Մեր հանրային կյանքը առաջ է գնացել կրիայի քայլերով։ Նա դեռ դուրս չէ եկել իր հին կեղևից, բայց այդ ինքնամփոփ գոյության շրջանակներում անցել է որոշ ճանապարհ։ Այժմ այդ կեղևը չի կարող պահպանվել—եթե նա ներսից չպայթե, կպայթեցնեն նրան դրսից։ Այժմ զարգացում կարող է լինել միայն այդ կեղևից դուրս։ Արդեն այդ կեղևը մաշվում է և թուլանում, վերջին օրերն է ապրում նա. և ով իմաստուն է, դուրս պիտի մղե իրան այդ կեղևից, պիտի ոչնչացնե այդ կեղևը։ Այլ կերպ նրա գոյությունը վտանգի է ենթարկվում և նրա հետ միասին այդ կեղևի մեջ ամփոփված ամբողջու-

թյան կյանքը։ Բայց արդեն լուրջ ճեղքեր է տվել այդ կեղևը, և լույսը ներս է խուժում, և ոչ մի արգելք նրա առաջն առնել չի կարող։

Եթե դուք գիտեք մեր վերջին տարիների կյանքը, չեք կարող չնկատել, որ այնտեղ կատարվել է և մասամբ կատարվում է մի խոր հեղաշրջում։ Չեմ ուզում այժմ համեմատել մեր ներկայի կյանքը մի երկու տասնյակ տարով մեզնից բաժանված կյանքի հետ։ Համեմատեցեք մեր այժմյան կյանքը նախահեղափոխական կյանքի հետ[3], ներկա դարու սկզբի տարիների կյանքի հետ և դուք կտեսնեք, թե որքան հեռու են նրանք իրարից, որքան տարբեր, որքան միմյանց ժխտող։ Սակայն արդեն կատարված և կատարվող տնտեսական-քաղաքական և կուլտուրական հեղաշրջումը այնքան նշանակալից, այնքան իմաստալից չէ, որքան այն, որ պիտի կատարվի դեռ, այն, որ վերահաս է, որի նախերգանքն է միայն ներկայի սոցիալական և կուլտուրական խլրտումը։

Մեր երկրի ամբողջ տնտեսական կերպարանքը վերափոխվում է, և դրա հետ միասին հիմնական վերափոխության առջև է կանգնած և նրա հասարակական և կուլտուրական կերպարանքը։...

## ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

... Հայության համար մի ցավոտ ցնորք է դարձել այդ «Հայաստանը», մի ավետյաց երկիր, դյութական մի անուն։

Բնական է դրա համար, որ մենք անկարող ենք այդ խնդրի մասին սառնասիրտ խոսել, հանդիստ մտածել։ Ավելին կասեմ, մեզ մի տեսակ սրբապղծություն է թվում, երբ մարդիկ մեր ազգի՝ տարիներով ու տասնյակ տարիներով փայփայած գաղափարին մոտենում են սառը մտքով. անտարբեր գիտնականի աչքով։ Մենք ուզում ենք ճչալ, որովհետև երբ ցավ ես զգում, խոհեմ լինել չես ուզում. մենք ուզում ենք աղաղակել, որովհետև երբ սիրելին տանջվում է, խոհեմության խորհուրդներն անզոր են, իսկ այդ աղաղակի ապարդյուն լինելու մասին չեն մտածում։ Օտարներն անգամ վարակվել են հաճախ և վարակվում են մեր օրերում մեր այդ հիվանդագին զգացումներով և սառը դատողի և տրամաբանորեն մտածողի փոխարեն՝ դառնում են մասնակից այդ տարերային բաղձանքներին։

Թվում է, թե ո՛չ դիվանագիտական խճճված հարաբերությունները, ո՛չ տնտեսական-հասարակական անսասան օրենքները, ոչ բնական անկարելիությունը չեն կարող դեմ կանգնել այդ միահոգի, միահամուռ ու

*բարբոքուն տենչանքին, այդ տարերային հեղեղի բնույթ կրող, ճակատագրական դրոշմով կնքված ընթացքին։*

*Այդ հոսանքի լոզունգը բացարձակ ու վճռական է, նրա դրոշակի վրա գրված է՝ «դեպի Հայաստան»։*

*Ինչպես էլ լինի, ինչ գնով էլ լինի, ինչ հետևանք էլ ունենա՝ միևնույն է—«դեպի Հայաստան»։ «Հայաստանը պետք է ազատվի»․ անդրդվելի մի ձգտումն է սա, որի հանդեպ ոչ մի ուժ չի կարող կանգնել, որին ոչ մի արգելք չի կարող կասեցնել։*

*Եվ հասկանալի է դա։*

*Չէ՞ որ ամեն մի հայ մտավորականի, ոչ միայն մտավորականի, այլև ամեն մի հայ մարդու համար այդ հարցը սրբազան մի ավանդ է դարձել, նվիրական մի տվայտանք, ամեն մի հայ մարդու առջև ծառացել է իր եղերական, արյունաներկ պատկերով։*

*Մի՞թե կարող ենք սառնասիրտ լինել մենք, երբ այժմ դրված է այդ հարցը, երբ կանգնած ենք նրա այս կամ այն լուծման հանդեպ։*

*Մի՞թե իրավունք ունենք մենք տարակուսելու կամ տատանվելու․ պետք է հավատալ, պետք է հուսալ լիասիրտ, պետք է տենչալ սրտի բոլոր զորությամբ, և մեր բոլոր կարողությամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծվի այդ արյունլվիկ հարցը։*

*Սակայն դրանով չի վերջանում մեր անելիքը․ դա միայն նախադուռն է մեր ապագա հայրենաշեն, ազգակառույց գործի...*

*Իսկ ինչ վերաբերում է այն ազգային ինտելիգենտներին, որոնց զայրացրել է հայ ժողովրդի ֆիզիկական գոյության վրա մտածողների մտորումը, մենք կարծում ենք այժմ նրանց համար պարզ պիտի լինի, որ մենք մտահոգվում ենք այդ ֆիզիկական գոյության մասին ոչ լոկ մարդասիրական զգացմունքներից դրդված, այլև որոշ ազգային տեսակետ ունենալով։ Մենք չէինք կամենա, որ մեր ժողովուրդը ոտնատակ գնար այս շփոթ օրերում, որ նա զոհ լիներ սխալ գաղափարախոսության, սխալ ըմբռնված ազգային իդեալի և վերջը հուսահատության ու հիասթափության գիրկն ընկներ։*

*Մենք թերահավատ ենք դեպի այդ՝ մի հարվածով, մի թեկուզ հերոսական ճիգով ստեղծվելիք Հայաստանը։ Մեր խորին համոզմամբ, որքան և կարևոր ու խոշոր լինի այսօրվա այդ հերոսական ճիգը, այնուամենայնիվ նա չէ, որ պիտի որոշե, վճռե հայության ապագայի վիճակը, ստեղծե այն Հայաստանը, որ մեզ համար բաղձալի է։ Այդ Հայաստանը մենք վերը կոչեցինք «հոգևոր Հայաստան»։*

*Եվ ահա, այսօրվա ճիգերի ու ջանքերի մեջ անգամ մենք չպիտի*

մոռանանք, որ մեր առաջ կա դեռ մի խոշոր ու վսեմ աշխատանք, գուցե ոչ այնքան շլացնող ու փայլուն իր արտաքինով, սակայն իմաստալից ու վեհ իր ներքին բովանդակությամբ։

«Հայության համախմբում» կամ «Հայության կազմակերպում» գաղափարական իմաստով—ահա ինչ եմ հասկանում ես «Հոգևոր Հայաստան» ասելով։ Դա այն կուլտուրան է, այն կուլտուրապես կազմակերպված ժողովուրդն է, որի ցալուն մենք կուզեինք համատալ։

Ընթերցողը կարող է, սակայն, նեղանալ, որ իմ բաղձանքը լոկ խաղաղ կուլտուրական աշխատանքն է, որով ես առաջարկում եմ զբաղվել։ Այո, եթե կուզեք, այդպես, միայն եթե այդ խաղաղ կուլտուրայի առաջընթացը խանգարող հանգամանքներ չլինեն։

Քանի որ կան այդ արտաքին արգելքները, բնականաբար մեր ուշքը միշտ պիտի դարձած լինի նրանց վրա։ Ես միանգամայն համաձայն եմ... որ մեր ինտելիգենցիայի գլխավոր մեղքերից մեկը նրա ապոլիտիցիզմն է։

Դրանից է բխում այն, որ մեր ազգայնական ինտելիգենցիան մեկուսացման մեջ է որոնում հայության փրկությունը, առանձնության մեջ է կամենում կառուցանել ազգային ապագան։ Ահա այդտեղից է ծագում նրա «ծխականությունը», որ ես էլ շեշտել եմ մի անգամ և որին հակադրել եմ «քաղաքացիությունը»։

Քանի որ կլինեն այդ արտաքին խոչընդոտները, բնականաբար իբր քաղաքացիներ մենք պետք է մաքառենք նրանց դեմ։

Սակայն, բացի այդ, կա և ներքին կամքի խնդիր։ Ազգը միայն արտաքին ուժերի գործությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլև իր անդամների ներքին մտավոր—հոգեկան կապով։ Պետք է, բացի արտաքին հնարավորությունից, լինի և ներքին մի զորություն, մի հոգևոր մղում, որ մարդկանց համախմբումը ազգ է դարձնում։

Որքան ուզում է թող անկախ ու ազատ լինի մի Ալբանիա, դա երբեք չի ստեղծի ազգ, եթե ալբանական ժողովուրդը մի ներքին մղում չունենա դեպի այդ և տևական ու ծանր աշխատության գնով ձեռք չբերե այդ արտոնությունը։

Ես ոչ մի արժեք չեմ տալիս այն ազգության, որ արտաքին սահմաններով է պահպանում իր ինքնությունը. և, որ գլխավորն է, մի ինքնություն, որ կարիք էլ չկա պահպանելու։

Ահա թե ինչո՛ւ ես կարծում եմ, որ, բացի արտաքին արգելքները

*հաղթահարելուց, ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծե այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչյաներ են։...*

## ՁԵԿՈՒՑԱԳԻՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

*Թուրքահայաստանի ճակատագրի հարցը եղել է հայ հասարակական կյանքի ամենասուր, ամենածանր, ամենացավոտ հարցը։ Արդեն շատ տասնյակ տարիներ ոչ միայն հայ ինտելիգենցիայի, այլև բանվորական ու գյուղացիական դեմոկրատիայի ամենալայն մասսաների բոլոր մտքերն ու ամբողջ ուշադրությունը զամված են եղել հայկական կյանքի այդ «անիծյալ հարցին»։*

*Թուրքիայի հայերի անողոք ու դաժան, սիստեմի վերածված, պարբերական բնաջնջումը, մեթոդիկ կերպով կրկնվող արյունաքամությունը, որը այս կամ այն պատրվակով կիրառում էին մեծ ու փոքր սուլթանները՝ հանրահայտ փաստ է։*

*Հայկական կյանքի այդ դաժան, արյունալի «կենցաղային երևույթը» հայերի, և հատկապես կովկասահայերի մեջ, որոնք թուրքահայերից բաժանված են լոկ արհեստական պետական սահմաններով, պահպանում էր մշտական տագնապի մթնոլորտը, սերտորեն շաղկապելով «միասնական ազգային ճակատի» շարքերը, ուժգնորեն ներշնչելով և լայնորեն տարածելով բոլոր դասակարգերի սերտ միասնության, համախմբման գաղափարը՝ հանուն ազգի ֆիզիկական գոյության պաշտպանման և ջնջելով, մթագնելով, թուլացնելով ազգի ներսում դասակարգային պայքարի և տարբեր ազգերի պատկանող պրոլետարների համերաշխության գաղափարների ազդեցությունը։... Միայն պետությունների բացահայտ և անկեղծ—բարյացակամ վերաբերմունքը և առատաձեռն նյութական օգնությունը կարող կլինեին դեթ մասամբ բուժել այն խոր վերքերը, որ հասցրել են հայ ժողովրդին պատերազմը և իմպերիալիզմի ու շովինիզմի սանձարձակ քաղաքականությունը։ Քանի դեռ Եվրոպայում իշխանությունը գտնվում է իմպերիալիստների ձեռքին, հայերը չեն կարող նման բարենպաստ վերաբերմունք հուսալ եվրոպական տերությունների կողմից։ Հայտնի է և այն, որ «սոցիալիստ» Կերենսկու գլխավորած կոալիցիոն կառավարությունը չէր կարող հայերին (ինչպես, ի դեպ, նաև բոլոր այլ մանր ազգություններին) տալ ազատություն, թեպետև այդ կառավարությունը խոսքով ընդունեց «ազգերի ինքնորոշման իրավունքը»։ Կերենսկու այդ կառավարությունը*

հարկ չհամարեց որոշակիորեն ասելու իր մտադրությունը ինքնավար Հայաստան ստեղծելու և հայերին հարազատ օջախները վերադարձնելու մասին։ Այդ կառավարությունը 8 ամսվա ընթացքում ոչ մի վճռական քայլ չարեց վերականգնելու ավերված Հայաստանի այն մասը, որը «պատերազմի իրավունքով» գրավված է ռուս զորքերի կողմից։ Այդ կառավարությունը բանակում իրենց տեղերում է թողել ամբողջ հին բարձր հրամանատարական կազմը, որ դեռ ցարական սատրապ Վորոնցով-Դաշկովի ժամանակից Կովկասյան բանակում վարում էր և այժմ էլ վարում է չարդարարական ագիտացիա ընդդեմ հայերի և ամեն կերպ խոչընդոտում է հայ հասարակական կազմակերպություններին՝ գաղթականներին հայրենիք վերադարձնելու և տեղավորելու Թուրքահայաստանում։...

Մենք, հայ սոցիալ-դեմոկրատներս (բոլշևիկներս), հաստատ գիտենք, որ լոկ պրոլետարական-գյուղացիական ռևոլյուցիան և բանվորների ու չքավորագույն գյուղացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել մեր արտասահմանյան եղբայրներին, թուրքահայերին և բուժել նրանց խոր վերքերը։ Մենք միշտ այդ բանը նշում էինք հայ գյուղացի և բանվոր մասսաներին։ Մենք միշտ խարազանում էինք մանրբուրժուական և բուրժուական պարտիաների կողմից նրանց ներշնչվող պատրանքները ոչ միայն Եվրոպայի իմպերիալիստական դիվանագիտության վերաբերյալ, այլև կադետների հետ կոալիցիայի մեջ մտած և Կերենսկու կողմից գլխավորված ռևոլյուցիոն դեմոկրատական կառավարության վերաբերյալ։

Եվ ահա, հասել է, վերջապես, ժամանակը, երբ մենք կարող ենք հայ մասսաներին ասել՝ աջակցեցեք Բանվորների և Գյուղացիների կառավարությանը, և հաստա՛տ հավատացեք, որ նա ձեզ չի խաբի. նա ձեզ կտա ազատություն, որը ապարդյուն ջանում էիք ստանալ մինչև այժմ, հանուն որի այնքան արյուն ու արցունք եք թափել»։

Ինքնին հասկանալի է, որ մենք, հայ բոլշևիկներս, ոչ մի րոպե չենք կասկածում, որ ասելով այդ, մենք մեր բանվորներին ու գյուղացիներին իսկական ճշմարտությունը կասենք, բայց և այնպես մեզ թվում է, որ այժմ իշխանության գլուխ կանգնած մեր առաջնորդներն ու ընկերները—ժողովրդական կոմիսարները—խիստ կամրացնեին մեր ոտքի տակի հողը. աջակցած կլինեին մեզ, եթե հնարավոր գտնեին այժմ իսկ մի դեկրետ հրապարակել, որով հաստատվեր Բանվորական և Գյուղացիական Կառավարության հաստատ մտադրությունը՝ վճռականորեն պաշտպանել թուրքահայերի լիակատար ազգային ինքնորոշման ձգտու-

մի, ըստ որում նշվեր, որ Ժողովրդական Կոմիսարների Կառավարությունը ըստ ամենայնի կօժանդակի այն երաշխիքների ստեղծմանը, որոնք Թուրքահայաստանի հայ ազգաբնակչության ինքնորոշման իրական հնարավորություն կտային։ Այդպիսի երաշխիք պետք է հանդիսանա ինչպես բռնի կերպով Միջագետքի և Թուրքիայի այլ վայրերը արտաքսված, այնպես էլ Ռուսաստանում գտնվող գաղթականների և Ամերիկա ու այլ երկրներ գաղթած բոլոր հայերի համար հայրենիք վերադառնալու հնարավորություն ստեղծելը։ Լոկ այս երաշխիքներն ապահովելու դեպքում կարելի է խոսել Հայաստանի իսկական ինքնորոշման մասին։ Այլապես հայ ժողովրդի ինքնորոշման մասին ամեն մի խոսակցություն կհնչի որպես դատարկ դրույց։ Բացի այդ, մեզ թվում է, որ այժմ պետք է ձեռնամուխ լինել այն գաղթականների տեղավորմանը, որոնք տեղաբաշխված են Անդրկովկասում, ընդ որում շատ կարևոր է այժմ իսկ բացատրել, որ ռուսական զորքերը դուրս չեն բերվի պատերազմի իրավունքով մեր կողմից գրավված Հայաստանի մասից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության հաստատուն երաշխիքներ, և մինչև այնտեղ նոր կարգ չհաստատվի։ Անհրաժեշտ է, որ «պատերազմի իրավունքով» գրավված Հայաստանի մարզերի կառավարումը անմիջականորեն կապված լինի կենտրոնական իշխանության հետ և թույլ չտրվի ենթարկելու հատուկ Անդրկովկասյան Կոմիտեի կամ այլ տեղական իշխանության, քանի որ, ինչպես փորձը ցույց է տվել, կառաջացնի տեղական քաղաքական ու հասարակական պայմաններից բխող մի ամբողջ շարք բարդություններ։

Եթե պահպանվելու է մեր զորքերի կողմից Հայաստանի գրավված մասը կառավարող այժմյան Գլխավոր Կոմիսարիատը, համենայն դեպս ցանկալի կլիներ այժմ իսկ այդ մարզերի կառավարման գործի մեջ ներգրավել Թուրքահայ ընտրովի ներկայացուցիչներին, այդ ներկայացուցիչներից ստեղծելով մեր զորքերի կողմից գրավված Հայաստանի մարզերի կառավարման Գլխավոր Կոմիսարիատին կից հատուկ Սովետ։ Այդպիսի ցանկություն շարունակ հայտնել են իրենք՝ Թուրքահայերը, ինչպես մամուլում, այնպես էլ ժողովներում և համագումարներում։

## ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Անցյալ տարվա փետրվարի հեղափոխության օրերում, երբ որ թալանիչ ու ավերիչ պատերազմից զզված ժողովուրդն ապստամբեց ու տապալեց Նիկոլայի արյունաներկ գահը, իշխանությունը ոչ թե աշխատա-

վոր ժողովրդի ձեռքն անցավ, ինչպես որ պետք է լիներ, այլ իշխան Լվովի, Միլյուկովի, Կերենսկու և նրանց նմանների ձեռքն անցավ[4]։ Այդ պարոնները չէին ուզում, որ հասարակ, աշխատավոր ժողովուրդն ինքն իր ձեռքով կառավարե իրան։

Դրանց կարծիքով ժողովուրդն ունակ չէ ինքն իրա գլխի տերը լինելու, ինքն իրան կառավարելու...

Դրանք բոլորը իրանց աշխատավոր ժողովրդի բարեկամ էին ձևացնում, որպեսզի ավելի լավ խաբեն աշխատավոր գյուղացիներին ու բանվորներին։ Բայց աշխատավոր ժողովուրդն իսկական ճշմարիտ բարեկամներ էլ ուներ։ Այդ բարեկամները հեղափոխական կոմունիստներն էին, այսինքն բոլշևիկները, որոնք միշտ պատերազմի դեմ էին խոսում ու գրում, որոնք միշտ իշխանների, աղաների դեմ էին կռվում, որոնց թագավորական լկտի իշխանությունը հազարներով կախաղան էր հանում ու սպանում էր, որոնց հազարներով բանտ էր դնում ու Սիբիր աքսորում։

Կովկասում ևս սկսվեց քիչ-քիչ հաստատվել բանվորական ու զինվորական խորհուրդների իշխանությունը։ Բաքվում, ուր բանվորները շատ կազմակերպված ու աչքաբաց էին, իսկույն իշխանությունն իրանց ձեռքն առան, ընտրեցին բանվորական ու զինվորական խորհուրդ, որն սկսեց կառավարել քաղաքն[5] ու մտցնել Պետերբուրգի խորհուրդների հրատարակած նոր օրենքները։ Բայց Բաքվից այն կողմը դեպի Թիֆլիս, Երևան, Գանձակ իշխանությունն իրանց ձեռքն էին առել թուրք բեգերի շահը պաշտպանող մուսավաթ կուսակցությունը, վրացի ազնվականների օգուտը պաշտպանող մենշևիկներն ու հայ սուտ սոցիալիստ, հայ գյուղացու պաշտպան ձևացող կարճիկյանների կուսակցությունը, այսինքն հայ հակահեղափոխական դաշնակցությունը։

Եվ այն ժամանակ, երբ Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական կառավարությունը զինաթափ էր անում աղաներին, ունևորներին ու զինում գյուղացիներին ու բանվորներին, հենց այդ նույն ժամանակ Կովկասի «կառավարությունը», որն, ինչպես ասինք, բաղկացած էր վրացի մենշևիկ կեղծ սոցիալիստներից, սուտ դեմոկրատ դաշնակցականներից և թուրք բեգերից, զինաթափ էր անում ոչ թե աղաներին, այլ ռուս զորքերին ու նրանց զենքերով զինում թուրք բեգերի գնդերը[6]. այդ կառավարությունը զենք ու փամփուշտ էր ուղարկում գյուղացիների և բանվորների դեմ կռվող գեներալ Կոռնիլովին ու Կալեդինին, իսկ երբ այդ վերջինները ջախջախվեցին ու ընկան, երբ Ռուսաստանի գյուղացիական ու բանվորական խորհուրդների սոցիալիստական զորքերը

սկսեցին տիրանալ Կովկասին, նրանք, այդ դավաճան չխենկիլիները, խան-խոյսկիները և խատիսյանները Կովկասը Ռուսաստանից անկախ, բաժանված հայտարարեցին. նրանք հայտարարեցին, թե կռվելու են բոլշևիկյան զորքերի դեմ, որովհետև դրանք անարխիա են մտցնում Կովկաս՝ այսինքն անիշխանություն, խառնակություն, անկարգություն են մտցնում։ Այնինչ, ո՛վ չգիտե, որ, ընդհակառակը, իրանք այդ խաների ու բեգերի հետ բարեկամ դարձած վրացի մենշևիկներն ու դաշնակցականներն էին, որ Կովկասում անկարգություն ու իրարանցում մտցրին, դրանք էին, որ զինեցին բեգերի գնդերը և այն ժամանակ, երբ իրանք Թիֆլիսում բեգերի հետ նստած խորհուրդ էին անում, թե ինչպես բոլշևիկներին ջնջեն, ահա հենց այդ ժամանակ Բաքվի ճանապարհի վրա նույն բեգերի ձեռքով ու իրանց օգնությամբ կազմված ու զինված խմբերը կոտորում էին անցնող ռուս զինվորներին, հայ ճանապարհորդներին և խաղաղ մալական գյուղացիներին...

Եվ Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական խորհուրդների հետ միանալու փոխարեն, կարճամիտ դաշնակցականները միացան թուրք բեգերի ու վրացի ազնվականների շահը պաշտպանող ավազակների հետ — Չխենկելիի, Ջիխիձեի, Գոբեչիայի, Խան-Խոյսկու հետ։ Փոխանակ հեղափոխական Ռուսաստանի հետ դաշն կապելու, նրանք դաշն կապեցին հակահեղափոխական և արյունարբու բեգերի ու դավաճան մենշևիկների հետ։ Եվ մի ազնիվ օր, մի զզվելի օր դավաճանները Կովկասը Ռուսաստանից անկախ հայտարարեցին[7], կտրեցին Ռուսաստանից։ Արյունարբու իմպերիալիստ (այսինքն թալանչի) Տաճկաստանն էլ հենց այդ էր ուզում։ Երբ նա տեսավ, որ պաշտոնապես Կովկասը կտրվեց Ռուսաստանից, իսկույն ևեթ զորքը շարժեց առաջ և գրավեց Կովկասի հայաբնակ երկիրները[8]։ Տաճկաստանն այսպես ասաց՝ քանի որ դուք Ռուսաստանից անկախ պետություն եք, ուրեմն իմ՝ Ռուսաստանի հետ կապած պայմանները ձեզ չեն վերաբերվում, ուրեմն ջուրն են ընկնում այդ պայմանները։ Իսկ այդ պայմանում ասված էր, որ Թուրքիան Ղարսից ներս անցնելու իրավունք չունի։ Այժմ, երբ Կովկասը անկախ է, ասաց Թուրքիան, Ռուսաստանի հետ կապած պայմանն իր ուժը կորցնում է, և դրա համար մենք պահանջում ենք, որ թույլ տաք մեր զորքը մտցնելու Երևան, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք և այլն։ Ահա թե ինչպես հայ աշխատավոր ժողովրդի տունը քանդեցին ժողովրդին բարեկամ ձևացող դաշնակցականները՝ միանալով թուրք մուսավաթական բեգերի և դավաճան մենշևիկների հետ։ Բայց ինչ անել այժմ, երբ թուրք ու թաթար հորդաները խուժել են հայ գավառները

*և մահացու վտանգի մեջ են դրել հայ աշխատավոր գյուղացուն և բանվորին։*

*Մենք, հայ բոլշևիկներս, չենք կարող անտարբեր մնալ, երբ վտանգի է ենթարկված հայ աշխատավոր գյուղացու և բանվորի կյանքը, որովհետև չէ՞ որ մեր կոմունիստական պարտիան (կուսակցությունը) չունևոր գյուղացիների և բանվորների կուսակցություն է։...*

*Մենք միշտ քարոզել ենք և այժմ էլ պիտի անդադար քարոզենք, որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության հզորության մեջ է։ Եվ ով որ դեմ է խորհուրդների իշխանության՝ նա դավաճան է, նա ժողովրդի թշնամին է։ Եվ ահա մենք, հայ կոմունիստ բոլշևիկներս, կոչ ենք անում ձեզ, հայ գյուղացիներ և հայ բանվորներ՝ միացեք Ռուսաստանի խորհուրդների կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական Ռուսաստանի սոցիալիստական կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված, մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին։ Մտե՛ք ուրեմն մեր գյուղացիական և բանվորական կոմունիստական կուսակցության շարքերը, մտե՛ք մեր կարմիր հեղափոխական գնդերի մեջ, հիշեցեք միշտ և տարածեցեք ամեն տեղ մեր մեծ ուսուցիչ, աշխատավոր ժողովրդի բարեկամ Մարքսի ոսկի խոսքերը՝ Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք[9]։*

## Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ԼԵՆԻՆԸ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

*Կոմունիստները գիտեն, որ անհաշտելին չեն կարող հաշտեցնել և չեն ուզում հաշտեցնել, դրա համար հարցը դնում են պարզ, շիտակ ու կտրուկ։*

— Բոլոր հողը պետք է բոլոր ժողովրդին լինի, *ասում է Լենինը[10]։ Հողատեր-աղաները Ռուսաստանում երեսուն հազար հոգի են, իսկ նրանց ձեռքում յոթանասուն միլիոն դեսյատին հող կա։ Եթե այդ յոթանասուն միլիոնը հավասար բաժանելու լինենք երեսուն հազար հողատիրոջ վրա, ամեն մի հողատիրոջը երկու հազար դեսյատինից ավելի կընկնի։ Իսկ գյուղացիք Ռուսաստանում մոտ տասը միլիոն տուն են և իրանց ձեռքում ունին նույնպես յոթանասուն միլիոն դեսյատին հող. եթե գյուղացիների ունեցած հողն էլ հավասար բաժանելու լինինք, ամեն մի*

տանը յոթը դեսյատին կընկնի։ Այսինքն մեկը երկու հազար դեսյատինից ավելի հող ունի, իսկ մյուսը՝ տնով յոթը դեսյատին։ Եվ չնայած այդ աշկարա, բացարձակ անարդարության, երբ որ մենք բոլշևիկ-կոմունիստներս ասում ենք, որ գյուղացիք իսկույն պիտի խլեն հողատեր-աղաներից հողը, կան մարդիկ, որ ասում են—ի՞նչպես, մի՞թե կարելի է զավթել հողատերերի հողը, չէ՞ որ դա կամայականություն, անիրավություն կլինի և զոռբայություն։ Ոչ, ասում ենք մենք, զոռբայությունը դա չի լինի, այլ զոռբայությունն այն է, երբ հողատեր-աղաները, որ թվով գյուղացիներից հազար անգամ քիչ են և, չնայած դրան, զոռբայությամբ տիրել են բոլոր հողերին ու քեֆ են քաշում, իսկ գյուղացիք իրանց մի կտոր հողը փորփրելով ու շատ չարչարանք քաշելով մի փոր հացի տեր չեն դառնում։ Մինիստրներն ասում էին՝ «թող գյուղացիք համաձայնության գան հողատեր-աղաների հետ, մի բան վճարեն ու յոլա գնան և ոչ թե խլեն, զավթեն հողը»։

Բայց դա, պատասխանում է Լենինը, արդար բան չի լինի, որ գյուղացիք նորից փող վճարեն հողատեր-աղաներին, որոնք դարերով, սերնդե սերունդ օգտվել են իրանց բռնությամբ զավթած հողից և, բացի այդ, եթե մի րոպե թույլ տանք, որ բոլոր հողատերերը համաձայն են որոշ վճարով իրանց հողը գյուղացուն տալ, այն ժամանակ էլ չէ՞ որ հողատեր-աղան ավելի շատ ունևոր հարուստ գյուղացուն կտա իր հողը, որովհետև հարուստ գյուղացին նրան ավելի շատ փող կարող է տալ և հողատերն էլ ավելի շատ հարուստ գյուղացուն կհավատա, քան թե չունևոր, աղքատ, մշակ-գյուղացուն։ Եվ այդ դեպքում աղքատ, չունևոր գյուղացին զրկված կմնա։ Ոչ, դա չունևոր գյուղացիներին ձեռնտու չէ։ Բայց հողատերը, իրեն որ մնա, կարող է փողով էլ չտալ իր հողը, կարող է իսկի համաձայնության չգա՝ եթե բանը յոլա գնալուն կամ համաձայնության գալուն հասնի։ Ոչ, դա գյուղացիներին ձեռնտու չէ։ Դրա համար կոմունիստներն ասում են, որ գյուղացիք պետք է իսկույն խլեն հողատերերից հողը և օգտվեն։ Բայց երբ մենք ասում ենք, որ գյուղացիք պիտի իսկույն զավթեն հողատեր-աղաների հողը, դա չի նշանակում, թե ով ինչքան զավթե, իրանը կլինի, կամ ով այդ հողից օգտվի, հավիտյան սեփականատեր կդառնա այդ հողին։ Ոչ, մենք ասում ենք՝ պետք է հայտարարել, որ հողը խլվում է հողատեր-աղաներից և դառնում բոլորի սեփականություն, իսկ ով որ հողը վերցնում է, դա միևնույն է թե ընդհանուր ժողովրդից ժամանակավոր վերցնում է հողը, մինչև որ ժողովուրդը ինքը կարգ կհաստատե հողի մասին։ Բացի այդ, մենք չենք ասում, որ գյուղացիք «խլե-խլե» անեն հողը, ով ինչ-

քան կարողանա—խլե. ո՛չ, մենք ասում ենք, որ գյուղացիք պիտի **կազմակերպված, կանոնավոր** կերպով վերցնեն հողատերերի հողը:...

Ոմանք էլ ասում են թե, եթե գյուղացիք հիմիկուց վերցնեն հողատերերի հողերը, զինվորները ֆրոնտից կսկսեն փախչել, որովհետև կմտածեն, թե անկարգություն է սկսվել, հողը կբաժանվի ու իրանց փայ ու բաժին չի մնա: Դա իհարկե սխալ է, պատասխանում է Լենինը, սխալ է, որովհետև, երբ հողը հայտարարվում է համայն ժողովրդի սեփականություն, դա չի նշանակում, թե ով ինչ հող որ ուզենա կխլե և այդ հողն իրանը կմնա: Ոչ, այդպես չի լինի: **Գյուղացիք կվերցնեն հողը ոչ թե իբրև իրանց** սեփական հող, այլ իբրև **համայն ժողովրդինը, որ ժողովուրդը տալիս է նրանց օգտվելու, մինչև որ ինքը ժողովուրդը նոր կարգ հաստատե հողի մասին**:...

## ԱՆԿԵՂԾ ԵՎ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԵԼ

Հայ հակահեղափոխական դաշնակցության Մոսկվայի կոմիտեն ուղարկել է մեզ այդ կուսակցության Բաքվի պաշտոնաթերթի («Արև»-ի) հունիսի 9-ի համարի առաջնորդողից[11] մի քաղվածք, որ Անդրկովկասյան մատնիչների և Թուրքիայի միջև կնքված հաշտությանն է վերաբերում[12]:

Ահա այդ քաղվածքը.

«Մենք ամենաեռանդուն կերպով բողոքում ենք բոլոր նրանց դեմ, որոնք ոտնատակ են տալիս հայ ժողովրդի կամքն ու որոնք ուզում են անջատվել Ռուսիայի դեմոկրատիայից: Հաշտության այն պայմանը, որ կապել է Թուրքիայի հետ Թիֆլիսի Ազգային խորհուրդը, **մատնության մի նոր ակտ է** (ընդգծումը մերն է) հանդիսանում, որի նպատակն է խորտակել կովկասյան ողջ դեմոկրատիայի միությունն ու մեր երկիրը սրի ու հրի մատնել: Այդ պայմանագրով իրավունք է տրվում Թուրք փաշաներին Անդրկովկասյան երկաթուղու գծով զորքեր տեղափոխել, որի նպատակն է՝ արշավանք Բաքվի խորհրդային իշխանության վրա, որը մեր երկրի միակ իշխանությունն է, որը կապում է մեզ Կենտրոնական Ռուսաստանի հետ:

Մենք վճռականորեն գտնում ենք, որ Կովկասի բոլոր ազգերի աշխատավոր մասսաները չեն կամենում անջատվել Մայր Ռուսիայից, բոլոր այդ մասսաները դեմ են Անդրկովկասի, Վրաստանի և Հայաստանի անկախության:

Վերջին խոսքն այժմ պատկանում է Բաքվի պրոլետարիատին,

աշխատավոր գյուղացիության, արի կարմիր արմիային և դրանց սյուզը կանգնած խորհուրդների իշխանության, որ պետք է **զենքի ուժով ջնջի բռնավորներին, դեսպոտներին ու մատնիչներին** (ընդգծումը մերն է) և հաստատե Անդրկովկասի կենտրոնում խորհուրդների իշխանության դրոշակը։ Դեպի կռիվ ենք կոչում մենք ձեզ, Անդրկովկասի բոլոր ազգերի աշխատավոր մասսաներ։ Հաղթությունը մերն է...»։

Այս ուշագրավ դոկումենտի տակ գրված է մի կլոր ու վարդագույն կնիք հետևյալ մակագրությամբ՝ Армянская Революционная Партия «Дашнакцутюн. Моск. Комитет».

Ինչպես հայտնի է, Թիֆլիսի Ազգային խորհրդի մեջ նստած մատնիչների մեծ մասը իրանց այդ կնիքում հիշված դաշնակցություն պարտիայի անդամներն են։ Այդ պարոններին Բաքվի «Արև»-ը ամենայն իրավամբ դավաճան է անվանում, և մենք չենք կարող չհամաձայնել, որ այդ որակումը միանգամայն ճշմարիտ է։ Մենք ևս Թիֆլիսի Ազգային խորհրդում մեծամասնություն կազմող դաշնակցականներին համարում ենք հայ ժողովրդի մատնիչներ և հայ աշխատավորների ու հեղափոխության դավաճաններ։

Բայց միանգամայն բնական կերպով մեր մեջ հարց է ծագում՝ արդյոք ի՞նչ կնիքով են կնքում իրանց հայտարարությունները ու թղթերը Թիֆլիսի մատնիչները, չէ՞ որ նրանք էլ դաշնակցականներ են։ Արդյոք կա՞ այս միևնույն մակագրությունը կրող, երկու կնիքները գործածող ըստ երևույթին նույն կուսակցության երկու կոմիտեների մեջ։ Ի՞նչպես են կոչում իրար այս նույն կնիքը կրող երկու կոմիտեների անդամները։ Առաջ (և շատ առաջ չէր դա) նրանք իրար «ընկեր» էին անվանում։ Արդյոք դադարե՞լ են նրանք իրար «ընկեր» և համակուսակից համարելուց, թե դեռևս միևնույն կուսակցության դրոշակի տակ են գտնվում։

Անդրկովկասում կատարված ահեղ մատնության հեղինակ՝ երեք կուսակցություններից մեկը եղել է դաշնակցություն կոչվածը։

Դա ոչ ոքի համար գաղտնիք չէ այժմ։

Մենք կուզեինք իմանալ վերջապես, թե արդյոք Թիֆլիսում նստած և թուրքերի հետ դաշն կապող մատնիչ և դավաճան դաշնակցականները նույն դաշնակցությա՞նն են պատկանում, որին պատկանել են և պատկանում են Բաքվի և Մոսկվայի դաշնակցականները, թե դա երկու բոլորովին տարբեր դաշնակցություններ են, որոնք երբեք կապ չեն ունեցել, ընկեր չեն եղել, միևնույն ստոր գործում բնավ իրար չեն աշխատակցել—թե դրանք միևնույն դաշնակցության երկու տարբեր թևերն են—աջ և ձախ։

Մեզ համար գաղտնիք չէ իհարկե Բաքվի դաշնակցականների խորհուրդների իշխանության նկատմամբ վերջերս բռնած դիրքը։ Ասում եմ վերջերս, որովհետև «կար ժամանակ», և շատ չի անցել այդ ժամանակից, երբ Բաքվի դաշնակցականները թե «Արև»-ի, թե «Գործ»-ի էջերում[13] խորհուրդների իշխանության և այդ իշխանությունն իրականացնող կոմունիստական կուսակցության մասին նույն լեզուն էին գործածում բաքվեցիների այժմյան կարծիքով, ինչպես և մեր կարծիքով, ինչ որ Թիֆլիսի դավաճան դաշնակցականների «Հորիզոն»-ն[14] էր գործածում։

Մենք միտք չունենք իհարկե հին օրանը քամուն տալով զբաղվելու, բայց մեզ համար վճռական կերպով կարևոր է իմանալ, թե արդյոք հնարավո՞ր են գտնում Բաքվի և ըստ երևույթին և Մոսկվայի «ձախ» դաշնակցականները մնալ թեկուզ իբրև ձախից էլ ձախ թև մի կուսակցության մեջ, որի մյուս թևի ղեկավարները, ինչպես իրանք բաքվեցի դաշնակցականներն են ասում, մատնիչներ ու դավաճաններ են։ Նախքան բաքվեցի դաշնակցականների հետ մի գործ բռնելը, խորհուրդների իշխանությունը պիտի վճռական պատասխան ստանա այս հարցին։ Անշուշտ Բաքվի դաշնակցականներն իրանց վերը բերած խոսքերով ջնջում ու ջրում են այն բոլոր անամոթ զրպարտությունները, որ բարդում էր Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո նրանց «Գործն» ու «Արև»-ը կոմունիստների (բոլշևիկների) և խորհուրդների իշխանության վրա։

Անշուշտ նրանք այդ հայտարարությամբ հրաժարվում են (եթե նրանք հետևողական են) այն համաձայնիչ, բուրժուական քաղաքականությունից, որ նրանք վարել են մինչև Հոկտեմբեր և Հոկտեմբերից անմիջապես հետո։

Բայց մենք պետք է իմանանք, թե արդյոք մնո՞ւմ են նրանք Թիֆլիսի դավաճանների «դաշնակցություն» կուսակցության շարքերում, թե գոնե տարրական հետևողականություն պահպանած լինելու համար հրաժարվում են այդ բարձր պատվից, որ մինչև այժմ ունեցել են քաջազնունիների, բժիշկ Օհանջանյանի, շահխաթունիների, բժիշկ Զավրիևի, Ջամալյանի և այլ, ինչպես իրանք բաքվեցիք են անվանում, դավաճանների և մատնիչների դաշնակցության պատկանելով, թեկուզ այդ դավաճանների կուսակցության ձախ թևը լինելով։ Բժիշկ Զավրիևն իբր բժիշկ կարող է բացատրել յուր կուսակցության ձախ թևին պատկանող-

ներին, որ երբ աջ թևը վարակված է մի դավաճանության զազրելի ախտով, դժվար է ձախը վարակումից ազատ պահել առանց անդամահատության։

## ԱՆՄՈՌԱ՛Ց ԸՆԿԵՐ...

*Ստեփան Շահումյա՛ն...*

*Ընդմիշտ անմոռա՛ց, թանկագի՛ն, նվիրակա՛ն անո՛ւն...*

*Հերոս նահատակներ, խիզախ ու ըմբոստ առաջնորդներ, անձնուրաց մարտիկներ քիչ չեն եղել կովկասյան պրոլետարիատի շարքերում։*

*Եվ քիչ չեն այն նվիրական անունները, որ միշտ սիրով ու պարծանքով պիտի լցնեն պրոլետարիատի հոգին... Քիչ չեն այն անունները, որ աստղերի նման լուսավորելու են հերոս դասակարգի փրկարար, բայց դժվար ուղին...*

*Սակայն Ստեփան Շահումյանի անունն ընդմիշտ անզուգական պիտի մնա կովկասյան պրոլետարիատի համար...*

*Ոչ մի անուն այնպիսի պայծառ ու վառ լուսապսակով չի շրջապատված, ոչ մի անուն այնքան մրրկալի հուզում, այնպիսի այրող կսկիծ, այնքան անսահման քնքշություն ու սեր չի հարուցանելու կովկասյան պրոլետարիատի կրծքում, ինչպես Ստեփան Շահումյանի անունը։*

*Նա պրոլետարիատի սիրելին էր։*

*Նա ի՛սկ որ պրոլետարիատի հրաբորբոք, բաբախուն սիրտն էր— Ստեփան Շահումյանը։*

*Այս նվիրական անունը ամեն ժամ և ամեն վայրկյան կենդանի ու բոցբոց պիտի պահի Կովկասի և Հայաստանի պրոլետարիատի սրտում աճող զայրույթն ու ըմբոստացումը։*

*Այս կարմիր անունը նվիրական, արնագույն դրոշի նման կրկին ու կրկին իր շուրջը պիտի համախմբի մեր աճող, հաղթական շարքերը։*

ՍԻԱՄԱՆԹՈ

## ՌԱՖԱՅԵԼ ՊԱԶԱՐՃՅԱՆԻՆ

1914, սեպտեմբեր 5, Կ. Պոլիս

*Այս հուսահատության, զզվանքի, անկարելի տոկության, պահին համակերպումի և իմ բառարանես և Ձեր բառարանեն բացակա ամեն հայհոյանքի արժանի օրերուն մեջ,* հայ օրէրուն մէջ. *Ձեր փոքրիկ քառաթը, իր մեծ սրտով ինծի մտածել տվավ. Թե դեռ ՄԱՐԴԵՐ,* բարեկամներ *կան... Բայց իմ ցավես առաջ ցեղիս ու ցեղիդ ցավեն խոսիմ... Բովանդակ ծաղիկ հայ երիտասարդությունը, ծեր* «բորեհիները» *զինվոր տարին: Ահավոր խուճապ: Գավառներին մարդ չին ձգեր: Մինչև 45 տարեկան... դեպի մահ, դեպի սառույց մահ, ո՛չ պատերազմի մեջի մահին,* այլ անօրութեան: *Ամբողջ Թուրքիան անոթի է: Այլևս հայ և հույն վաճառական կամ վաճառականություն չի մնաց: Կառավարությունը բոլորն ալ հավաքեց, թալանեց, կողոպտեց և գրավեց. Նույնիսկ ստացագիր չի տալով: Ամեն կողմ գրավում. ոչ թե այլուր կամ կերպաս, այլ ինչ որ գտնեն հայ և հույն վաճառականին քով: Պոլիս և ամեն տեղ նույն բանը: Քրիստոնյա թաղերու փուռերեն այլուրը կը կողոպտեն* Երկու միլիոն *զորքի համար և իսլամ թաղերը կը տանին... Ձեզ կրնամ և նամանավանդ ես, որ ներկա եմ և ջիղերս կայծակի խուրձի մը վերածվել են, չեմ կրնար երևակայել կամ գրել ինչ որ կը դառնա այս անիծյալ երկրին մեջ: Այս բոլորին պատճառը գերմանները են, և խեղճ Թուրքերը իրենց փրկությունը կը հուսան գերման ձեռքեն: Առաջին կոչին, երբ 20-են 45 տարեկանները կանչեցին, չի պատասխանեցին: Բ կոչին, երբ գրվեցավ և պատերուն վրա* affiche*-*ներով և գիշերապահներուն բերանով* տավուլի *հարվածներով գիշերն ի բուն սկսան* ըսել, *թե* զինվոր չարձանագրվողները՝ *պիտի մեռնին և* հրացանի պիտի բռնվին *պատերազմական ատյանին կողմեն*[1], *ես ալ ստիպված գացի-*

* *Հայտագիր:*

ինչ ընելու, պիտի գտնար. այո՛ ես, որ 20 տարիեն ավելի եմ՝ 39-ին մեկն եմ. գացի զինվոր գրվելու։ Այս դժոխային հեգնության վրա կը խոսիմ. երբ օր մը, կը հանդարտիմ, երբ օր մը մենք նորեն պատահինք։ Իմ եղբայրս, որ միակ դրամ շահողն է մեր տան մեջ, առին և տարին։ Ահավոր բաներ կը գրեն։ Օրը կես սոմուն[3] հաց կուտան. կը պառկին վրաններու տակ և ցեխին մեջ. հագուստ չունին, զինվոր են և զենք չունին, կը խմեն ցեխոտ ջուր. իրենց հետ տարած հինգ օրվան հացը հատած զորաբանակեն մեկ միլիոն մարդ Էտիրնե, Քըրք-քիլիսե, Չորլու և ուրիշ տեղերը հաց կը հուսան, չեն ստանար և չեն ըմբոստանա՞ր...

Հոս փողոցին մեջ միայն ծերերու կը պատահիք, և անոնց, որոնք կրցեր են իրենց տան կահկարասին ծախելով իրենց պետելը վճարել[4]։ Առաջին պայմանաժամը լրանալուն պես, ես ալ տեղերքին զզվանքը, ոխը, վախը և տարկությունը ուսին, պիտի երթայի խառնվել Անատոլուի խորերեն եկած բորենիներու ոհմակին. բայց ինչ գերագույն բախտով, սուլթանը իրադե[5] մը հանեց, թե 35—45 չի պիտի զինվոր ըլլան։ Անհուն ուրախություն։ Հաջորդ օրը այդ իրադեն հերքվեցավ։ Կրնա՞ք երևակայել նոր սարսափը։ 10 օր դարձյալ պայմանաժամ, պետելի համար։ Ես հիվանդ անկողին ինկա։ Քանի մը բարեկամներ, այո՛, բարեկամներ և ոչ «ընկերներ», ինչպես պիտի մտածեիք, ոտքի ելան ինծի համար 43 ոսկի ճարելու։ Ամեն դուռ զարկին։ Ո՛չ ոք դրամ ունի։ Պանքերը փակ են և սրտերը երբեք բացված չեն... Մուրհակներով, ստորագրություններով, պատվո խոսքերով, և վազելով ու նորեն վազելով, վռնդվելով և նորեն մուրալով ճարեցին և տարինք վճարեցինք իմ փրկանքս, խոսք տալով, որ մեկ կամ երկու ամսեն պիտի տանք այդ գումարը անոնց, որոնցմե կարգեցինք։ Ահա՛ վիճակը։ Ամերիկա գրեցինք, բայց մեծ հույս չունիմ, որ բան մը ղրկեն։ Չի մոռնամ ըսելու, որ 5 ոսկի է տվեր աղքատ կին մը Սիամանթոն փրկելու համար... և իրեն պահեր է իր մյուս 5 ոսկին՝ ամբողջ ունեցածին կեսը... Ես կ՚ուզեի փախչիլ, բայց քանի քանիներ բռնվեցան և հրացանազարկ եղան։ Խիստ գրաքննություն կա և բան մը չի գրվիր։ Եթե Բագուայի մեջ ուրիշ հայեր կան, կը խնդրեմ, որ ռեէ գումար մը հավաքելով, Ձեր միջնորդությամբը ինծի ղրկեք, իբր փոխառություն, որպեսզի իմ պատվո պետելս վճարեմ այս և այն անարժան անձերին, որոնք գրեթե բռնի տվին։ Ես չէի համարձակիր Ձեզի գրել, բայց թող ունենամ այն հպարտությունը, թե ունիմ դեռ բարեկամներ, որոնք ինծի կը մտածեն[6]։ Միայն Banque Ottoman-ին[7] վրայով կարելի է չեք ղրկել։ Հիմա կը մնա ինծի, եթե քիչ մը դրամ ունենամ, և երբ թույլ տան, որովհետև վճա-

բողներն ալ չեն կրնար Պոլսեն դուրս ելլել, Պոլսեն պիտի փախչիմ՝ ալ չի դառնալու երդումով։ Ո՞ւր պիտի երթամ, այդ չեմ գիտեր, բայց ավելի լավ է ուրիշ տեղ ծառա ըլլալ, քան թե «բոբեններու» բանակին մեջ զինվոր։ Պետել վճարողներուն անցագիր չեն տար. ըսելով, որ «Հայրենիքը» կրնա նորեն պետք ունենալ զինվորի կամ «պետելի»... Հավատացեք, եթե ան բախտը ունենայի և այդ 10 օրվան պայմանաժամը չըլլար և բարեկամներուս.. (Միքայել Շամտանճյան և Արտաշես Հարությունյան երկու գրագետներ են հիշյալ անձերեն շատ աշխատողները) ճիգը չըլլար, ես անձնասպան պիտի ըլլայի զացած օրես կամ զզվանքես և զայրույթես հանկարծամահ... Ուրկի՞ց պիտի գա մեր փրկությունը... եթե Ֆրանսան և Անգլիան հաղթվին։ Գերմանամոլությունը Թուրքերուն քով folie[8]-ի է հասած։ Իսկ Ֆրանսան—Անգլիան—Ռուսիան ոտնակոխ կ՚ընեն։ Տեղին ալ հայերը Ֆրանսայի կողմն են։ Ամեն բան արդեն կը մոռնան, պիտի կոտորեն բոլոր քրիստոնյաները, բացի գերմաններեն։ Բայց կ՚սպասեն...։

Խորհուրդ տվեք թե մնա՞մ հոս, երկրորդ զորակոչի մը սպառնալիքին տակ, թե՞ ամեն բան հանձն առնելով փախչիմ Պոլսեն[9]։ Նորեն ծուղակն եմ ինկած և գերագույն հույսերուն և գերագույն աստվածներուն պետք է ապավինել...

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

## ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԱՍԳԱՆՏԻԼՅԱՆԻՆ

<1907, հունվարի 22—23, Կանտ>

*Իտալական ազատագրության մեջ նույնը կգտնեմ.— Երբ ազգ մը գերի է և իր ամբողջ շրջագիծով կը տառապի, ընտանիքներու կցկիացյալ բարեկամությունը դրական օգուտ մը չունի, զատ-զատ կայծեր են, որ իրենց ցրվածության մեջ ոևէ բոց չեն գոյացներ. երբ իրենց մեջ մերձեցումի, խմորումի և ավելի մեծ նպատակի մը ծառայելու գիտակցական կարիքը չէ դրած։*

*Այս ամենը Ձեզ կը գրեմ՝ վասնզի ինծի քաղցր է բացատրելու իմ վերջին իդեալս ավագին, առաջին դաստիարակիս*[1], *մեկնելու համար նախ մասնաճյուղս զոր ընտրած եմ*[2] *և հետո հոգվույս մեջ, ընտանիքի թե ազգի պատկանելու այն <հեխհե> կռիվը, որուն երկար ժամանակ ի վեր ենթարկված եմ։*

*Առայժմ, մասնավորապես աշխատանքը և զարգացումն է որ զիս կ՚առաջնորդե. վաղը կամ լերան վրա կամ իդեալին առջև* խունկ ու կնդրուկ, *կամ խավարին մեջ ճակատագրեն լքված, էլի՜, էլի՜, լամա Սաբաքթանի*[3]*։...*

## ՌԱՖԱՅԵԼ ՊԱՋԱՐՃՅԱՆԻՆ

1907, մարտի 14, <Կանտ>

*Հեղափոխականները մոտեն չեմ ճանչցած՝ որ գաղափար մը հայտնեմ։ Տակավին պաշտումո՞վ կը վերաբերվիմ կուռքերուն հանդեպ, իսկ ղեկավարներո՞ւն, հայտնի է, կասկածախառն հարգանքով։ Ինչ որ ալ ըլլա, Թրքահայաստանի վիճակը ամեն ջուր չի վերցներ. երթալով այդ մասին հոռետես կը դառնամ ես։ Այս վերածնությո՞ւն է, թե հոգեվարքի խլրտում.— էլի՜, էլի՜, լամա Սաբաքթանի—...*

## ԴԵՐԵՆԻԿ ՃԻԶՄԵՃՅԱՆԻՆ

1908, նոյեմբեր, Գանտ

*Անպատճառ ամբողջ Հայաստանը պետք է տեսնել: Կուզեմ համբուրել բոլոր այն տեղերը՝ ուր նահատակ մը ինկավ կամ հերոս մը կռվեց: Մենք այնքան մեծ ենք՝ որքան որ հողեն կը խմենք մեր զգացումները: Ամեն ինչ հող է: Դեպի մեր պապերուն: Որ է՝ դեպի աստվածները: Ա՜խ, Դերենիկ, Մեծն Տիգրանի վրա ի՜նչ հոյակապ դյուցազներգություն մը կը գրվի. բայց չէ կարելի առանց Հայաստանը տեսնելու: Պետք է տեսնել այն ժայռերը՝ զոր մեր պապերը կը գործածեին իբրև պարսատիկի քար: Պետք է տեսնել այն հաղթ կաղնիները՝ զոր կը վառեին առանց արմատախիլ ընելու, և անոնց լույսին ներքև նստած իրենց հերոսական հաղթության մեծ տոնը կը տոնեին. պետք է տեսնել ամեն ինչ, ամեն ինչ՝ զոր դու արդ կը տեսնես...*

## «ԱԶԴԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

<1909, հունվար-փետրվար, Գանտ>

... *Անհրաժեշտ էր որ ազատամիտ երիտասարդությունը փաղանգվեր Գեղեցիկին և Արդարության կռվին համար:* Գեղեցիկի կռիվը *«Ազդակ»-ի նշանաբանը տեսնելու հրճվանքն ունիմ*[1]*: Գեղարվեստը զենքերու դըրվագումով կ՚սկսի: Եվ այդ է միայն մեծ արվեստը. մինչև իր հաղթանակը (որ մարդկային հաղթանակն է նաև) այդպես պիտի ըլլա անիկա: Սուրբ և հերոս հայ ժողովուրդը կրկեսեն դեռ նոր ելած, արյունոտ, քրտնաթոր և տապահեղձ, ամբողջ հոգիին ծարավ է. լույսի կուժը անհրաժեշտ է մոտեցնել իր շրթունքներուն: Կուժ մը որ մաքուր և պայծառ աղբյուրներու մեջ միայն մխրճված ըլլա: Մինչդեռ այսօրվան պոլսական գրական խառնիճաղանջին մեջ ոչ թե միայն պղտոր ըմպելին է, որ կը պատրաստվի, այլ խարդավանված օշարակը, կեղծ օշարակը...*

*Եվ ես կը հավատամ և կը հավատամ քաղցրորեն թե «Ազդակ»-ը նոր ազդանշանը պիտի ըլլա, քայլ առ քայլ դիմելով դեպի* կազմ ու կուռ *գրականությունը և ընկերային հարցերու ազատական վերլուծողությունը:*

*Ազնիվ ընկերներ, արդեն գեղարվեստին դրոշակը Ձեր ափին մեջ կը տեսնեմ և Ձեր աչքերուն մեջ կը կարդամ խիզախ շափշփումը Մասիսի կատարին: Հառա՜չ:*

Իսկ իմ մասին՝ ես ուրախ պիտի ըլլամ եթե կարողանամ գոնե դրոշին մեկ ծայրը վեր բռնել և հնարկե սրբել անով թշվառի մը արտասվախառն քրտինքը։..

## «ԱԶԴԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

1909, <մայիսի 5, Կանտ>

... Ո՜վ ատրաշեկ երկաթով կուրացված հայրենիք, չտեսնե՞ր թե ինչպես լուսաբուխ ծիծերուդ վրա կը սեղմեիր աստղապսակ որդիներուդ հետ, որոնք Մասիսեն կ՚իջնեին, այնպիսի ճետեր, որոնց սիրտը թաղված է այն մորուտներուն մեջ, ուր Վահագն աստվածային՝ Մեղքի վիշապն սպաննեց։

Բայց Հայը պետք ապրի՜ հակառակ դահիճներուն, և հակառակ իր առյուծի աչքին տակ բուսած կորեկին։ Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրազոդ շղթային մեկ ոսկի օղակն ըլլալու համար։ Այս է մեր բոլորիս հույսը, հույս մը՝ զոր մուրճով կռեցինք ինչպես մեր պապերեն մեկուն նիզակը՝ որ նպատակին կը դիմեր օդին և արևուն մեջ երգելով[5]։

«Զանցնիր այն ճրագն՝ զոր վառեց աստված», ըսած է Վարպետս իր «Հայրունի»-ին մեջ[6], զոր ես կը հասկնամ այն աստվածը՝ որ յուրաքանչյուրիս կամքին մեջ է, այն աստվածը, որ իր իսկ քնարը զեն ու զարդեց մարտիկի մը նման՝ զոր առաջին անգամ <իդեալական> պատերազմին կը տանին։

Զանցնիր այն ճրագն՝ զոր կամքը վառեց...

## <ԹՈԳԱՏԵՆ ԼՈՒՐԵՐ, ՎԱՐՈՒԺԱՆ ՄԵՐ ԲԵՄԻՆ ՎՐԱ>[7]

Հերի՜ք... ապրեցանք դարեր տեղ թմրության մեջ, ապրինք կյանք մը ասպետական, որով ապրեցան մեր նախահայրերը իրենց բնագավառին մեջ...

Հայը մի մարտիրոս է, մի վկա. ժանտ ձեռքերը ջախջախեցին իր գանգը, բայց նա կրցավ ստեղծագործել։ Կտրեցին իր բազուկները, բայց նա իր ակռաներովը բացավ իր արտին ակոսները. նիզակներու, մարթիններու և յաթաղանի հարվածներով պատռեցին իր կուրծքը և ծակծկեցին ամբողջ իրանը, և սակայն չի կրցին մեռցնել զինքը, որովհետև սիրտը կբաբախեր տակավին այնքան ուժգին, որքան մի առույգ երիտասարդի մը սիրտը։

Պիտի ապրի Հայը ցորչափ փարած է նա իր գրչին՝ որ կ՚արտահայտե ստեղծագործող միտքը, իր բահին՝ որ աշխատությունը կհատկանշե և իր զենքին՝ որ միակ գործիքն է զորավորության։

Վա՜յ այն ազգին, որ կ'անգոսնե քաղաքակրթությունը համականչող այս ընտանիքին մեջ, անիկա դատապարտված է հավետ զրկվելու իր գոյութենեն...

## ՅԱՐՃԱՆՅԱՆԻ ՔԵՐԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ուրկե՞ կուգար Յարճանյան, այդ «սպիտակ աղան»՝ ի՛ր բառերով։ Արաբական փրփրերախ նժույգ մը և կարապ մըն էր միանգամայն։ Ու կարապը կազմված էր Ակնի մեջ, դուցե հնդիկ Ակնյուսի, զարնան ու կրակի աստվածին հյուրընկալ քաղաքը՝ ըստ Ա. Արփիարյանի[8]։ Անոր այգիներուն մեջ, իբրև նոր Դեմետր, մեծցած էր ողկույզներուն տակ երազուն՝ «վարեն ահեղավազ Եփրատին ունկնդրելով»[9]։

Հետո Փարիզն էր որ կը խմորեր իր հոգին[10]. կը կազմվեր իր մեջ արաբական նուրբ նժույգը փրփրերախ։ Առհավական Ոստանը իր մեծազդորդ հուզումներով կ'ազդեր քերթողին վրա՝ ազդելու համար հետո իր խուճապորեն գեղեցիկ արվեստին վրա։ Եվ չէ՞ մի օր, հետո Սիամանթոն կարծես էյֆելին կատարը բարձրացած լայներախ շեփորով մեռելները կը կանչնե շիրիմներեն և մրրկորեն կը մտրակե ողջերը։

Ավելի ետք, Զվիցերիան, իր բարձրաբերձ լեռներով, ու այդ լեռներուն քաղցր սոսկումով կ'առնե քերթողն իր ծոցին մեջ[11]. կը ձուլե կարապն ու նժույգը. կը համադրե երազը աղաղակին հետ, և կը վերստեղծե Ա. Յարճանյանը՝ «Հայրենի հրավերներ»-ուն երգիչը[12]։

Ու կը մտնե ան հայ բանաստեղծության ասպարեզը՝ այն օրերուն մեջ՝ ուր հայ տառապանքը իր գագաթնակետին հասեր էր։ Վիշտն ու պայքարը միասին ու զուգահեռ կ'ակոսեին հայրենի հողը, հայ կյանքը, ու Ժընևը, ուր կ'ապրեր Յարճանյան, կեդրոնը կ'ըլլար վայրկյան մը վշտահարներուն և ըմբոստներուն։

Նույն ահեղ օրերուն հայ բանաստեղծական գրականությունը նախանձելի ոչինչ ուներ։ Հիները գացեր կամ քաշվեր էին։ Պ. Դուրյանի, Պեշիկթաշլյանի և Թերզյանի քնարներուն վերջին շեշտերը հազիվ կը լեցնեին մեր հոգիները. Ալիշանեն ծիրանեփայլ մեծ ստվեր մը մնացեր էր միայն՝ որուն տակ կրնային քիչ մը երազել մեր հոգիները՝ գալիք լավագույն քերթողներու հույսին կառչած։ Կային նորերը, ո՛չ միշտ անտաղանդ, բայց կքած բռնակալության թաթին տակ, կ'երգեին միայն կինը, բայց ոչ այն կինը, որ խմորն է կյանքին քանդող ու ստեղծող ուժերուն, կինը բավղային հոգիով, սրտերու դավադիր, ճակատներու նվաճող, կամ այն կինը՝ որ մայր է միանգամայն, Ոյսպենայան ներբուն կազմով[13], արյունով կենսավետ, որուն լայնալիճ կողերուն մեջ

կ՚արդասավորին նոր կյանքեր նոր ապագաներով։ Էակի պահպանման արվեստը պիտի ըլլար այս, լավագույն արվեստը գուցե հանուն կյանքին։ Բայց այդ նորերուն երգած կինը պուպրիկ մըն էր՝ որուն այտերը որդան կարմիր քսեցին քիչ մը, ու գգվեցին զայն, օրորեցին երկա՜ր, երկա՜ր, բնարի օրորներով։

Ահա թե բանաստեղծական ինչ օրերու մեջ հրապարակ կը մտներ Յարճանյան։ Իր ձայնը լռեցուց բոլոր կակազումները։ Իր մուտքը եղավ մրրկային իր արվեստին պես ու հետևաբար բարի ու վճռական։

Քերթողը նախ կուտար մեզի «Դյուցազներեն»-ը[14]։ Ասոր մեջ հայրենիքի տառապանքեն ավելի հեղափոխությունը կ՚երգե։ Նկարագրությունն է ան նվիրումի մը, ճակատամարտի մը և հաղթանակի մը. ըմբոստացումներու համադրական մեկ նկարն էր՝ զոր հետո ընդլայնեց. կանգ առնելով հերոսներուն և դրվագներուն վրա առանձին՝ իր «Հայորդիներ»-ու հոյակապ շարքին մեջ[15]։

Քերթողը նման էր այն մարտիկին՝ որ բոցավառ թափով մը կը սկսի կռիվը, և նախ խառնուրդին մեջ չի զգար այրուցքն իր ստացած հարվածին՝ մինչև որ ան պաղի վիրավորին խանդին հետ՝ զգացնելով սուր ցավը և կոտտումը։ «Հոգեվարքի և Հույսի Ջահեր»-ը[16], հետո միայն երևան եկող այդ ցավն էր. խառնված զարհուրանքով։ Զարհուրանքի և միևնույն ատեն տառապանքին քերթողը կ՚ըլլար ան, ըլլալու համար անշուշտ զորավոր քերթողը հեղափոխության։ Հայորդիները դյուցազներեն կռվեր էին, տարեր էին հաղթանակներ մաքրելով հայ հոգին ստրկության թույնեն, և ցեղին ճակատը վատության խարանեն, բայց կեղեքումը կը մնար կեղեքում, տառապանքը՝ տառապանք, կ՚արյունեին հոգեվարքի ջահերը, հակառակ որ, հո՛ն, հորիզոնին վրա, կը համառեին նշողիլ ջահերը դարավոր հույսին. այս այն պահն էր, որ ուրիշ մեկ ցեղային մատյանի մը տիտղոսը պիտի կազմեր.— Ցայգալույսը[17]։ Ճակատագրին Մթնշաղն էր ան,— հուլիս ամսվան այն ցայգը՝ ուր վայրկյան մը հորիզոնին վրա լուսեղ Արշալույսը արյունոտ Վերջալույսին կը խառնվի։

.. Այստեղ ճշտելի կետ մը կա։ Դյուցազներգությունը (épopée) գրական-բանաստեղծական սեռ մըն է՝ որ իր հատուկ կիրարկման արվեստը ունի։ Հին ու Նոր հսկա գործեր, ինչպես Ռամայանա[18], Իլիական, Ենեական[19], Օսիան[20], Երուսաղեմ Ազատյալ[21], Հայկ Դյուցազն[22] և այլն, գրեթե նվիրագործած են անոր գրական ձևը, դնելով անոր մեջ դասական արվեստ ու լեզու, տիպարներու միամտություն և բնականություն, իրենց շրջանին բոլոր հավատալիքները, սովորությունները և գիտելիք-

ները։ Այս իմաստով դյուցազներգակ մը չէ Յարճանյան, դյուցազուններ երգելով Հանդերձ։ Ան՝ Հեղափոխության ռահվիրայ երգիչն է, ռազմերգու մըն է։ Իր Հերոսները քաջությունը քաջության Համար չեն պայքարիր՝ ինչպես Հիները կ՚ընեին ընդՀանրապես։ Բառին դասական և միևնույն ատեն արդի իմաստով առաքինի մարդիկ են անոնք՝ Հայրենիքի տառապանքով Հերոսացած, սնած՝ տնտեսական ու քաղաքական իմաստասիրական սկզբունքներով, որոնք կը վիճին, կը ճառեն ու իրենց սկզբունքները իրենց քաջությամբ կը ձգտին կիրարկել ու ապրեցնել։ Յարճանյանի տիպարներուն մեջ ոչ մեկը միամիտ է, նույնիսկ մայրերը ու որբիկները գիտեն թե ինչո՞ւ Համար կը տառապին։ Բոլորն ալ վերլուծած են իրենց ցավն ու պայքարը, և գիտեն թե ուրկե՛ կը բխի իրենց արցունքը, և ո՛ւր կը դիմե իրենց Հարվածը։ Այս դյուցազուններուն Համար կռիվը պարտականություն մըն է՝ բնության իրավակարգեն և Հայրենիքեն պարտադրված։ Ով որ Հայ մարդ է, պիտի պայքարի՝ կամ պիտի դրժե իր արյունին և իր պատկանած ազգին դեմ։ Մինչդեռ Հին դյուցազներուն Համար կռիվը իրավունք մըն էր, գրեթե արՀեստ մը. կը կիրարկեին զայն իրենց ուզած ժամանակ։ Գեղեցիկ Բրիսեիսի Համար Աքիլլես քեն կ՚ըներ և իր ընկերներուն Հետ պատերազմի չէր մտներ Իլիոնի դեմ, և այդ իր իրավունքն էր։ Զինքը պետք էր ողոքել և խնդրել իրմե որ կապե զենն ու զարդը և կշռե լայնաստվեր նիզակը։

Հին դյուցազները աշխարՀակալներ էին կամ ասպետներ. նորերը, Յարճանյանի Հերոսները, Հեղափոխականներ են կամ տառապյալներ։...

## ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ

**1914, մարտի 26, Պոլիս**

... 1904—1907 շրջանն էր. երբ Հայությունը կխեղդվեր սուրի և սովի մղձավանջին մեջ, ու ես չուզեցի տեղ տալ իմ անՀատական ցավերուս, գրեթե լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել ցեղին սիրտը[23], որուն բաբախյունները կզգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորքը։ Հայությունը կուլար և կմռնչեր իմ մեջս և երգերս դուրս կուգային օտար երկնքի տակ կարոտի լարովը միայն կապված մեր երկրի Հողին և մարդուն Հետ։

Սակայն, տեսած էի Եվրոպան։ Օգտվելով տեղվույն[24] Հսկա գրադարանեն՝ կարդացել էի Հնդիկներեն մինչև Հոմեր և Հոմերեն մինչև Մետերլինկ։ Հոգիիս վրա բոցի մը լույսին պես զգացած էի բանվորներուն աղաղակները մեկ կողմեն, ու մյուս կողմեն շվայտ ու արբեցող կյանքը...

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՄԻՆ ՎՐԱ

*Զարգացումը որուն պետք ունինք, տևական ու արդյունաբեր ընելու համար մեր հեղափոխական ճիգը՝ քաղաքացիական զարգացումն է։ Հասկնալի է, որ հեղափոխվելու արհեստը դյուրին չըլլա առաջուց սորվիլ. ուրիշին փորձառությունը քիչ օգտակար է այս մասին՝ նկատի ունենալով ժամանակի ու պայմաններու ահավոր ու անխուսափելի տարբերությունը։ Բայց ժողովուրդ մը, որ լիովին ունի ազատության գիտակցությունը, որուն եթե ոչ ամբողջությունը, գոնե մեծամասնությունը իր առույգ ուժերուն՝ ինքզինքը, իր դրամը, իր հանգստությունը չխնայեր նպատակին համար՝ այդ ժողովուրդը շուտով կը ստանա անհրաժեշտ զարգացումը ու մեծ է, անշուշտ, հաջողելու հավանականությունը անոր համար...*

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*Ուրիշներուն թող ըլլա ազգը շողոքորթելով խաբելու և փայփայելով քնացնելու տխուր արժանիքը. անոր պզտիկ տաղանդները հանճարներ ցույց տալու, անոր մանր հատկությունները մեծ առաքինություններ ներկայացնելու, արձակով և ոտանավորով անոր իր մեջեն ծնելիք արշալույսներ ավետելու վաճառականությունը։ Հոժարակամ կը թողում անո՛նց, որոնք մակաբույծներ են ազգին մարմինին փակած. և կը վախնան, որ երբ ամբողջ ճշմարտությունը անոր ըսելու ըլլան՝ ան գուցե ուժգին ցնցումով մը կը թոթվի, և կը նետե զիրենք ալ իր վրայեն։*

*Անոնք՝ մինչև հիմա սա՛ մեղեդին երգեցին շարունակ, որ Հայը զինք շրջապատող ուրիշ ժողովուրդներուն վրա անա՛նկ առավելություններ ունի, որոնք զինք ապրեցուցած են ու կ՚ապրեցունեն որքա՛ն որ ալ*

ջարդվի, որքա՛ն որ ալ հալածվի: Ասիկա ճիշդ եղա՞ծ է անցյալին մեջ, երբ ուրիշները չէին ինչ որ են հիմա.— Թերևս: Այս քարոզումը օգտակար եղա՞ծ է ազգին, իբրև միջոց մը ինք իր վրա հավատք ունենալու և չթուլանալու, չհուսահատվելու, իրեն վերագրված ցեղային առաքինությունները պարզացնելու.— չեմ կարծեր, որովհետև ատ արդյունքին նշույլը գոնե չտեսանք, և ընդհակառակը՝ տեսանք որ ետ գացինք շաբունակ, անշուշտ ա՛յն պատրանքով, թե հառաջ կ'երթայինք կոր ու պիտի երթայինք՝ մեր ազգային էության խորը լարված անծանոթ զսպանակով մը կարծես, որ կը քալեր ինքնին ու պետք չէր ձգեր ազգային ներքին արմատական բարենորոգումներու...

## «ԲՅՈՒԶԱՆԴ»ԱՄԱՐՏ[1]

*Հայ Հեղափոխությունը՝ ուրիշ ամեն հեղափոխության պես, պիտի վիճվի և դատվի իր արդյունքեն միայն, և այդ արդյունքը չեղավ մխիթարական, չեղավ հաջող, և չէ՛ այսօրվան իրականությունը...*

*Հայ Հեղափոխությունը պե՛տք է քննադատվի այս ազատության օրերուն, Թրքահայ ժողովուրդին աչքին, ականջին տակ՝ նույնիսկ ա՛յն գերագանց նպատակով որ, եթե՝ ինչպես իրե՛նք հոռետեսները կը գուշակեն՝ օր մը նորեն պարտավորվինք անոր դիմելու, այս անգամ չգործենք անցյալին մեջ իր անվամբ գործված սխալները և աղե՛կն ընենք, աղե՛կ ընենք...*

## ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՈՒՐՄԵԼՅԱՆԻՆ

15 մայիս, 1923, Գահիրե

*Ուրիշներ, որոնց հոգին ավելի աղքատ է, նվազ տպավորվելու ընդունակ և հետևաբար ավելի քիչով գոհացող, իրենց նպատակ կ'ընտրեն մասնագիտություն մը ձեռք բերել և զայն կը կիրարկեն ո՛ւր և ի՛նչպես որ ըլլա, ապրելու և ապրելու պզտիկ հաճույքներն ստանալու համար: Դո՛ւն Հայաստանի մեջ «ծառեր տնկելով» միայն կրնաս ինքզինքդ ըլլալ, և Հայաստանի մեջ «ծառ տնկելը» կը հասկնաս անշուշտ հայ սրտերուն մեջ ազնվության և սիրո ու հայ միտքերուն մեջ ճանաչումի և... լույսի հունտեր ցանել, որոնցմով ու որոնց մեջեն միայն պիտի կրնաս բարձրագլուխ քալել, ծառերուն և հունտերուն քիչ առ քիչ աճիլն ու ծլիլը տեսնելով: Երանի քեզի որ կրնաս անոնց շուքն ու պտուղը հուսալ...*

## ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՈՒՐՄԵԼՅԱՆԻՆ

1 օգոստոս, 1923, Գահիրե

*Դժբախտաբար..., դժբախտաբար... ես ալ տեսայ՝ որ ընկերներդ, գրեթե բոլորը որոնց հետ քիչ մը մտերմություն ունեցա, հայրենիքի գաղափարը ծալած մեկ կողմ դրած են, ո՛չ կ՚զգան իրենց անձին, իրենց ապագային հետ անոր սերտ առնչությունը, ոչ ալ անոր ինքնին ներկայացուցած ցավի և հույսի գեղեցկությունը կ՚ըմբռնեն: Իրենք իրենց համար միայն՝ կ՚ուզեն մեծնալ, հասնիլ, փրկվիլ: Տեսնելով որ հավաքականությունն տուժած, անոր պատճառավ վռնդված են այնքան՝ կը կարծեն թե անոր օգնությամբը, անոր* հատուցմամբը *զարգանալ—զորանալե ետք, ա՛լ իրենց բախտը անկե զատելով կրնան հանգստանալ, կրնան նոր վտանգներու չմատնվիլ: Բայց դուն ո՛րքան լավ կը զգաս թե հիմնովին սխալ է ասիկա ու ասոր հակառակն է ճիշտը: Դուն պետք է գրես անոնց, ազնորեն ու շիտակ ճամբուն մեջ դնես զանոնք...*

## ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՈՒՐՄԵԼՅԱՆԻՆ

8 նոյեմբեր, 1925

*Եվ քանի որ նամակդ սկսա վերստին կարդալ. «Պետք է անկեղծորեն ըսեմ» ես ալ քեզի՝ թե տեսակ մը* Կոմյունիստ *ալ ես եմ, բոլորովին նման քեզի, միայն սա տարբերությամբ որ զանգվածին օգնելու ուժը, կամ պատրանքը չունիմ այլևս, և իրավունքը կուտամ զանգվածին, որ զիս արհամարհե իմ տկարությանս համար: Բայց իր ճնշված ուժեն կը պատկառիմ և գիտնալով թե որքան թշվառութենե ու ցավե կազմված է անիկա՝ կը սիրեմ զայն: Կը խորհիմ, հետո, թե իր թիվին մեծության մեջ համեմատաբար որքան շատ գեղեցկություն կա պահված, և այդ պատճառով ալ՝ գորովանքով և հիացմամբ կը նայիմ իր վրա: Կուզեմ որ զանգվածը գիտակցի ոչ միայն իր բիրտ ուժին, այլև իր խեղդված գեղեցկության ու գերագույն գեղեցկությունը գտնե ամեն կարգի թշվառություններու ամենուն համար հավասար նվազումին, արդարության և գթության մեջ, մեկ կողմե նյութական հարստության իրեն քաշել-բերելուն և մյուս կողմե դեպի բարոյական հարստությունը և դիմել-բարձրանալուն մեջ: Պիտի ուզեի նաև որ ամբողջ մարդկությունը—որուն մեծ մասն են գործավորներն ու գյուղացիները—իր նյութական պահանջները հետզհետե ավելցնելու տեղ՝ պակսեցներ այլևս կամ չափա-*

վորեր զանոնք։ Կյանքի պայքարը առավ միայն պիտի կորսնցնէր իր դաժանությունը, և նոր մրցումները, նոր բախումներն ու ոճիրները պիտի չվերածնեին կոմյունիզմի ստեղծած հավասարությենեն ետք։

Վերջապես պիտի ուզեի որ աշխատանքը քիչ ըլլար, բայց ըլլար հաճելի, միօրինակ չըլլար, մարդ մը նույնիսկ միայն վեց ժամ անընդհատ երկաթ չծակեր կամ միևնույն կկոցներուն երթալ-գալը չտեսներ, այլ ըներ այս և այն, օրվան 24 ժամին կամ շաբաթվան յոթը օրվան մեջ թե՛ մետաղին հետ ըլլար, թե՛ հողին, թե՛ առուն շիներ և թե՛ ծաղիկ մշակեր, թե՛ գիրքի ու պատկերի և թե՛ զավակներու հետ ըլլար, մեկուն հոգնությենեն մյուսին մեջ կազդուրվելով և լիակատար՝ որքան հնար է կյանքը ապրելով, գործունեության բոլոր մարզերուն—որոնց երկու մեծագույն բաժանումներն են ձեռականն ու մտավորականը—ծանոթանալով և յուրաքանչյուրին մեջ հասարակ մակարդակեն վեր կանգնողներուն առջև կամովին խոնարհելով։

Իմ կոմյունիզմս տակավին կը պահանջե, որ ամեն կարգի խեղճերուն վրա, և՛ բարոյական և՛ մտավորական (ֆիզիկականներն զատ) հանգվածը կարենցի և պատժելու տեղ դարմանել աշխատի անոնց խեղճությունները, աշխատանքն ու կյանքը այնպես կազմակերպե որ ծույլերը ձանձրույթե չմեռնելու համար աշխատիլ ուզեն և ընչաքաղցը ցանկալիք բան մը չունենա և նախանձոտը չկարենա ոչ որի նախանձիլ։ Ու ան, իմ կոմյունիզմս, դարձյալ, պետք է բավական փիլիսոփա ընե մարդիկը՝ որպեսզի, այս ամենեն ետքը, հանդուրժելու համար իրարու իրենց կրելիք ցավերուն, անոնք կարենան ըսել քեզի պես.— «Բայց վերջապես ի՞նչ է կյանքը։ Զմոռնանք մահը...»։...

Քեզի Հայաստան կը հրավիրե՞ն արդեն։ Ի՞նչպես։ Որմեն կ՚երթանք կոր, ե՞րբ։ Ու չմոռնաս ըսելու թե հոն մեկը պիտի տեսնես Եղիատոսեն, որ ոչ որի թշնամի է այնտեղ և ամեն պարագայի մեջ շատ բարեկամ է Հայ երկրին ու ժողովրդին...

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ

# ՊԱՏԵՐԱԶՄԸ

*Վերջին թղթատարերով եկած եվրոպական թերթերը, ռուսասեր կամ ռուսատյաց, դուրս կը հաստատեն և ամենքն ալ միահամուռ կ՚ըսեն թե Ռուսիո այլևս անկարող է պատերազմը շարունակելու և իրեն համար միակ փրկության միջոցն է ժամ առաջ խաղաղություն խնդրել։*

*Ռուսիո այս պարտությունը[1] ապահովաբար մարդկային պատմության կարևորագույն դեպքերեն մին է և իր ազդեցությունը բոլոր աշխարհի վրա զգալի պիտի ըլլա։*

*Կարելի է ըսել թե 1815-ի Վիեննական համաժողովեն[2] ի վեր աշխարհիս քաղաքականությունը երկու հակառակ ուղղություններու կը հետևի, ազատական ուղղությունը՝ որուն գլուխ կեցած է Ֆրանսա և բռնավորական ուղղությունը՝ որուն ոգին է Ռուսիա։ Ալեքսանդր ցարին միջոցավ կազմված «Սուրբ դաշնակցություն»-ը[3] ուրիշ բան չէր, այլ պատվար մը Ֆրանսիական մեծ հեղափոխության սկզբունքներուն դեմ և մինչև հիմակ այդ պատվարը կանգուն մնաց, ի վնաս հառաջադիմության և ազատության։*

*Այժմ այդ պատվարը խորտակված, կործանած է։ Ազատական սկզբունքները այլևս իրենց դեմ ցցված չպիտի տեսնեն բռնակալության դժնի ուրվականը։ Ռուսիա, խաղաղության կնքումեն ետքը, կա՛մ ազատական պետության շարքին մեջ պիտի անցնի, կա՛մ անդառնալիորեն պիտի ջնջվի։ Սակայն երևույթները այնպես ցույց կուտան թե առաջին ենթադրությունն է որ պիտի իրագործվի, ինչ որ բարեբախտություն մը պիտի ըլլա մասնավորաբար մեզի, Հայերուս համար։ Կովկասի Հայությունը զինքը մինչև հիմակ պրկող շղթաներեն զերծ, ազատության կենսանորոգ շունչովը առլցված, պիտի բարգավաճի և ուռճանա, ապագա ազգային անկախության համար զորավոր ու անդիմադրելի զանգված մը կազմելով։*

Ազատական Ռուսիայի դրացիությունը պիտի ազդե նաև Թուրքիո վրա։ Այլևս չարաշուք Լոզանոֆներ չպիտի գտնվին «Հայերը ջարդե՞ք»[4] քաջալերությունը տվող Սուլթանին և Արևելյան խնդրին մեջ ազատական պետությանց ձայնը պիտի ըլլա իշխող։

Բացի հայկական տեսակետից, եթե Ռուսիո պարտությունը ընդհանուր կերպով նկատենք, կրնանք ըսել, որ իր հետևանքը անհուն պիտի ըլլա և անկարելի է այժմեն ամբողջովին գուշակել զայն, այսուհանդերձ կրնանք ապահովաբար ըսել թե միշտ լավ է այդ հետևանքը։

Մինչև հիմակ Ռուսիա պաշտոնական ներկայացուցիչը եղած էր բռնակալության և կրոնամոլության, մարդկությունը ճնշող այդ երկու հրեշության. իր պարտությունը անոնց ալ պարտությունն է և այդ տեսակետով ներկա պատերազմին բարոյական օգուտները շատ կարևոր են ընդհանուր աշխարհի համար։

Սպասենք և հուսանք։

## ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ

Երբ Մարիամ Մագդաղինացին վազեց աշակերտներուն պատմելու թե՝

— Քրիստոս հարյավ[5],

անշուշտ չէր գուշակեր, որ իր ցնորատեսությունը հիմնաքարը պիտի ըլլար նոր կրոնքի մը, որ երկու հազար տարիե ի վեր կը տևե։

Առանց հարության հավատքին քրիստոնեությունը գոյություն չպիտի ունենար, ինչպես Պողոս առաքյալ ևս կը հաստատե[6]։

Հարությունը հիմն է քրիստոնեության, պետք է հավատանք թե Քրիստոս հարյավ, պետք է հավատանք թե մենք ալ հարություն պիտի առնենք։

Երկու հազար տարիե ի վեր տառապող մարդկության մեկ մեծ մասը կը համբերե ու կը մխիթարվի այս հավատքով, երկնքի Արքայության հեռապատկերովը, ուր բարիները, խոնարհները ու աղքատները հավիտենական երջանկություն պիտի վայելեն։

Այս խարուսիկ հույսը, եթե կարող եղած է մխիթարել թշվառության ու բռնության տակ հեծողները, մյուս կողմե պատճառ եղած է, որ ստրուկ համակերպությամբ մը գլուխ ծռենք ամեն անիրավության, ամեն անարդարության հանդեպ։

Ինչ փույթ այս վաղանցուկ աշխարհի մեջ մեր կրած զրկանքներն ու չարչարանքները, քանի որ մյուս աշխարհը մեզի կը սպասե իր հավիտենական վայելքներովը՝ մանավանդ որ մեր հոս կրած փորձությանց

համեմատությամբ պիտի ըլլա հատուցումը. որչափ շատ տառապինք, այնքան շատ պիտի արժանանանք երկնքի Արքայության։

Ահա՛ քրիստոնյային հավատքը, և այս հավատքը զինքը մղած է ո՛չ թե միայն անտրտունջ տանելու աշխարհային բոլոր բարոյական ու ֆիզիքական զրկանքները, այլ հիմարական մոլեռանդությամբ մը, նորանոր զրկանքներ ստեղծելու։

Նախկին դարերու ճգնավորները, անապատականները, մարմիննին խոշտանգելու իրենց հազար ու մեկ միջոցներովը, ու մինչև այսօր վանքերու կամ մենաստաններու մեջ, կուսության կամ ամուրիության ուխտով բնության դեմ ըմբոստողները այս հավատքին արգասիքն են։

Ամբողջ հազար տարի քրիստոնեությունը իր սկզբունքներով քանդեց ու փճացուց Հունական ու Հռովմեական փայլուն ու ծաղկյալ քաղաքակրթությունը. ժամանակ եղավ, ուր ագիտությունը Արքայության արժանանալու գերագույն տիտղոսը համարվեցավ։

Եվ եթե այսօր նոր վերածնության մը շնորհիվ մարդկությունը իր հառաջընթաց վազքը վերսկսած է, ասիկա քրիստոնեության կամքին հակառակ է։ Գիտություն, ուսմունք, իմաստասիրություն, վերջապես հառաջդիմության ամեն միջոցները խոտելի ու դատապարտելի են ճշմարիտ քրիստոնյային համար։ Քրիստափոր Գոլոմպոս դատապարտվեցավ նոր աշխարհ մը գտած ըլլալուն համար, Սերվե դատապարտվեցավ մարմնույն մեջ արյունին շրջան ընելը հաստատելու համար, Գալիլեոս դատապարտվեցավ աշխարհը արևուն շուրջը կը դառնա ըսելուն համար։ Մոնթայն դատապարտվեցավ իր «Մտածումներուն» համար, ևն. ևն. Հոս չեմ կրնար մի առ մի հիշել բոլոր այն գիտունները, խորհողները, հնարիչները, որոնք հանուն քրիստոնեության դատապարտված են ու կը դատապարտվին։

Կարելի է ըսել թե մարդկային հառաջադիմության մեն մի քայլը պարտություն մըն է քրիստոնեության համար։

Սխալ է ըսել թե քրիստոնեությունը պատասխանատու չէ այս չարիքներուն, թե կրոնավորներն են անոնց պատասխանատուները, թե քրիստոնեությունը դարերու ընթացքի մեջ կղերականության ազդեցության տակ խաթարված ու կորսնցուցած է իր նախնի սրբությունը։

Առաջին դարերու խստամբեր ճգնակյացները և միջին դարու տգետ ու մոլեռանդ վանականները տրամաբանական հետևությունն են քրիստոնեական վարդապետության, որուն հիմը կը կազմե, ինչպես վերը ըսի, անդրշիրիմյան հավիտենական կյանքի մը հավատքը։

Հավիտենական երանության մը քով ա՜լ որքա՜ն ճղճիմ ու անկա-

բևոր պետք է նկատվի, հավատացյալին համար, այս աշխարհի կարճատև կյանքը։ Ինչ օգուտ հառաջադիմության, արդարության կամ ազատության համար մաքառիլ, քանի որ այս աշխարհը լոկ «Արտասվաց հովիտ» մը «Անցավոր օթևան» մըն է, որուն պետք չէ կապված ըլլանք ոևէ կապով մը։

Բարեբախտաբար, կամաց կամաց, բանականությունը իր հաղթանակը առաջ կը տանի։ Այսօր շատեր ա՛լ հրաժարած են երևակայական ու խիստ թեական Արքայության մը խոստումեն և անոնք, որ տակավին քրիստոնյա ըլլալ կը կարծեն, լոկ ընդունված սովորության մը սովորամոլներն են, առանց համոզման, առանց եռանդուն հավատքի։

Երկնքի Արքայության խոստումին կը հաջորդե երկրի, այս աշխարհի Արքայության խոստումը։ Երջանկություն և Արդարություն ա՛յս աշխարհի մեջ. ահա բանականության նպատակը և ձգտումը։

Եվ բոլոր այն ընդհարումները, պայքարներն ու կռիվները, ապստամբություններն ու արյունահեղությունները, որոնք տեղի կ՚ունենան հարյուր տարիե ի վեր հանուն արդարության, ազատության, ընկերվարության, անիշխանության կամ ոչնչականության, սա միակ գաղափարեն ծնունդ առած են։

Այսինքն՝ առաջալյալ մարդկությունը փոխանակ անդրաշխարհյան երջերուաբաղձալի՛ն ցնորքներով խաբխբելու, հո՛ս, այս աշխարհին մեջ ալ անոր այն արդարության և երջանկության բաժինը, որուն արժանի է, որ իր իրավունքն է։

Այս վեհ ու գեղեցիկ խնդիրը անշուշտ օր մը պիտի իրագործվի, ո՞վ գիտե ի գին որքա՜ն զոհողությանց ու նահատակությանց։

Եվ սակայն, ի՜նչ փույթ։

Մարդկությունը երկնքի Արքայության ցնորքին համար ամբողջ դարեր այնքա՜ն սիրով զոհվեցավ ու չարչարվեցավ, մինչև չըկրնա՞ր շատ ավելի դրական, շատ ավելի շոշափելի իրականության մը հասնելու համար նույն զոհողությունները հանձն առնել։

## ԱՀՄԵ՛Տ, ԱՀՄԵ՛Տ...

Հասկցար անշուշտ, խնդիրը Ահմետ Րիզայի վրա է։

Առջի օր լույս տեսավ առաջին թիվը «Էնանբանատն» անուն ֆրանսերեն օրաթերթի մը, զոր «Իգդամ»-ի տնօրենը կը հրապարակե և որուն խմբագրության հոգը հանձնված է պ. Ալպեռ Ֆուայի,— Երբեմն գործակից Ահմետ Րիզա պեյի։

Պ. Ֆուա՝ «Էնտրանսիժան»-ի առաջին թվին մեջն իսկ կը հրատարակե մեծատառերով բաց նամակ մը, ուղղված իր երբեմնի բարեկամին՝ Ահմետ Րիզա պեյին, որուն երբեմն՝ Թուրք հեղափոխության փառքերեն մեկը ըլլալը պատճառ մը չէ եղած, որ այսօրվա Թուրք հեղափոխության արատներեն մեկը չդառնա։

«Էնտրանսիժան»-ի խմբագիրը մանավորապես կը հիշատակե Ահմետ Րիզա պեյի հետևյալ հանդիսավոր խոսքերը, արտասանված անանկ ատեն մը, ուր Թուրքիո ներկա հեղաշրջության հույսն անգամ չկար.— «Եթե մեր գաղափարները հաղթանակեն, բան մը չպիտի պահանջեմ ինծի համար, որովհետև ես պարզ խմբագիր մնալ կուզեմ ու պիտի շարունակեմ հրատարակությունը «Մեշվերեթ»-իս, իբր ընդդիմադիր օրգան՝ իմ երկրիս այն ամեն նախարարության, որոնք պիտի չեղլին ուղիղ ճամփայեն»։

Պ. Ֆուա՝ չափազանց միամիտ մարդ մը կ՚երևա, հայտարարելով թե ինք ժամանակով հավատ ընծայեց այդ խոսքերուն, մինչդեռ այսօր զարմացմամբ կը տեսնե, որ Ահմետ Րիզա պեյ ամեն տեսակ շնորհներու կարժանանա Սուլթանին կողմե, թեև երեսանց բան մը չի պահանջեր, բայց տրվածն ալ չի մերժեր, հոգ չէ թե այդ տրվածը Հուդայի համբույր մը ըլլա, կամ գավաթ մը ջուր... ու թունավորված։

Բայց պ. Ֆուա ո՞ր Թուրք հեղափոխական վարիչը մինչև վերջը դավանին հավատարիմ մնացած տեսավ, որ Ահմետ Րիզա պեյի շրջափոխությունը այսպես իր բերանը բաց կը թողու։

Զոհվելիները Թուրք հեղափոխության մեջ այն հավետ անմոռանալի տղաքն էին, որոնց դիակները ձուկերու կեր եղան սև. ջուրերուն մեջ[8]։ Իսկ վարիչներեն քանի՞ն պահեցին ճշմարիտ հեղափոխության հուրը։

Մուրատ պեյ ամենեն կատաղին, «Միզան»-ի անհավոր հրապարակագիրը, որ երբեմն Լոնտոնեն շանթ ու հուր կը տեղացներ ծանոթ արյունառուշտին գլխուն, օր մը հանկարծ եկավ անոր ոտքերուն փարեցավ, որովհետև Լոնտոնի մեջ կյանքը դժվար էր... առանց ապրուստի միջոցի։

Իսկ Ահմետ Րիզա պեյ, որ ապրուստի միջոցներով օժտված ըլլալուն պատճառով կրնար տոկալ Փարիզի կյանքին, և ամենախիստ բառերով կորակեր Մուրատ պեյի ընթացքը, այսօր ինքն ալ միևնույն արյունառուշտին յուղոտ տեղվանքը կը պտտցնե իր լեզուն։

Այս ամենը այնքան զարմանալի չեն թվար մեզի, որքան պ. Ալպեր Ֆուայի միամտությունը։

Բաներ կան՝ որոնք որքան ալ իրարու մօտ գտնուին, երբեք իրարու չպիտի զօդուին…

Իսկ կան բաներ ալ՝ որոնք որքան ալ իրարմէ հեռու մնան, միշտ հեշտիւ կը զօդուին իրարու, ինչպես օրինակի համար «Ահմետ Ռիզա» և «Սուլթան Համիտ» անունները։

## ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Մեր համակիրներեն շատեր և մեր փաքրաթիվ հակակիրներեն ոմանք, առաջինները անկեղծ նախանձախնդրությամբ մը և վերջինները նախանձոտ չարամտությամբ մը, մեզի կը հարցնեն թե Կառափնատ[9] ուղղություն մը ունի՞ և թե ի՞նչ է այդ ուղղությունը։

Ենթադրել որ Կառափնատ կայմերը խորտակված, առագաստները պատռտած ու ղեկը ջախջախված նավու մը պես փոթորկահույզ ալիքներու քմահաճույքին մատնված է՝ առանց որոշ ու գիտակից ուղղության, պարզապես ձրի նախատինք մը ընել է զայն վարող երկու փորձ նավապետներուն. Նախատինք՝ զոր կարելի չէ կլլել. որչափ ալ ձրի ըլլա։

Ուրեմն բացատրենք թե ի՞նչ է Կառափնատի ուղղությունն ու նպատակը և թե ի՞նչ տեսակ իտեալներու իրագործման կը ձգտի։

Նախ ըսենք թե Կառափնատ 1793-ի ծոռնորդի, 1848-ի թոռ և 1860-ի զավակ՝ ի բնե հեղափոխական է, առանց սակայն ոևէ պիտակի։ Ուրիշներ Հ. Հ. Դ. են կամ Ս. Դ. Հ. են կամ Ս. Ռ. Կ. են և կամ Վեր. Հ. Կ. են. Կառափնատ պարզապես Հ. է։

— Հի… մա՞ր. պիտի ըսեն զույգ մեր հակառակորդները, դյուրին սրամտություն մը քշելու համար։

Բայց մենք բնավ կարևորություն չենք տար այդպիսի Փղշտացիներու[10], Ամոնհացիներու[11] և Եղամացիներու[12] ձայնատուքներուն։

Բայց ի՞նչ է Կառափնատի բնորոշ աշխարհայացքը, պիտի կոկա հիմա Հ. Ճահրիկյան իր ճախճախուտքին մեջեն։

Համբերե՛, ծերուկս, հիմա պիտի բացատրենք։

Մենք հեղափոխականներ ենք, բայց հեղափոխությունը մեզի գործ կամ արհեստ չենք ըրած, այսինքն զուտ գաղափարային հեղափոխականներ՝ որոնք առանց որոշ ամսականի, առանց գիտակից վճարումներու, առանց սահմանված աշխարհայացքներու, առանց սերտված ինքնագիտակցության և գեշ մարսված ղեկավարող սկզբունքներու, անկախորեն ու տիրաբար իրենց սկզբունքները կը քարոզեն։

Մեր հեղափոխությունը պլատֆորմ չունի և երբեք չի փորձեր կաղուպ ու թույլ ուղեղներ իր պլանին մեջ կաղապարել և միօրինակ մտածողություններ պարտադրել իր աղանդավորներուն, ինչպես կընեն լատինական եկեղեցին և հայ կուսակցությունները[13]։

Կատարինացի համար ոևէ եկեղեցի, ըլլա կրոնական, ըլլա հեղափոխական, ըլլա հետաշրջական, հավասարապես ատելի ու խորշելի է, և եթե մեկ արժեք տեսնել Հ. Շահրիկյան, Բյուզանդ Քեչյան[14], Տեր Հմայակ Էքսերճյան[15] և մյուս Հմայակին (Արամյանց)[16] և ուրիշ այդ կարգի չեոն լարենցներ[17] միևնույն կողովին մեջ դրված և իբրև անպետ ու վնասակար մեկ կողմ նետված. ապահովապես նույն հոգեպարար խնդությունը պիտի զգայինք։

Իսկ մեր կռիվը որո՞ւ դեմ է. այս ու այն անձի՞ն, այս ու այն կուսակցությա՞ն, այս ու այն խմբակին։

— Բնավ երբեք։

Մեր կռիվը ստության, կեղծիքի, շահագործության, խաբեբայության դեմ է. և եթե անձերով կը զբաղինք, հաճախ պատճառը այն է, որ այդ անձերեն ամեն մեկը իր մեջ կը մարմնավորե ստության, կեղծիքի, շահագործության կամ խաբեբայության այլազան երևույթներեն մեկը։

Իսկ մեր մարտական միջոցները։

— Ո՛չ սուր, ո՛չ դաշույն, ո՛չ պրաունինկ, ո՛չ ալ ռումբա, այլ միայն ծաղր ու ծաղրանկար։

Եվ հիմա որ մեր ուղղությունը իմացար, գնացե՛ք և քարոզեք… անխտրաբար և հեթանոսաց։

ԵՐՈՒԽԱՆ

# ՀԱՅ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

*Դարեր հետո, երբոր ժամանակակից հայ պատմութիւնը գրի առնուի, անշուշտ, Ազգային Վերածնունդ անունին տակ պիտի յատկանշուի սա վերջին քառորդ դարու շրջանը, զոր ապրեցաւ հայութիւնը։ Հայ պատմիչները աւելի հանդարտ, անկողմնակալ, առողջ դատողութեամբ մը պիտի վերլուծեն, պիտի քննեն, պիտի քննադատեն այն չքնաղ և ահաւոր դէպքերը, որոնք լեցուցին, հորդեցին հայկական կեանքը տասնըիններորդ դարուն վերջին քառորդին մէջ։ Ան ատեն այս կիրքերը, ոխերը, թշնամութիւնները անհետացած պիտի ըլլան։ Կոյր կուսակցականութեան ոգին, որ հիմա մեր գոյութիւնը կը թունաւորէ, յիշատակ մը պիտի մնայ այլեւս։ Ոսկեդարէն անմիջապէս ետքը, 19-րդ դարու հայկական այս վերածնունդը ազգային պատմութեան նշանաւորագոյն դէպքը պիտի հռչակուի։ Հայութիւնը երկիւղած ու ջերմեռանդ հարգանքով մը պիտի խոնարհի յիշատակին առջև այն սերունդին, որ մեծ ու արգասաւոր ցնցում մը առաջ բերաւ, խիզախ, անօրինակ ուժգնութեամբ մը նետուեցաւ իր վրայ ծանրացող տիրաններուն դէմ, կոտրեց կապանքները, հզօր, առոյգ, գեղեցիկ ցեղի մը էն բարբառուն հատկութիւնները ի հանդէս բերելով։*

*Դիտուած և ստուգուած է, որ մարդկային կեանքը հեղաշրջող, բարեշրջող մեծ դէպքերը, պատմութեան ցայտուն և պանծալի դարձքերը* (Տերոր) *կամ խոյանքները սահմանանշող դրուագները հարկաւոր, իրավացի և անկողմնակալ գնահատումներու չէ որ արժանացած են իրենց ժամանակին։ Անոնց բոլոր վսեմութիւնը և բեղմնաւորութիւնը մօտանց՝ դիտակին հակառակ կողմէն նայուած են, ու ետքէն միայն, դարերու հեռուստին մէջէն, ցոլացուցած են իրենց հոյակապ շողիւնները։ Այսպէս եղած է նաև ամբոխներու եռացող հատակէն վեր ցցուող մեծ դէմքերու մասին։ Ժամանակակից մարդկութիւնը շատ անգամ իր ար-*

համարժանքին միայն տարբեր բրած է, զանոնք։ Ժամանակին հոլովման ատրճանակը, այդ դեմքերուն շուրջը պաղպաջող լույսի փշփշանքը լայնցած, մեծցած, շքեղցած է հետզհետե, և անոնք վերջապես կանգնած են փառքի այն հավերժական պատվանդանին վրա, ուր առաջին վայրկյանեն իսկ բարձրանալու իրավունքը ունեին։

89ի ֆրանսական հեղափոխությունը իր առենվան մարդկության կողմե ընդունվեցավ իբրև ամենեն հիմնական ժեստը, զոր ազգ մը երբեք հանդգնած ըլլար։ Անհեղ, վայրագ, աննախընթաց ոճիրներու շարքը զոր այդ շարժումը հառկանչեց, գռեհիկ, անխորհուրդ, խենդ ոճիրներու մոլեգին տագնապ մը նկատվեցավ։ Փոքրամիտ ու պաշտոնական Եվրոպան խնդաց, դողաց, ոռնաց թշնամության, մեղկության, անարգության հախճախուռեն, ուր մինչև կոկորդը մխրճված էր։ Այդ անօրինակ ընդվզումին շառաչումները վերջնաշխարհի փողին մահվան դողերը ավին ընդարմացած մարդկության ջիղերուն։ Փառավոր, կենդանատու նախաձեռներու այդ տագնապը փողփողենէջ արշալույսն էր սակայն, որ մարդկային մնացած կյանքին վրա կը բացվեր մեկենիմեկ։

Ինկած գլուխներեն, կտրտված թաթերեն, կոխկրտված բռնակալության փլատակներեն և արյան ուղխիանհոս հեղեղներուն գոլորշիներեն նոր մարդկություն մը կը հառներ սակայն, այդ դիակները սնունդ կը ջամբեին մարդկության, որ բարեշրջական ամենեն տագնապալից շրջանն էր ապրած։

Հեղափոխության սարսափներուն, նախճիրներուն մեջեն Ֆրանսան դուրս կ'ելլար ողջանդամ, կորովի և հզոր, ետևեն քաշելով բովանդակ մարդկությունը՝ ցնցված ու խնկաբերած։ Եվ ահա պայթեցան սքանչացումի համասփյուռ աղաղակները։ Հեղափոխության առաջնորդները բարերարներ հռչակվեցան, քարոզված նոր սկզբունքներն ալ դավանանքներ դարձած էին. վերջնականապես ջախջախված էր ընկերային հին կազմակերպությունը, որուն խլյակներուն վրայեն նորը կը բարձրանար հոյակերտ շենքվածքով։

Սոկրատեն և Արիսթոտեն մինչև Քրիստոս, բոլոր մեծ դեմքերը, որոնք իրենց հանճարին ցոլքերը դրոշմած են մարդկային բարքերուն վրա և հառաջդիմության ազդակները հանդիսացած են, տարիներ, դարեր հետո գացած են բազմիլ աստվածացումի աթոռին վրա։ Սոկրատ իր ժամանակակիցներեն սպաննվեցավ։ Մարդկությունը հանդուրժեց այս ոճիրը։ Արիսթոտ միջին դարուն էր միայն, որ հռչակվեցավ իբրև էն նշանավոր հանճարը հնության, և իր իմաստասիրությունը դարերու վրա տիրեց։ Քրիստոսի վարդապետությունը, Ռընանի համեմատ,

իբր հարյուր հիսուն տարի ետքը կրցավ ըմբռնել սնամիտ մարդկությունն, որ անհնարին կացությունը ունեցավ այդ հրաշալի [illegible]ությունը հալածելու, անարգելու և սպաննելու:

Երբոր հայկական վերածնունդին առաջին շարժումները երևան եկան, ազգին ստվար մեծամասնությունը, հին գաղափարներով սնած, տոգորված, պահպանողական ոգիով ջնարակված. ընդհանուր երևույթի մը համակերպելու համար, պիտի թումբ կանգներ նոր սերունդին քարոզած սկզբունքներուն, գործունեության նոր և անծանոթ եղանակին դեմ: Վերականգնումի նախընթաց անհրաժեշտ քայքայումներուն, փլուզումներուն աղմուկը ահով սարսափով պիտի լեցուներ թանձրամիտ ըմբռնումները, երկրպագելու կոչված, գետնասող կյանքի հետ ընտանեցած հոգիները: Բայց այդ հսկա մեծամասնությունը իր ամբողջ բիրտ և ուժգին ընդդիմությամբը անկարող էր փոքրաթիվ նոր սերունդին վերանորոգիչ գործը կասեցնելու: Ֆրանսական հեղափոխության առաջնորդները ափ մը մարդիկ էին, որոնց վիթխարի ծառացումին առջև ինկան սակայն բոլոր ընդդիմադիր ամբարտակները: Բնաշրջական երևույթներու մասին ազգերու մեջ տարբերությունները շատ քիչ են. մեր վերածնունդը տարբեր երևույթներեն չէ, որ պիտի անցներ: Նորին դեմ հինին կատաղի մարտնչումը անխուսափելի էր: Տարբերությունը մեկ կետի մը մեջ է միայն. մինչդեռ հզոր ազգերու մեջ այդ մարտնչումին հետևանք եղող ուժաթափությունը վտանգի չըլլար, մեզի պես արդեն հյուծած ժողովուրդ մը ավելի ուժասպառ դուրս կուգա այդ աղետավոր պայքարեն. բայց ատոր համար սկսված գործը կես ճամբան չի մնար, ան կը շարունակվի անխուսափելիորեն, ճակատագրականորեն, տիրականորեն:

Առանց հինին ու նորին այս բախումներուն, ազգերու ընկերային հիմնական բարեշրջությունները որքա՜ն դյուրին ու սովորական երևույթներ պիտի ըլլային: Ընդվզումի շեշտ, հոգեցունց, էլեքտրացնող արտահայտությունները, անձնվիրության, դյուցազնության դեղեցիկ սլացքները, մարդասիրության շինիչ օրինակները տեղի պիտի տային տափակ, սնոտի, ապուշ շարունակության կյանքին, որ, ինչ որ ալ ըլլի, վերանորոգվելու և առողջանալու համար պետք ունի մեծ և թանկագին ցնցումներու: Մեր նախորդ սերունդին պառավամիտ ներկայացուցիչները պահանջեցին որ — ու ափսո՜ս, դեռ պահանջելու վրա են — ազգային կյանքի հեղաշրջումը կատարվի անկարելի ու մտացածին եղանակով մը, ու սխալ թարգմանեցին այն երևույթը. որ գահավիժորեն առաջ կուգար, պատույտ ու շլմորում տալով իրենց սախտած իմա-

ցականություններուն։ Կարծեցին որ քանի մը անձեր, օտար հաշիվներու գերի, ազգային ընդհանուր վիճակը շահագործելու ելած են։ Երբեք ի նկատի չառին, որ արդեն կես դարե ի վեր հայությունը—մասնավորաբար Թուրքիո հայությունը—կանոնավորապես բարեշրջության փուլերեն անցնելու վրա ըլլալով, հարկավորաբար սաք պիտի դներ, կանգ պիտի առներ ներկա փոթորկալի շրջանին վրա։ Անոնք հավատացին, քարոզեցին ու պնդեցին, որ կարելի էր Թուրք բռնապետության լուծը թոթվել առանց ամենաչնչին զոհողության. նոր սերունդը, իր դյուցազնական վազքին մեջ, խուլեն լսեց այս ողորմուկ աղաղակները, այս ցավագար պոռչտուքները, որոնք կասեցնել կ՚ուզեին իր վազքը, ուշացնել, վիժեցնել կը նկրտեին ազգային փրկության այդ անօրինակ խոյանքը։ Բայց ան շարունակեց իր ճամբան, ու ան պիտի շարունակե նորեն իր ճամբան, որչափ ատեն որ պետք ըլլա։

Հայ վերածնունդը, ինչպես բոլոր վերածնունդները, պիտի բոլորե իր երկունքի ահեղ, բայց աղվոր ալ շրջանը. բնության և ընկերության կատարած այս գործին առջև ամեն խոչընդոտ պիտի ջախջախվի, ջնջվի։ Բոլոր ձեռքերը ա՛լ հիմակ ասոր գերագույն ճիգին երկնցած են ահեղորեն, վանելով մեկ քանի անդամալույծ ու դողդողացող մտավորներ, որոնք այդ անդիմադրելի ճիգը կասեցնելու արկումներ կ՚ապրին դեռ։

Ժամանակը և պայմանները ստեղծեցին Հայ Վերածնունդը։ Պատրաստված ամբողջ սերունդի մը գործն է ան։ Անոր ամբողջ վսեմությունը հասկնալու, զայն պանծացնելու, անոր գլխավոր հեղինակներուն փառապսակը հյուսելու և հայկական ընդհանուր պատմության մեջ անոր արժանի տեղը տալու պաշտոնը մեզի չի՛ պատկանիր։ Այդ գործն ալ ապագա սերունդներուն պիտի մնա կատարել։ Կարգերնիս սեղմենք ուրեմն, ու ապագա պատմության ատաղձը պատրաստենք այնքան շինիչ ու փառավոր, որքան մեր նախնիքը հասուցին մեզ զայն։

89 ի աշխարհացունց սկզբունքներուն լուսավոր ու արգավանդ շավիղին վրա ելած ենք հրաշալի խոյանքով մը. այդ բարձրութենեն վար իջնալը պիտի ըլլա ամենեն ահարկու տկարությունը և, ի՜նչպես քաշվիմ ըսելու, ամենեն անօրինակ վատությունը, զոր տառապող ազգ մը երբեք ցույց տված ըլլա աշխարհիս պայքարի թատերաբեմին վրա։ Այդ տգեղ ու կործանարար ժեստը իր ետևեն պիտի պայթեցներ Հայուն տոհմային մեծ առաքինությունները դրվատող հռչակող ազգերուն հեգնական ու ցավագին ալ քրքիջը, որ մեզի պիտի ընկերանար մինչև ա՛լ անկանգնելի անկումը,— դամբանական կափարիչը հայության։

ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆ

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1903, հուն. 17/30, Խարբերդ

*Եվ ի՞նչ սրտով գրել, մանավանդ, երբ հոս կյանքը մխիթարական բան մըն ալ չունի. կենսականությունը օրեօր կը ցամքի. մեռելական դանդաղություն մը, ջլատիչ գործունեություն մը կ՚սպառնա հոգեկան ամեն խոյանքի, ամեն ազնիվ ցանկության ու տրամադրության, և այդ ամենուն կը հաջորդե կյանքի անստույգ բնազդ մը, որ կապված է կտոր մը հացին՝ անով ապրելու և անով մեռնելու։ Հավատացեք, որ հրաշալի է մեր ցեղին կորովը և այս հոգին միգությունը. ջուրը՝ թույն, երկինքեն ժահր կը տեղա, ամեն քայլափոխի մա՛հ մեզի հետ կը կատակե, և սակայն տակավին կը շարունակենք ապրիլ մեր նամուսովն ու հավատքովը, մեր օճախովն ու քրտինքովը և մեր... արյունովը։ Օրհասական, բայց միշտ հուսալից պայքար մըն է ասիկա, թեև զգանք, որ ամեն օր բան մը պակսի մեր ուժեն, քանի որ բարեկամության օրերու տենդոտ ու անստույգ սպասումը ջլատիչ հիվանդություն մը կը դառնա, քանի որ ամեն գիշերե ետք լուսցող ցորեկը՝ նույն սև արևը, նույն մտահոգությունները և թշվառության միևնույն տեսարանները կը վերանորոգե կսկծագին հուսախաբությամբ մը...*

## ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

1907, նոյեմբերի 5/18, Ֆիլիպե

*Ես չպիտի բաղձայի որ հեղափոխական կուսակցության ամենօրյա երբեմն տգեղ, բայց միշտ կրքոտ ու շնչասպառ կյանքը գար բախելու Ձեր ներշնչման մաքուր տաճարին և խռովեր Ձեր արվեստի քրմական բայց բեղմնավոր առանձնությունը. սակայն բոլոր ուժովս՝ կը փափագեի որ մոտ ըլլայիք ոևէ կուսակցության, շատ մոտ. և եթե*

կ՚ուզեր անոր մտավորական մեկ զինակիցը՝ որպեսզի շնչառությունը լսեր այն հերոսներուն ու դյուցազնական տիպերուն, զորս երգել նպատակ ունիք, որպեսզի իմանայիք այն տրոփյունը, այն հզոր ու ստեղծագործող բաբախումը, որ հեղափոխական ազնիվ կուսակցության սիրտը կը լեցնե և որ կարող է ու անհրաժեշտաբար ստիպողական Ձեր քնարին գեղեցկության ու ներդաշնակության անսպառ աղբյուր դառնալ։...

## ԲՌՆԱՎՈՐԻՆ ԱՐՑՈՒՆՔԸ

... Վշտակիր մարդկության Տառապանքն ու Արյունը՝ իբրև Նախատինք ու վրեժխնդրության պիտի շարունակեն պղպջալ ու վեր ժայթքել միշտ բռնավորներու պալատներուն սեմին վրա և բազմատեսակ բռնությանց ընդդեմ, մինչև որ ընկերական արդարության ու ազատության մեծ Գաղափարը գա վերջ դնելու մարդկային ստրկության և շահագործման, խնայելով բռնավորներուն պղնձե աչքերը՝ կարեկցության արցունքներեն, և Թշվառ մարդկությունը՝ իր ծով արյունեն։

## ՄԵՌՆՈՂՆԵՐԸ ԵՎ ԱՊՐՈՂՆԵՐԸ

### Կյանքի ուժը

Ձո՞ւր է այն անիրավ համոզումը, թե Աշխատության նվիրված ժողովուրդ մը բնաջինջ կ՚ըլլա, և ստեղծագործ Տառապանքին լծված հայության ճակատագիրը՝ պիտի փշրվի խավար մտածողության ապառաժին դեմ։

Քանդող և սպանող բազուկները չեն, որ հիմը դրած են մնայուն, տևական կյանքին,— և սուրն ու բարբարոսությունը չեն կազմած պատվանդանը, ո՛չ մեկ ժողովրդի պատմության, ո՛չ մեկ ժողովրդի ապագային։ Վկա՛ հայության ապրող սերունդը, որ կուգա ասիական դարերու փոթորկալի գիշերներեն, ձեռքը բռնած ո՛չ թե ավերման, այլ աշխատության գործիքը, ճակատին վրա ո՛չ թե նախապաշարման ու մթության կնիքը, այլ լույսի և գիտության տենչանքը։

Անիրավության ու մոխիրի սերմնացանության առաքելությունը չէ տրված մեր ժողովրդին,— և այդ չէ եղած իր գոյության նպատակը։ Կիլիկյան յուրաքանչյուր գյուղ ծխաց՝ արորադրված դաշտի մը վրա,

և յուրաքանչյուր գերեզման հանգչեցավ ո՛չ թե խոպան, այլ հերկված ակոսներու մեջ։ Այսպես է ահա, որ մահը պարգևած է նոր կյանքի մը հարությունը մեր ժողովրդին։

Յուրաքանչյուր ժամանակ և յուրաքանչյուր դար իր հարությունն ունեցած է,— որովհետև ամեն անգամ, նոր գաղափարի, նոր կյանքի, նոր ազատության ափունք մը ոտք դնելու համար, հարկ եղած է, որ անցնինք մահվան կամուրջե մը։ Վերջին կամուրջն էր, որ վիճակվեցավ կիլիկյան դժբախտ հատվածին, իբրև ողջակեզը անհետացող արյունագանգ միապետության մը։

Եթե իրավ է, որ ամեն գերեզման, ինչքան ալ փոքր, ինչքան ալ թեթև ըլլա իր պարունակած աճյունը, գոնե ցորենի քիստ մը կը բեղմնավորե իր ծոցեն՝ հերքելու մահվան գերազորությունը, և կյանքի հաղթանակովը ողջունելու արևին լույսը, որ կը ցաթի ժպտելով և՛ ապրողներու կենդանության հավատքին, և՛ արգասավոր մեռելներու հարությանը,— ապա ուրեմն, հանուն նոր կյանքի և հանուն ազատության ինկած զոհերը, Կիլիկիո մահաստաններուն մեջ, կոչված են ո՛չ թե անհետ ու անօգուտ կորսվելու, այլ դառնալու խանձարուրն իսկ մեր ապագա վերածնության։

Մեր ժողովրդին արևը քաղաքական մթին հորիզոններու վրայեն շատ անգամներ ողջունած է վերածնության այդ ուժը, թող ողջունե և այս անգամ,— որովհետև խաղաղության, աշխատանքի ու ազատության ձգտող Հայությունը, որոշած է ապրիլ և իր Սուգին մեջեն, որքան ալ սև ու խոր ըլլա ան, դարձյալ նայիլ վաղվան՝ հուսալից և անընկճելի։

Օր պիտի գա, և մենք հույս ունենք այդ օրվան, որ Կիլիկյան դամբարաններուն վրա արտասվելու պիտի երթան զավակները անոնց՝ որ իբրև անգիտակից զոհ Ոճիրին, դանակն եղան՝ հարվածելու համար անմեղ եղբոր պարանոցը։

Եվ որքան շուտ գա այդ օրը, ո՛րքան վերապրողները ավելի արագ դիմեն այդ վաղվան արշալույսին,— այնքան արգասաբեր պիտի ըլլա աճյունը ազատության նահատակներուն, և այնքան ծաղկալից, այնքան կենսագործ՝ անոնց գերեզմանները, գալիք սերունդներուն համար։

# ՀՆԴԿԱՍՏԱՆԸ Կ'ԱՐԹՆԱ՞

*«Հարձակման դեմ դիմադրությունը ո՛չ միայն արդարանալի է, այլև հարկադրական։ Անդիմադրությունը մեղանչում է թե՛ եսասիրության և թե այլասիրության դեմ միանգամայն».*

**Հերպերտ Սփենսըր**

## Հնդիկ ազատասերներու նշանաբանը

*Անհերքելի է թե հակաանգլիական շարժման աղբյուրը կը բխի այն հակակրական զգացումեն՝ որ հնդիկ միջին դասակարգը կը կրե եվրոպացի հարստահարիչներու նկատմամբ։ Անձնավորություն մը այս մասին հետևյալ կերպով կ'արտահայտվի. անգլիացիք կրթեցին Հնդիկները իրենց գոլեճներուն մեջ. միջին դասակարգը կը կարդա և կ'ուսանի, ինչ որ կ'առաջնորդե Հնդիկները խորհելու, թե Հնդկաստանը կը շահագործվի ի նպաստ անգլիական ազգին։ Անգլիացիք Հնդիկներուն կը ծանոթացնեն անգլիական բարքերը. կը կրթեն զանոնք բրիտանական բարոյականին համաձայն. անոնց առջև կը դնեն գրքեր՝ որոնց յուրաքանչյուր էջին մեջ կը կարդացվի անգլիացի ժողովրդին հարձակողական նկարագիրը և անկախության միտքը։ Եվ երբ որ բնիկները իրենց մտքին կ'անցնեն գործնականացնել ինչ որ ուսած են, Անգլիացիները կը զարմանան, կը սարսափին ու կը զայրանան. կ'ամբաստանեն Հնդիկները որպես խռովարար, ապստամբ և ծանր հանցագործ. Իսկ Հնդիկ ազգասերները կը պատասխանեն որ՝ իրենք թե՛ իրավունք և թե՛ միջոց ունին առաջ բերելու իրենց երկրին մեջ հեղափոխություն մը[2]. ու կը հաբեն. «Հնդկաստանի պատմությունը հազար հեղափոխականներ տեսած է. նոր հեղափոխություն մը օրինավոր է չքավորության այն շրջանին մեջ՝ ուր կ'ապրինք»։*

*Հնդիկ հեղափոխականները՝ կողմնակից դիմադրության, կ'ոգեկոչեն Մածինիի հետևյալ խոսքը. «Դաստիարակությունն ու կրթությունը այն միակ եղանակներն են՝ որոնցմով կրնանք արթնցնել ժողովուրդը»։ Եվ իրենց օրգաններուն գլուխը կը զետեղեն Հերբերթ Սփենսըրի հետևյալ խոսքերը, իբրև նշանաբան.* ***«Ամեն մարդ ազատ է գործելու իր ուզած կերպով. բավական է, որ ոտնձգություն չընե ուրիշի պատկանող նույն ազատության վրա». «Հարձակման դեմ դիմադրությունը ո՛չ միայն արդարանալի է, այլև հարկադրական։ Անդիմադրությունը մեղանչում է թե՛ եսասիրության և թե այլասիրության դեմ միանգամայն»։***

***Պ. Ռոզըվելթ 1909 հունվար 11 ին ճառ մը արտասանելով Վաշինգ-***

թոնի մէջ[3], համարձակեցաւ ըսելու, ուրիշ կարգ մը հիմարութեանց հետ, թէ՝ Հնդկական Կայսրութեան մէջ Անգլիացիներուն վարչութիւնը մեկն է սպիտակ ցեղին միջոցով այս երկու դարերու ընթացքին մէջ իրականացուած ամենէն զմայլելի ձեռնարկներէն։ Արդ, 1901 թուականէն ի վեր[4], Հնդկաստանը աւերածութեան ենթարկուած է ամէն տարի մեկ քանի տեսակ ժանտախտե, որոնք նոյնքան սովորական դարձած են երկրին մէջ, որքան ջերմը, ծաղկախտը և քոլերան։ Անգլիական կառավարութիւնը, որ կը հսկե մասնաւորապես հնդկական բանակին համաձայն, բացարձակապես աննշան գումար մը միայն կը ծախսե առողջապահութեան միջոցներու համար։ Գալով ոռոգման (irrigation) գործին, որուն վրայ այնքան պարծանքով կը խօսուի անծանօթներու կողմէ, հայտնապես առասպել մըն է։ Եթե այդ տեսակ աշխատութիւն մը գործ դրված ըլլար, Պենկալ գաւառին գետային ցանցը չէր լեցվեր աւազով, ջուրերու հոսանքներուն մեծ մասը չէր ցամքեր, և հետևաբար ատենոք այնքան ծաղկած բազմաթիվ գյուղեր և քաղաքներ այսօր անմարդաբնակ չէին դառնա քոլերայեն և մալարիայի տենդէն։ Եթե մեկ կողմ առնենք մեծ կենդրոնները՝ ինչպես Կալկաթա, Պոմպե, Մատրաս, Լահոր, Ալլահապատ և ուրիշ մեծ քաղաքներ, Հնդիկները ուրիշ վայրերու մէջ խիստ դժվարութեամբ կը գտնեն խմելու ջուր։ Գյուղեր և քաղաքներ բացարձակապես զուրկ են ջրմուղներէ։ Գյուղերուն մէջ ուր կ'ապրի Հնդիկներուն %90ը, բնակչութիւնը գետնին փորած է ջուրի ընդունարաններ, ուր կը լվա թէ՛ իր կեղտոտ ամանները և ճերմակեղենները, թէ՛ կը լոգնա և թէ անկէ կը գործածե իր կերակուրի պետքերուն։

Միլիոնավոր Հնդիկներ կը բնակին այնպիսի հյուղակներու մէջ՝ որոնց շինութիւնը, առողջապահական տեսակետով, շատ վար է երկրին տավարներուն համար շինված ախոռներէն։

Ներկա տնտեսական ռեժիմին տակ, հնդիկ ժողովուրդը՝ դարձած արյունաքամ, շահագործված՝ մինչև իր ոսկորին ծուծը, իր տերերուն կողմէ ամենավատթար զրկանքներուն ենթարկված՝ ո՛և է առողջագործման աշխատանք կատարելու անկարելիութիւնն ունի։ Իսկ պետք չէ մոռնալ տակավին, թե երբ ամենահին թվականներուն անգլոսաքսոնները՝ դեռ վայրենի, կ'ապրեին քարանձավներու մէջ, Հնդկաստանը բարգավաճ երկիր մըն էր, ուր կը ծաղկեր բժշկութիւնը, աստղագիտութիւնը, բարոյականը և փիլիսոփայութիւնը...

Կ'ըսվի նմանապես թե արդի հնդկական հեղափոխութեան ամբողջ շարժումը գործն է միայն փոքրաթիվ բնիկներու, թե՝ բուն հնդիկ ժողովրդական զանգվածը հաղիվ կը սկսի դուրս գալ իր ագիտութենեն ու

*թմբիրեն, թե վերջապես անիկա չի շահագրգռվիր հակաանգլիական շարժումով։ Եվ սակայն, ամերիկացի միսիոներ մը, որ երեսուն տարի ապրած է անգլիական Հնդկաստանի մեջ՝ հայտարարեց Նյու-Յորքի թերթերուն, թե հնդիկ հեղափոխության մասնակից է բնակչության հարյուրին երկուքը. արդ, պարզ է, որ անգլիական Հնդկաստանի բնակչության թիվն է՝ 300 միլիոն, որուն 2%ը կ՚ընե* վեց միլիոն: *Իսկ վեց միլիոնը թիվ մըն է՝ ո՛հ, հեղափոխական շարժման համար, որ ոչ միայն արհամարհելի չի կրնար ըլլալ, այլև չափազանց երկյուղալի պետք է նկատվի։*

*Եվ արդարև, այս վերջին տարիները, հակառա՛կ ձեռք առնված բոլոր կանխազգուշություններուն, ապստամբական միտքը կը տարածվի բովանդակ Հնդկաստանի մեջ. նոր ներշնչում մը կը հայտնագործվի հընդիկ ժողովրդին մեջ. համերաշխության զգացում մը՝ մինչև այժմ անծանոթ, միացված է ազատության և արդարության միևնույն դատին համար՝ այդ ընդարձակ կայսրությունը կազմող բազմաթիվ ցեղերն ու անհամար աղանդները։ Հնդիկ հսկային այս զարթնումը մեկե ավելի կետերով կը նմանի ռուսական հսկային ցավագին զարթնման։ Եվ Անգլիան, այս պատճառով ալ կարծես ուզեց օգտվիլ ռուս պյուրոքրասիի մեթոտներեն և, արհամարհելով բազմամիլիոն ժողովրդի մը տանջանքն ու պահանջները, դիմեց ռուսական բռնակալության միջոցներուն՝ խստության, հալածանքի ու սարսափի։*

*Բայց Հնդկաստանը կ՚արթնանա՞։ Եվ զարթնող ժողովուրդը անընկճելի է։ Արևելքը կը պատրաստվի նոր անակնկալներու։*

ԱՌԱՆՁԱՐ

## ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

*Թրքահայ ժողովուրդը՝ հակառակ երկաթե անուրի մը պես զինք շրջափակող բարբարոս ցեղերուն և հակառակ բռնապետական կառավարության մը ծայրահեղորեն կամայական ու վատթար վարչության, շատ մը դյուրություններ ալ գտած կամ ստեղծած է և կրցած իրեն համար ազգային ինքնուրույն կյանք մը ձևավորել։ Այդ կյանքը՝ մանավանդ տասնիններորդ դարու կեսեն մինչև 1895 կարմիր թվականը*[1]*՝ անդուլ ու անվհատ առաջադիմության պայքար մըն է, փոքրաթիվ ու քաղաքականապես դժբախտ ժողովրդի մը բարոյական պայքարը տգիտության բիրտ ուժին դեմ։ Ձեռք բերված արդյունքը, թեև ոչ համապատասխան սպառված եռանդին ու ճիգին, բայց հենց այդ պատճառով ալ ավելի գնահատելի է, ավելի շահեկան ու գեղեցիկ, աղբանոցի մեջ բուսած ծաղիկի մը պես։ Հիմա շարենք անուններ՝ ընդհանուր պատմության մեջ թերևս անօրինակ՝ մեր այդ շրջանեն. Պալյան, Օտյան, Ռուսինյան, Զորայան, Հեքիմյան, Միսաքյան, Պեշիկթաշլյան, Դուրյան, Շիշմանյան, Ստեփան Ոսկան, Մամուրյան, Գարագաշյան, Խրիմյան, Վարժապետյան, Նարպեյ, Սրվանձտյան, Հ. Սըվաճյան, Թերզյան, Պարոնյան, Սրբուհի Տյուսաբ, Տեմիրճիպաշյան, Չիլինկիրյան, Տեկանց, Շահնազար, Արփիար, Հրանտ, Սիպիլ, Զոհրապ և այլն...*

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ

# ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

## Արագ տպավորություններ
## (Սեփական թղթակցություն)

Փարիզ, 15 նոյեմբեր

*Փորթուկալի արագ և վճռական հեղափոխութենեն[1] ետքը՝ որ այնքան մեծ խանդավառություն առաջ բերավ այս հանրապետական մեծ երկրին մեջ, ահավասիկ շոգեկառքի պաշտոնյաներու մեծ և ընդհանուր գործադուլը. Փարիզ քաղաքը վրդովմունքի, հույսի և սարսափի հակասական զգացումներու մեջ է. գործադուլը իր մեծ համեմատությամբ կարծես ընկերական հեղափոխության մը գույնը կ'առնե և մթնոլորտին մեջ կա մեծ օրերու խռովքը, խանդը և արբեցությունը։*

*Քիչ բան պետք է թրթռացումի մեջ դնելու համար այս գերազանցապես դյուրազգած ժողովուրդը և եղածը մեծ բան է. առանց շոգեկառքերու երթևեկության՝ Փարիզի երակները կտրված են. ամեն բան կրնա կանգ առնել, եթե այս վիճակը հարատևե. պաշարված քաղաքի մը բոլոր քստմնելի պարագաները կրնան ներկայանալ. սնուցիչ նյութերու սպառում, հարաբերությանց խզում, թղթակցությանց դադարում և այլն. բոլոր վաճառականական մեծ տուները հուսահատության մեջ են և, եթե ոմանց մեքենաները դեռ կը դառնան կռնչելով՝ ուրիշներ դադարած են բոլորովին. սովի հավանականությունը և առնվազն անհրաժեշտ պարանքներու սղությունը քիչ մը կը շվարացնե համեստ դասակարգերը, բայց առհասարակ ժողովուրդը անփույթ է և գոհունակությամբ ցույց կուտա իր համերաշխությունը շոգեկառքի պաշտոնյաներուն. ամենքն ալ կարծես համաձայն են՝ կրելու նույնիսկ ավելի մեծ դժվարություններ և ատով բաժանելու համար ճնշված փոքրիկ պաշտոնյաներու ջանքը դեպի լավագույն ապագան...*

Ու ծիծաղելով՝ գործադուլին ընծայած զավեշտական երևույթներուն վրա կը խոսին գոհ ու գրեթե ուրախ։

Իրավամբ բանթող պաշտոնյաները նյութական անձուկ պայմաններու մեջ կ՚ապրին, այնպես որ նույնիսկ մեզի դժվար է երևակայել իրենց ճիշտ կացությունը. միևնույն ատեն ենթարկված են տխմարացնող և ջլատող աշխատության մը, ու գործի ժամերը այնքան երկար են՝ որ խեղճ մարդիկը ժամանակ չունին հանգչելու. հոգեկան և մտավորական պահանջներու մասին խոսիլն իսկ հեգնություն պիտի ըլլար։ Ամեն օր սարարշավ թավալիլը մեծ ճամբաներու վրա՝ զվարճալի գործ չէ. իրենց ֆիզիկական անբացատրելի հոգնության մեջ՝ նույնիսկ ազատություն չունին բանի մը վրա խորհելու, իրենց ընտանիքը, տղաքը հիշելու, ոևէ մտերիմ ուրախության անդրադառնալու, որովհետև հարկադրված են ինքնզինքն պահել սևեռյալ ուշադրության մեջ և թույլ չտալ իրենց մտքին ոևէ խափանում՝ որուն արդյունքը ծանր արկածներ կրնան ըլլալ։

Զարմանալի է նույնիսկ որ այս աստիճանի սպառող և ստրկացնող գործի մեջ այդ ճնշված պաշտոնյաները պահեր են իրենց վիճակին գիտակցությունը, իրենց մտավոր և հոգեկան պահանջներուն զգացումը և այսօր վերջապես կը ներկայանան իրենց հավաքական կամքովը զորավոր՝ ստանալու բոլոր այն նյութական և բարոյական գոհացումները, որոնց իբրև մարդ իրավունք ունին։

Ներկա գործադուլը անգամ մը ևս շեշտեց բաթրոններուն, մեծ ընկերություններուն աչքին այն մեծ նշանակությունը ու կարևորությունը՝ որ աշխատավոր դասակարգը ունի. բավեց որ գործավորները թևերնին ծալլեն ու մերժեն աշխատիլ, որպեսզի այդ աշխատանքին պտուղը վայելողները միլիոններ կորսնցնեն, կյանքը դադրեր գրեթե ամեն տեղ, սովի սարսափը սավառներ իրենց վրա ու զգային թե իրենց լեցուն դրամարկղները անկարող են այդ թանկագին բազուկները փոխարինելու։

Երկու օր առաջ էլեքտրականություն հայթայթող մեկ բանի գործարաններու աշխատավորներն ալ մերժելով աշխատիլ, քաղաքը մութի մեջ մնաց. էլեկտրաշարժ մեքենաները դադարեցան ու երկու օր անցուցինք գրեթե լռության և մութի մեջ. վախ կա որ մեթրոփոլիթենն ալ դադրի՝ ինչպես ինքնաշարժ հանրակառքերը և թրամվայները։

Ամեն կարգի աշխատավորները համակիր են այս գործադուլին ու զգալի է, որ այլևս պետական ոևէ խստություն, ոևէ միջոց անկարող պիտի դառնա աշխատավոր դասակարգին մերձավոր ապագայի մեջ իրագործելիք հաղթանակը կաշկանդելու։

Կը բավե դիտել պատվարներու վրա, փողոցներու մեջ զույգ-զույգ

կամ խմբովին դացող գործավորներուն դեմքերը, այլևս անցեր են այն ժամանակները՝ երբ ճնշված դասակարգերը գիտակցությունը չունեին իրենց դժնդակ կացության և զիրենք հարվածող ձևերը կը համբուրեին։ Այսօր տերերը որքան ալ ճարպիկ ըլլան, ո՛րքան ալ բարեգործական սնոտի հաստատություններով ուզեն պարտկել իրենց տխուր դերերը՝ անկարող են այլևս խաբելու, իրենց կեղծ գթության հաճախ ծիծաղելի ծամածություններուն դեմ խրոխտաբար կանգնած կը գտնան ժողովրդական խավերու ինքնագիտակցությունը կամ թշվառության մեջ դառնացած ապերախտներ՝ որոնց վրեժը սարսափելի ըլլա թերևս։

Ամեն կողմ միթինկներ, հազարներով, տասն հազարներով է որ կը հավաքվին. ու բոլոր ժամանակը, ըլլան անոնք գործաթողներ, ըլլան ուրիշ ճյուղերու պատկանող բանվորներ, մեծ հանդարտություն կը պահեն. գրեթե դեպք չկա։ Ասիկա փոքրամասնության մը անհանգիստ ու ջղագրգռված ըմբոստությունը չէ, այլ զորավոր տարրի մը վստահ հառաջխաղացությունը. իրենց շարժումներուն վեհանձնությունը մեծ գրավականն է իրենց ուժին։

Ընդհակառակը կառավարությունն է որ ջղագրգռված է ու փոխն ի փոխ կուտա ծիծաղելի կամ ապօրեն որոշումներ։ Երեկ իրիկուն միթինկի մը առթիվ, ուր 8000 քաղաքացիներ հավաքված էին, կառավարությունը ոտքի էր հանած 3000-ի չափ զինված ժանդարմա, ձիավոր ոստիկան և այլն։ Եթե ժողովուրդը իր պաղարյունությունը չը պահեր՝ ծանր հետևանքներ հավանական էին։

Ներկա գործադուլին շահեկան կետերեն մեկն ալ այն է՝ որ բանվորները իրենց դեմ ունին այնպիսի նախարարապետ մը՝ որ մոտիկ անցյալի մեջ իրենցմե եղած է. արդարև Բրիան ամենեն ավելի եռանդով քարոզած է ընդհանուր գործադուլը՝ իբր ամենեն ազդեցիկ միջոցը կեղեքող տերերուն դեմ[2]. Ի՛նքն է որ ատենախոսություններով, հրատարակություններով անդադար ցույց տված է այն բոլոր միջոցները՝ որոնք կը գործածեն այսօր գործաթողները և որոնց դեմ է որ նախարարապետը միջոցներ ձեռք առնել կը փորձե։

— Մենք քու աշակերտներդ ենք, կը հայտարարեն անդադար ըմբոստացող պաշտոնյաները. մենք քու ցույց տված ճամբեդ է որ կ'երթանք այսօր։

Օրվան ամենեն շատ կարդացված թերթը Յումանիթեն է[3], որ Լա Կեռ Սոսիալ թերթին հետ կանգնած է շարժման գլուխը. քանի մը տպագրություններ կը սպառին. առավոտուն կանուխեն գործավորները կը գնեն թերթը ու, եթե գործաթող չեն՝ կ'աճապարեն իրենց աշխատանոցները,

արագօրէն կարդալով. երբեմն խումբեր զիրար կը դիմավորեն, սրտա-պնդող և համակիր խոսքեր կը փոխանակեն ու կը հեռանան։ Կը պատա-հի նույնիսկ, որ իրարու անծանոթ գործավորներ նույն թերթը տեսնելով՝ իրենց ձեռքը իրարու կ'երկարեն, կը ժպտին ու կը բարևեն...

Մեծ օրերու հարկեցուցիչ համերաշխությունը կ'ուրվագծվի արդեն աշխատութենե խորշոմած դեմքերու վրա։

Այսօր վերջապես ո՛չ ոք կը տարակուսի, թե գործավորները պիտի հաղթանակեն. նույնիսկ իրենց թշնամիները, [illegible] կամ ռեա-մութ քաղաքական թե ֆինանսական խմբակներու օրգանները, հակառակ իրենց թափած թույնին, ստություններուն և զրպարտություններուն, հա-մակերպված են հաջողության հավանականության։ Բայց ինչ որ թերևս դեռ անկարող են գուշակելու,— այն անդիմադրելի զորությունն է՝ որ այլևայլ երկիրներու և ազգերու պատկանող ճնշված դասակարգերը կը ներկայացնեն և որոնք այլևս հոգնած դարավոր ստրկութենե և թեերնին ազատած զիրենք կաշկանդող նախապաշարումներեն, միացա՛ծ նույնա-տեսակ շահերու, նման վտանգներու մեջ, պիտի կանգնին հին ընկերու-թյան դիմաց՝ մոտավոր ապագայի մեջ, թերևս վաղը։

## ԶԱՐԴԱՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստը, ըլլա գրական թե ուրիշ ճյուղերու մեջ, գերագույն ար-տահայտությունն ըլլալով ցեղին, կը կազմե թերևս նաև անոր գոյության գերագույն իրավունքը, և այսօր հայտնի ճշմարտություն մըն է, թե ա՛յն ցեղերը ամենեն մեծերը, ամենեն զորավորները եղած են, որոնց գեղեց-կության բագինը ավելի վառ, ավելի ձարհատուն եղած է. և մենք իսկ, կորսված ափ մը Ասիացի ժողովուրդ, նույնիսկ հետքերը նախկին ժողո-վուրդի մը, հարատև ոտքի կոխան դարձած դեպի արևմուտք արշավող բարբարոսներու, ինչո՞վ և ի՞նչ հիման վրա է որ կը պահանջենք մեր գո-յության իրավունքը. որովհետև մեծաբարբառ կարող ենք ըսել, հպար-տությամբ և բարձրագլուխ կրնանք ըսել թե մեր նախնյաց վառած կրակը գեղեցկության, գերագույն իտեալներու բագինին մեջ, բայց չենք թողած որ մարի, թե աշխարհավեր բարբարոսներու հառաչ բերած խավարը չէ զորած զայն մթագնելու և թե անիկա երբեմն առկայծ, երբեմն նվաղուն, բայց միշտ կենդանի, վառած է, հետզհետե ավելի արծարծվելով, հե-տըզհետե ավելի բոցավառվելով։

Ահա այդ բագինին ամենեն արժանավոր, ամենեն տաղանդավոր քուրմերեն մեկն է Ռուբեն Զարդարյանը, որուն բանաստեղծական և գեղեցկագիտական արժեքը գնահատելու կոչված եմ այսօր[1]։

## ԱՐԾԻՎԸ ԿԸ ՍԱՎԱՌՆԵՐ

Քանի օր է լսած էինք թե Փարիզի Բուսաբանության Պարտեզը արծիվ մը ուներ. մինչև այն ատեն անկարելի եղած էր ձեռք անցընել արքայական գիշատիչը, ու բազեններու, շահեններու ու բազմատեսակ թևավորներու հավաքածույին մեջ, այդ հազվագյուտ տեսակը պակսած էր միշտ։

Պատճառը այն էր, որ արծիվը ողջ չէր բռնվեր, ու ամեն անգամ որ անվեհեր և արկածախնդիր մարդիկ, մագլցելով սեպ լեռներու անմատչելի գագաթը, ձեռք դրած էին արծիվի բույնի մը վրա և հափշտակած էին անոր ձագերը, բախտ չէին ունեցած. հակառակ ամեն կարգի խնամքներու, անոնք կը մեռնեին մեծ մայրաքաղաքը չհասած։ Ինչպես հաջողեր էին այս անգամ. ի՞նչ փույթ, գացինք տեսնելու։ Սրահակը դիմաց, լայն տեղ մը հատկացուցած էին իրեն, ուր պայծառ օրերու մեջ շեշտակի կ'ընդուներ արևին առաջին ճառագայթները. իր բանտը ընդարձակ վանդակ մըն էր՝ գմբեթաձև ձեղունով, որուն վրա կը մագլցեին, հետզհետե հասնելով, տարաշխարհիկ և պատատուկ բույսեր։

Երկու տերևազուրկ ծառերու կմախքներ կը ցցվեին վանդակին մեջ, տարածելով իրենց մերկ և գլխավոր ճյուղերը այլևայլ ուղղությամբ. առաջին անգամ այդ ծառերեն մեկուն գագաթին վրա տեսանք արծիվը, որ բարձր թառած, անշարժ ու չարագուշակ՝ ուսերը կը ցցեր երկինքին. իր լայն և հուժկու թևերը սեղմվելով պարփակած էին իր վտիտ և ջղուտ մարմինը, կտուցը մխրճած էր կուրծքին մեջ և փակ աչքերը անտեսանելի կը մնային. Արծիվը կը խոկար...

Երկար ժամանակ նայեցանք վեհաշուք բանտարկյալին, մինչև որ արծիվը բացավ թևերը, տարածեց լայնորեն մինչև վանդակները, ու իր դեմ չտեսնելով ազատ և անսահման տարածությունը միջոցին, արհամարհելով թռչկոտել մեկ ճյուղեն մյուսը, թևերը թոթվեց միայն, երկարատև և անձկալի սարսուռով մը, ու կրկին ամփոփվեցավ իր անշարժության մեջ...

Մինչև հեռուները, իր թևերուն ազատության բաղձանքը կը թրթռար, զարթեցնելով ըմբոստ և բանտարկված կենդանիները, իրենց անգիտակից և կրավորական անզորութենեն։

Անցավ գարունը, հետո ամառը։ Դրախտային գեղեցկությամբ, Բուսաբանության Պարտեզը կ՚ընծայեր իր պուրակներուն և հովանիներուն խաղաղ և կանաչոտ այլազանությունը։ Արծիվը, միշտ բարձր թառած, աչքերը փակ շուրջի գեղեցկության, անշարժ ու ամփոփված իր մեջը, կը խոկա՞ր...

Որոշյալ ժամուն, երբ գոցելով զառագեղները, իրենց որջերը կամ բույները կ՚առաջնորդեին տարագիր կենդանիները, արծիվն ալ կը տեղափոխվեր. ու պահապանին կեռ գավազանով շղթայված, անիկա անկենդան և անհետաքրքիր խլյակի մը երևույթը ուներ. որովհետև իր հոգին, մտածումին անբռնաբարելի և աստվածային ազատության շնորհիվ՝ խուսափած էր հեռո՜ւն հեռո՜ւն, դեպի երազված վերջալույսները, սարերը ու անջրպետները, ու շարժուն և լույծ կուրծքը ծովերուն...։

Բուն արծիվը կը սավառներ...։ Ինչ որ կար հոն, Բուսաբանության Պարտեզին մեջ, գաղափար չէր տար արծիվին ամբողջական իսկության մասին. անիկա տարբերություն չուներ անպարտելի, կամ երկրիս վրայեն անհետացած անասուններու զմռսված մարմիններեն։

Վանդակին մեջ ճյուղերու վրա, արյունոտ միսի կտորներ կը փտեին ընդունայն. արծիվը, ափին մեջ պարձուցած ճիրանները, կը մերժեր և կ՚արհամարհեր այն սնունդը զոր իր պահապանները կը ներկայացնեին ամեն օր։

Նույնիսկ երբ կը սևեռեր իր կարմիր և անքթիթ աչքը, որուն վրայեն ճերմակ թաղանթը կը բարձրանար համրորեն, արծիվը կենդանություն չէր ստանար. իր նայվածքը որ սովոր էր անջրպետներ չափել, խորտակված նետի մը պես կ՚իյնար գետին. ու անիկա բնավ կը նայեր շուրջի շքեղ գեղեցկության։ Որովհետև երբ աչքերը կը գոցեր ու կտուցը կուրծքին մխրճած կ՚երազեր, հոգին կ՚երթար բանտեն անդին, պարտեզեն դուրս, դեպի իտեալական և ձյունապատ սարերը իր հայրենիքին...

Արծիվը կը սավառներ...։ Անիկա խորտակած էր շղթաները ճղճիմ և նենգավոր մարդուն բռնապետության, և կը սուրար դեպի ջինջ պայծառությունները իր իտեալին, դեպի վեհ և անմատչելի բարձրությունը իր մտապատկերներուն։

Արծիվը կը սավառներ դեպի վեր, դեպի նոր և օտար աշխարհներ. իր անքթիթ և կարմիր նայվածքը կը խորասուզեր սեպ լեռներու ճեղքերուն մեջ, կը թափանցեր մինչև խորը վիհերուն, կարծես չափելու համար իր վեհանձն և լայն թռիչքին հեռավորությունը. ու երկարատև վերջալույսներու շառագույն երկինքին վրա իր թևերը կը տարածվեին, և անոնք առանց թոթվելու կը բարձրացնեին զինքը խաղաղ և ապահով սլացքով։

Աշնան, արծիվը այլևս հետաքրքիրներուն չցուցադրվեցավ. անիկա մեռած էր, բարձր թառած իր վանդակին մեջ, ու իր հաջորդը չունեցավ, որովհետև վերջապես մարդիկ համոզվեցան, որ արծիվը կարելի չէր բանտարկել։

## <ՍՆԱՐ ՍՆԱՐՅԱՆԻՆ>

1922, ապրիլի 27, Բարիզ

*Ձեր թերթին[5] մեջ իմ ուշադրությունս գրավեց այն եռանդը և այն անկեղծ փափաքը, որով կուզեք ըլլալ Հայաստանի հետ ամեն միջոցներով և բոլոր ուժերով։*

*Ինձ համար մասնավորաբար մեծ նշանակություն ունի այդ բանը, որովհետև հակառակ երևույթներուն՝ ներկա Հայաստանը ավելի բնականոն և ավելի հաստատ պայմաններու մեջ է և իր արտաքին քաղաքականությունը շատ ավելի իմաստուն է, քան այն Հայաստանը, որ ունեցին հաստատել և որուն վաղանցուկ գոյությունը, գոյության երևույթն իսկ կախում ուներ այն պետություններին, որոնք այսօր առանց այլևայլի և առանց ամոթխածության ինքզինքնին բարեկամ կը հռչակեն մեր թշնամիներուն։*

*Եթե այդպես ալ չըլլար, պետք էր օգնել այսօրվան Հայաստանին, ինչպես պարտական զգացինք ինքզինքնիս օգնել երեկվա Հայաստանին։ Բոլոր անոնք, որ գործով և խոսքով դեմ են այսօրվա Հայաստանին, դեմ են Հայաստանի անկախության և մեր ժողովրդի ամենեն անմիջական պահանջքներուն։ Այդ մասին տարակույս չի կրնար ըլլալ և բոլոր մնացյալ պատճառաբանությունները սին շատախոսություններ են։...*

## ՍՆԱՐ ՍՆԱՐՅԱՆԻՆ

1923, հունվարի 31, Բարիզ

*Հարգելի ընկեր Սնար,*

*Շնորհակալությամբ կ՚ընդունիմ «Բանվոր»-ը և մեծ հետաքրքրությամբ կը հետևիմ Ձեր կորովի պայքարին՝ բոլոր անոնց դեմ՝ որոնք մեր խեղճ ժողովուրդին ղեկավարությունը բռնագրաված են և անխիղճ համառությամբ կը տանին զայն մեկ նվաստութենեն մյուսը։*

*Վաղուց է, մտադրած էի Ձեզ գրել և Ձեր ուշադրության ներկայացնել երևույթներ, որոնք Ձեր հեռավորության պատճառով կրնան Ձեր ուշադրութենեն վրիպել։*

Ավելորդ է թերևս անգամ մը ևս հավաստել, որ շատ խորապես և անկեղծորեն բոլոր հավատքս կենտրոնացուցած եմ Խ. Հ. կառավարության վրա։ Պատերազմի միջոցին Անդրկովկաս անցնելս[6] և այսօրվան մեր երկրին ղեկավարներեն ոմանք անձամբ ճանչնալս դյուրացուցին թերևս ինձ հասնել այն իրականության, որ ամեն ինչ կորսվելե ետքը, ամեն ինչ կրնային փրկել միայն այդ երիտասարդ, եռանդուն, իրականության զգացումով օժտված խումբը մտավորականներուն։ Այսօր առավել քան երբեք, անոնց դիրքը հաստատված է և շնորհիվ իրենց բռնած անսայթաք քաղաքականության՝ մեր ժողովուրդին առաջ կը բացվին իր բոլոր արդարացի փառասիրություններուն գոհացում ընծայող հեռապատկերներ։

Այս բոլոր հայերը, ուրեմն, որ կը գտնվեն Հայաստանի հողին վրա և Անդրկովկասի մեջ առհասարակ, մտած են իրենց ճակատագրի ճամբուն վրա և առավել կամ նվազ արագությամբ պիտի հետապնդեն ու իրականացնեն վերակազմության գործը։ Բայց Հայաստանեն դուրս գտնվող հայ ժողովուրդը և մասնավորաբար նոր գաղթականները, որոնք շատ մեծ թիվ մը կը կազմեն, չեն կարող մտահոգության առարկա չի դառնալ։ Զանազան և հաստատ աղբյուրներե առացած տեղեկություններս ինձ կը ներշնչին պարտավորություն՝ պարզել կացությունը, այն հույսով, որ կարելի ըլլա թերևս գործունեության ներդաշնակություն մը ստեղծել զանազան վայրերու մեջ գտնվող համախոհ խմբակներու հետ և ջանալ նոր չարիքները կանխել։

Կրնամ Ձեզ հավաստիացնել, թե արևմտահայ մտավորականությունը, բացի տասը-քսան դաշնակցական պետերե, համակիր է ներկա Հայաստանի կառավարության։ Ժողովուրդի ուրիշ խավերը կամ անգիտակից են կացության կամ նույնպես համակիր։ Լոզանի քոնֆերանսի[7] խայտառակությունը վերջին հարվածը տվավ անոնց, որոնք դեռ խաբուսիկ հավաստիացումներով կրնային հանրային կարծիքը տատամսումի մեջ պահել։ Այստեղ, Բարիզի մեջ երկու պատվիրակությունները[8] ալ կղզիացած են, տեղվույս գաղութը և ինչ որ կարևոր է, երիտասարդությունը, ուսանողները մասնավորապես ոչ միայն հեռու են պատվիրակություններեն, այլև անոնց համար ունին թշնամական արհամարհանք։ Այլևս մարդ չիկա, բացի իրենց լաճեներեն որ հավատա իրենց խոսքերուն. զանազան հերոսներու ղեկուցումները կը լսվին հեգնական ակնարկություններով. Վրացյաններու, Ռուբեններու և Խատիսյաններու ջանքերը գոնե որոշ կարգի երիտասարդության համախոհությունը ունենալու, անցան ապարդյուն։ Բայց այս տրամադրությունները ցրիվ են, անորոշ և անկապակից

և շնորհիվ այն բանին, որ դժգոհությունները չեն բանաձևվիր, մյուսները կը համարեն ինքզինքնին ազատ հաշվի չառնելու այդ դժգոհությունները։...

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1925, նոյ. 6, Վիրոֆլեյ

*Շնորհակալ եմ Ձեր խոսքերուն* Երևան *թերթի համար*[9]*։ Կը տեսնեք, թե ի՜նչ աղմուկ կը բարձրացնե այն դաշնակցական մամուլին մեջ և ուր նաև մասնավոր դիտավորություն ունին, կարծես, իրենց սլաքները ուղղելու դեպի իմ անձս։ Այս պարագան իմ բնավ հոգս չէ և կ՚սպասեի արդեն, որ այդպես ալ պիտի ըլլար։ Ժամանակը եկած է, որ ճշմարտությունը լսվի մեր մոլորված և խելագարած ժողովուրդին և ճշմարտությունը լսելը միշտ դժվար և վտանգավոր բան եղած է այս աշխարհիս մեջ։*

*Կարևորը այն է, որ այն տարրերը, որոնք մեղսակից չեն եղած կատարված հանցանքներուն մեջ, և որոնք բնական բարեկամներն են մեր երկրին, սխալ չի հասկնան մեր ընթացքը և զանազան դիտավորություններ չի վերագրեն մեզ։ Մենք իրապես և անկեղծորեն անկուսակցական հողի վրա կանգնած ենք, և մեր թերթը կը պաշտպանե միայն մեր պետության շահերը։ Մեր երկիրը ներում գործունեության մը թափին մեջ է, երկիրը կը վերականգնի և ժողովուրդը կը բարգավաճի, մեր առաջ կը բացվին շքեղ հեռանկարներ, շլացուցիչ ապագա, որը չէինք կարող նույնիսկ երազել։ Երկար կ՚ըլլար նամակով գրել, թե ինչ հույսեր կը դիմավորեն մեզ... Այդ բոլորը գիտնալով և ջերմ հավատքով լիքը կ՚ուզենք ամեն միջոցներով օժանդակել մեր պետության և պաշտպանել իր տեսակետները զանազան խնդիրներու մեջ, որովհետև* համոզված ենք*, որ այդ սանդուղներեն բարձրանալով պիտի հասնինք մեր գերագույն նպատակներուն։*

*Համոզված մարդիկ ընդառաջ կ՚երթան ամեն կարգի դժվարություններու և անախորժություններու, որովհետև այդ բոլորը ոչինչ են, եթե մեր աչքեն չի հեռանա մեր գերագույն նպատակը։*

*Մնաց, որ բացի դաշնակցական շրջանակներեն, ժողովուրդի բոլոր խավերը համախոհ են և համամիտ։ Չեք կրնար երևակայել այն խանդավառ նամակները, որ կ՚ստանանք ամեն կողմերեն։ Մեր մաքուր, հարազատ և աշխատավոր ժողովուրդը, ինչպես նաև մտավորականները, իրենց աչքը հառած են մեր երկրին։ Բոլոր կազմակերպությունները, գլխավորությամբ Բարեգործականին, իրենց ուժերը կը լարեն ի նպաստ*

երկրի շինարարական գործին։ Վստահ եմ, որ քիչ ատենեն արտասահմանի հայության նյութական և բարոյական աջակցությունը պիտի ստանան մեծ ծավալ և երկրի ժողովուրդը պիտի զգա, թե անոնք, որ զանազան պատճառներով հեռու են Հայաստանեն, հարազատ եղբայրներ են և մեկ նպատակ ունին։ Այն է՝ շենցնել և զարգացնել մեր երկիրը…

## ՊՐՈՄԵԹԵՈՍ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ

*Այդ շարժիչ ուժը որ միստիքական տարտամ տրամադրություն մը չէ, այլ էներկիա՝ որ կը կիրարկվի իրական և գործնական կյանքի մեջ. բեղմնավոր կը դարձնե ջանքերը, կը բազմապատկե մարդոց կորովը. [illegible] մը կուտա այն կամեցողություններուն, որոնք կրնային ցրվիլ, ծանծաղիլ և մղում կուտա ամենուն։ Իլյիչի պատգամները լենինիզմի օրինագիրքը կը կազմեն և անոնք կ՚ընդգրկեն գործունեության բոլոր ասպարեզները…*

*…Մեր ժամանակներու ամենեն հզոր և հավասարակշիռ այդ իմացականությունը, Լենին, իր արծվային ակնարկը խորասույզ է ներկայեն անդին և ի՞նչ ներկա, օրհասական և վճռական կռիվներով, լինելու կամ չլինելու պայքարներով ծանրաբեռն—և հաշվեր է ինչ որ տրամաբանորեն պիտի կատարվի գալիք օրերու, հաջորդող հանգրվաններու ընթացքին։*

*Լենինի գերմարդկային պայծառատեսությունը լույս կ՚արձակե ամեն ճամբաներու վրա. անիկա կարծես կանգնած է մարդոց անմատչելի գագաթի մը վրա և կը տեսնե պատմության ամբողջ բանորաման, համայնապատկերը, և ըստ այնմ կ՚արձակե իր անսխալական ցուցմունքները. այն կողմ վիհ մը կա, այստեղ խոչընդոտ մը, այն կողմ ճանապարհը բաց է, կարող եք հառաջանալ, այս կողմ՝ զգո՛ւյշ… պետք է դառնալ կողմնակի ճանապարհեն, չի դանդաղիլ այն ինչ կետին վրա…*

*Մեծապես հետաքրքրական է Հեղափոխության մյուզեն, ուր կը գտնենք համայնապատկերը անցյալ դարերու գյուղացիական շարժումներեն մինչև մեր ժամանակներու ըմբոստությունները և մեծ հեղափոխությունը, նկարներով, կենդանագիրներով, անտիպ և տպված վավերաթուղթերով և գաղտնի հրատարակություններու նմուշներով։ Ոչինչ չէ մոռացված, ոչինչ չէ զեղչված։ Ահա և հայ ազգային ու դասակարգային շարժումներու վերաբերյալ օրկաններ, նամակներ, հեղափոխական գործիչներու և հրապարակագիրներու պատկերներ, ձեռագիրներ Մ. Նալբանդյանեն մինչև Շահումյան։*

*Սուր հետաքրքրությամբ կը հետևիմ այն պատկերներուն և վավերա-*

թղթերուն, որոնք կը վերաբերին Հոկտեմբերյան հեղափոխության: Ահա այն Հեղափոխական Կոմիտեն որ վճռեց անցնիլ պայքարի, հեղափոխության իրականացմամբ: Ահա՛ դեմքերը անոնց որ բախտորոշ դերեր կատարեցին այդ փոթորկալի օրերուն: Եվ եղելությունները որոնք աշխարհս սարսեցին իր հիմունքներեն, Լենինկրատի և Մոսկվայի փողոցներուն մեջ՝ և ամենուրեք Լենինի դեմքը ինչպես գերագույն արտահայտություն հաղթական հեղափոխության…

Առաջին օրերը, երբ կը լսեի, ճակատ, հեղափոխական պայքար, պատերազմ, նվաճում, և այլ այս կարգի բառեր և որակումներ՝ շինարարական և մշակութային մարզերու մեջ կատարվող և կատարվելիք գործերու մասին, ինծի կը թվեր, որ անոնք փոխաբերական իմաստով գործածված հռետորական ձևեր են: Առավել ևս արտասահմանյան ընթերցողը կարող է ըմբռնել այդ պատերազմական բառերուն իսկական նշանակությունը:

Բայց անգամ մը որ իրականության հետ անձամբ հաղորդակցության մտա, շուտով ըմբռնեցի, որ խնդիրը հռետորական ձևերու վրա չէ, այլ իրական հեղափոխական կռիվի՝ որ կը տարվի երկու ճակատներու վրա:

Խորհրդային Միության պրոլետարիատը հաղթանակով վերջացուցեր է իր առաջին ճակատի կռիվը, ռազմական հեղափոխությունը և իշխանությունը ձեռք բերեր է. բայց անիկա դեռ կռիվ ունի մղելիք երկրորդ և երրորդ ճակատներու, շինարարության և մշակույթի ճակատներու վրա:

Ինչու՞ հեղափոխական պայքար շինարարական և մշակութային մարզերու մեջ: Որովհետև Խորհրդային երկրներու մեջ խնդիրը այն չէ, որ անսասան կանգուն մնացած հինի կողքին, դանդաղ աշխատանքով և անորոշ ժամանակներու ընթացքին, հուսացվի ձեռք բերել որոշ բարենորոգումներ որպեսզի աննկատելի կերպով առաջ գա հեղաշրջում երկրի տնտեսական կացության և արտադրող զանգվածներու մշակութային վիճակի մեջ:

Խորհրդային Միության մաս կազմող ամեն մեկ երկիր, թե՛ շինարարության և թե լուսավորության գործին մեջ պայքար է որ կը մղե: Չի կա արյունահեղ կռիվ, չի կա զեն ի ձեռին պատերազմ, բայց այն պայքարը, որ կը մղվի երկրորդ և երրորդ ճակատներու վրա բուռն և անհաշտ կռիվ է: Այսպես է և Խորհրդային Հայաստանի մեջ…

ԱՐՇԱԿ ԶՈՒՐԱԲՅԱՆ

# ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Դասակարգային կռիվը յուրաքանչյուր հասարակության զարգացման հիմնական ու անհրաժեշտ գործոնն է — ահա սոցիալ-դեմոկրատիայի գլխավոր թեզիսը։*

*Ըստ այդ հասարակության ռեալ ուժերը, զանազան տարրեր ու հաճախ միմյանց հակառակ դասակարգերն՝ իրենց շահերին պաշտպան հանդիսանալով, բնականաբար փոխադարձ կերպով շփվում են, կռվի են բռնվում։ Այդ կռվի ընթացքում առաջ են գալիս նոր և նոր ռեալ ուժեր, դասակարգեր, որոնք աճելով ու զարգանալով սկսում են նույնպես մասնակցել այդ կռվին։*

*Ուրեմն հասարակությունն յուր զարգացման ընթացքում վերլուծվում է մասերի կամ դասակարգերի և որքան նա կուլտուրական զարգացմամբ բարձր է, նույնքան էլ քանակով ու որակով մեծ է դասակարգերի թիվը և ուժը։*

*Այսպես՝ հասարակության զարգացման իսկական տենդենցիան ըմբռնելու համար անհրաժեշտ է նախ քննել այն ռեալ ուժերը և դասակարգերը, որոնք պատմական այդ մոմենտում գոյություն ունեն և հետո արդեն որոշել, թե այս կամ այն դասակարգը ինչ դեր է կատարում այդ կռվում և թե որ աստիճանի է լարված այդ կռիվը։*

*Այդ տեսակետից մեզ համար էլ անհրաժեշտ է դեթ համառոտ կերպով որոշել հասարակական այն ռեալ ուժերը, որոնք ներկայումս գոյություն ունեն Ռուսիայում և մեզ մոտ Կովկասում...*

*...Այսպես օրինակ, երբ Ռուսիայում բուրժուական միտքն ու գաղափարները դեռ նոր էին հասել իրենց զարգացման բարձր աստիճանին, այսինքն 60 թվականներին, Եվրոպայում բուրժուական շարժումը ընդմիշտ դադարել էր և առաջ էր եկել բանվորական դասակարգն ու նրա աշխարհայացքը։ Ո՞ւմ հայտնի չէ, որ 60 թվականները բանվորական*

շարժման համար ամենաչերմ ու եռանդուն ժամանակներն էին Եվրոպայում։ Ահագին բանակությամբ սոցիալիստական վարդապետություններ ունենալով, տապալվում էին և ժամանակակից սոցիալ-դեմոկրատիան սկսում էր հեղեղել բոլոր բանվորական կազմակերպությունները։ Սոցիալ-դեմոկրատիական գաղափարները մուտք գործեցին նաև Ռուսիա 60—70 թվականներին, այսինքն այն ժամանակ, երբ բուրժուազիայի ձախակողմյան իդեոլոգները բողոքում էին տիրապետող քաղաքական ձևի դեմ։ Ռուս հեղափոխականներն ընդունեցին և՛ իրացրին այդ գաղափարները, բայց որովհետև անհրաժեշտ էր նրանց կապել գոյություն ունեցող իրականության հետ, մի կերպ շահագործել, ստիպված եղան աղավաղել, նրանց էությունը ձևափոխել, որովհետև, ինչպես հայտնի է, զուտ սոցիալ-դեմոկրատիական աշխարհահայացքը չի կարող երբեք բուրժուական շարժման հիմքը կազմել։ Այսպես՝ մինչդեռ սոցիալ-դեմոկրատիան կազմում է քաղաքային ու գյուղական պրոլետարիատի առաջնակարգ մասը, նրա ավանգարդը և պնդում է, թե բանվոր դասակարգն ինքն է տանում յուր ազատության գործը, ռուսաց 70-ական թվականների հեղափոխականները գործում էին առանց որևէ դասակարգային խարսխության...

...Սոցիալ-դեմոկրատիական գաղափարները նորից մուտք գործեցին Ռուսիա և վերջնականապես հաստատվեցին միմիայն 80-ական թվականների կեսից։ Այդ հաջողության պատճառը բուրժուազիան էր, որ արագ կերպով զարգանալով ջարդում ու փշրում էր բոլոր պատնեշները, խորտակում ու տապալում էր նախկին սոցիալ-տնտեսական ձևերը և ամենուրեք տարածում էր յուր ազդեցությունն ու ուժը։ Բուրժուազիայի զարգացման հետ կից սկսեց արագ զարգանալ և բանվոր դասակարգը, բուրժուազիայի գոյության այդ անհրաժեշտ ու թշնամի տարրը։ Այս երկու դասակարգերի շահերի հաճախակի շփումից առաջ եկավ իրերի մի այնպիսի դրություն, որտեղ սոցիալ-դեմոկրատիական գաղափարները մեծ և արդյունավետ գործադրություն էին գտնում։...

Գալով Կովկասին մենք նկատում ենք, որ վերոհիշյալ երևույթները գոյություն ունեն և մեր իրականության մեջ։ Մեր բուրժուազիան ավելի թույլ է զարգացած, քան Ռուսիայինը, որովհետև մենք համեմատաբար ավելի հետամնաց ենք ռուս հասարակությունից։ Սակայն նույն երևույթները կրկնվել են և մեզ մոտ Կովկասում։ Մեր բուրժուազիան դեռ սաղմական դրության մեջ էր, երբ գրականության և հրապարակախոսության մեջ սկսվեց բուրժուական-ազատամտական հոսանքը։ Բավական է հիշել, որ Կովկասի բուրժուազիան դեռ չէր հասել զարգացման այն աս-

տիճանին, որի վրա էր ֆրանսիական բուրժուազիան 1789 թ., երբ նա առաջացրեց մեծ հեղափոխությունը, այնինչ բուրժուական ազատամտական գաղափարները շնորհիվ Եվրոպայի լուսավորության և գլխավորապես ռուսական 40-ական թվականների նույնանման շարժման ասպարեզ եկան մեզ մոտ գրականության և հրապարակախոսության մեջ դեռ 50—60-ական թվականներին։ Խաչատուր Աբովյան, Ստեփանոս Նազարյան, և վերջապես Գրիգոր Արծրունի—ահա ձեզ բուրժուական ազատամտական շարժման գլխավոր առաքյալները։ Այդ շարժումը մի մեծ ծառայություն մատուցեց ազգային ինքնաճանաչության զարգացմանը և նվիրեց ազգին շքեղ գրականության ու բանաստեղծության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպես են՝ Րաֆֆի, Պռոշյան, Շիրվանզադե, Պատկանյան, Սմբատ Շահազիզ և այլն։ Սակայն գաղափարները զարգանում էին ավելի արագ, քան ինքը կյանքը։ 70-ական թվականներին ռուսաց բուրժուական միտքը հասել էր զարգացման ամենածայրահեղ աստիճանին և սկսել էր արդեն հեղափոխական շարժումը... Այս հանգամանքը շատ լավ հասկանալով, մեր ինտելիգենցիայի մի մասը բնականաբար սկսեց շահագործել այդ գաղափարները ռուսական իրականության մեջ և միանալով ռուս հեղափոխականների հետ ընդմիշտ մնաց Ռուսիայում, իսկ մյուս մասը մնալով Կովկասում և լավ ըմբռնելով այն ճշմարտությունը, որ ժամանակակից կյանքը ոչ մի ասպարեզ չի ներկայացնում այդ գործունեության համար, սկսեց այլ ասպարեզներ որոնել։ Թուրքական դեպքերը նպաստեցին այդ որոնումներին և որոշ ելք տվին այդ գաղափարների եթե ոչ իրականացմանը, գոնե գործադրությանը։ Ռուս-տաճկական պատերազմը նոր չէր վերջացել, և հայ հասարակությունը սթափվել էր յուր խոր քնից ու սկսել էր զբաղվել յուր տաճկահայ եղբայրների գոյության հարցով։ Բուրժուական ազգային ինքնաճանաչությանը այդ պատերազմը մեծ զարկ տվեց, և ռուս հեղափոխականների գաղափարակից հայ երիտասարդները սկսեցին խմբեր ու կուսակցություններ կազմակերպել Տաճկահայաստանում ազգային ինքնավարություն ստանալու նպատակով։ Այսպիսով սկսվեց հայկական շարժումը, որ մինչև օրս էլ շարունակվում է։ Սակայն գաղափարները սլանում, արագ ընթացք էին առնում և փոփոխվում էին։ Եվրոպայի սոցիալ-դեմոկրատական շարժումը մեծ ազդեցություն ունեցավ մեզ վրա և մուտք գործեց և մեր գաղափարական աշխարհը, սակայն Կովկասի կյանքում գործադրություն չգտնելով, նա անցավ դեպի այն ասպարեզը, որտեղ արդեն ծածանվում էր հեղափոխական դրոշակը և որովհետև այդ աշխարհահայացքը չէր կարելի առանց աղավաղելու ծառայեցնել բուրժուական գաղափարներին, ապա-

տի առաջ եկավ էկլեկտիզմ, այսինքն գաղափարների խառնուրդ։ Այս բանը շատ պարզ կերպով նկատվում է Դաշնակցության ծրագրի մեջ[1], որտեղ բուրժուական մտքերին ու պահանջներին կից կան և քաղվածքներ Մարքսի «Կոմունիստական մանիֆեստ»-ից և Էնգելսի «Գիտական սոցիալիզմ»-ից։

Բուրժուական պահանջներն ու գաղափարները վերջ ի վերջո հաղթությունը տարան և սոցիալիզմը մտնելով դռնից, վռնդվեց պատուհանից։ Հետաքրքիր է, որ «Հնչակ»-ը[2] երկար ժամանակ աշխատում էր պահպանել յուր սոցիալ-դեմոկրատական կուսությունը, որը նրա և «Դրոշակ»-ի[3] միմյանց դեմ մղվող անընդհատ կռիվների գլխավոր պատճառն էր։ ...Դաշնակցությունը... ոչ թե իրականությունը զոհեց գաղափարին, այլ ընդհակառակը, այս վերջինը ձևափոխեց ու հարմարեցրեց իրական կյանքի պահանջներին։ Եվ այսպիսով, յուր գաղափարները ձևելով, կրճատելով ու լրացնելով, վերջ ի վերջո դարձավ մի էկլեկտիկ հոսանք։...

Կովկասյան բուրժուազիայի արագ զարգացման շնորհիվ մեզ մոտ շատ շուտ զարգացավ և բանվոր դասակարգը։ Դորան շատ մեծ չափով նպաստեցին երկաթուղիների ցանցը և Բաքվի նավթարդյունաբերությունը։ Առաջինի շնորհիվ Կովկասում համեմատաբար կարճ ժամանակամիջոցում սկսեց զարգանալ արդյունաբերությունը և սրան կից բանվոր դասակարգը։

Կովկասի սոցիալական կազմը հենց այս դրության մեջ էր, երբ այստեղ ասպարեզ եկավ զուտ սոցիալ-դեմոկրատական աշխարհահայացքը։ Իհարկե մենք հեռու ենք այն մտքից, թե մեր գաղափարները մեր բանվոր դասակարգի արդասիքներն են։ Սակայն պետք է նկատել, որ ժամանակակից պայմանները անկասկած նպաստավոր են նրանց տարածման ու զարգացման համար։ Կովկասը արդեն անպայման կապիտալիստական ճանապարհի վրա է կանգնած և, իբրև հետամնաց երկիր, ահագին արագությամբ առաջ է ընթանալու այդ ուղղությամբ։ Այդ իսկ պատճառով մեր, այսինքն՝ Կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի դերը ավելի ես ծանրանում է, որովհետև մենք գործ պիտի ունենանք չկազմակերպված, դեռ ինքնաճանաչության զարգացման անհրաժեշտ աստիճանին չհասած մասսաների հետ։

Անցյալ տարիների փորձը մեզ հույս է ներշնչում, որ սոցիալ-դեմոկրատիան մեծ հաջողություն է ունենալու այդ գործում։ Բավական է հիշել, որ նա յուր դեռ մանուկ հասակում ամենահաջող կերպով գործադուլներ է առաջացնում և, որ գլխավորն է, նա փայլուն կերպով

*հաջողացրեց 1901 թ. ապրիլի 22-ի ցույցը Թիֆլիսում, ներկա տարվա ցույցերը Բաքվում և Բաթումում, բանվորների գրավոր բողոքը Կովկասը Ռուսիայի հետ միացնելու հարյուրամյակի առիթով և այլն։*

*Մեր շարքերը դեռ սակավաթիվ են, բայց մենք համոզված ենք, որ մոտիկ ապագայում մեր բանակը կկրկնապատկվի և կ՚եռապատկվի, չնայելով պատնեշներին ու խոչընդոտներին, որ մենք պիտի հանդիպենք ռուսաց կաշառակեր կառավարության կողմից։ Սիրում ենք հուսալ, որ մեր գաղափարներին արձագանք են տալու Կովկասի հեռավոր լեռներն ու հովիտները, որովհետև նրանք, որոնք անդադար միջոցներ են որոնում ներկա հասարակական բազմաթիվ չարիքների ու հակասությունների դեմ, չեն կարող օրգանապես չզբաղվել այն գիտական վարդապետությամբ, որը պնդում է, թե միմիայն ժամանակակից բանվոր դասակարգն է մեզ փրկելու այս բոլոր ախտերից ու տանելու դեպի համամարդկային փայլուն ու վսեմ իդեալը։ Ուրեմն կեցցե բանվոր դասակարգը. սա է յուր ուսերի վրա տանում ազատարար ծանր խաչը. կեցցե սոցիալ-քաղաքական կռիվը, սա է մարդկության ազատության միակ միջոցը...*

ԲՈԳԴԱՆ ԿՆՈՒՆՅԱՆՑ

# ՆՈՐ ԹԱԼԱՆ

*Մինչև այժմ չտեսնված երևույթներ են տեղի ունենում մեզ մոտ. ամենախուլ վայրերից լուրեր են գալիս կառավարության հետ զինված ընդհարումների մասին, մասսայական ցույցերի, միտինգների և այլնի մասին։ Գրեթե ամեն օր երևան են գալիս ժամանակավոր կազմակերպություններ, որոնք նպատակ են դնում այս կամ այն ձևով դիմադրություն ցույց տալ կառավարությանը։ Անիրազեկ ընթերցողն անգամ, որը իրադարձություններին ծանոթ է միայն կառավարական հաղորդագրություններից, պետք է ըմբռնի, որ հեղափոխական փոթորիկը ընդգրկել է Անդրկովկասը։*

*Մինչև այժմ ամեն տեսակ «խռովարարությունից» զերծ մնացած ամենախուլ անկյուններում անգամ այդպիսի միահամուռ մասսայական բողոք առաջացրած ամենամերձավորագույն պատճառն այս տարվա հունիսի 12-ի ցարական հրամանագրի հրատարակումն էր հայկական եկեղեցական գույքը կառավարության տնօրինությանը հանձնելու մասին[1]։ Բայց սխալ կլիներ ենթադրել, թե միայն այդ օրենքը ընդունակ էր այդպիսի փոթորիկ առաջացնել։ Մշակութային խաղաղ հիմնարկների սիստեմատիկ հետապնդումները, տխրահռչակ «ռուսականացման քաղաքականությունը», 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը. բարեգործական հիմնարկների գործունեության սահմանափակումը, հրատարակչական ընկերության փակումը և մի ամբողջ շարք նման այլ միջոցառումներ հայ բնակչության և կառավարության միջև կամաց-կամաց ստեղծում էին խիստ հակամարտություն, որը վաղ թե ուշ պետք է պայթեր։ Բայց վերջին միջոցառումը, ինչպես և նախորդները, կարող էր մնալ առանց բացահայտ հեղափոխական բողոքի, եթե չլիներ բանվորական զանգվածների հերոսական պայքարը կովկասյան արդյունաբերական կենտրոններում, որը ամբողջ երկրամասին ցույց տվեց, որ ինքնա-*

կալության դեմ պետք է և կարելի է պայքարել։ Մի ամբողջ շարք հաջող ցույցերը, մասսայական լայն ագիտացիան, վերջապես, այս ամառվա նշանավոր ընդհանուր գործադուլները[2] խիստ հեղափոխականացրին բնակչության բոլոր խավերին։ Ահա ինչու հայ բնակչությունը, որը անտրտունջ տանում էր մի ամբողջ շարք բռնություններ, այժմ խստորեն բողոքեց թագադրված ավազակի նոր գիշատչության դեմ և զենքը ձեռքին սկսեց պաշտպանել իր իրավունքները։ Արդեն մոտ վեց տարի է (1898 թվականից), ինչ կառավարությունը փայփայում էր այդ օրենքը, բայց, երկյուղ կրելով Կովկասում հնարավոր խռովությունից, ինչպես ցույց է տալիս մինիստրների կոմիտեի հրապարակած գաղտնի փաստաթուղթը, ձգձգում էր դրա հրատարակումը։ Այժմ, նկատի ունենալով հեղափոխական շարժման ուժեղ աճը, ցանկացավ ահաբեկել բնակչությանը, որպեսզի արմատում խեղդի ամեն մի «խռովարարություն», բայց ստացվեց բոլորովին հակառակը…

Առաջին արյունահեղ ընդհարումը ցարական բաշիբոզուկների հետ տեղի ունեցավ Ելիզավետպոլում[3]։ Օգոստոսի 29-ին մի վիթխարի բազմություն, ազդանշանով հավաքվելով թեմական առաջնորդի տեղապահի տան շուրջը, պահանջեց, որ նա բողոքի և ոչ մի դեպքում գույքը չհանձնի։ Բազմությունը բաղկացած էր գլխավորապես գործակատարներից, արհեստավորներից, բանվորներից և սովորող երիտասարդներից։ Այդպիսի հուզումների արդեն պատրաստ ադմինիստրացիան շտապեց դեպքի վայրը ներկայանալ պահնորդներով, կոզակներով և երկու վաշտ զինվորներով։ Զորքի ժամանումը խիստ գրգռեց հավաքվածներին. լսվեցին կրակոցներ, և առաջին գրոհի ժամանակ կոզակները ետ շպրտվեցին քարերով։ Զինվորները կրակ բաց արին։ Դեպքի վայրը ներկայացավ փոխ-նահանգապետ Անդրեևը, այն օպրիչնիկներից մեկը, որոնցով այնքան լի է նահանգական ադմինիստրացիան։ Ականատեսների վկայությամբ, նա սեփական ձեռքով գնդակահարեց մի երիտասարդ հայի, որը նրան անվանել էր սրիկա և կողոպտիչ։ Սպանվեց տասը մարդ, վիրավորվեց մոտ 70, որոնցից մոտ 20-ը արդեն մահացել են. սպանվածների մեջ կան երեխաներ։ Սպանված ու վիրավորված պահնորդների ու կոզակների թիվը ճիշտ հայտնի չէ։ Շատ ձերբակալություններ են կատարվել։ Ոստիկանապետը լավ հարստացավ այդ ձերբակալություններից. իբր կասկածի պատրվակով նա կալանավորում էր ունևոր մարդկանց և ապա խոշոր կաշառքներով ազատ արձակում։ Ձերբակալվածների մեջ կան նաև հոգևոր անձինք։ Չնայած կառավարության ձեռնարկած միջոցներին (այդ օրերին հայերին արգելված էր հեռանալ Ելիզավետպոլից), Ելիզավետ-

պոլլյան սպանդի մանրամասնությունները հասան մինչև Թիֆլիս և հուզեցին ողջ բնակչությանը։...

Նույն բնույթի ընդհարումներ, ինչպիսիք եղել էին Ելիզավետպոլում, Թիֆլիսում և Բաքվում[4], տեղի են ունեցել նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Շուշիում և մի քանի գյուղերում։ Ամենուրեք ժողովուրդը ցարական չինովնիկներին դիմավորում էր զենքը ձեռքին, ամենուրեք տեղի էին ունենում ընդհարումներ զորքերի հետ, և յուրաքանչյուր քաղաքի դեպքերի մանրամասն նկարագրությունը խիստ երկարացներ թղթակցությունը։...

Թե այդ բոլոր դեպքերը ինչով կվերջանան, դժվար է ասել։ Համենայն դեպս, հավանաբար, դեռ երկար է տևելու կողոպտված ժողովրդի այդ համառ պայքարը, ժողովուրդ, որի համբերության բաժակը լցվել է։ Կովկասի ներկայիս իրադարձությունների արդյունքներից մեկը հեղափոխական գիտակցության աճն է, խուլ գյուղերում անգամ ինքնակալության նկատմամբ անհաշտ թշնամական տրամադրության աճը։ Անլեգալ գրականությունը խլխլելով է վաճառվում։ Բոլոր վայրերից միութենական կոմիտեն ստանում է ագիտացիոն գրականության պահանջ։ Այդ դեպքերի ժամանակ մեր թռուցիկները թափանցել են Կովկասի բոլոր անկյունները, որտեղ միայն կա հայ բնակչություն, և մոտ ժամանակում մեզ կհաջողվի կազմակերպել այնտեղ մեր խմբակները։

## ԴԱՏ ԴԱՏԻ ԴԵՄ

... Իսկ ինչպիսի՞ դրության մեջ եք գտնվում դուք, պրպ. դատավորներ, որ մտադիր եք դատել ինձ այն բանի համար, ինչ այժմ ամբողջ ժողովուրդն է պահանջում, որի համար մեղադրյալների աթոռին է հարկավոր նստեցնել ազգի բոլոր կուլտուրական տարրերին։ Տարօրինակ դրություն է, այդպես չէ՞։ Բայց ձեզ է՛լ ավելի շատ տարօրինակ կթվա ձեր սեփական դրությունը, եթե դուք ուշադիր նայեք մեղադրանքի էությանը։ Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի մերձավորագույն խնդիրներից մեկն է պայքարը գոյություն ունեցող քաղաքական ռեժիմի դեմ՝ նպատակ ունենալով ոստիկանական-բյուրոկրատական ինքնակալությունը փոխարինել հետևողական դեմոկրատիզմի վրա հիմնված իրավական կարգով։ Մեր կուսակցության ահա այդ քաղաքական խնդրի համար էլ դուք, պրպ. դատավորներ, ինձ նստեցրել եք մեղադրյալների աթոռին։ Պ-ն դատախազը հատուկ ջանասիրությամբ ընդգծում էր թռուցիկի վերջին՝ իբրև կոչ հնչող տողերը, որը վերջանում էր «Կորչի՛ ինքնակա-

լությունը» բացականչությամբ։ Բայց հիմա ո՞վ չի բղավում «Կորչի՜ ինքնակալությունը»։ Մեր հայրենիքում կա՞ արդյոք գեթ մի ազնիվ մարդ, որը չհասկանար, թե ինքնակալության ոչնչացումը միայն մեր երկիրը դուրս կբերի այն փակուղուց, որի մեջ ներքաշվել է բյուրոկրատիայի գիշատչական քաղաքականության հետևանքով, և զարկ կտա նրա կուլտուրական ուժերի հետագա զարգացմանը։ Հիշեցեք, թե ինչպես վերջերս, բժիշկների Պիրոգովյան բազմամարդ համագումարում՝ միաձայն ընդունվեց մի բանաձև՝ անհապաղ սահմանադիր ժողով հրավիրելու անհրաժեշտության մասին, թե ինչպես կոնսերվատորիայի դահլիճը, նույնիսկ «Մոսկովսկիե վեդոմոստի»-ի հաշվետվություններով, թնդաց «Կորչի՜ ինքնակալությո՜ւնը» բացականչություններից։ Հիշեցեք, թե վերջին ամիսներին ինչ էր տեղի ունենում Ռուսաստանի բոլոր քաղաքներում՝ և այն ժամանակ դուք կհասկանաք, որ այժմ ամբողջ Ռուսաստանը համակված է մի անհաղթահարելի ցանկությամբ՝ որքան կարելի է շուտ տապալել ժողովրդի օրգանիզմին հյուծած, առանց բացառության բոլորի կողմից ատելի այդ բարբարոսական ռեժիմը, հնարավորություն տալու համար ազգի ստեղծագործական ուժերին՝ ազատորեն ստեղծել քաղաքական նոր ձևեր, որոնք ավելի են համապատասխանում իր պահանջմունքներին։ Մենք գտնվում ենք ահեղ, մեծ իրադարձությունների նախօրյակին։ Պետերբուրգի պրոլետարիատի հերոսական ելույթից հետո, համառուսաստանյան հեղափոխական գործադուլներից հետո, բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների միահամուռ քաղաք-գործադուլներից հետո, չդադարող ագրարային հուզումներից հետո, վերջապես, կրթված հասարակության մինչև այդ իներտ կանացի խավերն ընդգրկած շարժումից հետո ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ինքնակալության օրերը հաշված են։ Մեկ-երկու ամսից հետո ժողովրդական հեղափոխության ահեղ ալիքը վերջնականապես կոչնչացնի մեր բարբարոսական անցյալի այդ վերապրուկը։ Եվ ի՞նչ իմաստ ունի, պրն. դատավորներ, ձեր այս ամբողջ դատը։

Այն ժամանակ, երբ հեղափոխական հրդեհը համակել է ամբողջ երկիրը, դուք ժողովրդի միջից խլում եք պատահականորեն ձեր ձեռքն ընկած մարդուն այնպիսի լրջությամբ, որ ավելի լավ կիրառման է արժանի, դատաստան եք տեսնում նրա հետ։ Չէ՞ որ, եթե դուք հետևողական լինեիք, պետք է մեղադրյալների աթոռին նստեցնեիք ամբողջ ռուս ժողովրդին և հարյուր հազարավոր պրոլետարների, որոնք պահանջում են հրավիրել սահմանադիր ժողով, և տասնյակ հազարավոր մտավորականների, որոնք պաշտպանում են նրանց այդ պահանջը։ Մեծ

*Հարց է, թե այդ ժամանակ ո՞վ կլիներ մեղադրյալ և ո՞վ՝ դատավոր։ Ինչ առայժմ չէր խանգարի, որ դուք լավ մտածեիք այն բանի մասին, ինչ մտադիր եք անել։ Սակայն մեր դատարանի դրության ողբերգականությունը միայն դա չէ, այլ նաև այն, որ, կոչված լինելով պաշտպան կանգնել մեր քաղաքացիական օրենքներին, նա ի վիճակի չէ ոչ պաշտպանել դրանք, և ոչ էլ կիրառել... Մեր դատարանը վստահություն չունի, որ այն դատավճիռները, որ նա կայացնում է, կարող են կատարվել, և որ նրա ամբողջ աշխատանքը չի դառնա ժամանակի դատարկ վատնում։ Վերցնենք, թեկուզ, քր. օրենսգ. 126 և 129 հոդվածների ճիշտ իմաստով, որոնցով դատախազը մեղադրում է ինձ, ես պետք է կամ մինչև 8 տարով աքսորվեմ տաժանակրության կամ բնակության հավիտենական աքսորի։ Իսկ ծիծաղելի չէ՞ արդյոք, պրն. դատավորներ, այժմ խոսել այդպիսի դատավճիռների մասին։ Մի՞թե ձեզանից որևէ մեկը կարող է լրջորեն մտածել, որ ինքնակալությունը կարող է դիմանալ ոչ միայն 8, այլ նույնիսկ 1—2 տարի։ Իբրև չար հեգնանք չի՞ հնչում արդյոք օրենքի պահանջը՝ ուղարկել հավիտենական աքսորի, երբ ձեզանից ոչ ոք վաղվա համար չի կարող երաշխավորել։ Ամբողջ Ռուսաստանը ալեկոծվում է ու եռում. այսօր չէ, վաղը ոչ մի կառավարությունից, ոչ դատական որոշումների ու դատավճիռների ամբողջ հնոտիքից ոչինչ չի մնա, և, նրանք, ովքեր այժմ նստած են ձեր մեղադրյալների աթոռներին, այն ժամանակ կդառնան նորացած Ռուսաստանի եռանդուն գործիչներից մեկը։ Եվ ինչպե՞ս եք դուք, պրն. դատավորներ, կարողանում լրջորեն զբաղվել նման բաներ քննելով։ Համաձայնեք, պարոնայք, որ արդեն վաղուց անցել է այն ժամանակը, երբ կարելի էր միամտորեն երազել, թե ժողովրդից խլելով ազատության առանձին մարտիկների, հնարավոր է կանգնեցնել հեղափոխական շարժումը։ Այժմ ամբողջ ժողովուրդն է դարձել հեղափոխական, իսկ ժողովրդին դեռ ոչ մի դատարան չի համարձակվել դատել։ Այդպիսի դատերը սովորաբար շատ ողբալիորեն են վերջանում դատավորների համար...*

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԹԱՆՈՒՄ Է

### I

*Հեղափոխությունն ընթանում է, ոչ ոք ի վիճակի չէ կասեցնելու այն։*

*Դեռ չորեքշաբթի օրը հեռագիրը բերեց մի լուր, որ ամբողջ փոստհեռագրական Ռուսաստանը գործադուլ է արել։ Երկար ժամանակ լուռ էին կապիտալիստական պետության այդ սարուկները, մի պետություն,*

որը նրանց շահագործում էր ամեն մի ֆաբրիկատիրոջից ու գործարանատիրոջից էլ վատ։ Երկար ժամանակ նրանք լուռ ու անտրտունջ իրենց կաշվե պայուսակների տակ ճկված ու իրենց սեղանների կողքին նստած կորցնում էին իրենց առողջությունը, երիտասարդությունը, կյանքի լավագույն ժամերը։ Կոպիտ ղեկավարները, տաժանակիր աշխատանքը, աղքատիկ աշխատավարձը, սովյալ ծերության հեռանկարը՝ ահա շահագործողներից ամենավատի՝ պետության այդ ստրուկների ճակատագիրը։

Ոստիկանական պետությունը ոչ միայն շահագործում էր նրանց աշխատանքը, այլև ստիպում էր նրանց որպես գործիք ծառայել հետախուզության ձեռքին, ստիպում էր հետևել թղթակցություններին, բացել ուրիշների նամակները, լինել պահնորդական բաժանմունքի անազատ ծառաները։

Հեղափոխական պրոլետարիատը, որը ահեղորեն բարձրացրել է պայքարի դրոշը շահագործման բոլոր տեսակների դեմ, իր ետևից տարավ նաև հեռագրատների ծառայողներին։ Վախեցած, երկչոտ, լռակյաց ստրուկներից, որոնք դողում էին իրենց պետերին տեսնելիս, նրանք դարձել են համարձակ քաղաքացիներ, ազատության համար պայքարող մարտիկներ։

«Այլևս չենք ցանկանում ստրուկներ մնալ»,— լսվում է հառաչանքը տառապյալ կրծքից։ «Մենք կնվաճենք իսկական ազատությունը»,— համարձակ հայտարարում է փոստ-հեռագրատների միության Պետերբուրգի կոմիտեն և գործադուլի կոչ անում բոլոր ընկերներին։

Հեղափոխական պրոլետարիատը կարող է միայն ողջունել ազատության համար, ավելի լավ կյանքի համար պայքարող մարտիկների նոր ջոկատի, հին վարչակարգի այդ նոր գերեզմանափորների այդ առաջին ելույթը։ Ավելի՛ համարձակ, նոր ընկերներ, դուք բոլորից ուշ մտաք պայքարի ասպարեզ, ուրեմն աշխատեցեք ապագայում լինել առաջին շարքերում։

Իսկ դուք, պ. Վիտտե և Ընկ., արթո՛ւն մնացեք։ Որքան կարելի է շուտ հրամանագրեր, շրջաբերականներ, կարգադրություններ հրատարակեցեք ձերբակալությունների մասին, մանիֆեստներ հորինեցեք։ Գուցե, մի նոր ջոկատ ևս նետեք մեր շարքերը։

Ձեր աշխատանքի համար ձեզ շնորհակալություն կհայտնի ռուսական մեծ հեղափոխությունը։

## II

...Հեղափոխական բանակը անժխտելի ուժ է, դեմոկրատական Ռուսաստանը՝ փաստ է, ուրեմն զարմանալի ինչ կա, որ բոլորը նրան են հարում, բոլորն ուզում են իրենց բախտը կապել դեմոկրատիայի, և միայն դեմոկրատիայի հետ։

Հեղափոխությունն ընթանում է, ընթանում է անկասելիորեն։

Օրեցօր աճում է հին վարչակարգի թշնամիների թիվը։

Եվ գյուղացիությունը, և բանակը, և չինովնիկությունը, և ոստիկանությունը՝ բոլորը ներգրավվում են ազատագրական շարժման մեջ, բոլորն էլ փորում են հին վարչակարգի գերեզմանը։

Իսկ պ. Վիտտեն և Ընկ. անվերջ հրամանագրեր ու հրամանագրեր են գրում...

Գուցե նրանք է՞լ գործադուլ կանեն։

Չէ՞ որ այժմ դա «խելացի մարդու» համբավը փրկելու լավագույն միջոցն է։

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

# ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻՆ
# ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

(«Հոբելյանական ճառ»)

*Երբ մի ժողովուրդ գտնվում է աննորմալ քաղաքական ու հասարակական պայմաններում, նա ծնում է իր միջից դժգոհ տարրեր, որոնք կռիվ են հայտարարում տիրող կարգերին։ Նայած ժամանակի և տեղի պայմաններին, այդ կռիվը կարող է տարվել երբեմն խաղաղ ու օրինական, երբեմն արմատական հեղափոխական միջոցներով։ Համենայնդեպս երկու եղանակն էլ ցանկալի են, երկու տեսակի կռիվն էլ առաջադիմական է, եթե կռվողները չեն դադարում կռվողներ լինելուց, եթե նրանց հաջողվում է հարվածներ հասցնել հին կարգերին և ազատ քարոզել նորերը։ Բայց այնպիսի երկրներում, ինչպիսին է Ռուսաստանը, միայն բացառիկ պատմական մոմենտներ են լինում, երբ լիբերալ ազատամիտ կուսակցությունը կարող է առաջադիմական կուսակցություն լինել։ Այդպիսի մոմենտներ էին, ի միջի այլոց, 40-ական ու 60-ական թվականները Ռուսաստանում։ Բելինսկին ու նրա ընկերները կարողացան այնքան նշանավոր դեր կատարել ռուսաց կյանքում, որովհետև նրանք հնարավորություն ունեին, շնորհիվ մի քանի պատմական հանգամանքների, հարվածելու ճորտատիրական կարգերը և ազատության գաղափարներ պաշտպանելու լեգալ գրականության միջոցով...*

*Չնայած իրենց համեմատական ազատության, 40-ական, 60-ական թվականների գրողները չէին բավականանում միայն լիբերալ գործունեությամբ, միայն լեգալ գրականությամբ։ Երբ նրանք չէին կարողանում տպագրել տալ այն, ինչ-որ ուզում էին ասել ռուս հասարակությանը, նրանք դիմում էին ազատ մամուլին։ Այդպես էին անում Բելինսկին, Պիսարևը, Չերնիշևսկին—40-ական ու 60-ական թվականների այդ հսկաները...*

... Մեր կարծիքով, նա՝ ով ուզում է, որ հայ ժողովուրդը գրականություն ունենա՝ նա պիտի ամենից առաջ կռիվ հայտարարի այն պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդի, այդ հասարակական օրգանիզմի ազատ, բնական զարգացումը. նա պիտի աշխատի այնպիսի պայմաններ ստեղծել, որ ժողովրդի միջից դուրս եկող մարդիկ—ռաֆֆիները ու շիրվանզադեները անհատներ չլինեն, այլ խմբեր, մասսաներ:— Մի երկրում, որտեղ չկա խոսքի ու մտքի ազատություն, որտեղ ժողովուրդը շնորհիվ տիրող պետական քաղաքականության՝ աղքատ է ու տգետ, և քաղաքակրթության բարիքները վայելելու արտոնությունը պատկանում է միայն փոքրաթիվ ապահով դասակարգին, որտեղ օրենքի տեղ տիրում է ցենզուրական կամայականությունը,— երբեք չի կարող իր կոչմանը ծառայող, հասարակական-ժողովրդական գրականություն լինել:....

Մի երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեղ բռնություն ու կամայականություն է տիրում,— այնտեղ կուլտուրական գործունեությունը այն շինությունն է, որ կառուցվում է ավազի վրա: Կբարձրանա հողմը, կթափվի հեղեղը, և կտեսնվի՝ մեծ ջանքերով ու զոհաբերություններով կառուցված այդ շինությունը, կքանդվի, և այդ դեռ բավական չէ—իր փլատակների մեջ նա կթաղի բազմաթիվ զոհեր:

Երբ հին ժամանակներում կուլտուրական մի ժողովրդի դեմ հարձակվում էին գործում բարբարոսները—կոտորելու, սրի անցկացնելու բոլորին, երբ վտանգված էր լինում այդպիսով ժողովրդի ֆիզիկական գոյությունը, այդ ժողովրդի բոլոր չափահաս անդամները, բոլոր ֆիզիկապես հասունացած մարդիկ թողնում էին իրանց պաշտոնները, գիտությունները, արհեստները, վաճառականությունը... և զենք էին վերցնում հայրենիքի անկախությունը պաշտպանելու համար: Իսկ երբ մի երկրում տիրում է քաղաքական բռնակալություն, երբ վտանգվում է մի ժողովրդի հոգեկան, կուլտուրական կյանքը, այնտեղ բոլոր մտավոր չափահասները, բոլոր հոգեպես հասունացած մարդիկ զինվոր են գրվում իրանց հայրենիքին, կյանքի և մահու կռիվ են հայտարարում ժողովրդի դահիճների դեմ:...

## ՍԿԻՏԱԼԵՑ. ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԵՐԳԵՐ, ՀԱՏ. I, ՍՊԲ, 1902 Թ.

*Սկիտալեցի պատմվածքներն ու բանաստեղծությունները, որոնք տպագրվել են պարբերական գրականության մեջ և այժմ լույս են տեսել առանձին հրատարակությամբ, ուրախալի երևույթ են...*

*Սկիտալեցը իր տաղանդի չափով, իհարկե, զիջում է Մ. Գորկուն, բայց նա լրացնում է այն ակորդը, որ վերցրել է Մ. Գորկին։ Նա նույնպես բացահայտում է կյանքի ընթացքից դուրս մնացած, ճակատագրի հարվածներից տառապող մարդկանց կյանքը... Այդ մարդիկ չեն երգում, ընդհակառակը, կորցնելով այն ամենը, ինչը որ տալիս է, այսպես կոչված, քաղքենիական երջանկությունը, նրանք համարձակորեն նայում են կյանքին, երկյուղ չեն կրում նրանից։ Մերժելով կյանքի հարմարությունները, նրանք, ազատները, ծաղրում են կյանքի սարսափից ճորտացած և ճնշված մարդկանց։*

*Սկիտալեցին խորթ չէ նաև քնարականությունը, բայց նրա քնարականությունն առանձնահատուկ է, կայտառ, վեհացնող, առաջացնող։ Նա լալիս է* իսկական *արցունքներով, և նրա այդ արցունքները եռանդը չեն թուլացնում, չեն հուսալքում։ Նա անցել է կյանքի քառուղիներով և տեսել նրան իրականում, չզունազարդված։ Սկիտալեցը երգում է կարիքի մասին, այն մասին, որ մարդիկ դժբախտ են, երգում է նա ոչ որպես հայեցող, կյանքից հեռու կանգնած, այլ որպես նույն այդ կյանքից կործանված, կյանքից ու մարդկանցից խաբված, որպես արտախտական հոգու տեր մի մարդ, որը չի կարող հաշտվել ստորության հետ։*

*«Շարքի միջով»... պատմվածքում Սկիտալեցը երևակայության ուժով և գրելու ձևով Մ. Գորկուն չի զիջում։ Հերոսի հետ միասին դուք էլ անցնում եք զրկանքներով ու վիրավորանքներով, հիասթափություններով ու տառապանքներով լի կյանքի քառուղիներով։* Եվ, չնայած դրան, դուք չեք վախենում հերոսի համար, զգում եք, որ նրանում ոգին առույգ է, որ նա հոգով արի է և հուսահատությունից ձեռքերը չի ծալի: *«Շարքի միջով» պատմվածքի հերոսը ամբողջ կյանքում երջանկություն է որոնել և հավատացել է, որ ամեն ինչ կգնա «հալած յուղի պես»։ Նա ճորտ է եղել և մինչև հատակը ըմպել է կյանքի դառը բաժակը։ Նա ստրկական աշխատանքի մեջ է եղել նաև ֆաբրիկայում, զինվոր էլ է եղել։ Ծառայության ընթացքում նա զրկվել է ձիուց, իսկ այդ պահին հենց վրա է հասել ազատությունը։ Եվ նա գնացել է որոնելու իր երջանկությունը, որոնելու «ազատություն և լույս»։ Կյանքը ծաղրել, վիրավորել է*

նրան, թուք ու մուր է շպրտել նրա վրա, բայց... նրա հոգին չի աղարտել. այն մնացել է պայծառ, ամրակուռ, կենսուրախ։ Իր կրած ամեն ինչի համար նա հատուցում ուզեց և բաց ճակատամարտի ելավ։ Վերցրեց նա իր տավիղը և իր որդուն ու գնաց թափառելու քաղաքից քաղաք, ֆաբրիկաններում, պանդոկներում, առնավաճառներում։ Եվ ի՞նչ գտավ, կհարցնենք մենք՝ երջանկությու՞ն ու լու՞յս...

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ

«Եվ այնուամենայնիվ այն շարժվում է»,— ասաց գիտնական Գալիլեյը. ոտքի կանգնելով ծնկաչոք տեղից, այն բանից հետո, երբ սուրբ ինկվիզիցիան նրան ստիպեց հանդիսավոր կերպով հրաժարվել արևի շուրջը պտույտի վերաբերյալ ուսմունքից։ «Եվ շարժվում է որոշակի ուղղությամբ»,— կարող էր ավելացնել ռուսական հասարակական կյանքը դիտող ամեն մի ուշադիր մարդ, տվյալ դեպքում օգտագործելով Գալիլեյի նշանավոր արտահայտությունը։

Երբ վերնախավերում իրադարձությունները տեղի են ունենում գլխապտույտ արագությամբ, երբ այստեղ երեկվա հաղթողները այսօր պարտված են դուրս գալիս, իսկ երկչոտ թշնամիները ուրախ հոգեհաց են տալիս ընկածների ոսկորների վրա, և միտքը հրաժարվում է այդ երևույթի բնական հիմնավորում գտնել,— ապա այնտեղ, խորքում, պրոցեսը կատարվում է թեպետև դանդաղ, բայց անդադար ու անշեղ, մեկ անգամ նշված գծով, յուրովի կլանելով ու վերամշակելով բոլոր երևույթները, մարտնչող ուժերի բոլոր գործողությունները։ Նույնիսկ այդ պրոցեսին թշնամի ուժերի գործողությունները, որոնց ամբողջ գիտակցական ջանքերը ուղղված են այն բանին, որպեսզի արգելակեն, կանգնեցնեն այդ պրոցեսը, նա կարողանում է հարմարեցնել իրեն, կարողանում է դրանցից այնպիսի եզրակացություններ անել, որոնց ամենից քիչ էին սպասում դրանց ստեղծողները։

Հասարակական ուժերի տեղաշարժման պրոցեսը, որը վաղուց արդեն սկսվել էր և առանձնապես սուր բնույթ էր ընդունել վերելքի ժամանակաշրջանում, շարունակվում է և այժմ, չնայած հաղթողներն անում են ամեն բան, որպեսզի ետ շրջեն պատմության անիվը։

Նա չարությամբ ծիծաղում է պատմության այսօրվա կերտողների վրա. և, «Պիկովայա դամա»-ի պառավի նման[2], խառնում է խաղաթղթերը և տուզի փոխարեն նրանց ձեռքն է տալիս իր չարախնդորեն ժպտացող դիմանկարը։ Նրանց բոլոր ձեռնարկումները, որոնք, իրենց

կարծիքով, պետք է ամրապնդեին իրենց դրությունը, վերածվում են սեփական հակադրության։ Նույնիսկ նոյեմբերի 9-ի օրենքը[3] այդ հենարանը, որի վրա կանգուն է մնում իշխող դասակարգերի ամբողջ քաղաքականությունը, հանդարտեցման փոխարեն գյուղ է ներմուծում հետագա է՛լ ավելի խիստ շերտավորում, դասակարգային շահերի սրում, գյուղացիության ուժեղացված պրոլետարացում և հետևաբար՝ է՛լ ավելի խիստ, սուր ու գիտակցական դասակարգային պայքար։ Նոյեմբերի 9-ի օրենքը գուցե ավելի շատ, քան տարիների ագիտացիան ու պրոպագանդան, կպարզի գյուղացու գիտակցությունը և նրան կստիպի ավելի վճռականորեն հանդես գալ ի պաշտպանություն իր շահերի՝ խերն ու շառը հասկանալով, հազարավոր հարուստ կուլակներին ու ցեցերին զատելով միլիոնավոր աղքատացած սեփականատերերից, վերջիններից բռնությամբ խլելով հողը և նրանց դուրս անելով գյուղից, նա խորացնում և լայնացնում է այն պրոցեսը, որը վաղուց արդեն կատարվում է գյուղում, և մի քանի անգամ արագացնում է այն ուժի ստեղծումը, որի հետ ու հետու ապագայում ստիպված կլինեն բախվել իշխող դասակարգերը։...

Բանվոր դասակարգը, որը ճզմված էր ուշքի եկած և կազմակերպված կապիտալի երկաթե ճիրաններում, մեկը մյուսի ետևից արագորեն կորցնում է վերջին տարիների բոլոր նվաճումները։ Հեռու չէ այն ժամանակը, երբ ցնծություն ապրող հաղթողը բանվոր դասակարգին կհասցնի այն վիճակին, որի մեջ նա գտնվում էր հասարակական վերելքի նախօրյակին, և նրա դրությունը կդառնա անտանելի։ Պայքարի տարիները այստեղ էլ անհետք չեն անցել, իրենց դասակարգային շահերը գիտակցելու, պայքարի ճիշտ և հուսալի մեթոդները գիտակցելու պրոցեսը շատ խորն է թափանցել, ընդգրկել է պրոլետարիատի լայն մասսաներին, և ապագայում նա զերծ կլինի անցյալի շատ սխալներից։

Բուրժուազիան, որը և՛ դժկամում է, և՛ ինքնագոհ կերպով հանդարտ է, որը, ինչպես իրեն է թվում, ձեռք է բերել այն ամենը, ինչի մասին նա երազել կարող էր միայն, իհարկե, չի հրաժարվի գործելակերպի այն եղանակից, որով նա վաղուց առաջնորդվում էր։ Չնայած նրա առանձին խմբերի միջև եղած բոլոր ընդհարումներին ու թյուրիմացություններին, վճռական պահին նա հանդես կգա որպես մի ամբողջություն, որպես ամենամոտ ապագայի տեր ու տիրակալ, որպես հոգատար տնատեր, որը ամենից շատ հոգ է տանում իր տան խաղաղության, անդորրի և կարգ ու կանոնի մասին։ Թո՛ղ հիմա նա ստիպված լինի կրելու մի շարք գուցե և շատ զգալի անհարմարություններ։ Թո՛ղ նրան

նույնիսկ տեր չճանաչեն։ Նրան արհամարհեն։ Թո՛ղ։ Բայց հո ամեն ինչ խաղաղ է ու հանգիստ, իսկ նրա հասանելիքը իրենից չի գնա, նա համոզված է դրանում, քանի դեռ նա հաշվում է իր եկամուտները, կաշխատի բազմապատկել դրանք, քանզի հարմար է նաև ծածուկ կերպով ժողովրդի գրպանը մտնել։

Կալվածատեր ազնվականությունը, որը կյանքի բարձունքներում տիրում է ամբողջ իշխանությանը, ապրում է իր փառքի և ուժի վերջին օրերը։ Անողորմ պրոցեսը վաղուց արդեն նրան մահվան է դատապարտել, և որքան էլ հանգամանքների բախտական զուգադիպումը նրան առաջ քաշի, որքան էլ նրան մի պահ բարձր դնի,— նրա նշանակությունը, նրա տեսակարար կշիռը հալչում է ոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ, և հեռու չէ այն ժամանակը, երբ նա անփառունակ կերպով հետին պլան կմղվի։ Վերջին ժամանակներս կալվածատիրական հողի մոբիլիզացումը ոչ միայն կանգ չի առել, այլև աճել է չտեսնված չափերով։ Վերջին երեք տարիներին գյուղացիական բանկի կողմից գնված երեք միլիոն դեսյատինը ամենևին էլ չի արտահայտում հողի այն ամբողջ քանակը, որ գնացել է կալվածատերերի ձեռքից։ Նույն բանկի խորհուրդը թույլատրել է գնել մոտ 6 մլն. դեսյատին, իսկ չէ որ կա նաև մասնավոր վաճառք։ Ազնվականության միակ հենարանը դուրս է պրծնում նրա ոտքերի տակից, և շուտով նա կկախվի օդում։ Եվ նա իր դասակարգային հոտառությամբ գիտակցում է դա, իզուր չէ, որ նա այդպես վայրագություն է անում և՛ Պետական դումայում, և՛ ամենուրեք, որտեղ երևվում է, իզուր չէ, որ որպես նրա պարագլուխ հանդես է գալիս Պուրիշկևիչը, իսկ որպես գլխավոր կողմնակից ու պաշտպան՝ Ռուս ժողովրդի միությունը[4] և սևհարյուրակային հրոսակախմբերը։

Պատմական պրոցեսը անշեղորեն ընթանում է, նա փորում է մի խոր անանցանելի անդունդ, որի մի կողմում իրենց ուժերն են կենտրոնացնում ամեն տեսակի ու կատեգորիայի բուրժուազիան ու կալվածատեր ազնվականությունը, մյուս կողմում՝ հողից զրկված գյուղացիությունն ու պրոլետարիատը։ Այդ ուժերի ընդհարումը անխուսափելի է՝ ինչպիսի պահպանական միջոցներ էլ հորինվեն կյանքը տնօրինողների կողմից։

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ը

Երեք տարի է անցել այն ժամանակվանից, երբ հոկտեմբերի 17-ի օրը դարձավ նշանակալից օր ամբողջ Ռուսաստանի համար, վիթխարի պայքարի, մեծ պարտությունների, լուսավոր հույսերի ու դառը հիաս-

թափությունների երեք տարի։ Դրանք արյունով ընդմիշտ կնքվեն պատմության մեջ և խոր, անջնջելի հետք կթողնեն ժողովրդի կյանքում, երկար ժամանակ որոշելով նրա հետագա զարգացումը։

Երկար և դժվարին ճանապարհով էր նախապատրաստվում 1905 թվականի հոկտեմբերի 17-ը։ Ամբողջ տասնամյակների ընթացքում տեղի էր ունենում ռուսական կյանքի դարավոր հիմքերի կործանման ուժեղ աշխատանք։ Կապիտալիզմը, ոչնչացնելով բնատնտեսության հիմքերը, աննկատելիորեն խլում էր կյանքի նախկին անբաժան տերերի ոտքի տակի հողը, պատմության ասպարեզ մղելով մի նոր ուժ՝ երիտասարդ բուրժուազիային։ Եվ որքան ավելի առաջ էր գնում երկրի արդյունաբերական զարգացումը, այնքան ավելի համարձակ էր դառնում բուրժուազիան, այնքան համառ ու բարձրաձայն էին դառնում նրա պահանջները։ Բայց հին կիսաֆեոդալական ազնվականությանը դուրս մղելով իր «բնածին» դիրքերից, նրա տեղը կանգնեցնելով բուրժուազիային, արդյունաբերական զարգացումը մյուս բևեռում ստեղծում էր նրա անհաշտ թշնամուն՝ պրոլետարիատին, որին վիճակված է ապագայում դառնալ նրա գերեզմանափորը։ Երևան գալով բուրժուազիայի հետ միասին, պրոլետարիատը անհապաղ դաժան պայքարի բռնվեց նրա հետ, և սկզբից ևեթ բուրժուազիան ընկավ երկու կրակի միջև։ Հակառակորդի վրա հարձակվելով ճակատից, դուրս մղելով նրան դիրքերից, նա միշտ էլ երկչոտությամբ ետ էր նայում, ետ մղելով և կանգնեցնելով գրոհող պրոլետարիատին, ժամանակ առ ժամանակ հարձակումներ կատարելով նրա դեմ։ Դրության այդ երկվությունը ինքնին որոշեց ռուսական բուրժուազիայի ամբողջ տակտիկան, ամբողջ վարքագիծը, այդ դրությունը նրան ստիպեց լինել անվճռական, կիսատ-պռատ, ամեն րոպե պատրաստ զինադադար կնքելու ռազմաճակատի թշնամու հետ և նրա հետ միասին ընդհանուր ուժերով հարձակվելու թիկունքի թշնամու վրա։

Իննհարյուրական թվականները՝ ժողովրդական կարիքի սրման տարիները, կյանքի անկոնտրոլ տերերի տիրապետությամբ ստեղծված հին կարգերի վերջնական կրախի տարիները, ներքին անկարգությունների և արտաքին պարտությունների տարիները երկիրը կրախի հասցրին։ Նա կանգնած էր ընտրություն կատարելու առաջ՝ ռեֆորմներ կամ կործանում։ Տարբեր դասակարգերի ու խմբերի պայքարը հասավ ծայրահեղ լարման, ճնշված դասակարգերը պրոլետարիատի գլխավորությամբ ասպարեզ ելան ու տիրաբար պահանջեցին փոփոխել անցյալը։

Բուրժուազիան դեսուդեն էր ընկնում։ Վախենալով բաց թողնել իր իշխանությունը վերջնականապես ամրապնդելու համար մոմենտը, նա

վճռականորեն ոչ մի կողմ չէր անցնում, բայց է՛լ ավելի շատ վախենալով պրոլետարիատից, իր ուժերը գործադրում էր շարժումը հանդարտեցնելու և թուլացնելու համար։ Պայքարը բորբոքվում էր, ժողովուրդն իր շեշտակի գրոհի ընթացքում ոչնչացնում էր բոլոր արգելքները, և կառավարող դասակարգերը պետք է զիջեին — հրապարակվեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։ Բուրժուազիան երևակայեց, որ ինքը հասել է իր ուզածին, ամրապնդել է իր իշխանությունը, ճանաչվել է կյանքի իրավահավասար տեր, և իսկույն երբ նա կտրուկ փոխեց ֆրոնտը, իր բոլոր ուժերով, իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով հարձակվեց ժողովրդի ճնշված խավերի և ամենից առաջ պրոլետարիատի վրա։

Հետագա երեք տարիները հանդիսանում են անընդհատ դավաճանությունների ու մատնությունների, արյունալի դատաստանների ու անօրինակ ճնշման ժամանակամիջոց, դաժանություններով ու ճնշման ձևերով միմյանց գերազանցող մոտ անցյալի թշնամիների սերտ դաշինքի ժամանակամիջոց։ Կապիտալի և իրավազրկության կրկնակի մամլակներով ճզմված ժողովուրդը արնաքամ էր լինում, նրա ջղաձգական շարժումները ավելի ու ավելի թույլ են դառնում և ավելի ու ավելի քիչ են անհանգստացնում ու հուզում նոր հաղթողներին։ Նրանք լիակատար գոհունակությամբ կարող են ասել, թե հանգիստ վիճակ է սկսվել։

Շիպկայում ամեն ինչ հանգիստ է[5]։

Բայց... ելնում են հին ուրվականները։ Բուրժուազիան այնքան էլ ճիշտ չկշռադատեց և չափազանց շատ զիջումներ արեց իր նոր դաշնակցին։ Ուրախացած լինելով կյանքի տերերի հետ մի շարքում կանգնելու, ազնվականության հետ իշխանությունը բաժանելու հնարավորությամբ, նա մոռացավ երկրի մասին, արդեն մի անգամ երկիրը կործանման եզրին հասցրած կարգերը փոփոխելու անհրաժեշտության մասին և ձեռք չբերեց նույնիսկ այն փոքրաթիվ բարելավումները, որոնք անհրաժեշտ են նրա սեփական հետագա գոյության համար։ Նախկին խոցերը մնացին ոչ միայն չառողջացած, այլ նույնիսկ չբուժված և առաջվա նման շարունակում են մաշել ժողովրդի մարմինը։ Կործանման ահեղ ուրվականը նորից ծառանում է երկրի առջև։

Քայքայված գյուղացիությունը առաջվա նման շարունակում է բնաջնջվել սովից։ Բանվորները տնքում են կապիտալի երկաթե թաթի տակ, որը ձգտում է վրեժ լուծել նրանցից՝ վերջերս կրած իր վախի համար, ետ խլել մոտ անցյալի զիջումները, և մասսայաբար ինքնասպան են լինում՝ սովամահությունը կանխելու համար։ Երկիրը տեղական

իշխանությունների հայեցողությանը հանձնած ռազմական և ամեն տեսակ այլ բացառիկ կանոնադրությունները այն բաժանել են հարյուրավոր անկախ մարզերի՝ իրենց սեփական օրենքներով ու կարգերով, կանգնեցնելով, իսկ տեղ-տեղ վերջնականապես խեղդելով առևտուրն ու արդյունաբերությունը։

Գործադրկության բոլոր սարսափներով ժողովրդին ծվատող արդյունաբերական ճգնաժամը հյուծում է ժողովրդի առանց այն էլ թույլ վճարողական ուժերը։ Ավելի ու ավելի աճող ծախսերը, որոնց հսկայական մասը գործադրվում է անպետք և վնասակար մեքենայությունների վրա, հասցնում են նորանոր փոխառությունների, որոնք որպես նոր բեռ ընկնում են ժողովրդի ուսերին։ Երկրում բռնկած և հազարավոր զոհեր տարած խոլերան լրացրեց քայքայման պատկերը, և, վերջապես, արտաքին դեպքերը նորից դրսևորեցին մեր ամբողջ թուլությունը, ամբողջ ոչնչությունը հարևանների աչքում... Հին ուրվականները նորից ելնում են...

Բայց անտանելի տառապանքների և անհամար զոհերի երեք երկար տարիները անհետևանք չանցան։ Եթե բուրժուազիան, թերևս ավելի լավ, քան որևէ ուրիշը, իր ժամանակին հաշվի առավ Արևմտյան Եվրոպայի դասերը և օգտագործեց դրանք, ապա դեռ մինչև այժմ էլ չանցած արյունոտ տանջալից մղձավանջը շատ բան է սովորեցրել ժողովրդի բոլոր խավերին, շատ պատրանքներ է թաղել անդառնալիորեն։ Պրոլետարիատը, որը հարկադրված էր շատ բան անել իրադարձությունների անխուսափելի ընթացքով, ամենամեծ վրդովմունքի ժամանակ ևս զգաստորեն էր նայում իրերի վրա և նախազգուշանում էր ավելորդ հրապուրանքներից։ Եվ այն ժամանակ նա ամենից առաջ ելնում էր ուժերի հարաբերակցությունից, կանխատեսում էր բուրժուազիայի դավաճանությունը, ամենուրեք մերկացնում և հետապնդում էր նրան։ Իսկ այժմ, զինված անցյալ տարիների հարուստ փորձով, այրած և տառապանքով ձեռք բերած փորձով, նա կարող է իրեն շատ սխալներից պաշտպանված համարել ապագայում։

Նա արդեն սկսել է հաշվի առնել ձեռք բերված փորձը։ Հազիվ կարողանալով ետ մղել իր վրա տեղացող հարվածները, նահանջելով ամրապնդված հակառակորդի հանդեպ, նա եռանդով ձեռնամուխ է լինում դասակարգային կայուն կազմակերպությունների ստեղծմանը, հիշելով, որ պայքարի մոմենտին նրա վրա շատ է անդրադարձել այդ կազմակերպությունների բացակայությունը։

Թշնամին քնած չէր, նա զգաց վտանգը և այդ կողմն ուղղեց իր

*ուժերը։ Պրոլետարական կազմակերպությունների ջախջախումն ու հետապնդումը դարձավ կառավարող դասակարգերի ամենագլխավոր խնդիրներից մեկը. խիստ պատիժները տեղում էին, ինչպես առատության եղջյուրից։ Սկսվեց ուժեղ պայքար. և ներկա պահին այդ պայքարը գտնվում է իր ամենաեռուն շրջանում։*

*Այդ պայքարը թաքուն է, անտեսանելի, ոչ այնպես մեծաղմուկ ու ցայտուն, ինչպես գրոհի ու հարձակման ժամանակաշրջանի պայքարը, բայց այնուամենայնիվ այն նույնպես համառ է ու դաժան, ինչպես և մյուսը, որ ամենագլխավորն է, այն նույնպես կարևոր է ու անհրաժեշտ։ Ներկայումս պրոլետարիատը դնում է իր դասակարգային կազմակերպության ամուր ֆունդամենտը, կազմակերպություն, որը նրան հնարավորություն կտա ապագայում հաղթական պայքար մղելու և վերջնական հաղթանակ տանելու։*

*Հին ուրվականներն իրենց ամբողջ սոսկալի այլանդակությամբ ելնում են ժողովրդի առջև, որը հմտացել է անցյալ տարիների փորձով, պրոլետարիատի առջև, որը փորձում է օգտագործել իր փորձը, և նորից նրա առջև դնում են ահեղ հարցը...*

## ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

*Մաքսիմ Գորկին ռուս բանվորների սիրելին է։ Եվ դա միանգամայն հասկանալի է։ Դուրս գալով ժողովրդական «ներքնախավերից», ինքնուս-գրող, նա իր մեջ զարգացրել է գեղարվեստական մեծ տաղանդ։ Ապա հասնելով գրական փառքի բարձունքներին, դառնալով պաշտոնական ընթերցող հասարակության կուռքը, նա իր բնական զարգացման ընթացքով եկավ բանվորների մոտ, որոնց նա բերեց իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, դարձավ նրանց երգիչն ու կենցաղագիրը։*

*Մաքսիմ Գորկին երբեք չի գտնվել կյանքի ներկա տերերի բանակում, երբեք չի եղել «ցնծացողների, լեզվագարների» շարքերում։ Սակայն մինչև 1905—1906 թվականները, իր դեռևս չձևավորված, վարդագույն, դեմոկրատական-բունտար տրամադրությամբ, իր «բանաստեղծական մրրկահավի» հատկությամբ, նա կարող էր սիրելի լինել մեզ մոտ «հասարակական կարծիք» ստեղծող պաշտոնական (այսինքն՝ բուրժուական) ինտելիգենտական հասարակության կողմից։ Բայց երբ Գորկին ներկվեց վառ կարմիր գույնով և երես դարձրեց բուրժուական հասարակությունից, դրանց թվում նաև իր արհեստակից գրողներից,*

որոնք այդ ժամանակամիջոցին կորցրել էին ամեն մի հակում անգամ դեպի վարդագույնը,— այն ժամանակ Գորկին իսկույն նրանց աչքում գրկվեց իր հմայքից: Երեկվա երկրպագուների սերը փոխարինվեց սառնությամբ, դժգոհությամբ, անգամ ատելությամբ դեպի նա: Ներկայումս դուք չեք գտնի ոչ մի, այսպես կոչված, «առաջադիմական» թերթ, մայրաքաղաքի կամ գավառական, որ ժամանակ առ ժամանակ, այս կամ այն ձևով, գիտակցաբար կամ անգիտակցորեն, վրիժառու չլիներ Գորկուց, նրա համար, որ նա երես է դարձրել «հասարակությունից» և գնացել բանվորների մոտ: Եվ միջոցների մեջ առհասարակ խտրություն չդնող բուրժուական մամուլը այդ դեպքում կանգ չի առնում հաճախ ամենաանթույլատրելի պրիոմների առաջ, որպեսզի վրեժխնդիր լինի իր երեկվա սիրելիից...

Որպիսի՜ ապտակ է Ստարցևի և նրա նման ասպետների համար Գորկու վերջին հոդվածը «Ինքնուս գրողների մասին», տպված «Современный мир»-ի փետրվարի համարում[6]:

Հայտնի է, որ որքան ավելի էր Գորկին անհաճելի դառնում տիրող տարրերի համար, բուրժուական ինտելիգենցիայի համար, այնքան ավելի մոտ ու թանկարժեք էր դառնում բանվորների համար, պրոլետարական ինտելիգենցիայի համար, «դեմոսի» համար առհասարակ: Հազարավոր թելեր ձգվում էին գիտակից կյանքի համար արթնացող, «ժողովրդի ծոցից ելած» գրականությամբ հետաքրքրվող մարդկանց սրտերից դեպի իրենց պանծալի եղբայրակիցը՝ ինքնուս-գրող Մաքսիմ Գորկին: Ով կարիք էր զգում արտահայտելու իր զգացմունքներն ու խոհերը մտերիմ մարդու առաջ, ում մեջ ցանկություն էր հղանում գրել որևէ բան, փորձել իր բախտը գրականության մեջ, նրան էր ուղարկում իր ձեռագիրը, նամակները, բանաստեղծությունները: Գորկու թղթակիցների մեջ դուք կհանդիպեք բանվորների, գյուղացիների, կոշկակարների, դռնապանների, կառապանների, խոհարարուհիների, սպասուհիների, պոռնիկների, խնձորավաճառների, լվացարարուհու, գերեզմանապահի, զինվորի, աքսորականի, տաժանակիրների և այլն և այլն: Եվ նրանց բոլոր գրվածքները, ինչպես երևում է հոդվածից, Գորկին խնամքով ու զարմանալի սիրով և ուշադրությամբ կարդում է և ուսումնասիրում: Նա գրագրություն ունի նրանցից շատերի հետ, խորհուրդներ է տալիս նրանց, երբ նրանից խնդրում են, ասում է, թե ով ինչպիսի գրքեր պետք է կարդա, ինչպես գրել, ինչ անել: Հոդվածի յուրաքանչյուր տողից երևում է հեղինակի զարմանալի նուրբ, ազնիվ հոգին, լցված անսահման սիրով դեպի «սարսափելի կյանքի մարդիկ», ինչպես ինքն է

արտահայտվում նրանց մասին։ Ռուս, համենայնդեպս ժամանակակից, գրականության մեջ մենք չգիտենք մի այլ գրողի այդ աստիճանի բարոյապես նրբազգաց ու մաքուր, ինչպիսին Գորկին է։ Հարկավ, մենք այդ ասում ենք ոչ միայն վերոհիշյալ հոդվածի հիման վրա, այլ նկատի ունենալով նրա բոլոր գրվածքները, նրա ամբողջ գրական գործունեությունը…

Եվ բանվորները հպարտությամբ կարող են հայտարարել. «Այո՛, Գորկին մե՛րն է. նա մեր արվեստագետն է, մեր բարեկամն ու զինակիցը՝ աշխատանքի ազատագրության վեհ պայքարի մեջ»։

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԸ

… Բանվորական թերթի լույս տեսնելու առաջին իսկ օրերից նրա վրա կախվեցին «կյանքի տերերի» բոլոր արհավիրքներն ու շանթերը։ Չկա՛ն այնպիսի հալածանքներ, չկա՛ն այնպիսի «օրինական» և կամայական պատիժներ, որոնց չենթարկվեր բանվորական մամուլը…

«Կյանքի տերերը» և՛ վախենում են բանվորական մամուլի այդ աշխատանքից, և՛ խեղդում ու սպանում են իրենց համար սարսափելի այդ «հրեշին»։ Բայց, ինչպես հեքիաթային հրեշը, աճում և ամրապնդվում է բանվորական մամուլը։ «Կտրված գլխի»—ոչնչացված թերթի փոխարեն նորերն են աճում և շարունակում բարձրաձայն խոսել կյանքի անարդարության մասին, ճնշումների ու կամայականության մասին, այն մասին, որ անհրաժեշտ է է՛լ ավելի համախմբվել, է՛լ ավելի մերձենալ բանվորական խոսքի շուրջը և այն պաշտպանել ինչ կերպ էլ որ լինի…

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

## ԴԱՐՁՅԱԼ ԱՄՆԻՍՏԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Պետական դումայի՝ առաջին խոսքը, առաջին պահանջը ամնիստիան էր...

Այդ պահանջը հզոր արձագանք գտավ ռուսական ժողովրդի լայն խավերում: Պրոլետարիատը—ժողովրդի ազատության գործում այդ անձնազոհ մարտնչողը—շատ քաղաքներում դուրս եկավ փողոց, համարձակ և հրամայողաբար ազատություն պահանջեց այն «գերիների» և «պատանդների» համար, որոնք տանջվում էին քայքայվող ռեժիմի բանտերում:

Բայց ի՞նչ է նշանակում ամնիստիա:

Արդյո՞ք դա ընդհանուր ներման, գթության կամ սիրո մի ակտ է:

Արդյո՞ք դա ձիթենու ճյուղ է հաշտության. որով պիտի մոռացվեր անցյալը, ծանր արյունոտ անցյալը, ինչպես ճգնում են համոզել մեր «կադետների» հռետորները:

— Ո՛չ և ո՛չ:

Ամնիստիան, որը «խաղաղ հեղափոխականները» աշխատում են ձեռք բերել մեռնող ռեժիմից սակարկությամբ, այն ամնիստիան, որը ուզում են ստանալ ինքնակալ կառավարությունից լոկ համոզումներով և ճարտարախոս պատճառաբանություններով, կլիներ ֆեոդալ-դասային կամքի պարտություն, կնշանակեր առանց կռվի զիջել առաջին դիրքը. կնշանակեր, որ հետագա նահանջումները հեռու և անկարելի չեն...

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԼԻՔԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է

Եռում է կյանքը, և հեղափոխության ուժերը գնալով խտանում են...

Ռուսաստանից մեզ հասնող վերջին լուրերը ցույց են տալիս, որ

հեղափոխական ոգին նորից բարձրանում է. բարձրանում է նորից ժողովրդական վրդովմունքի ալիքը ավելի սպառնալից ու ահարկու, քան նոյեմբերյան ու դեկտեմբերյան[1] օրերում... Պրոլետարիատը, հոգնած անցյալ տարվա միայնակ կռվից — ուզում է կանգնել նոր ուժերով և պատրաստվում է «ցանկալի, վճռական մարտին»։ Սոված ու քայքայված գյուղացիությունը գնալով լցնում է հեղափոխական շարքերը։ Բայց թշնամին նույնպես քնած չէ. իր անօրինության, բռնության ու կողոպուտի դրոշակի շուրջը նա խմբում է իր բոլոր հետևորդներին, բոլոր «իսկական ռուս մարդկանց», բոլոր ոստիկանական տանջարանի «պատրիոտ»-ներին, բոլոր քրիստոնասեր «խարազանողներին», պարտաբույծներին ու պետական գրամագողերին...

Ամբողջ երկիրը գնալով բաժանվում է երկու բանակների. երկու թշնամի՝ զորախմբերի — դեմոկրատիայի և աբսոլյուտիզմի, հեղափոխության և հակահեղափոխության։ Պետական դուման, որ ստեղծվեց ու կանչվեց ցարիզմի կողմից ազատագրական շարժման ազդեցության տակ, որպես հակահեղափոխական քայլ, որպես փորձ[2] խաբելու արթնացող և իր ուժը զգացող մեծ ժողովրդին — բզկտվում է ձեռքերի հոսանքներից, լայնածավալ Ռուսաստանի այս ու այն կողմը ծագող փոթորիկներից. որոնք ահավոր որոտ ու մռնչյուն են սկսում բարձրացնել մայրաքաղաքների ծայրերում, գործարաններում, զավոդներում։ Պետական դուման, որ փորձում էր հաշտեցնել անհաշտելին. որ ցանկանում էր պայմանակցություն կայացնել կառավարության հետ ժողովրդական ազատության հաշվին, կորցնում է ժողովրդի վստահությունը։ Այն սահմանադրական ցնորքները և խաղաղ պառլամենտական կռվի հույսերը, որ նա սկզբում առաջացրեց — այժմ լիովին խորտակվեցին իրականության ձեռքով։ Հոսում է Ռուսաստանի քաղաքացիների արյունը, ազատության մարտիկները հյուծվում են բանտերում ու աքսորավայրերում և նրանց թիվը գնալով մեծանում է ու մեծանում... Իսկ «կադետների»[3] մեծամասնությունը Դումայում զբաղված է շաղակրատությամբ և արդեն պառլամենտական կրետինիզմով վարակվելու նշաններ է ցույց տալիս։

Աշխատավորների խմբակը[4] սկսում է, վերջապես, ժողովրդի ներկայացուցիչների իսկական լեզվով խոսել։ Ընդհարումներն արդեն բռնկում են նրանց և բուրժուական «ժողովրդական ազատության» կուսակցության մեջ և մոտ է ուղղակի ու անխուսափելի խզումը։ Երկու աշխարհները կանգնած են դեմառդեմ և ոչ «կադետ»-ները, և ոչ էլ մեր «Ֆրանկֆուրտյան խոսարանը»[5] չեն կարող լուծել նրանց վեճը... Այդ

վեճը լուծվելու է Դումայից դուրս, փողոցում, որտեղ կովի հեգեմոնիան պատկանում է գիտակից պրոլետարիատին և հեղափոխական գյուղացիությանը։

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Հետազոտելով և քննելով մարդկության էվոլյուցիան, անալիզ անելով ներկա հասարակության կապիտալիստական կարգը և ըմբռնելով դասակարգային կովի իսկական իմաստը—մենք կտեսնենք, որ սոցիալ-դեմոկրատիան ամենից շատ և ամենազորեղ կերպով շահագրգռված է կուլտուրական, սոցիալական հարցերի լուծման մեջ։ Ժամանակակից հասարակության սահմաններում պրոլետարիատի շահերը, ձգտումները համապատասխանում են, իրենց օբյեկտիվ նշանակությամբ, հասարակական, ընդհանուր մարդկության զարգացման, առաջադիմության։

Այդ նկատի ունենալով, սոցիալ-դեմոկրատիան այս կամ այն դիրքն է բռնում կուլտուրական-սոցիալական հարցերում։

Բուրժուական հասարակության մեջ ամեն բան դառնում է ապրանք, ծախու և առնելու առարկա[6] և այդ կանոնին ենթարկվում են ո՛չ միայն նյութական՝ ձեռքով շոշափելի իրերը, այլ և մտավոր, ո՛չ նյութական բաները, գիտություն, տաղանդ, շնորհք և այլն։

Իզուր են մեր գիտնականները, գրողները, նկարիչները մեծ-մեծ խոսում իրանց «ազատության» մասին, իզուր են իրանք իրանց բարձր դասում «շուկայից»։ Նրանք բուրժուազիայի ծառաներն են և իրանց գործունեությունը համակերպում են բուրժուազիայի պահանջներին և ճաշակներին...

Սոցիալ-դեմոկրատիան, կովելով պրոլետարիատի շահերի համար, առաջ տանելով նրա դասակարգային պայքարը, հենց դրանով իսկ օրհասական կռիվ է մղում ամեն տեսակ դասակարգային բաժանման դեմ, ամեն տեսակ ճնշման և հարստահարության դեմ։...

## ՈՒՐՎԱԳՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Որքան էլ որ դա տարօրինակ լինի, բայց տեղական ռուսական մամուլը վատատեղյակ է Կովկասում բնակվող բազմաթիվ ազգությունների հասարակական կյանքից և նրանց միջավայրում տեղի ունեցող տարբեր գաղափարական հոսանքների պայքարից։ Մինչդեռ՝ տեղական ժողովուրդների կյանքի և նրան հուզող բոլոր կենսական հարցերի, կա-

րիքների և պահանջների անհրաժեշտ արտացոլումը տեղական ռուսական մամուլի ամենահրամայական խնդիրներից մեկն է։ Նրանց կյանքի այդպիսի՝ քիչ թե շատ լիակատար արտացոլումը, նրանց կարիքների և պահանջների այդօրինակ լուսաբանությունը, հարկավ, sine ira et studio[7] անպայման կարող է նպաստել այդ ժողովուրդների փոխադարձ մերձեցման, նրանց իրար հասկանալուն և, վերջապես, կարող է ցրել մարդատյացության այն մշուշը, որով մամուլի օրգաններից մի քանիսն այնպիսի՜ մեծ եռանդով պատում են ռուս ընթերցող մասսայի աչքերը։

Պարտավորություն ստանձնելով «Новая Речь»-ի էջերում նրա ընթերցողներին իրազեկ դարձնելու Կովկասի ազգություններից մեկի, այն է՝ հայերի կյանքի մասին,— մենք, իհարկե, կաշխատենք տալ այդ կյանքին ըստ հնարավորության լրիվ և անաչառ լուսաբանություն։ Սրանով մենք չենք ուզում ասել, թե մենք չունենք որևէ որոշակի աշխարհայացք, չունենք որոշակի մեթոդ՝ ուսումնասիրելու և արժեքավորելու համար ինչպես «նյութական», այնպես էլ «գաղափարական» կարգին պատկանող հասարակական երևույթները։ Մենք միայն ձգտելու ենք, որ հայերի հասարակական կյանքի այն հոսանքները և հայացքները, որոնց մենք համակիր չենք և որոնք մենք նույնիսկ դատապարտում ենք,— մեր տեսությունների մեջ լուսաբանված լինեն հնարավորին չափ լրիվ, որպեսզի ընթերցողն ի վիճակի լինի ծանոթանալու նրանց, այլ ոչ թե՝ օգտվելով տպագրական մեքենայից, անհիմն ու անապացույց կերպով արհամարհենք դրանք և պատրաստի պիտակներ փակցնենք դրանց։ Մեր խնդիրն այն է լինելու, որ՝ կիրառելով հասարակական փաստերի ուսումնասիրության օբյեկտիվ մեթոդը, որ հավասարապես անհրաժեշտ է բոլոր պայմաններում, կարողանանք հաշվի առնել նաև յուրաքանչյուր ազգության զարգացման պատմական առանձնահատկությունները...

## «ՍԵՐ ԵՎ ԽԱՐԴԱՎԱՆՔ»

Ավելի քան հարյուր տարի սրանից առաջ մեծ Շիլլերի գրած «մեշչանական ողբերգությունը» մեր օրերում էլ խորապես հուզում է և ցնցում ժամանակակից հանդիսատեսի սիրտը[8]։

Եվ մեծ վարպետի, «մարդկության ազնիվ փաստաբանի» երկի առջև նսեմանում են ժամանակակից գրողների ձանձրալի ստեղծագործությունները։

Մարդկային սրտի որպիսի՜ խորունկ հասկացողություն, կրքեր

պատկերելու որպիսի՜ ուժ, երկու աշխարհների, երկու հակադիր աշխարհայացքների՝ ֆրանսիական մեծ ռևոլյուցիայի հարվածների տակ իր դարն ապրող «հին ռեժիմի» և իր ուժն զգացած քաղաքային բուրժուության, մեշչանականության ընդհարման որպիսի՜ ցնցող պատկեր։ Աղքատիկ զգեստի մեջ պարուրված մտքի և հոգու ազնվությունը բախվում է «կյանքի» երևելի «ազնվազարմ տերերի» նենգությանը, ագահությանը, ստոր կրքերին, հոգևոր և մտավոր դատարկությանը։ Բեմից հնչում էին «հին» խոսքեր, կարծես թե ամենքին հայտնի ճշմարտություններ, բայց, չգիտես ինչու, նրանք մեր սրտերում այնուամենայնիվ ջերմ արձագանք էին գտնում, և մենք ծափահարություններով էինք ընդունում դրանք։ Որովհետև մեր օրերում էլ, թեպետև սոցիալական ասպարեզում փոխվել են գործող անձերը, բայց և այնպես հաճախ, շատ հաճախ, ծագումը, փողը՝ մտքի և զգացմունքների դատարկության ու աղքատության հետ մեկտեղ հաղթող են հանդիսանում «մտքի և սրտի արիստոկրատիայի» հանդեպ, չէ՞ որ մեր օրերում էլ հարկ է լինում ջերմորեն պայքարելու «մարդու» համար, «մարդկային անձնավորությունը» պաշտպանելու անարգանքից, հասարակական անարդարությունից և ճնշումից...

## ԹԻՖԼԻՍ, 13 ՀՈՒՆՎԱՐԻ

Հունվարի 12-ը. Տատյանայի օրը, Մոսկվայի համալսարանի՝ Ռուսաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատության, լույսի և գիտության առաջին օջախի, լուսավորության և գիտական մտածողության առաջին օրրանի հիմնելու օրն է[9]։

Ելիզավետա Պետրովնայի օրով հիմնված այդ հնագույն համալսարանը Ռուսաստանին տվել է փայլուն գիտնականների, գրողների, ճշմարտությունն անխոնջ կերպով որոնողների, կյանքն ու բնությունը խորապես հետազոտողների մի ամբողջ պլեադա։

Ցարատիրական երկրի ֆոնի վրա նա երկա՜ր ժամանակ եղել է գիտության միակ տաճարը, երկար տարիներ նա եղել է միակ այն լաբորատորիան, որտեղից դուրս են եկել «բարու և իմաստության» սերմեր ցանողները։

Ստանկևիչը, Բելինսկին, Գերցենը, Օգարյովը, Գրանովսկին, Ն. Կոլցովը և ռուսական կյանքի ուրիշ շատ ու շատ ջահերը կյանք են մտել Մոխովայա փողոցի վրա գտնվող շենքից և իրենց սրտի արյունը, իրենց

ջղերի հյութը ի սպառ են դրել կրտսեր եղբայրը, իրենց երկրի լուսավորության ու ազատագրության գործին:

Մոսկվայի համալսարանը—ռուսաստանյան ինտելիգենցիայի մեծամասնության այդ alma mater-ը[10]—զանազան հասարակական ուժերի պայքարի իրադարձություններում, լույսի ու խավարի, ճնշման ու ազատության կյանքի ու մահվան սկզբունքների ընդհարման պայմաններում, ռուսական կյանքի ընթացքում միշտ էլ բարձր է պահել ազատ գիտության դրոշակը, գիտական ազատ հետազոտության, առաջադիմության և սոցիալական արդարության սկզբունքները:...

Շատ փորձություններ են պատրաստվում մեր գիտության, մեր համալսարանների դեմ, բայց և այնպես կենդանի ոգին, կենդանի սկզբունքը, անցնելով բոլոր տանջանքներից, դուրս կգան հաղթանակով և նորացած:

Դրա երաշխիքը համաշխարհային պատմությունն է, դրա գրավականը ավելի և ավելի զարգացող և դեպի առաջ ընթացող մարդկության կյանքի երկաթե տրամաբանությունն է:

## «ՊԱՐՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՊԱՐՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

Չէ՞ որ յուրաքանչյուր հասարակական գործիչ պետք է ունենա գործունեության այս կամ այն ծրագիրը, այս կամ այն «հավատո հանգանակը», հասարակական գործերի և դրանց ուղղության տենդենցի այս կամ այն հասկացողությունը:

Հասարակական գործիչն առանց սոցիալ-քաղաքական որոշ դեմքի՝ դա, գերմանացիների արտահայտությամբ, մի դատարկ աղիք է, որը կարելի է լցնել ինչով ուզես, դա մի հողմացույց է, որ դառնում է քամու ուղղությամբ, դա մի ոչնչություն է, որի վրա կարող են ազդել բոլորն ու ամեն ինչ, վերջապես, դա ամենաքծծելի օպորտունիստն է, որի ամբողջ քաղաքականությունը հանգում է մոմենտին հարմարվելուն և այն էլ՝ նվազագույն դիմադրության գծով:...

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ
## Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, «ՆՈՐ ԱՌԱՎՈՏ» ՊՈԵՄ

Մեր առաջ է հայ տաղանդավոր գրողի ու թարգմանչի մի նոր երկը[11]: Այս հեղինակը պատկանում է այն սակավաթիվ հայ բանաստեղծների թվին, եթե չասենք միակն է,— որոնք վաղուց հրաժարվել են

«Թմբկա-Հայրենասիրական» թեմաներից և համամարդկային բնույթ կրող բոլորովին նոր մոտիվներ են մտցրել հայ պոեզիայի ու գրականության մեջ։ Հայ գրականության մեջ Հ. Հակոբյանն առաջինն էր, որ խոսեց աշխատավոր մարդու տառապանքների, տանջանքների ու ձըգտումների մասին։ Նա առաջին անգամ իր հաջող թարգմանություններով հայ ընթերցող հասարակությանը ծանոթացրեց Ադա Նեգրիի հետ[12]։ Հ. Հակոբյանի նոր երկը՝ «Նոր առավոտը», պատկերում է ինդիվիդուալ և հասարակական ձգտումների ընդհարումը անհատի մեջ։ Առանձնապես հաջող և գունագեղ են պոեմի այն տեղերը, ուր սինթետիկ ձևով նկարագրվում են ժամանակակից ֆաբրիկաները, գործարանները, հանքահորերը, բանվորների աշխատանքը, նրանց տառապանքները, նրանց ուժը և նրանց հույսերը։

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

# ԱԶԱՏՆ ԱՍՏՎԱԾԸ

## (Մ. Նալբանդյանի մահվան 50-ամյակին)

*Գարնան մի սքանչելի առավոտ էր։ Կիրակի օր։ Ես՝ ինը տարեկան մի մանուկ, հարևանենց փայտե սանդուղքը քարշ տալով՝ բերել հենել էի մեր բակում կանաչած միակ թթենու հաստ բնին, բարձրացել ծառը և ամուր հաստատվելով նրա ճղներից մեկի վրա, տերևներ էի քաղում մորս շերամների համար։*

*Օդում տիրում էր մի կարոտագին մրմնջող լռություն։ Միակ շշուկը, սակայն, որ լսվում էր, այդ՝ շեղ կանգնած սանդուղքի տակից հոսող մեր բակի առվակի կայտառ ճղփյունն էր, որի գարնան առաջին պղտոր ջուրը չոր տերևներ գլորելով, ներդաշնակվել էր հեռավոր այգիներից լսվող հոպոպների հեգ, հատընդհատ մնչող գուրգուրանքի հետ։*

*Ծոցերս լցրած մատղաշ թթենու նորաբաց տերևներով՝ հենց պատրաստվում էի իջնել սանդուղքից, երբ հարևան բակից, օդը ճեղքելով, ականջիս դիպավ մի անուշ երգի ձայն։ Մեր երգեցողության ուսուցիչ և հարևան Ավետիք վարժապետի ձայնն էր այդ. «Ազա՜տն աստվա՜ծ»-ն էր երգում։*

*Մնացել էի սանդուղքի ամենաբարձր աստիճաններից մեկի վրա, շունչս պահած, զմայլանքով լսում էի վարժապետիս երգը, որի փափուկ, թավ ձայնը քանի գնում՝ ավելի էր ուժեղանում ալիքածածան որոտումով։*

*... «Ազատությո՜ւն սիրե՜-ցի՜»...—խիզախում էր ձայնը իր կրծքային շոյող ջերմությամբ, մերթ ծանր, փառահեղ, մերթ արագ շեշտերով։*

*Գարնան մի տաք արև, մի թարմացնող շունչ լիներ կարծես, որ իր անուշ բուրմունքով փռվել, տարածվել էր շուրջս, ողջ էությանս ներշնչել մի թրթռուն, վերամբարձ տրամադրություն. կարծես նա՝ այդ*

*երգը, իմ հոգու և զգացումների մի տարրը լիներ, մինչ այդ օրը ան-հասկանալի ինձ համար, իսկ այդ օրվանից հարազատ, մտերիմ, ան-բաժան...*

*... «Ազատությո՜ւն գո՜չեցի՜... ի՜ ի՜»,— ալեկոծվում էր ձայնը ավելի և ավելի նվաճելով իմ մանուկ հոգին... Եվ երբ արդեն վերջաց-րել էր երգը, այնտեղ, հենց այն սանդուղքի բարձունքի վրա զգացի, որ մեջս կանաչել էր նորաբողբոջ, ոգեշունչ մի պարտեզ։ Այստեղ առաջին անգամ զգացի, որ բացվեց հոգուս աչքը, ով որ թելադրեց սիրել ազա-տությունը, ներշնչվել նրա վերամբարձ գեղեցկությամբ ու հմայքով։*

*Այնուհետև, ամեն անգամ, երբ իմ պատանյակ հոգուն տիրում էր մի ճնշող ու տարտամ տրամադրություն, իսկույն միտս էի բերում Ալեք-սիկ վարժապետիս «Ազատն աստված»-ը՝ նրա ջերմացնող, գարնան ավետումի խրոխտ խոսքերով և զգում, թե ինչպես արթնանում, սթափ-վում ու խանդավառվում էր իմ հոգին, ճիշտ այնպես, ինչպես ննջող արծիվը իր աչքերն է սրում-լայնացնում, երբ հեռվից, լուռ բնության մեջ, մի շաչող ձայն է լսում...*

*Թող անմոռաց մնա այն օրը պայծառ, երբ վաղ գարնանային մի առավոտ ես բարձրացած մեր թթենու վրա, նրա մատղաշ շիվերից տե-րևներ էի քաղում մորս շերամների համար, և երբ Ալեքսիկ վարժապետի սրտաբուխ, հյութալի բամբ ձայնի հնչյունները գալիս էին բուրալի հո-սանքով, ներս խուժում պատանյակ սրտիս խորքերը՝ այլևս այնտեղից դուրս չգալու մինչ այն օրը, երբ առաջին անգամ առնական հասակիս, սկսեցի երգել միջազգային «Ինտերնացիոնալ»-ը[1]։*

ԲԱԳՐԱՏԻՆ

Թիֆլիս 22/2, 1916

Հարգելի ընկեր Բագրատ

*Ինձ զարմացրել է Ձեր այն հայտարարությունը, որ արել եք Սո-լովյանի դասախոսության առթիվ[2]. թե իբր՝* **բանվորությունը բանաս-տեղծությամբ չի հետաքրքրվում...**

*Բանվորությանը ոչ միայն հարկավոր է ճանաչել իր իդեոլոգներին և թեորետիկներին, բանվորությանը ոչ միայն հարկավոր է ունենալ իր սեփական պատգամավորները Պետական Դումայում, իր սեփական հա-մալսարանը, իր սեփական էնցիկլոպեդիան, իր սեփական մորալը, իր* **դասակարգային կռիվը** *(ինչպես այդ բոլորն ունի բուրժուազիան, որպես*

*բարձրացվիս), բանվորությունը պետք է ունենա և* իր սեփական գեղարվեստը՝ հանձինս գրականության, նրա պատգամախոս պոեզիայի և դաստիարակող բելետրիստիկայի:

*Ես ավելին կասեմ. բանվորությունը գեղարվեստի մեջ պետք է ունենա իր սեփական նկարիչները, իր քանդակագործները, ինչպես Մենիեն և այլն, իր պլաստիկան և այլն. որովհետև, իմ խորին համոզմունքով,* բանաստեղծությունը և առհասարակ գեղարվեստը կրթում, դաստիարակում է մարդու զգացմունքները, բարձրացնում, խրախուսում, ազնվացնում նրա տրամադրությունները: *Ես էլ ավելին կասեմ.* պոեզիան կազմակերպում է կոլեկտիվի տենչերն ու հույզերը, սնունդ մատակարարում, եռանդ ներշնչում նրա ոգուն. *և երբ, մանավանդ, մարտիկ-պատգամախոս է պոետը, այդ արդեն մի մեծ ազդակ է մեռած հոգիներին նորից կյանքի բարձրացնելու, կամ վհատվածներին կյանքի կանչելու:*

*Խորը համոզված լինելով, որ սրանից հետո կբաժանեք իմ կարծիքը, որ իրոք* պոեզիան կազմակերպում է կոլեկտիվի զգացմունքները, հույզերը, *որովհետև. եթե նա 100 ընթերցողի մեջ միատեսակ եռանդի հույզ է առաջացնում, նշանակի կազմակերպում է կոլեկտիվի ներքին աշխարհը. կրկնեմ. աշխատողի մղում, դաստիարակում պրոլետարիատի մարտունակ ոգին և բաժանելով իմ այդ կարծիքը, ոչ թե այսուհետև կասեք. թե՝* բանվորությունը բանաստեղծությամբ չի հետաքրքրվում, *այլև ինքներդ, որպես պրոլետարական կուլտուրայի կազմիչներ, կաջակցեք գործին այնպիսի կուլտուրական մի ձևի միջոցով, ինչպես, օրինակ, պոեզիայի զարգացումը և նրա մասին երևան եկող ու արծարծող ամեն մի դատախոսություն:*

Լավ իմացեք և լավ հիշեցեք, ընկեր Բագրատ, *որ բանվորությանն անհրաժեշտ է մարմնի և հոգու հարմոնիա: Նա որչափ զարգացնում է, լայնացնում է իր տեսակետները ու ԿՌՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ* իր իդեոլոգ թեոռետիկների գրչերով, *նույնչափ խորացնում և ազնվացնում է* իր կռվի միջոցները իր իդեալոգ բանաստեղծների գրչերով. *որովհետև որքան* բազմակողմանի և խորն է զարգացած բանվորը *(և ազնվորեն դաստիարակված—կավելացնեմ ինձնից),* այնքան ավելի ուժգնությամբ և իմաստությամբ *պիտի կարողանա* առաջ տանել իր *ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՎԸ...*

# ՄԻ ՔԱՆԻ ԲԵԿՈՐ ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

*... «Արքա Լիր»-ի մեջ նրա անեծքը*[3] *գարնան որոտ էր անտառում, հուզմունքը՝ դող, զայրույթը՝ դինամիտի պայթյուն, ցասումը՝ դողով բռնված առյուծի մռնչյուն...*

*Այնտեղ, ուր Թշվառ Էդգար-Աբելյանը*[4] *ցնցոտիների մեջ պարուրված, վնգստալով իրեն նետում է բեմ, ընկնում Լիրի ոտքերի տակ՝ Լիրը նրա դիմաց այնպիսի մի զորավոր ու փաղաքշական պոզա է ընդունում, որ թվում է, թե ահա նա իր ամբողջ էությամբ մտնելու է կարեկցության կարոտ Թշվառ Էդգարի սրտի խորքը. «Թշվառը Թշվառին կհասկանա», ասում է ժողովրդական առածը: Ադամյանն այս տեսարանը կատարում էր այնպիսի խանդաղատությամբ, որ հիշում ես իտալական հռչակավոր ողբերգու Էռնեստո Ռոսսիին: Հռչակավոր արտիստը* Լիրը *խաղում էր այնպիսի վիրտուոզին հատուկ տաղանդով, ինչպես Ադամյանը՝ Համլետը*[5]*...*

«Ուրիել Ակոստայում»[6] *տաճարի սեղանի առաջ իր զղջումի և քավության հանգանակն արտասանելիս, սարսուռ ազդող անընդհատ դողը ձայնի և մարմնի մեջ՝ տանջում էր հանդիսականներին: Նա դողդողում էր ու շնչահատ արտասանում հանգանակի այդ թուղթը (որը նույնպես դողդողում էր նրա ձեռքին), որովհետև զղջման ակտը կատարվում էր բռնակալների ստիպողականությամբ, հակառակ իր ազատատենչ կամքի: Նա դողդողում էր, որովհետև սպառնացել էին խլել իր սիրած հարսնացուին. վերջապես նրա համար, որ չէր ուզում դժբախտացնել իր ընտանիքի անդամներին՝ մորը, եղբայրներին...*

*Մինչև այսօր էլ աչքիս առջևից չի հեռանում այդ քրիստոսանման գրիմով Ակոստան, սպիտակ շապիկ հագած, կանգնած վառ մոմերով եկեղեցական աստիճան առ աստիճան բարձրացող սեղանի առաջ, համարյա կմկմալով, դողդոջուն ձայնով իր քավության ակտը արտասանելիս...*

*«Քին»-ում Ադամյանը*[7] *ճարպիկ երիտասարդ էր, էլեգանտ հագնըված նավաստի, ճկուն, հեգնող: Համլետի նման երբեմն տխուր էր նա ու բողոքող: Նա նմանում էր փառավոր հաղթանակ տարած հերոսի՝ բոլոր այն աշխարհակալ լորդերի ու մարկիզների դիմաց, որոնք տարտյուֆային եսապաշտությամբ իբր աշխարհիս բարոյականությունն են հսկում:*

*Պանդուկի մեջ, երբ լորդ Մեկլը նետում է Քինի երեսին, թե՝ «ես ամեն միմոսի դեմ չեմ մենամարտի...»— պետք էր տեսնել, թե իր արհամարհանքը ցույց տալու համար, որպիսի՜ պոզա էր ընդունել Քինը՝ աթոռին ծուռ թիկն տված, ծխախոտը արհամարհանքով փստացնելով։ Պետք էր տեսնել, թե այդ հասարակ խավից ելած Քինը որպիսի՜ հեգնությամբ իր արժանապատվությունը վերադասելով՝ հեգնում էր լորդ Մեկլին, ծաղրում նրա կեղծ բարոյականությունը, գետնին խոնարհում նրան՝ այդ բարձր դասակարգի ներկայացուցչին։*

*Այս տեսարանը, լինելով ամենաուժեղը Ադամյանի Քինում, որպիսի՜ հրճվանք ու հպարտ զգացմունք է ներշնչել ինձ նման պատանիների սրտում՝ ընդդեմ զանազան Ցուրինովների[8], որքա՜ն նողկանք ընդդեմ դասակարգային, կամ ավելի շուտ ընդդեմ դասային Տարտյուֆների...*

## ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ
## (Ռափայել Պատկանյան)

*Մանկությունից իմ սիրած առաջին հայ բանաստեղծը Միքայել Նալբանդյանն էր՝ իր «Ազատն աստված» բանաստեղծությունով. բայց երբ ութսուներեք թվականին մի ճաշկերույթում լավ երգելու համար նվեր ստացա Գամառ-Քաթիպայի ոսկեզօծ կազմով բանաստեղծությունների ժողովածուն, այս պոետն ինձ համար դարձավ ո՛չ պակաս սիրելի, քան Մ. Նալբանդյանը։*

*Առաջին նվագ ինձ շատ դուր եկավ ժողովածուի մեջ զետեղված Գամառ-Քաթիպայի առնական հասակի նկարը։ Այդ նկարում նրա դեմքը շատ էր համակրելի ու շատ տխուր։ Ձեռքը թշին հենած, ներքին շրթից ցած սևին տվող մի փոքրափնջիկ մազով՝ նրա դեմքը այդպես ավելի էր դառնում արտահայտիչ ու իր տխրությամբ համակում ընթերցողին։*

*Գամառ-Քաթիպան այժմ մեզ համար պատմություն է և այն՝ ո՛չ օրինակելի պատմություն։ Ա՜յլ էր նա հիսուն տարի սրանից առաջ։*

*Երբ կարդում էիր նրա՝*

*Ակնապէշ, անձայն խորհուրդ ճակատիդ,*  
*Պատանի, ո՞ւր ես մտքով մոլորված...*  
*... Ստեղծողդ, դարձար քո խեղճ խրճիթը*  
*Ակեր շարեցին շուրջ քո պատկերին[9]...*

*զգում էիր, որ քո առաջ կանգնած է խոհական բանաստեղծը իր ամբողջ հմայքով, որը իր ստեղծագործող նկարչին է զրկաստում:*

*Երբ կարդում էիր նրա «Մենք»․ զգում էիր, որ դարերյան ազգային պոետն է խոսում, կանգնած քո դիմաց իր ողջ հասակով.*

*Երբ կարդում էիր նրա՝*

*Թող փչե քամին պաղ պաղ հեխեխ...*
*Որքան էլ կուզե թող կատղի հյուսիս,*
*Հույսով եմ վաղ-ուշ գարուն պիտի գա[10]...*

*զգում էիր, որ հեղափոխական պոետի հոգին է ըմբոստացել ու կանգնած քո դիմաց՝ իր ամբողջ մեծությամբ ցարական ատելի աբսոլյուտիզմին է սպառնում գարնան գալուստով: Ռոմանական շնչով էր գրված նաև նրա համատարած «Արի իմ սոխակ...»-ը[11]:...*

## Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ

*Այդքան տաղանդավոր, այդքան սիրողաբար վերաբերվել դեպի Թիֆլիսի կյանքն ու նրա աշխատավորների ու զրկվածների վիճակը—դա կարող էր միայն Թիֆլիսի վրա սիրահարված մաքալաքի Սունդուկյանը: Անշուշտ, դասակարգային պայքարի ջիղն ուներ անդրանիկ հայ դրամատուրգը, օժտված չար ու բարիի հասկացողությամբ. և ես միշտ մտածում էի, եթե նա, այդ «բյուրոկրատը» իր խորությամբ ու ճշտապահությամբ[12] հանդես էր եկել 1900 թվականներից հետո. անշուշտ մեր գրականությունը կտար դասակարգային պայքարի գեղեցիկ նմուշներ:...*

*Պատմում էին, որ միշտ, ամեն օր վաղ առավոտյան գարնանը նա ոտով գնում է Մուշտաիդ զբոսանքի, ու մի անգամ էլ տեսնում է Ակակի Ծերեթելուն չոքած մի ծաղկած դեղձենու ծառի տակ աղոթելիս. «Այդ ի՞նչ ես անում, Ակակի»,— հարցնում է Սունդուկյանը. «Փառաբանում եմ աստծուն,— պատասխանում է երիտասարդ վրաց պոետը:— Տես կա՞ բնության մեջ մի այնպիսի գեղեցկություն, որպիսին այս մաքի մանուշակի գույնով ծաղկած դեղձենին...»:...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

# ՆԵՐԿԱ ՄՈՄԵՆՏԸ

*Պետական Դումայի խայտառակ անկման միամսյակը գլորվեց արդեն։ Այդ կարճ ժամանակամիջոցում Ռուսաստանի քաղաքական կյանքը, միմիայն հեղափոխական էպոխային հատուկ՝ ահագին փոփոխությունների է ենթարկվել։*

*Խուլիգանական խայտառակ գործունեությունը հսկայական քայլերով գնում է առաջ։*

*Մի կողմից ստոլիպինյան «ազատամիտ» խոստումները, իսկ մյուս կողմից անգլո-արևմտյան ճիվաղային խաղերն աշխատում են «խաղաղացնել» երկիրը և վերադարձնել նրան յուր խաղաղ հանգիստը։*

*Պոգրոմային անկեղծ ապարատները եռանդուն կերպով գործում են։*

*Վիտտե-Դուրնովյան արտասահմանում աշխատում է «հայր» Ռուսաստանի համար դաշնակիցներ որսալ։*

*Միապետական շրջանակը թե՛ այստեղ՝ Ռուսաստանում և թե՛ նրանից դուրս՝ արտասահմանում հանգիստ չի թողնում «անխաղաղաներ» տարրերին մի րոպե, որպես գթառատ մայր, յուր խնամոտ աչքը չհեռացնելով նրանցից։*

*Աշխատում են մինիստրները, նահանգապետները, բյուրոկրատիզմի այլևայլ տիպի ուրվականները...*

*Մի խոսքով՝ այնտեղ, վերևում կյանքը եռում է։*

*Իսկ ի՞նչ է անում, ի՞նչ է ասում հեծող հսկա ժողովուրդը։*

*Մեր խոսքը հեղափոխական մեծ բանակի ուժերի զուգակցության մասին է։*

*Կրոնշտադյան դեպքերը*[2] *դեռ թարմ են ամենքի հիշողության մեջ, իսկ տեռորիստական պես-պես ակտերը, որոնք վերջին օրերս այնպիսի մեծ թափով երևան եկան, հիշեցնում են արյունոտ բռնակալներին վրեժ-*

*խնդիր ժողովրդի բուռն ցասման մասին, հիշեցնում են խուժանապետներին վաղվա գալիք մեծ փոթորկի մասին։*

*Դրանք միայն հեղափոխության այլևայլ վարիացիաների նախակարապետներն են, իսկ հերոսը տակավին արտաքուստ խաղաղ է ու հանգիստ։*

*Խորհրդավո՜ր լռություն, քո խավարային անդնդից արյան հոտ է փչում, և վաղ թե ուշ այնտեղ հավաքված ու շարունակ խտացող գազը կավետե մեզ հեղափոխության մի նոր գրոհի մասին։ Խորհրդավո՜ր լռություն, քո արյունոտ խորշերում գալարվող ժողովուրդը շարքի է հրավիրում յուր կռվող հերոսներին։*

*Խորհրդավո՜ր լռություն...*

*Եվ հեղափոխական բանակի առաջապահը, մարտնչող պրոլետարիատը կոփում է կռվի շառաչող սուրը. իսկ նրա ներկա բնական դաշնակից՝ Ռուսաստանի գյուղացիությունը յուր եղբոր մուրճի հարվածների տակից փախչող կայծերը հափշտակում է ագահությամբ շուտով ամրապնդվելու, որ վաղվան օրը ավելի կազմ ու պատրաստ, ընդհանուր թշնամուն դեմ առ դեմ կանգնած, կարողանա վերջնականապես խորտակել յուր ժանգոտ շղթաները։*

*Եվ անվեհեր մարտիկների բանակը միմիայն ա՛յդ դեպքում հաղթությամբ դուրս կգա յուր մեծ կռվից։*

*Ու այն ժամանակ վա՜յ բռնակալներին և նրանց ապառաժ մարմնին բծնող ուրվականներին։*

## ԵՐԿՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՏՈՆ

*Եթե մի ժամանակ ուժը, հասարակությունների հզոր հարստությունը չափվում էր զենքով, ապա այժմ իմաստուն ասացվածքը գտնում է, որ ուժը գիտության մեջ է, այս բառի ամենաընդարձակ իմաստով, այսինքն՝ մարդկության իդեականի մեջ։*

*Բայց գիտությունը առանց լեզվի ոչինչ է։ Լեզուն մտավորի կարևորագույն գործոնն է։*

*Ինչպես գիտությունն է, այնպես էլ լեզուն է։ Զարգացած լեզուն, օրինակ, զարգացած մտավոր կուլտուրայի արտահայտիչն է....*

*Հայերն էլ հին ազգ են. նրանք ունեն իրանց պատմականորեն զարգացած կուլտուրան, որ 1500 տարի սրանից առաջ, հանձին իր հանճարեղ գլուխներից մեկի՝ Մեսրոպ Մաշտոցի, ստեղծել է հայ* գիր[3]։

*Այդ երևույթը հինգերորդ դարում առաջ է բերել այն ժամանակի*

Հարուստ ու բեղուն գրականությունը, գրաբարյան գրականությունը՝ իր մի շարք տաղանդավոր երկերով ու նույնքան տաղանդավոր մատենագիրներով...

Բայց նշանակալից է այն հանգամանքը, որ տառերի գյուտով առաջին անգամ հայ ժողովրդի մեջ ձգվում են Մեծ Քարոզչի եղբայրության ու հավասարության գաղափարները, որոնք համապատասխանում էին ժամանակի տրամադրությանը:...

Նույն դարում առաջ է մղվում և ժամանակի ինտելիգենցիայի, որը ներկայացնողը կրոնավորներն են եղել, իդեալը՝ նրա հասարակական առաքելության հարցը: Հինգերորդ դարի փայլուն ու սրամիտ գրողը՝ Եզնիկ Կողբացին, գտնում է, որ հասարակական գործիչը չպետք է տարվի մարմնական-ընչասիրական ձգտումներով, այսինքն՝ որ նա պետք է լինի ամենից առաջ հասարակական մարդ, անհատ՝ տարված հասարակական գաղափարներով: «Ընչասիրությունը կռապաշտության գործակցություն է»[4],— ասում է Կողբացին:— «Կրոնավոր մարմնասերը խոզի նման է»[5],—որոշում է նա:

Անշուշտ, այսօր անմտություն է գաղափարաբանություն պահանջել արդի կրոնավորից, որ անցրել է իր դարը և իր միսիան հանձնել է այլ մտավոր խավերի: Այժմ սրանցից է պահանջվում հասարակական գործը:

Ահա գրերի գյուտի նշանակությունը: Ահա նրա գլխավոր արժեքը:

Տառերի գյուտից շատ ժամանակ անցած լույս է տեսնում առաջին հայ գիրք[6], որով հայ գրականությունն ու կուլտուրան ավելի հարստանում են...

Ներկա հայ իրականությունը վերածնության և հին դարերի հաջորդն է: Ի՞նչ է ներկայացնում նա: Ինչպե՞ս է դիմավորում նա այսօր երկու կուլտուրական տոները...

Հայ ունևորը, չնայած նրա նացիոնալիստական հոխորտանքներին, շատ քիչ է մտածում իր ազգի ներքին գործերի մասին: Չէ՞ որ նրանք շա՜տ չնչին են, չէ՞ որ նրանց օգտին տարված աշխատանքը չէ գնահատվում: Այ, այլ բան է օտար ասպարեզը, որի համար հայ ունևորը ոչինչ չի խնայի...

Դեռ Միքայել Նալբանդյանն է ասել այդ հայ ունևորի մասին. «Նա իր արծաթի թամբերի տակ միշտ անխոցելի է»[7]:

Իսկ հայ ինտելիգենցիա՞ն:

Դա էլ ճահճացած ու այլասերման ճանապարհին կանգնած մի խավ է: Հասարակականի կողքից նա անցնում է միանգամայն անտարբեր կերպով...

Ինտելիգենցիայի ծիլը ուսանողությունն է։ Ի՞նչ է ներկայացնում այսօր հայ ուսանողական սերունդը, որ իր շարքերում հազարներ է հաշվում։

Նա ամենից առաջ շատ անկազմակերպ է։

Նույնիսկ ավելին։ Դա նույնպես անհատապաշտական տարր է։ Ոչ մի լուսավոր էջ ու հուսատու դեմք չունի նա։ Հեռավոր նմանություն անգամ չկա նրա և 60-ական ու 70-ական թվականների իդեալիստ ուսանողության միջև...

Ահա և ժողովուրդը, այդ միակ կենդանի տարրը՝ շարունակ տարուբերվող իր չար ու բարիով, իր խինդերով ու հեծեծանքներով, ժողովուրդը, որ ծնողն է կուլտուրան առաջ մղող ուժերի։

Սակայն այդ ժողովրդի վիճակն այսօր նախանձելի չէ։

Խավարն ու մութն են պատել նրան՝ բռնության խավարը, հասարակական մութը։ Տակավին մտավորապես հետ ընկած, տակավին գերության է այդ ժողովուրդը։

Եվ թվում է, թե մթության ու խավարի մեջ նա կկորչի։

Բայց բանաստեղծը ասել է. «Որքան մութ է գիշերը, այնքան պայծառ են աստղերը»[8]։

Ժողովրդին շրջապատող խավարի միջից փայլում են նրա գլխին աստղերը, և նրանց մեջ խոսքի աստղը, որոնք լուսավորում են սարերի գագաթները...

Խոսքի, լեզվի պայծառ **աստղը պետք է որ դուրս բերե ժողովրդին** խավարի միջից...

## ԱՐԹՆԱՑՈՒՄԸ

Ի՞նչ էր երեկ և ի՞նչ է այսօր։ Մեր հասարակության տրամադրությունը և մեր հասարակական կյանքը։

Այդ հարցերը դնում է մեր առաջ վերջին տարիների Ռուսաստանի ռեակցիան։

Եվ մենք պատասխանում ենք նրանց վճռողական կերպով, որովհետև խավարը անցել է և այսօր ապրում ենք հուսալից օրեր, որ իրանց հետևից բերելու են նոր գարուն, նոր կյանք։

Ռեակցիան անցնում է։

Հիշո՞ւմ եք ինչ օրեր էր անցկացնում մի երկու տարի առաջ մեր հասարակությունը։ Ձգեցիք հետադարձ հայացք։

Ահա գրականությունը։

Սանին, Պինկերտոն, Վեյնինգեր ու մազոխիզմ[9] մի կողմից. աստվածախույզներ ու միստիկներ, կրոնական պսիխոպատներ[10] ու Մերեժկովսկի—Գիպպիուս—Ֆիլոսոֆյան տիպի ստորարժեք քննադատներ՝ մյուս կողմից։

Այսօր գրականությունը մաքրվում է որոմներից։ Ճիշտ է, որոմները կան, սակայն ընտիր ծիլերը խեղդում են իրանց ծոցում մի ժամանակ գլուխ բարձրացրած որոմները։ Վատ գրականությունը տեղի է տալիս առողջ գրականության, նորից հրապարակի վրա է Մաքսիմ Գորկին, որին դեռ երեկ հիմարների բանակը վախճանի երգ էր ասում[11]։ Այսօր քննադատական ցինիզմին փոխարինում է իսկական, պրոգրեսիվ քննադատությունը։

Ի՞նչ էր ներկայացնում երեկ մամուլը։

Աղտոտ ու սողացող մի էակ։ Այսօր նա մաքրվում է, արժանի կերպարանք է ընդունում։ Նրա շարքերում զարգանում է պրոլետարական շիտակ մամուլը։

Երեկվա հասարակական կազմակերպություններն էին՝ «գրականագետներից» բաղկացած սադիստական խմբակները, որոնց սադիզմը տարածվում էր և անասունների վրա, վեյնինգերիստական ընկերակցությունները[12], «ЛОВИ МОМЕНТ» կոչված կրուժոկները և ամենաշատը՝ արդյունաբերողների աշխատավորահալած կազմակերպությունները։

Այսօր մենք ականատես ենք առևտրական ծառայողների ու ժողովրդական ուսուցիչների շարժման, ուր հնչում է համարձակ ու ճշմարիտ խոսքը, որ կեղեքվածների ու հալածվողների դատն է բարձրագոչ հրապարակ հանում։

Վերջապես, քաղաքական կյանքում մեծ իրարանցում է առաջ եկել։ Նկատելի են նախկի՛ն լավ օրերի շերտավորումն ու տարուբերումը։ Երկրի ազատական տարրերը սկսել են ի մի հավաքել իրանց ջլատված, ճզմված շարքերը։

Ամեն տեղ աչքի է զարնում հասարակության արթնացումը, որ ավելի քան ակնհայտ է ու նշանակալից պրոլետարական բանակում, հասարակության այդ ամենաառաջավոր ու ազատարար խավի ծոցում։

Արթնացումը այս վերջին շրջաններում նշանակում է առհասարակ արթնացումը հասարակական կյանքի։ Այդ պատճառով, երկրի արթնացման մասին պարզ գաղափար կազմելու համար արժե ի նկատի ունենալ բանվորական շարժման վերաբերյալ մի քանի թվական տեղեկություններ։

Մոսկվայի շրջանի գործարանատերերի ընկերության վիճակագրա-

կան տեղեկությունների համաձայն, վերջին տարիների տնտեսական գործադուլները այս պատկերն են ներկայացրել։ Գործադուլ է արել 1905 թ. 1 020 442 մարդ, 1911 թ. 96 750 մարդ, 1912 թ. 211 595 մարդ։

Թվերը վերաբերում են մեր երկրի տնտեսության արդյունագործական ճյուղին։ Տեսնում ենք, որ 1911 թիվը, համեմատած հեղափոխության տարվա հետ, փոքրություն է ներկայացնում, բայց ռեակցիայի շրջանից դուրս եկող նոր ժամանակաշրջանի համար դա էլ մեծ բան է. այնուհետև բանվորական շարժումը սկսում է զարգանալ. 1912 թ. վերաբերյալ թվերը արդեն միանգամայն տարբերվում են 1911 թ. վերաբերյալ թվերից։

Մեր ասածի ավելի պարզ ու լի պատկերը տալիս են տեղի ունեցած գործադուլները։ Նրանք, ըստ գործարանային վերատեսուչների տված տեղեկությունների, այսպես են ներկայանում մեր առաջ. գործադուլավորներն են.

| | | | |
|---|---|---|---|
| 1905 թ. | 1 202 | հազար մարդ | |
| 1906 թ. | 515 | —»— | |
| 1907 թ. | 523 | —»— | |
| 1908 թ. | 83 | —»— | |
| 1909 թ. | 8 | —»— | |
| 1910 թ. | 4 | —»— | |
| 1911 թ. | 8 | —»— | |
| 1912 թ. | 726 | —»— | |

Ռեակցիայի խորանալու հետ միաժամանակ թուլանում է բանվորական գործադուլների թափը, որը 1910 թ. այն աստիճանի է հասնում, որ տեղի ունեցած գործադուլներին մասնակցողների թիվը այդ տարին իջնում է 4 000-ի։ 1910 թվականից հետո երկիրը սկսում է սթափվել. 1911 թ. գործադուլավորների թիվը հասնում է 8 000-ի, 1912 թ. նա խոշոր ոստյուն է անում՝ կազմելով 726 000. պետք է ենթադրել, որ 1913 թ. այն ավելի ևս մեծանում է։

Բանվորական շարժման հետ միասին ուժեղանում է և բանվորական տարրերի ըմբոստացումը։ Բանվորությունը ռեակցիայի խուլ տարիների հլու ստրուկը չէ այլևս. նա արդեն աշխատում է չենթարկվել գործատերերի կողմից նրա վրա թափվող անլուր նեղություններին և ճնշումներին։

Այսպես, գործարաններում տիրող այս կամ այն անհարմարության, անկանոնության և անարդարության դեմ 1911 թ. բանվորների կողմից

ներկայացված է եղել մոտ 26 000 գանգատ, որը 1912 թ. դառնում է 29 000:

Պրոլետարական ընդդիմադրությունը առաջ է բերում բանվորների դրության մասնակի բարվոքում. օրինակ, աշխատավարձը ավելանում է. 1911 թ. նա էր միջին թվով 251 ռուբլի, 1912 թ. նա 255 ռ. է հասնում:

Անկասկած է, որ հասարակական կյանքի զարկերակը ամրանում է. հասարակության մինչև այժմ թույլ օրգանիզմը կենսունականանում է, որ քանի գնա՝ այնուհետև ավելի պիտի կազդուրվի ու ոտքի կանգնի:

Ռեակցիան մեր հետևումն է: Նա անցնում է:

Գալիս նոր ժամեր, որ հների վերսկսումն է, վերստին կենդանարար կյանք, նորից քաղցր հույսեր, երջանիկ ապագա:

Նորից մեր անձկալի գարունն է գալիս:

Նրա ծիծեռնակը, մեր երկրի դեմոկրատական գրող Մաքսիմ Գորկին կրկին մեզ մոտ է՝ մեզ հետ գործելու, մեզ հետ ապրելու համար:

Անշուշտ, այդ սիրուն ծիծեռնակին կհաջորդեն երկրորդը, երրորդը, մի շարք ծիծեռնակներ, և մեր երկիրը նորից կլցվի այդ կենսաբեր ճռչնակներով, որոնք իրենց ուրախ ճռվողյունով, պար բռնած մեծ գործի շուրջը, կհանեն նրան նրա ընկղմված դրությունից, կբարձրացնեն դեպի վեր, մինչև լայն ու լուսավոր ասպարեզը:

Եվ այդ այդպես կլինի:

## ԻՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

1921 թվականի ապրիլի կեսերին ես պետք է մեկնեի Սովետական Անդրկովկաս և ապա Հայաստան[13]: Մոսկվայից մեկնելուց առաջ, ես ընկեր Լենինի հետ տեսակցություն ունեցա, որի ժամանակ մենք մանրամասն զրուցեցինք այն մասին, թե ինչպես պիտի աշխատել Կովկասում, ինչ ձևով պետք է հաշվի առնել ռուսական ռևոլյուցիայի փորձը, ինչ քաղաքականություն վարել Թուրքիայի նկատմամբ: Լենինը խորհուրդ էր տալիս զգույշ և նրբանկատ լինել Արևելքի ժողովուրդների նկատմամբ, որոնք արդեն արթնանում են, որոնք լուսավորության կարիք ունեն, և որոնք լուսավորվելով, իրենց մոտ կկատարեն ավելի միթխարի հեղաշրջում, քան տեղի ունեցավ Ռուսաստանում: Մի խոսքով նա այն ժամանակ շարադրում էր մեր այն գիծը, որը մենք, 1921 թվականից սկսած, անց ենք կացնում Անդրկովկասում ու Մերձավոր Արևելքում:

*Միանգամից պարզ դարձավ, որ Արևելքում կատարվելիք աշխատանքը բավական բարդ է և պատասխանատու. և այդ պատճառով էլ ես խնդրեցի ընկեր Լենինին՝ համառոտ շարադրել իր մտքերը թղթի վրա, նամակի ձևով, որպեսզի այդ նամակը ես կարողանամ հասցնել Կովկասի ընկերներին, որ նրանք կարողանան ղեկավարվել նրանով իրենց ամենօրյա աշխատանքում։ Լենինը սիրով համաձայնեց դրան։ Հենց հետևյալ օրը սուրհանդակը ինձ բերեց նրա նամակը, որը Վ. Ի. Լենինը հետո իմ ներկայությամբ խնդրեց ընկեր Ստալինին՝ ուղղել որտեղ հարկավոր է, քանի որ ինքը՝ հեղինակն այնքան էլ տեղյակ չէ կովկասյան գործերին և հեշտությամբ կարող է սխալներ անել։ Այդպիսին էր ընկեր Լենինի համեստությունը, որը զուրկ էր հեղինակային այն ինքնասիրությունից, որով տառապում են մեզանից՝ այսպես կոչված, գրականագետներից շատերը։ Այդ նամակը հայտնի է անդրկովկասյան ընկերներին. այն իր ժամանակին տպագրվեց մեր թերթերում*[1]։

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

# Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՐԴԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

(Մեր դեկլարացիայի առթիվ)

Չորրորդ աստիճանի ճառեճառը

*Հինգերորդ տարին է մենք ապրում ենք պրոլետարական հեղափոխության անհուն տարուբերումները։ Ո՛չ մի հոտենտոտ անգամ չկա, որ աշխարհիս թեկուզ ամենահեռավոր անկյունում լսած և արտասանած չլինի «հեղափոխություն» խոսքը (վերջերս ռադիոն լուր բերեց նրանց ապստամբության մասին...)։— էլ չեմ խոսում համաշխարհային աշխատավորության մասին, որի փայփայած խոսքերն ու տրամադրություններն են այսօր—համաշխարհային հեղափոխության լոզունգները։*

*Հինգերորդ տարին է, որ ռադիոն, թռչելով աշխարհից աշխարհ, ճչում է բոլոր գյուղերում ու քաղաքներում համաշխարհային աշխատավորության հաղթանակների մասին...*

*...917 թվից մինչև օրս Հայաստանի աշխատավորությունը ևս իր ամենաակտիվ մասնակցությունն է ցույց տվել Ռուսական Մեծ Հեղափոխության գործում. այդ մասնակցության ամենափայլուն նշաններն են՝ 920-ի մայիսը և 921-ի քաղաքացիական կռիվները*[1]*, երբ մեր կազմակերպված Կարմիր Բանակը իր պանծալի հաղթանակներն էր տանում քաղաքացիական կռվի հայրենի ճակատներում։...*

## ԱՐԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ

*905 թվականի ռուսական հեղափոխությունը այն կարմիր ցուցամատն էր, որը ցույց տվեց իշխանության ձգտող ռուս բուրժուազիային, որ նա իզուր է ձգտում իշխանության հասնել պրոլետարիատի ջանքերով, նրա դիակների վրայով։ Այդ հեղափոխության առաջին իսկ օրերից ռուսական բուրժուազիան տեսավ, որ իրա կողքին մեծացել և իր*

գիտակի վրայով իշխանության է, ձգտում հասարակական նոր ու առնական մի ուժ, որի մասին նա լսել էր 71 թվի Փարիզի պատմությունից, բայց որի ներկա լինելուն հայրենի իրականության մեջ նա մինչ այդ չէր հավատում։ Բայց շշմեցնող արագությամբ բռնկվող գործադուլները Ռուսաստանի բոլոր արդյունաբերական կենտրոններում անհերքելի կերպով ապացուցեցին այդ։ Իսկ երբ 905-ի հոկտեմբերյան օրերին Պետերբուրգում, Մոսկվայում և արդյունաբերական այլ կենտրոններում կազմվեցին բանվորական խորհուրդներ, որոնք ձգտում էին ամբողջովին իրենց ձեռքն առնել հեղափոխության ղեկը և շուռ տալ այն բուրժուազիայի դեմ — սարսափահար բուրժուազիան ետ նահանջեց և գոհացած արագությամբ նետվեց հին, ցարական կառավարության գիրկը, որի հետ նա իր փաստացի համաձայնությունը կնքեց 905-ի հոկտեմբերի 17-ին[2]։ 905-ի արյունոտ հոկտեմբերին ռուսական բուրժուազիան առաջին անգամ ակնբախ կերպով տեսավ այն կարմիր ուրվականը, որը 12 տարի հետո պիտի վերջ դներ իր գոյությանը 917-ի պրոլետարական հոկտեմբերին։ Եվ նա բնականորեն սարսափեց իր իսկ խղճուկ պահանջներից և ամբողջովին ապավինեց ցարական սվիններին, որոնք ժամանակավորապես պիտի կարողանային փրկել նրա գոյությունը չորրորդ դասակարգի առաջխաղացումից։ Եվ այդ սվինները չուշացան։ Չուշացավ նաև այդ սվինների օրհներգումը՝ ռուս բուրժուական ինտելիգենցիայի կողմից։

905-ից հետո սանձարձակորեն իշխող ռեակցիան բնորոշելու համար թերևս չգտնվի և ոչ մի դոկումենտ, որ մրցել կարողանա ռուս բուրժուական ինտելիգենցիայի մի քանի ականավոր ներկայացուցիչների հրատարակած «Вехи» անունը կրող ժողովածուի[3] հետ՝ մանավանդ ռուս բուրժուական ինտելիգենցիայի այդ ժամանակ ունեցած տրամադրությունները հասկանալու տեսակետից։ 908-ին հրատարակած իրենց այդ տխրահռչակ ժողովածուում ռուս յոթը ականավոր ինտելիգենտներ[4], որ մինչև հեղափոխությունն իրենց նույնիսկ մարքսիստներ են անվանելիս եղել, կոչ են անում ռուս ինտելիգենցիային ձեռք քաշել հեղափոխությունից, որովհետև, ասում են նրանք, ռուս աշխատավոր ժողովուրդը չի բավականանա իրենց պահանջներով — այլ կձգտի հեռուն։ Եվ այդ ձգտման ճանապարհին ոտնատակ կանի իրենց՝ ռուս ինտելիգենտներին։ «Մենք պետք է վախենանք հեղափոխական ժողովրդից ավելի, քան ցարական կառավարությունից և օրհնենք այդ կառավարությունը» — սպիտակի վրա սևով իր առաջնորդողում գրում է Գերշենզոնը, յոթից մեկը, — «որովհետև», — շարունակում է նա, — «այդ

կառավարությունը իր սվիններով և բանտերով պաշտպանում է մեզ զայրացած ժողովրդից»[5]: Եվ այս ավելի քան անկեղծ տողերով Գերշենզոնը միանգամայն բնորոշում է այն մռայլ ժամանակաշրջանի ռուս ինտելիգենցիայի հոգեբանությունը: Այդ նույն ինտելիգենցիայի հարազատ արտահայտիչներն էին գեղեցիկ գրականության ասպարեզում—ռուս սիմվոլիստները:

Բուրժուական ինտելիգենցիան այն սև օրերին իրոք որ խուճապի էր մատնվել: Ինչպես իրեն սնող դասակարգը՝ նա ևս գիտակցում էր, որ հեղափոխությունը պիտի ոտնատակ աներ իրեն, որ մինչ այդ հավակնություն ուներ կարծելու, որ ինքն է «ժողովրդի առաջնորդը»:

Աշխատավորության տարերային շարժման անսպասելի ընթացքից շշմած—այդ ինտելիգենցիան գլխիվայր ընկնում է փիլիսոփայության մեջ—իդեալիզմի, քաղաքական ասպարեզում—նացիոնալիզմի (հիշեք Զինկևիչի ախտահաշակ գործը)[6], արվեստի և գրականության բնագավառում—ծայրահեղ անհատապաշտության և միստիցիզմի գիրկը: Պարզ ասած՝ բացորոշ կերպով միանում է իրեն սնող ու կերակրող դասակարգին: Կանգնում է մերկ, Ադամի հագուստով, ինչ որ մայրն է ծնել: Քաշվե՛լ, քաշվե՛լ ամեն ինչից և ամենից առաջ սառը իրականությունից (և ի՞նչպես այդ իրականությունը սառը չլիներ, երբ ուներ հեղափոխության նման սարսափելի բաներ)—թքել բիրտ ու գռեհիկ «ամբոխի» վրա, որը չի հասկանում անհատի «բարձր» ապրումները, թռչել երկիրն Օյլե, ինչպես ասում է Ֆ. Սոլոգուբը[7], սիրել Գեղեցիկ Տիկնոջը և սպասել Հրաշքի[8]—ինչպես երգում էր Բլոկը,—ահա՛ այն ժամանակվա գրականության, այսինքն՝ սիմվոլիզմի, թեմաները: Սիրել գեղեցիկը, կինը, ցնորքը, երգը, հաճույքը՝ հանուն «անհատի ազատագրման»,— ահա՛ սիմվոլիզմի փիլիսոփայությունը: Եվ այս փիլիսոփայությունը ոչ ոք այնպես լավ չի արտահայտել, ինչպես Ֆ. Սոլոգուբը, որ թերևս ռուս լավագույն սիմվոլիստներից մեկն է, եթե ոչ ամենամեծը: Եվ այս տեսակետից շատ բնորոշ է նրա մի վեպը, որ կրում է «Навьи чары» վերտառությունը[9]: Այդ վեպի հերոս Տրիրոդովը, մոգի զգեստներ հագած մի ինտելիգենտ-վարժապետ, ինչ-որ խորհրդավոր մի տեղ առանձնացած, գունատ երեխաներ է բռնաբարում, ինչ-որ խորհրդավոր մեքենաների միջոցով սպանում է մարդկանց, շաբաշներ է սարքում գերեզմանոցում, կանչում է մեռելների—մի խոսքով զբաղվում է ամեն տեսակի լրբությամբ՝ հանուն անհատի ազատագրման: Բնորոշ է այդ վեպում այն հատվածը, ուր նկարագրվում է, թե ինչպես Տրիրոդովը (վեպի մեջ նկարագրված դեպքերը, ինչպես երևում է, տեղի են ունենում հեղափո-

խության օրերին)[10]—իր խորհրդավոր սիրուհու հետ[11] անտառում ներկա է լինում հեղափոխականների ժողովին, որ ցրման է ենթարկվում կազակների կողմից:— Եվ ահա մոգի շորեր հագած այդ ինտելիգենտը փախչում է տուն՝ այսպիսի մի քրմական բացականչություն նետելով իր սիրուհուն—«Դեպի վեր, դեպի մեր առանձնությունը, դեպի հոգու ազատագրումը»: Այսինքն՝ այդ մոգը, որի թղթե զգեստների տակից երևում է սարսափած ինտելիգենտի վտիտ մարմինը, հեղափոխությանը հակադրում է «անհատի ազատագրումը»: Այլ կերպ այդ ինտելիգենտը ի՞նչպես լիներ «գերմարդ»!!

Ես կանգ չեմ առնում այն հանգամանքի վրա, որ այդ «գերմարդուկները» վաղուցհետե ունեին իրենց ավագ եղբայրները եվրոպական մոդեռնիստական գրականության մեջ, որ առաջ էր եկել տասնյակ տարիներից առաջ հասարակական համանման պայմաններում: Այդ օրինակները, հանձինս Հյուիսմանսի, Միրբոի, Պշիբիշևսկու, դ'Աննունցիոյի, Ուայլդի և այլոց հերոսների, ի հարկե, շատ ավելի կուլտուրական տիպեր են՝ անհամեմատ ավելի զարգացած ճաշակով—բայց սա արդեն դետալ է, էականը մնում է անփոփոխ: Նրանք, ըստ էության, մնում են արնակից եղբայրներ: Նույնը կարելի է ասել և ռուս մյուս սիմվոլիստների վեպերի ու բանաստեղծությունների մասին: Ռուսական բոլոր սիմվոլիստները, հանձինս Բրյուսովի, Բալմոնտի. Վյաչեսլավ Իվանովի, Կուզմինի, Սոլոգուբի, Բլոկի և այլոց, զբաղվում էին այդ ժամանակ «անհատի ազատագրման», սեքսի, գեղեցիկի, միստիցիզմի և նման «պրոբլեմներով»: Այդ ամբողջ բանաստեղծությունը բնորոշելու համար բավական է բերել նույն Սոլոգուբի վերոհիշյալ վեպի առաջին խոսքերը, ուր նա ասում է.— «Վերցնում եմ կյանքից բիրտ ու խղճուկ մի կտոր և հյուսում եմ նրանից անուշ մի լեգենդ, որովհետև ես պոետ եմ»: Եվ ճիշտ որ՝ սիմվոլիստները վերցնում էին կյանքից բավականին բիրտ կտորներ և հյուսում էին նրանցից անուշ լեգենդներ... ինչպիսիք են, օրինակ, Բրյուսովի բանաստեղծությունները, որոնցում բնաբերդված են ամեն տեսակի բնական ու անբնական սեռային հաճույքներ, նույնը և Իվանովի, Կուզմինի, Բալմոնտի և մյուսների հատորներում: Եվ այս բոլորը՝ հանուն «անհատի» և նրա «ազատագրման»: Բայց արդեն տեսեք, որ անգամ նման «անուշ» լեգենդները անկարող էին ազատագրել նրանց իրենց գլխին կախված դաժան իրականությունից, որովհետև մահամերձ էր և ազատագրման կարոտ ոչ թե անհատը, այլ նրան սնող դասակարգը, որն արդեն իսկ կորցրել էր ազատագրվելու ամեն մի հույս:...

# ՀԱՆՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

## (Ալեքսեյ Պեշկովի հիշատակին)

«Մաքսիմ Գորկի»:

*Այս անունն անցյալ դարի վերջին տասնամյակում կայծակի արագությամբ սավառնեց ամբողջ աշխարհի վրա, երկրագնդի բոլոր մասերում. իբրև ցարական Ռուսաստանի սոցիալական ամենի օվկիանի հատակից ելած մի հրաշալի մարդու անուն, մի տարօրինակ դեմքով մարդու, որի հռչակավոր լուսանկարը տպվում էր աշխարհում գոյություն ունեցող բոլոր թերթերում ու ժուռնալներում, և ամենուր՝ նաիրյան Կարսում. թե Սան-Ֆրանցիսկոյում՝ այդ լուսանկարից նայում էր ռուսական լյումպենի կոպիտ դեմքով, բայց զարմանալի խոր, հմայիչ, խոհուն աչքերով, բարձրահասակ մի մարդ՝ հագին ռուսական շապիկ, երկայնաճիտ կոշիկներ և գլխին գավառական դերասանի լայնեզր գլխարկ... Համաշխարհային լեգենդ դարձած* «**հանճարեղ բոսյակի**» *ռոմանտիկ կերպարանք էր դա, երիտասարդ Գորկու* **առաջին** *կերպարանքը, որ կայծակի պես փայլատակեց մի օր մարդկային կյանքի մթին երկնքում և ընդմիշտ դրոշմված մնաց միլիոնավոր մարդկանց հիշողության մեջ, իբրև սոցիալական ծովի զարհուրելի* **խորքից** *իր հանճարի ուժով մինչև արևի լույսը բարձրացած մի հրաշալի կյանքի խորհրդանիշ, մի* **հմայիչ հույս**՝ *բոլոր* «**խորքերի բնակիչների**» *համար և ահեղ ազդանշան՝* **մակերեսի** *կուշտ ու ինքնագոհ «տերերին»՝ սոցիալական օվկիանի անհուն խորքերում եռացող ուժի վիթխարի թափի մասին...*

*Բուրժուական «լուսավոր» ինտելիգենցիան ուժ չէր խնայում պատկերելու համար երիտասարդ Գորկուն, իբրև սոցիալական* «**հրաշք**», *իբրև սոցիալական ընդհատակից ելած մի աներևակայելի* «**վունդերկինդ**»:

*Երևակայո՞ւմ եք՝ «հա՜ն-ճա՜-րե՜ղ...բոսյա՜կ...»: Մյուս կողմից՝ այդ* **իրոք** *հանճարեղ մարդու անծայրածիր հայրենիքում, որ այն ժամանակ մի լայնածավալ թիարան էր՝ տարածված Սառուցյալից մինչև արևադարձային Իրանի սահմանները, ժողովուրդների այդ անծայրածիր բանտում, համարյա ամենուր, անխտիր ազգությունից ու լեզվից, բոլոր քաղցածները և հալածվածները, գործազուրկներն ու թափառաշրջիկները այդ մարդու անունով էին կոչում երկաթուղային չորրորդ կարգի գնացքներն ու վագոնները, որ նույնպիսի երկաթուղային «լյումպեններ» էին, ինչպես դրանցով ճանապարհորդողները...* «**Մաքսիմկան**» *այն ժամանակ միակ դրոշմն էր, որ մխված էր սոցիալական ներքնախավի գիտակցության մեջ, իբրև նո՛ւյն այդ խավից ելած մի հեքիաթային, բացառիկ*

համաշխարհահռչակ եղբայրակցի հեռավոր համբավի հեռավոր ցոլք… Սակայն այդ հեռավոր ցոլքն անգամ վկայում էր այն անսահման ժողովրդականության մասին, որ ուներ Գորկին դեռ դարի առաջին տարիներում: Դա միևնույն ժամանակ ժողովրդի մտքում դրոշմված յուրատեսակ արտացոլումն էր Գորկու գոյության այն վաղ շրջանի, երբ նրա պատկերը սավառնում էր աշխարհում իբրև սոցիալական հատակից ելած հանճարեղ մարդու մասին բուրժուական մամուլում ստեղծված մի սենտիմենտալ լեգենդ…

* * *

…Անհնարին էր այդ Գորկու համար: Սակայն սոցիալական հատակից դեռ նոր վեր բարձրանալու ճիգեր անող մի երիտասարդի, կիսաքաղց թափառաշրջիկի մեջ,— որ դեռ նոր պետք է դառնար գրող, կամ սուզվեր ընդմիշտ քաղցի և անհայտության զարհուրելի անդունդը,— որքա՞ն կամք, սոցիալական ինքնություն և ուժ պետք է լիներ այդ մարդու մեջ, որպեսզի նա կարողանար դիմագրավել իր ժամանակի գրական հրապարակի ամենազոր «պետերին», դիմագրավել գրական ասպարեզի տեր ու տնօրեն հանդիսացող այդ հզորագույն «սինկլիտին», որին ենթարկվելն ամենահեշտ ճանապարհն էր հռչակվելու համար:

Որպիսի հեգնանք է թվում այժմ Գորկու՝ հազիվ գրիչ վերցրած այդ երիտասարդի, այո՛ բոսյակի հանդեպ ռուսական բուրժուական գրականության այն ժամանակվա «հսկաների» և «առաջնորդների» թափած ճիգը՝ Գորկուն «հանճարեղ բոսյակի» դիրքում պահելու համար… Եվ դուցե ռուս ժողովրդի ամենախոր «հատակից» բարձրացած այդ ներկարարի աշկերտի, խոհարարի «լակոտի», ծխախոտի ավելցուկ հավաքողի և այդ հանճարեղ գրող դարձած Ալեքսեյ Պեշկովի կենսագրության մեջ ամենազարմանալին հենց ա՛յդ է, այդ գրանիտյա խլությունը, այդ հետո միայն գիտակցված գրանիտյա անողդողդությունը՝ իրեն «սոցիալական վունդերկինդի» սրբապատկեր դարձնելու բոլոր գրավիչ և շոյող փորձերի հանդեպ… Կարծում էին, թե Գորկին, թեև հանճարեղ, սակայն՝ ըստ էության՝ մի սովորական «հրաշք» է, սոցիալական կյանքի մի սովորական քմայք, և նրան նույնքան հեշտ կլինի դնել իրենց կաղապարի մեջ, արդուկել, լիզել, դարձնել սովորական «ինքնուս հանճարի» մի նմուշ. ինչպես այդ հեշտությամբ արել է բուրժուական հասարակությունը բոլոր նման դեպքերում: Եվ երբ Գորկին, զարմանալի արագությամբ, հանճարեղ մարդու ներքին մղումով և սոցիալական ինքնագիտակցությամբ, շատ շուտով սկսեց ամեն ճիգ գործ դնել ազատագրվելու համար «հան-

ճարեղ կոմպենի» ռոմանտիկ ամպլուայից,— և ահա, դեռ այն օրերին, երբ ըստ հին տրադիցիայի, բուրժուական մամուլը շարունակում էր ներկայացնել նրան իբրև «ճանճարեղ ինքնուսի»—այդ իրոք որ ճանճարեղ ինքնուսը (առանց չակերտների) հանկարծ ցույց տվեց մի այնպիսի դեմք, որ այն ժամանակվա ռուս գրականության «լուսավորյալ» կաճառը, բոլոր գրական-բեմադրական «մեծերը» զարմանքից, ավելի՛ շուտ՝ անհանգստությունից կատաղեցին: Իր երիտասարդական օրերի ռոմանտիկայից զարմանալի կամքով ազատագրվելով մի քանի տարում, Գորկին իր ֆենոմենալ աշխատասիրությամբ և ոգու հավատարմությամբ՝ շատ շուտով ոչ միայն հասկացավ ու մերժեց այդ սենտիմենտալ ամպլուան, որով ընդմիշտ սահմանափակել էին ուզում նրան ժամանակակից բուրժուական գրականության «պետերն ու օրենսդիրները», այլև, առասպելական արագությամբ տիրապետելով մարդկային մշակույթի բոլոր բնագավառներին, ինքը դարձավ «պետ» և «օրենսդիր» մի նոր գրականության ու հոգեբանության, որը բացարձակ բացասումն էր իրեն իբրև «լեգենդական կոմպենի» թմբկահարող և մեծարող «լուսավորյալ» կաճառի պետերի—Պլեխանովից մինչև Ռոզանով և Մերեժկովսկի—խորհուրդների...

«Լուսավորյալ» ուսուցիչներն ու հեղինակավոր առաջնորդներն այն ժամանակվա ռուս գրականության և հասարակական կյանքի,—այսինքն՝ նրանք, որ հավիտենական կատեգորիա համարելով տիրող սոցիալական-կուլտուրական ռեժիմը՝ ձգտում էին մի նույնպիսի հավիտենական կատեգորիա դարձնել Գորկու մասին ստեղծած իրենց լիբերալ լեգենդը՝ թե նա մի «սոցիալական հրաշք» է—այսինքն՝ մի աներևակայելի բացառություն. զարմանալի ֆենոմեն, որը—երևակայո՞ւմ եք՝ իր օրինակով կենդանի հերքումն է այն,—օ՜, իհարկե,—կարծիքի, թե «ժողովրդի» ստորին խավերի ծոցից չե՞ն կարող լինել հոգևոր աշխատանքի ընդունակ «տիպեր». ո՞վ է ասում,—ապա այս «հանճարեղ» կոմպենը... Բայց որքա՜ն մեծ եղավ «այդ ժողովրդասե՜ր», պարզապես տիրող դասակարգի կուշտ և արտոնյալ մտավորականության. զայրույթը, երբ,— օ՜, մարդկային անշնորհակալություն,— այդ «կոմպենը», որին իրենք նույնիսկ... ողջունել ու մեծարել էին իբրև ժողովրդի ծոցից ելած հանճարի—հանկարծ...

Այո: Այն տարիների ռուսական հասարակական կյանքի մակերեսի վրա «փայլող» գրական-կուլտուրական ուժերի մեծ մասի համար ոչ միայն անսպասելի, այլև միանգամայն անսիրելի, տագնապային հանգամանք էր Գորկու ինքնաճանաչումն ու ինքնորոշումը՝ տիրապետող

գրական-կուլտուրական հրապարակում։ Մինչ այդ ժողովրդի «ցածր խավից» ելած «վունդերկինդներին» իրենց մտքերի և ճաշակի հլու մանեկեններ դարձնելու տրադիցիային ընտելացած (Կոլցովից մինչև Կլյուև...), նրանք—երևակայո՞ւմ եք—հանկարծ դեմ են առնում մի «բոսյակի», որը ոչ միայն չի ուզում կրել «ինքնուս բոսյակի» «ռոմանտիկ» դիմակը, այլև ինքն է դառնում նորվոր ինքնուրույն պետ և ուսուցիչ, զզվանքով նետ է նրում իրեն կպցրած «վունդերկինդային» նամբավը,—ևահա ռուսական հասարակական կյանքում, իբրև մի նոր, աննախադեպ լեռ, իբրև մի նոր նորվոր կենտրոն, հառնում է այդ զարմանալի «բոսյակի» նոր կերպարանքը... Որքան «ռոմանտիկ» էր Գորկի—«կյումպենի» կերպարանքը, այնքան խստաբարո և ահավոր էր բուրժուական ինքնագոհ, «ժողովրդասեր» ինտելիգենտների համար այս նոր, ինքնաբավ, սեփական սոցիալական նշմարտության պատվիրաններ կրող Մաքսիմ Գորկու՝ արդեն ոչ միայն գրող, այլև հասարակական գործիչ և առաջնորդ դարձած Գորկու ֆաղաֆական դեմքը։ Որպիսի՜ ոռնոց էր, որ բարձրացավ ժամանակակից «լուսավորյալ» մամուլում և գրականության մեջ այդ նոր Գորկու շուրջը...

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ժողովածուում ամփոփված նյութերով, անշուշտ, չեն սպառվում ազատասիրական-ազատամարտական գաղափարների արծարծումները հայոց հրապարակախոսության մեջ։ Ժողովածուն միայն յուրատեսակ ծաղկաքաղ է։*

*Բնագրերը քաղված են ինչպես հնօրյա և մանավանդ նորօրյա հրատարակություններից, այնպես էլ ժամանակի պարբերականներից։*

*Որքանով առայժմ մշակված չեն բնագրերի հրատարակության միասնական սկզբունքներ, նյութերը ներկայացված են հիմնականում հեղինակային գրությամբ ու տառադարձումներով։ Այդ իսկ պատճառով մասնավորապես արևմտահայ հեղինակների բնագրերում հանդիպում են և՛ «էլը» առանձին, և՛ ապաթարցով, և՛ միասին, ինչպես և այլ տառադարձումներ։*

*Համառոտ օգտագործված համառոտագրությունները՝ ԵԼԺ—Երկերի լիակատար ժողովածու, ԵԺ—Երկերի ժողովածու, ԵՐ—Երկեր, ԸԵ—Ընտիր երկեր։ Սուրանկյուն փակագծերով <> առանձնացված են պայմանական՝ հեղինակին չպատկանող վերնագրերը։*

## Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆ

<Ճառ Հայաստանի ազատագրման առթիվ>—*Հատվածները քաղված են՝* Մ. Թաղիադյան. *Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր (Գրական ժառանգություն, 9), Երևան, 1975, էջ 383—389։*

*Նույն գրքից են քաղված նաև որոշ ծանոթագրություններ։ Տպագրվել է՝ «Յուցակ վասն յամի տեառն 1829» (Կալկաթա) խորագրով տարեցույցում։ «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» գրքում (Երևան, 1978) զետեղված է <Ճառ ի վերայ ազատութեան հայոց աշխարհին> խորագրով (էջ 59)։*

*1 1829 թ. փետրվարի 7-ին Կալկաթայում Պողոս Հորդանանյանի տանը հրավիրված ժողովում ընթերցվում է Ներսես Աշտարակեցու ողջույնի նամակը Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու առթիվ։ Այնուհետև Թաղիադյանը արտասանում է այս ճառը, ապա ընթերցվում է պատասխան նամակը՝ Աշտարակեցուն։*

*2 Այս կապակցությամբ տե՛ս* Խ. Աբովյան. *ԵԼԺ, հ. 8, Երևան, 1958, էջ 56։*

*3 Ակնարկվում է պարսից առասպելական դյուցազուն Ռոստամը և ուժով ու քաջությամբ համեմատվում հունական դիցաբանական Հերկուլեսի հետ։*

*4 Ցարական զորքերը Ի. Ֆ. Պասկևիչի հրամանատարությամբ այդ ժամանակ գրավել էին Թավրիզը։*

*5 I—V դդ. հայոց թագավորական հարստության զինանշանը։*

*6 Հնագույն որոշ ժողովուրդների դիցաբանության մեջ սեփական մոխիրից հառնող թռչուն։ Որպես մշտական վերածնության խորհրդանիշ՝ փյունիկ թռչունի առասպելը*

լայնորեն տարածված է եղել միջին դարերում։ Հայոց գրականության մեջ Հայաստանը հաճախ է զուգորդվել այդ թռչունի հետ։

7 Ցարական Ռուսաստանի զինանշանը։

Հառաջադիմություն ազգային—*հատվածները քաղված են «Ազգասեր» (շաբաթաթերթ, օրագիր Արարատյան ընկերության, քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելյաց, 1845—1846, Կալկաթա), 1845, № 1, № 12։ «Բանասիրականք» ընդհանուր խորագրի տակ շարունակվելով, հոդվածաշարը տպագրվել է շաբաթաթերթի 1845-ի հերթական բազմաթիվ համարներում։*

Միաբանեալ Նահանգք Ամերիկայ—*քաղված է՝ Մ. Թաղիադյանի նշված գրքից՝ էջ 310—311։ Տպագրվել է «Ազգասեր», 1846, № 56։*

*8 1845 թ. Ամերիկան տիրում է մեքսիկական Տեխասին. 1846—1848-ին տեղի է ունենում Ամերիկայի նվաճողական պատերազմը Մեքսիկայի դեմ։*

<Աստուրիին>—*քաղված է նշված գրքից՝ էջ 319—320։ Հոդվածը՝ «Բազդալականք (Կալկաթա)» խորագրով, տպագրվել է «Ազգասեր», 1846, № 92։*

## Խ. ԱԲՈՎՅԱՆ

Դորպատյան օրագրեր—*հատվածները քաղված են՝ Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. 6, Երևան, 1955, էջ 35, 50—51, 73—74, 298։ Ծանոթագրությունները ևս հիմնականում քաղված են նույն հրատարակությունից։*

*1 Խոսքը վերաբերում է 1830 թ. ժողովրդական ցույցերին Անգլիայում. Լոնդոնում ապստամբները քարկոծում են տորիների կուսակցության պարագլուխների տները, հարձակվում բանտերի վրա, հրկիզում տներ, տեղի են ունենում սպանություններ։ Ապստամբությունը ճնշվում է երրորդ օրը։*

*2 Նկատի ունի 30-ական թվականների հեղափոխական շարժումները։ «Դորպատյան օրագրերի» նախորդ էջերում (1831, սեպտեմբեր) հանդիպում ենք՝ «...զրույց վասն պատերազմին Պոլշիոյ» տողի. որոշակիորեն ակնարկվում է 1830—1831 թթ. լեհական ապստամբությունը, որն իր բնույթով գերազանցապես ազնվական-շլյախտական էր։ Այդուհանդերձ, ապստամբությունն ուներ առաջադիմական բնույթ, ուղղված էր ցարիզմի դեմ և կազմում է կարևոր շրջան ազգային անկախության համար լեհ ժողովրդի մղած պայքարում։ Ինչպես գրում է Վ. Ղազարյանը՝ «1830—1836 թթ. Աբովյանի համար մտավոր հասունացման տարիներ էին։ Նրա զորեղ հիշողությունն ու բնական մյուս ձիրքերը միջոց տվին ստանալ այն բանիմացությունը, որն անհրաժեշտ էր ազգային գործչին։ Մի շարք հանգամանքներ, այն է՝ համալսարանական ազատությունները, դասախոսների հակացարական տրամադրությունները, ուսանողության հայրենակցական գաղտնի խմբակները և Եվրոպայում տիրող հեղափոխական մթնոլորտը կանխորոշեցին Աբովյանի աշխարհայացքի հետագա զարգացումը». Խաչատուր Աբովյան, Երևան, 1979, էջ 28—29։*

<Համառոտ ակնարկ նայերի մասին>—*հատվածները քաղված են նույն հրատարակությունից. հ. 8, Երևան, 1958, էջ 34—37։*

*Ըստ հատորի համապատասխան ծանոթագրության՝ թեև գերմաներենով շարադրված այս ակնարկը թվագրված չէ, բովանդակությունից և առանձին արտահայտություններից հետևում է, որ գրված պետք է լինի 1834 թ. Դորպատում։*

Նամակ Դ. Ֆ. Պարրոտին—Հատվածը քաղված է՝ «Դիվան Խ. Աբովյանի», հ. 2, Երևան, 1948, էջ 35—36, 37։

Ըստ Դիվանի Ե. Շահազիզի համապատասխան ծանոթագրության հասցեատիրոջ՝ «Պարրոտի հայրը լինելու ենթադրությունը շատ հավանական պետք է համարել։ Պարրոտի հայրը՝ Գեորգ Ֆրիդրիխ Պարրոտը Դորպատի համալսարանի առաջին ռեկտորն է եղել և բնագիտության պրոֆեսորը։ 1826 թվին նա հրաժարվել է պաշտոնից և փոխադրվել է Պետերբուրգ, որտեղ նշանակվել է Գիտությունների ակադեմիայի անդամ»։

Մ. Ծաղպատիլ պարոննե՛ր—Հատվածը քաղված է՝ ԵԼԺ, հ. 8, էջ 309։

Ըստ հատորի ծանոթագրության ճառը գրվել և արտասանվել է Պետերբուրգում, ուր Աբովյանն անցկացրեց 1834 թ. դեկտեմբերի վերջերից մինչև հաջորդ՝ 1835 թ. փետրվարի սկզբները։

«Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին»—Հատվածները քաղված են՝ ԵԼԺ, նույն հատորից, էջ 82, 86, 91, 93։ Գերմաներենով շարադրված այս հոդվածի գրության թվականն է՝ 1836, Մոսկվա։

Ի վերայ հայրենասիրութեան—Քաղված է նույն հատորից, էջ 101—103։ Գրության մոտավոր ժամանակը՝ 1837—1838 թթ.։

Ռ. Վ. Ռոսկովշենկոյին—Քաղված է նույն հրատարակությունից. հ. 10, Երևան, 1961, էջ 257—258։

3 Ըստ համապատասխան ծանոթագրության՝ «Պարզ չէ, թե «տասը տարի» ասելով Աբովյանն ինչ նկատի ուներ»։

4 Ըստ համապատասխան ծանոթագրության ռուս-պարսկական պատերազմի ժամանակ. 1827 թ. Աբովյանը կարճ ժամանակով փախել է Թեյլաֆի կողմերը։

5 Ըստ ծանոթագրության Աբովյանը նկատի ունի պաշարված Ղարաքիլիսայում անցկացրած երեք ամիսները (1826 թ. հուլիսից—հոկտեմբեր) և Հաղպատում կռիվներին մասնակցելը։

Ուղևորութիւն դէպի Անիի աւերակներ—Հատվածը քաղված է նույն հրատարակությունից, հ. 7, Երևան, 1956, էջ 201։

6 Ըստ հատորի ծանոթագրության՝ Աբովյանի վերջին մեծ ստեղծագործությունն է, վերաբերում է 1847 թ. հոկտեմբերի Աբովյանի ուղևորությանը Անի։

## Ղ. ԱԼԻՇԱՆ

Նախաբան առ Հայկակ—Հատվածները քաղված են՝ Ղ. Ալիշան, Հուշիկք հայրենեաց հայոց, հ. 1, Վենետիկ, 1869; էջ 1—2, 7, 8—9, 12—13, 16—17։

1 Հայկակը «Հուշիկքի» այն անձն է, որին մեջընդմեջ դիմում է Ալիշանը՝ այս նախաբանից ներառյալ 2-րդ հատորի (Վենետիկ, 1870) վերջաբանը («Վերջաբան առ Հայկակ»)։

2 Ըստ Հոմերոսի «Իլիականի» Տրոյայի առումը վերաբերում է մոտավորապես 1200 թ.՝ մ. թ. ա.։

3 Նկատի ունի Լեոնիդաս Սպարտացու գնդի հերոսական պայքարն ու նահատակությունը պարսիկների դեմ Թերմոպիլյան ճակատամարտում և ապա՝ Սոլոնի հաղթանակը պարսիկների դեմ՝ մ. թ. ա. 480 թ.։

Հայերի կոչումը մարդկության մեջ — *քաղված է* Ստ. Նազարյան, *Եր. Հ. 1, 1913, էջ 87։ Հոդվածը տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1859, № 1, էջ 1—14. Ս. Նազարյանց ստորագրությամբ։*

*1 Բնութագրելով Նազարյանի գործունեությունը, Մ. Մխիթարյանը գրում է. «Նազարյանի հյուսիսափայլյան շրջանի գործունեության համար բնորոշն այն է, որ նրան հուզել են հայերի վիճակի բարվոքման, նրանց դաստիարակության, կրթության, եվրոպական գիտության հետ հաղորդակցվելու հարցերը»* (Մ. Մխիթարյան. *«Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 46)։ Այդ ամենը արտահայտվել է նաև այս հոդվածում։*

Վերջաբան Հյուսիսափայլի 1858 թվականի — *հատվածը քաղված է՝ «Հյուսիսափայլ», 1858, № 12, էջ 532։*

*2 «Հյուսիսափայլը»՝ օրագիր ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության. մոտ մեկ տարի ընդհատումով հրատարակվել է 1858—1864 թթ. Մոսկվայում, խմբագիր-հրատարակիչ՝ Ստ. Նազարյանց։ Առաջին համարից «Հյուսիսափայլին» աշխատակցել է Մ. Նալբանդյանը. նրա կյանքի և գործունեության 1858—1860 թթ. իրավամբ համարվում է «Հյուսիսափայլի» շրջան։*

Հ. Պոննուկյա՞ին — *քաղված է՝* Ստեփանոս Նազարյան. *Նամականի, Երևան, 1969, էջ 470—471։*

*3 1875 թ. Բոսնիա և Հերցեգովինա սլավոնական նահանգներում բռնկվում է ապստամբություն թուրքական բռնապետության դեմ։ 1876-ին Թուրքիային պատերազմ է հայտարարում Սերբիան։ Ըստ «Նամականիի» համապատասխան ծանոթագրության՝ մամուլի արձագանքները չհաշված, Եվրոպայում և Ռուսաստանում այդ երկու տարում տպագրվել է հազարից ավելի բրոշյուր՝ ի պաշտպանություն սլավոնների ու սերբերի։*

Ս. Մայսուրյանցի՞ — *հատվածները քաղված են նույն գրքից, էջ 490—491։*

*4 1877 թ. հուլիսի 8-ից Պլևնայում մղվում են մարտեր ռուսական, ռումինական միացյալ զորքերի, բուլղարական աշխարհազորի և թուրքական բանակի միջև։ Նոյեմբերի 28-ին (հ. տ.) ռուսական զորքերը գրավում են Պլևնան։ Բուլղարիան ազատագրվում է թուրքական լծից։*

*5 Սան-Ստեֆանոյում կնքված դաշնագրով, որը Ռուսաստանի պահանջով համընկնում է ճորտատիրության վերացման օրվանը Ռուսաստանում՝ 1878 թ. փետրվարի 19 (մարտի 3), թուրքական լծից ազատագրվում են միլիոնավոր բուլղարներ և սերբեր։ Ռուսաստանին են անցնում Բաթումը, Կարսը, Արդահանը, Բայազետը։*

*Դաշնագրի Արևմտյան Հայաստանի «նահանգական բարենորոգումները» վերաբերող 16-րդ հոդվածը սա էր. «Որովհետև ռուսական զորքի՝ Հայաստանում գրաված, բայց Թուրքիային վերադարձվելիք տեղերից մեկնելը կարող է առաջ բերել ընդհարումներ և շփոթություններ, ուստի Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայերի բնակած նահանգներում անհապաղ իրականացնել տեղական պետքերի պահանջած բարվոքումները ու բարենորոգումները և երաշխավորել նրանց ապահովությունը քրդերի և չերքեզների դեմ» (տե՛ս* Սարուխան, *Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), հ. 1, Թիֆլիս, 1912, էջ 290)։*

Հառաչաբան—հատվածները քաղված են՝ «Արևելք», 1855, № 1, էջ 1—2, ստորագրված է Ս. Ոսկանյան։ «Արևելք» կիսամսյա հանդեսը հրատարակվել է Փարիզում 1855—1856 թթ., խմբագիր՝ Ս. Ոսկանյան (Ստեփան Ոսկան)։

Հառաչաբան—հատվածը քաղված է՝ «Արևմուտք», 1859, № 1, էջ 2, անստորագիր է։ «Արևմուտք» կիսամսյա հանդեսը (արձակաբար եվրոպայի լուսավորության) հրատարակվել է 1859-ին, ապա 1864—1865 թթ. Փարիզում. խմբագիր Ս. Ոսկանյան։

Խաչատուր Աբովյան—հատվածները քաղված են՝ «Արևմուտք», 1859, № 7, էջ 54—56։ Շարունակությունը տպագրվել է հանդեսի № 6, 7 և 10-ում, անստորագիր։ Հատվածի բնաբանը քաղված է «Վերք Հայաստանի» վեպից՝

> Վա՜յ էն ազգին, որ աշխարհումս անտեր ա,
> Վա՜յ էն երկրին, որ թշնամու գերի ա,
> Վա՜յ էն խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարհը
> Չի պահպանի, ու հարամու ձեռք կուտա։

Պատերազմի լուրեր—հատվածները քաղված են՝ «Արևմուտք», 1859, № 10, էջ 76—77, անստորագիր են։ Պատերազմի ընթացքը լուսաբանելու համար Ոսկանյանը հատուկ խնդրանքով թույլտվություն է ստացել ֆրանսիական կառավարությունից։

1 Իտալա-ֆրանս-Ավստրիական պատերազմը սկսվել է 1859 թ. ապրիլի 29-ին։ Դա Իտալիայի համար ազգային-ազատագրական պատերազմ էր։ Զինադադար կնքվեց հուլիսի 11-ին։

2 Խոսքը վերաբերում է Լուի Նապոլեոն III-ին։

3 Նկատի ունի Սարդինիայի թագավոր Վիկտոր Էմանուելին։

4 Օտարերկրյա տիրապետության դեմ ազգային բոլոր ուժերը միավորելու համար այդ օրերին Ջ. Գարիբալդին առաջնորդվում էր «Իտալիան և Վիկտոր Էմանուելը» նշանաբանով։ Հետագայում իր մեմուարներում Գարիբալդին գրում էր, որ նման համոզմունքը այն ժամանակ հարկադրել է լռեցնել սեփական «հանրապետական խիղճը», և որ շուտով իր հայացքները փոխվել են, որքանով չափազանց մեծ են եղել «միապետի հանցագործությունները» (տե՛ս В. Е. Невлер (Вилин), Джузеппе Гарибальди, М., 1961, стр. 71).

Պատերազմի լուրեր—հատվածաբար քաղված են՝ «Արևմուտք», 1859, № 11, էջ 86—87։

Պատերազմի լուրեր—հատվածաբար քաղված են՝ «Արևմուտք», 1859, № 12, էջ 93։

5 Ավստրիայի դեմ պատերազմ սկսելուց առաջ Մաձինիի հանրապետական կուսակցությունը քննադատում էր Նապոլեոն III-ի և Սարդինիայի կառավարող շրջանների քաղաքականությունը։ Պատերազմն սկսելուց հետո հանրապետականները փոխում են իրենց դիրքորոշումը, միավորվում հանուն Իտալիայի ազատագրության։ Գարիբալդու հրամանատարության տակ կռվում էին Մաձինիի կողմնակիցներից շատերը։ Իր երեք հազարանոց ջոկատի գլուխն անցած 1859-ի մայիսի 17-ին Գարիբալդին հաստատվում է Տիչինո գետի ձախ ափին և ավստրիական քսանհազարանոց բանակի դեմ վճռական մարտերից հետո մտնում Լոմբարդիայի Վերիզ քաղաքը։ Դա նրա առաջին հաղթական երթն էր 1859 թ.։ Հունիսի սկզբներին ազատագրվում են Լոմբարդիայի մայրաքաղաք

Միլանը, ապա մյուս քաղաքները։ 1861 թ. մարտի 17-ին Վիկտոր Էմանուելը հռչակվում է Իտալիայի թագավոր։

6 Պոնտոսի թագավոր Փառնակին հաղթելուց հետո՝ Հուլիոս Կեսարի զեկույցը սենատին։

Մանր լուրեր—քաղված են՝ «Արևմուտք», 1859, № 12, էջ 95—96։

7 Նիսը՝ Նիցցան է, որ այն ժամանակ դեռևս իտալական քաղաք էր։

8 Տաս տարեկանում Գարիբալդին մտնում է ծովային ծառայության մեջ և նավարկում մինչև Օդեսա։

9 Մաձինիի հետ կազմակերպած այս ապստամբությունը Ջենովայում ձախողվում է, մասնակիցները ձերբակալվում են, Գարիբալդիին հաջողվում է փախչել և ապաստանել Մարսելում։

10 Նկատի ունի Հանուն Ուրուգվայի ազատագրության Գարիբալդիի չորսամյա (1843—1846) հաղթական մարտերը Արգենտինայի բռնապետության դեմ։

11 Գարիբալդին Նիցցա է հասնում 1848-ի հունիսի 21-ին, որ վեր է ածվում ժողովրդական տոնակատարության։ Նա պատրաստ էր մինչև վերջ մարտնչել հանուն Իտալիայի ազատագրության, սակայն, մարտի 25-ին Ավստրիային պատերազմ հայտարարած Սարդինիայի թագավոր Կարլ Ալբերտը խուսափում է ռազմական վճռական գործողություններից։ 1848—1849 թթ. հեղափոխության օրերի եռանդուն գործունեությունից հետո, հեղափոխության պարտության հետևանքով Գարիբալդին Իտալիայից հեռանում է, 1849-ի սեպտեմբերի 16-ին, 1850-ի ամռանը՝ աշխատանք գտնելու հույսով, հասնում Նյու Յորք։

12 Գարիբալդին նորից Իտալիա է վերադառնում 1854-ին և նախապատրաստությունից սկսած գլխավորում 1859—1860 թթ. իրադարձությունները։ «Պատերազմական լուրերի» քննությունը տե՛ս Մ. Ն. Հակոբյանի «Իտալական ազատագրական պատերազմի արտացոլումը «Արևմուտքում» հոդվածը՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 1, էջ 191—201։

Քաանչուրս ստուգյան—հատվածները քաղված են՝ «Արևմուտք», 1859, № 17, էջ 131—132, 133, ստորագրված է՝ Ս. Ոսկանյան։

13 Նկատի ունի 1848 թ. փետրվարյան հեղափոխությունը Ֆրանսիայում, որը վերածվեց հունիսյան ապստամբությանը։ Ծածագրելով հաջորդ՝ 1849 թ. հունիսյան իրադարձություններին իբրև ականատես մասնակցած Ստ. Ոսկանի դիմապատկերը, այդ օրերի վերաբերյալ Լեոն գրում է. «Հունիսի 13-ին սկսվում է մեծ բազմության ցույցը։ Բայց գեներալ Շանգարնիե, վաղօրոք պատրաստություններ տեսած լինելով, զորք է հանում ցույց անողների դեմ և ցրում է նրանց։ Ցույցին մասնակցում էր և Ստեփան Ոսկանը, որ այդ ժամանակ դեռ ուսանող էր։ Ահա ինչպես է բացատրում նա այդ դեպքը.

«Հռոմայի դեմ պատերազմին ժամանակը՝ բազմաթիվ ուսանողը...Սահմանադիր ժողովին աղերսագիր մը տալու որոշում ըրին։ Այս աղերսագիրը հաճնոտ բողոք մը կը պարունակեր Ֆրանսիայի տերության արտաքին քաղաքավարության դեմ։ Ուսանողք, միագումդ ժողվելով և վարժատուններու դրոշը առնելով, սկսան պողվարներու վրայեն դեպի ազգային ժողովը ուղղել։ Իրենց նպատակը ոչ ապստամբել էր և ո՛չ կռվել, և մեջերնին մեկը փոքրիկ զենք մ'անգամ չուներ։ Կրոնական կողմը այս բողոքի շարժումը զրպարտելով և ազգային զորքը անկե խաբվելով, սկսավ ուսանողներու դեմ դնել և պզտի ընդդիմութենե մը ետև ցրեց զանոնք։ Աղերսագիր տանող բազմության դրոշակիրը մեր բարեկամներեն մեկն էր, և որովհետև իրեն քով կը գտնվեինք, վայրկյան մը դրոշը մեր

ձևով անցավ շփոթին մեջ և կարող եղանք զայն պաշտպանելու իբրև ուսանող և ոչ իբրև մարտիկ ապստամբ»։

Հետաքրքրական է մանավանդ այն, թե ինչ էր տեսնում Ստեփան Ոսկանը իտալացիների համար սարքած այդ ցույցի մեջ։ Պատմելով իր ցույց տված «թեթև արիությունը, որ հազիվ թե հիշելու արժանի է», նա շարունակում է.

«Տաս տարի է անցած այս փոքր դեպքին վրա և դեռ այսօր ղղջում մը չենք զգար մեր բռածեն։ Ո՛ւր և գտնվինք, ազատության հետ պիտի մնանք և բռնությունը չպիտի սիրենք երբեք թե՛ Հայերուն և թե օտարներուն մեջ։ Մեզի համար ազատութենեն դուրս յուսավորություն չկա... Այս մեր հանցանք կը խոստովանինք, մեզա՜ չենք ըսեր մեկու մ՚առջև։ Մեզա՜ ըսելու սովորություն չունինք, վասնզի ազատությունը ուրանալու փափագ մը չենք զգար... Զիգալիա կը սիրեինք, միշտ սիրեր ենք, Իգալիա իր արյունաթաթավ ձակտով միշտ եղած է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու...»։

Այս սերը դեպի ազատություն որոնող Իտալիան բավական թանկ նստեց Ստեփան Ոսկանին։ Իբրև հունիսի 13-ի ցույցին մասնակցող նա բանտարկվեց և 54 օր մնաց բանտում» (տե՛ս Լեո. Գրական կորուստներ. Ստեփան Ոսկան, «Մուրճ», 1901, № 11, էջ 120—121)։

14 Նկատի ունի «Մասիս» շաբաթաթերթի շուրջը խմբված Կ. Ութուջյանի, Հ. Սըրճիկյանի, Խ. Միսաքյանի և այլոց հարձակումները. վատություն-մատնությունները իր անձի և իր խմբագրությամբ լույս տեսնող «Արևմուտքի» դեմ. որոնց և հասցեագրված է ծանոթագրվող «Քսանեչորս սուտություն» պամֆլետը։

15 Հայ ժողովրդի պատմության դաժան ժամանակներում, իհարկե, այդպիսի իտալացիներ շատ գտնվեցին և դրանց թվում նույն ժողովածուում զետեղված Արփ. Արփիարյանի «Օրվան կյանքը» հոդվածում (1898) վկայակոչվող Վիթոն՝ ժամանակին Իտալիայի Հյուպատոսը Հալեպում, Գարիբալդու զինվորներից մեկը։

Ազատություն ի պ. Ժյուլ Սիմոնե—քաղված է՝ «Արևմուտք», 1859, № 19, էջ 146—149, անստորագիր։

16 Բնագրում՝ Հաւատք րռ կենցուցին զքեզ, Մատ., ԺԸ, 42։

17 Այսինքն Բելի դեմ մարտնչած Հայկ նահապետի։

18 Նորից նկատի ունի Պոլսի «Մասիս» շաբաթաթերթի շուրջը խմբված անձանց հարձակումները։

19 Հնօրյա Գրիգոր Լուսավորչական դավանանքից բացի, հայերը դավանում էին նաև կաթոլիկ և բողոքական դավանանք։ Դավանանքային խտրականությունը մեծապես վնասել է հայ ժողովրդի ազգային միասնությանը։

20 Տողատակին նշված է Ջ. Միլտոն։

21 Ինչպես հետևում է Ոսկանյանի վկայությունից՝ Փարիզում ուսանելու տարիներին նրա դասատուներից է եղել նաև Ժյուլ Սիմոնը։

Մեծ ապստամբություն Ֆրանսայի ի պ. Միյենի գիրքը—քաղված է՝ «Արևմուտք», 1859, № 20, էջ 156—159, անստորագիր։

22 Հռետորական ձիրքի, Սահմանադիր ժողովում կրակոտ ելույթների համար Ոսկանյանը Միրաբոյին անվանում է ֆրանսական Դեմոսթենես։

23 1787—1789 թթ. Ֆրանսիայում հասունանում է հեղափոխական իրավիճակ։ Գեներալ շտատների ընտրություններին՝ 1789-ի հունիսի 17-ին, երրորդ դասի պատգամավորները հռչակում են Ազգային ժողովը, հուլիսի 9-ին՝ Սահմանադիր ժողովը։ Գյուղացիական ապստամբությունների և քաղաքային ցածր խավերի ելույթների ճնշման տակ

Սահմանադիր ժողովը ֆեոդալական հասարակարգի դեմ ընդունում է մի շարք որոշումներ։

24 Ակնարկում է 1791 թ. հունիս-հուլիսյան դեպքերը Փարիզում, Լյուդովիկոս XVI-ի փախուստը։

25 «Արևմուտքում» տողատակ նշված է՝ Դանտոն։

26 1792 թ. ապրիլի 20-ին սկսում է պատերազմ Ֆրանսիայի և Ավստրիայի միջև, այնուհետև 1792—1793 թթ. Ֆրանսիայի դեմ պատերազմում են Պրուսիան, Անգլիան և այլ երկրներ, համարյա ամբողջ Եվրոպան։ 1792-ի սեպտեմբերի 20-ից Ֆրանսիան շահում է մի շարք ճակատամարտեր, սեպտեմբերի 21-ին Կոնվենտը արձակում է թագավորական իշխանությունը, Ֆրանսիան հռչակվում է հանրապետություն։

27 Խոսքը վերաբերում է Ալֆոնս Լամարթինի 1847 թ. հրապարակած «Ժիրոնդիստների պատմությանը», որտեղ, խստորեն քննադատելով յակոբիններին, Լամարթինը պաշտպանության տակ էր առնում ժիրոնդիստներին (խոշոր բուրժուազիայի կուսակցությանը)։

28 Մոնտայնները Կոնվենտում ներկայացնում էին բուրժուական հեղափոխական-դեմոկրատական պատգամավորների խումբը։ Նրանց անունը ծագում է ֆրանսերեն լեռ բառից, որովհետև նիստերի դահլիճում այդ խումբը գրավում էր ամենավերին օթյակները։

29 Պատերազմի հարցից ծայր են առնում հակառությունները ժիրոնդիստների և յակոբինների միջև, և 1792 թ. աշնանը ժիրոնդիստները վտարվում են Յակոբինյան ակումբից։ Սրանից հետո յակոբիններ ու մոնտայններ անունները՝ համանիշներ են։ 1793 թ. մայիսի 31—հունիսի 2 դեպքերից հետո ժիրոնդիստները հեռացվում են Կոնվենտից և դատապարտվում մահապատժի։ Ռոբեսպիերի ղեկավարությամբ յակոբինյան դիկտատուրան հաստատվելուց հետո նույն բախտին են արժանանում Դանտոնը և ձախ յակոբինների զգալի մասը. նրանք ևս հեռացվելով Կոնվենտից, դատապարտվում են մահապատժի։

30 1794 թ. ամռանը Կոնվենտում ձևավորվում է մեծամասնություն՝ ընդդեմ յակոբինների։ Հուլիսի 27-ին (թերմիդորի 9) Ռոբեսպիերը և նրա մերձավոր համախոհները բանտարկվում են, հաջորդ օրը ենթարկվում մահապատժի։ Թերմիդորի հեղաշրջումով հեղափոխությունն ավարտվում է, իշխանությունն անցնում է խոշոր բուրժուազիայի ձեռքը, որը և կյանքի է կոչում Դիրեկտորիան՝ 1795—1799 թթ., և հաջորդաբար վերացվում են դեմոկրատական ազատությունները։

Այս իրադարձությունները, ինչպես և Նապոլեոն III-ի գործունեությունը գնահատելիս արտահայտվել են Նալբանդյանի հայացքների հակասականությունը, չափավորությունն ու սահմանափակությունը։

31 Օգտվելով Դիրեկտորիայի ճգնաժամից, գեներալ Բոնապարտը 1799 թ. նոյեմբերի 9—10-ը կատարում է պետական հեղաշրջում. Ֆրանսիան թևակոխում է նոր շրջան, որը տևում է մինչև 1814 թ.՝ Նապոլեոն Բոնապարտի անկումը։

32 Խոսքը վերաբերում է ամիրա Պետրոս Խորասանճյանին, որը հովանավորում էր «Մասիս» շաբաթաթերթը։ Այդ առթիվ Ս. Ո. ստորագրությամբ «Արևմուտքի» № 12-ում (էջ 96) կարդում ենք. «Շատ ազգայիններու հարցուցինք, թե ո՞վ է այն ամիրան, որ Մասիս անուն «խայտառակ թերթը» կը պաշտպանե, և ամեն կողմեն միաբերան պարոն Պ. Խորասանճյանին անունը լսելի եղավ մեր բոլորտիքը... Մենք գիտեինք արդեն, որ այդ «խայտառակ թերթը» գործի մ'է ստորին մարդերու, բայց չէինք ուզեր այս ետրին-

ների մեջ նշվել Պ. Խորասանճյանը, վասնզի մասնավոր նամակով երբեմն իր զզվանքը հայտներ էր մեզի «խայտառակութեան» մը պաշտպանելու համար...

Կ'երևի թե, մինչև այսօր, Պ. Խորասանճյանը փառք կը սեպէ իրեն պաշտպանել... «խայտառակութիւնը...»։ Կը նշանակենք զայս և կ'անցնինք անդին։ Խօսքը ոչ միայն ըսել տվողին, այլև ըսողին արժէքը ունի, և Մասիս անուն «խայտառակ թերթին» մեզի դեմ գրած նախատինքը, նաև Խորասանճյան Ամիրայի մը պաշտպանության տակը, պատասխանի արժան չէ։ Այս նախատինքը հիմա նոր նշանակութիւն մը կրնա ընդունիլ և շատ բաներ մեկնել... բայց էր և կմնա մեր արհամարհության ներքև։

33 Ժողովրդական առած։

Լեռնականք—հատվածները քաղված են՝ «Արևելք» (1855—1856) և «Արևմուտք» (1859, 1864—1865) հանդեսների անոտացված մատենագիտություն», Երևան, 1980, էջ 92—94։ Տպագրվել է «Արևմուտք», 1864, № 4, էջ 25—27։

34 Ըստ նույն գրքի՝ «լեռնականի կամ լեռի մարդու» կերպարը Ոսկանյանը բնութագրել է նկատի ունենալով զեյթունցիներին, որով և այլաբանորեն դրսևորվում է հեղինակի վերաբերմունքը Զեյթունի հերոսամարտերի և նրանց դյուցազունների նկատմամբ» (էջ 93)։

35 Ըստ նույն տվյալների՝ հոդվածի վերջում ստորատակ կցված է Ալ. Մյուսեից՝ «Հայվայլոտ հեղինակեն», մի հատված՝ ֆրանսերեն» (էջ 94)։

## Հ. ՍՐՎԱՁՅԱՆ

Առ պարոն Պ... իւր յառաջաբան և նպատակ գործոյս—հատվածը քաղված է Հ. Սրվաձյան, *Հրապարակախոսություն*, Երևան, 1960, էջ 39, 40—41։ Հոդվածը տպագրվել է՝ «Մեղու», 1856, № 1, անստորագիր։ Այս և հաջորդ ընդհանուր տեղեկությունները ևս քաղված են նույն գրքից։ «Մեղու» կիսամսյա հանդեսը որոշ ընդհատումներով հրատարակվել է 1856—1865 թթ., Կ. Պոլսում, խմբագիր՝ Հարություն Գ. Սրվաձյան։

Պանդուխտի ժողովրդյան խոստովանությունը—հատվածը քաղված է նույն գրքից, էջ 56—57։ Տպագրվել է՝ «Մեղու», 1859, № 120, անստորագիր։

Ազգային Սահմանադրություն—հատվածը քաղված է նույն գրքից, էջ 93։ Հոդվածը տպագրվել է՝ «Մեղու», 1860, № 99, անստորագիր։

1 1860 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և ազգային ժողովը վավերացնում են Ազգային սահմանադրությունը. հոդվածը գրված է այդ կապակցությամբ.

«Ազգային սահմանադրությունը» հայերեն և թուրքերեն լեզուներով տե՛ս Սարուխան, նշվ. աշխ., Հավելված, էջ 1—105։

Նույն այս գրքում, բնութագրելով Ազգային սահմանադրությունը, Սարուխանը «միջազգային իրավագետ» Ռոլեն-Ժակմենի «Հայաստանը, հայերը և դաշնագրությունները» գրքից (ֆրանսերեն լեզվով հրատարակվել է 1877 թ. Փարիզում, ռուսերեն՝ 1896 թ. Մոսկվայում) բերում է սահմանադրությունը բնութագրող այսպիսի ուշագրավ հատվածներ. «Նախ կանգ առնենք այս կանոնադրության անվան վրա։ Նա կրում է՝ սահմանադրություն մեծաշուք կոչումը, ուր որ ինչպես ավելի հարմար և իր բովանդակության ավելի համապատասխան կը լիներ անվանել պարզապես «Կանոնադրություն հայ համայնքի», որի նպատակն ուրիշ բան չէ, եթե ոչ կազմակերպումն կիսով չափ աշխարհական և կիսով չափ կրոնական մի հասարակության, որի իրավունքները դադարում են

ճիշտ այնտեղ, որտեղ սկսում են մի խնկական պետության իրավունքները։ Ես հակված եմ կարծելու, թե այս խաբուսիկ և բարձրագոչ անունը պարզ սխալմունքի արդյունք չէ։ Թուրք կառավարությունը, ընդունելով այս սահմանադրությունը, հավատարիմ է մնացել իր սիստեմին, որ է փառավոր կոչումներ... դնել դատարկ տեղիների վրա...

...Այնտեղ կա ամեն ինչ, բացի մի հոդվածից, որի վրա հայը կարողանար հիմնվել արգելելու համար, որ թուրքը չխլի նրա ոչխարները, ձեռք չանցկացնի նրա աղջկան և չավերի նրա կալվածը, որ հարկահավաքը երկու և երեք անգամ չպահանջի նրանից միևնույն հարկը,—մի խոսքով ամեն ինչ կա, բացի մի այնպիսի կարգադրությունից, որ նրան, հային, իբրև երաշխավորություն ծառայեր ընդդեմ Թուրք կառավարության կամայականության և ստիպեր սրան գործունեություն ցույց տալու։ Այս սահմանադրության մեջ ոչ մի տեղ չկա լուրջ երաշխավորություն հայ ազգի ո՛չ հավաքական և ո՛չ էլ նրա մասնավոր անհատների անձնական իրավունքների մասին... Չէ կարելի չխոստովանել, որ Ազգային սահմանադրության վարչական բարդ կազմվածքի բոլոր գործողությունները վերջ ի վերջո կախում ունեին Բ. Դռան բարի կամքից, որ հասարակական ուժի միակ տերն էր։ Մյուս կողմից անկարելի է, որ այսչափ մեծ թվով ժողովների և խորհուրդների (և դիվանների) մեջ թյուրիմացություններ և ընդհարումներ չծագեին, որոնք ավելի պիտի թուլացնեին գործը, քան թե զորացնեին» (էջ 17, 18—19)։

Ազգօգուտ ընկերության ճանախիլը—տողերը քաղված են նույն գրքից, էջ 124. տպագրվել է՝ «Մեղու», 1860, № 170—172, անստորագիր։

2 1860-ի սեպտեմբերին Կ. Պոլսում հիմնվում է «Բարեգործական ընկերությունը»։ Հիմնադիրներն էին Մ. Աղաթոնը և Հ. Ճիշմանյանը, անդամները՝ Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Մ. Մամուրյանը, Ս. Հայկունին, Մ. Պեշիկթաշլյանը, Հ. Սրվաճյանը, Ս. Թագվորյանը, նույնիսկ Միքայել Նալբանդյանը։ «Բարեգործականը» կարճ ժամանակից մեծ օգնություն ցույց տվեց Զեյթունի ապստամբներին (տե՛ս Հ. Ղազարյան. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 556, 557)։

Մ. Նալբանդյանը Կ. Պոլսում է եղել 1860-ի նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 21-ը և 1861-ի նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 27-ը։

3 1860 թ. «Մեղուն» լայնորեն տպագրում էր Մ. Նալբանդյանի (Կոմս Էմմանուել, Ս. Շահբեգ) գործերը։

Ինչպես այս, այնպես էլ մյուս հոդվածներում Սրվաճյանը հավատարիմ էր դեմոկրատական հրապարակախոսության նալբանդյանական ելակետներին։

Կարիպալտի—քաղված է նույն գրքից, էջ 125—126։ Տպագրվել է՝ «Մեղու», 1860, № 116։

4 Իտալիայի ազատարար Ջ. Գարիբալդուն Սրվաճյանը որոշակիորեն սահմանազատում է «մեծ կայսր»-ներից և մյուսներից՝ Վիկտոր Էմմանուելից, լիբերալ-միապետական Կավուրից։ Ինչպես հայտնի է, Իտալիան ազատագրելուց հետո Գարիբալդին իշխանությունը հրապարակորեն հանձնում է Վիկտոր Էմմանուելին՝ չընդունելով որևէ փոխարինություն։

1861 ճունվար 1—հատվածը քաղված է նշված գրքից, էջ 132—134, 138։ Տպագրվել է «Մեղու», 1861, № 121, անստորագիր։

Ազգային պարտք—հատվածը քաղված է նշված գրքից, էջ 155։ Տպագրվել է «Մեղու», 1861, № 128, անստորագիր։

Պ. Միքայէլ Նալբանդեանց—Հատվածը քաղված է նշված գրքից, էջ 254։ Տպագրվել է «Մեղու», 1862, № 172. անստորագիր։

5 Հոդվածը գրվել է Մ. Նալբանդյանի ձերբակալության առիթով.

...**Ընդհանուր դատողութիւն մը տպագրական ազատութեան վրայ**—Հատվածները քաղված են նույն գրքից, էջ 337—338։ Տպագրվել է «Մեղու», 1863, № 224, Տ. Ո. Հ. Թ. ստորագրությամբ։

6 Տե՛ս նույն գրքում Մ. Մամուրյանի ծանոթագրություններից 31-րդը։

**1864 և Մեղուի թվականին Ը-րդ տարի**—քաղված է նշվ. գրքից, էջ 345—347։ Տպագրվել է «Մեղու», 1864, № 227, անստորագիր։

7 Ըստ գրքի տողատակի ծանոթության՝ այս համարից «Մեղուն» կրկին սկսում է խմբագրել Հ. Սվաճյանը՝ Արմենակ Հայկունու օգնական խմբագրությամբ։

8 Ըստ գրքի համապատասխան ծանոթության՝ Սվաճյանը 1864-ի ընթացքում ակնկալում էր համաեվրոպական հեղափոխական շարժում, որը եռանդագին նախապատրաստում էին Լոնդոնի ռուս քաղաքական վտարանդիները և գարիբալդիականները։

**«Կամ տպագրական օրէնք կամ հրաժարական»**—Հատվածները քաղված են նշվ. գրքից, էջ 347, 350։ Տպագրվել է «Մեղու», 1864, № 227, անստորագիր։

## ԳՐ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

**Յառաջաբան**—քաղված է «Ծաղիկ», 1861, № 1, էջ 1—2. ստորագրված է՝ Գ. Չ.։

1 «Ծաղիկ» ամսօրյա հանդեսը հրատարակվել է Զմյուռնիա—Կ. Պոլիս, 1861—1867 թթ., խմբագիր՝ Գ. Չիլինկիրյան, Ա. Հայկունու և Մ. Մամուրյանի աշխատակցությամբ։

2 Լատիններին Աստծուց հետո հայրենիք։

**Խորհելու ազատութեան ի պ. Ժյուլ Սիմոնէ. Ներածութեան թարգմանչին**—Հատվածը քաղված է՝ «Ծաղիկ», 1861, № 1, էջ 2—3. ստորագրված է՝ Գ. Չ.։ Հանդեսը պարբերաբար տպագրել է Ժյուլ Սիմոնի այս աշխատությունը։

3 Հռոմեական կայսրության կործանումը՝ IV դ. երկրորդ կես—V դ. վերջ։

**Իզմիրի հայոց վեցամյա իշխանութեան շրջանը**—Հատվածը քաղված է՝ «Ծաղիկ», 1861, № 9, էջ 66—68։ Հոդվածների շարքը (№ 7—9) ստորագրված է՝ Գ. Չ.։ Գրել է Իզմիրի հայկական գաղթօջախում պարբերաբար ծագող երկպառակությունների առթիվ՝ խստորեն դատապարտելով եռապետներին։

4 Տողատակին վերջին նախադասությունը բերված է ֆրանսերեն և նշված է հեղինակը՝ Լամընե։

5 Նկատի ունի արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, որը սուլթանական կառավարությունը դադարեցնելուց հետո նորից նոր վավերացրել է 1863 թ. մարտի 17-ին։

6 Տողատակ նշված է՝ Վիկտոր Հյուգո։

7 Չիլինկիրյանի հայացքներում նկատելի է Դեկարտի փիլիսոփայական սկզբունքների ազդեցությունը՝ բնության հանդեպ մարդու իրավունքների և բնության պատճառահետևանքային կապերի հաստատումն, մարդու կատարելագործում։

8 Նշանակում է հրապարակայնորեն խարույկի վրա այրելը (ауто-дафе)․ վերացվել է XVIII դ.։

9 Տողատակ բերված է նույն հատվածը ֆրանսերեն և նշված է հեղինակը՝ Լամընե։

10 Հովհ., Գ, 25։

Արշակունյաց ընկերության ծնցիպտոս— *տպված է՝ «Մեղու», 1861, № 16, էջ 122. ստորագրված է՝ Գր. Չիլինկիրյան։*

*11 Արշակունյաց ընկերությունը հիմնվել է 1861 թ., Կահիրեում։*

Հայն հառաջադիմության— *հատվածները քաղված են նույնանուն հոդվածաշարից. «Մեղու», 1864, № 84, էջ 169 և № 96, էջ 273—275, անստորագիր։*

*Հանդեսի հակառին, իբրև գործունեության նշանաբան, Վ. Հյուգոյի տողերն են՝ «Մամուլը ընկերային աշխարհին լույսն է, և ուր որ լույս կա, հոն կա նաև նախախնամության մասը»։ Հանդեսում առհասարակ տպված են Հյուգոյի երկերից, մանավորապես «Թշվառներից», կատարված թարգմանություններ և նրան վերաբերող նյութեր։*

*12 Լայբնիցից քաղված բնաբանն այս է՝ «Ես միշտ մտածել եմ, թե մարդկությունը կվերափոխվեր, եթե վերափոխեին երիտասարդության դաստիարակությունը»։*

Ազգային զարթումն— *քաղված է՝ «Արևելյան մամուլ», 1880, փետրվար, էջ 445—449, 451. ստորագրված է՝ Գ. Չ.։*

*13 Խոսքը վերաբերում է 1875 թ. ամռանը Հերցեգովինայում (նաև Բոսնիայում) բռնկված ապստամբությանը, որը վերածվեց ռուս-թուրքական պատերազմի։ Այն ավարտվեց Բեռլինի վեհաժողովով, որով Թուրքիայի տիրապետությունից ազատագրվեցին բալկանյան ժողովուրդները։ Չիլինկիրյանի կարծիքով դրանով «նոր հորիզոն» բացվեց նաև արևելյան ազգերի, ինչպես և հայ ժողովրդի առջև՝ հոգևոր զարգացման իմաստով։*

Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս— *հատվածը քաղված է՝ «Արևելյան մամուլ», 1881, դեկտեմբեր, էջ 446—447 (նամակ Չ)։ Ուղեգրական նոթերի շարքը, որ տպագրվել է «Արևելյան մամուլի» 1881 թ. մի քանի համարներում, ստորագրված է՝ Գր. Չիլինկիրյան և վերաբերում է 1881 թ. մայիսին։ Հետագայում նույն վերնագրով լույս է տեսել առանձին գրքով։*

## ԱՐՇ. ՀԱՅԿՈՒՆԻ

Հայն— *քաղված է՝ «Մեղու», 1861, № 6, էջ 44—45. ստորագրված է՝ Ա. Հ.։*

Հայ ազգ և սահմանադրություն— *հատվածները քաղված են՝ «Մեղու», 1862, № 40, էջ 332—333. ստորագրված է՝ Ա. Հայկունի։*

## Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Նամակ առ հրատարակողը— *հատվածը քաղված է՝ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 182։ Տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1858, № 4, հասցեագրված է ամսագրի հրատարակիչ Ստ. Նազարյանցին։ Ծանոթագրությունները որոշ մասով քաղված են Նալբանդյանի երկերի նույն հրատարակությունից։*

Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք— *հատվածները քաղված են նույն հատորից, էջ 214, 216—217։ Հոդվածաշարը տպագրվել է՝ «Հյուսիսափայլ», 1858, № 5, 6, 11։*

*Մխիթարյան միաբանությունը հիմնել է Մխիթար Սեբաստացին՝ 1701 թ. Մորեայում. Վենետիկի Ս. Ղազար կղզում հաստատվել է 1717 թ. սեպտեմբերին։*

*1 Տ. Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի հերոսներից, ընդունվել է որպես բացարձակ գեղեցկության տիպար, նրա խորամանկություններին ու հրապույրներին զոհ են դարձել խաչակիրներից շատերը, այդ թվում ամենաքաջն ու գեղեցիկը՝ Ռի-*

Տասսոնի։ Ինչպես հայտնի է, սրանից Արմիդայի հատվածը իր ժամանակին թարգմանել էր Հ. Ալամդարյանը։

Նամակ հրատարակչին—քաղված է նույն հատորից, էջ 278—279։ Տպագրվել է «Հյուսիսափայլ», 1859, № 10։

2 Վիլլաֆրանկայի (գտնվում է Իտալիայում) խաղաղությունը կնքվել է 1859 թ. հուլիսի 11-ին՝ Իտալիայի ու Ֆրանսիայի և Ավստրիայի միջև պատերազմից հետո։

3 1852 թ. դեկտեմբերի 2-ին միապետականների ուժեղ ճնշման՝ բոնապարտիստներին, հաջողվում է կատարել պետական հեղաշրջում։ Նրանց գլխավոր՝ Լուի Բոնապարտը, 1848-ի դեկտեմբերից Հանրապետության վարչապետ էր։ 1852-ի դեկտեմբերի 2-ին Ֆրանսիան հռչակվում է կայսրություն (երկրորդ), Լուի Բոնապարտը՝ Նապոլեոն III կայսր։ Երկրում հաստատվում է զինվորաոստիկանական ռեժիմ, ձերբակալվում և երկրից արտաքսվում են շատերը։ Նալբանդյանի հիշատակած թղթության հրովարտակով նրանց շնորհվում էր ներումն, որը, սակայն, չեն ընդունում Ֆրանսիայի լավագույն մտավորականները և առաջին հերթին Վ. Հյուգոն։ Այդ տարիներին վտարանդի Հյուգոն գրել է «Փոքրիկ Նապոլեոն», «Մի հանցանքի պատմություն» գործերը, որոնց մեջ Նապոլեոն III-ը արժանացել է ոչնչացնող քննադատության։ Շատերի հետ Հյուգոն հայրենիք է վերադարձել միայն 1870 թ. սեպտեմբերի 5-ին, կայսրության անկումից անմիջապես հետո։

4 Ասել է Նապոլեոն III-ի վերադարձին՝ Վիլլաֆրանկայի զինադադարից հետո։

5 Ժամանակակից արտասանությամբ՝ Գվիանա։

Նամակ հրատարակչին—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 287։ Տպագրվել է «Հյուսիսափայլ», 1859, № 10, Մարտիրոս Սառաֆյանց ստորագրությամբ։

Նամակ «Մեղու»-ի խմբագրին—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 303—304։ Տպագրվել է «Մեղու», 1860, № 119։

Հարություն Սվաճյանին—քաղված է նշված հրատարակությունից, հ. 4, Երևան, 1949, էջ 82—86։ Տպագրվել է ուշ՝ «Մեղու», 1871, № 54։

6 Նալբանդյանը Լոնդոնում է եղել հնդկահայերի կտակների գործով Հնդկաստան ուղևորվելիս. Լոնդոնից դուրս գալով 1860 թ. նոյեմբերի 14-ին՝ Կ. Պոլիս է հասել նոյեմբերի 20-ին և մնացել մինչև դեկտեմբերի 21-ը։ Այդ օրերին էլ վերաբերում է նրա և Հ. Սվաճյանի ծանոթությունը։

7 Նալբանդյանը որոշակի տարբերություն է տեսնում Գարիբալդու և Վիկտոր Էմմանուելի, ինչպես և նրանց կուսակիցների միջև։

8 Նկատի ունի 1646—1648 թթ. իտալական ապստամբությունները իսպանական տիրապետության դեմ։

9 1848 թ. հեղափոխության օրերին իտալական որոշ քաղաքներում հայտարարվում է անկախ հանրապետություն. հեղափոխությունը հասնում է «Վատիկանի դուռը» Հռոմ, բայց և ճնշվում է ֆրանսիական զորքերի օգնությամբ, որոնք երկար ժամանակով օկուպացնում են Հռոմը։

10 Նալբանդյանը ճիշտ է գուշակում. 1862-ին Գարիբալդու գլխավորությամբ բռնկում է կամավորական շարժում՝ հանուն Հռոմի ազատագրության պապի և Ֆրանսիայի տիրապետությունից, որը, սակայն, չի պսակվում հաջողությամբ։

Երկու տող—հատվածները քաղված են նշված հրատարակությունից, հ. 3, Երևան, 1940, էջ 17—18, 23—24, 29։ «Երկու տողը» գրել է 1861 թ. մարտ—ապրիլին Փարիզում, շուտով լույս է տեսել առանձին գրքով։ Ուղղված է արևմտահայ հետադիմական

գործիչ, 1857-ից Կ. Պոլսում հրատարակվող՝ «Երևակ» (կիսամսյա տետրակ) խմբագիր Հ. Չամուռճյանի և Գ. Այվազովսկու դեմ։

11 Կտուց անապատի առաջնորդը, որի չարագործությունները Մ. Նալբանդյան-ից սկսած զբաղեցրել են հայ գրողներից շատերին։ 1874 թ. «Մշակ» № 10-ում տպագրած իր «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վերաբ» հոդվածում Րաֆֆին գրում էր. «Ի՞նչ էր պատճառը, որ Պողոս վարդապետը կապեր ուներ այդպիսի եղեռնագործների հետ։ Պատճառը շատ պարզ է։ Երբ նորա հափշտակում էին, հայր սուրբը մասն ուներ կողոպուտի մեջ» (Րաֆֆի. Եժ, հ. 9, Երևան, 1964, էջ 72)։

12 Աստվածաշնչի ավանդությամբ քարե տախտակներ, որոնք երբ Մովսես մարգարեն ստացել է աստծուց Սինայի լեռան կատարին։ Տախտակների վրա գրված են եղել տասը պատվիրանները։

13 Ըստ հունական դիցաբանության մարդկային կյանքի թելը կտրող ճակատագրի ոգիներ։

**Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ**—Հատվածները քաղված են նույն հատորից, էջ 43, 51—57, 58, 60—61, 81, 90։ Գրել է 1862 թ. առաջին ամիսներին Լոնդոնում և Փարիզում։ Սիմեոն Մանիկյան կեղծանունով երկը լույս է տեսել նույն թվականին, Փարիզում։

14 Ակնարկվում է XIX դ. կեսին Ամերիկայում ծավալված պայքարը նեգրերի ստրկության դեմ։

15 Հատորի համապատասխան ծանոթագրությամբ Միլլի «Քաղաքատնտեսության հիմունքները» աշխատությունը ռուսերեն թարգմանել, ծանոթագրել ու մեկնաբանել է Ն. Գ. Չերնիշևսկին և արժանացել Կ. Մարքսի գնահատությանը։ Նալբանդյանը վկայակոչում է նրա մի այլ՝ «On liberty» («Ազատության մասին») աշխատությունը։

16 Ըստ ավանդության՝ գորդյան հանգույցը արձակելու անհաջող փորձերից հետո, Ալեքսանդր Մակեդոնացին կտրել է թրով։ Գորդյան հանգույցը կամ կապը լուծել կամ կտրել՝ նշանակում է համարձակ լուծել դժվարին խնդիր։

17 Շեքսպիրի Համլետի հայտնի արտահայտությունը՝ «լինել, թե չլինել»։

18 1861 թ. փետրվարի 19-ի «Պոլոժենիա»-ի հրապարակվելուց անմիջապես հետո ծայր են առնում գյուղացիական հուզումներ։ Ռուսաստանի ճորտ գյուղացիությունը ելնում է կառավարության դեմ, որ ազատություն էր խոստանում առանց հողի, փոխարենը պահանջելով ծանր հատուցում՝ հօգուտ կալվածատիրության։ 1861—1863 թթ. տեղի են ունեցել 1100 խռովություն, տեղ-տեղ վերաճելով ապստամբության, որոնք զենքով դաժանորեն ճնշել է ցարական կառավարությունը։

19 Ըստ հատորի համապատասխան ծանոթագրության Տվերի նահանգի տասներեք հաշտարար միջնորդներին Սենատը դատապարտել է երկամյա բանտարկության, զրկելով որոշ իրավունքներից. հետագայում դա փոխարինվել է հասարակական պաշտոններ վարելու արգելքով։

**Ղազարոս Նալբանդյանին**—Հատվածը քաղված է նույն հրատարակությունից, հ. 4, էջ 152։ Հասցեագրված է եղբորը, որը Նալբանդյանի բանտարկության ժամանակ մեծ մասամբ եղել է Պետերբուրգում, մշտապես տեսակցել նրա հետ։

Նալբանդյանը ձերբակալվել է 1862 թ. հուլիսի 14-ին Նոր Նախիջևանում. հուլիսի 27-ին արդեն Պետրոպավլովյան բերդում էր։ 1864 թ. դեկտեմբերի 10-ի Սենատի դատավճռով աքսորվում է Կամիշին՝ «ոստիկանական խիստ հսկողության տակ»։

Առաջին անգամ տպագրվել է՝ «Նորք», 1924, № 4։

20 Ըստ հատորի համապատասխան ծանոթագրության Նալբանդյանի ձեռքի տակ եղել է Ֆոխտի «Ակնարկներ Անգլիայի մասին» գրքի ռուսերեն հրատարակությունը (1862)։ Գիրքը պահպանվում է Նալբանդյանի գրադարանում։

Հեգելը և նրա ժամանակը—հատվածները քաղված են նույն հրատարակությունից, հ. 3, էջ 303—304, 305, 312։ Գրել է 1863 թ. Պետերբուրգի բանտում՝ Պետրոպավլովյան ամրոցում։ Տպագրվել է «Լումա», 1902 № 6 և 1903 № 1։

21 Լյուդովիկոս XIV-ի գահակալության տարիներին (1643—1715) ճնշվել են գյուղացիական-պլեբեյական մի շարք ապստամբություններ։ Բացարձակ միապետությունն ամրապնդելու նրա քաղաքականությամբ («Պետությունն՝ այդ ես եմ») գյուղացիությունը հասել է ծայր աղքատության։

22 Նկատի ունի 1830 թ. հեղափոխական ելույթները Ֆրանսիայում և եվրոպական այլ երկրներում։

23 Ըստ հատորի համապատասխան ծանոթագրության Ռ. Հայմի «Հեգելը և նրա ժամանակը» գրքի ռուսերեն հրատարակությունը Նալբանդյանի ձեռքին է եղել 1863 թ.՝ Պետրոպավլովյան բանտում։ Նալբանդյանի քաղած տողերը տե՛ս Р. Гейм, Гегель и его время, էջ 276—277։

24 Խոսքը վերաբերում է ընտրական այն նախագծին, որը քննություն-վերափոխություններից հետո՝ ընդունվել է 1832 թ.։ Դրանով նորից շարունակվում էր անսասան մնալ 1688-ի, այսպես կոչված, անգլիական «փառահեղ հեղափոխության» ժամանակների դաշինքը հողատերերի, ֆինանսական և առևտրական վերնախավերի միջև։

25 Խոսքը վերաբերում է ֆրանսիական բուրժուական հեղափոխությանը և այդ 1799 թ. Բրյումերի 18-ի հեղաշրջմանը, որից հետո իշխանությունն իր ձեռքն առավ Նապոլեոն Բոնապարտը։

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ

Գևորգ Քանանյանին—հատվածը քաղված է՝ Ռ. Պատկանյան, ԵԺ, հ. 6, Երևան, 1970, էջ 59—60։ Պատկանյանի երկերի այս հրատարակությունից են քաղված նաև ծանոթագրությունների մեծ մասը։

<Առաջաբան «Պատմություն Մեծն Պետրոսի» աշխատության>—քաղված է նշված հրատարակությունից, հ. 5, Երևան, 1968, էջ 204—205։ 1863-ին Պետերբուրգում լույս տեսած Պատկանյանի «Պատմութիւն Մեծին Պետրոսի կայսեր ամենայն ռուսաց» երկի առաջաբանն է։

Քերովբե Պատկանյանին—հատվածը քաղված է նույն հրատարակությունից. հ. 6, էջ 435։

Ճանապարհորդական տպավորություններ—հատվածը քաղված է նույն հրատարակությունից. հ. 5, էջ 101։ Տպագրվել են 1879 թ.։

Նոր Նախիջևանից դուրս գալով 1879 թ. հուլիսի 16-ին՝ Պատկանյանը Թիֆլիս է հասել հուլիսի 19-ին։ 21 օր Թիֆլիսում մնալուց հետո՝ օգոստոսի 3-ին ճանապարհվել է Երևան, եղել է նաև Էջմիածնում։

Նոր Նախիջևանի հիմնարկության պատմությունը—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 260։ Ըստ համապատասխան ծանոթագրության հոդվածը գրված պետք է լինի 1878 թ.։

Վահրամ վարդապետ Մանկունուն — *հատվածը քաղված է նույն հրատարակությունից, հ. 7, Երևան, 1973, էջ 40։*

<Ազգապահպանման միջոցների մասին> — *հատվածը քաղված է նույն հրատարակությունից, հ. 5, էջ 416։ Ըստ համապատասխան ծանոթագրության՝ գրված պետք է լինի 1878 թ. հետո, 80-ականի սկզբին։*

Գևորգ և Վարդան Քանանյաններին, Մարիամ Աճեմյանին — *քաղված է նույն հրատարակությունից, հ. 8, Երևան, 1974, էջ 181—182։*

*1 Նկատի ունի 1890 թ. հունիսի 18-ի ընդհարումը Կարինում՝ հայ ազգաբնակչության և թուրքական զինված ուժերի միջև, և ապա մեկ ամիս անց՝ 1890 թ. հուլիսի 15-ի Գում-Գափուի ցույցը Կ. Պոլսում (տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա., Փարիզ, 1934, էջ 172)։*

*2 Պատկանյանը հեգնում է այն գործիչներին, որոնք Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը կապում էին եվրոպացիների հետ։*

*3 Խոսքը վերաբերում է սուլթան Համիդի հերթական խաբեությանը՝ Գում-Գափուի ցույցից հետո։*

Վարդան և Գևորգ Քանանյաններին, Մարիամ Աճեմյանին — *հատվածը քաղված է նույն հատորից, էջ 157—158։*

Գևորգ Քանանյանին — *հատվածը քաղված է նույն հատորից, էջ 269։*

## Ս. ՇԱՀԱԶԻԶ

Հրապարակախոս ձայն — *հատվածները քաղված են՝ Ս. Շահազիզյան, Հրապարակախոս ձայն, Մոսկվա, 1881, էջ 101, 117—118, 255—256, 323—325, 327—328։*

*1 Խոսքը վերաբերում է XVIII դ. սկզբների պատմական իրադարձություններին Գերմանիայում, երբ Նապոլեոն Բոնապարտը նվաճել էր ողջ երկիրը, և գերմանական մանր պետությունները համախմբվում էին պաշտպանելու սեփական անկախությունը։*

*2 Ամերիկայի հայտնագործումը վերաբերում է 1502—1504 թթ.։*

*3 XVI դ. Եվրոպայում համարյա բոլոր երկրներում կաթոլիկ եկեղեցու դեմ ծավալված սոցիալ-քաղաքական ռեֆորմացիական շարժում։*

## ՄԿ. ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

Խոսեցյալ ի կաճառս Ընկերության Համազգյաց — *հատվածները քաղված են Մկ. Պեշիկթաշլյան, Բանաստեղծություններ, ճառեր (Գրական ցոլքեր), Վենետիկ, 1956, էջ 80—82։*

*1 Համազգյաց ընկերությունը հիմնվել է 1846 թ. Մուրադ-Ռափայելյան վարժարանի նախկին սաների՝ Մկ. Պեշիկթաշլյանի, Ս. Հեքիմյանի և այլոց ջանքերով։ Արշ. Չոպանյանի բնութագրությամբ՝ լուսավորչականների և կաթոլիկների «վայրագ գժտության» պայմաններում, ընկերությունը «որը անդամ ունեցավ հայեր ամեն դավանանքէ» և «զուտ ազգային-քաղաքական ներքին նպատակի մը իրականացման կը ձգտեր» խափանվել է 1850-ական սկզբներին։*

Խոսեցյալ ի խնջույս Մուրատյան և Ռափայելյան ընկերության — *քաղված է նույն գրքից, էջ 97—99։*

Մուրադյան վարժարանը բացվել է 1834 թ. Իտալիայի Պադուա քաղաքում, Ռափայելյանը՝ 1836-ին Վենետիկում, հետագայում միացել են, հաստատվել Վենետիկում:

2 Մուրադ-Ռափայելյան նախկին սանաց ընկերությունը հիմնվել է 1860 թ., Պեշիկթաշլյանի գործուն մասնակցությամբ: Ինչպես գրում է Չոպանյանը՝ վարժարանի նախկին սաները «տարին անգամ մը կը հավաքվեին՝ եղբայրական հացկերույթով մը ուրախացը... Հին և նոր շրջանավարտները իրար ճանչնային, իրարմե օգտվեին, հարկ եղած ատեն՝ իրարու օգնեին, իրար սիրել և ազգին պետքերուն մեկտեղ ծառայել սորվեին...» (վերը նշվ. նույն գիրքը, էջ 14, 15, 18):

3 «Եղբայր եմ մեր» երգի հեղինակը ամենուրեք մնում էր «եղբայրության ավետարանիչ» և ընկերության անդամներին հորդորում էր «եղբայր» կոչել միմյանց: Անշուշտ, ընկերության հավաքույթներում շատ է երգվել այդ երգը՝ Չոպանյանի բնութագրությամբ «հայկական միության Մարսելիեզը»:

Պ. ԴՈՒՐՅԱՆ

<Առ Տ. Խորեն եպիսկոպոս Նար-Պեյ>—հատվածը քաղված է՝ Պ. Դուրյան, *Եժ*, հ. 1, Երևան, 1971, էջ 160—161: Նամակը թվագրված է՝ 1871 հունվար 22:

Առ պ. Տ. Ադամյան—հատվածը քաղված է նույնից, էջ 162, թվագրված է՝ 5 փետրվար 1871, Սկյուտար:

Մ. Ի. ԽՐԻՄՅԱՆ

Ժամանակ և խորհուրդ յուր—հատվածները քաղված են նույնանուն գրքից (վերնագրի տակ՝ «Խորհրդածեց Խրիմյան Հայրիկ»), Թիֆլիս, 1895, էջ 12—13, 14, 15—16, 17—18, 20, 23—24, 25, 26—27, 30—31, 36, 38, 39, 41, 44—45: Նույն վերնագրով առաջին անգամ հրատարակվել է 1876 թ., Կ. Պոլսում:

1 Գրքին Խրիմյանը բերել է այս ընդհանուր բնաբանը. «Ամենեցուն ժամանակ է և ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից»:

Ժամանակ ծնանելոյ և ժամանակ մեռանելոյ. ժամանակ տնկելոյ և ժամանակ խլելոյ զտնկեալն. ժամանակ սպանանելոյ և ժամանակ բժշկելոյ. ժամանակ քակելոյ և ժամանակ շինելոյ. ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ կոծելոյ և ժամանակ կաքավելոյ. ժամանակ ցրելոյ քարինս և ժամանակ ժողովելոյ քարինս... ժամանակ պատառելոյ և ժամանակ կարկատելոյ. ժամանակ լռելոյ և ժամանակ խոսելոյ. ժամանակ պատերազմի և ժամանակ խաղաղության: Սողոմոն, Գիրք Ժողովողի, գլ. Գ»:

2 Մատ., Ե, 4:

3 Նկատի ունի Աբդուլ Համիդ II-ի 1876 թ. ընդունած սահմանադրությունը, որը և արժանացել է Խրիմյանի նմանօրինակ ոգևորիչ գնահատությանը. սակայն շուտով Համիդը այն չեղյալ հայտարարեց և, հռչակելով միահեծան իշխանություն, ցրեց պառլամենտը:

4 Հովհ., ԺԲ, 23:

5 Ըստ երևույթին պետք է լինի կաշառակուրծ. ըստ Հայկազյան բառարանի՝ կրծօղ գլուղա, կաշառք ուտող:

6 Մատ., ԺԲ, 35:

**Ֆրանսիա և Գերմանիա**—Հատվածները քաղված են «Գրիգոր Արծրունու աշխատությունները» գրքից (հ. 1, Թիֆլիս, 1904), այս վերնագրով զետեղված I և II հոդվածներից. էջ 329, 403—404, 405—406։

1 Նկատի ունի հեղափոխական Ֆրանսիայի (1792-ից սկսած) և Նապոլեոն I-ի ժամանակների պատերազմները Եվրոպայի, մասնավորապես Ավստրիայի և Պրուսիայի միապետերի դեմ։

2 Նկատի ունի 1870—1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմը, երբ Ֆրանսիան մղում էր պաշտպանողական պատերազմ։ Պատերազմում Ֆրանսիան կրեց պարտություն։

**Այժմ կամ երբեք**—Հատվածները քաղված են՝ «Մշակ», 1876, № 25, ստորագրված է՝ Գ. Ա.։

3 1875 թ. Բոսնիայում և Հերցեգովինայում բորբոքված ազատագրական պայքարի օրերին մեծ չափերի են հասնում թուրքական բռնությունները հպատակ ժողովուրդների հանդեպ։

4 Նշված պայմաններում հենց 1875-ից Անգլիան հանդես էր գալիս թուրքական կառավարության քաղաքականության պաշտպանությամբ։

**Մինչև երբ**—Հատվածները քաղված են՝ «Մշակ», 1876, № 27, ստորագրված է Գ. Ա.։

**Ազգության հանճարը**—Հատվածները քաղված են՝ «Մշակ», 1877, № 83, ստորագրված է՝ Գ. Ա.։

5 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում աչքի ընկած «անթիվ քաջերից» էր Սամսոն Տեր-Պողոսյանը, որը դարձել է Րաֆֆու «Խենթ» վեպի հերոսի նախատիպը, պատերազմի «հայ առաջնակարգ զորավարներից» էին Լորիս-Մելիքովը, Տեր-Ղուկասովը, Լազարևը, Շելկովնիկովը, Ալխազովը, Քիշմիշևը և ուրիշներ։

**Այդ անհրաժեշտ էր**—Հատվածները քաղված են՝ «Մշակ», 1878, № 123, ստորագրված է՝ Գ. Ա.։

6 Ռուս-թուրքական պատերազմի նախօրեին և հետո հայոց գրականությունը, իրոք, զարգանում է ինքնաքննություն-ինքնաճանաչման հունով։

**Զեյթունի ապստամբությունը**—քաղված է «Մշակ», 1878, № 165, ստորագրված է՝ Գ. Ա.։

7 Ասել է՝ 1878-ից սկսած։

8 Սուլթանյան կառավարության պաշտոնական անվանումը։

9 Խոսքը վերաբերում է Բեռլինի վեհաժողովից հետո, հատկապես 1878-ի սեպտեմբերին բորբոքված Զեյթունի ապստամբությանը, որ խաղաղվում է մի տարի հետո 1879-ի ուշ աշնանը (տե՛ս ստորև՝ «Տխուր և ուրախալի համբավներ»)։

10 Այս և հաջորդ դարձվածքը Արծրունին ձևակերպել է՝ վերափոխելով Դեկարտի հայտնի խոսքը՝ «Խորհում եմ, ուրեմն գոյություն ունեմ»։

**Թուրքաց հայերի տնտեսական դրությունը**—Հատվածները քաղված են՝ «Մշակ», 1879, № 75. ստորագրված է՝ Գրիգոր Արծրունի։

Նախքան հրապարակելը՝ Արծրունին այս թեմայով 1875 թ. մարտի 25-ին Թիֆլիսի Արհեստավորական ընկերության դահլիճում կարդացել է հրապարակային դասախոսություն։

11 Պատվիրակությունը գլխավորում էր Մկ. Խրիմյանը, և սակայն պատվիրակությանը չհաջողվեց մասնակցել վեհաժողովի աշխատանքներին:

12 Արծրունին միամտություն ուներ կարծելու, թե հայոց տնտեսական, կուլտուրական «հատկությունների նկարագիրը» Բեռլինի վեհաժողովին ներկայացնելով՝ կարելի էր խլացնել մեծ տերությունների զավթողական շահախնդրությունները:

13 Դեռևս ռուս-պարսկական պատերազմների ժամանակներից, այն պահից, երբ սկսում են բախվել Անգլիայի և Ռուսաստանի շահերը, Անգլիան, անգլիական դիվանագիտությունը մշտապես հանդես են եկել ի վնաս հայոց դատի:

Անգլիական նույն քաղաքականությունը շարունակվում է նաև ռուս-թուրքական պատերազմի տարիներին՝ արժանանալով Գր. Արծրունու. անհապաղ «Մշակի» խիստ քննադատությանը: «Մշակի» էջերում քննադատվում է «Կապույտ գիրքը» (տե՛ս մասնավորապես «Կապույտ տետրակ», «Մշակ», 1879, № 203), որի առաջին համարներում, ինչպես գրում է Սարուխանը, «ոչինչ չէր հրատարակված հայերի կացության վերաբերյալ. մինչդեռ Թուրքիայի քրիստոնյաների կացությունը 1876-ին և 1877-ին ընդհանուր եվրոպական հետաքրքրություն շարժեց,— գրում է նա,— անգլ. կառավարությունը խորհրդարանին ներկայացնելու համար 1877-ին հրատարակեց № 16 (1877) «Կապույտ գիրքն», որ բովանդակում էր անգլ. դիվանագիտական գործակալների 1868-ից մինչև 1875 թ. Թուրքահպատակ քրիստոնյաների վիճակի նկատմամբ ուղարկած տեղեկագրերն, և ապա № 17 (1877) գիրքն, որ ավելի հին շրջանից սկսելով (1856) նույնպես առաջ էր բերում հյուպատոսների տեղեկագրերը Թուրքիայի ֆինանսական և վարչական բարենորոգումների և քրիստոնյաների պաշտպանության մասին: Այս գրքերում բազմաթիվ պաշտոնական վկայություններ կան այն դեպքերի և բռնությունների մասին, որոնք հիշված են ազգային վարչության մատուցած հարստահարությանց կրկին տեղեկագիրներում. № 17 (1877) գիրքն ամփոփում է ի միջի այլոց այն պահանջները, որ անգլ. կառավարությունը 1856—1875 շրջանում ուղարկել է իր Կ. Պոլսի դեսպանին՝ ընդհանրապես քրիստոնյաների պաշտպանության և բարենորոգումների գործադրության մասին: Բայց առանձնապես հայոց վերաբերյալ հիշատակություն չկա դեռ այդ հրահանգներում» (Սարուխան, նշված աշխատությունը, էջ 127):

1894—1897 թթ. «Կապույտ գրքերի» վերաբերյալ արդեն Լ. Բաշալյանը (Լ. Զարթունյան) գրում էր. «Կապույտ Գիրքը» կը շարունակե մեզի համար մնալ Կարմիր Գիրքը, որուն էջերը մեր արյան ցայտքերով շաղախված են, ու Սև Գիրքը, ուր մեր ավերակներուն և կործանումներուն տրտմությունը կը խտանա:

Երեքհարյուր էջ կը բովանդակե վերջին Կապույտ Գիրքը, որ փետրվարին ներկայացվեցավ Անգլիո խորհրդարանին, և կ'արձանագրե 365 հեռագիր ու տեղեկագիր փոխանակված Անգլիո կառավարության ու իր ներկայացուցիչներուն միջև, ամենքն ալ ասիական Թուրքիայի կացության վերաբերյալ.— այդ 365 պաշտոնագրերուն ավելի քան 300-ը միայն հայկական գործերուն նվիրված: 1896 թ. դեկտեմբերեն մինչև 1897 սեպտեմբեր տարածվող ժամանակամիջոց մը կ'ընդգրկեն ատոնք:

Այն անձկության պաշարումը, որով կ'սկսենք գրքին ընթերցումը, հույսի նշույլով մը չի բարեխառնվիր՝ զայն ավարտած ատեն: խավարին վրա պատուհան մըն է, որ կը բացվի, ու խավարին վրա կը փակվի: Հայաստանի ու Կիլիկիո վիճակը, ինչպես կ'երևա Կապույտ Գրքեն, 1897-ի սեպտեմբերին շատ չի տարբեր իր 1896 դեկտեմբերի կացութենեն» («Նոր կյանք», 1898, № 6, էջ 92):

14 Արծրունին գուշակում է սոցիալական այն ահեղ ճգնաժամը, որը Երկրորդ հա-

*մաշխարհային պատերազմից հետո բախտորոշ դարձավ գաղութներից բրիտանական կղզիներ քաշված Անգլիայի համար։*

*15 Հրեաների օրենսդիր Մովսեսի անվան հետ կապվող մովսեսականությունը ծագել է մ. թ. ա. մոտ 1600 թ.։*

*16 Քրիստոսի անվան հետ կապվող քրիստոնեությունը ծագել է Հրեաստանում, բստ ավանդության տարածվել աշխարհում Քրիստոսի մահից հետո։*

*17 Բողոքականությունը ծագել է XVI դ. Ռեֆորմացիայի ընթացքում, նախ Գերմանիայում և կապվում է Մ. Լյութերի անվան հետ։*

*18 Քաղաքակրթական խաղաղ «պատերազմով» ազատության հասնելը հայ ժողովրդի համար եղել է դարավոր ձգտում՝ հանուն ազատության մարտնչելու և մարտիրոսանալու հատկանիշին զուգված։ Արծրունու մատնանշած այդ ուղին, սակայն, ոչ մի օգուտ չբերեց հայ ժողովրդին, որքանով գործ ուներ համիդյան և երիտթուրքական բարբարոսների հետ։*

*19 Թուրքիայի հայը այս համբերությունը ունեցավ չափից ավելի, և դարձյալ ոչ մի արդյունք։*

Տխուր և ուրախալի համբավներ—*հատվածները քաղված են՝ «Մշակ», 1879, № 208. ստորագրված է՝ Գ. Ա.։*

*20 Խոսքը վերաբերում է նույն գրքում զետեղված Հայկակի (Արփ. Արփիարյան) «Նամակ Թուրքիայից» հոդվածին (թվագրված՝ Կ. Պոլիս, 17 նոյեմբերի), որը հրապարակվեց «Մշակի» 1879 թ. հաջորդ՝ № 209-ում։*

*21 Դեռևս 1862 թ. Չեռնոգորիան ըմբոստանում է Թուրքիայի դեմ, սակայն, ազատությունը հաջողությամբ չի պսակվում. 1877—1878 թթ.՝ դաշնակցելով Սերբիայի հետ, նորից է պատերազմում և հասնում անկախության։*

## Մ. ՄԱՄՈՒՐՅԱՆ

Անգլիական նամականի կամ ճայու մը ճակատագիրը—*հատվածները քաղված են՝* Մ. Մամուրյան. *Եր, Երևան, 1966, էջ 81, 116—117, 136—138, 153—154, 157, 160։ Գրքում «Անգլիական նամականի»-ին կցված ծանոթագրության համաձայն նամականին Մամուրյանը մտահղացել է 1858 թ., 1860-ից տպագրվել են հատվածներ. «Միություն» (Զմյուռնիա) և «Կռունկ հայոց աշխարհի» պարբերականներում։ Ամբողջությամբ առանձին գրքով հրապարակվել է 1880 թ., Զմյուռնիայում։*

*1 Նկատի ունի լեհական ազատագրական ապստամբությունները՝ 1830-ից սկսած։*

*2 Ասել է՝ հունական ապստամբությունը, որին և մասնակցել էր Բայրոնը.— հաղթանակեց. Լեհականը՝ ոչ։*

*3 Նկատի ունի Հայկ նահապետին վերաբերող Մ. Խորենացու Հայոց պատմության առաջին գրքի Ժ և ԺԱ գլուխները։*

*4 1831 թ. Մաձինին Մարսելում հիմնադրում է «Երիտասարդ Իտալիա» գաղտնի ընկերությունը, հետագայում՝ Գարիբալդու հետ միասին «Իտալական ազգային կոմիտեն», «Գործողության կուսակցությունը» (1855)։*

*5 Նկատի ունի 1830 թ. հեղափոխական ալիքը Եվրոպայում։*

*6 Հետադիմական քաղաքականության համար «տարաշիրների կայսր» անունը վաստակած Կարլոս X-ը գահընկեց է արվել 1830 թ. հուլիսյան հեղափոխության օրերին։ 1848 թ. պրեմիեր-մինիստր Գիզոն գլխավորում էր դոկտրինյորների կուսակցու-*

թյունը և դեմ էր բնորական ռեֆորմներին։ 1848-ին Գիզոն փախչում է Անգլիա։ Անշուշտ, բոլորովին էլ «սահմանադրական» չէր Լուի Ֆիլիպը։

7 Հոլանդիայի դեմ ընդվզելով, Բելգիան անկախ թագավորություն է ճանաչվել 1830 թ.։

8 Ազատագրական երկարատև մարտերից հետո Հունաստանը պաշտոնապես ինքնուրույնություն է ձեռք բերում 1830 թ.։ Դեռևս 1828-ին վարչապետ էր ընտրված Կապոդիստրիասը, որը սպանվեց 1831 թ.։

9 Խոսքը վերաբերում է 1830 թ. նոյեմբերին Լեհաստանում բռնկված ապստամբությանը, որի առիթը Նիկոլայ I-ի հրամանն էր, ըստ որի Լեհաստանը պետք է հավելյալ դրամական միջոցներ տրամադրեր ռուսական զորքերին՝ շարժվելու համար դեպի Բելգիա։

10 1772-ից Լեհաստանը բաժանված էր Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միջև։

11 Ալեքսանդր I-ին հաջորդած Նիկոլայ I-ին գահակալել է 1825-ից՝ Դեկաբրիստների ապստամբությունը ճնշելուց հետո. առավելապես վարել է բռնակալական քաղաքականություն։

12 Նոյեմբերից—հունվար լեհ ապստամբները գրավում են նշանավոր ամրոցներ, այնպես որ Կոնստանտին Պավլովիչը, որը և՛ փոխարքա էր, և՛ ցարական զորքերի հրամանատար, ստիպված է լինում զորքերով քաշվել Լեհաստանից. 1831 թ. հունվարին Ռոմանովները զրկվում են լեհական գահից։

13 Ռադզիվիլ իշխանի հրամանատարությամբ 1831 թ. հունվարի վերջերին լեհական բանակի թիվը հասնում էր 125,5 հազարի։ Լեհերը հաջող մարտեր են մղում Վիսլայի ափերին Դիբիչի հրամանատարությամբ գործող ռուսական զորքերի դեմ։ Դիբիչի մահից հետո՝ 1831 թ. հունիսի 13-ին գլխավոր հրամանատար է նշանակվում Պասկևիչը։

14 Նկատի ունի XIX դ. երեսնական թվականներին Օ՛Կոնելի գլխավորությամբ ծավալված իռլանդական շարժումը. Օ՛Կոնելն ընտրվում է Դուբլինի լորդ-քաղաքագլուխ, պառլամենտի անդամ, հանուն Իռլանդիայի առավել համառորեն պայքարում անգլիական ունիայի դեմ։

15 1879-ից բորբոքված գյուղացիական շարժման պայմաններում Իռլանդիայի քաղաքական կյանքի հիմնական հարցը պայքարն էր հանուն ինքնավարության՝ բրիտանական կայսրության սահմաններում։

16 Երևում է նկատի ունի Չարլզ Դարվինին և նրա էվոլյուցիոն ուսմունքը՝ Դարվինիզմը։

17 Ասել է Նապոլեոն Բոնապարտը։

**Հայկական նամականի**—հատվածները քաղված են նույն գրքից, էջ 407, 499, 536։ Ըստ գրքի համապատասխան ծանոթագրության՝ «Հայկական նամականին» գրվել է սկսած 1864 թ., առանձին գրքով լույս է տեսել 1872 թ., Զմյուռնիայում։ Քաղված հատվածները կրում են Կ. Պոլիս, 1 հունվարի 1865 և 7 մայիսի 1866 տարեթիվը։

**Միքայել Նալբանդյանց**—քաղված է՝ «Ծաղիկ», 1866, № 124, էջ 489—490, ստորագրված է՝ Մ. Մ.։

18 Մինչև այս հոդվածի հրապարակվելը, «Միքայել Նալբանդյանց» թեմայով Մ. Մամուրյանը զեկուցում է կարդացել «Սեր» ընկերության 1866 թ. հունիսի 5-ի դռնփակ նիստում։ «Սեր» մասոնական օթյակը հիմնվել է 1866-ի մայիսի 7-ին Պոլսի Դալի-Դափու թաղում։ Օթյակն ունեցել է բազմաթիվ անդամներ, գործադիր և զեկա-

վար մարմին՝ Մ. Մամուրյան, Հ. Սվաճյան, Ս. Բաղվորյան, Ս. Հեքիմյան և ուրիշներ: 1867 թ. մարտի 21-ին օթյակի «եղբայր» է ընտրվում Մկ. Պեշիկթաշլյանը, այդ օրն էլ հենց երգվում է նրա գրչին պատկանող «Եղբայր եմք մենք» բանաստեղծությունը, դառնում ընկերության հիմնը (տե՛ս Հ. Ղազարյանի նշված երկը, էջ 521—523)

19 «Հայկական աշխարհ» ժամանակագրական և կրոնական օրագիր հրատարակվել է 1864—1871 և 1874—1879 թթ., Թիֆլիսում, խմբագիր հրատարակող վրդ. Խորեն Ստեփանեն:

20 «Երևակի» խմբագիր Չամուռճյանը, շարունակելով վաղեմի թշնամությունը, փորձում էր դատաստան տեսնել Նալբանդյանի հետ նրա դիակի վրա:

21 Անշուշտ, ցարական ամենազոր տերության կրնկի տակ ճարպ հնարքով անհնար էր գրել կամ խոսել Նալբանդյանի բանտարկության և աքսորի հանգամանքների մասին:

22 Նալբանդյանի հանրահայտ «Ազատություն» ներբողյանի տողերն են:

23 Սա էլ է՝ գաղափարի, ազատության մարտիկները պետք է դատվեն հրապարակորեն, ի տես ամենքի, ինչպես Քրիստոս Գողգոթա լեռան վրա, և ոչ թե փակ դռների ետևում:

24 Նկատի ունի Ա. Ի. Գերցենի և Ն. Պ. Օգարյովի Լոնդոնում հրատարակած «Колокол»-ը (1857—1867):

25 Սա էլ է՝ Քրիստոսը:

26 Նկատի ունի Մարտին Լյութերին, XVI դ. ռեֆորմացիոն շարժումը եվրոպական երկրներում: Հենց այդ ժամանակներում՝ XVI դ. լեհական գիտնականներից Կոպեռնիկյան դառնում է համաշխարհային խոշորագույն տեսություն:

**Ազատություն**—տպված է՝ «Արևելյան մամուլ», 1871, № 10, էջ 478—480, ստորագրված է՝ Ճահնուր:

«Արևելյան մամուլ» ամսագիրը (ազգային, գրական և քաղաքական) 1871—1901 թթ. հրատարակվել է Մ. Մամուրյանի խմբագրությամբ Զմյուռնիայում, հետագայում խմբագրել է նրա որդին՝ Հր. Մամուրյանը:

**Սկզբունքի դեմ արդյունք**—տպված է՝ «Արևելյան մամուլ», 1872, ապրիլ, էջ 154—157, անստորագիր:

27 Հնչունագրությունը ծագումով կապվում է սեմական ցեղերի հետ: Փյունիկեցիներից գիրն անցել է հույներին, սրանցից՝ հռոմեացիներին, ինչպես նաև հայերին, մեկ այլ շառավիղով՝ արևելքի ժողովուրդներին:

28 Գուտենբերգը (մոտ 1399—1468)՝ եվրոպայի առաջին տպագրիչը:

29 Հովհ., ԺԸ, 23—24:

30 Նկատի ունի Թիերին՝ 1871—1873 թթ. ֆրանսիական հանրապետության նախագահին:

31 Անդրադառնալով օսմանյան գրաքննությանը, Արփ. Արփիարյանը գրել է. «Մինչև 1880 թվականը ո՛չ հատորին, ո՛չ օրագրին համար կանխարգել գրաքննություն օրինագրված էր: Մերթընդմերթ հեղինակ մը կամ տպագրիչ մը ձերբակալվելով կը բանտարկվեր, բացորոշ օրենքի մը դեմ առանց մեղանչած ըլլալու…

Իսկ ամբողջ մամուլն ալ, առանց այլևայլ ցեղերու և կրոններու խտրանքի՝ թեև ընդարձակ ազատություն կը վայելեր, բայց ծանր վտանգներու սպառնալիքին ներքև ալ միշտ կը դողդղար, վասնզի իր ազատությունը երաշխավորող տպագրական օրենքը «ատամնաբար» դադարումի ենթարկված էր 1866-ին, կրետական ապստամբության առ-

թիվ։ Այդ ժամանակաշրջանը տևեց մինչև 1880, երբ կանխարգել գրաքննության համատարած վարչական քմահաճույքը բացարձակորեն բռնապետել սկսավ, գրաքննության համար ո՛չ մի որոշ կարգ կանոն մը սահմանված չըլլալով» (տե՛ս Ա. Արփիարյան, Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության, Գահիրե, 1944, էջ 75)։

32 «Մանզումեի էֆքեար» հայատառ թուրքերեն թերթը հրատարակվել է 1866—1896 թթ., Կ. Պոլսում, Կ. Փանոսյանի խմբագրությամբ։ Հետագայում հրատարակվել է հայերեն (մինչև 1917 թ.)։

33 «Օրագիր» քաղաքական, ազգային և առևտրական օրաթերթը հրատարակվել է Կ. Պոլսում՝ 1868—1876 թթ.։

34 «Արարատ» քաղաքական, ազգային, բանասիրական և առևտրական շաբաթաթերթը հրատարակվել է 1869—1876 թթ., Կ. Պոլսում։

35 Խոսքը, հավանաբար, վերաբերում է 1869—1882 թթ. Կ. Պոլսում հրատարակվող «Մամուլ» պատկերականին («արձագանք հասարակաց կարծյաց»)։

Ղ. ԱՂԱՅԱՆ

Էդմոնդո դե Ամիչիս. «Սիրտ»։ Աշակերտի հիշատակարանը—հատվածը քաղված է՝ Ղ. Աղայան, Եժ, հ. 3, Երևան, 1963, էջ 208—209։ Տպագրվել է՝ «Աղբյուր», 1890, № 1։ Նույն հատորից են քաղված նաև ծանոթագրությունները։

1 Հայ մանկավարժականներից շատերի պես Աղայանը ակնածանքով էր վերաբերվում Կավուրին։

2 Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության տողն է։

Մի երես մեր նորագույն պատմությունից—հատվածը քաղված է նշված հրատարակությունից, հ. 4, Երևան, 1963, էջ 292։ Հոդվածը գրել է 1890-ին։

ՐԱՖՖԻ

<Մ. Խրիմյանին>—հատվածը քաղված է՝ Րաֆֆի, Եժ, հ. 10, Երևան, 1964, էջ 502։ Նույն հրատարակությունից են քաղված նաև որոշ ծանոթագրություններ։

Ըստ հատորի ծանոթագրության նամակը գրողի երկրորդ տպագրված գործն է «Արծվի Վասպուրականում» (խմբագիր Մկրտիչ վարդապետ Խրիմյան և Մ. Անանյան)։

Ճանապարհորդական նոթեր—հատվածը քաղված է նույն հրատարակությունից՝ հ. 8, Երևան, 1963, էջ 285։ Ըստ հատորի ծանոթագրության՝ ամենայն հավանականությամբ գրել է 1858—1859 թթ.։

1 Մ. Թաղիադյանը Հնդկաստանում է գտնվել 1824—1831 թթ. և ապա՝ 1839-ի վերջերից 1857 թ.։ Հայրենիք վերադառնալու ճանապարհին վախճանվել է պարսկական Շիրազում, 1858 թ. հունիսի 8-ին։

2 Ինչպես հայտնի է, Խ. Աբովյանը 1848 թ. ապրիլի 2-ի վաղ առավոտյան դուրս է եկել տնից և այլևս չի վերադարձել. «կորել է անհետ»։

Դատարկ հույսերով ենք խաբվում—հատվածները քաղված են նույն հրատարակությունից՝ հ. 9, Երևան, 1964, էջ 271—272։ Հոդվածը գրել է 1879 թ. սկզբներին։

3 Հոդվածում Րաֆֆին քննադատում է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակների ազգային որոշակի հոսանքների, մասնավորապես «Մեղու Հայաստանի»-ի մոտեցումները։ «Մեղու Հայաստանի» (քաղաքական, բանասիրական և առևտրական) լրագիրը հրատարակվել է 1858—1886 թթ., Թիֆլիսում։

*4 Սեթ Աբգարը, ինչ խոսք, այն «հռչակավոր վաճառականն» Հարություն Աբգարյանցի որդին է, որի մասին Մ. Նալբանդյանը Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին հայտնում է, որ Կալկաթա հասնելով առաջինը այցելել է նրան (տե՛ս* Մ. Նալբանդյան, *ԵԼԺ, հ. 4, Երևան, 1949, էջ 99)։ Աշ. Հովհաննիսյանի հավաստումով՝ «Աբգար Սեթ Հ.—Առաջին հայ դատավորը Կալկաթայում, Ա. Գ. Աբգարի որդին (տե՛ս նրա մասին M. I. Seth,* History of the Armenians in India, p. 127)» *(տե՛ս* Միքայել Նալբանդյանց, *Անտիպ էջեր, Երևան—Մոսկվա, 1935, էջ 715)։*

*«Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» գրքում (Երևան, 1954, էջ 183—184) Ա. Ինճիկյանը գրում է. «Նալբանդյանը լիազորագիր է տալիս Ս. Աբգարին և Պ. Պալին՝ իրավունք վերապահելով նրանց ստանալ և իրեն ուղարկել Նոր-Նախիջևանին հասնող գումարի մնացորդը»։*

*Ըստ* Սարուխանի *ծանոթագրության՝ «Սեթ Աբգարը, հնդկաստանցի վաճառականը լույս ընծայեց Լոնդոնում ֆրանսերեն լեզվով մի հիշատակագիր... 1876, 12 էջ... որի մեջ պահանջում էր, որ Եվրոպան գրավի նաև 4 միլիոն թուրքահպատակ հայերի վիճակով» (տե՛ս նշվ. գիրքը, էջ 128)։ Անկասկած Րաֆֆին նկատի ունի հենց այդ գիրքը՝ Set Abgar,* The Case for the Armenians, London, 1878 *(*Սեթ Աբգար, *Հայերի դրությունը, Լոնդոն, 1878. տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 998)։*

*Արմենակ Սալմասլյանի «Հայկական մատենագրություն» գրքում (Երևան, 1969, էջ 229) հիշատակված է նույնի՝ Seht A. A.,* Mémoire sur la situation actuelle des Armeniens et sur leur avenir, Constantinople, 1876 *(*Սեթ Ա. Հ., *Հուշագրություններ հայերի արդի վիճակի և ապագայի մասին, Կ. Պոլիս, 1876)։*

Ինքնախաբեություն—*համառոտաբար քաղված է նույն հատորից, էջ 273—274։ Գրել է 1878 թ. սկզբներին Ագուլիսում։ Հոդվածը կրկին ուղղված է «Մեղու Հայաստանի»-ի դեմ։*

*5 Բնաբանը, ինչպես և մեջբերված «Ես միայն մի բան գիտեմ...» տողերը՝ Սոկրատեսի փիլիսոփայական սկզբունքներից են։*

Դեռ ուշ չէ—*հատվածները քաղված են նույն հատորից, էջ 295, 297։ Գրել է 1878 թ. փետրվար—մարտին, Ագուլիսում։*

*6 Նույն առածը ռուսերեն՝* после обеда горчица *(ճաշից հետո մանանեխ)։*

*7 «Ռուսաց զորքերով գրավված մասը» ռուս-թուրքական պատերազմից հետո ամբողջովին չմիացավ Կովկասին. ռուսական զորքերը հետ քաշվեցին Էրզրումից։*

Հայդուկներ—*քաղված է նույն հատորից, էջ 316։*

*8 Ըստ հատորի ծանոթագրության՝ ռուս-թուրքական պատերազմից հետո, նոր պայմաններում, Րաֆֆին ցանկացել է վերամշակել «Կայծերը» և հրատարակել «Հայդուկներ» վերնագրով։ Այդ նպատակով էլ նա գրել է այս առաջաբանը, որը առաջին անգամ տպագրվել է 1892 թ.։*

*9 XV—XIX դդ. հայդուկներ (հունգարերեն՝ հետևակայիններ) են կոչվել թուրքերի դեմ զինված պայքար մղող կամավորական ջոկատները. հարավային սլավոնական ազգերի, ինչպես և հայերի միջավայրում հայդուկներ են անվանվել թուրքական վայրագություններից լեռներում ապաստանած վրիժառուները։*

*10 Իր անկախության համար թուրքական զավթիչների դեմ պայքարած և 1821 թվականին հունական համազգային ապստամբության ժամանակ հռչակված հունալբանական ցեղախումբ։*

*11 Սուլիոտները հատկապես հռչակվել են թուրքական բռնակալության դեմ հունական ազատագրական պայքարի ժամանակ։ Սուլիոտների օրինակը, անկախության համար դյուցազնական պայքարը վկայակոչել են հայ բազմաթիվ գործիչներ (այս և սուլիոտների մասին տե՛ս* Մ. Հակոբյան. *«Մասիսը» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ, Երևան, 1977, էջ 167—225)։*

Հայ երիտասարդությանը—*հատվածը քաղված է նույն հատորից, էջ 438—439։ Տպագրվել է «Մշակ», 1879։*

*12 Րաֆֆու ցանկությունն էր հայ երիտասարդությանը տեսնել սերտ միասնությամբ, որը անհրաժեշտ դեպքում կարող էր ուղղություն տալ ժողովրդի ազատագրական պայքարին։*

*13 Նկատի ունի 1830 թ. ֆրանսիական հեղափոխական շարժումը, 1848-ի փետրվար-հունիսյան ելույթները, 1871-ի Փարիզի կոմունան։*

Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ—*հատվածաբար քաղված է նույն հատորից, էջ 473, 486—487, 490—491։ Գրել է 1878-ի դեկտեմբերին, Ագուլիսում։ Տպագրվել է «Մշակում», 1879-ին։*

*14 Խոսում է նկատի ունի Գր. Արծրունուն։*

Ինչո՞վ ենք մխիթարվում—*հատվածաբար քաղված է նույն հատորից, էջ 500, 503։ Տպագրվել է 1879-ին, «Մշակում»։*

Գ. Հայկունու կրիտիկան և «Կայծեր»—*քաղված է նշված հրատարակությունից, հ. 10, էջ 130—131։ Գրել է 1883-ին, տպագրվել է «Մշակում»։*

*15 Ակնարկված է «Մեղու Հայաստանի» 1883-ի № 31—37, 39, 57-ում «Կայծերի» հրատարակումից (I հատոր) անմիջապես հետո տպագրված Հայկունու քննադատականի դեմ։*

*16 Խոսքը վերաբերում է XIX դ. կեսերին Ամերիկայում նեգրերի ստրկության դեմ ծավալված պայքարին, որն իր անդրադարձումն է գտել Բիչեր-Սթոուի «Քեռի Թոմասի տնակը» վեպում (1852)։*

*17 Տուրգենևի «Որսորդի հիշատակարանի» ակնարկներն ու պատմվածքները գրըված են XIX դ. 40-ական թվականների վերջերին—50-ականի սկզբներին։*

«Գաղտնիք Ղարաբաղի»—*հատվածաբար քաղված է նույն հատորից, էջ 447, 448—449։ Տպագրվել է 1886-ին «Արձագանք» շաբաթաթերթում։*

*18 Ալրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գիրքը, որ դեռ լույս չտեսած արժանացել էր Հայկունու դրվատանքին («Մեղու Հայաստանի», 1885, № 62—68), հրատարակվել է 1885-ին։*

Հ. ՊԱՐՈՆՅԱՆ

Վերջին լուրեր—*տողերը քաղված են՝* Հ. Պարոնյան. *Եժ. հ. 8, Երևան. 1972, էջ 21։ Տպագրվել է «Մեղու», 1871, № 38, անստորագիր։ Նույն հրատարակությունից են քաղված ծանոթագրությունների մեծ մասը։*

*1 Ակնարկում է 1871-ի Փարիզի կոմունայի անկումը։*

Քաղվածք—*քաղված է նշված հրատարակությունից, հ. 7, Երևան, 1969, էջ 309։ Տպագրվել է «Մեղու», 1872, № 112, անստորագիր։*

Ասեղնածակ Մեղուի—*հատվածները քաղված են նույն հատորից, էջ 142, 144։ Տպագրվել է «Մեղու», 1873, № 161, ստորագրված է՝ Ով է նա։*

Կամիրներ—*հատվածները քաղված են նույն հրատարակությունից, հ. 4, Երևան,*

1965, էջ 25, 26—27, 45—46, 52, 58, 98, 115—116, 137, 284—285, 289—290։ Տպագրվել են՝ «Թատրոն», 1875, № 61, 163, 1876, № 192, 194, 195, 207, 212, 218. «Մասիս», 1978, № 2090, 2091։

2 1875 թ. Բոսնիայում և Հերցեգովինայում օսմանյան կայսրության դեմ բարձրացված ժողովրդական ապստամբությունից հետո, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին Սան Ստեֆանոյի դաշնագրով (1878 մարտի 3) Սերբիան, Ղարադաղը (Չեռնոգորիա) և Ռումինիան լիովին ազատագրվում են թուրքական լծից. Բոսնիան և Հերցեգովինան ստանում են ինքնուրույնություն, ընդարձակվում են Բուլղարիայի սահմանները, որից հանվում է թուրքական բանակը. Բուլղարիան ստանում է ինքնուրույն իշխանություն։

3 Ակնարկում և ծաղրում է «Մասիսի» զգուշավորությունը։

4 Ըստ ավանդության Հռոմի պապերը համարվում են Պետրոս առաքյալի (որն իբր եղել է ձկնորս) ժառանգորդները։

5 Հունական դիցաբանության մեջ ծաղրի և պարսավանքի աստված։ Մոմոս անվան տակ Պարոնյանը նկատի ունի Կ. Պոլսում հունարեն հրատարակված նույնանուն զավեշտաթերթը։ Նրա խմբագիրը 1877 թ. ապրիլին դատապարտվել է երեք տարվա բանտարկության՝ «վասն լրագրական հանցանաց»։

6 Ասել է սխեռ գնդակ. գործածված է ծաղրական իմաստով։

7 Ըստ հատորում զետեղված բառարանի՝ խխունջ և ոստրե։

8 Նկատի ունի Կովկասյան ճակատին վերաբերող մամուլի արձագանքները։

9 Ըստ հատորի ծանոթագրության միջնադարյան հայ աշխարհիկ գրականության մեջ խիկար անունը հոմանիշ է իմաստության, խելքի և սրամտության։ Պարոնյանի ստեղծագործության մեջ խիկարը հաճախ նույնանում է հեղինակի հետ, արտահայտում նրա խոհերն ու վերաբերմունքը։

10 Քրիստոնեական տոն, նշվում է փետրվարի 14-ին։ Այդ օրը («Տերընդեզ») վառվում են խարույկներ, որոնց վրայից թռչկոտում-ցատկոտում են մարդիկ։ Տյառն ընդ առաջի հիշատակությամբ ծաղրվում է միջազգային քաղաքականությունը, փոխաբերորեն համեմատվելով նման ցատկոտելու հետ։

11 Ըստ հատորի ծանոթագրության ակնարկվում է հրապարակախոս, խմբագիր Հ. Վարդանյանը։

12 Ըստ հատորի ծանոթագրության այաղ բաշասի և թերպիե թուրքերեն բառերը այստեղ նշանակում են խաչ և համեմունք։

Խտղտում—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 303—304։ Ծանոթագրության համաձայն «Խտղտում» ընդհանուր վերնագիրը կրող երգիծական հարցումները, պատկերներն ու զրույցները առաջին անգամ տպագրվել են՝ «Լույս», 1879 թ. սեպտեմբերի 6-ից (№ 1), երբ պարբերականը խմբագրում էր Հ. Պարոնյանը։

13 Ըստ հատորի բառարանի՝ այար նշանակում է հավասարակշռություն, աստիճան։

## ԾԵՐԵՆՑ

Եվրոպական քաղաքականության ներկա ժամանակներս հայ ազգին վրա բրած ազդեցությունը—հատվածը քաղված է Ծերենցի նույնանուն գրքույկից՝ Կ. Պոլիս, 1873, էջ 12—13։

1 Ասել է՝ ֆրանսիական բուրժուական հեղափոխության։

Ամբոխ և ոգի — Հատվածները քաղված են՝ «Արևելյան մամուլ», 1876, մարտ, էջ 133—134 և ապա՝ հուլիս, էջ 176։

2 «Ամբոխ և ոգի» Վ. Հյուգոյի «Վիլյամ Շեքսպիր» տրակտատի V գրքի խորագիրն է (ռուսերեն վերջին հրատարակության մեջ «Умы и массы»)։ Տերենցի քաղվածներից սույն գրքում զետեղված Ա հատվածը գրքի առաջին ենթագլուխն է, հաջորդը՝ հատված է Գ ենթագլխից (տե՛ս В. Гюго. Собр. соч. в 15 томах, т. 14, М., 1956, стр. 314—315, 318)։ Խմբագրությանը հղած իր նամակը Տերենցը թվագրել է 6/18 փետրվար 1876, ստորագրել՝ Տերենց։

3 Լատիներեն է՝ սկսենք լույսից։

Թղթակցություն — Հատվածը քաղված է՝ «Արևելյան մամուլ», 1876, նոյեմբեր, էջ 394, ստորագրված է Տերենց։

4 Խոսքը վերաբերում է 1849 թ. հունիսյան օրերի իրադարձություններին Փարիզում և Հռոմում։ Երկրի ընդհանուր քաղաքականության դեմ Փարիզի 1848—1849 թթ. ռևոլյուցիոն հուզումների վերաբերյալ տե՛ս սույն գրքում Ստ. Ոսկանյանի բաժինը և ծանոթագրությունները։

1848-ի իրադարձությունները Հռոմում հաջողություն չեն ունենում. Ֆրանսիական զորքերը երկար ժամանակ օկուպացնում են Հռոմը։ Ինչպես պապի, այնպես էլ Նապոլեոն III-ի տիրապետության դեմ էր ուղղված նաև 1862 թ. սիցիլիական կամավորական շարժումը՝ Գարիբալդու հռչակած՝ «Հռոմը կամ մահ» նշանաբանով։

5 1848 թ. Սարդինյան թագավորություն հայտարարած Կարլ Ալբերտը շուտով նահանջում է, վախկոտաբար իտալական քաղաքները հանձնում ավստրիացիներին և կնքում պարտության պայմանագիր։

6 Գերմանական քաղաքներում բռնկված հեղափոխության օրերին, 1848 թ. մայիսի 18-ին Մայնի Ֆրանկֆուրտում գումարվում է համագերմանական ազգային ժողով, որտեղ պետք է վճռվեր երկրի միավորման հարցը։ Բուրժուազիայի դավաճանական քաղաքականության հետևանքով պարտվում է հեղափոխությունը, ձախողվում միավորումը։

7 Նկատի ունի Հունգարիայի ազատագրական ապստամբության ճնշումը 1849 թ.։ Ցարական զինված ուժերի հրամանատար էր Ի. Ֆ. Պասկևիչը։

8 Ակնարկում է 1852 թ. դեկտեմբերի 2-ի պետական հեղաշրջումը Ֆրանսիայում. արձակվում է սահմանադիր ժողովը, հռչակվում է Նապոլեոն III կայսրը։

9 Ավստրիական տիրապետությունից ազատագրված Իտալիան անկախ հանրապետություն հռչակվեց 1861 թ.։

10 Նկատի ունի Հռոմի կաթոլիկ եկեղեցու պապերի աշխարհիկ իշխանության վերացումը 1870 թ.։

11 Ավստրիական կառավարության համաձայնությամբ Հունգարիայի անկախությունը ճանաչվում է 1867 թ.։

12 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմում կրած պարտությունից հետո Նապոլեոն III-ը կյանքի վերջին տարիներին ապաստան է գտնում Անգլիայում։

13 1871 թ. հունվարի 1-ին Գերմանիան հռչակվում է կայսրություն։

14 Նկատի ունի 1861 թ. ճորտատիրության վերացումը Ռուսաստանում։

15 Կրկնվող ապստամբություններից հետո՝ նեգրերը Ամերիկայում ստրկությունից ազատագրվում են 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմների ժամանակներում, 1864-ին։

16 Երեք անգամ փոփոխվելուց, Մ. Նալբանդյանի արտահայտությամբ՝ «թլպատվե-

*լուցս հետո, 1863 թ. մարտի 17-ին թուրքական կառավարությունը հաստատում է արևմտահայության Ազգային սահմանադրությունը։*

**Ժամանակիս ոգին և հայ ապագայն**—*հատվածները քաղված են՝ «Փորձ», 1879, № 1, էջ 201—213։ Ստորագրված է՝ Տերենց, 20 դեկտ. 1878։ Տպագրելով հոդվածը, «Փորձի» խմբագրությունը տողատակին զետեղել է հետևյալ ծանոթությունը. «Մենք բախտավոր ենք համարում մեզ, որ կարող ենք մեր շրջանը բանալ մի հոդվածով, որ պատկանում է «Թորոս Լևոնի» տաղանդավոր հեղինակի գրչին։ Մենք տպում ենք այս հոդվածը առանց որևէ փոփոխության մեր կողմից։ Վստահանում ենք կարծել, որ ընթերցողը մեր երկու տարվա «Փորձը» ի նկատի ունենալով, պարզ կտեսնե այն կետը, որի մեջ չենք կարող համաձայն լինել պատվելի աշխատակցի հետ։ Տան. խմբագ.»։*

*17 Հավանորեն նկատի ունի 1878-ի ապրիլի 14-ի Անգլո-օսմանական համաձայնագիրը, որով սուլթանին պարտավորեցնում էր արգելել ստրուկների վաճառքը։*

*18 Տերենցը թարմ հետքերով արձանագրում է հայոց համընդհանուր հուսախաբությունը 1878-ի Բեռլինի վեհաժողովից հետո։*

*19 Մատ., ԻԲ, 21 Տերենցը պատվիրանը վկայակոչել է փոքր-ինչ վերափոխված։*

*20 Ակնարկվում է Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը։*

*21 Բեռլինի վեհաժողովին մասնակցել են 1856 թ. Փարիզի դաշնագրության մասնակից երկրների՝ Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա և Թուրքիա,— ներկայացուցիչները։ Վեհաժողովի նախագահն էր Գերմանիայի կանցլեր Օ. Բիսմարկը։ Վեհաժողովում Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը շրջափոխվել է հայտնի 61-րդ հոդվածով։*

*Տերենցի վկայակոչած դարձվածքը մի այլ թարգմանությամբ այսպես է՝ «Ուժը արդարությունից կարևոր է»։ Բիսմարկին է պատկանում նաև Ռուսաստանի և Թուրքիայի միջև Բեռլինի վեհաժողովում սեփական միջնորդական դերին վերաբերող դարձվածքը՝ «Մի ազնիվ միջնորդ»։*

*22 Մկ. Խրիմյանի գլխավորած Հայոց ազգային պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել վեհաժողովին. նրա պահանջները ներկայացնում էր Ֆրանսիայի ներկայացուցիչը։*

*23 Թուրքական ռեֆորմների ծրագիրը՝ «Թանզիմաթը» (1839 թ.) հրապարակման տեղի անունով կոչվում էր նաև Գյուլհանեի Հաթթը շերիֆ՝ Գյուլհանեի օրենսդրություն։*

*24 Թուրքական կառավարությունը 1956 թ. փետրվարի 6/18-ին ազդարարում է «Հաթթը հումայունը»՝ Արքայական հրովարտակը, «Թանզիմաթի» երկրորդ տարբերակը, որով կայսրության հպատակներին, հատկապես այլազգիներին, կառավարությունը խոստանում էր կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովություն։*

*25 Արարատյան ընկերությունը հիմնվել է ռուս-թուրքական պատերազմից առաջ՝ 1876 թ. ապրիլի 15-ին Կ. Պոլսում. ընկերության հանգուն գործիչներից էին Մկ. Փորթուգալյանը, Արփ. Արփիարյանը, Ս. Ջերազը։ Ընկերությունը դպրոցներ էր հիմնում արևմտահայ բնակավայրերում։ Գործել է մինչև 1880 թ. հունիսը, ապա միավորվել է այլ ընկերությունների հետ և հիմնվել է Միացյալ ընկերություն։*

## Ս. ՏՅՈՒՍԱԲ

**Քանի մը խոսք կանանց անգործության մասին**—*հատվածը քաղված է՝ «Արևելյան մամուլ», 1881, սեպտեմբեր, էջ 349—350։*

Կանանց աշխատության սկզբունքը — Հատվածը քաղված է՝ «Արևելյան մամուլ», 1881, դեկտեմբեր, էջ 453—454։

Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆ

Ակսենք, մեր գործ սորեն սկսենք — չնչին կրճատումներով քաղված է՝ «Արծվի Վասպուրականի», 1862—1863, № 1, էջ 9—19, ստորագրված՝ Գ. Սրվանձտյանց։ Հոդվածի սկզբից այս տողերն են. «Ուղերձ առ պատվական հայ երիտասարդ ուսումնասեր և ողջասեր պ. Արտաշես Իշխանյանց սիրելի ընկերն իմ»։

1 Մատ., Զ, 34։

2 Ես., ՄԷ, 21։

3 Մատ., ԺԸ, 7։

4 Սաղ., Բ, 11։

5 Առ Եբրա., ԺԱ—ԺԲ։

6 Եր., Զ, 26։

7 Ծննդ., ԽԶ—Ծ։

8 Եղիշե, «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», եղանակ Բ։

9 Նկատի ունի Ազգային սահմանադրության հակառակորդներին։

10 Առ Գաղատ., Դ, 1։

Գրող ու բրող և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ — Հատվածը քաղված է՝ Գ. Սրվանձտյան, Եր, հ. 1, Երևան, 1978, էջ 23—30։

11 Նկատի ունի Մարկոս էֆենդի Աղաբեկյանին՝ «Գրոց ու Բրոցի» առաջին հրատարակության (1874, Կ. Պոլիս) հոգածուին, որին և ձոնված է գիրքը. «Նվեր բարեկամական առ մեծ Մարկոս էֆենդի Աղաբեկյան»։

ԱՐԳ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայերը և Հայաստանը օտարների աչքում — Հատվածը քաղված է «Փորձ», 1881, № 1 (հունվար), էջ 2—5։ «Փորձ» հանդեսը հրատարակվել է 1876—1881 թթ. Թիֆլիսում, խմբագիր հրատարակիչ Արգ. Հովհաննիսյան։

Դասախոսությունը կարդացել է 1879 թ. մայիսի 17-ին. հետագայում տպագրվել է՝ «Փորձում», ապա՝ առանձին գրքով։

1 Նկատի ունի 1862 թ. Զեյթունի ապստամբությունը։

2 1852—1853 թթ. Վ. Լանգլուան ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ շրջագայել է Կիլիկիայում, ուսումնասիրել երկիրը, Զեյթունի, Հաճընի, Մարաշի տնտեսական դրությունը և վերադարձին հրապարակել հոդվածներ՝ «Հայաստանի տեղը աշխարհի պատմության մեջ» (1856), «Թուրքիայի հայերը և Տավրոսի ջարդերը», որը ֆրանսիական հանդեսից թարգմանելով և «Թուրքաստանի հայերն ու Տորոս լերին կոտորածները» խորագրով հրապարակել է «Փարիզ» թերթը 1863 թ. մարտի 13-ի համարում։ Այնուհետև հոդվածը մասամբ կամ ամբողջական ձևով տեղ է գտել հայերեն այլ պարբերականներում։ Այս կապակցությամբ տե՛ս նաև Հ. Ղազարյանի նշվ. աշխատությունը, էջ 14—15, Մ. Մխիթարյանի՝ XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան, 1976, էջ 149։

## ՄՏ. ՊԱԼԱՍԱՆՅԱՆ

Տասնիններորդ դարու նշանաբանը—*հատվածաբար տպված է՝ «Փորձ», 1877, № 1, էջ 129—132, 138—139։*

*1 Հանդեսում տողատակին նշված է աղբյուրը՝* Thiers, «De la propriete», livre II chap. v, p. 112—113, Ed. de 1849.

*2 Տողատակին ֆրանսերեն նշված է աղբյուրը՝ Գիզոյի պատմագիտական կարևոր աշխատություններից՝ «Ֆրանսիայի քաղաքակրթության պատմությունը» (1855)։*

Հունաստանի անկախությունը—*հատվածը տպված է՝ «Փորձ», 1877, № 2, էջ 163։*

*3 Այսինքն՝ «Փորձը»։*

## ԱՎ. ԱՐԱՍԽԱՆՅԱՆ

Ուղիղ ճանապարհ—*հատվածը տպված է՝ «Մուրճ», 1893, № 1, էջ 6—7. առաջնորդող հոդվածը ստորագրված է՝ Ավետիք Արասխանյան։ Ամսագիրը (քաղաքական, հասարակական, գրական) հրատարակվել է 1889—1907 թթ., Թիֆլիսում։ Խմբագիր-հրատարակիչ՝ Ավ. Արասխանյան, ապա՝ Կ. Կրասիլնիկյան և Լ. Սարգսյան։*

Ժամանակակից տեսություն—*հատվածը տպված է նույնից, 1896, № 6, էջ 842—843. ստորագրված է՝ Ա. Արասխանյան։*

*1 Սասունի դեպքերից հետո Արևմտյան Հայաստանի իրավիճակի վերաբերյալ տե՛ս մանավանդ սույն ժողովածուում զետեղված Արշ. Չոպանյանի և Արփ. Արփիարյանի բաժինը և ծանոթագրությունները։*

*2 Տե՛ս Արփիարյանի բաժնի № 23 ծանոթագրությունը։*

*3 Հայոց դատի պաշտպանությամբ Արասխանյանը հանդես է եկել դեռևս Բեռլինի վեհաժողովի օրերին։* «Ավետիք Արասխանյան. *Կենսագրություն» գրքում (Թիֆլիս, 1912) կարդում ենք. «Հիշելու է, որ Բեռլինի կոնգրեսում հայկական հարցի քննության օրերում Պարիզի* Temps *լրագրում իբրև երկրորդ առաջնորդող տպված անստորագիր հոդվածը այդ հարցի առթիվ պատկանում է Արասխանյանի գրչին» (էջ 4)։*

## ՄՈՒՐԱՑԱՆ

Ինքնակենսագրություն (Ուղղված պ. Մինաս Բերբերյանին)—*հատվածաբար տպված է՝* Մուրացան, *Եժ, հ. 7, Երևան. 1965, էջ 138, 139—140, 141—142։*

*Ըստ հատորի ծանոթագրության գրել է 1890-ական թվականներին, Մ. Բերբերյանի հանձնարարությամբ՝* «Армянские беллетристы» *գրքի II հատորում զետեղվելիք ակնարկի համար, որը, սակայն, տպագրվելուց հետո գրաքննչությունն արգելել է։ «Մուրացանի կենսագրությունը» վերնագրով տպվել է՝ «Լումա», 1910 թ.։*

*Հանդեսը (նախ կիսամյա, գրական, քաղաքական, պատմական և հանրային) լույս է տեսել Թիֆլիսում 1896—1911 թթ.։*

*1 «Խորհրդավոր միանձնուհին» վերաբերում է 1889 թ.։*

*2 Ռ. Պատկանյանի «Վանեցի կարիճ» բանաստեղծության տողերն են։*

*3 «Խորհրդավոր միանձնուհի» վեպի հերոսներն են։*

*4 «Լուսավորության կենտրոնը» վերաբերում է 1892 թ.։*

## ԱԼ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

*Ճշմարտության հաղթանակը*—Հատվածաբար քաղված է՝ Ալ. Շիրվանզադե, Եժ, հ. 10, Երևան, 1962, էջ 359—361: Գրել է 1908 թ. հունիսին:

Էմ. Զոլային՝ Դրեյֆուսի դատի կապակցությամբ, Շիրվանզադեն անդրադարձել է նաև «Ճշմարտության հերոսը» (1898) և «Զոլան գնաց պանթեոն» (1908) հոդվածներով. տե՛ս նույն տեղում, էջ 230—232, 335—338:

1 Է. Զոլան թաղված էր Փարիզի Մոնմարտրի գերեզմանոցում: Պատգամավորների ժողովի որոշմամբ նրա աճյունը փոխադրվել է պանթեոն 1908 թ. հունիսին:

2 Հունական առասպելական Հերկուլեսի հետ կապված ավանդություններից, ըստ որի Հերկուլեսը Ջիբրալթարի հանդիպակաց ափերին կանգնեցրել է վիթխարի սարեր՝ Հերկուլեսյան սյուներ: Այստեղ ունի ծայրահեղ չափազանցության իմաստ:

3 Անհատապաշտական, հակադեմոկրատական տրամադրություններով հայտնի ֆրանսիական գրող Մորիս Բարրեսը հանդես էր եկել Զոլայի աճյունը պանթեոն փոխադրելու դեմ. այդ կապակցությամբ տե՛ս Շիրվանզադեի վերը հիշատակված «Զոլան գնաց պանթեոն» հոդվածը:

4 Զոլայի հայտնի վիպաշարքը:

5 1894 թ. Ֆրանսիայի ռազմական մինիստրը դատական գործ է հարուցում ծագումով հրեա, ֆրանսիական սպա Ա. Դրեյֆուսի դեմ, որով վերջինս ամբաստանվում էր լրտեսության մեջ: Դատավարությունից երկու օր անց՝ 1898 թ. հունվարի 13-ին ի պաշտպանություն Դրեյֆուսի հրապարակվում է Հանրապետության նախագահին ուղղված Զոլայի «Ես մեղադրում եմ» հայտնի նամակը: Դա համարվեց դարի ամենահեղափոխական խիզախությունը, որի հերոսներից մեկն էլ գնդապետ Պիկարն էր (տե՛ս *Альберт Кан*, Радости и печали, размышления Пабло Казальса, М., 1977, стр. 75—77).

6 Զոլայի հետևությամբ Դրեյֆուսի պաշտպանությամբ հանդես են եկել Ժ. Կլեմանսոն, Ալ. Բրյունոն, Ան. Ֆրանսը և ուրիշներ:

7 1898 թ. փետրվարի 23-ին ֆրանսիական դատարանը Զոլային դատապարտում է բանտարկության (տե՛ս Շիրվանզադեի վերը հիշատակված «Ճշմարտության հերոսը» հոդվածը): Զոլան աքսորվում է, աքսորից վերադառնալով՝ 1899-ի հուլիսի 5-ին հեռանում Անգլիա: (Այս կապակցությամբ սույն ժողովածուում տե՛ս նաև Գր. Զոհրապի և Լ. Բաշալյանի բաժինները և ծանոթագրությունները):

Տիտաններ և պիգմեյներ—Հատվածը քաղված է նույն հատորից, էջ 529—530: Հոդվածը տպագրվել է՝ «Մշակ», 1914, № 202:

8 1933 թ. «Academia» հրատարակությամբ լույս տեսած *Гёте*, «Избранная лирика» գրքում՝ անդրադառնալով Գյոթեի 1805—1814 թթ. կյանքին և ստեղծագործությանը, ռուս գրականագետ Ա. Գաբրիչևսկին գրում է. «Նապոլեոնի արշավանքը և ազատագրական պատերազմները հասցնում են այն բանին, որ նա (Գյոթեն—կազմ.) խստորեն օտարանում է ժամանակակիցներին, գլխավորապես երիտասարդությանը այն քաղաքական ու նույնիսկ թշնամական վերաբերմունքի պատճառով, որ տածում էր դեպի գերմանական շովինիզմը, և նաև այն պատճառով, որ խոնարհվում էր Նապոլեոնի հանճարին, կամ ինչպես ինքն էր ասում «դիվական բնավորության առջև» (տե՛ս նշվ. աշխ., էջ 22):

9 Հուշագրական տվյալներով Նապոլեոն Բոնապարտը Բեթհովենի բացառիկ բարձր գնահատությանն է արժանացել մինչև նրա կայսր հռչակվելը՝ 1804 թ. մայիսի 18: Հենց

*դրանից հետո է, «Բոնապարտ» վերնագրված սիմֆոնիան վերանվանվել է Երրորդ՝ «Հերոսական սիմֆոնիա» (տե՛ս* «Письма Бетховена (1787—1811)», М., 1970, стр 20—22):

Կյանքի բովից—*Հատվածները քաղված են նշված հրատարակությունից, հ. Տ, Երևան, 1961, էջ 365—367, 385—386:*

*10 Շիրվանզադեն Փարիզ է մեկնել 1905 թ. օգոստոսին և արտասահմանից վերադարձել է 1910 թ.: Երկրորդ անգամ արտասահման է մեկնել 1919-ի օգոստոսի վերջին և վերադարձել 1926-ին:*

*11 Սկզբնական լույսի, լուսնի և պայծառության հնագույն իրանական աստվածուհի. համապատասխանում է հունական Արտեմիսին և, ինչպես նա՝ գլխին կրում է կիսալուսին, ձեռքին ջահ, որսորդական նետ ու աղեղ:*

*12 Անարդարությունների դեմ մարտնչող Ժ. Ժորեսը միաժամանակ եղել է հայոց դատի հետևողական պաշտպան. հայ մտավորականության՝ Չոպանյանի, Շիրվանզադեի, Ղորղանյանի և ուրիշների հետ ունեցած նրա հարաբերությունները արժանի են առանձնակի ուշադրության: Հայոց դատի օգտին Ժ. Ժորեսի գործունեության վերաբերյալ տե՛ս* «Геноцид армян в Османской империи». Сборник документов и материалов. Под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, стр. 490—500.

*13 Սպանվել է 1914 թ. հուլիսի 31-ին, հետադիմական շրջանների գործիք դարձած ոմն Վիլլենի ձեռքով: Ժորեսի աճյունը պանթեոն է փոխադրվել 1919 թ.:*

*14 Գամբետայի և Հյուգոյի թաղման օրը Ֆրանսիայում հայտարարված է եղել ազգային սգի օր:*

*15 Շիրվանզադեն Շվեյցարիայում է եղել 1906 թ. ամռանը:*

*16 Շվեյցարիայի ֆեդերացիայի հիմնադրումը և ազատագրությունը ավստրիական լծից տեղի է ունեցել 1291-ից:*

*17 Բուրգունդական հերցոգ Կարլոսի դեմ շվեյցարացիները հաղթանակ են տարել 1477 թ., ավելի ուշ՝ XV դ. վերջերին, դիմադրել են, այսպես կոչված՝ «Հռոմեական սրբազան կայսրության» Մաքսիմիլիան I-ին, որը ձգտում էր նորից գաղութացնել Շվեյցարիան: Դիմադրությունը վերջնական հաղթանակով է պսակվել 1499 թ., որը և վավերացվել է 1511 թ. կնքված դաշնագրով:*

*18 Վեսթֆալիայի 1648 թ. դաշնագրությունը Շվեյցարիային բերում է միջազգային ճանաչում:*

*19 1798 թ. Հելվեցյան հանրապետությունը ռազմական դաշնագիր է կնքում Ֆրանսիայի հետ և 1799-ին դառնում պատերազմական գործողությունների թատերաբեմ: 1802 թ. ապստամբում են շվեյցարական համարյա բոլոր կանտոնները: Եվ, սակայն, շարունակվում է Ֆրանսիայի միջամտությունը Շվեյցարիայի ներքին գործերին, մինչև որ Վիեննայի կոնգրեսի 1815 թ. մարտի 20-ի դեկլարացիայով ճանաչվում է Շվեյցարիայի մշտական չեզոքությունը:*

Օտար վայրերում, դեպի Իտալիա—*Հատվածը քաղված է՝ Ալ. Շիրվանզադե, ԵԼԺ, հ. 8, Երևան, 1951, էջ 443—444:*

*20 Շիրվանզադեն՝ ընտանիքով, Եգիպտոսում է գտնվել 1920 թ. ձմռանը, Իտալիա մեկնել՝ գարնան սկզբներին:*

*21 1914 թ. պատերազմը սկսելուց հետո Անգլիան Եգիպտոսը հայտարարում է Թուրքիայից անջատված, հաստատում իր գերիշխանությունը: 1919—1920 թթ. անգլիա-*

կան տիրապետության դեմ Եգիպտոսում բռնկված ժողովրդական ապստամբությունները ճնշվում են մեծ դժվարությամբ։

Աղջույն հարրոցներից—քաղված է՝ Ալ. Շիրվանզադե. Եժ. հ. 9, Երևան. 1961, էջ 595—596։ Տպագրվել է «Գրական թերթ», 1932, № 35։

ՎՐԹ. ՓԱՓԱԶՅԱՆ

«Հայրենիքը վտանգի մեջ է...»—քաղված է՝ Վրթ. Փափազյան. Եժ, հ. 5, Երևան, 1959, էջ 622—625։ Փ. ստորագրությամբ տպագրվել է «Արշալույս», 1905, № 72։ Օրաթերթը (գրական, հասարակական, քաղաքական, տնտեսական. պատկերազարդ) հրատարակվել է 1905—1906 թթ., Թիֆլիսում. խմբագիրներ՝ Գ. Մելիք-Կարագյոզյան, Հ. Մանանդյան։

1 Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը հրապարակվել է 1905 թ. հոկտեմբերի համառուսաստանյան գործադուլի օրերին. դրանով Նիկոլայ II ռուսական ցարը նպատակ ուներ ժամանակ շահել և ճնշել բարձրացող հեղափոխությունը։

2 Պլեվեի սպանությունից հետո՝ 1905 թ. փոխարինելով նրան որպես ներքին գործոց մինիստր, Դուռնովոն շարունակում էր առաջինի դաժան քաղաքականությունը։

3 Խոսքը հավանորեն վերաբերում է 1897-ից Պետերբուրգում վերահրատարակվող «Русь» հասարակական, քաղաքական և գրական ամենօրյա լրագրին, որը բազմիցս արգելվել է առաջավոր դիրքորոշման համար։

4 Վիտտեի կառավարական «կարինետը» կյանքի է կոչվում 1905 թ. աշնանը և, կազմակերպելով ինքնակալության ուժերը, բոլոր միջոցներով ճնշում է հեղափոխությունը։

5 Հասարակական-քաղաքական լրագիր՝ լիբերալ կալվածատերերի և բուրժուազիայի օրգան. հրատարակվել է Մոսկվայում, 1863—1918 թթ.։

Հեղափոխական կռիվները Մոսկվայում—քաղված է նույն հատորից, էջ 625—631։ Փ. ստորագրությամբ տպագրվել է «Արշալույս», 1906, № 2։

6 Նկարագրում է 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբությունը Մոսկվայում. նույն օրերին զինված ելույթներ են եղել Խարկովում, Նովոռոսիյսկում, Չիտայում, Պերմում, Կրասնոյարսկում և այլ վայրերում։

7 Կաթոլիկների կազմակերպած բողոքականների կոտորածը 1572 թ. օգոստոսի 24-ի գիշերը Փարիզում. գործածված է ընդհանրական իմաստով։

8 Հեղափոխական երգ, Ֆրանսիայի ազգային հիմնը. ստեղծվել է 1792 թ.՝ ֆրանսիական բուրժուական հեղափոխության օրերին։ Խոսքի և երաժշտության հեղինակ Ռուժե դե Լիլ։

Հայ գրողներին—հատվածը քաղված է՝ «Վրթանես Փափազյանը գրականության մասին», Երևան, 1962, էջ 92։ Տպագրվել է՝ «Արշալույս», 1905, № 57։

Թուրքահայ գրականությունը մինչև 90-ական թվականները—հատվածները քաղված են նույն գրքից, էջ 225, 226, անթվակիր է։

ԼԵՈ

Գրական կրուսաներ—հատվածները քաղված են՝ «Մուրճ», 1901, № 11, էջ 114—115։ Ստորագրված է՝ Լեո։

1 1846 թ. մեկնելով Փարիզ՝ Ստ. Ոսկանյանը նախ աշխատանքի է անցնում, ապա

*հաճախում Սորբոն և Կոլեժ դը Ֆրանս։ Կարճատև ընդմիջումով նա Ֆրանսիայում եղել է քսան տարի։*

*2 1789-ի և 1830-ի հեղափոխությունները։*

*3 Տե՛ս Ստ. Ոսկանյան բաժինը և ծանոթագրությունները։*

*4 Ի պաշտպանություն իտալական ազգային-ազատագրական շարժումների, Փարիզի ուսանողության ցույցին մասնակցելու համար, ի թիվս շատերի, Ոսկանյանը 54 օր բանտարկվել է, 1852 թ. վերջերին ոստիկանական մարմինների պահանջով թողել Փարիզը, ուր վերադարձել է 1854-ին։*

Վիկտոր Հյուգո—*Հատվածները քաղված են՝ «Մուրճ», 1902, № 2, էջ 212, 217. առաջադրված է՝ Լ.։ Գրված է գրողի ծննդյան 100-ամյակի առթիվ։*

Ռուսաց գրականությունը—*Հատվածները քաղված են՝* Ստ. *Ռուսահայ գրականությունը (սկզբից մինչև մեր օրերը), Վենետիկ, 1928, էջ 28—32։ Գրել է 1903 թ.. նույն թվականին մաս-մաս տպագրվել է «Գեղունի» և «Բազմավեպ» ամսագրերում։*

*5 Քաղել է Ն. Գ. Չերնիշևսկու «Պուշկինի մասին (Երկասիրություն Աննենկովի)» հոդվածից. տե՛ս* Ն. Գ. Չերնիշևսկի, *Էսթետիկա, Երևան, 1953, էջ 334—335։*

*6 Մեջ է բերված Վ. Գ. Բելինսկու հայտնի նամակից՝ «Նամակ Գոգոլին», հրապարակված 1855 թ.* «Полярная звезда»*-ում. բնագրում՝ «Զննված թաթարական գրաքննության, միայն գրականության մեջ կա կյանք և առաջշարժում»։*

## ԱՐՓ. ԱՐՓԻԱՐՅԱՆ

Նամակ Թուրքիայից—*քաղված է՝ «Մշակ», 1879, № 209. առաջադրված է՝ Հայկակ։*

*1 Խոսքը վերաբերում է 1877—1878 թթ. Զեյթունի ապստամբությանը։ Պապիկ իշխանի գլխավորած հերոսական դիմադրությունը տևում է շուրջ մեկ տարի՝ Արփիարյանի հաղորդած դեպքերի հաջորդականությամբ։ 1878-ի աշնանը փոխադարձ զիջումներով Զեյթունը խաղաղվում է, ներում է շնորհվում ապստամբներին (մանրամասնությունները տե՛ս* Մ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955.* Վ. Գ. Մելիքսեթյան, *Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960.* Հ. Ղազարյան, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967.* Հ. Մ. Պողոսյան, *Զեյթունի պատմությունը (1409—1921 թթ.), Երևան, 1969)։*

*2 Այդ տարիներին «Նամակ Թուրքիայից» խորագրով «Մշակը» տպագրել է Հայկակի բազմաթիվ թղթակցությունները. ուշագրավ է մանավանդ «Կ. Պոլիս, 29 հոկտեմբերի» թղթակցությունը (№ 196), որտեղ քննադատվում է Անգլիայի քաղաքականությունը հայկական հարցում։*

Օրվան կյանքը—*քաղված է՝ «Նոր կյանք», 1898, № 6, էջ 90—91. առաջադրված է՝ Հրազդան, թվագրված՝ Գահիրե, 2 մարտ, 98։ «Նոր կյանք» ազգային, գրական, քաղաքական հանդեսը հրատարակվել է 1898—1902 թթ. Լոնդոնում՝ Արփ. Արփիարյանի խմբագրությամբ։*

*3 Արշակ Բ-ին վերաբերող այս ավանդությունը տե՛ս* Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն, Երևան, 1968, դպր. IV, գլ. ԾԴ, էջ 211—216։*

*4 «Արշալույս Արարատյան» օրագիրը (քաղաքական, բանասիրական և առևտրական-տնտեսական) հրատարակվել է 1840—1884 թթ., Զմյուռնիայում։*

*5 «Արփի Արարատյան» ամսաթերթը (օրագիր բանասիրական, ազգային, ուսումնական և տնտեսական) հրատարակվել է 1853—1855 թթ.՝ դարձյալ Զմյուռնիայում։*

6 «Մասիս» լրագիրը հրատարակվել է 1852—1908 թթ., Կ. Պոլսում:

7 «Նոյան աղավնի» շաբաթաթերթը հրատարակվել է 1852—1853 թթ. Կ. Պոլսում:

8 «Հայաստան» խորագրով պարբերականներ են հրատարակվել Կ. Պոլսում (1846—1852) և Լոնդոնում (1888—1892):

9 «Հայք» ազգային, գրական և քաղաքական կիսամսյա հանդես հրատարակվել է 1891—1898 թթ., Նյու Յորքում:

10 «Եփրատ» խորագրով թերթեր են լույս տեսել Կ. Պոլսում (1869—1872) և Ռուստրում (1897):

11 «Տիգրիս» շաբաթաթերթը հրատարակվել է 1897—1899 թթ., Նյու Յորքում:

12 «Նոր կյանքի» 1898 № 4-ում (էջ 56—57) Հրաչյան ստորագրությամբ տպագրված «Օրվան կյանքը» խորագրով հոդվածում կարդում ենք. «Լոնդոն գտնված ատեններս պատահարը ներկայության կը գտնէի, երբ անգլիացիի մը ազգությունս ծանոթացնելու առիթը կը ներկայանար:

— Հա՜յ. իրա՞վ. ի՞նչպես ձեզի կը ջարդեն. խեղճե՜ր:

Ու անգլիացին, մանավանդ անգլուհին, կարծես կ'ուզեր հասկցնել, թե իրեն շատ հաճելի պիտի ըլլայի, եթե մեկը իմ ալ վիզս աչքին առջեւ կտրեր. հայու մը մորթելու հետաքրքրական տեսարանին ներկա գտնվեր. տարակույս չի կա, թե անկեղծ արցունքներով. օ՜հ, այդ լալու մեծ ծառայությունը պիտի չի զլանար:

Ու սփոփանքի օր մը եղավ, այնքան տխրություններեն հետո, երբ ատոր մը ծանոթներս շնորհավորեցին զիս.

— Ես ինչեր եք բրած եղեր. ապրիք. տեսեք, առանկ:

— Նորությո՞ւն:

— Չկարդացի՞ք՝ Տեյլի Նյուզը. նոր գիրք մը հրատարակվեր է Բարիզ. ձեր Չեյթունի քաջությունները կը պատմե, ու «Տեյլի Նյուզ» կ'ըսե թե պատմության արձանագրած փառավոր էջերեն մեկը պիտի ըլլա այդ ափ մը ժողովրդին դիմադրությունը:

Ու կ'երթամ կ'առնեմ «Տեյլի Նյուզը». Բարիզի թղթակիցը իբրև օրվան կարևոր հրատարակություններեն մին կը ծանուցանե, վրան ընդարձակորեն խոսելով Չեյթունը. հեղինակ՝ Աղասի: Ու գրական «Աթենեոմին» կը գրվատե, նորեն ան ալ իր բարիզյան թղթակցին միջոցավ, հեղինակությունն ու հեղինակը, «մեկ ձեռքը սուր, մեկ ձեռքը գրիչ»: Ամենքն ալ այդ գրքին մեջ կը փնտռեն հին ցեղի մը առնական հատկություններուն հետքերը: Ու սիրտս կը լեցվի հպարտությամբ, բայց տխրությունն ալ հոգիս կը պատե: Օ՜հ, ի՛նչ ճակատագրային փոփոխություն հայ ազգին, եթե հայության սարսուռը ի յուր Չեյթունի շեփորին՝ տեսակ մը Պորսայի շահագիտության չվերածվեր...»

13 Այնուհետև հենց նույն տեղում հաղորդվում է. «Մինչ այս բերկրալիր տպավորության ներքո էի, «Ռըվիվ տը Բարիզ» անսպասելի հրճվանք մը կը բերե մեզի: Կը խոսի Արշակ Չոպանյանի մեկ նոր հրատարակության վրա: Բարիզյան մեծ հանդեսին այդ էջը ամբողջապես ներկայացնեմ.

«Կ. Պոլսեն հասած հրամաններուն վրա օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաներուն միջոցավ Հայաստան պաշտոնապես կազմակերպված կոտորածները՝ դեպի այդ դժբախտ երկիրը քաշեցին գրեթե տիեզերական համակրանք և կարեկցություն: Բայց աշխարհ կ'անգիտանա, թե Հայ ժողովուրդը Փոքր Ասիո ազգաբնակության ցեղագրական զանազան խմբերուն ամենեն գործունյան, ամենեն խելացին, ամենեն արդյունարերն է: Իր պատմական դերը նշանավոր եղած է անցյալին մեջ և կը խոստանա ապագային մեջ ալ ըլլալ, բավական է, որ թույլ տրվի իրեն ապրիլ: Իր հին հեթանոսական գրականու-

*թյունը որմէ հատուկտորներ ունինք միայն, ծանր ու տառապալից՝ գեղեցկություն մը կը փայլեցնէ երկար ատեն գետինը խոնարհած թրքական լուծէն, հայկական ցեղը այս դարուս մէջ գլուխը վեր կ'առնէ, և նոր գրականություն մը նկատմամբ անոր հարություն առած հոգին խանդավառությունները դրավիչ արտահայտությամբ երևան բերել։ Անոր այս ամենը Ա. Չոպանյան այս պզտիկ հատորին մէջ նկարած է ուժեղ ու գունագեղ լեզվով մը ուր կը զգաս հայրենասերի մը և բանաստեղծի մը «կրակոտ ու վշտահար հոգին թրթռումը»։*

*Ֆրանսացի մեծանուն գրագետի մը, Անաթոլ Ֆրանսի նախագահությամբ տակ Փարիզ հրապարակային գումարումի մը մեջ Արշակ Չոպանյանի հայ գրականության վրա ըրած բանախոսությունն էր որ տպագրվելով առաջ բերավ այս տպավորությունը, որուն մասնակցեցան և ուրիշ այնքան թերթեր, հանդեսներ ու ամբողջ դաս մը գրողներու ու խորհողներու։*

*Ակնարկում է Չոպանյանի, անշուշտ, այդ հիշատակված դասախոսության հրատարակությանը առանձին գրքով և Աղասիի «Զեյթունը սկզբից մինչև 1895 թվականի մեծ հեղափոխությունը» գրքույկը, որ լույս տեսավ 1897 թ. Փարիզում, Ա. Չոպանյանի ֆրանսերեն թարգմանությամբ։*

*14 Իտալիայի ներկայացուցիչ Վիթոյից բացի, փոխհյուպատոսների հանձնախմբի կազմում էին Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Անգլիայի և Գերմանիայի ներկայացուցիչները։ Հանձնախումբը Զեյթուն է հասնում 1896-ի հունվարի 11-ին։ Հունվարի 15—28-ը տևած բանակցությունները ապստամբ զեյթունցիների հետ գլխավորում էր ներկայացուցիչներից ամենատարեցը՝ Վիթոն, որը «կարծելով թե Զեյթունը բավական մեծ ու բազմամարդ քաղաք մըն է, ապշահար կը մնա, երբ իրեն կը ցուցնեն փոքրիկ քաղաքը, իր ցածլիկ տուներով, որ այդքան երկար ատեն երկու բանակներու դիմացած էր հերոսաբար» («Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», հ. 1. Բեյրութ, 1962, էջ 189)։*

*Բանակցությունների արդյունքում ընդունվում է համաձայնագիր, որով եվրոպական պետությունները հանձն են առնում որոշակի պարտավորություններ. այդ բոլորը սակայն մնում է թղթի վրա, և Զեյթունի վիճակը շարունակվում է մնալ անփոփոխ մինչև մեծ եղեռնը։*

*15 Խոսելով Ավստրիայի կայսր, սա, ինչպես և գրում է Արփիարյանը, 1848-ին արյան մեջ խեղդեց հեղափոխությունն Իտալիայում, բայց նրա օրոք էլ Իտալիան ազատագրվեց Ավստրիայի տիրապետությունից։*

*16 Տե՛ս նույն գրքի Ստ. Ոսկանյանի բաժինը և ծանոթագրությունները։*

Վերածնունդ—*տպված է՝ «Նոր կյանք», 1898, № 15, էջ 227։ Ստորագրված է՝ Արփիար Արփիարյան։*

Օրվան կյանքը—*տպված է՝ «Նոր կյանք», 1900, № 17, էջ 266։ Ստորագրված է՝ Հրազդան, Լոնդոն, 29 օգոստոս 1900։*

Հովվերգը—*հատվածը տպված է՝ «Շիրակ», 1905, № 1, էջ 34։ Ստորագրված է՝ Արփիար Արփիարյան, Վենետիկ, 7 դեկտ., 1904։*

*Նույն վերնագրով և նաև Հրազդան ստորագրությամբ Արփիարյանը հոդվածներ է տպագրել «Շիրակի» 1905 և հաջորդ տարիների այլ համարներում։ «Շիրակ» գրական և ընկերական ամսաթերթը 1905 թ. հրատարակվել է Ալեքսանդրիայում, 1906—1907 թթ. Կահիրեում, հիմնադիր տնօրեններ՝ Մ. Կյուրճյան և Վ. Թեքեյան, խմբագիր՝ Արփ. Արփիարյան։*

Հովոտիէր—տպված է՝ «Շիրակ», 1905, № 5, էջ 365—367, ստորագրված է՝ Ա. Արփիարյան, Վենետիկ, մայիս 17, 1905։

17 Խոսքը վերաբերում է հայասեր, հայագետ Ն. Թոմազեոյին և նրա տղերին, որոնց չհաջողվեց ծանոթացնել։

Դանգի մը շուրջը—տպված է՝ «Շիրակ», 1906, № 1, էջ 6—9, ստորագրված է՝ Արփիար Արփիարյան։

18 1894 թ. Սասունի կոտորածների օրերի հայության բողոքների, հասարակական կարծիքի ճնշման տակ՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչներից կազմվում է հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Սասունի ջարդերով։ Հանձնաժողովը գործի է անցնում 1895-ի հունվարին։ Արփիարյանը արձանագրել է այդ ամիսների իրավիճակը։

19 «Այվազ» թուրքերեն է, նշանակում է ծառա. ասել է՝ հայերին էլ ծառա լինելու չէ։

20 Ակնարկում է 1905 թ. հեղափոխության ժամանակների հայ-թաթարական ընդհարումների եղբայրական արձագանքները։

21 Նկատի ունի Արմենական կազմակերպությանը (Արմենականներ). ազգային-ազատագրական կազմակերպություն, առաջին քաղաքական կուսակցությունը հայ իրականության մեջ։ Հիմնվել է 1885 թ. Վանում։

22 Հնչակյան կուսակցությունը հիմնվել է 1887 թ. Ժնևում՝ կոչվել է «Հնչակ» թերթի անունով։

23 Միջերկրական ծովի հունական այս փոքր կղզին պատկանում էր Թուրքիային. XVII դարից կրետացիները կռվում էին՝ կղզուց վտարելու համար թուրքերին. նախ չի հաջողվում ստատագրվել Հունաստանի հետ և այսպես՝ 1858, 1863, 1866, 1867 թթ. ապստամբությունների ժամանակ։ Պայքարը ահեղ բնույթ է ստանում 1887 և 1897 թթ., և լեռները քաշված կրետացիներին հաջողվում է հաղթանակել։ 1897 թ. հույն-թուրքական պատերազմից հետո՝ մնալով հանդերձ թուրքական կայսրության կազմում, Կրետեն ստանում է ավտոնոմ իշխանություն։ 1912—1913 թթ. Բալկանյան պատերազմից հետո՝ թուրք-հունական դաշնագրով (1913 թ. նոյեմբերի 14) Կրետեն մտնում է Հունաստանի կազմի մեջ։

Կրետեի դատի պաշտպանությամբ Արփիարյանը, ինչպես և հայ մտավորականներից շատերը, հանդես է եկել նաև նախորդ տարիներին։

24 Այդ ավանդությամբ է սկսել Արփիարյանը իր հոդվածը. «Ժողովրդավանդ զրույց մը, գուցե տրտում խորհրդանշանը համարվի այն կյանքին, որով հայ աշխարհը կ՚ապրի...

Դերեզմանատան մը անցորդին մեկը. ցեխին, փոսին դուրս նետված ոսկրախառն հողին մեջ գանգ մը տեսնելով, կը ծռի կը վերցնե զայն ու, մինչ կմախքը կը զններ, ահա՛ անոր ճակտին վրա տառեր կը նշմարե, զորս քակել հաջողելով, հետևյալ գրմանը կը կարդա. «աս գլխեն ինչե՛ր են անցեր ու դեռ ինչե՛ր պիտի անցնին» (էջ 1)։

Անցորդը գանգը բերում է տուն, տեղավորում մի դարակում, որից հետո Արփիարյանը պատմում է այդ մարդու և նրա կնոջ հետ պատահածը. գտնելով գանգը, կինը կտոր-կտոր անելով այրել էր, գանգը դարձել էր մոխիր։ Այս պատմությունից հետո Արփիարյանն ավելացնում է. «Քիչ մը այդ գանգին չի՞ նմանիր և Հայաստանին ալ գանգը։ Մահակիր այդ գլխակին ո՞վ գիտե դեռ ի՜նչ կացիններ չեն պահված, ի՜նչ կրակներ չեն սպասեր, մինչ մենք ա՛լ ամեն չարիք հատա՞ծ, լմնցա՞ծ կը կարծենք» (էջ 2)։

*25* *Եգիպտոսի «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը» հիմնվել է 1906 թ.՝ փոխարինելով 1881-ից գործող «Կահիրեի հայոց բարեգործական ընկերությանը»:*

*26* *Վերը հիշատակված հանձնաժողովը, արձանագրելով Սասունի սոսկալի ջարդերը, միաժամանակ երեք տերությունների դեսպանությունների մակարդակով Արևմտյան Հայաստանի համար մշակում է ռեֆորմների ծրագիր, որը 1895 թ. մայիսի 11-ին ներկայացվում է սուլթանին։ Խոսքը վերաբերում է «Մայիսյան ռեֆորմներ» անունով հայտնի այդ ծրագրին, որը, իհարկե, նորից չդարձավ «հաստատագին պահանջագիր»:*

*27* *1894-ի օգոստոսի կեսին թուրքական զորախմբերը պաշարում են Սասունն ու Տալվորիկը. սկսում են կոտորածները, և, սակայն, տեղեկությունները արտասահմանյան, ինչպես և կովկասյան մամուլում երևում են միայն նոյեմբերի 12-ից՝ հետագա ջարդերի արձագանքներով շարունակվում տարիներով: Այդ ժամանակից սկսած օր առ օր հայ մամուլը տպագրում է եվրոպական երկրների և Ռուսաստանի հարյուրավոր լրագրերի ու ամսագրերի արձագանքները: Հայասիրական առանձին եռանդ են ցուցաբերում հատկապես Անգլիան և Ֆրանսիան, առաջինը՝ Գլադստոնի, երկրորդը՝ Կլեմանսոյի ճառերով, որոնք ուղեկցվում են թուրքական կառավարության դրդած հայաջարդություններով. «Հիվանդ մարդը (այսինքն՝ Տաճկաստանը),— գրում էր* «La Marine Francaise» *ամսագիրը,— նորից առիթ է տալիս խոսել իր մասին և նորից եվրոպական տերությունները հրավիրված են նրա մահճի մոտ» («Մշակ», 1895, № 5):*

*Սուլթան Համիդին սիրաշահելով, չափավոր էր արտահայտվում ռուսական մամուլը: Պետերբուրգի* «Гражданин» *լրագիրն, օրինակ, գրում էր. «Ոչ որ չէր կասկածում սուլթանին հատուկ բարի դիտավորությունների մասին, բայց նրան շրջապատում է խորհրդականների մի ամբողջ խումբ, որոնց շահն է ծածկել ճշմարտությունը: Քննիչ հանձնաժողով նշանակելու գործում մեծ դերը գլխավոր շտաբն էր: Նա ինչպես համոզեց սուլթանին դիմադրել օտար դեսպանների մասնակցությանը՝ հայկական անկարգությունների գործի քննության ժամանակ: Միևնույն գլխավոր շտաբը հրամայեց, որ ոչ մեկ օտար բժշկի թույլ չը տրվի գնալ այն տեղը, ուր տեղի ունեցան անկարգությունները: Այդպիսի պայմաններում դժվար է սպասել, որ առաջիկա քննությունը կարողանար ճշմարիտ լույս սփռել թուրքերի կատարած վրդովեցուցիչ կամայականության վրա Փոքր Ասիայի հայերի դեմ...» («Մշակ», 1895, № 10):*

*Սուլթան Համիդը, իհարկե, տեղյակ էր այդ ամենին, և պատահական չէ, որ դեպքերից կարճ ժամանակ անց շքանշանի է արժանացել Սասունում գործող զորքերի հրամանատար Զեքի փաշան: Մեծ տերությունների ճնշման տակ, այնուամենայնիվ, ստեղծվում է քննչական հանձնախումբ, որը կարողանում է Սասուն մեկնել 1895-ի սկզբներին և փետրվարի վերջերին միայն հանձնախումբը հայտնում է այսպիսի տեղեկություններ. «Հռչակավոր Զեքի փաշան, իր կատարած գազանությունները ծածկելու համար, աշխատել է նորոգել տալ իր զորքերի ձեռքով ավերված գյուղերը, գլխավորապես Գելիեգուզան, ուր կատարվել է Սասունի սարսեցնող դրամայի ամենասարսափելի տեսարանը...*

*...Երբ հանձնաժողովի անդամները, Էրզրումից դուրս գալուց երեք օր հետո, հասան Մուշի բերդը, այնտեղ լրտեսների, ոստիկանների ու զափթիեների մի ահագին լեգեոն շրջապատեց նրանց, թե իրանց կայարանում և թե փողոցներում. այդ լրտեսների բազմությունը սկսեց անդադար վխտալ՝ թույլ չտալով ոչ մի հայի ներկայանալու քննիչներին և կարևոր տեղեկություններ տալու...*

...Ոչ պակաս ցուցումներ տվին շինիկցի Միքայելն ու Առաքելը, որոնք անձամբ ներկա են եղել կոտորածին: Սրանց երեք ընկերները կամեցան գալ՝ տեղեկություններ տալու հանձնաժողովին, բայց թուրքերը բռնում և բանտարկում են սրանց:...

...Նշանավոր հայ հերոս Մուրադը, որ Սասունի կոտորածի ժամանակ լեռնականների պաշտպանն է եղել. Բիթլիսի բանտում իր ընկերների հետ թուրքերի կողմից խիստ տանջանքների է ենթարկվում. այսպես՝ հանում են նրա ատամները, բեղերը պոկում, ձեռքերը այրում երկաթե գործիքներով, որպեսզի այդ գազանություններով ստիպեն նրանց ասել, թե հայերը Անգլիայից են գրգռվում և օգնություն ստանում ապստամբվելու: Բայց Մուրադն ու ընկերները բացեիբաց մերժում են որևէ խոսք հնարել իրանցից և ասել, և դատապարտվում են մահվան...» («Մշակ», 1895, № 21):

Կոտորածին նախորդել էր երկու հնչակյանի բանտարկությունը, որը մտաբերում է իռլանդացի Լինչը «Արմենիայի» II գրքում. «Բիթլիսում նույնպես, ինչպես Վանում, մեր այցելության օրերին խառնաշփոթություն էր տիրում: Արդեն խուլ աղմկում էր այն փոթորիկը, որը պետք է պայթեր Սասունի կոտորածով... քաղաքը լի էր հայտնի խռովարարի մասին պատմություններով, որը մի քանի ամիս առաջ ձերբակալվել էր Սասունի շրջակայքում... Նրա անունը Տամատյան էր, նա արդեն բանտ էր նստել...

Տամատյանը տիպիկ հայ հեղափոխական էր: Նա հիմնավոր կրթություն էր ստացել Վենետիկի Մխիթարյանների վարժարանում, և ասում են, տիրապետում էր և՛ ֆրանսերեն, և՛ անգլերեն լեզվին: Մեր այցելությունից մոտ տաս տարի առաջ նա եկել էր Մուշ որպես հայոց դպրոցներից մեկի ուսուցիչ: Հայրենակիցների իրական ցավերը, որոնք նրանց սոցիալական ու քաղաքական ճակատագրի հետևանք էին, ոչ մի տեղ այդքան ցցուն չեն երևում, որքան այդ հեռամնաց քաղաքում: Դրանք խոր տպավորություն են թողնում եվրոպական ազատությունը ճաշակած, եվրոպական քաղաքակրթության մակերեսի արատներով չվարակված հայի հոգում» (Линч Х. Ф. Б., Армения, Путевые очерки и этюды, том II, Тифлис, 1910, стр. 202, 203—204):

Լինչը գրում է, որ իր այցելության օրերին, Բիթլիսի «ժայռի ծայրից մռայլ... նայող բանտը լի էր հայերով» (Նույն տեղում, էջ 195):

Մի այլ տեղում, նորից անդրադառնալով այդ դեպքերին, ավելացնում է. «Ամենատարբեր ձևերով արտահայտվող ստրկական գոյությունը... անում էր Տամատյանի ագիտատորների հեղափոխական քարոզչությունը... Նա ներկայանում է իբրև հոյակապ և համարյա լեգենդար դեմք նույնիսկ Կապույտ գրքի զգաստ նկարագրությամբ... այդ ողբերգությունների գլխավոր և նոր առանձնահատկությունն այն է, որ ասպարեզ են դարձել օտոմանյան կայսրությունում մեջ փռված հայկական առանձին համայնքները» (Նույն տեղում, էջ 555):

Նկատենք, որ նույն «զուսպ» «Կապույտ գիրքը» արձանագրում էր նաև, թե՝ «Տալվորիկին մեջն էր, որ շատ կիներ 1894-ի դեպքերուն առեն իրենքզիրենք գետը նետեցին, նախամեծար համարելով մեռնիլ, քան քյուրտերուն կամ զինվորներուն ձեռքը անցնիլ» («Նոր կյանք», 1898, № 9, էջ 111):

Արփիարյանի ակնարկած երկու հնչակյանին բանտ էին բերել այս ձևով. «Մշո կառավարությունը Տամատյանը և Սողոնը ձի կը հեծցնեն՝ ոտքերնին տակեն կապելով, ոստիկաններու հետ կը ղրկեն Բաղեշ: Այնուհետև եվրոպական պետությունների միջամտությամբ նրանց փոխադրում են Պոլիս. «Սուլթանը անմիջապես կը հրահանգե Տամատյանը Պոլիս՝ իր պալատը ղրկել. որմե ետք, Տամատյանը ազատ կ՚արձակվի և կը լծվի գործի, բայց շատ զգուշորեն» («Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, հ.

Ա., Պեյրութ, 1962, էջ 140)։ Նույն գրքում Թուրքական Արտաքին գործոց նախարարության տեղեկագրից քաղված տողերում ասվում էր, սակայն, թե՝ «...Մուրատ և Տամատյան այս կողմերը եկած էին քաղաքական գաղտնի նպատակով մը» (նույն տեղում, էջ 50)։

Այնուհետև ամենուրեք ծայր են առնում կոտորածներն ու հայոց դիմադրությունը, որոնցից առանձնանում է հատկապես Զեյթունի հերոսական պաշտպանությունը։

1898-ին նորից շրջագայելով Արևմտյան Հայաստանում Լինչը գրում էր. «Այդ ժամանակամիջոցում Հայաստանը դարձել էր Արևմուտքի խիղճը տագնապեցնող ողբերգական իրադրությունների թատերաբեմ։ Մուշից հարավ ընկած վայրի անմատչելի Սասունի լեռնականների աննշան հուզումներին դավադրական իշխանությունները տվել էին իսկական հեղափոխության տեսք և ճնշել բարբարոսների դաժանությամբ։ Բայց մեկ չարիքը նրանց քիչ էր թվացել հայերին սարսափեցնելու համար։ Բարձրագույն Դուռը արյան համն առել էր, և նրա հատուկ գործակալները բոլոր գավառներում ծավալել էին գործի և դրա համար պարգևներ։ Հակառակ թուրքական լավագույն ատրճանավորների խորհուրդների... Դուռը կազմակերպում է վիթխարի չափերի հասնող կոտորածների մի ամբողջ շարք։ Սասունի դեպքերին հաջորդեցին նման դաժանություններ հայ բնակչության հետ ոչ միայն քաղաքներում ու գյուղերում, այլև մայրաքաղաքում։ Եվրոպան, որ լուրջ պարտավորություն էր վերցրել ապահովելու հայերի համար լավ կառավարչություն, բայց և կաթվածահար էր գլխավոր տերությունների փոխադարձ անվստահությունից,— վճռականություն չունեցավ բռնելու վճռական գործողությունների ճանապարհը...» (տե՛ս Լինչի նույն գիրքը, էջ 303)։

Սասունի այդ տարիների ազատագրական շարժման, ինչպես և Միհրան Տամատյանի մասին տե՛ս նաև Խ. Դաշտենց, Ռանչպարների կանչը, Երևան, 1979։

28 Հին կտակարանի Եզեկիելը գուշակել է Բաբելոն տարագրված հրեաների վերադարձը հայրենիք։ Արփիարյանը նույնպիսի մարգարեական գուշակություն է տեսնում Սասունի դեպքերում։

Ազգային տեսություն—քաղված է՝ «Շիրակ», 1906, № 3, էջ 181—182, ստորագրված է՝ Արփիարյան։

29 Սատրապ բառն է արաբերենով։

Խոսք հասկցողը—քաղված է՝ «Շիրակ», 1907, № 8, էջ 462—463, ստորագրված է՝ Ա. Արփիարյան։

30 Բ Տիմ., Դ, 1։

Դեպի համաժողով—հատվածները քաղված են՝ «Շիրակ», 1907, № 9, էջ 508—509, ստորագրված է՝ Ա. Ա.։

31 Գր. Օտյանի առաջարկությամբ 1869-ի օգոստոսի 28-ին փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվելով Կ. Պոլսի պատրիարք, Մկ. Խրիմյանը նախաձեռնում է բարենորոգումներ ազգային գործերում. Խրիմյանի առաջին գործը լինում է այն, որ լրջորեն զբաղվում է գավառների վիճակով։ Պատրիարքությունից նրա հրաժարվելուց հետո, հատկապես 1875—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հանգամանքների բերումով, պատրիարք Ներսես Վարժապետյանն արդեն՝ հարելով նոր քաղաքականությանը, առաջադրում էր «անկախության» հարցը։ Խրիմյանը և Վարժապետյանը իրենց ծրագրերում զինակիցներ ունեին Սերվիչենին, Գր. Օտյանին, Խ. Գալֆայանին, Մ. Չերազին և ուրիշներին։

32 Մակեդոնիայում 1893-ից ձևավորվում են քաղաքական խմբակներ, ապա Ներ-

յին հեղափոխական կազմակերպությունը. 1898—1903 թթ. այդ կազմակերպության ջոկատները համառ ելույթներ են ունենում թուրքական բռնակալության դեմ, 1903 թ. բռնկվում է ապստամբություն, որի ժամանակ թուրքական զավթիչները ավերում են երկրի մեկ երրորդը։

Ազատագրական պայքարը նոր թափ է ստանում 1905 թ. Ռուսական հեղափոխության ազդեցությամբ և դարձյալ ապարդյուն։

1896 թ. Ժ. Ժորեսը գրում էր. «Հայաստանում կատարվեց սարսափելի կոտորած... Քիչ չէ մեր ափսոսանքը, որ ժամանակին վճռական միջոցներ չենք ձեռնարկել, կարծելով, թե դա անգլիական գաղութարարական շրջանների հերթական ինտրիգային խաղ էր։ Մինչդեռ եթե բոլոր երկրների և Անգլիայի սոցիալիստների միջև պարբերաբար մտքեր փոխանակվեին՝ խաղաղության և ամբողջ մարդկության շահերին վերաբերող հարցերի վերաբերյալ, ապա մենք չէինք վախենա, ապա մենք երկյուղ չէինք ունենա զգուշանալու, թե դառնալու ենք եսասիրական հաշիվների խաղալիք»։ Այդ մտքերը կրկնում է 1903 թ. փետրվարի 15-ին Փարիզում Հայաստանի և Մակեդոնիայի ջարդերի դեմ կազմակերպված բողոքի միտինգում. «Անհնարին է հանդուրժել, որ մահաբեր արյունոտ բարբարոսությունը իր պրոբլեմները լուծի ժողովրդի մի մասի ոչնչացումով» (Ծ. Պ. Աղայան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 207, 209)։

33 «Արևմուտքը» հրատարակվել է 1859-ին և 1864—1865-ին. 1855—1856-ին Ստ. Ոսկանյանի խմբագրությամբ հրատարակվել է «Արևելք» (Փարիզ) հանդեսը։ Քաղվածը մի փոքր շեղումով տե՛ս «Արևմուտք», 1859, էջ 109 և 110։

## ՏԻԳ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Արշակ Չոպանյանին—Հատվածը քաղված է՝ «Արևմտահայ գրողների նամականի», Երևան, 1972, էջ 54։

1 Նկատի ունի Չոպանյանի հիմնադրած «Անահիտ» գրական, գեղարվեստական, հասարակական հանդեսը. ընդհատումներով լույս է տեսել 1898—1949 թթ. Փարիզում։

Արշակ Չոպանյանին—Հատվածը քաղված է նույնից, էջ 57։ Կամսարականի այս ճշմարտացի խորհրդածությունների առիթը եղել է Չոպանյանի «Պատասխանատվություններ» առաջնորդողը («Անահիտ», 1899, № 3)։

2 Ֆրանսերեն է, ըստ «Նամականիի»՝ նա շատ լավ կարող էր հոգիներ ցնցել։

3 Ֆրանսերեն է, ըստ «Նամականիի»՝ ճանապարհ հարթել, կողմնորոշել։

4 Ասել է՝ Իտալիայի ազատագրության օրերին Կավուրը քաղաքական գործիչ լինելու հմտություն չէր սովորում Վ. Ալֆիերիի երկերից, որոնցով Ալֆիերին հաստատում էր բռնապետության դեմ պայքարի գաղափարախոսությունը. քարոզում ազատասիրություն և հայրենասիրություն։

Բնորոշ է, որ 1899. I. 10, Ալեքսանդրիա թվակիր նամակում Կամսարականը իր դժգոհությունն է հայտնում Չոպանյանին այն բանի համար, որ նա ուսումնասիրում է Կավուրի քաղաքական գործունեությունը (տե՛ս Չարենցի անվան ԳԱԹ, Չոպանյանի ֆոնդ, վ. 3145)։

Արշակ Չոպանյանին—Հատվածը քաղված է նույնից, էջ 58, թվագրված է՝ 1899, մարտ 8, Ալեքսանդրիա։

Պատկերին տեղ—Հատվածը քաղված է՝ «Որրունիս», պրակ. Ա, Ալեքսանդրիա, 1919, էջ 5, ստորագրված է՝ Տիգրան Կամսարական։

«Որբունին» (Տեղեկատու Հայ որբախնամ ընկերության) հրատարակվել է 1919—1921 թթ., Աղեքսանդրիայում. ճակատին Գր. Զոհրապի խոսքերն են. «Մենք կ'երթանք կոր ահա, բայց ազգը 400.000 որբ ունի, փրկեցեք զանոնք»։

5 «Արև» հասարակական-քաղաքական և գրական օրաթերթը լույս է տեսել 1915-ից, Ալեքսանդրիայում, խմբագիրներ Վ. Թեքեյան, Մ. Կյուրճյան և ուրիշներ։

Վահրամ Թորգոմյանին—հատվածը քաղված է նույն գրքից, էջ 91—92, թվագրված է՝ 1929, հունիս 27, Փարիզ։

Դուն մեզի բարեխոս...—հատվածը քաղված է՝ «Էջեր հայ գրականութենեն», Հ. Ա, Գահիրե, 1912, էջ 153։

6 Նկատի ունի Բայրոնի վերջին՝ «Իմ երեսունվեցամյակի օրը», բանաստեղծությունը, որտեղ գովերգվում է ժողովրդի գործի համար կյանքը զոհած հերոսը։ Այդ օրերին, ինչպես հայտնի է, Բայրոնը Հունաստանում ստանձնել էր ապստամբ գնդերից մեկի հրամանատարությունը։

Ինչպես պարզվում է Ն. Ծաճազիզի «Դիվանից», Բայրոնի «Վերջին ոտանավորը» դեռևս 1857 թ. թարգմանել է Ռ. Պատկանյանը. թարգմանությունը տե՛ս Մ. Սաղյան, Ռափայել Պատկանյան, Երևան, 1980, էջ 177—178։

Մինաս Չերազ—հատվածը քաղված է «Ապագա», 1926, № 50։ Թվագրված է՝ 26 մայիս 1926, Փարիզ. գրել է Մ. Չերազի գրական-հասարակական գործունեության 60-ամյակի առթիվ։ «Ապագա» քաղաքական և հասարակական շաբաթաթերթը լույս է տեսել Փարիզում, 1921—1934 թթ.։

Չերազը հայ ժողովրդի ազատագրության հեռանկարը կապում էր արևմտյան տերությունների հետ։

7 Նկատի ունի Հոկտեմբերյան հեղափոխությունը։

ԳՐ. ԶՈՀՐԱՊ

Ութը տարի ետքը—հատվածները քաղված են՝ Գր. Զոհրապ. Եժ, հ. 2, Երևան, 1962, էջ 458, 459։ Գրել է 1902, հոկտեմբերի 1-ին։

Նույն հրատարակությունից են քաղված նաև որոշ ծանոթագրություններ։

1 Գրել է Էմ. Զոլայի մահվան առթիվ (1902, սեպտեմբերի 29)։ Այս առթիվ տե՛ս նաև նույն գրքում զետեղված Շիրվանզադեի և Լ. Բաշալյանի հոդվածները և ծանոթագրությունները։ Ինչպես հայտնի է, Զոհրապը եղել է Դրեյֆուսի դատի պաշտպաններից. նրա շարադրած պաշտպանողականը ժամանակին արժանացել է Փարիզի՝ Դրեյֆուսին պաշտպանող հրեական կազմակերպության շնորհակալագրին և հուշանվերին՝ Դրեյֆուսի մանրանկարով։

Էջեր ուղեվորի մը օրագրեն—հատվածները քաղված են՝ նշված հրատարակությունից, հ. 1, Երևան, 1962, էջ 485—487, 507—508, 531—532։

Զոհրապի ճամփորդական ակնարկները գրված են 1909—1913 թթ., երբ նա եղել էր Բելգիայում, Գերմանիայում ու Ֆրանսիայում. տպագրվել են Կ. Պոլսում հրատարակվող «Ազատամարտ» օրաթերթում (1909—1912 թթ., արտոնատեր խմբագրապետ Ռ. Զարդարյան)։

2 Ասել է՝ տարտյուֆականություն, Մոլիերի «Տարտյուֆ» կատակերգության գործող անձի անունով։

3 Լուսավորական-դեմոկրատական, հակակրոնական գործունեությամբ հայտնի իսպանացի Ֆերրերը 1909 թ. Բարսելոնի ապստամբության օրերին ձերբակալվում և առանց որևէ հիմքի դատապարտվում է մահապատժի։ Անարդարությունը լայն արձագանք է գտնում ամբողջ աշխարհում։ Տարելիցը՝ 1910 թ. օգոստոսին, նշվում է նաև Բրյուսելում, երբ այնտեղ էր գտնվում Զոհրապը։

4 Արձանագրում է քրիստոնեության վերասերումը՝ Քրիստոսի խաչելությունից մինչև կղերականության ոճրագործ մասնակցությունը Ֆերրերի մահապատժին։

5 Խոսքը վերաբերում է 1907—1911 թթ. Գերմանա-ֆրանսական գաղութարարական մրցակցությանը Մարոկկոյում, որի հետևանքով 1911 թ. քիչ էր մնում համաշխարհային պատերազմ ծագեր։

6 Ակնարկվում է Լյուդովիկոս XVI-ի մահապատիժը՝ 1793 թ. հունվարի 21-ին։

7 Նկատի ունի 1640—1660 թթ. բուրժուական հեղափոխությունը Անգլիայում։ Կարլոս I-ի անկումը (1647), պառլամենտականների հաղթանակը միապետականների դեմ։

8 Կ. Մարքսի «Կապիտալ» աշխատության I հատորը լույս է տեսել 1867, II-ը՝ 1885, III-ը՝ 1894 թթ.։

Հայ պատգամավորի մը հաշվետվությունը—հատվածները քաղված են նույն խորագիրը կրող գրքույկից, Կ. Պոլիս, 1910, էջ 8—9, 28։ Զոհրապի բանախոսությունն է՝ արտասանված 1910 թ. սեպտեմբերի 25-ին «Րաֆֆի» լսարանական միության դաշտահանդեսին (Կ. Պոլիս, Սկյուտար)։

1908 թ. հեղաշրջումից հետո վերադառնալով տարագրությունից, Գր. Զոհրապը ընտրվել էր Ազգային երեսփոխական ժողովի և թուրքական պառլամենտի անդամ. բանախոսությունը նրա կատարած գործի հաշվետվությունն է։

9 Արհեստավորների (էսնաֆ դասի) պայքարը ամիրայության դեմ առանձնապես սրվել է 1841 թ.՝ Սկյուտարի ճեմարանի շուրջը բորբոքված պայքարով և դրանից հետո։

10 «Արևելք» (օրաթերթ քաղաքական և ազգային) հրատարակվել է Կ. Պոլսում, 1884—1912 թթ.։

11 «Հայրենիք» օրաթերթը (լրագիր քաղաքական, ազգային և առևտրական) հրատարակվել է 1870—1896 և ապա՝ 1901—1909 թթ., Կ. Պոլսում։

12 Զոհրապը շարունակում էր հավատալ երիտթուրքերին, 1908 թ. սահմանադրությանը և գործում էր Թուրքիայի ընդհանուր առաջադիմության, ազգերի համերաշխության օգտին։

13 Տե՛ս Զոհրապի համփորդական օրագրից քաղված նախորդ էջերը։

<Զանազան նյութ>—հատվածները քաղված են նշված հրատարակությունից, հ. 2, էջ 477, 478, 480։

14 Ըստ հատորի համապատասխան ծանոթագրության՝ «Ժամանակը» (1913, № 1603) տպել է՝ «հավանաբար, իբրև Զոհրապի ճառի համառոտ շարադրանք, օգտագործելով նրա ուղղակի խոսքը։ Ճառը խոսել է Քատը գյուղի մեջ 13/26 հոկտ. 1913 թ.։ Հայ տառերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա տոնակատարությանը մասնակցել են բազմաթիվ օտարազգիներ, դեսպանատների ներկայացուցիչներ, հույների, բուլղարների և ասորիների պատրիարքների փոխանորդներ, ինչպես և ներքին գործոց նախարար, հայ ժողովրդի դահիճ Թալեաթը, որը ասել է. «Այսօր հայերեն տառերու 1500 ամյակի և հայ տպագրության 400 ամյակի հանդեսները կատարելապես տոնելու համար

հավաքված էր հոս, հանուն կառավարության կմասնակցեմ ձեր ուրախությանը... Այդպես էին իթթիհատականները բթացնում հայ ժողովրդի զգաստությունը՝ նրան կոտորելուց առաջ։

## Լ. ԲԱՇԱԼՅԱՆ

Արշակ Չոպանյանին—հասցված է 189<8>, հունվարի 14. Լոնդոն Թվակիր նամակից. քաղված է՝ «Արևմտահայ գրողների նամակներ», էջ 126—127։

1 Խոսքը վերաբերում է ի պաշտպանություն Դրեյֆուսի Էմ. Զոլայի «Ես մեղադրում եմ» նամակին՝ հասցեագրված Ֆրանսիայի հանրապետության նախագահին։ Այդ օրերին հայ առաջավոր մտավորականությունը պաշտպանում էր Դրեյֆուսին և հիացած էր Զոլայի սխրանքով։ Մատնելով ի պաշտպանություն Դրեյֆուսի փարիզյան միտինգները, հայերի մասնակցությունը միտինգներին, Ե. Օտյանը «Հիշատակներում» գրում է. «Մենք հայերս, գրեթե ամբողջությամբ Դրեյֆուսի կողմն էինք» (տե՛ս Ե. Օտյան, ԵԺ, հ. 4, Երևան, 1962, էջ 178)։

Չարենցի անվան ԳԱԹ Չոպանյանի ֆոնդում (վ. 2890) 1898. II, 5.17, Մոսկվա թվակրությամբ պահպանվում է, ի պաշտպանություն Զոլայի, Մոսկվայի հայ ուսանողության նամակը։

Այս կապակցությամբ տե՛ս նաև Ալ. Շիրվանզադեի և Գր. Զոհրապի բաժինները և ծանոթագրությունները սույն գրքում։

2 Ֆրանսիան է, ըստ «Նամականիի»՝ նորահավատ, նորընծա։

Արշակ Չոպանյանին—հասցված է 1898, փետրվարի 1, Լոնդոն Թվակիր նամակից, քաղված է նույն գրքից, էջ 128։

3 Ըստ «Նամականիի»՝ Ֆրանսիան է՝ Բերանժեի օրենքի սահմանումը։

4 Ըստ «Նամականիի»՝ Ֆրանսիան է՝ արդարության կեսը։

Սարդ մը—քաղված է՝ «Նոր կյանք», 1898, № 5, էջ 60. տպագրվել է մարտի 1-ին, Լ. Զարթումյան ստորագրությամբ։ Այս առիթով Բաշալյանը հանդես է եկել նաև երկշաբաթաթերթի հաջորդ համարներում. հիշատակության է արժանի մասնավորապես № 10-ում զետեղված «Հայերը և հրեաները» հոդվածը։

Օրվան քաղաքականությունը—քաղված է՝ «Նոր կյանք», 1898, № 9, էջ 113—114, ստորագրված է՝ Լ. Զարթումյան։

5 Այս պատմությունը նույնպես ճշտվում է. Եմենը անկախ թագավորություն է ճանաչվում միայն 1918 թ., Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո։

6 Հունական պետության կազմավորումից (1830) հետո Թեսալիան մնում է թուրքական տիրապետության տակ. Հունաստանի կազմի մեջ է մտնում 1878 թ. Բեռլինի վեհաժողովի և 1881 թ. հուլիսի 2-ի Կ. Պոլսի պայմանագրով։

7 Ռուսաստանի և Չինաստանի միջև 1898 թ. մարտի 27-ին ստորագրվում է պայմանագիր, որով Պորտ-Արթուրը և Դալյանը (Դալնի) 25 տարով օգտագործման է հանձնվում Ռուսաստանին։ Ռուսաստանը իրավունք է ստանում Դալյանով կառուցելու երկաթուղի. նրա ազդեցության գոտին տարածվում էր նաև Մանջուրիայի վրա։

8 Օգտագործելով Կուբայում ծագած ազգային-ազատագրական ապստամբությունը, 1898-ին ԱՄՆ նվաճողական պատերազմ է մղում Իսպանիայի դեմ. պարտություն կրելով՝ Իսպանիան կորցնում է Կուբան, Ֆիլիպինները, այլ տարածքներ։

*9 Նկատի ունի 1775—1783 թթ. Հյուսիսային Ամերիկայի անկախության պատերազմը։*

*10 Նկատի ունի 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում։*

Հայր՝ Նուպար փաշայի մեջ—*հատվածը քաղված է՝ «Էջեր հայ գրականութենէն», հ. Ա., 1942, Գահիրե, էջ 120։*

*11 Պավլիկյանները տարածված են եղել Հայաստանում VIII դ. սկզբներից։ IX դ. կեսերին՝ ապստամբելով բյուզանդական կառավարության դեմ, պահանջում են կրոնական-քաղաքական ազատություն. բազմամյա դիմադրությունից հետո՝ պարտվում են բյուզանդական զորքերին 873-ին, հետագայում փոխադրվում Թրակիա։*

*Ըստ Մ. Աբեղյանի՝ «ինչպես սովորաբար ընդունում են, այս աղանդի ազդեցությունը մեծ է եղել ոչ միայն սլավոնական, այլև ընդհանրապես եվրոպական աղանդների կազմության վրա» (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1946, էջ 11)։*

*Թոնդրակեցիների աղանդը համարվում է պավլիկյան աղանդի հաջորդը։*

*12 Նկատի ունի XII—XIII դդ. Հարավային Ֆրանսիայում ծագած Ալբիգոյցիների աղանդը. ենթադրվում է աղերսներ այդ աղանդի և Թոնդրակյան շարժման (IX—XI դդ.) միջև, ինչպես և հետագայում առաջինի և բողոքականության միջև։*

## ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

<Մեր նպատակը>—*հատվածը քաղված է՝* Հովհ. Հովհաննիսյան. *Եժ, հ. 3, Երևան, 1965, էջ 331։ Գրել է 1880 թ.։ Հովհ. Հովհաննիսյանի երկերի այս հրատարակությունից են քաղված որոշ ծանոթագրություններ։*

*1 Ակնարկում է XVIII դ. 70-ական թվականների «Գրոհ և փոթորիկ» անունը կրող շարժումը Գերմանիայում, որ անդրադարձնում էր աճող դժգոհությունը ֆեոդալիզմի դեմ, Իտալիայի ազատագրությունը ավստրիական տիրապետությունից (1859—1860), ինչպես նաև «Ֆիլիկի Հետերիա» ընդհատակյա կազմակերպության գործունեությունը, որը վճռական դեր է կատարել Հունաստանի ազատագրության գործում։*

<Նոր տարվա սեմին>—*հատվածը քաղված է նույն հատորից, էջ 358, գրել է 1883 թ.։*

*2 Հովհաննիսյանը սովորում էր Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ավարտել է 1883-ի մայիսին։*

Ժամանակակից մամուլը—*հատվածը քաղված է նույն հատորից, էջ 37—38։ Տպագրվել է Հոմո ստորագրությամբ՝ «Արձագանք», 1892, № 10։*

<Շիլլերի «Օռլյանի կույսը» դրամայի ներկայացման մասին>—*հատվածը քաղված է նույն հատորից, էջ 261—262։ Հոմո ստորագրությամբ տպագրվել է «Արձագանք», 1892, № 14։*

*3 Շիլլերի «Օռլյանի կույսը» (1801) հայ դերասանական խումբը դերասանուհի Հրաչյայի մասնակցությամբ ներկայացրել է Թիֆլիսի արտիստական թատրոնում 1892—1893 թթ.։*

*4 «Ռոլանդի երգի» դյուցազնական հերոսը՝ Ռոլանդը, մարմնավորում է ֆրանսիական ժողովրդի հայրենասիրությունը. ահեղ է նրա փողի ձայնը, որ հնչում է հայրենիքի վտանգի ժամին։*

5 Ակնարկում է «Դրոհ և փոթորիկ» շարժումը, որի ներկայացուցիչները (Հերդեր, երիտասարդ Գյոթե, Կլինգեր և ուրիշներ) Ռուսսոյի ուսմունքի ջատագովներ էին։ Դրոհայինները ուղի են հարթում երիտասարդ Շիլլերի դրամատուրգիայի համար («Ավազակները», 1781)։

6 Նկատի ունի այդ շրջանի Գյոթեի ստեղծագործությունները՝ «Վայրի վարդ» (1771), Պրոմեթևսի մասին անավարտ դրաման (1773), «Գեց ֆոն Բեռլիխինգեն» (1773)։

Ժամանակակից զրույցներ—Հատվածը քաղված է նույն հատորից, էջ 49—50։ Ամբողջությամբ տպագրվել է՝ «Արձագանք», 1892, № 37։

7 Հեղինակի տողատակի տողերը Տրոյայի քրմապետ Լաոկոոնի խոսքերն են Վիրգիլիոսի «Էնեականից»։

## Լ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Գարնանային նամակներ—Հատվածը քաղված է՝ «Մուրճ», 1894, № 3, էջ 380—381, ստորագրված է՝ Լեոն Մանվելյանց։

Ներեցեք Դ.—«Մարդ-Առյուծ»...—Հատվածը քաղված է՝ «Մուրճ», 1896, № 1, էջ 124—125, ստորագրված է՝ Լ. Մ.։

## ՍԻՊԻԼ

Ազգասեր նայուհին—Հատվածաբար քաղված է՝ Սիպիլ. Եր., Երևան, 1965, էջ 155—156, 158, 159։ Ճառը արտասանել է 1909 թ., «Օրիորդաց միության» հանդեսին։

1 Երևում է, Սիպիլն էլ է հավատացել երիտթուրքերին։

## ԱՐՇ. ՉՈՊԱՆՅԱՆ

Հերոսներ—քաղված է՝ «Նոր կյանք», 1898, № 5, էջ 65—68, թվագրված է՝ Փարիզ, 21 փետր. 1898, ստորագրված՝ Արշակ Չոպանյան։

1 Նկատի ունի 1894—1897 թթ. հերթական ջարդերը Արևմտյան Հայաստանում։

2 Ավանդական ազգային մեծ սգատոն ի հիշատակ 450—451 թթ. Վարդանանց պատերազմի։ Պատերազմը Վարդանանց է կոչվել հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի անունով։ Վարդանանց պատմական ճակատամարտը տեղի է ունեցել Տղմուտ գետի ափին, Ավարայրում՝ 451 թ. մայիսի 26-ին։ Տոնը նշվել է մեծ հանդիսավորությամբ։

3 Սոսկ է՝ Վարդանանց պատերազմին նվիրված Եղիշեի բանաստեղծական տարեգրությունը՝ «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին»։

4 Պարթևների ճյուղն էին Արտաշեսյան հարստության վախճանից հետո մ. թ. I դարից Հայաստանում գահակալող Արշակունիները։

5 Քրիստոնեությունը մուտք է գործել Հայաստան 301 թ.։

6 Հայոց Արշակունի թագավորների՝ Արշակ Բ-ի, Պապի հեթանոսական վարք ու բարքի վերաբերյալ վկայություններ են թողել Խորենացին, Փավստոսը։

7 Արշակունիների անկումը վերաբերում է 428 թ.։

8 Բագրատունյաց թագավորությունը վերաբերում է IX—XI դդ.։

9 1915 թ. մայիսի 25-ի բանախոսության մեջ (Փարիզում), անդրադառնալով Կի-

լիկյան Փոքր Հայաստանի թագավորությանը. Չոպանյանը նշում էր. «Երբ խաչակիրները Փոքր Ասիա հասան, հայկական փոքրիկ իշխանապետության մեջ գտան ինքնաբեր դաշնակից մը, որուն օժանդակությունը թանկագին եղավ անոնց՝ Սարակինոսներու դեմ իրենց կռիվներուն մեջ», ապա տողատակին վկայակոչում է հետևյալը. «Գրիգոր ԺԴ պապը, 1384 թվին արձակած իր Eccles la Romana կոնդակին մեջ կըսե. Հայ ազգի ուրիշ արժանիքներուն մեջ՝ եկեղեցվո և քրիստոնեական հանրապետության հանդեպ, կա հատ մը [illegible] մասնավոր հիշատակման արժանի. այն է, որ՝ երբ ատենով քրիստոնյա իշխաններն ու բանակները կ'երթային սուրբ երկիրը ազատելու, ոչ մեկ ազգ ու ոչ մեկ ժողովուրդ հայերեն ավելի փութկոտությամբ և եռանդով անոնց իր օժանդակությունն ընծայեց՝ տալով ձիավորներ, ձիեր, պարեն ու խորհուրդներ. իրենց բոլոր ուժերովը, և ամենամեծ քաջությամբ ու հավատարմությամբ անոնք քրիստոնյաներուն օգնեցին այդ սուրբ պատերազմներուն մեջ» (տե՛ս Ա. Չոպանյան. Հայաստանը Թուրք լուծին տակ, Փարիզ, 1918, էջ 20):

10 Նկատի ունի Եղիշեի գրքի վերջին հատվածները, որտեղ պատկերված է հայոց աշխարհի «փափկասուն տիկնանց» մասնակցությունը Վարդանանց պատերազմին:

11 Օգնության խնդրանքը, ինչպես հայտնի է, բյուզանդական Մավրիկիոս կայսրը մերժում է, միաժամանակ այդ մասին նենգորեն հայտնում պարսից արքային:

12 Պարսկա-բյուզանդական այս պատերազմը սկսվեց 572-ին, ավարտվեց՝ 591 թ. դաշնագրով. դրանով Հայաստանի մեծ մասն անցավ Բյուզանդիային:

13 Նկատի ունի 481—484 թթ. հայոց երկրորդ ժողովրդական ազատագրությունը պարսից դեմ՝ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, «Տանուտիրական Հայաստանի» ինքնուրույնությունը մինչև 591 թ. դաշնագիրը:

14 Տե՛ս սույն գրքում Վ. Ալիշանի բաժնի 3-րդ ծանոթագրությունը:

Իմ հայրենասիրությունը—Հատվածը քաղված է «Նոր կյանք». 1898, № 8, էջ 115, թվագրված է՝ Փարիզ, 24 մարտ, 98, ստորագրված է՝ Արշակ Չոպանյան:

Հայոց նոր գրականությունը և հայկական խնդիրը—Հատված է «Հայաստան իր պատմությունը, իր գրականությունը, իր դերը Արևելքի մեջ» խորագրով «Նոր կյանք» 1898 թ. № 11—15-ում պարբերաբար տպագրված աշխատասիրությունից. քաղված է՝ № 15, էջ 228—230:

Չոպանյանը այս նյութով բանախոսել է 1897 թ. մարտի 9-ին Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում, նախագահել է Ան. Ֆրանսը, որը և ներածական խոսքով ելել, ապա ամփոփել է բանախոսությունը: Ավելորդ չէ բերել Ֆրանսի ներածական խոսքը.

«Տիկիննե՛ր ու պարոննե՛ր,

Հայ մըն է որ ձեզի իր երկրին վրա պիտի խոսի: Պ. Արշակ Չոպանյան, զոր քիչ հետո պիտի ունկնդրեք. Պոլսո հայ գաղթականության մեջ շատ երիտասարդ հասակեն ինքզինքը ճանչցուց իր մտքին ընդարձակությամբն ու աշխուժովը: Իր գործունեությունը հատկացուցած էր ֆրանսական գաղափարներն իր ազգակիցներուն մեջ տարածելու: Գրականության պատմության ուսուցիչ Ազգային Կեդրոնական վարժարանին մեջ, աշխատակից «Հայրենիք» լրագրին, հիմնադիր «Ծաղիկ» արվեստի և գրականության հանդեսին, իր ազգային լեզվովը թարգմանած է բազմաթիվ ֆրանսերեն գրքեր: Կը սիրե Ֆրանսան և ազատությունը: Հայկական գերդաստանին մեկ հարազատ զավակն է: Վերջապես բանաստեղծ է, և գիտե ձայն մը տալ ժողովրդական մտածումներուն:

Ահավասիկ այն օրերը, որոնց համար վտարանդի է այսօր: Իր Ֆրանսա պան-

դիվանագիտությանը միջոցին երևան հանեց այն անհերքելի և կազմակերպված ջարդերը, որոնց մեջ երեք հարյուր հազար հայեր կոտորվեցան հրամանովը սուլթանին, այդ զորության ու տկարության հրեշին, այդ սարսափեն հիմարացած բռնակալին: Պ. Չոպանյան, Հայր Շարմեթանին հետ, կը բաժնե պատիվը՝ Ֆրանսայի ժողովրդին հանչցուցած ըլլալու այդ զարհուրելի խողխողումը, որ ամիսներով դիվանագիտական գաղտնիք մը դարձած էր: Եվ իրոք, պ. Չոպանյան 1896 թ. հունիսին Բարիզ հրատարակեց հավաքածո մը Հայաստանեն գրված նամակներու, պարզ և ահավոր նկարագրություններ, որոնք պ. Ժորժ Քլեմանսոյի մեկ վեհանձն հոդվածովը հառաջաբանված, զարհուրանքով ու զայրույթով ցնցեցին հասարակությունը, զոր իր կառավարությունը և լրագիրներուն մեծագույն մասը դեպքերուն գրեթե անտեղյակ պահած էին:

Այս սրտոտ մարդիկը. Արևելքի քրիստոնյաները, եվրոպայի հանրային զգացման պաշտպանությանը ենթարկվեցին...» (տե՛ս «Նոր կյանք», 1898, № 11, էջ 166):

Հայոց դատի օգտին այդ տարիներին ծավալած Ան. Ֆրանսի գործունեության վերաբերյալ տե՛ս «Геноцид армян...», стр. 509—510:

Չոպանյանի բանախոսությանը ներկա են եղել Ժան Ժորես, Անատոլ Լըրուա-Բոլիեոն, Միլերան, Վիվիանի, Լյուսիեն Դեկավ, Շառլ Մոռաս և ուրիշներ:

Բանախոսությունը Ան. Ֆրանսի առաջաբանով 1898 թ. լույս է տեսել առանձին գրքով՝ ֆրանսերեն, արժանանալով լայն ընդունելության և արձագանքների՝ «ֆրանսական ամենաբարձր շրջաններից»: Չոպանյանը հիշատակում է տասից ավելի անուն, այդ թվում Ստ. Մալարմեին, որի գրած տողերը Չոպանյանը հրապարակել է «Նոր կյանքում». «Արյունի լճի մը որուն ցոլքը կը կարմրցնե ամեն ժամանակակից մտածող ճակատ միջի անձանոթ բովանդակ բանաստեղծություն մը մեզ հանչցնող այս մարդը դասը հանած ըլլալնէդ ինծի կթվի գրական մարդու մը ամենեն արդյունավոր և ամենեն փափուկ բարեպաշտությունը հանդեպ ավերված, ջախջախված և այլափոխ ոգումներով վերածնելու պատրաստ իր հայրենիքին» (տե՛ս «Նոր կյանք», 1898, № 15, էջ 231):

Այս կապակցությամբ տե՛ս նաև Արփ. Արփիարյանի բաժնում զետեղված «Օրվան կյանքը» քրոնիկը և ծանոթագրությունները:

15 Միք. Նալբանդյանի «Ազատություն» ներբողյանի տողերն են:

16 «Մշակ» լրագիրը հրատարակվել է 1872-ից Թիֆլիսում, խմբագիր-հրատարակիչ Գր. Արծրունի:

17 Րաֆֆու «Ջալալեդդին» վեպը ստեղծվել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին, լույս է տեսել 1878 թ.:

18 Թուրքիայում բնակվող քրդերին և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, ինչպես և 1860-ական թվականներին Կովկասից Թուրքիա անցած չերքեզներին թուրքական կառավարությունն օգտագործում էր հայերի դեմ:

19 Երկհատոր «Դեղին գիրքը» լույս է տեսել 1897 թ. Փարիզում՝ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman 1893—1897: Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895—1896, Paris. 1897 (տե՛ս «Геноцид армян...», стр. 499):

20 Նկատի ունի 1895-ի հունիսի Բաբը Ալիի ցույցը, ինչպես և 1896-ի օգոստոսի 14-ի Բանկ Օտտոմանի դեպքերը, որոնց վերաբերյալ Ե. Օտյանը «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրության մեջ գրում էր, թե «ամբողջ պոլսական հեղափոխությունը գործի վրա էր 96-ի ամռանը և մեկ օրեն մյուսը մեծ ցույցի մը կ'սպասվեր» (տե՛ս Ե. Օտյան, Երկ., հ. 4, 1962, Երևան, էջ 63):

21 Նկատի ունի Զեյթունի հերոսական ինքնապաշտպանությունը 1895—1896 թթ.։

22 Սկսած XVII դ. Կրետե կղզու բնակիչները պայքար են մղել թուրքական տիրապետության դեմ։ Հոդվածի այս բանախոսության օրերից կարճ ժամանակ անց Կրետեն ստանում է ավտոնոմիայի իրավունք, մնալով հանդերձ Թուրքիայի վարչական կազմում։

Խաչատուր Աբովյան—հատվածները քաղված են՝ Արշակ Չոպանյան. Եր, Երևան, 1966, էջ 304—305, 306։ Գրել է Աբովյանի մահվան 50-ամյակի առթիվ՝ 1898 թ.։

23 Լատինական կայսրության վախճանը համարվում է 1261 թ.։

24 Նկատի ունի Ֆրանսիայի, Իսպանիայի զարթոնքը, իտալական վերածնունդը։

Դանիել Վարուժանին—հատվածը քաղված է՝ Դ. Վարուժան. Նամականի, Երևան, 1965, էջ 225. Թվագրված է՝ 1905, դեկտեմբերի 18, Փարիզ։

25 Ակնարկում է 1905 թ. ռուսական հեղափոխությունը։

Խ. Աբովյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ—հատվածը քաղված է Ա. Չոպանյան. Եր, էջ 342, գրել է 1906-ին։

Մեր գրականությունը—հատվածները քաղված են նույնանուն գրքույկից՝ Փարիզ, 1926, էջ 8։

Վահան Թեքեյան—հատվածը քաղված է՝ Արշակ Չոպանյան. Եր, էջ 402։

26 Ֆրանսիական հեղափոխության կրքոտ կողմնակից Շենիեն, այդուհանդերձ չի կարողանում տանել դաժան ահեղները։ Դրա դեմ գրում է ժողովրդին ուղղված կոչ, որի համար մեղադրվում է դավաճանության մեջ և գլխատվում գիլյոտինի (1794)։

Վիքթոր Հյուգո—հատվածը քաղված է նույն գրքից, էջ 529։ Տպագրվել է «Անահիտ», 1935, № 5։ Գրել է Հյուգոյի մահվան 50-ամյակի առթիվ։

27 Տե՛ս Մ. Նալբանդյանի բաժնի 3-րդ ծանոթագրությունը։

## ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հայի ոգին—հատվածները քաղված են՝ Հ. Թումանյան. ԵԺ, հ. 4, Երևան, 1969, էջ 91—92։ Տպագրվել է Թիֆլիսում հրատարակվող «Հորիզոն» լրագրում՝ 1910, № 91։

1 Խ. Տարոնացու բանաստեղծության առաջին տողերը։

2 Հանրածանոթ ժողովրդական երգ։

3 Գր. Նարեկացու «Ողբերգության մատյանի» միմյանց հաջորդող բանքերի խորագիրը։

Անկյման պատմությունը և այսօրվա իրականությունը—ամբողջությամբ քաղված է նույն հատորից, էջ 138—142։ Տպագրվել է՝ «Հորիզոն», 1912, № 196։

Ըստ հատորի ծանոթագրության այս հոդվածում տեղ են գտել խոսքեր, նկատումներ, նյութեր, որոնք այնուհետև Թումանյանն ամփոփել է «Վերը Հայաստանին» և [18]26 թ. ռուս-պարսկական պատերազմը» ուսումնասիրությունում։

4 Իտալաթուրքական և Բալկանյան պատերազմների հետևանքով 1911—1913 թթ. Նորից ծանրացել էր հայոց վիճակը Թուրքիայում։

5 Խոսքը վերաբերում է 371—372 թթ. Բյուզանդիայի օգնությանը, երբ հռոմեական զորքերը Հայաստանում միանալով Մուշեղ սպարապետի զորքին՝ հաղթություն տարան պարսիկների դեմ. ըստ Խորենացու Ձիրավի դաշտում, ըստ Փավստոսի՝ Բագրևանդ գավառի Բագավան ավանի մոտերքը (տե՛ս Հ. Մանանդյան. Եր, հ. 2, Երևան, 1978, էջ 210—211)։

6 Նկատի ունի ճակատամարտի նկարագրությունը Խորենացու և Փավստոսի երկասիրություններում. տե՛ս Խորենացի, գիրք II, Բ, ԼԷ. Փավստոս, դպր. Ե, գլ. Դ: Որոշ փոփոխություններով դրանցից են քաղված և մեջբերված արտահայտությունները: Ըստ Պ. Հակոբյանի ծանոթագրության՝ «Ներսես Մեծի աղոթքի խոսքերը չեն համապատասխանում Խորենացու գրածին... չեն հանդիպում նաև Փավստոս Բուզանդի մոտ, որը նույնպես նկարագրել է Ձիրավի ճակատամարտը..., նաև՝ Հովհաննես Դրասխանակերտցու (տե՛ս Թիֆլիս, 1912, էջ 50—51): Թերևս նկատի է ունեցել X դ. պատմագիր Մեսրոպ երեց Վայոցձորեցու Ներսեսի վարքը («Սոփերք», Է)». տե՛ս «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», Երևան, 1978, էջ 240:

7 Նկատի ունի 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Ներսես Աշտարակեցու գործունեությունը այդ ժամանակներում, ռուսական զորքերի ընդունելությունը Հայաստանում:

8 «Кавказский сборник»-ի առաջին հատորը լույս է տեսել 1876-ին, Թիֆլիսում:

9 Դեկաբրիստ Ն. Ն. Լաչինովի օրագիրը տե՛ս Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 311—429:

Հայկական հարցը ու իր լուծումը—ամբողջությամբ քաղված է նույն հատորից, էջ 161—173, տպագրվել է «Հորիզոն» (օրաթերթ). 1913, № 7—14:

10 Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1913-ին ընթանում էին բանակցություններ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու շուրջը: Թումանյանը հոդվածը գրել է այդ առթիվ:

11 Բեռլինի դաշնագիրը կնքվել է 1878 թ. հուլիսի 1-ին, հաջորդելով 1878-ի հունվար-փետրվար ամիսների Ադրիանապոլսի և Սան Ստեֆանոյի դաշնագրությանը:

12 Գ. Ս. Գոլիցինը Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ և ռազմական օկրուգի զորքերի հրամանատար է եղել 1896—1904 թթ.: Նրա օրոք փակվել են հայոց բարեգործական, հրատարակչական ընկերությունները, հալածվել են հայ մշակույթի գործիչները, բռնագրավվել է եկեղեցական ունեցվածքը. այս ամենը հայտնի է Գոլիցինյան ռեժիմ անունով:

Ցարական պետական գործիչ Ս. Վիտտեն հետագայում գրել է. «Իշխան Գոլիցինը գնաց Կովկասում ընդվզեց բոլոր ազգությունների դեմ, քանի որ նա ցանկանում էր բոլորին ռուսացնել, բայց, բնականաբար, ամենից թշնամաբար նա վերաբերվեց հայերին» (С. Ю. Витте, Воспоминания, т. 2, М., 1960, стр. 207—208):

13 Ֆրանսիայում 12 տարի ապրելուց և սպայական կոչման արժանանալուց հետո՝ Իսրայել Օրին փոխադրվում է Դյուսելդորֆ, ծանոթություն հաստատելով՝ հայկական հարցով բանակցություններ վարում Պֆալցի գերմանական կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի հետ: Կուրֆյուրստի խորհրդով 1698 թ. Օրին ուղևորվում է Վիեննա՝ ավստրիական կայսր Լեոպոլդին ներկայացնում Հայաստանի ազատագրության իր ծրագիրը: Չստանալով որևէ խոստում՝ 1699 թ. ապրիլին Օրին հասնում է Էջմիածին: 1699-ի Սյունիքի տասնմեկ մելիքների՝ Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունից հետո՝ Օրին 1700 թ. նորից վերադառնում է Գերմանիա և կրկին չի ստանում օգնության որևէ խոստում:

1791 թ. ամռանը Իսրայել Օրին՝ վարդապետ Մինասի ուղեկցությամբ Լեհաստանի վրայ-ով հասնում է Ռուսաստան: Պետրոս Մեծին հանձնված լատինագիր թղթով խնդրում էր իրագործել Ռուսաստանին միանալու հայ ժողովրդի վաղեմի ցանկությունը (տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան,

1959, էջ 419—624)։ 1701—1707 թթ. գտնվելով Ռուսաստանում, Օրին մտերմանում է Մոսկվա տարագրված վրաց թագավոր Արչիլի հետ։ Նրանք միասին մշակում են վրացիների և հայերի համատեղ գործողության ծրագիր՝ Հայաստանի ու Վրաստանի մերձեցման. Ռուսաստանի հովանու տակ անցնելու ուղղությամբ անգնահատելի է նաև Հ. Էմինի նույն ժամանակների գործունեությունը (տե՛ս Л. Р. Иоаннисян. Иосиф Эмин. Ереван, 1945, стр. 82—265)։

1783 թ. հուլիսին Գեորգևսկի ամրոցում կնքված դաշնագրով Վրաստանը անցնում է Ռուսաստանի հովանու տակ։

14 Մ. Յու. Լերմոնտովի «Спор» բանաստեղծության տողերն են։

15 Ռուս-պարսկական պատերազմները Կովկասում՝ 1783 թ. հետո, ծայր են առնում 1796-ից, Աղա-Մահմեդ խանի արշավանքից հետո։

16 Ցարական կառավարությունը 1828 թ. ապրիլի 2-ին պատերազմ է հայտարարում Թուրքիային. ռուսական զորքերը Գյումրիի վրայով անցնում են սահմանը, նվաճում Կարսը, Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, 1829-ի հունիսին՝ Կարինը (Էրզրում)։ Ցավոք, սակայն, Ռուսաստանը հարկադրված է լինում վերադարձնել գրավված հողերի մեծագույն մասը։

17 Ակնարկվում է 1853—1856 թթ. ռուս-թուրքական պատերազմը, այսպես կոչված՝ Ղրիմի կամպանիան, որն ավարտվում է Փարիզի դաշնագրով։ Պատերազմի առիթը արևելյան հարցն էր, որտեղ Թուրքիան հրաժարվում էր պաշտպանել իր տիրապետության տակ ապրող քրիստոնյաների իրավունքները։ Ե՛վ Դանուբի շրջանում, և՛ հատկապես Սևաստոպոլում ռուսական զորքերի դեմ կռվում էին Թուրքիայի դաշնակիցները՝ Անգլիան և Ֆրանսիան։

18 Անդրկովկասից 1878-ին Ռուսաստանին են մնում Կարսը, Արդահանը, Բաթումը, Թուրքիային են վերադարձվում Ալաշկերտի հովիտը և Բայազետը։

19 Շուրջ վաթսուն տարի հետո Անգլիայի քաղաքական ղեկավար գործիչներից Լլոյդ Ջորջը, անդրադառնալով 1878 թ. Բեռլինի վեհաժողովին, գրել է. «Այդ որոշումը... մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակը, նրա թելադրած «պատվավոր խաղաղություն»։ Հայաստանը ոչնչացվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897, 1909 թվականների սոսկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին» (*Ллойд Джордж.* Правда о мирных договорах, М., 1957, т. 2, стр. 390)։

20 Բեռլինի 1878 թ. վեհաժողովի մասնակից տերությունները պետք է զբաղվեին հայոց հարցով։

21 1892—1894 թթ. Անգլիայի պրեմիեր-մինիստր Գլադստոնին են պատկանում «Հավիտենական հիվանդ», «Հիվանդ մարդը պետք է մեռնի», «ծառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթությանը» արտահայտությունները։ Նրա «հայասիրական» գործունեությունը, սակայն, ինչպես և ակնարկում է Թումանյանը,— իրականում նպատակ ուներ զիջումներ կորզել Թուրքիայից՝ հօգուտ բրիտանական գաղութատիրության։

22 Այդպես է պատասխանել Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլսբերին 1878 թ. Լոնդոն մեկնած հայոց պատվիրակությանը։

23 Ֆրանկո-թուրքական դաշնակցային պայմանագիրը կնքվել է 1535-ին Ֆրանցիսկ I-ի և Սուլեյման I-ի միջև. այդ պայմանագրով Թուրքիայում առևտրական, հյու-

*պատոսական և դատական արտոնություններ էր տրվում ֆրանսիացիներին։ Սուլեյման 1-ի օրոք 1555-ին Հայաստանը և Վրաստանը բաժանվեցին Թուրքիայի ու Պարսկաստանի միջև։*

*24 Նկատի ունի 1896 թ. օգոստոսի պոլսահայության կոտորածը (շուրջ 10 հազար մարդ)։*

*25 Ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 1856 թ. փետրվարին, Փարիզյան դաշնագրով Ռուսաստանը զիջեց Բեսարաբիայի մի մասը, պարտավորվելով ռազմական նավատորմիղ չունենալ Սև ծովի վրա։ Սևաստոպոլի փոխարեն Թուրքիային վերադարձվեց Կարսը։ Այս դաշնագիրը մեծապես թեթևացրեց Թուրքիային՝ ոտնահարելու քրիստոնյա հպատակների իրավունքները։ Փարիզի վեհաժողովը նախագահում էր Ֆրանսիայի արտաքին գործոց մինիստրը։*

*26 Թումանյանի քաղած տողերը ըստ հատորի ծանոթագրության՝* История человечества, под редакцией д-ра Г. Гельмольдта, СПб., *էջ 293։*

*27 Առաջին համաշխարհային պատերազմում Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը դաշնակիցներ էին՝ ընդդեմ Գերմանիայի ու Թուրքիայի, և, ահա, հակառակ հայ մտավորականության մեծագույն մասի վստահության՝ հայկական խնդիրը չլուծվեց, և հայ ժողովուրդը կանգնեց ամենադաժան փորձության առջև։*

Խաչը Րաֆֆու գերեզմանի վրա—*ամբողջությամբ քաղված է նույն հատորից, էջ 181—182։ Տպագրվել է՝ «Հորիզոն», 1913, № 99։*

*Րաֆֆու մահվան 25-ամյակին Հայ գրողների կովկասյան ընկերության կազմակերպած հոգեհանգիստը տեղի է ունեցել 1913 թ. մայիսի 5-ին, Թիֆլիսի Խոջիվանքի հայոց գերեզմանատանը։*

*28 Րաֆֆու «Ձա՛յն տուր, ով ծովակ...» բանաստեղծության տողերն են՝ որոշ փոփոխությամբ։*

«Արանով կնքվես»—*համառոտ քաղված է նույն հատորից. էջ 224—225։ Տպագրվել է՝ «Հորիզոն», 1914, № 226։*

Հանգիստ ու լիքը հավատով—*քաղված է նույն հատորից, էջ 230—231։ Տպագրվել է՝ «Հորիզոն», 1915, № 166։*

Ողջունում ենք—*համառոտ քաղված է նույն հատորից, էջ 248—249։ Տպագրվել է՝ «Հորիզոն», 1916, № 69։*

<Հովհաննես Թումանյանի բողոքը դաշնակցության ավանտյուրայի դեմ>—*քաղված է նույն հատորից, էջ 309—310։*

*29 Խոսքը վերաբերում է 1921 թ. փետրվարյան խռովությանը։*

## ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հիշատակարան—*հատվածները քաղված են՝* Ավ. Իսահակյան. *Հիշատակարան, Երևան, 1977, էջ՝ 32, 94, 113, 138, 160, 164, 189—190, 291, 299, 322—324, 333, 378։*

*1 Գրառումը վերաբերում է 1892 թ. այն օրերին, երբ պատանի Իսահակյանը սովորում էր էջմիածնի Գևորգյան ճեմարանում։*

*2 Սասունի կոտորածի ժամանակ (1894—1895) Իսահակյանը գտնվում էր Լայպցիգում։*

*3 Իմա՝ 1905 թ. ռուսական հեղափոխությանը։*

4 Նկատի ունի 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը, որ վերաճեց Հոկտեմբերյան հեղափոխության։

Փառք մեր լեզվի գիտնականության մասին—հատվածները քաղված են՝ Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 5, Երևան, 1977, էջ 166—170։

Գրել և հրապարակել է «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի 1000-ամյակի տոնակատարության օրերին՝ 1939, սեպտեմբեր։

5 Ինչպես հայտնի է, Իսահակյանը բազմիցս անդրադարձել է Մհերի կերպարին։

Խաչատուր Աբովյանը և «Վերք Հայաստանի»-ն—հատվածները քաղված են նույն հատորից, էջ 174—175, 176—177։ Գրել և հրապարակել է «Վերքի» 100-ամյակի տոնակատարության օրերին՝ 1940, մարտ։

6 1840 թ. հունիսի 20-ի այս երկրաշարժից հետո՝ հունիսի 24-ին փլվածք է տալիս Արարատը, որի հետևանքով հիմնահատակ կործանվում է Ակոռի գյուղը (տե՛ս Խ. Աբովյանի «Արևմտյան երեք իմաստասերներ» հոդվածը, «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» և ծանոթագրությունները. ԵԼԺ, հ. 7, Երևան, 1956)։

Մտքեր հայ գրականության մասին—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 191—192։

7 Գրել է 1941 թ. ապրիլ-մայիսին՝ Մոսկվայում հայ գրականության տասնօրյակի (մայիսի 10—20-ը) կապակցությամբ։

Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը—հատվածները քաղված են նույն հատորից, էջ 339—345։ Գրել է Հայրենական պատերազմի տարելիցին, տպագրվել է «Սովետական գրականություն», 1942, № 5—6։

8 Թուրքական բանակը վերակառուցելու նպատակով 1913 թ. դեկտեմբերին արդեն Թուրքիայում էր գերմանական ռազմական միսիան գեներալ Լիման ֆոն-Սանդերսի գլխավորությամբ։ 1914 թ. հուլիսի 20-ին ստորագրվում է գերմանաթուրքական դաշնագիրը, նույն օրը Թուրքիան հայտարարում է զորահավաք (տե՛ս А. О. Арутюнян. Кавказский фронт, 1914—1917, Ереван, 1971, стр. 69—82)։

«Ուլենշպիգել» վեպի մասին—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 234—235։

9 Հայպետհրատի հրատարակությամբ 1946 թ. հայերեն լույս տեսած Դը Կոստերի «Ուլենշպիգել» վեպի առաջաբանն է։

Բացման խոսք Հայաստանի գրողների երկրորդ համագումարում—հատվածները քաղված են նույն հատորից, էջ 240—242, 245—246։ Համագումարը տեղի է ունեցել 1946 թ. սեպտեմբերի 25—28-ը։

10 Ամենուրեք սփյուռքահայությունը իր լուման է բերել հակաֆաշիստական պայքարին՝ մասնակցելով Դիմադրական շարժմանը Ֆրանսիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Ռումինիայում, Հարավսլավիայում, Հունգարիայում, Իտալիայում և այլուր, «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուներով և այլ կարգի օգնությամբ մայր հայրենիքին։ Այդ թվում հիշարժան է նաև ամենուրեք ցուցաբերված հոգատարությունը հայ ռազմագերիների հանդեպ։

11 Սովետական Հայաստան ներգաղթող հայերի առաջին քարավանը Երևան էր հասել 1946-ի հուլիսի 2-ին։

12 Սփյուռքահայ գրողներից համագումարին մասնակցել են՝ Կ. Սիթալը (Ամերիկա), Գ. Գարագաշը, Ա. Երեմյանը, Հ. Ղուկասյանը (Իրան), Վ. Վահյանը, Հ. Ազբաշյանը (Բեյրութ), Ս. Տերունյանը (Կիպրոս), Ա. Չարըգը, Զ. Որբունին, Լ. Մեսրոպը (Ֆրանսիա)։

<Խոսք իր ծննդյան 80-ամյակի հոբելյանական հանդեսին> — Հատվածները քաղված են նույն հատորից, էջ 290, 293։ Հոբելյանական հանդեսը տեղի է ունեցել հոկտեմբերի 30-ին, Երևանում։

## Վ. ՏԵՐՅԱՆ

Ավ. Իսահակյանին — Հատվածը քաղված է՝ Վ. Տերյան, Եժ, հ. 3, Երևան. 1975, էջ 205—206, Թվագրված է՝ 1906, 20 մարտի, Մոսկվա։ Այս հատորից են քաղված նաև ծանոթագրությունները։

1 Ասել է՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատները։

2 Վ. Տերյանը Ալ. Մյասնիկյանի հետ միասին այդ աքսորությամբ 1907 թ. մայիսին արդեն Բաքվում էին. այդ առթիվ տե՛ս հաջորդ՝ Ս. Շահումյանին հասցեագրված նամակից քաղված տողերը։

Ս. Շահումյանին — Հատվածը քաղված է նույն հատորից, էջ 226, Թվագրված է 1907, 27 մայիսի, Բաքու։

Օ. Օհանջանյանին — Հատվածը քաղված է նույն հատորից, էջ 230—233. Թվագրված է 1907, 21 հուլիսի, <Գանձա>։

Հայ գրականության գալիք օրը — Հատվածը քաղված է նույն հատորից, էջ 78—79։ Գրվել է իբրև զեկուցում և կարդացվել 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսի երաժշտական ընկերության դահլիճում։ Տպագրվել է հետագայում։

3 Ակնարկ՝ 1905 թ. հեղափոխության նախօրյակի տարիները։

Հոգևոր Հայաստան — Հատվածները քաղված են նույն հատորից, էջ 104—105, 112—114, տպագրվել է՝ «Մշակ», 1914, № 293—296։

Զեկուցագիր թուրքահայաստանի մասին — Հատվածները քաղված են՝ Վ. Տերյան, Եր., Երևան, 1956, էջ 584—585, 590—593։ Ըստ եր. ծանոթագրության զեկուցագիրը տպագրվել է «Жизнь национальностей» շաբաթաթերթում (Ազգ. ժողկոմատի պաշտոնական օրգան), 1920 թ. հունիսի 15-ին, № 18, ասում են, այս ծանոթագրությամբ՝ «ներկայացված է եղել ժողովրդական կոմիսարների սովետին՝ Ի. Վ. Ստալինի միջոցով, 1917 թ. նոյեմբերին»։

Հայերեն լույս է տեսել Երևանում, «Հայաստանի ձայն» թերթի № 147-ից. 1920 թ. սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 2-ին։

Այս զեկուցագրին առնթեր Վ. Տերյանը ներկայացնում է նաև Հայաստանի մասին դեկրետի նախագիծը»։

«Жизнь национальностей» շաբաթաթերթը լույս է տեսել Մոսկվայում 1918—1922 թթ.։

«Հայաստանի ձայն» օրաթերթը լույս է տեսել Երևանում՝ 1919—1920 թթ.։

Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին — Հատվածները քաղված են նույն հատորից, էջ 143, 144, 146—149։ Առաջին անգամ տպագրվել է՝ «Կոմունիստ», 1918, № 1։ «Կոմունիստ» (օրգան Հայկական գործոց կոմիսարիատի) շաբաթաթերթը հրատարակվել է 1918 թ. Մոսկվայում։

4 Նկատի ունի 1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը և ժամանակավոր կառավարությանը։

5 Խոսքը վերաբերում է Բաքվի կոմունային. իշխանությունը Ստ. Շահումյանի գլխավորությամբ Բաքվի սովետի գործադիր կոմիտեի ձեռքն է անցնում 1917 թ. նոյեմ-

րերի 2-ին։ Նույն ժամանակներում ստեղծվում է Անդրկովկասյան կոմիսարիատը, 1918-ի փետրվարից արդեն փոխարինելու է գալիս Անդրկովկասյան սեյմը։

6 Նկատի ունի Շամխորի հայտնի դեպքերը, օտարերկրյա իմպերիալիստների և Անդրկովկասյան կոմիսարիատի համաձայնությամբ խանաբեկական ուժերով կազմակերպված կովկասյան ռազմաճակատից Ռուսաստան վերադարձող զինվորների կոտորածը 1918 թ. սկզբներին։

7 Անդրկովկասը «անկախ» է հայտարարվել 1918 թ. ապրիլի 22-ին. մայիսի 26—28-ը «անկախ» են հայտարարվել Անդրկովկասի հանրապետությունները։

8 1918 թ. հունվարին թուրքական հրոսակները առաջ շարժվելով՝ ապրիլի 12-ին գրավում են Կարսը։ Կարսի զինադադարից հետո՝ նորից առաջ շարժվելով գրավում են Ալեքսանդրապոլը (մայիսի 15), հարձակումը շարունակում Ղարաքիլիսայի և Երևանի ուղղությամբ։

9 Կ. Մարքսի և Ֆր. Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստի» (1848) հայտնի կոչը։

Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին—հատվածները քաղված են նույն հատորից, էջ 156—158, 159—160։ Տպագրվել է՝ «Բանվորի խոսք», 1918, № 2—4։ «Բանվորի խոսքը»՝ Ռուսաստանի սոց. դեմ. բանվոր. կուսակց. Բաքվի կոմիտեի օրգան, հրատարակվել է 1918 թ. Բաքվում։

10 Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո 1917 թ. հոկտեմբերի 25—27-ը (նոյեմբերի 7—9) հրավիրված Սովետների II համագումարը ընդունում է խաղաղության և Հողի մասին դեկրետները։

Անկեղծ և հետևողական պետք է լինել—քաղված է նույն հատորից, էջ 165—168։ Տպագրվել է՝ «Կոմունիստ», 1918, № 2։

11 «Արևի» 1918 թ. № 108-ի առաջնորդողը վերնագրված է եղել «Նոր դավադրություն»։ Գրական, հասարակական և քաղաքական այս օրաթերթը հրատարակվել է 1914—1919 թթ. Բաքվում։

12 Խոսքը վերաբերում է այսպես կոչված՝ թուրք-անդրկովկասյան խաղաղության կոնֆերենցիային. 1918 թ. մարտի 18-ից ապրիլի 8-ը տեղի էր ունենում Տրապիզոնում, նույն օրերին էլ (ապրիլի 1) թուրքերը գրավում են Բաթումը։ Կոնֆերենցիան շարունակվում է Բաթումում. գերմանաթուրքական կողմը առաջարկում է Անդրկովկասը հայտարարել «անկախ», որը և ընդունելով՝ առանձին-առանձին վավերացնում են մենշևիկների, մուսաֆաթականների և դաշնակցության ներկայացուցիչները (Չխենկելի, Խանխոյսկի, Խատիսյան)։

13 «Գործ» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիրը հրատարակվել է 1917—1918 թթ., Բաքվում։

14 «Հորիզոն»՝ հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ (Հրատարակություն Հ. Հ. Դաշնակցության). հրատարակվել է 1909—1918 թթ., Թիֆլիսում։

Անմոռա՜ց ընկեր...—քաղված է նույն հատորից, էջ 173։ Տպագրվել է «Կարմիր դրոշակ» («Օրգան Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտ-կոմիտեի», Մոսկվա), 1919, № 2։

## ՍԻԱՄԱՆԹՕ

Ռաֆայել Պազարճյանին—հատվածաբար քաղված է՝ «Արևմտահայ գրողների նամականի», էջ 302—304։

*1 Գերմանիայի հետ դաշինքից հետո այսպիսին էր Օսմանյան կառավարության հայատարած հայերի և հույների զորահավաքը:*

*2 Տարել են հավանաբար Վահան եղբորը:*

*3 Սոմին՝ թուրքերեն է. բոլորակ մեծ հաց:*

*4 Պետել-բեգել՝ Թուրքիայում քրիստոնյաների և հրեաների տուրք զինվորական ծառայության փոխարեն:*

*5 Թուրքերեն է՝ հրաման:*

*6 Հոգածո բարեկամներից էր նաև հացեատերը՝ բժիշկ Ռ. Պապազյանը:*

*7 Բանկ Օտոմանը՝ միջազգային բանկ էր:*

*8 Աստղանիշով տողատակին նշված է՝ խնկիթությունը:*

*9 Ինչպես հայտնի է, Սիամանթոյին չի հաջողվում փախչել, և նա ևս դառնում է իր նախազգած կոտորածի զոհ:*

## Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Արիստակես Քասգանտիլյանին—*Նամակը քաղված է Դ. Վարուժան. Նամականի, Երևան, 1965, էջ 96:*

*1 Վարուժանի սովորելու տարիներին Ա. Քասգանտիլյանը եղել է Պոլսի Քաղկեդոնի Մխիթարյան վարժարանի տեսուչ և հայոց լեզվի ուսուցիչ:*

*2 1905—1909 թթ. Վարուժանը սովորել է Բելգիայի Գենտ քաղաքի համալսարանում*

*3 Հիսուսի կանչը խաչվելիս. նշանակում է՝ «Աստվա՞ծ իմ. Աստվա՞ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ». Մատ., ԻԷ, 46:*

Ռաֆայել Պազարճյանին—*Նամակը քաղված է նույնից, էջ 99:*

Գեւենիկ Ճիզմեճյանին—*քաղված է նույնից, էջ 165:*

«Ազդակ»-ի խմբագրությանը—*Նամակները քաղված են նույնից, էջ 168, 169:*

*4 «Ազդակ» գրական, հասարակական-քաղաքական շաբաթաթերթը հրատարակվել է 1908—1909 թթ. Կ. Պոլսում. խմբագիրներ՝ Շ. Միսաքյան, Գ. Բարսեղյան, Կ. Թաթուլ, Զ. Եսայան: Թուրքական հեղափոխությունից անմիջապես հետո հրատարակված «Ազդակը», խմբագիրները ավելորդ մեծ հույսեր էին կապում Թուրքիայի վերածնության հետ, որը և արտահայտված է հենց առաջին համարում. «Հեղափոխությունը մեր ետին, և Հեղափոխությունը՝ մեր առջև: Ահավոր, դյուցազնական ու կարմիր Հեղափոխությունը Երեկի՝ որու միջոցին երիտասարդությունը իր թանկագին ուժին լռության մեջ ա՜յնքան գեղեցիկ ու ա՜յնքան պատմական դեր մը ունեցավ. և տարբեր միջոցներով՝ տարբեր պայմաններու տակ, անխուսափելի Հեղափոխությունը վաղվան՝ որու ընթացքին կհավատանք դարձյալ թե երիտասարդությունը վճռական է իր գործը շարունակել... «Ազդակը» իր կոչումին գիտակցությամբը խանդավառ, պիտի խոյանա դեպի կրկես՝ խոսելով ու արտահայտելով Հեղափոխական մտածումին և երիտասարդ Արվեստին ընդմեջեն, Ճշմարտության համար և Գեղեցկության բոցը իր կուրծքին»:*

*Սիամանթոն «Ազդակի» խմբագիրների ոգևորությունը ուներ նաև Դ. Վարուժանը:*

«Ազդակ»-ի խմբագրությանը—*քաղված է նույնից, էջ 175:*

*5 Թվում է Վարուժանը նկատի ունի Սաքանայի հասցեին Ալիշանի գրած տողերը «Ի բամբիռն Հայկազնի» քերթվածում.*

...Փարնչա՛ց բամբիռներդ փառաւոր. Պատուէր
յինէն տար յԱսքանազ,
Չիչխանս եւ զունդս Արարատայ, զամէն զարթո՛
տուն Հայկազանց.
Ե՛րբ հա՛յ նիզակ, ե՛րբ ի Բաբել
Զմխաւկ հարայ, զՅակոբ թափել (տե՛ս Նուագք, Հայրունի, երկրորդ տպագրություն, Վենետիկ, 1867, էջ 10)։

Այս տողերի համար նյութ է ծառայել Խորենացու Հայոց պատմության վկայությունը, թե «սրան վկայում է Երեմիա մարգարեն իր մարգարեության մեջ՝ Բաբելոնի դեմ պատերազմի հրավիրելով. «Հրաման տուր, ասում է նա, Այրարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին»։ Սա ապացույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն» (տե՛ս գիրք Ա., ԻԲ)։

6 Նկատի ունի Ղ. Ալիշանի «Նուագք» ժողովածուի երրորդ՝ «Հայրունի» խորագիրը կրող պատմա-հայրենասիրական բանաստեղծությունների գիրքը (1858, Վենետիկ). մեջբերված տողը գրքի «Մասիսու սարերն» քերթվածից է (տե՛ս նույն տեղում, էջ 293)։

<Թագուհին լուռ է. Վարուժան մեր բեմին վրա>—հատվածը տպագրվում է՝ «Բանբեր Երևանի համալսարանի». 1974, № 3, էջ 151—152։

7 Հրապարակել է Գ. Մաղոյանը՝ ծանոթագրելով. «Դանիել Վարուժանի՝ ստորև ներկայացվող երկու հրապարակախոսական պատառիկները վերաբերում են 1911—1912 ուսումնական տարվան, երբ բանաստեղծը պաշտոնավարում էր Թոքատ (Եվդոկիա) քաղաքի Ազգային Ճեմարանում... որպես ավագ ուսուցիչ և հայ գրականության, ֆրանսերենի, տնտեսագիտության և բարոյագիտության դասատու։

Պատմաբան Արշակ Ալպոյաճյանը իր «Պատմություն Եվդոկիո հայոց» (Գահիրե, 1952) ծավալուն աշխատության մեջ բազմիցս անդրադառնում է Վարուժանի մանկավարժական և հասարակական գործունեությանը։ Ահա նրա մի քանի վկայությունները. «...դպրոցից դուրս Վարուժանը եռանդուն մասնակցություն էր բերում հասարակական կյանքին, հանդես էր գալիս հրապարակային դասախոսություններով։ Բարեբախտաբար պահպանվել է նրա դասախոսություններից մեկի վերաբերյալ եղած լրագրական հաղորդումը, որը նրան բնութագրում է որպես հմայիչ հռետորի։ Այն մեջ է բերվում Սեբաստիայի «Հող-դար» թերթի 1911 թ. հոկտեմբերի 15-ի № 43-ից» (տե՛ս նույն տեղում, էջ 149)։

Յարճանյանի ինքնադատությունը—հատվածները քաղված են՝ «Գրական սալոններ», Զ (Ատոմ Յարճանյան (Սիամանթո), Կ. Պոլիս, 1913, էջ 24—26, 27—28։ Սիամանթոյի մասին այս բանախոսությունը Վարուժանը կարդացել է 1913 թ. հունիսի 2-ին «Եսայան սանուց միության» վեցերորդ գրական սալոնին։

8 Չհաջողվեց պարզել, թե Արփիարյանը որտեղ է զուգահեռ անցկացրել Ակնի և Հնդկական Ագնիի միջև։

9 Սիամանթոյի «Ափ մը մոխիր, հայրենի տուն...» բանաստեղծության Ա. քառյակի վերջին տողն է, բնագրում՝ «Վարեն, ահեղավազ Եփրատին կ'ունկնդրեի...»։

10 Փարիզում Սիամանթոն երեք տարի հաճախել է Սորբոնի բանասիրության ֆակուլտետը։

11 Գտնվելով Եվրոպայում՝ 1897—1908 թթ., Սիամանթոն բուժման նպատակով հաճախ եղել է Շվեյցարիայում։

12 Սիամանթոյի «Հայրենի հրավերներ» լույս է տեսել 1909 թ.:

13 «Ռուբինյան նիրուն» կենսավետությունը հետագայում Վ. Թեքեյանը համարում էր Վարուժանի ստեղծագործության բնորոշ առանձնահատկությունը (տե՛ս «Յառաջ», 1919, № 36)։

14 Սիամանթոյի «Դյուցազնորեններ» լույս է տեսել 1902-ին, Փարիզում:

15 «Հայորդիներ» շարքը վերաբերում է 1906 թ.:

16 «Հոգեվարքի և Հույսի Ջահեր» վերաբերում է 1907 թ.:

17 Նկատի ունի Ռ. Զարդարյանի «Ցայգալույսը»՝ 1910, Կ. Պոլիս:

18 Հին հնդկական էպիկական պոեմ:

19 Վիրգիլիոսի «Էնեականը»։

20 Օսիան ըստ ավանդության ապրել է մ. թ. ա. III դ. Իռլանդիայում և երգել է իր հոր՝ Ֆինն Մակ-Կումհալի և նրա զինակիցների սխրանքները։ Նրա մասին զրույցները դարերով պատմվել են Շոտլանդիայում և հատկապես Իռլանդիայում։

21 Տ. Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմը։

22 Նկատի ունի Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազնը» (1858):

Վարդգես Ահարոնյանին—հատվածը քաղված է՝ Դ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 207. Թվագրված է՝ 1914, մարտի 26, Պոլիս։

23 Նկատի ունի իր «Հեթանոս երգերը»՝ 1912, Կ. Պոլիս:

24 Առել է՝ Գենտի համալսարանի գրադարանից։

Վ. ԹԵՔԵՅԱՆ

Հայկական ճգնաժամին վրա—հատվածը քաղված է՝ «Շիրակ», 1905, № 7, էջ 56—57. ստորագրված է՝ Վ. Թեքեյան։

Ազգային տեսություն—հատվածը քաղված է՝ «Շիրակ», 1909, № 20, էջ 443, ստորագրված է՝ Վահան Թեքեյան։

«Բյուզանդ» ամառը—հատվածը քաղված է՝ Վ. Թեքեյան, Ամբողջական երկեր, հ. 8, Գահիրե, 1950, էջ 74—75։

1 «Բյուզանդ» ամառը վերաբերում է «Բյուզանդիոն» քաղաքական, գրական և գիտական օրաթերթի (1896—1918, Կ. Պոլիս) և նրա խմբագիր Բյուզանդ Քեչյանի գրասպայքարին, որը և անդրադառնում է գանել վերնագրում:

Լևոն Զավեն Սուրմելյանին—երեք նամակից հատվածները քաղված են՝ «Վահան Թեքեյանի նամակները Լևոն-Զավեն Սուրմելյանին» գրքից. Նյու Յորք, 1950, էջ 33—34, 39, 77—79։

2 Ա. Չոպանյանին հասցեագրած՝ Վաննա, 18 հուն. <1> 923 նամակում Թեքեյանը գրում է. «Այս քանի մը օրվան լուրերը հուսահատեցուցիչ են. Լոզանը կ'երևի թե բոլորովին ճաղեց մեր խնդիրը. եթե նույնիսկ պզտիկ ձեռք մը բաց թողված է (Ազգերու ընկերակցություն կամ ուրիշ անունով, ինչպես հավանական է), պետք չէ, որ առավ ինքզինքնիս խաբենք և լրջորեն մտածելու ենք այսուհետև մեր ընելիքի մասին, որ ամեն պարագայի մեջ չի կրնար մինչև հիմա մեր ըրածին նման ըլլալ, իմ մտածումս այս մասին արմատական է» (Չարենցի անվան ԳԱԹ, Արշ. Չոպանյանի ֆոնդ, վ. 2337):

Ակներևաբար Լոզանի կոնֆերանսից հետո Թեքեյանի «արմատական» մտածումն այն է, ինչ, ի դեմս Սուրմելյանի, հանձնարարում է հայ երիտասարդ սերնդին:

Պատերազմը—հատվածը քաղված է՝ Ե. Օտյան. Եր, Երևան, 1956, էջ 747—748։ Ըստ Եր առաջին անգամ տպագրվել է մամուլում 1904 թ. դեկտեմբերին։

1 Խոսքը վերաբերում է ցարական Ռուսաստանի պարտությանը ռուս-ճապոնական պատերազմում։

2 1814—1815 թթ. Վիեննական համաժողովը գումարվել է Նապոլեոնյան կայսրության ջախջախումից հետո. համաժողովին ուղղություն էր տալիս Ռուսաստանը։

3 Ալեքսանդր I ցարը եղել է 1815 թ. ստեղծված այդ դաշնակցության կազմակերպիչներից մեկը, որը կյանքի էր կոչված միջազգային չափերով ճնշելու հեղափոխական և ազատագրական շարժումները։

4 Նկատի ունի 1895—1896 թթ. Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր, հետագայում Թուրքիայում դեսպան Լոբանով-Ռոստովսկուն, որի նման կոչերը արձակում էին Աբդուլ Համիդի ձեռքերը՝ ջարդելու արևմտահայությանը։

Արքայության Երկրի—քաղված է նույն գրքից, էջ 748—749. առաջին անգամ տպագրվել է մամուլում, 1905 թ.։

5 Ավետարան ըստ Հովհ., Ի, 1—18։

6 Գործք առաքելոց. ԺԳ, 30—41։

Անմե՞ռ, Անմե՞ռ...—քաղված է՝ Ե. Օտյան. ԵԺ, հ. 4, Երևան, 1962, էջ 674—676։ Առաջին անգամ տպագրվել է մամուլում, 1909 թ.։

7 Ըստ հատորի ծանոթագրության՝ այս ֆելիետոնը թուրքական «սահմանադրական» հեղաշրջման ռեակցիոն էության դեմ Օտյանի առաջին ու ամենասուր ելույթներից է։ Թուրքական պառլամենտի նախագահ Ահմեդ Ռզա բեյին և մյուս «հեղափոխական վարիչներին» Օտյանը դնում է արյունարբու Աբդուլ Համիդի կողքին։

8 Օտյանը նկատի ունի երիտասարդ թուրքերի առավել ձախ՝ դեմոկրատական թևը, որի ներկայացուցիչներին Աբդուլ Համիդը ամբողջովին ոչնչացրեց հեղաշրջումից անմիջապես առաջ։ Ուշագրավ է, որ հետագայում նույն բախտին արժանացան թուրք կոմունիստները՝ Մուստաֆա Սուբխին և մյուսները, որոնք գնդակահարվեցին 1921 թ. հունվարի 28-ին, Տրապիզոնում։

Մեր ողջույնը—քաղված է նույն հատորից, էջ 684—686։ Տպագրվել է մամուլում, 1910 թ.։

9 «Կառափնատ» քաղաքական և երգիծական պատկերազարդ շաբաթաթերթը հրատարակվել է 1909—1910 թթ. Կ. Պոլսում, խմբագիր հրատարակիչ՝ Ա. Անտոնյան, ապա նաև՝ Ե. Օտյան։

10 Հնօրյա ժողովուրդ, ապրել է Պաղեստինի հարավ-արևմուտքում. մշտական թշնամական հարաբերություններ է ունեցել իսրայելցիների հետ։

11 Աստվածաշնչում հիշվող ամովրհացիները (սեմական ցեղերի արևմտյան ճյուղը) մ. թ. ա. XVIII—XVII դդ. հիմնել են Հին բաբելական թագավորությունը, նվաճել Միջագետքը. մ. թ. ա. XII—X դդ. ձուլվել են հրեաներին։

12 Հնօրյա ժողովուրդ. ապրել են Բաբելոնից արևելք, ըստ Աստվածաշնչի սերում են Սեմի (Նոյի որդու) ավագ որդի Ելամից։

13 Դաշնակցականներն ու հնչակյանները։

14 Կ. Պոլսում 1896-ից հրատարակվող «Բյուզանդիոն» ամենօրյա «ազատ հայաթերթի» խմբագրապետը։

15 Կ. Պոլսում 1909-ից հրատարակվող «Տաճար» կրոնական եկեղեցական պատկերազարդ շաբաթաթերթի խմբագրապետը։

16 Կ. Պոլսում 1909-ից հրատարակվող «Կոհակ» պատկերազարդ շաբաթաթերթի տեր և տնօրենը։

17 Կ. Պոլսում 1908-ից հրատարակվող «Ձայն հայրենյաց» ազգային, գրական և քաղաքական շաբաթաթերթի խմբագիրներից։

ԵՐՈՒԽԱՆ

Հայ Վերածնունդը—տպված է Ալեքսանդրիայում հրատարակված «Սիսվան» ազգային, գրական, բանասիրական» ամսաթերթից, 1905, № 2, էջ 33—36։ Ստորագրված է՝ Ե. Սրմաքեշխանլյան։

Ռ. ԶԱՐԴԱՐՅԱՆ

Արշակ Չոպանյանին—Հատվածը տպված է՝ «Արևմտահայ գրողների նամակները», էջ 231։

Դանիել Վարուժանին—Հատվածը տպված է՝ Դ. Վարուժան, Նամականի, էջ 258։

Բռնավորին արցունքը—Հատվածը տպված է՝ «Ամենուն տարեցույցը», 1909, էջ 114. Թվագրված է՝ Բերա, 1/14 նոյ. 1908։

Մեռնողները և ապրողները—տպված է՝ «Ազատամարտ», 1910, № 219, ստորագրված է՝ Ռ. Զարդարյան։ Գրել է Կիլիկիայի 1909 թ. ջարդի տարելիցին։ «Ազատամարտ» օրաթերթը լույս է տեսել 1909—1912 թթ. Կ. Պոլսում, արտոնատեր խմբագրապետ՝ Ռուբեն Զարդարյան։

1 Նկարագրվող դեպքերը, ինչպես, «վերջին կամուրջ» չեղան Կիլիկիայի հայության համար. դեռ սպասվում էին ահեղ փորձություններ, ներառյալ 1919—1920 թթ. ջարդերը։

Հնդկաստանը կ'արթննա—«Ազատամարտում» տպագրված հոդվածաշարքի այս հատվածը տպված է թերթի 1910 թ. № 449-ից։

2 Ռուսական հեղափոխության ազդեցությամբ 1905-ից Հնդկաստանում վերելք է ապրում ազգային-ազատագրական շարժումը։ Անգլիական գաղութարարների դեմ տեղի են ունենում գործադուլներ, հեղափոխական ելույթներ։ Այդ առթիվ Վ. Ի. Լենինը 1908 թ. գրում էր. «Քաղաքակիրթ» անգլիական կապիտալիստների բնիկ ստրուկները Հնդկաստանում հենց վերջին ժամանակներս տհաճ անհանգստություն են պատճառում իրենց «տերերին»։ Վերջ չկա այն բռնություններին և այն կողոպուտին, որը կոչվում է Հնդկաստանի անգլիական կառավարման սիստեմ։ Աշխարհում ոչ մի տեղ,— բացառությամբ, իհարկե, Ռուսաստանի,— չկա մասսաների այդպիսի աղքատություն, բնակչության խրոնիկական սով» (Վ.Ի. Լենին, Եժ, հ. 17, էջ 212)։

Հեղափոխությունը դաժանորեն ճնշվում է, անգլիական դատարանը 1908 թ. տաժանակրության է դատապարտում ազգային կուսակցության պարագլուխ Տիլակին։

3 Խոսքը, հավանաբար, վերաբերում է Թեոդոր Ռուզվելտին, հանրապետական կուսակցությանը պատկանող ամերիկյան պետական գործիչ, ԱՄՆ-ի 26-րդ պրեզիդենտ (1901—1909), որի վարչապետության ժամանակ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը նվաճողական էր։

4 1899—1905 թթ. Հնդկաստանի փոխնախագահ էր Քերզոնը, մոլեռանդ գաղութաբար, որի օրոք բոլոր միջոցներով ճնշվում և շահագործվում էր հնդիկ ժողովուրդը։

5 Զարդարյանը որոշակիորեն համակրանքով է վերաբերվում ռուսական անցած (1905) և գալիք հեղափոխություններին։

## ԱՌԱՆՁԱՐ

Մեր գրականության շուրջը—հատվածը քաղված է՝ «Մուրճ», 1903, № 1, էջ 42։ Հոդվածը թվագրված է՝ 11/24 դեկտեմբեր, 1902, Մյունխեն, ստորագրված՝ Առանձար։

1 Նկատի ունի 1895—1896 թթ. զանգվածային կոտորածները Արևմտյան Հայաստանում։

## Զ. ԵՍԱՅԱՆ

Գործադուլը—քաղված է՝ «Ազատամարտ», 1910, № 411, ստորագրված է՝ Զապել Եսայան։

1 1910 թ. հոկտեմբերի 4-ի հանրապետականների ապստամբությամբ տապալվում է միապետությունը, և Պորտուգալիան հռչակվում է հանրապետություն։

2 «Ազատամարտի» № 412-ում արդեն հաղորդվում է, որ, հոկտեմբերի 25-ին հանդես գալով Ֆրանսիայի խորհրդարանում՝ Բրիան հայտարարել է, թե «անգիտորեն պետք հետապնդել դրդիչները շարժումին, որ անշահ հեղափոխական բնույթ ունի»։ Նախկին սոցիալիստ վարչապետի պաշտոնում արդեն հանդես էր գալիս բոլորովին հակառակ դիրքերից։ Գործադուլը վերջանում է փոխադարձ զիջումներով։

3 «Յումանիտե» ամենօրյա լրագիրը հիմնել է Ժ. Ժորեսը, 1904 թ., որպես ֆրանսիական սոցիալիստական կուսակցության օրգան. 1920-ից ֆրանսիական կոմունիստական կուսակցության օրգան։

Զարդարյանի գրականությունը—հատվածը քաղված է՝ «Գրական ասուլիսներ», Գ, Կ. Պոլիս, 1913, էջ 9—10։

4 Զ. Եսայանի ելույթն է 1913 թ. մայիսի 5-ին Պերայի Եսայան վարժարանում Կոմիտասի նախագահությամբ կազմակերպված գրական IV ասուլիսին՝ նվիրված Ռ. Զարդարյանի «Ցայգալույսին»։

Արծիվը կը սավառնի—քաղված է՝ «Էջեր հայ գրականութենեն», հ. Ա, էջ 243—245։

<Սեար Սեարյանին>—հատվածը քաղված է՝ Զ. Եսայան, Նամակներ, Երևան, 1977, էջ 219—220. ծանոթագրությունները ևս մեծապես քաղված են նույն գրքից։

5 «Բանվորը»՝ օրգան Ամերիկայի կոմունիստական կուսակցության, լույս է տեսել 1922—1934 թթ., Նյու Յորքում։ Սկզբում եղել է Հայ բանվորական կուսակցության օրգան, խմբագիր՝ Ս. Սեարյան։

Սեար Սեարյանին—քաղված է նույն գրքից, էջ 228—229։

6 Մեծ եղեռնից ազատված Զ. Եսայանը Բուլղարիայի և Ռումինիայի վրայով 1915 թ. նոյեմբերին հասնում է Թիֆլիս։ Տեղի մտավորականության, մասնավորապես Հովհ. Թումանյանի հոգատարությամբ շրջապատված ծավալում է գրական-հասարակական գործունեություն, ընդգրկվում Հայ գրողների կովկասյան ընկերության մեջ։

7 Մերձավոր Արևելքի հարցերին նվիրված Լոզանի կոնֆերանսը տեղի է ունեցել 1922 թ. նոյեմբերին։ Կոնֆերանսը, չեղյալ հայտարարելով Սևրի դաշնագիրը (1920, օ-

զատոսի 10), որով երբ Թուրքիան ճանաչում էր Հայաստանը «որպես ազատ և անկախ պետություն»,— բոլորովին լռության մատնեց Հայկական հարցը:

8 Հայոց հարցը 1919-ից միջազգային ասպարեզում ներկայացնում էին երկու պատվիրակություն. Նուբար փաշայի գլխավորած պատվիրակությունը ներկայացնում էր արևմտահայության շահերը, Ա. Ահարոնյանինը՝ արևելահայության: Պատվիրակները մեծ մասամբ գործում էին Փարիզում:

Հովհաննես Ավագյանին—հատվածը քաղված է «Արևմտահայ գրողների նամականի», էջ 350—351:

9 «Երևան» քաղաքական, ընկերական, գրական պարբերաթերթը (խորհրդային կողմնորոշումով) հրատարակվել է 1925—1930 թթ., Փարիզում:

Պրոմեթևս ազատագրված—հատվածները քաղված են նույնանուն ճամփորդական նոթերից՝ Մարսել, 1928, էջ 71, 72, 81, 262—263: Գիրքը Եսայանը գրել է 1926 թ., Սովետական Հայաստան այցելելուց հետո:

## Ա. ԶՈՒՐԱԲՅԱՆ

Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն—հատվածները քաղված են՝ «Պրոլետարիատ», 1902, № 1, էջ 5—6, 7—8, 9—10, 11: Ինչպես գրում է Խ. Բարսեղյանը՝ «Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն» ծավալուն հոդվածում, որը, ամենայն հավանականությամբ, գրել է Ա. Զուրաբյանը, ցույց է տրված Ռուսաստանի և Կովկասի հասարակական զարգացման պատկերը, հեղափոխական պրոլետարիատի ձևավորումը և սոցիալ-դեմոկրատիայի դերը» («Մարքսիզմի տարածումը Հայաստանում» (1880-ական թթ.—1904 թթ.), հ. 1, Երևան, 1967, էջ 306):

Ըստ Բ. Կնունյանցի «Ընտիր երկերի» (Երևան, 1978, էջ 623) համապատասխան ծանոթագրության՝ «Պրոլետարիատ» առաջին հայ մարքսիստական լրագիրը, լույս տեսավ Թիֆլիսում, 1902 թ. հոկտեմբերի վերջերին, որպես օրգան հայ սոցիալ-դեմոկրատների միության: ...Այնուհետ հրապարակվեց «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստը»: 1903 թ. մարտին տեղի ունեցավ Կովկասյան կազմակերպությունների առաջին համագումարը, որը որոշեց հրատարակել Կովկասյան Միության տպագիր օրգան «Պրոլետարիատի կռիվը» անունով. հայերեն «Պրոլետարիատը» միացնելով վրացական «Բրձոլայի» («Կռիվ») հետ: Թերթի հաջորդ համարը լույս տեսավ նոր՝ «Պրոլետարիատի կռիվ» անվամբ»:

Ըստ նույն գրքի մի այլ ծանոթագրության (էջ 623) Բ. Կնունյանցը՝ 1902 թ. «ամառանը և աշնանը Ս. Շահումյանի, Ա. Զուրաբյանի, Ս. Խանոյանի, Ա. Խումարյանի և ուրիշների հետ մասնակցում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» կազմակերպմանը և նրա օրգան «Պրոլետարիատ» թերթի հրատարակմանը»:

1 Լրիվ անվանումը՝ Հայ հեղափոխական դաշնակցություն. բուրժուա-նացիոնալիստական կուսակցություն, ստեղծվել է 1890 թ., Թիֆլիսում: Ծրագիրն ու կանոնադրությունը ընդունվել են կուսակցության առաջին համագումարում (1892):

2 Դաշնակցության օրգան «Դրոշակը» (նախ կիսամսյա, ապա ամսաթերթ) լույս է տեսել 1891—1930 թթ., Ժնևում:

3 Նկատի ունի 1887 թ. Ժնևում հիմնադրված Հնչակյան կուսակցությունը (հայ ազգային մանրբուրժուական սոցիալիստական կուսակցություն) և նրա կենտրոնական օր-

դան «Հնչակ» հասարակական-քաղաքական ամսաթերթը. լույս է տեսել 1887—1915 թթ. Մոնպելիեում, Փարիզում, Աթենքում, Լոնդոնում։

4 Նկատի ունի ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի կազմակերպած բանվորների ցույցը 1901 թ. ապրիլի 22-ին։

5 Ինչպես ասված է «Искра»-ի 1902, № 24-ում տպագրված Բ. Կնունյանցի «Նամակ Բաքվից» հոդվածում, Բաքվի բանվորների ցույցը տեղի է ունեցել 1902 թ. ապրիլի 21-ին (տե՛ս նշվ. գիրքը, էջ 30)։ Բաթումի ցույցը գլխավորում էր 1901 թ. ստեղծված ՌՍԴԲԿ Բաթումի կոմիտեն։

## Բ. ԿՆՈՒՆՅԱՆՑ

Նոր քաղաք—հատվածները քաղված են՝ Բոգդան Կնունյանց. ԸԵ, Երևան, 1978, էջ 75—76, 79—80, 83—85։ Տպագրվել է՝ «Իսկրա», 1903, № 49, Կովկասից ստորագրությամբ։ Նույն գրքից են քաղված և ծանոթագրությունները։

«Իսկրա» («Искра»—«Կայծ») պարբերականը լույս է տեսել 1900—1905 թթ.։

1 Ցարական կառավարության, մասնավորապես 1897—1904 թթ. Կովկասի կառավարչապետ Գոլիցինի ռուսացման քաղաքականության դրսևորումներից էր նաև հայկական եկեղեցու գույքի բռնագրավման վերաբերյալ 1903 թ. հունիսի 12-ի օրենքը։ Այն նախատեսված էր դեռևս 1898-ին և ձգձգվել էր խռովությունների երկյուղից։ Օրենքի նպատակն էր կառավարության հսկողությանը ենթարկել քիչ թե շատ անկախ հայկական եկեղեցին։

2 Նկատի ունի մասնավորապես Բաքվի բանվորների գործադուլները 1903 թ. ամռանը, որի մասին Բ. Կնունյանցի գրած «Բաքվի բանվորների անընդմեջ գործադուլների պատճառները» վերնագրով ծավալուն հոդվածը (տե՛ս նշված գիրքը, էջ 67—74) տպագրվել է «Իսկրայի» 1903 թ. № 47-ում (սեպտեմբերի 1)։

3 Նախկինում Գանձակ, ներկայիս Կիրովաբադ քաղաքը։

4 Կնունյանցի հոդվածը տեղեկացնում է, որ նույնանման ելույթներ են եղել Երևանում (օգոստոսի 3-ին), որ վերջացել է «մի քանի հազար հոգուց բաղկացած վիթխարի բազմության» և զորքի ու կոզակների ընդհարումով, ապա օգոստոսի 31-ին՝ Թիֆլիսում, սեպտեմբերի 2-ին Բաքվում՝ դարձյալ արյունահեղ ընդհարումներով. կատարվել են բազմաթիվ ձերբակալություններ»։

Դաս դասի դեմ—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 111—114։

5 Ըստ գրքի համապատասխան ծանոթագրության սա՝ «Մոսկվայի դատական պալատում, նիստի երկրորդ օրը՝ 1905 թ. մարտի 31-ին արտասանած ճառն է։ Այն արձանագրել է դատապաշտպան Գաննուշկինը։ Վ. Ի. Լենինի ցուցումով Կնունյանցի ճառը, որպես ցարիզմը մերկացնող կարևոր ագիտացիոն նյութ, լույս տեսավ առաջին անգամ նույն թվականի ապրիլի 17-ին բոլշևիկյան «Վպերյոդ» թերթի № 16-ի հավելվածի ձևով «Դաս դասի դեմ» վերնագրով։ Այնուհետև այն բրոշյուրի ձևով հրատարակվեց մի քանի լեզուներով՝ բոլշևիկների Բաքվի, Մոսկվայի կոմիտեների և այլ կազմակերպությունների կողմից»։

«Վպերյոդ» բոլշևիկյան անլեգալ շաբաթաթերթը հրատարակվել է Վ. Ի. Լենինի խմբագրությամբ, Ժնևում, 1904-ի դեկտեմբերի 22-ից—1905 թ. մայիսի 5-ը։

6 Ռուս վիրաբույժ և մանկավարժական գործիչ Ն. Ի. Պիրոգովի հիշատակին Ռուս

բժիշկների միության համագումարներ. առաջինը տեղի է ունեցել 1885 թ., վերջինը՝ 1913-ին: 1905 թ. եղել է արտակարգ:

7 «Московские ведомости» միապետական թերթը հրատարակվել է 1756—1917 թթ.:

8 Նկատի ունի 1904 թ. աշնանից ծայր առած հեղափոխական ելույթները Ռուսաստանում:

Հեղափոխության բնբանում է—Հատվածները քաղված են նույն գրքից, էջ 142—143, 144: Տպագրվել է «Новая жизнь», 1905, № 17, Բ. Ռադին ստորագրությամբ: «Новая жизнь» առաջին անլեգալ լրագիրը Ռուսաստանում լույս է տեսել 1905 թ. հոկտեմբերի 27-ից դեկտեմբերի 3-ը:

## ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆ

Ղազարոս Աղայանին՝ նրա գործունեության հառասնամյակի առթիվ—Հատվածները քաղված են՝ Ստ. Շահումյան. ԵԼԺ, հ. 1, Երևան, 1975, էջ 28, 29, 35, 37: Նույն հրատարակությունից են քաղված նաև ծանոթագրությունները:

Ճառը արտասանել է Ղ. Աղայանի գրական-հասարակական գործունեության 40-ամյակին նվիրված տոնահանդեսին՝ 1902 թ. մայիսի 19-ին, Թիֆլիսում: Լույս է տեսել նույն թվականին՝ խմբագրատիպ տետրով:

Սկիտալեց. Պատմվածքներ և երգեր, հատ. I, ՍՊԲ. 1902 թ.—Հատվածները քաղված են նույն հատորից, էջ 40, 41—42: Ըստ հատորի ծանոթության Շահումյանի այս հոդվածը գրված է եղել «Новое обозрение» թերթի համար, կովկասյան գրաքննչական կոմիտեն մերժել է 1902 թ. մայիսի 15-ին:

1 Ըստ հատորի ծանոթագրության ռուս գրող Ս. Գ. Սկիտալեցը կյանքի վերջին տարիներին ակնարկների շարք է գրել Վ. Ի. Լենինի և Մ. Գորկու մասին:

Հասարակական ուժերի խմբավորումը—Հատվածները քաղված են՝ Ստ. Շահումյան. ԵԼԺ, հ. 2, Երևան, 1976, էջ 34—35, 36—37: Տպագրվել է՝ «Волна», 1908, № 1: Բոլշևիկյան այդ ամսագիրը լույս է տեսել Ստ. Շահումյանի խմբագրությամբ, 1908 թ., Բաքվում, 2 համար:

2 Նկատի ունի Ա. Ս. Պուշկինի միջակի (1833) պոեմին:

3 Խոսքը վերաբերում է Պ. Ա. Ստոլիպինի 1906 թ. նոյեմբերի 9-ին հրապարակած հողային օրենքին:

4 Ծայրահեղ հետադիմական, սևհարյուրակային միապետական կազմակերպություն Ռուսաստանում՝ 1905—1917 թթ.:

Հոկտեմբերի 17-ը—քաղված է նույն հատորից, էջ 100—104: Տպագրվել է «Бакинский рабочий», 1908, № 13—14: Թերթը լույս է տեսել Բաքվում, 1906 թ. (անլեգալ) և 1908 թ. (լեգալ): 1906-ին խմբագրական կազմում էին Պ. Ջափարիձեն, Վ. Նոգինը և ուրիշներ: 1908 թ.՝ Ս. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Ս. Սպանդարյանը և ուրիշներ: Նորից հրատարակվել է 1917 թ. ապրիլից և շարունակվել մինչև Բաքվի կոմունայի անկումը (1918, հուլիսի 31):

5 Տողատակին տրված է խմբագրական ծանոթություն. «Կեղծ, թվացող խաղաղություն: «На Шипке все спокойно»— Վ. Վերեշչագինի ռուս-թուրքական պատերազմին (1877—1878) նվիրված նկարաշարի կտավներից մեկի անունը»:

Գորկու մասին—Հոդվածները քաղված են նույնից, էջ 155—156, 159—160, 167։ Տպագրվել է «Современная жизнь», 1911, № 1, Ստեփին ստորագրությամբ։ Բոլշևիկյան այդ ամսագիրը՝ բոլշևիկների և մենշևիկ կուսակցականների բլոկի օրգան,— Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսել Բաքվում, 1911 թ. գարնանը, 3 համար։

6 «Современный мир» գրական, գիտական-քաղաքական ամսագրին աշխատակցել են Մ. Գորկին, Դ. Բեդնին։ 1914—1918 թթ. այն դարձել է սոցիալ-շովինիստների օրգան։

Մ. Գորկու հոդվածը տե՛ս М. Горький. Собр. сочинений в тридцати томах, т. 24, М., 1953, стр. 99—137

Բանվորական մամուլի օրը—Հոդվածները քաղված են նույնից, էջ 334—335։ Տպագրվել է «Наша жизнь» («Մեր կյանքը»՝ բոլշևիկյան լեգալ շաբաթաթերթ, լույս է տեսել 1914 թ. ընդամենը 3 համար, Շահումյանի խմբագրությամբ), 1914, № 1։

## Ս. ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

Դաժան ամնիստիայի մասին—Հոդվածը քաղված է՝ Ս. Սպանդարյան, Եր, հ. 1, Երևան, 1959, էջ 21—22։ Տպագրվել է՝ «Կայծ», 1906, № 13։

1 1905—1917 թթ. ներկայացուցչական սահմանափակ իրավունքներով հաստատություն Ռուսաստանում։

Հեղափոխության ալիքը բարձրանում է—քաղված է նույն հատորից, էջ 40—41։ Տպագրվել է՝ «Կայծ», 1906, № 20։

2 Նկատի ունի 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբությունը։

3 Ռուսաստանում 1905 թ. ձևավորված լիբերալ-միապետական բուրժուազիայի կուսակցության՝ սահմանադրական-դեմոկրատների (конституционные демократы) անդամները։

4 Առաջին պետական դումայի գյուղացիական դեպուտատներից 1906 թ. կազմավորված մանրբուրժուական դեմոկրատական խմբավորում՝ տրուդովիկներ կամ «Трудовая группа»։

5 1848—49 թթ. գերմանական հեղափոխության տարիներին Ֆրանկֆուրտում գումարված համագերմանական ազգային ժողովը երկրի միավորումն իրականացնելու փոխարեն վերածվեց դատարկ խոսարանի և ցրվեց։ Պետական դուման համեմատելով «ֆրանկֆուրտյան խոսարանի» հետ՝ այդպիսի հեռանկար է գուշակում Սպանդարյանը դումային։

Գյուղացիական հարցը և սոցիալ-դեմոկրատիան—Հոդվածը քաղված է նույն հատորից, էջ 117—118։ Տպագրվել է՝ «Նոր խոսք», 1906, № 3։

6 Հոդվածը Վ. Ի. Լենինի «Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն» հայտնի հոդվածի առաջին արձագանքներից է։

Ուրվագծեր հայկական կյանքից—Հոդվածը քաղված է նույն հատորից, էջ 232—233։ Տպագրվել է՝ «Новая речь», 1910, № 78, Իգդոյ ստորագրությամբ։ Այդ լեգալ օրաթերթը լույս է տեսել 1909—1910 թթ. Թիֆլիսում, ապա վերանվանվել է «Закавказская речь»։

7 Ըստ հատորի խմբագրական ծանոթության՝ «Առանց զայրույթի և աչառության, անկողմնակալ»։

«Սեր և խարդավանք»—Հոդվածը քաղված է՝ Ս. Սպանդարյան, Եր, հ. 2, Երևան,

*1959, էջ 88—89։ Տպագրվել է՝ «Курьер-Копейка», 1910, № 147, ստորագրված է* Н. О.։ *Օրաթերթը հրատարակվել է 1909—1916 թթ., Թիֆլիսում։*

*8 Սպանդարյանի գրախոսությունը վերաբերում է Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում ռուսական դրամատիկական խմբի «Սեր և խարդավանքը» դրամայի ներկայացմանը՝ 1910 թ. հոկտեմբերի 14-ին։*

Թիֆլիս, 13 հունվարի—*Հատվածը բերված է նույն հատորից, էջ 150—151։ Տպագրվել է* «Листок-Копейка», *1911, № 9։ Օրաթերթը լույս է տեսել Թիֆլիսում 1911 թ. հունվարի 6-ից—ապրիլի 23-ը։*

*9 Մոսկվայի համալսարանը հիմնադրվել է 1755 թ. հունվարի 12-ին՝ «Տատյանայի օրը»* («Татьянин день»), *այդ պատճառով էլ այդ օրը Ռուսաստանում համարվել է ուսանողական տոն։*

*10 Խմբագրական ծանոթությամբ՝ սնող մայր։*

«Պարտիականության և անպարտիականության» մասին—*Հատվածը բերված է նույն հատորից, էջ 166—167։ Տպագրվել է՝* «Листок-Копейка», *1911, № 21, Ս. Օլգին ստորագրությամբ։*

Գրախոսական, Հ. Հակոբյան, «Նոր առավոտ» պոեմ—*բերված է նույն հատորից, էջ 169։ Տպագրվել է* «Листок-Копейка», *1911, № 21, Իգդոյ ստորագրությամբ։*

*11 Հ. Հակոբյանի «Նոր առավոտ» պոեմը լույս է տեսել՝ 1909 թ., Թիֆլիսում։*

*12 Հակոբյանի թարգմանած այս ժողովածուն լույս է տեսել՝ 1904 թ. Թիֆլիսում։*

## Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ազատն աստվածը—*բերված է Հ. Հակոբյան, ԵԺ, հ. 3, Երևան, 1958, էջ 100—101։ Ըստ հատորի ծանոթագրության ինքնագրերից մեկն ունի հեղինակի այս ծանոթագրությունը. «Առաջին հայ սոցիոլոգ Մ. Նալբանդյանի մահվան հիսնամյակի տարեդարձի առթիվ, 31 մարտի, 1866 թ.»։ Առաջին անգամ տպագրվել է «Պայքար» (գրական, հասարակական-քաղաքական շաբաթաթերթ), 1916, № 3։*

*1 Ասել է՝ երբ ընդունվել է բոլշևիկյան կուսակցության շարքերը՝ 1904 թ.։*

Բագրատին—*Հատվածաբար բերված է նշված հրատարակությունից, հ. 4, Երևան, 1958, էջ 308—309։ Ըստ հատորի ծանոթագրության՝ «Բագրատի անձնավորությունը պարզել չհաջողվեց։ Հայտնի չէ, նամակը ուղարկվա՞ծ է, թե՞ ոչ։ Սակայն թվում է Հակոբյանի նամակի* հասցեատեր *պետք է որ լինի Բագրատ Շահ-Պարոնյանը։ Ըստ* Ս. Սպանդարյան, *«Հոդվածներ» (Երևան, 1949) գրքի էջ 209-ում զետեղված ծանոթագրության, նա եղել է՝ «Սուրեն Սպանդարյանի և նրա հոր՝ Սպանդար Սպանդարյանի, մտերիմ մարդկանցից մեկը։ Երկար տարիներ աշխատել է որպես «Նոր դարի» սրբագրիչ և քարտուղար։ Սուրեն Սպանդարյանի աքսորում եղած տարիներին մտերմական սերտ կապ է պահպանել նրա հետ և ջանասիրությամբ կատարել է նրա հանձնարարությունները։ Շահ-Պարոնյանը միևնույն ժամանակ աքսորում գտնվող բոլշևիկներին նյութական օժանդակություն կազմակերպիչ օղակներից մեկն էր։ Սովետական կարգեր հաստատվելուց հետո աշխատել է «Մարտակոչում» (Թիֆլիս) որպես սրբագրիչ։ Վերջին տարիներին անհատական թոշակառու էր»։*

*2 Հ. Սոլովյանի դասախոսությունը՝ «Նորագույն հայ բանաստեղծության հիմնական մոտիվները», տեղի է ունեցել 1916-ի փետրվարի 21-ին, Թիֆլիսի Հավլաբարի ակումբի դահլիճում։*

Մի բեկոր իմ հուշերից — Հատվածները քաղված են նշված հրատարակությունից, հ. 3, էջ 37—38։ Ըստ հատորի ծանոթագրության՝ իր կենսագրությունը, ինչպես և հուշագրական այս բեկորները Հակոբյանը շարադրել է 1923—1936 թթ.։

3 Շեքսպիրի «Լիրը Արքա» Պ. Ադամյանը պատրաստել և ներկայացրել է Թիֆլիսում, 1886 թ.։ Հետաքրքրական է, որ Հակոբյանի արձանագրածը լիովին համապատասխանում է ռուսական մամուլի արձագանքներին, որոնց հիման վրա թատերագետ Ռ. Զարյանը հավաստում է, որ Ադամյանի Լիրը ունեցել «հսկայական նշանակություն» (տե՛ս «Հայկական Շեքսպիրագիտություն», 1, Երևան, 1979, էջ 57—88)։

4 1886 թ. Հ. Աբելյանը Թիֆլիսում գիմնաստիկայի, ձայնի, առողջության դասեր է առել Պ. Ադամյանից և միաժամանակ նրա հետ խաղացել։

5 Շեքսպիրի Համլետի դերակատարումով Ադամյանը՝ առաջին անգամ հայ թատրոնում, հանդես է եկել Թիֆլիսում, 1880 թ. նոյեմբերի 20-ին։ Համլետի դերակատարումը մնում է Ադամյանի գլուխգործոցը։

6 Կարլ Գուցկովի «Ուրիել Ակոստայում» Ադամյանը խաղացել է 1884-ից։

7 Ալ. Դյումայի (հայր) «Քինում» խաղացել է 1883-ից։

8 Յարինովը Խանձակի հարուստներից էր, Թիֆլիսի այն գեղատան տերը, որտեղ այդ տարիներին ծառայում էր Հակոբյանը։

Գաման-Բարխուդ — Հատվածը քաղված է նույն հատորից, էջ 297—298։ Գրել է 1933-ին, Թիֆլիսում։ Նույն տեղից են քաղված ծանոթագրությունները։

9 Ռ. Պատկանյանի «Նկարիչ» բանաստեղծության տողերն են։

10 «Հույս» բանաստեղծության տողերն են՝ որոշ փոփոխություններով։

11 «Արի՛ իմ սոխակը» մինչև հիմա էլ ամենատարածված ժողովրդական օրորոցային երգերից է։

Գ. Սունդուկյան — Հատվածը քաղված է նույն հատորից, էջ 313։ Ըստ հատորի ծանոթագրության՝ գրված պետք է լինի 1930-ական թվականներին.

12 Ակնարկում է Սունդուկյանի ծառայելը Կովկասյան փոխարքայությունում։

## ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

Ներկա մոմենտը — քաղված է՝ Ալ. Մյասնիկյան, ԸԵ, Երևան, 1957, էջ 7—8։ Տպագրվել է՝ «Նոր կյանք», 1906, № 2։ Նշված գրքից է քաղված նաև ծանոթագրությունների մի մասը։ «Նոր կյանք» գրական-հասարակական, քաղաքական շաբաթաթերթը հրատարակվել է Նոր Նախիջևանում, 1906—1907 թթ.։

1 Մերժելով 1906 թ. ապրիլի 27-ին հրավիրված Առաջին պետական դումայի բոլոր պահանջները, ցարական կառավարությունը այն արձակել է հուլիսի 8-ին։

2 Նկատի ունի 1905 թ. հոկտեմբերից ծայր առած, ապա 1906-ի հուլիսի 19-ին նոր ուժով բորբոքված Կրոնշտադտի նավաստիների և զինվորների ապստամբությունը։

Երկու կուլտուրական տուն — Հատվածաբար քաղված է նույն գրքից, էջ 77—80։ Տպագրվել է՝ «Մշակ», 1913, № 263։

3 Գրել է հայոց գրի 1500-ամյակի և գրքի տպագրության 400-ամյակի առթիվ։

4 Եզնիկ Կողբացու խրատներից՝ տե՛ս «Եղծ աղանդոց», Երևան, 1970, էջ 85 («Ընչասիրությունը զուգակից է կապաշառության»)։

5 Դարձյալ Կողբացու խրատներից՝ տե՛ս նույն տեղում, էջ 183։

6 Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», լույս է տեսել 1512-ին Վենետիկում։

7 Մ. Նալբանդյանի «Երկու տողից»՝ «Նորա յուրյանց արծաթի թոմբերի տակ միշտ անխոցելի են»։

8 Ռուս բանաստեղծ Ա. Ն. Մայկովի տողերն են՝ «Чем ночь темнее. Тем ярче звезды»:

Արթնացումը—քաղված է նույն տեղից, էջ 117—120։ Տպագրվել է «Մշակ», 1914, № 38։

9 Ավստրիական գրող Լ. Զախեր-Մազոխի անունից, նշանակում է այլասեռության, սեռական սանձարձակության գովերգում։

10 1905 թ. հեղափոխության պարտությունից հետո կյանքի կոչված կրոնական-միստիկական գաղափարաբանները։

11 Տե՛ս Ե. Չարենցի «Հանճարների և աստղերի ուղին» հոդվածը սույն գրքում։

12 «Սեռ և բնավորություն» (1903) գրքից հետո նրա հեղինակի՝ Օտտո Վայնինգերի (գերմանական հրեա), հետևորդների ընկերակցությունները, որոնց «դավանանքը» մոլի կնատյացությունն էր։

Իմ հանդիպումները ընկեր Լենինի հետ—հատվածը քաղված է նույն գրքից, էջ 469—470։ Վ. Ի. Լենինի մասին իր հիշողությունները Ա. Մյասնիկյանը գրի է առել 1924 թ.։ Նույն թվականին տպագրվել է Թիֆլիսում հրատարակվող «Զարյա Վոստոկա» (ռուսերեն) և «Մարտակոչ» թերթերում (ապրիլի 23, 24)։

Առաջին օրաթերթը 1922-ից հրատարակվում է Թիֆլիսում, երկրորդը՝ դարձյալ Թիֆլիսում, 1923—1927 թթ., այնուհետև վերանվանվել է «Սովետական Վրաստան»։

13 Մյասնիկյանը 1921 թ. ապրիլին նշանակվել էր Հայկական ՍՍՀ ժողկոմխորհի նախագահ և ռազմական գործերի ժողկոմ. Նրա գլխավորած Սովետական Հայաստանի կառավարության նոր կազմը տե՛ս «Կոմունիստ», 1921, № 90։

14 Վ. Ի. Լենինի նամակը՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին» (Վ. Ի. Լենին, Եր., հ. 32, Երևան, 1952, էջ 402—404), գրվել է 1921 թ. ապրիլի 14-ին և Անդրկովկաս է ուղարկվել Ա. Մյասնիկյանի միջոցով։

## Ե. ՉԱՐԵՆՑ

Ի՞նչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը—հատվածները քաղված են Ե. Չարենց, ԵԺ, հ. 6, Երևան, 1967, էջ 9, 10։ Ծանոթագրությունները նույնպես քաղված են նույն հրատարակությունից։ Հոդվածը գրել է հայտնի «Երեքի դեկլարացիայի» առիթով 1922 թ. հունիսի կեսերին։

1 1920 թ. մայիսյան դեպքերը և 1921 թ. քաղաքացիական կռիվները. տե՛ս Գ. Գալոյան, Հերոսական մայիսից—հաղթական նոյեմբեր, Երևան, 1980։

Արդի ռուսական պոեզիան—հատվածը քաղված է նույն հատորից, էջ 51—55։

2 Ակնարկում է Նիկոլայ II-ի 1905 թ. հոկտեմբերի 17-ին հրապարակած մանիֆեստը, դրանից հետո ստեղծված «Հոկտեմբերի 17-ի միությունը», որը փաստորեն ցարի շուրջն էր համախմբում խոշոր բուրժուազիային և բուրժուականացող կալվածատիրությանը։

3 «Вехи» ժողովածուն լույս է տեսել 1909 թ. և կարճ ժամանակամիջոցում վերա-

հրատարակվել մի քանի անգամ։ Վ. Ի. Լենինը այդ ժողովածուն համարել է «լիբերալ ռենեգատության հանրագիտարան...» (Վ. Ի. Լենին, *Երկ.*, հ. 19, էջ 205)։

*4 Այդ խմբի «ականավոր ինտելիգենտներն» էին՝ Ն. Բերդյաև, Ս. Բուլգակով, Մ. Գերշենզոն, Ա. Իզգոև, Բ. Կիստյակովսկի, Պ. Ստրուվե, Ս. Ֆրանկ։*

*5 Տողերը քաղված են* «Вехи»*-ում զետեղված Մ. Գերշենզոնի «Ստեղծագործական ինքնագիտակցություն» հոդվածից։*

*6 Նկատի ունի ռուս գրող Ե. Չիրիկովի «Հրեաներ» պիեսը, ուր հեղինակը զարգացնում էր այն գաղափարը, թե Ռուսաստանում խոսք չի կարող լինել սոցիալական հեղափոխության մասին, քանի որ խորն են ազգային հակասությունները։ Բնորոշ է և Չիրիկովի հետագա ուղին. 1922 թ. Սոֆիայում հրատարակել էր պամֆլետ, որով հարձակվում էր ոչ միայն Հոկտեմբերյան հեղափոխության, Մ. Գորկու, այլև ռուս գրականության դեմ։ Պամֆլետին անդրադարձել էր* «Известия» *լրագիրը (1922, մարտի 1, № 48), որին, անշուշտ, տեղյակ էր Չարենցը։*

*7 Մերժելով իրական կյանքը, Սոլոգուբը ստեղծում էր անուրջների մի այլ կյանք, որ պտտվում է մարդուն Օյլե աստղի վրա, որին ջերմացնում է ոչ մեր արևը, այլ մի ուրիշը՝ Մայիրը։ Այնտեղ «մարդիկ աստվածներ են և չունեն ոչ մի պաշտամունք»։ Իր սիրած կնոջը՝ Ելիզավետային, այդ երկիրն է առաջնորդում Սոլոգուբի* «Творимая легенда» *վեպի հերոս Տրիրոդովը (տե՛ս մ. 3, գլ. 79)։*

*8 Ակնարկում է Ալ. Բլոկի «Բանաստեղծություններ Գեղանի տիկնոջ» գիրքը՝ 1904, Պետերբուրգ։*

*9 Ֆ. Սոլոգուբի վերը հիշատակված վեպի առաջին մասի վերնագիրն է (հետագայում՝* «Капли крови»*), տպագրվել է* «Шиповник» *ժողովածուում (1907)։*

*10 Թեև վեպում որոշակի խոսք չկա, բայց նկարագրվող առանձին դեպքեր կասկած չեն թողնում, որ վերարտադրվող իրադարձությունները վերաբերում են 1905 թ. հեղափոխության ժամանակներին։*

*11 Ինչպես նկատում է Չարենցը՝ վեպն ավարտվում է նրանով, որ սոցիալ-դեմոկրատների գլխավորած «ամբոխը» հրկիզում է Տրիրոդովի խորհրդավոր ապարանքը։ Սոլոգուբը նորից հաստատում է իր վերաբերմունքը հեղափոխության հանդեպ. «Դաժան է գռեհիկ ամբոխը և սպառնում կուլ տալ մեր մշակույթը»։*

Հանճարների և աստղերի ուղին — *հատվածները քաղված են նույն հատորից, էջ 285—287, 288—291։*

*Գրել է Մ. Գորկու մահվան (1936 թ. հունիսի 18) առթիվ։ Տպվել է «Խորհրդային Հայաստան» թերթի 1936 թ. հունիսի 24-ի համարում (№ 144)՝ Եղիշե Չարենց ստորագրությամբ։*

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*


Աբբաս *տե՛ս Աբբաս-Միրզա*

Աբբաս I Մեծ (Շահ-Աբբաս, 1571—1629), *Իրանի Սեֆյան հարստության շահ 1587-ից* 243

Աբբաս-Միրզա (1789—1833), *Իրանի պետական և ռազմական գործիչ, Ատրպատականի նահանգապետ* 54, 343

Աբգարյան Հարություն, *XIX դ. հնդկահայ վաճառական* 518

Աբգարյան Սեթ Հարություն, *XIX դ. հնդկահայ վաճառական, հասարակական գործիչ, հրապարակախոս, իրավաբան* 210, 518

Աբդուլ Ազիզ (1830—1876), *թուրքական սուլթան 1861-ից* 516

Աբդուլ Համիդ II (1842—1918), *թուրքական սուլթան (1876—1909)* 20—21, 30, 41, 79, 166, 205, 256, 283, 291, 295, 333—334, 352, 356, 373, 412, 415—416, 510—511, 532, 542, 553

Աբել, *ըստ Հին կտակարանի Ադամի և Եվայի երկրորդ որդին* 244

Աբելյան Հովհաննես (1865—1936), *դերասան* 474, 561

Աբեղյան Մանուկ (1865—1944), *բանագետ, լեզվաբան, գրականագետ, բառարանագիր* 539

Աբովյան Խաչատուր (1809—1848), 7—8, 61, 83—84, 199, 208, 330, 336—337, 363, 369—370, 376, 442, 495—497, 499, 517, 543, 547

Աբրահամ, *ըստ Աստվածաշնչի սերում է Նոյի ավագ որդի Սեմից. սկզբնապես՝ հին հրեական աստվածություն* 358

Ագնի, *հնդկական վեդայական կրոնում կրակի աստված* 404, 551

Ադամ, *ըստ Հին կտակարանի առաջին մարդը կամ մարդկության նախահայրը* 325, 487

Ադամյան Պետրոս (1849—1891), *դերասան* 474—475, 561

Ադամյան Տիգրան (անհտ.—1908), *Պ. Դուրյանի աշակերտական ընկերը, խմբագիր, թարգմանիչ* 176, 511

Ատիլա (անհտ.—453), *հոների առաջնորդ 434-ից* 71

Ալամդարյան Հարություն (1795—1834), *բանաստեղծ, մանկավարժ, հասարակական-քաղաքական և եկեղեցական գործիչ* 507

Ալեքսանդր I, Ալեքսանդր (1777—1825), *ռուսական կայսր 1801-ից* 194, 411, 515, 553

Ալեքսանդր Մակեդոնացի (մ. թ. ա. 356—323), *զորավար, պետական գործիչ, մ. թ. ա. 336-ից Մակեդոնիայի թագավոր* 70, 174, 508

Ալիշան Ղևոնդ (1820—1901). 8. 74, 403—404, 497, 541. 550—551


* *Անձնանունների ցանկում ներկայացված են ժողովածուում տեղ գտած անձնանունները, հայոց մշակույթի հանրահանաչ դեմքերը՝ ծննդյան և մահվան թվականով, մյուսները՝ նաև համառոտ այլ տվյալներով։ Բուն անձնանվան տվյալներով ընդգրկված են նաև հոգնակիորեն կամ ածականաբար գործածված անձնանունները։*

Ալխազով Հակոբ (Ալխազյան, 1826—1896), *ռուսական բանակի հայ գեներալ* 512
Ալպոյաճյան Արշակ (1879—1962), *պատմաբան, բանասեր, մանկավարժ, հասարակական գործիչ* 551
Ալփ-Ասլան *տե՛ս Ալփ-Արսլան*
Ալփ-Արսլան Մուհամեդ իբն Դաուդ (1029—1072), *սելջուկյան սուլթան 1063-ից* 372
Ալֆիերի Վիտորիո (1749—1803), *իտալացի բանաստեղծ* 11, 299, 535
Ակնյուս *տե՛ս Ագնի*
Ակոստա, *Կ. Գուցկովի «Ուրիել Ակոստա» ողբերգության հերոսը* 474
Ահարոնյան Ավետիս (1866—1948), *գրող, քաղաքական գործիչ* 556
Ահարոնյան Վարդգես (1892—1965), *բժիշկ, հրապարակախոս, քաղաքական գործիչ* 406, 552
Ահմեդ Ռզա բեյ, *թուրք քաղաքական գործիչ, երիտթուրքական հեղաշրջումից հետո պառլամենտի նախագահ* 41, 414—416, 553
Ահմեդ Ջևդեթ փաշա, *թուրք զինվորական* 311
Աղաբեկյան Մարկոս (1830—1908), *հրապարակագիր, հասարակական գործիչ* 523
Աղաբոն Մկրտիչ (Աղաբոնյան, 1818—1890), *հասարակական-քաղաքական գործիչ* 504
Աղա-Մահմեդ խան Ղաջար (1742—1797), *Իրանի շահ 1796-ից* 545
Աղայան Ծատուր (ծնվ. 1911), *սովետահայ պատմաբան* 535
Աղայան Ղազարոս (1840—1911), 9, 14—15, 30, 206, 331, 452, 517, 538
Աղասի, *Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» հերոսը* 369
Աղասի *տե՛ս Տեր-Սարգսյան Կարապետ*
Աղբաշյան Հակոբ, *հրապարակախոս, քաղաքական գործիչ* 547
Ամիրան, Ամիրանի, *վրաց հնագույն էպոսի հերոս* 367
Ամրան, *օսական էպոսի հերոս* 368
Այվազովսկի Գաբրիել (Այվազյան, 1812—1880), *մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ, եկեղեցական գործիչ* 11, 508
Անանյան Մանվել (1841—1909), *մշակութային գործիչ, «Արծվի Վասպուրականի» խմբագիրներից* 517
Անդրե Սողոմոն (1854—անհտ.), *ֆրանսիացի բնախույզ* 261
Անդրեև, *Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ և Ռազմական օկրուգի զորքերի հրամանատար Գ. Ս. Գոլիցինի փոխ-տեղակալը* 446
Աննա, *քույր Աննա, Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհին» վեպի հերոսուհին* 259
Անտոնյան Արամ (1875—1952), *գրող, հրապարակագիր, խմբագիր* 553
Աշոտ Բ Երկաթ (անհտ.—929), *հայոց Բագրատունի թագավոր 914-ից* 218
Աշոտ Մսակեր (Բագրատունի, անհտ.—826), *հայոց իշխան 790-ից* 218
Առանձար (Գույումճյան Միսաք, 1877—1913), *երգիծաբան-նովելիստ* 428, 555
Առաքել, *շենիկցի, 1894 թ. կոտորածների ականատես-վկա* 539
Առյուծ-Խաչիկ *տե՛ս Խաչիկ*
Ասքանազ, *Մ. Խորենացու վկայած ավանդությամբ հայերի անվանումներից մեկը* 53, 550—551
Ավագյան Հովհաննես (1882—1959), *հրապարակագիր, խմբագիր* 437, 536
Ավան Յուզբաշի (մոտ 1670—1735), *XVIII դ. առաջին քառորդի հայ ազատագրական շարժումների ղեկավարներից Ղարաբաղում* 218
Ավետիք վարդապետ, *Հ. Հակոբյանի ուսուցիչը Գանձակում* 471—472
Արամ, *հայոց ավանդական նահապետ* 70, 284

Արամյաններ. *Արամ նահապետի անունով հայերը ավանդաբար կոչվում են նաև այսպես* 66
Արամյանց Համայակ (1878—1919), *գրող, հրապարակախոս-խմբագիր* 417
Արասխանյան Ավետիք (1857—1912), *տնտեսագետ, խմբագիր-հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ* 255, 524
Արես. *հելլենական դիցաբանության մեջ պատերազմի աստված* 301
Արզումանյան Մակիչ (ծնվ. 1919), *սովետահայ պատմաբան* 20
Արիստոտել (մ. թ. ա. 384—322), *հույն փիլիսոփա և գիտնական* 419, 528
Արծրունի Գրիգոր (1845—1892), *հրապարակախոս, «Մշակի» հիմնադիր-խմբագիր, հասարակական-գրական գործիչ* 16, 18—20, 182, 331, 442, 512—514, 519, 542
Արմենակ (Արամանյակ), *ըստ ավանդության հայոց նախնի Հայկի որդին* 284
Արմիդա, *Տ. Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի հերոսուհին* 137, 507
Արշակ II, *հայոց Արշակունի թագավոր 350-ից* 284, 528, 540
Արշակունի, Արշակունիներ, *հայոց թագավորական հարստություն (I—V դդ.)* 55, 324, 540
Արչիլ II (1647—1713), *վրաց թագավոր, գրող* 545
Արտաշեսյան, *թագավորական հարստություն Հայաստանում՝ մ. թ. ա. 189—մ. թ. 1* 540
Արտավազդ, *հայոց Արտավազդ Ա թագավորի (մ. թ. ա. մոտ 160—115) մասին հյուսված ավանդավեպի հերոս* 363, 367
Արտեմիս, *հին հունական աստվածուհի* 526
Արփիարյան Արփիար (1851—1908), *գրող, հրապարակախոս, գրաքննադատ, հասարակական գործիչ* 9, 17, 21—23, 29, 191, 282, 404, 428, 501, 514, 516—517, 522, 524, 528—531, 533, 534, 542, 551
Արքիմեդ (մ. թ. ա. մոտ 287—212), *հույն գիտնական* 130
Աքիլլես, *Հոմերոսի «Իլիականի» հերոսներից, տրոյական պատերազմի մասնակիցներից ամենաքաջը* 70, 204, 406
Աքիմյան Մարիամ (1868—անհտ.), *մեծահարուստ Ագաթոն Աքիմյանի որդու՝ Նիկողայոսի, և Վարվառե Աքիմյանի (ապա՝ Քանանյան) դուստրը* 165, 167, 510

Բագրատ *տե՛ս Ճահ-Պարոնյան Բագրատ*
Բագրատունի, *նախարարական տոհմ և թագավորական հարստություն Հայաստանում (IX—XI դդ.)* 325, 540
Բագրատունի Արսեն (1790—1866), *բանաստեղծ, բանասեր, լեզվաբան-քերական, փիլիսոփա-թարգմանիչ* 552
Բաթուել, *ըստ Աստվածաշնչի Աբրահամի հորեղբոր որդին, Ռեբեկայի հայրը* 60
Բաթուղ (՞) *տե՛ս Բաթուել*
Բալզակ Օնորե դը (1799—1850), *ֆրանսիացի գրող* 83
Բալմոնտ Կոնստանտին Դմիտրիևիչ (1867—1942), *ռուս բանաստեղծ, թարգմանիչ* 488
Բակունց Ակսել (Թևոսյան Ալեքսանդր, 1899—1937), *գրող, կինոդրամատուրգ, բանասեր, թարգմանիչ* 46
Բաղրամյան Հովհաննես (Իվան, ծնվ. 1897), *սովետական ռազմական գործիչ, Սովետական Միության մարշալ* 47, 547
Բաղրամյան Մովսես (ծնն. և մահվ. թթ. անհտ.), *XVIII դ. երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման գործիչ, լուսավորիչ* 6
Բայրոն Ջորջ Գորդոն (1788—1824), *ան-*

գլիացի բանաստեղծ 185, 192, 301, 514, 536
Բաշալյան Լևոն (1868—1943), գրող, հրապարակախոս, քննադատ, թարգմանիչ, հասարակական գործիչ 24, 26, 27, 29, 309, 513, 525, 536, 538
Բասէնիչ տե՛ս Պասկևիչ Իվան Ֆյոդորովիչ
Բարբարոս տե՛ս Ֆրիդրիխ I Բարբարոս
Բարբյուս Անրի (1873—1935), ֆրանսիացի գրող 29
Բարթելս Յոհան (1769—1836), մաթեմատիկոս, 1821-ից Դորպատի համալսարանի դասախոս 61
Բարսեղյան Գեղամ (1883—1915), գրող, հրապարակախոս 550
Բարսեղյան Խիկար (ծնվ. 1918), սովետահայ պատմաբան, լրագրող 556
Բարրես Մորիս (1862—1923), ֆրանսիացի գրող 260, 525
Բեդնի Դեմյան (Պրիդվորով Եֆիմ Ալեքսեևիչ, 1883—1945), ռուս սովետական բանաստեղծ 559
Բեթհովեն Լյուդվիգ վան (1770—1827), գերմանացի կոմպոզիտոր 262, 303, 525—526
Բել. բաբելոնյան գերագույն աստված, Բաբելոն քաղաքի հովանին 5, 66 193, 501
Բելինսկի Վիսարիոն Գրիգորևիչ (1811—1848), ռուս գրական քննադատ, հրապարակախոս 281, 452, 468, 528
Բեկնազարյան Ապրես, «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակը 519
Բերար Վիկտոր (1846—1931), ֆրանսիացի գիտնական, հրապարակախոս, «Պրո Արմենիա» ընկերության անդամ (1909-ից), հայոց դատի պաշտպան 350
Բերբերյան Մինաս (1871—1919), գրականագետ, թարգմանիչ, իրավաբան 258, 524
Բերդյաև Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1874—1948), ռուս փիլիսոփա-միստիկ 563
Բիլուարտ, աստվածաբան 148
Բիչեր-Ստոու Հարիետ (1811—1896), ամերիկացի կին գրող 217, 519
Բիսմարկ Օտտո (1815—1898), գերմանական պետական գործիչ, 1871—1890 թթ. ռայխականցլեր 222, 356, 373, 522
Բլան Լուի (1811—1882), ֆրանսիացի սոցիալիստ, քաղաքական գործիչ, հրապարակագիր և պատմաբան 94, 138
Բլոկ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1880—1921), ռուս բանաստեղծ 487—488, 563
Բյորնե Լյուդվիգ (1786—1837), գերմանացի գրող, հրապարակախոս 186
Բյուրասպ-Աժդահակ, զրադաշտական «Ավեստայի» քարոզիչներից 367
Բոնապարտ տե՛ս Նապոլեոն I Բոնապարտ
Բորք Էդմոնդ (1730—1797), անգլիական քաղաքական գործիչ և հրապարակախոս 158—160
Բորդալիս տե՛ս Պորտալիս Ալեքսանդր
Բոցարիս Մարկո (1788—1823), հունական ազգային-ազատագրական պայքարի հերոս 162
Բրիան Արիստիդ (1862—1932), ֆրանսիական պետական գործիչ, 1909—1922 թթ. տարբեր ժամանակներում պրեմիեր-մինիստր 262, 431, 555
Բրիսանուշ, Բրիզունի. Բրիզես քրմի դուստրը, Աքիլլեսի սիրուհին 406
Բրյունո Ալֆրեդ (1857—1934), ֆրանսիացի կոմպոզիտոր, գրել է օպերաներ մեծապես՝ Էմ. Զոլայի վեպերի սյուժեներով 261, 525
Բրյուսով Վալերի Յակովլևիչ (1873—1924), ռուս գրող, գրականագետ, թարգմանիչ 46, 488
Բրունո Ջորդանո Ֆիլիպո (1548—1600), իտալացի փիլիսոփա, աստղագետ, բանաստեղծ 310

Բուդդա (Բուդդհա). *Հնդկական կրոնական բարենորոգիչ, համարվում է բուդդայականության հիմնադիր (մ. թ. ա. VI—V դդ.)* 363

Բուլգակով Սերգեյ Նիկոլաևիչ (1871—1944), *ռուս տնտեսագետ, փիլիսոփա-միստիկ* 563

Բուղա, *ծագումով թուրք արաբական զորավար, ավերելով արշավել է Հայաստանի վրա 852—855 թթ.* 372

Բունին Իվան Ալեքսեևիչ (1870—1953), *ռուս գրող* 39

Բուրբոն, Բուրբոններ *թագավորական դինաստիա Ֆրանսիայում, Իսպանիայում, Նեապոլիտանական թագավորությունում* 144—145, 159

Գաբրիչևսկի Ա., *ռուս գրականագետ* 525

Գալիլեյ Գալիլեո (1564—1642), *իտալացի ֆիզիկոս և աստղագետ, ժամանակակից դինամիկայի հիմնադիրը* 310, 413, 455

Գալոյան Գալուստ (ծնվ. 1927), *սովետահայ պատմաբան* 562

Գալֆայան Խորեն (Նար-Պեյ, 1832—1892), *բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս, եկեղեցական գործիչ* 176, 428, 511, 534

Գամառ-Քաթիպա, *Ռ. Պատկանյանի, Մ. Թիմուրյանի և Գ. Քանանյանի 1854 թ. հիմնած գրական ընկերության անունը* 161—162

Գամառ-Քաթիպա *տե՛ս Պատկանյան Ռափայել*

Գամբետտա Լեոն Միշել (1838—1882), *ֆրանսիական քաղաքական գործիչ, իրավաբան* 264, 526

Գայլ Վահան (Մամիկոնյան, VII դ.), *ըստ Տարոնի վիպի Մուշեղ Մամիկոնյանի որդեգիրը, հաղթական մարտեր է մղել պարսիկների դեմ* 218

Գաննուշկին, *Բ. Կնունյանցի դատապաշտպանը* 557

Գարագաշ Հայկ (1893—1960), *հրապարակագիր, խմբագիր* 547

Գարագաշյան Անտոն-Մակարիա (1818—1903), *հայոց քննական պատմագրության հիմնադիր, փիլիսոփա, լեզվաբան, «Աքսենյան թատրոնի» կազմակերպիչներից* 428

Գարեգին, *Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհին» վեպի հերոսը* 259

Գարիբալդի Ջուզեպպե (1807—1882), *իտալական ժողովրդական հերոս, ազգային-ազատագրական շարժման առաջնորդ* 8—9, 22—23, 84—87, 104, 142, 145, 163, 193, 206, 287, 499—501, 504, 507, 514, 521

Գառնիե-Պաժե Լուի Անտուան (1803—1878), *ֆրանսիացի հռետոր, պատմաբան, հանրապետական գործիչ* 250

Գեդ Ժյուլ (1845—1922), *ֆրանսիական և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ* 263

Գելմոլդտ, *պատմաբան* 353, 546

Գերշենզոն Միխայիլ Օսիպովիչ (1869—1925), *ռուս գրականության և հասարակական մտքի պատմաբան* 486—487, 563

Գերցեն Ալեքսանդր Իվանովիչ (1812—1870), *ռուս գրող, հրապարակախոս* 9, 468, 516

Գիզո Ֆրանսուա (1787—1874), *ֆրանսիական պետական գործիչ, պատմաբան* 194, 204, 253, 315, 514—515, 524

Գիպիուս Զինաիդա Նիկոլաևնա (1869—1945), *ռուս գրող, գրաքննադատ* 481

Գլադստոն Ուիլյամ Յուարտ (1809—1898), *անգլիական պետական գործիչ, տորիների պարագլուխներից, 1868—1893 թթ. ընդմիջումներով պրեմիեր-մինիստր* 78, 222, 350, 352, 356, 532, 545

Գյոթե Յոհան Վոլֆգանգ (1749—1832), *գերմանացի բանաստեղծ և մտածող*

140, 147, 185, 262, 303, 316, 525, 540

Գյորինգ Հերման (1893—1946), *ֆաշիստական Գերմանիայի պարագլուխներից, պատերազմական հանցագործ* 373

Գոբեչիա. *վրաց մենշևիկյան գործիչ* 391

Գոգոլ Նիկոլայ Վասիլևիչ (1809—1852), *ռուս գրող* 186, 528

Գոլիցին Գրիգորի Սերգեևիչ (1838—1907), *ռուսական պետական և ռազմական գործիչ, 1896—1904 թթ. Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և ռազմական օկրուգի զորքերի հրամանատար* 30, 346, 352, 544, 557

Գող Վասիլ (Բասիլ-էլ-էրմենի, անհտ.—1112), *Կիլիկիայի հայ իշխան՝ Կամսարականների տոհմից* 218

Գորկի Մաքսիմ (Պեշկով Ալեքսեյ Մաքսիմովիչ, 1868—1936), *ռուս գրող* 32, 38—39, 48—49, 454, 461—463, 481, 483, 489—492, 558—559, 563

Գորչակով Ալեքսանդր Միխայլովիչ (1798—1883), *ռուս դիվանագետ, 1856—1882 թթ. արտաքին գործոց մինիստր* 222

Գրանովսկի Տիմոֆեյ Նիկոլաևիչ (1813—1855), *ռուս պատմաբան, արևմտականների պարագլուխներից* 468

Գրեգուար Անրի (1881—1964), *բելգիացի հելլենագետ, բյուզանդագետ և հայագետ* 277

Գրիբոյեդով Ալեքսանդր Սերգեևիչ (1795—1829), *ռուս գրող և դիվանագետ* 30

Գրիգոր Լուսավորիչ (240—325), *Հայաստանում քրիստոնեության տարածողը, հայոց առաջին կաթողիկոսը 302-ից* 343, 501

Գրիգոր Նարեկացի (951—1003), *բանաստեղծ, փիլիսոփա, երաժիշտ* 543

Գրիգոր XIII (1502—1585), *Հռոմի պապ՝ 1572-ից* 541

Գրիսրի, *XIX դ. վերջի ֆրանսիական պետական գործիչ* 310

Գուստավ II Ադոլֆ (1594—1632), *Շվեդիայի թագավոր 1611-ից* 162

Գուտենբերգ Յոհան (1394—1399-ի միջև (կամ 1406)—1468), *գերմանացի, գրատպության գյուտարարը* 205, 516

Գուցկով Կարլ (1811—1878), *գերմանացի գրող* 561

Դ՚Ալամբեր Ժան Լը Ռոն (1717—1783), *ֆրանսիացի մաթեմատիկոս և փիլիսոփա* 164

Դամոկլես, *հունական ավանդության հերոս* 321

Դանտե Ալիգիերի (1265—1321), *իտալացի բանաստեղծ* 336

Դանտոն Ժորժ Ժակ (1759—1794), *ֆրանսիական հեղափոխական գործիչ* 309, 325, 502

Դ՚Անունցիո Գաբրիել (1863—1938), *իտալացի գրող* 488

Դաշտենց Խաչիկ (Տոնոյան, 1910—1974), *սովետահայ գրող, թարգմանիչ, բանասեր* 534

Դավիթ արքա (մ. թ. ա. մոտ 1020—950), *Հուդա-Իսրայելական պետության թագավոր մ. թ. ա. մոտ 990-ից։ Ավանդաբար համարվում է «Սաղմոսների» հեղինակ* 367

Դավիթ բեկ (անհտ.—1728), *հայ զորավար, Սյունիքի ազգային-ազատագրական շարժման առաջնորդ* 218

Դարբինյան Ռուբեն (Չիլինգիրյան Արտաշես, 1883—1968), *հրապարակախոս-խմբագիր, դաշնակցական գործիչ* 436

Դարեհ I (մ. թ. ա. մոտ 550—486), *Աքեմենյան թագավոր Հին Պարսկաստանում՝ 522-ից* 372

Դարվին Չառլզ (1809—1882), *անգլիացի բնագետ, էվոլյուցիոն տեսության հիմնադիր* 515

Դը Ամիչիս Էդմոնդո (1846—1908), *իտալացի գրող* 206, 517

Դեկավ Լյուսիեն, *ֆրանսիացի մտավորական* 542
Դեկարտ Ռընե (1596—1650), *ֆրանսիացի բնագետ, մաթեմատիկոս և փիլիսոփա* 119, 505, 512
Դեմետր, *հին հունական աստվածուհի* 404
Դեմիրճյան Դերենիկ (Դեմիրճօղլյան, 1877—1956), *գրող, հրապարակախոս, արվեստի քննադատ ու տեսաբան* 46
Դեմոսթենես (մ. թ. ա. մոտ 384—322), *քաղաքական գործիչ և հռետոր Հին Հունաստանում* 95, 227, 501
Դեմուլեն Կամիլ (1760—1794), *ֆրանսիական բուրժուական հեղափոխության գործիչ, փաստաբան և լրագրող* 204
Դերբի Էդուարդ (1826—1893), *անգլիական պետական գործիչ* 222
Դը Կոստեր Շառլ (1827—1879), *բելգիացի գրող* 375, 547
Դը Հոմպոլտ *տե՛ս Հումբոլդտ Ալեքսանդր*
Դը Մոռնի *տե՛ս Մոռնի Շառլ*
Դիանա, *հին հռոմեական աստվածուհի* 263
Դիբիչ-Զաբալկանսկի Իվան Իվանովիչ (1785—1831), *ռուս գեներալ-ֆելդմարշալ* 195, 515
Դիդրո Դենի (1713—1784), *ֆրանսիացի մատերիալիստ փիլիսոփա, լուսավորիչ, գրող* 164
Դիլոն Էմիլ (1854—1933), *փիլիսոփայական գիտությունների դոկտոր, արևելյան լեզուների և համեմատական լեզվաբանության մագիստրոս (Պետերբուրգ, Խարկով), հայոց դատի պաշտպան* 350
Դմիտրի Իվանովիչ Դոնսկոյ (1350—1389), *1359-ից Վլադիմիրի և Մոսկվայի մեծ իշխան* 162
Դյումա Ալեքսանդր (հայր, 1802—1870), *ֆրանսիացի գրող* 146, 561
Դոդե Ալֆոնս (1840—1897), *ֆրանսիացի գրող* 329
Դրեյֆուս Ալֆրեդ (1859—1935), *ֆրանսիական բանակի ծագումով հրեա ամբաստանված սպա* 26, 261, 525, 536, 538
Դուռնովո Պյոտր Նիկոլաևիչ (1844—1915), *ռուսական պետական գործիչ, 1905 թ. հոկտեմբերից ներքին գործերի մինիստր* 267—268, 477, 527
Դուրյան Պետրոս (1851—1872), 11, 12, 176, 404, 428, 511

Եզեկիել (մ. թ. ա. մոտ 622—անհտ.), *Հին կտակարանի մարգարեներից* 294, 534
Եզնիկ Կողբացի (մոտ 380—450), *փիլիսոփա, թարգմանիչ, հասարակական-եկեղեցական գործիչ* 38, 367, 479, 561
Եկեմ, *ըստ Աստվածաշնչի Նոյի թոռը* 553
Եղիզավետա, *Գ. Մոլոգուրի «Հյուսվող տապակը» վեպի հերոսուհին* 563
Եղիզավետա Պետրովնա (1709—1762), *Պետրոս I-ի դուստրը, 1741-ից Ռուսաստանի կայսրուհի* 468
Եկատերինա II (1729—1796), *ռուսական կայսրուհի 1762-ից* 164
Եղիշե (մոտ 410—415-ի միջև— մոտ 470—475-ի միջև), *հայ պատմիչ* 24, 323, 325—327, 330, 370, 376, 523, 540—541
Եսայան Զապել (Հովհաննիսյան, 1878—1943), *գրող, թարգմանիչ, հրապարակագիր* 42, 44, 46, 429, 550, 555—556
Եսայի (մ. թ. ա. VIII դ.), *հուդայականության մարգարեներից առաջինը* 523
Եվա, *մարդկության ավանդական նախամայրը* 244
Երեմիա (մ. թ. ա. VII դ. տասական թթ.), *հուդայականության մարգարեներից երկրորդը* 551
Երեմյան Արամ (1898—1972), *գրող, գրականագետ, արվեստաբան* 547
Երուխան (Երվանդ Սրմաքեշխանլյան,

1870—1915), *գրող, հրապարակախոս, թարգմանիչ, մանկավարժ* 42, 418, 554

Զախեր-Մազոխ Լեոպոլդ (1836—1895), *ավստրիացի գրող* 481, 562
Զարդարյան Ռուբեն (1874—1915), *գրող, հրապարակախոս* 39, 40, 42, 44, 422, 432—433, 536, 552, 554—555
Զարթումյան Լ. *տե՛ս Բաշալյան Լևոն*
Զարմայր, *հայոց ավանդական նահապետ* 70
Զարյան Ռուբեն (Ղազանչյան, ծնվ. 1909), *սովետահայ գրականագետ, թատերագետ, մանկավարժ* 561
Զավրիև Հակոբ (Զավարյան, անհտ.—1920), *հասարակական գործիչ, դիվանագետ, բժիշկ* 396
Զեքի փաշա (նաև Զաքիր) *տե՛ս Շաքիր փաշա*
Զոլա Էմիլ (1840—1902), *ֆրանսիացի գրող* 26—27, 260—262, 302, 309—310, 525, 536, 538
Զոհրապ Գրիգոր (1861—1915), 27, 40—43, 302, 307, 428, 525, 536—538
Զորայան Նիկողայոս (1821—1859), *տնտեսագետ, հրապարակախոս, մանկավարժ* 428
Զորյան Ստեփան (Եղիազարյան, 1889—1967), *գրող* 46
Զրադաշտ, *համարվում է զրադաշտական կրոնի հիմնադիրը, ապրել է մ. թ. ա. մոտ 630—553* 363
Զուրաբյան Արշակ (Զուրաբով, 1873—1920), *պրոֆեսիոնալ հեղափոխական, 1898-ից ՍԴԲԿ անդամ* 33, 38, 440, 556
Զևս, *հունական դիցաբանության գերագույն աստվածը* 367

Էգմոնտ Լամորալ (1522—1568), *նիդերլանդական պետական գործիչ, Իսպանիայի դեմ հոլանդացիների ապստամբության պարագլուխներից* 303
Էդգար, *Շեքսպիրի «Արքա Լիր» գործող անձանցից* 474
Էմանուել Ի *տե՛ս Վիկտոր Էմանուել II*
Էմին Հովսեփ (Էմին Հովսեփի Էմինյան, 1726—1809), *հայ ազատագրական շարժման գործիչ, բուրժուա-լուսավորական գաղափարախոս* 6, 545
Էմին Միրտիչ (Կարապետյան, 1815—1890), *բանասեր, պատմաբան, մանկավարժ, թարգմանիչ* 331
Էնգելս Ֆրիդրիխ (1820—1895), *գիտական կոմունիզմի հիմնադիրներից, միջազգային պրոլետարիատի առաջնորդ և ուսուցիչ* 443, 549
Էնվեր-փաշա (1881—1922), *թուրքական պետական գործիչ, գեներալ, երիտթուրքերի պարագլուխներից, հայոց մեծ եղեռնի հանցագործներից* 41
Էսքիրոս Անրի Ալֆոնս (1814—1876), *ֆրանսիացի գրող և քաղաքական գործիչ* 97
Էրնեստո Ռոսսի (1827—1896), *իտալացի դերասան* 474
Էֆենդյան տեր Հմայակ (Բարսեղ, 1861—1941), *բանասեր, լրագրող* 417

Թագվորյան Սեդրակ (ծնն. և մահվ. թթ. անհտ.), *XIX դ. հրապարակախոս, հեղափոխական դեմոկրատ* 10, 504, 516
Թաթուլ Վահրամ (1887—1943), *բանաստեղծ, թատերագիր, մանկավարժ* 550
Թալեաթ-փաշա Մեհմեդ (1874—1921), *թուրքական «Միություն և առաջադիմություն» բուրժուանացիոնալիստական կուսակցության պարագլուխներից, հայոց մեծ եղեռնի հանցագործներից* 41—42, 537
Թաղիադյան Մեսրոպ (1803—1858), *գրող, մանկավարժ, հրապարակախոս* 7, 48, 53, 208, 495—496, 517
Թամար (XII դ. մոտ 60-ական թթ. կես—1213), *Վրաստանի թագուհի 1184-ից* 218

Թեմուր Լանկ *տե՛ս Լենկթեմուր*
Թեոկրիտոս (մ. թ. ա. մոտ 310—250), *հույն բանաստեղծ* 338
Թեսավրոս, *աստվածաբան* 148
Թերզյան Թովմաս (1840—1909), *բանաստեղծ, թատերագիր, մանկավարժ* 404, 428
Թեքեյան Վահան (1878—1945), *բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական գործիչ* 34, 46, 48, 338, 407, 530, 536, 543, 552
Թիեր Ադոլֆ (1797—1877), *ֆրանսիական պետական գործիչ, պատմաբան* 94, 204, 252, 315, 516, 524
Թիլ *տե՛ս Ուլենշպիգել Թիլ*
Թլկատինցի (Հարությունյան Հովհաննես, 1860—1915), *գրող, մանկավարժ, հասարակական գործիչ* 42
Թոթովենց Վահան (1894—1937), *գրող, հասարակական գործիչ* 46
Թոմազեո Նիկոլա (Տոմաշիչ, 1802—1874), *իտալացի գրող, բանասեր, հայագետ* 289—290, 531
Թորգոմ, *ըստ ավանդության Հայկ Նահապետի հայրը և Նոյի Հաբեթ որդու թոռը: Նրա անունով Հայաստանը կոչվել է Թորգոմա տուն, հայերը՝ Թորգոմանք* 54
Թորգոմյան Վահրամ (1858—1942), *բժիշկ, բանասեր, լրագրող, հասարակական գործիչ* 300, 536
Թորոս, *թորոսներ, ընդհանրական անուն հայոց միջավայրում* 87, 92
Թումանյան Հովհաննես (1869—1923), 30, 34—35, 46, 48, 340, 359, 376, 543—546, 555
Թուր-Սարգսյան Կարապետ (Աղասի, 1871—1937), *հասարակական-քաղաքական գործիչ, գրքերի հեղինակ* 286, 529, 530

Ժաննա դ'Արկ (1412—1431), *Ֆրանսիայի ազգային հերոսուհի* 323, 325
Ժան դ' Արք *տե՛ս Ժաննա դ' Արկ*
Ժեֆերսոն *տե՛ս Ջեֆերսոն Թոմաս*
Ժիլբեր, *XIX դ. 70-ական թթ. ֆրանսիական կոնսուլ Էրզրումում* 188
Ժիրարդեն Էմիլ (1806—1881), *ֆրանսիացի հրապարակախոս, հասարակական գործիչ* 205
Ժորես Ժան (1859—1914), *ֆրանսիական և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ, պատմաբան, հռետոր* 27—29, 46, 262—264, 356, 526, 535, 542, 555
Ժուրդան Ժան-Բատիստ (1762—1823), *ֆրանսիացի զորավար, Նապոլեոն Բոնապարտի օրոք մարշալ* 98

Իզգոյ *տե՛ս Սպանդարյան Սուրեն*
Իզգոև Ա. Ս. (Լանդե, 1872—անհտ.), *ռուս հրապարակախոս, նախ՝ «լեգալ մարքսիստ», ապա՝ կադետների պարագլուխներից* 563
Իզմիրլյան Մատթեոս (1845—1910), *ուսուցիչ, Կ. Պոլսի պատրիարք, 1908-ից ամենայն հայոց կաթողիկոս* 291
Իմնոֆ, *գերմանական գեներալ, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական սպայական խորհրդի անդամ* 373
Ինճիկյան Արամ (1910—1975), *սովետահայ գրականագետ, բանասեր* 518
Իշխանյանց Արտաշես, *Գ. Սրվանձտյանի մտերիմներից* 523
Իսահակյան Ավետիք (1875—1957), 9, 29—30, 34—35, 38, 46, 360, 380, 546—548
Իսահակյան Իսահակ (1893—1916), *Ավ. Իսահակյանի եղբորորդին, բանաստեղծ, զոհվել է Էրզրումում* 46
Իսրայել Օրի (1659—1711), *հայ ազգային ազատագրական շարժման գործիչ* 6, 346, 544—545
Իվանով Վյաչեսլավ (1866—1946), *ռուս բանաստեղծ, դրամատուրգ, պատմաբան* 488

Լազիոն Անատոլիո *տե՛ս Հենրիկո Վիթո*
Լազարև Իվան (1820—1879), *ռուսական բանակի հայազգի գեներալ, մշտապես ծառայել է Կովկասում* 80. 512
Լալայանց Իսահակ (1870—1933), *ռուսական հեղափոխական շարժման գործիչ* 33
Լամարթին Ալֆոնս (1790—1869), *ֆրանսիացի բանաստեղծ, պատմաբան և քաղաքական գործիչ* 97, 229. 502
Լամնե Ֆելիսիտե-Ռոբեր (1782—1854), *ֆրանսիացի գրող* 505
Լայբնից Գոտֆրիդ Վիլհելմ (1646—1716), *գերմանացի լուսավորիչ, փիլիսոփա, բնագետ, մաթեմատիկոս, հասարակական գործիչ* 122, 506
Լանգլուա Վիկտոր (1829—1869), *ֆրանսիացի պատմաբան, հայագետ, արևելագետ* 248, 523
Լաոկոոն. *Հին հունական դիցաբանության մեջ Տրոյայի Ապոլլոնի մեհյանի քրմապետ* 540
Լաշկով Եվդոկիմ Եմելյանովիչ (1799—1875), *ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների մասնակից (1826—1829), գեներալ* 343—344, 544
Լարենց Լևոն (Փիրիշճյան, 1882—1915), *բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակագիր* 417
Լաֆարգ Պոլ (1842—1911), *ֆրանսիական և միջազգային բանվորական շարժման գործիչ* 263
Լենին Վլադիմիր Իլյիչ (Ուլյանով, 1870—1924), *ՍՄԿԿ կազմակերպիչ և սովետական պետության հիմնադիր, ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ առաջնորդ և ուսուցիչ* 9, 30, 392—394, 438—439, 483—484, 549, 554, 557—559, 562—563
Լենկթեմուր (Լանկ-Թամուր, Թամերլան, 1336—1405), *միջինասիական զորավար, ամիրա* 71, 82, 243, 372
Լեո (Բաբախանյան Առաքել, 1860—1932), *պատմաբան, հրապարակախոս, գրականագետ, գրող* 276, 500—501, 510, 527—528
Լեոնիդաս (մ. թ. ա. 508 կամ 507—480), *Սպարտայի թագավոր մ. թ. ա. 488-ից* 162, 330, 497
Լեոպոլդ I (1640—1705), *ավստրիական կայսր* 544
Լեսինգ Գոտհոլդ Էֆրաիմ (1729—1871), *գերմանացի դրամատուրգ, գրականության և արվեստի տեսաբան, լուսավորիչ* 185
Լերմոնտով Միխայիլ Յուրևիչ (1814—1841), *ռուս բանաստեղծ* 32, 186, 347, 545
Լերուա-Բոլիեո Անատոլ (1842—անհտ.), *ֆրանսիացի հրապարակախոս, պատմաբան* 542
Լիբկնեխտ Կարլ (1871—1919), *գերմանական և միջազգային բանվորական շարժման գործիչ* 46
Լիման ֆոն-Սանդերս (1855—1929), *գերմանական գեներալ, 1913—1918 թթ. գլխավորում էր գերմանական ռազմական միսիան Թուրքիայում* 373, 547
Լինչ Հենրի Ֆինիս Բլոս (1862—1913), *իռլանդացի հայագետ, ճանապարհորդ-աշխարհագրագետ, փաստաբան, հասարակական-քաղաքական գործիչ* 533—534
Լիր. *Շեքսպիրի «Արքա Լիր» ողբերգության գործող անձ* 474, 561
Լլոյդ Ջորջ Դեյվիդ (1863—1946), *անգլիական պետական գործիչ, լիբերալների պարագլուխ* 17—18, 545
Լյուդովիկոս Մեծ. Լյուդովիկոս XIV (1638—1715), *Ֆրանսիայի թագավոր 1643-ից* 357, 509
Լյուդովիկոս XVI (1754—1793), *Ֆրանսիայի թագավոր 1774-ից* 159, 305, 502, 537
Լյուդովիկոս XVIII (1755—1824), *Ֆրանսիայի թագավոր 1814-ից* 339

Լյութեր Մարտին (1483—1546), *ռեֆորմացիայի առաջնորդը Գերմանիայում, գերմանական բողոքականության հիմնադիր* 200, 514, 516
Լյուցիֆեր. *Սուրբ Գրքում փայլուն, բայց գոռոզ հրեշտակ, որ գլխավորում էր հրեշտակներին աստծո դեմ* 368
Լոբանով—Ռոստովսկի Ալեքսեյ Բորիսովիչ (1824—1896), *իշխան, ռուս դիվանագետ, դեսպանորդ (1859—1863) և դեսպան (1878—1879) Թուրքիայում, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր (1895—1896)* 30, 412, 553
Լոռիս-Մելիքով Միքայել (1825—1888), *Ռուսաստանի հայազգի զինվորական-պետական գործիչ, 1877—1878 թթ. Կովկասյան զորքերի հրամանատար* 80, 512
Լվով Գեորգի Եվգենևիչ (1861—1925), *ռուս քաղաքական գործիչ, հարել է կադետներին* 390
Լուի Բոնապարտ *տե՛ս Նապոլեոն III*
Լուի ԺԶ *տե՛ս Լյուդովիկոս XVI*
Լուի ԺԸ *տե՛ս Լյուդովիկոս XVIII*
Լուի Ֆիլիպ (1773—1850), *Բուրբոնների դինաստիայից 1830—1848 թթ. Ֆրանսիայի թագավոր* 87, 194, 276, 339, 515
Լուկրեցիոս *տե՛ս Լուկրեցիուս*
Լուկրեցիուս Տիտոս Կարոս (մ. թ. ա. մոտ 99—55), *հին հռոմեական մատերիալիստ փիլիսոփա, բանաստեղծ* 338
Լուսավորիչ *տե՛ս Գրիգոր Լուսավորիչ*
Լևոններ, *Կիլիկյան Հայաստանի Ռուբինյան թագավորական հարստության (XI—XIV դդ.) Լևոն թագավորներ* 251
Խան-Խոյսկի, *մուսաֆաթական կուսակցության պարագլուխներից, Անդրկովկասյան սեյմի գործիչներից* 391, 549
Խանոյան Սարգիս (1877—1937), *հեղափոխական, կուսակցական-պետական գործիչ, լրագրող* 556
Խաչատուր Տարոնացի, *երաժիշտ-գիտնական և բանաստեղծ-երաժիշտ, Հաղարծինի վանահայր XII դ. վերջին քառորդում և XIII-ի սկզբում* 543
Խաչիկ, *ըստ Մ. Չամչյանի՝ Առյուծ Խաչիկ, ըստ Ալիշանի՝ Խուլ Խաչիկ. Արծրունի նախարար, Վասպուրականի Թոռնեվան գավառի տերը, 1042 թ. յոթնամսյա քաջերով կռվել է Տուղրիլ բեկի հրոսակների դեմ և հերոսաբար ընկել մարտում* 218
Խատիսյան Ալեքսանդր (1874—1945), *ցարական աստիճանավոր, կադետ, դաշնակցական գործիչ. 1918-ից Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարար, 1919—1920 թթ. մայիսից՝ վարչապետ* 391, 436, 549
Խիկար (Խիկար իմաստուն, մ. թ. ա. V դ.), *եղել է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի ատենադպիրը։ Տեղայնանալով՝ իբրև ազգային իմաստուն, մեծ ժողովրդականություն է վայելել միջնադարյան Հայաստանում* 222, 225, 520
Խուրասանյան Պետրոս (1808—1860), *Կ. Պոլսի ամիրաներից* 11, 99, 502—503
Խրիմյան Մկրտիչ (Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Ա. Վանեցի, 1820—1907), *հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային գործիչ, 1892-ից հայոց կաթողիկոս* 177, 208, 297, 428, 511, 513, 517, 522, 534
Խումարյան Աշոտ (1875—1938), *հեղափոխական, կուսակցական և սովետական գործիչ* 556
Խուզաու, *օսական էպոսի հերոս* 368

Ծերեթելի Ակակի (1840—1915), *վրաց բանաստեղծ և հասարակական գործիչ* 476
Ծերեթելի Գեորգի (1842—1900), *վրաց գրող, հրապարակախոս, գրաքննադատ, հասարակական գործիչ* 320, 540
Ծերենց (Շիշմանյան Հովսեփ, 1822—

1888). *գրող, հրապարակախոս* 229, 376, 428, 504, 520—522
Ծերունյան Ժենյա (ծնվ. 1947). *սովետահայ բանասեր* 8

Կալեդին Ալեքսեյ Մաքսիմովիչ (1861—1918), *ցարական բանակի գեներալ, գլխավորել է հակահեղափոխությունը Դոնի շրջանում* 47, 390
Կալիգուլա Գայոս Հուլիոս Կեսար (12—41), *37-ից հռոմեական կայսր* 153
Կամսարական Տիգրան (1866—1941), *գրող, հասարակական գործիչ* 9, 11, 46, 48, 299, 535
Կան Ալբերտ, *ամերիկյան գրող, հրապարակագիր* 525
Կանտ Իմմանուիլ (1724—1804), *գերմանացի փիլիսոփա և գիտնական, գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր* 140, 147
Կապոդիստրիաս (1776—1831), *Հունաստանի անկախության ժամանակներից՝ 1827-ից, երկրի առաջին վարչապետ* 194, 515
Կասալս Պաբլո (1876—1973), *իսպանացի թավջութակահար, հասարակական գործիչ* 525
Կավենյակ Լուի Էժեն (1802—1857), *ֆրանսիացի գեներալ, պետական գործիչ* 87
Կավկազեց *տե՛ս Կնունյանց Բոգդան*
Կավուր Կամիլլո Բենսո (1810—1861), *Իտալիայի վերամիավորման ժամանակաշրջանի պետական գործիչ* 23, 206, 287, 289, 299, 504, 517, 535
Կատլին, *Թիլի կերպարը Դը Կոստերի «Ուլենշպիգելում»* 375
Կարամզին Նիկոլայ Միխայլովիչ (1766—1826), *ռուս գրող, քննադատ, պատմաբան* 30
Կարապետ, *հայ ժողովրդի միջավայրում, ինչպես և տաածներում, շատ գործածվող անուն* 222
Կարինյան Արտաշես (Գաբրիելյան, 1886—1982), *սովետական կուսակցական և պետական գործիչ, գրականագետ, պատմաբան* 38—39
Կարինյանո, *իտալական Կարինյանո ամրոցի անունով իշխանական տիտղոս, որից սերում էր նաև իտալական թագավորական տոհմը (ներառյալ XIX դ.)* 145
Կարիպալդի Հովսեփ *տե՛ս Գարիբալդի Ջուզեպե*
Կառլ Ալբերտ (1798—1849), *մինչև գահակալելը Կարինյանո, 1821-ից Սարդինիայի թագավոր* 86, 231, 500, 521
Կառլոս Անխոհեմ *(ավելի ճիշտ՝* Խելահեղ. 1433—1477). *բուրգունդական հերցոգ* 265, 526
Կառլոս I (1600—1649), *անգլիական թագավոր 1625-ից* 305, 537
Կառլոս V (1500—1558), *Հաբսբուրգների դինաստիայից Իսպանիայի թագավոր՝ 1516—1556 թթ.* 200
Կառլոս Մեծ (742—814), *ֆրանկների թագավոր 768-ից, հռոմեական կայսր՝ 800-ից* 70, 174
Կառլոս X (1757—1836), *Բուրբոնների դինաստիայից Ֆրանսիայի թագավոր (1824—1830)* 194, 339, 514
Կարճիկյան Խաչատուր (1882—1918), *Անդրկովկասյան սեյմում ֆինանսների մինիստր, դաշնակցական գործիչ* 390
Կարնո Լազար Նիկոլա (1753—1823), *ֆրանսիացի մաթեմատիկոս, քաղաքական գործիչ* 98
Կարո, *Խ. Աբովյանի «Վերք Հայաստանիում» Աղասու ընկերներից* 369
Կերենսկի Ալեքսանդր Ֆյոդորովիչ (1881—1970), *ռուսական բուրժուական քաղաքական գործիչ, իրավաբան* 387—388, 390
Կիստյակովսկի Բ., *ռուս մտավորական, վեխականներից մեկը* 363
Կիրակոս Խանանա. *ըստ Ալիշանի «Շքահանա», Անիի հետկարը վաճառող* 141

Կիրակոսյան Ջոն (ծնվ. 1929), ամերիկահայ պատմաբան, պետական-հասարակական գործիչ 45
Կլաաս. Դը Կոստերի «Ուլենշպիգել» վեպում Թիլի հայրը 375
Կլեմանսո Ժորժ (1841—1929), ֆրանսիական պետական-քաղաքական գործիչ 28—29, 261—262, 268, 525, 532, 542
Կլինգեր Ֆրիդրիխ Մաքսիմիլիան (1752—1831), գերմանական գրող 540
Կլյուև Նիկոլայ Ալեքսեևիչ (1887—1937), ռուս բանաստեղծ 492
Կյուբեմպերկ տե՛ս Գուտենբերգ Յոհան
Կյուրճյան Մելքոն (1859—1915), գրող, մշակութային գործիչ 428
Կյուրճյան Միքայել (1879—1965), գրող, թարգմանիչ, հրապարակախոս, բեմագետ 530, 536
Կյուրոս II Մեծ (անհտ.— մ. թ. ա. 530 կամ 529), Պարսից և Անշան երկրների թագավոր (մ. թ. ա. 558-ից), պարսից արքա 550-ից 70
Կնունյանց Բոգդան (1878—1911), բոլշևիկյան կուսակցության գործիչ, պրոֆեսիոնալ հեղափոխական 31, 33, 38, 445, 556—558
Կոլցով Ալեքսեյ Վասիլևիչ (1809—1842), ռուս բանաստեղծ 492
Կոլումբոս Քրիստափոր (1451—1506), ծովագնաց 170, 413
Կոմիտաս (Սողոմոն Սողոմոնյան, 1869—1935), 555
Կոմս Էմմանուել տե՛ս Նալբանդյան Միքայել
Կոնստանդին Պավլովիչ (Կոստանդին ցուես, 1779—1831), մեծ իշխան, 1816—1831 թթ. լեհական թագավորության փոխարքա 194, 515
Կոռնիլով Լավր Գեորգիևիչ (1870—1918), ցարական բանակի գեներալ, միապետական 47, 390
Կոստանդին Մեծ (Կոստանդինոս, Փլավիոս Վալերիոս, մոտ 285—337), հռոմեական կայսր 306-ից 356
Կորչաքով տե՛ս Գորչակով Ալեքսանդր
Կռիլով Նիկիտա Իվանովիչ (1807—1879), Մոսկվայի համալսարանի իրավունքի պատմության պրոֆեսոր 468
Կռոնոս, հունական դիցաբանական տիտան, երկնքի և երկրի որդին 208
Կրասիլնիկյան Կոստանդին (1865—1942), թարգմանիչ, «Մուրճ», «Գործ» ամսագրերի հրատարակիչ 524
Կրասովսկի Աֆանասի Իվանովիչ (1780—1849), ռուս գեներալ-լեյտենանտ, 1826—1828 թթ. մասնակցել է ռուս-պարսկական պատերազմին, 1828-ին Հայկական մարզի պետ 343
Կրեսոս (մ. թ. ա. 595—546), Լիդիայի վերջին թագավորը մ. թ. ա. 560-ից 54
Կրճիկյան Հակոբ (1806—1865), Փարիզի օսմանյան դեսպանության գլխավոր թարգմանիչ 11, 501
Կրյուսոս տե՛ս Կրեսոս
Կրուպ Ալֆրեդ (1812—1887), գերմանացի գործարանատեր 177
Կուզմին Միխայիլ Ալեքսանդրովիչ (1875—1936), ռուս գրող 488
Կումանդուրոս (1814—1883), հունական պետական գործիչ, արտաքին գործոց մինիստր 222
Կուրղինյան Շուշանիկ (1876—1927), բանաստեղծուհի 34—35

Հաան Պավել (1793—1862), սենատոր, բարոն, 1837-ին գործուղվել է Անդրկովկաս 73
Հաբեթ, Նոյի երրորդ որդին, որից, ըստ քրիստոնեական ավանդության, ծագել են նաև հայերը, կոչվել՝ նաև հաբեթյաններ 66
Հագեն Աուգուստ Մատիաս (1794—1878), արվեստների պատմաբան Դորպատում, Խ. Աբովյանի բարեկամը 61
Հազկերտ II (անհտ.—457), Սասան-

յանների դինաստիայից պարսից արքայից արքա 439-ից 242
Հակոբյան Հակոբ (1866—1937), պրոլետարական պոեզիայի հիմնադիր, հեղափոխական գործիչ 33—35, 38, 469—471, 560—561
Հակոբյան Միքայել (ծնվ. 1925), սովետահայ պատմաբան, արձակագիր, լրագրող 8, 500, 519
Հակոբյան Պիոն (ծնվ. 1926), սովետահայ բանասեր 7, 544
Համլետ, Շեքսպիրի «Համլետ» ողբերգության հերոսը 474, 508, 561
Հայկ, Հայկ Նահապետ, Հայկ Դյուցազն, հայոց առասպելական նախահայր 5, 66, 70, 73, 87, 92, 175, 192—193, 218, 284, 501, 514
Հայկակ, Վ. Ալիշանի «Հուշիկք հայրենյաց հայոց» անձը 74, 497
Հայկակ տե՛ս Արփիարյան Արփիար
Հայկունի (Եղիշե Բաճո ու Գեղամյան, 1840—1920), գրող, պահպանողական հրապարակախոս 217, 519
Հայկունի Արմենակ (Ճիզմեճյան Համբարձում, 1835—1866), գրող, թարգմանիչ, խմբագիր, հասարակական գործիչ 11, 132, 504—506
Հայմ Ռուդոլֆ (1821—1901), գերմանական գրականության պատմաբան 159, 509
Հայնե Հայնրիխ (1797—1856), գերմանական բանաստեղծ, հրապարակախոս, քննադատ 186
Հայրապետյան Կարապետ (1825—1872), վաճառական, 1860—1862 և 1865—1867 թթ. Նոր Նախիջևանի քաղաքագլուխ 518
Հաննիբալ Բարկա (մ. թ. ա. մոտ 247/246—183), կարթագենցի զորավար և պետական գործիչ 70
Հարությունյան Աշոտ (ծնվ. 1911), սովետահայ պատմաբան 45, 547
Հարությունյան Արտաշես (1873—1915), գրող 400
Հեգել Գեորգ Վիլհելմ (1770—1831), գերմանական դասական փիլիսոփա 147, 158—160, 509
Հեղի, ըստ Հին կտակարանի հրեական քահանայապետ, անհոգությամբ հայտնի դատավոր 60
Հենրիկս Վիրս, Գարիբալդու զինվորներից, 1896-ին Իտալիայի հյուպատոսը Հալեպում, գլխավորել է Զեյթունի և Սասունի 1894—1897 թթ. դեպքերը հետաքննող հանձնախումբը 22, 286—287, 501, 530
Հենրիկոս III, հռոմեա-գերմանական կայսր (1026—1056) 170
Հերակլես, հույն առասպելական դյուցազուն 54, 260, 495, 525
Հերակլ II (1720—1798), վրաց թագավոր 6
Հերկուլես տե՛ս Հերակլես
Հերդեր Յոհան Գոտֆրիդ (1744—1803), գերմանացի փիլիսոփա, գրող-լուսավորիչ 540
Հերվե Վիլյամ (1578—1657), անգլիացի բնախույզ, բժիշկ 413
Հեքիմյան Արապիան (1832—1892), դրամատուրգ, բանաստեղծ 428, 510, 516
Հիսուս, Քրիստոս, Հիսուս Քրիստոս 170, 222, 297, 325, 357, 363, 367, 412, 419, 479, 514, 516, 537, 550
Հիտլեր Ադոլֆ (Շիկլգրուբեր, 1889—1945), գերմանական ֆաշիստական կուսակցության և պետության պարագլուխ, պատերազմական գլխավոր հանցագործ 45
Հյուգո Վիկտոր (1802—1885), ֆրանսիացի գրող 11, 108, 138, 229, 264, 277—279, 338, 505—507, 521, 526, 528, 543
Հյուիսմանս Ժորիս Կարլ (1848—1907), ֆրանսիացի գրող 488
Հյում Դավիդ (1711—1776), անգլիացի փիլիսոփա, պատմաբան, տնտեսագետ, հոգեբան 193

Հոմերոս (մ. թ. ա. XII և VII դդ. միջև) 406, 497
Հոմս *տե՛ս Հովհաննիսյան Հովհաննես*
Հոռն Ֆիլիպ (1518—1568), *նիդեռլանդական պետական գործիչ, Իսպանիայի դեմ հոլանդացիների ապստամբության պարագլուխներից* 303
Հովակիմյան Միհրան, *1895 թ. Սասունի դեպքերի օրերին նախատեսվում էր իբրև «Թուրքահայության վարչապետ»* 291
Հովհան-Քոչ, *հայրենասեր հերոս* 218
Հովհաննես, *չորս ավետարանիչներից մեկը* 506, 511, 516, 553
Հովհաննես Դրասխանակերտցի (889—931), *պատմիչ* 544
Հովհաննիսյան Աբգար (1849—1904), *հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ* 247, 523
Հովհաննիսյան Աբգար (ծնվ. 1908), *սովետահայ պատմաբան* 6, 545
Հովհաննիսյան Աշոտ (1887—1972), *սովետահայ պատմաբան, կուսակցական-պետական գործիչ* 5, 518, 544
Հովհաննիսյան Հովհաննես (1864—1929), *բանաստեղծ, թարգմանիչ* 314, 539—540
Հովսեփ, *ըստ Հին կտակարանի Հակոբ նահապետի և Ռաքելի զավակը* 244
Հորդանանյան Պողոս, *հնդկահայ գործիչ (XIX դ. I կես)* 495
Հրազդան *տե՛ս Արփիարյան Արփիար*
Հրանդ *տե՛ս Կյուրճյան Մելքոն*
Հրաչյա Ազնիվ (Մինասյան, 1853—1920), *դերասանուհի* 539
Հուդա, *Քրիստոսի 12 առաքյալներից-աշակերտներից մեկը, որը ուսուցչին մատնեց 30 արծաթով* 415
Հումբոլդտ Ալեքսանդր (1769—1859), *գերմանացի բնախույզ, աշխարհագրագետ, ճանապարհորդ* 85, 140
Հումբոլդտ Վիլհելմ (1767—1835), *գերմանացի բանասեր, փիլիսոփա, լեզվաբան, պետական գործիչ* 140
Հումբոլտ *տե՛ս Հումբոլդտ Ալեքսանդր*
Հուլիոս Կեսար Գայոս (մ. թ. ա. 102 կամ 100—44), *հռոմեական պետական, քաղաքական և ռազմական գործիչ* 174, 500

Ղազար Փարպեցի (մոտ 442—VI դ. սկիզբ), *պատմիչ* 24, 330
Ղազարյան Հայկ (ծնվ. 1930), *սովետահայ պատմաբան* 504, 516, 523, 528
Ղազարյան Վոլոդյա (ծնվ. 1926), *սովետահայ պատմաբան* 536
Ղարիբջանյան Գևորգ (ծնվ. 1920), *սովետահայ պատմաբան* 47
Ղորղանյան Վասիլ (Ղորղանով, 1865—1934), *երաժշտագետ* 27, 263, 526
Ղուկասյան Հովհաննես (ծնվ. 1919), *սովետահայ գրող* 547
Ղևոնդ Երեց Վանանդեցի (անհտ.—454), *եկեղեցական գործիչ, Վարդանանց պատերազմի մասնակից* 327

Ճիզմեճյան Գերենիկ (1886—1962), *գրասեր, լրագրող, Դ. Վարուժանի մտերիմը* 402, 550

Մաղոյան Գևորգ (ծնվ. 1911), *սովետահայ բանասեր* 551
Մալարմե Ստեֆան (1842—1898), *ֆրանսիացի բանաստեղծ* 542
Մահմեդ (մոտ 570—632), *արաբ կրոնական քարոզիչ, մահմեդականության հիմնադիր* 357, 363
Մածինի Ջուզեպե (1805—1872), *Իտալիայի ազգային-ազատագրական շարժման առաջնորդներից* 193, 206, 425, 499—500, 514
Մամուրյան Հրանտ (1871—1935), *խմբագիր, Մ. Մամուրյանի որդին* 516
Մամուրյան Մատթեոս (1830—1901), *հրապարակախոս, գրող, թարգմանիչ, բանասեր, պատմագետ, մանկավարժ* 9—11, 192, 428, 504—505, 514—516
Մամոնտով Սավվա Իվանովիչ (1841—

1918). *ռուս խոշոր արդյունաբերող, արվեստների հովանավոր* 270
Մայկով Ապոլլոն Նիկոլաևիչ (1821—1897). *ռուս բանաստեղծ* 562
Մայսուրյանց Սամսոն. *1875-ից ուսանել է Դորպատում, վիրաբույժ* 79, 498
Մանանդյան Հակոբ (1873—1952). *հայագետ, պատմաբան* 527, 543
Մանիկյան Սիմոն *տե՛ս Նալբանդյան Միքայել*
Մանկունի Վահրամ (Վահրամ վարդապետ Մանկունի, 1846—1920). *եկեղեցական գործիչ* 164, 510
Մանվելյան Լևոն (1864—1919). *գրող, գրականության պատմաբան* 319, 540
Մանուխին, *ռուսական պետական գործիչ, 1905 թ. արդարադատության մինիստր* 267
Մառալյան Շուշանիկ (Տեր-Միրաքյան, 1877—1944), *մանկավարժ, Ավ. Իսահակյանի սիրած աղջիկը* 361
Մատթեոս, *չորս ավետարանիչներից առաջինը* 501, 511, 522—523, 550
Մարի Անտուանետ (1755—1793). *ֆրանսիական թագուհի* 159
Մարիամ Մագդաղենացի. *քրիստոնեական ավանդությամբ անառակ կին, ապա՝ Քրիստոսի խանդոտ հետևորդ* 412
Մարկիանոս (392—457). *450-ից Բյուզանդիայի կայսր* 541
Մարսել Էտիեն (անհտ.—1358). *1357—1358 թթ. Փարիզի ապստամբության պարագլուխ* 310
Մարտիրոսյանց Հովհաննես. *տպարանատեր Թիֆլիսում* 206
Մարքս Կարլ (1818—1883), *գիտական կոմունիզմի հիմնադիր, միջազգային պրոլետարիատի առաջնորդ և ուսուցիչ* 43, 305, 392, 443, 508, 537, 549
Մաքսիմիլիան I (1459—1519), *Հռոմեական սրբազան կայսրության կայսր 1493-ից* 265, 526
Մեդիչիներ. *Մեդիչյան տուն, Ֆլորենցիայի Մեդիչյան տոհմի իշխաններ* 171
Մելիք-Կարագյոզյան Գևորգ (1873—անհտ.). *հրապարակախոս-խմբագիր* 527
Մելիքսեթյան Վասպուր (1911—1977), *սովետահայ պատմաբան* 528
Մելքոն ախպեր, Մելքոն Խուրշիա *տե՛ս Տամատյան Միհրան*
Մենիե Կոստանդին (1831—1905), *բելգիացի քանդակագործ* 473
Մեսիա. *ըստ հին կտակարանի մարգարեական գուշակությունների, աստծուց ուղարկվող գերագույն «փրկիչ»* 289
Մեսրոպ Երեց Վայոցձորեցի (X դար), *պատմագիր* 544
Մեսրոպ Լևոն (1880—1960). *գրող* 547
Մեսրոպ Մաշտոց (մոտ 362—440). 343, 478
Մետերլինկ Մորիս (1862—1949), *բելգիացի գրող* 356, 406
Մետեռնիխ Կլեմենս (1779—1859), *ավստրիական պետական գործիչ* 279, 356
Մերեժկովսկի Դմիտրի Սերգեևիչ (1866—1941). *ռուս գրող և քննադատ* 481, 491
Մերուժան Արծրունի (անհտ.—371) *նախարար, Արծրունյաց տոհմի նահապետ* 144
Միլերան Ալեքսանդր (1859—1943), *ֆրանսիական պետական-քաղաքական գործիչ, 1920—1924 թթ. հանրապետության նախագահ, փաստաբան* 542
Միլտոն Ջոն (1608—1674). *անգլիացի բանաստեղծ, քաղաքական գործիչ* 501
Միլլ Ջոն Ստյուարտ (1806—1873). *անգլիացի տնտեսագետ, փիլիսոփա* 151, 200, 508
Միլյուկով Պավել Նիկոլաևիչ (1859—1943), *ռուս պատմաբան և քաղաքական գործիչ* 390
Միհր. *արևի հին արիական աստված* 567
Մինաս վարդապետ *տե՛ս Տիգրանյան Մինաս վարդապետ*

Մինյե Ֆրանսուա (1796—1884), *ֆրանսիացի պատմաբան և հրապարակախոս* 94—95, 97—98, 501
Միշլե Ժյուլ (1798—1874), *ֆրանսիացի պատմաբան* 94, 277
Միսաքյան Խաչատուր (1815—1891), *մշակութային գործիչ, մանկավարժ, թարգմանիչ* 428, 501
Միսաքյան Շավարշ (1884—1957), *հրապարակագիր-խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ* 550
Միրաբո Օնորե Գաբրիել (1749—1791), *ֆրանսիական բուրժուական հեղափոխության գործիչ, հռետոր* 95, 197, 204, 501
Միրբո Օկտավ (1848 կամ 1850—1917), *ֆրանսիացի գրող* 488
Միցի, *Աբովյանի դորպատյան բարեկամ Հագենի զավակը* 61
Միցկևիչ Ադամ (1788—1855), *լեհ բանաստեղծ* 277
Միքայել, *շինիկցի, 1894-ի կոտորածների ականատես-վկա* 533
Միքայելյան Պողոս վարդապետ, *XIX դ. II կեսի եկեղեցական գործիչ* 147, 508
Մխիթար Սեբաստացի (Մխիթար աբբա, 1676—1749), *հասարակական, գիտական, մշակութային և եկեղեցական գործիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիր* 136, 506
Մխիթարյան Մարգո (ծնվ. 1920), *սովետահայ բանվոր* 498, 523
Մխիթարյաններ, Մխիթարյանք, *Մխիթարյան միաբանության անդամներ* 136, 275, 506, 533
Մհեր, *վիպական-առասպելական հերոս, Սասունցի Դավթի որդի Փոքր Մհերը* 245, 363, 366—369, 372, 523, 547
Մյասնիկյան Ալեքսանդր (Մարտունի, 1886—1925), *սովետական պետական, կուսակցական և ռազմական գործիչ, հրապարակախոս և գրականագետ* 33, 38, 477, 548, 561—562
Մյուսե Ալֆրեդ դը (1810—1857), *ֆրանսիացի գրող* 101, 503
Մոլիեր Ժան Բատիստ (1622—1673), *ֆրանսիացի կատակերգակ* 88, 536
Մոմոս (Մոմուս), *հունական դիցաբանական ծաղրի և պարսավանքի աստված* 221—222, 520
Մոնթեյն *տե՛ս Մոնտեն Միշել դը*
Մոնտեն Միշել դը (1533—1592), *ֆրանսիացի սկեպտիկ փիլիսոփա* 113
Մոնտեսքյո Շառլ (1689—1755), *ֆրանսիական լուսավորիչ* 164, 204
Մոռաս Շառլ (1868—1952), *ֆրանսիացի հրապարակախոս, քննադատ, բանաստեղծ* 512
Մովսես (ծնվ. մ. թ. ա. մոտ 1600), *ըստ Հին կտակարանի հրեական ժողովրդի առասպելական առաջնորդ* 147, 363, 508, 514
Մովսես Խորենացի (V դար), *հայ պատմագրության հայր* 76, 192, 284, 326, 376, 514, 540, 543—544, 551
Մորո Ժան Վիկտոր (1763—1813), *ֆրանսիացի գեներալ* 98
Մուհամմեդ III, *թուրքական սուլթան (1595—1603 թթ.), հայերի և քրիստոնյաների հալածանքներով* 295
Մուշեղ Մամիկոնյան, *զորավար, Պապ թագավորի (368—374 թթ.) ժամանակ Հայաստանից վտարեց պարսիկներին* 543
Մուշեղ սպարապետ, *տե՛ս Մուշեղ Մամիկոնյան*
Մուրատ, *տե՛ս Մուրատյան Սամվել*
Մուրադ, *տե՛ս Բոյաջյան Համբարձում*
Մուրադ բեյ, *երիտթուրքերից, հրապարակագիր-խմբագիր* 415
Մուրատ-Ռափայելյան *տե՛ս Մուրատյան Սամվել և Ռափայել Էդուարդ*
Մուրատյան Սամվել, *հնդկահայ դրամատեր, Վենետիկի Մխիթարյանների իրավասությամբ 1834 թ. Պադուայում հիմնադրված Մուրատյան վարժարանի*

ֆինանսատարոցը 173—175, 510—511
Մուրացան (Տեր-Հովհաննիսյան Գրիգոր, 1854—1908) 258, 524
Մուսի. Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» հերոսներից 369
Մեկի. Ալ. Դյումա հոր «Քին կամ...» հերոսներից 475

Յարճանյան տե՛ս Սիամանթո
Յարճանյան Վահան, Սիամանթոյի եղբայրը 550
Յարկիոս, հույն իշխան, նախատեսվում էր ազատագրվող Կրետեի կառավարիչ 312

Նազարյան Ստեփանոս (1812—1879), հրապարակախոս, «Հյուսիսափայլի» հիմնադիր, լուսավորիչ, հասարակական գործիչ 9, 77, 319, 442, 498, 506
Նալբանդյան Ղազարոս, Մ. Նալբանդյանի եղբայրը 158, 508
Նալբանդյան Միքայել (1829—1866), 9—11, 13, 16, 107, 136, 140, 147, 197—200, 330—331, 376, 438, 471, 475, 479, 498, 504—509, 515—518, 521, 542—543, 560, 562
Նանսեն Ֆրիտյոֆ (1861—1930), նորվեգացի օվկիանագետ, արկտիկայի հետազոտող, հասարակական գործիչ, հայ ժողովրդի անձնվեր բարեկամ 20, 46
Նապոլեոն I Բոնապարտ (1769—1821), ֆրանսիացի զորավար, 1804—1814 թթ. կայսր 70, 95, 98, 160, 174, 219, 265, 304, 325, 339, 502, 509—510, 512, 515, 525—526, 553
Նապոլեոն III (Լուի Բոնապարտ, 1808—1873), 1852—1870 թթ. Ֆրանսիայի կայսր 87, 99, 138—139, 182, 231, 339, 499, 502, 507, 521
Նար-Պեյ տե՛ս Գալֆայան Խորեն
Ներովբ տե՛ս Բեյ
Նեգրի Ադա (1870—1945), իտալացի բանաստեղծուհի 470

Նելիդով Ալեքսանդր Իվանովիչ (1835—անհտ.), ռուս Նելիդով ազնվականներից, պետական գործիչ, Ռուսաստանի դեսպան Թուրքիայում 30
Նեռ. հակաքրիստոս կամ չար ոգու անձնավորում 367
Նեյլեր Վ. Ե. (Վիլին), ռուս սովետական պատմաբան 499
Ներոն Կլավդիոս (37—68), հռոմեական կայսր (54—68) 153
Ներսես Աշտարակեցի (1771—1857), եկեղեցական-քաղաքական գործիչ, 1843-ից հայոց կաթողիկոս 53, 343, 495, 544
Ներսես Մեծ. հայոց կաթողիկոս (353—373) և պետական գործիչ 251, 343, 544
Ներսես պատրիարք տե՛ս Վարժապետյան Ներսես
Ներսիսյան Մկրտիչ (ծնվ. 1910), սովետահայ պատմաբան 13, 27, 45, 526, 528, 544
Նիկողայոս տե՛ս Նիկոլայ I
Նիկոլայ I (1796—1855), ռուսական կայսր 1825-ից 194, 515
Նիկոլայ II (1868—1918), ռուսական կայսր (1894—1917) 389, 527, 562
Նիցշե Ֆրիդրիխ (1844—1900), գերմանացի գրող և փիլիսոփա 363
Նոգին Վիկտոր Պավլովիչ (1878—1924), սովետական կուսակցական և պետական գործիչ 558
Նոյման Կարլ-Ֆրիդրիխ (1793—1870), արևելագետ, հայագետ, պատմաբան 65
Նոյ, ըստ Հին կտակարանի մարդկության ետջրհեղեղյան նախահայրը 66, 553
Նուբար Պողոս փաշա (1851—1930), հասարակական-քաղաքական գործիչ, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիր 313, 539, 556

Շահազիզ Երվանդ (Շահազիզյան, 1856—1951), բանասեր 497, 536

Շահազիզ Սմբատ (1841—1907), *բանաստեղծ, հրապարակախոս* 9, 169, 319, 442, 510
Շահամիր Շահամիրյան (1723—1797), *XVIII դ. II կեսի հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, լուսավորիչ* 6
Շահբեգ Ս., *տե՛ս Նալբանդյան Միքայել*
Շահխաթունի Արշավիր (1889—1957), *դերասան, քաղաքական գործիչ* 396
Շահնազար Հովհաննես (1857—1942), *հրապարակագիր-խմբագիր* 428
Շահնուր *տե՛ս Մամուրյան Մատթեոս*
Շահ-Պարոնյան Բագրատ (1860—1941), *«Նոր-դար» լրագրի սրբագրիչ և քարտուղար, Սպանդար և Սուրեն Սպանդարյանների բարեկամը* 472—473, 560
Շահրիկյան Հարություն (Ատոմ, 1860—1915), *հրապարակախոս, քաղաքական գործիչ* 416—417
Շահումյան Ստեփան (1878—1918), *հեղափոխական գործիչ, հրապարակախոս, գրաքննադատ, թարգմանիչ* 33, 38, 47, 397, 438, 452, 548, 556, 558—559
Շամտանճյան Միքայել (1874—1926), *պատմաբան, հրապարակախոս, խմբագիր* 400
Շանգառնիե Նիկոլա (1793—1877), *ֆրանսիական գեներալ և քաղաքական գործիչ* 500
Շանթ Լևոն (Սեղբոսյան, 1869—1951), *գրող, քաղաքական գործիչ* 46
Շապուհ II, *պարսից շահ Սասանյաններից (309—379)* 284
Շառլ-Ալպեր *տե՛ս Կարլ Ալբերտ*
Շառլ Ա *տե՛ս Կարլոս I*
Շառլ Ժ *տե՛ս Կարլոս X*
Շառմըղան հայր, *XIX դ. վերջի ֆրանսիացի հայասեր եկեղեցական գործիչ* 28, 542
Շատոբրիան Ֆրանսուա Ռենե (1768—1848), *ֆրանսիացի գրող* 204
Շառրաս Ժան (1810—1865), *ֆրանսիացի զինվորական և քաղաքական գործիչ* 139
Շաքիր փաշա, *1894—1897 թթ. Սասունում գործող թուրքական զորքերի հրամանատար, «սուլթանի կոմիսար»* 256, 532
Շեյկովնիկով, *1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում աչքի ընկած հայ զինվորական* 512
Շենիե Անդրե Մարի (1762—1794), *ֆրանսիացի բանաստեղծ, հրապարակախոս* 98, 338, 543
Շեքսպիր Վիլյամ (1564—1616), *անգլիացի դրամատուրգ* 185, 229, 508, 561
Շիլլեր Յոհան (1759—1805), *գերմանացի բանաստեղծ և դրամատուրգ* 38, 140, 147, 185, 315—316, 467, 539—540
Շիշմանյան Հովսեփ *տե՛ս Ծերենց*
Շիրվանզադե Ալեքսանդր (Մովսիսյան, 1858—1935), 27, 30, 34—35, 46, 48, 260, 442, 453, 525—527, 536, 538
Շմելյով Իվան Սերգեևիչ (1873—1950), *ռուս գրող* 39
Շուշիկ *տե՛ս Մատաթյան Շուշանիկ*

Ոսկանյան Ստեփան (Ոսկան, 1825—1901), *գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս-խմբագիր, թարգմանիչ* 8, 9, 11, 81, 276—277, 298, 306, 428, 499, 500—503, 521, 527—528, 530, 535
Որբունի Զարեհ (Եոքուզյան, 1902—1981), *գրող, հրապարակագիր, հասարակական գործիչ* 547

Չամուռճյան Հովհաննես (Տերոյենց, 1801—1888), *եկեղեցական գործիչ, հրապարակախոս և խմբագիր* 11, 147—148, 198, 508, 516
Չարենց Եղիշե (Սողոմոնյան, 1897—

1937), 46, 48—50, 485, 535, 538, 552, 562—563
Չարգ Արամ (Չարխչյան, 1875—1947), *գրող, թարգմանիչ, հասարակական գործիչ* 547
Չարմաղան, *մոնղոլ զորավար, Հայաստանի վրա արշավել է 1236—1245 թթ.* 372
Չերազ Մինաս (Չերազյան, 1852—1920), *հրապարակագիր-խմբագիր, մանկավարժ, հասարակական գործիչ* 301, 522, 534, 536
Չերնիշևսկի Նիկոլայ Գավրիլովիչ (1828—1889), *ռուս հեղափոխական դեմոկրատ, հրապարակախոս, բնագետ* 9, 280, 452, 508, 528
Չիլինկիրյան Գրիգոր (1833—1923), *թարգմանիչ, հրապարակագիր-խմբագիր* 9, 11, 112, 428, 505—506
Չինգիզ խան (1155—1227), *մոնղոլական կայսրության հիմնադիր, զորավար և զավթիչ* 71, 372, 374
Չիրիկով Եվգենի (1864—1937), *ռուս գրող* 487, 563
Չխեիձե Նիկոլայ Սեմյոնովիչ (1864—1926), *վրաց մենշևիկյան կուսակցության պարագլուխներից, հրապարակախոս* 391
Չխենկելի Ակակի Իվանովիչ (1874—1959), *վրաց մենշևիկյան պարագլուխներից* 391, 549
Չոպանյան Արշակ (1872—1954), *գրող, հրապարակագիր, խմբագիր, հասարակական գործիչ* 23—25, 28—29, 46, 286, 299—300, 309, 323, 422, 510—511, 524, 526, 529—530, 535, 538, 540—543, 552, 554

Պազարճյան Ռաֆայել (1879—1922), *մշակութային գործիչ, բժիշկ* 398, 401, 549—550
Պայ Պողոս Հ., *XIX դ. հնդկահայ գործիչ* 518
Պալասանյան Ստեփանոս (1837—1899), *հայագետ, քերական, պատմաբան, մանկավարժ, հրապարակագիր* 250, 524
Պալյան Հակոբ (1845—1875), *Օսմանյան կայսրության արքունի ճարտարապետ, արևմտահայ մշակութային գործիչ* 428
Պապ, *Հայոց Արշակունի թագավոր (369—374)* 540
Պապիկ իշխան (1861—անհտ.), *1877—1878 թթ. Զեյթունի ապստամբության առաջնորդ* 282—283, 528
Պասկալ Բլեզ (1623—1662), *ֆրանսիացի մտածող, ֆիզիկոս և մաթեմատիկոս* 263
Պասկևիչ Իվան Ֆյոդորովիչ (Երևանսկի, 1782—1856), *ռուս զինվորական, Կովկասյան երկրամասի կառավարիչ և զորքերի հրամանատար (1827—1831)* 195, 231, 495, 515, 521
Պատկանյան Ռափայել (1830—1892), 9, 13, 161, 319, 331, 376, 442, 475, 509—510, 524, 536, 561
Պատկանյան Քերովբե (1833—1889), *բանաստեղծ, պատմաբան, բանասեր* 163, 331, 509
Պարթևներ, *Իրանի թագավորական կառավարող հարստություն մ. թ. ա. մոտ 248—մ. թ. 224 թթ.: Պարթևների ճյուղն էին մ. թ. I դարից Հայաստանում գահակալող Արշակունիները* 324, 540
Պարոնյան Հակոբ (1842—1891), 11—13, 219, 428, 519—520
Պարրոտ Գեորգ Ֆրիդրիխ (1767—1852), *մաթեմատիկոս-ֆիզիկոս, Դորպատի համալսարանի ռեկտոր* 66, 497
Պարրոտ Ֆրիդրիխ (1791—1841), *Դորպատի համալսարանի պրոֆեսոր, Խ. Աբովյանի հովանավորն ու բարեկամը* 497

Պենդըմ (1748—1832), անգլիացի հրապարակիչ և օրենսգետ 193
Պենթհամ տե՛ս Պենդհըմ
Պեշիկթաշլյան Մկրտիչ (1828—1868), 11—12, 172, 401, 428, 504, 510—511, 516
Պեպո, Գ. Սունդուկյանի նույնանուն կատակերգության հերոսը 14
Պետրարկա Ֆրանչեսկո (1304—1374), իտալացի բանաստեղծ 336
Պետրոս առաքյալ, ըստ քրիստոնեական ավանդության Քրիստոսի մերձավոր աշակերտը 520
Պետրոս Մեծ, Առաջին (1672—1725), ռուսական ցար 1682-ից, ապա 1721-ից, կայսր 30, 70, 162—163, 346, 509, 544
Պիկար Մարի-Ժորժ (1854—1914), ֆրանսիական բանակի գլխավոր շտաբի գնդապետ, Դրեյֆուսի պաշտպանության նախաձեռնողներից 261, 525
Պինկերտոն, ամերիկյան հետախույզ, 1850 թ. ստեղծել է հետախուզական գործակալություն 481
Պիսարև Դմիտրի Իվանովիչ (1840—1868), ռուս հրապարակախոս և գրաքննադատ 452
Պիրոգով Նիկոլայ Իվանովիչ (1810—1881), ռուս վիրաբույժ և մանկավարժական գործիչ 448, 557
Պլեխանով Գեորգի Վալենտինովիչ (1856—1918), ռուս փիլիսոփա, հրապարակախոս, պատմաբան, գրական քննադատ 491
Պլեվե Վյաչեսլավ Կոստանդինովիչ (1846—1904), ռուս պետական գործիչ, 1902-ից ներքին գործերի մինիստր 268, 527
Պյութիա, Դելֆի՝ Ապոլլոնի տաճարի քրմուհի և պատգամախոս (մ. թ. ա. VI դ.) 54
Պշիբիշևսկի Ստանիսլավ (1868—1927), լեհ գրող 488
Պողոս առաքյալ, ըստ քրիստոնեական ավանդության Քրիստոսի առաքյալներից մեկը 412
Պողոս չարագործ տե՛ս Միքայելյան Պողոս վարդապետ
Պողոսյան Հայկազ (ծնվ. 1924), սովետահայ պատմաբան 528
Պողոսյանց Մատթեոս տե՛ս Նալբանդյան Միքայել
Պոննուկյան Հ., Ստ. Նազարյանի «Երիտասարդ բարեկամներից», ախալցխացի, 1877 թ. ուսանում էր Հայդելբերգում 77, 498
Պոյաճյան Համբարձում (Մեծն Մուրադ, 1860—1915), ժողովրդական վրիժառու, 1891—1896 թթ. գլխավորում էր Սասունի պաշտպանությունը 533—534, 567
Պորտալիս Ալեքսանդր (1841—անհտ.), ֆրանսիացի հրապարակախոս 203
Պոշյան Պերճ (Տեր-Սամվելյան Հովհաննես, 1837—1907), 11, 331, 442
Պրեսանսե Ֆրանսիս (1854—1914), ֆրանսիացի քաղաքական գործիչ, հրապարակախոս, «Յումանիտեի» հիմնադիրներից, իրավաբան 261, 350
Պրոմեթևս, հունական դիցաբանական հերոս 363, 367, 438, 540, 556
Պրուդոն Պիեր-Ժոզեֆ (1809—1865), ֆրանսիացի հրապարակախոս, անարխիստ 147
Պրունո Ջորդանո տե՛ս Բրունո Ջորդանո
Պուգաչով Եմելյան Իվանովիչ (մոտ 1742—1775), Ռուսաստանի գյուղացիական ապստամբության առաջնորդ 162
Պուշկին Ալեքսանդր Սերգեևիչ (1799—1837), ռուս բանաստեղծ 32, 186, 558
Պուրիշկևիչ Վլադիմիր Միտրոֆանովիչ (1870—1920), ռուս խոշոր կալվածատեր, սևհարյուրակային 457

Ջամալյան Արշակ (1884—1961), դաշնակցական գործիչ 396
Ջափարիձե Պրոկոփիյ (Ալյոշա, 1880—1918), կոմունիստական կուսակցու-

թյան գործիչ, պրոֆեսիոնալ հեղափոխական 558
Ջեմալ-փաշա (1872—1922), երիտթուրքական պետական գործիչ, հայոց մեծ եղեռնի կազմակերպիչներից 41
Ջեֆերսոն Թոմաս (1743—1826), ամերիկյան պետական-հասարակական գործիչ 204
Ջրպետ Շահան (Ջրպետյան Հակոբ, 1782—1837), հայագետ, ներսիսյան դպրոցի ուսուցիչ 65

Ռադին Բ. տե՛ս Կնունյանց Բոգդան
Ռազին Ստեփան Տիմոֆեևիչ (մոտ 1630—1671), Ռուսաստանի գյուղացիական շարժման առաջնորդ 162, 363
Ռադզիվիլ Միխայիլ (1778—1850), լեհ գեներալ 195, 515
Ռափայել Էդուարդ (Ղահրամանյան Էդուարդ Ռափայելի, 1734—1791), հնդկահայ դրամատեր, ֆինանսավորել է Մխիթարյանների տնօրինությամբ 1836 թ. Վենետիկում հիմնադրված Ռափայելյան վարժարանը 173—175, 510—511
Ռեմյուզա Շառլ-Ֆրանսուա (1797—1875), ֆրանսիացի հրապարակախոս և պետական գործիչ 315
Ռենան Էռնեստ (1828—1892), ֆրանսիացի պատմաբան, փիլիսոփա 419
Ռենոդո Թեոֆրաստ (1584—1651), ֆրանսիացի բժիշկ, ֆրանսիական առաջին լրագրի հիմնադիրը (1631) 315
Ռինալդո. Տ. Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի հերոսներից 506
Ռյուրիկ (830—879), ռուս առաջին իշխանը 73
Ռոբեսպիեր Մաքսիմիլիան (1758—1794), ֆրանսիական բուրժուական հեղափոխության առաջնորդներից 309, 502
Ռոզանով Վասիլի Վասիլևիչ (1856—1919), ռուս գրող, քննադատ, հրապարակախոս, փիլիսոփա 491
Ռոզվելտ տե՛ս Ռուզվելտ Թեոդոր
Ռուժե դը Լիլ (1760—1836), «Մարսելիեզի» հեղինակը 527
Ռոլանդ, ֆրանսիական «Երգ Ռոլանդի մասին» էպոսի հերոսը 316, 336, 539
Ռոլեն-Ժակմեն, XIX դ. ֆրանսիացի հայասեր գործիչ 503
Ռոլլան Ռոմեն (1866—1944), ֆրանսիացի գրող, հասարակական գործիչ 29
Ռոմանովներ, ռուսական բոյարական տոհմ, 1613-ից ցարերի դինաստիա 515
Ռոսկովշենկո Իվան Վասիլևիչ (1809—1889), ռուսական դատարանի խորհրդական, գրող 72, 497
Ռասել Ջոն (1792—1879), լորդ, անգլիական վիգերի պարագլուխ, 1859—1865 թթ. արտաքին գործոց մինիստր 78, 159
Ռստամ (Նաև Ռուստամ), պարսից դյուցազուն 54, 367, 495
Ռուբեններ տե՛ս Դարբինյան Ռուբեն
Ռուբենս Պետեր Պաուլ (1577—1640), ֆլամանդացի նկարիչ 404, 552
Ռուզվելտ Թեոդոր (1858—1919), ամերիկյան պետական գործիչ, 1901—1908 թթ. պրեզիդենտ 425, 554
Ռուսինյան Նահապետ (1819—1876), բժիշկ, հասարակական-մշակութային գործիչ 306, 428, 504
Ռուսո Ժան Ժակ (1712—1778), ֆրանսիացի փիլիսոփա, գրող, լուսավորիչ 164, 193, 316, 338, 540

Սաիդ փաշա, 1877—1878 թթ. թուրքական զորամասերի հրամանատար Զեյթունում 282—283
Սալիսբյուրի, Սալիսբրի տե՛ս Սոլսբերի Ռոբերտ-Սեսիլ
Սալմասյան Արմենակ (1888—1971), մատենագետ 518
Սահակ Պարթև (մոտ 348—419), պետական և հոգևոր գործիչ, բանաս-

տեղծ-թարգմանիչ, 387—436 թթ. Հայոց կաթողիկոս 251
Սաղյան Սերո (ծնվ. 1926). սովետահայ բանասեր 536
Սանին. ռուս գրող Մ. Պ. Արցիբաշևի նույնանուն վեպի հերոսը 481
Սառաֆյանց Մարտիրոս տե՛ս Նալբանդյան Միքայել
Սասանյան. պարսից թագավորական դինաստիա (III—VII դդ.) 233
Սասունցի Դավիթ. հայոց «Սասնա ծռեր» էպոսի հերոսներից 245, 523
Սարգսյան Լևոն (1862—1927). գրական-մշակութային-հասարակական գործիչ 524
Սարուխան (Սարուխանյան Առաքել, 1863—1949). հրապարակախոս, պատմաբան 498, 503, 513, 518
Սեբեոս. VII դ. պատմագիր, եպիսկոպոս 270, 376
Սեթ Արշար տե՛ս Արգարյան Սեթ Հարությունյան
Սեմ, ըստ Հին կտակարանի Նոյի որդին և սեմական ցեղերի նախահայրը 553
Սեն Ժյուստ Անտուան (1767—1794), ֆրանսիացի քաղաքական գործիչ, յակոբին 97
Սեն Մարտեն Անտուան (1791—1832), ֆրանսիացի հայագետ 65
Սեն Սիմոն (1760—1825), ֆրանսիացի ուտոպիստ սոցիալիստ 193
Սերվիչ (Սերովբե Վիչենյան, 1815—1897). դրական-հասարակական գործիչ, բանասեր, բժիշկ 534
Սիամանթո (Յարճանյան Ատոմ, 1878—1915), 23, 34—36, 41—43, 376, 398—399, 404—406, 549—552
Սիմոն Ժյուլ (1814—1896), ֆրանսիական քաղաքական գործիչ, փիլիսոփա 88—94, 114, 501, 505
Սիպիլ (Ասատուր Զապել, 1863—1934), բանաստեղծուհի, հասարակական գործիչ 321, 428, 540
Սիթալ Կարապետ (1891—1972). գրող, հասարակական գործիչ 547
Սվաճյան Հարություն (1831—1874). հրապարակախոս, խմբագիր, հասարակական գործիչ 9—11, 102, 141—142, 428, 503—505, 507, 516
Սկիտալեց Ստեփան Գավրիլովիչ (Պետրով, 1869—1941). ռուս գրող 454, 558
Սմբատ I Բագրատունի (Նահատակ). Հայոց թագավոր (891—914) 251
Սյու Էժեն (1804—1857), ֆրանսիացի գրող 83
Սնարյան Սնար (Թարինյան Միհրան, 1887—1941). տաղերգու, խմբագիր, հասարակական գործիչ 435, 555
Սոլոգուբ Ֆյոդոր Կուզմիչ (Տետերնիկով, 1863—1927). ռուս գրող 487—488, 563
Սոլոն (մ. թ. ա. 640 և 635-ի միջև — մոտ 559). հին հունական պետական գործիչ 330, 497
Սողովյան Հովակիմ (1863—1919), կանոնագետ, գրող, հասարակական գործիչ 472, 560
Սոլսբերի Ռոբերտ-Սեսիլ (1830—1903), անգլիական պետական գործիչ, պահպանողականների պարագլուխներից 166, 545
Սոկրատես (մ. թ. ա. 470/469—399). հույն փիլիսոփա 211, 419, 518
Սողոմոն (մ. թ. ա. 960—935 թթ.). Հրեահուդայական թագավորության թագավոր, նրան են վերագրվում «Երգ երգոցը», «Ժողովողը» 177, 511
Սոնո. 1894 թ. Լոռուսի գյուղերի ժամանակ Մ. Տամանյանի գործակից 533
Սողոն տե՛ս Սոլոն
Սպանդարյան Սպանդար (1849—1922). հրապարակախոս և հասարակական գործիչ 560
Սպանդարյան Սուրեն (1882—1916), հեղափոխական, բանվորական շարժ-

ման գործիչ, հրապարակախոս, քննադատ 33, 38, 464, 558—560
Սպենսեր Հերբերտ (1820—1904), անգլիացի փիլիսոփա 425
Սվյատոգոր, ռուսական նովգորոդյան բիլինաների դյուցազուն 367
Ստալին Իոսիֆ Վիսարիոնովիչ (Ջուղաշվիլի, 1879—1953), Սովետական Միության կոմունիստական և պետական գործիչ 484, 548
Ստանկևիչ Նիկոլայ Վլադիմիրովիչ (1813—1840), ռուս բանաստեղծ, փիլիսոփա 468
Ստարցև Գր., 1911 թ. Բաքվում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Բաքու» լրագրի հրապարակախոս 462
Ստենդալ (Անրի Մարի Բեյլ, 1783—1842), ֆրանսիացի գրող 23
Ստեփանե Լևոն (1840—1900), բանասեր, թարգմանիչ, հրապարակագիր, խմբագիր 516
Ստեփանյան Զարեհ, «Մայիս» հանդեսի հրատարակիչներից 529
Ստափին տե՛ս Շահումյան Ստեփան
Ստոլիպին Պյոտր Արկադևիչ (1862—1911), ռուս պետական գործիչ, 1906-ին ներքին գործերի մինիստր, ապա պրեմիեր-մինիստր 477, 558
Ստրուվե Պյոտր Բեռնգարդովիչ (1870—1944), ռուս տնտեսագետ, հրապարակախոս, փիլիսոփա 563
Սրվանձտյանց Գարեգին (1840—1892), բանասեր, բանահավաք, եկեղեցական գործիչ 11, 239, 428, 523
Սուբհի Մուստաֆա (1883—1921), Թուրքիայի բանվորական շարժման գործիչ 41, 553
Սուլեյման I (1495—1566), թուրքական սուլթան (1520-ից) 545—546
Սուլեյման փաշա (1838—1892), թուրքական գեներալ 79
Սուլթան տե՛ս Աբդուլ Համիդ
Սունդուկյան Գաբրիել (1825—1912), 14, 476, 561
Սուրգուչով Իլյա Դմիտրիևիչ (1881—1956), ռուս գրող 39
Սուրենյան Լևոն Զավեն (Զավեն Լևոնի, ծնվ. 1905), գրող, թարգմանիչ, գրել է նաև անգլերեն 48, 408—409, 552
Սփենսր Հերբերտ տե՛ս Սպենսեր Հերբերտ
Սևակ Պարույր (Ղազարյան, 1924—1971), բանաստեղծ, գրականագետ, բանասեր 49—50

Վահագն Վիշապաքաղ, հայոց հեթանոսական աստված, մարմնավորում է քաջությունը 218, 403
Վահան տե՛ս Յարմանյան Վահան
Վահան Մամիկոնյան, պետական գործիչ, սպարապետ, 481 թ. գլխավորել է հայերի ապստամբությունը պարսից դեմ, 484—505 թթ. Հայաստանի մարզպան 21, 251, 323—328, 330, 374, 541
Վահան սպարապետ տե՛ս Վահան Մամիկոնյան
Վահյան Վահե (Աբգարյան Սարգիս, ծնվ. 1907), բանաստեղծ, մանկավարժ, հասարակական գործիչ 547
Վաղարշակ (Պարթև), հայոց Արշակունյաց հարստության առասպելական հիմնադիր 70
Վայնինգեր Օտտո, ծագումով հրեա, գերմանացի գրող 481, 562
Վանգենհայմ, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի դեսպանը Թուրքիայում 373
Վասակ Սյունի, հայոց մարզպան, 451 թ. Վարդանանց պատերազմի ժամանակ պարսից կողմից 144, 198, 242, 325
Վարդան, Վարդաններ տե՛ս Վարդան Մամիկոնյան
Վարդան Մամիկոնյան (զոհված՝ 451), հայոց սպարապետ, պետական գործիչ, ժողովրդական հերոս 23—24, 70, 251, 323—330, 540
Վարդանանք, Վարդան Մամիկոնյանի

*կուսակիցներ* 23—24, 46, 251, 323, 327, 330, 358, 540—541
Վարդանյան Հովսեփ (Վարդան փաշա, 1813—1879), *հրապարակախոս, խմբագիր* 520
Վարդանյան Փիլիպոս (1842—1916), *մանկավարժ, թարգմանիչ, գրական-հասարակական գործիչ* 206
Վարժապետյան Ներսես (1837—1884), *հասարակական-եկեղեցական գործիչ, Կ. Պոլսի պատրիարք (1874—1884)* 297—298, 428, 534
Վարպետ *տե՛ս Ալիշան Ղևոնդ*
Վարուժան Դանիել (Չպուգքյարյան, 1884—1915), 40, 42—43, 337, 376, 401, 463, 422, 543, 550—552, 554
Վեյիչկո Վ. Լ., *ռուս գրող, հրապարակախոս, 1898—1899 թթ. Կովկասում ռուսերեն լեզվով հրատարակվող «Կավկազ» պաշտոնական օրաթերթի խմբագիր* 352
Վելինգտոն Արթուր (1769—1852), *լորդ, անգլիական բանակի հրամանատար, դիվանագետ* 195
Վեստ Սարգիս, *Բագրատունյաց Գագիկ II-ի ժամանակակից հայ իշխան, օգնեց Հայաստանի թշնամիներին* 144
Վեհիբ-փաշա Մահմեդ, *1918 թ. Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերի գերագույն հրամանատար* 47
Վերեշչագին Վասիլի Վասիլևիչ (1842—1904), *ռուս նկարիչ* 558
Վիլլեն, *Ժ. Ժորեսին սպանողը* 526
Վիլհելմ Թելլ, *շվեյցարական ժողովրդի ազատագրական պայքարն անդրադարձնող լեգենդի հերոս* 162, 265
Վիլհելմ Հովհան, *Պֆալցի գերմանական կուրֆյուրստ Ի. Օրու ժամանակներում* 346, 544
Վիլհելմ-Ֆրիդրիխ II (1859—1941), *1888—1918 թթ. Գերմանիայի կայսր* 373
Վիկտոր Էմանուել II (Էմանուել Բ, 1820—1878), *1849-ից Սարդինիայի թագավոր, 1861-ից՝ Միացյալ Իտալիայի առաջին թագավոր* 81, 142—146, 499—500, 504, 507
Վիվիանի Ռենե (1863—1925), *ֆրանսիական քաղաքական-պետական գործիչ* 542
Վիտենբերգի վանական *տե՛ս Լյութեր Մարտին*
Վիտտե Սերգեյ Յուլիևիչ (1849—1915), *ռուսական պետական գործիչ, 1905 թ. գլխավորում էր ներքին քաղաքականությունը* 258—259, 450—451, 477, 527, 544
Վիրգիլիոս Պուբլիոս (մ. թ. ա. 70—19), *հռոմեացի բանաստեղծ* 540, 552
Վոլտեր (Մարի Ֆրանսուա, 1694—1778), *ֆրանսիացի գրող, փիլիսոփա, պատմաբան* 164, 186, 338
Վորոնցով-Դաշկով Իլարիոն Իվանովիչ (1837—1916), *ռուս պետական-քաղաքական գործիչ, 1905—1916 թթ. Կովկասի փոխարքա* 288
Վռամշապուհ, *Հայաստանի պարսկական մասի թագավոր (388—414)* 70
Վրացյան Սիմոն (1886—1969), *քաղաքական գործիչ, դաշնակցական* 436
Վրդ. *Մ. Մամուրյանի «Անգլիական նամականիի» անձանցից* 194

Տամամյան Միհրան (1863—1945), *հայ հասարակական-քաղաքական գործիչ, 1894 թ. գործել է Սասունում, 1918—1920 թթ. Կիլիկիայում* 289, 533—534
Տասսո Տորկվատո (1544—1595), *իտալացի բանաստեղծ* 506, 552
Տատյան Պողոս բեյ (1800—1863), *Կ. Պոլսի ամիրաներից, Օսմանյան տերության վառոդապետ* 11
Տատյանա (անհտ.—մոտ 225), *ըստ ավանդության քրիստոնեությանը հավատարիմ սուրբ նահատակ* 468, 560
Տարտյուֆ, *Մոլիերի նույնանուն կատա-*

կիրգուխյան գործող անձը 474—475, 536
Տեյոր. ամերիկյան գրքերի հրատարակիչ (XIX դ. առաջին կես) 58
Տեմիրճիպաշյան Եղիա (1851—1908), գրող, հրապարակագիր 428
Տեմուրեն տե՛ս Դեմուրեն Կամիլ
Տեր-Գաբրիելյանց Գավրիլ. թարգմանիչ 320
Տեր-Ղուկասով Արշակ (Տեր-Ղուկասյան, 1819—1902) ռուսական բանակի հայազգի գեներալ 80, 512
Տերյան Վահան (Տեր-Գրիգորյան, 1885—1920). 34—36, 46, 48, 376, 380, 548
Տերզի տե՛ս Դերզի Էդուարդ
Տեր-Պողոսյան Սամսոն. 1877—1878 թթ. Կովկասյան ճակատում աչքի ընկած հայ զինվոր 512
Տերունյան Սմբատ (ծնվ. 1924), գրող 547
Տիգրան II, Մեծ. Հայոց թագավոր, արքայից արքա (մ. թ. ա. 95—55) 70, 251, 284, 402
Տիգրան Երվանդյան կամ Հայկազյանց. ըստ Խորենացու Կյուրոսի և Աժդահակի ժամանակակից 70
Տիգրանյան Սիմոն վարդապետ (1658—1740), ազգային-ազատագրական շարժման գործիչ, Ի. Օրու գործակիցը 514
Տիբիչ տե՛ս Դիբիչ-Զաբալկանսկի Իվան Իվանովիչ
Տիտանյան տե՛ս Բել
Տիլակ Բալգանգադհար (1856—1920), հնդկական ազգային-ազատագրական շարժման պարագլուխ 554
Տիմոթեոս, ըստ Աստվածաշնչի աստվածապաշտ, Պողոս առաքյալի աշակերտը 534
Տյուսաբ Արբունի (Վանանյան, 1842—1901), գրող 237, 428, 522
Տոլստոյ Ալեքսեյ Նիկոլաևիչ (1882—1945), ռուս գրող 39
Տոլստոյ Լև Նիկոլաևիչ (1828—1910), ռուս գրող 356
Տորք Անգեղ. հայոց առասպելական հսկա 218
Տրդատ III, Մեծ. Հայոց արքա (287—330). 70, 251
Տրեպով Դմիտրի Ֆյոդորովիչ (1856—1906), ռուս գեներալ, 1906 թ. ներքին գործերի մինիստրի օգնական 477
Տրիրոդով. Ֆ. Սոլոգուբի «Հյուսվող առասպել» վեպի հերոսը 487, 563
Տուրգենև Իվան Սերգեևիչ (1818—1883), ռուս գրող 217, 519
Տևկանց Սեդրակ (Տեր-Սարգսենց, 1851—1941), կրթական-մշակութային գործիչ 428

Րաֆֆի (Մելիք-Հակոբյան Հակոբ. 1835—1888). 13—14, 16. 208. 299—300. 319. 331—332, 355, 376. 442. 453. 508. 512, 517—519, 537. 542. 546
Րեշատ Էֆենդի. Սուլթան Համիդի արյունակիցներից 296
Րոսել Ջոն (1792—1878), կոմս. անգլիական պետական գործիչ 222

Ցիցերոն (մ. թ. ա. 106—43), հռոմեական հռետոր, գրող. քաղաքական գործիչ 263
Ցուրինով, Գանձակի հայ հարուստներից, Թիֆլիսի գինետներից մեկի տերը 475, 561

Ուայլդ Օսկար (1854—1900), անգլիացի գրող 488
Ուռուչյան Կարապետ (1823—1904), կրթական-հասարակական գործիչ, հրապարակախոս 501
Ուլենշպիգել Թիլ կամ Թիլբերտ, դը Կոստերի «Ուլենշպիգել...» վեպի հերոսը 375—376

Փանոսյան Կարապետ (1826—1905), հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ, մանկավարժ 205, 517
Փառնակ. Պոնտոսի թագավոր, գահակա-

լել է մ. թ. ա. II գ. երկրորդ տասնամյակում 500
Փասքևիչ տե՛ս Պասկևիչ Իվան Ֆյոդորովիչ
Փավստոս Բուզանդ, V գ. պատմագիր 326, 528, 540, 543—544
Փափազյան Վրթանես (1866—1920), գրող, գրականության պատմաբան 32—34, 36—37, 46, 267, 527
Փորթուգալյան Մկրտիչ (1848—1921), գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ, խմբագիր, հրապարակախոս 522

Քանանյան Գևորգ (1834—1897), Մոսկվայի Լազարյան ճեմարանի տեսուչ, Ռ. Պատկանյանի մտերիմը 161, 165—167, 509—510
Քանանյան Վարվառե, Մոսկվայում հայ վաճառական Հովհաննես Հովհաննիսյանի (Անանով) դուստրը, մեծահարուստ Նիկողայոս Աբիմյանի, ապա Գևորգ Քանանյանի կինը 165, 167, 510
Քաջազնունի Հովհաննես (Տեր-Հովհաննիսյան, 1868—1937), ճարտարապետ, քաղաքական գործիչ 396
Քառլ Ալբերտ տե՛ս Կարլ Ալբերտ
Քասգանտիկյան Արիստակես վարդապետ (1853—1942), Վիեննայի Մխիթարյաններից, թարգմանիչ, մանկավարժ 401, 550
Քարեն Լազար տե՛ս Կարեն Լազար
Քեչյան Բյուզանդ (1859—1927), հրապարակախոս, խմբագիր 417, 552
Քերզոն Ջորջ (1859—1925), անգլիական պետական գործիչ, 1899—1905 թթ. փոխարքա Հնդկաստանում 555
Քինե Էդգար (1803—1875), ֆրանսիացի պատմաբան և հասարակական գործիչ 138, 277
Քին. Ալեքսանդր Դյումա հոր «Քին կամ...» պիեսի հերոսը 475
Քիշմիշև Ս., 1877—1878 թթ. կովկասյան ճակատում աչքի ընկած հայ զինվորական 512
Քյոռ օղլի, կիսաառասպելական աշուղ և ժողովրդական վրիժառու 218
Քյոսեյան Սարգիս, 1879 թ. իրր նախատեսվում էր Զեյթունի կառավարիչ 282
Քրիստոս տե՛ս Հիսուս
Քումանտուրով տե՛ս Կոմանդուրով

Օգարյով Նիկոլայ Պլատոնովիչ (1813—1877), ռուս գրող, հրապարակախոս, հեղափոխական-դեմոկրատ 9, 468, 516
Օզին Ս., տե՛ս Սպանդարյան Սուրեն
Օ'Կոնել Դանիել (1775—1847), իռլանդացի հայրենասեր, հասարակական գործիչ 195—196, 515
Օհանջանյան Համազասպ (1873—1947), դաշնակցական, քաղաքական գործիչ, բժիշկ 396
Օհանջանյան Օնիկ (1885—1937), բժիշկ, հասարակական-պետական գործիչ, Վ. Տերյանի ճեմարանական ընկերներից 380—381, 548
Օսիան (մ. թ. ա. III դ.), ըստ ավանդության ապրել է Իռլանդիայում և երգել է իր հոր և նրա զինակիցների սխրանքները 552
Օտարյան Սոնա (նաև Զուրաբովա), մանկավարժ, Վ. Տերյանի մտերիմներից 380, 548
Օտյան Գրիգոր (1834—1887), հասարակական և մշակութային գործիչ 298, 306, 428, 501, 534
Օտյան Երվանդ (1869—1926), 27, 29, 34, 40—42, 46, 411, 538, 542, 553
Օտրեպև Գրիգորի (անհտ.—1606), ինքնակոչ, կեղծ Դիմիտրի I 162
Օուեն Ռոբերտ (1771—1823), անգլիացի ուտոպիստ-սոցիալիստ 147

Ֆադեև Ռոստիսլավ Անդրեևիչ (1824—1883), ռուս գեներալ, գրող, նրա եր-

կատիրությունները ժամանակին լույս են տեսել երեք հատորով 346
Ֆավր Ժյուլ (1809—1880), *ֆրանսիական պետական գործիչ, փաստաբան* 85
Ֆեյեկյան Սիմոն (1835—1904), *բանաստեղծ, բանասեր, ուսուցիչ. Արփիարյանի բնութագրությամբ «գրականության բոստ»* 291
Ֆենելոն Ֆրանսուա (1651—1715), *ֆրանսիացի գրող, մանկավարժ, լուսավորիչների նախորդներից* 251
Ֆեոգոյա, *նեապոլիտանական Ֆրանցիսկոս II-ին հավատարիմ զինվորական* 143—144
Ֆերեր Գվարդիա Ֆրանցիսկո (1859—1909), *իսպանական հասարակական-քաղաքական գործիչ* 302—303, 537
Ֆերհոֆեն Աբրահամ, *առաջին տպագիր լրագրի հրատարակիչը (1615, Վիեննա)* 315
Ֆիլիպ II (1527—1598). *1556-ից Իսպանիայի թագավոր* 303
Ֆիլիպ Քըրրի, *Աբդուլ Համիդի օրոք Անգլիայի դեսպանը Թուրքիայում* 291
Ֆիլոսոֆով Դիմիտրի Վլադիմիրովիչ (1872—1940), *ռուս հրապարակախոս, գրաքննադատ* 481
Ֆիխտե Յոհան Գոտլիբ (1762—1814), *գերմանական իդեալիստ փիլիսոփա* 140, 147
Ֆինն Մակ-Կումհայլ, *իռլանդական ավանդական երգիչ Օսիանի հայրը* 552
Ֆոխտ Կարլ (1817—1895), *գերմանացի բնագետ, վուլգար մատերիալիստ* 147
Ֆոն դեր-Գոլց, *գերմանացի գեներալ, 1883-ից ղեկավարել է գերմանական ռազմական միսիան Թուրքիայում, 1914-ից գերմանա-թուրքական կոմիտեի նախագահ* 373
Ֆոշե Լեոն (1803—1854), *ֆրանսիական քաղաքական գործիչ և պատմաբան* 158, 509
Ֆոռ Ֆրանսուա Ֆելիքս (1841—1899), *ֆրանսիական քաղաքական, պետական գործիչ* 309
Ֆրանկ Սեմյոն Լյուդվիգովիչ (1877—1950), *ռուս մտածող, գրականագետ, հրապարակագիր* 563
Ֆրանս Անատոլ (Անատոլ Ֆրանսուա Տիբո, 1844—1924), *ֆրանսիացի գրող* 27—29, 261, 525, 530, 541—542
Ֆրանց Իոսիֆ (Յոզեֆ, 1830—1916), *ավստրիական կայսր* 287
Ֆրանցիսկ I (1494—1547), *ֆրանսիական թագավոր 1515-ից* 545
Ֆրանցիսկոս II (1836—1894), *նեապոլիտանական թագավոր (1859—1861)* 143—145
Ֆրեր Օրբան (1812—1896), *բելգիական պետական-քաղաքական գործիչ, փաստաբան* 306
Ֆրիդլենդեր Էբերհարդ (1799—1853), *Դորպատի համալսարանի պրոֆեսոր, ֆինանսագետ* 61
Ֆրիդրիխ I Բարբարոս (Շիկամորուս, 1123—1196), *գերմանական կայսր (1147-ից), որի մասին պահպանվել են մեծ թվով ավանդություններ* 363
Ֆրիդրիխ II, Մեծ (1712—1786), *պրուսական թագավոր* 70
Ֆուա Ալբեր, *1909-ին Կ. Պոլսում ֆրանսերեն լեզվով լույս տեսնող օրաթերթի խմբագիր* 414—415
Ֆուրիե Շառլ (1772—1837), *ֆրանսիացի սոցիոլոգ* 147, 193

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Առաջաբան* . . . . . . . . . . . . . 5

*Հրապարակախոսություն* . . . . . . . . . . 51

Մ. Թաղիադյան—*<Ճառ Հայաստանի ազատագրման առթիվ>*—53, Հառաջադիմության ազգային*—55, Միարանեալ նահանգք Ամերիկայ—57, <Ազատություն>—58*

Խ. Աբովյան—*<Դորպատյան օրագրեր>*—61, <Համառոտ ակնարկ հայերի մասին>*—62, Նամակ Գ. Ձ. Պարրոտին*—66, Մեծապատիվ պարոններ*—68, <Հայաստանի և հայ ժողովրդի անտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին>*—68, Ի վերայ հայրենասիրութեան*—70, Ի. Վ. Ռոսկովշենկոյին—72, Ուղևորություն դեպի Անիի ավերակները*—73*

Գ. Ալիշան—*Նախաբան առ Հայկակ—74*

Ստ. Նազարյան—*Հայերի կրթական մարդկության մեջ*—77, Վերջաբան Հյուսիսափայլի*—77, Հ. Պոնճուկյանին*—77, Ս. Մայսուրյանցին*—79*

Ստ. Ոսկանյան—*Հառաջաբան*—81, Հառաջաբան*—82, Խաչատուր Աբովյան*—83, Պատերազմի լուրեր*—84, Պատերազմի լուրեր*—85, Մանր լուրեր*—86, Քանեկշորսատություն*—87, Ազատություն ի պ. Ժյուլ Սիմոնի*—88, Մեծ ազատամտություն Ֆրանսայի և պ. Միշլեին գիրքը*—94, Լեհաստանը*—100*

Հ. Սվաճյան—*Առ պարոն Պ... երբ հառաջաբան և նպատակ գործույս*—102, Պանարմայի ժողովրդյան խռովությունք*—103, Ազգային սահմանադրություն*—103, Ազգօգուտ ընկերությանց հանախմբը*—103, Կարիկատուր*—104, 1861 հունվար 1*—104, Ազգային պարտք*—107, Գ. Միքայել Նալբանդյանց*—107, ...Ընդհանուր տեսություն մը տպագրական ազատության վրա*—108, 1864 և Մեղուի թվականին Ը-րդ տարի—109, «Կամ տպագրական օրենք կամ հրաժարական»*—111*

Գր. Չիլինկիրյան—*Յառաջաբան—112, Խորհելու ազատություն... Ներածություն Թարգմանչին*—114, Իզմիրի հայոց վեցամյա թշվառության շրջանը*—116, Արշակունյաց ընկերություն յեղիպտոս—121, Ձայն հառաջադիմության*—122, Ազգային զարթումն—128, Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս*—131*

Ար. Հայկունի—*Ձայն*—132, Հայ ազգ և սահմանադրություն—134*

Մ. Նալբանդյան—*Նամակ առ հրատարակողը*—136, Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք*—136, Նամակ հրատարակողին—138, Նամակ հրատարակողին*—140, Նամակ «Մեղու»-ի խմբագրին*—141, Հարություն Սվաճյանին—142, Երկու տող*—147, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ*—149, Ղազարոս Նալբանդյանին*—158, Հեգելը և նորա ժամանակը*—158*

---

*Աստղանիշով նշված են ժողովածուում հատվածաբար կամ կրճատումներով զետեղված նյութերը։*

Ռ. Պատկանյան—Գևորգ Քանանյանին*—161, «Առաջարան «Պատմություն Մեծին Պետրոսի» աշխատության»*—162, Քերովբե Պատկանյանին*—163, Ճանապարհորդական տպավորություններ*—163, Նոր Նախիջևանի հիմնարկության պատմություններ*—164, Վահրամ Փարդալյան Մանկունուն*—164, «Աղքատախնամ միջոցների մասին»*—164, Գևորգ և Վարդան Քանանյաններին, Մարիամ Արիմյանին*—165, Վարդան և Գևորգ Քանանյաններին, Մարիամ Արիմյանին*—167, Գևորգ Քանանյանին*—167
Սմ. Շահազիզ—Հրապարակախոսի ձայն—169
Մկ. Պեշիկթաշլյան—Խոսեցյալ ի կաճառս ընկերության համազգյաց*—172, Խոսեցյալ ի խնջույս Մուրատյան և Ռաֆայելյան ընկերության—173
Պ. Դուրյան—«Առ Տ. Խորեն եպիսկոպոս Նար-Պեյ»*—176, Առ պ. Տ. Ադամյան*—176
Մկ. Խրիմյան—Ժամանակ և խորհուրդ յուր*—177
Գր. Արծրունի—Իտալիա և Գերմանիա*—182, Այժմ կամ երբեք*—183, Մինչև երբ*—184, Ազգության հանճարը*—184, Այդ անհրաժեշտ էր*—185, Զեյթունի ապստամբություն—186, Թուրքաց հայերի տնտեսական դրություն*—187, Տխուր և ուրախալի համբավներ*—190
Ն. Ռուսինյան—Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը*—192, Հայկական նամականի*—197, Միքայել Նալբանդյանից—197, Ազատություն*—200, Սկզբունքի դեմ արդյունք—202
Գ. Աղայան—Էջմիածին գե Ամիշիս. «Միրզա» Աշակերտի հիշատակարանը*—206, Մի երկու մեր նորագույն պատմություններից*—206
Րաֆֆի—«Մ. Նալբանդյանին»*—208, Ճանապարհորդական նոթեր*—208, Դատարկ հույսերով էինք խաբվում*—209, Քրիստոնեություն*—210, Դեռևս ուշ չէ*—212, Հայդուկներ*—213, Հայ երիտասարդություններ*—213, Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ*—214, Ինչո՞վ ենք մխիթարվում*—216, Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը»*—217, «Դավանիր Վարդապետին»*—218
Հ. Պարոնյան—Վերջին չարիք*—219, Քաղվածք*—219, Սուրհանդակ Մեղուի*—219, Կամբիններ*—220, Խաղաղում*—227
Սերենց—Եվրոպական քաղաքականության ներկա ժամանակներում հայ ազգին վրա բրած ազդեցություններ*—229, Ամբոխը և ոգին*—229, Թղթակցություն*—231, Ժամանակիս ոգին և հայ ապագայն*—231
Ս. Տյուսաբ—Քանի մը խոսք կանանց անգործության մասին*—237, Կանանց աշխատության սկզբունքը*—237
Գ. Սրվանձտյան—Սիսեռ, մեր գործ նորեն սկսենք*—239, Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ*—245
Սր. Հովհաննիսյան—Հայերը և Հայաստանը օտարների աչքում*—247
Ստ. Պալասանյան—Տասնիններորդ դարու նշանավորներ*—250, Հունաստանի անկախություն*—253
Ալ. Արասխանյան—Ուղիղ ճանապարհ*—255, Ժամանակակից տնտեսություն*—256
Մուրացան—Ինքնակենսագրություն*—258
Ալ. Շիրվանզադե—Ճշմարտության հաղթանակը*—260, Տիրաններ և պիգմեյներ*—262, Կյանքի բովից*—262, Օտար վայրերում*—265, Ողջույն հաղթողներին—266
Վրթ. Փափազյան—«Հայրենիքը վտանգի մեջ է...»—267, Հեղափոխական կռիվները Մակ-

վայում—270, Հայ գրողներին*—274, Թուրքահայ գրականությունը մինչև 90-ական թվականները*—275
Լեո—Գրական կորուստներ*—276, Վիկտոր Հյուգո*—277, Ռուսահայ գրականությունը*—278
Արփ. Արփիարյան—Նամակ Թուրքիայից*—282, Օրվան կյանքը*—284, Վերընձյուղում*—287, Օրվան կյանքը*—288, Հողվորտիքը*—289, Հողվորտիքը*—289, Դանգի մը շուրջը*—291, Ազգային տխրություն*—295, Խոսք հասկցողը*—296, Ենոքի Համաժողով*—297
Տ. Կամսարական—Արշակ Չոպանյանին*—299, Արշակ Չոպանյանին*—299, Արշակ Չոպանյանին*—300, Պատկերին տեղ*—300, Վահրամ Թորգոմյանին*—300, Տուն մեկի բարեխոս*—301, Մինաս Չերազ*—301
Գր. Զոհրապ—Ութը տարի հոքը*—302, Էջեր ուղևորի մը օրագրեն*—302, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը*—305, <Զոհրապին ճառը>*—307
Լ. Բաշալյան—Արշակ Չոպանյանին*—309, Արշակ Չոպանյանին*—309, Մարդ մը—310, Օրվան քաղաքականությունը*—311, Հայը Նուպար փաշայի մեջ*—313
Հովհ. Հովհաննիսյան—<Մեր նպատակը>*—314, <Նոր տարվա առթիվ>*—314, Ժամանակակից մամուլը*—315, <Շիլլերի «Օռլյանի կույսը» դրամայի ներկայացման մասին>*—315, Ժամանակակից գրողներ*—317
Լ. Մանվելյան—Դպրոցական նամակներ*—319, Սերեթելի Դ.—«Մարդ-առյուծ»*...—320
Սիպիլ—Ազգանվեր հայուհիք*—321
Արշ. Չոպանյան—Հերոսները—323, Իմ հայրենասիրությունս*—330, Հայոց նոր գրականությունը և հայկական խնդիրը*—330, Խաչատուր Աբովյան*—336, Դանիել Վարուժանին*—337, Խ. Աբովյանի ծննդյան հարյուրամյակին առթիվ*—337, Մեր գրականությունը*—337, Վահան Թեքեյան*—338, Վիքթոր Հյուկո*—338
Հովհ. Թումանյան—Հայի ոգին*—340, Երեկվա պատմությունը և այսօրվան իրականությունը—341, Հայկական հարցն ու իր լուծումը—345, Խոսք Րաֆֆու գերեզմանի վրա—355, «Սրանով կհաղթես»*—356, Հանգիստ ու լիքը հավատով*—357, Ողջունում ենք*—358, <Հովհաննես Թումանյանի բողոքը դաշնակցության ավանտյուրայի դեմ>—359
Ավ. Իսահակյան—Հիշատակարան*—360, Փորձ մեր Լեոսի զինաթափության մասին*—366, Խաչատուր Աբովյանը և «Վերք Հայաստանի»-ն*—369, Մտքեր հայ գրականության մասին*—370, Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը*—371, «Ռեյնշպիգել» վեպի մասին*—375, Բացման խոսք Հայաստանի գրողների երկրորդ համագումարում*—376, <Խոսք իր ծննդյան 80-ամյակի հոբելյանական հանդեսին>*—378
Վ. Տերյան—Ավ. Իսահակյանին*—380, Ս. Օտարյանին*—380, Օ. Օհանջանյանին—380, Հայ գրականության գալիք օրը*—383, Հոգևոր Հայաստան*—384, Զեկուցագիր Թուրքահայաստանի մասին—387, Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին*—389, Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին*—392, Անկեղծ և հետևողական պետք է լինել—394, Անմոռա՞ց ընկեր...—397
Սիամանթո—Ռաֆայել Պազարճյանին*—398
Դ. Վարուժան—Արիստակես Քասգանտիլյանին*—401, Ռաֆայել Պազարճյանին*—401, Դերենիկ Ճիզմեճյանին*—402, «Ազդակի» խմբագրության*—402, «Ազդակի» խըմ-

բարեկամության*—403, <Բազմաթիվ յուղեր, Վարուժան մեր բժիշկն մեզ>*—403, Յարճանյանի քերթողությունը*—404, Վարդգես Ահարոնյանին*—406
Վ. Թեքեյան—Հայկական ձյունածաղիկին վրա*—407, Աղոթային տեսություն*—407, «Բյուզանդ ամպոտ»*—408, Լևոն Զավեն Սուրմելյանին*—408, Լևոն Զավեն Սուրմելյանին*—409, Լևոն Զավեն Սուրմելյանին*—409
Ե. Օտյան—Պատերազմը*—411, Արքայություն Երկրի—412, Անձե՞ռ, Անձե՞ռ...—414, Մեր ազգությունը—416
Երուխան—Հայ վերածնունդը—418
Ռ. Զարդարյան—Արշակ Չոպանյանին*—422, Դանիել Վարուժանին*—422, Բանավորին արդյունքը*—423, Մեռելները և ապրողները*—425, Հոգեստանք կ'արթնանա*—425
Ռամնառ—Մեր դաստիարակության շուրջը*—428
Զ. Եսայան—Երդմնագիրը*—429, Զարդարյանի գրականությունը*—432, Արծիվը կը սավառնի—433, <Անոր Անդրյանին>*—435, Անոր Անդրյանին*—435, Հովհաննես Ակրյանին*—437, Պրոմեթևս ազատագրված*—438
Արշ. Չոպանյան—Սոցիալ-դեմոկրատիա և գրականություն—440
Բ. Կնունյանց—Նոր թափ*—445, Դաս դասի դեմ*—447, Հեղափոխությունն ընթանում է*—449
Ստ. Շահումյան—Ղազարոս Աղայանին՝ նրա գործունեության քառասնամյակի առթիվ*—452, Անխնայելը. Պատմվածքներ և երգեր...*—454, Համարակական ուժերի խմբավորումը—455, Հոկտեմբերի 17-ը—457, Գորկու մասին*—461, Բանվորական մամուլի օր*—463
Ս. Սպանդարյան—Դարձյալ ամենափրկչի մասին*—464, Հեղափոխության ալիքը բարձրանում է—464, Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան*—466, Ուրվագծեր հայկական կյանքից*—466, «Մեր և խարդավանքը»*—467, Թիֆլիս, 13 հունվարի*—468, «Պարտիականության և անպարտիականության» մասին*—469, Դրախտական, Հ. Հակոբյան, «Նոր առավոտ». գրեմ—469
Հ. Հակոբյան—Ազատ Աստվածը—471, Բանվորին*—472, Մի բեկոր իմ հուշերից*—474, Գամառ-Քաթիպա*—475, Գ. Սունդուկյան*—476
Ալ. Մյասնիկյան—Ներկա մոմենտը—477, Երկու կուսակցական տոն*—478, Արթնացումը—480, Իմ հանդիպումները ընկեր Լենինի հետ*—483
Ե. Չարենց—Ի՞նչ պետք է լինի այժմ հայ բանաստեղծությունը*—485, Արդի ռուսական պոեզիան*—485, Հանճարների և տաղերի ուղին*—489
Ծանոթագրություններ . . . . . . . . . . 493
Անձնանունների ցանկ . . . . . . . . . . 564

# ԱԶԱՏԱՄԻՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(1820—1920 ԹԹ.)


*Հրատ. խմբագիր* Ա. Հ. Շաղզամյան
*Նկարիչ* Կ. Կ. Ղաֆադարյան
*Գեղ. խմբագիր* Հ. Ն. Կուրձակյան
*Տեխ. խմբագիր* Ռ. Խ. Գևորգյան
*Սրբագրիչ* Ա. Լ. Սանակյան

ԻԲ 681

*Հանձնված է շարվածքի 28. 10. 1981 թ.։ Ստորագրված է տպագրության 30. 06. 1982 թ.։ ՎՖ 06205։ Չափը 60×84 1/16, Թուղթ, № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 34,64 մամուլ, տպագր. 37,25 մամուլ։ Հրատ. հաշվարկ 35,4, մամուլ։ Տպաքանակ 7000։ Պատվեր № 1254։ Հրատ. № 5564։ Գինը 2 ռ. 60 կ.։*

*ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։*
Издательство АН АрмССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
*ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24։*
Типография Издательства АН АрмССР, Ереван Барекамутян 24

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0264017

A II / 68734